Ամառ առանց այգաբացի - Նախաբան

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 09:55-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի
Ամառ առանց այգաբացի - Գլուխ 1 ►

1915 թ. հունիսի 30-ին գերմանական բանակի թնդանոթները կրակ բացեցին այգաբացից երկու ժամ առաջ: Փարիզից մոտ հարյուր հիսուն կիլոմետր հեռավորության վրա գտնվող Նեվիլ-Սենտ-Վաաստի ֆրանսիական դիրքերը հրետակոծվում էին: Զինվորները, որոնց հաջողվել էր քնել խրամատներում անտեսելով հարմարությունների բացակայությունը, արթնացան: Այդ հրետակոծությունն ազդարարում էր գերմանացիների հակահարձակումը, որոնք հետ էին մղվել ընդամենը մի քանի կիլոմետրով, գեներալ Ֆոշի բանակի երկամսյա մարտերից հետո: Դրանք տասնյակ հազարավոր մարդկային կյանքերի գնով նվաճված խղճուկ հեկտարներ էին՝ պատված արկերի պայթյուններից գոյացած ձագարներով և լցոնված մարդկային մարմիններով:

Այս պատերազմը մարդիկ սկսել էին երգը շուրթերին, կարծես թե կարճատև ճամփորդության նախապատրաստվեին: Սակայն ցեխոտ խրամատներում անցկացրած մեկ ձմեռը ոգեշնչումը ընդարմացման էր վերածել: Սա անծանոթ մի բան էր, երբևէ եղած ամենաանմարդկային պատերազմը: Մարդկային ուժն ու քաջությունն անզոր էին երկնքից տեղացող հրի ու երկաթի դեմ: Մարդն անզոր էր թոքերն այրող գազի դեմ: Ի չիք դարձան գեղեցիկ համազգեստները, մեծաքանակ բանակների զորաշարժերը, հեծելազորի տպավորիչ հարձակումները: Ցեխոտ զինվորները փորձում էին ձուլվել հողին, խլուրդների պես փոսեր էին փորում, թաքնվում էին այնտեղ, սողում:

Նրանց թվում էր, թե ողջ աշխարհը հրի ճարակ էր դարձել: Եվ միգուցե նրանք իրավացի էին: Եվրոպայի գրեթե բոլոր երկրները իրենց գաղութների հետ միասին ներքաշված էին այդ պատերազմի մեջ: Մի կողմից Եռյակ միությունն էր՝ Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Ռուսաստան, որոնց միացել էին Բելգիան, Ճապոնիան, Իտալիան և Սերբիան: Նրանց հակառակորդներն էին Կենտրոնական կայսրությունները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Օսմանյան կայսրությունը և Բուլղարիան: Եվ ուշ թե շուտ, դեռևս չեզոք տերությունները կամա թե ակամա ստիպված էին լինելու որևէ մեկի կողմը բռնել:

Նեվիլ-Սենտ-Վաաստից երեք հազար կիլոմետր այն կողմ, Միջերկրական ծովի արևելյան ծայրամասում՝ Օսմանյան կայսրությունում արևն էր ծագում: Դարդանելի նեղուցի մուտքի մոտ գտնվող Գալիպոլի փորակղզում անգլիական և ֆրանսիական ռազմանավերը հրետակոծամ էին թարքական բանակի դիրքերը: Հակառակորդի հրետանու արկերը չէին հասնում նավերին և պայթում էին ծովափին, ուր դաշնակիցները հենակետ ունեին, իսկ ցամաք նոր զորամասեր տեղափոխող ռազմանավերը շրջապատված էին ջրի շատրվաններով:

Նրանց թիվն արդեն անցնում էր հարյուր հազարից. ֆրանսիացիներ, բրիտանացիներ, գաղութների ներկայացուցիչներ՝ ավստրալացիներ, կանադացիներ, հյուսիսաֆրիկացիներ՝ անգլիացի գեներալ Համիլտոնի հրամանատարության ներքո, իսկ համալրում բերող նավերը շարունակում էին ժամանել: Ապրիլին սկիզբ առած զորքի դեսանտից ի վեր էքսպեդիցիոն զորագունդը շրջափակված էր ցամաքի նեղ շերտում և չէր կարողանում խորանալ երկրի ներքին շրջանները, ուր օսմանյան զորքը՝ դիրքավորված լեռներում, համառորեն պաշտպանում էր իր տարածքը և թույլ չէր տալիս դաշնակիցներին շարժվել դեպի կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս: Փետրվարին Կոստանդնուպոլիս հասնելու նպատակով ֆրանս-բրիտանական նավատորմիղը ապարդյուն կերպով փորձել էր բռնանցնել Դարդանելի նեղուցը, որը երիզված էր պաշտպանական ամրոցներով:

Արկերը և խոշոր տրամաչափի թնդանոթները, որոնք, ի դեպ գործ էին դնում գերմանացի հրետանավորները, լուրջ վնասներ էին հասցրել ռազմանավերին:

Բոսֆորի նեղուցի եվրոպական և ասիական ափամերձ բլուրներին սփռված հազարամյա քաղաքը հպարտությամբ ցուցադրում էր իր մարմարյա գմբեթներն ու մինարեթները: Չնայած պատերազմին՝ անտիկ Բյուզանդիոնը, որը հետագայում Կոստանդնուպոլիս էր անվանվել առաջին քրիստոնյա կայսեր Կոստանդնի պատվին, եռուզեռի մեջ էր: Ո՛չ անցած հարյուրամյակները, ո՛չ էլ նվաճողները արմատապես չէին փոխել քաղաքը, որը պահպանում էր անցյալի ժառանգությունը: Այսպես, Աթմեյդանը՝ Ձիահրապարակը, զբաղեցնում էր հռոմեական ձիարշավարանի տեղը և պահպանել էր նրա հատակագիծը: 1453 թ. Օսմանյանների կողմից Կոստանդնուպոլսի նվաճումից հետո Սուրբ Իմաստության հին քրիստոնեական եկեղեցին չորս մինարեթների հավելումով վերածվել էր Սուրբ Սոֆիայի մզկիթի: Այդ պահին Մեհմեդ V սուլթանը իշխում էր մեծ կայսրության մնացորդների վրա: Վերջին հարյուրամյակի ընթացքում Օսմանյանների ժառանգությունը մասնատվել էր: Բալկաններում՝ Հունաստանը, Ռումինիան, Ալբանիան, Բուլղարիան, Սերբիան և Չեռնոգորիան անկախացել էին: Աֆրիկայում՝ Ալժիրը, Լիբիան, Թունիսը և Եգիպտոսը անցել էին եվրոպական տերությունների հովանավորության ներքո: Սուլթանին մնացել էր միայն արևելյան Թրակիան, Անատոլիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբական թերակղզին: Բացի դրանից, նրա իշխանությունը ձևական էր: Եթե նա գոռոզանում էր հավատացյալների Առաջնորդի իր

տիտղոսով, ապա Անատոլիայի սահմաններից դուրս ապրող հավատացյալները նրան որպես այդպիսին այլևս չէին ընկալում։ Եվ վերջապես, այն պահից ի վեր, երբ 1909 թ. երիտթուրքերը գահընկեց էին արել Աբդուլ Համիդ II-ին՝ նրան փոխարինելով Մեհմեդ V-ով, սուլթանի ամբողջատիրությանը վերջ էր տրվել։ Սկզբունքորեն երկիրը կառավարվում էր խորհրդարանի կողմից, սակայն իրականում իշխանությունը իրականացնում էին երեք հոգի՝ Էնվերը, Թալեաթը և Ջեմալը։ Այս եռյակն էր, որ 1914 թ. հոկտեմբերի սկզբին ներքաշել էր երկիրը պատերազմի մեջ, դաշնակցելով Գերմանիային։

Այժմ կայսրությունը շրջապատված էր բոլոր կողմերից։ Թեժ մարտեր էին մղվում Անատոլիայի արեելքում՝ Արևմտյան Հայաստանի տարածքում, ուր ռուսներն անցել էին սահմանը և գրավել Վանը։ Ռազմամթերքի պակասի պատճառով նրանք նահանջում էին, սակայն դա արվում էր, անկասկած, էլ ավելի հուժկու հարված հասցնելու նպատակով։ Հարավում բրիտանացիները տիրացել էին Բասրային՝ Միջագետքում, որը տեղադրված էր Տիգրիսի և Եփրատի գետաբերանում։ Դրանից դեպի արևմուտք՝ Սինայի թերակղզում բրիտանական մեծաքանակ զորախմբի կողմից պահպանվող Սուեզի ջրանցքը գրավելու անհաջող փորձից հետո օսմանյան բանակը նահանջում էր։ Կար նաև Գալիպոլին, որը գրեթե Կոստանդնուպոլսի մատույցներում էր, և ֆրանսիական ու բրիտանական նավատորմիղները, որոնք վերահսկում էին Միջերկրական ծովը։ Այս ամենը ամենևին չէր խաթարում օսմանյան ղեկավարների լավատեսությունը։ Դարդանելի նեղուցի ճակատամարտը նրանց ինքնավստահություն էր ներշնչում. առաջին անգամը լինելով, բրիտանական ամբարտավան նավատորմիղը ստիպված էր իր պարտությունը խոստովանել։ Իսկ դա թուրքերի կատարած սխրագործությունն էր։ Եվ վերջապես, Օսմանյան կայսրությունը ազատվել էր Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի, Իտալիայի շուրջ մեկ հարյուրամյակ իրականացվող ճնշող խնամակալությունից։ Անատոլիայում, հատկապես Կոստանդնուպոլիս-Բաղդադ երկաթգծի վրա, խոշոր ներդրումներ իրականացրած Գերմանիայի օգնությամբ Էնվեր փաշայի կառավարությունը կկարողանար կառավարել երկիրն այնպես, ինչպես հարկ կհամարեր։

Նորին գերազանցություն Հենրի Մորգենթաուն, որը 1913 թ. ի վեր ԱՄՆ դեսպանն էր Կոստանդնուպոլսում, տնային զգեստով նստեց իր գրասեղանի առջև։ Նա սիրում էր առավոտյան անդորրը և ամեն օր իրեն մենության մի պահ էր պարգևում պաշտոնական պարտականություններին անցնելուց առաջ։ Դրանց ծավալը զգալիորեն մեծացել էր այն պահից, երբ նա ստանձնել էր Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի և Բելգիայի շահերի պաշտպանությունը օսմանյան կառավարության առջև։ Այդ կեսժամյա դադարը նա օգտագործում էր մի քանի տող գրելու համար։ Անձնական մտքեր, տպավորություններ, նոթեր տարբեր իրադարձությունների վերաբերյալ։ Այդ գրառումները օգնում էին նրան կարգի բերել ցրիվ մտքերը, ինչպես նաև հիմքն էին

ապագայում գրվելիք ինքնակենսագրության։

Նրա բարակ, սակայն ցցուն քիթը և փոքր-ինչ մեծ ականջները համաչափ էին թվում նեղ և երկարավուն դեմքի վրա, որի այդ առանձնահատկությունն ընդգծում էին ճաղատացող քունքերը և սրածայր կարճ մորուքը։ Կանայք նրան գեղեցիկ էին համարում։ Պենսնեն և բեղերը նրան խիստ տեսք էին տալիս, սակայն չէին թաքցնում աչքերում արտացոլվող բարությունը։ Այդ սովորաբար հանգիստ և հարթ դեմքին երկու ծալք կար, որոնք, սկիզբ առնելով հոնքերից, բարձրանում էին դեպի ճակատը և ճյուղավորվելով՝ հորիզոնական կնճիռներ էին կազմում։ Ամերիկայի դեսպանը մտահոգ էր։

Նրան չափազանց մտահոգում էր Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների, հատկապես հայերի, ճակատագիրը։ Մոտ երկու միլիոն հայ ապրում էին Անատոլիայի արևելյան վեց վիլայեթներում՝ պատմական Հայաստանի տարածքի մի մասում, որը հասնում էր մինչև Կովկասյան լեռները՝ մասամբ գտնվելով Ռուսաստանի գերիշխանության տակ։ Բացի դրանից, հայերը նշանակալից փոքրամասնություն էին կազմում կայսրության այլ քաղաքներում, մայրաքաղաքը ներառյալ։ Կառավարությունը ծրագիր էր մշակել տեղահանելու բոլոր այդ մարդկանց և քշելու դեպի Սիրիական անապատը այն պատճառաբանությամբ, որ նրանք կարող էին աջակցել ռուսական զորքին, որը նույնպես քրիստոնյաներից էր կազմված։

Հենրի Մորգենթաուի համար պարզորոշ էր դարձել, որ կայսրության ղեկավարներն այլ նպատակ էին հետապնդում։ Նրանք ուզում էին մաքրել Անատոլիան ոչ մահմեդական ազգաբնակչությունից։ Այդ տարվա ապրիլի 24-ին մայրաքաղաքի ավելի քան երկու հարյուր մտավորականների և աչքի ընկնող քաղաքացիների բանտարկությունը ավելի քան պերճախոս էր։ Իսկ այժմ, չնայած որ երկրի տարածքով ազատ տեղաշարժը սահմանափակված էր, իսկ նամակները գրաքննության էին ենթարկվում, մայրաքաղաք լուրեր էին հասնում հայկական ջարդերի մասին։ Թեև Մորգենթաուն այլևս իրավունք չուներ օգտվելու ծածկագրից երկրի ներսում գործող հյուպատոսարանների հետ կապվելու համար, այդուհանդերձ նա երբեմն նրանցից նամակներ էր ստանում միսիոներների միջոցով։ Այդ մարդիկ՝ ամերիկացիներ, կանադացիներ, նույնիսկ գերմանացիներ, գալիս էին և նրան պատմում էին այն դաժանությունների մասին, որոնց ականատեսն էին եղել։

Նրանք կարծում էին, որ միայն Միացյալ Նահանգներն էր ի զՈրու ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա։ Գերմանացի միսիոներները ցավով նշում էին, որ Կայզերը չէր ցանկանում անդրադառնալ այդ հարցին և ընդհարվել իր դաշնակցի հետ։ Հենրի Մորգենթաուն շատ բան անել չէր կարող, նա միայն բողոքում էր, իսկ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան նրան պատասխանում էր, որ Միացյալ Նահանգները իրավունք չուներ խառնվելու կայսրության ներքին գործերին։ Եվ ըստ միջազգային դիվանագիտության կանոնների Թալեաթն իրավացի էր։

Դեսպանը դադարեց շոյել իր մորուքը, ուղղեց պենսնեն, վերցրեց գրիչը Թալեաթի հետ իր զրույցը գրանցելու համար: Նախօրեին երկու միսիոներ այցելել էին իրեն և պատմել Կոնիայում տեղի ունեցած սարսափելի իրադարձությունների մասին: Նրանց պատմածը լսելուց հետո նա առանց հապաղելու գնացել էր Թալեաթի մոտ: Նախարարը չափից ավելի անտրամադիր էր: Արդեն մի քանի ամիս էր, ինչ նա փորձում էր ազատագրել իր երկու բարեկամներին՝ Այուբ Սաբրիին և Զինունին, որոնց անգլիացիները բանտարկել էին Մալթայում: Այդ հարցը լուծելու անկարողությունն ընկճում և բարկացնում էր Թալեաթին: Նա անդադար խոսում էր այդ խնդրի մասին և Մորգենթաուից պահանջում էր միջամտել այդ գործին:

Նրանց ազատ արձակելուն ուղղված հերթական փորձը անհաջողության էր մատնվել և Թալեաթը վրդովված էր: Նա ջանում էր հանդարտ և քաղաքավարի լինել ամերիկացի դիվանագետի հետ, սակայն նրա կարճ ու հատու նախադասությունները և կատաղի դեմքը վկայում էին, որ պահը հարմար չէր մարդասիրության մասին խոսելու համար: Հետևաբար Մորգենթաուն խոսեց նախ կանադացի միսիոներ դոկտոր Մակ Նոգտի մասին, որի հետ անարդարացի էին վարվել:

— Այդ մարդը Անգլիայի գործակալն է,— պատասխանեց Թալեաթը,— և մենք դրա ապացույցն ունենք:

— Ներկայացրեք ինձ ապացույցները,— պահանջեց Հենրի Մորգենթաուն:

Քանի որ նախարարը չէր կարող դրանք ներկայացնել, ապա գերադասեց վրդովված ճառ արտասանել անգլիացիների դեմ: Ակնհայտ էր, որ նա պատրաստ էր օգտագործել իր տրամադրության տակ հայտնված Անգլիայի ցանկացած հպատակի իր բարեկամներին ազատագրելու համար: Զրույցի այդպիսի սկիզբը բարենպաստ չէր հայերի հարցը քննարկելու համար, և երբ դեսպանը անցավ այդ հարցին, Թալեաթը բռնկվեց:

— Հայերին չի կարելի վստահել: Ավելին, նրանց նկատմամբ մեր գործելակերպը չի վերաբերում Միացյալ Նահանգներին:

Մորգենթաուն պատասխանեց, որ ինքը հայերի բարեկամը լինելով՝ վրդովված է նրանց պատուհասած դժբախտությունից: Փաշան գլուխը թափ տվեց և հրաժարվեց խոսել դրա մասին: Իբրև բարի կամքի դրսևորում, նա համաձայնեց ազատ արձակել կանադացի միսիոներին: Դեսպանը գգաց, որ արդյունքի չէր հասնի, եթե պնդեր հայերի հետ կապված հարցի քննարկման վրա: Բարեբախտաբար Թալեաթի տրամադրությանը փոփոխվում էր մանկական անհետևողականությամբ. այսօր նա կոպիտ էր և համառ իսկ հաջորդ օրը՝ բարեհոգի և խանդավառ: Հետևաբար, զգուշությունից դրդված՝ պետք էր սպասել բարեհոգության պահի և ապա շոշափել այն թեմաները, որոնց մասին նա չէր սիրում խոսել: Հենրի Մորգենթաուն վայր դրեց գրիչը և աչքերը հառեց դեպի արևելք նայող լուսամատին: Այդ կողմում էր գտնվում Ռուսաստանի սահմանը, ավելի քան 1200 կմ հեռավորության վրա:

Անպտուղ դաշտավայրերի և մերկ լեռների այդ երկրում, ուր գետահովիտները միակ կանաչ օազիսներն էին, հայերը մատնված էին ճակատագրի քմահաճույքին։

Անատոլիայի հենց սրտում՝ Հալիս գետի հովտում գտնվում էր Սվասի վիլայեթի կենտրոն Սվաս քաղաքը։ Հասունացող ցորենի արտերը ոսկեզօծում էին դաշտավայրը։ Հյուսիսից և հարավից դաշտավայրը շրջափակող դեղին լեռները կարծես միանային հեռվում, և այնպիսի պատրանք էր ստեղծվում, որ քաղաքը գտնվում էր աշխարհի մեկուսացած գոգավորության մեջ։ Մինչդեռ սա միջանցք էր, որտեղով անցնում էր Կոստանդնուպոլսից Պարսկաստան տանող ճանապարհը։ Անատոլիայի բարձրավանդակը, որն ընկած էր Միջերկրական և Սև ծովերի արանքում միշտ էլ կամուրջ էր եղել Արևելքի և Արևմուտքի միջև, անցում, որն ընտրում էին նվաճողները, առևտրականները և քոչվոր ցեղերը։ Իսկ Սվասն էլ իր հերթին կարևորագույն հանգրվան է եղել քարավանների համար, որոնք մետաքս և համեմունք էին բերում Կենտրոնական Ասիայից։

Մ.թ.ա VII դ. ի վեր այդտեղ հաստատված հայ ժողովուրդը տարել էր խեթերի և պարսիկների գերիշխանությունը։ Հետագայում այդ տարածքով էին անցել Ալեքսանդր Մակեդոնացու բանակը, Կեսարի լեգեոնները, բյուզանդացիները, արաբ նվաճողները և մոնղոլական հորդաները։ Սելջուկյան թուրքերը եկան ասիական տափաստաններից, իսկ խաչակիրներն անցան երկիրը, ուղևորվելով դեպի Երուսաղեմ։ Եվ վերջապես XV դարում օսմանյան թուրքերը տիրացան երկրին, իսկ հետո իրենց գերիշխանությանը տարածեցին մինչև Աֆրիկա և Եվրոպա։

Չնայած պատերազմներին և ջարդերին՝ հայերին հաջողվել էր վերապրել և բարգավաճել։ Գործունյա և ճարպիկ լինելով, նրանք հաճախ միջնորդի դեր էին կատարում հարևան ժողովուրդների համար։ Իրենց պատմության քսանհինգ դարերի ընթացքում նրանք հինգ տարբեր թագավորություններ էին հիմնադրել, որոնք միասին գոյատևել էին մեկ հազարամյակ։ Միջթագավորությունների ընթացքում նրանք հայտնվում էին որևէ նվաճողի լծի տակ։ Մ.թ ա. I դ. Տիգրան Մեծի թագավորությունը տարածվում էր Սև ծովից մինչև Կասպից ծովը, Կովկասյան լեռներից մինչև Միջերկրական ծովի ափը։ Հայոց վերջին թագավորությանը՝ խաչակիրների դաշնակիցը, գտնվում էր Կիլիկիայում և գոյատևել էր մինչև 1375 թ.։ Հետագայում Հայաստանը, ուր Նոյյան տապանի հանգրվան Արարատ լեռն է, բաժանվել է Օսմանյան կայսրության, Պարսկաստանի և Ռուսաստանի միջև։

Բազմադարյան մշակութային ավանդույթներ, սեփական հավատք, լեզու, գիր ունենալով, հայերը դիմադրում էին ձուլման ցանկացած փորձին։ Չնայած հայերը շրջապատված են եղել մահմեդականներով, նրանք համառորեն պահպանել են իրենց դավանանքը, որն ըստ ավանդության Հայաստանում քարոզել են Սուրբ Թադեոսը և Սուրբ Բարդուղիմեոսը։ Հայերը հպարտանում էին, որ 301 թ Տրդատ Մեծ արքան հռչակել էր քրիստոնեությունը որպես պետական կրոն և

այդպիսով հիմնադրել առաջին քրիստոնեական պետությանը։ Դավանափոխության եզակի դեպքեր էին անցնումը կաթողիկե և բողոքական եկեղեցիների գիրկը, որոնց միսիոներները ակտիվ գործունեություններ էին ծավալել Անատոլիայում 19-րդ դարում։ Սակայն հայերի մեծ մասը հավատարիմ էր մնացել Հայոց Առաքելական եկեղեցուն, որը նրանց համար մարմնավորում էր ազգային ինքնուրյունը և կապը անցյալի հետ։

Սվասում, ինչպես և Անատոլիայի մնացած վիլայեթներում, մահմեդականները և հայերը լավ թե վատ գոյակցում էին չորս դար շարունակ և քաղաքի տեղագրությունը վկայում էր այդ փոխադարձ կախվածության, մասին ուր փոխադարձ հարգանքը չէր բացառում նաև որոշակի փոխադարձ անվստահություն։ Բազմաթիվ մատուռներ, վանքեր ու դպրոցներ ունեցող հայկական թաղաղամասը փռված էր սարի լանջին։ Վերին քաղաքը, իր հարուստ առանձնատներով, որոնք շրջապատված էին այգիներով ու ցանկապատերով, տեղադրված էր ավելի համեստ, տափակ տանիքներով և կրով սպիտակեցրած պատերով տների զանգվածի վերևում։ Այս՝ ներքին թաղի տների միջև գոյանում էր նեղ փողոցների և նրբանցքների լաբիրինթոսը։

Ավելի ցած ընկած քաղաքապետարանը, շուկայի հրապարակը և կառավարական շենքերը սահման էին հանդիսանում։ Դրանցից այն կողմ ծավալվում էր Կավալը, ուր ապրում էր մահմեդական ազգաբնակչությունը՝ թուրքեր, չերքեզներ և քրդեր։ Այնտեղ արևի տակ փայլփլում էին հին հոգևոր դպրոցի՝ երկնագույն ֆայանսով պատված գմբեթը, և տասնյակ մինարեթներ էին խոյանում տափակ տանիքների կողքին։ Վաճառատները, պաշտոնական նստավայրերը շարված էին կողք կողքի՝ խանդավառ խառնաշփոթի մեջ...

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 1

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 09:58-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Նախաբան | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 2 ►

Վարդան Պալյանն ամբողջ գիշեր չէր կարողացել քնել: Ժամը հինգին նա վեր կացավ ջանալով չարթնացնել կնոջը՝ Մարոյին: Տնային զգեստը հագնելով, նա գնաց իր աշխատասենյակը:

Նախօրեին սուրհանդակը հրապարակել էր Սվասի հայերի տեղահանության հրամանը: Վարդանը, որ աշխատում էր քաղաքից դուրս գտնվող հոսպիտալում, չէր լսել սուրհանդակին, սակայն աշխատանքից տուն վերադառնալիս տեսել էր խաչմերուկներում փակցված հայտարարությունները: Ոչ մի ժամկետ նշված չէր: Հայերը պետք է նախապատրաստվեին հեռանալուն և սպասեին: Այդ ընթացքում նրանք իրավունք չունեին առևտրով զբաղվելու, և նրանց արգելվում էր վաճառել իրենց ունեցվածքը: Քանի որ Վարդանը ծառայում էր օսմանյան բանակում որպես պահեստազորի բժիշկ-սպա և ուներ մայորի աստիճան, ապա պաշտոնյաների կողմից «տեղահանություն» կոչված միջոցառումը չէր կարող տարածվել նրա և նրա ընտանիքի վրա: Սակայն իր ժողովրդի պատմությունը հարուստ էր այնպիսի դեպքերով, որոնք Վարդանին դրդում էին զգուշանալու:

Բազմաթիվ նախանշաններ կային, որոնք ստիպում էին Վարդանին մտածելու վատթարագույնի մասին: Նախ, օսմանյան բանակի հայ զինվորներին զինաթափել էին, նրանք խրամատներ էին փորում կամ զինամթերք տեղափոխում, բացի դրանից բոլոր քրիստոնյաները պարտավոր էին հանձնել իրենց զենքը իշխանություններին՝ նույնիսկ որսորդական հրացանները: Հիմա էլ տեղահանություն դեպի ռազմական գործողություններից հեռու ընկած շրջաններ... Մինչդեռ ռուսական ճակատը մոտ չէր, մի քանի հարյուր կիլոմետր: Վարդանը շատ լավ էր ճանաչում Կոստանդնուպոլսի կառավարության անդամներին և գիտեր, թե ինչ կարելի էր սպասել նրանցից: Եվ հենց դրանից էլ կորցրել էր քունը:

Սենյակը, որի պատերին քարտեզներ էին փակցված, ուր կանգնած էին քիմիական նյութեր պարունակով պահարաններ և գրքերով ծանրաբեռնված գրադարակներ, թաղված էր մթության մեջ: Փեղկերի արանքից ներս թափանցող արևի ճառագայթը, որի մեջ պարում էին փոշու հատիկները, ընկնում էր դրվագանախշ գրասեղանի վրա:

Վարդանը բացեց փեղկերը և աչքերը, կկոցեց։ Տան ճակատով մագլցող վարդերի բուրմունքին խառնվել էր աթարի հոտը։ Սվասի յուրաքանչյուր տուն գոմ ուներ ուր պահում էին մեկ կամ երկու կով, այծեր կամ էլ ավանակ։ Հարուստ բնակիչները՝ նաև ձիեր։ Ուստի ութսուն հազար շունչ ունեցող բնակավայրի վրա միշտ տարածվում էր գյուղի բուրմունքը, հասնելով մինչև վերին քաղաքը, ուր գտնվում էր Պալյանների տունը։

Զեփյուռը ճոճում էր շագանակենու սաղարթը, և այնտեղից լսվում էր տատրակների երգը։ Վարդանը հենվեց լուսամուտի գոգին, և զեփյուռը հովացրեց նրա մարմինը։ Գիշերը խոնավ էր և տոթ, իսկ տագնապն ու անքնությունը էլ ավելի էին սրել շոգի գգացողությունը։ Զնհալին հետևող բուսականության գարթոնքի կարճատև ժամանակաշրջանն ավարտվել էր, և Անատոլիայում սկսվել էր սովորական երաշտը։ Բացառությամբ կարճատև և հորդառատ անձրևների՝ մինչև աշուն այլևս տեղումներ չէին լինելու։ Արևը խանձելու էր բուսականությունը, չորացնելու էր հողը և դժվարացնելու էր մարդկանց ու կենդանիների կյանքը։

Վարդանը երեսունութ տարեկան էր, սակայն իր տարիքից երիտասարդ էր երևում։ Նրա առնական դեմքը բոլորվում էր ուղղահայաց փոսիկով կամային կզակով։ Դեմքը հարթ էր և միայն աչքերի անկյուններում նշմարվում էին մանր կնճիռներ, որոնք գոյացել էին աչքերը կկոցելու սովորությունից։ Նրա քունքերին հատ ու կենտ ճերմակած մազեր կային, որոնց մասին գիտեր միայն նրա կինը, քանի որ նա վարպետորեն դրանք թաքցնում էր սանրվելիս։ Վարդանը խնամված արտաքին ուներ, միշտ սափրված էր, իսկ բարակ բեղերը կոկիկ հարդարված էին։ Նա բարձրահասակ էր՝ հարյուր ութսուներկու սանտիմետր, իսկ դա ավելի էր, քան անատոլիացի տղամարդկանց միջին հասակը։ Նրա մարզված մարմինը ուշադրություն էր գրավում ամբոխի մեջ, մանավանդ որ կրում էր եվրոպական հագուստ և ազնվատոհմ պարոնի կեցվածք ուներ։ Այս երկրում ինքնավստահությունը հարգանք էր ներշնչում, իսկ Վարդանը դրա պակասը չէր զգում։

Մինարեթների կատարներից սրբազան կանչն արտաբերող մուեզզինների ձայները միմյանց էին խառնվում։ Մահմեդականների ամենօրյա հինգ աղոթքներից առաջինը սկսելու կանչը, արձագանքելով, ներդաշնակ երգ էր դառնում։ Մուեզզինների կանչին հետևած լռությունը երկար չտևեց, քանի որ հայկական վանքի զանգերն ազդարարեցին առավոտյան ժամերգությունը։ Սվասն անկասկած վերջին բնակավայրն էր Անատոլիայում, ուր մահմեդականներն ու քրիստոնյաները միաժամանակ ծնկի էին իջնում Աստծուն աղոթելու համար։ Այլուր զանգերը լռել էին, և հնչում էր միայն մահվան ղողանջը։

Մոտակայքում լսվեց բացվող փեղկերի աղմուկը։ Այդ գիշեր Սվասում և մերձակայքում ապրող հայերից քչերն էին կարողացել քնել։ Ծերերը հիշում էին 1894թ. Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած ջարդերը։ Ասում էին, որ ջարդերին զոհ էր գնացել մոտ երեք հարյուր հազար մարդ և դա էր պատճառը, որ սուլթանին տվել էին «Կարմիր սուլթան»

մականունը։ Վարդանն այդ ժամանակ տասնյոթ տարեկան էր։ Պալյանների ընտանիքը չէր տուժել, սակայն պաշարման այն զգացողությունը, որի մեջ նրանք ապրում էին, խորը տպավորություն էր թողել Վարդանի վրա, և այդ իրադարձությունները փոխել էին նրա կյանքի ընթացքը։ Նրա հայրը՝ Թովմասը, որն իր արտաքինով, իսկ երբեմն նաև վարքագծով ցուլի էր նմանվում, արդար և մեծահոգի մարդ էր, և նրան հարգում էին նրա մահմեդական հարևանները։ Նա միևնույն ժամանակ շատ զգուշավոր էր։ Դեռևս այն ժամանակ, երբ ոչինչ չէր կանխագուշակում Անատոլիայի սրտում տեղադրված Աֆիոն-Կարահիսարում տեղի ունենալիք իրադարձությունները, նա իր ընտանեկան կալվածքը, որտեղ ափիոն էին մշակում, իսկական ամրոց էր դարձրել։ Նա վարձել էր շուրջ վաթսուն քուրդ բանվոր, հատկացրել մի հողակտոր, ուր նրանք ապրում էին ընտանիքներով իրենց վրաններում, ինչպես ապրում էին քոչվոր եղած ժամանակ։ Այդ մարդիկ գերազանց ձիավորներ էին և լավ զինվորներ ու պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել Թովմաս Պալյանի համար, որին «Աղա» էին անվանում։ Երկու տարի տևած ջարդերի ընթացքում բանվորներն ապրել էին առանց զենքը վայր դնելու և պատրաստ էին պաշտպանել իրենց Աղային, նրա ընտանիքը և ունեցվածքը։

Վարդանը սիրում էր այդ պարզ և կենսուրախ մարդկանց, որոնք կարծես միշտ երջանիկ էին։ Նրանց կանայք, ի տարբերություն թրքուհիների, չէին ծածկում իրենց դեմքը և ազատորեն խոսում էին օտարների հետ։ Վարդանն ավագ եղբոր՝ Նուբարի հետ հաճախ էր լինում նրանց ճամբարում։ Իրենց ողջ մանկության ընթացքում նրանք խաղացել էին այդ բանվորների երեխաների հետ, աշխատել էին նրանց կողքին ափիոնի դաշտերում։ Տղամարդիկ հողն էին վարում և կակաչը ցանում, սակայն երբ գալիս էր բերքահավաքի ժամանակը, բոլորը պետք է գործի անցնեին։ Այդ աշխատանքը համբերություն և ջանասիրության էր պահանջում։ Կակաչի ծաղկաթերթերը թափվելուն պես, նրանք կանաչ սերմնատուփերի վրա կտրվածքներ էին անում, որտեղից կաթնագույն հյութ էր դուրս հոսում և մգանալով թանձրանում։ Հաջորդ օրը նրանք հատուկ գդալներով քերում էին սերմնատուփերը և ափիոն էին ստանում։ Սերմնատուփերը քերելիս դրանցից նոր հնձված խոտի հոտ էր գափս։ Մեկ կիլոգրամ ափիոն ստանալու համար հազարավոր կակաչներ էին անհրաժեշտ, իսկ Պալյանները տոննաներով ափիոն էին արտահանում Եվրոպա և Միացյալ Նահանգներ, ուր դրանից բնափիոն էին ստանում բժշկական նպատակներով։

Մինչև ջարդերը Վարդանն ապրել էր բարեկեցիկ ընտանիքի երեխայի անհոգությամբ առանց մտածելու ապագայի մասին։ Նա սիրում էր գրականություն, երաժշտություն, աղջիկներ և նժույգներ։ Նրա մայրը, որը լավ երաժիշտ էր, քաջալերում էր նրա արվեստասիրությունը։ Հայրը ցանկանում էր, որ իր որդին ավելի առնական զբաղմունք ունենար, և նրան սովորեցնում էր մարդկանց կառավարել, զենք բանեցնել և ձիավարել։ Տասնվեց տարեկան հասակում Վարդանն արդեն ֆիզիկապես ձևավորվել էր որպես տղամարդ, հոյակապ ձիավարում էր և այդ գործում հավասարը չուներ իր շրջապատում։ Ջնայած ձիարշավը

վտանգավոր էր, հայրը նրան թույլ էր տալիս մասնակցելու այն խաղերին, որ կազմակերպում էին քրդերը աշխատանքից հետո։ Եվ չնկատելու էր տալիս աղախինների հետ իր որդու ունեցած արկածները։

1894 թ. իրադարձությունները դաժան հարված հասցրեցին պատանի Վարդանին։ Նա հասկացավ, որ բարի համարումը և հարստությունը չէին կարող երաշխավորել անվտանգությունը։ Ազնվությունն ու մեծահոգությունը չէին պաշտպանում անարդարությունից։ Գերագույն մի ատյան տնօրինում էր մարդկային կյանքերը, և այդ ատյանը Աստվածը չէր, այլ քաղաքականությունը։ Վարդանը սկսում էր գիտակցել, որ բոլոր հայերը իր պես բարեկեցիկ և անհոգ կյանքով չէին ապրում, որ անարդարացի օրենքները նրանց դարձնում էին Օսմանյան կայսրության խորթ զավակները։ Նրանք հատուկ հարկեր էին վճարում, նրանց արգելվում էր վարչական պաշտոններ վարել և ծառայել բանակում։ Կար հին մի օրենք, մահմեդականն իրավունք ուներ իր թիր սրությունը ստուգել քրիստոնյայի պարանոցի վրա։ Այդ օրենքը ցուցադրում էր այն նվաստացուցիչ վերաբերմունքը, որը գոյություն ուներ սուլթանի ոչ մահմեդական հպատակների՝ գյաուրների նկատմամբ։ Բացառությամբ խոշոր քաղաքների, ուր օրենքն ինչ-որ չափով գործում էր, այլուր հայերը ենթարկվում էին պաշտոնյաների քմահաճույքներին և շորթանքներին, զրկվում էին ունեցվածքից և, չկարողանալով արդարությունը վերականգնել, հայտնվում էին ճորտի կարգավիճակում։

Վարդանի կյանքում նոր նախասիրություն հայտնվեց, դա քաղաքականությունն էր, որով նա տարվեց իրեն հատուկ կրքոտությամբ։ Տասնինը տարեկանում նա դարձել էր Օսմանյան կայսրության պատմության ու քաղաքականության, արտաքին աշխարհի, հատկապես եվրոպական տերությունների հետ նրա հարաբերությունների իսկական գիտակ։ Նա վճռել էր, որ իրավաբան էր դառնալու, ստանձնելու էր իր ժողովրդի պաշտպանությունը և փոխելու էր իրավիճակը կայսրությունում։ Թովմաս Պալյանը այլ ծրագրեր ուներ որդու ապագայի վերաբերյալ. Վարդանը պետք է դեղագործ քիմիկոս դառնար, և դա բխում էր ընտանեկան գործի շահերից։ Հայրը երազում էր ափիոնը որպես հումք վաճառելու փոխարեն դրանից բնափիոն ստանալ տեղում։ Դա շատ եկամտաբեր կլիներ և հնարավորություն կտար վերամշակել նաև այլ ագարակատերերի արտադրանքը։

Բուռն վիճաբանություններից հետո Վարդանը ստիպված եղավ ենթարկվել հոր կամքին և մեկնեց մայրաքաղաք՝ Հայկական կենտրոնական վարժարանում, իսկ հետո էլ Ռոբերտ Քոլերում՝ Կոստանդնուպոլսի ամերիկյան վարժարանում սովորելու, ուր կրթություն էին ստանում հայերի, հույների և հրեաների զավակները։ Նա ապրում էր իր քեռու՝ Մեսրոպ Մեսրոպյանի տանը, որը տպարան ուներ։ Նրա ավագ որդին՝ Պարգևը, ապրում էր Նյու Յորքում, ուր նա ղեկավարում էր Պալյանների ափիոնի վաճառքի գրասենյակը։ Կրտսերը՝ Տիրանը, Վարդանի հասակակիցն էր, և նրանք իրար հետ կապվեցին այնպես, կարծես երկվորյակ լինեին։ Տիրանը նույնպես նախորդ

տարիների իրադարձությունների ազդեցության ներքո հակվել էր դեպի քաղաքական գործունեությունը։ Սակայն, ի տարբերություն Վարդանի, որը երազում էր սահմանադրական փոփոխությունների և հայերին բազմիցս խոստացված բարեփոխումների իրականացման մասին, Տիրանը զինված պայքարի ջատագովն էր։ Այդ հակասությունը չէր խանգարել նրանց ներգրավվելու նույն հայկական հեղափոխական խմբակների մեջ և մտերմանալու երիտթուրքերի շարժման իդեալիստ անդամների հետ։ Տիրանի ազդեցության տակ Վարդանը դադարեց բանաստեղծություններ գրել և նվիրվեց քաղաքական լրագրությանը։

Վարդանն ուսանում էր համալսարանում, երբ հայրը մահացավ տիֆից։ Մայրը՝ Թագուհին, մահացավ ամուսնու վախճանից երեք ամիս անց, և բժիշկը չկարողացավ ախտորոշել նրա հիվանդությունը, որդիները կռահեցին, որ մայրը մահացել էր սիրուց։ Վարդանն այլևս ստիպված չէր վերադառնալ Աֆիոն-Կարահիսար և ափիոնը բնափիոնի վերափոխել։ Նրա եղբայր Նուբարը համաձայն էր կառավարել ընտանեկան կալվածքը։ Ինչպես և Վարդանը, նա բնափիոնի մասին առանձնապես չէր էլ մտածում։ Նա իր երազանքն ուներ, որին նույնպես հայրը հակադրվել էր։ Դա իրենց հողերում բխող հանքային ջրի շշալցումն էր և վաճառքը Փոքր Ասիայի տարածքում։ Վարդանն ավարտեց ուսումը և դեղագործի պաշտոն ստանձնեց Կոստանդնուպոլսի Եդիկալեի հայկական հիվանդանոցում։ Նա բավականաչափ ազատ ժամանակ ուներ գրելու և քաղաքական հավաքներին մասնակցելու համար։ Քիչ անց նա իր դեղատունը բացեց Բերայի կենտրոնական փողոցում՝ շարունակելով լրագրությամբ զբաղվել։

Հազիվ քսան տարեկան էր, երբ արտասահմանում հրապարակվեցին նրա հոդվածները, որոնց նամակով արձագանքեց Անատոլ Ֆրանսը, և Վարդանը այդ ժամանակից ի վեր նրա հետ նամակագրական կապ էր պահպանում։ Ֆրանսիացի գրողի վերջին նամակը, ինչպես նաև անգլիական և ամերիկյան պարբերականների՝ «Հայկական հարցին» վերաբերող հոդվածների պատվերները դրված էին նրա գրասեղանին, սակայն Վարդանը չէր կարող պատասխանել նամակին և գրել այդ հոդվածները առանց թշնամիների հետ համագործակցության մեջ մեղադրվելու։ Արդեն մի քանի ամիս նրա գրողի և լրագրողի գործունեությունը կասեցված էր, և նա իրեն անկարող էր զգում օգնելու հայերին այդ ճակատագրական պահին։

Հեռվում զռում էր ավանակը։ Աքաղաղները ձայն ձայնի էին տվել քաղաքի չորս ծայրերում։ Մետաղապատ անիվները ճռնչացին փողոցի սալահատակին։ Սվասում կյանքն ընթանում էր իր հունով։ Խոհանոցից աշխատասենյակ էին հասնում կաթսաների զնգզնգոցը և զրույցի մեղմ ձայները։ Լսվեց աստիճանների ճռռոցը և ոտնաձայններ՝ աղախիններից մեկը ամանով տաք ջուր թողեց տանտիրոջ դռան մոտ։

Վարդանը մոտեցավ լուսամուտի ձախ կողմում դրված գրադարակներին և մատն անցկացրեց երեք գրքերի կռնակներով։ Այդ գրքերը նա հրատարակել էր ժնևում քանի որ դրանց

հրատարակությունը Կոստանդնուպոլսում կարգելվեր։ Երեքն էլ թարգմանվել էին ֆրանսերեն և անգլերեն։ «Քրիստոնյաների ճակատագիրը Օսմանյան կայսրությունում», «Հայկական հարց. անարդարության հիսուն տարի»։ Ինչ վերաբերում է վերջինին՝ «Ազգերի կայսրություն» գրքին, ապա այն քարոզում էր կայսրության փլուզումը և դրա փոխակերպումը ինքնավար պետությունների արդի դաշնության՝ Պաղեստին, Սիրիա, Արաբիա, Թուրքիա, Քրդստան և, իհարկե, Հայաստան։ Այս աշխատությանն որոշակի արձագանք էր ունեցել քաղաքական շրջանակներում, նույնիսկ Միացյալ Նահանգներում և Ռուսաստանում։ Այս գրքի պատճառով Վարդանի անունը հայտնվել էր սուլթանի ոստիկանության վտանգավոր հեղափոխականների ցուցակներում։ Երիտթուրքերի Իթթիհատ՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեին անդամակցելու և իր քաղաքական հոդվածների պատճառով Վարդանը կասկածելի տարր համարվեց և շուրջ մեկ տարի ստիպված էր թաքնվել, ապրելով ընկերների մոտ և հաճախակի փախելով հասցեն։ Այդ ժամանակ նա երեսուն տարեկան էր և նոր էր ամուսնացել։ Մարոն անտրտունջ կիսում էր նրա ճակատագիրը։ Նա ողջունում էր Վարդանի գործունեությունը և համամիտ էր, որ անհրաժեշտ էին սոցիալական փոփոխություններ։

Հետագայում, 1908 թ. երիտթուրքերի հեղափոխությունը իշխանությունից հեռացրեց Աբդուլ Համիդ II բռնակալ սուլթանին, և Վարդանը դուրս եկավ ընդհատակից։ Փոքր Ասիայում այդպիսի երջանիկ պահ երբեք չէր եղել։ Մարդիկ պարում էին Կոստանդնուպոլսի փողոցներում։ Հրեաները, թուրքերը, հույները, հայերը և մնացած բոլորը համբուրվում էին։ Բոսֆորի ափին կառուցված քաղաքի վրա նոր արշալույս էր բացվում։ Հավասարություն, եղբայրություն, հանդուրժողականություն։ Որպես Իթթիհատի անդամ՝ մի շարժում, որն ըմբոստացել էր սուլթանի դեմ խորհրդարանական կարգեր հաստատելու համար, Վարդանն ընդգրկվեց նոր կառավարության մեջ։ Ինչպես և բազմաթիվ այլ հայեր, որոնք իրավունք չունեին զինվորական կարիերա ընտրել, Վարդանը մտել էր պահեստազորի շարքերը՝ նոր իշխանությունների նկատմամբ իր վստահությունը վկայելու համար։ Եվ այդ պատճառով նա այսօր ծառայում էր օսմանյան բանակում։

Դա 1908 թ. հուլիսին էր։ Շատ շուտ վեճեր ծայր առան, տարաձայնություններ, որոնց հետևանքով երկու ճամբար գոյացան։ Մի կողմից արդիականներն էին, որոնք եվրոպականացված էին ու ազատական, և նրանց առաջնորդն էր Վարդանը, իսկ մյուս կողմից պահպանողականներն էին, որոնք բացահայտեցին օտարատյացների իրենց իրական դեմքը։ Վերջիններս Էնվերի, Թալեաթի և Ջեմալի ղեկավարությամբ պանթուրանիզմ էին քարոզում, որի նպատակն էր բոլոր քաղաքացիների թրքացումը և կայսրության տարածումը մինչև Կենտրոնական Ասիայի հարթավայրերը, ուր թուրքական ցեղեր էին ապրում։

Մի քանի ամիս տևած ներքին պայքարից հետո ազգայնամոլները սկսեցին վերահսկել կառավարությունը, և երիտթուրքերի շարժումը

վերածվեց ցուցանակի, որը քողարկում էր բռնապետության հաստատումը։ Կառավարությունից իրեն հեռացնելուց առաջ Վարդանը հրաժարական էր ներկայացրել և, զգուշությունից դրդված, լքել էր մայրաքաղաքը։ 1909 թ. ապրիլին Կիլիկիայում հարյուր հազարավոր հայերի ջարդերը ազդարարում էին նոր քաղաքականության ծնունդը։

Վարդանը մի լուսանկար հանեց քարտարանի առաջին դարակից. կառավարության խմբակային լուսանկարն էր, որի անդամն էր նաև ինքը։ Նա մոտեցավ լուսամուտին՝ դեմքերն ավելի լավ տեսնելու համար։ Առաջադիմականներից շատերն առեղծվածային կերպով անհայտացել էին, իսկ չափավորները, որոնց շարքերում էր Վարդանի բարեկամ Հալիթը, որը լուսանկարում ձեռքը դրել էր նրա ուսին, հեռացվել էին իշխանությունից։ Բանակ վերադառնալով Հալիթը հասել էր գեներալի կոչման։ Հնարավո՞ր էր, որ նա հրաժարված լիներ արդարության իր գաղափարներից։

Միայն այն միտքը, որ էնվերն ու Թալեաթն այսօր գլխավորում էին կառավարությունը, վրդովում էր Վարդանին։ Նա հշեց, թե ինչպես էր ինքը դիմադրում նրանց վերելքին։ Նա հատկապես հիշեց Թալեաթի կեղծավորությունը, իրականությունն ու փաստերը խեղաթյուրելու կարողությունը։ Այժմ նա վարչակարգի ամենաազդեցիկ մարդկանցից էր, և հայերի տեղահանությունը նրա ձեռքի գործն էր։ Վարդանը պատառոտեց ուսանկարը և գցեց մոխրամանի մեջ։ Հայացքը պտտելով սենյակով մեկ, նա մտածեց, որ ճիշտ կլիներ, եթե ոչնչացներ իր նամակագրությունը, հատկապես իր քեռորդի Տիրանի հետ, և արտասահմանյան ամսագրերում տպագրված իր հոդվածների օրինակները։

* * *

Վարդանը դռան տակից վերցրեց արդեն սառած ջրի կուժը և սենյակ մտավ։ Մարոն դեռ քնած էր։ Նա ամբողջովին մերկ էր, ծածկոցը վայր էր ընկել պղնձյա ճաղերով լայն մահճակալից։ Կողքի պառկած, ծնկները ծալած, նա մեջքն արել էր դռանը։ Նրա շագանակագույն խիտ վարսերը արձակվել էին և ծածկել էին բարձն ու նրա նուրբ և սլացիկ պարանոցը։ Առավոտյան ցրված լույսն ընդգծում էր նրա բոլորակ ուսերը, լիքը կոնքը։ Նրա մեջքը ստվերում էր և այդ պատճառով ավելի բարակ էր թվում։ Կոնքը լիքն էր, ազդրերը՝ նրբագեղ, իսկ սրունքները հիասքանչ բոլորկություն ունեին։ Վարդանը հուզվեց տեսնելով այդ կատարյալ ուրվագիծը, որը չէին խաթարել երկու հղիությունները, որոնցից երկրորդն ընդամենը մի քանի ամսվա պատմություն ուներ և ավարտվել էր վիժումով։ Բարակ և նիհար մատներով նուրբ ծեռքը հանգչում էր սավանի վրա։

Երբ իրենք ամուսնացան՝ ութ տարի առաջ, Մարոն քսան տարեկան էր։ Այդ պահից ի վեր նրանք կատարյալ երջանկություն էին վայելում, և Վարդանի սերն ու տենչանքը բազմապատկվում էին ժամանակի

ընթացքում։ Սերը Մարոյի հանդեպ նրա հիշողությունից ջնջել էր բոլոր նրանց, ում նա սիրել էր։ Վարդանը, որ կնասերի համբավ ուներ և հաճախ միաժամանակ երկու սիրուհի էր պահել, այժմ, ի զարմանս հենց իրեն, շատ հավատարիմ ամուսին էր։ Դա նրա արժանիքը չէր, քանի որ պարզապես նա այլևս ուշադրություն չէր դարձնում այլ կանանց վրա և նույնիսկ չէր էլ նկատում, որ նրանցից ոմանք ջանում էին գրավել իր ուշադրությունը։

Վարդանը վայր դրեց կապույտ ճենապակյա սափորը նույն գույնի թասի մոտ և կռացավ Մարոյի վրա։ Մի կողմ տանելով նրա մազերը, Վարդանը շրթունքները հպեց նրա տաք ծոծրակին։ Կինը մեղմ տնքաց և առանց արթնանալու մեջքի շրջվեց։ Նա արտակարգ գեղեցիկ էր, և շատերը համարում էին, որ Մարոն Սվասի ամենագեղեցիկ կինն էր։ Գունատ մաշկը և վճիտ դիմագծերը նրան ազնվաշուք տեսք էին տալիս, իսկ խոշոր սև աչքերը և լիքը շուրթերը բացահայտում էին նրա գգայնականությունը։ Նայելով ինքնամոռաց կերպով քնած կնոջը, Վարդանը նրա դեմքին մանկության հետքեր հայտնաբերեց՝ յոթ տարեկանում արված նրա լուսանկարում առկա անմեղությունն ու պարզությունը։ Մարոն Վարդանին շատ նուրբ թվաց և նա նրան իր գիրկն առավ։ Մարոն հանկարծ բացեց աչքերը, և կարծես վախեցած լիներ։ Հետո ժպտաց, սակայն նույնիսկ ժպիտը մինչև վերջ չջնջեց վախի այդ արտահայտությունը։ Նա իր շուրթերը պարգևեց Վարդանին և նրանք երկար համբուրվեցին, հետո նա գլուխը դրեց ամուսնու կրծքին։ Վարդանը նրան գրկեց, կարծես ուզում էր պաշտպանել նրան։

— Ի՞նչ է լինելու մեզ հետ,— մրմնջաց Մարոն։

Վարդանը լռում էր՝ ձևանալով, թե չէր լսել հարցը, սակայն նրա մկանները լարվեցին։ Հենց այդ հարցն էր նրան տանջել ողջ գիշեր։ Նա մեղմորեն ազատվեց Մարոյի գրկից, մոտեցավ հայելուն և սկսեց սրել իր ածելին կաշվե գոտու վրա։

— Ի՞նչ է լինելու մեզ հետ,— կրկնեց Մարոն այս անգամ ավելի բարձրաձայն և մտահոգ ձայնով։

Վարդանը շրջվեց և պատասխանեց վստահ ձայնով.

— Այս միջոցառումը չի վերաբերում զինվորականներին և նրանց ընտանիքների անդամներին, ես դա քեզ արդեն ասել եմ։

— Իսկ մեր բարեկամնե՞րը։ Մեր հարևանե՞րը։ Սվասի հայությո՞ւնը։

— Դեռևս ոչինչ չի պատահել, Մարո։ Օսմանյան կայսրությունում առաջին անգամ չէ, որ հրահանգը թղթի վրա է մնում։ Պետք չէ հուսահատվել։

Մարոն դեմ չէր, որ իրեն համոզեին, սակայն Վարդանի ձայնի մեջ նա անվստահություն էր զգում և չէր կարողանում խաբվել։ Վարդանի վստահությունն ընդամենը դիմակ էր։ Ի դեպ, ինքն էլ նուն կերպ էր վարվում իր սիրած մարդկանց շահաբեկելու համար։ Նա նույնքան տեղյակ էր քաղաքական իրավիճակին, որքան ամուսինը։ Վերցնելով իր

օրագիրը մահճակալի կողքին դրված մահճասեղանի դարակից, նա թիկնեց բարձին՝ գրելու համար։ Միտքը ոչինչ չէր գալիս, ավելի շուտ նրա գլխում խառնվել էին հարյուրավոր մտքեր։ Նա վայր դրեց մատիտը և հարցրեց.

— Մենք ոչինչ չե՞նք կարող անել։ Զգիտեմ... միգուցե ճնշում գործադրվի բանակի շտաբի, գավառապետի վրա... Մումթազ բեյը միշտ արդարացի է եղել հայերի նկատմամբ։

— Հրամանը Պոլսից է եկել։ Այն ստորագրել է անձամբ ներքին գործերի նախարարը։

Մարոն գլուխը կախեց։ Հենց այդ Թալեաթի և նրա կողմնակիցների պատճառով նրանք ստիպված եղան թողնել մայրաքաղաքը և ապաստանել այս գավառական քաղաքում այն պահին, երբ ինքը պետք է ծննդաբերեր։ Նա հիշեց դեպի Սվաս կատարած իրենց ճանապարհորդությունը։

— Ես չեմ կարողանում պատկերացնել այդ տեղահանությունը։ Ինչպե՞ս են նրանք այդքան մարդ տեղափոխելու։

Վարդանը նույնպես չէր պատկերացնում, թե ինչպես կարելի էր իրականացնել այդ ծրագիրը մի երկրում, ուր չկար երկաթուղի, իսկ ճանապարհներն արժանի չէին իրենց անվանմանը։ Երեսուն հազար հայ միայն Սվասում կար։ Միգուցե երկու միլիոն՝ ամբողջ Անատոլիայում։ Ինչպե՞ս պետք է համակարգեին նրանց և նրանց ունեցվածքի տեղափոխությունը։ Վարչակազմը չէր կարողանում կարգավորել բանակի համար նախատեսված պարենի առաքումը։ Նրան մտահոգում էր ոչ միայն տեղահանությունը, այլև դրա իրականացման պայմանները։ Այդ միջոցառման հետևանքը կարող էր լինել միայն քաոսը, որը բազում հանցագործությունների պատճառ կդառնար։ Վարդանն իր մտահոգությունը չկիսեց Մարոյի հետ։

— Հարցդ տեղին է, Մարո։ Ես կարծում եմ, որ դա անհնարին է և որ կառավարությունն այդ բանը շուտ կգիտակցի։ Զինվորականները կհիշեցնեն քաղաքական գործիչներին, որ երկրի բոլոր ռեսուրսները պետք է ծառայեն ռազմական գործողություններին։

Նա օճառը փրփրեցրեց և քսեց դեմքին։ Մարոն լոռ նրան էր նայում և նրանց հայացքները երբեմն խաչաձևվում էին հայելում։ Վարդանի ձախ աչքի ներքևի կոպի խալը ինչ-որ տարօրինակություն էր հաղորդում նրա անթափանցելի հայացքին։ Անթափանցելի՝ օտարների համար, սակայն բազմաթիվ նշաններ կային, որոնցով Մարոն կռահում էր նրա հոգեվիճակը։ Վարդանի մարզված և միևնույն ժամանակ սլացիկ մարմինը, աշխույժ և փայլուն աչքերը, թեթևակիորեն դուրս ցցված այտոսկրերը և կամային կզակը հանդարտ ուժի տպավորություն էին թողնում, որն ընդգծվում էր սափրվելիս նրա շարժումների ճշգրտությամբ։ Մարոն դողաց։ Նա ուզում էր, որ Վարդանն իրեն գրկեր և ցրեր իր հոգու վրա ծանրացած տագնապը։

— 1909 թ. մենք պետք է հեռանայինք երկրից։

Նա այդ բառերն արտասանեց առանց չարության կամ կշտամբանքի, ավելի շուտ չեզոք տոնով, որպես փաստի արձանագրում։

Վարդանը Մարոյին նայեց հայելու մեջ ածելին այտին սեղմած և ասաց.

— Եվրոպայում այսօր մենք ստիպված կլինեինք դիմակայել պատերազմի դժվարություններին։

Մարոն չասաց, որ կար նաև Նյու Յորքը, ուր Վարդանը կարող էր ներկայացնել Պալյանների շահերը իր քեռորդի Պարգևի փոխարեն։ Ամուսնության տարիներին նրանց միջև ծագած միակ վեճը վերաբերում էր նրանց բնակության վայրին Կոստանդնուպոլսից հեռանալուց հետո։ Աֆիոն-Կարահիսարը մերժվել էր հենց սկզբից մայրաքաղաքին շատ մոտ լինելու պատճառով։ Մարոյին, որը ծնվել էր մայրաքաղաքում, չէին գրավում Անատոլիայի գավառները, և նա պատրաստ էր հեռանալ կայսրությունից։ Նա գերադասում էր հաստատվել որևէ մեծ քաղաքում, ուր կլիներ խոշոր հայկական համայնք, կարևոր չէր Փարիզում, Մարսելում, Ժնևում, թե Լոնդոնում։ Միայն թե այնտեղ կամայականությունը չգերիշխեր։ Սակայն Վարդանը, չնայած իր արևմտյան կրթությանը, անկեղծորեն կապված էր Փոքր Ասիայի՝ իր ժողովրդի հայրենիքի և մեծ քաղաքակրթությունների օրրանի հետ։ Նա սիրում էր այդ երկրի բնակիչներին, բնությունը, նույնիսկ այդ երկրի քարերը, որոնք նա սկսել էր հավաքել մանուկ հասակից։ Եվ, բացի դրանից, այդ ժամանակաշրջանում նա հույս էր փայփայում քաղաքական ապագա ունենալ Անատոլիայում։ Նա դեռևս չէր հրաժարվել անկախ Հայաստանի գաղափարից։

Մարոն անհանգիստ էր և եղունգն էր կրծում.

— Իսկ ի՞նչ կլինի քո եղբայր Նուբարի, Պոլսի մեր ազգականների հետ։ Մենք նրանցից լուր չունենք շուրջ երկու ամիս։

Մայիս ամսին նրանք նամակ էին ստացել Արփինե մորաքույրից, որը հաղորդում էր, թե Տիրանին հաջողվել էր խույս տալ ապրիլի 24-ի բանտարկություններից։ Հարյուրավոր հայ մտավորականներ, գրողներ և աչքի ընկնող քաղաքացիներ ձերբակալվել և տարվել էին երկրի խորքը։ Նրանց հարազատները դեռևս չգիտեին, որ նրանցից մեծ մասին կոտանքների էին ենթարկել և սպանել։ Վարդանը պատասխանեց.

—Ես կարծում եմ, որ մեր ազգականներին վտանգ չի սպառնում, քանի որ մայրաքաղաքում դիվանագետներ և օտար լրագրողներ կան։ Ինչ վերաբերում է Նուբարին, ապա նա ժառանգել է մեր հոր գրեթե հիվանդագին զգուշավորությունը։ Ջեմ զարմանա, եթե նա Կոստանդնուպոլիս՝ Մեսրոպյանների մոտ մեկնած լինի։ Մարոն մտովի իր հայրենի քաղաքը տեղափոխվեց։ Հիշեց Մեսրոպ քեռու և Արփինե մորաքրոջ բնակարանը, Բերայի կենտրոնական փողոցը, Ոսկեղջյուրը, Ղալաթիայի նավահանգիստը.

— Իսկ մենք չե՞նք կարող Պոլիս վերադառնալ։

— Այս պահին դա անհնար է, և դու շատ լավ դա գիտես։ Ես զորակոչված եմ և Սվաս եմ նշանակված։

— Դու դեռևս բարձրաստիճան թուրք բարեկամներ ունես։ Հալիթը գեներալ չէ՞։ Վարդան, ես վախենում եմ։

Վարդանը դեմքն էր չորացնում և հանկարծ անշարժացավ։ Նրա հայացքը սառեց, և Մարոն հասկացավ, որ նրա գլխում ինչ-որ գաղափար ծագեց։ Նա գլուխը թափ տվեց և ասաց՝ ինքն իրեն պատասխանելով.

— Եթե իհարկե...

Նրա խոսքը կտրեց դռան թակոցը։ Դժվար չէր կռահել, թե ով էր դա։ Ձայնը բարձրացնելով, որպեսզի որդին իրեն լսի, Վարդանը հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

— Կարո՞ղ եմ մտնել,— հնչեց բարակ մի ձայն։

— Ոչ, Թովմաս։ Մենք հագնվում ենք։

— Հա՛... Իսկ ես կարո՞ղ եմ հարդարել Հուր Կրակին, հայրիկ։

— Ես քեզ արգելում եմ։ Նա շատ նյարդային է։ Դու ինձ կօգնես նրան թամբել։

— Եղավ,— պատասխանեց երեխան հիսաթափված ձայնով։— Ես Զեյնաբի հետ կգնամ ջուր բերելու։

Թովմասը, որ եկել էր մատների ծայրերին, աղմկոտ հեռացավ։ Վարդանը համազգեստն էր հագնում։

— Ի՞նչ էիր ուզում ասել,— հարցրեց Մարոն, որը պատրաստ էր կառչելու ամենաաննշան հույսից։

— Դա դեռ շատ աղոտ է և ես պետք է լավ մտածեմ։ Մենք կխոսենք դրա մասին երեկոյան։

Պնդելն անիմաստ էր։ Վարդանը հարցերը քննարկում էր միայն այն ժամանակ, երբ համոզված էր, որ իրավացի էր և երբ նրա հղացած միտքը վերջնականապես ձևավորվել էր։ Մարոն հառաչեց.

— Ես հրավիրել էի նավապետ Արմենին և Արաքսիին մասնակցելու Թովմասի տարեդարձին։ Բայց հիմա...

Նրանք լուռ միմյանց նայեցին։ Երկուսն էլ մտածում էին իրենց որդու մասին, որի վեց տարին լրանում էր հունիսի 30-ին։ Մարոյի դեմքն էլ ավելի մռայլվեց, և Վարդանը, ժպտալու ճիգ անելով, համբուրեց նրան։

— Ոչինչ, որոշումդ մի փոխիր, կանենք այնպես, ինչպես նախատեսել էինք։

— Այո,— հառաչեց Մարոն,— թող նա լավ հիշողություն պահպանի։ Ո՛վ գիտի, երբ մենք կկարողանանք...

— Հույսդ մի կտրիր, սիրելիս։

Մարոն գլխով արեց՝ առանց առանձնապես համոզված լինելու։

* * *

Հերձաքարով սալահատակված նախասրահի դռները մի կողմից՝ տանում էին դեպի մեծ և փոքր հյուրասենյակները, իսկ մյուս կողմից դեպի ճաշասենյակը, խոհանոցը և աղախինների սենյակները։ Այդտեղ Վարդանը ցուցադրում էր հին հրազենի իր հավաքածուն։ Հրացանների մույթերը դատարկ էին, քանի որ պարտաճանաչ մի պաշտոնյա տարել էր կայծքարե և պատրույգավոր հրացանները, երբ կառավարությունը բռնագրավել էր քրիստոնյաների մոտ պահվող զենքը։ Վերին հարկը տանող նախշազարդ բազրիքով լայն սանդուղքի տակ կանգնած էր Թովմասը։ Կարճ տաբատով, սպիտակ վերնաշապիկով, քուղով կապված կոշիկները հագին նա հորն էր սպասում իր անբաժան ընկեր Սասուն անունով փոքր սպանիելի ընկերակցությամբ։ Երեխան խոշոր էր և ամրակազմ, հատկանիշներ, որ նա ժառանգել էր Վարդանից։ Կարճ կտրած սև մազերը բոլորում էին մեծ աչքերով նուրբ դեմքը, որն ավելի շուտ նմանվում էր մոր դեմքին, իսկ երբ նա կիտում էր հոնքերը, ապա մոր պես համառ էր թվում։

Հայկական ավանդույթի համաձայն, Թովմասին անվանել էին հորական պապի պատվին։ Երեխան Վարդանի բերկրաքն էր ու հպարտությունը, քանի որ նրա մեջ ինքն իրեն էր նշմարում։ Սակայն ի՞նչ ապագա էր սպասում նրան այս երկրում։ Վարդանը ցանկանամ էր, որ Թովմասն իր պես անհոգ ու երջանիկ մանկություն ունենար՝ հագեցած խաղերով և կյանքի՝ նախապատրաստող բազում մանր հայտնագործությունների հրճվանքով։ Սակայն վրա հասած խառնակ ժամանակաշրջանը դրա հնարավորությունը չէր տալիս։

— Ես Ջամիլային օգնեցի ջուր և վարսակ տալ ձիերին, իսկ Ջեյնաբին էլ օգնեցի կովերին կթել,— հայտնեց երեխան հպարտությամբ։

— Լավ է, հոգիս։ Սակայն դու չպետք է մոտենաս ձիերի ոտքերին, հասկացա՞ր։ Հիշիր թե ինչ պատահեց Սասունին։

— Այո՛, հայրիկ։

Թովմասը շոյեց իր շանը։ Նա հիշեց, թե ինչպես էր վախեցել, երբ ձին աքացի էր տվել շանը և նա մի քանի շաբաթ կաղում էր։ Վարդանը համբուրեց երեխային, բարձրացրեց նրան և նստեցրեց իր ուսերին։

— Հե՛յ, հե՛յ,— բղավեց Թովմասը, երբ նրանք դռան շեմից անցան։

Պալյանները միասին էին նախաճաշում միայն կիրակի օրերը։ Մնացած օրերին Վարդանը բավարարվում էր մուգ թեյով, իսկ Թովմասը սպասում էր, որ մայրն իջներ և իրեն ընկերակցեր նախաճաշի ժամանակ։ Ինչ վերաբերում է Ազնիվ խանումին՝ Մարոյի մորը, ապա նա

արթնանում էր լուսաբացին և նախաճաշում էր երկու թուրք աղջիկների՝ Զեյնաբի ու Ջամիլայի հետ միասին: Իրականում նրանք աղախիններ չէին, այլ պարզապես դեռահաս աղջիկներ էին, որոնք ապրում էին նրանց տանը: Ծագումով նույն գյուղից, տասնմեկ տարեկան հասակում նրանց ծնողները նրանց հանձնել էին այդ հայկական ընտանիքին, ուր աղջիկները պետք է վարվեցողություն և տունը վարելու արվեստ սովորեին: Այսինքն այն ամենը, ինչ անհրաժեշտ էր կատարյալ տանտիկին դառնալու համար, երբ տասնչորս կամ տասնհինգ տարեկանում գար նրանց ամուսնանալու ժամանակը: Ագնիվ խանումը նրանց իր հովանու տակ էր առել և արդեն երեք տարի էր, ինչ նրանց վրա էր բանեցնում սիրո այն չափավոր իշխանությունը, որ նա այլևս չէր կարողանամ գործադրել իր սեփական դստեր նկատմամբ:

Այգու խորքում գտնվող ախոռում երեք ձի կար: Երկուսը արաբական զտացեղեր էին, որոնց հեծում էին Վարդանն ու Մարոն, ու մի վարգաձի, որին լծում էին կառքին: Ախոռում իրենց մսուրներն ունեին երկու կաթնատու կովեր: Հուր Կրակին թամբելու ամբողջ ընթացքում Թովմասն անդադար հարցեր էր տալիս հորը. ինչպե՞ս է կոչվում այս թամբակալը, ինչի՞ համար է այն մեկը, ինչպե՞ս են ձիերը քուռակ ունենում: Վարդանը համբերատար պատասխանում էր նրա հարցերին՝ բացատրություններ տալով: Տղայի անհագ հետաքրքրասիրությունը դուր էր գալիս հորը, ինչը նա խելացիության նշան էր համարում: Միակ երեխան լինելով և հասուն մարդկանց շրջապատում դաստիարակվելով, Թովմասն իր տարիքի համեմատ շատ խելացի էր: Նա ավելի շատ բան էր հասկանում, քան ցույց էր տալիս, և հաճախ օգուտ էր քաղում այն բանից, որ իրեն երեխա էին համարում և վերաբերվում համապատասխան կերպով:

Սասունը, որն այլևս չէր համարձակվում մոտենալ ձիերին, դռան բացվածքում էր մնացել:

— Հայրիկ, դու ինձ պոնի ե՞րբ կնվիրես:

Վարդանը խորհրդավոր տեսքով ասաց.

— Շատ շուտով:

— Ես անհամբերությամբ սպասում եմ այն օրվան, երբ քեզ և մայրիկի հետ ձիավարելու կգնամ:

Քանի Վարդանը ստուգում էր ձիու պայտերը, Թովմասը վերադարձավ իր թեմային:

— Այսօր ամսի քանի՞սն է, հայրիկ:

Վարդանը ձևացավ, թե մոռացել է որդու ծննդյան տարեդարձի մասին: Դժվարությամբ ժպիտը պահելով, նա անտարբեր ձևանալով պատասխանեց.

— Հունիսի երեսունը: Իսկ ինչո՞ւ:

— Հենց այնպես,— պատասխանեց երեխան, թաքցնելով հիասթափությունը:

Տեսնելով, որ հայրը ստուգում է վարգաձիու լծասարքը և յուղում է կառքի առանցքները, Թովմասը հարցրեց.

— Մենք զբոսանքի՞ ենք գնալու։

Եվ դարձյալ որդու խորաթափանցությունը զարմացրեց Վարդանին։

— Որքան գիտեմ, ոչ։ Սակայն իմաստուն մարդը միշտ շրջահայաց է լինում։ Պապիդ խոսքերն են։

Երեխային ցրելու համար Վարդանը նրան թամբին նստեցրեց և սանձը ձեռքը տվեց։ Քթափոկով ձիուն ուղղություն տալով, նրան տարավ դեպի շքամուտքը, ուր կանգնած էր Ազնիվ Խանումը՝ սկուտեղը ձեռքին։ Դա ալեխառն մազերով մոտ յոթանասուն տարեկան կին էր։ Ամուսնու մահից ի վեր, արդեն ութը տարի նա միայն սև զգեստ էր կրում։ Փոքր և նիհար, նուրբ էակի տպավորություն էր թողնում, սակայն այդ արտաքինը ամենևին չէր համապատասխանում նրա գործունյա խառնվածքին և հզոր առողջությանը։ Աշխույժ սև աչքերը, կետ քիթը և բարձր ձայնը ավելի էին սազում նրա տիրական բնավորությանը։

Նրա թոշնած մաշկը զարմանալի ճերմակություն ուներ։ Ազնիվ խանումը խուսափում էր արևից և համարում էր, որ թուխ մաշկը գեղջկուհիների առանձնահատկությունն է։ Իսկական քաղաքաբնակ լինելով, նա դժկամությամբ էր հեռացել Կոստանդնուպոլսից՝ դստեր և փեսայի հետ Սվաս մեկնելու համար։ Ի՞նչ կարող էր անել։ Մարոն նրա միակ երեխան էր, իսկ նրա երկու եղբայրները, որոնք հաստատվել էին Թեհրանում, վաղուց մահացել էին։

Բացի դրանից, Վարդանի մայրը մահացել էր և Ազնիվ խանումը պետք է ստանձներ փեսայի տան կառավարումը, ինչպես ընդունված էր Փոքր Ասիայում։ Մարոն դեմ էր այդ սովորույթին, և դա պայմանավորված էր ֆրանսիացի վանուհիների մոտ ստացած իր կրթությամբ։ Դա Հակոբ Արթինյանի գաղափարն էր, որը պատրաստ էր ամեն ինչ անել իր դստեր համար։ Պետք է ասել, որ Մարոն երկնային պարգև էր ծնողների համար։ Քսանչորս տարվա ամլությունից և հայտնի բժիշկներին կատարած բազմաթիվ անօգուտ այցելություններից հետո Ազնիվ խանումը հղիացել էր, երբ մոտենում էր իր հիսնամյակին։ Նա երազում էր տղա երեխայի մասին, որպեսզի Արթինյանների անունը շարունակվեր։ Սակայն Աստված այլ կերպ էր վճռել։ Նա թաքցնում էր իր հիասթափությունը Հակոբի երջանկությունը չխաթարելու համար և որոշել էր իր դստերը դաստիարակել ավանդույթներին համապատասխան, որպեսզի նա դառնար կատարյալ տանտիկին։

Դա նրան չէր հաջողվել, քանի որ Հակոբը դստերն ամեն ինչ թույլ էր տալիս, իր հետ տանում էր գործնական ճանապարհորդությունների արտասահմանյան երկրներ և նրան ներշնչում էր անկախ գաղափարներ, որոնք ավելի կսազեին տղայի։ Մարոն ուղեկցում էր հորը նույնիսկ փասիանի որսի։ Իր մանկության և պատանեկության տարիներին Մարոն մշտական հակամարտության մեջ էր մոր հետ։ Նրանք վիճում էին ինչպես մանրուքների, այնպես էլ կարևոր բաների կապակցությամբ։

Նրանք, իհարկե, չէին կռվում, և նրանց միջև բուռն բացատրություններ տեղի չէին ունենում, դա պարզապես տիրական բնավորության տեր մարդու և կամակորի խուլ պայքար էր։ Միայն ամուսնությունից հետո Մարոն մտերմացավ մոր հետ։ Այսօր Ազնիվ խանումը հպարտանում էր իր դստերով և գնահատում էր նրա վճռականությունը։ Ի վերջո, նրանք շատ նման էին միմյանց։ Ոչ մեկը, ոչ մյուսը թույլ չէր տալիս որ իրեն որևէ բան պարտադրեին։ Ազնիվ խանումը երջանիկ էր իր փեսայի տանը։ Նրա միակ մտահոգությունը Կոստանդնուպոլսից հեռու մահանալն էր։ Նա ամեն օր խնդրում էր Արարչին՝ այնպես անել, որպեսզի իրեն թաղեին Հակոբի կողքին, հայկական գերեզմանատանը, Շիշլի թաղամասում։

Վարդանը համբուրեց զոքանչին։

— Բարի լույս, մայրիկ։

— Տեսնու՞մ ես, տատիկ, ես իսկական ձիավոր եմ,— բացականչեց Թովմասը հիացած։

Ջահել աղջիկներից մեկը մոտեցավ նրանց։ Նա աչքերն ընդգծել էր սուրմայով և նույնիսկ ծիծաղելիս տրտում տեսք ուներ։ Անատոլիայի չափանիշներով նրան արդեն կարելի էր ամուսնացնել, քանի որ տասնհինգ տարեկան էր։ Տարեվերջին նա պետք է ամուսնանար իր հոր ընտրած ատաղձագործի հետ և տխրությամբ էր սպասում այն պահին, երբ պետք է լքեր Պալյանների տունը, ուր նա հանդարտ երջանկություն էր վայելում։ Սակայն նա այլընտրանք չուներ։

Վարդանը նրան վստահեց ձիու սանձը, որպեսզի Թովմասը ձին ապահով քշեր ծառուղում, իսկ ինքը վերցրեց զոքանչի մեկնած բաժակը։ Նա փոքր կումերով խմում էր տաք թեյը։ Չնայած լարվածությանը, նա հանդարտ մնաց, երբ Ազնիվ խանումը մատների ծայրով թափ տվեց իր համազգեստը։ Ոսկեզոծ ուսադիրներից հարդ թափվեց։ Նա մեղմորեն հանդիմանեց Վարդանին.

— Դուք կեղտոտել եք ձեր գեղեցիկ համազգեստը։

Վարդանը ժպտաց։ Ձայնն իջեցնելով, զոքանչն ավելացրեց խուլ ձայնով, որը մատնում էր նրա տագնապը.

— Զգույշ եղեք, սա մեր բոլորի անցաթուղթն է։

Աղնիվ խանումը, ինչպես և Սվասի հայ կանանց մեծամասնությունը, վտանգն ընկալում էր որպես հեռավոր և աղոտ մի սպառնալիք։ Վարդանը գլխով արեց և հարցրեց.

— Մայրիկ, մենք մի քանի օրվա մթերք ունե՞նք։

Նա ծամածռվեց, զարմանալով, որ փեսան կասկածի տակ էր առնում իր հեռատեսությունը։

— Ես նկատի ունեմ չոր մթերք,— ճշգրտեց Վարդանը,— ապխտած միս, վերջապես այնպիսի սննդամթերք, որը լավ է պահպանվում և որը հեշտ է տանել։

Ազնիվ խանումը լայն բացեց աչքերը։ Նա նայեց և համոզվեց, որ Ջամիլան մոտակայքում չէր։

— Արդյոք դա նշանակու՞մ է, որ մենք...

Վարդանը ընդհատեց նրան ձեռքի շարժումով։

— Ես դեռևս ոչինչ չգիտեմ։ Ոչ մեկին ոչինչ չասեք։

Զեյնաբը հետ էր գալիս։ Վարդանը բաժակը դրեց սկուտեղին և շնորհակալություն հայտնեց զոքանչին։ Նա Թովմասին ձիուց իջեցրեց և համբուրեց.

— Խելոք կմնաս, հոգիս։ Այս երեկո քեզ անակնկալ է սպասում։

— Ես գիտեի, որ այսօր իմ ծննդյան տարեդարձն է,— բացականչեց երեխան, չկարողանալով իրեն զսպել,— ի՞նչ անակնկալ։

— Եթե ես ասեմ, ապա դա այլևս անակնկալ չի լինի։

Ազնիվ խանումը ձեռքը դրեց թոռան ուսին.

— Դու կեսօրից հետո ես ծնվել։ Քn վեց տարին կլրանա միայն երեկոյան։

Մազերի խոզանակը ձեռքին, Մարոն հենվեց ննջարանի լուսամատի գոգին։ Մատների ծայրերով նա աննկատ օդային համբույրներ ուղարկեց Վարդանին։ Արևը պղնձյա երանգ էր տվել նրա ուսերին թափված մազերին։ Նա չափից ավելի գեղեցիկ էր և Վարդանին դա մի փոքր տրտմեցրեց։

— Մինչ երեկո, սիրելիս,— ասաց նա ուրախ ձևանալով։

Նա դժկամությամբ էր նրանցից հեռանում, քանի որ մի քիչ անհանգիստ էր, որ տանը տղամարդ չկար։ Ջամիլան հայտնվեց դռան շեմին.

— Ձեր ֆեսը, մայոր Վարդան։

Բոբիկ ոտքերով նա վազեց ծառուղիով, առանց ուշադրություն դարձնելու խճաքարերին։ Ծաղկավոր չթե զգեստը փաթաթվել էր նրա ոտքերին, իսկ դեմքի շուրջը պար էր բռնել բարակ հյուսերի բազմությունը։ Քանի Վարդանն իր կարմիր գլխարկն էր հագնում և հարդարում էր սև գլանը գլխարկի աջ կողմում, Ջամիլան գոգնոցի ծայրով մաքրեց նրա կոշիկը։ Նա հիացմունքով հետ-հետ գնաց և ցանկացավ, որ իր հայրն իր համար նույնքան հպարտ կեցվածքով ամուսին գտներ, և եթե հնարավոր էր՝ նա սպա լիներ։ Ի տարբերություն Զեյնաբի, նա անհամբերությամբ էր սպասում ամուսնության պահին և ուզում էր հնարավորինս շուտ կառավարել իր տունը։

— Թող Հուր Կրակը պարի, հայրիկ։

Ահա չորս տարի էր, ինչ Վարդանը մարզում էր այս արաբական նժույգը, ներշնչվելով Վիեննայի Իսպանական դպրոցի

մեթոդաբանությամբ։ Թովմասին հաճույք պատճառելու և ցույց տալու համար, որ ոչինչ չի փոխվել, մի քիչ էլ Մարոյի առաջ աքլորանալու համար, Վարդանը իր նժույգին ստիպեց ծառս լինել, մի քանի իսպանական քայլ անել և մեկ պտույտ կատարել։

— Ի՜նչ երեխայություն,— հառաչեց Ագնիվ խանումը հանդիմանական տոնով։

— Ես ի՞նչ եմ արել,— զարմացավ Թովմասը, որը չէր հասկացել, որ խոսքն իր հոր մասին էր։

Փողոցում հայտնվելով, Վարդանը շրջվեց տան կողմը և տեսարանը դրոշմեց իր հիշողության մեջ. Մարոն՝ մեծ սպիտակ տան վերին հարկի պատուհանում, Թովմասը, Ագնիվ խանումը Ջամիլան և Ջեյնաբը՝ շքամուտքի մոտ, շունը՝ ծառուղում, պատուհանները շրջապատող մագլցող վարդերը, լույսի լաքաներով պատված մեծ շագանակենու ստվերը։ Ծխնելույզի վրա նա տեսավ այս գարուն չվերադարձած արագիլների բույնը։ Զոքանչի կարծիքով՝ արագիլների չվերադառնալը վատ նշան էր։ Վարդանը նշանակություն չէր տվել այդ բառերին, քանի որ կային ավելի իրական և համոզիչ նշաններ։ Նա վարգով քշեց ձիուն, որպեսզի ստիպված չլիներ խոսել հարևանների և ծանոթների հետ։ Քանի որ Վարդանը զբաղվել էր քաղաքականությամբ, գրքեր էր գրել և նաև այն պատճառով, որ ծառայում էր օսմանյան բանակում, բոլորը նրա կարծիքն էին հարցնում իրավիճակի մասին, մանրամասներ էին ուզում իմանալ «տեղահանության» վերաբերյալ։ Կարծես նա ավելին գիտեր, քան իրենք։ Իսկ արագ ընթացքի դեպքում ինքը կարող էր բավարարվել նրանց ողջունելով։

Ջեյնաբը փակեց դարպասը ձիավորի հետևից։ Ձիու հոտն ըմբոշխնելու համար ձեռքերը քթին մոտեցնելով, Թովմասը լսում էր սմբակների հեռացող ձայնը։ Բառաչոց լսվեց։ Փողոցով տանն էր մոտենում նախիրը։ Արշակն էր, որը, ինչպես և ամեն առավոտ, եկել էր կովերին արոտավայր տանելու։

Մարոն ծածկեց իր սենյակի վարագույրը և բացեց գգեստապահարանը։ Կախարաններից մեկը վայր ընկավ, և նա սրտի թրթիռով բարձրացրեց զգեստը։ Փարիզից գնված իր շրջազգեստը։ Ֆրանսիա կատարած ճանապարհորդության ժամանակ Վարդանը Մարոյի համար գնել էր «Ժաննա Լավնեն» մոդայի տան պիտակը կրող չինական սպիտակ մետաքսից կարված այդ շրջազգեստը, որը զարդարված էր կարմիր վարդերով և Կանաչ տերևներով։ Այն անկասկած արդեն հնացել էր նորաձևության տեսանկյունից, քանի որ գնվել էր 1912 թ.։ Սակայն այսօր, երբ Ֆրանսիան պատերազմի մեջ էր, կա՞ր արդյոք այնտեղ նորաձևություն։

Չկարողանալով դիմադրել ցանկությանը, նա զգեստը իր վրա դրեց և նայեց հայելուն։ Ինչպիսի՜ հիացմունք էր ինքն ապրել հայտնագործելով այդ սքանչելի քաղաքը։ Այդ ճամփորդությունը «Արևելյան էքսպրեսով». Սոֆիա, Բելգրադ, կանգառ մեկ շաբաթով Վիեննայում, Շվեյցարիա և վերջապես Փարիզ։ Բոլոր քաղաքներն ավելի գեղեցիկ էին, քան ինքը

պատկերացրել էր բացիկները նայելով և պատկերազարդ գրքերը թերթելով։ Եվ, վերջապես, կար Վարդանը, որը նույնքան սիրահարված էր, որքան իրենց ամուսնության սկզբին։ Այսօր էլ նա նույնքան սիրահարված էր։

Նրանց ամուսնությունը դասավորվել էր Մերձավոր Արևելքում, տարածված հայկական ավանդույթի համաձայն՝ երկու ընտանիքների կարողությունների համեմատության եղանակով։ Պալյանները խոշոր հողատերեր էին, Արթինյանները՝ ծաղկող ներմուծողներ։ Հետևաբար, նրանք նույն սոցիալական խավից էին։ Քսան տարեկան Մարոն ամուսնանում էր չորս կամ հինգ տարվա ուշացումով, քան ընդունված էր, և նա ավելի հիմնավոր կրթություն էր ստացել, քան իր հասակակից աղջիկների մեծամասնությունը։ Վանուհիների պանսիոնում սովորելուց հետո նա ավարտել էր Պոլսի Սիոնի Աստվածամոր վարժարանը, ապա հոր հետ գնացել էր Ռուսաստան և շրջել Օսմանյան կայսրության տարածքով մեկ՝ եռանդուն կերպով մասնակցելով նրա առևտրական գործունեությանը։ Նա ցանկություն ուներ շարունակելու կրթությունը և բժիշկ դառնալու, ինչն անհնարին էր այդ ժամանակաշրջանում, հատկապես Փոքր Ասիայում։ Հակոբը դեմ չէր դստեր ծրագրերին, սակայն ի վերջո նա զիջել էր իր կնոջ ճնշումներին, և նրանք Մարոյի համար ընտրել էին կրթված մի հայ երիտասարդի, որն իրենց խավից էր՝ նրան, ում հայրը ամենագեղեցիկը համարեց, իսկ մայրը՝ ամենախելացին։ Դեղագործի, որը տասը տարով մեծ էր Մարոյից։

Մարոն հուզված էր՝ ներկայանալով այն ընտանեկան հավաքին, որի ընթացքում պիտի հանդիպեր ապագա ամուսնուն։ Նա անթույլատրելի էր համարում գործը գլուխ բերելու այդ ձևը, որի ժամանակ ինքը հանդես էր գալիս որպես ապրանք։ Նա համաձայնել էր այդ հանդիպմանը հորը չբարկացնելու համար, սակայն հստակորեն վճռել էր հակադրվել ծնողների կամքին, եթե ապագա ամուսնուն ինքը չհավաներ։ Նա լսել էր այդ Վարդան Պալյանի մասին. գրող, հայկական քաղաքական շարժումների մասնակից։ Լուրեր էին պտտվում, որ նա ունեցել էր բազմաթիվ սիրային պատմություններ։ Մարոն ուշադրություն չէր դարձրել այդ լուրերին և վճռել էր ինքնուրույն դատել։

Մարոն անմիջապես հրապուրվել էր Վարդանի հմայքով ու արտաքինով, և Վարդանի հաղթանակը վերջնական էր եղել, երբ Մարոն հայտնաբերել էր նրա խելքը և բանիմացությունը։ Ի տարբերություն տղամարդկանց մեծ մասի, Վարդանը իր հերթին չէր սևեռվել միայն Մարոյի գեղեցկության վրա և վարվել էր նրա հետ հավասարի պես։ Նրանք պարտեզում զրուցել էին ամբողջ երեկոյի ընթացքում, զարմանքով հայտնաբերելով, որ շատ ընդհանրություններ ունեին։ Մարոն վախենում էր, որ Վարդանն իրեն կձանձրացներ, խոսելով քաղաքականության մասին, մինչդեռ նա խոսում էր ավելի գրականությունից և երաժշտությունից։ Նա ուդ էր նվագում ու գիտեր հայկական և օսմանյան դասական ամբողջ նվագացանկը։ Հանդիպումների ժամանակ Մարոն հայտնաբերել էր, որ Վարդանն ավելի զգացմունքային, քնքուշ և ավելի ուժեղ բնավորության տեր մարդ

էր, քան ինքը կարծում էր, և մինչ իրենց հարսանիքն ընկած ժամանակը Մարոյին շատ երկար էր թվացել։

Ամուսնությունից հետո Պոլսում էին ապրում, ուր Վարդանը դեղատուն ուներ։ Մարոն սիրում էր այդ աշխույժ քաղաքը, նրա խորհրդավոր մթնոլորտը, ուր տիրում էր արևելյան ավանդույթների և արևմտյան արդիականության խառնուրդը։ Վարդանը շատ ծանոթներ ուներ և երիտասարդ զույգը հաճախ էր հրավիրվում հայ, ֆրանսիացի, ամերիկացի և թուրք բարեկամների տները։

Կար հատկապես Մեսրոպյանների ընտանիքը։ Մարոն, իր ծնողների միանուագար երեխան լինելով, այդ ընտանիքում եղբայր ու քույր էր գտել՝ Տիրանին և Լուսիկին, որն իր հասակակիցն էր։ Մեսրոպ քեռին և նրա կինը՝ Արփինեն, Վարդանի ազգականներն էին, և նրանք Մարոյին ընդունեցին որպես հարազատի։ Պոլսի ասիական ափից կարելի էր նստել «Տավրոս էքսպրեսը» ու գնալ և մի քանի օր անցկացնել Պալյանների կալվածքում Աֆիոն-Կարահիսարում, իսկ եվրոպական ափից գնացքը հնարավորություն էր տալիս մի քանի օրով այցելել Բուխարեստ, որը «Արևելքի Փարիզի» համբավն ուներ։

Վարդանի դեղատունը հավաքատեղին էր տարբեր՝ քրիստոնյա, հրեա և մահմեդական հեղափոխականների, որոնք գաղտնի նախապատրաստում էին ազատական, արդի և ժողովրդավարական պետության գալուստը։ Չնայած Մարոն կիսում էր Վարդանի գաղափարները, սակայն սկսել էր վախենալ նրա կյանքի համար։ Սուլթանի գաղտնի ոստիկանությունը վերացնում էր ընդդիմադիրներին, իսկ Վարդանի հոդվածները նրան դասում էին դրանց շարքը։ Մարոյի վախն արդարացել էր, քանի որ ամուսնու դեմ մահափորձ էր կատարվել նրա լաբորատորիայում և նա հրաշքով էր փրկվել։ Դրանից հետո շուրջ մեկ տարի ամուսինները թաքնվում էին՝ անընդհատ փոխելով բնակարանները։ Դա Մարոյի կյանքի ամենամռայլ շրջանն էր՝ անապահովության և վախի զգացողության շրջան։ 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումը վերջ դրեց այդ փորձությանը։ Սակայն մի քանի ամիս անց ոգևորությունը տեղը զիջեց հիասթափությանը։ Նոր վարչակարգը ամենևին էլ մտադիր չէր հավասարություն պարգևելու քրիստոնյաներին, և Վարդանը կրկին դարձել էր անցանկալի տարր։ Այս անգամ նրանք ստիպված էին հեռանալ մայրաքաղաքից։ Մարոյի կարծիքով՝ հեռացել էին ոչ այնքան հեռու, որքան անհրաժեշտ էր։ Եվ մղձավանջը վերսկսվում էր այսօր։

Սթափվելով՝ Մարոն շքեղ շրջազգեստը կախեց պահարանում և հագավ մոխրագույն պարզ մի շրջազգեստ։ Նա ներքև շտապեց, քանի որ Թովմասն իրեն էր սպասում նախաճաշելու համար։

* * *

Վարդանը հասել էր քաղաքի ծայրամասին։ Քանդված պարսպից այն

կողմ, Հալիս գետի երկու ափը միացնող կամրջի վրա երթևեկությունը խճողված էր. եզներով լծված սայլեր, բարձված ավանակներ, շուկա քշվող ոչխարներ և այծեր, երկարաբաշ խոշոր ձիեր հեծած քուրդ լեռնականներ, զամբյուղներով բեռնված գյուղացիներ, զորանոց վերադարձող զինվորներ: Կամրջի ծայրին խցանում էր տեղի ունեցել և որոշակի աշխուժություն էր տիրում:

— Ճանապա՜րհ, ճանապա՜րհ,— բղավեց Վարդանը՝ ձին քշելով դեպի ամբոխի կենտրոնը:

Նրա համազգեստը տեսնելով՝ մարդիկ մի կողմ քաշվեցին: Նա իսկույն հասկացավ միջադեպի էությունը: Կամուրջը հսկող ոստիկանները բռնել էին հայկական մի ընտանիք, որը փորձում էր հեռանալ քաղաքից՝ իր ունեցվածքով բեռնված սայլով: Քանի ծնողները բանակցում էին ոստիկանների հետ, գյուղացիներն ու մուրացկանները խմբվել էին սայլի շուրջը և փորձում էին իրերը փախցնել, իսկ երեխաներն իրենց ուժերով ճգնում էին պաշտպանվել: Ամբոխն ամեն վայրկյան ավելի հանդուգն ու սպառնալի էր դառնում, և ընդհանուր աղմուկի մեջ անպատիվ խոսքեր էին հնչում.

— Գող հայե՜ր:

— Շան որդի՜ք:

— Գյաուրնե՜ր:

Ոստիկանները չգիտեին, որ Վարդանն ընդամենը պահեստազորի սպա էր և, հատկապես, որ հայ էր: Վախկոտ մարդկանց հետ բավական էր ինքնավստահ լինել: Վարդանը դուրս քաշեց իր ատրճանակը և օդ կրակեց: Լռություն հաստատվեց.

— Շարժվե՜ք, շարժվե՜ք,— բղավեց նա:

Նա ամբոխը հեռացրեց սայլից՝ ձիով հետ-հետ քշելով: Զինվորները, որոնք կորցրել էին իրավիճակի վերահսկողությունը, երջանիկ էին սպայի միջամտության համար: Ի վերջո, նրանց հաջողվեց ցրել ամբոխը: Վարդանը վստահ ձայնով դիմեց ենթասպային.

— Ի՞նչ է այստեղ կատարվում: Ինչ է դուք այլևս ի վիճակի չե՞ք կարգ պահպանել:

Ոստիկանը, խեղճանալով, ցույց տվեց սայլը.

— Հայերը են, փորձում էին փախչել: Հրաման կա, որ նրանք մնան քաղաքում:

— Ես դա ձեզնից լավ գիտեմ, բայց նա,— ասաց Վարդանը՝ մտրակով սայլապանին ցույց տալով,— արդյոք նա տեղյա՞կ էր:

Տղամարդը ճանաչեց Վարդանին, սակայն հասկացավ, որ ավելի լավ կլիներ միամիտ ձևանալ: Նա կառչեց ագգակցի՝ իրեն տված հնարավորությանը և մի պարզունակ սուտ հորինեց:

— Ոչ, պարոն սպա, ես չգիտեի, որ պետք է Սվասում մնայի։ Ես, պարզապես, ընտանիքիս հետ գնում եմ մեր ագարակը, որը քաղաքից երկու կիլոմետր է հեռու, խոտ հնձելու։ Մենք ամեն ամառ էլ մեկնում ենք։

— Դուք այդպես կվարվեք հետագայում,— պատասխանեց Վարդանը,— իսկ հիմա քաղաք վերադարձեք։

Ենթասպան ընդդիմացավ.

— Նրանց պետք է ձերբակալել։ Մենք հրաման ենք ստացել։

— Այստեղ ես եմ հրամաններ արձակում,— պատասխանեց Վարդանը կտրուկ տոնով։— Ես կզեկուցեմ կապիտանին, որն էլ կորոշի այս մարդկանց ճակատագիրը։

Վարդանը մի ծոցատետր հանեց և գրանցեց ընտանիքի հոր անունն ու ազգանունը և հասցեն, հետո հրամայեց հեռանալ։

— Մնացեք ձեր տանն իշխանությունների իրավասության ներքո։

— Այո, հրամանատար։ Շնորհակալություն։

Ակնհայտորեն հանգստացած տղամարդը իջավ սայլից և բռնելով ձիու սանձից առաջնորդեց նրան։ Սայլը շրջվեց և վերադարձավ Սվաս։ Վարդանը գովեց ոստիկաններին, որոնք շոյված էին։

— Դուք ձեր պարտականությունը լավ կատարեցիք, այդ փաստը կգրանցվի ձեր անձնական գործում։

Ճանապարհը շարունակելուց առաջ նա սպասեց, մինչև հայերի սայլն անհետացավ հին պարսպի հետևում։ Կամուրջն անցնելով՝ նա ձախ թեքվեց և, Հուր Կրակի սանձը թուլացնելով, թույլ տվեց ձիուն սլանալ գետի երկայնքով ձգվող գրունտային ճանապարհով։ Գետափին աճող բարդիների մեջ երևում էին ջրաղացները, որոնք վերանորոգվում էին բերքահավաքից առաջ։ Գետի մյուս ափին կանոնավոր շարքերով խնձորի, սալորի և ծիրանի ծառեր էին աճում։ Վարդանը միշտ մեծ հաճույք էր ստանում քաղաքից դուրս ձիավարելիս. նա մոռանում էր բոլոր հոգսերը։ Այս առավոտ այդպես չէր։ Կամրջի մոտ տեղի ունեցած միջադեպը սաստկացրեց նրա անհանգստությունը։ Նրան չէր զարմացնում նոր հրամանագիրը կատարելու ոստիկանների եռանդը, սակայն ամբոխի թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ անսովոր էր Սվասում։ Եթե դարավոր ատելությունը ջրի երես դուրս գար, ապա պետք էր պատրաստվել վատթարագույնին։ Միշտ կարելի էր փոխադարձ համաձայնության գալ օրենքների և պաշտոնյաների հետ, մինչդեռ զանգվածների վարքագիծը նույնքան անկանխատեսելի էր, որքան տարերքը։

Հեռվում կապտին տվող լեռների կողմը շարժվելով, Վարդանը հիշեց այն, ինչի մասին հրաժարվեց խոսել Մարոյի հետ։ Հեռանա՞լ։ Ինչպես այն հայ ընտանիքը մի քիչ առաջ։ Նրանք շատ իրեր էին իրենց հետ տանում։ Չի կարելի փախչել այնպես, կարծես տեղափոխվելիս լինես։ Ավելին,

նրանք դեպի հարավ էին գնում, հենց այն ուղղությամբ, որը նախատեսված էր «տեղահանության» համար։ Ոչ, պետք էր փախչել գիշերով, վերցնելով միայն կենսականորեն անհրաժեշտ իրերը, և շարժվել դեպի հյուսիս։ Նույնիսկ այդ դեպքում ոչինչ կանխատեսել հնարավոր չէր։ Բանակի կողմից վերահսկվող վատ ճանապարհներ, ավազակների կողմից վերահսկվող գյուղական շրջաններ։ Զինվորական համազգեստը կպաշտպաներ միայն որոշ ժամանակ, քանի որ իրեն կսկսեին փնտրել որպես դասալիքի։

Դրամի միջոցով կարելի կլիներ ինչ-որ խնդիրներ լուծել։ Հասնելով Սև ծովի ափին՝ միշտ էլ կարելի էր դեպի Կոստանդնուպոլիս կամ Ռուսաստան մեկնող նավ նստել։ Քանի՞ օր էր պետք ծովափ հասնելու համար։ Կառքով իրենք շատ դանդաղ կշարժվեին, քան ձի հեծած։ Ծայրահեղ դեպքում կարող էր Թովմասին նստեցնել իր ձիու գավակին, սակայն պետք էր հաշվի առնել Ազնիվ խանումին։ Բացի դրանից, պետք էր սննդամթերք, վերմակներ, ձիերի համար վարսակ վերցնել։ Մարոն ի վիճակի էր ժամեր շարունակ մնալ թամբի վրա և անհրաժեշտության դեպքում հրացանից կրակել, սակայն զոքանչի և որդու համար ճանապարհորդությունը ծանր փորձություն կլիներ։ Ո՞վ կկարողանար կառք վարել առանց ճանապարհի, մթության մեջ։ Վարդանը մտածեց, որ հաջողության հասնելու հնարավորությունները կավելանային, եթե իրեն ընկերակցեր Արմենը։ Մանավանդ, որ վերջինս ծանոթ էր Սև ծովին և նավահանգիստները գիտեր իր հինգ մատների պես։ Ավելի լավ կլիներ, եթե նավ գնեին, որն Արմենը կվարեր։ Արաքսիի հետ իրենք վեց հոգի կլինեին։ Երկու ձիավոր և մեկ կառք։ Այդպիսով՝ ավելի քիչ ուշադրություն կգրավեին։ Հարկավոր էր ճիշտ գնահատել իրավիճակը, որպեսզի ինքն իմանար, թե արդարացնո՞ւմ էր արդյոք այդ ծրագիրն այն վտանգները, որոնց ինքը կենթարկեր իր ընտանիքին։ Վարդանը վճիռը կայացնելու համար իրեն ժամանակ տվեց մինչև երեկո։

Զին անցավ քայլքի։ Վարդանը չէր կարողանում ազատվել մեղքի զգացումից։ Ինքն ուզում էր փախչել՝ թողնելով մնացած հայերին բախտի քմահաճույքին։ Վախկոտությո՞ւն։ Կյանքում ինքը երբեք չէր նահանջել, իսկ եթե և նահանջել էր, ապա իր հակառակորդի վրա ավելի ուժգին հարձակվելու համար։ Իսկ այսօր մտածում էր փախչելու մասին։ Երիտասարդ հասակում նա երազել էր փարոս, ուղեցույց լինել իր ժողովրդի համար, գործուն մասնակցություն ունենալ Հայաստանի վերածննդի հարցում, հետք թողնել պատմության մեջ, իսկ հիմա պետք է փախչեր գողի պես մթության քողի տակ։ Սակայն... Ի՞նչ օգնություն կարող էր առաջարկել իր համաքաղաքացիներին։ Ի՞նչ կարող էր անել միայնակ մարդը խելագարված պետական մեքենայի դեմ։ Ինքն անկարող էր։ Վարդանը տխրեց։ Հետևաբար նա այսքան տարի աշխատել էր, պայքարել բռնապետության դեմ, ամբիոն էր բարձրացել, բազում էջեր էր գրել, հուսացել էր, հավատացել էր և ջանացել իր հավատը փոխանցել ուրիշներին այս վիճակում հայտնվելու համար։ Պե՞տք էր արդյոք հրաժարվել այն գաղափարներից, որոնք փայփայել էր քսան տարի շարունակ։ Իհարկե, եթե միայնակ լիներ, ապա հարցն այլ կերպ կդրվեր, սակայն պետք էր մտածել Թովմասի, Մարոյի մասին։ 1909

Թ. Կոստանդնուպոլսից հեռանալն ամենևին էլ ամոթալի չէր։ Իր կյանքը վտանգված էր, և ինքն այնտեղ այլևս օգուտ տալ չէր կարող։ Դա իմաստուն վճիռ էր։ Նույն վիճակն էլ այսօր էր։ Գոնե նա կուզեր այդպես մտածել։

Անկարող լինելով լուծելու իր համաքաղաքացիներին օգնելու և իր ընտանիքը պաշտպանելու անհաշտ դիլեման, Վարդանը վերջ տվեց իր մտորումներին։ Նա վճռեց խորհրդակցել Մարոյի հետ։ Երբ Վարդանը չէր կարողանում հասկանալ իր ներքին մղումները, Մարոն կարողանում էր նրա խոսքերի մեջ հայտնաբերել նրանից խույս տվող ճշմարտությունը, և այդ ժամանակ ինքը ձևակերպում էր իր միտքը։

Նա հասավ մեծ բացատին, ուր դեռ վերջերս սպաները ձիախաղեր էին կազմակերպում, հատկապես արգելապատերով մրցավազք, որոնց ժամանակ Վարդանն ու նրա բարեկամ Իբրահիմ Ալիզադեն միշտ հաղթող էին դուրս գալիս։ Վարդանն գգում էր այդ մրցումների պակասը։ Զգում էր նաև կադրային սպաների մի քիչ կոպիտ մտերմիկության պակասը, որոնք ուշադրություն չէին դարձնում այն հանգամանքի վրա, որ ինքը քաղաքացիական անձ էր, որ զորակոչվել էր նախորդ աշնան սկզբին և, ավելին, որ ինքը հայ էր։ Սակայն այս ամսվա ընթացքում շատ բան էր փոխվել։ Սպաները իրենից խուսափում էին, և միայն գնդապետ Իբրահիմն էր, որ վկայում էր անդավաճան բարեկամություն։

Հիմա բացատում տասնյակ վրաններ էին խփված։ Դա հանպատրաստից կազմակերպված հոսպիտալ էր, քանի որ Սվասինը գերբեռնված էր հիվանդներով և վիրավորներով։ Այստեղ բուժվում էին այն զինվորները, որոնք ժամանել էին արևելյան ճակատից։ Վարդանն ապարդյուն կերպով բացատրել էր իր հրամանատարին, որ ինքը դեղագործ էր և ոչ թե բժիշկ, սակայն մասնագետների պակասն այնքան սուր էր, որ նրան վստահել էին այդ հիվանդանոցը։

Ի վերջո, Վարդանը համակերպվել էր իրավիճակի հետ։ Այդ աշխատանքը նրան հնարավորություն էր տալիս չհաճախել հոսպիտալի իր լաբորատորիան, ուր ամռան տապին շնչելու օդ չէր լինում։ Բացի դրանից, պետք էր մեկը, որը կթեթևացներ այդ հիմնականում երիտասարդ մարդկանց տառապանքները։ Մի կողմ դնելով իր կասկածները՝ նա ստիպված եղավ բժիշկ ձևանալ։ Նա բավականաչափ գիտելիքներ ուներ և կատարելագործվում էր աշխատանքի ընթացքում։ Քանի որ վիրաբույժ հազվադեպ էր երևում, Վարդանը սովորել էր հեռացնել արկերի բեկորները և գնդակները։ Ծառերի հովանու տակ սարքած ցանկապատի հետևում ձիուն կանգնեցնելով՝ Վարդանը շտապ ստուգեց ճամբարը և զինվորներին հանձնարարություններ տվեց՝ հավաքել և այրել հին վիրակապերը, որոնցից գարշահոտություն էր տարածվում վրաններում, դատարկել գիշերանոթները, թարմ ջուր բերել։ Անհրաժեշտ էր լինում անդադար կրկնել հանձնարարությունները, քանի որ այն զորակոչիկները, որոնց կցում էին հիվանդանոցին, վախենում էին վարակից և աշխատում էին դժկամությամբ։ Վարդանը լսեց հերթապահ բուժակի զեկույցը։ Երիտասարդ թուրք տղայի աչքերը կարմրել էին

անքնությունից։ Յուրաքանչյուր դեպքն առանձին-առանձին նկարագրելուց հետո տղան հոգնած ձայնով հայտնեց.

— Այս առավոտ վիրավորների նոր խմբաքանակ են բերել։ Տասնմեկ վիրավոր։ Շատերը ծանր վիճակում են։ Վիրավորների կեսը հաստատ ձեռքից կգնա այս երկու օրը։

Վարդանը թփթփացրեց նրա ուսին և նրան դուրս բերեց վրանից.

— Կանենք, ինչ կարող ենք։ Գնացեք հանգստանալու։

Հեռվում Վարդանին էր սպասում սպիտակ գլխակապով, սև վերարկուն ուսերին գցած մի մոլլա և իր թզբեհն էր խաղացնում։ Խիտ մորուքի վերևում տենդագին փայլում էին նրա աչքերը։ Նա գլուխ տվեց Վարդանին, որին այդ անսովոր ներկայությունը հետաքրքրեց։

— Ողջույն, մայոր։

— Բարի գալուստ,— պատասխանեց Վարդանը։— Ինչո՞վ կարող եմ ձեզ օգնել։

Համոզվելով, որ բուժակը բավականաչափ հեռու էր, այցելուն պատասխանեց հայերենով.

— Ուզում եմ ձեզ հետ խոսել, մայոր Վարդան։

Վարդանն անհետաձգելի գործեր ուներ, և նրա առաջին մղումն էր ազատվել այցելուից։ Սակայն, երբ մահմեդականը հայերեն խոսեց, նա փոխեց որոշումը և մոլլային հրավիրեց իր վրանը։

— Կարճ կապեք,— ասաց նա կասկածանքով,— ես շատ գործ ունեմ։ Ո՞վ եք դուք։

Տղամարդը հանեց կեղծ մորուքը։ Նիհարության, մաշված դեմքի և խորաթափանց հայացքի պատճառով նա ավելի մեծ և հեղինակավոր էր երևում, մինչդեռ ընդամենը քսանհինգ տարեկան էր։

— Շիրակ Թևոնյան,— հայտարարեց նա հպարտ կեցվածք ընդունելով։

Վարդանը չկարողացավ թաքցնել զարմանքը։ Թևոնյանը, որի անունը կրող թռուցիկները փակցված էին ոստիկանության յուրաքանչյուր պահակակետում, համարձակվել էր օր ցերեկով հայտնվել քաղաքի մերձակայքում։ Նրան զարմացրեց նաև, որ Անատոլիայի այս մասում մեծ հռչակ ունեցող հեղափոխականը այդքան երիտասարդ էր։ Վարդանը նրան ավելի շուտ ապստամբ էր համարում։ Ոչ ոք ճշգրիտ չգիտեր, թե ինչ գաղափարներ և, ինչ քաղաքական հայացքներ էր նա առաջ քաշում, եթե ընդհանրապես որևէ գաղափար առաջ էր քաշում։ Նա զինված պայքար էր վարում օսմանյան բանակի դեմ, և իշխանությունները նրան Ռուսաստանի գործակալն էին համարում։ Ամեն դեպքում Վարդանը համարում էր, որ այդ անհնազանդությունը կարող էր վատթարացնել առանց այդ էլ լուրջ իրավիճակը։ Նրա վարքագիծը վարկաբեկում էր հայերին կառավարության աչքում և հնարավորություն էր տալիս հայերին ներկայացնելու որպես

անհնազանդ տարր։ Սկզբում Վարդանը Շիակի նկատմամբ առանձնակի համակրանք չզգաց, սակայն նրան հուզեց այցելուի հայացքի ջերմությունը և նրա դեմքից ճառագող մաքրությունը։ Մաքրությո՞ւն, թե միամտություն։ Նա գերադասեց այդ դեմքին տեսնել մի մարդու անկեղծություն, որը դեռևս պահպանում էր պատրանքները, քանի որ հենց այդպիսի դեմքի արտահայտություն ուներ ինքը այն լուսանկարներում, որոնք արվել էին, երբ քսան տարեկան էր։

Հանձնակատարը տաքացրել էր ինքնաեռը, որը դրված էր սեղանին։ Կողքին զամբյուղով ծիրան էր դրված։ Հյուրը ցույց տվեց ծիրանները և ասաց.

— Ես ամբողջ գիշեր ճանապարհին եմ եղել։

Վարդանը նրան թեյ հյուրասիրեց և ինքն էլ մի բաժակ խմեց։ Նրանք լուռ միմյանց էին նայում։ Շիրակը մի կտոր շաքար դրեց բերանը և դանդաղորեն թեյը խմեց՝ աչքը Վարդանից չկտրելով։ Նա ավելի տպավորված էր, քան ցանկանում էր ցույց տալ։ Պատճառը ինչպես Վարդանի պատկառելի կեցվածքն էր, այնպես էլ գրողի նրա համբավը։ Ուրեմն՝ սա էր հռչակավոր Վարդան Պալյանը, որի հոդվածները բոցավառել էին պատանու իր երևակայությունը մի քանի տարի առաջ։ Առանց տեղյակ լինելու, այս մարդն օժանդակել էր, որ Շիրակը հետևողական ազգայնամոլ դառնար, որը հանգիստ չէր ունենալու, քանի դեռ Հայաստանը որպես անկախ պետություն չէր հայտնվել քարտեզների վրա։ Շիրակն ուզում էր այդ ամենն ասել Վարդանին, սակայն նա երբեք չէր կարողանում իր զգացմունքներն արտահայտել առանց ձայնի դողդոջի, իսկ դա, նրա կարծիքով, թուլացնում էր իր դիրքերը։ Հետևաբար նա սովորել էր չխոսել իր զգացմունքների մասին և այդ պատճառով վայելում էր սառը և անզգա մարդու համբավ, մինչդեռ այդպիսին չէր։

Նա ծնվել էր Սիրիական անապատի հյուսիսում՝ Տիգրիս գետի ափին բազալտե բերդապարսպով շրջապատված Դիարբեքիր քաղաքում։ Տասնինը տարեկան հասակում հեռացել էր իր պղնձագործ հոր արհեստանոցից։ Դա 1910 թ. գարնանն էր։ Տղան երազում էր այլ ապագայի մասին։ Նա ուզում էր կյանքն անմնացորդ նվիրել իր ժողովրդի շահերին։ Կապոցը ուսին նա գնացել էր վան։ Բարձր սարահարթերով, ալպիական մարգագետիններով, անտառապատ լեռներով՝ ուխտագնացության նմանվող ճանապարհորդության ընթացքում նա ծանոթացել էր ամենախեղճ հայերի՝ գյուղացիների հետ, որոնք չունեին իրենց հողը և մշակում էին տեղի կալվածատերերի և հարուստ քաղաքացիների հողը։ Օթևանի և ուտելիքի դիմաց Շիրակը օգնում էր նրանց դաշտերում։ Նա դադար էր առնում սարերում կորած գյուղերում, ուր տները խմբված էին ութանիստ գմբեթով զանգակատուն ունեցող եկեղեցու շուրջ։ Նույնիսկ ամենափոքր գյուղը ծխական դպրոց ուներ, և այդ գյուղերի կոկիկ տները, հարուստ այգիներն ու բանջարանոցները բարեկեցիկ կյանքի պատրանք էին ստեղծում։ Սակայն այդպես չէր։ Բերքի մեծ մասը հանձնվում էր բարձր հարկերի դիմաց, եթե չէր հափշտակվում կաշառակեր պաշտոնյաների կողմից։

Այդ գյուղերի բնակիչների մեծ մասը վերապրում էր Միացյալ Նահանգներ կամ Եվրոպա պանդխտության գնացած ընտանիքի անդամների ուղարկած դրամի շնորհիվ։

Վանում Շիրակը աշխատել էր որպես բեռնակիր և ծանոթացել էր մի քանի ազգայնականների հետ, սակայն այնտեղ չէր գտել այն, ինչ կհամապատասխաներ իր ամենանվիրական հույսերին։ Զմեռվա կեսին, երբ ձյան պատճառով փակվել էին ճանապարհները և երբ գայլերը շրջում էին անտառեզրերում, նա հեռացել էր Վանից, այս անգամ ճամփա բռնելով դեպի ռուսական սահմանը։ Հասնելով Արարատ լեռանը՝ նա ձնաբքի պատճառով չէր կարողացել շարունակել ճանապարհը և ստիպված էր եղել օթևանել մի գյուղացու տանը։ Այդ գյուղացին մի որդի ուներ, որն ապրում էր Երևանում և ներգրավված էր հեղափոխական շարժման մեջ։ Շիրակը նրա մոտ էր գնացել, իսկ հետո ամեն ինչ հեշտությամբ կարգավորվել էր։ Նրան Թիֆլիս էին ուղարկել, ուր գտնվում էր իրենց կուսակցության կենտրոնը, և շատ արագ նրա քաղաքական կրթությունը լրացվել էր։ Այսուհետ Շիրակը գիտեր, թե ինչ Հայաստանի մասին էր ինքը երազում՝ ժողովրդական կառավարություն ժողովրդի համար։ 1912 թ. նա վերադարձել էր Անատոլիայի հայկական գավառները և վերջնականապես հաստատվել Սվասում։ Նրա առաքելությունն էր հավաքագրել իրենց գաղափարների նոր կողմնակիցների և նրանցից գործունյա խմբեր կազմել։

Երկու տարի անց, հոգնելով վճռական օրվա սպասումից, Շիրակը խզել էր կապերը իր ղեկավարների հետ, որոնք նրա կարծիքով ավելի հակված էին ճառեր արտասանելու և քաղաքական գործարքների։ Նա վճռել էր համախոհների հետ միասին գործի անցնել։ Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև սկսված պատերազմը այն երանելի պատրվակն էր, որը նրան հնարավորություն տվեց զինված պայքար սկսել։ Շիրակն անհեթեթ էր համարում, որ հայերի մի մասը ցարի հպատակը լինելով, իսկ մյուս մասը՝ սուլթանի, կռվում էին միմյանց դեմ հակառակորդ բանակների շարքերում։ Անհրաժեշտ էր օգտվել հանգամանքից և ազատագրել Հայաստանը օտարների՝ թե՛ ռուսների, թե՛ օսմանցիների տիրակալությունից։ Ինչպես և իր համախոհները, որոնք շուրջ երկու հարյուր հոգի էին, Շիրակը իրեն ֆիդայի էր հայտարարել և երդվել էր կյանքը զոհել իր ժողովրդի համար։ Սկզբում նա բավարարվում էր օսմանյան բանակի պահակախմբերի վրա հարձակումներ կազմակերպելով։ Տեղահանությունների դեպքում նրանց թվում էր, որ իրենց ավելի ազնիվ աշխատանք էր բաժին ընկնում. թույլերի և ճնշվածների պաշտպանությունը։

Վարդանն անհամբեր էր։ Նա վայր դրեց բաժակը; Շիրակը մտովի աչքի անցկացրեց իր փաստարկները և վախեցավ, որ ի վիճակի չի լինի երկար դիմադրելու վեճերում թրծված նախկին խորհրդարանականին։ Ինքը գործողության մարդ էր և ոչ թե բանավեճի։ Հարկավոր էր դիմել Պալյանի զգացմունքներին։ Շիրակը կպցրեց իր կեղծ մորուքը և հայտարարեց.

— Այն վտանգը, որին ենթարկվում եմ ձեզ մոտ գալով, վկայում է իմ

ասելիքի կարևորության մասին։ Ես չեմ չարաշահի ձեր համբերությունը։

Նա դադար առավ և ավելացրեց ոգեշնչված ձայնով.

— Ժողովուրդը ձեր կարիքն ունի, պարոն Վարդան։

Նրա տոնը ջղայնացրեց Վարդանին։ Խոսքերը նույնպես, քանի որ իրեն հիշեցրեցին խորտակվող նավը լքելու իր մտադրությունը։ Նա հյուրին հանգստացրեց ձեռքի շարժումով.

— Դե լա՛վ, գլուխներս սթափ պահենք։

Շիրակը շրթունքը կծեց. խոսակցությունը վատ էր սկսվել։ Նա շարունակեց ավելի հանգիստ տոնով.

— Կարծում եմ, որ ձեզ պես մարդուն պետք չէ բացատրել, որ մեր վիճակն օրհասական է։

Անտեսելով շոգը՝ Վարդանը իջեցրեց վրանի վարագույրը։ Շիրակի այցելությունը վտանգում էր Վարդանին, սակայն երիտասարդ ապստամբը պետք է որ հավաստի տեղեկություններ ունենար։ Օրինազանցները, ինչպես նաև զինվորներն ու պաշտոնյաները միակ մարդիկ էին, որոնք կարող էին տեղաշարժվել երկրի շրջաններում։

— Տեղեկություններ ունե՞ք այն մասին, թե ինչ է կատարվում մյուս շրջաններում,— հարցրեց Վարդանը՝ մոտենալով իր հյուրին։

— Մեզ համար աշխարհի վերջը սկսվել է,— ասաց Շիրակը մռայլ ձայնով։

Այս խոսքերը հաստատեցին Վարդանի վատթարագույն կասկածները։ Նա փորձում էր հանգստանալ՝ իրեն հաամոզելով, որ Շիրակն անկասկած չափազանցում էր։ Շիրակն իր բնավորության որոշ գծերով հիշեցնում էր իր քեռորդի Տիրանին, որը սովորություն ուներ ներկայացնել իրադարձությունները իրեն ձեռնտու լույսի ներքո։

— Իսկապե՞ս աշխարհի վերջը,— ասաց նա՝ չթաքցնելով կասկածը։

— Ձեր անվստահությունը կարելի է հասկանալ։ Գավառից գավառ լուրեր չեն հասնում, նույնիսկ հարևան քաղաքները կտրված են միմյանցից։ Գրեթե ամենուր սկսվել են տեղահանությունները և դրանք ընդամենը պատրվակ են ջարդերի համար։ Կառավարությունը երբեք էլ մտադրություն չի ունեցել տեղահանելու հայերեին և նրանց այլ շրջաններում վերաբնակեցնելու։

Վերջին փաստարկը զարմացրեց Վարդանին։ Սիջոցառումն անիրականանալի է, և նա դրա մասին ասել էր Մարոյին։ Այդ ժամանակ ինքը հետևության չէր արել, քանի որ, անկասկած, դրա հետևանքները հրեշավոր էին։ Նա մի քիչ էլ դիմադրեց.

— Դուք չե՞ք ուռճացնում տեղի ունեցածը։ Ես չեմ կասկածում, որ տարբեր վայրերում կարող են բարբարոսության դեպքեր արձանագրված լինել։ Այս երկիրը անհանդուրժողականության

արմատացած ավանդույթներ ունի։

— Շատ կուզեի, որ դուք իրավացի լինեիք - պատասխանեց Շիրակը գլուխը թափ տալով։— Պանթուրանիզմը զործի է անցել, պարոն Պալյան, Իթթիհատը հայկական հարցը լուծում է իր շահերին համապատասխան, մեր ազգի պարզ բնաջնջումով։

Վարդանը ներքուստ ցնցվեց։ Ինքը հենց դրանից էր վախենում այն պահից ի վեր, երբ Թալեաթն ու Էնվերը 1913 թ. ամրապնդել էին իրենց իշխանությունը բանակի հաշվին, որը վարկաբեկվել էր Բալկանյան պատերազմի ժամանակ բուլղարացիների և հույների կողմից պարտություն կրելով։ Նրանք չէի՞ն, որ քշել էին հազար տարի Անատոլիայում ապրած հարյուր հազարավոր հույներին դեպի Էգեյան ծովի կղզիները։ Վարդանը կառչեց այն հույսից, որ եվրոպական տերությունները աղմուկ կբարձրացնեին Էնվերի և նրա ավազակախմբի ազգայնական մոլեռանդության դեմ։ Սակայն դրա վրա կարելի էր հույս դնել միայն խաղաղ պայմաններում։

– Ի՞նչ իրավիճակ է Կեսարիայում, Ադանայում, Սամսունում, Տրապիզոնում։

— Կիլիկիայում և արևելքում զանգվածային ջարդեր են տեղի ունենում։ Վերացնում են քաղաքների հայ բնակչությանը, ոչնչացնում են գյուղերը, սպանում են զենք կրելու ունակ տղամարդկանց։ Ծերերին, կանանց և երեխաներին քշում են ճանապարհներով այնպես, ինչպես անասունն են քշում ամառային արոտավայրերը, և նրանք ավազակների բաժին են դառնում։ Ամբողջ շրջաններ վերածվում են սպանդանոցի։ Շուտով նույն վիճակը կլինի ամբողջ Անատոլիայի տարածքում։

Վարդանն անզոր նստեց ծալովի աթոռի վրա, մաքրեց ճակատի քրտինքը։ Նա շատ ավելի էր հուզված, քան ցույց էր տալիս։ Նա անկարող էր սթափ մտածել, քանի որ գլուխը լցված էր Շիրակի խոսքերից ծնունդ առած պատկերներով։ Նրան շրջապատող աշխարհը փուլ էր գալիս՝ իր հետ տանելով բոլոր այն արժեքները, որոնք Վարդանը պաշտպանել էր։ Նա քսան տարով հետ էր գնացել և հայտնվել էր այն ժամանակաշրջանում, երբ Աբդուլ Համիդ II-ն էր ցուցադրում իր բարբարոսությունը։ Մարո՛, Թովմա՛ս։ Իսկ Ազնիվ խանումը... իսկ իր եղբայրը... իսկ մնացած հայերը...

Շիրակը դարձյալ թեյ էր խմում և ծիրան էր ուտում։ Նա վարդանի դիմաց կանգնած հետևում էր, թե ինչ տպավորություն էին թողել իր խոսքերը։ Նա սպասում էր Վարդանի մեկնաբանություններին, սակայն ոչինչ չշահեց, քանի որ Վարդանը հակահարձակման անցավ.

— Ի՞նչ եք առաջարկում։

Շիրակի աչքերը փայլեցին տարօրինակ փայլով։

— Միայն մեկ ելք կա։ Անատոլիայի բոլոր հայերի ապստամբությունը։

Վարդանը վեր թռավ։ Նա իր ականջներին չէր հավատում։

— Դա խելահեղություն է,— բացականչեց նա։

— Ո՛չ։ Բոլոր կազմակերպությունները կմոռանան իրենց տարաձայնությունները միասնական ճակատ կազմելու հասար։ Ջարդերի հետևանքով կազմավորված զինված կամավորականների ջոկատները մեզ կմիանան։ Մեզ պետք է միայն անվանի առաջնորդ, այնպիսի մի մարդ, որը կկարողանա համախմբել կայսրության տարածքում ապրող հայերին, նույնիսկ կղերականությանն ու հարուստներին։ Մենք կմիավորվենք Ռուսաստանում ապրող մեր հայրենակիցների՝ Դրոյի, Անդրանիկի հետ, որոնք կռվում են ցարի դրոշի ներքո։

— Եվ դուք մտածում եք իմ մասին,— տխուր քմծիծաղ տվեց Վարդանը։

— Կաթողիկոսից հետո դուք, անկասկած, ամենաճանաչված և ամենահարգված հայն եք Պոլսից մինչև Վան, Տրապիզոնից մինչև Երուսաղեմ։ Ես ձեր կարիքն ունեմ։ Մենք միասին կազատագրենք Հայաստանը դարավոր օսմանյան լծից, իսկ հետո կստեղծենք մի երկիր, ուր կկիրառվեն սոցիալական արդարության այն սկզբունքները, որ դուք միշտ պաշտպանել եք։

Իր հռչակի այս ուռճացումը Վարդանը ստոր շողոքորթություն համարեց և այն չունեցավ սպասված ներգործությունը։ Նա մտածեց, որ Շիրակը չուներ քաղաքական հոտառություն։ Նա այնպիսի մտքեր էր արտահայտում, որոնք հիշեցնում էին վարդանի՝ երիտասարդ ժամանակ արտասանած ճառերը։

— Կարծում եմ, որ դուք սխալ ժամանակ եք ընտրել,— ասաց նա դառը հեգնանքով։

— Հակառակը, պահը շահեկան է։ Սուլթանի բանակը կռվում է երկու ճակատով։

Իր նստարանը վայր գցելով՝ Վարդանը վեր թռավ տեղից և վրդովվեց.

— Ազնիվ խո՛սք, դուք երազում եք արթմնի։

Երիտասարդը զարմացավ.

— Ի՞նչ եք ուզում ասել։

Նա անկեղծ էր թվում և, տեսնելով նրա միամտությունը, Վարդանը հանգստացավ։ Թաքցնելով իր անհամբերությունը՝ նա բացատրեց.

— Խոշոր ապստամբությունը, որ դուք գովերգում եք, լուրջ նախապատրաստություն է պահանջում։ Եթե իրավիճակն այնպիսին է, ինչպես դուք եք նկարագրում, իսկ ես, դժբախտաբար, բոլոր պատճառներն ունեմ դրան հավատալու, ապա ձեր վիթխարի ծրագիրը իրականացնելն արդեն ուշ է։

Զընկճվելով հնչած փաստարկից՝ Շիրակն աջ բռունցքը խփեց ձախ ափին և հայտարարեց ոգևորված.

— Մեր ազատագրական պայքարը կսկսվի Սվասից։ Մեր գործողությունները լայն արձագանք կունենան։ Բնաջնջման վտանգի առաջ մեր հայրենակիցներից ոչ մեկը չի հրաժարվի կռվելուց։

Քայլեր լսվեցին։ Վարդանը լռելու նշան արեց Շիրակին։

— Մայոր,— կանչեց մի ձայն դրսից։

— Այո՞։

Շիրակը մեջքն արեց ենթասպային, որը մտավ և պատվի առավ արյունոտ ձեռքով։

— Նոր վիրավորներ են բերել, մայոր։

— Ես հինգ րոպեից կգամ, Սուամմեր։

Ենթասպան դուրս եկավ։ Վարդանը վարագույրը բարձրացրեց, որպեսզի համոզվեր, որ նա հեռացել էր։ Շոգ էր, և նա մի պահ մնաց դռան բացվածքում։ Շիրակի հետ զրուցելու վերջին րոպեներին նա ինքն իրեն հարց էր տալիս՝ միգուցե ինքը գործ ուներ ցնորվածի՞ հետ։ Իսկ հիմա համոզված էր, որ Շիրակի վարքագիծը պայմանավորված էր արդարության ձգտումով և սիրով իր ժողովրդի նկատմամբ։ Այդուհանդերձ, նա բոլորովին զուրկ էր իմաստնությունից։ Հարկավոր էր նրան ապացուցել, որ իր ծրագիրը անհնար էր իրականացնել և որ այն ինքնասպան բնույթ աներ։ Այդ խելահեղ գաղափարներից շլացած հայերը կարող էին հավատալ Շիրակին և հետևել նրան։ Այսօրվա իրավիճակում ցանկացած չմտածված քայլ կարող էր վառոդի մեջ կրակ գցել։

Վարդանը մոտեցավ իր հյուրին և նայեց ուղիղ նրա աչքերի մեջ.

— Որքա՞ն մարդ ունեք։

— Մոտ երկու հարյուր։ Ֆիդայիներ են, յուրաքանչյուրտ տասը մարդ արժե։ Իսկ Սվասում հազարավոր հայեր կան։

— Կանայք, երեխաներ, խանութպաններ... Իսկ զե՞նքը։ Չէ՞ որ կառավարությանը բռնագրավել է նույնիսկ որսորդի հրացանները։

Վարդանը մեղմությամբ էր խոսում՝ հույս ունենալով սթափեցնել Շիրակին։ Վերջինս արձագանքեց.

— Մենք կհարձակվենք զինանոցի վրա և կթալանենք։ Գէոմանացիները մեծ քանակությամբ զինամթերք են բերել այստեղ։ Հետո կամրանանք հայկական թաղում և կդիմադրենք։

— Երկո՞ւ օր։ Մե՞կ շաբաթ։

— Ռուսներն ու կամավորականները Հայաստանից մեզ օգնության կգան։

— Անհնարին է, ճակատը հարյուրավոր կիլոմետրերի վրա է։ Ապստամբությունը Սվասում հնարավորություն կտա օսմանյան

կառավարությանը համոզելու աշխարհին, որ հայերը դավաճաններ են և որ տեղահանություններն արդարացված են։

— Օտարների կարծիքը մեզ չի հուզում։

— Մտածեք, Շիրակ,— շարունակեց Վարդանը զսպելով իր հուսահատությունը։— Գավառում օսմանյան բանակի խոշոր զորամիավորումներ կան։ Նրանք կջախջախեն ձեր ապստամբությունը։ Ճնշումները սարսափելի կլինեն, և հազարավոր մարդիկ զոհ կգնան ձեր խելահեղ ձեռնարկմանը։ Ձեր նպատակը դա՞ է։

Շիրակը շփոթվեց և հայացքը հեռացրեց։ Վարդանը պնդեց.

— Պատասխանե՛ք։ Ձեր ծրագիրը ձեր հարենակիցներից քանիսի՞ կյանքը կտանի։

— Նրանք ամեն դեպքում մեռնելու են... Այս դեպքում գոնե ապարդյուն չեն մեռնի։

— Ձեր անպատկառությանը արգահատելի է,— բացականչեց Վարդանը վրդովված։

Շիրակը սթափվեց և վստահ ձայնով ասաց.

— Պայծառատեսության, պարոն Պալյան, պայծառատեսություն։ Դուք չեք պատկերացնում, թե ինչ էնախապատրաստվում։ Թե՞ դուք գերադասում եք անտեսել ճշմարտությունը։ Ինչպես նրանք, ովքեր փորձեցին պայմանավորվել Իթթիհատի հետ, ովքեր դրդեցին հայերիս կատարել օսմանյան կամ ռուսական հպատակների իրենց պարտականությունները։ Տեսնո՞ւմ եք, թե դա մեզ ուր հասցրեց։

Նա բռունցքը բարձրացրեց, ինչպես անում էր իր մարդկանց հարձակվելու հրաման տալիս, և հայտարարեց.

— Ավելի լավ է մեռնել զենքը ձեռքին, բան սպանդանոց տարվող ոչխարի պես։

— Նույնիսկ եթե դուք զոհաբերում եք ձեր կյանքը, ապա դա ձեզ, միևնույն է, իրավունք չի տալիս մյուսներին դրդելու կոլեկտիվ ինքնասպանության։

Առանց դադար առնելու Շիրակը հարցրեց.

— Ես կարո՞ղ եմ ձեզ վրա հույս դնել։

— Իհարկե ո՛չ,— վրդովվեց Վարդանը՝ կատաղելով նրա համառությունից։— Ձեր խելահեղ ծրագիրը դատապարտված է անհաջողության։

Շիրակը ծամածռվեց.

— Ես սխալվել էի ձեր կապակցությամբ։ Դուք ընդամենը եսամոլ բուրժուա եք։ Մենք յոլա կգնանք առանց ձեզ։

Նա շրջվեց և շտապ հեռացավ։

— Շիրա՛կ,— կանչեց Վարդանը նրան կանգնեցնելու համար։

Նա արդեն դրսում էր։ Վարդանը նրա հետևից դուրս եկավ վրանից։ Նա սև ստվերի պես հեռանում էր գորշ վրանների արանքով։ Նրա վերջին բառերը դեռ հնչում էին Վարդանի ականջներում. եսամոլ բուրժուա։ Նա նայեց բարդիների անշարժ սաղարթին։ Օրը խոստանում էր հեղձուցիչ լինել։ Եվ երկար։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 2

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 10:03-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 1 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 3 ►

Հունիսի 30-ի առավոտյան Սամսունի ճանապարհով Սվասին էր մոտենում մի կառք: Այդ կառքով ճանապարհորդում էր Կոստանդնուպոլսի ամենաազդեցիկ պաշտոնյաներից մեկը՝ Գանի բեյը, տասներկու ձիավորների ուղեկցությամբ: Ներքին գործերի նախարարի տեղակալը լինելով՝ նա ավելի մեծ իշխանություն ուներ, քան օսմանյան կաբինետի նախարարներից շատերը:

Կառքի ծածկը չէր պաշպանում Գանի բեյին ամառվա տապից: Ձիերն այնպիսի փոշի էին բարձրացնում, որ հնարավոր չէր շնչել: Գեր մարդն իրեն հով էր անում և անընդհատ հազում էր կոկորդը մաքրելու համար:

— Վայրենիների երկիր,— մրթմրթաց նա քթի տակ:

Ճաքճքած սև կաշվից նստարանին թեք ընկած՝ նա դոդոշի էր նմանվում իր կախված և փայլուն այտերով, մեծ բերանով, պարանոցի բազմաթիվ ծալքերով և մեծ փորով, որի պատճառով նրա ձեռքերն ու ոտքերը շատ կարճ էին թվում: Պոլսի ներքին գերծերի նախարարության իր ենթակետերը նրան «Վարազ» էին անվանում մանր կլոր աչքերի, ծանր շնչառության և, հատկապես, նրա զզվելի բնավորության պատճառով: Գիրությունը Գանի բեյին ինքնավստահություն էր հաղորդում, քանի որ մանկության ընթացքում նա սովից շատ էր տառապել: Նրա ընտանիքը, ինչպես նաև Կոնիայի շրջակայքում գտնվող իրենց գյուղի մնացած ընտանիքները, ամեն ձմեռ մի քանի ամիս սովի էր մատնվում: Այժմ նա ուտում էր ինքնամոռաց կերպով, կարծես այդպիսով ընդմիշտ կարող էր հեռացնել սովի ուրվականը: Այդուհանդերձ նա չէր կարողանում հագեցնել իր ախորժակը:

Շոգին արված միակ զիջումն էր նստարանին դուված ֆեսը, քանդված փողկապը և արձակված փողկապը: Մնացած մանրամասների հարցում նա հարազատ էր մնացել մայրաքաղաքից եկած բարձրաստիճան պաշտոնյայի իր կերպարին՝ սև կոստյում, որի բաճկոնը կոճկած չէր, իսկ տակից երևում էր նույն գույնի բաճկոնակը՝ ժամացույցի ոսկեզօծ շղթայով: Նրա հագուստը փոշուց գորշ էր թվում : Ամեն ինչ գորշ էր՝ ձեռքերը, կոշիկները, կառքը, ձիերը, նույնիսկ շրջապատող բնությունն էր գորշ: Նրա ճաղատ գլուխը քրտնել էր, և քրտինքը հոսելով նրա կլորի այտերվ, լցվում էր ծոցը: Նա ստիպված էր եղել գրպանը դնել իր

պենսնեն, որը վայր էր սահում նրա խոնավ քթից։

— Վայրենիների երկիր,— նորի մրթմրթաց նա գլուխը թափ տալով։Սադափե կափարիչով գլանատուփից նա հանեց մի ծխախոտ և այն ծխաքարշին ամրացրեց։ Քաղաքը տեղադրված էր հովտում, և արևը դեռ չէր վառել ամբողջ բուսականությունը։ Սակայն քաղաքից այն կողմ հորիզոնը պատնեշում էին լեռների սրածայր գագաթները, և նա գիտեր, որ Սվասում կանգ առնելուց հետո ինքը հայտնվելու էր տափաստանում։ Նրան ապասում էին հարյուրավոր կիլոմետրերով ձգվող վատ ճանապարհներ։ Քանի՞ շաբաթ պետք է անցկացներ այդ ճանապարհներին մինչև Միջերկրականի ափը հասնելը և գնացք նստելը, որը նրան մայրաքաղաք կտաներ։ Նա սրտնեղեց իր ղեկավար Թալեաթ փաշայի դեմ, որը գործուղել էր իրեն Անատոլիա՝ հայերի տեղահանության հետ կապված խնդիրները կարգավորելու համար։

Գանի բեյը դեմքը սրբեց խոնավ թաշկինակով և մի կամ ջուր խմեց շշից։ Գոլ ջուրը չէր հագեցնում ծարավը։ Նրա գլուխը տմբտմբում էր, և նա իր չտեսնող հայացքն էր հառել շրջակա բնությանը։ Նա երագում էր Կոստանդնուպոլսի, Բոսֆորին նայող իր տան զով պարտեզի մասին։ Նա Սամսուն էր ժամանել շոգենավով, Սև ծովի հարավային ափի երկայնքով։ Այդ շրջանը կարգին տեսք ուներ, կլիման չափավոր էր ծովի մերձության պատճառով, իսկ սարերը անտառապատ էին։ Այլ տեսարան էր երկրի խորքում։ Մերկ լեռներ, քարքարուտ և տատասկներ։ Հազվադեպ հանդիպող ծառեր, որոնք կմախքի էին նմանվում։ Անիծված երկիր, որը պիտանի էր միայն այծերի համար։ Ճանապարհին նա տեսել էր միայն ողորմելի գյուղեր, ուր նույնիսկ իջևանելու կարգին տեղ էլ չկար։ Սվասը գոնե իսկական քաղաք էր, և նա մտածեց այն հաճույքի մասին, որ նա կզգար քաղաքային բաղնիքում լողանալիս։

Կառքը մոտեցավ քաղաքի հարավային դարպասին, ուր կանգնած էր մի մեծ մզկիթ իր զույգ մինարեթներով։ Քաղաքն ուներ բազմաթիվ հին շինություններ, որոնք կառուցել էին թե՛ մահմեդականները, թե՛ քրիստոնյաները։ Կային նաև սելջուկյան ժամանակաշրջանի հուշարձաններ, որոնք հռչակել էին քաղաքը։ Սակայն այդ մենը Գանի բեյին չէր հետաքրքրում։ Նա գերադասում էր աշխույժ փողոցները, մարդկանց բազմությունը, քանի որ այն շրջաններում, որոնցով նոր էր անցել, նա միայնության անտանելի զգացում էր ապրել։ Կառքը հասավ շուկա, որտեղով անցնում էր գավառապետի նստավայրը տանող ճանապարհը, ուր Գանի բեյը պետք է օթևաներ, և կառապանը դանդաղեցրեց ընթացքը։ Անհամար հետիոտները, իրենց բեռի տակ կքած ավանակների և սայլակների բազմությունը խճողում էին վաճառասեղանների պատճառով արդեն իսկ նեղ անցումը։ Փեթակի բզզոցին նմանվող ընդհանուր աղմուկի մեջ լսվում էին իրենց ապրանքը գովազդող վաճառականների կանչերը։

Քնջութի ձեթով տապակվող կերակուրի հոտից Դանի բեյի բերանը ջուր լցվեց։ Հետո նա զգաց ոչխարի խորոված ի բուրմունքը և նրա ստամոքսը կծկվեց։ Նա ծխախոտ վառեց սովի զգացումը մեղմելու համար։ Ամբոխը կիպ կառքին էր մոտենում, և հաճելի բուրմունքները

իրենց տեղը զիջեցին սուր՝ շաբաթներով անլվա մնացած մարմինների և հագուստի հոտին։ Աղքատության և ընչանքի հոտ։ Իր մանկության հոտը։ Նա զզվանքից սարսռաց և քիթը թաքցրեց վարդի բուրմունք արձակող թաշկինակի մեջ։ Կոստանդնուպոլսում անցկացրած քառասուներկու տարիները նրան լիովին փոխել էին, և նա օտարացել էր այս հասարակ մարդկանցից, չնայած որ ինքը դուրս էր եկել նրանց ծոցից։ Այստեղ ամեն ինչ նրան պարզունակ և կոպիտ էր թվում։

Գիտակցության խորքում խնամքով թաղված մի հիշողություն վերադառնում էր նրան։ Մոր և քույրերի հետ միասին նա ճանապարհներից և դաշտերից կովի թրիք էր հավաքում, որը կանայք տուն էին տանում գոգնոցների մեջ լցրած։ Նրանք շտապում էին առաջ ընկնել հարևաններից։ Թրիքը տուն բերելով՝ խառնում էին հարդի հետ և ծեփում տան արտաքին պատերին, որպեսզի այն չորանար և վառելիք դառնար, որը փոխարինում էր այդ շրջանում գոյություն չունեցող ցախին և քարածխին, որ չափից ավելի թանկ էր իրենց ընտանիքի համար։ Կանաչ ճանճերի պարսերը տան շուրջը... թանձր հոտը, որը սաստկանում էր անձրևի ժամանակ... Գանի բեյը իջեցրեց աչքերը և նայեց իր երկար ու խնամքով հարդարված եղունգներին։ Իր մանկությունը իրեն սարսափ էր ներշնչում։ Նա կուզենար ջնջել նույնիսկ դրա հետքերն իր հիշողությունից։

Երբ տասը տարեկան հասակում քաղաքացի մի էֆենդի սիրահարվել էր իրեն, նա մեծ հաճույքով այդ մարդու հետ Կոնիա էր գնացել։ Նրբահամ ուտեստներ, իսկական մահճակալ սպիտակեղենով, մաքուր հագուստ։ Եվ պատանի Գանին ամենևին էլ խղճի խայթ չէր զգում՝ փոխարենը հարուստ բարերարին իր բարեհաճությամբ հատուցելիս։ Վերջինս նրան ուսման էր տվել Կոնիայի դերվիշական զլխավոր վանքում, հետո հետ տարել էր Կոստասնդնուպոլիս, ուր Գանին աշխարհիկ կրթություն էր ստացել։ Այդ ժամանակաշրջանից նա պահպանել էր միայն ատելությունը քրիստոնյաների հանդեպ, որը նրան ներշնչել էր մոլեռանդ մի դերվիշ, և միասեռական սիրո հակումը։ Հետագայում, իր հովանավորի կապերի շնորհիվ, նա պաշտոն էր ստացել, իսկ խելքի և աշխատասիրության շնորհիվ, ներառյալ բանսարկության ունակությունը, Գանին աստիճանաբար հաղթահարել էր բազմաթիվ փուլեր, որոնք նրան հեռացրել էին նրա համեստ ծագումից։ Ագահ և դաժան լինելով՝ նա չուներ ո՛չ բարոյական սկզբունքներ, ո՛չ էլ խիղճ և պատրաստ էր անել ամեն ինչ իր փառասիրությունը հագեցնելու համար։ Աբդուլ Համիդ 2-րդի ժամանակ գաղտնի ոստիկանության սպա լինելով՝ նա ոգեշունչ կերպով ջարդել էր քրիստոնյաներին և հետապնդել երիտթուրքերին։ Զգալով իրավիճակի փոփոխությունը՝ նա կապվել էր հենց նույն երիտթուրքերի հետ և նրանց տեղեկատվություն էր մատակարարել։ Նա կարողացել էր այնպես անել, որպեսզի նրանք զգային իր կարիքը, և ղեկավար դիրքերի էր հասել շարժման մեջ։ Այսօր նա չէր էլ կասկածում, եթե վարչակարգի նոր փոփոխություններ տեղի ունենային, ապա նա նորից կվերապրեր։

— Անիծված երկիր,— փնթփնթաց նա ցածրաձայն։

Սակայն այս երկիրը կազմում էր Օսմանյան կայսրության մասը, նույնիսկ նրա կորիզը, և այդ կայսրությունը, իսկ ավելի ճիշտ ստեղծվելիք «Մեծ Թուրքիան», ամենակարևոր բանն էր Գանի բեյի համար, բացառությամբ, իհարկե, իր անձի:

Ինչպես և երկրի ղեկավարները, Գանի բեյը համարում էր, որ պատմությունը իրենց բացառիկ հնարավորություն էր տվել մաքրելու Անատոլիան օտար տարրից: Բոլոր նրանք, ովքեր ծագումով թուրք չէին, պետք է հեռանային կամ մեռնեին, նախ՝ հայերը, հետո հույները, հրեաները, ասորիներն ու արաբները, նույնիսկ քրդերը, որոնք այլ ելք չէին ունենալու թրքանալուց բացի: Կայսրության հիմնադիրները անհեռատես էին գտնվել թույլ տալով, որ երկրի նախկին բնակիչները շարունակեին ապրել կայսրությունում, քանի որ մի օր այդ մարդիկ կուզենային հավասարվել թուրքերին և դրան կհասնեին: Այդ էր պատճառը, որ իրենք կորցրեցին Հունաստանն ու Բալկանները, և շատ հնարավոր էր, որ իրենք այժմ կորցնում էին Միջագետքը ու Արաբական թերակղզին: Վտանգ կար, որ Անատոլիայի մի մասը կարող էր անցնել հայերին, իսկ մյուս մասը՝ քրդերին:

Միակ ելքն էր, որ այդ երկրում միայն թուրքերն ապրեին: Շուկայից դուրս գալով՝ կառքը մտավ նոր շենքերով շրջապատված մի հրապարակ: Հիշելով այս քաղաք իրեն բերած առաքելությունը՝ Գանի բեյը մոռացավ հոգնածության մասին: Գավառապետի նստավայրը գնալու փոխարեն, ուր նրա համար արդեն ամեն ինչ նախապատրաստված էր, նա մեկնեց ուղիղ ոստիկանության բաժին: Նա այդ մասին հրահանգ տվեց կառապանին, որը ձիերին քայլքի անցկացրեց: Գանի բեյը կապեց փողկապը և գլխին դրեց ֆեսը:

Անձրևներից և արևից քայքայված փայտե գորշ շենքը ողորմելի տեսք ուներ: Դարասկզբին կառուցվելուց ի վեր այն չէր ներկվել: Շենքի ճակատային մասում մեծ լուսամուտներ կային, որոնց ապակիների մի մասը կոտրված էր: Այնտեղ մեկ հարկի տակ ծվարել էին ոստիկանության բաժանմունքը և քաղաքապետարանը: Ընդունված կարգով վերին հարկը զբաղեցնում էր ղեկավարությունը, իսկ առաջին երկու հարկերը տրամադրված էին ցածրաստիճան պաշտոնյաներին, քարտուղարներին ու ցրիչներին: Բանտախցերը գտնվում էին նկուղում:

Երեք ոստիկան զրուցում էին մուտքի ծածկի ստվերում: Նրանք զգաստ կանգնեցին և պատվի առան՝ տեսնելով կառքը, որը կարող էր միայն կարևոր անձի պատկանել:

— Դու,— կանչեց Գանի բեյը զինվորներից մեկին,— արի, օգնիր իջնեմ:

Ոստիկանն իր հրացանը տվեց ընկերոջը և վազելով մոտեցավ: Նա իջեցրեց շարժական աստիճանը: Ձսպակները ճռնչացին և կառքը թեքվեց, երբ Գանի բեյը սկսեց իջնել: Գիրությունը սահմանափակում էր նրա շարժումները: Նա մի ձեռքով հենվեց ոստիկանի ուսին և թեթևացած հոգոց հանեց, երբ գետնին հայտնվեց: Նա թափ տվեց իր հագուստը ծխախոտի մոխրից և նայեց դատարկ սանդուղքին: Նա վիրավորված էր, որ ոչ մի պաշտոնյա իրեն չէր դիմավորում:

— Դուք այսպե՞ս եք ընդունում հյուրերին,— ասաց նա չարացած տեսքով։

Ոստիկանը՝ անտաշ մի գյուղացի, պատասխան չգտավ։ Նա վախեցած տեսքով աչքերն էր ճպճպացնում։ Հենց այդ պահին ոստիկանապետը՝ Մուսթաֆա Ռահմին, հայտնվեց դռան բացվածքում։ Նրա վերնաշապիկը կոճկած չէր, և երևում էր նրա մազոտ կուրծքը, իսկ ծալված թևքերը բացել էին մկանուտ բազուկները։ Նա թուխ էր, իսկ հոնքերը նույնքան խիտ էին և սև, որքան սրածայր մորուքը։ Նա հագավ իր բաճկոնը և շտապեց հյուրին ընդառաջ։

— Բարի գալուստ, Գանի բեյ,— ասաց նա՝ խոնարհվելով։ Ներեցեք ինձ, ես ձեզ սպասում էի ճաշից հետո։ Ինչպե՞ս եք ճանապարհորդել։

— Շատ վատ,— պատասխանեց նա չոր տոնով։— Գնանք ձեր գրասենյակը։Մուսթաֆա Ռաֆմին արձնագրեց, որ բարձրաստիճան հյուրը շատ վատ տրամադրության մեջ էր, և դա խթանեց նրա անհանգստությունը։

Նա գիշերը վատ էր քնել և շուրջ տասն անգամ արթնացել էր վատ երազների պատճառով, ուր Գանի բեյը գլխավոր դերն էր կատարում։ Մուսթաֆա Ռահմին գիտեր իր հյուրի համբավը։ Նրա տրամադրության փոփոխությունների կարող էին վերջ տալ պաշտոնյայի առաջխաղացմանը, իսկ դժգոհությունը՝ բանտախուց տանել։ Ոստիկանապետը միշտ եռանդուն կերպով կատարել էր հրամանները, սակայն իրեն կարող էին հանդիմանել որոշ մանրուքների համար. կաշառք, իշխանության չարաշահում, շորթում և այլն։ Որևէ չարակամ մարդ կարող էր իրեն մատնած լինել։ Միգուցե Գանի բեյը եկել էր «մեծ լվա՛ցք» կազմակերպելու համար։ Դրա մասին էր ակնարկում այն մարդը, որը նախօրեին նամակ էր բերել նրանից։

Նրանք շենք մտան, ուր զգացվում էր փոշու և ծխախոտի հոտը։ Գանի բեյն արհամարհում էր այն ամենը, ինչ մայրաքաղաքից դուրս էր գտնվում, և այս գավառականի անխնամ արտաքինն ու նրա բարբառը, շեղ հայացքն ու սուր մորուքը հաստատում էին նրա նախապաշարմունքները։ Իրականում նրան դուր չէր եկել ոստիկանապետի հասակը։ Կարճահասակ լինելու բարդույթ ունենալով, Գանի բեյը չէր սիրում խոսել իրենից բարձր հասակ ունեցող մարդկանց հետ, իսկ Մուսթաֆան մեկ գլուխ բարձր էր։ Սակայն նա Իթթիհատի նվիրված կողմնակիցներից էր և կուրորեն նվիրված պաշտոնյա, իսկ այդպիսի մարդկանց կարիքը այդ պահին շատ էր զգացվում։ Այդ պատճառով նրան պետք էր խնայել, և Գանի բեյը փափկեց և խոսեց գրեթե բարեկամական տոնով։

— Ես ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար, կոմիսար Մուսթաֆա։

Այս խոսքերը հանգստացրին ոստիկանապետին, և նա ժպտաց.

— Ինձ համար մեծ պատիվ է ձեզ հյուրընկալելը։ Ես հիմա զովացուցիչ ըմպելիքներ բերել կտամ։

— Սկզբում լուրջ բաներից խոսենք։

Ամեն քայլը Գանի բեյից մեծ ջանք էր պահանջում, և նա իրեն օգնում էր՝ թևերը թափահարելով, ինչը գլորվելու պատրանք էր ստեղծում։ Երկու աստիճանավանդակ հաղթահարելուց հետո նրա դեմքը կարմրեց, իսկ շնչառությունը այնքան աղմկոտ էր, կարծես դարբնի փուքս լիներ։ Նրբանկատությունից դրդված՝ Մուսթաֆա Ռահմին նրա հետ չխոսեց այնքան ժամանակ, մինչև նրա շնչառությունը չկարգավորվեց։ Ոստիկանապետի գրասենյակը զարդարում էր հենց պատին արված՝ սուլթանի պարզունակ դիմանկարը։ Նկարիչն ավելի հմուտ էր գտնվել մնացած պատերին Ղուրանից հատվածներ գրելիս։ Բարդու սերմերը, ներս խուժելով լուսամուտների կոտրված ապակիներից, բամբակի պես կիտվել էին անկյուններում։ Սենյակում կար գրասեղան, մուգ կանաչ կաշվով պատված բազկաթոռ և փայտե մի աթոռ։ Բացի դրանից, դռան մոտ դրված էր երկար և ցածր նստարան, որի վրա ծոպավոր ծայրով եղեգնյա մի ճիպոտ կար։ Գանի բեյը ճիպոտով երկու հարված հասցրեց նստարանին։ Այդ գործիքը, որի առաջին երկու հարվածները գրեթե ցավ չէին պատճառում, կարող էր մարդու մաշկը քրքրել և սարսափելի տանջանք պատճառել։ Մի ժամանակ, երբ Գանի բեյն ինքն էր պատժում, գերադասում էր հարվածներ հասցնել ոտքերի թաթերին։ Այդ կտտանքն ավելի արդյունավետ էր, քանի որ բանտարկյալն ավելի երկար էր դիմանում, սակայն հետագայում նա կարող էր անդամալույծ դառնալ։ Նա վայր դրեց ճիպոտը և շրջվեց՝ թաքցնելու համար իրեն համակած հուզմունքը, որն արտացոլվում էր նրա դեմքին։

Նա մոտեցավ գրասեղանին։ Սեղանի վրա կուտակված էին թղթապանակներ և ազատ տեղ գրեթե չկար։ Ազատ էր միայն թանաքոտ ծծանը, որի վրա ցուցադրաբար դրված էր սաթե թզբեհը։ Գանի բեյը դա ընկալեց որպես մոլեռանդության նշան, որը նրան դուր չեկավ։ Նա համարում էր, որ կայսրության անկման պատճառը մահմեդական մոլեռանդությունն էր և որ դրանով էր պայմանավորված այն փաստը, որ հայերը, հրեաները և հույները տիրացել էին առևտրին ու արդյունաբերությանը։ Մինչդեռ այդ թզբեհի առկայությունը ոստիկանապետի բեմադրությունն էր։

Գանի բեյը առանց հրավերի սպասելու նստեց գրասեղանի առջև, իսկ ոստիկանապետը կանգնած մնաց՝ ահագնացող անպաշտպանության մթնոլորտում։ Գանի բեյը ծոցագրպանից հանեց պենսնեն, սրբեց ապակիները և քթին դրեց։ Նա դեռ բառ անգամ չէր արտասանել, երբ դուռը բացվեց և հայտնվեց մի ոստիկան, որը պղնձյա սկուտեղով երկու բաժակ հյութ էր բերել։ Գանի բեյը մի շնչով խմեց բալի հյութը։ Նրան հաճույք պատճառելու համար Մուսթաֆա Ռահմին պատրաստակամությամբ հայտարարեց.

— Ձեր հրամանն ի կատար է ածվել։

Գանի բեյը կարծես չհասկանար։

— Գավառապետ Մումթազ բեյի կապակցությամբ...— ավելացրեց ոստիկանապետը ապարդյուն կերպով փորձելով ձայնն իջեցնել։

— Երբ՞։

— Այս առավոտ, իր կալվածքում։ Ոչ ոք չի տեսել և չի իմացել։

— Վտանգ չկա՞, որ կատարողները կխոսեն։ Ձե՞ր մարդիկ են։

— Ես ինքս եմ արել,— հպարտությամբ հայտարարեց ոստիկանապետը ցույց տալով իր ձեռքերը։ Մումթազ բեյը չէր կարող ինձ կասկածել։

Նա բարձրացրեց բալի հյութով լի բաժակը, կարծես կենաց էր ուզում ասել Գանի բեյի նկատմամբ իր ցուցաբերած հավատարմության պատվին։ Վերջինս պարզապես տմբտմբացրեց գլուխը և չեզոք տոնով 22նջաց.

— Շատ լավ։

Այդ պատասխանից դժգոհ մնալով՝ ոստիկանապետը նոր փորձ կատարեց.

— Սա նրա թզբեհն է։ Իրեղեն ապացույց կծառայի այն մարդու դեմ, որին մենք կմեղադրենք հանցագործության մեջ։

Նա հուզմունքից չէր կարողանում հանգիստ կանգնել և ոտքից ոտք էր անցնում։ Գանի բեյը ձեռքը մեկնեց և ասաց.

— Իմ նամակը։

Ոստիկանապետը գրպանից հանեց նամակը, որը նախօրեին իրեն էր հանձնել Գանի բեյի գործակալը։ Դա գավառապետին վերացնելու հրամանն էր։ Բարձրաստիճան պաշտոնյան ստուգեց նամակի իսկությունը, ծալեց և դրեց բաճկոնի գրպանը։ Մուսթաֆա Ռահմիի մեջքով սարսուռ անցավ։ Նա այլևս ոչ մի ապացույց չուներ, որ հրահանգ էր ստացել գավառապետին սպանելու վերաբերյալ։ Սպանությունն ինքնին նրան չէր հուզում։ Դա նրա առաջին սպանությունը չէր։ Այս երկրում, ուր յուրաքանչյուրը պատրաստ էր ինքնագլուխ կերպով դատաստան տեսնել և ուր վրիժառությունը բարքերում արմատացած ավանդույթ էր, մարդկային կյանքը ոչ մի արժեք չուներ։

Սակայն նրա մյուս հանցագործությունները ո՛չ վկա էին ունեցել, ո՛չ էլ հրահրող։ Բացի դրանից, սա գավառապետ էր։ Նա հասկանում էր, որ ինքը չպետք է կարծեր, որ Գանի բեյն իրեն հովանավորում էր և, առավել ևս, որ նա իր դաշնակիցն էր։ Եթե Գանի բեյն անհրաժեշտ համարեր ազատվել Մուսթաֆայից, ապա այդ բանը կաներ առանց խղճի խայթ զգալու։Գանի բեյը սխալ մեկնաբանեց ոստիկանապետի հոգեվիճակը և նրան նմանեցրեց գամփռ շանը, որը հատուցում էր հայցում տիրոջից։ Նա ժպտաց և տպավորված ձևացավ.

— Հոյակապ աշխատանք է, եթե ձեզ պես մարդիկ շատ լինեն...

Մուստաֆա Ռահմիի դեմքը փայլում էր։ Գանի բեյը շարունակեց սառը տոնով.

— Իսկ հայերի՞ հարցը, ինչպիսի՞ն է իրավիճակն այնտեղ։

— Մենք նրանց տեղյակ ենք պահել տեղահանությունների մասին հրամանին։ Հիմա պահակախմբերի ենք սպասում։ Սակայն բանակը համագործակցելու ցանկություն չի ցուցաբերում։ Ես նկատի ունեմ բարձրաստիճան սպաներին։

— Իմ կարծիքով՝ այդ իրավիճակը հաճախակի է հանդիպում,— վրդովվեց Գանի բեյը ծխախոտ վառելով և ոստիկանապետին չառաջարկելով։— Մի մտահոգվեք, այս իրավիճակը կփոխվի։ Ես կառավարությունից ստացել եմ բոլոր լիազորությունները այդ հարցը կարգավորելու համար։ Հայերի տեղահանությունն առաջնային խնդիր է, և այն պաշտոնյաները, որոնք եռանդուն կերպով չեն համագործակցի այս քաղաքականությունը կյանքի կոչելու համար, կփոխարինվեն։ Նույնիսկ գավառապետները։

— Զափավորները իսկական վիժվածք են,— համաձայնեց ոստիկանապետը, որը ստեղծված իրավիճակը հարմար առիթ էր համարում իր որոշ հակառակորդներից ազատվելու համար։— Դուք կարող եք ինձ վրա հույս դնել։

— Մահմեդական բնակչությունն ինչպե՞ս է այդ որոշումն ընդանում։

— Զարմացած է։ Հաճախ դատապարտում է։ Շատերը քրիստոնյա բարեկամներ կամ հաճախորդներ ունեն։

Սրտնեղելով՝ Գանի բեյը ծխի մի քանի քուլա արձակեց.

— Հիշեցրեք մահմեդականներին, որ նրանք, ովքեր կթաքցնեն հայերին կամ կօգնեն նրանց փախչելու, խստորեն կպատժվեն։ Գավառապետի սպանությունն ու մի քանի լավ կազմակերպված իրադարձություններ կօգնեն նրանց կարծիքը փոխելու։

— Ի՞նչ եք պատրաստվում անելու այն հայերի հետ, որոնք մահմեդականություն կընդունեն,— հարցրեց Մուսթաֆա Ռահմին։

— Նրանք ինձ պետք չեն,— բացականչեց Գանի Բեյը։

Նա հանգած ծխախոտը գցեց գետնին և նորը վառեց.

— Կոմիսար,— ասաց նա ավելի հանգիստ ձայնով,— կրոնը այս պատմության մեջ ոչ մի դեր չի խաղում։ Հայ մահմեդականներ՞։ Նրանք հայ էլ կմնան։ Հակառակը եթե դուք ինձ համար ճարեք թուրք քրիստոնյաներ, որոնցով ես կբնակեցնեի Անատոլիան, ապա չէի առարկի։ Հնարավոր չէ կայսրություն հիմնել կրոնի վրա։ Ցեղի վրա, այո՛։

Մուսթաֆա Ռահմին գլխով արեց։ Նա չէր սիրում ծխի հոտը և լուսամուտներից մեկը բացեց։ Սենյակում լսվեց բակի աղբյուրի զուլալ ձայնը։ Գանի բեյը հանկարծ զգաց ճանապարհորդության հոգնածությունը և մտածեց այն բաղնիքի մասին, որի մոտով ինքն անցել էր։ Ինչ՛ երանություն կլիներ տաք բաղնիքում հիմա մաքրվել ճանապարհի փոշուց և մարմինը հանձնել քիսաչու խնամքին, որն այն կլվար լավ օճառով և խոտաբույսերի թրմաջրով։ Նա պատկերացրեց այն երջանկությունը որ կզգար, երբ քիսաչին կմերսեր իր մարմինը այդ

արվեստի կանոններին համապատասխան։ Գանի բեյը վճռեց ավարտել զրույցը։

— Իմ գործակալները կապվե՞լ են ձեզ հետ, կոմիսար։

— Այո։

— Հայտնեք նրանց, որ ես ուզում եմ իրենց տեսնել կեսօրից հետո,— ասաց նա՝ ոտքի կանգնելով և հայացքը հառելով իր զրուցակցի վրա։— Դուք ինձ հետ կճաշեք և մենք կքննարկենք իրադարձությունների հետագա ընթացքը։

Հարգանքի այդ նշանից Մուսթաֆա Ռահմին իրեն շոյված զգաց և զգաստանալով՝ ձեռքը սրտին սեղմեց.

— Դուք ինձ մեծ պատիվ եք անում։

Սրտապնդվելով՝ նա քրքրեց սեղանի անկյունում կիտված թղթապանակները, հանեց մի քանի ճմռթված թերթիկ և հետևեց Գանի բեյին, որը լուսամատին մոտենալով՝ փնտրում էր իր կառքը։ Ոստիկանապետը հարթեցրեց թերթիկները և ներկայացրեց իր վերադասին։

— Սա քաղաքի հարուստ և ազդեցիկ հայերի ցուցակն է։ Նրանք երկու հարյուր հոգուց ավելի են։ Ուզու՞մ եք նայել։

Ակամա քմծիծաղը դեմքին, Գանի բեյը կարդաց անխնամ ձեռագրով գրված թերթիկները։ Անուններն իրեն ոչինչ չէին ասում։

— Մեկը պակասում է,— ասաց նա ինքնահոսի կափարիչը հանելով։

Հենվելով լուսամատի փոշոտ գոգին՝ նա ցուցակի սկզբում մի անուն ավելացրեց։

* * *

Երբ Արմեն Սուրմելյանը եկավ, Պալյանների այգու դուռը կողպած էր։ Դա անսովոր էր, սակայն նա շատ լավ էր հասկանում այդ զգուշավորությունը։ Տեղահանություն... Տղամարդը հայհոյեց և դեն նետեց հանգած ծխախոտը։ Նա կարճահասակ էր ու թիկնեղ, նրա վիզն այնքան կարճ էր, որ թվում է, թե դրված է անմիջապես լայն ուսերի վրա։ Նրա կնոջ՝ Արաքսիի կարծիքով իր բնավորությամբ նա նման էր ծեր ջորու։

Նա ձգեց գանգի շղթան։ Հեռանալ Սվասից, ուր նա հաստատվել էր յոթ տարի առաջ ծերությունը խաղաղության մեջ անցկացնելու համար... Ո՞ւր կքշեն իրենց։ Ի՞նչ կլինի հետո։

Հայկական թաղի ծայրամասում գտնվող փոքրիկ տունն ու հողակտորը նրա միակ հարստությունն էին։ Իրենց խոստացել էին տեղավորել Ուռհայի ու Հալեպի շրջաններում գտնվող գյուղերում։ Խոստացել էին

նաև, որ գույքի տեղափոխության ծախսերը կհոգար կառավարությունը։ Իրենց հանգստացնում էին, սակայն Արմենի 72 տարվա կենսափորձը թույլ չէր տալիս նրան հավատալու պաշտոնական խոստումներին։ Անցյալում սուլթանը բազմիցս վերանայել էր իր պարտավորությունները հայերի ու կայսրության այլ փոքրամասնությունների նկատմամբ։

Մեծ ճերմակ տնից դուրս եկավ աղախինը և մոտեցավ ցանկապատին։ Նրա կլոր դեմքը երիզված էր ականջներից կախված ոսկյա գինդերով։ Նրա կզակը բռնելով, Արմենն իր ցածր ու մի քիչ խռպոտ ձայնով ասաց.

— Դու ինչպես միշտ շատ սիրուն ես, Ջամիլա։ Ջեմ հասկանում, թե ինչո՞ւ դու դեռ ամուսնացած չես։

Աղջիկը կարմրեց և աչքերն իջեցրեց։ Նա միշտ մեղքի զգացում էր ունենում Արմենի ներկայությամբ, քանի որ չնայած իր տարիքին՝ նա գրավում էր աղջկան։ Նրա հայացքը կանգ առավ նավապետի շապիկի բացվածքում երևացող սպիտակ մազերին, և նա ավելի կարմրեց։ Շատ հաճախ աղջիկը գաղտագողի հետևում էր Արմենին, երբ նա աշխատում էր Պալյանների այգում, կարգի էր բերում մարգերը, փխրեցնում էր բանջարանոցի հողը և խնամում էր անասուններին։ Նավապետի հաստ մատներով ահռելի ձեռքերը շատ նուրբ և ճարպիկ էին դառնում, երբ պատվաստում էին մրգատու ծառերը, կտրատում էին վարդի թփերը և քաջվարդերը։ Դա սիրո տեսակ էր, որ Արմենը ցուցաբերում էր նաև երեխաների ու կենդանիների նկատմամբ։ Այդուհանդերձ, նրա բազուկները նմանվում էին արջի թաթերի և դրանք պետք է որ շատ ամուր սեղմեին... Զգալով ջահել աղջկա հուզմունքը՝ Արմենը խիտ հոսքերը կիտեց, և նրա կկոցած աչքերը խորամանկ կայծեր արձակեցին.

— Եթե ես մահմեդական լինեի, քեզ որպես երկրորդ կին կառնեի։

— Նավապետ Արմեն,— բողոքեց աղջիկը շփոթվելով՝ դուք միշտ ծաղրում եք ինձ։

— Սխալվում ես, ես շատ լուրջ եմ։ Ի դեպ՝ ես կխոսեմ այդ մասին կնոջս՝ Արաքսիի հետ։

Աղջիկը սովոր էր ծերունու կատակներին, սակայն չգիտեր, թե արդյոք նրա խոսքերի մեջ ճշմարտության հատիկ կար։ Նա ամաչելով ծիծաղեց և դեմքը թեքեց։ Արմենը աղջկա հետևից այգի մտավ բոցենիների և լյուպինների միջով խճաքարով սալահատակված ծառուղիով։

— Ազնիվ խանումին ասե՞մ, որ եկել եք։

— Կարիք չկա, ես շտապում եմ։ Թովմասին մոտս ուղարկիր։

Երբ Արմենը մենակ մնաց, նրա տրտում մտքերը վերադարձան։ Նա կանգնած էր շագանակենու ստվերում և վիրավոր ոտքն էր շփում։ Նա զարմանում էր, որ ցավն իրեն զգալ էր տալիս այդքան տարի անց։ Հին վերք էր, որ ստացել էր 1894 թ. ջարդերի ժամանակ, երբ ինքն ու Արաքսին հազիվ էին մազապուրծ եղել։ Տրապիզոնում ապրող իրենց զավակներն ու թոռներն այդ բախտին չէին արժանացել...

Նրա թիկունքով քրտինք էր հոսում, քանի որ իր սանիկին հաճույք պատճառելու համար հագել էր ոսկեզօծ կոճակներով նավաստու իր բաճկոնը և գլխարկը, որի հովարի վերևում խարիսխ էր գործված։ Արմենը նավակ էր ունեցել և իր ամբողջ կյանքը ձկնորսություն էր արել Սև ծովի ափին։ Մաքսանենգություն էլ էր արել։ Այստեղ, երկրի ներքին շրջաններում, ուր նա եկել էր ջարդերից հետո, մարդիկ նրան «նավապետ» մականունն էին տվել, և դա նրան տհաճություն չէր պատճառում, այլ նույնիսկ դուր էր գալիս։

Նա ցրված հայացքով նայում էր խճի կազմած նախշին, հետո մոտեցավ մարգին և քաղեց թոշնած ծաղիկները։ Մայոր Վարդանը նրան վարձել էր այգին և անասունները խնամելու համար, և նրա տված ոռճիկը հավելում էր այն եկամուտին, որ Արմենը ստանում էր հավեր բուծելով, և դա նրան հնարավորություն էր տալիս արժանավայել կերպով ապրել առանց ծախսելու իր համեստ խնայողությունները։ Նա շատ էր հարգում և սիրում Վարդան Պալյանին, որը անտեսելով Արմենի համեստ դիրքը, նրան ընտրել էր որպես իր որդու կնքահայր։

Ճիշտ է, Վարդանի ազգականները հեռու էին, սակայն Սվասի ցանկացած հարուստ հայ շոյված կլիներ եթե Թովմասը նրա սանիկը լիներ։ Ուստի Արմենը շատ լուրջ էր վերաբերվում կնքահոր իր պարտականություններին, քանի որ չէր հասկանամ մայոր Վարդանի ընտրության դրդապատճառը։ Վարդանը շատ կրթված մարդ էր, մինչդեռ ինքը հազիվ գրել և կարդալ գիտեր։

— Բարի լույս, նավապետ Արմեն։

Նա գլուխը բարձրացրեց։ Մարոն կանգնած էր նրա տան շեմին՝ ձեռքին գորշ թերթով փաթաթված մի կապոց։

— Տուն չե՞ք մտնի։

— Բարի լույս Մարո։ Ոչ, մենք կգնանք՝ հենց որ Թովմասը պատրաստ կլինի։ Պատարագից առաջ ծխական կոմիտեի հատուկ նիստ է հրավիրված։

— Թովմասը չի ուշանա։

Մարոն իջավ աստիճաններով և մոտեցավ Արմենին։ Արմենը սիրում էր Մարոյին նայել, հատկապես երբ նա եվրոպական հագուստ էր կրում, ինչպես այդ օրը։ Ծոծրակին հանգույցի մեջ հավաքված մազերը բացում էին նրա նուրբ պարանոցը և գլխի կեցվածքին վեհության էին հաղորդում։ Արմենը երբեք այդքան գեղեցիկ կին չէր տեսել։ Նա զգայնական լիցքեր էր արձակում սակայն նրա հայացքը անկեղծ էր ու բաց։ Այդ խառնուրդը կախարդում էր ծերուկին, որը չէր կարողանամ Մարոյին նայել առանց ներքին դողի։ Երբ Մարոն Արմենին մոտեցավ, նա հիացավ դեղին ցոլքերով նրա շագանակագույն աչքերով։ Մարոն համբուրեց Արմենին և հարցրեց, թե ինչպես է նրա կինը։ Արմենն էլ իր հերթին տեղեկացավ նրա մոր ու ամուսնու առողջության մասին։

— Ես չեմ ուզում անհամեստ թվալ... Ասացեք, Արմեն, քահանայի հետ

դուք պետք է տեղահանության մասին խոսե՞ք։

— Է՛լ ինչի մասին,— հառաչեց նա։— Մայոր Վարդանը որևէ բան իմացե՞լ է։

— Առայժմ ոչինչ։— Մենք բոլորս անտեղյակ ենք, և դա սարսափելի է։ Սպասել առանց իմանալու, թե ինչ է գլխիդ գալու։

— Ի՞նչ եք կարծում, արժե՞ Թովմասին եկեղեցի տանել,— անհանգստացած ձայնով հարցրեց Մարոն։

— Սուրբ Մինասը մի քանի փողոց այն կողմ է, հայկական թաղի կենտրոնում։ Քաղաքում էլ ամեն ինչ հանգիստ էր։ Ես այս առավոտ շուկայում եմ եղել։ Մահմեդական առևտրականները նույնքան զարմացած են, որքան և մենք։

Նա չասաց, որ այդ հանդարտությունը փոթորկին նախորդող հանդարտություն էր։ Ինչպես և բոլորը, նա կանխազգում էր վատթարագույնը, սակայն այդ մասին չէր խոսում սնահավատ վախից, որ ասածը կիրականանար։ Նա ավելացրեց.

— Մի վախեցիր, ես ուշադիր կլինեմ։

Այդ բանն ասելով, նա արտահայտիչ տեսքով ձեռքը տարավ գոտկատեղին։ Մարոն հասկացավ, որ նա զինված էր և դա խթանեց նրա անհանգստությունը։ Արմենը նրան հանգստացրեց.

— Սա արտառոց դեպք չէ, ես զենքը միշտ վրաս եմ կրում։

Մարոն գլխով արեց։ Այս երկրում տղամարդը միշտ պետք է ի վիճակի լիներ իրեն պաշտպանելու։ Արմենն ուզում էր ինչ որ բան ավելացնել, սակայն լռեց, քանի որ տնից դուրս եկավ Թովմասը՝ շան ուղեկցությամբ։ Մարոն դարձավ դեպի նավապետը և արագ շշնջաց.

— Զմոռանաք Արաքսիի հետ այս երեկո գալ մեր տուն ճաշի։

— Ինչպես կարող եմ մոռանալ։ Չէ՞ որ նրա նվերն արդեն ինձ մոտ է։

- Կնքահա՛յր, կնքահա՛յր։Սասունն ուրախ հաչում էր և թռչկոտում երեխայի շուրջ։ Թովմասը վազեց կնքահոր մոտ, որը նրան գրկեց։

— Գնալով դու ծանրանում ես իմ ավազակ,— ասաց Արմենը՝ նրան համբուրելով։— Օր օրի մեծանում ես։

Թովմասը փքվեց, քանի որ Արմենի կարծիքը նրա համար մեծ նշանակության ուներ։ Երեխան պապ չուներ և Արմենին ընկալում էր որպես այդպիսին։ Շունը թռչկոտում էր նրաց, շուրջը և ուրախությունից հաչում էր։ Երեխային վայր դնելով Արմենը կռացավ շանը շոյելու, նրա ականջների հետևը քորելու և մեջքը տրորելու համար։

— Դու էլ շատ սիրուն ես։

— Տեսա՞ք նավաստու իմ համազգեստը,— հարցրեց Թովմասը պտույտ կատարելով։— Մայրիկն է կարել։

Արմենն իր հիացմունքն արտահայտեց, շոշափեց կարճ տաբատի, նավաստու օձիքով կապտասպիտակ բաճկոնի կտորը: Աչքերը բարձրացնելով՝ նա հանդիպեց Մարոյի մռայլ հայացքին: Թովմասի անհոգ ուրախությունն ավելի նկատելի էր դարձնում մեծերին համակած տագնապը: Արմենը հանեց իր գլխարկը և դրեց երեխայի գլխին, հետո մատներով հարդարեց իր ալեխառն բաշը:

— Ի՞նձ եք նվիրում,— բացականչեց Թովմասը հրճված ձայնով, գլխարկը գլխին հարմարեցնելով:

— Քեզ եմ զիջում մինչև եկեղեցի հասնելը:

— Իսկ հետադարձի ճանապարհի՞ն:

Կնքահայրը գլխով արեց:

— Նայիր, մայրիկ, ես նավապետ եմ դարձել:

Մարոն համբուրեց Թովմասին և նրան տվեց կապոցը:

— Տատիկը միս է դրել, ձիթապտուղ ու հալվա, որ աղքատներին տաս:

Մարոն նրանց ուղեկցեց մինչև դարպասը: Երեխային տնից դուրս թողնելու հարցը շարունակում էր նրան անհանգստացնել, սակայն Մարոն մտածեց, որ չարժեր Թովմասին չափից ավելի վախեցնել արգելելով եկեղեցի գնալ: Այդուհանդերձ, նա վերջին անգամ նախազգուշացրեց Արմենին.

— Զգույշ եղեք: Իսկ դու, Թովմաս, կլսես կնքահորդ:

Նա պահեց շանը, որն ուզում էր նրանց հետ գնալ, և նայեց, թե ինչպես էին ձեռք ձեռքի տված հեռանում ծերունին ու երեխան:

* * *

Նրանք դանդաղ գնում էին փողոցի շիկացած սալահատակով, ջանալով պատսպարվել շենքերի և ծառերի ստվերում: Պալյանների տան հարևանությամբ գտնվող բոլոր տները մեծ էին, սակայն աստիճանաբար դրանք ավելի փոքր ու համեստ էին դառնում: Բոլորն էլ իրենց այգիներն ու գոմերն ունեին, և այնտեղից ծանոթ աղմուկ էր գալիս: Թովմասը ճանաչում էր թաղի երեխաներին, որոնց հետ հաճախ խաղում էր, ճանաչում էր նաև նրանց ծնողներին, տատերին ու պապերին: Նա ձեռքով էր անում բակերում խաղացող երեխաներին և զարմանում էր, որ նրանք սովորականի պես բղավելով չէին վազվզում փողոցում: Այն գրեթե դատարկ էր: Փողոցում տեղադրված նպարեղենի, մսամթերքի, բանջարեղենի հազվադեպ խանութները փակ էին: Քիչ այն կողմ, թաղի առևտրական մասում, ուր շարված էին մանր առևտրականների խանութները, արհեստանոցները, տարօրինակ խաղաղություն էր տիրում: Չկային վաճառասեղանները մայթերին, չկային գնորդներն ու հետաքրքրասերները նրանց շուրջը, չկային բեռնակիրները, որոնք

ապրանք էին տեղափոխում, չկային նաև աշկերտները, որոնք պատրոն ձևանալով՝ նրանց հրահանգներ էին տալիս։ Իսկ փողոցի անկյունի սրճարանում չէին սովորական հաճախորդները՝ տղամարդիկ, որոնք նարգիլե էին ծխում, նարդի էին խաղում կամ էլ քննարկում էին իրենց գործերը։ Սրճարանի հարթակին աթոռները կործած էին սեղանների վրա։ Նույնիսկ Որդիկը փակել էր «Քյաբաբի տուն» իր հայտնի ռեստորանի վարագույրները։ Այդ ռեստորանը միշտ լիքն էր լինում վաճառականներով, որոնք իրենց գործարքներն էին նշում, կամ էլ ընտանիքներով, որոնք տոնում էին որևէ տարեդարձ։ Փողոցը դատարկ էր թվում առանց նրանց աղմուկի և խորոված ի հոտի։

— Այսօր կիրակի՞ է,— հարցրեց Թովմասը զարմանալով։

— Ոչ,— պատասխանեց կնքահայրը՝ ջանալով պատասխան գտնել։

Նա չգիտեր, թե Թովմասին ասե՞լ էին արդյոք հայերին պատուհասած դժբախտության մասին։ Դա իր պարտականությունը չէր։ Նա փոխեց խոսակցության նյութը և երեխային կրկին պատմեց իր ծովային արկածների և տեսած փոթորիկների մասին։ Նա, իհարկե, հնարում էր, սակայն աշխարհագրական մանրամասները իրական էին, և նա ձգտում էր այդ երևակայական պատմությունների միջոցով իր սանիկին կյանքի դասեր տալ։ Հենց որ տանիքների հետևում երևաց եկեղեցու զանգակատունը, Արմենը սկսեց կրկնել նոր աղոթքը, որ նա սովորեցրել էր Թովմասին։ Կնքահոր պարտականությունն էր երեխային հաղորդակից դարձնել կրոնին։ Արմենը շաբաթը երկու անգամ երեխային եկեղեցի էր տանում առավոտյան պատարագին մասնակցելու։ Նա պարզունակ հավատացյալ էր՝ ավելի զգայական, քան բանական։ Ամրողջ կյանքի ընթացքում եկեղեցուն մոտենալուն պես իրեն համակող սնահավատ վախը ծերության շեմին իր տեղն էր զիջել Աստծու հետ բարեկամական մտերմության զգացմանը։

Երկու հարյուր տարի առաջ վարդագույն ցոլքերով մարմարից կառուցված Սուրբ Մինաս եկեղեցին շրջապատված էր մոխրագույն քարից շարված պարսպով։ Պատերը զարդարված էին խաչքարերով։ Եկեղեցու վրա վեր էր խոյանում ութանիստ զանգակատունը՝ պսակված կոնաձև գմբեթով։ Դա Սվասի ամենամեծ եկեղեցին չէր, սակայն նրա ծխականների մեջ կային հարուստ և ազդեցիկ մարդիկ և այդ պատճառով ամենակարևորն էր համարվում։ Բակում մի քանի նոճիներ էին աճում։ Ծառուղու երկայնքով գետնին նստած ծխական մուրացկանները, հատկապես սևավոր կանայք, սպասում էին հավատացյալների հայտնվելուն։ Նրանց թույլ էին տալիս ողորմության խճդրել պատարագից առաջ ու հետո, և յուրաքանչյուրն իր մշտական տեղն ուներ։ Թովմասը ջանում էր արդարացի բաշխել ողորմությունը, որը նրա ընտանիքն իրեն էր վստահել։ Նա կանգ առավ ծեր, կուզիկ կնոջ առջև, որը նախավերջինն էր շարքում, նրան տվեց կապոցը և արտասանեց ընդունված նախադասությունը.

— Թող Աստված բարի վայելում անի։

— Աստված թող լսի ձեր աղոթքը,— պատասխանեց կինն իր անատամ

բերանով։

— Ինչո՞ւ այս մեկին ընտրեցիր,— հարցրեց Արմենը, երբ մտնում էին եկեղեցի։

— Այսօր նրա հերթն էր,— մրմնջաց երեխան։— Ես հաշվել գիտեմ։

Եկեղեցու նավում առջևի նստարանների մոտ ընդամենը մի քանի ծնկաչոք ծեր կին կար։ Արմենը նստեցրեց երեխային նստարանին և պատվիրեց խելոք մնալ։

— Ինձ սպասելու ընթացքում կրկնիր նոր աղոթքը։ Ես չեմ ուշանա։

— Ո՞ւր եք գնում, կնքահայր։

— Քահանային՝ Տեր Խորենին պետք է հանդիպեմ։

— Ես չե՞մ կարող ձեզ հետ գալ։

— Ոչ։ Սպասիր ինձ այստեղ, տեղիցդ չշարժվես։ Եվ հսկիր իմ գլխարկը։

Կնքահայրը դուրս եկավ ավանդատուն տանող փոքր դռնով, իսկ Թովմասը ծնկի իջավ։ Նա սիրում էր այդ վայրի անդորրն ու զովությունը, խնկի բուրմունքը և այրվող մոմերի հոտը։ Նա հայացք գցեց կողմնային պատերին, ուր սրբապատկերներ էին փակցված։ Որոշ սրբեր խիստ տեսք ունեին, ոմանք՝ բարի ինչպես Սուրբ Հակոբը և Սուրբ Ստեփանոսը։ Վիտրաժներից թափանցող արևի ճառագայթները լուսավորում էին Սուրբ սեղանի վերևում կախված Աստվածամոր պատկերը։ Սրբապատկերի առջև վառվում էր տաճարի ճրագը՝ ձիթապտղի յուղի մեջ ընկղմված պատրույգը։

Թովմասը տարօրինակ զգացում էր ապրում, որը չէր կարող բացատրել։ Նա պետք է որ երջանիկ լիներ իր տարեդարձի օրը, որին նա սպասել էր ամիսներ շարունակ, սակայն ինչ-որ անորոշ զգացում խաթարում էր նրա ուրախությունը։ Դա նման էր ատամնացավի, որը նույնիսկ թույլ լինելով, խանգարում էր խաղալ կամ սովորել։ Ոչինչ չէր փոխվել, սակայն ոչինչ առաջվա պես չէր։ Օրինակ, այս դատարկ փողոցները, կողպած խանութները, մեծերի մտահոգ դեմքերը նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը ժպտում էր։ Նա ապարդյուն կերպով հարցաքննել էր Ջամիլային ու Ջեյնաբին, սակայն նրանք դեմքերն էին թեքում շփոթված տեսքով և չէին պատասխանում։ Ի՞նչ էին իրենից թաքցնում։ Նա չէր համարձակվում բացատրություններ պահանջել հորից, մորից, տատից։ Միգուցե կարելի՞ էր փորձել կնքահորից մի բան իմանալ պատարագից հետո։

Նա մտածեց, որ Աստված երևի նկատել էր իր ներկայությունը եկեղեցում և որ ժամանակն է աղոթելու։ Նա ձեռքերը ագուցեց և, նայելով Աստվածամոր գրկի Մանկանը, մտքում կազմեց այն մարդկանց ցուցակը, որոնց համար պետք է աղոթեր։

* * *

Ավանդատանը Տեր Խորենը կանգ առավ ծխական խորհրդի նախկին անդամներին պատկերող խմբակային լուսանկարի առջև։ Ավանդատան երկու պատերին փակցված էին մոտ քսան այդպիսի լուսանկարներ, որոնք տեղադրված էին սադափով զարդարված փայտյա շրջանակների մեջ։ Քահանան հիշում էր գերեզմանատան նոճիների տակ հանգչող խորհրդի տասներկու անդամներից յուրաքանչյուրի անունը։ Նա շոյեց կրծքին փռված խիտ մորուքը։ Լուսանկարի շրջանակի ապակին արտացոլում էր կաղնու փայտից երկարավուն սեղանի շուրջ անշարժ և լուռ նստած մարդկանց։

Սեղանի վերին ծայրին նստած էր Հաջի Հարությը, ծխի հնագույն անդամներից ավագը։ Նրա անվանը հավելված «հաջի» մասնիկը ցույց էր տալիս, որ նա ուխտագնացություն էր կատարել դեպի Երուսաղեմ և ընկղմվել էր Հորդանանի ջրերի մեջ այն վայրում, ուր Սուրբ Կարապետը մկրտել էր Քրիստոսին։ Նրա կողքին խոշոր կալվածատեր Զավենը, որը հայտնի էր իր ազնվությամբ և մեծահոգությամբ, կախել էր գլուխը և փակել աչքերը՝ կարծես քնած լիներ։ Արան, որի օծանելիքի բույրը տարածվել էր սենյակով մեկ, ուշադիր նայում էր պատի մոդեսին։ Նա մտածում էր, որ նախորդ ժողովի ժամանակ խորհուրդը որոշել էր վերանորոգել ավանդատունը։ Սակայն ո՞վ էր դրա մասին մտածում այսօր։ Սեղանի մյուս կողմում Սարգիս Զորյանը՝ ուսուցիչը, որը ստանձնել էր նաև գգեստապետի և սարկավագի պարտականությունները, խզբզում էր ծոցատետրի մեջ։ Նրա անմիջական հարևանը աչքը չէր կտրում քահանայից։ Շիրակ Թևոնյանն էր, որին Սարգիսն իր նախաձեռնությամբ հրավիրել էր այս հատուկ ժողովին։

Այդ նախաձեռնության նկատմամբ իր անհամաձայնությունն ընդգծելու համար էր, որ քահանան համառորեն դեմքով չէր դառնում դեպի սեղանը։ Շիրակը չպետք է այդտեղ լիներ։ Քահանան, ինչպես և Սվասի քաղաքացիների մեծամասնությունը, համարում էր, որ ապստամբների գործունեությունն առիթ էր տալիս կառավարությանը կոշտացնելու իր վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Ուսուցիչը տրամագծորեն հակառակ կարծիքի էր։ Հիմա խնդիրն է՛լ ավելի էր բարդանում։ Շիրակի ներկայությունն այս վայրում վտանգում էր նրանց բոլորի վիճակը։ Այդ տաքգլուխը միայն հոգս էր պատճառելու, իսկ իրենց բեռն արդեն անտանելի էր։ Գոնե նավապետ Արմենը շուտ գար, և իրենք հնարավորինս շուտ ավարտեին...

Քահանան մոտեցավ ավանդատան խորքի պատի մոտ շարված երեք պահարաններին, բացեց առաջինը, հանեց պատարագի զգեստավորությունը։ Նա զգում էր Շիրակ Թևոնյանի հայացքն իր ծոծրակին՝ շատ ուշադիր հայացք, որն անհանգստացնում էր։ Նրան թվում էր, թե Շիրակը գուշակում էր իր մտքերը և բացահայտել էր այն, ինչ նա թաքցնում էր կնոջից և ծխի անդամներից՝ իր լիակատար հուսահատությունը։ Օ՛, Տեր Խորենը չէր ընկրկի, հակառակը՝ նա իր քաջությամբ օրինակ կծառայեր հոտի համար, կքարոզեր հույս ու

համառություն, սակայն նքն իրեն չէր կարող համոզել։ Նրան հետապնդում էր Քրիստոսի խոսքը. «Հայր իմ, եթե կարելի է, թող այս բաժակը ինձնից հեռու անցնի»։ Այդ բաժակը։ Այսօր Աստված այն հրամցնում էր մի ամբողջ ժողովրդի, ոչ թե Մարդ Աստծուն, այլ ընտանիքի մայրերին, գյուղացիներին, առևտրականներին, արհեստավորներին։ Ունե՞ր նա այդ իրավունքը։ Թեքե՞լ էր նա արդյոք իր դեմքը հայերից, որոնք սակայն պաշտում էին նրա անունը։ Ուրեմն նա դեռևս մարտիրոսների կարի՞ք ուներ։ Քահանայի գլխում գրեթե սրբապիղծ մտքեր էին ծագում, որոնք նա քշում էր կրկնելով. «Թող քո կամքը կատարվի։ Հարվածիր ինձ, բայց խնայիր մնացածներին»։

Մանուկ հասակից Տեր Խորենը երազել էր սովորել Երուսաղեմի ճեմարանում և վարդապետ դառնալ։ Նրա հայրը, որը ժամագործ էր Յոզղաթում, խրախուսում էր իր յոթ զավակներից ավագի այդ ցանկությունը։ Սակայն քանի մոտենում էր մեկնելու ժամանակը, Խորենի վճռականությունը թուլանում էր, քանի որ հարևանուհի Մարիամի հանդեպ նրա սերը հարցականի տակ էր դնում նրա վճիռը։ Ի վերջո, Խորենը գերադասեց ամուսնանալ նրա հետ։ Այսպիսով հաշտեցնելով իր սերը Աստծու և կնոջ հանդեպ՝ նա դատապարտված էր ամբողջ կյանքի ընթացքում քահանա մնալ և զրկվում էր Հայոց Առաքելական եկեղեցու նվիրապետության մեջ բարձր դիրք գրավելուց։ Այդուհանդերձ, որևէ ծխում քահանայի պաշտոնը համապատասխանում էր նրա ձգտումներին։ Նա ցանկանում էր Աստծու կամքի գործիքը լինել այն մարդկանց շրջանում, որոնց միշտ ճանաչել էր, կիսել նրանց ուրախություններն ու վշտերը, ապրել նրանց շրջապատում այնպես, ինչպես հովիվն է ապրում իրեն վստահված հոտի հետ միասին։

Նա երեսուներեք տարեկան էր 1894 թ. հայկական ջարդերի ժամանակ, որոնց հետևանքով Անատոլիայում և Կիլիկիայում երեք տարի շարունակ արյուն էր հեղվում։ Տաքարյուն երիտասարդ քահանան քաջաբար կռվել էր իր հոտի բազմաթիվ անդամներին փրկելու համար։ Հիսունչորս տարեկանում նա այլևս ուժ չուներ պայքարելու, առավել ևս, որ այն, ինչ նախապատրաստվում էր, բոլորովին այլ բնույթ ուներ։ Այն, ինչ կատարվում էր հիմա, սպանության մոլուցքի տարերային և մեկուսի բռնկում չէր. որը կարելի էր վերագրել մոլեռանդությանը և սահմանափակ մտահորիզոն ունեցող զինվորականությանը, այլ կառավարության պաշտոնական քաղաքականությունն էր, որի ամենաչնչին մանրամասները ծրագրավորված էին և կատարվում էին ծրագրի ծավալին համապատասխանող միջոցներով։ Դա նրա ենթադրությունները չէին։ Նա գիտեր դա հավաստի աղբյուրից։ Սվասի շվեյցարական մանկատան տնօրեն Ռոզլեր քահանան նախօրեին Տեր Խորենին էր պատմել այն, ինչ իմացել էր բողոքական մի միսիոներից, որը եկել էր Մալաթիայից։ Տեր Խորենն այդ նորությունը հայտնել էր միայն իր կնոջը, որից նա պահանջել էր լռություն պահպանել։ Նրանք երկուսն էլ կարծում էին, որ փրկություն չկա և որ իրենք բոլորը կարող էին հույս դնել միայն Աստծու ողորմածության վրա։ Հենց այդ խոնարհությունն էր, որ Շիրակը գուշակել էր քահանայի վարքագծում։

Դուռը բացվեց, և ավանդատուն մտավ Արմեն Սուրմելյանը: Նա զարմացավ՝ տեսնելով, որ ներկա էին խորհրդի միայն չորս անդամները: Նա նայեց իր ժամացույցին և տեսավ, որ եկել էր չորս րոպե ուշացումով: Խորհրդի նիստի մասին հայտնել էին ընդամենը մեկ ժամ առաջ և դա էր, անկասկած, բացակայությունների պատճառը: Արմենը ծխական խորհրդի ակտիվ անդամներից էր և նույնիսկ եթե երբեմն իրեն բուռն էր պահում և իր կարծիքն էր հայտնում առանց խնայելու մարդկանց ինքնասիրությունը, այդուհանդերձ նրա կարծիքը հարգում էին: Կրթության պակասը նա լրացնում էր սուր խելքով և ողջամտությամբ, որը նրան հնարավորություն էր տալիս դասեր քաղել իր կենսափորձից և տարբեր ազգերին և տարբեր խավերին պատկանող մարդկանց հետ շփումներից:

Նա պտտվեց սեղանի շուրջը, ձեռքեր սեղմեց, ոմանց հետ գրկախառնվեց: Նա աչքերին չէր հավատում: Շիրակ Թևոնյան: Այդ անունն առասպելական էր դարձել շրջանում: Նա իր մարդկանց հետ, որոնք իրենց «քաջեր» էին անվանում, հերոսական արարքներ էր գործեի պաշտպանելով ռազմաճակատին մոտ գտնվող գյուղերը օսմանյան դասալիքների թալանից: Շատ պատմություններ էին շրջում, ուր պատմում էին նրա քաջագործությունների մասին, հարձակումներ բանակի պահակախմբերի վրա, մարտեր ավազակախմբերի հետ, վտանգի մեջ գտնվող հայերի փրկություն: Պատմություններն իհարկե չափազանցված էին: Ունկնդիրների ցանկությանը ընդառաջելով՝ ամեն ասացող զարդարում էր իրականությունը մանրամասներ ավելացնելով, ձևափոխում էր չափից ավելի առօրեական հանգուցալուծումները: Ամեն դեպքում այդ պատմությունները հիմնված էին իրական փաստերի վրա, և Արմենը հիանում էր այդ երիտասարդներով, ողջունում էր նրանց վարքագիծը:

Նա նստեց Շիրակից հեռու, սեղանի հանդիպակաց կողմում, որպեսզի վերջինս անընդհատ լիներ իր տեսադաշտում: Նա սովորական արտաքին ուներ. միջահասակ, նուրբ դեմքով, մազերը հետ սանրած, երկար բեղեր դեպի վեր ոլորած ծայրերով: Ապստամբին հեշտությամբ կարելի էր հովվի հետ ծփոթել, քանի որ արևից և քամուց նրա մաշկը սևացել էր: Սակայն նրա աչքերն այրվում էին ներքին կրակից, երիտասարդը լարված էր զսպանակի պես, և նվազագույն ցնցումը կարող էր այդ զսպանակը գործի դնել:

Տեր Խորենը նստեց սեղանի գլխին՝ Հաջի Հարութի դեմ դիմաց: Կարիք չկար ճշտելու այդ հանդիպման նպատակը: Բոլորին մտահոգում էր միայն մեկ հարց: Նրանք միմյանց նայեցին: Ո՞վ էր կոտրելու սառույցը: Սովորաբար քահանան աղոթում էր, հետո ուսուցիչը հրապարակում էր օրակարգը: Տեր Խորենը լուռ էր: Նա հնարավորինս հետաձգում էր պահը, երբ մնացածներին պետք է հաղորդեր այն ամենը, ինչ լսել էր Ռոզլեր քահանայից: Ինչ վերաբերում է Սարգիս Զորյանին, ապա նա ընկղմված էր իր ծոցատետրում արված խզբզոցների հայեցության մեջ: Բոլորը հայացքները հառեցին խորհրդի նախագահ Հաջի Հարութի վրա: Ավագը նստել էր իր աթոռի ծայրին, ձեռքերը դրել էր ձեռնափայտի

գլխիկին և ճոճվում էր: Քանի որ նա գրեթե կույր էր, ապա չէր նկատել, որ բոլորի ուշադրության կենտրոնում էր: Բոլորին թվաց, որ Շիրակը խոսելու էր: Սակայն նա իրեն զսպեց, գերադասելով հնարավորություն տալ մնացածներին իրենց կարծիքն արտահայտելու, որպեսզի ինքը հնարավորություն ունենար նրանց մասին կարծիք կազմելու և ծանոթանալու նրանց դիրքորոշմանը:

Լռությունը ծանրանում էր: Նավապետ Արմենն իրավիճակը ծիծաղելի էր համարում: Նա նախ մատները ճտճտացրեց, հետո գլուխը ձգելով՝ հերթով նայեց յուրաքանչյուրի դեմքին.

— Դե լավ, քանի որ ոչ ոք ոչինչ չունի ասելու, դադարեցնենք նիստը և գնանք աղոթելու,- հայտարարեց նա սրտնեղելով:

Ոչ ոք չարձագանքեց, և նա շարունակեց.

— Բառի՞ց եք վախենում: Տեղահանություն: Ահա, արտասանվեց: Իսկ հիմա՝ ի՞նչ ենք անելու:

Արմենը նայում էր Շիրակին: Հարցը փաստորեն հասցեագրված էր նրան: Երիտասարդը անվրդով էր: Զավենը, թևի կճատը սեղանին հենելով, կոկորդը մաքրեց: Նա իրեն միշտ տեր ու տիրական էր զգացել Հալիսի ափին անհիշելի ժամանակներից իր տոհմին պատկանող հողերի վրա և չէր կարողանում հասկանալ, որ իրեն այդ հողերից ուզում էին քշել: Նրա կարծիքով՝ փողը կարող էր ամեն ինչ կարգավորել:

— Մենք անկասկած զուր տեղն ենք անհանգստանում: Տեղահանության հրամանը մեզ վախեցնելու ձև է: Մեզ սկզբում վախեցնում են, հետո մի նոր հարկ են գանձում: Դա գլխագնի պես բան է, որը մենք պատրաստակամությամբ վճարում ենք, և դեռ երջանիկ ենք լինում, որ այդքան էժան ենք պրծել: Ես կվճարեմ այն ընտանիքների համար, որոնք ի վիճակի չեն:

Ուսուցիչն ու Արմենը հանդիմանական հայացք նետեցին նրա վրա: Տեր Խորենն ազդվեց այդ միամտությունից, ուր նա նշմարում էր թեկուզ աննշան հույս պահպանելու հզոր մղում: Դա ծխականների մի զգալի մասի դիրքորոշումն էր: Նա սարսռաց մտածելով, որ նրանց լուսավորելու անշնորհակալ գործը իր ուսերին էր դրված:

Արան գլուխն էր քորում: Նրա ադամախնձորը բարձրանում և իջնում էր.

— Ես Զավենի հետ համաձայն չեմ,- ասաց նա:- Սակայն ոչինչ չի վկայում, որ տեղահանության մասին հրամանը կկիրառվի Սվասում, ուր մենք, այնուամենայնիվ, երեսուն հազար ենք:

— Իսկ ինչո՞ւ չպետք է կիրառվի,- հարցրեց Արմենը հեգնական տոնով:

Արան, որի մականունն էր նաև «Կոչկիրի վարսավիր», չնայած, որ նա հեռացել էր այդ գյուղից մի տասը տարի առաջ Սվասում հաստատվելու համար, բազմաթիվ մահմեդական այցելուներ ուներ:

— Մենք այստեղ բազմաթիվ մահմեդական բարեկամներ ունենք, և նրանք այդ բանը թույլ չեն տա։ Դա կաղքատացնի քաղաքը և ամբողջ գավառը, և նրանք դա գիտեն։

— Նա իրավացի է,– համաձայնեց Զավենը։– Շրջանի տնտեսությանը հիմնականում մեզ վրա է հենվում։ Նրանք խիղճ չունեն, բայց խելոք են։ Թուրքերը կպաշտպանեն իրենց շահերը։

Արմենը, բարկանալով, ձեռքը սեղանին խփեց.

— Դուք կարծում եք, որ դա նրանց կկանգնեցնի՞։ Դուք կարճ հիշողություն ունեք։ Կարիք կա՞, արդյոք, որ ես թվարկեմ վերջին քսան տարիների ընթացքում մեզ պատուհասած անարդարություններն ու դժբախտությունները։

Շիրակը համաձայնության նշան արեց, որը շոյեց նավապետի ինքնասիրությունը։ Զավենը ծամածռվեց և ուսերը թոթվեց.

— Վիրավորանքներ մեր ժողովուրդը շատ է տարել, սակայն մենք դրանցից չենք մեռել։

— Վիրավորանքնե՞ր,– բացականչեց ուսուցիչը վրդովված։— Ադանայի երեսուն հազար զոհերը 1909 թ., 1894-95 թթ. երեք հարյուր հազար զոհերը, դուք դա վիրավորա՞նք եք անվանում։

Զավենը մեղավոր տեսքով գլուխը կախեց։ Քահանան հանդարտեցնող շարժումներ արեց։ Նա իրեն մեղավոր էր զգում, որ ստիպում էր իր բարեկամներին պարապ վեճեր վարել՝ ճշմարտությունը նրանց բացահայտելու փոխարեն։ Արան փորձեց ժամանակ շահել.

— Մեզ հավաստիացնում են, որ այդ տեղահանությունը ժամանակավոր միջոցառում է և որ...

Ուսուցիչը նրան ընդհատեց.

— Եվ որ նրանք մեզ նոր գյուղերում կտեղավորեն։ Ես ուսումնասիրել եմ քարտեզները։ Դու գիտե՞ս, թե ուր են նրանքուզում մեզ տեղափոխել։ Եփրատի ավազանի ճահիճները և Սիրիական անապատ, որից խուսափում են նույնիսկ քոչվոր բեդվինները։ Եվ, բացի դրանից, վերջ տուր «տեղահանության» մասին խոսել, մեզ ուզում են քշել։ Նույնիսկ ավելի վատ...

Սարգիս Զորյանը տեղեկացել էր իրավիճակին մեկ ժամ առաջ։ Նրա զարմիկներից մեկը «Քաջերի» ջոկատում էր և Շիրակ Թևոնյանը նրան էր դիմել ուսուցչի օգնությունը ստանալու համար։ Սարգիսն այժմ համամիտ էր ապստամբների ղեկավարի հետ և կողմնակից էր այն ծրագրին, որը վերջինս իրեն էր ներկայացրել։ Զորս ամսականից մինչև տասնհինգ տարեկան տասնմեկ երեխաների հայր լինելով, նա չէր կարողանում նրանց պատկերացնել Շիրակի նկարագրած մահվան քարավաններում։ Նա չէր ուզում նաև, որ իր աշակերտներն այդ բախտին արժանանային։ Եվ այդ պատճառով ուսուցիչը պատրաստ էր ամեն ինչի։

Իր անդամահատած ձեռքը մերսելով, Զավենը նորից հազաց։

— Հաջի Հարութ,— ասաց նա,— դուք գավառապետ Մումթազ բեյի մտերիմն եք։ Նա միշտ բարյացակամ է եղել հայերի նկատմամբ։ Դուք չէի՞ք կարող նրան հանդիպել։

Ավագի կնճռոտ դեմքն էլ ավելի թոշնեց, և ծխախոտից դեղնած բեղը բարձրացավ։ Նա դանդաղ էր խոսում, կարծես ամեն բառը կշռեր։

— Ժամանակները փոխվել են, իմ խեղճ Զավեն։ Մումթազ բեյը կորցրել է մայրաքաղաքի ղեկավարների վստահությունը և զորաշարժի ազատության չունի։

— Իսկ Ֆաքրի փաշա՞ն,— կրկին հարցրեց Զավենը գրեթե աղերսող ձայնով։— Նա արդարամիտ և լավ մարդ է։

— Զնայած նրան, որ փաշան շրջանի զորքերի հրամանատարն է, սակայն հրամանները Կոստանդնուպոլսից է ստանում։ Եվ քանի որ նա չի ցանկանա կորցնել գեներալի իր կոչումը...

Հաջի Հարութը բարձր հառաչեց և ավելացրեց հուսահատ ձայնով.

— Բարեկամներ, իրավիճակին շիտակ նայեք. մենք միայնակ ենք, մեն-մենակ։

Նա լռեց՝ շարունակելով գլուխը տմբտմբացնել։ Արան նշան արեց, որ ուզում էր խոսել։ Մտածելուց հետո նա ստիպված էր հրաժարվել իր լավատեսությունից։

— Հաջի Հարութը դժբախտաբար իրավացի է։ Իմ գործընկեր Հասանը՝ վարսավիր-թլփատողը, ինձ ասաց, որ Սվասում շատ նոր դեմքեր են հայտնվել, մայրաքաղաքից եկած գործակալներ։ Ոչ ոք ոչ մեկին չի հավատում։ Ըստ պաշտոնական կարգադրության՝ այն մահմեդականները, ովքեր կպաշտպանեն կամ կթաքցնեն հայերին, դատարանի առջև կկանգնեն։

Արմենը շուրջը նայեց. Արան ու Զավենը մռայլ էին, Հաջի Հարութը կարծես տխուր երազի մեջ էր ընկղմվել։ Դա իր բացատրությունն ուներ։ Սակայն ուսուցչի ու քահանայի վարքագիծը նրան անհանգստացնում էր։ Տեր Խորենը, որը փախցնում էր հայացքը, երեխայի էր նմանվում, որը պատրաստ էր իր մեղքը խոստովանելու։ Ինչ վերաբերում է Սարգիս Զորյանին, որը սովորաբար հանդարտ էր ու ծանրակշիռ, ապա նա չէր կարողանում աթոռին հանգիստ նստել, կարծես անհամբեր սպասեր ինչ-որ իրադարձության։ Այս երկուսն ինչ-որ բան էին թաքցնում։ Եվ Արմենը դիմեց հենց այդ երկուսին.

— Որևէ մեկը նոր տեղեկություններ չունի՞ մեզ հաղորդելու։

— Ես,— պատասխանեց Շիրակ Թևոնյանը։— Ես խոսք ես խնդրում։

Տեր Խորենը գլխով արեց։ Շիրակը մոտեցավ, հենվեց սեղանին և տաանհինգ րոպե շարունակ պատմում էր այն ողբերգության մասին, որ ապրում էին հայերը Անատոլիայի գրեթե ողջ տարածքում, ավերված

գյուղեր, տեղահանվածների շարասյուններ, որոնք քայլում էին օրեր շարունակ առանց ուտելու և խմելու։ Նա բազմաթիվ, հաճախ մռայլ մանրամասներ էր վկայակոչում, որոնք անիմաստ էր համարել Վարդան Պալյանին հաղորդել։ Սամսունի եպիսկոպոսի ոտքերը մեխել էին, ինչպես ձիուն պայտելիս։ Սև ծովի առափնյա բնակիչներին նավ էին նստեցնում՝ խորքում խորտակելու համար։ Խարբերդի մոտ ոստիկանները հարյուրավոր կանանց և երեխաների ձորն էին նետել։ Այլուր տանջում էին, ողջակիզում, գնդակահարում։ Նրա ձայնը դողում էր զսպված կատաղությունից, իսկ ապշահար ունկնդիրների աչքերին արցունքներ կային։ Ժամանակ առ ժամանակ վրդովմունքի և զզվանքի բացականչություններ էին լսվում։ Չնայած իր վշտին, քահանան թեթևության էր զգում, որ ինքը ստիպված չէր բացահայտություններ անել։

Սարգիս Զորյանը Շիրակին էր լսում նույն վրդովմունքով, ինչ առաջին անգամ։ Երբ երիտասարդը լռեց, համատարած ընկճվածություն էր տիրում։ Այլևս հնարավոր չէր ինքնախաբեությամբ զբաղվել և հույսեր փայփայել։ Լսածը հազար անգամ ավելի սարսափելի էր, քան այն, ինչից իրենք թաքուն վախենում էին։ Նրանք տեսնում էին, թե ինչպես են ազգովի ընկղմված մղձավանջի մեջ, և յուրաքանչյուրը դողում էր իր սիրած էակների համար։ Արմենը չէր մտածում ոչ կնոջ, ոչ էլ իր մասին, այլ եկեղեցում սպասող Թովմասի և իրենից ձու գնող երեխաների մասին։

— Աստված լքել է մեզ,— մրմնջաց վարսավիրը մռայլ տոնով։

Քահանան նրան մեղմորեն հանդիմանեց, քանի որ այդ միտքն այցելել էր նաև իրեն։

— Արա, Արա։

— Ես իրավացի եմ,— բղավեց Արան։— Ինչո՞ւ է նա նման բան թույլ տալիս։ Իսկ դուք, որ նրա ներկայացուցիչն եք, ի՞նչ խորհուրդ կտաք մեզ։ Աղոթե՞լ։

Հաջի Հարութն իր գավազանը գետնին խփեց։

— Արա։ Այդպես չեն խոսում քահանայի հետ։ Եթե դու առաջարկ չունես, ապա լռիր։

— Իսկ դո՞ւք, Հաջի,— պատասխանեց վարսավիրը թունոտ ձայնով,— դուք ի՞նչ առաջարկ ունեք։

Ծերունին չպատասխանեց։ Արմենը մտածեց, որ նա նույնպես ցնցված էր այդ ամենից։ Նա սեղմեց վարսավիրի թևը նրան հանգստացնելու համար.

— Բղավելը չի օգնի։

— Ես վեց զավակ ունեմ,— շշնջաց Արան ու հեկեկաց։

— Երեխաներ կամ թոռներ բոլորս էլ ունենք,— պատասխանեց

նավապետ Արմենը։

Սարգիս Զորյանը աղմուկով հրելով իր աթոռը՝ վեր կացավ։ Նրա աչքերն անսովոր կերպով փայլում էին։ Հանդիսավոր ձայնով նա հայտարարեց.

— Մենք պետք է դիմադրենք։ Հանուն մեր երեխաների։ Հանուն ծերերի, հանուն կանանց։

Հանկարծակիի եկած քահանան, վարսավիրը, Հաջի Հարութն ու Զավենը նրան նայեցին՝ չհավատալով իրենց ականջներին։ Ուրախանալով, որ վերջապես ինչ-որ մեկը գաղափար է առաջ քաշում, որը կարող էր որոշակի գործողության բերել, Արմենը հարցրեց.

— Դիմադրե՞լ։ Ինչպե՞ս։ Բացատրեք։

— Գաղափարը Շիրակ Թևոնյանինն է։ Լսենք նրան։

Շիրակը սկսեց շրջել սեղանի շուրջը։ Նա չէր պատրաստվում շարադրել ամբողջ Հայաստանի ազատագրման իր ծրագիրը։ Այս պարզունակ մարդիկ ոչինչ չէին հասկանում քաղաքականությունից, նրանք կարող էին հասկանալ միայն այն, ինչ անմիջականորեն իրենց էր վերաբերում։ Նա ոգեշնչվեց.

— Սվասում ամեն ինչ կորած չէ։ Հարկավոր է կազմակերպել հայկական թաղի պաշտպանությունը, բարիկադներ կառուցել, զենք վերցնել։ Ես ձեզ կօգնեմ իմ մարդկանց հետ միասին։ Նրանք արդեն թափանցում են քաղաք։

Արմենը կզակն էր տրորում և հաշվարկում հաջողության հասնելու իրենց հնարավորությունները։

— Զե՞նքը...

Զավենը նրան ընդհատեց.

— Դա խելահեղություն է։

Ուսուցիչը դիմելով հարուստ հողատիրոջը մարտաշունչ վրա տվեց.

— Ի՞նչ ես անելու։ Թողությո՞ւն ես գնելու։ Մահմեդականությո՞ւն ես ընդունելու մաշկդ փրկելու համար։

Զավենի կլոր դեմքը շիկնեց, նա իր կճատը մեկնեց Սարգիս Զորյանի ուղղությամբ և ոռնաց.

— Ես քեզ արգելում եմ։ Զգիտեմ, թե ինչն է ինձ զսպում, որ ես քեզ...

— Զավակներս, գավակներս,- մրմնջաց քահանան։- Հանգստացեք։ Վեճերի ժամանակը չէ։

Ուսուցիչը նստեց, Զավենը խորը շունչ քաշեց հոգեկան հավասարակշռությունը վերականգնելու համար։

— Ես հասկանում եմ Զավենին,- ասաց քահանան։- Նա անհաջող

ձևակերպեց իր միտքը, սակայն նա չի սխալվում։ Դիմադրելն անիմաստ է։

Հաջի Հարութն ու Զավենը պաշտպանեցին քահանայի տեսակետը։ Արմենը կարծես ներկա չլիներ, նա չէր արձագանքում։

— Միգուցե և խելահեղություն է,– ասաց Արմենը հեղինակավոր ձայնով,– սակայն մենք իրավունք չունենք ձեռքի մեկ շարժումով այն մի կողմ դնել։ Հարկավոր է քննարկել առաջարկությունը։

— Վերջապես խելամիտ մի խոսք,– ասաց ուսուցիչը։

Քահանան ընդդիմացավ.

— Հիշեք, որ բռնությունը բռնության է ծնում։ Եթե ապստամբենք, ապա կհաստատենք, որ կայսրության թշնամիներն ենք և կհեշտացնենք նրանց գործը։ Բանակը մեզ կջախջախի։

Շիրակը կանգնեց Հաջի Հարութի աթոռի հետևում, և ձեռքերը դրեց աթոռի թիկնակին։

— Հայր իմ,— ասաց նա,— դուք ինչ էլ անեք, միևնույնն է, մի քանի օրից ձեզ քշելու են այստեղից։ Զորքը գալիս է Սվաս ձեզ դեպի դժոխք ուղեկցելու համար։

— Դժոխք... Միևնույն է,— ասաց քահանան։— Իսկ այստեղ հետո դժոխք չի՞ լինելու։ Երկարատև պաշարում, վիրավորներ, զոհեր, սով, համաճարակ։ Մտածեք կանանց ու երեխաների մասին։

— Դա ավելի լավ է, քան տեղահանությունը,— ասաց ուսուցիչը ողբերգական ձայնով։– Ես կգերադասեմ տեսնել, թե ինչպես են իմ զավակները մեռնում գնդակից աչքիս առաջ, քան իմանալ, որ նրանք քարշ են գալիս ճանապարհներին և մեռնում սովից, ծարավից և ուժասպառությունից, կամ էլ շունչ են փչում ոստիկանի մտրակի հարվածների տակ։

— Դու սխալվում ես,— պատասխանեց քահանան։— Ապստամբության հետևանքով սկսված ճնշումները սարսափելի կլինեն և մեզնից ոչ մեկը կենդանի չի մնա։ Սվասի հայության լիակատար ոչնչացում է դա նշանակում։ Նույնիսկ եթե տեղահանության պայմանները անմարդկային լինեն, ապա, միևնույն է, բոլորը չեն մեռնի։ Դու չէի՞ր գերադասի, որ քո երեխաներից ոմանք ողջ մնային հիշատակդ կենդանի պահելու համար։

Ուսուցիչը մտածում էր։ Քահանայի փաստարկները Արմենին նույնպես ստիպեցին տատանվել։ Տեր Խորենը շարունակեց խուլ ձայնով՝ դիմելով ժողովի բոլոր մասնակիցներին։ Այն խոսքերը, որ նա արտասանում էր, իրեն ցավ էին պատճառում։

— Հիմա ամեն ինչ պարզ է։ Նրանք ուզում են ոչնչացնել մեր ժողովուրդը։ Վերապրելուց բացի մենք այլ խնդիր չունենք։ Յանկացած գնով։ Եթե ուզում ենք, որ վաղը նոր բերք լինի, ապա չպետք է թույլ տանք, որ բոլոր սերմերը ոչնչանան։ Յուրաքանչյուրի պարտքն է ողջ

մնալ։ Եվ եթե դրա համար անհրաժեշտ կլինի ուրացող ձևանալ, ապա Աստված մեզ կհասկանա։

— Տեր Խորեն,- բացականչեց վրդովված Հաջի Հարութը.- դո՞ւք եք խոսում ուրացման մասին։ Հոգևոր կյանքն ավելի կարևոր է, քան մարմնականը։ Ավելի լավ է հետևել Սուրբ Հռիփսիմեի և Սուրբ Գայանեի օրինակին, քան մերժել Ավետարանը։

— Եթե երկինքը լցվի հայ մարտիրոսներով, ապա ո՞վ պետք է աղոթի Աստծուն, Հիսուս Քրիստոսին և Աստվածամորը Անատոլիայում։

— Ես գտնում եմ, որ դուք շատ հեռատես եք, Տեր Խորեն,— ասաց Հաջի Հարութը և Շիրակի կողմը շրջվելով՝ շարունակեց.— Ես գերադասում եմ այս երիտասարդի խոսքերը։

Գոցեստից ոգևորվելով, Շիրակը դարձյալ սկսեց քայլել՝ թևերը թափահարելով։ Նրա դեմքին ժպիտ հայտնվեց, և նա հանգիստ էր ձևանում։

— Իմ բարեկամ Սարգիս Զորյանը պատրաստ է կռվելու, քանի դեռ Սվասում գեթ մեկ ողջ հայ կմնա, իսկ Տեր Խորենն արդեն տեսնում է, թե ինչպես ենք մենք բոլորս դավանափոխ լինում։

Նա ձեռքի շարժումով լռեցրեց երկու հիշատակված տղամարդկանց, որոնք փորձում էին բողոքել, և շարունակեց.

— Ես զարմանում եմ, որ նրանցից ոչ մեկը չի էլ մտածում, որ մենք կարող ենք հաղթել։ Սյլուր հայերը դիմադրել են և հաջողության են հասել։

— Կարող է պատահել...- համաձայնեց Տեր Խորենը մռայլ ձայնով,— սակայն դա հրաշք է։

Նավապետ Արմենը բռունցքով հարվածեց իր ձեռքին.

— Ոչ, հրաշք չէ։ Հիշեք ասացվածքը. նախ՝ ինքդ օգնիր քեզ, եթե ուզում ես, որ Աստված քեզ օգնության գա։ Հիշեք զեյթունցիներին։ Շիրակն իրավացի է, չի կարելի թույլ տալ, որ քեզ մորթեն ոչխարի պես։

Ոգեշնչվելով՝ Շիրակը շարունակեց.

— Մենք կհաղթենք։ Վանում հայերը մեկ ամիս շարունակ դիմադրեցին օսմանյան զորքերին և լեռնցի վարձկաններին, և, ի վերջո, ռուսները նրանց օգնության եկան։ Հիմա նրանք ազատ են, և Վանում տեղահանություններ չկան։

Այդ խոսքերը կարծես չէին համոզել Հաջի Հարութին և նա ժխտական նշաններ էր անում.

— Ռուսներն այստեղից հեռու են։ Քանի՞ կիլոմետրի վրա են, Սարգիս։

— Դե... Ավելի քան վեց հարյուր,- կմկմաց ուսուցիչը՝ սրտնեղելով այդ հարցից։

Զավենն ուսերը թոթվեց.

— Էհ։ Իսկ ըստ տեղեկությունների նրանք նահանջում են։

— Մենք մենակ էլ գործը գլուխ կբերենք,- հաստատեց Շիրակը։- Շրջանում ես շատ «քաջեր» ունեմ։ Մենք բոլորս այստեղ կհավաքվենք, մենք հրացաններ ունենք և արիություն։ Սակայն անհրաժեշտ է, որ ողջ բնակչությունը մեր օրինակին հետևի։ Դուք՝ ավագանին և աչքի ընկնող քաղաքացիներդ պետք է նրանց համոզեք։

— Ի՞նչ պետք է նրանց համոզենք,- համբերությունը կորցրեց քահանան։,— Բանակի համար թիրա՞խ ծառայել։

— Ճիշտ է,— համաձայնեց Զավենը։- Սվասում մեծ զորամաս կա, իսկ թուրք ագգաբնակչությունը կօգնի բանակին։ Եվ վերջապես, զուր ժամանակ ենք վատնում. մենք ընդամենը մի փոքր ծխի խորհուրդ ենք։ Նույնիսկ լրիվ կազմով չեք։ Մենք ոչինչ չենք կարող որոշել։

Արմենը փորձում էր հստակ պատկերացնել, թե ինչ էր պետք անել։ Այնքան բան պետք էր նախապատրաստել՝ սննդամթերք, դեղորայք, ապաստարաններ արկերի դեմ, պետք էր որոշել, որ փողոցները փակել, որտեղ պահակներ դնել։ Ամեն անգամ, երբ նա պատասխան էր գտնում, նոր խոչընդոտներ էին հայտնվում։ Քանի որ թաղամասը շատ բաց էր, այն շատ դժվար էր պաշտպանել։ Եվ նրա մտքում կասկած ծագեց, որը նա փորձում էր վանել։

— Բարդությանն այն է, որ մենք զենք չունենք,- ասաց նա՝ կաարծես պատասխանելով մի հարցի, որը ձևակերպել էր մտքում։- Ես չեմ խոսում գնդացիրների կամ թնդանոթների մասին, նույնիսկ հրացաններ չունենք։

Շիրակը պատրաստի պատասխան ուներ.

— Բանակն այստեղ զինամթերքի շատ մեծ պահեստ է ստեղծել։ Մենք կհարձակվենք զինանոցի վրա։ Նույնիսկ եթե այն լավ է պահպանվում, միևնույն է հարձակման անսպասելիությունը մեր օգտին կլինի։

— Մայոր Վարդանը կարող է մեզ օգնել։ Նա ծանոթ է այդ վայրին։

Այդ անունը հնչելուն պես Շիրակի դեմքին դժգոհություն հայտնվեց, որը չվրիպեց նավապետ Արմենի ուշադրությունից և անհանգստացրեց նրան։ Նա պնդեց.

— Մենք մայոր Վարդանի կարիքն ունենք։ Միայն նա կարող է ասել՝ հաջողության հասնելու հույս ունենք, թե ոչ։

— Մենք ժամանակ չունենք խորհրդակցելու բոլորի հետ, մայոր լինի, թե ուրիշ մեկը։ Անհրաժեշտ է ծրագիր կազմել և գործի անցնել հենց այս գիշեր։

Շիրակի մի քիչ կոպիտ պատասխանը Արմենին կասկած ներշնչեց։ Նա չմասնակցեց այն աղմուկին, որը սկսվեց այդ խոսքերից հետո։ Արան, սթափվելով, բռնեց Շիրակի կողմը։ Զավենը դեռևս տատանվում էր և գգույշ լինելու կոչ էր անում։ Քահանան այդ արկածախնդրությունը

խելահեղ էր համարում։

— Յուրաքանչյուր վայրկյանը հաշվված է,— հաստատեց Սարգիս Զորյանը՝ լռություն պահանջելով։— Ահա թե ինչ կանենք մենք։

Նա գրպանից թուղթ հանեց, բացեց և, հարթեցնելով, փռեց սեղանին։ Զինանոցի շրջակայքի իր գծած քարտեզն էր։ Շիրակ Թևոնյանը նայում էր նրա ուսի վրայից։

— Մոտեցեք,— ասաց ուսուցիչը մնացածներին։

Հաջի Հարութը նշան արեց, որ նստած մնան։ Նա բարձրացրեց ցուցամատը։ Նրա ձեռքը դողում էր, սակայն ձայնը կորցրել էր սովորական դողդոջը։ Նա դիմեց Սարգսին ու Շիրակին։

— Նախ, պատասխանեք մի հարցի։ Եթե դիմանանք երկու-երեք ամիս տևող պաշարմանը, ինչի՞ կհասնենք։

Շիրակն ու Սարգիսը միմյանց նայեցին՝ պատասխան փնտրելով։ Ավագը շարունակեց.

— Երբ սպառվի զինամթերքը, սննդամթերքը, ապա ոչ ոք մեզ օգնության չի գա։ Ռուսական բանակի հարձակումը կասեցվել է, ֆրանսիացիները, անգլիացիները հեռու են։ Մենք մեկուսացված ենք։ Շրջափակված։

Հաջի Հարութի խոսքերը սթափեցնող ազդեցություն ունեցան ժողովի մասնակիցների վրա։ Զսպելով իր անհամբերությունը՝ ուսուցիչը խոսեց այնպես, ինչպես խոսում էր իր աշակերտի հետ, երբ նրանք չէին հասկանում ակնհայտ բաներ.

— Մենք կմտածենք։ Հաջի Հարութ, իսկ դուք ի՞նչ լուծում եք առաջարկում։

— Ոչ մի լուծում,— համաձայնեց ավագը։— Ես չեմ ասում, որ դուք սխալվում եք, սակայն ձեր շտապողականությունն ինձ անհանգստացնում է։

Ավագը բարձրաձայնեց այն, ինչի մասին մտածում էր Արմենը, որն ավելացրեց.

— Տեղահանությունը մի քանի ժամից չի սկսվելու։ Պետք է լրջորեն մտածել։ Հարկավոր է այս ամենի մասին հայտնել Սվասի մեծ խորհրդին։

— Ես հենց դրա մասին էի խոսում,— հաստատեց Զավենը

— Ես համաձայն եմ նավապետ Արմենի և Զավենի հետ,— ասաց Տեր Խորենը։ Մենք պետք է խորհրդակցենք այլ ծխերի քահանաների և խորհուրդների հետ, լսենք նրանց, ովքեր մայոր Վարդանի պես մեզ կարող են լրացուցիչ տեղեկություններ հաղորդել։

— Դարձյա՞լ հապաղենք,— դժգոհեց ուսուցիչը, որը գործի անցնելու կարիք էր զգում։

— Դու ուզում ես, որ մենք յոթ հոգո՞վ վճռենք Սվասի մեր բոլոր համաքաղաքացիների ճակատագիրը,- զարմացավ Արմենը։— Ի՞նչ իրավունքով։

Սարգիս Զորյանը միշտ եղել էր ժողովրդավարության ջատագով, և Արմենի հարցը նրան հանկարծակիի բերեց։ Նա այլայլվեց և, ժխտական շարժում անելով, փլվեց աթոռին։ Շիրակը սեղմեց բռունցքները, նա միայնակ էր մնացել։

— Ուրե՞մն,- հարցրեց նա՝ զննելով իրեն նայող մարդկանց դեմքերը։

Հաջի Հարութը նայեց մնացածներին։ Նա նրանց բավականաչափ լավ էր ճանաչում, որպեսզի հասկանար, որ հասունացել էր համաձայնության գալու պահը։

— Մենք կհավաքենք մեծ խորհուրդը և քաղաքի ազդեցիկ մարդկանց հենց այսօր՝ կեսօրին,— ասաց նա։ Մինչ այդ գնանք աղոթելու, որ Տերը մեզ լուսավորի։

Նա դժվարությամբ ոտքի կանգնեց՝ հենվելով գավազանին և աթոռի մեջքին և դրանով ազդարարեց քննարկման ավարտը։ Շիրակը գլխով արեց։ Նա թշնամանք չէր զգում նրանց հանդեպ, միայն խղճահարություն։ Այս մարդիկ Սվասի բնակչության տիպարն էին և եթե փորձեր կապվել այլ խմբերի հետ, ապա կլսեր նույն կարծիքները, նույն վարքագծին ականատես կլիներ։ Նրանց պետք էր կանգնեցնել կատարված փաստի առջև, որպեսզի նրանք միանային այնպիսի գործողություններին, որոնք դուրս էին առօրեականություններից։ Հարկավոր էր նրանց փրկել իրենց կամքին հակառակ։

— Ես գիտեմ, թե ինձ ինչ է մնում անել,- ասաց նա՝ քայլերը դեպի գերեզմանատուն տանող դուռը ուղղելով։

Սարգիսը փորձեց հետևել նրան, սակայն Շիրակը նրան կասեցրեց։

— Մեր պայմանավորվածությունը չի փոխվում, ես քեզ կսպասեմ պատարագից հետո։

Ուսուցիչը մոտեցավ Տեր Խորենին և օգնեց նրան պատարագի հանդերձանքը հագնել։

— Հույս ունեմ, որ մենք չենք զղջա այս որոշման համար,- մրմնջաց նա։

Ոչ ոք չարձագանքեց։

* * *

Թովմասը, հոգնելով Արմենին սպասելուց, մոտեցել էր ավազի մեջ տնկված մոմերին և հանգցնում էր մարող մոմերը։ Երբ կնքահայրը դուրս եկավ ավանդատնից, նա շտապ վերադարձավ իրենց նստարանի մոտ՝ թաքցնելով մոմով պատված մատերը։ Նա միակ երեխան էր

տղամարդկանց հատկացված մասում՝ միջանցքի աջ կողմում։ Մնացած երեխաները նստած էին կանանց հետ եկեղեցու նավի ձախ կեսում։ Նավապետ Արմենը ծնկի իջավ Թովմասի կողքին և, դեմքը ափերի մեջ առնելով, փորձեց մեկուսանալ, իսկ Թովմասը երազկոտ տեսքով փորձում էր եկեղեցու սալահատակը ծածկող լաքաները նմանեցնել հեքիաթային կենդանիների։

Արմենը տոգորված էր անկարողության զգացումով և չէր կարողանում աղոթել։ Շիրակի նկարագրած ջարդերը վերակենդանացրել էին այն իրադարձությունները, որոնք նա փորձել էր ջնջել իր հիշողությունից. կապը կտրած ամբոխի դաժանությունն ու նենգությունը, հոշոտված մանուկների, գլխատված տղամարդկանց, այլանդակված կանանց դիերը։ Մի թե ոչինչ չէր կարելի անել, որպեսզի դա չկրկնվեր։ Նա իր կյանքն արդեն ապրել էր և պատրաստ էր իրեն զոհաբերել երիտասարդներին փրկելու համար, նրանց, ում Տեր Խորենը անվանեց ապագայի սերմնացան։ Որքան մտածում էր, այնքան Շիրակի և Սարգիս Զորյանի ծրագիրը անիրականալի էր թվում։ Իսկ Սվասի աչքի ընկնող քաղաքացիների ժողովը ոչ մի էական բան տալ չէր կարող։ Բացի դրանից, նրան հուսահատեցնում էր Տեր Խորենի ինքնաբացարկը՝ «ամենքն իր համար», որ նա հայտարարեց քողարկված ձևով։ Դա նրան բնորոշ չէր։ Բոլոր փորձությունների ժամանակ նա հավատ և հոգեկան ուժ էր ցուցաբերել։ Քահանայի բարոյալքությունը պատճառաբանված էր, ուստի իրավիճակը պետք է որ հուսահատական լիներ։ Որպես նախկին ձկնորս՝ Արմենը մտածեց, որ հորիզոնը պատել են փոթորիկ գուշակող ամպերը և որ իրենք չէին խուսափելու տառապանքից։ Նա Թովմասի ձեռքն իր ափի մեջ վերցրեց։

Լի օրվա պատարագի համար սովորականից շատ մարդ էր եկել եկեղեցի։ Կանայք և երեխաներ, սակայն կային նաև տղամարդիկ, որոնք փակել էին իրենց խանութները։ Նրանք աղոթքի հանդարտեցնող ազդեցության կարիքն ունեին և մտածում էին, որ կողք կողքի կանգնելով միմյանց կլիցքավորեին։ Վերջին նստարանին նստած էին Շիրակի հետ եկած տղամարդկանցից ութը, մեկը հսկում էր գերեզմանատունը, իսկ մյուսը բարձրացել էր զանգակատուն։ Նրանք գիշերով Սվաս էին եկել և թաքնվել վստահելի բարեկամների մոտ, ուր թողել էին իրենց հրացաններն ու փամփշտակալները, և հիմա զինված էին միայն հագուստի տակ թաքցրած ատրճանակներով։ Մնացածները պետք է նրանց միանային մութն ընկնելուն պես։ Նրանցից ոմանք աղոթում էին, ոմանք էլ ննջում։

Եկեղեցու շուրջը պտտվելուց հետո Շիրակը ներս մտավ։ Նա պայմանավորվել էր, որ դուրս էր գալու Սուրբ Մինաս եկեղեցուց ուսուցչի հետ միասին՝ խառնվելով հավատացյալներին։ Նա կանգնած էր եկեղեցու հետնամասում գտնվող պատշգամբի մութ անկյունում, որը կիրակի օրերը զբաղեցնում էր երգչախումբը, և զննում էր ներկաներին։ Գլխաբաց տղամարդիկ, գլխաշորերով կանայք, երեխաների անդադար շարժվող գլուխներ։ Կորացած ուսեր, հուսալքված ուրվագծեր։ Նա հանկարծ գիտակցեց, թե որքան էր սիրում այդ մարդկանց՝ իր

ժողովրդին։ Մինչ այդ ինքը կռվել էր գաղափարների համար, անկերպարան նպատակի համար։ Մարդիկ նրա համար ավելի քիչ նշանակություն ունեին, քան նպատակը։ Հանկարծ նա հիշեց, արհեստանոցում աշխատող հորը, որն օրեցօր, տարեցտարի կրկնում էր նույն շարժումները։

Այդ պահին հայրը Շիրակին ավելի մոտ թվաց, քան այն ժամանակ, երբ իրենք աշխատում էին նույն սենյակում։ Նա ցանկություն զգաց նրան գոկել, իր սերն արտահայտել, անել այն, ինչ նա երբեք չէր արել։ Պատարագից հետո ինքը կխոսի այս ամբոխի հետ, երևակայելով, որ հայրը նրանց մեջ է։ Նա դեռևս չգիտեր, թե ինչ էր մնացել նրանց ասելու։ Նա անհավատ էր, նրա համար կրոնը զուտ մշակութային երևույթ էր, որը համախմբում էր հայ ժողովրդին և ծառայում էր նրա ազգային նպատակներին։ Նա հույս էր փայփայում, որ այս ծիսակատարության ընթացքում հրաշք տեղի կունենքը՝ ներշնչում, կամ հայտնություն։ Ավանդատանը տեղի ունեցած վիճաբանությունից հետո Շիրակը հարցականի տակ էր առել դիմադրության իր ծրագիրը, որին այս քաղաքում ոչ ոք չէր անդամագրվի։ Ավանդատնից դուրս գալիս նա ստել էր. նա այդքան էլ լավ չէր պատկերացնում, թե ինչ պետք է արվեր։ Նա մտքում մի աղոթք մրմնջաց, որը նրա հիշողության մեջ հայտնվեց մանկության կցկտուր հիշողությունների հետ միասին։

Տեր Խորենը, վեղարը գլխին, մտավ եկեղեցի։ Նրան էին հետևում Սարգիս Զորյանը և մի պատանի։ Փոքրավորն ու սարկավագը կրում էին կարմիր ժամաշապիկներ, որոնք քահանայի շուրջառի պես զարդարված էին ոսկեթել նախշերով և խաչերով։ Ուսուցչի ուսին դրված փորուրարը վկայում էր, որ նա սարկավագ էր։ Միգուցե Սարգսի վրա Աստծու երանություն էր իջել, քանի որ նա հանգիստ ու անվրդով էր։ Տեր Խորենը նույնպես հանգիստ էր, և նրա դեմքն այլևս հուսահատություն չէր արտահայտում։ Երկու տղամարդն էլ վստահ տեսք ունեին, և պատարագի ծեսի անդրդվելի ընթացքը հավատացյալներին շարունակականության մնայնության զգացում էին ներշնչում։ Քահանան ճոճեց բուրվառը և ծնկի իջնելով բեմի առջև, ուր կանգնած էր Սուրբ սեղանը, միալար ձայնով սկսեց շարական երգել, իսկ հավատացյալները ձայնակցեցին նրան։ Տեր Խորենի սկզբում դողդոջուն ձայնը կամաց-կամաց ամրացավ։ Նրան նորից համակել էր հավատքն առ Արարիչ, և նա պատրաստ էր անմնացորդ ենթարկվելու նրա կամքին։ Զնայած դրան, նա չէր կարողանում ազատվել այն մտքից, որ հաղորդության խորհուրդը, որ ինքը պետք է մատուցեր, հիշեցնում էր Խաչելությանը նախորդող Խորհրդավոր ընթրիքը։

Տեր Խորենն աստիճաններով բարձրացավ մինչև Սուրբ սեղանը, ուր այրվում էին տասներկու առաքյալներին խորհրդանշող նոմեր։ Փոքրավորը քաշեց ոսկեթել, մեծ խաչերով զարդարված բեմի թավշյա կարմիր վարագույրը, որպեսզի հավատացյալները չտեսնեին, թե ինչպես էր քահանան նախապատրաստում Սուրբ սեղանը։ Երեք երգեցող առանց հրավերի սպասելու անցան բազրիքից այն կողմ և մի քիչ խորքում՝ դասում կանգնեցին։ Նրանք մի շարական երգեցին։ Այս մարդիկ երգում

էին միայն կիրակնօրյա երգչախմբում, քանի որ շաբաթվա ընթացքում աշխատում էին: Ինչ-որ մեկը նստեց ֆիսհարմոնիայի դիմաց, և այսպիսով ծիսակատարությունը նմանվեց կիրակնօրյա պատարագի:

Բազրիքի մոտ դրված գրքակալի մոտ կանգնելով՝ Սարգիս Զորյանը սկսեց օրվա ավետարանական ընթերցումը: Պատահականության բերումով, որը ոմանք ընկալեցին որպես չարագուշակ նախանշան, Սուրբ Մատթեոսի ավետարանի հատվածը պատմում էր Հովհաննես Մկրտչի սպանության մասին: Իսկ Սուրբ սեղանի աջ կողմում փակցված սրբապատկերը ներկայացնում էր Նախավկային Քրիստոսին մկրտելիս: Այդ ընթերցանության ընթացքում Շիրակի գլխում գաղափար ծագեց: Ընտրովի սպանություն: Ինքը կգլխատի օձին, այսինքն տվյալ դեպքում կվերացնի Սվասի օսմանյան վարչակազմը: Կազմալուծելով թշնամուն, նա կհետաձգեր տեղահանությունը և քաղաքի հայերին կստիպեր դիմադրելու: Սարկավագը կարդում էր «Եվ նրա գլուխը բերվեց սկուտեղով ու տրվեց աղջկան» բառերը, երբ նավի հետևի մասում մեկը ճչաց.

- Ոստիկանները շրջապատում են եկեղեցին:

* * *

Մարոն անգործության էր մատնված: Այն երեխաները, որոնց նա անվճար ֆրանսերեն էր սովորեցնում և դաշնամուրի դասեր էր տալիս, նախորդ օրը չէին եկել դասի, քանի որ ծնողները չէին համարձակվել նրանց մենակ դուրս թողնել տնից: Այսօր նույնն էր լինելու: Նա գոհ էր, քանի որ ի վիճակի չէր դաս անցկացնելու: Բարեգործական ձեռնարկները, որոնց մեջ նա գործուն մասնակցություն էր ցուցաբերում, ընդհատվել էին, և կամավորները նախ և առաջ իրենց մտերիմների մասին էին հոգում: Մարոն բազմաթիվ աղքատ ընտանիքներ էր ճանաչում, որոնք, անկասկած, մթերքի և դրամի կարիք կունենային կառավարության կողմից իրենց պարտադրված երկար ճանապարհորդության համար, սակայն չէր կարողանում իրեն ստիպել նրանց այցելելու: Դյուրի՞ն դարձնել նրանց մեկնումը, մինչդեռ ինքը չէր վտարվելու Սվասից: Իհարկե, եթե հրամանը զինվորականների ընտանիքների մասին չէր փոխվել: Ինչպիսի տագնապով պետք է, որ յուրաքանչյուր հայկական ընտանիք նախապատրաստվեր տեղահանությանը... Իսկ այս տանը պատրաստվում էին ծննդյան տարեդարձի տոնակատարությանը: Եթե Վարդանի վճիռը չլիներ, ինքը չէր նշի երեխայի ծնունդը:

Զեյնաբը ու Ջամիլան երգելով փայլեցնում էին ճաշասենյակի հատակը: Նրանք լսել էին, թե ինչպես է սուրհանդակը հայտարարում հայերի տեղահանության մասին, իսկ շուկայում թուրք առևտրականները քննարկում էին այդ հարցը իրենց այցելուների հետ: Աղջիկները նույնպես քննարկել էին այդ հարցը և փորձել էին բացատրության գտնել, թե ինչու էին մարդիկ վատ վերաբերվում այն

մարդկանց, որոնց իրենք հյուրասեր և խաղաղ էին համարում։ Ոչինչ չէր կարելի անել, և կառավարության այդ որոշումը նրանց անհասկանալի էր թվում։ Նրանց համար կարևորն այն էր, որ Պալյանների ընտանիքը մնում էր Սվասում մայորի դիրքի շնորհիվ։ Մնացածը նրանց չէր վերաբերում։

Մարոն մորը խոհանոցում գտավ։ Խոհանոցի սեղանի մոտ նստած նա կտրատում էր գառան միսը։ Նրա կողքին դրված էր սուրճի նստվածքով գավաթը։ Ազնիվ խանումը մեծ քանակությամբ սև սուրճ էր խմում, և դա նրան բոլորովին չէր անհանգստացնում։ Քթախոտը և սուրճը միակ շռայլությունն էին, որ նա իրեն թույլ էր տալիս։ Մնացած հարցերում շատ զուսպ լինելով՝ նա, այնուամենայնիվ, խրախուսում էր, որ իր ընտանիքի անդամները վայելեին այն բոլոր բարիքները, որոնք, իր խոսքերով, Աստված իրենց էր պարգևում։ Նա ճշգրտորեն պահում էր Մեծ պահքի քառասուն օրերը և դրանից դուրս էլ միս շատ քիչ էր ուտում՝ բավարարվելով հացով, պանրով, բանջարեղենով և մածնով։ Սակայն այդ ժուժկալությունը նրան չէր խանգարում համեղ ուտեստներ պատրաստել իր ընտանիքի համար։

Մարոն իր օգնությունն առաջարկեց։

— Ոչ, պետք չէ,— պատասխանեց մայրը ցրված տեսքով։— Ես ամեն ինչ կանեմ փոքրիկների օգնությամբ։ Դու գործ կունենաս։

Չնայած մոր ժպիտին և սիրալիր տոնին, Մարոն հասկացավ, որ իրեն վտարում են սրբավայրից։ Անատոլիայի բոլոր մայրերը ամուսնուն կորցնելուց հետո տեղափոխվում էին իրենց զավակներից մեկի մոտ և իրենց պարտքն էին համարում վարել նրանց տնտեսությունը։ Ազնիվ խանումը բացառություն չէր կազմում, և դա նրա և Մարոյի շարունակական ընդհարման պատճառ էր։ Եվրոպական սկզբունքներով դաստիարակված լինելով՝ Մարոն ծիծաղելի էր համարում այդ ավանդույթը։ Միգուցե այն իմաստ ուներ հարուստ մահմեդականների ընտանիքներում, ուր պետք է մեկը լիներ, որը կկարգավորեր բազմաթիվ կանանց մրցակցությունը, կդաստիարակեր արյունակից քույրերի ու եղբայրների բազմությունը և կկազմակերպեր ծառայողների ամբոխի աշխատանքը։ Սակայն այս տանը... Վարդանն ու Մարոն չէին ուզում իրենց հարկի տակ բնակվող աղախիններ ունենալ, որոնց կարիքը սակայն զգացվում էր այդ մեծ տանը։ Ոչ այն պատճառով, որ փողն էին խնայում, այլ իրենց մտերմությունից չզրկվելու համար։ Շաբաթը մի քանի անգամ գալիս էին տնային աշխատողներ, իսկ ուրբաթ օրերը՝ լվացարարուհին իր դուստրերի հետ, և սպիտակեղեն էր լվանում։

Մարոն մոտեցավ քրտնած կողերով կավե ամանին և բաժակը դրեց ծորակի տակ։ Ջուրը դեռ սառն էր և նա երկու բաժակ խմեց մոր մոտ վերադառնալուց առաջ։ Նա ուզում էր նրան հիշեցնել, որ տանտիկինն ինքն էր.

— Զմոռանաք, որ հրավիրված են նավապետ Արմենն ու նրա կինը։

— Ամեն ինչ հաշվի է առնված։

— Ուզում եմ, որ սեղանը տոնական տեսք ունենա։ Ասեղնագործած վուշե սփռոց... արծաթե սպասք... կապույտ ճենապակուց սպասք։ Եվ մենք կբացենք Ֆրանսիայից բերված բուրգունդյան գինին։

Ագնիվ խանումը ձայնը բարձրացրեց.

— Քեզ չի՞ թվում, որ դու չափազանցնում ես։ Այս հանգամանքներում...

— Հակառակը, փորձանքի առջև գլուխը պետք է բարձր պահել։

— Ի՞նչ ես ուզում դրանով ապացուցել։ Հույս ունես դժբախտության առաջն առնե՞լ,– հեգնանքով հարցրեց Ագնիվ խանումը ուսերը թոթվելով։

Մարոն աթոռը քաշեց ու նստեց սեղանի մոտ։ Այլ հանգամանքներում նա մորը կպատասխաներ և զգալ կտար նրան հարգանքով, սակայն վճռականորեն, որ ինքն այլևս փոքր աղջիկ չէր, որին կարելի էր վարքագիծ թելադրել։ Իսկ Ագնիվ խանումը փաստարկներ կներկայացներ իր դիրքորոշումը պաշտպանելով, սակայն ի վերջո կզիջեր։ Դա գրեթե արարողություն էր դարձել նրանց հարաբերություններում, որը սկիզբ էր առել դստեր պատանելությունից ի վեր։ Մարոն հառաչեց և հոգնած ձայնով ասաց.

— Ի՞նչ է, կարծում եք, ես տոն կազմակերպելու տրամադրությո՞ւն ունեմ։ Սակայն Թովմասի վեց տարին է լրանում, և ես կուզենայի, որ նա հաճելի հիշողություններ պահպաներ այս տարեդարձի մասին։ Սննք արդեն իսկ հրաժարվել ենք մանկական հավաքից։

Ագնիվ խանումը գլխով համաձայնության նշան արեց։ Երբ խոսք էր բացվում միակ թոռան մասին, ամեն ինչ փոխվում էր։ Նա, որ Մարոյի հետ շատ խիստ էր եղել, կատարում էր Թովմասի բոլոր քմահաճույքները։ Երազում էր, որ նա արտակարգ ճակատագիր ունենար։ Ճակատագիրը... Ագնիվ խանումը մի խոսք հիշեց՝ շաբաթն ուրբաթից շուտ եկավ։ Նա հոնքերը կիտեց։

— Դու նրան բացատրե՞լ ես, թե ինչ է կատարվում,— հարցրեց նա։

— Ոչ։

— Պետք է ասել։ Այո երեխան չափից ավելի գգայուն է, նա անկասկած զգացել է մեր տագնապը։ Ավելի լավ կլինի, եթե նա ճշմարտությունն իմանա։

— Վաղը։ Ծննդից հետո։

Մսի հոտը զգալով՝ Սասունը մտավ խոհանոց ու նստեց սեղանի տակ, Մարոյի ոտքերի մոտ։ Մարոն մեքենայաբար շոյեց շանը ու աչքերը հեռուն հառեց։ Նա լարված տեսք ուներ։

— Ուզո՞ւմ ես, սուրճ պատրաստիր երկուսիս համար,– ասաց Ագնիվ խանումը մեղմ ձայնով։

Մարոն սուրճն ու ջուրը խառնեց և սրճեփը դրեց սպիրտայրոցի վրա։

Երբ սուրճը եփվեց, լցրեց գավաթների մեջ ու նստեց: Նա ցրված հայացքով նայեց խոհանոցի պատերին, ուր կախ էին տված պղնձյա կաթսաներն ու սև պողպատից պատրաստված թավաները, իսկ հետո հայացքը կանգ առավ քարածխով աշխատող շքեղ վառարանի վրա, որը զբաղեցնում էր խոհանոցի մի պատը և որմնային ծխնելույզ ուներ: Նրա դեմքը տխուր էր, և նա մրմնջաց.

— Մենք չպետք է այստեղ գայինք բնակվելու, այս կորած-մոլորած քաղաքը:

— Կինը պարտավոր է հետևել իր ամուսնուն: Հիշիր այս բանը և լավ օրի, և վատ:

— Մենք կարող էինք Կոստանդնուպոլիս վերադառնալ երկու տարի առաջ, երբ Վարդանին առաջարկեցին քաղաքագիտություն դասավանդել Ռոբերտ Քոլեջում:

— Նա անկասկած պատճառ ուներ հրաժարվելու այդ առաջարկից:

Մարոյի ձեռքը թեթևակիորեն դողաց, երբ նա բաժակը մոտեցրեց բերանին: Ազնիվ խանումն ավելացրեց.

— Իսկ քեզ ո՞վ ասաց, որ մենք անվտանգության մեջ կլինեինք մայրաքաղաքում: Մենք չգիտենք, թե ի՞նչ է այնտեղ կատարվում: Վարդանին կարող էին ձերբակալել մնացածների հետ ապրիլ ամսին:

Մարոն սեղմեց մոր թևը:

— Մայրիկ, ես վախենում եմ:

Ծեր կնոջ լարված դեմքը փափկեց: Նա վայր դրեց դանակն ու ձեռքերը գոգնոցով մաքրեց: Նրա ձայնը դողում էր.

— Ես նույնպես, Մարո ջան: Օ՛, ոչ ինձ համար: Ես իմ կյանքն ապրել եմ և պատրաստ եմ միանալ քո հորը Աստծու ծոցում: Ես վախենում եմ ձեզ՝ երեքիդ համար:

Մարոն, լաց լինելով, մոտեցավ մորը, որը գրկեց նրան: Ազնիվ խանումը թույլ տվեց, որ Մարոն մի քիչ լացեր, իսկ հետո շոյեց այդ կնոջ մազերը, որին նա միշտ պետք է իր փորրիկ աղջիկը համարեր: Եվ ինչպես մանուկ հասակում, ստանալով մոր մխիթարանքը, Մարոն կամաց-կամաց հանգստացավ: Ազնիվ խանումը սրբեց նրա այտերը համբուրելուց առաջ: Ծեր կինը վերագտել էր իր տոկունությանը:

— Ասում են, որ մենք մարդկության թույլ կեսն ենք: Դա ճիշտ չէ: Կինն ունի արիության և ուժի անսահման պաշար: Եվ հաճախ, երբ տղամարդու ուժը սպառվում է, նա լիցք է ստանում մեզնից:

Մարոն գլխով արեց: Մոր խոսքերը և դրանք ասելու ձևը հանգստացրեցին նրան:

— Վարդանը պետք է կարողանա հույս դնել քեզ վրա: Իսկ դու էլ պետք է վստահես նրան: Նա խորաթավսանց է և ուժեղ: Ի դեպ, նա մտածում է

Սվասից հեռանալու մասին։

— Նա քեզ ասե՞լ է,- հարցրեց Մարոն, զարմանալով, որ ամուսինն առաջինը իրեն չէր տեղեկացրել իր ծրագրին։

— Ոչ։ Նա պարզապես ինձ հարցրեց, թե մենք մթերք ունե՞նք մի քանի օրվա ճանապարհորդության համար։ Իսկ ես դրանից հետություններ եմ անում։

— Հույս անեմ, որ դուք ճիշտ եք կռահել։ Եվ որքան շուտ, այնքան լավ։

— Ենթադրում եմ, որ նա նախ պետք է տեղաշարժվելու թողտվություն ստանա, իսկ դրա համար երևի մի քանի օր կպահանջվի... և կաշառքներ։ Գիտես, չէ, այդ պաշտոնյաներին։

— Դուք սխալվում եք, մայրիկ։ Վարդանը նշանակված է Սվաս և անհրաժեշտ կլինի զլխավոր շտաբի թույլտվությունը։ Չեմ կարծում, որ նա մտածում է բոլորի աչքի առաջ գնալու մասին։

— Ուզում ես ասել...

— Այո, փախչել։ Եվ ես պատրաստ եմ։

Ազնիվ խանումը ցնցված էր։ Նա դիտարկում էր նման վճռի հետևանքներն ու բարդությունները։

— Թաքնվե՞լ հանցագործների պես։ Մեզ կփնտրեն։ Դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում տունը լքել։ Դա նշանակում է այն կորցնել։

— Եթե մենք այստեղից գնանք, ապա ես երբեք այլևս այստեղ չեմ վերադառնա,- պնդեց Մարոն վճռական տոնով։

— Այս տունը մենք գնել ենք քո հոր թողած փողի մեծ մասով։

— Ավելի վատ։ Մենք մի բան կանենք։ Նախ պետք է կյանքերս փրկենք։

Աչքերը հառած իր սուրճի սև նստվածքին՝ Ազնիվ խանումը մտածում էր։ Այս տունը գնելու համար ներդրած կարողության կորուստը դեռևս աշխարհի վերջը չէր նշանակում։ Վարդանն ու նրա եղբայրը հաշիվ ունեին շվեյցարական բանկում և գործ Նյու Յորքում։ Սակայն նախ պետք էր այնտեղ հասնել։ Նման խելահեղ արարք պատերազմի ժամանակ... Չէ՞ր շտապում նա արդյոք։

Զանգերը ղողանջեցին։ Մարոն իրեն հաշիվ տվեց, որ Թովմասն ու կնքահայրը ուշանում էին։

— Սուրբ Մինասի զանգերն են,— արձագանքեց Ազնիվ խանումը ականջ դնելով։

Ուժգին զանգահարությունը սովորականից երկար տևեց և երկու կանանց համար մռայլ տոնայնություն ստացավ։

— Ինչ-որ բան է կատարվում,- բացականչեց Մարոն ոտքի կանգնելով։

Նա վազեց դեպի դուռը։

— Մարո ինձ սպասիր,- կանչեց Ազնիվ խանումը։

Սակայն Մարոն արդեն դուրս էր եկել դարպասից և վազում էր ամբողջ թափով։

* * *

Ուսուցիչ Սարգիս Զորյանը մի քանի վայրկյան ապշահար մնալուց հետո փակեց Սուրբ Գիրքը։ Ավետարանը մինչև վերջ չէր ընթերցվելու։ Ոստիկանների հայտնվելու մասին զգաշացնելուց հետո պահակ կանգնած տղամարդն այժմ զանգերն էր հնչեցնում թաղի բնակիչներին նախազգուշացնելու համար։ Շիրակն ու նրա մարդիկ հայտնվեցին նստարանների արանքում ատրճանակները ձեռքներին։ Նրանցից մեկին ճանաչել էին և հետևել էին, կամ էլ իրենց համաքաղաքացիներից մեկը մատնել էր՝ հուսալով իր ընտանիքի հետ միասին արժանանալ պաշտոնյաների գթասրտությանը։

— Շիրակ,- կանչեց քահանան։

Ապստամբների առաջնորդը, որ հրամաններ էր տալիս իր մարդկանց, շրջվեց։ Թևերը տարածելով քահանան ցույց տվեց սարսափած հավատացյալներին։ Շիրակը հասկացավ, որ ինքը իրավունք չուներ այդ անմեղ մարդկանց կյանքը վտանգի ենթարկել։

— Ստորգետնյա ուղի կա՞ թախուստի համար կամ խուց ուր կարելի է թաքնվել,- հարցրեց նա։

Բեմի աստիճաններով իջնելով՝ քահանան նշան արեց, որ ոչ։

— Ես չեմ հանջնվի,— հայտարարեց Շիրակը՝ զենքը թափահարելով։

— Ես դրա մասին չէի էլ մտածում,- ասաց քահանան՝ արագ քայլերով անցնելով միջանցքով։

Կանայք հեկեկում էին քահանային դարձնելով իրենց աղերսող դեմքերը։ Նա հանգստացրեց իր հոտը, և նրա վճռական տեսքը նրանց մի քիչ հանդարտեցրեց։

— Ես կբանակցեմ նրանց հետ,- ասաց նա՝ դեպի դուռը գնալով։- Ոչ մի չմտածված արարք իմ բացակայության ընթացքում։

Նա տպավորիչ տեսք ուներ իր ոսկեգօծ փայլ արձակող հանդերձանքով և կարող էր հարգանք ներշնչել ոստիկաններին։ Ապստամբներից երկուսը կիսաբաց արեցին դռան փեղկը, և քահանան դուրս եկավ։ Մնացած ապստամբները դիրքավորվեցին բարձր լուսամուտների մոտ, զանգակատանը և ավանդատանը։

Արմենը հանեց ատրճանակը, որը թաքցրել էր գոտու տակ։ Նա ոտքը դուրս դրեց դեպի միջանցքը, սակայն Թովմասը, նրա փեշը բռնելով,

չթողեց, որ նա գնար։

— Կնքահա՛յր, կնքահա՛յր։ Ես վախենում եմ, մնացեք ինձ հետ։

Երեխան գենքից չէր վախեցել։ Նա սովոր էր զենքի։ Կիրակի օրերը Վարդանը նրան հաճախ տանում էր սարերը զենքին վարժելու և կրակել սովորեցնելու համար, քանի որ ինքն էլ կրակել էր սովորել գրել սովորելուց առաջ։ Թովմասն արդեն չէր վրիպում թիրախից, երբ կրակում էր թե՛ Մարոյի թեթև հրացանից, թե՛ ծանր ատրճանակից։ Թովմասը լավ չէր հասկանում, թե ինչ էր կատարվում եկեղեցում, սակայն բոլորը դողում էին և նրանց սարսափը վարակիչ էր։ Նույնիսկ իր կնքահոր դեմքը լարված էր։

— Ինչո՞ւ են ոստիկաններն այստեղ եկել։

Արմենը անթարթ հետևում էր եկեղեցու խորքում գտնվող դռանը և չպատասխանեց։

— Նրանք հարձակվելո՞ւ են մեզ վրա։

Արմենը ցենքը զգուշորեն թաքցրեց բաճկոնի տակ, նստեց և կռացավ սանիկի վրա։

— Ոչ,— պատասխանեց նա շշուկով։— Միգուցե և հարձակվեն, ես չգիտեմ։ Դու կարող ես չվախենալ, ես այստեղ եմ։ Ինչ էլ պատահի, արա այն, ինչ քեզ կասեմ։ Եթե ասեմ «թաքնվիր», կպառկես գետնին։ Եթե ասեմ՝ «վազիր», կփախչես առանց իմ մասին մտածելու։ Հասկացա՞ր։

— Այո, կնքահայր։

— Եվ եթե հանկարծ մենք իրար կորցնենք, ուղիղ տուն վազիր և մի փորձիր ինձ գտնել։

Արմենի վստահ և հանգիստ ձայնը միայն մասամբ հանդարտեցրեց Թովմասին, և նա անհանգստությամբ հետևում էր Շիրակի մարդկանց անցուդարձին։

— Ովքե՞ր են սրանք։

— Բարեկամներ։ Հայ հերոսներ։

Եկեղեցու նավում տագնապն ահագնանում էր։ Լացի միալար ֆոնի վրա երբեմն բարձր ձայներ էին լսվում։ Ոմանք խոսում էին դուրս գալու մասին, քանի որ ոչ մի վատ բան չէին արել, ուստի չպետք է վախենային ոստիկաններից։ Մի կին բղավեց.

— Թող ապստամբները հանձնվեն։ Դա մեզ չի վերաբերում։

Այդ խոսքերը փոթորիկ բարձրացրեցին։ Նստարաններին նստած մարդիկ վիճում էին, և Սարգիս Զորյանը վախեցավ, որ կսկսվի ամբոխի անկառավարելի շարժում։ Հարկավոր էր նրանց զբաղեցնել մինչ Տեր Խորենի վերադարձը։ Հանկարծ նա հիշեց, որ ինքը սարկավագ էր։

— Մենք հիմա կհաղորդվենք,– բղավեց նա աղմուկի մեջ լսելի լինելու

համար։

Նա ստիպված եղավ կրկնել այդ խոսքերը ևս մեկ անգամ, և խուլ աղմուկը մարեց։ Մարդիկ ծնկի էին գալիս համայնական հաղորդության համար։ Սարկավագի յուրաքանչյուր նախադասությունից հետո, ուր նա թվարկում էր բոլոր այն մեղքերը, որ կարող էր գործել քրիստոնյան, նրանք կրկնում էին «Տեր ողորմեա»։ Երբ Տեր Խորենը վերադարձավ, բոլորը հետ նայեցին։

— Ծնկի իջած մնացեք,– հրամայեց նա։– Ես ձեզ մեղքերի թողություն կտամ։

Այդուհանդերձ, նրանք ոտքի կանգնեցին, անհամբեր և տագնապով լի և շատերը մոռացան խաչակնքվել քահանայի օրհնությունից հետո։ Տեր Խորենը դիմեց Շիրակին.

— Սպան բավականաչափ գթասիրտ գտնվեց, որ մեզ բոլորիս պատանդ չպահեց։ Սակայն նա վճռական է քեզ գերեվարելու հարցում։ Դու, քո մարդկանց հետ միասին, պետք է հանձնվես։ Դուք աքցանի մեջ եք։

— Այդ մասին խոսք անգամ լինել չի կարող։

— Իմ խեղճ զավակ...

— Դուք նույնքան խղճալի վիճակում եք, որքան և մենք,— մրմնջաց Շիրակը։

Տեր Խորենը ասաց իր հոտին.

— Ես համոզեցի սպային, որպեսզի նա մեզ թույլ տա հեռանա։ Քայլեք շարքով իմ հետևից՝ ձեռքերը վեր բարձրացրած։ Ձեզ հանգիստ պահեք և եկեղեցուց դուրս գալուց հետո չվազեք, ենթարկվեք ոստիկաններին։

Տեր Խորենը հոտին իրեն հետևելու նշան արեց և առաջինը դուրս եկավ։ Նստարանները անմիջապես դատարկվեցին, միջանցրում հրմշտոց սկսվեց։ Դռան առջև, որի միայն մեկ փեղկն էր բաց, հսկայական խցանում գոյացավ։ Շիրակը նրանց ընթացքը դանդաղեցրեց, ստիպեց շարվել և դուրս էր թողնում մարդկանց փոքր խմբերով։ Լացող կանայք շնորհակալություն էին հայտնում, իսկ այն կանայք, որոնք կարող էին նրա մայրը լինել, ջերմությամբ էին նայում երիտասարդին։ Մի ծեր կին մատով խաչի նշան արեց նրա ճակատին։ Որոշ տղամարդիկ դեմքերը թեքում էին նրա մոտով անցնելիս, իսկ ոմանք էլ ողջունում էին և սրտապնդող խոսքեր ասում։

Սարգիս Զորյանը դեռևս սարկավագի հանդերձանաով շարքի վերջում էր։ Նավապետ Արմենը նրա դիմաց էր Թովմասի հետ միասին, որը քահանայի պատվերը կատարելով՝ արդեն բարձրացրել էր ճեռքերը։

— Հիմա չէ, Թովմաս, այն ժամանակ, երբ մենք դռնից դուրս կգանք։

Արմենը իր ատրճանակի պահունակից վեց փամփուշտ տվեց Շիրակին՝ նրա ձեռքը սեղմելով։ Սարգիսը գրկախառնվեց ապստամբ

առաջնորդի հետ և ասաց.

— Ես այս գիշեր կգնամ և քո մարդկանց կտեսնեմ հանդիպման վայրում: Եթե... եթե դիմանաք մինչև գիշեր, ապա մենք ոստիկաններին թիկունքից կխփենք: Եվ...

Նա այլ ելքը չհիշատակեց: Շիրակն ուսերը թոթվեց.

– Մի խոսքով, արեք ձեր ուժերի ներած չափով, փորձեք փրկել ձեր մաշկը,— ասաց նա՝ իր ուժեղ ձեռքով Զավենին հրելով դեպի դուռը:

Եկեղեցու կիսախավարից հետո արեը կուրացրեց Արմենին, և նա ձեռքով քողարկեց աչքերը:

— Ձեռքերը վեր,— ոռնաց մի ձայն թուրքերենով:– Մոտեցե՛ք: Արա՛գ:

Եկեղեցու դռան փեղկը փակվեց նրանց հետևից, և կողպեքը ճռնչաց: Թովմասն այնքան արագ էր քայլում, կնքահայրը ստիպված եղավ արագացնել քայլերը հետ չմնալու համար: Եկեղեցու պարսպի հետևում տասնյակ ոստիկաններ էին թաքնվելն իսկ մնացածները խմբվել էին ցանկապատի երկու կողմերում, ուր մի սպա զննում էր հավատացյալների դեմքերը, իսկ հետո թույլ էր տալիս, որ նրանք անցնեին, ասելով.

— Հեռացե՛ք: Վերադարձեք ձեր տները: Ավելի արա՛գ: Անցե՛ք: Անցե՛ք:

Բացառությամբ ոտքերը քարշ տվող ծերերի, բոլորը վազելով էին հեռանում ծիծաղող զինվորների ծաղր ու ծանակի ներքո: Հրապարակի շուրջը և դրան հարող փողոցներում հավաքվել էին հետաքրքրասերները: Դրանցից շատերը բարեկամներ և ազգականներ ունեին հավատացյալների մեջ և նրանց դիմավորում էին թեթևացած բացականչություններով: Երբ Արմենը կանգնեց սպայի դիմաց, նկատեց, որ պարսպի հետևում զինվորները շրջապատել էին մի տասնհինգ մարդու: Քահանայից բացի, մնացածները զենք կրելու տարիքի տղամարդիկ էին: Միգուցե ոստիկանները վախենում էին, որ դրանց մեջ կարող են «քաջերից» լինել: Արմենն ուզում էր վկայել նրանց անմեղության օգտին, սակայն քահանան նշան արեց հեռանալու: Մտածելով իր սանիկի մասին, որը քաշում էր իր ձեռքից, նավապետը ծանր սրտով հեռացավ:

— Զենք վազում,– հրամայեց նա Թովմասին:– Հպարտ քայլով գնա:

Արմենը չկարողացավ իրեն զսպել և շրջվեց ոստիկանների կողմը, ուսուցիչը համալրում էր ձերբակալվածների շարքերը:

— Տեղեկացրեք իմ կնոջը,– բղավեց Արմենին Սարգիսը, որին կարգի հրավիրեց ոստիկանի ապտակը:

Հրապարակն անցնելուն պես, քանի դեռ տան անկյունը չէր ծածկել եկեղեցին, Արմենը կանգ առավ: Լեյտենանտը, ձեռքերը շեփորի պես բերանին դնելով, ապստամբներին հրամայում էր հանձնվել: Առանց հրամանի սպասելու զինվորները պարպեցին հրացանները եկեղեցու

ուղղությամբ։ Վարդյակի ապակին կոտրվեց։ Ի պատասխան զանգակատնից համազարկ լսվեց։

— Կրա՛կ,- բղավեց սպան՝ թաքնվելով պատի հետևում։

Արմենը Թովմասին հրեց դեպի հարևան փողոցը, իսկ նրանց թիկունքում ճարճատում էր կատաղի փոխհրաձգությանը։ Մարդիկ, որոնք դուրս էին եկել եկեղեցու զանգերի ղողանջը լսելով, արագորեն հետ էին դառնում դեպի իրենց տները։

— Պատերա՞զմ է,— հարցրեց Թովմասը, երբ նրանք շտապ հեռանում էին իրադարձության վայրից։

Փողոցները դատարկ էին։ Միայն զինվորների մի դասակ բարձրաձայում էր դեպի Սուրբ Մինաս եկեղեցին։ Հեռվում կանացի մի ուրվագիծ վազում էր նրանց ուղղությամբ։

— Մայրիկն է,— բացականչեց Թովմասը՝ բաց թողնելով կնքահոր ձեռքը մոր մոտ վազելու համար։

Մարոն, շնչասպառ, որդուն իրեն սեղմեց։

— Փառք Աստծու...

Նրա դեմքով քրտինք էր հոսում, և մազերի փնջերը կպել էին ճակատին, քանի որ վազելու ընթացքում դրանք արձակվել էին։

— Մայրիկ, զինվորները կրակում են եկեղեցու վրա։ Իսկ հերոսները ներսամ են։

— Գիտեմ, գիտեմ, թանկագինս։ Ես քեզ ամեն ինչ կբացատրեմ։

Արմենը նրանց մոտեցավ։ Մարոն ուզում էր իմանալ, թե իրականում ինչ էր պատահել։ Արմենը հակիրճ ներկայացրեց իրավիճակը։

— Աստված իմ,- բացականչեց Մարոն՝ տանիքների վրայով նայելով զանգակատանը։

Հեռվում լսվում էր հրազանների ճարճատյունը։ Մի քանի վայրկյան տևող դադարից հետո լսվում էր անկանոն հրաձգության, որը կարկտի աղմուկն էր հիշեցնում։

— Թովմասին տուն տար։ Տնից դուրս չգաք։

Մարոն բռնեց Արմենի բաճկոնի թևքից.

— Դուք այնտեղ չեք վերադառնա։ Դա խելահեղություն է։

— Ես Սուրբ Մինասից այն կողմն եմ ապրում,- ասաց նա։— Ես կշրջանցեմ հրապարակը։

Մարոն կռահում էր, որ նա ասում էր իրեն հանգստացնելու համար։ Նա գնալու էր եկեղեցի տեսնելու, թե ինչ էր այնտեղ կատարվում։

* * *

— Դիպուկ կրակեք,- բղավեց Շիրակը։— Փամփուշտները չեն հերիքի։

Նա եկեղեցու կենտրոնական նավով վազում էր դեպի ավանդատուն, իսկ այնտեղից էլ զանգակատուն։ Նա ամենուր էր, սրտապնդում էր իր մարդկանց և հետևում, որպեսզի նրանք ապարդյուն չվատնեին իրենց փամփուշտները։ Նրանք փակել էին ավանդատան դուռը և դիմացը կիտել էին սեղանը, պահարաններն ու նստարանները։ Զինյալներից մեկը, լուսամուտի մոտ կանգնած, հետևում էր գերեզմանատանը։ Չորս հոգի էլ դիրքավորվել էին նավի կողմնային լուսամուտների մոտ։ Հինգ հոգի զանգակատանն էին, որը շատ հարմար էր կրակելու համար։

Շիրակը հասկանում էր, որ իրենք չէին կարողանալու երկար դիմադրել։ Երե գոնե հրացանները բերած լինեին և լիքը փամփշտակալներ։ Նրանց ատրճանակները չէին կարող հեռու կրակել, և իրենք ընդամենը երեսուն փամփուշտ ունեին, որոնցով նրանք հազիվ ետ մղեին առաջին հարձակումը։ Բարեբախտաբար ոստիկանները չգիտեին դրա մասին և զգուշաբար թաքնվում էին եկեղեցու պարսպի հետևում։ Նրանք անկանոն կրակում էին գանգակատան և լուսամուտների ուղղությամբ, որոնց ապակիներն արդեն կոտրվել էին։ Հրապարակում, շուռ տված սայլի հետևում տեղադրված էր գնդացիրը, որը երբեմն կրակում էր։ Դրա կանոնավոր բզզոցին եկեղեցու դուռն արձագանքում էր խուլ հարվածներով, սակայն դիմանում էր հարձակմանը, իսկ երբեմն էլ լսվում էր զանգերի ղողանջը, երբ գնդակները դրանց էին դիպչում։

— Շիրակ,- կանչեց մեկը զանգակատնից։

Շիրակը միացավ իր տղաներին զանգակատանը։ Գնդակները սալում էին նրանց շուրջը, բզզում էին քարին դիպչելով։ Արմենակը՝ ուսուցիչ Զորյանի քեռորդին, պառկած էր մեջքի վրա։ Նա սպանվել էր ճակատին դիպած գնդակով։ Նա տասնինը տարեկան էր։ Շիրակը ցատկեց նրա մոտ, փակեց նրա աչքերը և վերցրեց զենքը։ Դա նրանց առաջին զոհն էր։ Անիմաստ և անփառունակ գոհը։ Ինչպես առնետի մահն իր բնում։ Մի տասներկու ոստիկանների մահը, կամ էլ նրանց ստացած վերքերը ոչինչ չէին փոխի։

— Մենք չենք կարող դիմադրել,- ասաց տղամարդկանցից մեկը, որը վիրավորվել էր ձախ ուսից։

— Մենք գիտեինք, որ այս բանը մի օր պատահելու էր,— պատասխանեց Շիրակը համոզմունքով։

— Այո, բայց ոչ պարապ տեղը։ Ես ուզում էի, որ իմ մահը ինչ-որ նպատակի ծառայեր։

Նա ամփոփում էր իր ընկերների, ինչպես և առաջնորդի միտքը։

— Մենք դեռևս չենք մեռել,— բացականչեց Շիրակը։

— Այստեղ,— գոչեց տղամարդկանցից մեկը՝ ցույց տալով եկեղեցու

հետևը։— Ինձ թվում է, որ այն անլյունում շատ են շարժվում։

Զանգակատնից վերնատան կողմում գտնվող պարսպի պատը չէր երևում, սակայն հարևան փողոցը վխտում էր զինվորներով։ Քանի որ շենքի այդ կողմում ոչ մի լուսամուտ չկար, ապա հակառակորդը կարող էր պարիսպն անցնել առանց իրեն վտանգելու։ Հարկավոր էր ուժեղացնել ավանդատան պաշտպանությունը։ Շիրակը շտապ ցած իջավ։ Երբ նա նավով էր անցնում, դրսից նետված մի առարկա աղեղ գծեց օդում և զնգալով ընկավ նստարանին։

— Քիչ էր մնում գլխիս դիպչեր,— բղավեց լուսամուտի մոտ հսկող տղամարդը։— Այդ ի՞նչ է։

Մոտենալով այն նստարանին, ուր ընկել էր առարկան, Շիրակը նավթի հոտ առավ։ Բարակ մետաղից պատրաստված ամանը պատռվել էր, և նրա պարունակությունը թափվում էր գետնին։

— Նրանք ուզում են մեզ խորովել,— բացականչեց Շիրակը։

Նույն պահին մեկ այլ ման վայրէջք կատարեց միջանցքում։

— Զանգակատուն բարձրացեք, արագ,— բղավեց Շիրակն ու գնաց այն զինյալի հետևից, որի պահակակետը անանդատունն էր։

Երբ նա ընկերոջ հետ վերադարձավ, տեսավ, որ նավ էին նետվել այլ ամաններ։ Նավթի գոլորշին խանգարում էր շնչել և շշմեցնում էր։ Նրանք հասել էին զանգակատան սանդուղքին, երբ եկեղեցում մի նռնակ պայթեց՝ հրկիզելով նավթի գոլորշին։ Սարսափելի մի պայթյուն ցնցեց շենքը, պոկելով դուռը և ճոճելով զանգերը։

Արմենը թաքնվել էր մի տան պատի հետևում, որտեղից երևում էր հրապարակը, եկեղեցու ճակատը և կողմնային պատերից մեկը։ Պայթյունի ձայնից քիչ էր մնում նրա սիրտը կանգներ։ Եկեղեցու լուսամուտներից և դռնից բոց էր դուրս պրծնում, հետո կրակը հետ քաշվեց և տեղը զիջեց սև թանձր ծխին, որը շուտով սկսեց դուրս դալ նաև զանգակատնից։ Հրդեհը մոլեգնում էր նավի կենտրոնում և տեղափոխվում էր տանիք։ Ոստիկանները հրճվանքի ճիչեր էին արձակում և օդ էին կրակում։ Սպան նրանց լռելու հրաման տվեց և բղավեց.

— Հանձնվեք, սա ձեր վերջին հնարավորությունն է։

Երբ նա լռեց, լսվում էր միայն տարածվող կրակի բվվոցը։ Եկեղեցու շեմին ծխի քուլաների մեջ երեք տղամարդ հայտնվեց։ Գրգռված զինվորները սպանեցին նրանց, չնայած զինյալները ուզում էին հանձնվել։ Նրանց մարմինները ցած գլորվեցին աստիճաններով։

— Ապուշներ։ Ապուշներ,– ոռնաց կապիտանը՝ բարկությունից շիկնելով։– Առանց հրամանի կրակողին ես կսատկացնեմ։

Եկեղեցուց բղավոց լսվեց.

— Մենք հանձնվո՛ւմ ենք, մի՛ կրակեք։

— Դուրս եկեք։

Ծխի միջից մարդկային մարմիններ հայտնվեցին։ Երկու տղամարդ քարշ էին տալիս անգիտակից Շիրակին։ Նա ընդամենը թեթև այրվածքներ էր ստացել, քանի որ նրա ընկերոջ մարմինը իրեն փակել էր պայթյունի ժամանակ։ Վերջինս մահամերձ էր և չէր կարողանում քայլել։ Երեք «քաջեր» նրան բերում էին ձեռքերի վրա։ Զինվորները շրջապատեցին ապստամբներին և սվինների տակ նրանց ուղեկցեցին դեպի սայլը, ուր պառկեցրին վիրավորներին։ Այնտեղ նետվեցին նաև եկեղեցու շեմին սպանված զինյալների դիակները։ Նրանք կապեցին ասառողջ տղամարդկանց ձեռքերը, որոնք միացան ձերբակալված ծխականների խմբին Տեր Խորենի գլխավորությամբ։ Վիրավոր կամ մեռած ոստիկաններին լցրեցին երկու սայլերի մեջ, որոնց ջորիներ էին լծված, իսկ մնացած ոստիկանները շրջապատել էին ձերբակալվածներին։ Շարասյունը, թողնելով հրապարակը, շարժվեց դեպի վարչական թաղը։

Արմենը տեսավ, թե ինչպես էին հեռանում իր բարեկամները փայտյա անիվների ճռռոցի, զինվորների հայհոյանքների, ծիծաղի և կատակների ներքո։ Ոստիկաններից ոմանք դատարկում էին իրենց զենքի պահունակները, հարևան տների ուղղությամբ կրակելով, իսկ սպան նրանց չէր հանդիմանում։ Շիրակ Թևոնյանի գերեվարման համար նրա կոչումը կբարձրացնեին, և բացի դրանից, նրանց պարգևատրում էին խոստացել։

Եկեղեցու բոլոր լուսամուտներից ծխի քուլաներ էին դուրս գալիս, որոնք տանիքի վերևում միանալով՝ ծխի սյուն էին կազմում, որը ձգվում էր դեպի հանդարտ երկինքը։ Քարավանը, հրդեհը. Արմենն այդ ամենի մեջ տեսավ այն ճակատագրի կանխագուշակումը, որը սպասում էր իրենց բոլորին։

— Վերջի սկիզբը,– մրմնջաց նա խուլ ձայնով, և այդ պահին եկեղեցու տանիքը փլվեց։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 3

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 10:04-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 2 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 4 ►

Այդ երեկո Սվասի մահմեդական թաղում սովորական աշխուժության փոխարեն տենդագին ու տագնապալի տրամադրություն էր տիրում։

— Հայերի գործն է։

— Սկզբում գավառապետը, իսկ հետո հերթը կհասնի մեզ բոլորիս։

— Իսկ այդ եկեղեցում... Մի հիսուն հոգի կային։ Մինչև ատամները զինված էին։ Մարդասպաններ, որոնք պատրաստ են մորթել կանանց ու երեխաներին։

— Ասում են, լեռներում հազարավոր զինյալներ են թաքնվում և որ նրանք շրջապատում են քաղաքը։

— Ինչո՞ւ է բանակը ձեռքերը ծալած նստել և չի պաշտպանում մեզ այդ գյաուրներից։

— Ես համարում եմ, որ նրանց պետք է կանխել։

Գրեթե նույն խոսքերն էին լսվում առևտրականների վաճառասեղանների մոտ, աղբյուրների շուրջը և փողոցներում գոյացող փոքր խմբերում։ Սրճարանների հարթակներին տղամարդիկ այնքան ոգևորված էին վիճում, որ մոռանում էին վառել իրենց նարգիլեները։ Գավառապետ Մումթազ բեյի սպանության լուրը տարածվել էր կայծակնային արագությամբ, իսկ Սվասի կենտրոնում հայ ապստամբների ձերբակալության լուրը, հավելվելով նախորդին, անպաշտպանության զգացման մթնոլորտ էր առաջացրել քաղաքում։ Անտեղյակ մարդիկ իրար էին կապում այս երկու իրադարձությունները, մինչդեռ դա այդպես չէր։ Իսկ Գանի բեյի գործակալները, շահագործելով վախի զգացումը, չափազանցնում էին թվերը և տագնապալի լուրեր էին տարածում։ Այս իրավիճակում հայերի տեղահանության մասին որոշումը դառնում էր խոհեմ միջոց, որի կիրառումն ուշացվում էր։

Վարդանը դուրս էր գափս հոսպիտալից։ Յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում նա զեկույց էր ներկայացնում և չնայած նրան, որ շտապում էր տուն վերադառնալ, չուզեց կարգը խախտել։ Պարետը անսովոր զուսպ ու սառն էր նրա հետ, և երբ Վարդանը պահանջեց, որ վիրաբույժը այցելեր իր հիվանդներին, նա

խուսափողական պատասխան տվեց։ Այդ պահին Վարդանը դեռևս չգիտեր, թե ինչ էր կատարվել քաղաքում իր բացակայության ընթացքում։ Ուստի նա զարմացավ՝ նկատելով բուժակների խոժոռ հայացքները։ Դուրս գալով բակ, նա հարցուփորձ արեց Իզեթին՝ նիհար, կորացած մեջքով մի զինվորի, որը հսկում էր իր ձիուն։ Վարդանը հաճախակի դեղորայք էր տալիս նրա բազմաթիվ երեխաներից որևէ մեկի համար, և Իզեթի երախտագիտությունը երբեմն չափազանցված էր լինում՝ վերածվելով զզվելի ստրկամտության։ Նա հաճույքով պատմեց այն ամենը, ինչ գիտեր գավառապետի սպանության մասին։ Մոռանալով, որ մայոր Վարդանը հայ էր, զինվորը պատմեց նաև Շիրակ Թևոնյանի գերեվարման մասին, որին նա մասնակցել էր։

— Ես սպանեցի այդ ավազակներից մեկին,— հայտարարեց նա կուրծքն ուռեցնելով։

Վարդանը հուզմունքը թաքցրեց հետաքրքրված ձևանալով.

— Զոհեր և վիրավորներ կա՞ն։

— Այո, երկուստեք։ Մենք վառեցինք եկեղեցին և բռնեցինք նրանց առաջնորդին։

Ահա թե ինչ։ Ուրեմն ծառերի վերևում իր տեսած ծուխը, դրա հետևանքն էր։ Շիրակ... Նրա համար ավելի լավ կլիներ, եթե մահացած լիներ մարտի ընթացքում։ Տխրելով՝ Վարդանը հիշեց, թե ինչպես էր նա ծիրան ուտում։ Իզերի հաղորդած մանրամասներից նա հասկացավ, որ եկեղեցին Սուրբ Մինասն էր։ Թովմասն այնտեղ պետք է գնար իր կնքահոր հետ։ Վարդանի մարմնով դող անցավ, և այս անգամ նրա ձայնը մատնեց հուզմունքը.

— Ապստամբներից բացի եկեղեցում ուրիշ մարդ կա՞ր։

— Սպան նրանց դուրս գալու թույլտվություն տվեց։

Վարդանը թեթևություն զգաց։ Իզեթը շարունակեց.

— Սպան իրեն որպես շատ բարի մարդ կամ որպես վախկոտ դրսևորեց։ Ես կարծում եմ, որ նա ու քահանան ծանոթ էին։ Ես բոլորին կվառեի։

— Նույնիսկ կանանց և երեխաների՞ն։ Եվ դա դու ես ասում, որ շատ երեխաներ ունես ու սիրում ես նրանց։

Զինվորը ուսերը թոթվեց։

— Դրանք գյաուրներ էին։

Առանց որևէ բան ավելացնելու Վարդանը հեծավ Հուր Կրակին և արագ հեռացավ։ Այս մտածելակերպը հատկանշական չէր Իզեթի համար, որը գթասիրտ և հանդուրժող մահմեդական էր։ Այն, որ նա այդ օրին էր հասել, նշանակում էր, որ հասարակական խաղաղությունը շատ արագ էր խաթարվում։ Դա կարելի էր կանխատեսել։ Տեղահանությունը նոր շունչ էր տալիս բնակչության մի մասի ատելությանը

քրիստոնյաների նկատմամբ։ Շատերն այդ որոշումն ընկալում էին որպես խրախուսանք իրենց ատելությունն արտահայտելու համար։ Հայերը պետք է քավության նոխազ դառնային բոլոր անհաջողությունների և խաբեությունների համար։ Դա կարող էր միայն բռնությամբ ավարտվել։

Վարդանը պետք է կավալ թաղով անցներ, ուր նա ստիպված էր ձիու ընթացքը դանդաղեցնել։ Տների երկրորդ հարկերը կախված էին փողոցի վրա, և նրանց տանիքների միջև երկնքի միայն շատ բարակ շերտ էր երևում։ Տեղ–տեղ հորիզոնական թառմաները ծածկում էին փողոցը և իսկական թունելներ կազմում։ Ինչպես միշտ, փողոցները կեղտոտ էին և պատված էին աղբակույտերով։ Կիսավայրենի բազմաթիվ շներ աղբահանի դեր էին կատարում։ Փողոցները մարդաշատ էին. տղամարդիկ՝ սև կոստյումներով, ֆեսը գլուխներին, կանայք՝ քողածածկ դեմքերով, ջահել աղջիկներ՝ բազմաթիվ մանր հյուսերով, աղմկոտ տղաներ, որոնք վազվզում էին ցուցադրված ապրանքների շուրջը։ Եվ այդ քաղաքացիների մեջ հայտնվում էին մի քիչ կաշկանդված գյուղացիներ, որոնց հեշտ էր ճանաչել կարճ բաճկոնների, բրդյա գոտիներով լայն շալվարների և յուրահատուկ գլխարկների շնորհիվ։

Վարդանը դանդաղ ճանապարհ էր հարթում ամբոխի մեջ։ Նա իր ողջ էությամբ զգում էր հայերի նկատմամբ թշնամանքը։ Փողոցի անկյունում ստվար մի ամբոխ փակել էր երթևեկությունը։ Մորուքավոր մի մարդ հանդիմանում էր տղամարդկանց և քարոզում էր իր սեփական սրբազան պատերազմը։ Նրա ճառն ուղեկցվում էր հավանության բացականչություններով։ Գլուխները տաքանում էին, երիտասարդները գնում էին տեղահան անելու իրենց ընկերներին։ Վարդանը կանգ առավ ամբոխի մոտ։ Նրա սիրտն արագ էր բաբախում։ Նա իրեն ի զոր ու էր զգում ուժերը չափելու ցանկացած հակառակորդի հետ անհատական մենամարտում, սակայն վրդովված ամբոխները նրա սրտում անբնական մի վախ էին արթնացնում։ Միգուցե դա կապված էր իր մանկության տարիներին տեղի ունեցած մի միջադեպի հետ։ Նա չգիտեր։ Նա մի քանի անգամ խորը շունչ քաշեց և վերագտնելով լիակատար ինքնակառավարումը, կանգնեց ասպանդակների վրա։

Պետք էր խանգարել այդ սադրիչին սանձազերծելու ամբոխի վայրագությունը։ Միայն սուլթանը կարող էր սրբազան պատերազմ հայտարարել։ Անհավանական էր, որ նա հանդգներ այդ բանն անելու, քանի որ նա կվախենար իր դեմ լարելու ողջ աշխարհի հասարակական կարծիքը և, հատկապես, անհնազանդության հանդիպելու Անատոլիայից դուրս ընկած մահմեդական աշխարհում, որը կվարկաբեկեր բոլոր հավատացյալների Առաջնորդի տիտղոսի նկատմամբ նրա ունեցած հավակնությունները։ Իհարկե, երե Թալեաթը և նրա նմանները նրանից այդ բանը պահանջած չփնեին։ Նրանց համար անհնարին բան չկար։ Վարդանը վճռեց խորամանկել։ Նա մատը տնկեց հռետորի վրա և բղավեց.

— Հե՛յ, դու։

Մարդը լռեց։ Ունկնդիրները հետևեցին նրա օրինակին։ Նա նայեց Վարդանին, որը շարունակեց կրակոտ տոնով.

— Այո, դո՛ւ։ Ո՞վ ես դու, որ համարձակվում ես խոսել սուլթանի անունից։ Ցույց տուր մեզ սրբազան պատերազմ ազդարարող ֆիրմանը։

Վարդանի խոսքերը կասկած սերմանեցին մարդկանց սրտերում, որոնք սպասում էին հռետորի պատասխանին։ Վերջինս շփոթվեց և նկատելի կերպով հուզվելով՝ շուրջը նայեց օգնություն ակնկալելով։ Ամբոխը հուզվում և աղմկում էր։ Փողոցի մյուս մայթին իր խանութի շեմին կանգնած մի վաճառական առաջ եկավ և, հռետորի ուղղությամբ բռունցքը թափահարելով, բղավեց.

— Դու սրբապղծությամբ ես զբաղված։ Գիտե՞ս ինչ են անում աստվածանարգողների հետ։

Մրմունջն ահագնացավ և որոտ դարձավ։ Հենց այն մարդիկ, ովքեր ծափահարել էին սադրիչի՝ սպանության դրդող կոչերին, հիմա պատրաստ էին նրան հոշոտել։ Վարդանը վճռեց չմիջամտել։ Ամբոխը մեծանում էր։ Հանկարծ հետեակի կանաչ համազգեստով, սակայն անզեն մի երիտասարդ կանգնեց հռետորի կողքին։ Վարդանը ճանաչեց մի զորակոչիկի, որը մի քանի շաբաթ աշխատել էր հոսպիտալի իր բաժանմունքում։ Նա խառնակիչ էր։ Զինվորը, Վարդանին ցույց տալով, ասաց.

— Ես սրան ճանաչում եմ։ Սա հայ է։ «Մայոր գյաուր», մենք նրան այսպես ենք անվանում։

Ամբոխը քարացավ, և համատարած լռություն տիրեց։ Հռետորը, անմիջապես ինքնավստահ դառնալով, փորձեց միջադեպից օգուտ քաղել։

— Հա՛յ,— բղավեց նա։— Այն հայերից մեկը, որ սպանել են մեր գավառապետին, այն շներից մեկը, որոնք հավակնում են տեր ու տիրական լինել այս երկրում։ Նա ինչ կուզեք կասի մեզ ուղղորդելու համար։ Մարդասպա՛ն հայ։

Ամբոխը սկսեց վանկարկել վերջին բառերը, և Վարդանը հայտնվեց ատելությամբ լի դեմքերի բազմության առաջ։ Մարդիկ բռունցքներն էին թափահարում, իսկ ոմանց ձեռքերում դանակ կար։ Վարդանը ցացադրական կերպով բացեց գոտկատեղին ամրացված պատյանը և ձեռքը դրեց ատրճանակի կոթին։ Այդ շարժումը բավական էր, որպեսզի դեպի Վարդանը շարժվող մարդիկ կանգ առնեին։

— Թույլ չտաք, որ նա փախչի — հրամայեց մորուքավորը, վերականգնելով իր իշխանությունը ամբոխի վրա։

— Մենք նրան կկախենք,— ավելացրեց երիտասարդ զինվորը։

Վարդանը մտաբերեց, որ ինքը այդ զինվորի մասին բացասական զեկույց էր ներկայացրել։ Ցուցարարները տատանվում էին։ Այդ գյաուրը, այնուամենայնիվ, կրում էր օսմանյան բանակի սպայի համազգեստը։

Բացի դրանից, նա զինված էր։ Վարդանն օգտվեց անվստահության այդ պահից և հեռացավ։ Նա հեռացավ առանց ամբոխից աչքը կտրելու, մկանները լարված, պատրաստ անհրաժեշտության դեպքում ատրճանակը պատյանից հանելու և կրակելու։ Տեսնելով, որ նա արդեն բավականաչափ հեռացել էր ամբոխից, մարդիկ զգացին, որ նրան ձեռքից բաց էին թողել, և նրա հետեից բանջարեղեն և աղբ նետեցին։ Նա հեշտությամբ խուսափեց նետված իրերից, սակայն չկարողացավ խուսափել հարվածներից և անպատվություններից, որոնք հորդում էին հեղեղի պես։ Նա ձին խթանեց։

— Ճանապարհ, ճանապարհ,— բղավում էր նա, որպեսզի անցորդները մի կողմ քաշվեին և իր համար միջանցք բացեին։

Շուտով նա դուրս եկավ մի հրապարակ, ուր զինվորների դասակները պահակ էին կանգնել։ Այժմ, երբ վտանգն արդեն անցել էր, Վարդանը ստամոքսի շրջանում ջերմություն զգաց, որը տարածվեց նրա մարմնով մեկ։ Ոստիկանության պարեկները շրջում էին հայկական թաղի առևտրական կենտրոնի դատարկ փողոցներում։ Հավանաբար իշխանությունները վախենում էին հուզումներից։ Հենց որ ճանապարհը դատարկվեց, Վարդանը ձին քառատրոփ քշեց դեպի տուն։

* * *

Տան շեմի աստիճանին նստած Թովմասը հետևում էր այգին փողոցից բաժանող ցանկապատին։ Նա անհամբերությամբ հորն էր սպասում։ Եկեղեցուց տուն վերադառնալուց հետո ժամանակը շատ դանդաղ էր անցնում։ Թովմասով ոչ ոք չէր զբաղվում։

Ազնիվ խանումը, Մարոն, Ջամիլան և Զեյնաբը գործ էին անում տանը, իր ընկերներից և ոչ մեկը չէր ներկայացել, և Ֆրանսերենի դասը տեղի չէր ունեցել։ Չէին գալիս նաև ներքին քաղաքի տղաները, որոնք երբեմն ցատկում էին Պալյանների այգու ցանկապատի վրայով և միրգ էին փախցնում։ Թովմասը նրանց չէր մատնում, քանի որ տղաներն իրեն քաջ էին թվում և ինքը նախանձում էր նրանց ազատությանը։ Իսկ ինչ վերաբերում էր մրգին, ապա ծառերի վրա այնքան միրգ կար, որ իրենք էլ չգիտեին, թե ինչ անեն։

Սասունը չէր կարող կռահել, որ իր տերը տրամադրություն չաներ իր հետ խաղալու։ Նա Թովմասին էր տալիս իր գնդակը և վիզը ծռած վնգստում էր, հետո, համբերությունը կորցնելով սկսում էր հաչել։ Նա մերթ պառկում էր Թովմասի ոտքերի մոտ, մերթ վեր էր թռչում և հարձակվում էր շագանակենու տակ նստած կեռնեխների վրա, հետո նորից պառկում էր սանդուղքի տակ։

Թովմասը մտաբերում էր այն ամենը, ինչ տեղի էր ունեցել եկեղեցում, և ձգտում էր ամեն ինչ հիշողության մեջ պահել։ Դա դժվար էր, քանի որ երբեմն որոշ մանրամասներ չափից ավելի մեծ տեղ էին գրավում և գերիշխում էին մնացածի վրա։ Հատկապես լավ էր հիշում իրենց

նստարանի դիմաց նստած մի կնոջ սարսափահար հայացքը, ծռված բերանը և եղունգները, որոնցով նա ճանկռտում էր իր դեմքը։ Այն հերոսի սարսափելի աչքերը, որին կնքահայրը տվեց իր փամփուշտները։ Նա պարզորոշ տեսնում էր նավապետ Արմենի ոտքերի տակ թքող երիտասարդ ոստիկանի դեղնած ատամները։ Նա հիշում էր իր սարսափը, որից նա դեռ չէր ազատվել։ Զգում էր, որ այն թաքնվել էր իր հոգում, նմանվելով փոքրիկ գազանի, որն իր ճանկերի մեջ կառներ իրեն հենց առաջին հնարավորության դեպքում։ Մինչև հիմա նա վախենում էր միայն գերեզմանատան մեռյալներից և հրեշավոր գազաններից, որոնց ինքը հնարում էր նկուղի խոնավ մթության մեջ։ Նա երբեք մարդկանցից չէր վախեցել։

Մոր տված պարզաբանությունները այնքան էլ չբավարարեցին Թովմասին։ Տեղահանություն՝ հիմա նա մոտավոր պատկերացում ուներ դրա մասին։ Դա բացատրում էր մեծերի լարվածությունը, իր ընկերների բացակայությունը, փակ խանութները, սակայն ոչ եկեղեցու հրդեհը, ոչ էլ Տեր Խորենի և պարոն Զորյանի՝ ուսուցչի ձերբակալությունը։ Թովմասը չէր կարողանում ի մի հավաքել այդ տարրերը և հասկանալի պատկեր ստանալ։ Դա մի խճանկար էր, որի ամենակարևոր տարրը՝ ինչո՞ւն պակասում էր։

Սասունը ականջները տնկեց։ արագ ընթացքով ձի էր մոտենում։ Դարպասին մոտենալով ձին դանդաղեցրեց ընթացքը։ Երեխան ճանաչեց Հուր Կրակի սմբակների անկրկնելի ռիթմը մինչև ձիու երևալը։ Վերջապե՛ս։ Նա գլուխը դռնից ներս մտցրեց և բղավեց.

— Հայրիկը գալի՛ս է։

Հետո նա վազեց դեպի դարպասը, ուր Վարդանն սարդեն իջել էր ձիուց։ Երեխան ձեռքն անցկացրեց ճաղերի արանքվ և հպվեց հոր ձեռքին։

— Հայրիկ, հայրիկ,— ասաց նա ակնհայտորեն թեթևացած ձայնով։

Վարդանը շոշափեց նրա թևերն ու ուսերը, հարցնելով.

— Հոգիս... Ամեն ինչ լա՞վ է։ Քեզ ոչինչ չի՞ պատահել։

Թովմասը շնչակտուր սկսեց պատմել.

— Նրանք այրեցին եկեղեցին, հայրիկ։ Ոստիկանները։ Նրանք նախ մեզ դուրս բերեցին։ Նրանք ձերբակալեցին Տեր Խորենին և ուրիշներին։ Նրանք սպանեցին հերոսներին։

Վարդանը երեխային իր կողմը ձգեց և ճաղերի արանքից համբուրեց.

— Արդեն ամեն ինչ վերջացել է։ Ես այստեղ եմ։

Վարդանը պատրաստվում էր Թովմասին խնդրել, որ բանալին բերեր, երբ տեսավ Մարոյին բանալին ձեռքին։ Նա ծպտում էր, սակայն Վարդանը նկատեց, որ Մարոյի աչքերը կարմրած էին։ Այս մանրուքից բացի, նրա պահվածքից ու ձայնից երևում էր, որ նա իրեն տիրապետում

էր։

— Ինչ երջանի՜կ եմ ես,— բացականչեց նա՝ երկաթյա մեծ բանալին պտտեցնելով կողպեքի մեջ։

Թովմասը կախ ընկավ դարպասից և ոտքերով թափ հաղորդեց դռանը՝ կիսաշրջան կատարելու համար։ Մարոն փարվեց Վարդանին և համբուրեց նրան։

— Կյանքս...— մրմնջաց Վարդանը գրկի մեջ նրան պահելով։

Մարոն լարված էր և գրեթե աննկատ դողում էր։

— Ըհը, ըհը,— արեց Թովմասը նրանց մոտենալով։

Հայրը նրա քիթը քաշեց և նստեցրեց թամբին։

— Ձիդ քրտնել է,— արձանագրեց Մարոն։

— Ես տուն էի շտապում։

Մարոն փակեց դարպասը և գրկեց ամուսնուն։ Վարդանն էլ գրկեց նրա ուսերը, և նրանք կողք կողքի ձիու հետևից գնացին դեպի ախոռը։ Մարոն հարցրեց.

— Իմացա՞ր Սուրբ Մինասի մասին։ Նրանք ոչ մեկին ազատ չեն արձակել։ Արմենը գնացել է նորություններ իմանալու։ Քահանան և մնացածները մեղադրվում են ապստամբներին օժանդակելու մեջ։ Իրավիճակը բարդանում է, Վարդան։ Մենք անպայման պետք է մի բան անենք։

Նրբանկատությունից դրդված՝ Մարոն առաջ չէր քաշում այն ելքը, որի մասին ինքը մտածում էր։ Նա գիտեր, որ Վարդանը դիտարկել էր այդ խնդիրը, հետևաբար առաջինը պետք է խոսեր այդ մասին։ Վարդանը նայեց Թովմասին և Մարոյին նշան արեց սպասելու ավելի հարմար առիթի։

— Ես նրան հնարավորինս բացատրեցի,— ասաց Մարոն։— Վարդան, քո համազգեստը մեզ երկար պաշտպանել չի կարող։ Դու գիտե՞ս, թե ինչ է կատարվում այլուր։

Վարդանը գլխով արեց։ Մարոն շարունակեց.

— Նույն բանը կկատարվի այստեղ։ Դա անխուսափելի է։

Կարծես դժկամությամբ Վարդանը ցածրաձայն ասաց.

— Դա շատ հնարավոր է։ Եվ իմաստությունը կպահանջեր, որ մենք հեռանայինք այստեղից քանի դեռ ուշ չէ։

— Կպահանջե՞ր։ Իսկ ինչո՞ւ պայմանական եղանակով։

Մարոն պատասխանը գիտեր։ Նա կռահում էր այն ներքին պայքարը, որը երկատում էր իր ամուսնուն։ Վարդանը հաստատեց Մարոյի կասկածը։

— Իմ պարտքը...

— Քո պարտքն է նախ մտածել ընտանիքիդ մասին,— ասաց Մարոն վստահորեն։

— Իսկ մնացածնե՞րը։

— Դու ոչինչ չես կարող անել նրանց համար, բացի անիմաստ կերպով քեզ զոհաբերելուց։ Իսկ դու դրա իրավունքը չունես։

Նրանք ախոռ մտան։ Վարդանն իջեցրեց Թովմասին և Հուր Կրակի թամբը հանեց։ Մարոն մի խուրձ հարդ վերցրեց և կտրուկ շարժումներով սկսեց ձիուն սրբել։ Վարդանը, անկասկած, բազմիցս մտածել էր այս ամենի մասին, սակայն Մարոն այլ փաստարկներ ևս ուներ։

— Քանի որ դու զինվորական ես, ապա մենք Սվասի վերջին ընտանիքը կլինենք, որը կտեղահանվի, և դու ոչնչով չես կարողանա օգնել քո հայրենակիցներին։

— Գիտեմ...

Միամիտ ձևանալով՝ Մարոն հարցրեց.

— Ի՞նչ ես կարծում, ինչ իրադարձություն կարող է վերջ տալ տեղահանություններին և հանդարտեցնել այն խելագարներին, որոնցից կազմված է կառավարությունը։

— Արտաքին հարձակումը։ Արտաքին ճնշումները։ Բայց դրսում պետք է իմանան, թե ինչ է այստեղ կատարվում և...

Նա հանկարծակի լռեց։ Իհարկե... Հետևությունը պարտադրվում էր ինքնըստինքյան։ Ինչպե՞ս ինքը չէր մտածել դրա մասին ավելի վաղ։ Հարկավոր էր, որ մեկը օգնության կանչեր Իսկ ո՞վ կարող էր այդ բանը Վարդանից լավ անել։ Նա պարզորոշ տեսավ իր հետագա գործողությունների ուղղությունը։ Ինքը պետք է գրիչը ձեռքը վերցներ և ի լուր աշխարհի հայտարարեր, որ Օսմանյան կայսրությունում բնաջնջում էին հայերին։ Այդ բանն անելու համար ինքը պետք է հեռանար երկրից։ Դա իր հայրենակիցներին օգնության գալու միակ միջոցն էր։

Վարդանի խաղաղված դեմքը տեսնելով՝ Մարոն հասկացավ, որ ամուսնու խիղճը հանգստացել էր։

— Վճռված է։ Մենք կմեկնենք հենց այս գիշեր,— ասաց Վարդանը։— Ես Արմենին կառաջարկեմ միանալ մեզ։

Մարոն բավարարության հոգոց հանեց և նետեց հարդի խուրձը։

— Մի կես ժամից նա այստեղ կլինի Արաքսիի հետ միասին։ Գնամ ինձ կարգի բերեմ։

— Բարի եղիր կարգադրելու, որ լոգանքի համար տաք ջուր բերեն ննջարան։

Թեթև քայլերով Մարոն դեպի տուն գնաց։ Նրան թվում էր, որ ինքը ազատվել էր ուսերին ճնշող ծանր բեռից։ Բոլորից ծածուկ նա նախապատրաստել էր այն հագուստը և անձնական իրերը, որ պետք է վերցնեին իրենց հետ։ Շատ քիչ բան, որ տեղավորվել էր փոքր ճամպրուկի մեջ։ Նրա հիասթափությունն անսահման կլիներ, եթե իրենց փախուստը հետաձգվեր գեթ մեկ օրով։

Օրվա բուռն իրադարձությունների պատճառով Վարդանը մոռացել էր որդու ծննդյան տարեդարձի մասին։ Իրենից երկու անգամ մեծ եղանը հազիվ գործի դնելով՝ Թովմասը ձիերի և կովերի մսուրները խոտով էր լցնում։ Նա բաց չէր թողել իր ծնողների խոսակցության և ոչ մի բառը։ Նա շատ բան չէր հասկացել այդ խոսակցությունից, բացառությամբ այն բանի, որ իրենք մեկնելու էին։

— Մոտ եկ,— ասաց Վարդանը՝ թևերը լայն բացելով։

Թովմասը եղանը մի կողմ դրեց և վազեց հոր մոտ, որը նրան գրկեց։

— Դու արդեն վեց տարեկան ես։ Ծնունդդ շնորհավոր, իմ մեծ տղա։

— Շնորհակալություն, հայրիկ։

— Ներիր մեզ, որ մենք այնքան էլ ուրախ չենք քո տարեդարձի օրը։

— Ոչինչ,— պատասխանեց երեխան, որը նախաճաշից հետո չէր էլ մտածել իր տարեդարձի մասին։

— Շուտով մենք ուրիշ քաղաքում կլինենք, և մեզ այլևս վտանգ չի սպառնա։ Այդ ժամանակ մենք քեզ համար այնպիսի տոն կկազմակերպենք, որը դու երկար կհիշես։

Մի հարց հանգիստ չէր թողնում Թովմասին.

— Մենք այս գիշե՞ր ենք մեկնելու։

— Այո, բայց ոչ մեկին չասես։

— Ո՞ւր։

— Դեռ չգիտեմ։ Բայց մենք բոլորս միասին կլինենք։ Ճանապարհորդությունը երկար և դժվարին կլինի։ Դու պետք է քեզ տղամարդու պես պահես։

— Եկեղեցում ես չլացեցի։ Ոչ էլ զինվորների առջև։ Քեզ հետ, հայրիկ, ես ոչնչից չեմ վախենում։

Վարդանը նրա մազերը խառնեց, համբուրեց ու սեղմեց կրծքին գետնին իջեցնելուց առաջ։

— Գնանք նախապատրաստվենք կնքահորդ դիմավորելու։ Ես նրան եմ հանձնել քո նվերը։

Թովմասը քաշեց նրա բաճկոնի փեշը և հարցրեց հուզված տեսքով.

— Ինչո՞ւ թուրքերը մեզ չեն սիրում։

Վարդանը նստեց վարսակով արկղի վրա և արձակեց համազգեստի օձիքը։

— Կան թուրքեր, որոնք սիրում և հարգում են հայերին։ Օրինակ, Ջամիլան ու Ջեյնաբը։ Կամ էլ, իմ բարեկամ գնդապետ Իբրահիմը։ Բայց ճիշտ է նաև այն, որ կան թուրքեր, որոնք մեզ չեն սիրում։

— Ինչո՞ւ։

— Որովհետև մենք տարբերվում ենք իրենցից, ուրիշ լեզվով ենք խոսում, այլ կրոն ենք դավանում։

— Մեր Աստվածը միակ ճշմարիտ Աստվածն է։ Այդպես է ասվում մի աղոթքում։

— Գիտես Թովմաս, մահմեդականները նույն բանն են մտածում։ Դու էլ իրավացի չես։ Աստված մեկն է, ինչպես էլ նրան անվանեն։ Հարկավոր է յուրաքանչյուրին թույլ տալ, որ նա աղոթի այնպես, ինչպես նա հարկ է համարում։

Ջափից ավելի բարդ պատասխանը չբավարարեց Թովմասին։ Նա կտրուկ տոնով հարցրեց.

— Ինչո՞ւ են մարդիկ ուզում մեզ քշել Սվասից։ Մենք նրանց ոչինչ չենք արել։

— Չէ՞ որ ես քեզ արդեն բացատրել եմ, թե ինչ է իրենից ներկայացնում Օսմանյան կայսրությունը։ Սուլթանը, հիշո՞ւմ ես։

Թովմասը գլխով արեց։

— Տեղահանության մասին որոշումը կայացրել է սուլթանը և նրա կառավարությունը և ոչ թե Սվասի մահմեդականները։ Համոզված եմ, որ նրանց մեծ մասը տխրել է։ Սակայն նրանք ոչինչ անել չեն կարող։ Զինվորները հրանան են կատարում, նրանք ենթարկվում են կառավարությանը։

— Իսկ դո՞ւ, հայրիկ,— հարցրեց Թովմասը՝ ցույց տալով հոր համազգեստը։

— Ես իսկական զինվոր չեմ, Թովմաս։ Բանակում ես դեղագործ եմ և բուժում եմ հիվանդներին։

Դռան շեմից Ազնիվ խանումը կանչում էր Թովմասին, որպեսզի նա տուն գնաը հագուստը փոխելու։

Արմենն իր հետևից մի պոնի էր քարշ տալիս։ Նա քայլում էր ավանակի կողքից, որի վրա նստած էր Արաքսին՝ իր ահռելի ոտքերով սեղմելով կենդանու կողերը։ Նրա երիկամները հիվանդ էին, ճնշումը բարձր, և բամբակյա սև գուլպաների մեջ առնված ոտքերն այտուցված էին։ Վարդանը նրան հատուկ դիետա էր նշանակել, որը նա չէր կարողանում պահպանել, չնայած հասկանում էր դրա անհրաժեշտությունը։ Նա շարունակ հետաձգում էր այն պահը, երբ պետք է հրաժարվեր իր սիրած

առատ համեմված կերակուրներից։ Նրա գեր մարմնի համեմատությամբ դեմքն ավելի նուրբ էր թվում, քան կար իրականում։ Նրա ձյունաճերմակ մազերի մեջ մի սև փունջ կար, որը համառորեն չէր ուզում սպիտակել։ Արաքսին գլխաշոր էր կրում և սև փունջը տեղադրում էր այնպես, որպեսզի այն երևար ու երիտասարդ տեսք տար իր դեմքին։ Նա միշտ պատրաստ էր ժպտալ՝ իր հոյակապ և առողջ ատամները ցուցադրելով։ Նա ցանկանում էր գրավիչ լինել Արմենի համար։ Երբ խոսում էին նրա հիվանդության մասին, նա կրկնում էր. «Մահն ինձ չի վախեցնում, Արմեն, ամենևին։ Ինձ վախեցնում է ծերությունը, գեր և անհրապույր դառնալու հեռանկարը»։ Արմենը բողոքում էր և ասում, որ Արաքսին իր համար ամենագեղեցիկն էր ու ցանկալին։ Եվ վերջապես նա ասում էր կնոջը՝ նրա կզակը ճմկտելով. «Ես քեզ տեսնում եմ սրտիս աչքերով և դու այնպիսին ես, ինպիսին էիր մեր ամուսնության առաջին օրը»։ Այդ խոսքերը անվրեպ կերպով ստիպում էին Արաքսիին ժպտալ։ Եվ իսկապես, Արմենի սերը չէր փոխվել։ Դա պարզ, հիմնավոր և հանգիստ զգացմունք էր։ Իրենց ամուսնական կյանքի ընթացքում նրանք հաճախ էին ստիպված եղել իրարից հեռու լինել ձկնորսության պատճառով և այդպես էլ չէին վարժվել այդ բաժանումներին։ Այսօր նրանք լրացնում էին կորցրած ժամանակը և փաստորեն անբաժան էին։

Տնից դուրս գալու պահից ի վեր Արմենը ոչ մի խոսք չէր ասել։ Սակավախոսությունը նրա արժանիքներից չէր, և Արաքսին կռահում էր, որ ճաշկերույթը Պալյանների տանը նրա համար տհաճ պարտականություն էր։ Իր ծորացող ձայնով Արաքսին ասաց.

— Ես շատ ուրախ եմ այս հրավերի համար։

— Վախենամ, թե այս ճաշը գիշերային հսկման նմանվի,— քրթմնջաց Արմենը։— Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ են նրանք համառորեն ուզում նշել Թովմասի տարեդարձը։ Այս իրավիճակում...

Ծեր կինը ուշադրության չէր դարձնում նրա փնթփնթոցին, կարևորն այն էր, որ նա խախտել էր լռությունը։ Արաքսին պնդեց.

— Հակառակը, պետք չէ մենակ մնալ։ Ես նրանց հասկանում եմ, և ես նույնպես ուզում եմ բարեկամներով շրջապատված լինել։ Միգուցե սա վերջին ճաշն է, որ միասին կճաշակենք։

— Հաստա՜տ վերջինը կլինի։

— Փորձիր ավելի հանդարտ լինել։

— Հանդա՜րտ,— պայթեց Արմենը,— ինչպես ես կարող եմ հանդարտ լինել, երբ մեզ...

Նա լռեց՝ իրեն հաշիվ տալով, որ ինքը գրեթե բղավում էր, մինչդեռ պետք է խնայեր իր խեղճ կնոջ նյարդերը։

— Ներիր ինձ աղունիկս,— մրմնջաց նա՝ ձեռքը դնելով կնոջ ձեռքին։

Արաքսին ժպտաց։ Արմենը շատ վաղուց չէր օգտագործել այդ փաղաքշական բառը։ Արմենը հոգոց հանեց.

— Լավ, ես կզսպեմ ինձ մի քանի ժամ։

Նրա ձեռքը, որով նա բռնել էր պոնիի սանձը, լարվեց և եղունգները մխրճվեցին ափի մեջ։ Նա ներքուստ եռում էր։ Նրա համար անտանելի էր այն անգործությունը, որին նրան մատնում էր իրադարձությունների ընթացքը։ Նրան հուսահատեցնում էր իր անկարողությանը։ Երբ հասան Սուրբ Մինաս եկեղեցու ծխացող ավերակներին, նա հայհոյանքների մի շարան արտաբերեց։ Արաքսին նրան չհանդիմանեց։ Սևացած պատերի տեսքից նրա ճնշումը բարձրացավ, և նա շրջվեց, որպեսզի ամուսինը չտեսներ իր կարմրած դեմքը և արցունքները։ Մինչ այժմ տեղահանությունը կարկտաբեր ամպ էր, որը նախախնամությունը հեռացնում էր իրենցից։ Հայերի նկատմամբ իրկակացվող գազանությունները, որոնց մասին պատմել էր Արմենը, նրա հոգում արձագանք չէին գտել։ Դրանք սարսափելի բառեր էին անկասկած, որոնք սակայն քաշ, որքան և հարյուրամյակներ առաջ տեղի ունեցած պատերազմներն ու ջարդերը։ Հայտնվելով ավերված տաճարի առջև՝ նա հանկարծ հասկացավ զգայական ձևով։ Նրա վիշտը նույնքան մեծ էր, որքան այն ցավը, որը նա ապրել էր՝ կորցնելով իր վեց զավակներին և տասներեք թոռներին։ Կարծես նա կրկին կորցրած լիներ այն պահին։ Եվ նա հասկացավ, որ ինքը նրանց կորցնելու էր ամեն անգամ, երբ կսպանվեր գեթ մեկ մարդ կամ երեխա։ Որքա՜ն արդյոք կդիմանար նրա սիրտը։

Պալյանները, ընտանյոք հանդերձ, դուրս եկան Արմենին ու Արաքսիին դռան շեմին դիմավորելու համար։ Թովմասը քար կտրեց տեսնելով թամբած պոնիին, որին առաջնորդում էր կնքահայրը։ Շարժվելու և խոսելու ունակությունը կորցնելով՝ նա նայում էր, թե ինչպես էին նրանք մոտենում։ Իր ամենանվիրական երազանքն իրականանում էր։ Եկեղեցու դեպքերից հետո նրա մեջ արմատավորված վախը, որից նույնիսկ նրա փորն էր ցավում, անհայտացավ։ Կարմրին տվող շագանակագույն մորթով, կատարյալ համամասնություններ ունեցող կենդանին շեկ բաշ և պոչ ուներ։ Շունը հաչեց, իսկ պոնին նրան պատասխանեց երկար խրխնջոցով։ Դրանից Թովմասը երկար և մի քիչ նյարդային ծիծաղեց։ Նա գամվել էր վերին աստիճանին, չնայած ուզում էր վազել պոնիի մոտ։ Մի քանի րոպե առաջ ինքը խոստացել էր Ազնիվ խանումին, որ նախ կողջուներ հյուրերին, շնորհակալություն կհայտներ նվերի համար, իսկ հետո միայն կվերցներ ընծան։

Վարդանն օգնեց Արաքսիին իջնել ավանակից։

— Ինչպե՞ս են ձեր ոտքերը։

— Ավելի լավ,— ասեց նա։— Ձեր նշանակած բուժումը ինձ շատ է օգնում։ Սակայն այս երեկո ես ինձ թույլ կտամ այն խախտել։

Մեծերի ողջագուրանքների ընթացքում, որոնք նրան շատ ձգձգված թվացին, Թովմասը տեղում դոփում էր։ Վերջապես հասավ կնքահորն ու կնքամորը համբուրելու իր հերթը։ Արաքսին ձեռքերը նրա ուսերին դրեց, նրան կանգնեցրեց պոնիի դիմաց և ասաց մնացածներին.

— Մեր սիրելի Թովմասը հրեշտակի համբերություն ցուցաբերեց։

Վարդանը կենդանուն ցույց տվեց.

— Ահա, Թովմաս։ Այս պոնին քոնն է։ Լավ կխնամես։

— Թամբը քեզ նվիրում է տատիկը։ Արաքսին գործել է թամբի տակի հոյակապ խալին, իսկ կնքահայրդ երկու ամիս շարունակ վարժեցրել է պոնիին։

Վերջապես Թովմասը մոտեցավ իր ձիուն։ Ձին արդեն բարեկամացել էր շան հետ։ Հուզված երեխան շոյեց կարճ և նուրբ մազմզուկներով պատված նրա մռութը։ Կենդանին վիզը երկարացրեց, որ իրեն շոյեն։

— Կարծես ինձ ճանաչի,— հիացավ Թովմասը։

—Հենց այդպես է— պատասխանեց Արմենը։ Մայրդ ինձ էր տվել քո հագուստներից մեկը և նա սովորել է քո հոտին։

Թովմասը գրկեց պոնիի պարանոցը, պտտվեց նրա շուրջը, շոյեց գավակը և նստեց թամբին։ Նրա դեմքը փայլում էր աննկարագրելի երջանկությունից։

Կրունկներով նա թեթևակիորեն խթանեց ձին և լեզուն ճտճտացրեց, ինչպես անում հայրը։ Մարոն շարժում արեց նրան հեռու պահելու համար, սակայն Արմենը նրան հանգստացրեց։ Պոնին տեղում պտույտ կատարեց, մի քանի քայլ արեց և վարգեց։ Ձեյնաբն ու Ջամիլան ծիծաղելով վազում էին նրանց ետևից։ Ցանկապատի մոտ Թովմասը շրջեց և վերադարձավ մեծերի մոտ։ Դողացող ձայնով նա հայտարարեց.

— Ես նրան Կայծակ կանվանեմ։

— Այդ անունը նրան շատ է սազում,— հաստատեց Վարդանը։

— Մենք հիմա կճաշենք,— ասաց Մարոն։— Իսկ Կայծակին դու կհեծնես ճաշից հետո։

Թովմասը պոնիին կապեց տխիլի թփից՝ ճաշասենյակի լուսամատի դիմաց։ Արմենը մտածեց, որ կենդանին կկոտրատաեր թփի ճյուղերը, սակայն դա այլևս նշանակություն չուներ։ Ինչպես և մնացածները, նա մի քանի րոպեով հաղորդվել էր Թովմասի երջանկությանը և մոռացել էր իր տխրությունը։ Այն կրկին սողոսկում էր նրանցից յուրաքանչյուրի հոգին, սակայն նրանք ջանում էին այդ բանը ցույց չտալ։

* * *

Սվասի բնակիչները շրջանի ամենագեղեցիկ և անկասկած ամենալավ կահավորված տունը համարում էին Ատոմ Շամլյանի կառուցած շենքը։ Հարուստ ներմուծողն ափսոսանքով էր վաճառել Վարդանին այդ տունը, ուր նա հավաքել էր իր հավանած կահույքի նմուշները։ Նրա գավակները Կոստանդնուպոլսում և Միացյալ Նահանգներում էին հաստատվել, իսկ

նրա առողջական վիճակը պահանջում էր տեղափոխվել մայրաքաղաք, ու անվանի բժիշկներ կային։

Այդ տունը մտնելիս Արաքսին վեհերոտության որոշակի զգացում էր ունենում, որը գրեթե չէր անդրադառնում նրա և Պալյանների միջև գոյություն ունեցող ջերմ և մտերմիկ կապի վրա։ Նրա և Արմենի կառուցած երկսենյականոց համեստ տունը ամբողջությամբ կտեղավորեր Պալյանների տան հյուրասենյակում։

Սնանկացած ծխախոտագործի դուստր լինելով՝ Արաքսին երբեք այդքան գեղեցիկ բան չէր տեսել, որքան այդ ճաշասենյակը իր մեծ մարմարապատ բուխարիով և սադափով դրվագանախշված սև փայտե ժամացույցով, որը նվագում էր կես ժամը մեկ։ Կաղնեփայտով պատված պատերին փակցված էին Վարդանի ծնողների և Մարոյի հոր դիմանկարները։ Կար նաև Այվազովսկու չորս ծովանկար։ Քսան հյուր տեղավորող կաղնու սեղանի վերևամ կախված էր բյուրեղապակյա մեծ ջահը։ Ջահը զուտ դեկորատիվ նշանակություն ուներ, քանի որ էլեկտրական էր, իսկ Սվասում, ինչպես և Անատոլիայի մնացած քաղաքներում էլեկտրականություն չկար։ Նախկին սեփականատերը, որը հավատում էր առաջընթացի արագ ներթափանցմանը, յուրաքանչյուր սենյակում էլեկտրական լապտերներ էր տեղադրել։ Տան կառույցից տասներկու տարի անց մարդիկ դեռևս օգտվում էին նավթի լամպերից։ Ապակեպատ պահարանում ցուցադրված էր արծաթե սպասքը, իսկ «Տիրոջ ձայնը» ձայնարկիչը և սպասքադրման երկու սեղանները, լրացնում էին կահավորանքը։

Մարոն սենյակը զարդարել էր վարդի փնջերով, իսկ սեղանը հոյակապ էր սպասավորված։ Ոչ ոք տոնական տրամադրություն չուներ Զեյնաբից և Ջամիլայից բացի։ Վարդանը, հաշվի առնելով Արմենի տարիքը, նրան խնդրեց աղոթք ասել։ Դա զարմացրեց նրա զոքանչին, որը կարծում էր, թե Վարդանն առնվազն անտարբեր է կրոնի հանդեպ։ Փոքրիկ թրքուհիները մատուցեցին ուտեստները՝ հաճախակի հայացքներ նետելով Մարոյի վրա, հետո տեղ զբաղեցրին սեղանի մոտ։ Ազնիվ խանումը պատրաստել էր իր թոռան սիրած ճաշատեսակները՝ խորոված սմբուկ, արտիճուկ ձիթապտղի յուղով, բրնձով և նշով լցոնած գառ։

Ուտեստների գովաբանությունից, Թովմասին հղված բարեմաղթանքներից և կենացներից հետո նրանք լուռ ուտում էին։ Արաքսին, ինչպես և Արմենը շփոթվել էին իրենց ափսեները շրջապատող սպասքի առատությունից, և երկուսն էլ հետևում էին տանտերերին չշփոթեցնելու համար։ Նրանց շփոթեցնում էր նաև այն, որ դեմքերի լրջությունը ճաշին մի քիչ լարված հանդիսավորություն էր հաղորդել։ Մի քանի րոպե անց Արմենը վայր դրեց պատառաքաղը։

— Ես այլևս չեմ կարող ձև թափել,— բացականչեց նա ջղայնացած տոնով։

Կինը արմունկով բոթելով, նրան կարգի հրավիրեց։

Արմենն արդարացավ մռայլ տեսքով։

— Մենք այստեղ քեֆ ենք անում, կարծես ոչինչ չի պատահել։ Իսկ այդ ժամանակ ոմանք դանակ են սրում։

Բոլորը, նույնիսկ Զեյնաբն ու Ջամիլան, որոնք իրենց մեղավոր զգացին, քար կտրեցին։ Բոլորը, Թովմասից բացի, որն ուտում էր մեքենայաբար՝ աչքը իր պոնիից չկտրելով, միտքը հեռու։ Մարոն, շփոթվելով, չգիտեր, թե իրեն ինչպես պահեր։ Նա աղերսող հայացք գցեց ամուսնու վրա։ Վարդանը խոսեց հանդարտ, սակայն վստահ ձայնով.

— Ես հասկանում եմ ձեր զգացմունքները, Արմեն։ Մենք բոլորս նույնն ենք զգում։ Սակայն ձեզ չի՞ թվում, որ կարող էինք քննարկել այս հարցը սուրճ խմելիս։

Արմենի ուսերը հակվեցին։ Նա զննեց իր ափսեն և փնթփնփաց.

— Ի՜նչ կփոխվի այդ խոսակցություններից։ Խոսքեր, ահա թե ինչ է մեզ մնացել... Խոսել և սպասել, թե ինչ կպատահի։

— Հաստատ չես կարող ասել... Ելք կա։

Այս խոսքերի վրա Արմենն արագ բարձրացրեց աչքերը։

— Սև ծով,— շշնջաց Վարդանը։

Սև ծով։ Ի՞նչ էր նա ցանկանում ասել իրականում։ Արմենի շփոթմունքն արտացոլվում էր նրա դեմքին։ Գլխի շարժումով Վարդանը նրան հասկացրեց, որ խոսքը գնալու մասին էր և նրա հարցերը կանխելու համար ասաց.

— Ես այդ մասին էի ուզում խոսել ճաշից հետո։

— Լավ,— պատասխանեց Արմենը։

Նա ձեռքը վերցրեց դանակն ու պատառաքաղը, սակայն խորասուզվելով մտքերի մեջ, մոռացավ ուտելու մասին։ Սեղանին ճնշող լռություն իջավ։ Մարոն Զեյնաբին խնդրեց միացնել ձայնարկիչը։

Նրանց ձայնարկիչը միակն էր քաղաքում, և Թովմասը շատ էր հպարտանում, երբ իր ընկերները զմայլված լսում էին այն։ Ջամիլայի ու Զեյնաբի համար դա գրեթե կախարդական գործիք էր, որի զմայլող զորությունը չէր թուլանում։ Ճաշի ողջ ընթացքում նրանք իրար հետ մրցելով լարում էին սարքը կամ փոխում էին սկավառակները։ Զրույցը աշխուժացնելու նպատակով Մարոն հիշեց իր հորը՝ Հակոբ Արթինյանին։ Նա պաշտում էր հորը և վառ էր պահում նրա հիշատակը, որպեսզի Թովմասը, որը չէր տեսել իր մորական պապին, իմանար, թե ում շառավիղն էր ինքը։ Ազնիվ խանումը լրացրեց Մարոյի հիշողությունները պատմելով, թե ինչպես էր իր ամուսինը Մարոյին արտարժույթի գիտակ դարձրել այն տարիքում, երբ աղջիկները ձեռագործով էին զբաղվում։ Սակայն նրանց ձայնը կեղծ էր հնչում, և Թովմասը, որը սիրում էր այդ պատմությունները, նրանց չէր լսում։ Նա հիանում էր իր պոնիով և երազում էր հոր հետ անվերջանալի գբոսանքների մասին։

Վարդանը նույնպես ցրված էր։ Նա զննում էր սենյակը և մտածում, որ

ինքն այդպես էլ չէր ձևափոխել տունն այնպես, ինչպես վճռել էր գնելուց առաջ։ Նա տունը կահավորված էր գնել։ Նախկին տերը գեղեցիկ իրեր և թանկարժեք կահույք էր սիրում, որոնք նա բերում էր Եվրոպա, Ռուսաստան և Մերձավոր Արևելք կատարած իր ճանապարհորդություններից։ Այդուհանդերձ այդ մի քիչ այլազան կահավորանքի դասավորությունը, համապատասխանում էր Վարդանի և Մարոյի ճաշակին։ Նրանք ի վերջո բավարարվել էին այնտեղ իրենց կահույքը տեղադրելով, իսկ մնացած մասերում տունը մնացել էր նախնական վիճակում։ Անկասկած, հոգու խորքում նրանք գիտեին, որ այդտեղ իրենք երկար չէին մնալու։

Միայն կանայք էին խոսում։ Արմենը փորփրում էր իր ափսեի պարունակությունը և անհամբեր սպասում էր ճաշի ավարտին։ Նրա գլուխը պտտվում էր հակասական մտքերից, որոնք նրան չէր հաջողվում կարգավորել։ Հեռանա՞լ... Ի՞նչ պայմաններում... Ո՞ւր գնալու համար։ Լքել մնացածներին։ Նա անկարող էր ծրագրի ամբողջությունը պատկերացնելու և կանգ էր առնում մանրամասների վրա, որոնք քիչ անց նրան երկրորդական էին թվում։ Նա անհամբեր սպասում էր, որ Վարդանը բացահայտեր իր ծրագիրը։

Անուշեղենից հետո Թովմասը գնաց Կայծակի մոտ։ Մարոն Զեյնաբին ու Ջամիլային երեխայի հետ դուրս ուղարկեց, ասելով, որ սեղանը նրանք ավելի ուշ կհավաքեն։ Մեծահասակները տեղափոխվեցին մեծ հյուրասենյակ, ուր դրված էր «Պլեյել» մակնիշի դաշնամուրը, որն Ատոմ Շամլյանը բերել էր Ֆրանսիայից։ Սենյակում ոճերի հետաքրքիր խառնուրդ էր նկատվում։ Լյուդովիկոս XV–ի ոճի փոքրիկ բազմոցի և բազկաթոռների կողքին կարելի էր տեսնել լաքապատ չինական սնդուկներ, սուրճ խմելու համար նախատեսված տասնանկյուն սեղաններ արաբական նախշերով, արեևյան գորգով ծածկած և բազմաթիվ բարձերով ցածր թախտ, Սպահանի գորգեր, արծաթյա ինքնաեռ, մեծ մանղալ, և այդ կահավորանքը լրացնում էր վենետիկյան հոյակապ ջահը։

Բոլորը հավաքվեցին թախտի մի անկյունում։ Վարդանը մոտ բերեց փոքր բազմոցը Արմենի և Արաքսիի համար, մի բազկաթոռ զոքանչի համար, իսկ ինքն ու Մարոն նստեցին թախտին։ Այսպես նրանք հոծ շրջան էին կազմում։ Մարոն ու Ազնիվ խանումը սուրճ մատուցեցին և կոնյակ։ Վարդանն ու Արմենը ծխախոտ վառեցին։

— Եթե թույլ տաք...— ասաց Ազնիվ խանումը՝ ցույց տալով քթախոտով իր տուփը։

Առանց սպասելու պատասխանի, նա մի պտղունց քթախոտ մոտեցրեց իր քթին, իսկ հետո փռշտաց՝ թաշկինակը քթին սեղմելով։ Կոնյակ խմեցին առանց կենաց ասելու։ Մռայլ էին։ Արմենը թեքվեց դեպի Վարդանը.

— Սև ծո՞վ։

Վարդանը մի շնչով խմեց իր կոնյակը և խորը շունչ քաշեց.

— Սա հրաժեշտի ընթրիք էր։ Մենք հեռանում ենք Սվասից.

Ծերունին հանգիստ էր։

— Հենց այս գիշեր,— ավելացրեց Մարոն։

— Իմաստուն որոշում է,— հայտարարեց Արմենը՝ թափ տալով իր ծխախոտի մոխիրը բյուրեղապակյա մոխրամանի մեջ։— Այստեղ ամեն ինչ կորած է։

— Ես ձեզ առաջարկում եմ մեզ հետ մեկնել,— ասաց Վարդանը։— Գիշերները ճանապարհորդելով, մենք ծովափ կհասնենք, իսկ այնտեղ մենք նավ կվարձենք կամ կգնենք։

— Եթե բախտներս բերի, դա կարելի է անել,— պատասխանեց Արմենը կզակը տրորելով։

Նա դարձավ կնոջը, որը նրա թևը թփթփացրեց, կարծես ուզում էր ասել, որ վստահում է ամուսնուն։ Նման ճանապարհորդությունը պետք է որ մտահոգեր Արաքսիին իր առողջական վիճակի պատճառով։ Արմենը հիշեց Տեր Խորենի խոսքերը սերմնացանը վարելու մասին և հառաչեց։

— Մենք գգացված ենք, որ մտածում ես մեր մասին։ Սակայն մենք մեր կյանքի մայրամուտին ենք մոտենում։ Հետդ ավելի երիտասարդներ տար, նրանք մեր ազգի ապագան են։

Մարոն նստեց թախտի ծայրին և իր ափերի մեջ առավ Արաքսիի ձեռքերը.

— Դուք մեր ընտանիքի մասն եք կազմում, մենք չենք ուզում ձեզ անցյալում թողնել։

Ազնիվ խանումը, լայն բացելով աչքերը, խիստ նայեց Մարոյին, որը չպետք է այդպես միջամտեր տղամարդկանց խոսակցությանը։ Այն էլ արդեն երկրորդ անգամ։

— Արմեն,— շարունակեց Վարդանը,— մենք ձեր կարիքն ունենք։ Մենք պետք է հնարավորինս հեռու մնանք ճանապարհներից։ Հետևաբար, ուժեղ ձեռքեր են պետք կառքը դաշտերով վարելու համար։ Դուք լավ գիտեք այդ տարածքը մինչև ծով, և բացի դրանից, ես չեմ կարողանա նավը վարել։

Իր բաժակի հատակը զննելով՝ Արմենը մտածում էր։ «Յուրաքանչյուրի պարտքն է վերապրել», ասել էր նաև քահանան։ Տեղահանությունը անհաղթահարելի փորձության կլիներ Արաքսիի համար, իսկ այժմ ինքը հնարավորության ուներ նրան այդ փորձությունից ազատել։ Բացի դրանից, ինքն իրեն պատասխանատու էր Թովմասի՝ իր սանիկի և նրա ծնողների համար։

1894 թ. ինքը չէր կարողացել փրկել իր զավակներին, որովհետև նրանք իրենից հեռու էին ապրում, ուրիշ գավառում, այնուհանդերձ նա իրեն մեղավոր էր զգում։ Եվ ահա հնարավորություն էր ստանում խորհրդանշական ձևով իր մեղքը քավելու։ Նա հիշեց Սև ծովը, այնքան

պարզորոշ կերպով, որ թվաց, թե զգում էր դրա աղաբույր օդը կոնյակի գոլորշիների մեջ։ Ի՞նչ երջանիկ կլիներ ես մեկ անգամ նավարկել՝ առաջնորդվելով լոկ իր բնազդով... Արաքսին և ինքը ևս մի քանի տարի միասին կապրեին... Ինքը չէր շտապում մեռնել։

Նա համաձայնեց Վարդանի առաջարկին և անմիջապես բարձրաձայն սկսեց ծրագիր մշակել։ Նա ոգեշնչվեց, ինչպես ամեն անգամ նոր գործ ձեռնարկելիս։ Նա բորբոքված էր խոսում։ Նրա կարծիքով, Սվասից հեռանալու ամենահարմար ճանապարհը իր դաշտի մոտով անցնող հովիվների արահետն էր։ Կառքն այդ արահետով կանցներ, երե զգույշ վարեին։ Լույսն ընկնելուց առաջ իրենք արդեն լեռներում կլինեին, անվտանգության մեջ։ Վեց կամ յոթ օրում իրենք ծովափ կհասնեին։ Արմենն առաջարկում էր գնալ Ուրդու փոքր նավահանգիստը։ Ինքն այնտեղ վստահելի բարեկամներ ուներ և կարծում էր, որ կկարողանար կարգին նավ ճարել։ Հանկարծ նա կարկամեց՝ դեմքն առնելով լուրջ խնդրի։

— Ամեն ինչ լավ է, սակայն մենք ո՞ւր պետք է գնանք։

— Ռուսաստան,— պատասխանեց Վարդանը։

— Ո՛չ,— բացականչեց Մարոն։— Մայրաքաղաք։

Արաքսին և Ազնիվ խանումը նրան հանդիմանական հայացքով էին նայում։ Կինը չպետք է առարկեր իր ամուսնուն օտարների ներկայությամբ։ Վարդանն անտարբեր էր այդ պայմանականությունների նկատմամբ, և կնոջ հոգու ճիչը նրան հուզեց։ Նա մեղմ ձայնով հարցրեց.

— Ինչո՞ւ։

— Մենք այնտեղ ազգականներ ունենք։ Մայրաքաղաքում շատ օտար դիվանագետներ կան, այնտեղ իրավիճակն այնքան ողբերգական չէ, որքան երկրի խորքում։

— Մենք այդ մասին ոչինչ չգիտենք,— ասաց Վարդանը։ Մեսրոպ քեռին իր ընտանիքի հետ պետք է որ մեկնած լինեն։ Իմ եղբայր Նուբարը...

— Երբ տեղ հասնենք, ամեն ինչ պարզ կդառնա,— հակաճառեց Մարոն։

— Մարո՛,— հանդիմանող ձայնով ասաց Ազնիվ խանումը։

Վարդանը ձեռքի շարժումով հանգստացրեց զոքանչին։ Նա հարգում էր կնոջ հոգեվիճակը և համբերատար բացատրեց.

— Լավ մտածիր։ Կոնստանդնապոլսում ինձ կփնտրեն, և մենք ստիպված կլինենք թաքնվել, ապրել վախի մեջ։ Մտածիր Թովմասի, մեր բոլորի մասին։

Մարոն մեքենայաբար գլխով էր անում։ Վարդանն ավելացրեց.

— Բացի դրանից, փախստական լինելով, ես ի՞նչ օգնություն կարող եմ ցույց տալ այստեղի հայերին։ Ո՛չ, ես համարում եմ, որ պետք է

կայսրության սահմաններից դուրս մեկնել։ Ռուսաստանն ավելի ապահով ապաստան կլինի։

Մարոն համաձայնեց և դարձավ Արմենին.

— Դուք կկարողանա՞ք մեզ այնտեղ հասցնել։

— Ավելի մեծ հեշտությամբ, քան Կոստանդնուպոլիս։ Սև ծովի հյուսիսում գտնվող Յալթա քաղաքը ձեզ ձեռք է տալի՞ս։

— Ես կգերադասեի Բաթումը։ Այնտեղից մենք կկարողանայինք Հայաստան գնալ։ Երևան։ Եթե ուզում ենք օգնել Անատոլիայի հայերին, ապա պետք է միանալ Ռուսաստանի հայերին, որոնք կռվում են ռուսների հետ միասին։

Այդ գաղափարը Արմենին դուր եկավ։ Նրա համար այդ երկիրը լիովին անծանոթ չէր։ Նա արդեն եղել էր Էջմիածնում ու Երևանում։ Մարոյի տեսակետից այդ հանգրվանը շատ հեռու էր Եվրոպայից, սակայն ընտրության հնարավորությունը սահմանափակ էր։ Ազնիվ խանումը կանխազգաց, որ երևի չէր թաղվելու իր ամուսնու կողքին, սակայն չբողոքեց, քանի որ ընտանիքը նրա համար ավելի կարևոր էր, քան իր անձը։

Նրանք քննարկեցին գործնական մանրամասներ։ Ի՞նչ էր պետք վերցնել, ով ի՞նչ պարտականություն էր ստանձնում։ Հիշելով Հալիսի կամրջի վրա ոստիկանների կանգնեցրած հայ ընտանիքի գերբեռնված սայլը՝ Վարդանը պնդեց, որ պետք էր վերցնել միայն կենսականորեն անհրաժեշտ իրեր.

— Ոչ մի ավելորդ բան։ Հագուստ, վերմակներ, վեց օրվա ուտելիք, զենք։

— Մեր հարստությունը կտեղավորվի մի կապոցի մեջ,— ասաց Արաքսին, որն ինչպես միշտ վախենում էր նեղություն տալուց։— Կես ժամ, և մենք պատրաստ ենք։

Պարեկների պատճառով մեկնելու հնարավորություն կլիներ միայն կեսգիշերից հետո։ Վարդանը Արմենին և Արաքսիին պետք է վերցներ ժամը մեկից հետո և նրանք պետք է մեկնեին առանց հապաղելու։

— Ի՞նչ եք անելու Զեյնաբի և Ջամիլայի հետ,— հարցրեց Արմենը։— Եթե նույնիսկ նրանք չարթնանան ձեր հեռանալու պահին, ապա առավոտյան կհայտնաբերեն ձեր բացակայությունը և տագնապ կբարձրացնեն։ Մեզ համար շահեկան կլիներ որպեսզի իշխանությունները անտեղյակ մնային հնարավորինս երկար ժամանակ։

— Ավելի լավ կլիներ նրանց զգուշացնել,— պատասխանեց Վարդանը։— Նրանց ասել, որ մենք պետք է թաքնվենք մինչև իրավիճակը հանդարտվի։Կարո՞ղ ենք նրանց վստահել, մայրիկ։

— Ես երաշխավորում եմ։ Նրանք ոսկե սիրտ ունեն։ Նրանք տունը կհսկեն և եթե հոսպիտալից գան և հարցնեն ձեր մասին, նրանց կասեն,

որ դուք հիվանդ եք։ Այսպիսով մենք մի քանի օր կշահենք։

Հյուրասենյակն ընկղմվող էր ադամամութի մեջ։ Մարոն երկու լամպ վառեց, որոնք դեղնավուն լույս էին արձակում։ Օչ ոք չհիշատակեց այն բարեկամներին, որոնց թողնում էին քաղաքում, սակայն յուրաքանչյուրը տրտմությամբ մտածում էր նրանց մասին։ Ճանապարհորդության նախապատրաստությունը քիչ ժամանակ էր խլելու, պարապ թողնելով ժամեր շարունակ, և նրանք չէին շտապում բաժանվել, գիտակցելով, որ ավարտվում էր մի որոշակի ժամանակաշրջան իրենց կյանքում և որ իրենք գնում էին դեպի անորոշություն։

— Մարոն մեզ համար դաշնամուր կնվագի՞,— հարցրեց Արաքսին, որը հափշտակությամբ էր երաժշտություն լսում։— Մեզ հիշեցնելու համար...

Մարոն ի վիճակի չէր նվագելու և Վարդանին խնդրեց ուղը վերցնել։ Վարդանը խնդրել չտվեց, գործիքը գոգին դրեց և լարեց։ Նա ուդ էր նվագում յոթ տարեկանից։ Նրա հայրը մի ձմեռ ապաստան էր տվել թափառաշրջիկ մի երաժշտի, որն այդ հյարասիրության դիմաց Վարդանին սովորեցրել էր իր արվեստի գաղտնիքները։ Հետագայում Վարդանն անվանի ուսուցիչներ էր ունեցել, սակայն նվագում էր ծերունու սովորեցրած ձևով։ Նա ասում էր. «Երաժշտությունը նախ ծնվում է քո մեջ, իսկ հետո անցնում է ուդին»։

Քանի նա մատներն էր մարզում տարբեր մեղեդիներ նվագելով, ներս մտան Թովմասն ու փոքրիկ Թրքուհիները և լուռ նստեցին գետնին, թախտի մոտ։ Վարդանը հին հայկական երգեր կատարեց՝ մեղմ տխրությամբ համակված մեղեդիներ։ Իրենից անկախ Մարոն ուղեկցում էր ուդին իր ջերմ և դողդոջուն ձայնով։ Աչքերը փակ, ձեռքերը ծնկներին, նա երգում էր իրանը ճոճելով, կարծես երեխա օրորեր։ Երբ բարձր նոտաներ էր փրցնում, նրուս պարանոցի հիմքում մի երակ էր պրկվում։ Թովմասն այդ երակին էր նայում, երբ մտածում էր երգի այն բառերի մասին, ուր սիրահարները ողբում էին իրենց բաժանումը։

Երգերում հիշատակվում էին նաև ծաղիկներ, մրգեր և թռչուններ, հեռավոր երկրներ, որոնք բոցավառում էին նրա երևակայությունը։ Նա չէր կարողանում միմյանց հետ կապել սերն ու բաժանումը և չէր հասկանում, երբ սիրած էակներին թռչունների անուններ էին տալիս։ Այդուհանդերձ նա պաշտում էր այն հատվածները, ուր թռչունները չվում էին օտար երկրներ և լուրեր էին բերում այնտեղ հանդիպած մարդկանցից։ Նա սարսռաց, իրենք թռչունների պես կվարվեն և հեռու կչվեն։ Ի՞նչ կգտնեն այնտեղ։ Թովմասը Սվասից բացի ուրիշ քաղաք չէր տեսել։ Միայն գրքերում։ Կտեսնի՞ արդյոք գնացքներ, օդանավեր։ Նա տեղը փոխեց, որպեսզի հենվեր կնքահոր ոտքերին, որը շոյեց նրա գլուխը։

Այդ երեկո Մարոյի ձայնը շատ հուզիչ էր, և երգերի խոսքերը նոր իմաստ էին ստանում։ Այն, ինչ նա երգում էր, այլևս սիրո բալլադ չէր թվում, ավելի շուտ ողբ էր, կարոտի լաց, ուր յուրաքանչյուր ոք կգտներ իր տագնապը, իր ամենաթանկագին բանը կորցնելու վախը։ Եթե Մարոն ճիգ չթափեր իրեն զսպելու համար, ապա կարտասվեր և մյուսներն էլ

նրան կմիանային։

Մութն արդեն ընկնում էր, երբ Արմենն ու Արաքսին տուն հասան։ Պատանի թրքուհիներից յուրաքանչյուրը յուրովի արձագանքեց տեղեկանալով Պաղյանների ծրագրին։ Հուզական և զգայուն Ջեյնաբը փարվեց Ազնիվ խանումին և լացեց, իսկ ավելի խելացի Ջամիլան խորհուրդ տվեց ապաստանել իրենց գյուղում։

— Մեր հայրերը ձեզ ուրախությամբ կընդունեն։ Ամբողջ գյուղը ձեզ կպաշտպանի։

Մարոն պատասխանեց, որ չէին ցանկանա, որպեսզի նրանց ծնողները անախորժություններ ունենային իրենց պատճառով։

— Մենք ապահով տեղ գիտենք, մի անհանգստացեք մեզ համար,— ավելացրեց նա։— Եթե երեք օրից մենք չվերադառնանք, կկողպեք տունը և կգնաք Սվասի ձեր հորեղբոր մոտ։ Նա ձեզ գյուղ կուղարկի, ծնողների մոտ։ Վերադառնալուն պես մենք կգանք ձեր հետեւից։

Ջամիլան գլխով արեց։ Նա հասկանում էր, որ նրանք այլեւս չէին վերադառնալու։ Ազնիվ խանումն աղջիկներին խոհանոց տարավ կարգադրություններ անելու։ Վարդանը Մարոյին պատվիրեց, որ յուրաքանչյուր աղջկա համար տասը ոսկե դրամով քսակ պատրաստեր որպես բաժին։ Նա լամպ վառեց և դուրս եկավ Թովմասի հետ միասին, որը հրաժարվել էր անկողին մտնել ընդամենը երկու ժամ քնելու համար։ Ցածր լուսինը աղոտ լույս էր սփռում երկրի վրա։ Օդն անշարժ էր ու տաք և ծանրանում էր թոշնող ծաղիկների բուրմունքից։ Այդ օրը պարտեզը չէր ջրվել։ Սասունը վազվզում էր այգում՝ գրգռվելով կյանքի սովորական ընթացքի այդ շեղումից։ Վարդանը թամբեց իր և Մարոյի ձիերը։ Թովմասը փորձեց նույն բանն անել իր պոնիի հետ։

— Կայծակը մեզ հետ է գալու,— հայտարարեց նա վճռական ձայնով։

Վարդանն արդեն մտածել էր այդ մասին և անմարդկային էր համարել Թովմասին այդքան շուտ իր պոնիից բաժանելը։

— Համաձայն եմ, սակայն դու նրան չես հեծնի, գոնե սկզբում։ Նրան կառքից կկապենք։

Դա խնդրի լուծումը հետաձգելու մարտավարություն էր։ Ուրդու հասնելուն պես իրենք պետք է ազատվեին բոլոր երիվարներից։ Թովմասը դա չգիտեր, և կարիք չկար նրան անհանգստացնել ժամանակից շուտ։ Վարդանը ստուգեց որդու կատարած աշխատանքը և զարմացավ տեսնելով, որ Կայծակը կոկիկ կերպով թամբած էր, միայն թամբակալն էր թույլ, և նա այն ձգեց։ Նա վարգաձիուն լծեց կառքին։ Երբ նրանք տուն վերադարձան, ճաշասենյակի ժամացույցը ժամը տասնմեկն ազդարարել։ Սենդամթերքով զամբյուղներ, վերմակներ և մի ճամպրուկ կիտված էին նախասրահում։ Մարոն, լարված դեմքով, մոտեցավ Վարդանին։

— Մենք պատրաստ ենք,— ասաց նա հուզված ձայնով։

Այդ քաղաքից հեռանալը անսպասելիորեն հուզել էր Մարոյին։ Ինչ վերաբերում էր Վարդանին, ապա նա ձախողման կանխազգացում ուներ։

— Այս ամենը կբարձենք վերջին պահին։ Մա՞յրդ։

— Նա արծաթեղենն է թաղում նկուղում։

Վարդանը ուսերը թոթվեց.

— Դե եթե նա դրանից հաճույք է ստանում...

Թովմասը հորանջում էր ու աչքերը տրորում։

— Դուք պետք է նրա հետ պառկեք և մի ժամ քնեք,— ասաց Վարդանը կնոջը։— Ես գնամ աշխատասենյակս և մի քանի փաստաթուղթ վերցնեմ, իսկ մնացածը ոչնչացնեմ։

Զնայած ուշ ժամին, Կավալ մահմեդական թաղն աշխուժանում էր։ Երկու-երեք, երբեմն էլ տասնյակ մարդկանցից կազմված խմբեր շարժվում էին դեպի քաղաքապետարան։ Ոմանք զինված էին հրացաններով, ուրիշները՝ փայտերով։ Բոլորի ձեռքին լամպ կամ ջահ կար և, շուտով, մեծ հրապարակը նմանվեց ֆոսֆորափայլ ծովի։ Շենքերի ճակատներին հսկայական ստվերներ էին պարում։ Կիպ կողք կողքի կանգնած մարդկանց հոծ զանգվածը լսում էր հռետորների վրիժառության կոչերը։

Այդ կոչերին ամբոխն արձագանքում էր բղավոցներով, ջահերը տատանվում էին, իսկ բարձրացրած ձեռքերում հրացաններ, դագանակներ էին երևում։ Պատերին թիկնած զինվորներն անհոգ դիտում էին այդ տեսարանը՝ ոմանք անտարբերությամբ, ոմանք էլ դողում էին գանգվածի հետ միասին։ Երբ ցուցարարները շարժվեցին դեպի հայկական բաղը, սպաները գինվորներին հրամայեցին օդ կրակել։

Վարդանն իր լուսամատից նկատեց լույսի ծովի քաղաքապետարանի հրապարակում, սակայն առանձնակի նշանակություն չտվեց։ Քաղաքապետարանը հեռու էր, և աղմուկը չէր հասնում նրան, որպեսզի Վարդանը գուշակեր հավաքի բնույթը։ Կաշվե պայուսակի մեջ նա հավաքել էր գույքի սեփականության մասին և այլ փաստաթղթեր։ Արդեն կես ժամ էր, ինչ նա այրում էր մնացած փաստաթղթերը իր սենյակի կանաչ նախշերով հախճապակյա սալիկներով պատված վառարանում։ Կրակը թեժ էր, և ծխնելույզի հիմքը կարմրել էր։ Սենյակում այնքան շոգ էր, որ նա ստիպված էր լուսամուտը բացել։ Նրա քեռորդի Տիրանի, հայկական ազգային շարժման ակտիվիստների և ղեկավարների, նույնիսկ նրա եղբայր Նուբարի, Արփինե մորաքրոջ նամակները մոխրի էին վերածվել։ Նա այրում էր իր քաղաքական հոդվածների օրինակները, երբ կրակոցներ լսեց։ Նա վազեց լուսամատի մոտ։

Այլ կրակոցներ էլ լսվեցին, և մի պահ իրավիճակը խառը թվաց։ Հետո զանգվածը բաժանվեց, և հրե օձերը գալարվեցին բլուրն ի վեր։

Ցուցարարներին հաջողվեց հաղթահարել համառություն ցուցաբերող զինվորների պատվարը: Եթե բղավոցը չլսվեր, կարելի էր կարծել, որ դա խաղաղ երթ էր: Ամբոխը երկու բառ էր վանկարկում. «Հայե՛ր, մարդասպաննե՛ր»: Թաղամասի վերին մասից աղմուկ էր հասնում: Հարևան փողոցով հեծելազորի մի ջոկատ անցավ, նրանց վազքով հետևեց ոստիկանների մի դասակ: Օսմանյան զինվորները դիրքեր էին գրավում հայկական թաղում խռովարարներին հետ մղելու համար:

— Ինչպիսի՛ երկերեսանիություն,— մրմնջաց Վարդանը կատաղած:

Կասկածից վեր էր, որ բանակից կարգ պահպանել պահանջողները հենց այն մարդիկ էին, ովքեր ծրագրել էին այս հուզումները կամ էլ զոնե աջակցել էին: Նա մտածեց, որ զորքի առկայության պայմաններում իրենք ստիպված կլինեին հետաձել մեկնելու ժամը: Միայն թե ամեն ինչ ավարտված լինի արշալույսից առաջ:

Փեղկերը ճռռացին: Աղմուկից արթնացած մարդիկ դուրս էին նայում լուսամուտներից և տնից տուն խոսում էին միմյանց հետ: Պահապան շները հաչում ու ոռնում էին: Բլրի ստորոտին կրակ երևաց, հավանաբար տուն էր այրվում: Խռովարարները առաջ էին շարժվում իսկ զինվորները անկազմակերպված էին: Ի՞նչ էին մտածում նրանց սպաները: Վարդանը պետք է միջամտեր և կասեցներ զինվորների անկանոն նահանջը: Հակառակ դեպքում իրենց բոլորի վերջը եկել էր: Նա հագավ համազգեստը, կապեց գոտին և ստուգեց ատրճանակի պահունակը: Սենյակից դուրս գալիս նա դեմ առ դեմ հայտնվեց Մարոյի հետ, որն արթնացել էր Սասունի հաչոցից: Նրա մազերը խճճված էին, իսկ դեմքը վախեցած:

— Դու այնտեղ չես գնա, չէ՞:

— Ես պետք է գնամ: Հիմա մենք չենք կարող մեկնել, իսկ եթե ցուցարարներն այստեղ հասնեն...

Մարոն կանչեց Վարդանին և խնդրեց.

— Մնա մեզ հետ, միևնույն է դու այնտեղ ոչինչ անել չես կարող:

— Երբեմն գեթ մեկ վճռական սպա կարող է լիցք հաղորդել զորքին: Եթե զինվորներն իրենց հավաքեն, ապա մենք փրկված ենք: Ես պետք է այնտեղ գնամ:

Նա մեղմորեն ազատվեց Մարոյի ձեռքերից և ավելացրեց.

— Խոստանում եմ զուր կյանքս չվտանգել: Երբ իրավիճակը վատթարանա, շտապ կվերադառնամ: Բայց մի անհանգստացիր, ամեն ինչ լավ կլինի: Փողոցներում հարյուրավոր զինվորներ կան: Մեկ ժամից ամեն ինչ խաղաղված կլինի, և մենք կկարողանանք ճանապարհ ընկնել:

Մարոն ուզում էր ինքն իրեն համոզել, որ Վարդանն իրավացի էր, սակայն նրան այդ բանը չէր հաջողվում: Հակաճառելն անիմաստ էր, Վարդանն իր կարծիքը չէր փոխելու: Մարոն Վարդանի կողքով քայլեց: Նախասրահում նրանց էին սպասում խանումը և երկու աղջիկները:

Նրանք վախեցած էին։ Վարդանը հանգիստ ձևացավ, սակայն դա մակերեսային հանդարտություն էր։ Նա ցույց տվեց պատի տակ շարված իրերը.

— Իմ բացակայությամբ բեռնեք կառքը։ Այդ դեպքում մենք պատրաստ կլինենք մեկնելու վերադառնալուս պես։

Ազնիվ խանումը պատրաստվում էր հակաճառել, սակայն Մարոն նրան լռելու նշան արեց։ Վարդանը պատից իջեցրեց սառը զենքի հավաքածուի մասը կազմող սուրը և պատյանը։ Նա սուրը պատյանի մեջ դրեց և ամրացրեց գոտուն։ Ջնայած շարժումները չոր և արագ էին, սակայն շտապողականության տպավորություն չէին թողնում։

— Դարպասը հետևիցս կփակե՞ս,— հարցրեց Մարոյին, որը նրան էր նայում շփոթված տեսքով։

Մարոն գնաց պահարանի դարակից բանալին վերցնելու։ Վարդանը գլխի շարժումով հրաժեշտ տվեց զոքանչին.

— Ես տունը ձեզ եմ վստահում, մայրիկ։

— Կարող եք հանգիստ լինել։ Ջգույշ կլինեք։

Երբ Վարդանը դուրս եկավ ախոռից, Մարոն նրան էր սպասում դարպասի մոտ։ Լուսինը լուսավորում էր նրա դեմքը և արտացոլվում էր արցունքներով լի աչքերում։ Վարդանը գրկեց նրան։ Մարոն խոսքեր չէր գտնում իր սարսափելի հուսահատությունն արտահայտելու և պարզապես ասաց.

— Ես քեզ սիրում եմ, Վարդան։

Պատասխանելու փոխարեն Վարդանը նրան համբուրեց ձին հեծնելուց առաջ։ Նա նույնպես խոսքեր չէր գտնում և վախենում էր հապաղելու դեպքում կորցնել վճռականությունը։ Փողոց դուրս գալով՝ սպասեց, որ Մարոն բանալիով կողպեր դարպասը։

— Հրացանդ լցրու և առանց վարանելու կրակիր, եթե փորձեն դարպասը խորտակել կամ պատի վրայով ցատկել։

Մարոնն հուզմունքից պապանձվել էր և գլխով արեց։ Վարդանը նրան օդային համբույր ուղարկեց, հետո խթանեց ձին։ Մարոն այնքան կանգնած մնաց դարպասի ճաղերի մոտ, մինչև Վարդանը անհայտացավ փողոցի անկյունում։ Նա գեթ մեկ անգամ հետ չէր նայել։ Լացը զսպելով և աչքերը սրբելով՝ Մարոն տուն վերադարձավ։ Նա պետք է հավատար մնացածներին չհուսահատեցնելու համար։ Նա բարձրացավ Վարդանի աշխատասենյակը։ Այնտեղ օդը ծանր էր և ծխի հոտ էր գալիս։ Նա տեսավ թղթի կույտերը դեռես այրվող վառարանի մոտ։ Ջեռքը տանելով պատի և գրապահարանի արանքը՝ Մարոն այնտեղից հանեց որսորդական մի հրացան, որը նա հրաժարվել էր հանձնել զենքի բռնագրավման ժամանակ։ Դա տասնվեց տրամաչափի երկփողանի հրացան էր՝ հոր նվերը։ Նա փամփուշտներ վերցրեց Վարդանի գրասեղանի դարակից, մտածեց արճճի չափի մասին և վերջապես

նախընտրեց խոշոր կոտորակ վերցնել։

* * *

Վարդանը սլանում էր հուզմունքով տոգորված։ Այդ հուզմունքը կատաղության էր վերածվում ամբոխի աղմուկի ահագնանալու հետ. բղավոցներ, որոնք ուղեկցվում էին պատահական կրակոցներով։ Նրա հանդուգն արարքը մաքրագործում էր հոգին մեղքի զգացումից, որը բույն էր դրել այնտեղ հեռանալու վճիռ կայացնելուց հետո։ Նա պատրաստ էր ուրիշների համար անել այն, ինչ կարող էր։ Բլրի ստորոտում հայկական թաղի առևտրական մասում մի քանի շենքեր էին այրվում։ Մութ փողոցներում նա մի քանի թաքնվող ստվերներ տեսավ. հայեր, անկասկած, որոնք թաքնվելու տեղ էին փնտրում։ Հեռվից երկու զինվոր իր կողմն էին վազում։

— Կանգնի՛ր,— հրամայեց նա։

Զինվորները կանգնեցին և սպասեցին, որ Վարդանն իրենց մոտենա։ Ամոթից նրանք չէին համարձակվում աչքերը բարձրացնել։ Վարդանն ուսերը շտկեց և հարցրեց հրամայական ձայնով.

— Ո՞ւր եք գնում։ Փախչո՞ւմ եք։ Գիտե՞ք, թե ինչ է լինում, երբ զինվորը դասալքում է։

Զինվորներից ավագը պատվի առավ և փորձեց արդարանալ.

— Սպասում ենք ձեր հրամանին, բիմբաշիմ։ Խռովարարները շատ են։ Մենք չգիտենք, թե ինչ պետք է անենք։

— Ո՞վ է ձեր հրամանատարը։

— Ենթասպա։ Լեյտենանտը գնացել է։

Զինվորները շփոթված տեսք ունեին։

— Դուք երևի համալրման հետևից էիք գնում,— ենթադրեց Վարդանը նրանց ինքնասիրությունը խնայելու նպատակով։

— Այո, հենց այդպես, մենք գնում էինք օգնական դասակ գտնելու,— շտապեց պատասխանել նույն զինվորը։

— Դե լավ, դուք ինձ գտաք։ Իմ հետևից մի քանի դասակ է գալիս։ Վերադառնանք խռովարարների մոտ։

Տղամարդիկ իրար նայեցին և սրտնեղած տեսքով կիսաշրջան կատարեցին։ Նրանք դանդաղում էին, և Վարդանը հրամայեց արագացնել քայլը։ Նա կանգնեցրեց ևս երեք զինվորի, որոնք փախչում էին խռովարարներից, և երկուսին, որոնք թաքնվել էին փակուղում։ Ցուցարարների կողմը դժկամությամբ գնացող յոթ տղամարդուն դիմացը գցած, վարդանը շարունակեց իջնել բլուրն ի վար։ Այժմ նա լսում էր ոռնոց, որը հիշեցնում էր ալեբախության աղմուկը։ Շուտով այն

վերածվեց խլացնող բղավոցի։ Մարդիկ արագ բառեր էին վանկարկում. «Հայե՛ր, մար-դա-սպան-նե՛ր»։ Դպրոցի մոտից փողոցը ուղիղ անկյան տակ թեքվում էր։ Անկյունադարձին Վարդանը շլացավ հազարավոր ջահերի լույսից, նրան թվաց, որ ինքը զգում էր աղաղակող այդ բերանների շունչը։ Ամբո՛խ։ Սմանվելով հեղեղատը լցվող հրահեղուկի՝ ամբոխը լցրել էր փողոցը և երկու կողմերից հասնում էր մինչև շենքերի ճակատները։ Հոծ զանգված կազմելով այն ձգվում էր մի քանի հարյուր մետրի վրա, հասնելով մինչև հաջորդ շրջադարձը։ Եվ շարունակվում էր դրանից այն կողմ։

Վարդանը կարկամեց։ Նա հասկացավ զինվորներին փախուստի դրդող բնազդը։ Սակայն ինքը պաշտպանում էր իր հարազատների կյանքը։ Նա տասնմեկ զինվոր հաշվեց, որոնք նահանջում էին ամբոխի մակընթացության ճնշման տակ։ Ուստի նրա տրամադրության տակ տասնութ մարդ կար։ Նա երկու անգամ օդ կրակեց և այդ կրակոցները շփոթության սերմանեցին ամբոխի մեջ և նրա շարժումը դանդաղեց։ Զինվորները խմբվեցին Վարդանի շուրջը։ Նա նրանց կանգնեցրեց կանոնավոր գծով, որը փակում էր փողոցը։ Ատրճանակը ձախ ձեռքին, որով նա բռնել էր նաև սանձը, Վարդանն աջ ձեռքով սուրն էր թափահարում։

— Կցել սվինները,— հրամայեց նա։

Մի քանի զինվոր կասկածանքով նրան նայեցին, և նա վստահ ձայնով կրկնեց հրամանը։ Քանի նրանք իր հրամանն էին կատարում, նա գնում—գալիս էր փողոցի լայնքով նրանց թիկունքում և ասում էր.

— Մեր պարտականությունն է փակել այս մարդկանց ճանապարհը, և մենք դա կանենք։ Սա բանակի պատվի խնդիրն է։ Ինչպե՞ս կարող ենք հաղթել թշնամուն, եթե ի վիճակի չենք կարգի հրավիրել մի խումբ քաղաքացիական անձանց։

Որպեսզի համոզվեր, որ իրեն լավ էին հասկացել, նա ավելացրեց.

— Մենք այլևս ոչ մի քայլ չենք նահանջի։ Եթե ձեզնից մեկը դասալքի, կգնդակահարեմ։

Նրանց առջև ամբոխը շարունակում էր ոռնալ և արդեն տեղից շարժվում էր։ Զինվորները նյարդայնանում էին։

— Լցրե՛ք հրացանները։ Հրացանն ուսի՛։ Նշան բռնեք գլուխներից վեր։ Սպասեք հրամանի։ Կրա՛կ։

Կրակոցին հաջորդեց քար լռություն։ Լսվում էր ջահերի ճարճատյունը։ Վարդանը բղավեց.

— Հավատացյալների Առաջնորդի հրամանով ցրվե՛ք, տուն վերադարձեք։

Լսվեց հիստերիկ մի ձայն.

—Թողե՛ք անցնենք։ Թողե՛ք հաշվեհարդար տեսնենք։

Այս խոսքերին ամբոխն արձագանքեց մրմունջով, որը լիցքավորվեց անեծքներով և ուռճանալով դարձավ բղավոց և հետո տարրալուծվեց ընկալելի ռիթմիկ հնչյունների. «Հա-յե՛ր, մար-դա-սպան-նե՛ր»։ Դագանակներն ու ջահները սկսեցին շարժվել։ Վարդանը տեսնում էր այլայլված և ծամածռված դեմքեր, խելահեղ աչքեր, որոնք արյուն ու ջարդ էին տենչում։

Նրանք մի մարմին էին կազմում, բազում գլուխներով հիդրա, փշերը տնկած մի կենդանի, որն անկանխատեսելի էր ու անհոգի։ Ահա թե ում դեմ պետք է պայքարեր Վարդանը։ Նա գգում էր, թե ինչպես էր իր մեջ ծնունդ առնում ատելությունն ու բռնության տենչը։ Ինչպիսի կատաղությամբ նա կհատեր այդ հրեշավոր գլուխները։ Գազանը շարժվեց դեպի Վարդանը։

Վարդանն իր մարդկանց հրամայեց հրացանները մարտական դիրքում պահել՝ սվիններն ուղղած դեպի ցուցարարները և դանդաղ առաջ շարժվել։ Նրանք վախենում էին, սակայն սպայի և

ընկերների ներկայությունը նրանց մի քիչ սրտապնդում էր։ Տեսնելով դասակի վճռականությունը ցուցարարները տատանվեցին։ Առաջին շարքերում գտնվող մարդիկ ուզում էին կանգ առնել, սակայն հետին շարքերից նրանց առաջ մղեցին։ Հրմշտոց սկսվեց, և զանգվածն անշարժացավ՝ հրացաններին երկու քայլ չհասած։ Դա կրիտիկական պահ էր և այդ որոշակի վայրկյանը պետք է վճռեր դեպքերի հետագա ընթացքը։ Վարդանը մեկ անգամ ևս օդ կրակեց և կանգնեց զինվորների շարքում՝ գազազած ամբոխին ավելի մոտ լինելու համար։ Մարդկային այդ պատվարի դիմաց հայտնվելով՝ Հուր Կրակը խրխնջում և ոտքը գետնին էր զարկում։ Վարդանը իր սուրը պտտեց և բղավեց.

— Նահանջե՛ք, նահանջե՛ք։

Առջևում կանգնածները, որոնց կարող էր դիպչել թրի շեղբը, մեկ քայլ հետ արեցին և սեղմվեցին ամբոխին։ Այդ շարժումը կրկնեց ամբոխը մինչև վերջին շարքերը և զանգվածը սկսեց նահանջել։ Վարդանն իր մարդկանց նշան արեց առաջ շարժվելու։ Նրանք հավասարվեցին Վարդանին և առաջ անցան։ Հաջողությունից ոգևորվելով՝ զինվորները հրում էին իրենց դիմաց գտնվող մարդկանց և սպառնում։ Քայլ առ քայլ խռովարարները վերադառնում էին դեպի առևտրական հատվածը, ուր դեռևս այրվում էին մի քանի խանութներ ու պահեստներ։ Այնտեղ, հրապարակում ամբոխն անշարժացավ։ Վարդանը բավարար քանակով մարդ չուներ հրապարակը դատարկելու համար և կարող էր միայն փակել դեպի վերին քաղաքը տանող փողոցը։ Նրա ընտանիքը այլևս վախենալու պատճառ չուներ և դա արդեն իսկ լավ էր։ Անգործության մատնվելով՝ ցուցարարները կհոգնեին և կցրվեին։ Ի դեպ, նրանցից մի քանիսն արդեն հեռանում էին քաղաքի կենտրոնը տանող փողոցներով։ Նրանք կոտրում էին խանութների ապակիները՝ թալանելու համար։ Դա չարյաց փոքրագույնն էր։

Քառորդ ժամ անց հրապարակի եզրին ձիավորներ հայտնվեցին և ամբոխի միջով ճանապարհ հարթեցին իրենց համար։ Վարդանի մարդիկ

ողջույնի բղավոցներ արձակեցին, և Վարդանն էլ ուրախացավ, տեսնելով, որ հեծելավաշտն առաջնորդում էր գնդապետ Իբրահիմ Ալիզադեն։ Վարդանին հասնելով՝ գնդապետը չեզոք տոնով ասաց.

— Մայոր Վարդան, դուք ձերբակալված եք։

Իբրահիմը կանգնեց զարմանքից կարկամած Վարդանի կողքին և ցածրաձայն ասաց.

— Ի սեր Աստծու, պատմություններ չսարքես։ Տուր ինձ զենքդ։

Ձայնը շտապողական էր։ Նրանց շրջապատող ձիավորները ուշադիր հետևում էին Վարդանի յուրաքանչյուր շարժմանը։ Վարդանը զգաց, որ ավելի լավ էր ենթարկվել։ Իր բարեկամ Իբրահիմը, անկասկած, գործում էր իր շահերից ելնելով։ Վարդանը նրան հանձնեց թուրը և ատրճանակը, իսկ հանդիսատեսի համար վրդովված ձայնով ասաց.

— Ես կարո՞ղ եմ իմանալ, թե ինչ է կատարվում, գնդապետ։

— Շտաբում կիմանաք։

Նրանից ոչ հեռու գտնվող ցուցարարները խանդավառության ճիչեր արձակեցին, տեսնելով, թե ինչպես են ձերբակալում այն մարդուն, որը կանգնել էր իրենց ճանապարհին։

— Սրիկաներ,— մրթմրթաց Իբրահիմը, նշան անելով լեյտենանտին, որ մոտենար։— Ձեռքը թափահարելով, նա հրամայեց.

— Մաքրեք հրապարակը։ Ոչ մի քաղաքացիական անձ չտեսնեմ փողոցներում, երբ վերադառնամ։

Երկու ձիավորների ուղեկցությամբ գնդապետը բանտարկյալի հետ միասին շարժվեց դեպի քաղաքապետարան։ Մատնացույց անելով իրենց հետևող մարդկանց՝ նա մռայլ ձայնով շշնջաց.

— Փախչելու փորձ չանես։ Հրամայել են դիմադրության դեպքում քեզ սպանել։ Տեսնելով, թե ինչ է կատարվում և քեզ ճանաչելով՝ ես ճիշտ համարեցի անձամբ ձերբակալել քեզ։ Ես ձեր տուն էի գալիս։

— Ասա ինձ, թե ի՞նչ է իրականում կատարվում, Իբրահիմ։ Ո՞ւմ հրամանն է։ Փաշայի՞։

— Ո՛չ։ Այդ մարդն այսօր մայրաքաղաքից է ժամանել։ Կարևոր անձ է, որն ունի բոլոր իրավասությունները։ Ցավում եմ։

— Ո՞վ է նա։

— Չգիտեմ։

— Սա թյուրիմացություն է,— հայտարարեց Վարդանը, որը չէր ցանկանում ընդունել իր պարտությունը։

Գնդապետն ուզում էր սեղմել ընկերոջ ձեռքը, սակայն իրեն զսպեց՝ մտածելով իրենց հետևող մարդկանց մասին։ Նա միայն ասաց.

— Հույսդ դիր իմ բարեկամական զգացմունքների վրա։ Ես կարեցածս կանեմ քեզ համար։

Նրա մռայլ ձայնը ցրեց Վարդանի բոլոր պատրանքները։ Սակայն այդ խոստումը նրան հույս ներշնչեց, քանի որ Իբրահիմը հետևողական մարդ էր, և նրա խոսքը պատվի խոսք էր։ Նա սակավախոս էր ու զուսպ և երեք տարվա մեջ նա առաջին անգամ էր օգտագործում «բարեկամություն» բառը։ Իսկապես այդ բարեկամությունը գոյություն ուներ, չնայած նրանց կրթական մակարդակի տարբերությանը։ Նրանք երկուսն էլ տարված էին ձիերով, սիրում էին երաժշտություն, որսորդություն և երկարատև ձիազբոսանքներ, երկուսն էլ նույն պատկերացումներն ունեին կայսրության ապագայի մասին։ Նրանք քիչ էին խոսում, սակայն նրանց լռությունն իմաստավորված էր։

Սվաս ժամանելուց հետո Իբրահիմը ծանոթացել էր Վարդանի հետ Հալիթ փաշայի խորհրդով, որի հրամանատարության տակ նա ծառայել էր առաջին Բալկանյան պատերազմի ժամանակ։ Նիհար և ջլուտ, շեշտված այտոսկրերով, նա մի քիչ կաշկանդված էր իր շարժումների մեջ։ Շեկ մազերը և մանր կապույտ աչքերը վկայում էին նրա չերքեզական ծագման մասին։ Նրա արտաքինը, որը բնորոշ չէր Անատոլիայի բնակիչների համար, նրան գրավիչ էր դարձնում և հեշտացնում էր հարաբերությունները կանանց հետ, քանի որ նա անուղղելի կնասեր էր՝ չնայած, որ արդեն երկու կին ուներ։

Նրանք անցան կիսով չափ այրված երեք տների մոտով։ Յուրաքանչյուրի առջև ուրախ ամբոխ էր հավաքվել, որ պարում ու խմում էր։ Շրջակայքի խանութները թալանվել էին, և մարդիկ անշտապ տանում էին իրենց ավարը։ Վարդանը շրջվեց դեպի բլուրը։ Քաղաքը պատած ծխի պատճառով լուսինը կարմիր էր թվում։ Իր ճակատագրից առավել Վարդանին հուզում էր ընտանիքի ճակատագիրը։ Իբրահիմը կռահեց նրա մտքերը։

— Խռովությունը վերահսկողության տակ է,— ասաց նա։— Զերոնց այլևս վտանգ չի սպառնում։

— Կինս կանհանգստանա ինձ համար։

— Ես նրան կգգուշացնեմ, երբ ձիդ տուն կտանեմ։

— Շնորհակալություն։

Իբրահիմի այդ երկու անդեմ նախադասություններից կարելի էր կռահել նրա ափսոսանքն ու օգնության խոստումը։ Գնդապետը ցավում էր, որ ինքը իրենից անկախ դարձել էր ճակատագրի այն գործիքը, որն իր ամենաթանկ բարեկամին դժբախտություն էր բերում։ Այն պահից ի վեր, որ նա ստացել էր ձերբակալության հրամանը, ապարդյուն կերպով հնարավորության էր փնտրում դրան խանգարելու համար։ Ավա՜ղ։ Գոնե Վարդանը կհասներ բանտախուց։ Իսկ Իբրահիմը դեռ ժամանակ կունենար նրան ազատելու ելք գտնելու։ Նա համոզված էր, որ Վարդանը չէր կարողանա միայնակ լուծել այդ խնդիրը։

Շուկայի հրապարակում ու քաղաքապետարանում շատ զինվորներ կային։

— Ես ոչ մի մեղք չեմ գործել,— ասաց Վարդանը բարձրաձայն ամփոփելով իրավիճակի ներքին գնահատումը։

Իբրահիմը ցույց տվեց մարդկանց խմբեր, որոնց դեպի բանտն էին տանում.

— Սրանք նույնպես։ Սակայն...

Վարդանը նկատեց, որ դրանք ոստիկաններով շրջապատված քաղաքացիական անձինք էին։

— Քո հայրենակիցներն են,— բացատրեց Իբրահիմը։

— Մեզ անունների շատ երկար ցուցակ են ներկայացրել։ Ես կուզենայի կարծել, որ քո անունն այնտեղ սխալմամբ է հայտնվել։

Այդ կարճ նախադասությունը բացահայտում էր Իբրահիմի տագնապը, և դա բավարար էր Վարդանի անհանգստության համար։ Նա հիշեց, որ Շիրակը ասել էր տեղահանությանը նախորդող այդ վարվելակերպի մասին աչքի ընկնող քաղաքացիների ձերբակալությունը, նրանց վերացնելը։ Նա ասաց.

— Տեղահանությունը մոտենում է... Չգիտե՞ս, զինվորականները շարունակու՞մ են բացառություն կազմել։

Իբրահիմը շփոթված թոթվեց ուսերը.

— Ամեն ինչ շատ արագ է փոխվում։ Ես գեներալին կտեղեկացնեմ, թե ինչ տեղի ունեցավ քեզ հետ։

— Հոգ տար իմ ընտանիքի մասին, եթե կարող ես։

Հուզմունքը չմատնելու համար Իբրահիմը գլխով համաձայնության նշան արեց։

Ճաղապատ նեղ լուսամուտներով բանտի գորշ պատերն է՛լ ավելի մռայլ տպավորություն էին թողնում լուսնի խավար լույսի ներքո։ Երկաթյա դռան փեղկերից մեկը բաց էր, որպեսզի նորանոր բանտարկյալներ բերող պահակախմբերը կարողանային ներս մտնել։ Վարդանը զարմացավ, որ իրեն տանում էին ոստիկանության բաժանմունք։

— Հրամանում գրված էր, որ քեզ պետք է հանձնել կոմիսար Մուսթաֆային։

Վարդանը դրանում անհանգստության նոր պատճառ տեսավ։ Մուսթաֆա Ռահմին ատում էր իրեն, և այդ զգացումը փոխադարձ էր։

Նրանք կանգ առան աստիճանների դիմաց, ուր կանգնած էին չորս ոստիկան։

— Ես բերել եմ մայոր Վարդան Պալյանին,— հայտնեց Իբրահիմը, և

Վարդանը նրա ձայնում անվստահություն զգաց։

Ընկերներն իրար ուշադիր նայեցին։

— Թո՛ղ Ալլահը քեզ պահապան լինի,— ցածրաձայն ասաց գնդապետը, երբ Վարդանը ոտքը գետնին էր դնում։

Երկու ոստիկան Վարդանին դեպի դուռը հրեցին։ Զիավորները քառատրոփ հեռանում էին, երբ նա մուտք գործեց ծխով լեցուն նախասրահը։ Հատակը ծածկված էր ծխախոտի մնացորդներով, փոշոտ էր և տեղ-տեղ երևում էին խանձվածի հետքեր։ Դռան ձախ կողմում հերթապահը հենվել էր պատին և կանգնած քնել։ Սենյակի խորքում Օսմանյան կայսրության դրոշի տակ մի ենթասպա, որին գրագիր էին կարգել, ծխացող լամպի լույսի ներքո լրացնում էր ցուցակները։ Նրա ֆեսը դրված էր գրասեղանի վրա, պղնձյա կժի և կեղտոտ բաժակի կողքին։ Նա նույնիսկ աչքերը չբարձրացրեց՝ իրեն մոտեցած նորեկին նայելու համար։

— Վարդան Պալյան,— մրթմրթաց ոստիկանը խռպոտ ձայնով։

— Խուզարկեք նրան,— հրամայեց ենթասպան՝ ստուգելով ցուցակը։

Ոստիկանները դատարկեցին բանտարկյալի գրպանները, և նա չբողոքեց։ Ծխախոտապարկ, մի բուռ փամփուշտ, ինքնությունը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաև երկու ոսկե դրամ և մի բուռ մանր դրամ դրվեցին գրասեղանին։ Վարդանը գիտեր, որ ինքն այդ ամենը այլևս չէր տեսնելու, քանի որ ոստիկանները բնական էին համարում այդ ձևով լրացնել իրենց խղճուկ աշխատավարձը։ Ենթասպան, թանաքի մեջ թաթախելով մատը, ջնջեց Պալյան ազգանունը ցուցակից։ Վարդանը վստահ ձայնով ասաց նրան.

— Կոմիսարին զգուշացրու իմ գալու մասին։ Ես ուզում եմ անհապաղ հանդիպել նրան։

Ենթասպան բութ հայացքով նայեց Վարդանին։ Իր ուսադիրները ցույց տալով՝ Վարդանն ասաց չոր ձայնով.

— Ես քեզ հրամայում եմ։

Ենթասպան փռթկաց և վկայակոչեց ներկաներին.

— Դուք սրան լսեցի՞ք։ Սա ինձ հրամաններ է տալիս։

Մնացած երեք ոստիկանները բարձրաձայն ծիծաղեցին։ Ենթասպան, լրջանալով, իր գրասեղանի դարակից մետաղալար հանեց։

— Ձեռքերը կապեք։

Վարդանը գիտակցում էր, որ դիմադրության ցանկացած փորձ անիմաստ էր։ Մեջքին ձեռքերը խաչաձևելով՝ ոստիկանները ամուր կապեցին նրա դաստակները։ Վարդանին բերած ոստիկանները նրան նստեցրեցին պատի տակ դրված փայտից պատրաստված նստարանին և դուրս եկան։ Հերթապահն իր տեղը գրավեց անկյունում, դռան մոտ։

Ժամը երկուսն անց էր տասը րոպե։ Վարդանը նստած մտածում էր։ Նա կարող էր ինքնախաբեությամբ ինքն իրեն համոզել, որ հույս դեռ կար, որ ինքը շատ քիչ տվյալներ ուներ իրավիճակը ճիշտ գնահատելու համար, սակայն ճշմարտությունը պարտադրվում էր ինքնըստինքյան և այն շատ ավելի պարզունակ էր ու դաժան։ Ինքը մնացածների պես պարզապես հայ էր և որպես այդպիսին համապարփակ կամայականության թիրախ կարող էր հանդիսանալ։ Պետք էր ավելի վաղ Սվասից հեռանալ։ Ոչ, ամեն ինչ շատ արագ էր տեղի ունեցել։ Դեռ երեկ կարելի էր մտածել, որ կյանքի ընթացքը չէր փոխվել։ Նա նայեց բաց դռանը, սակայն այդ պահին անիմաստ էր փախուստի մասին մտածելը։ Այդ հայացքը չվրիպեց ենթասպայի ուշադրությունից, որը գլանակ էր փաթաթում Վարդանի թութունով։ Նա ասաց զվարճացած.

— Տեղդ նստի՛ր, գյաուր։

Հետո ավելացրեց՝ դիմելով հերթապահին.

— Իսկ դու մի քնիր։ Սա վտանգավոր է համարվում։

Այս խոսքերը մտրակի հարվածի ազդեցություն ունեցան հերթապահի վրա, և նա շտկվելով իր մաուզերը ուղղեց Վարդանի վրա և այլևս նրանից աչք չկտրեց։ Վարդանը հենվեց պատին և զինվեց համբերությամբ։

* * *

Մարոն, լուսամատի գոգին հենված, հետևում էր հետզհետե հանդարտվող քաղաքին։ Զգացվում էր թաղը հատվածների բաժանած պարեկների շարժումը, սակայն խռովարարների աղմուկը դադարել էր։ Ջահերն անհայտացել էին և միայն անթեղվող ածուխներն էին ցույց տալիս հրդեհատեղին։ Ինչ էր անում Վարդանը։ Նա պետք է որ վերադարձած լիներ։ Խավարն արդեն ցրվում էր, և փախուստն

անհնարին էր դառնում։

Մոր և աղջիկների օգնությամբ Մարոն բարձել էր կառքը։ Հետո նա շարունակել էր Վարդանի գործը և այրել փաստաթղթերը։ Նա չէր բաժանվում իր հրացանից և անդադար մտածում էր ամուսնու մասին, որը միգուցե իր կյանքն էր վտանգում։ Սպասման երկարաձգվելու հետ հետ այդ արդարացված վախը փոխակերպվում էր անորոշ տագնապի զգացման, որը պարփակում էր ամեն ինչ։ Զդիմանալով այդ լարմանը՝ Մարոն վճռեց դուրս գալ այգի, սակայն նախ հավաստիացավ, որ Թովմասը քնած էր։ Նա հրացանը իր հետ վերցրեց։

Ազնիվ խանումը լուսամուտի մոտ բազկաթոռին նստած այգին էր հսկում։ Նրա կողքին մի մեծ դանակ էր դրված։ Ջամիլան ու Ջեյնաբը գետնին նստած քնել էին՝ գլուխները ծեր կնոջ ծնկներին դրած։ Տեսնելով դստեր տանջահար դեմքը՝ Ազնիվ խանումը սրտապնդեց նրան.

— Համոզված եմ, որ դու զուր ես անհանգստանում։ Վարդանը շուտով կգա։ Ես անդադար աղոթել եմ։

Մարոն կտրուկ տոնով ասաց.

— Ինձ թվում է, որ վերջերս Աստծո ականջները ծանրացել են։

— Այդպիսի բաներ մի՛ ասա,— բացականչեց մայրը։ Որ դա...

Զանգի ձայնից նա վեր թռավ։ Մարոն անմիջապես հույսով լցվեց, որն իսկույն խաթարվեց կասկածից, ինքը սմբակների ձայն չէր լսել։ Երկու կանայք ճակատներն ապակուն սեղմեցին։ Լուսինը մայր էր մտնում, և նրանց չհաջողվեց նշմարել եկողի դեմքը, սակայն դա Վարդանի ուրվագիծը չէր։

— Գնամ տեսնեմ ով է,— հայտարարեց Մարոն՝ հրացանն ուսից իջեցնելով։

— Այստե՛ղ մնա։

— Միգուցե ինչ-որ մեկը լուր է բերել։

— Դա անզգուշություն է։

— Հանցագործը չէր զանգահարի իրեն բացահայտելու վախից,— պատասխանեց Մարոն՝ գնալով դեպի նախասրահը։

Սասունը հաչելով ցած գլորվեց սանդուղքից և հետևեց Մարոյին։ Դեռևս տան շեմից Մարոն հարցրեց.

— Ո՞վ է։

— Արմենը։

Շունը ճանաչեց այդ հարազատ ձայնը և վազեց դեպի դարպասը։

— Ամեն ինչ լա՞վ է,— հարցրեց Արմենը, երբ երիտասարդ կինը մոտեցավ իրեն։

— Եթե կարելի է այդպես ասել... Մենք Վարդանին ենք սպասում։

Ձայնը մատնում էր նրա մտահոգությունը։ Բացելով դարպասը՝ նա բացատրեց հյուրին իր ամուսնու բացակայության պատճառը։ Մթության մեջ աննկատ մնալու համար Արմենը սև հագուստ էր կրում, իսկ ձեռքին նրա ատրճանակն էր։ Նա համբուրեց Մարոյի այտերը։

— Խռովությունը ճնշվել է, Վարդանը շուտով կգա։ Եթե հանկարծ հայտնվի մեկ ժամվա ընթացքում, ապա ժամանակ կունենանք մեկնելու։

— Ինչո՞ւ է ուշանում։

Զնայած Մարոյին հանգստացնելու իր ցանկությանը՝ Արմենը չգիտեր ինչ ասել։ Նա միտքը եկած առաջին պատճառը բերեց.

— Միգուցե նա պետք է զեկուցեր իր վերադասին։ Կամ գուցե բանտ է ուղարկում իր կողմից ձերբակալված խռովարարներին։

— Դա նրան նման չէ։ Իմանալով, թե ինչ հոգեվիճակում եմ ես...

Արմենը, շփոթվելով, գսպեց հոգոցը, որ քիչ էր մնում դուրս թռչեր նրա կրծքից։

— Ես ձեզ հետ կսպասեմ։

— Իսկ Արաքսի՞ն։

— Կդիմանա... Ինչպես բոլորս։

Երբ դեպի տունն էին գնում, փողոցի հեռավոր ծայրից ձիու սմբակների ձայն լսվեց։ Ձիավորը արագ ընթացքով մոտենում էր։

— Տեսա՞ր,— ուրախ բացականչեց Արմենը։

Հիասթափությունը իրեն սպասել չտվեց, քանի որ երկու ձի էր մոտենում։ Արմենը բռնեց Մարոյի թևը և նրան քարշ տվեց ծառուղին երիզող թփերի հետևը։ Ձիերը կանգ առան դարպասի մոտ։ Սասունը նրանց դիմավորեց՝ մերթ հաչելով, մերթ գոմռալով։ Հեծյալը քաշեց զանգի շղթան։

— Ի՞նչ եք ուզում,— բղավեց Մարոն իր թաքստոցից։

— Մարո խանո՞ւմ։

Դա Իբրահիմ Ալիզադեի ձայնն էր։ Մարոն ծառուղի վերադարձավ։ Արմենը թաքստոցում մնաց։

— Գնդապետ Իբրահի՛մ։ Դուք տեսե՞լ եք Վարդանին,— հարցրեց նա հուզված ձայնով։

— Այո։

Մարոն վայր դրեց հրացանը և վազեց նրա մոտ։ Այդ պահին նա նկատեց Հուր Կրակին՝ առանց հեծյալի։ Նա ճիչ արձակեց և ձեռքերը տարավ դեմքին։

— Նա ողջ է,— շտապեց Մարոյին հանգստացնել Իբրահիմը։

— Վիրավո՞ր է,— շշնջաց Սարոն։

— Ոչ։

— Ուրեմն ի՞նչ է պատահել,— հարցրեց կինն անհամբեր։ Իբրահիմի համար նույնքան ծանր էր Վարդանի ձերբակալության մասին հայտնելը, որքան նրան ձերբակալելը, և նա երջանիկ էր,

որ մթությունը թաքցնում էր իր դեմքը Մարոյից... Այդ խոսքերն այնքան դժ

— Նրան ձերբակալել են։ Ոստիկանատանն է։ Ես բերել եմ նրա ձին։

Մարոն մի քանի վայրկյան մունջ մնաց։

— Գնդապետ Իբրահիմ, նա անմեղ է,— վրդովվեց նա։

Իբրահիմը հապաղեց.

— Ես գիտեմ, Մարո։ Սակայն անմեղությունն այլևս ոչ մի արժեք չունի։

Առաջին պահի շփոթմունքից դուրս գալով՝ Մարոն վրդովվեց.

— Ի՞նչ մեղադրանք են առաջ քաշում։

— Ես գաղափար չունեմ։

Մարոն բացեց դարպասը և կատաղի շարժումով վերցրեց Հուր Կրակի սանձը, բռնեց թամբից, մինչդեռ ոտքով նա փնտրում էր ասպանդակը։

— Ի՞նչ եք ուզում անել,— զարմացավ Իբրահիմը։

— Ես հենց հիմա գնում եմ ոստիկանատուն։

Նա նստեց թամբին, սակայն Իբրահիմը նրա ձեռքից խլեց սանձը։

— Դուք չե՛ք կարող,— բացականչեց նա խիստ ձայնով և, մեղմանալով, շարունակեց։— Դա վտանգավոր է, Մարո խանում։ Ձեր միջամտությունը ոչինչ չի փոխի։ Ձեզ նույնիսկ թույլ չեն տա նրան տեսնել։

Մարոն վրդովվեց.

— Գնդապետ Իբրահիմ, ճանապա՛րհ տվեք։

Ենթարկվելու փոխարեն Իբրահիմը Հուր Կրակին ներս տարավ և իր հետևից դարպասը փակեց։ Ինքը մնաց փողոցի կողմից։ Արմենը դուրս եկավ թփերի միջից և ողջունեց Իբրահիմին իր անունը տալով։

— Գնդապետն իրավացի է, Մարո,— ասաց նա մոտենալով։— Դու քիչ էր մնում հիմարություն անեիր։

Մարոն համաձայնեց։ Նրա վճիռը զգացմունքներով էր թելադրված։ Անկասկած կարելի էր ավելի ճիշտ վարքագիծ որդեգրել։ Եվ ամենից առաջ պետք էր գլուխը չկորցնել։ Վարդանը ողջ էր, և կարևորը դա էր։ Մարոն ձիուց վայր իջավ, իսկ ձին դեպի ախոռը գնաց։

— Գնդապետ Իբրահիմ— հարցրեց Արմենը,— այդ ձերբակալությունը սխալմունքի հետևանք է։ Կարո՞ղ ենք հույս ունենալ, որ մայոր Վարդանը շուտով ազատ կարձակվի։

— Ավա՛ղ,— հառաչեց Իբրահիմը,— ես այն տպավորությունն ունեմ, որ ամեն ինչ շատ ավելի լուրջ է։

— Բայց մի՞թե չի կարելի մի բան անել,— ասաց Մարոն դողդոջուն ձայնով։— Դուք նրա բարեկամն եք, գնդապետ Իբրահիմ, Դուք ի՞նչ խորհուրդ կտայիք ինձ։

— Այս պահին մի փորձեք ոչինչ անել։ Վաղն առավոտյան ես ավելի շատ բան կիմանամ, և մենք կմտածենք։

Նա խորը կսկիծ էր զգում և ավելացրեց.

— Հավատացեք, Մարո խանում, ես թույլ չեմ տա, որ մայոր Վարդանին

որևէ վատ բան պատահի։ Նա ինձ համար եղբոր պես թանկ է։

— Շնորհակալություն, գնդապետ։

— Իսկ առայժմ դուք միգուցե իմ տուն տեղափոխվեիք ձեր մոր և որդու հետ։ Այդպես ավելի ապահով կլիներ։

Մարոն հրաժարվեց այդ առաջարկից, և դա Իբրահիմին թաքուն բավարարություն պատճառեց։ Բարեկամության մասին նրա պատկերացումները պարտադրում էին իր հյուրընկալությունն առաջարկել, սակայն նրա վերադասների դուրը չէր գա, եթե իր հարկի տակ ընդուներ բանտարկյալի ընտանիքին։ Վարդանին օգնելու փորձն արդեն կարող էր նրան վարկաբեկել։

— Եթե հանկարծ տհաճ միջադեպեր լինեն, ինձ զգուշացրեք։

Նա հրաժեշտ տվեց՝ խոստանալով գալ նորություններ իմանալուն պես։ Երբ գնդապետը պատրաստվում էր հեռանալ, Մարոն ասաց.

— Փորձեք նրան տեսնել, գնդապետ Իբրահիմ։ Եվ հանգստացրեք նրան մեր կապակցությամբ։

Արմենի հետ մենակ մնալով՝ Մարոն սկսեց հեկեկալ։ Նա պատկերացնում էր Վարդանին ճաղերի հետևում։ Նա մտածեց այն մտավորականների մասին, որոնց ձերբակալել էին Կոստանդնուպոլսում և որոնց մասին նրանց ընտանիքները այլևս ոչինչ չգիտեին։ Ինքը չէր կարողանա դիմանալ այդպիսի անորոշության։ Ինչպե՞ս էր Վարդանը։ Արդյոք նրա նկատմամբ բռնության չէին կիրառել։ Նա պետք է որ անհանգստանար իր և Թովմասի համար։

Լսվեց Ազնիվ խանումի հրամայական ձայնը.

— Ներս եկե՛ք։

Արմենի գալուց հետո Ազնիվ խանումը դուրս էր եկել դռան շեմը և ականատես էր եղել ամենին։ Մարոն նետվեց մոր գիրկը։ Դռան մեջ հայտնվեց Ջամիլան լամպը ձեռքին։ Նա վախեցած աչքերով

նայում էր նրանց։

— Գնա սուրճ պատրաստիր,— ասաց Ազնիվ խանումը չոր ձայնով։

Նա Մարոյին օգնեց սանդուղքով բարձրանալ և շշնջաց հուզված ձայնով.

— Իմ խեղճ փոքրիկ։

Արմենը նրանց էր հետևում և մտքում հայհոյում էր։

* * *

Կաթնագույն դարձած երկինքը այգաբացն էր ազդարարում։ Կեղտոտ

ապակիները հնարավորություն չէին տալիս տեսնելու հրապարակը, իսկ դռան մեջ կանգնած ծխող ոստիկանները փակել էին տեսադաշտը։ Վարդանը, նստարանին փլված, ստեպ-ստեպ քնում էր, վեր էր թռնում քնից, երբ կզակը կրծքին էր հպվում, նայում էր ժամացույցին։ Վերջին անգամ նայելուց հետո ընդամենը մի քանի րոպե էր անցել։ Այդ վիճակը շարունակվում էր արդեն երեք ժամ։ Մետաղալարն այնպես էր սեղմում Վարդանի ենթադաստակները, որ ձեռքերը թմրել էին։ Պահապանները թույլ չէին տալիս ոտքի կանգնել ոտքերը թմրազերծելու համար, հրաժարվում էին ջուր տալ։

Սկզբում Վարդանը փորձում էր ծրագիր մշակել և վճռել, թե ինչ դիրքորոշում էր ինքը որդեգրելու, երբ կհանդիպեր նրան կամ նրանց, ովքեր հրամայել էին իրեն ձերբակալել։ Սակայն դա անհնարին էր։ Նա լիակատար անորոշության մեջ էր։ Ոչ մի այլ հնարավորություն չկար, բացի հանգամանքների բերումով դիրքորոշում ընդունելուց։ Քանի որ խռովությունը ճնշված էր, ապա իր ընտանիքին առայժմ ոչ մի վտանգ չէր սպառնում։ Բայց վա՞ղը։ Իսկ եթե Մարոն ու Թովմասը տեղահանվե՞ն։ Հարազատների մասին մտքերը նրան հուսահատեցնում էին, մինչդեռ այս պահին նա իր հոգեկան ուժերի կարիքն ուներ, և վճռեց քնել։ Իսկ արթուն ժամանակ հիշում էր իր եղբորը՝ Նուբարին։ Հիշում էր ոչ թե քառասուն տարեկան գեր մարդուն, այլ նիհար պատանուն, որն օրն ի բուն թափառում էր Աֆիոն-Կարահիսարի իրենց կալվածքի շրջակայքում։

Հաշվենկատ գյուղացու արտաքինի տակ թաքնվում էր հողին սիրահարված Նուբարի քնարական ոգին։ Հաճելի էր նայել, թե ինչպես էր նա բարձրաձայն երազում այն մասին, թե ինչպիսին կդառնար կալվածքը իր կառավարման ներքո։ Նա երազում էր անիվներով և լծակներով հեքիաթային մեքենաների մասին, որոնք կնմանվեին ահռելի մեխանիկական սարդերի և որոնք ի վիճակի կլինեին կտրվածքներ անել կակաչների սերմնատուփերի վրա և դրանցից ափիոն ստանալ։ Կամ էլ նա պատկերացնում էր պոմպերի մի բարդ համակարգ, որը կազմված կլիներ անհամար կափույրներից, ամբարներից և խողովակաշարերից, որպեսզի բարձրացվեր Ակար գետի մակարդակը և ոռոգվեին իրենց դաշտերը։

Անօգուտ ջանք։ Վարդանին չէր հաջողվում երկար մնալ իր դեռատի եղբոր հետ։ Նա հիշում էր կայսրության վերջին շրջանի պատմությունը, վերջին տասը տարիների իրադարձությունների շարանը և դրվագներ իր ամուսնական կյանքից։ Այդ հետադարձ հայացքի ներքո նրա կյանքը կապակցված ամբողջության տպավորություն էր թողնում, որը բաղկացած էր պատճառահետևանքային կապ ունեցող իրադարձություններից, մինչդեռ իրականում այդ անցյալի մի զգալի մասը պատահականությունների և քիչ թե շատ հանպատրաստից ընդունված որոշումների արգասիք էր։ Իր անցյալի վրա հայացք նետելով՝ Վարդանն իրեն կարող էր մեղադրել միայն անհեռատեսության և պատրանքներ տածելու մեջ։ Տվյալ պահին ինքը պետք է իրեն հաշիվ տար, որ... Մեկ այլ պահի կանխատեսեր ինչ-որ արարքի հեռավոր

հետևանքները։ Մեկ այլ դեպքում՝ հանգամանքները իրեն պետք է հուշեին այլ վարքագիծ... Իսկ միգուցե ինքը վատնել էր իր կյանքը պատրանքների վրա։ Այդ սին պայքարը, այդ կանխավ տանուլ տրված ճակատամարտերը։ Ինչպե՞ս կդասավորվեր իր կյանքը, եթե ինքը բավարարվեր նրանով, ինչ առաջարկում էր կյանքը։ Ենթադրությունների այդ խաղը շուտով նրան անիմաստ թվաց և նա ընկղմվեց ենթասպայի ամենաաննշան արարքների և շարժումների հայեցության մեջ և փորձեց կռահել նրա մտքերը։ Դրանից նա քնեց։

Առաջին աղոթքը սկսելու մուեզզինի կանչը ազդարարեց գիշերվա ավարտը։ Ենթասպան հանեց կոշիկները, փռեց աղոթքի կարպետը և ծնկի իջավ դեմքով դեպի Մեքքան։ Ոստիկանը կանգնած մնաց բանտարկյալին հսկելու համար, սակայն նա անձայն աղոթում էր։ Շուտով նոր հերթափոխ եկավ այս մարդկանց փոխարինելու։ Նոր ենթասպան ավելի բարեհամբույր էր, քան իր գիշերային գործընկերը, և Վարդանին ջուր տվեցին։ Մի բաժակ ջուր, որն ամբողջ գիշերը ջրամանում մնալով գոլացել էր։

Ժամանակն անցնում էր։ Աշխուժացող քաղաքի աղմուկը ներս էր թափանցում։ Քայլեր, խոսակցություններ թուրքերենով, քրդերենով։ Շուկա տարվող հոտի մայոց։ Երբ ծանր բեռնված սայլ էր անցնում, Վարդանի հետևի պատը դողում էր։ Քնե՞լ էր արդյոք Մարոն։ Իսկ Թովմա՞սը, նա երևի չէր հասկանում հոր բացակայության պատճառը։ Այս ժամին Ազնիվ խանումը սովորաբար սուրճի առաջին բաժակն էր խմում։ Նա ցանկացավ պատկերացնել իր տան առավոտյան անցուդարձը, սակայն չկարողացավ։ Այսօր ոչինչ չէր կարող սովորականի պես լինել։

Շուտով սկսվեց պաշտոնյաների, սուրհանդակների, ոստիկանության սպաների անդադար հոսքը։ Նրանք գալիս էին երկու-երեք հոգով, զրուցելով և ծիծաղելով։ Նրանցից մի քանիսն անփույթ հայացք էին գցում բանտարկյալի վրա, իսկ մեծամասնությունը նրան նույնիսկ չէր էլ նկատում։ Իրեն հասնող որոշ խոսակցությունների դրվագներից Վարդանը հասկացավ, որ նրանցից ոմանք մասնակցել էին գիշերային խռովությանը։

Հանկարծ հերթապահող ոստիկաններից մեկը գլուխը ներս մտցրեց և ասաց. «Գալիս է»։ Հերթապահը պատվի առավ, ենթասպան կոճկեց իր համազգեստի օձիքը։ Նախասրահում զրուցող աշխատակիցները շտապ կերպով գրավեցին իրենց աշխատատեղերը։

Ոստիկանապետ Մուսթաֆա Ռահմին մտավ և խիստ հայացքով զննեց սենյակը։ Նրա հայացքը կանգ առավ, Վարդանի վրա։ Դեմքին պայծառ ժպիտ հայտնվեց և նա շոյեց բեղի ծայրը։ Նա մի քանի քայլ արեց դեպի նստարանը, և նրա դեմքի հաղթական արտահայտությունն իր տեղը զիջեց արհամարհանքին։

— Մայոր Վարդան,– բացականչեց նա զարմացած ձևանալով։– Ահա և մենք հանդիպեցինք։

— Ոստիկանապետ...

Ձեռքի շարժումով ոստիկանապետը Վարդանին ստիպեց լռել։

— Թուքդ խնայիր հարցաքննության համար։

Նրա ձայնի մեջ չքողարկված սպառնալիք կար։ Ուղիղ Վարդանի աչքերի մեջ նայելով՝ նա մատները ճտճտացրեց, և նրա աչքերը նենգորեն փայլեցին։ Վարդանն արհամարհական հայացք նետեց նրա վրա։ Ոստիկանապետի հետ սիրալիր լինելն ապարդյուն էր։

Մուսթաֆայի ատելությունը երկար պատմություն ուներ։ Այն ծնունդ էր առել 1910 թ.։ Այդ ժամանակ երիտթուրքերի հեղափոխության հետևանքով կյանքի կոչված կառավարությունը եվրոպական տերությունների ճնշման ներքո հրամայել էր վարչական բարեփոխումներ իրականացնել հայկական շրջաններում։ Վարդանը գիտեր, որ դրանք կյանքի չէին կոչվելու։ Սվասի շրջանում այդ քաղաքականության պատասխանատուն Մուսթաֆա Ռահմին էր, որը գավառապետի օգնականն էր։ Բոլորը գիտեին, որ նա ատում էր հայերին։ Օրենքի առջև փոքրամասնությունների և մահմեդականների հավասարությանը հետամուտ լինելու փոխարեն նա սաստկացրել էր խտրականությունը քրիստոնյաների նկատմամբ։ Վարդանը բացահայտել էր այդ իրավիճակը՝ հոդվածներ տպագրելով լոնդոնյան և փարիզյան թերթերում, որոնք անհարմար կացության մեջ էին դրել օսմանյան դիվանագետներին։ Բացի դրանից, Վարդանը մի ստվար թղթապանակ էր հանձնել Սվասի ֆրանսիական հյուպատոսին և խնդրել էր Կոստանդնուպոլսի կառավարությունում դեռևս աշխատող իր բարեկամներին միջամտել։ Ի վերջո Սվասի հայերը ոչինչ չէին շահել այդ գործողություններից։ Մուսթաֆա Ռահմին դարձել էր քավության նոխազ, և նրան ավելի ցածր պաշտոնի էին նշանակել։ Եթե այդ պատմությունը չլիներ, ապա նա այսօր կարող էր գավառապետ լինել և ոչ թե ոստիկանապետ։

Մուսթաֆան շրջվեց և ասաց ենթասպային.

— Քառորդ ժամից բանտարկյալը մոտս լինի, իսկ հիմա սուրճ բերեք։

Ոստիկանապետը գրասեղանի մոտ նստած սուրճ էր խմում և ոտքն էր ճոճում։ Նա ցնծության մեջ էր։ Նա չէր համարձակվել Վարդանի անունը մտցնել բանտարկվելիք անձանց ցուցակի մեջ, որովհետև նա կապեր ուներ տեղի զինվորական հրամանատարության շրջանում, մինչդեռ Մուսթաֆայի հարաբերությունները գեներալի հետ վատ էին։ Սակայն Գանի բեյի շնորհիվ Պալյանը հիմա իր ձեռքում էր։ Եվ ինքը դրանից մտադիր էր օգտվել։

Դուռը թակեցին։ Նա իր բաժակը վայր դրեց, վերցրեց նստարանին դրված եղեգնյա ճիպոտը։ Վարդանը, երկու ամրակազմ ոստիկանների ուղեկցությամբ, հայտնվեց ոստիկանապետի առջև։ Նա գիտեր, որ ոչ մի սպասելիք չէր կարող ունենալ այդ մարդուց և գերադասեց արհամարհական կեցվածք ընդունել։ Այս ձևականությունը ոչ մի օգուտ չէր տալու, սակայն Վարդանն այլ ընտրություն չուներ։ Նա հայտարարեց

վրդովված տոնով.

— Ինչպե՞ս կբացատրեք այս ձերբակալությունը։ Անմիջապես ինձ ազատ արձակեք։

— Լռությո՛ւն։

Վարդանը չենթարկվեց և ձայնը բարձրացրեց.

— Դուք իրավունք չունեք ինձ այստեղ պահելու։ Ես զինվորական եմ և, որպես այդպիսին, ենթակա չեմ քաղաքացիական իրավունքին։

— Ես քեզ չասացի՞, որ լռես,— ոռնաց ոստիկանապետը։

— Ֆաքրի փաշան կտեղեկացվի, և նա ձեզ ցույց կտա։

Մուսթաֆան ճիպոտով հարվածեց Վարդանի դեմքին։ Քանի որ Վարդանի ձեռքերը կապված էին մեջքի հետևում, նա չկարողացավ հետ մղել ճիպոտի հարվածը, որը դիպավ նրա ձախ այտին և ճեղքեց շրթունքը։ Վերքն այրվում էր, և նրա բերանի անկյունում արյուն հայտնվեց։

— Ես զինվորական եմ,— բղավեց նա կատաղի տոնով։

— Ես հիմա քեզ ցույց կտամ, թե ով ես դու,— պատասխանեց ոստիկանապետը ճիպոտը շարժելով նրա դեմքի առջև։— Դուք՝ երկո՛ւսդ, հանեք սրա հագից այս համազգեստը, որը նա խայտառակում է։

Ոստիկանները մտածում էին, թե ինչպես հանեն համազգեստն առանց Վարդանի ձեռքերն արձակելու։

— Պոկե՛ք վրայից,— հրամայեց Մուսթաֆան։— Կտրատեք։

Վարդանը փորձեց դիմադրել, սակայն ապարդյուն։ Ոստիկաններից մեկը բացեց ծալովի դանակը և պատառ-պատառ արեց համազգեստը։ Նրանք հանեցին նաև կոշիկները։ Վարդանը մնաց ներքնազգեստով։

— Ահա,— քմծիծաղ տվեց ոստիկանապետը։— Դու քեզնից այլևս ոչինչ չես ներկայացնում։

Վարդանը դողում էր զսպված կատաղությունից, իսկ հարցաքննության հետագա ընթացքը նրան վախ էր ներշնչում։ Սակայն նա պահպանում էր հանդարտությունը և նույնիսկ հարցրեց հանդուգն տեսքով.

— Կարո՞ղ եմ գոնե իմանալ, թե ինչում են ինձ մեղադրում։

— Նրանում, որ այն ես, ինչ որ կաս՝ գյաուր։

Ոստիկանապետն այդ բառերը ծիծաղով ուղեկցեց։ Հետո նա ասաց իր մարդկանց.

— Դրան լավ բռնեք։

Ոստիկանները բռնեցին Վարդանի թևերից և մի քիչ հետ քաշվեցին։

Վարդանի վրա հարվածների տարափ տեղաց։ Դիվական ճարպկությամբ Մուսթաֆան անընդհատ կրծքավանդակի նույն կետին էր հարվածում։ Վարդանը սեղմեց ատամները և դիմացավ ահագնացող ցավին։ Նրա իրանին կարմիր բիծ հայտնվեց, դարձավ այտուց, և շուտով մաշկը բացվեց ճիպոտի հարվածներից։ Ոստիկանապետի բերանը ծռվել էր քմծիծաղից։ Երբ վերքի եզրերին արյուն հայտնվեց, նա դադարեց հարվածել։

— Շուռ տվեք սրան,— ասաց նա ոստիկաններին,- և թևերը բարձրացրեք։

Նրանք կատարեցին հրամանը, և Վարդանը ստիպված էր ոտքերի մատներին կանգնել, որպեսզի ուսերի հոդերը չխախտվեին։ Ճիպոտը կանոնավոր կերպով իջնում էր նրա մեջքին և գոտկատեղին։ Վարդանը անզուսպ ցանկություն ուներ անպատվելու ոստիկանապետին, սակայն իրեն զսպում էր, հասկանալով, որ դա միայն կխթաներ նրա կատաղությունը։ Նա նաև մտադրություն չուներ ոստիկանապետին հաճույք պատճառել իր տնքոցներով։ Նա իր ուշադրությունը սևեռեց պատին արված արձանագրության տառերից մեկի վրա և պարպեց գիտակցությունը։ Նա կենտրոնացել էր այն բանի վրա, որ ցավ չզգար, և նրան հաջողվում էր արիաբար դիմանալ։ Նա գրեթե բթացած վիճակում էր, նրա գիտակցությունը երկատվել էր, կարծես ձաղկվողն ինքը չլիներ։ Նրա միակ մտահոգությունը չբղավելն էր։ Սակայն կորցնելով դիմադրելու կարողությանը՝ նա տնքաց։ Ոստիկանապետը հրճվանքի ճիչ արձակեց և դադարեց հարվածել։ Վարդանի մեջքին տասնյակ վերքեր էին բացվել։

Մուսթաֆա Ռահմին մի կողմ նետեց ճիպոտը և շփեց իր հոգնած թևը։

— Սրան տարեք նկուղի խցերից մեկը,- հրամայեց նա։

Ոստիկանները ստիպված եղան բռնել Վարդանին, քանի որ նրա՝ ծնկները դողում էին։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 4

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 10:16-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Հուլիսի 1-ի առավոտը սգո առավոտ էր Սվասի հայության համար: Գիշերվա ընթացքում հայկական համայնքը գլխատվել էր: Համայնքի բոլոր քահանաները, ուսուցիչները, մասնագետները և աչքի ընկնող առևտրականները՝ ավելի քան հինգ հարյուր հոգի, խմբված էին բանտի խցերում, որտեղից ազատել էին քրեական հանցագործներին: Իսկ ատաղձագործները կախաղաններ էին կանգնեցնում քաղաքապետարանի հրապարակում:

Վեց հոգու համար նախատեսված բանտախցում Տեր Խորենը համոզում էր իր տասնվեց բախտակիցներին աղոթել և երես չթեքել Աստծուց: Մի հարկ ներքև Զավենը՝ հարուստ հողատերը, լացակումած ձայնով ողբում էր: Նա գիշերային սպիտակ շապիկով էր, քանի որ նրան գիշերվա կեսին անկողնուց էին հանել և թույլ չէին տվել հագնվել: Նրա անվերջ մենախոսությունը նյարդայնացնում էր վարսավիր Արային, սակայն նա ոչինչ չէր ասում: Նրան ձերբակալելու եկած ոստիկանները բռնաբարել էին նրա կնոջն ու տասնչորս տարեկան դստերը իր աչքի առաջ, և ականջներում դեռևս հնչում էին նրանց ճիչերը:

Այդտեղից քիչ հեռու, ոստիկանության լուսամուտ չունեցող զնդանում Շիրակ Թևոնյանը հանգիստ մահվանն էր սպասում: Նրա միակ ցանկությունն էր, որ այն շուտ վրա հասներ և իրեն ազատեր այրվածքների պատճառած անտանելի տանջանքներից: Նա չգիտեր, որ ընդամենը երեք խուց այն կողմ, մի խուրձ հարդի վրա անգիտակից վիճակում պառկած էր Վարդանը:

Գիշերային խռովությունը և հատկապես ձերբակալությունները քննարկման նյութ էին դարձել շուկայում, ուր առևտուր գրեթե չկար: Այն մարդիկ, ովքեր դեմ էին իշխանությունների վարքագծին, զգուշաբար լռում էին, իսկ մեծամասնությունը ուրախությամբ էր ընդունել այդ ձերբակալությունները: Զորքը քաղաք էր մտել, տեղահանությունն անխուսափելի էր թվում, և ոմանք դա դիտարկում էին որպես հարստանալու միջոց: Քանի որ այդ լքված հողերը, դատարկված տները, կահույքն ու անասունը ի վերջո որևէ մեկի բաժինը պետք է դառնային:

Յուրաքանչյուր հայկական օջախում ողբում էին հոր, որդու, քեռու կամ քեռորդու ձերբակալությունը: Այդ կախաղանները, որ շտապ

կերպով կանգնեցնում էին... Կարծես այդ ամենը քիչ էր, հիմա էլ զինվորները ծեծում էին բոլոր դռները և տանում էին առողջ տղամարդկանց, նույնիսկ տասնչորս տարեկան տղաներին, աշխատանքային գումարտակներ կազմավորելու համար: Ասում էին, որ շրջանի ճանապարհներն ու կամուրջները վերանորոգման կարիք ունեին: Ոչ ոք չէր խաբվում, և ամենուր կարելի էր ականատես լինել հրաժեշտի սրտաճմլիկ տեսարանների: Կանայք, լացելով, նայում էին, թե ինչպես էին զինվորների ուղեկցությամբ հեռանում տղամարդիկ:

Բազմաթիվ երիտասարդներ, իրավամբ վախենալով վատթարագույնից, գիշերով լքել էին քաղաքը: Նրանք ապաստանել էին Սվասի հարավ-արևելքում ընկած լեռներում կամ էլ միացել էին Շիրակի ջոկատից մնացած խմբին: Դրանք իրենց առաջնորդի կորստից ապակողմնորոշված մոտ հարյուր հիսուն տղամարդ էին: Նորեկները դեռևս գործունեության ծրագիր չունեին և տոգորված էին ընդամենը վրեժխնդիր լինելու ցանկությամբ, ինչպես նաև լքված ընտանիքներին օգնության գալու հույսով: Տասնյակներով նրանք երդում էին տալիս և ֆիդայի էին դառնում: Նրանք պատրաստ էին ամեն ինչի: Նրանց պակասում էր միայն զենքը:

Թովմասը մղձավանջից արթնացավ: Նա հարդարում էր Հուր Կրակին: Հանկարծ նժույգը բռնեց Թովմասի օձիքից և նրան նստեցրեց իր մեջքին: Տեղից արագ պոկվելով, նա գետին տապալեց Վարդանին, Մարոյին ու Ազնիվ խանումին, որոնք փորձում էին նրան կանգնեցնել: Թովմասը բղավում էր, սակայն չէր համարձակվում վայր ցատկել ձիու վրայից: Հուր Կրակը խրխնջաց, սակայն այդ խրխնջոցը ծիծաղի էր նման: Նա մեկ թռիչքով սարեր էր հաղթահարում, ցատկում էր հեղեղատների վրայով: Նա Թովմասին այնքան հեռու էր տարել, որ նա այլևս չէր կարող իր տունը գտնել: Նրանց առջև հրե պատ հայտնվեց, և ձին նետվեց կրակի մեջ: Թովմասը արթնացավ և նստեց մահճակալի մեջ: Նա դեռ զգում էր ծխի հոտը, որից նրա քիթը ծակծկում էր: Նա գլուխը թափ տվեց վատ երազը վանելու համար:

Առավոտ էր: Սակայն հայրն ասել էր, որ ճամփա էին ընկնելու գիշերով: Երեխան վազեց լուսամուտի մոտ: Շատ ցածր ու թափանցիկ ամպերը պատել էին քաղաքը, մինչդեռ այլուր երկինքը կապույտ էր: Ծխի հոտ էր գալիս: Այս ժամին արոտավայրում լինելուն սովոր կովերը բառաչում էին գոմում: Ինչ-որ բան էր պատահել: Թովմասը համոզվեց, որ ծնողները ննջարանում չեն, և վազելով ցած իջավ: Խոհանոցից ձայներ էին գալիս: Երբ Թովմասը սենյակ մտավ, զրույցն ընդհատվեց: Մայրն ու տատը դեմ դիմաց նստած էին խոհանոցի սեղանի մոտ: Նրանք հոգնած տեսք ունեին, իսկ աչքերը կարմրած էին: Առանց ողջունելու Թովմասը հուզված հարցրեց.

— Ո՞ւր է հայրիկը:

Խնայե՞լ նրան: Ուշ թե շուտ իրենք ստիպված էին լինելու ճշմարտությունն ասել: Ժամանակ ձգելու համար Մարոն փորձեց նրան գրկել: Երեխան լարվեց և դիմադրեց:

— Ո՞ւր է հայրիկը։

Մարոն ջանաց հանգիստ ձայնով խոսել.

— Նրան ձերբակալել են։ Ինչպես Տեր Խորենին։

— Ինչո՞ւ,– բացականչեց Թովմասը՝ փարվելով մորը։

— Նրան շուտով կազատեն, ես համոզված եմ։

Երեխայի ձայնը դողում էր.

— Նա բանտո՞ւմ է։

— Անկասկած։

— Ես չեմ ուզում,— հոգոց հանեց երեխան ու լաց եղավ։

Մարոն գլուխը հպեց որդու գլխին և սկսեց նրան օրորել։

Ազնիվ խանումը հեռացրեց աչքերը։ Նրա սիրտը չէր դիմանում Թովմասի վշտին։ Նա ուզում էր դուրս գալ խոհանոցից, սակայն իրեն ստիպեց նստած մնալ սեղանի մոտ։ Նա պետք է լիներ իր դստեր կողքին՝ ուժեղ ու վստահելի, որպեսզի նա տեղի չտար։ Քանի Մարոն մխիթարում էր Թովմասին, Ազնիվ խանումը մեղրով բրդուճ սարքեց երեխայի համար։

— Պետք է ուտես,– ասաց նա՝ սեղանին մի սպասք դնելով։

Թովմասը գլուխը թափ տվեց, իսկ տատը պնդեց.

— Պետք է ուժ հավաքես։ Երբ հայրդ վերադառնա, դու պետք է առողջ և առույգ լինես։

— Մեծ մայրդ իրավացի է,– հայտարարեց Մարոն՝ Թովմասին սեղանի մոտ նստեցնելով։– Ես էլ կուտեմ։

Այդքան հորդորներից հետո Թովմասը կծեց բրդուճը։ Նա դժվարությամբ էր կուլ տալիս։ Հոր բանտարկությունը, որն այդքան մեծ էր և այդքան ուժեղ, նրան աներևակայելի էր թվում։ Ինչո՞ւ։ Նա օգնում էր բոլորին, և բոլորը նրան հարգում էին։ Նա առաջնորդ էր, մայր։ Նրանք իրավունք չունեին Վարդանին բանտարկելու։ Դուրս գալով զնդանից՝ նա կպատժեր ձերբակալողներին։ Այդ միտքը նրան մի քիչ հանգստացրեց։

Կովերն անդադար բառաչում էին։ Ձիերը խրխնջացին, ու Թովմասը հիշեց իր երազը։ Նա համարեց, որ ավելի լավ էր այն չպատմել։

— Անասունները ծարավ են,– ասաց Մարոն։– Արի, Թովմաս, գնանք նրանց խնամենք։

Դա կզբաղեցներ երեխային և հատկապես կցրեր Մարոյի տագնապը։ Մարգերի վրա կռացած՝ Ջեյնաբն ու Ջամիլան քաղհան էին անում բանջարանոցում։ Մարոն նրանց պատվիրեց ջուր հանել ջրհորից և ախոռ բերել։ Երբ Թովմասը Կայծակին տեսավ, շատ զարմացավ։ Նա

լրիվ մոռացել էր պոնիի մասին։ Շոյելով կենդանուն՝ Թովմասը հիշեց, թե ինչպիսին էր հայրը նախօրեին՝ պոնին նվիրելու պահին և առավոտյան, երբ նա ծառս էր անում իր ձիուն աշխատանքի գնալուց առաջ։ Հիշելով իր վատ երազը՝ Թովմասը զգուշավոր հայացք գցեց Հուր Կրակի վրա և չմոտեցավ նժույգին։

Կենդանիներին ջուր տալուց և մսուրքը խոտով լցնելուց հետո, Մարոն ախոռում մնաց։ Նա խոզանակով մաքրեց իր զամբիկին և մի պահ մոռացավ որդու ներկայությունը։ Նա կարող էր մտածել միայն Վարդանի մասին։ Իբրահիմի այցելությունից ի վեր Մարոն նրան տեսնում էր զնդանում փակված։ Իսկ այժմ նա հիշեց իրենց զբոսանքը նախորդ շաբաթվա ընթացքում։ Նրանք ձի հեծած սլանում էին Հալիսի հովիտը երիզող բլուրներով։ Թովմասին թողել էին Ազնիվ խանումի խնամքին և նրանց թվում էր, որ իրենք իրենց ամուսնության սկզբնական շրջանում էին, երբ կարող էին անձնատուր լինել կրքին ցանկացած պահի։

Նա պարզորոշ մտաբերեց ձիերի դոփյունը, խոտի բուրմունքը, շլացնող լույսը, կարմրավուն ժայռերի տապը։ Նա հիշեց նաև իրեն պատած հույզը, երբ Վարդանը սրընթաց հետապնդում էր իրեն։ Նա հեշտությամբ կարող էր Մարոյին հասնել, սակայն նրան հաճույք էին պատճառում փախուստն ու հետապնդումը։ Էգ, որին հետապնդում էր իր արուն։ Քրտնած ու գրգռված Մարոն նետվեց հեղեղատը, որտեղով հոսում էր գրեթե չորացած գետակը։ Վարդանը, գիրկը բացելով, մոտեցավ Մարոյին, նրա աչքերն այրվում էին։ Ափին աճող կաղնուտում նա տիրացավ Մարոյին։ Հետո նրանք ևս մեկ անգամ երդվեցին սիրել միմյանց հավիտյան...

Մարոն ճակատը դրեց զամբիկի կողքին։

— Դու լացո՞ւմ ես, մայրիկ,– անհանգստացավ Թովմասը և մորը գրկեց։

— Ոչինչ, պարզապես հոգնել եմ։

– Դու հայրիկի մասի՞ն ես մտածում։

Մարոն լարվեց և երեխայի գլուխը սեղմեց իր կրծքին։

— Այո։ Ես մտածում եմ, թե որքան երջանիկ կլինենք, երբ նա կվերադառնա։

* * *

Մեզից և արտաթորանքից զնդանի խոնավ օդը գարշահոտ էր։ Խցի անկյունում մի խսիր էր գցված, որի հարդը փտել էր։ Վարդանը քնած էր այդ ներքնակի վրա մեռյալ քնով։ Նա արթնացավ տնքոցով։ Ամենաչնչին շարժումը անտանելի ցավ էր առաջացնում նրա մեջքի մկաններում։ Լիակատար մթության մեջ նա հատակը շոշափեց՝ հույս ունենալով գտնել ջրամանը, որը նրա կարծիքով պետք է լիներ յուրաքանչյուր խցում։ Ջուր չկար։ Նա բռունցքով հարվածեց հաստ փայտե դռանը և սպասեց։ Ոչ ոք

չեկավ։ Միայն մի քանի ժամ անց դուռը բացվեց և լամպի լույսը նրան շլացրեց։

— Ես ծարավ եմ,– ասաց նա անտեսանելի բանտապանին։

Նրա ոտքերի մոտ հագուստի կապոց ընկավ։

— Հագնվի՛ր,– հրամայեց կոպիտ մի ձայն։– Քեզ սպասում են։

Վարդանը վրան քաշեց գորշ կերպասից տձև մի շապիկ և մի տաբատ, որը գոտի չուներ։ Այդ հագուստից քրտնքի ու կեղտի հոտ էր գալիս։ Վարդանն ավելի լավ վիճակում էր, քան արթնանալու պահին, միտքն արթուն էր, իսկ մարմինը վարժվել էր շարժվել՝ խնայելով ցավացող մկանները և վնասված մաշկը։ Նա դուրս եկավ միջանցք, որը լուսավորվում էր առաստաղից տեղ-տեղ կախ տված լամպերով։

— Արագացրո՛ւ,– ասաց երկրորդ պահակը։

Միջանցքի ծայրում սանդուղք կար, սակայն ոստիկանները բանտարկյալին հրեցին այլ ուղղությամբ, ուր կիսաբաց դռան հետևում լուսավորված սենյակ էր երևում։ Առաստաղի գերաններից մեկին ամրացված ճղակները և երեք երկար նստարանները ոչ մի կասկած չէին թողնում մեծ ուղղանկյուն դահլիճի կիրառության վերաբերյալ, դա հարցաքննությունների սենյակն էր։ Վարդանը ներքուստ սարսռաց՝ հիշելով իր առավոտյան հանդիպումը ոստիկանապետի հետ։ Սակայն նրան սպասողը Մուսթաֆա Ռահմին չէր։ Սեղանի մոտ սև կոստյումով գեր մարդ էր նստած և ծխախոտ էր ծխում։ Նա հարմար նստեց աթոռին և երկար նայեց բանտարկյալին խորամանկ ժպիտը դեմքին։ Նա սեղանին դրեց արծաթապատ փոքր ատրճանակը և պահակներին նշան արեց, որ հեռանան։

— Սպասեք դռան հետևում։

Այդ ձայնը ծանոթ էր Վարդանին, սակայն նա չէր կարողանում հիշել տղամարդու դեմքը։ Վերջինս հասկացավ, որ Վարդանն իրեն չի ճանաչել։

— Գանի բեյ,– ասաց նա՝ արտաշնչելով ծխախոտի ծուխը։

Զվարճանալով՝ նա հետևեց այն տպավորությանը, որ գործեց այդ բացահայտումը բանտարկյալի վրա։ Վարդանն այնպես էր ապշել, որ քար կտրեց։ Գանի բե՛յ։ Ներքին գործերի նախարարին անմնացորդ նվիրված անձ, նրա աջ ձեռքը։ Աբդուլ Համիդ II–ի ժամանակ Գանին Կոստանդնուպոլսի ոստիկանապետն էր, և Վարդանը խնդիրներ էր ունեցել նրա հետ։ Իր ձերբակալությունը հիմա հասկանալի էր դառնում։ Նա այլևս կարող էր ոչ մի հույս չփայփայել, և Գանի բեյը հաճույքով հաստատեց Վարդանի այդ միտքը.

— Քո վերջն եկել է, Վարդան Պալյան։

Վարդանն արհամարհական տեսք ընդունեց և չպատասխանեց։

— Գիտե՞ս, թե ինչու եմ ես այստեղ։

— Դուք ուզում եք առաջին շարքերում լինել,- պատասխանեց Վարդանը առանց թաքցնելու իր արհամարհանքը:- Ուզում եք ձեր ռասիստական և մոլեռանդ տեսությունների իրականացման վկան լինել:

Այս խոսքերը Գանի բեյին վիրավորելու փոխարեն շոյեցին նրա ինքնասիրությունը, և նա գլխով արեց:

Նա երազկոտ դարձավ և շշնջաց.

— Ես այնքան երկար եմ սպասել այս պահին...

Երիտթուրքերի հեղափոխությանը նախորդած տարիներին նա հարել էր ազգայնական կազմակերպություններին և ակտիվորեն համագործակցել էր այնպիսի թերթերի հետ, որոնց նպատակն էր տարածել պանթուրանիզմի գաղափարախոսությունը: Եվ այն ժամանակից ի վեր, որ նա կառավարության անդամ էր, երբեք առիթը բաց չէր թողել իր որդեգրած գաղափարները տարածելու համար:

Վարդանի հոգում արթնացան վրդովմունքն ու ատելությունը, և միևնույն ժամանակ նա անսահման հուսահատություն զգաց: Ինքը կորած էր, բայց եթե իրեն գոնե հնարավորություն տրվեր ոչնչացնելու այդ հրեշին, ապա իր մահն ապարդյուն չէր լինի: Նրա հայացքն ընկավ ատրճանակին, որը Գանի բեյը շտապ վերցրեց և ուղղեց բանտարկյալի վրա:

— Գեթ մի շարժում, և ես հաճույքով կկրակեմ:

Կարծելով, որ հասել է իր վերջին ժամը, Վարդանն ուսերը թոթվեց և հանդուգն ձայնով ասաց.

— Այժմ, երբ ես ականատեսն եմ քո հաղթանակի, ի՞նչ ես ուզում ինձնից: Կարծում եմ, որ չես սպասում իմ շնորհավորանքներին:

— Ինչո՞ւ ոչ,— պատասխանեց Գանի բեյը, որի դեմքին լայն ժպիտ հայտնվեց:— Դու խելացի մարդ ես: Դրա վկայությունն է այն, որ դու չփորձեցիր փաստարկել, ապացուցել քո ժողովրդի անմեղությունը, չփորձեցիր հերքել իմ փիլիսոփայությունը:

— Փիլիսոփայությո՞ւն,- փռթկաց Վարդանը հատակին թքելուց առաջ:

Վարդանի խոսքերն անտեսելով՝ Գանի բեյը շարունակեց իր միտքը.

— Դու ծանոթ ես իրավիճակին և հասկանում ես, որ հայերի համար ամեն ինչ վերջացած է: Ոչինչ չի կարող խաթարել պատմության անողոք ընթացքը: Ժողովուրդները հայտնվում են և անհայտանում, ինչպես կայսրությունները, իսկ նրանց փոխարինելու են գալիս ավելի ուժեղ և կենսունակ ազգերը:

— Ես ցանկություն չունեմ քո ճառերը լսելու,- ասաց Վարդանը կտրուկ տոնով:

Գանի բեյը, զարմանալով այդ հանդգնությունից, ափի մեջ սեղմեց ատրճանակը: Մի պահ նա ուզում էր կրակել: Սակայն շտապելու կարիք

չկար։ Նա ծխախոտ վառեց հանգստանալու համար։

— Երբ մեկնում էի Կոստանդնուպոլսից, մեր ներքին գործերի նախարարն ինձ խորհուրդ տվեց, որ ես անեմ ամեն ինչ քեզ չեզոքացնելու համար։ Նա գիտի, որ դու կարող ես խնդիրներ հարուցել։

— Ձեր նախարարը ինձ մեծ պատիվ է անում,— հեգնեց Վարդանը։

— Վերջ տո՛ւր,– բացականչեց Գանի բեյը՝ թափ տալով ծխախոտի մոխիրը։ Նախարարը քեզ հնարավորություն է տալիս կաշիդ փրկելու։ Ես այդքան մեծահոգություն չէի ունենա։

Նա լռեց՝ հնարավորություն տալով բանտարկյալին գիտակցելու իր խոսքերը։ Վարդանը նրան կասկածանքով էր նայում։ Նա գրեթե անտարբեր հարցրեց.

— Ինչի՞ մասին է խոսքը։

— Դու պետք է հոդվածներ գրես օտար թերթերի համար և նամակներ ուղարկես Միացյալ Նահանգներում և այլուր բարձր դիրք գրավող մարդկանց։ Դու նրանց կբացատրես ռազմական գործողությունների թատերաբեմից ազգաբնակչության հեռացնելու անհրաժեշտությունը և կվկայես, որ այդ տեղահանությունները լավ են կազմակերպված, ընթանում են մարդասիրական պայմաններում, կգովերգես այն գյուղերի գեղեցկությունը, ուր տեղահանվածները պետք է բնակվեն։

Վարդանը չկարողացավ ծիծաղը զսպել՝ լսելով այդ անհեթեթությունը.

— Դու լո՞ւրջ ես խոսում։ Թեկուզ մի պահ հավատացե՞լ ես, որ ես կարող եմ համաձայնել նման մեքենայության։

— Դու երբեք անհարմար չես զգացել քո երկիրն օտարների աչքերում վարկաբեկելիս։ Չես ամաչել փնովել կառավարության մեջ ներգրավված քաղաքական գործիչներին և կոչ անել եվրոպական տերություններին խառնվելու կայսրության գործերին։ Ահա քեզ հնարավորություն են տալիս մեղքերդ քավելու։

— Սո՛ւտ է։ Շատ լավ գիտես, որ ես միշտ ցանկացել եմ կայսրության առաջընթացը։

– Կայսրության անկումը, այո՛,– մռնչաց Գանի բեյը և անմիջապես մեղմացավ։ Սակայն մենք ժամանակ չունենք փուչ վեճերի վրա վատնելու համար։ Համագործակցության դիմաց դու և քո ընտանիքը կփրկեք ձեր կյանքը, չհաշված զգալի նյութական օգուտը, որ դու կքաղես։ Իսկ պատերազմից հետո կկարողանաս նոր կյանք սկսել մեկ այլ երկրում, այլ անվան ներքո, կամ էլ մեծ պաշտոն կզբաղեցնես Մեծ Թուրքիայի կառավարությունում։ Բնականաբար քո հավատարմությունը հավաստելու համար պետք է մահմեդականություն ընդունես։

Վարդանը կասկածանքով նայում էր Գանի բեյին։ Արդյո՞ք նա իսկապես սպասում էր, որ ինքը կընդուներ նման առաջարկություն։ Որ կդավաճաներ իր ժողովրդին ու կսակարկեր մի ամբողջ ժողովրդի

բնաջնջումը։

– Ոչ,– պատասխանեց նա։

Մնացած բոլոր խոսքերը նրան ավելորդ էին թվում։

— Այլ ազդեցիկ հայեր չեն վարանի։

— Թո՛ղ նրանք իրենց գամեն անարգանքի սյունին, ես խղճում եմ նրանց։

Գանի բեյը մեկ այլ ծխախոտ վառեց իր դեռևս այրվող ծխախոտից և կանչեց պահակներին, որոնք եկան և կանգնեցին բանտարկյալի կողքին։

Բարձրաստիճան պաշտոնյան շարունակում էր ժպտալ և քաղցր ձայնով ասաց.

— Ես խաղամոլ եմ և քեզ ժամանակ եմ տալիս իմ առաջարկի մասին մտածելու։ Լսել եմ, որ շատ գեղեցիկ կին ունես և մի չքնաղ տղա։ Մտածիր նրանց մասին։ Երեք օրից նրանք կլքեն Սվասը։ Եթե բախտը բերի, քո կինը որևէ զինվորի կամ ավազակի բաժինը կդառնա, իսկ որդիդ կաշխատի որևէ գյուղացու մոտ, որը նրան սոված կպահի։ Այլապես... Ճանապարհը երկար է լինելու և վտանգներով լի... Սակայն քեզ ի՞նչ, այդ ժամանակ դու կիսով չափ փտած կլինես։

Վարդանը գունատվեց, սակայն իրեն զսպեց և չվիրավորեց իր դիմաց կանգնած գեր մարդուն։ Ինքը հնարավորություն ուներ ժամանակ շահելու և իրավունք չուներ այդ հնարավորությունը կորցնելու։

— Ես կմտածեմ,– մրմնջաց նա գլուխը կախելով։

— Խորհուրդ եմ տալիս լավ մտածել։ Եվ շտապիր։

— Կարո՞ղ եմ մի քանի խոսք գրել կնոջս։

— Ոչ։ Համագործակցիր մեզ հետ, և նրան հետ կստանաս։

Գանի բեյը դժվարությամբ ոտքի կանգնեց՝ սեղանին հենվելով և ասաց ոստիկաններին.

— Նրան խուցը տարեք և ուտելիք տվեք։

* * *

Մարոյի սպասումն իսկական տանջանքի էր վերածվել։ Ժամերն անցնում էին հուսահատեցնող դանդաղությամբ։ Փողոցում աղմուկ լսվելուն պես նա նետվում էր լուսամատի մոտ և ամեն անգամ հուսահատություն էր ապրում։ Ինչո՞ւ էր ուշանում գնդապետ Իբրահիմը, ինչո՞ւ նորություններ չէր բերում։ Նախաճաշից հետո Մարոն ուզեց անձամբ գնալ ոստիկանապետի մոտ։ Նրան այդ ծրագրից հետ կանգնեցնելու համար անհրաժեշտ եղավ գործի դնել Ազնիվ խանումի ողջ հեղինակությանն ու Արմենի՝ Իբրահիմ Ալիզադեին գտնելու խոստումը։ Զինվորականը ոչ

տանն էր, ոչ էլ շտաբում, և Արմենը նրան տոմսակներ թողեց։

Հենց այդ պահին գնդապետ Իբրահիմը հանդիպման էր գնացել ոստիկանապետ Մուսթաֆայի հետ, որը նրան հայտնել էր, որ Վարդանը մահվան էր դատապարտվել։ Երբ գնդապետը հարցրեց, թե ո՞րն է մայոր Վարդանի մեղքը, ոստիկանապետը շփոթվեց և շփոթմունքը թաքցնելու համար մի թղթապանակ բացեց։

— Պետական դավաճանություն,– վերջապես հայտարարեց Մուսթաֆա Ռահմին գրեթե խանդավառ ձայնով։

— Դուք ապացույցներ ունե՞ք,– հարցրեց Իբրահիմը, որը գիտեր իր զրուցակցի խարդախության մասին։

— Անկասկած,– բացականչեց ոստիկանը՝ սրտնեղելով հարցից։– Իսկ դա ի՞նչ կապ ունի ձեզ հետ։

— Պալյանը բանակի սպա է։ Ռազմական դատարանը պետք է որ...

Մուսթաֆա Ռահմին նրան ընդհատեց.

— Գործն արդեն նայվել է մայրաքաղաքում։

— Այդ դեպքում, ըստ սահմանադրության, դատապարտված զինվորականը կարող է ներում խնդրել սուլթանից։

— Նա հայ է և ոչ թե զինվորական,— բացականչեց Մուսթաֆան հուսահատված։

Նա ոտքից գլուխ չափեց Իբրահիմին և խորամանկ տեսքով նրան հարցրեց.

— Ասացեք, գնդապետ Իբրահիմ, դուք ի՞նչ եք մտածում գյաուրների տեղահանության մասին։

Գնդապետն իսկույն զգաց ծուղակը.

— Կառավարությունը պետք է որ իմանա, թե ինչ է անում։

Այդ խուսափողական պատասխանից հետո Իբրահիմը հրաժեշտ տվեց ոստիկանապետին։ Նա բոլորովին չէր հավատում դավաճանության այդ պատմությանը։ Վարդանի դատապարտման իսկական պատճառը Մուսթաֆա Ռահմին առանց այդ բանը ցանկանալու բացահայտել էր՝ նա հայ էր։ Գնդապետն իրեն հաշիվ տվեց, որ իր բարեկամին փրկելու հույսը չնչին է։ Միակ հույսն այն էր, որ գեներալ Ֆաքրի փաշան կամք ցուցաբերեր և չենթարկվեր այդ Գանի բեյին, որը հավակնում էր արդարադատության իրականացնել։ Եթե Իբրահիմին հաջողվեր նրան համոզել Վարդանի կողմը բռնել, ապա միգուցե... Հրապարակով անցնելիս Իբրահիմը տեսավ կախաղանները, որոնց վրա առավոտվանից տասնհինգ դիակներ էին կախված ժողովրդին դաս տալու համար։ Նա գիտեր, որ այն հայերը, որոնց քաղաքից դուրս էին տարել ճանապարհներ վերանորոգելու պատրվակով, չէին վերադառնալու։ Այդ տղամարդկանց մեծ մասի դիակներն արդեն կիտված էին մի

հեղեղատում։ Նրանք սպանվել էին գլխին արձակված գնդակներով կամ էլ սվինախողխոդ էին արվել։

Գնդապետը ցավում էր որքան իր երկրի, նույնքան էլ այդ խեղճ մարդկանց համար։ Սահմանների մոտ կուտակված թշնամիների դեմ կռվելու փոխարեն պայքարում էին անմեղ քաղաքացիական անձանց դեմ։ Այդ ամենից ոչ մի լավ բան չէր կարող ստացվել։ Քրիստոնյաներից ազատվելու որոշում ընդունած կառավարությունն այն նույն կառավարությունն էր, որը սադրել էր Բալկանյան պատերազմը, որի զոհը քիչ էր մնում դառնար ինքը՝ Իբրահիմը։ Անօգուտ պատերազմ, որի պարտության խայտառակությունը կառավարությունը բարդել էր բանակի վրա։ Իսկ այսօր նույն նախարարները բռնել էին գերմանացիների կողմը։ Իբրահիմը համարում էր, որ նրանք սխալ դաշնակից էին ընտրել և ինքն իրեն հարց էր տալիս, թե արդյոք որքա՞ն սպա բանակում համամիտ կլիներ իր հետ։

Ի՞նչ էր նա ասելու Մարոյին։ Նա անկասկած սպասում էր ամուսնու ազատագրմանը, և Իբրահիմը չէր ցանկանա նրան հիասթափեցնել։ Լրջորեն մտածելուց հետո նա վճռեց գթասրտորեն խաբել նրան։ Ասել, որ Վարդանն առողջ էր և որ Ֆաքրի փաշան անձամբ զբաղվում էր նրա գործով։ Իրականում ոստիկանապետը մերժել էր Վարդանին տեսնելու Իբրահիմի խնդրանքը։ Ինչ վերաբերում էր Ֆաքրի փաշայի օգնությանը, ապա գնդապետը առաջ էր ընկնում իրադարձություններից, քանի որ գեներալին ինքը հանդիպելու էր միայն երեկոյան։

* * *

Արդեն երկրորդ օրն էր, ինչ Վարդանը բանտում էր։ Նա հենվել էր պատին և կանգնած ուտում էր իր ճաշը՝ կանաչ պղպեղի հետքերով խաշած բրինձ։ Գարշահոտությունից և խոնավությունից առավել նրա համար անտանելի էր մշտական մթությունը։ Նրան թվում էր, որ ինքն անվերջ անքուն մի գիշեր էր անցկացնում։ Ժամանակային չափանիշների բացակայությունը շփոթություն էր մտցնում նրա մտքերի մեջ և անքնությամբ տառապող մարդու պես նա անընդհատ նույն հարցերն էր իրեն տալիս, որոնք անպատասխան էին մնում։ Գանի բեյի հետ իր հանդիպումից ի վեր Վարդանն ամեն վայրկյան սպասում էր, որ իրեն վերջնագիր էին ներկայացնելու՝ համագործակցել կամ մեռնել։

Նա դեռ չէր դատարկել ճաշի ամանը, երբ զնդանի դուռը բացվեց։ Գնդապետ Իբրահիմի աչքերն արտացոլում էին նրա ձեռքի լամպի լույսը։ Նա խուց մտավ զզվանքի ծամածռությանը դեմքին և ասաց իրեն հետևող ոստիկանին.

— Մեզ մենակ թող։ Կգաս, երբ քեզ կկանչեմ։

Երբ նրանք մենակ մնացին, Իբրահիմը լամպը գետնին դրեց և, Վարդանին կրծքին սեղմելով, շշնջաց.

— Իմ խեղճ բարեկամ, այս ինչ գարշահոտ վայրում են քեզ պահում։ Իսկ այս ցնցոտինե՛րը...

Բանտարկության այս պայմանները նրան չէին զարմացնում, քանի որ օսմանյան բանտերի մեծ մասն ավելի վատ վիճակում էր։ Նրան ցնցում էր այն, որ նա Վարդանին էր տեսնում այդ խղճուկ վիճակում։ Նա Վարդանին տեսել էր միայն նրբագեղ հագուստով և հպարտ։ Այս պայմաններում մայորն իրեն պակաս տպավորիչ էր թվում և խոցելի։

— Ես երջանիկ եմ քեզ տեսնելու, Իբրահիմ։ Ինչպե՞ս է իմ ընտանիքը։

— Նրանք լավ են։ Ես երեկ հանդիպել եմ քո կնոջը։ Նա անհանգստանում է քեզ համար, դա հասկանալի է։

Վարդանը հուզվեց և հակառակ սովորությանը չթաքցրեց հուզմունքը։ Նա սեղմեց իր ընկերոջ թևը.

— Քո նվիրվածությունը ջերմացնում է սիրտս։

Իբրահիմը խղճի խայթ էր զգում։ Ոստիկանատուն գալիս նրան թվում էր, որ ինքը ուրախալի նորություն էր բերում իր բարեկամին։ Բանտախցի գարշահոտության և կեղտի մեջ իր բերած լուրն իրեն աննշան թվաց։ Նա Վարդանին ծխախոտ տվեց, մյուսն էլ ինքը վառեց։

— Ես հասա այն բանին, որ քեզ դատեն,- հայտարարեց նա մի քիչ կեղծ ոգեշնչությամբ։

Վարդանը հասկացավ, որ Իբրահիմը շատ էր տանջվել այդ որոշմանը հասնելու համար։ Նա ձեռքը դրեց գնդապետի ուսին.

— Հոյակապ է։ Ի վերջո, ինձ պետք է որևէ բանում մեղադրեն, պետք է ապացույցներ ներկայացնեն, և ես առիթ կունենամ պաշտպանվելու։

Վարդանի ուրախությունն անկեղծ էր։ Այդ դատավարությունը նրան զերծ կպահեր կամայականություններից, և նրա ճակատագիրը կախված չէր լինի միայն Գանի բեյի քմահաճույքից։

— Ինչպե՞ս քեզ հաջողվեց։

— Ես շեշտը դրեցի Ֆաքրի փաշայի ինքնասիրության վրա։ Նա ստիպված է ենթարկվել Գանի բեյի հրամաններին, իսկ դա նրան վրդովում և վիրավորում է։ Ստիպված լինելով զիջել հիմնականում, նա անզիջում եղավ քո հարցում։

— Եվ Գանի բեյը ենթարկվե՞ց,— զարմացավ Վարդանը։

— Պատկերացրու, որ նա գերադասում է գեներալին իր դեմ չլարել։ Գանի բեյը նրա կարիքն ունի...

Իբրահիմը խոսքը չավարտեց։ Քիչ էր մնում նա արտաբերեր «տեղահանություն» բառը։ Վարդանը նրան անհարմար վիճակից հանեց.

— Ես զգացված եմ քո հոգատարությունից, բարեկամս։

Իբրահիմը շփոթված ժպտաց և գրպանից մի շիշ հանեց ու մեկնեց

Վարդանին։ Քանի վերջինս օղի էր խմում, գնդապետը մռայլ ասաց.

— Չխաբվես, դա ռազմական դատարան չի լինելու։ Դատավարությունը կվարի Գանի բեյը, և այն ամենայն հավանականությամբ կարճատև կլինի։ Ես դրան կմասնակցեմ որպես դիտորդ բանակի կողմից, սակայն չեմ կարողանա որևէ էական բան անել քեզ համար։

Վարդանը ծամածռվեց։ Մի պահ նրան համակած հույսը անհետացավ։ Իբրահիմը ուզեց մեղմել իր վերջին բառերի բարոյալքող ազդեցությունը.

— Դատավարությունը կարևոր չէ, կարևոր է այն, որ մենք ժամանակ կշահենք։

— Ժամանա՜կ,– բացականչեց Վարդանը, չկարողանալով թաքցնել հիասթափությունը։– Դրանից ի՞նչ է փոխվելու։

— Ամեն ինչ։ Գանի բեյը շրջագայում է։ Երբ նա կհեռանա գավառից, Ֆաքրի փաշան կկարողանա պահանջել, որ քեզ տեղափոխեն զինվորական բանտ, իսկ հետո՝ քեզ ազատել։ Հակառակ դեպքում ես կփորձեմ կազմակերպել քո փախուստը, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ ողջ մնաս։

— Ինձ հենց դա է պետք,– պատասխանեց Վարդանը գրեթե հարձակողական տոնով։– Սակայն դա ինձնից կախված չէ։

Լամպի լույսը տատանվում էր։ Վարդանը լուռ նայեց իրենց երկուսի ստվերներին, որոնք, ձգվելով պատի վրայով, անցնում էին առաստաղին։ Պատի վրա արաբերեն արձանագրություններ կային։ Մի առնետ վազելով անցավ խցի առվով, որը գտնվում էր նկուղի մի ծայրում։ Չնայած իր պատրաստակամությանը, Իբրահիմը Վարդանին ոչ մի որոշակի բան չէր կարող առաջարկել։ Վարդանը պետք է կառչեր անորոշ հույսերից։ Նա իր բարեկամին հայտնեց Գանի բեյի առաջարկության մասին։ Վրդովվելու փոխարեն Իբրահիմը դրանում հույս տեսավ Վարդանի համար.

— Եթե դատավարությունը վատ ավարտվի, համաձայնիր։

Վարդանը ցնցվեց։

— Դո՛ւ, պատվի մարդ լինելով, ուզում ես, որ ես դավաճանե՞մ իմ ժողովրդին։

— Իհարկե ո՛չ,– արդարացավ Իբրահիմը։– Ձևացիր, երկարաձգիր ժամկետները։

— Էլի ժամանա՞կ շահեմ։

Վարդանը դա ասաց դառը հեգնանքով, որի համար անմիջապես ափսոսաց։ Նրա տոնը նորից մտերմիկ դարձավ, սակայն նրա ձայնում հուսահատություն էր զգացվում։

— Ոչ, Իբրահիմ։ Նույնիսկ եթե այնքան վախկոտ լինեի, որ Գանի բեյի

հետ համաձայնության գայի, դա ինձ չէր օգնի։ Հենց որ ստորագրեի նրա ուզած վոստաթղթերը, նա կվերացներ ինձ որպես անհարմար վկայի։

Իր բարեկամի պարտվողական դիրքորոշումը տխրեցրեց Իբրահիմին։ Նա Վարդանին համարում էր գործունյա և վճռական մարդ, որն արագ էր որոշումներ ընդունում։ Որոշումներ ընդունել... Ինչպե՞ս և ինչի՞ դեմ։ Մայորն իրավունք ուներ ապագային հոռետեսորեն նայելու։ Քանի որ Վարդանը գուշակում էր գնդապետի մտքերը, ապա նա հարցրեց.

— Ինչպիսի՞ն է մնացած բանտարկյալների վիճակը։

Իբրահիմը մռայլ նայեց Վարդանին, սակայն նրա ձայնը հաստատուն մնաց.

— Նրանց կախաղան են հանում։ Օրը երեսուն հոգու։

— Տեղահանությունը ե՞րբ է սկսվելու։

— Կարծեմ վաղը չէ՝ մյուս օրը։

— Իսկ իմ դատավարությո՞ւնը։

— Վաղը։

Վարդանը դիպավ նրա թևին.

— Եթե ինձ բան պատահի, դու հոգ կտանե՞ս Մարոյի ու Թովմասի մասին։

— Իհարկե, սակայն մենք դրան դեռ չենք հասել։

Նրանք գրկախառնվեցին և երկար այդպես մնացին։ Հետո Իբրահիմը ուժգին դուռը ծեծեց.

— Հե՛յ, բացե՛ք։

Նա գետնից վերցրեց լամպն ու ասաց.

— Ես թողնում եմ խմիչքն ու ծխախոտը։ Ալլահը քեզ պահապան։

— Քեզ նույնպես, Իբրահիմ։

Դուռը փակվեց, ու Վարդանը նորից ընկղմվեց հեղձուցիչ մթի մեջ։ Միայնության զգացումն այլես այդքան ճնշող չէր, որքան Իբրահիմի այցելությունից առաջ։ Այդուհանդերձ, այժմ նա պարզորոշ զգում էր իրեն և Մարոյին բաժանող հեռավորությունը։ Հեռավորություն, որը չէր չափվում մետրերով կամ քայլերով, այլ ժամերով և օրերով։ Եվ նա զգաց, որ այդ ժամանակը սպառվելու փոխարեն երկարելու էր, եթե իհարկե վաղվա դատավարությունը դրան վերջ չտար։ Այս կամ այն ձևով...

* * *

Ազնիվ խանումը, տեսնելով թուրքական տարազ հագած Մարոյին

սանդուղքի ներքևում, բարձր ճիչ արձակեց, քանի որ նա գուշակեց դստեր մտադրությունը։

— Ոչինչ չասեք,- հայտարարեց Մարոն վստահ ձայնով։

Ազնիվ խանումը բռնեց նրա ձեռքը։ Մարոն դարձավ մորը և ավելացրեց.

— Իսկ եթե ձեր ամուսնուն երեք օր շարունակ բանտում պահեի՞ն։

Մարոյի ձայնից և հայացքից մայրը հասկացավ, որ վիճաբանությունն անիմաստ է։ Նա ասաց.

— Ես քեզ կուղեկցեմ։

— Ոչ։ Ես ինձ ավելի հանգիստ կզգամ, եթե դուք մնաք Թովմասի հետ։

— Գնա Արմենի հետևից։

— Այդպիսով ես ճանապարհը կերկարացնեմ, իսկ դրա իմաստը չկա։

Մարոն գնաց դեպի ախոռը։ Ազնիվ խանումը կրնկակոխ հետևում էր նրան։ Մայրը չափազանց անհանգստանում էր դստեր համար, սակայն նա շատ լավ էր հասկանում նրա հոգեվիճակը՝ նրա ձեռնարկման դեմ ընդվզելու համար։ Եթե դա պատահեր Հակոբի հետ, ինքը նույն բանը կաներ։ Ինչպես և Մարոյին, Վարդանի դատավարությունը նրան ոչ մի հույս չէր ներշնչում։ Այս երկրի դատավարությո՛ւնը... Հատկապես այս խառը ժամանակներում։ Ամեն օր Ազնիվ խանումը վախենում էր, որ կարող էին գալ և հայտնել, որ Վարդանն այն մարդկանց թվում էր, որոնց կախաղան էին հանել լուսադեմին։

— Եթե գոնե գավառապետ Մումթազ բեյը ողջ լիներ,- հառաչեց նա։- Ոստիկանապետը նենգ մարդ է, իսկական չախկալ,- շարունակեց նա չարացած ձայնով։- Խոսելիս զգույշ եղիր։

Մարոն վարգաձիուն հետ-հետ էր քշում դեպի ձգանը։ Նա առանց ընդհատելու աշխատանքը պատասխանեց.

— Ես նրա մոտ չեմ գնում։ Գնդապետ Իբրահիմը հիշատակեց ոմն Գանի բեյի, որն իջևանել է գավառապետի նստավայրում։ Նա կարծես թե բարձրաստիճան պաշտոնյա է։

— Ես կաղոթեմ Աստծու Որդուն, որպեսզի նա քեզ հուշի այնպիսի խոսքեր, որոնք նրան կհուզեն։ Սակայն դու առանց վարանելու նրան խոշոր գումար առաջարկիր։

Մարոն զնգզնգացրեց քսակը, որը թաքցրել էր իր լայն զգեստի տակ։ Դստեր շրջահայացությունը վստահություն ներշնչեց Ազնիվ խանումին, քանի որ նա կարծում էր, որ Մարոն լուրջ կերպով չէր մտածել իր ծրագրի մասին։ Մնում էր, որ նա ապահով տեղ հասներ։

— Աղջիկներից մեկին գոնե հետդ վերցնեիր։ Այդ դեպքում քո զգեստափոխությանն ավելի հեշտ կհավատային։ Իրեն հարգող մահմեդական կինը մենակ տնից դուրս չի գալիս։

Այս առարկությունն արդարացի էր, և Մարոն իր հետ վերցրեց Զեյնաբին։ Դարպասից դուրս գալուց առաջ նա դեմքի ստորին մասը ծածկեց փարաջայով, որը հնարավորություն էր տալիս կռահելու նրա դիմագծերը և էլ ավելի հանելուկային էր դարձնում նրա գեղեցկությունը։ Ազնիվ խանումը նրան գրկեց և կրծքին սեղմեց.

— Զգույշ եղիր։

Մարոն կառք բարձրացավ և նստեց Զեյնաբի կողքին։

— Ես կկարողանամ գործը գլուխ բերել։

Դարպասը փակելով՝ Ազնիվ խանումը երեք անգամ խաչակնքեց։

Հայկական թաղում ճնշող հուսահատություն էր տիրում։ Տղամարդկանց բացակայության պատճառով բոլոր ընտանիքները փակվել էին իրենց տներում։ Հազվադեպ անցորդները՝ հիմնականում ծեր մարդիկ, ողբերգական տեսք ունեին։ Տեղ-տեղ թուրք առևտրականները, անտեսելով կառավարության հրամանը, ապագա տեղահանվողներից կահ-կարասի էին գնում և վճարում էին դրանց արժեքի քսաներորդ, երբեմն հարյուրերորդ մասը։ Ոստիկանները պարեկում էին թաղամասը։ Նրանցից և ոչ մեկը չկանգնեցրեց Մարոյի կառքը, և նա կարողացավ առանց դժվարության հասնել մինչև գավառապետի նստավայրը։ Մարոն կառքը կանգնեցրեց ներքին բակում և Զեյնաբին թողեց այն հսկելու։ Քողն ուղղելով, նա մոտեցավ գլխավոր մուտքի մոտ կանգնած ոստիկանին։

—— Ես ժամադրված եմ Գանի բեյի հետ։

Ոստիկանը մատնացույց արեց նախասրահը.

— Մոտեցեք քարտուղարին, խանում։ Ձախից երկրորդ դուռը։

Մարոն նախասրահ մտավ առանց դուռը թակելու, և իր գրասեղանին կռթնած ու երազների գիրկն ընկած քարտուղարը վեր թռավ։ Նրա ձախ այտին, որը շուրջ կես ժամ հենված էր ձեռքին, կարմիր հետք էր մնացել։ Նրա նեղ ճակատին երեք կնճիռ կար, հոնքերը խիտ էին, իսկ կոպերն այտուցված։

— Ի՞նչ եք ուզում,- հարցրեց նա խիստ տեսքով։

— Ես ուզում եմ տեսնել Գանի բեյին։

— Անհնար է։ Նա աշխատում է և ոչ մեկին չի ընդունում։

— Բարի եղեք զեկուցել իմ մասին։ Մենք կտեսնենք։

Քարտուղարը գլխով բացասական նշան արեց։ Դեպի բակը նայող լուսամատի մոտ աթոռ տեսնելով, Մարոն նստեց և ասաց.

— Այդ դեպքում ես պետք է այնքան սպասեմ, մինչև նա դուրս կգա ճաշելու։

— Խանում, չի կարելի,— խնդրեց նա։— Դուք պետք է հեռանաք։

Մարոն, կրկնօրինակելով նրա շարժումը, գլխով ոչ արեց։ Տղամարդը հառաչեց և սկսեց կարգի բերել գրասեղանը։ Նա պարզապես փաստաթղթերը տեղից տեղ էր տեղափոխում, ձևանալով, թե կարդում էր։ Նրա մի քիչ լարված շարժումներից կարելի էր կռահել, որ նա նյարդայնանում էր։ Տասը րոպե անց Մարոն մոտեցավ և թանաքոտ ծծանին մի ոսկե դրամ դրեց։

— Փորձեք այնպես անել, որ նա ինձ ընդունի։

— Տեսնեմ, թե ինչ կարող եմ անել,— ասաց նա դրամը գրպանը դնելով։— Ո՞ւմ մասին պետք է զեկուցեմ։

— Մայոր Վարդանի կնոջ մասին։

Գանի բեյը Մարոյին ընդունեց հյուրասենյակում, որի լուսամուտները արևից պաշտպանված էին դրսում աճող լորենիներով, և դրանից մարմարյա պատերը կանաչ երանգ էին ստանում։ Թախտին բազմած Գանի բեյը նմանվում էր հաստլիկ բուդդայի։ Կապույտ մետաքսից կարված նրա տնային զգեստը լայն բացված էր նրա ճերմակ և անմազ կրծքին։ Նա տեղից չշարժվեց, երբ Մարոն մոտեցավ, և իր այցելուին նայեց ոչինչ չարտահայտող հայացքով։

Բազմոցի կողքին կանգնած էր տասը տարեկան մի տղա հովհարը ձեռքին և հով էր անում Գանի բեյին։ Տղան սև և գանգուր մազեր ուներ, հագի լայն շալվարը փոթերով հավաքված էր կոճերին։ առանց հրամանի նա հովհարը վայր դրեց և հեռացավ վարագուրված դռնով։

Դանդաղ շարժումով Գանի բեյը ցույց տվեց խունացած ծածկոցով բազկաթոռը։ Սենյակում զգացվում էր հաշիշի բնորոշ հոտը։ Թախտի մոտ ցածր սեղան կար, որի վրա դրված էին փոքր ծխամորճը, բյուրեղապակյա մի ջրաման, մրգեր և լոխում։ Մարոն նստեց և դեմքը բացեց։ Ցանկանալով գործի դնել իր բոլոր բարեմասնությունները՝ Մարոն տնից դուրս գալուց առաջ շպարվել էր։ Գանի բեյը նրան շատ գեղեցիկ համարեց և ափսոսաց, երբ նա քողն իջեցրեց, քանի որ դա դժվարացնում էր իր գործը։ Կանայք նրան բոլորովին չէին գրավում, սակայն նա նրանց բոլորին նմանեցնում էր իր մորը, որին պաշտում էր, և նրանց ներկայությամբ նա կորցնում էր իր կարողությունների մի մասը։ Նա շշնջաց.

— Հուրի՛... Դուք իսկական հուրի—փերի եք։

Նա սխտոր էր բուրում, իսկ գլուխը Մարոյին խոզի գլուխ հիշեցրեց։ Եվ իրենց բոլորի կյանքն ու մահը այդ ճարպագնդի ձեռքում էր։ Նա անսահման զզվանք էր հարուցում Մարոյի հոգում, որը չնայած դրան շարունակում էր համեստորեն ժպտալ։ Իսկ Գանի բեյին, որը գտնվում էր հաշիշի ազդեցության տակ, թվաց, որ նա նայում էր իրեն մայրական ջերմությամբ։ Նա ցանկանում էր, որ Մարոն լուռ մնար, քանի որ խոսելուն պես կախարդանքը կցրվեր, քանի որ ինքը կանխավ գիտեր, թե ինչի մասին էր նա խոսելու։

Սրտապնդվելով բարձրաստիճան պաշտոնյայի երանելի տեսքից,

Մարոն սկսեց խոսել.

— Ես շոյված եմ, որ բարեհաճեցիք ընդունել ինձ, Գանի բեյ: Ասում են, որ սուլթանն ականջ է դնում ձեզ, և ես մտածեցի, որ միայն դուք կկարողանայիք ուղղել այն անարդարությունը, որ պատահել է իմ ընտանիքին:

Գանի բեյը հոգոց հանեց և աչքերը կկոցեց: Նա մատնացույց արեց թախտի կողքի տասնանկյուն սեղանը: Մարոն այնտեղ ծխախոտատուփ տեսավ, հրահան և բյուրեղապակյա մոխրաման, որոնք կինը շտապեց տալ Գանի բեյին: Քանի վերջինս ծխախոտ էր վառում, Մարոն շարունակեց մեղմ, սակայն վճռական ձայնով.

— Իմ ամուսնու՝ մայոր Վարդան Պալյանի ձերբակալությունն անարդարացի է: Նրան դատելու են, սակայն այդ դատավարությունն արդարացված չէ:

Ձանձրանալով՝ Գանի բեյը ծխախոտի ծուխը ներս քաշեց, սակայն դա նրան թեթևություն չբերեց: Նրա դեմքը քարացավ, սակայն ձայնը մեղմ էր.

— Եթե նա անմեղ է, ապա նա չպետք է վախենա դատավարությունից:

Մարոն նայեց ուղիղ նրա աչքերի մեջ և ցանկացավ ցույց տալ, որ ինքը հիմար չէր, սակայն չուզեց վիրավորել բարձրաստիճան պաշտոնյային.

— Գուցե կան մարդիկ, որոնք կուզեին նրան վնասել: Աչքի ընկնող մարդը նախանձ է հարուցում: Դուք, այդքան բարձր դիրք գրավելով, այդ բանը բոլորից լավ պետք է որ իմանաք, Գանի բեյ:

Մարոն չգիտեր, որ Գանի բեյն անտարբեր էր շոդոքորթության հանդեպ: Հաշիշի գոլորշին արդեն ցրվում էր, և Գանի բեյը ձանձրացավ այդ հանդիպումից, սակայն նա չբացահայտեց իր անհամբերությունը: Այս կինը նրան հետաքրքրել էր: Զուր էր նա սիրալիր ձևանում, Գանի բեյն զգում էր նրա արհամարհանքը: Բերանը քաղցրացնելու համար նա լոխում կերավ՝ առաջարկելով նաև Մարոյին: Մարոն ձեռքը սրտին սեղմեց, իսկ աչքերը երկնքին հառեց, դա պայմանական շարժում էր, որ անում էին հրաժարվելիս:

— Իմ ամուսինը Իթթիհատի անդամ է եղել և պատգամավոր:

— Գիտեմ...— պատասխանեց Գանի բեյն առանց հետաքրքրություն ցուցաբերելու և դարձավ դեպի վարագույրը:

Նա ծափ տվեց, և լայն շալվարով տղան հայտնվեց.

— Մեզ նարնջի ըմպելիք մատուցիր:

Զրույցը շարունակելու Մարոյի բոլոր փորձերը անհաջողությամբ էին ավարտվում: Նրա համբերությունը հատեց և նա կրկնեց.

— Իմ ամուսինը իրեն հանդիմանելու պատճառ չունի:

Տղան նրանց հյութ մատուցեց նուրբ նախշերով զարդարված մեծ

բաժակներով։

— Ձեր կենացը, խանում։

— Ձեր կենացը, Գանի բեյ։

Այս շինծու քաղաքավարությունը հուսահատեցնում էր Մարոյին։ Նա գիտեր, որ Վարդանը բանտում էր այդ մարդու պատճառով, և ինքն էլ գիտեր, որ Մարոն տեղյակ էր դրան։ Մարոն բաժակը վայր դրեց և առանց վարանելու հարցրեց.

— Ինչո՞ւմ են նրան մեղադրում։

Գանի բեյը ուսերը թոթվեց և խուսափողական պատասխան տվեց.

— Ճշգրիտ չգիտեմ։ Կարծեմ, դավաճանություն։

— Դա անհեթեթություն է,—— բացականչեց Մարոն։— Վարդանը միշտ եղել է Նորին պայծառափայլություն սուլթանի հավատարիմ հպատակը։

Տղամարդու հայացքում հեգնանք հայտնվեց.

— Իսկ կառավարությանը քննադատող բոլոր այն հոդվածները, որ նա հրապարակել է օտար թերթերում տարիներ շարունակ... Դա հայրենասերի վարքագի՞ծ է, ձեր կարծիքով։

Մարոն շիկնեց.

— Այո՛։ Նա ընդամենը արդարություն և հավասարություն է պահանջել օսմանյան բոլոր քաղաքացիների համար։ Պահանջել, որպեսզի կառավարությունը կատարի իր խոստումները, դավաճանություն չէ։

Գանին թաքցնում էր իր զվարճանքը, տեսնելով կնոջ պոռթկումը։ Նա ակնարկեց.

— Պատերազմի ժամանակ, այո՞։

— Իմ ամուսինը ոչինչ չի գրել նախորդ տարվա աշնանից ի վեր։

— Համաձասպ, Արիս Հակոբովիչ, Քրիս Լուսինյան՝ ահա այն կեղծանունները, որոնց ներքո ձեր ամուսինը հանդես է եկել վերջին ժամանակներս։

Գանի բեյը Մարոյին էր հետևում խորամանկ ժպիտը դեմքին։ Մարոն, առանց շփոթվելու, նույնիսկ եթե Գանի բեյի ասածը ճշմարիտ էր, շարունակեց պաշտպանել Վարդանին։

—— Դա սո՛ւտ է, ահավոր սուտ։

Ի՜նչ երջանիկ էր Մարոն, որ բոլոր վարկաբեկող փաստաթղթերն այրված էին։ Նա ոգեշնչված շարունակեց.

— Վերջին ժամանակներս, ինչպես դուք եք ասում, իմ ամուսինը ծառայել է օսմանյան բանակում։ Նա չի գրել և իր բոլոր ուժերը վատնել է վիրավոր զինվորներին բուժելու վրա։ Թուրք զինվորներին։ Եվ նա այդ

բանը կշարունակեր անել, եթե նրան անարդարացի կերպով չձերբակալեին։

Գանի բեյը նոր ծխախոտ վառեց և ձևացավ, թե մտածում էր։ Նա մտածում էր այն մասին, թե մինչ ուր կարող էր հասնել այս կինը իր ամուսնուն փրկելու համար։

— Ես ընդունում եմ ձեր վկայությունը, խանում։ Բայց, ավա՜ղ, դատավարության ընթացքն ինձնից կախված չէ։

— Ես վստահ եմ, որ դուք չափից ավելի համեստ եք, Գանի բեյ։ Ձեր ասած գեթ մի խոսքը կարող է խնդիրը կարգավորել։

— Դուք պետք է վստահեք արդարադատությանը։

Մարոն զգաց, որ իր ձեռնարկումն անհաջողության էր մատնվում։ Նա իր զգեստի ծալքերից հանեց քսակը և սեղանին դրեց այնպես, որ դրամների զնգոցից զգացվեր դրա ծանրությունը։ Գանի բեյը հոնքերը կիտեց, սակայն Մարոն գիտեր, որ նա ամենևին էլ վրդովված չէր։ Բախշիշը օսմանյան վարչակարգի բարքերի մասն էր կազմում, և ոչ ոք այդ բանը դատապարտելի չէր համարում։ Մյնուամենայնիվ նա ասաց.

— Մի վիրավորվեք, Գանի բեյ։ Սա անկասկած իմ ամուսնու դատավորների համար է, որպեսզի նրանք բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեն։

Գանի բեյը գլխով արեց, կարծես ասեր՝ «կտեսնենք»։ Սակայն Մարոն, չբավարարվելով, ավելացրեց աղերսող ձայնով.

— Միջամտեցե՛ք, Գանի բեյ, ես ձեզ պաղատում եմ։ Թույլ մի տվեք, որ նրան դատեն հիմնվելով զրպարտության վրա։

Հանդարտվելով՝ նա ասաց ավելի հանգիստ ձայնով.

— Իմ ամուսինը կիրթ մարդ է և կարող է անգնահատելի ծառայություններ մատուցել կայսրությանը։ Նա մի քանի լեզու գիտի և շատ կապեր ունի արտասահմանում։

— Մեր թշնամիների ճամբարում...

— Բանակը մասնագետների կարիք ունի, իսկ Վարդանը պատրաստ է կռվել ռազմաճակատում։

Գանի բեյը հետաքրքրությամբ նրան նայեց.

— Ուրեմն դուք նրան այդքան սիրո՞ւմ եք։

Մարոն լարվեց և կրքոտ ձայնով բացականչեց.

— Կյանքիցս ավելի՛։

Այս բառերը պարունակում էին այն, ինչ միշտ անհասկանալի էր եղել Գանի բեյի համար։ Նա ի վիճակի չէր հասկանալու, որ կարելի էր ինչ–որ բան սիրել ավելի, քան սեփական անձը։ Եվ նա երբեմն ափսոսում էր, որ չէր ապրել այդ զգացումը, չնայած ինքը դա թուլության և խոցելիության

նշան էր համարում։ Նայելով Մարոյի տագնապով լի աչքերին, որոնք իրենից օգնություն էին հայցում, նա հիշեց բիբլիական Սողոմեին, որը արել էր ամեն ինչ, որպեսզի գլխատեին մի տղամարդու։ Իր առջև նստած կինը ոչ մի բանի առջև կանգ չէր առնի միայն թե իր տղամարդուն իրեն վերադարձնեին։ Նա համոզված էր, որ եթե ինքը խնդրեր, որպեսզի այդ կինը մերկանար և պարեր իր առջև, ապա նա այդ բանը կաներ, չնայած որ պատվարժան կին էր։ Նվաստության ո՞ր աստիճանին ինքը կարող էր հասցնել այս կնոջը՝ նրա Վարդանին ազատելու խոստման դիմաց։ Եվ նա իրեն երջանիկ զգաց նույնիսկ ամենագեղեցիկ պատանուն սիրելու իր անկարողության համար։ Ով տիրում է իր սրտին, տիրում է աշխարհին։

Մի պահ նա նույնիսկ մտածեց, որ Մարոյին կարելի էր որպես խայծ օգտագործել, որպեսզի նրա ամուսինը համաձայներ համագործակցել իրենց հետ, սակայն առանձնակի չէր արժևորում այդ համագործակցությունը։ Կառավարության քաղաքականությանը սատարող ազդեցիկ հայերի հոդվածների գաղափարը պատկանում էր Թալեաթ փաշային, որը հաշվի էր նստում արտասահմանի կարծիքի հետ։ Ներքին գործերի նախարարի կարծիքով այդ փաստաթղթերը մի օր շատ օգտակար կարող էին լինել պատմությունը կեղծելու համար։ Գանի բեյին դա չէր հետաքրքրում։ Նշանակություն ուներ միայն կայսրության գերագույն շահը և դրան հետամուտ լինելը ազատում էր հետագա բոլոր արդարացումներից։

Ստամոքսը նրան հուշեց, որ մոտենում էր նախաճաշի ժամը, և նա կարճեց զրույցը։ Նա ժպտաց Մարոյին, որը տագնապով իրեն էր նայում.

— Հանգիստ եղեք, խանում, ես կարեցածս կանեմ ձեր ամուսնու համար։

Դա այն նախադասությունն էր, որ Մարոն փափագում էր լսել։ Նա մի պահ հապաղեց, հետո նրա դեմքը լուսավորվեց։ Նա փնտրում էր այն բառերը, որոնք լավագույնս կարտահայտեին իր անսահման երախտագիտությունը։ Բարյացակամ տեսք ընդունելով՝ Գանի բեյը նրան լռելու նշան արեց.

— Խոսքերն ավելորդ են, խանում։ Ձեր պերճախոս դեմքն ամեն ինչ ասում է։ Գնացեք խաղաղությամբ։ Հենց այսօր կեսօրից հետո դուք կիմանաք, թե երբ նորից կհանդիպեք ձեր ամուսնուն, ես սուրհանդակ կուղարկեմ։

Մարոն, այնուամենայնիվ, շնորհակալական խոսքեր ասաց։

* * *

Մոտ ժամը վեցին երեք ոստիկան ներկայացան Պալյանների դարպասի մոտ։ Սասունը բարձրաձայն հաչում էր դռան շեմից։ Ընտանիքը հյուրասենյակում էր Արմենի հետ միասին, որը նոր էր եկել և դեռևս չէր

հայտնել իր այցելության պատճառը։ Մարոն դիմեց աղախիններին.

— Նրանց ներս հրավիրեք,- շտապեց նա ասել Ջամիլային։- Իսկ դու, Զեյնաբ, նրանց համար զովացուցիչ ըմպելիքներ պատրաստիր։ Թովմաս, շանդ տար փակիր։

Գավառապետի պալատից վերադառնալուց ի վեր նա այրվում էր անհամբերությունից և մոր հորդորները այդ այցելության հետ չափից ավելի հույսեր չկապելու մասին ոչ մի ազդեցություն չէին ունեցել։ Նրանք բակ դուրս եկան։ Ջամիլան դեպի դարպասն էր վազում։

— Հայրիկը նրանց հետ չէ,— ասաց Թովմասը հիասթափված ձայնով։

Մարոն բռնեց նրա ուսը.

— Նրանք եկել են մեզ հայտնելու, թե երբ ազատ կարձակվի քո հայրը։

Երբ ոստիկանները ներս մտան, Զեյնաբը նրանց բալի հյութ մատուցեց։ Ենթասպան, զարմանալով, մի պահ տատանվեց բաժակը վերցնելուց առաջ և մեկ շնչով դատարկեց այն։

— Դուք լո՞ւր եք բերել,- հարցրեց Մարոն նրան մոտենալով։

— Սա Վարդան Պալյանի տո՞ւնն է,- հարցրեց ենթասպան՝ համազգեստի գրպանից մի թուղթ հանելով։

— Այո, տվեք, շուտ։

Ձեռքը մեկնած Մարոյին թուղթը հանձնելու փոխարեն նա խնամքով բացեց այն։ Բերանի անկյունի սպիի պատճառով թվում էր, թե անդադար ժպտում էր։

— Ես կկարդամ ձեզ համար,- ասաց նա և կոկորդը մաքրեց.- «Բոլոր հայերին հրամայվում է առանց տարիքի և հասարակական դիրքի խտրականության լքել քաղաքը վաղն առավոտյան։ Յուրաքանչյուր ընտանիքի կառավարությունը տրամադրում է մեկ սայլ և մեկ եզ։ Տեղահանվողները պետք է իրենց հետ տանեն միայն սննդամթերք, հագուստ և որոշ անձնական իրեր։ Տեղահանվողները քաղաքից դուրս կվերախմբավորվեն և շարասյուն կկազմեն, որը կուղեկցեն անվտանգությունն ապահովող ոստիկանները։ Յուրաքանչյուր ընտանիքի ունեցվածքը կառավարությունը կտեղափոխի նոր բնակության վայրը և կհանձնի սեփականատիրոջը»։

— Դուք շփոթել եք հասցեն, սերժանտ,- հայտարարեց Ազնիվ խանումը։

— Ի՞նչ եք ուզում ասել։

— Զինվորականների ընտանիքների վրա այս հրամանը չի տարածվում։ Դուք մայոր Վարդան Պալյանի տանն եք։

Ենթասպան ուսերը թոթվեց.

— Հրամանը նույնն է բոլորի համար։ Դուք պետք է հեռանաք վաղը

մինչ կեսօր, հակառակ դեպքում ձեզ կգնդակահարեն։

— Այստեղ սխալմունք կա,- բացականչեց Մարոն։- Ես տեսել եմ Գանի բեյին և...

Ենթասպան նրան չէր լսում։ Մարոն նրա ձեռքից խլեց թուղթը։ Տեղահանության մասին հրամանը տպագրված էր գորշ թղթի վրա, և ներկը դեռևս չէր չորացել։ Մարոն այն կարդաց հոգեկան հավասարակշռությունը վերականգնելու համար։ Նա հասկանում էր, որ Գանի բեյն իրեն խաբել էր։ Եվ ինչպիսի՜ նենգությամբ։ Նա ճմրթեց թուղթը, գետնին նետեց ու շտապ տուն մտավ։ Նրա ոտնաձայները լսվեցին սանդուղքի վրա։

Թովմասն ուզեց մորը հետևել, սակայն կնքահայրը նրան պահեց։ Ազնիվ խանումը դուրս հրավիրեց զինվորներին՝ պատվիրելով Զեյնաբին.

— Ուղեկցի՛ր նրանց մինչև դարպասը, աղջիկս։

Հեռանալուց առաջ ենթասպան նախազգուշացրեց.

— Լուսաբացին պատրաստ եղեք, թե չէ...

Արմենը բարձրացրեց ճմրթված թուղթը և, կարդալով, հետևեց Ազնիվ խանումին հյուրասենյակ։ Տատն իր մոտ պահեց Թովմասին՝ հորդորելով չգնալ և չանհանգստացնել մորը։

— Նա մի քիչ հետո կիջնի մեզ մոտ։

— Ես հայրիկիս եմ ուզում,- լացեց երեխան։

— Քաջ եղիր, Թովմաս։ Քանի դեռ հայրդ չի վերադարձել, դու տան միակ տղամարդն ես։ Դու պետք է գիտակից լինես և մեզ օգնես։

Թովմասը հոգոց հանեց և գլխով արեց։ Նա վերցրեց պատկերազարդ գիրքը, որը նայում էր մինչ ոստիկանների գալը, սակայն այլևս այն չթերթեց։ Հետևելով Արմենի և տատի բոլոր շարժումներին՝ նա թույլ տվեց, որ Սասունը լիզեր արցունքներից թրջված իր դեմքը։

Արմենն Ազնիվ խանումին ցույց տվեց տեղահանության մասին հրամանը և տխուր ասաց.

— Ես էլ եմ այս թղթից ստացել, դրա համար էի եկել։

— Երեսպա՛շտ,— վրդովվեց Ազնիվ խանումը։— Դա հրաշք կլիներ։ Ես ասում էի Մարոյին, որ ժամանակից շուտ չուրախանար։

Դողացող ձեռքերով նա բացեց քթախոտի իր տուփը, և մի քիչ ծխախոտի փոշի թափվեց նրա սև կիսաշրջազգեստի վրա։

— Ի՞նչ է լինելու մեզ հետ,- հարցրեց նա ընկճված ձայնով։

Արմենը երբեք նրան այդ վիճակում չէր տեսել։

Ազնիվ խանումն իրեն հիրավի ընկճված էր զգում, կարծես նրա կյանքի բոլոր հիասթափություններն ու վշտերը վերստին գլուխ էին

բարձրացրել։ Արմենը նրան շատ լավ էր հասկանում։ Ինքը նույնպես հակել էր ուսերը կյանքի ծանրության ներքո, որն էլ ավելի էր իմաստազրկվում այս նոր դժբախտությունից։ Նա չէր հասցրել պատասխանել, երբ փոքրիկ թրքուհիները տուն մտան լացելով։

— Ոստիկաններն ասացին, որ ձեզ անապատ են տանելու,— բղավեց Զեյնաբը՝ վազելով Ազնիվ խանումի մոտ։

— Եվ որ մենք չենք կարող ձեզ հետ գալ,- ավելացրեց Ջամիլան, որը նույնքան ընկճված էր, որքան իր քույրը։

Նրանք փարվեցին Ազնիվ խանումին։

— Մենք չենք ուզում ձեզնից բաժանվել,- ասաց Ջամիլան հեկեկալով։

Ծեր կնոջ մայրական բնազդն արթնացավ, և նա, կուլ տալով իր վիշտը, այնպես, ինչպես արել էր իր ողջ կյանքի ընթացքում, նորից դարձավ այն անձը, որը մխիթարում ու սիրտ է տալիս։ Նա ձեռքերը դրեց աղջիկների գլուխներին և մեղմորեն ասաց.

— Դե լավ, լավ, աղջիկներ, մի լացեք։ Մենք դեռևս չենք գնացել։

Այս խոսքերն ասելիս նա նայում էր թոռանը, որը դիտում էր այդ տեսարանը սարսափած աչքերով։

— Նրանք ասացին նաև, որ մայորը...

Ազնիվ խանումը ափը դրեց Ջամիլայի բերանին, որպեսզի նա չավարտեր նախադասությունը։ Նա հանդիմանեց աղջկան.

— Քանի անգամ եմ քեզ ասել, որ լեզուդ քեզ պահես։

Աղջիկն է՛լ ավելի դառը լացեց։ Զեյնաբը համբուրեց Ազնիվ խանումի ձեռքը և աղաչեց.

— Մեզ հետ մեր գյուղն եկեք։ Մենք ձեզ կթաքցնենք։

— Կտեսնենք,- պատասխանեց Ազնիվ խանումը հուզվելով։- Տեսեք, Թովմասն իրեն տղամարդու պես է պահում։

Երեխան, որը քիչ էր մնում լացեր, սեղմեց ատամներն ու իրեն զսպեց։ Ազնիվ խանումը զգուշորեն ազատվեց աղջիկների գրկից։ Նրա ձայնը դարձյալ հանգիստ էր և հրամայական.

— Գնացե՛ք և ճաշը պատրաստե՛ք։ Այս ամենի մասին մենք կխոսենք երեկոյան։ Թովմասը ձեզ կօգնի, այդպես չէ՞, տղաս։

Փքված տեսքով նա ժխտական շարժում արեց։ Տատը չպնդեց։ Երիտասարդ թրքուհիները գլխահակ և աչքերը տրորելով հեռացան հյուրասենյակից։

Արմենը լուսամուտից դուրս էր նայում։ Հուզումնալից պոռթկումներն ու զգացմունքների ցուցադրումը նրան դուր չէին գալիս։ Նա դրանից հուզվում էր, իսկ ինքն իրեն արգելում էր զգացմունքային լինել և խնամքով թաքցնում էր իր հոգու նրբությունը։ Նա համարում էր, որ

տարիքի հետ զգացմունքայնությունը վերածվում էր լալկանության։ Թո՛ղ կանայք լացեին, դա նրանց էությունն էր։ Տղամարդը պետք է ժայռի պես լիներ, կամ գոնե այդպիսին թվար, եթե նույնիսկ իրեն անկարող և շփոթված էր զգում, ինչպես ինքն այդ պահին։

— Միգուցե դեռ կարելի՞ է փախչել,- հարցրեց Ազնիվ խանումն անվստահ ձայնով։

— Դուք շատ լավ հասկանում եք, որ նրանք դա կանխատեսել են և քաղաքը շրջապատված է զինվորներով։ Նրանք ճամբարել են նույնիսկ իմ դաշտում։

Ազնիվ խանումը հաասչեց կուրծքը ծեծելով.

— Աստված ի՛մ, Աստված ի՛մ։

Այդ բողոք—ադոթքը նրան հիշեցրեց, որ իրենք փոշու հատիկ են Բարձրյալի ձեռքում, և գիտակից մարդ դառնալուց առաջ նրա հոգում ձևավորված հավատքը նրան հույսով շաղախված խոնարհություն ներշնչեց։

— Սուրբ Գրքում գրված է, որ Տերը մեր հովիվն է։ Քանի որ նա այսպես է ցանկանում, ուրեմն մենք կգնանք ոստիկանների հետ։

— Խոսք անգամ չի կարող լինել, որ ես քաղաքից հեռանամ առանց Վարդանի,- ասաց Մարոն վճռական ձայնով։

Նրանք չէին նկատել նրա հայտնվելը և վեր թռան։ Եթե նույնիսկ իր սենյակում նա լացել էր, ապա դա նկատելի չէր։ Նրա դեմքը քարացել էր, իսկ աչքերը վկայում էին անկոտրում կամքի մասին։ Ազնիվ խանումը, տեսնելով նրա պահվածքը, հասկացավ, որ իրենց բարդություններ էին սպասում։

Թովմասը վազեց մոր մոտ։ Զնայած սովորաբար Մարոն դժվարությամբ էր բարձրացնում որդուն, հիմա նրան գիրկն առավ առանց տեսանելի ջանքի։

— Մի վախեցիր, սիրելիս։ Մենք այստեղ ենք, քո տատիկը, քո կնքահայրը և ես։ Քեզ ոչինչ չի պատահի։

— Ես ուզում եմ, որ հայրիկը վերադառնա,- աղերսեց նա։

— Ես նույնպես, Թովմաս։ Մենք նրան կտեսնենք, խոստանում եմ քեզ։

Նրա ձայնում այնքան վստահություն կար, որ երեխան անվարան հավատաց։

— Դու պետք է քո պոնիին դուրս բերես այգի զբոսնելու։ Նա երևի վարժանքի կարիք ունի։

Թովմասը հասկացավ, որ մեծերն ուզում էին մենակ մնալ խոսելու համար։ Այդպիսի դեպքերում նրան միշտ այգի էին ուղարկում։ Նա դուրս եկավ առանց հակաճառելու, քանի որ ցանկություն չուներ լսելու այն, ինչ նրանք պետք է ասեին։

Ազնիվ խանումը լուսամատից նայեց և համոզվեց, որ երեխան հեռանում էր դեպի ախոռը։

Նա զգուշավորությամբ հարցրեց դստերը.

— Դու ի՞նչ նկատի ունես, երբ խոսում ես «քաղաքը չլքելու» մասին։

Մարոն մի քիչ կտրուկ պատասխանեց.

— Ինձ թվում է, որ ես պարզ արտահայտվեցի։

— Իմ խեղճ երեխա,— հառաչեց Ազնիվ խանումը,— մենք ընտրություն չունենք։

— Ես Վարդանին չեմ լքի։

Մայրը փորձեց նրան համոզել.

— Մարո, շիտակ նայիր փաստերին։ Դու ոչինչ չես կարող անել քո ամուսնու համար։ Իմ կարծիքով Վարդանն ավելի լավ վիճակում է, քան մենք։ Նա օրենքները գիտի և նրա վերադասները բանակում նրան հարգում են։

— Օրենքնե՞րը,– հեգնեց Մարոն։— Այդ երբվանի՞ց է օրենքը պաշտպանում հային։

Ազնիվ խանումը, կորցնելով համբերությունը, բարկացավ, և նրա ձայնը հրամայական դարձավ.

— Եվ ի՞նչ ես դու մտադիր անել։ Փակվե՞լ այստեղ։ Նրանք դուռը կխորտակեն, կամ էլ տունը կայրեն մեզ հետ միասին։ Խելամիտ եղիր, մտածիր որդուդ մասին։ Նա քեզնից բացի այլևս ոչ ոք չունի։

— Մայրի՛կ,– ձայնը բարձրացրեց Մարոն,– ես արգելում եմ ձեզ այդպես խոսել։

— Ես դա չէի ուզում ասել,– ներողություն խնդրեց Ազնիվ խանումը մի քիչ մեղավոր տեսքով։— Համոզված եմ, որ Վարդանն իր գլուխը կազատի։ Սակայն մինչև դա տեղի ունենա...

Արմենը, որը մինչ այդ չէր խառնվում խոսակցությանը, համարեց, որ ժամանակն է միջամտելու.

— Դե լա՛վ, լա՛վ։ Փորձենք դիտարկել իրավիճակը սառնասրտությամբ։

Նա Մարոյին նստելու շարժում արեց, սակայն վերջինս գերադասեց կանգնած մնալ։ Արմենն ասաց.

— Դու ուզում ես Սվասո՞ւմ մնալ։ Ենթադրում եմ, որ մտածել ես այդ ծրագիրն իրականացնելու հնարավորությունների մասին։

— Այո։ Գնդապետ Իբրահիմն ինձ առաջարկել էր ապաստանելու իր տանը։ Ես նրան կհարցնեմ, թե արդյոք առաջարկությունը ուժի մե՞ջ է։

Արմենը ծամածռվեց.

— Դու նրան անհարմար վիճակի մեջ կդնես։ Նրա առաջարկությունից հետո շուկայում հայտարարություններ են փակցվել առ այն, որ մահմեդականներին արգելվում է թաքցնել քրիստոնյաներին։ Նրան կարող են պատժել առանց հաշվի առնելու, որ նա գնդապետ է։

Այդ նկատառումը չսասանեց Մարոյի ինքնավստահությունը։

— Այդ դեպքում մենք կգնանք շվեյցարական մանկատուն։ Թովմասը որպես սան, իսկ ես և մայրիկը որպես աշխատողներ։ Ես շատ եմ օգնել Ռոզլեր քահանային և համոզված եմ, որ նա հաճույքով այդ ծառայությունը մեզ կմատուցի։

— Միգուցե դա ելք է,- ասաց Արմենը մտածելուց հետո։

Ազնիվ խանումը սարսափում էր այն մտքից, որ իրենք կարող էին լինել միակ հայերը Թուրքերով բնակեցված Սեբաստիայում։ Առաջին անգամն էր, որ քաղաքի հայկական անվանումը նրա միտքն էր գալիս։ Հենց այն պահին, երբ այն կորստյան եզրին էր։ Ազնիվ խանումը գերադասում էր հետևել իր հայրենակիցներին գաղթի ճանապարհին։ Նա հանդգնեց ասել անվստահ ձայնով.

— Մարո, դու չպետք է հրաժարվես դիտարկել նաև վատթարագույնը...

Մարոն ուզեց հակաճառել, սակայն Արմենը նրան թույլ չտվեց.

— Թույլ տուր, որ մայրդ խոսի։ Հարկավոր է հաշվի առնել բոլոր հնարավորությունները։

— Ես գիտեմ, որ դա չի պատահի,— խոսքը շարունակեց Ազնիվ խանումը,- բայց ենթադրենք, որ քո ամուսինը... Այդ դեպքում մենք ի՞նչ ենք անելու Սվասում։ Մինչդեռ եթե լինենք մնացածների հետ...

— Մենք կսատկե՛նք,- բացականչեց Մարոն կտրուկ տոնով։

Ազնիվ խանումը դարձավ Արմենին՝ նրանից օգնություն ակնկալելով։ Վերջինս կզակը տրորեց ու հառաչեց.

— Ամեն ինչ գերադասելի է տեղահանությունից, Ազնիվ խանում։

Այս պատասխանը զարմացրեց Ազնիվ խանումին, և նա ասաց.

— Սակայն դուք և Արաքսին գնալու եք շարասյունով։

— Մենք մինչև վերջ չենք հասնի։ Համենայն դեպս իմ կինը։ Մենք դա գիտենք։ Մենք դա ընդունում ենք։ Մենք կօգնենք երիտասարդներին, քանի դեռ ուժ կունենանք։ Մնացածը Աստծու ձեռքին է։

Ծերունու խոսքերը ամրապնդեցին Մարոյի վճռականությունը։ Նա մոտեցավ մորը և հպվեց նրա ուսին։ Նրա վարքագիծն ու ձայնը հոգատար էին։

— Դուք տեսնում եք, մայրիկ, որբանոցը լավագույն լուծումն է։ Մենք Վարդանին մոտ կլինենք։

Լսելով դստեր փաստարկները, Ազնիվ խանումը համոզվում էր։ Մարոն Արմենին խնդրեց իրեն ուղեկցել Ռոզլեր քահանայի մոտ։

— Եթե, իհարկե, ժամանակ ունեք։ Ես չէի ուզենա, որ Արաքսին անհանգստանար ձեր ուշացման պատճառով։

— Ոչ, ոչ։ Որբանոցը երկու քայլի վրա է։ Նույնիսկ կարիք չկա կառքը լծելու։

* * *

Արմենն ու Մարոն գնացին։ Արմենը լայն շալվար էր հագել և գլխակապ, իսկ Մարոն սև չարսավով էր, և նրանք նման էին մահմեդական գյուղացիների։

Ազնիվ խանումը սեղան էր գցում, երբ դրսում աղմուկ լսվեց։ Նա դարձավ դեպի լուսամուտը, սակայն տխիլի թփերը փակում էին տեսադաշտը։ Թովմասը վազելով ներս մտավ.

— Տատի՛կ, տատի՛կ։ Ոստիկաննե՛ր։ Շա՛տ։

Ազնիվ խանումը դուրս եկավ։ Ութ թե ինը ոստիկան կոտրել էին դարպասը և մտել այգի։ Սասունը հաչելով վազում էր նրանց շուրջը։ Նա նետվեց դեպի ամենամոտ կանգնած ոստիկանը և փորձեց նրա ոտքը կծել։ Տղամարդը ոտքի հարվածներով քշեց նրան, և շունը, կլանչելով, դեպի տունը վազեց։ Զինվորները ծիծաղեցին։

— Սասո՛ւն,– բղավեց Թովմասը։– Նրանք Սասունին խփեցին։

Ազնիվ խանումը բռնեց թոռան օձիքից.

— Այստեղ մնա։

Շունը նրանց միացավ դռան շեմին, և Թովմասը նրան շոշափեց, որպեսզի համոզվեր, որ նա վնասվածքներ չուներ։

— Տուն գնա նրա հետ,– հրամայեց Ազնիվ խանումը,– և փակիր դուռը։

Նա դարձավ դեպի զինվորները և, բարկությունից դողալով, հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում։ Դուրս եկեք այստեղից։

Մինչ զինվորները դեպի ախոռն էին գնում, դասակի հրամանատարը մոտեցավ Ազնիվ խանումին։ Նա կանգնեց սանդուղքի տակ, բռունցքները կոնքին և հեգնական հայացքով նայեց ծեր կնոջը։ Ազնիվ խանումը չշփոթվեց.

— Ի՞նչ է սա։

— Դուք ձիեր ունեք։ Դրանք բռնագրավված են։

— Դուք իրավունք չունեք։

— Մենք ունենք բոլոր իրավունքները։ Իսկ ձեզ դրանք այլևս չեն օգնի,— պատասխանեց նա զվարճացած տեսքով։

Նա ծիծաղելով վերադարձավ ծառուղի, որտեղ նրան միացան իր մարդիկ՝ քարշ տալով երկու կովերին և երեք ձիերին։ Անծանոթ ձեռք զգալով՝ Հուր Կրակը փնչացնում էր և ծառս լինում։ Զինվորներից մեկը նրան մի քանի հարված հասցրեց հրացանի կոթով։ Դռան ապակու հետևը կանգնած Թովմասի սիրտը սեղմվեց։ Հուր Կրա՛կ։ Իր հոր սիրելի ձին։ Բացի դրանից, երեխան սարսափեց, երբ տեսավ, որ նրանք տանում էին նաև իր պոնիին՝ Կայծակին։ Նա ուզեց դուրս գալ այդ գողությունը կանխելու համար, սակայն տատը դրսից բռնել էր դռան բռնակը և չէր թողնում բացել։ Թովմասը ոտքերով հարվածում էր դռանը և բղավում իր թոքերի ամբողջ կարողությամբ։

— Սրիկաներ,— ցածրաձայն մրթմրթաց Ազնիվ խանումը։ Նրանք տանում են նույնիսկ թամբերն ու կառքը։

Թովմասի ճիչերը նրան հանեցին հավասարակշռությունից և, գլուխը կորցնելով, նա վերցրեց պատին հենած փոցխը և հարձակվեց ոստիկանների վրա։

— Շան որդինե՛ր։

Լեյտենանտը խույս տվեց հարձակումից և պատասխանեց բռունցքի հարվածով, որը դիպավ Ազնիվ խանումի դեմքին։ Հարվածից նա հետ—հետ գնաց ու ճոճվեց։ Սպան նրան ևս մեկ հարված հասցրեց, այս անգամ բաց ափով։ Մեր կինը փռվեց ծառուղում։ Թովմասը սարսափից քարացավ, չնայած ուզում էր օգնության հասնել տատին։ Այն բանից հետո, որ զինվորները փողոց դուրս եկան, նա նետվեց տատի մոտ և շուտով նրան միացան գունատ Ջեյնաբն ու Ջամիլան։

* * *

Ռոզլեր քահանան Մարոյին ու Արմենին շատ ջերմ ընդունեց, սակայն լսելով Մարոյի խնդրանքը, այլայլվեց։ Շվեյցարական մանկատան ուսուցիչները, որոնք հայեր էին, ձերբակալվել էին։ Այնտեղ աշխատող կանայք պարտավոր էին վերադառնալ իրենց ընտանիքները տեղահանության կապակցությամբ։ Մնացել էին միայն քահանան և իր կինը, նրանք պետք է զբաղվեին որբերով, որոնց օսմանյան իշխանությունները պատրաստվում էին վերցնել իրենց հոգածության տակ։

— Նրանք փակում են իմ որբանոցը,— ասաց բողոքական միսիոները։— Պատանի քրիստոնյաները մահմեդական հաստատությունում։ Սա տխուր ֆարս է։

— Իսկ ոչ ոք չի՞ կարող դրան խանգարել,— հարցրեց Արմենը։

— Ես խնդրեցի ամերիկյան հյուպատոսի միջամտությունը և,

երևակայում եք, ասացին, որ դա նրա գործը չէ։

Ռոզլեր քահանան աչքերը երկնքին հւսռեց և ձեռքերը խաչեց.

— Ի՞նչ է լինելու այդ խեղճ երեխաների հետ։

Հանկարծ նա հիշեց, որ այս մարդկանց դժբախտությունը նույնքան մեծ էր։ Նրա կապույտ աչքերը թրջվեցին.

— Իսկ դո՞ւք, իմ խեղճ բարեկամներ...

Մարոն տուն էր վերադառնում մտահոգ տեսքով։ Սակայն նա հուսահատված չէր, ինչպես վախենում էր Արմենը։ Մեկ ժամ առաջ մենակ մնալով իր սենյակում, ուր նա ողբում էր Վարդանի ճակատագիրը, նա վճռել էր սարի պես ամուր լինել, պատվար դառնալ իր որդու և դաժան ճակատագրի միջև։ Նրա վճռականությունը չէր թուլացել, չնայած նա հասկացել էր, որ ստիպված էր լինելու կիսել Սվասի հայ համայնքի ճակատագիրը։ Արմենը ողջունեց երիտասարդ կնոջ իրատեսությունը։

— Վարդանը կկարողանա իր գլխի ճարը տեսնել,– ասաց նա, և մեզ կմիանա Սիրիա տանող ճանապարհին։

— Դրա հավանականությունը նվազագույն է,– ասաց Մարոն խուլ ձայնով։

— Դու իրավացի ես։ Սակայն, չնայած դրան, դու չպետք է հույսդ կտրես։

— Ես մտադիր էլ չեմ հուսահատվելու։

Արմենը թփթվացրեց նրա ձեռքին.

— Հենց այդպես էլ պետք է մտածել։ Նման ճանապարհորդության ընթացքում մենք հնարավորություն կունենանք ծածուկ խույս տալ մեզ հսկողների ձեռքից։ Կարծում եմ, մի քանի օր անց ոստիկանների հսկողությունը կթուլանա։ Մենք դրանից կօգտվենք։

— Ո՞ւր գնալու համար։

— Ես չգիտեմ, դեռ կմտածենք։ Այնպես կանես, որ քո սայլը միշտ իմ սայլի կողքին լինի։

Փողոցները վխտում էին ոստիկաններով և զինվորներով։ Նրանք սանձերից բռնած ձիեր և ջորիներ էին տանում, իսկ իրենց առջևն էին գցել կովեր, այծեր և ոչխարներ։ Նրանք հեռանում էին հայկական թաղից։ Ուրիշներն այնտեղ էին գալիս եզներով լծված մեծ անիվներով սայլերով, որ կիրառության մեջ էին Մերձավոր Արևելքում խեթերի ժամանակաշրջանից ի վեր։

— Նրանք ժամանակ չեն կորցնում,– քրթմնջաց Արմենը։

Նա Մարոյին թողեց տան մոտ։ Զեյնաբը սպասում էր կոտրված կողպեքով դարպասի առջև։ Նա դողդոջուն ձայնով պատմեց Ազնիվ

խանումի հետ պատահած տհաճ միջադեպը։

— Մանրամասներ պետք չեն,– ընդհատեց Մարոն դեպի տուն վազելով։– Մայրս սթափվե՞լ է։

— Այո։

Մարոն մորը հայտնաբերեց խոհանոցում։ Նա նստած էր թրջոցը ձախ աչքին, այտուցված շրթունքներով։ Մեր կինը հանդիմանում էր Ջամիլային, որը գնում–գալիս էր խոհանոցում ձեռքերը ծնկներին խփելով։

— Մի՛ շարժվիր։ Քո գնալ–գալուց գլուխս պտտվում է։

Ուշադրություն չդարձնելով մոր բողոքներին՝ Մարոն զննեց նրա արդեն կապտող այտուցված աչքը։ Այտոսկրի վրա մեծ կապտուկ կար։ Մարոն անհանգստացավ.

— Վստա՞հ եք, որ կոտրվածք չկա։

— Այո,– պատասխանեց Ազնիվ խանումը մռայլ տոնով։– Նույնիսկ չի էլ ցավում։ Ես ինձ ջահել հիմարի պես պահեցի։

— Վատ չէր լինի, եթե մի քիչ պառկեիք։

— Մենք շատ գործ ունենք անելու,– պատասխանեց նա թրջոցը աչքին դնելով։– Մի գավաթ սուրճ և ես լրիվ մարտունակ կլինեմ։

Նա ոտքի կանգնեց, գնաց դեպի ջեռոցը և եզրակացրեց խուլ ձայնով.

— Թող սա մեզ դաս լինի։ Այսուհետ պետք է հնազանդ ձևանալ։ Մենք անասունից էլ վատ վիճակում ենք, և մեր կյանքը կախված է բռի էակների բարի կամեցողությունից։

Թովմասը պատսպարվել էր մի անկյունում վառարանի կողքին և աչքերը լայն բացած դիտում էր այդ տեսարանը։ Երբ մայրը երեխային մոտեցավ, նա սկսել լացել և բարակ ձայնով տնքալ։

— Կայծակը։ Նրանք Կայծակին տարան։

Մարոն բռնեց նրա ձեռքից և խոհանոցից դուրս տարավ.

— Արի, սիրելիս։ Ես պետք է քեզ բացատրեմ, թե ինչ է կատարվում։

* * *

Ընթրիքից հետո Վարդանի ձեռքերին ձեռնաշղթաներ հագցնելով տարան նկուղային այն դահլիճը, ուր երկու օր առաջ նա հանդիպել էր Գանի բեյին։ Լիակատար մթության մեջ երկու օր անցկացնելուց հետո նրա աչքերը ցավում էին միջանցքի լամպերի աղոտ լույսից։ Նա կեղտոտ էր և չորս օր չէր սափրվել։ Նա կուրծքը քորեց, փայտոջիլները վխտում էին նրա ծղոտյա ներքնակի վրա, և նա չէր կարողանում քնել նրանց

խայթոցներից։ Սակայն մարմնական այդ տառապանքը անհամեմատելի էր նրան տիրող հոգեկան տագնապի հետ։ Նա տառապում էր ընտանիքի համար, որն այդ պահին իր ներկայության կարիքն ուներ։ Ի՞նչ էր լինելու նրանց հետ։ Նա ոչ մի պատրանք չուներ իր ճակատագրի վերաբերյալ։

Սենյակ մտնելով՝ Վարդանը մի նախադասության վերջը լսեց, «...ձեր անթույլատրելի միջամտությունը»։ Գանի բեյի ջղային ձայնն էր։ Իթթիհատի ներկայացուցիչը նստած էր մեծ սեղանի մոտ։ Նրա երկու կողմերում նստած էին ոստիկանապետ Մուսթաֆան և գնդապետ Իբրահիմը։ Վերջինս ողջունեց Վարդանին թաքուն աչքով անելով, որը պետք է որ սրտապնդող լիներ, սակայն նրա կիտած հոնքերը բացահայտում էին նրա մտահոգությունը։ Հավանաբար Գանի բեյը նրան էր հանդիմանում։ Մուսթաֆա Ռահմին նույնիսկ ջանք չէր գործադրում իր ուրախությունը թաքցնելու համար։ Ինչ վերաբերում է Գանի բեյին, ապա նա կարծես թե արդեն ձանձրանում էր և նայում էր ժամացույցին։ Սա էր, ուրեմն, այն դատավարությունը, որի առջև ինքը պետք է կանգներ։ Արդարադատության տնազ։

Վարդանին ուղեկցող ոստիկանները նստեցին դահլիճի խորքում դրված նստարանին, իսկ ինքը կանգնած մնաց իր դատավորների առջև։ Գանի բեյը նայեց Վարդանին զզվանքի արտահայտությունը դեմքին և հարցրեց.

— Մտածե՞լ եք իմ գթասիրտ առաջարկության մասին։

— Ես պատասխանում եմ՝ ոչ։

Անվրդով մնալով՝ բարձրաստիճան պաշտոնյան ծխախոտ վառեց խոսելուց առաջ։

— Ոստիկանապետ, կարդացեք մեղադրական փաստաթուղթը։

Մուսթաֆան հազաց և սկսեց կարդալ փաստաթուղթը, որը նա գրեթե անգիր էր արել.

«Հայ դեղագործ, պահեստազորի սպա և հայտնի լրագրող մայոր Վարդան Պալյանը մեղադրվում է Սվասի վիլայեթում զինված ապստամբություն բարձրացնելու փորձի մեջ։ Նրա գլխավոր հանցակիցն է ոմն Շիրակ Թևոնյան»։

— Սո՛ւտ է,– բացականչեց Վարդանը վրդովվելով։

— Լռությո՛ւն,— հրամայեց ոստիկանապետը։– Հակառակ դեպքում դու կվերադառնաս բանտախուց, իսկ դատավարությունը կընթանա առանց քեզ։

Գանի բեյը հեգնանքով ասաց.

— Դու հանդիպել ես Թևոնյանին հոսպիտալի քո վրանում հավանաբար եղանակի մասին խոսելու համար, այդպես չէ՞։

Վարդանը պատասխան չգտավ։ Նա սպասում էր, որ իրեն կհիշեցնեն այն հոդվածները, որոնք գրել էր օտար մամուլի համար, և ինքը

նախապատրաստվել էր պաշտպանվելու, չնայած չգիտեր, թե արդյոք հնարավորություն կունենար խոսելու։ Ոստիկանապետը շարունակեց ընթերցանությունը։

«Մեղադրյալը կապ է պահպանել բազմաթիվ հակաիշխանական կազմակերպությունների հետ, որոնք դավում էին կայսրության օրինական կառավարության դեմ՝ նպատակ ունենալով աջակցելու թշնամական տերությունների ներխուժմանը երկիր»։

Վարդանը դարձյալ չկարողացավ իրեն զսպել.

— Դրանք դատարկ ենթադրություններ են։

Ձայրանալու փոխարեն Գանի բեյը ժպտաց։

— Ավելի լուրջ բաներ կան։ Շարունակեք, ոստիկանապետ։

«Ավելին, Վարդան Պալյանը մեղադրվում է գավառապետ Մումթազ բեյի սպանության մեջ, որը տեղի է ունեցել Սվասի արվարձանում 1915 թ. հունիսի 30–ին»։

Մուսթաֆա Ռահմին վայր դրեց թուղթը և ձեռքերը խաչեց կրծքին։ Գնդապետ Իբրահիմը դարձավ Գանի բեյին.

— Սրանք լուրջ մեղադրանքներ են, իսկ մայոր Վարդան Պալյանը շատ լավ համարում ունի։ Դուք ապացույցներ ունե՞ք։

— Ապացույցներ և վկաներ,– պատասխանեց ոստիկանապետը։— Կարո՞ղ եմ կանչել,— ավելացրեց նա դիմելով Գանի բեյին։

— Կանչե՛ք։

— Ներս բեր վկաներին,– հրամայեց նա ոստիկաններից մեկին։

Ոստիկանը վերադարձավ երկու տղամարդկանց հետ։ Մեկը քաղաքացիական անձ էր սափրած գլխով, ինչպես ընդունված էր բանտերում, իսկ մյուսը հարբեցողի տեսքով մի կապրալ։ Մուսթաֆան դիմեց քաղաքացիական անձին.

— Անունդ ասա և զբաղմունքդ։

Տղամարդը՝ խիտ և կախ ընկած բեղերով մի քուրդ, պատասխանեց վատ թուրքերենով.

— Արփաջիօղլու Իսմայել, դանակ սրող։

Ոստիկանապետը Վարդանին ցույց տվեց.

— Այս մարդուն գիտե՞ս։

— Այո,– պատասխանեց վկան։

— Որտե՞ղ և ե՞րբ ես նրան հանդիպել։

— Չորս օր առաջ։ Ես տեսել եմ նրան Մումթազ բեյի տնից դուրս գալիս։

— Մենա՞կ։

— Ոչ, մեկ ուրիշ մարդու հետ։ Նրանք վազում էին։

— Ժամը քանի՞ն էր։

— Ես ժամը չեմ տարբերում։

— Մոտավորապե՞ս։

— Լուսաբացին։ Մուեզզինը արդեն կանչել էր առաջին աղոթքին։

— Լավ,– ասաց ոստիկանապետը,– ազատ ես։

— Կներե՞ք։

— Կարող ես գնալ։

Տղամարդը թեթևացած տեսք ուներ։

— Մեկ վայրկյան,– ասաց գնդապետը։— Ես կուզենայի հարցաքննել վկային։

Գանի բեյը կատաղի հայացք գցեց նրա վրա.

— Ոչ մի դեպքում։ Ես հիշեցնում եմ ձեզ, որ դուք այստեղ եք որպես դիտորդ և ոչ թե որպես դատապաշտպան։

Իբրահիմը շրթունքները սեղմեց՝ դրանով մատնելով իր վրդովմունքը, և Վարդանին նայեց ընկճված հայացքով։ Նա վստահ էր, որ իր բարեկամը մեղավոր չէր ո՛չ Մումթազ բեյի մահվան, ո՛չ էլ որևէ այլ հանցանքի մեջ։ Վկաները կեղծ էին։ Նրան վրդովում էր արդարադատության այդ տնազը, սակայն ոչինչ անել չէր կարող, եթե ոչ տեղեկացնել գեներալին, որը նույնպես անկարող էր որևէ բան անել։

Վարդանը սառնասրտորեն լսեց կապրալի պնդումներն այն մասին, թե ինչպես էր խուզարկել Վարդանին ձերբակալությունից հետո, իսկ դա սուտ էր, և որ նրա գրպանում հայտնաբերել էր ոստիկանապետի ցույց տված սաթե թզբեհը։

Ոստիկանապետը ճարպկությամբ վարում էր գործը Գանի բեյի խրախուսական հայացքի ներքո։ Նա կիրթ լեզվով էր խոսում և ծանրաբարո տոնով, որը նրա կարծիքով վայել էր դատավորին։

— Մենք պարզել ենք և դա կասկած չի հարուցում, որ այդ թզբեհը պատկանում էր գավառապետ Մումթազ բեյին։ Եվ դա հանդիսանում է Վարդան Պալյանի մեղքի անհերքելի վկայություն։

Կեղծ հիացական տոնով Վարդանը հայտարարեց.

— Ինչպիսի՜ պերճախոսություն։ Ափսոս, որ սղագրիչ չկա այս հոյակապ ելույթը արձանագրելու համար։

Մուսթաֆան, վիրավորվելով, բռունցքն իջեցրեց սեղանին և վեր թռավ։ Նա պատրաստվում էր հայհոյել, սակայն գերադասեց չկորցնել

սառնասրտությունը Գանի բեյի ներկայությամբ։ Մակայն նրա հայացքը բավականաչափ պերճախոս էր։ Նա հևում էր, կարծես ծանր ֆիզիկական աշխատանք կատարած լիներ և Գանի բեյը ստանձնեց հերթափոխը։

— Հեգնանքը քեզ չի օգնի։ Դու ոչինչ չե՞ս կարող ասել քեզ պաշտպանելու համար։

Վարդանը գիտեր, որ ինքը կործանված էր և ոչինչ չէր շահելու փաստարկներ ներկայացնելու դեպքում։ Նա ասաց հոգնած տեսքով.

— Ես կարող էի պնդել, որ վերջին վկան ոստիկանատանը չէր, երբ ինձ այստեղ բերեցին, և որ իմ կինը, զոքանչը և երկու աղախինները կարող էին վկայել, որ ես տանն եմ եղել գավառապետի սպանության պահին։ Սակայն այդ ամենը իմաստ չունի։

Այս խաղը զվարճացնում էր Գանի բեյին։ Նա մի փաստաթուղթ վերցրեց թղթապանակից։ Անկասկած այն պատճառով, որ գնդապետ Իբրահիմը նրա կողքին էր, նա չէր հրաժարվում իր համբերատար կեցվածքից և գրեթե սիրալիր տոնից.

— Ես ունեմ քո հանցակից Շիրակ Թևոնյանի կողմից ստորագրված ցուցմունքը։ Նա խոստովանում է, որ քեզ հետ համաձայնության է եկել և, հատկապես, որ քեզ օգնել է Մումթազ բեյի սպանության ժամանակ։

— Պա՛հ,- ասաց Վարդանը՝ ուսերը թոթվելով։— Եթե դա իսկապես նրա ստորագրությունն է, ապա ես պատկերացնում եմ, թե ինչ մեթոդներով եք այն ստացել։ Դաժան լինելու իր հռչակը ոստիկանապետը նոր չէ, որ պետք է վաստակի։

Մուսթաֆա Ռահմիի բռունցքները սեղմվեցին։ Քիչ էր մնում կատաղությունից պայթեր։ Իբրահիմը կռացավ ցուցմունքի վրա հայացք գցելու համար։ Ստորագրության փոխարեն անընթեռնելի խզբզոց էր, սակայն մատնահետքն այն օրինականացնում էր։ Այն արյամբ էր արված։ Տատանվելուց հետո Իբրահիմը մեկ անգամ ևս միջամտեց։

— Հույս ունեմ, որ փաստերն ու վկայությունները ստուգվել են։

Բարձրաստիճան պաշտոնյայի ճարպոտ ենթակզակը դողդողաց, և նա վրդովված բացականչեց.

— Գնդապետ Իբրահի՛մ, կհամարձակվե՞ք արդյոք կասկածի տակ առնել իմ իրավասությունները և Սվասի ապագա գավառապետ, ոստիկանապետ Մուսթաֆայի ազնվությունը։

— Աստվածն ինձ պահապան,- շտապեց հավաստիացնել Իբրահիմը։- Ես ներողություն եմ խնդրում, եթե իմ խոսքերը ձեզ վիրավորական են թվացել։ Իմ միակ ցանկությունն է ծառայություն մատուցել արդարադատությանը։

— Այդ դեպքում լռեք,- պատասխանեց Գանի բեյը կտրուկ տոնով,- արդարադատությունն իր գործը շատ էլ լավ կանի առանց ձեր

օգնության։

Վարդանի հանդարտությունն իր տեղը զիջեց զայրույթին.

— Արդարադատությո՛ւն։ Մի օգտագործեք այն բառերը, որոնց իմաստը դուք չգիտեք։ Այս դատավարությունը բեմադրություն է։

— Լռի՛ր, շան որդի,– ոռնաց Մուսթաֆա Ռահմին, որը վեր թռավ աթոռը շուռ տալով։

Ենթարկվելու փոխարեն Վարդանը ձայնը բարձրացրեց.

— Ձեր փաստերը շինծու են։ Ես անմեղ եմ։ Իմ միակ հանցագործությունը այն է, որ ես հայ եմ, ինչպես և նրանցը, ում դուք կախաղան եք հանում հրապարակում։ Անատոլիայով մեկ մորթվող կանանց և երեխաների մեղքը նույնպես այն է, որ նրանք հայ են։

Ձկարողանալով իրեն զսպել՝ ոստիկանապետը շրջանցեց սեղանը և հարձակվեց բանտարկյալի վրա։ Վարդանը հետ մղեց հարվածը բռունցքով և հակառակորդի կզակին հարվածեց ագուցված բռունցքներով։ Մուսթաֆան օրորվելով հետ–հետ գնաց ու հենվեց սեղանին։ Վարդանը բնազդաբար էր հարվածել, սակայն չէր զղջում իր չմտածված արարքի համար։ Իր վիճակում... Պահակներից մեկը մոտեցավ և ատրճանակի կոթով հարվածեց նրա թիկունքին։ Վարդանը շնչակտուր ծնկի իջավ։ Ոստիկանապետը գրպանից ծալովի դանակ հանեց։

— Դու ինձ պատասխան կտաս,– մրթմրթաց նա ատամների արանքից։

Ձոր կտտոցով դանակը բացվեց։

— Ոստիկանապետ Մուսթաֆա,— հրամայեց Գանի բեյը,– ես ձեզ արգելում եմ։

Ոստիկանապետը մի քանի վայրկյան դանակը թափահարեց Վարդանի կոկորդի մոտ։ Իր վերադասի նոր հրամանը ստանալով՝ նա վերադարձավ իր տեղը, բարձրացրեց աթոռը և նստեց։ Նա Վարդանին էր նայում ատելությամբ լի աչքերով, գիտակցելով, որ իր վրիժառության պահը գալու էր։ Իբրահիմը վախեցավ ընկերոջ կյանքի համար և հայացքով աղերսեց նրան հանգիստ մնալ։

Գանի բեյը փակեց սեղանին դրված թղթապանակը։

— Վարդան Պալյան, դու մեղավոր ես ճանաչվում սպանության և դավաճանության մեջ։ Համապատասխանաբար ես քեզ մահվան եմ դատապարտում։

Վարդանը, որը դեռ ծնկաչոք էր, վճիռը լսեց առանց իր զգացմունքները ցույց տալու։ Վճիռը վաղուց էր ընդունված և նա դա գիտեր։ Նա սպասում էր, որ Գանի բեյը կկրկներ իր առաջարկությունը։

— Դու միայն մեկ հնարավորություն ունես մահվանից խուսափելու։ Համաձա՞յն ես մեզ հետ համագործակցելու։

— Ո՛չ։

— Քո կինն ու որդին վաղը ճամփա կընկնեն բոլորի հետ միասին։

— Իսկ եթե համաձայնե՞մ գրել այն ստերը, որ դուք ինձ կթելադրեք։

— Մենք ձեր ընտանիքը կպահենք Սվասում։ Եվ դու կվերադառնաս նրանց մոտ առաքելությունդ կատարելուց հետո։

Վարդանը քմծիծաղ տվեց.

— Դուք ինձ իսկապես հիմարի տեղ եք դրել։ Հավատա՛լ ձեր խոստումներին։ Հենց որ ես ձեզ այլևս պետք չլինեմ... չրխկ, և վերջ։

Իբրահիմը ուզում էր հնարավորինս հետաձգել ճակատագրական հանգուցալուծումը։ Նա դեռ հույս ուներ փրկելու իր բարեկամին։ Նա անհողդողդ ձայնով ասաց.

— Դուք պետք է ընդունեք այդ առաջարկը, մայոր Վարդան։

Վարդանը գլուխը թափ տվեց։ Նա վճիռն ընդունել էր նախօրեին։ Իմաստ չուներ ժամանակ շահել, ինչպես պնդում էր Իբրահիմը։ Բանտում նա խիստ հսկողության տակ էր, իսկ Մարոն ու Թովմասը պատանդ կդառնային իր փախուստի փորձերը կանխելու համար։ Իրեն վերացնելուց հետո կգար Մարոյի և Թովմասի հերթը։ Նա գերադասում էր, որ նրանք աքսորվեին Ազնիվ խանումի, Արմենի ու Սվասի մյուս հայերի հետ։ Այդ դեպքում նրանք հնարավորություն կունենային վերապրելու։

Գանի բեյը ժպտաց Վարդանին.

— Մեր նախարարը կհիասթափվի։ Նա շատ էր ուզում լսել իր քաղաքականության քո գովաբանումը։

— Թո՛ղ սատանան նրան տանի։

Այդ կատաղի պատասխանը բարձրացրեց Գանի բեյի տրամադրությունը, և նա խնդրեց, որ ոստիկանապետը բերել տար մյուս դատապարտյալներին։ Ոստիկանները քարշ տալով մի բանտարկյալի բերեցին և գետնին գցեցին Վարդանի կողքին։ Շիրակ Թևոնյա՛ն։

Նա անճանաչելի էր իր կուրացված աչքերով և այլանդակված դեմքով, ուր ողջ տեղ չկար։ Նրա ծնոտը կոտրված էր և կախ էր ընկել, և ամեն անգամ շունչ քաշելիս նրա բերանի անկյուններում արյուն էր հայտնվում։ Վարդանի սիրտը խառնեց։

— Ճանաչո՞ւմ ես քո հանցակցին, Պալյան։ Ընդունիր իմ առաջարկությունը։

Վարդանի անունը լսելով՝ Շիրակը սթափվեց։ Նրա շրթունքները շարժվեցին.

— Պարոն Վարդան։

— Ես այստեղ եմ։

— Մի մտածեք իմ մասին,- ասաց Շիրակը դժվարությամբ։

— Վերջին անգամն եմ հարցնում,- ասաց Գանի բեյը,- այո՞։

Ձայնը բարձրացնելու համար գերագույն ճիգ գործադրելով՝ Շիրակը պատասխանեց.

— Վերջ տվեք։

Վարդանը սեղմեց երիտասարդի ձեռքը ի նշան վշտակցության և թքեց սեղանի ուղղությամբ։

Ոստիկանապետը մոտեցավ և ձախ թևով սեղմեց Վարդանի պարանոցը։ Մյուս ձեռքով նա բռնեց նրա մազերից և նրա դեմքը դարձրեց Շիրակի կողմը։

— Դե տե՛ս, ոնց են մեռնում,— մռնչաց նա։- Իմացիր, հաջորդը դու ես։

Նա կանչեց իր մարդկանցից մեկին.

— Նշան բռնիր գլխին։

Ոստիկանը հրացանը դրեց Շիրակի քունքին, որը սկսեց «Հայր մեր»-ը ասել։ Նրա ձայնը ամրանում էր, կարծես իր վերջին ուժերը դներ այդ աղոթքի մեջ։

— Ջե՞ս փոխում վճիռդ,- հարցրեց ոստիկանապետը՝ ավելի ուժեղ սեղմելով Վարդանի պարանոցը։

Վարդանը լուռ էր։ Արագ մահ, ահա թե ինչ կարելի էր ցանկանալ Շիրակին։ Վարդանը ձայնակցեց տղային և իրեն ստիպեց չփակել աչքերը։ Նրանք հասել էին «Եվ եղիցի կամք քո» բառերին, երբ հրացանի կրակոցը ցրեց Շիրակի գանգը։ Վարդանի հագուստը արնոտվեց։

— Հիմա քո հերթն է,- ասաց ոստիկանապետը, որը նրան բաց թողեց և հեռացավ։

Իբրահիմը միջամտեց հրամայական տոնով.

— Ո՛չ։ Նրան այստեղ մի սպանեք։ Գնդակահարման դասակով։ Դա շատ լավ կլինի բանակի բարոյական վիճակի համար։

— Համամիտ եմ,- ասաց Գանի բեյը փայլող աչքերով։— Սակայն մենք նրան չենք գնդակահարի։ Կախաղան կհանենք շուկայի հրապարակում։ Ժողովուրդը նույնպես օրինակի կարիք ունի։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 5

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 15:10-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Արևն արդեն ծագել էր և կաթնասպիտակ երկնքից իր աղոտ ու ցրված լույսն էր սփռում երկրի վրա, սակայն օդը դեռևս հագեցած էր խոնավությամբ, և հագուստը կպչում էր մարմնին: Թռչունները թառել էին ծառերի ճյուղերին, և թմբիրը, որ պատել էր նրանց, գրկել էր նրանց ձայնից: Հեռվում անդադար խանչում էին ավանակները:

Եզը խաղաղ հայացքով նայում էր Թովմասին: Նրա խոնավ եղջրաթաղանթի վրա երեխան իր արտացոլանքն էր տեսնում: Շիկավուն մորթով ծածկված ահռելի կենդանին լիզում էր իր մռութը, որը նույնքան սև էր, որքան նրա կճղակները: Նրա եղջյուրների հիմքն առնված էր փայտյա լծի մեջ: Սասունը հոտոտում էր կենդանու ոտքերը, որը նրա վրա ուշադրություն չէր դարձնում: Թովմասը գոմից մի խուրձ խոտ բերեց և դրեց գետնին: Եզը վիզը ձգեց խոտին հասնելու համար:

Այդ լծվա՜ծքը... Ուրեմն իսկապես իրենք պետք է մեկնեին: Երեխան դժվարությամբ թուքը կուլ տվեց: Սպասված հրաշքը տեղի չունեցավ: Թովմասը հույս ուներ, որ ինչ-որ բան կպատահեր, որ ինչ-որ անսպասելի իրադարձություն նրանց հնարավորություն կտար մնալ տանը: Միգուցե նույնիսկ հոր վերադարձը: Այդ հույսի շնորհիվ նա իրեն տղամարդու պես էր պահել և նախօրեին գրեթե չէր լացել, միայն մեկ անգամ՝ ծածուկ, իր անկողնում: Այժմ նա այլ ելք չուներ, քան քաջ լինել մորն ու տատին սատարելու համար: Սակայն նա բոլորովին համոզված չէր, որ ինքն այդ քաջությունը կանենար:

Թովմասը տուն մտավ և բարձրացավ Վարդանի գրադարանը: Առաջին անգամ էր, որ նա գրադարան էր մտնում հոր բացակայությամբ: Սա նրա ամենասիրելի սենյակն էր: Աշխարհագրական քարտեզները, մարդակազմական պաստառները նրան երազանքների գիրկն էին գցում: Ի՜նչ հաճույքով էր նա զննում հանքաքարերի նմուշները, հանածոների և միջատների հավաքածուները: Հիրավի՜ գանձերի մի դահլիճ: Չէ՞ որ հայրն ասում էր, որ գրքերն իրենց մեջ պարփակում են մարդկային բոլոր գիտելիքները: Իսկ դարակների վրա հարյուրավոր գրքեր կային:

Կազմերի կաշվի հոտը խփեց նրա քթին: Վարագույրների արանքից աղոտ լույս էր թափանցում: Ժամացույցը կանգնել էր, և սենյակում տիրող խոր լռությունը տպավորեց երեխային: Գրելու թղթի թերթերը

սփռված էին ծաղկային նախշերով և բադամներով զարդարված կարմիր գորգի վրա: Նա բարձրացրեց մեկը և նայեց: Հոր ձեռագիրն էր... Թովմասը փորձեց կարդալ: Նա դեռևս կարդալ չգիտեր, և նրան հաջողվեց վերծանել հայկական այբուբենի մի քանի տառ միայն:

Այդ նրբագեղ տողերը նրան հիշեցրին այն պահերը, որ անց էր կացրել այդ սենյակում վայելչագրության վարժությունները կատարելիս, մինչդեռ Վարդանը սեղանի մոտ նստած կարդում կամ գրում էր: Երբեմն հայրը բարձրացնում էր աչքերը որդու վրա և սկսում էր խոսել գիտելիքների ու կրթության կարևորության մասին: Երջանիկ լինելով, որ իրեն կտրում են դասերից, Թովմասը հարցեր էր տալիս: Հայրը ներկայացնում էր համաշխարհային պատմությունը և պատմում էր հայ արքաների մասին, խոսում էր հեռավոր երկրների, ժողովուրդների, քարերի, կենդանիների և աստղերի մասին: Նա ամեն ինչ գիտեր: Դա երկար էր տևում, միգուցե ժամեր, սակայն Թովմասը առանց հոգնելու լսում էր Վարդանին, նրա ջերմ և ոգեշնչված ձայնը, որով նա բացահայտում էր կյանքի և իրերի էությունը: Նրա աչքերի առաջ պատկերներ էին հայտնվում, նախադասություններ, որոնք նրան տանում էին հեռուները, և այդ պահերին նա հանկարծակիի էր գալիս, երբ հայրը նրան հարց էր ուղղում:

Տղան դանդաղ և զգույշ շրջեց սենյակում՝ ջանալով, որ հատակի մանրատախտակը չճռռա իր ոտքի տակ: Նրան թվում էր, որ իրերը հետաքրքրությամբ իրեն էին նայում, իսկ ոմանք էլ թշնամաբար: Կարծես նրան հանդիմանում էին առանց թույլտվության սենյակ մտնելու համար: Հուզված՝ նա շարունակեց իր այցը: Գրքերի դարակները մինչև առաստաղ էին հասնում և երբ նա վեր էր նայում, գլխապտույտ էր զգում և իրեն թվում էր, որ ինքը շատ փոքր է: Նա ցուցամատը հպեց իր հասակի բարձրության վրա գտնվող գրքերի շարքին: Նրա դեմքն ափսոսանք էր արտահայտում: Նա երբեք առիթ չէր ունենա կարդալու այս գրքերը և իր հոր պես գիտուն դառնալու:

Դողացող ձեռքով նա բացեց ապակեպատ պահարանը: Դա նրան արգելված էր: Պահարանում պահվում էին դեղագործի խորհրդավոր գործիքներ: Տարբեր ձևի սրվակներ, փորձանոթներ, կոլբաներ, կաթոցներ, մանրադիտակ, կշեռք, սանդ սանդակոթով. այս ամենը նրան գերում էր: Էլ ինչ ասես դեղնած պիտակներով սրվակների մասին, որոնց մի մասի վրա գանգ կար նկարված: Թովմասը բացեց էթերի սրվակի ապակյա խցանը և շնչեց գոլորշին: Այդ թմրեցնող բուրմունքը...

Վարդանը խոստացել էր նրան մի օր բացահայտել քիմիայի գաղտնիքները: Երեխայի աչքերից արցունքներ հոսեցին: Նա փակեց պահարանը և կանգ առավ գլոբուսի առջև, որը թեքված էր փայտյա պատվանդանի վրա: Երբ ոտքի մատների ծայրին էր կանգնում, հասարակածը հայտնվում էր նրա քթի մոտ: Փոքր Ասիա անվանման առաջին տառը ծածկում էր Կոստանդնուպոլիսը: Մայրաքաղաքից դեպի աջ, Թովմասի բութ մատի հաստությանը համապատասխանող հեռավորության վրա գտնվում էր Սվասը: Վարդանը անձամբ քիմիական մատիտով նշել էր քաղաքի տեղը: Հոգնած շարժումով երեխան

պտտեցրեց գլոբուսը։

Նա նստեց մեծ գրասեղանի առջև, որի հետևում նա շատ փոքր թվաց։ Սովորաբար սեղանի վրա թղթեր էին լինում։ Իսկ այժմ միայն ծծաններ էին, թանաքաման և մի քարի կտոր, որը մամուլի փոխարեն էր օգտագործվում։ Թովմասը երազկոտ տեսքով ձեռքը հպեց սև, սուր ծայրեր ունեցող քարին, որը որքան նա գիտեր՝ սատանի եղունգ էր։ Այս սենյակի յուրաքանչյուր իր կրում էր հոր կնիքը։ Խորը շունչ քաշելով՝ նա բացեց վերի դարակը։ Այնտեղ արծաթյա մի տուփ կար, որի մեջ դրված էր նույն մետաղից պատրաստված մի կնիք։ Թովմասը կնիքն ուժգին սեղմեց նախաբազկին։ Երբ այն հեռացրեց, նրա ձեռքին դաջվել էր մի ձվարդ, որի կենտրոնում երեք թմբիկներով տառեր էին գրվել՝ Վարդան Պալյանի անունը հայերենով։ Կնիքի հակառակ կողմում նույն անունն էր արաբական այբուբենով։ Այս մեկը Թովմասը չդաջեց։ Նա կնիքը հետ դրեց տուփի մեջ, իսկ վերջինս էլ դրեց գրպանը։ Մի օր կհանձնի հորը։ Նա դուրս եկավ սենյակից զգուշորեն փակելով դուռը։

Խոհանոցից եկող ձայները հուզական երանգ ունեին նույնիսկ, երբ խոսքը կենցաղային հոգսերի մասին էր. «Այ, այդ կաթսան մի վերցրեք», — ասում էր Ազնիվ խանումն այն հուզված ձայնով, որով խոսում էր հանգուցյալ ամուսնու մասին։ Թովմասը ձեռքը տարավ իր կարճ տաբատի գրպանը, և հպումն արծաթյա տուփի հետ նրան սրտապնդեց։ Քանի այդ թալիսմանն իր հետ էր, նա ոչնչից չէր վախենա։

— Ահա և դու, թանկագինս,— ասաց Մարոն համբուրելով նրան։

Նա հոգնած տեսք ուներ, և աչքերի տակ կապտուկներ էին նշմարվում։ Երեխան ցանկացավ նրան սրտապնդել իր հանդարտությամբ.

— Ե՞րբ ենք մեկնում։ Շուտո՞վ։

— Նախ նախաճաշիր,- պատասխանեց մայրը խուլ ձայնով։

— Ես պե՞տք է դասագրքերս վերցնեմ։

— Անիմաստ է, թանկագինս։

Չկարողանալով իրեն զսպել՝ Մարոն հեռացավ հյուրասենյակ, իր որդուն թողնելով Ազնիվ խանումի խնամքին։ Նրա կոկորդ պատռող հեկեկոցը արագ անցավ։ Մարոն նստեց բազմոցի ծայրին և հայացքը հառեց պատերին, սակայն ոչինչ չգրավեց նրա ուշադրությունը։ Այլևս ոչինչ նրան արժեքավոր չէր թվում՝ ոչ նկարները, ոչ կահույքը, ոչ հին իրերը, ոչ դաշնամուրը։ Նա արդեն լքել էր այդ տունը, ուր անց էր կացրել ութ երջանիկ տարիներ։ Նա անտարբեր հայացքով նայում էր այդ բոլոր իրերին, որոնց հետ կարծես թե կապված էր, սակայն դրանք արդեն մեռած իրեր էին, պարզապես այն պատճառով, որ նա վճռել էր դեմքը թեքել անցյալից։ Այսուհետ նրա կամքը լարվելու էր միայն մեկ մտահոգությամբ՝ վերապրել իր որդու և մոր հետ միասին։ Կենդանի էր մնացել նաև Վարդանին գտնելու խենթ հույսը։

Նախաճաշից հետո Թովմասն օգնեց սայլը բարձել։ Ազնիվ խանումը

սայլին նստած, տեղավորում էր Մարոյի և աղախինների բերած կապոցներն ու պայուսակները։

— Եթե դու ուզում ես ինչ-որ խաղալիք վերցնել,– ասաց տատը թոռանը,— ապա տեղ կա։

Տղան ուսերը թոթվեց և ժխտական նշան արեց։ Նա այլևս երեխա չէր և դա ապացուցելու համար նա վերցրեց սննդամթերքով լի մի զամբյուղ և բարձրացրեց սայլի մեջ դնելու համար։

— Զգո՛ւյշ, շեքերիմ։ Պորտդ դուրս կընկնի,– բացականչեց Զեյնաբը նրան օգնելով։

Նա տղայի հետ միայն հայերեն էր խոսում, սակայն անկախ իրենից դիմում էր իր մայրենի լեզվին, երբ ցանկանում էր զգացմունքներն արտահայտել։

Փողոցում կանգնած մի զինվոր հարցրեց՝ արդյոք նրանք պատրա՞ստ են։ Ազնիվ խանումը բացասական պատասխան տվեց, իսկ յուրայիններին ասաց.

— Պետք չէ շտապել... Արմենին ենք սպասելու։

Նա իջավ սայլից։ Ջամիլան ծնկի իջավ և գրկեց նրան։

— Հանուն Ալլահի, խանում, ես չեմ ուզում այստեղ մնալ։ Ինձ տարեք ձեզ հետ։

— Ինձ էլ,— նրան միացավ Զեյնաբը։

— Շատ կուզենայի, բայց դա անհնար է։

Այդպիսի անձնվիրությունը հուզում էր Ազնիվ խանումին, սակայն նա սրտնեղում էր իրադրության լրջությունը չհասկացող աղջիկների համառությունից։ Նա ստիպեց Ջամիլային ոտքի կանգնել։ Զեյնաբը համբուրեց նրա ձեռքը։

— Խանո՛ւմ, աղաչում եմ։

Ծեր կինը բարկացավ և մի քիչ կտրուկ պատասխանեց.

— Ես արդեն երրորդ անգամն եմ ձեզ կրկնում, որ մահմեդականներին արգելել են ուղեկցել տարագրվող հայերին։ Ես ձեզ դրամ կտամ, և դուք գյուղ կվերադառնաք։

— Ի՞նչ է լինելու մեզ հետ։

Ազնիվ խանումը հանդարտվեց և գրկեց երիտասարդ աղջիկներին։

— Դուք գեղեցիկ աղջիկներ եք և շուտով կամուսնանաք։ Երջանիկ կլինեք և շատ երեխաներ կունենաք։ Երբ մենք վերադառնանք, կգանք ձեզ տեսնելու գյուղում։

— Մեր տունը ձեր տունն է, խանում։

* * *

Նավապետ Արմենի սայլը կարծես շուկա գնացող գյուղացու սայլ լիներ։ Նա իր այգուց քաղել էր այն ամենը, ինչ հնարավոր էր։ Երբ կինն ասել էր, որ իրենք չէին կարող այդ ամենն ուտել մինչև փչանալը, նա պատասխանել էր, որ իրենք այդ ամենը կբաժանեն քիչ մթերք ունեցող ընտանիքներին։ Իրականում նա չէր ուզում որևէ բան թողնել թալանչիներին։ Նա նույնիսկ ոչնչացրել էր այն ամենը, ինչ դեռ չէր հասունացել, քթի տակ մրթմրթալով. «Այդ անասուններն այստեղ ոչ մի պիտանի բան չեն գտնի»։

Մեծ մասամբ անփորձ կանանց կողմից ղեկավարվող սայլերի բազմությունը խցանումներ էր առաջացրել նեղ փողոցներում։ Իշխանությունները նախատեսել էին, որ հայերը պետք է դուրս գային քաղաքից իրար հաջորդող խմբերով։ Սակայն յուրաքանչյուր ոստիկան իրեն ղեկավար էր համարում, և ընտանիքները, բախվելով հակասական հրամաններին, նպատակահարմար էին գտնում ճամփա ընկնել առանց հապաղելու։ Սայլերը հետիոտնից դանդաղ էին շարժվում։ Ոստիկանները, նյարդայնանալով այդ դանդաղ ընթացքից, անպատվում էին տեղահանվողներին։ Երբ ընդամենը մի երեսուն մետր էին հեռացել իրենց տնից, Արմենը սանձը վստահեց իր կնոջը.

— Ծխախոտս եմ մոռացել, Արաքսի։ Դու թող, որ եզը իր քայլքով գնա։ Ես քեզ կհասնեմ մի քանի րոպեից։

Նա վերադարձավ տուն, որի դուռը կիսաբաց էր թողել կատվի համար։ Կանաչ ներկով ներկված ցանկապատից ներս մտնելով, կամքից անկախ կանգ առավ իր տանը, ուր, ինչպես նա կարծում էր, ինքն ավարտելու էր իր երկրային ուղին, տան հետևում երևացող լեռներին վերջին անգամ նայելու համար։ Ահա և իր արտը, որի վրա նա արյուն ու քրտինք էր թափել և որի ցորենը տրորել էին զինվորները։ Ցորենը բարձր էր ու խիտ։ Այդպիսի արտ ամբողջ շրջանում չկար։ Իր նշենին։ Իր խնձորենիները... սալորի ծառերը... խաղողի այգին... Բոլորի ճյուղերը ճկվել էին դեռևս խակ մրգերի ծանրության տակ։ Այս տարի պետք է որ շատ առատ բերք լիներ։ Հավերը կչկչում էին հավանոցում։ Արմենը ճռվողյուն լսեց։ Նա մոռացել էր իր թռչունների մասին։ Նա մեխից հանեց տան արտաքին պատին կախված վանդակը և ազատեց կարմրակատարիկներին, որոնք թռան գնացին։

— Շտապեցեք,— գոռաց տան մոտով անցնող երիտասարդ զինվորը։

Արմենն անպատվեց նրան.

— Անաստվածնե՛ր։

Նա տուն տարավ նախօրեին կապած խրձերը, կիտեց դրանք հատակին և նավթ լցրեց դրանց վրա այնքան, մինչև հատակին լճակներ գոյացան։ Առանց վարանելու, Արմենը լուցկի վառեց և շպրտեց խրձերի

վրա։ Հետո շտապ կերպով դուրս եկավ և վերադարձավ իր սայլի մոտ։ Արաքսին սպասում էր նրան շագանակագույն թղթե տոպրակը ձեռքին.

— Քո ծխախոտը ուսապարկիդ մեջ էր, արաղի շշի ու փամփուշտների հետ միասին։

— Կամա՛ց։

Քիչ անց, խլացնելով փայտե անիվների աղմուկը, լսվեց հրդեհի բվվոցը։ Ձիավորները վազում էին այրվող տան կողմը։ Անզոր լինելով կրակի դեմ՝ նրանք նյարդայնանում էին և թևերն էին թափ տալիս։ Արմենը նայում էր ճանապարհին ու քմծիծաղ էր տալիս։ Սակայն նրա աչքերը արցունքով էին պատված։

— Ի՞նչ արեցիր,— վշտացավ Արաքսին։- Մենք այնպիսի ուրախությամբ էինք այն կառուցել։

— Ես չեմ ուզում, որ սրանց մնա։

— Իսկ եթե ոստիկանները քեզ փնտրեն պատժելո՞ւ համար։

— Պա՛հ, նրանք այնքան հոգս ունեն,- պատասխանեց նա ոչ այնքան վստահ, որքան կուզենար երևալ։

— Ծեր խելագա՛ր,- մրմնջաց Արաքսին քնքշանք արտահայտող ձայնով և շոյեց նրա թևը։

— Արաքսի, մենք այլևս երբեք չենք վերադառնալու։ Դու դա գիտակցու՞մ ես։

— Քանի դեռ ես քեզ հետ եմ...

* * *

Մարոն և նրա մայրը տախտակներ էին խփում առաջին հարկի լուսամուտներին։ Ազնիվ խանումի գաղափարն էր։ Ջնայած Մարոն դա անիմաստ էր համարում, բայց ստիպված էր եղել համաձայնել։ Դա նրան կզբաղեցներ մինչև Արմենի գալը։

Ախոռում դեռ զգացվում էր ձիերի և կովերի հոտը։ Թովմասի սիրտը ճմլվեց, երբ տեսավ այն անկյունը, որը հատկացվել էր Կայծակին, որին տարել էին ոստիկանները։ Իր փոքրը ձի՛ն։ Հենց այն պահին, երբ իր երազանքն իրականանում էր... Ինչու՞ կյանքը չի դասավորվում այնպես, ինչպես մարդ երազում է։ Նա խորը շունչ քաշեց և երկար հոգոց հանեց։

Սասունը հոտոտում էր դատարկ մսուրքի հատակը։ Հանկարծ նա քարացավ, տնկեց ականջները և հաչելով դուրս նետվեց։ Թովմասը խաղալու տրամադրություն չուներ և ուշադրություն չդարձրեց հեռվից լսվող հաչոցներին, որոնցով շունը կանչում էր իրեն։ Խեղճ Սասուն, նա չէր հասկանում, թե ինչ էր պատահել ընտանիքին։ Նա կկարոտի տունն ու այգին։ Թովմասը չպետք է մոռանար նրա ամանը։

Գոմը չէր մաքրվել և թրիքի կույտերի վրա ճանճեր էին հավաքվել։ Թովմասը վերցրեց բահը և սկսեց մաքրել հատակը։ Բահն իրենից մեծ էր և այնքան ծանր էր, որ նա հազիվ էր այն բանեցնում։ Սկզբում նրա մաշկը խոնավացավ, իսկ քիչ անց քրտինքը հոսեց նրա դեմքով։ Նա քրտնաջան աշխատում էր և երբեմն դադար էր առնում ափով ճակատի քրտինքը սրբելու համար։ Երբ սայլակը լցվեց, նա բահը վայր դրեց, ձեռքերը դրեց գոտկատեղին ու հետ թեքվեց տնքալով։ Իր տատն այդպես էր անում, երբ երկար կռացած էր մնում հացի խմորը հունցելիս։

Ոտքերը լայն դնելով հավասարակշռությունը պահպանելու համար, նա բռնեց սայլակի կոթերից։ Երբ այն բարձրացրեց, ձեռքերի մկանները դողում էին։ Երկու անգամ նա քիչ էր մնում շուռ տար սայլակը, սակայն նրան հաջողվեց հասնել մինչև գոմի հետևում գտնվող աթարի կույտը։ Գոմ վերադառնալով՝ երեխան հենվեց պատին և մի քիչ հանգստացավ։ Անհրաժեշտ եղավ ծանր բեռնված սայլակը քշել երկրորդ անգամ, և այդ երթն ավելի դժվար էր, քան առաջինը։ Հետո Թովմասը թարմ ծղոտ փռեց հատակին։ Նա բահը մեխից կախեց և երկար տրորեց ձեռքերը։ Ահա՛։ Գործը խնամքով էր արված։ Երեխային չէր հուզում այն միտքը, որ այդ աշխատանքն անիմաստ էր։ Հայրը կհպարտանար իրենով։ Վերջին հայացքը գցելով իր արած աշխատանքին, Թովմասը դուռը ծածկեց ու փականը հրեց։

Հպարտ քայլվածքով նա դեպի տուն գնաց։ Տատն ասել էր, որ հոր բացակայությամբ ինքը տան տղամարդն էր, ուստի պետք է իրեն տղամարդու պես պահեր։ Ջրհորդանների տակ դրված կաղնու տակառները անձրևաջրով էին լցվում, և դրանց հատակին մի քիչ ջուր էր մնացել։ Երեխան լվաց ձեռքերը և դեմքին ջուր շփեց։ Նա ձեռքերը շալվարին քսեց չորացնելու համար և սուլեց՝ կանչելով Սասունին։ Վերջինս չպատասխանեց, կարծես տապկնոցի խաղալու ժամը լիներ։ Թովմասը հրամայական ձայնով կանչեց շանը.

— Սասո՛ւն։ Ես խաղալու ցանկություն չունեմ։

Թովմասը փնտրեց բոլոր այն վայրերում, ուր շունը սովորություն ուներ թաքնվելու՝ բանջարանոցում, ջրհորի հետևում, թփերի մեջ։ Մի քանի անպատասխան կանչերից հետո երեխայի համբերությունը հատեց։ Շունը Մարոյի ու Ազնիվ խանումի կողքին չէր, ոչ էլ եզան մոտ։ Թովմասը սկսեց անհանգստանալ։ Նրա ձայնը սուր ու լացակումած երանգ ստացավ.

— Արի՛, շունի՛կ, արի՛։

Նա շրջանցեց սայլը և հենց այդ պահին նա տեսավ շանը դարպասի մոտ։ Ինչպիսի՜ թեթևություն։ Թովմասը մոռացավ, որ ինքը մտադիր էր շան վրա բարկանալու։ Նա ոգևորված ասաց.

— Արի՛, Սասուն։

Շունը չշարժվեց, պոչը թափ չտվեց։ Նա պառկած էր ծառուղում։ Նա այնտեղ երբեք չէր պառկում։ Միգուցե նեղացե՞լ էր։ Իսկ միգուցե հիվա՞նդ էր։ Թովմասը վազեց։ Նա վատ կանխազգացում ուներ։ Քիչ էր

մնում սիրտը պայթեր։ Սասունը կողքի վրա էր պառկած։ Մուգ գույնի լճակի մեջ։ Կողքի վրա կարմիր պատռվածք կար։

— Սասուն,– բղավեց Թովմասը ծնկի իջնելով։

Շունն անշարժ էր, աչքերը լայն բացած, հայացքն անշարժ։ Մեջքի և կրծքի բազմաթիվ վերքերից արյուն էր հոսում։ Դա անհնարին էր։ Երազ էր, վատ երազ։ Երեխան ապշած էր։ Գունատվելով՝ նա կառչեց Սասունի բրդից, նրան թափ տվեց և խուլ ձայնով կանչեց.

— Շունի՛կս... շունի՛կս...

Նրա ընկերը սատկել էր։ Սատկել։ Երեխան դա գիտեր, սակայն մի քանի վայրկյան պահանջվեց այդ բանը վերջնականապես հասկանալու համար։ Նա սկսեց հեկեկալ։ Ուժգին լացից նրա շնչառությունն անհավասար էր։ Նա շոյեց կենդանու գլուխը, ձեռք տվեց նրա վերքերին, առանց մտահոգվելու, որ նրա տաք արյանը քսվում էր ձեռքերին։ Ի՞նչ էր նա անելու առանց իր շան։ Բոլորը լքում էին իրեն՝ հայրը, Սասունը, Կայծակը, տունը... Ինչպես այն մղձավանջային երազում, երբ Հուր Կրակը իրեն փախցրել էր հեռուները տանելու համար։ Շփոթված նա գլուխը բարձրացրեց։

Այգու պարսպին հենված երկու զինվոր իրեն էին նայում։ Թովմասը վեր թռավ։ Նրանց դեմքին չար ժպիտ կար։ Վերցնելով իրենց հրացանները, նրանք ցույց տվեցին, թե ինչպես են սվինախողխող անում գետնին պառկած մեկին։ Սարսափած երեխան հետ-հետ գնաց։ Սվինները կարմիր էին։ Սասունին նրանք էին սպանել։ Թովմասը ատելությամբ փ աչքերով նայեց ոստիկաններին։

— Ուզո՞ւմ ես քեզ էլ այդպես անենք,– հարցրեց ոստիկաններից մեկը։

Նրա քիթը երկար էր և ձախ ռունգը չկար, որը Անատոլիաում շատ տարածված վարակի հետևանք էր։ Այդ պատճառով նրա քթանցքը ահռելի էր թվում։ Թովմասի հիշողության մեջ դաջվեց այդ դեմքը։ Երբ ինքը մեծանա, կգտնի նրան և Սասունի վրեժը կառնի։

Չնայած վախին, Թովմասը դանդաղ մոտեցավ իր շանը։ Առանց ոստիկաններից աչքը կտրելու, նա կռացավ, ձեռքերը անցկացրեց շան դեռևս տաք մարմնի տակ և նրան բարձրացրեց։ Սասունը նրան ավելի ծանր թվաց, քան ողջ ժամանակ։ Երեխան այլևս չէր լացում, սակայն նրա աչքերը վառվում էին։ Քանի որ ինքը տղամարդ էր, ապա իրեն պետք է տղամարդու պես պահեր։ Հևալով նա տանում էր Սասունին՝ հետ-հետ գնալով, ոստիկաններին տեսադաշտից չկորցնելու համար։ Չէր կարելի վախը ցույց տալ։ Նա շան մարմինը վայր դրեց սիզամարգերից մեկի կենտրոնում, ուր սպիտակ բոցենիներ և վարդեր էին աճում։ Ինքը նրան այստեղ կթաղի։ Որտե՞ղ է բահը։

Նա վեր թռավ ուսին իջած հարվածից։ Այլանդակված քթով զինվորը հետևել էր իրեն.

— Գնա ու ծնողներիդ ասա, որ դուք առանց հապաղելու պետք է

մեկնեք։

Թովմասը տուն փախավ Մարոյի ու Ազնիվ խանումի մոտ, որոնք ավարտում էին մեխել մուտքի դուռը։ Նրանք վախեցած ճիչեր արձակեցին՝ տեսնելով արնաշաղախ երեխային։

— Ոստիկանները սպանել են Սասունին,— ասաց նա ատամները սեղմելով։— Նրանք հրամայում են, որ մենք գնանք։

Մարոն բարկացած մուրճը գետնին գցեց և գրկեց որդուն։

— Լացիր, սիրելիս, սիրտդ կթեթևանա։

Սակայն Թովմասն անկարող էր լացել։ Նա կգերադասեր ոռնալ ու հարվածել որևէ բանի, սակայն չէր ուզում, որ երկու զինվորները ականատես լինեին իր վշտին։ Նա ազատվեց մոր գրկից։ Մաիոն նրան բաց թողեց.

— Ես հիմա մաքուր շապիկ կբերեմ։

Քաջության լիցք ստանալու համար նա սեղմեց հոր կնիքի արծաթյա պատյանը։

Ազնիվ խանումի կարծիքով շան մահը վատ նշան էր։ Առանց երեխային որևէ բան ասելու, նա սանդուղքի տակից կտորից կարված մի գոտի վերցրեց ու Թովմասին տարավ կաղնու թփերի հետևը։ Նա հույս ուներ, որ երեխան կցրվեր, եթե նրա վրա ինչ-որ պատասխանատվություն դրվեր։ Նա բացեց պաստառը։ Լայն գոտի էր, որի մեջ նա ոսկե դրամներ էր թաքցրել։ Ինքն ու Մարոն իրենց հագուստի տակ նման գոտիներ ունեին և, բացի դրանից, նրանք հագուստի ծալքերում թաքցրել էին իրենց զարդերը։ Նա գոտին կապեց թոռան մեջքին.

— Ծանր չի՞։

Չնայած գոտու անհարմարությանը, երեխան գլխով ոչ արեց։

— Ուշադիր կլինես, Թովմաս, սա մեր հարստության մի մասն է։ Այն կարող է մի օր մեզ դժվար վիճակից հանել։

Տատի ցուցաբերած վստահությունը Թովմասին ևս մեկ անգամ հիշեցրեց, որ ինքն այլևս իրավունք չուներ երեխա լինելու։

Նավապետ Արմենն իր սայլը կանգնեցրեց դարպասի առջև և մի քանի թթու խոսք փոխանակեց ոստիկանի հետ, որն ուզում էր, որ նա շարունակեր ճանապարհը։ Նա ողջունեց Մարոյին և ընտանիքի մնացած անդամներին և թաքուն մի հայացք գցեց նրանց սայլի բեռնվածքին։

— Լավ է... Գնանք, արագ։

— Դու կարծես թե շտապո՞ւմ ես,– զարմացավ Ազնիվ խանումը։

— Որքան շուտ քաղաքից դուրս գանք, այնքան լավ։

Նա վախենում էր, որ իրեն կձերբակալեին տունն այրելու համար։ Այդ

դեպքում կանայք ի՞նչ պետք է անեին առանց իրեն։ Թովմասը նետվեց կնքահոր գիրկը և նրան պատմեց Սասունի մահվան մասին։ Երեխան գերմարդկային ճիգ էր գործադրում զգացմունքները գսպելու։ Արմենը, շփոթված, խոսք էր գտնում իր սանիկին մխիթարելու համար։

— Աստված կպատժի չարերին,— ասաց նա երեխային գետնին դնելով։

— Սասունին պետք է թաղել,– ասաց երեխան վճռական ձայնով։

Մարոն ձեռքը դրեց երեխայի ծոծրակին և մեղմորեն տարավ դեպի սայլը։

— Մենք ժամանակ չունենք, սիրելիս։ Ջամիլան ու Ջեյնաբը խոստացան, որ իրենք կթաղեն։

Աղջիկները համբուրեցին երեխային, որը նրանց համար փոքր եղբայր էր, ու խոստացան խնամքով թաղել շանը։ Շրթունքները պինդ սեղմած՝ Թովմասը սայլը բարձրացավ։ Մարոյի համար ծանր էր հրաժեշտի պահը, որը երիտասարդ թրքուհիները հնարավորինս երկարաձգում էին։ Նա շտապում էր հեռանալ, քանի որ նրա համար անտանելի ծանր էր իր տանը նայելը։

Ազնիվ խանումն ու Մարոն տեղավորվեցին նստարանի վրա։ Թովմասը կանգնած էր նրանց թիկունքում մի մեծ զամբյուղի վրա թառած։ Մարոն ճիպոտի ծայրով հարվածեց եզանը, և սայլը ճռճվելով շրջադարձ կատարեց։ Կենդանին ծանր քայլքով էր գնում, գլուխը ցած պահած։

— Հետ մի նայիր,– ասաց Ազնիվ խանումը դստերը։– Հիշիր Ղովտի կնոջը, որն աղի սյուն դարձավ։

Թովմասը խորհրդի կարիք չէր զգում։ Նա սևեռուն հայացքով նայում էր ծառուղում պառկած մարմնին, որի վրա հավաքվել էին կանաչ ճանճերը։ Նա ծածուկ սրբեց արցունքը։ Նրա ականջներում դեռ հնչում էր Սասունի հաչոցը։ Նա այլևս երբեք շան չի ունենա։

Տունը մնում էր հեռվում։ Այն մռայլ տեսք ուներ լուսամուտները փակող գորշ տախտակների պատճառով։ Արագիլների դատարկ մնացած բույնը թեքվել էր և կարծես պատրաստվում էր վայր ընկնել կտրից։ Օրեր շարունակ անխնամ մնացած մագլցող վարդի թփերը արդեն դեղնում էին։ Կարելի էր կարծել, որ տունը վաղուց էին լքել։ Մինչդեռ դեռևս մեկ շաբաթ առաջ այնտեղ հնչում էին ծիծաղ ու երգ, դաշնամուրի նվագ ու Ֆրանսերենի դասը պատասխանող երեխաների ձայներ։ Կահ-կարասին պետք է մնար այդտեղ կիսախավարի ու լռության մեջ, որպես անէացած երջանկության վկա։

Ջեյնաբն իրենց հետևից ջուր էր շփում։ Սովորության համաձայն նա ջուրը շփեց սայլը շարժվելուց հետո, որպեսզի ճանապարհորդությունը հաջող ընթանար։

— Թող Ալլահը ձեզ պահպանի։

Զեյնաբն իրենց ուղեկցեց մինչև դարպասը, ուր նրան էր սպասում Ջամիլան կապոցներով: Սվասում ապրող նրանց հորեղբայրը, որը պետք է աղջիկներին տուն ուղարկեր, տանում էր գրամոֆոնը, որը Մարոն նվիրել էր թրքուհիներին: Նա խոնարհվեց, ողջունելով Ազնիվ խանումին: Զեյնաբն ու Ջամիլան վազում էին սայլի կողքից: Նրանք սուգ ու շիվան էին անում: Ազնիվ խանումը գլուխը նրանց կողմը դարձրեց:

— Աղջիկներ, իմ փոքրիկ աղջիկներ, աղոթեք մեզ համար,— ասաց նա դողդոջուն ձայնով, աղջիկներին հորեղբորը միանալու նշան անելուց առաջ:

* * *

Չիու ընթացքից գնդապետ Իբրահիմը թմբիրի մեջ էր ընկել և անձնատուր էր եղել դրան: Նրա կողքին ընթացող լեյտենանտ Նեջիլը մտածեց, որ հրամանատարը ննջում էր թամբին, և դա հասկանալի էր, քանի որ իրենք ճանապարհին էին եղել ողջ գիշեր: Նրանք միայն մեկ անգամ էին դադար առել, ընդամենը կես ժամով: Իբրահիմը մտածում էր, որ այդ ժամին Սվասի հայերը պետք է լքեին քաղաքը: Վարդանի դատավարությունից հետո նա ուզում էր այցելել Մարոյին, սակայն գործուղման մասին հրամանը նրան հնարավորություն չէր տվել դա անել: Նա պետք է իր գնդի հետ միասին շտապ գնար Շապին-Գարահիսար փոքր քաղաքը, որը Սվասից երկու հարյուր կիլոմետրի վրա էր: Իմանալով Տրապիզոնի հայերի տեղահանությանը ուղեկցող ջարդերի մասին՝ Շապին-Գարահիսարի հայ ազգաբնակչությունը ապաստանել էր հին ամրոցում, և մի քանի օր շարունակ հետ էին մղում ոստիկանության ու բանակի հարձակումները:

Գունդը, իր թիկունքում թողնելով Հալիսը, հեռանում էր Սվասից և շարժվում էր դեպի բարձր լեռնաշղթան, որի կատարները ուրվագծվում էին երկնքի ֆոնին ծագող արևի ճառագայթների ներքո: Ցրված գագաթների այս զանգվածում ինչ-որ տեղ գտնվում էր Կարաբայիր կապանը: Լեյտենանտը, որը ծագումով Մարդինից էր, ատում էր լեռները, և իրենց ճանապարհին ծառս եղած այս սարերը նրան անանցանելի թվացին: Նա հանկարծ անտանելի հոգնածություն զգաց:

— Պարոն գնդապետ, չե՞ք կարծում, որ ձիերին հանգստանալու հնարավորություն պետք է տանք:

Կարծես չլսելով նրա հարցը՝ Իբրահիմը մռայլորեն հարցրեց.

— Նեջիլ, ձեր դուրը գալի՞ս է քաղաքացիական անձանց դեմ կռվելը:

— Դե... Դա զինված ապստամբություն է:

— Դուք չէի՞ք գերադասի, որ մեր ուժը չափեինք կոզակների հետ:

— Անկասկած, պարոն գնդապետ,– պատասխանեց լեյտենանտը պատրաստակամությամբ:– Եվ մենք նրանց փախուստի կմատնեինք:

Իբրահիմը միշտ հպարտությամբ երանգավորված երջանկության զգացում էր ապրում, երբ ձի հեծած առաջնորդում էր իր վարժեցրած գունդը, որը նա ընտրյալ էր համարում։ Սակայն այս հանձնարարությունը հակասում էր իր սկզբունքներին ու գաղափարներին, որոնք ինքը պաշտպանել էր մի քանի տարի առաջ որպես Իթթիհատի գործուն անդամ։ Զուտ ռազմական տեսակետից դա ուժի և ռեսուրսների անիմաստ վատնում էր։ Երկիրը զրկվում էր հայերի բանիմացությունից շատ կարևոր և բազմաթիվ ասպարեզներում։ Վարդանի ձերբակալությունը անդադար տանջում էր նրան։ Ինքը ոչինչ չէր կարող անել ընկերոջ համար։ Ինքը Սվասից կբացակայեր առնվազն մեկ, միգուցե և երկու շաբաթ։ Իր վերադարձի պահին Վարդանը կարող էր արդեն կախաղան հանված լինել։

Սարի ստորոտին հեղեղատում մի փոքր կեչուտ էր երևում։ Իբրահիմն այն ցույց տվեց լեյտենանտին.

— Մենք այնտեղ դադար կառնենք։ Երկու... ոչ, երեք ժամ։

* * *

Բանտախցի տասներեք բանտարկյալներից և ոչ մեկը այլևս ուշադրություն չէր դարձնում մեխի խզզոցին։ Սարգիս Զորյանն այդ մեխը գտել էր բակում, ուր իրենք օրը մեկ ժամ զբոսնում էին։ Այդ մեխով նա պատի վրա փորագրել էր բազմաթիվ խաչեր, իսկ դրանց տակ հայերեն ու թուրքերեն մի նախադասություն էր գրել. «Այստեղ անմեղ մարդիկ սպասել են մահվան, որին նրանք դատապարտվել են իրենց ազգության, լեզվի ու հավատքի համար»։ Եվ նա համբերատար փորագրում էր բոլոր ձերբակալված հայերի լրիվ անունները։ Առավոտից երեկո նա կլանված այդ գործով էր զբաղվում, քանի որ վախենում էր, որ իր հերթը կարող էր գալ աշխատանքն ավարտելուց առաջ։

— Սարգիս, մի քիչ դադար տուր,– ասաց Վարդանը, դեպի լուսամուտը գնալով։– Լսի՛ր։

Ուսուցիչը դադար տվեց։ Խաղաթուղթ խաղացող չորս տղամարդիկ անշարժացան, իսկ նրանք, ովքեր պառկած էին իրենց ծղոտյա ներքնակների վրա, նստեցին։ Նրանք լսեցին հեռավոր մի որոտ։

— Ամպրոպ է,– ասաց տղամարդկանցից մեկը։– Ի դեպ, Երկինքը մթնել է։

Սարգիս Զորյանը մեխը գրպանը դրեց ու մոտեցավ Վարդանին։

— Ոչ, սա փոթորիկ չէ։

Վարդանը նրան հրեց պատի մոտ.

— Կռացիր, որպեսզի ես ուսերիդ բարձրանամ։

Նա կանգնեց Սարգսի ուսերին և հասավ առաստաղի տակ գտնվող

ճաղապատ լուսամատին, կախվեց ճաղերից ուսուցչին իր քաշի մի մասից ազատելու համար: Լուսամուտը դեպի արևելք էր նայում, և նա տեսավ բլուրը, ուր գտնվում էր իր տունը:

Սաղարթի մեջ թաղված այդ սպիտակ լաքան...

— Ի՞նչ է դա,– հարցրեց անհամբեր մի ձայն:

Վարդանը ականջը մեկ այս, մեկ այն կողմն էր դարձնում աղմուկի աղբյուրը որոշելու համար: Նա արձանագրեց, որ այն բոլոր կողմերից էր գալիս: Անվերջանալի որոտ էր: Տեղահանությո՛ւն: Նա գետին ցատկեց: Բանտակիցները, բացատրություն ակնկալելով, որսում էին նրա յուրաքանչյուր շարժումը: Նա նետեց չարագուշակ ձայնով.

— Այս երեկո մենք միակ հայերը կլինենք քաղաքում:

Բոլորի գլուխները հակվեցին: Ոմանք իրենց դեմքը ձեռքերի ափերի մեջ թաքցրեցին: Մեկը տրտնջաց.

— Ինչո՞ւ ինձ այսօր առավոտյան չկախեցին:

Սարգիս Զորյանը ծնկի իջավ խաչերի առջև, որը նա փորագրել էր պատին, և սկսեց աղոթել: Երեք տղամարդ նրան մոտեցան: Մնացածները անշարժ կանգնած լռում էին: Վարդանը կանգնած մնաց լուսամատի տակ և նայեց նրանց, ում միացել էր նախօրեին՝ իր դատավարությունից հետո: Նրանք Վարդանին տարօրինակ կերպով հանգիստ թվացին: Նրանք անտարբերությամբ էին ընդունում մահը և իրենց ժամանակը սպանում էին խաղեր խաղալով և առօրեական զրույցներ վարելով: Այդ հնազանդությունը նա նկատել էր նաև առավոտյան բակում հանդիպած այլ բանտարկյալների վարքագծում:

Մինչդեռ ամեն օր պահակները նրանց թվից պատահական երեսուն կամ քառասուն մարդ էին ընտրում և տանում էին կառափնարան: Վարդանը կասկածում էր, որ իր բախտակիցների հանդարտությունը ընդամենը դիմակ էր, միջոց՝ կատարյալ հուսահատության գիրկը չգահավիժելու համար: Եվ նրա այդ ենթադրությունը հաստատվում էր նրանց կտրուկ բարոյալքմամբ: Նրանք համակերպվել էին ճակատագրի հետ, սակայն նրանցից ոչ մեկը չէր կարող համակերպվել այն մտքի հետ, որ իրենց ընտանիքները պետք է տեղահանվեին և ենթարկվեին այն անմարդկային վերաբերմունքին, որն այդքան վառ կերպով նկարագրել էր Շիրակ Թևոնյանը: Վարդանը նույն վիճակում էր, ինչ նրանք, սակայն կար մի տարբերություն, երբ նա պատկերացնում էր Մարոյին, Թովմասին ու Ազնիվ խանումին Սիրիայի անապատները տանող ճանապարհին, նա ոչ թե ընկճվում էր, այլ համակվում էր այնպիսի ընդվզումով, որ հրաժարվում էր ընդունել մահվան գաղափարը:

Ուսուցիչը ոտքի կանգնեց անզոր տեսքով և անարտահայտիչ ձայնով ասաց.

— Մեր դժբա՛խտ երեխաները... Մեր խե՛ղճ կանայք:

Հանկարծ նա վրդովմունքով համակվեց.

— Մենք հնարավորություն ունեինք խանգարելու դրան։ Պե՛տք էր անել այն, ինչ մեզ առաջարկում էր Շիրակ Թևոնյանը։ Մենք պե՛տք է պաշտպանվեինք։

Մինչ Սարգիսը կխոսեր, ենթադրություններ կաներ, թե ինչպիսին կարող էր լինել Սվասի ինքնապաշտպանությունը, կխարազաներ իր համաքաղաքացիներին անվճռականության համար, Վարդանը մտաբերում էր իր խոսակցությունը Շիրակ Թևոնյանի հետ վրանում։ Նա լռեցրեց Սարգսին.

— Անցյալը փոխել հնարավոր չէ։ Յուրաքանչյուրը վարվել է այնպես, ինչպես ճիշտ է համարել։ Դու չպետք է հանդիմանես որևէ մեկին, ինչպես նաև ինքդ քեզ։

Ուսուցիչը հանդարտվեց։ Վարդանն իրավացի էր։ Ափսոսանքն անիմաստ էր։ Գիտակցելով, որ սարկավագի իր կոչումը պարտավորեցնում էր հավատքի վկայություն ներկայացնել, նա փոխեց խոսակցության տոնայնությունը.

— Աստված մեզ կմիավորի իր գրկում։ Բարեկամներ, պատմությունը կպահպանի...

Վարդանը, վրդովվելով նրա հլությունից, ընդհատեց նրան.

— Պատմությո՞ւն։ Ո՞ւմ է պետք այդ պատմությունը։

— Մայոր Վարդան,– բացականչեց ուսուցիչը,– ես կարծում էի, որ քեզ պես մարդը...

— Դու ուզում ես, որ մենք կառափնարան գնանք շարականներ երգելո՞վ։

Վարդանը դարձավ դեպի մյուսները, որոնք հետաքրքրությամբ հետևում էին խոսակցությանը.

— Դուք դա՞ եք ուզում։

Տղամարդկանցից մեկը, որը քորում էր ոչլոտ գլուխը, փնթփնթաց.

— Իսկ ուրիշ էլ ի՞նչ կարող ենք անել։

— Փախուստի փորձ կատարել,– պատասխանեց Վարդանը։

— Սկզբում մենք խոսում էինք դրա մասին,– ասաց անբռնազբոս ձայնով մի երիտասարդ։– Անհնարին է։ Պատերը քարից են, ճաղերը հաստ, բոլոր ելքերը պահպանվում են։

Վարդանն այդ ամենը շատ լավ գիտեր, քանի որ նախորդ տարի նա այցելել էր բանտը, երբ բանտարկյալները դիզենտերիայով էին հիվանդացել։

— Համաձայն եմ, անհատական փախուստը փաստորեն անհնար է։ Սակայն խմբակայինը այլ բան է։

Տղամարդիկ հավաքվեցին նրա դիմաց։ Նրանք, ովքեր դեռ պառկած

էին, նստեցին։ Մազակալած դեմքերով, կեղտոտ ու ցնցոտիների մեջ փաթաթված այդ մարդիկ նման չէին հարուստ առևտրականների կամ խաղաղ արհեստավորների։ Նրանք ավելի շուտ նման էին մարդասպանների մի խմբի, որոնք պատրաստ էին ամեն ինչի, հատկապես որ Վարդանի խոսքերից հետո նրանց բոլորի աչքերը վառվում էին։

— Բացատրիր,— ասաց Սարգիսը, որի հետաքրքրասիրությունն արթնացել էր։

— Այս առավոտ, երբ մենք բակում էինք, երկաթյա դարպասը մի քանի րոպեով բացվեց։ Դուք նկատե՞լ եք, այդպես հաճա՞խ է լինում։

— Դա առնվազն մեկ անգամ էլ է պատահել այս չորս օրվա ընթացքում,— պատասխանեց բանտարկյալներից մեկը։

— Ահա, հաջորդ անգամ մենք կհարձակվենք դարպասի վրա ու դուրս կգանք։

— Պա՛հ,– հիասթափված ձայնով բացականչեց այն բանտարկյալը, որը գլուխն էր քորում։– Իսկ պահակներին ի՞նչ ես անելու։

— Ես հաշվեցի, չորս պահակ կար դարպասի այն կողմում, իսկ պատի վրա ինն էին։

— Դու մոռացար բակի անկյունում տեղակայված գնդացիրը սպասարկող երկու զինվորներին։

— Ես նրանց տեսել եմ,– պատասխանեց Վարդանը բարկացած։– Համաձայն եմ՝ տասնչորս պահակ կա ու մի գնդացիր։ Այդուհանդերձ...

— Գումարած մի քսան ոստիկան, որոնք նարդի են խաղում պահակատանը։

Վարդանը ձայնը բարձրացրեց.

— Ինձ մի՛ ընդհատեք։

Նա իսկույն հանգստացավ։

— Ինձ թվաց, որ զբոսանքի ժամանակ բակում մենք մոտ երեք հարյուր հոգի էինք։ Երբ բոլորս միասին դուրս կխուժենք, պահակները կրակ կբացեն։ Սակայն նրանք շատ չեն, ու անսպասելիության հանգամանքը մեր օգտին կլինի։ Մեծամասնությանը կհաջողվի փախչել։ Մինչ պահակատան ոստիկանները հասցնեն հասկանալ, թե ինչ է կատարվել, մենք արդեն փողոցում կլինենք։ Այնտեղ կցրվենք ու յուրաքանչյուրը իր գլխի ճարը կտեսնի։

Տղամարդիկ անվստահ միմյանց էին նայում։ Սարգիսը հարցրեց.

— Քանի՞ հոգի կենդանի կմնա, ի՞նչ ես կարծում։

— Չգիտեմ։ Սակայն, եթե նույնիսկ տասը փրկվեն, ապա արժե փորձել։ Մի մոռացեք, որ բոլորս կախաղան ենք հանվելու։ Ինչ վերաբերում է

ինձ, ապա ես պարանին գնդակն եմ գերադասում։

Այս փաստարկը նրանց մտածելու առիթ տվեց։ Մեկը հարցրեց.

— Փախչելուց հետո ի՞նչ ենք անելու։ Քաղաքը լի է զինվորներով։

— Դուք բոլորդ շատ լավ գիտեք քաղաքի փողոցներն ու նրբանցքները։ Եթե հաշվի առնենք մեր հայրենակիցների կողմից լքված տները, խանութներն ու պահեստները, ապա թաքստոցների պակաս չի զգացվի։ Գիշերն ընկնելուն պես դուք գնում եք դեպի սարերը և... Աստծու ողորմածությանն եք ապավինում։

Սարգիսը հետ ու առաջ էր քայլում բանտախցում և այտերն էր շփում.

— Փաստ է, որ մենք կորցնելու բան չունենք։

Մնացածները ևս քննարկեցին առաջարկը և շուտով եկան նույն եզրակացության։ Վարդանն ավելացրեց.

— Վաղը զբոսանքի ժամանակ իմաց տվեք մնացածներին։ Եվ երբ ներկայանա առաջին իսկ հնարավորությունը... Որքան շատ սպասենք, այնքան քիչ կլինեն նրանք, ովքեր մի փոքր հույս կունենան փրկվելու։

— Իսկ մնացածները կհամաձայնե՞ն։

— Դուք պետք է նրանց համոզեք։

— Իսկ եթե վերջին պահին մարդիկ վախենա՞ն և դեպի դուռը վազող մարդկանց խումբը փոքր լինի՞։

— Դա էլ է հնարավոր,– համաձայնեց Վարդանը։– Անհնարին է ամեն ինչ կանխատեսել։

Դրանից հետո նրանց համար ժամանակը երկար էր ձգվում։ Յուրաքանչյուրը կարծում էր, որ փրկվելու իր հնարավորություններն ավելի էին, քան մյուսներինը, և հույս ուներ, որ մինչև փախուստի փորձը իրեն կախաղան չէին հանի։ Վարդանը պառկեց ու աչքերը փակեց։ Նա մտքում գծում էր շրջակայքի քարտեզը։ Նա ջանում էր հիշել փողոցների ու տների ամենաաննշան մանրամասները, ընտրել հնարավոր մի քանի ուղերթ։ Պետք է խուսափեր մնացած փախստականների ընկերակցությունից, որպեսզի իրեն հեշտ չգտնեին։ Այս ծրագրերը նրան հնարավորություն էին տալիս շատ չմտածել կնոջ և որդու մասին։

* * *

Մարոն իր սայլը կանգնեցրեց Արմենի սայլից հետո։ Նա ձիավարելու կոշիկներ էր հագել և ոտքերը սայլի եզրին հենած պինդ բռնել էր երասանը։ Շատ շուտով նա նկատեց, որ դա ավելորդ էր, քանի որ եզը խոնարհ հետևում էր իրենցից առաջ ընթացող սայլին։

Արաքսին շրջվեց Ազնիվ խանումի հետ զրուցելու համար, սակայն

անիվների ճռռոցը անհնարին էր դարձնում ցանկացած խոսակցություն։ Եվ բացի դրանից, իրենց ասելիքը հասկանալու համար հերիք էր նույնիսկ մեկ հայացքը։ Միմյանց լուռ ողջունելուց հետո յուրաքանչյուրը խորասուզվեց իր աղոթքի մեջ։

Նման լռություն էր տիրում նաև մնացած սայլերում։ Բոլորի դեմքերը տխուր էին, աչքերն արցունքից կարմրած։ Նույնիսկ երեխաները լռում էին՝ լայն բացելով տագնապով լի աչքերը։ Միայն ամենափոքր երեխաներն էին, որ ուրախ ճռվողում էին։ Սայլերում տղամարդ գրեթե չկար, միայն շատ ծեր տղամարդիկ և մինչև տասնչորս տարեկան տղաներ։ Կանանցից քչերն էին մտածել դեմքը ծածկելու մասին, և Ազնիվ խանումը դա անզգուշություն համարեց։

Հայկական թաղի ստորին մասը առաջինն էր դատարկվել և երբ բարձր քաղաքի տեղահանվողները անցնում էին թաղի ստորին մասով, նրանք տեսան, թե ինչպես էին գյուղացիները, չքավորներն ու նույնիսկ ոստիկանները տենդագին թալանում լքված տները։ Մարոն մտածեց, որ նույն ճակատագրին էր արժանանալու իր սեփական տունը և որ դռներին ու լուսամուտներին ամրացված տախտակները ոչինչ չէին փոխելու։ Ինչ վերաբերում է խանութներին, ապա դրանք կանոնավոր կերպով էին թալանվում, զինվորները սպաների ղեկավարությամբ ապրանքը բարձում էին արաբաների մեջ։

Շուկայի հրապարակում մարդիկ, խիտ ցանկապատ կազմելով, շարվել էին ճանապարհի երկու կողմերում, իսկ տեղահանվողները շարժվում էին մարդկային այդ միջանցքով։ Շրջիկ վաճառականները բարձրաձայն ջուր, հյութեր, միրգ ու քաղցրավենիք էին առաջարկում հետաքրքրասերներին։ Ներկաներից շատերը բռունցք էին թափ տալիս և հայհոյանքների տարափ էին թափում տեղահանվողների վրա, խոստանալով հաշվեհարդար տեսնել այն հայերի հետ, որոնք իրենց ձեռքը կընկնեին։ Միայն ոստիկանների ներկայությունն էր, որ խանգարում էր նրանց գործի անցնելու, իսկ երբեմն էլ որևէ երիտասարդ պայուսակ կամ զամբյուղ էր փախցնում տեղահանվողներից և միանում էր անդեմ ամբոխին, որը նրան ողջունում էր ուռաներով։ Խորքում վաճառականները հետևում էին իրենց վաճառասեղաններին։ Նրանց մեծ մասը մտահոգ տեսք ուներ։ Տեղահանվողների մեջ նրանք տեսնում էին հաճախորդների և իրենց հաշիվ էին տալիս, որ առևտուրը տուժելու էր այդ տեղահանումից։

Կավալ թաղը տարբերվում էր շուկայի հրապարակից։ Քողերով ծածկված մահմեդական կանայք իրենց լուսամուտներից դիտում էին այդ ելքը և նրանց հայացքներում կարեկցանք էր նշմարվում։ Նրանք հասկանում էին, թե ինչ էր նշանակում օջախ կորցնելը, փաստորեն ամեն ինչ կորցնելը։ Կիսամերկ երեխաները, որոնք սովորաբար իրենց վազվզոցով ու ծիծաղով կյանք էին հաղորդում փողոցին, անշարժ կանգնած էին դռների դիմաց և վախեցած նայում էին սայլերում նստած երեխաներին ու մտածում էին, թե արդյոք ի՞նչ հանցագործություն պետք է գործած լինեին նրանց ծնողները, որ նրանց բոլորին այդպես քշեին քաղաքից։

Ժամանակ առ ժամանակ Արմենը սրտապնդող նշաններ էր անում Ազնիվ խանումի ընտանիքին։ Մարոն, աչքերը կկոցած, նայում էր եզան մկանոտ պարանոցին, նա մտածում էր Վարդանի մասին։ Ինքը հեռանում էր նրանից, և այդ բանը զգում էր իր ողջ էությամբ։ Ինչ-որ բեռ ջախջախում էր նրան, օդը չէր հերիքում։ Նա այնպիսի զգացում ուներ, որ իր ներսում ինչ-որ բան պատռվում էր, որ անիվի յուրաքանչյուր պտույտն իրեն սպանում էր։ Նա մատի վրա դարձնում էր իր ամուսնական մատանին և չնկատեց, թե ինչպես շարժվելով պարսպի ավերակների մոտով, անցան կամուրջը։

Թովմասը ոտքի կանգնեց՝ դժվարությամբ պահպանելով հավասարակշռությունը մի կույտ վերմակների վրա։ Իրենցից առաջ մինչև հորիզոն ձգվում էր մի շարասյուն, որի երկայնքով գնում և գալիս էին ձիավորները։ Երեխան երբեք այդքան մարդ չէր տեսել։ Նրանք բազում էին, և նրանց սայլերը փոշի էին բարձրացնում, որը կախված էր մնում անշարժ օդում։ Նա հետ նայեց և տեսավ, թե ինչպես է քաղաքից դուրս հոսում մարդկային անսպառ գետը։

Արևմուտքում սև ամպեր էին կուտակվում։ Դրանք հսկայական լեռնաշղթա էին կազմում իսկականի վերևում, որն անհայտանում էր գորշ մառախուղի մեջ։ Երկինքն արագորեն մթնում էր։ Զնայած բառաչին, սմբակների դոփյունին ու անիվների աղմուկին, լսվեց քամու սուլոցը։ Բարդիները ճկվեցին ու դաշտավայրն ավլելով, ավազի փոթորիկ բարձրացավ։

— Փոթորիկ,– փնթփնթաց Ազնիվ խանումը,– մենակ սա էր պակասում։

Նա միացավ Թովմասին և դժվարությամբ հաստ պաստառով ծածկեց իրենց իրերը։

— Տակը մտիր,– ասաց նա թոռանը։

Քամին, իր հետ բերելով ավազի հատիկներ, որոնք ճանկռտում էին մաշկը, իրենց հասավ։ Մարոն գլուխը կախեց և դեմքը ծածկեց սև չարսավով, բաց թողնելով միայն աչքերը։ Օդը սառեց, և հորդ անձրև տեղաց։ Քսան քայլի վրա ոչինչ չէր երևում։ Եզները հրաժարվում էին առաջ շարժվել։

— Ճանապարհորդությունը վատ է սկսվում,— արձանագրեց Ազնիվ խանումը։

Մարոն գերադասեց չպատասխանել։ Եթե միայն անձրևը լինե՛ր։ Քսան րոպե անց փոթորիկը նույնքան հանկարծ հանդարտվեց, որքան սկսվել էր։ Ամպերը դեպի արևելք շարժվեցին, ու քամին դադարեց։ Երկինքը դարձյալ կապույտ էր, անամպ, իսկ արևն սկսեց գոլորշիացնել խոնավությունը։ Արտերը գոլորշու շղարշի մեջ էին։ Եզների սմբակները թաղվում էին ճանապարհին գոյացած ցեխի մեջ, իսկ անիվները խորը ակոսներ էին թողնում։

Կես ժամ անց անձրևի հետքն անգամ չկար։ Հողից ջերմության ալիքներ էին բարձրանում, օդը տատանվում էր, շրջակայքը հստակ չէր

երևում, իսկ հորիզոնը լողում էր։ Կանաչ ու դեղին դաշտերը, ուր աշխատում էին գյուղացիները, ծառերի շարքերը, արտերի եզրերին մեկուսի կանգնած տները, հեռացող քաղաքը, դեղին սարերը,— այս ամենը անիրական էր թվում։ Միակ իրական բանը սայլի ցնցումներն էին և բերանը լցվող ու կոկորդն այրող փոշու տտիպ համը։

Սվասից ութ կիլոմետր դեպի հարավ քարավանը դադար առավ դաշտավայրում։ Ոստիկանները հրամայեցին ճամբարել գիշերվա համար, չնայած մութը դեռ չէր ընկել։ Երկար ժամանակ կատարյալ խառնաշփոթ էր տիրում։ Յուրաքանչյուրն ուզում էր միանալ իր ազգականներին կամ բարեկամներին, և այդ պատճառով խցանումներ էին գոյանում։ Ոստիկանները բղավում էին և մտրակներն էին թափահարում։ Կամաց-կամաց ճամբարը կազմակերպվեց։ Արմենն ու Մարոն իրենց սայլերը միմյանց նկատմամբ անկյան տակ կանգնեցրեցին, և դա մտերմիկ մթնոլորտ ստեղծեց։ Եզների ոտքերը կապ գցեցին և թողեցին, որ արածեն սայլերի մոտ։

— Հարկավոր է նրանց ջուր տալ,— ասաց Արմենը բերանն օղիով ողողելով և այն կուլ տալով։

— Ես լիքը տիկ ունեմ,— ասաց Ազնիվ խանումը։

— Ջուրը խնայեք, երբեք չգիտես, թե ինչ կլինի։ Կարծում եմ, այստեղ պետք է որ ջրհոր լինի, գնամ տեսնեմ։

— Կարո՞ղ եմ ձեզ ուղեկցել, կնքահայր,— հարցրեց Թովմասը, որը տղամարդու ներկայության կարիք էր զգում։

Արմենը կռահեց, որ երեխան իրեն ավելի ապահով էր զգում իր ներկայությամբ։

— Արի, դու ինձ կօգնես։ Նրանք գնացին՝ հետները տանելով երկու պղնձյա դույլ։

— Մենք պաստառը կձգենք սայլերի միջև, որպեսզի հով լինի,— ասաց Ազնիվ խանումը։— Մարո՞։

Մարոն, արձանի պես անշարժացած, նայում էր քաղաքին, որը նմանվում էր Թեջիր լեռան ստորոտին իջած միրաժի։ Մայրը ձեռքը դրեց նրա ուսին։ Մարոն ցնցվեց, իսկ Ազնիվ խանումն ասաց ջերմ ձայնով.

— Մի՛ անհանգստացիր նրա համար։ Նա ճարպիկ տղամարդ է։

— Եթե իմանայիր, թե որքան եմ աղոթել և դեռ շարունակում եմ աղոթել նրա համար,— ավելացրեց Արաքսին նրան մխիթարելու համար։

Ազնիվ խանումը գրկեց Մարոյին և ասաց նրա ականջին.

— Ողջամիտ եղիր...

Ողջամի՛տ։ Մարոն գիտեր, որ իր էության մի մասը երբեք «ողջամիտ» չէր լինելու և չէր համաձայնելու ընդունել, որ կյանքը կարող էր իրեն բաժանել Վարդանից։ Ինչպե՞ս կարող էր ողջամիտ լինել, երբ իրենից

խլում էին իր ամենաթանկ բանը։ Ինչ իմաստ կարող էր ունենալ իր կյանքը հեռու այն տղամարդուց, որին նա նվիրել էր իր ողջ էությունը։ Նրա ստամոքսը կծկվեց, արյունը զարկվում էր քունքերին, նա ճչալու ցանկության ուներ։

— Մարո՛,- կրկնեց մայրը։

Մարոն չպատասխանեց։ Շրթունքները կծելով՝ նա մորն օգնեց պաստառը քաշել սայլերի միջև։ Ամենաչնչին շարժումը նրանից մեծ ջանք էր պահանջում։

Արաքսին պարան էր անցկացնում պաստառի անցքերի մեջ։ Նա ուզեց լավատես թվալ.

— Արագիլը միշտ իր բույնն է վերադառնում։

Ազնիվ խանումը, ինչպես և Մարոն, հոնքերը կիտեցին։ Իրենց կտրի բույնն այս գարուն դատարկ էր մնացել։ Արաքսին տեսավ, որ իր խոսքերը ցանկալի արդյունքի չբերեցին, սակայն նա չդադարեց ասացվածքներով խոսել։

— Չար բախտը պետք է բարի սրտով դիմավորել։

— Հեշտ է ասել,- պատասխանեց Մարոն սրտնեղած։

Ազնիվ խանումը լրացրեց Արաքսիի խոսքերը.

— Այո, մեզ պատուհասած դժբախտությունից պետք է դուրս գալ նվազագույն կորուստներով։ Եվ ապրել ներկայով։

— Եվ միմյանց օգնել դժբախտության մեջ,- ավելացրեց Արմենի կինը։

Մարոն սիրով լի աչքերով նայեց ծեր կանանց։ Նա չկարողացավ իրեն զսպել և տխուր ժպտաց։

— Մի վախեցեք, ես բեռ չեմ դառնա ձեզ համար։

Թովմասն ու կնքահայրը վերադարձան երկու լիքը դույլ բերելով։ Արմենը ոչինչ չասաց, սակայն նրա պարանոցի ջլերը լարված էին, և ճակատի երակը պրկվել էր։ Արաքսին զայրույթի նշաններ նկատեց ամուսնու կեցվածքում։ Նա վերցրեց դույլերը, քանի դեռ Արմենը չէր սկսել ձեռքերը թափ տալ և ջուրը չէր թափել։ Նա իր ֆեսը գետնովը տվեց և տրորեց այն մռնչալով.

— Շան որդիներ։ Առնետի ծնունդ։ Թող իրենց Ալլահը նրանց աքացի տա մինչև վերջին դատաստանը։

— Արմեն,- ասաց Արաքսին։— Դու չպետք է այդպես խոսես սանիկիդ ներկայությամբ։

Թովմասը պաշտպանեց կնքահորը.

— Ոստիկանները չար են։

Արաքսին հանգստացրեց ամուսնուն, և նա բացատրեց իր զայրույթի պատճառը։

— Ոստիկանները պահպանում են ջրհորը, իսկ ջուրը վաճառում են։ Այս շները վաճառում են Տիրոջ ջուրը։ Ի՞նչ է մեզ սպասում հետագայում։

Անասունը գլուխը դեպի ջուրն էր ձգում։ Արաքսին նրանց ցույց տվեց.

— Նախ, նրանց ջուր տուր, այդ դեպքում կոպիտ բառեր չես ասի։

Նախորդ գիշեր Արաքսին չէր կարողացել քնել և, զբաղվելու համար, մորթել և փետրել էր չորս հավ։ Զնայած նա դրանք փաթաթել էր թաց կտորի մեջ, հավերը շոգից կորցրել էին թարմությունը և ևս մեկ օր չէին դիմանա։ Արաքսին երկու հավ տվեց ամուսնուն.

— Տուր որևէ կարիքավոր ընտանիքի։

— Ճիշտ ժամանակին է։ Ես ուզում էի շրջայց կատարել ճամբարում,– ասաց Արմենը՝ մի կապոցից լույս աշխարհ հանելով նավապետի իր գլխարկը։ Նա ուզում էր տեսնել, թե ինչպես էին իր հայրենակիցները տեղավորվել և, բացի դրանից, հույս ուներ նորություններ իմանալ։

Արաքսին վառեց սպիրտայրոցը և հավերը դրեց եփելու։ Ազնիվ խանումը բանջարեղեն մաքրեց աղցանի համար։ Մարոն, Թովմասի օգնությամբ, անկողինները փռեց պաստառի վրա։ Երեխան հոգնածությունից ոտքի վրա չէր մնում, և Մարոն պառկեց նրա կողքին՝ նրան քնեցնելու համար։

Մարդիկ մի կերպ տեղավորվում էին գիշերելու։ Նրանք խմբվել էին, ինչպես մրսկան հոտը։ Հովիվ չկար, միայն պահապան շներ՝ ոստիկաններ կային, որոնք շրջապատել էին ճամբարը փախուստի փորձերը կանխելու նպատակով։ Հաճախ կույր հավատով զինված ծերերը բարոյական նեցուկ էին երիտասարդների համար և հետևում էին ճամբարի կենսագործունեությանը։

Արմենը հանդիպեց Մանվելին՝ կերպասեղենի վաճառականին, որի հետ մոտ յոթ ամիս էր, ինչ սառը հարաբերությունների մեջ էր։ Նրանք վիճել էին իրենց հողամասերը բաժանող ցանկապատի կապակցությամբ։ Որքա՜ն չնչին էր նրանց այսօր թվում այդ վեճը։ Նրանք ավելորդ բառեր չասացին և հաշտվեցին գրկախառնությամբ։ Մանվելը Արմենին օղի հյուրասիրեց, իսկ մյուսը նրան ծխախոտ տվեց ծխամորճի համար։ Նրանք ճանապարհի մի փոքր կտոր միասին գնացին, բարևելով ծանոթներին, մեկին սրտապնդելով, մյուսին խորհուրդ տալով։ Այդ իրավիճակում ամենասովորական նախադասությունները հուզմունքով էին արտաբերվում նույնիսկ իրար գրեթե անծանոթ մարդկանց միջև։

Խոտի վրա փռած սփռոցի վրա հինգ մետաղյա ափսե էր դրված։ Նրանք ծալապատիկ նստեցին սփռոցի շուրջը։

— Զեռքո՞վ ենք ուտելու,– զարմացավ Թովմասը, որին մայրը ջանացել

էր կիրթ վարվեցողություն սովորեցնել։

— Այսուհետ,– պատասխանեց Մարոն,– մենք այլ կյանքով ենք ապրելու։

Նա մի պահ լռեց՝ փնտրելով այնպիսի օրինակներ, որոնք չէին վախեցնի երեխային։

— Մենք, անկասկած, չենք կարողանա լողանալ այնքան հաճախ, որքան անհրաժեշտ է։ Ոչ էլ կկարողանանք հաճախ փոխել մեր հագուստը։ Սակայն սա ժամանակավոր բան է։ Հետո ամեն ինչ կլինի այնպես, ինչպես առաջ էր։

— Ինչի՞ց հետո, մայրիկ։

Միսը թռավ Մարոյի կատիկը և նա այն թքեց ափի մեջ։ Ինչի՞ց հետո։ Ի՞նչ պատասխանել այս հարցին, ուր շոշափվում էր իրենց բոլորի ապագայի հարցը։ Մեծերը շփոթված միմյանց նայեցին։

Արմենը դանակի ծայրով մաքրեց ատամները և, դանակը խրելով հողի մեջ, ասաց.

— Գիտես, հոգիս, այն ամենը, ինչ կատարվում է մեզ հետ, նման է նավարկության։ Դու գիտես, թե երբ ես ծով դուրս գալու, սակայն երբեք չգիտես, թե երբ կհանգրվանես մյուս նավահանգստում։ Դա կախված է հոսանքներից, քամիների ուղղությունից։ Դու չգիտես նաև՝ փոթորիկ լինելո՞ւ է, թե ոչ, հանդիպելո՞ւ ես դու ծովահենների, թե ոչ։ Հենց այդ պատճառով է, որ միշտ պետք է խնայել մթերքն ու ջուրը։ Մենք պետք է նույն բանն անենք։

Կնքահոր խոսքերը մի քիչ անհասկանալի էին, սակայն երեխան գլխով արեց։ Արմենի ուրվագծած պատկերից նա հասկացավ, որ իրենց ճանապարհորդության մեջ ինչ-որ անհայտ ու անհաստատ բան կար։ Նա ուզեց ցույց տալ, որ ամեն ինչ հասկացել էր.

— Մեր սայլերն իբր նավե՞ր են։

— Որոշ չափով, այո։

Մարոն երախտագիտությամբ ժպտաց Արմենին։ Նա հպվեց որդու թևին.

— Դու երազում էիր նավարկել նավապետ Արմենի հետ։ Ահա և հնարավորություն ունես քեզ իսկական նավաստու պես պահել։

— Դու ինձ թույլ կտա՞ս եզը վարել, մայրիկ։

— Այո, երբ ճանապարհը կհեշտանա։

Նրանք շարունակեցին ուտել՝ իրար դիմելով միայն անհրաժեշտության դեպքում։ Ի դեպ, ճամբարը զարմանալիորեն հանդարտ էր, չնայած կազմված էր հազարավոր մարդկանցից։ Նույնիսկ ճամբարի զբաղեցրած տարածքը՝ մի քանի տասնյակ հեկտար, որի վրա բարձրանում էր խարույկների ծուխը, ստիպում էր տեղահանվածներին գիտակցելու

իրենց պատուհասած դժբախտության չափը: Դա մի քաղաք էր, որը տեղափոխել էին բաց դաշտ: Քանի՞ այդպիսի քաղաք կար այդ երեկո Անատոլիայի տարածքում: Ո՞ր երկիրը այդքան մեծ կլիներ մի ամբողջ ժողովուրդ ընդունելու համար: Այժմ, երբ մեկնելու պահն անցել էր, մարդիկ սկսել էին գիտակցել, թե ինչ էր իրենց հետ պատահել:

Արևը թեթևակիորեն կարմրեց հորիզոնի ատամնավոր գծի հետևն անցնելուց առաջ:

Արաքսին նկատել էր, որ իր ամուսինը գրգռված էր և որ նա փորձում էր հնարավորինս թաքցնել այդ ոգևորությունը, որը նրան համակել էր Մանվելին հանդիպելուց հետո:

— Ի՞նչ ես իմացել,-— հարցրեց նա ամուսնուն:

— Ոչ մի կարևոր բան,- պատասխանեց նա, Թովմասի կողմը կզակով նշան անելով:

Երբ երեխան քնեց սայլերի միջև քաշած ծածկի տակ, մեծերը հեռացան իրենց թեյի բաժակներով: Շոգից հետո էլ հիմա մոծակները նրանց դադար չէին տալիս: Բարեբախտաբար Ազնիվ խանումը մեղրախոտի յուղ ուներ, որով կարելի էր պաշտպանվել նրանց խայթոցներից: Արմենը կանանց հաղորդեց այն նորությունները, որոնք պտտվում էին ճամբարում: Նրանք կանգ էին առել քաղաքին այդքան մոտ, որովհետև սպասում էին շրջակայքի գյուղերից տեղահանված բնակչությանը:

— Քաղաքում խուզարկություններ են իրականացվում: Նրանք հայտնաբերել էին դատարկ տներ և կասկածում են, որ դրանց բնակիչները թաքնվել են իրենց թուրք բարեկամների մոտ:

— Ի՞նչ տրամադրություն է տիրում ճամբարում,— հարցրեց Ազնիվ խանումը

— Լարված: Բոլորը վատթարագույնին են սպասում: Մեր պահապաններից շատերը իրականում ոստիկաններ չեն, այլ նախկին հանցագործներ, որոնց համազգեստ են հագցրել: Իսկ մենք ընդամենը կանանց, ծերերի և երեխաների խումբ ենք: Քարտերը նրանց ձեռքում են: Սակայն նրանք չգիտեն...

Նա կանանց նշան արեց մոտ գալու և ասաց ձայնն իջեցնելով.

— Մենք վաղն անցնելու ենք Սուրբ Հուդա վանքի մոտով: Այն լքված է: Դեռևս երկու շաբաթ առաջ վանականներին մորթել են: Ֆիդայիները ու Սվասի երիտասարդները այնտեղ դարան են մտնելու և հարձակվելու են մեր պահակախմբի վրա:

Կանայք զարմացած էին: Ազնիվ խանումը չէր հավատում.

— Ասեկոսեներ են:

— Ոչ, ոչ: Սարգիս Զորյանի ավագ որդին, որը միացել էր կամավորներին, զգուշացրել է մորը:

— Իսկ մերոնք կարո՞ղ են հաղթել,— հարցրեց Մարոն հետաքրքրված։

Արմենը անվստահ դեմք ընդունեց.

— Ես չգիտեմ։ Ավելի լավ կլինի չսպասել ընդհարման ավարտին, այլ փախչել։ Խառնաշփոթ կլինի, և մենք դրանից կօգտվենք։

— Դա շատ վտանգավոր է,- հակաճառեց Ազնիվ խանումը։

Արաքսին համամիտ էր նրա հետ։ Մարոն, հակառակը, գտնում էր, որ պետք չէր առիթը բաց թողնել։

— Այո, դա վտանգավոր է,- համաձայնեց Արմենը։- Սակայն հաշվի առնելով, թե ինչ է մեզ սպասում...

— Ոստիկանները մեզ կսպանեն նապաստակների պես,- սարսափեց Արաքսին։

— Նրանք զբաղված կլինեն կամավորներից պաշտպանվելով։

Դա Արաքսուն չհանգստացրեց։ Արմենը շոյեց նրա թիկունքը։

— Կինս, մենք ընտրություն չունենք։ Նա գիտեր, որ այդ փորձությունն անհաղթահարելի էր Արաքսու համար։ Նրա այտուցված ոտքերը և թույլ սիրտը հնարավորություն չէին տալիս վազելու։ Նա գիտեր նաև, որ ինքն Արաքսուն չէր լքի։ Ազնիվ խանո՞ւմը։ Նա նույնպես ի վիճակի չէր փախչելու։ Դե, ինչ արած։ Պետք էր մտածել միայն Թովմասի ու Մարոյի մասին։ Մարոն ուժեղ էր ու ճարպիկ, նա ճանաչում էր այդ շրջանը, քանի որ ոտքի տակ էր տվել Վարդանի հետ։

— Ինչպե՞ս ենք կազմակերպելու,— հարցրեց Մարոն։

— Հենց որ փոխհրաձգությունը հասնի գագաթնակետին, ես քեզ նշան կանեմ։ Փախեք դեպի սարերը։ Յուրաքանչյուրի համար մի պարկ ուտելիք պատրաստեք, ոչ ավել։ Կարևորը փախչելն է, հետո մի բան կհնարենք։

Մարոն, ոգևորվելով, մտքում ծրագրեր էր կազմում։ Նա եզրակացրեց, կարծես, իր համար.

— Այստեղ շատ քարանձավներ և այրեր կան, լքված փարախներ։ Իսկ գիշերները ճամփա կտրելով մենք կարող ենք հասնել Ջեյնաբի ու Ջամիլայի գյուղը։

Նա արդեն պատկերացնում էր, թե ինչպես ինքը Սվաս կվերադառնար, երբ այնտեղ ամեն ինչ կխաղաղվեր։ Իբրահիմ Այիզադեն իրեն կօգներ գտնել Վարդանին։ Բայց եթե իր ամուսինը... Ոչ, նա հրաժարվում էր դիտարկել այդ հնարավորությունը։ Ամեն գործ իր ժամանակն ուներ։ Նախ պետք էր թողնել շարասյունը։

Արաքսին սարսափած տեսք ուներ։ Արմենը դեմքը մոտեցրեց կնոջ դեմքին և նայեց ուղիղ նրա աչքերին։ Նա ուշադիր հայացքով էր նայում, ուր կինը նշմարեց սեր և ջերմություն։ Եվ նա հիշեց, որ պայմանավորվել էին իրենց զոհաբերել հանուն երիտասարդների։ Ուրեմն պահը եկե՞լ էր։

Այդքան շո՞ւտ։

Արմենը շշնջաց հուզված, սակայն վճռական ձայնով.

— Մենք միասին կլինենք... մինչև վերջ։

Այդ խոստումը բավական էր Արաքսու համար։ Ազնիվ խանումը, որը նրանց կողքին էր, հասկացավ, թե ինչ տեղի ունեցավ ամուսինների միջև։ Իհարկե՛։ Արաքսին դժվարությամբ է քայլում։ Իսկ ի՞նքը։ Կկարողանա՞ր արդյոք հետևել իր դստերն ու թոռանը լեռնային արահետներով։ Մարոն պետք է այնքան վճռական լիներ, որ շարունակեր ճանապարհը առանց իրեն։

— Մենք կանենք այն, ինչ դու առաջարկում ես, Արմեն,— ասաց Ազնիվ խանումը։— Բայց եթե մեկն ուժասպառ ընկնի, ապա մնացածները չպետք է կանգ առնեն նրա պատճառով։

— Բնականաբար,— հաստատեց Արմենը։— Արաքսին էլ ինձ հետ համամիտ է։

Մարոն ապշեց։ Շլանալով Սվասի մերձակայքում մնալու գաղափարով՝ նա բոլորովին չէր մտածել Ազնիվ խանումի և Արաքսու հնարավորությունների մասին։ Մնացածները շրջվեցին նրա կողմը, սպասելով նրա վճռին։ Անհնար էր, որ Մարոն չհոգար մոր մասին, սակայն խուսափելով վիճաբանությունից, նա ընդունեց այդ պայմանը։

Նրանք նոր էին պառկել ծածկի ասակ, երբ ջահերով գինված ոստիկանները ներխուժեցին ճամբար։ Լաց ու կոծ լսվեց։ Ոստիկանները ձերբակալում էին իրենց ընտանիքներին ուղեկցող մի քանի տղամարդկանց, նույնիսկ դեռահասներին։ Կրակոց լսվեց, որին հետևեց մի կնոջ հեծկլտոցը, նրա ամուսնուն սպանել էին։ Մի ջահ էր մոտենում։ Արմենը վեր կացավ, ասելով.

— Չշարժվեք, քնած ձևացեք։

Թովմասն իր մոր և տատի միջև էր պառկած։ Մարոն դեմքն արեց նրան, երեխային սեղմեց կրծքին ու դեմքը ծածկեց վերմակով։

Արմենը հանեց գլխարկը, որպեսզի ոստիկանները տեսնեին իր ճերմակ մազերը և չսխալվեին իր տարիքի վերաբերյալ։ Նա կանգնեց ծածկի դիմաց։ Երեք ոստիկան հայտնվեցին։ Մի պահ նա վախեցավ, որ եկել էին հրդեհի կապակցությամբ։ Սակայն նրանցից մեկի գլխին մի մեծ զամբյուղ կար, իսկ մյուսի ձեռքին նավթավառ։ Ամենաերիտասարդը՝ բարձրահասակ և նիհար ոստիկան, երկու հրացան էր տանում։

— Մերհաբա։ Ինչո՞վ կարող եմ օգնել,— հարցրեց Արմենը քաղաքավարի, սակայն վստահ ձայնով։

Նավթավառով ոստիկանը ձեռքը պարզեց.

— Մեզ պետք է վճարես։

— Ինչո՞ւ։

— Որպեսզի ձեզ պահպանենք ճանապարհին։ Ավազակներ կան։

Առանց վիճաբանության, Արմենը գրպանից թղթադրամներ հանեց։ Տասնմեկ լիվր, որոնք ոստիկանը խլեց նրա ձեռքից։

— Մենք գերադասում ենք արծաթյա կամ ոսկյա դրամներ։

Արմենը մեղավորը տեսք ընդունեց.

— Ես աղքատ գյուղացի եմ։

Մինչդեռ իր գործընկերները սայլերն էին խուզարկում, ամենատարեցը գլուխն անցկացրեց ծածկի տակ.

— Տղամարդիկ կա՞ն։

— Միայն ծեր կանայք և մեկ որբ։

— Ջահել աղջիկ չկա՞,– հարցրեց ոստիկանը ծիծաղելով։– Ես հաճույքով գեղեցիկ հայուհի կվայելեի։

— Ոչ։

Ոստիկանն իր հրացանի փողով մի կողմ տարավ Արաքսուն ծածկող վերմակը։ Նույն պահին Ազնիվ խանումը վեր թռավ, կարծես, արթնացած լիներ։ Նա զարմացած ձևացավ.

— Ի՞նչ է պատահել։

— Քնիր,– պատասխանեց Արմենը։– Մեր պահապանները շրջայց են կատարում։

Քանի որ ոստիկանի ընկերները հայտնաբերել էին օղու շշերը, որ Արմենը թաքցրել էր ծղոտի մեջ, նա նրանց միացավ։ Նրանք նաև մի երշիկ տարան և բանջարեղեն։ Արմենը մի քիչ սպասեց, որպեսզի համոզվեր, որ չէին վերադառնալու, և պառկեց քնելու։

Մարոն վախեցել էր։ Բոլոր երիտասարդ տեղահանվածները գայթակղություն էին այս տղամարդկանց համար, որոնք, անկասկած, շաբաթներով զուրկ էին կանանցից։ Ազնիվ խանումը նույն մտահոգությունն ուներ, քանի որ շշնջաց.

— Քողդ չհանես։ Դու պետք է հղի ձևանայիր։

— Դա ինձ կխանգարեր փախուստի ժամանակ։

Ազնիվ խանումը շոշափեց Թովմասին և Մարոյի ափն իր ափի մեջ առավ.

— Հիշո՞ւմ ես։ Երեխա ժամանակ ուզում էիր, որ ձեռքդ բռնեմ քնելիս։

Մարոն համբուրեց մոր մատները։

Դեմ դիմաց պառկած Արմենն ու Արաքսին գիշերվա մի մասը զրուցելով անցկացրեցին։ Նրանք այնքան ցածր էին խոսում, որ միջատների բզզոցը ծածկում էր նրանց ձայնը։

* * *

Շարասյունը տեղից շարժվեց լուսաբացից հետո և մեկ ժամ անց հասավ սարերին։ Այստեղ այն բաժանվեց բազմաթիվ խմբերի՝ յուրաքանչյուրում երեքից չորս հարյուր սայլ, որոնք պետք է տարբեր ուղղություններով շարժվեին։ Արմենն ու Մարոն գտնվում էին շարասյան գլխամասում և կցվեցին այն սայլերին, որոնք պետք է գնային Սուրբ Հուդա վանքի ճանապարհով։

Նրանք շարժվում էին չորացած գետի հունի երկայնքով ձգվող վատ ճանապարհով։ Երեք ժամից հասան առաջին լեռնաճյուղին։ Արևն այրում էր մարդկանց վերևից, իսկ շիկացած ժայռերը արտացոլում էին արևի ճառագայթները։ Եզներն արդեն ուժ չունեին բառաչելու համար։ Նրանք փորձում էին պոչով քշել մեջքներին նստած ճանճերին։ Ճանապարհի շրջադարձից առաջ, որից հետո Հալիսի հովիտն այլևս չէր երևալու, Մարոն վերջին հայացքը նետեց Սվասի վրա՝ սադափե զարդատուփի մեջ դրված սադափե զարդին։ Նրա սիրտը ճմլվեց։ Հետո նա նայեց իր դիմացը ծավալվող, տեղ-տեղ տատասկով և դեղնած խոտի խրձերով պատված լանջերին, քարքարոտ կիրճերին ու մերկ ժայռերին։ Նրա մարմնով դող անցավ։

Ընդամենը կես օր էր անցել, ինչ իրենք ճանապարհ էին ընկել, սակայն ժամանակը ջնջվել էր։ Շոգից տառապող տեղահանվածներին թվում էր, որ ողջ կյանքը ճանապարհորդում էին այդ անապատում։ Ոստիկանները նրանց հանգիստ չէին թողնում և ստիպում էին արագացնել ընթացքը սայլապանների դեմ մտրակ բանեցնելով։ Ոչինչ հնարավոր չէր անել, քանի որ հոգնած եզները ուշադրություն չէին դարձնում ճիպոտների հարվածներին։ Գլուխը կախ նրանք ճանապարհին էին նայում և տեղ էին փնտրում իրենց կճղակները դնելու համար։

Երբ նրանք մագլցում էին զառիթափ մի արահետով, տեղահանվածները խուճապի մատնվեցին։ Մարդիկ նայում էին ճանապարհը երիզող հեղեղատին։ Սայլապանները ոտքի էին կանգնում լավ տեսնելու համար և անմիջապես հետ էին նստում նստարաններին։ Մարոն հետևեց նրանց հայացքներին։ Նա ճչաց։ Նա երբեք այդպիսի սարսափելի բան չէր տեսել։ Դիակնե՛ր։ Մարմինների սար՝ իրար խառնված ոտքեր, ձեռքեր։ Մարմինների կույտ, որը դարձել էր շների ու չախկալների բաժին։ Միայն տղամարդկանց դեմքեր։

— Աստված ի՛մ,— տնքաց Ազնիվ խանումը։

— Թովմասը...- շշնջաց Մարոն մոր ականջին։

Ազնիվ խանումը հասկացավ։ Նա երեխային գիրկն առավ ու նրա ուշադրությունը շեղեց ցույց տալով ուրուրներին, որոնք շրջաններ էին կատարում անամպ երկնքում։

— Դրանք բոլոր կողմերից են գալիս։ Ինչո՞ւ են այստեղ հավաքվում,-

հարցրեց Թովմասը։

— Ի՞նչ իմանաս։ Թռչունների մտքով երբեմն զարմանալի բաներ են անցնում։

— Այս թռչուններից վատ հոտ է գալիս,– բողոքեց երեխան քիթը փակելով։

Փտող մարմինների հոտը սրտխառնոց էր առաջացնում։ Լեշ։ Դրանք չէին կարող այն տղամարդիկ լինել, որոնց ձերբակալել էին նախորդ գիշեր։ Բացի դրանից, սրանք այնքա՛ն շատ էին։ Բոլորը ենթադրեցին, որ դա Սվասի այն հայերն էին, որոնցից կազմել էին «աշխատանքային ջոկատները» հինգ օր առաջ։ Կանայք, որոնք բոլոր պատճառներն ունեին ենթադրելու, որ իրենց ամուսինները կամ որդիները այդ մահացածների մեջ էին, աղիողորմ ճիչեր արձակեցին, իսկ արձագանքը բազմապատկեց այդ ճիչերը։ Լուսաբեր այրին, որի երկու որդիները ձերբակալվել էին, մոտեցավ հեղեղատի եզրին։ Վշտից խելագարվելով, նա ուզում էր իջնել հեղեղատը և գտնել նրանց մարմինները։ Ոստիկաններից մեկը մտրակով հարվածեց նրան, որպեսզի նա շարասյուն վերադառնար։ Կինը կատաղած հարձակվեց նրա վրա։ Պայքարը կարճ տեեց։ Երկրորդ ոստիկանը նրա գլխին խփեց հրացանի կոթով։ Նա ուշագնաց եղավ։ Տղամարդիկ իրար նայեցին և կնոջ մարմինը վիհը նետեցին։

Թովմասն այդ տեսարանին ականատես չեղավ, քանի որ իրենց սայլը խոչընդոտ էր հաղթահարում։ Կամաց-կամաց լաց ու կոծը հանդարտվեց, և հաջորդ ժամվա ընթացքում շարասյունը շարժվում էր քար լռության մեջ։

Վայրէջք սկսվեց։ Արմենը Մարոյին նշան արեց։ Վանքն էր երեում։ Արևի ճառագայթները ոսկեզօծել էին նրա պատերը։ Քարքարոտ լանջին թիկնած, երկու գմբեթով պսակված ուղղանկյուն շենքը վեր էր խոյանում հովտի վրա։ Վանքը շրջապատված էր պարսպով, որի մոտ մի քանի ծառ էր աճում։ Դաշտերը տարիներ շարունակ չէին մշակվել։

Արաքսու կարծիքով իրենք շատ արագ էին շարժվում։ Դրանք իր վերջին րոպեներն էին։ Նա չէր վախենում, միայն անսահման ափսոսանք էր զգում ամուսնուց բաժանվելու համար։ Միայն թե ինքը հեռանար նրանից առաջ, չտեսներ նրա մահը։ Նա գլուխը դրեց Արմենի ուսին և ձեռքը տարավ դեպի նրա կուրծքը՝ բաճկոնի տակ թաքցրած ատրճանակը շոշափելու համար։

— Խոստացիր, որ թույլ չես տա, որ ես երկար տանջվեմ։

Արմենը լուրջ էր։ Նա շոյեց կնոջ այտը առանց պատասխան տալու։ Կատարվելիքի մասին չմտածելու համար Արաքսին մտովի վերադարձավ Սվասի իրենց փոքր տունը։ Նա հատկապես սիրում էր ձմռան երեկոները։ Տանիքի վրայով քամին էր սուրում, ձյունը երբեմն հարվածում էր ապակիներին։ Լամպի լույսի ներքո իրենք դոմինո էին խաղում և փոքր կումերով խմում էին սալորից նրա պատրաստած ըմպելիքը։ Քիչ էին խոսում, սակայն միմյանցից աչք չէին կտրում։

Արմենը գլուխն էր տմբտմբացնում։ Այդ շարժումն անելով նա ցույց էր տալիս, որ ինքը շատ երջանիկ էր։ Այժմ իրենց տունը վերածվել էր մոխրացած ավերակի...

Մարոն զննում էր շրջակայքը և փորձում էր ընտրել այն ուղղությունը, որով պետք է առաջնորդեր յուրայիններին։ Թաքնվելու տեղ քիչ կար։ Հարկավոր էր ընտրել աջ կողմում գտնվող լանջը։ Այն ծածկված էր ժայռաբեկորներով, որոնք որոշ չափով կքողարկեին իրենց փախուստը։ Ինչպե՞ս էր Ազնիվ խանումը հաղթահարելու այդ դժվար ճանապարհը։ Սակայն այլընտրանք չկար։ Մարոն մորը ցույց տվեց այն ճանապարհը, որով իրենք պետք է փախչեին։

— Ես այդ նույն եզրակացությանն էի եկել,— հաստատեց Ազնիվ խանումը։

— Լանջը զառիթափ է։ Դո՞ւ...

— Թովմասի մասին մտածիր, դա քեզ բավական կլինի,— պատասխանեց մայրը կտրուկ կերպով։— Ես գագաթին ձեզնից շուտ կհասնեմ։

— Մենք պետք է խմբված մնանք,— հայտարարեց Մարոն, որին այդ ինքնավստահությունը չէր խաբել։

— Ես քեզ արգելում եմ ինձ սպասել,— ասաց Ազնիվ խանումը խիստ ձայնով։— Երկուսիդ համար թաքստոց կգտնես։ Ես ձեզ կմիանամ թաքստոցում։ Այլապես...

Մարոն ընդդիմացավ.

— Մայրիկ։

— Եթե դու ինձ սիրում ես, ապա կանես այնպես, ինչպես ես եմ քեզ ասում։ Դու պետք է միայն Թովմասի մասին մտածես։ Այս երեխայի մեջ խտացել է քո ու Վարդանի, Հակոբի ու իմ կյանքը։ Եթե նա զոհվի իմ պատճառով, ապա իմ ողջ կյանքը ապարդյուն անցած կլինի։

Մարոն գլուխը կախեց ու լուռ լացեց։ Ազնիվ խանումն անվրդով էր։ Նա դարձավ դեպի Թովմասը և նրան նշան արեց իրեն մոտենալու։ Նա բռնեց երեխայի ուսը։

— Մի քիչ հետո փախչելու ենք։

— Եվ գնալու ենք հայրիկի մոտ,— ավելացրեց երեխան ոգևորությամբ։ Առավոտից, երբ մայրն իրեն հայտնել էր իրենց ծրագրի մասին, նա անհամբերությամբ այդ պահին էր սպասում։— Դուք կտեսնեք, տատիկ, մենք...

Տատը նրան թափ տվեց.

— Ինձ լսիր։ Միշտ եղիր մորդ հետ, նրա ձեռքից քաշիր, որպեսզի նա արագ վազի առանց կանգնելու։ Իմ շունչը միգուցե չհերիքի, և ես ավելի դանդաղ կվազեմ։ Ես չեմ ուզում, որ Մարոն ինձ սպասի, դու ինձ

հասկանո՞ւմ ես։

— Բայց տատիկ, ես ձեր ձեռքն էլ կբռնեմ։

Ազնիվ խանումը ժպտաց.

— Ոչ, ես չեմ կարող երկար վազել։ Ես ձեզ կմիանամ ավելի ուշ՝ նավապետ Արմենի ու Արաքսու հետ։

Թովմասը գլխով արեց։ Ազնիվ խանումը համբուրեց նրա այտերն ու ճակատը։

— Մի օր, Թովմաս, դու կմեծանաս և երեխաներ կունենաս։ Կուզենայի, որ դու քո առաջին դստերն իմ պատվին Ազնիվ անվանես։

Որքան մոտենում էին, այնքան վանքն ավելի տպավորիչ էր թվում։ Տեղահանվածները սկսեցին հուզվել։ Ճի՞շտ էր արդյոք, որ հայ կամավորներն այնտեղ դիրքեր էին գրավել։ Կկարողանայի՞ն արդյոք իրենք փախչել։ Այս լեռնե՞րը, որ իրենց շրջապատում էին։ Ամեն ինչ ավելի հեշտ էր թվում նախօրեին, երբ խոսում էին այդ ամենի մասին։ Հիմա շատերը սկսել էին կասկածել այդ ծրագրի իրականանալիության վրա, իսկ շատերն էլ որոշեցին փախուստի փորձ չանել։

Ջանգակատանը երկու զանգ էին փայլում։ Բաց դռնից շարքով դուրս էին գալիս կամավորները վանականների հագուստներով, վեղարները դեմքներին իջեցրած։ Մոտ քսան հոգի էին և շարժվում էին դեպի քարավանը։ Բազմաթիվ ոստիկաններ թաքնվում էին առաջին սայլերի հետևում։ Հանկարծ նրանք սկսեցին կրակել վանականների վրա։ Մի քանի հոգևորականներ վայր ընկան։ Մնացածները նահանջեցին դեպի վանքի դարպասը՝ բարձրացնելով հագուստի տակից հանած հրացանները։ Սակայն նրանք չէին համարձակվում կրակել, վախենալով դիպչել տեղահանվածներին։ Պարսպի վրա հրացաններ երևացին։ Այնտեղից կամավորներն ավելի լավ կարող էին նշան բռնել։ Նրանք սպանեցին բազմաթիվ ոստիկանների, որոնք շրջում էին սայլերը դրանց հետևում պատսպարվելու համար։ Վանականներր շենք մտան ու փակեցին դռան փեղկերը։ Նրանք պարսպի մոտ խոտի վրա մոտ տասներկու մարտիկ էին թողել։ Ընդհարումը երկու բոպեից էլ պակաս տևեց։

Առաջին կրակոցները լսելուն պես Արմենը կանգնեց իր սայլի նստարանին ճակատամարտին հետևելու համար։ Նա վանքից մոտ երեք հարյուր մետրի վրա էր։ Արդյոք եկե՞լ էր փախչելու պահը։ Նա հայացք նետեց աջ կողմում գտնվող սարին։ Զինվորնե՞ր։ Հարյուրավոր զինվորներ դիրքավորվում էին սարի գագաթին։ Նրանք իշխում էին վանքին և գնդակոծում էին այն։ Պաշտպանվողները պատասխան կրակ բացեցին, սակայն հաջողության չհասան, քանի որ զինվորները թաքնվել էին ժայռերի հետևում։ Սարի գագաթին տեղադրված երկու գնդացիրներ գնդակների տարափ տեղացին վանքի վրա։

Մարոն հետևում էր զինվորներին։ Նրանք գտնվում էին հենց այն

վայրում, ուր նա մտադիր էր փախչել։ Հովիտը շրջապատում էին ուրիշ զինվորներ։ Ձեռքի շարժումով Արմենը նրան հասկացրեց, որ ճանապարհից դուրս գար։ Արագ ընթացող զինվորների մի գունդ շարժվում էր սայլերի շարասյան ուղղությամբ։ Զինվորներին առաջնորդող սպան, անցնելիս, թրով հարվածում էր տեղահանվածներին։ Լիակատար խառնաշփոթի մեջ հայերը փորձում էին թաքնվել հեղեղատում։ Զվարճանալու համար, թե կատաղությունից, գնդացիրներից մեկի զինվորները կրակն ուղղեցին տեղահանվածների վրա։ Ճիչեր լսվեցին։ Մի քանի հոգի վիրավորվել էին։

Մարդիկ թաքնվեցին սայլերի տակ։ Արաքսին ստիպված էր աղերսել ամուսնուն, որպեսզի նա թաքնվեր։ Նա թաքուն ուրախանում էր, որ փախուստը տապալվել էր։ Նրան ևս մի քիչ ժամանակ էր մնում ապրելու։ Միգուցե իրենք վա՞ղն էին մեռնելու։ Համենայն դեպս ինքը մեկ օր շահել էր։ Նա թաքցրեց իր ուրախությունը, քանի որ Արմենը կատաղությունից փրփրել էր։ Դավաճանությո՛ւն։ Բանակին զգուշացրել էին ծուղակի մասին, և ֆիդայիները իրենց կյանքն իզուր էին զոհաբերել։

Ազնիվ խանումն ու Մարոն երեսնիվայր պառկել էին գետնին՝ իրենց միջև առնելով Թովմասին։ Նրանց գլխավերևով պատահական գնդակներ էին անցնում։ Երեխան աղոթում էր տատի հետ միասին։ Մարոն ի վիճակի չէր աղոթելու։ Նրա վերջին հույսը ցնդում էր։ Հուսահատ, նա նայում էր մանուշակների մի փնջի, որը տրորել էին զինվորները։ Սակայն նա ծաղիկները չէր տեսնում, այլ տեսնում էր Վարդանի աչքերը, նրա ջերմ հայացքը, երբ նա հակվում էր Մարոյի վրա և սիրո խոսքեր էր ասում, տեսնում էր նրա փայլող հայացքը վեճի ժամանակ։ Նա իր կյանքը կտար այդ աչքերի առջև հայտնվելու համար։ Նա ձեռքը մեկնեց, սակայն նրա մատները ոչինչ չգտան։

Արմենը, վազելով, եկավ նրանց մոտ.

— Լա՞վ եք։

— Ոչինչ,– պատասխանեց Մարոն։

Նրա հիասթափությունն ակնհայտ էր։ Արմենն ասաց վստահ ձայնով.

— Էլի հնարավորություններ կլինեն։ Երբ մենք որևէ հարմար վայրում գիշերենք, ապա կկարողանանք փախչել։ Հավատա ինձ։

Մարոն լուռ էր։

Արմենը գնաց։ Մերթ սողալով, մերթ չորեքթաթ նա անցնում էր սայլերի մոտով, որպեսզի հասներ օգնության կարիք ունեցողներին։ Նրա ուշադրությունը գրավեցին լացի ձայները։ Նա մոտեցավ կանանց մի խմբի, որոնք կռացել էին արնոտված աղջնակի վրա։ Մի գնդակ գրեթե պոկել էր նրա ձախ ձեռքը, իսկ մյուսը դիպել էր կրծքին։ Փոքրիկ զոհը հազիվ ութ տարեկան էր։ Նրա մայրը սանրում էր նրա մազերը և խոսում էր հրա հետ, կարծես նա ողջ լիներ։ Նրա երկու եղբայրները և քույրը լաց էին լինում դեմքները ափերի մեջ թաքցրած։ Գալստյան

այրին Արմենին մի կողմ տարավ.

— Թող իրենց վշտի հետ մենակ մնան։

Կնճռոտ դեմքով այս ծեր կինը Սվասում դեղատուն ուներ։ Արաքսին նրանից տարբեր թուրմեր էր գնում։ Այրին կախարդի համբավ ուներ։ Նա գիտեր բուժիչ բույսերի գաղտնիքները, սակայն առաջարկում էր նաև վիժեցնող թուրմեր և այլ թույներ։

— Ուրիշ զոհեր կա՞ն– հարցրեց Արմենը։

— Դեռ կլինեն։ Առնվազն երեք վիրավոր մինչև երեկո չի ապրի։

— Կարո՞ղ եմ որևէ բան անել։

Այրին ցույց տվեց իր տոպրակը, ուր նա իր դեղերն էր պահում։ Նրա ձեռքն արնոտ էր։

— Ես ամեն ինչ արել եմ։

Արմենը հրաժեշտ տվեց նրան, սակայն այրին նրան պահեց.

— Նավապետ Արմեն։ Թույն կուզե՞ս պրծնելու համար։ Ես չեմ վաճառում, ուղղակի տալիս եմ։

Արմենը վրդովվեց.

— Կախարդի մեկը։

Ծեր կինը ծամածռվեց.

— Մենք բոլորս սատկելու ենք։ Ես դա կարդացել եմ սուրճի նստվածքի մեջ։ Խաղաքարտերն էլ հաստատում են դա։

Արմենը, բարկացած, հեռացավ նրանից Արաքսու մոտ գնալու համար։ Այրին, խռպոտ ձայնով, ասաց նրա հետևից.

— Դու միգուցե դեռ կափսոսաս, որ հրաժարվեցիր այն հանգիստ մահից, որ ես քեզ առաջարկեցի։

Մեկ ժամից ավելի էր, ինչ վանքը պաշարված էր։ Այնտեղ ապաստանած մոտ երկու հարյուր հիսուն հայերից միայն երեսունն էին ի վիճակի զենք կրել։ Նրանց մեծ մասը դեռահասներ էին, որոնք վատ էին կրակում։ Մարտի սկզբում նրանք հրացաններն էին լցնում, իսկ հիմա ստիպված էին կռվել փորձված զինվորների դեմ։ Կրակի կիզակետում գտնվող վանքի բակն ու պարիսպը երիզող պատշգամբը ծածկված էին դիակներով։ Պաշտպանվողները կարող էին պատսպարվել միայն զանգակատանը և եկեղեցու բարձր լուսամուտների մոտ և այնտեղից կրակել։

Չնայած դրան, վանքի առումը թանկ էր նստելու բանակի վրա։ Այդ հասկանալով, զինվորները վճռեցին օգտագործել կանանց։ Նրանք կանանց զույգ-զույգ կապեցին և իրենց առջևից քշելով այդ կենդանի վահանը, շենքին մոտեցան։ Գերեվարված կանայք կոչ էին անում իրենց

հայրենակիցներին կրակելու, սակայն նրանք չկրակեցին։ Զինվորները նռնակներ նետեցին, որոնք պայթեցին բակում, դիակների մեջ։ Ողջերը պատսպարվել էին եկեղեցու հաստ պատերի հետևում։

Արձանագրելով նռնակների անարդյունավետությունը՝ հարձակումը ղեկավարող երիտասարդ կապիտանը դադարեցրեց կրակը։ Տարօրինակ լռություն հաստատվեց։ Պաշտպանվողները նույնպես պահպանեցին հրադադարը։ Կենդանի վահան կազմող տասնութ կանանց հրամայեցին դեպի եկեղեցու դուռը գնալ։ Լաց ու կոծով նրանք ենթարկվեցին հրամանին։ Երբ կանայք ճանապարհի կեսին էին, զինվորները կրակեցին նրանց վրա։ Զորս-հինգ տարեկան մի երեխա, որի մայրը զոհերի թվում էր, վազեց մոր մոտ։ Կրակոց լսվեց, և երեխան վայր ընկավ փոշու մեջ։ Հեծելազորի սպան մազերը հետ գցեց և ձեռքերը բերանին դնելով բղավեց.

— Հանձնվե՛ք։ Այլապես կգնդակահարեմ շարասյան բոլոր հայերին։

Գնդացիրները նորից կրակ բացեցին։ Քիչ անց զանգակատան վրա սպիտակ դրոշ հայտնվեց։ Կրկին հրաձգությունը դադարեց։

— Դո՛ւրս եկեք,– հրամայեց սպան։

Նա գոհ էր և ծխախոտ վառեց։

Դռները բացվեցին։ Հայտնվեցին դիմադրողները՝ ձեռքերը վեր բարձրացրած։ Ոմանք վիրավոր էին։ Շիրակ Թեոնյանի մարդկանց կարելի էր ճանաչել հագուստով և փամփշտակալներով։ Նրանք պահպանել էին երկար դաշույնները, որոնք կախված էին գոտիներից։ Մնացածները՝ Սվասի երիտասարդները, ցնցոտիներով էին։ Նրանց մեջ էր Վարուժ Զորյանը՝ ուսուցչի ավագ որդին, որն ընդամենը տասնհինգ տարեկան էր։

Նրանց շարեցին պարսպի տակ, իսկ զինվորները խուզարկում էին վանքը, փնտրելով վերապրածներին։ Քիչ անց լսվեց սպանվող վիրավորների խռխռոցը։ Գնդակահարությունը ղեկավարելու հաճույքը սպան իրեն վերապահեց։ Նա հագավ ձեռնոցները և դասակը կազմող մարդկանց ստիպեց համազգեստը կարգի բերել։ Նա բարձրացրեց թուրը։

— Նշա՛ն։

— Կեցցե՛ Հայաստանը,— բղավեց Շիրակի տեղակալը, որը վճռել էր դարանը կազմակերպել։

Այդ կոչը կրկնեցին նրա գործընկերները։ Համազարկը խլացրեց նրանց ձայները։ Հրաշքով երիտասարդ Զորյանին գնդակ չէր դիպել։ Սարսափով նա նայում էր իր տապալված ընկերներին և զինվորներին, որոնք նույնպես զարմացած էին։ Սպան մոտեցավ տղային և ասաց.

— Երկու համազարկը դժբախտություն է բերում։

Սրի հուժկու հարվածով նա գլխատեց Վարուժին, որի դուրս պրծած

աչքերով գլուխը ընկավ գնդակահարվածներից մեկի փորին։ Սպայի հարվածը ուռաներով ընդունվեց։ Դասակի զինվորները շտապեցին վերցնել դիակների վրա եղած բոլոր արժեքավոր իրերը։

Տեղահանվածներին հրամայեցին շարունակել ճանապարհը։ Դա հեշտ չէր անել։ Երբ սայլերը ճամփեզրից միաժամանակ դուրս էին գալիս ճանապարհի վրա, նրանց անիվներն ագուցվում էին միմյանց։ Շարասյունն անցավ վանքի մոտով։ Զինվորները կիտում էին դիակները, իսկ սպաները ուրախ զրուցում էին վանքի դռան մոտ։ Արմենն իր սայլը կանգնեցրեց նրանց մոտ և իջավ։ Նա ներկայացավ ամենաբարձր աստիճան ունեցող սպային՝ հեծելազորի երիտասարդ կապիտանին։ Վերջինս հեգնանքով նրան նայեց։

— Գրազ կգամ, որ դու թույլտվություն ես խնդրելու նրանց թաղելու համար,– ասաց նա ցույց տալով դիակները։

— Ոչ, պարոն կապիտան,—– պատասխանեց Արմենն անվրդով տեսքով։

— Հապա ի՞նչ։

— Եզները ծարավ են և չեն կարող երկար քայլել, եթե նրանց ջուր չտանք։

— Համբարակային հարցերով դիմեք ոստիկաններին։ Ես ավելորդ ժամանակ չունեմ։

Արմենը պնդեց.

— Վանքում ջրամբար կա։

— Ես ասացի, ո՛չ,– պատասխանեց սպան ձայնը բարձրացնելով։— Շարժվի՛ր, քո սայլը փակել է ճանապարհը։

— Մենք չենք կարող երկար այսպես շարունակել

— Դե ուրեմն դուք կսատկեք, և այդպիսով մենք փամփուշտներ կխնայենք։

Երկու երիտասարդ հայեր ֆեսերը ձեռքին մոտեցան նրանց։

— Կապիտա՜ն, կապիտա՜ն,– ասաց նրանցից մեկը, սպային դիմելով։— Մենք էինք ձեզ զգուշացրել։

— Այո,— ավելացրեց մյուսը։— Մենք պարգևի իրավունք ունենք։

— Մենք կուզենայինք Սվաս վերադառնալ և պատրաստ ենք մահմեդականություն ընդունել։

Արմենը կարմրեց։ Նա դարձավ իր հայրենակիցներին ու բղավեց.

— Շնե՛ր։ Դավաճաննե՛ր։ Դուք ձեր սեփական մորը կմատնեիք։

Նա թքեց նրանց երեսին։ Օսմանյան սպաները փոթկացին։

— Սրանց կարելի էր կռվեցնել աքլորների պես,– ասաց նրանցից մեկը։

— Ես ավելի լավ գաղափար ունեմ,– հակադարձեց կապիտանը՝ Արմենին ատրճանակ մեկնելով։– Սպանիր սրանց։

Արմենն արհամարհանքով նայեց նրան և վերադարձավ սայլի մոտ։ Զայրացած մի ոստիկան նրան էր սպասում։ Նա մտրակի կոթով հարվածեց նրա դեմքին։ Արմենը հարվածը կուլ տվեց առանց բողոքելու։

— Հառա՛ջ, հառա՛ջ,– հրամայում էր ոստիկանը։

Արմենը նստեց վախից դողացող Արաքսու կողքին։ Թովմասը հետևել էր կնքահոր գործողություններին, չենթարկվելով մորը, որն արգելել էր վանքի կողմը նայել։ Նա նկատել էր տղամարդկանց և կանանց դիակները, հատկապես երեխայի դիակը, որը մնացածներից մի քիչ հեռու էր։ Նա պառկած էր կողքի վրա լայն բացված աչքերով։ Ինչպես Սասունն այգում։ Թովմասը չէր կարողանում աչքը կտրել այդ փոքրիկ մարմնից։ Նա կարծում էր, որ մահանում էին միայն մեծերը, ոչ երբեք երեխաները։

Նա տեսավ, թե ինչպես էր երիտասարդ կապիտանը բարձրացնում ատրճանակը և սպանում երկու երիտասարդ հայերին, որոնք նրան աղերսում էին։ Գնդակները դիպել էին նրանց ճակատներին, և մարմինները միաժամանակ մեջքի վրա ընկան։ Որքա՜ն հեշտ էր մեռնելը։ Թովմասը կռացավ սայլից դուրս ու հետ տվեց։

* * *

Վանքից հետո վերելքը դժվարին էր։ Սարի գագաթին հասնելով՝ տեղահանվածները շունչ քաշելու ժամանակ չունեցան։ Մահակները գործի դնելով՝ պահակազորը նրանց ստիպեց ճանապարհը շարունակել։ Մարոն իր սայլը վերցրեց մի ծեր կնոջ՝ Գյուլու Աբայանին, որի սայլը շուռ էր եկել։ Նրան ուղեկցում էին թոռնիկները Սոսին ու Մարիցան՝ տասներկու տարեկան զույգերը։ Նրանց տարբերելն անհնար էր։ Աղջիկները գեղեցկադեմ էին, վեր ցցված քթերով և փոքրիկ խելացի աչքերով։ Նրանց երկար հյուսքերը հասնում էին ուսերին։ Ազնիվ խանումը և նորեկները խմեցին տիկի տաք ջուրը, որը ծարավը գրեթե չէր հագեցնում, սակայն մեռոն էր չորացած բերանի և կոկորդի համար։

Ճանապարհը վերածվեց ոլորապտույտ մի արահետի, որը գցել էին ամառանոց քշվող հոտերը։ Այժմ շարասյունը շարժվում էր քամուց ծեծված մի սարահարթով։ Արևն ավելի մոտ էր թվում և իր ամբողջ քաշով ծանրացել էր քարքարուտներին։ Այստեղ միայն տատասկ էր աճում, որը ուտում էին սովահար այծերը։ Երիտասարդ մի հովիվ զարմանքով նայեց քարավանին։ Նա մոտեցավ շարասյանը պանիր առաջարկելու համար, սակայն ոստիկանները նրան մի կողմ հրեցին՝ նրա ուլերից մեկը խլելուց հետո։

Քարավանը շարժվում էր փոշու ամպի մեջ, որը շնչել չէր տալիս։ Երևում էին առջևից և հետևից ընթացող երեք-չորս սայլերը։ Սակայն

կողքերից տեսադաշտը բաց էր մինչև հորիզոնի մանուշակագույն սարերը: Մարոն նկատեց, որ հեռվում քարավանին զուգահեռ հեծյալներ էին շարժվում, անկասկած հնարավոր փախստականներին ձերբակալելու համար: Թովմասը տեղափոխվել էր կնքահոր սայլը: Մարոն երասանը հանձնեց մորը և նստեց սայլի մեջ զույգ աղջիկների հետ: Աղջիկները շփոթված էին: Նրանց ծնողները Տրապիզոն էին գնացել, և նրանք հույս չունեին նրանց գտնելու:

Քարավանը շարժվեց ամբողջ օրվա ընթացքում առանց նշմարելու իր նպատակակետը և այնքան միապաղաղ բնապատկերի մեջ, որ մարդկանց թվում էր, թե տեղից չէին շարժվում: Ճամբարեցին միայն մայրամուտից հետո, մի տափաստանում, ուր ոչ ծառ կար, ոչ ջուր: Արմենն ու Մարոն այնպես արեցին, որ իրենց սայլերը հայտնվեին ճամբարի կենտրոնում, քանի որ գիշերը սպառնալից էր թվում: Անասուններին ջուր տալու և արածեցնելու ոչ մի հնարավորություն չկար: Մարդիկ նրանց էին տալիս իրենց ունեցած ջրի մնացորդը: Ունեցած բանջարեղենը թոշնում էր և Մարոն եզներին կերակրեց թոշնած մառուլով և կաղամբով: Քանի որ ջեռոցի համար վառելիք չէր մնացել, իսկ շրջակայքում փայտ չկար կրակ վառելու համար, ստիպված եղան չոր կերակուր ուտել՝ պանիր, ղաուրմա և չոր հաց:

Մութն ընկավ, և ցերեկվա շոգն իր տեղը զիջեց թարմ քամուն, որը զովացրեց նրանց քրտնած մարմինները: Սակայն ջերմաստիճանն էլ ավելի նվազեց: Նրանք սարերում էին, և գիշերը խոստանում էր ցուրտ լինել: Գյուլու Աբայանը ամեն ինչից զրկվել էր:

— Մենք մի վերմակ ունենք, որը կարող ենք ձեզ տալ,- ասաց Արաքսին:

— Բացի դրանից, բրեզենտը կա: Մի անհանգստացեք, մի բան կմտածենք:

Գյուլուն անհարմար էր զգում.

— Տեղ ձեր սայլում... կերակուր... ջուր...

Նա փորձեց մատից հանել մաշված ոսկյա մատանին, սակայն այն չանցավ այտուցված հոդից:

— Ո՞վ է խոսել փողի մասին,– վիրավորվեց Ազնիվ խանումը:

Գյուլուն ձեռքը սրտին սեղմեց.

— Աստված ձեզ կհատուցի: Չգիտեմ, թե ինչ կլիներ մեզ հետ, եթե դուք չլինեիք:

Նա ցույց տվեց իր թոռներին, որոնք մի քիչ հեռու էին նստած: Նրանք արձակել էին իրենց հյուսերը և սանրում էին իրար մազերը փոքր սանրով: Նրանց կողքին նստած Թովմասը առանց խոսքի կիսաձայն երգում էր: Այդ տեսարանը մեծերի հիացմունքը շարժելու փոխարեն, ցավ պատճառեց:

— Խեղճ երեխաներ,– շշնջաց Արմենը։

Նա ոտքով քարը մի կողմ շպրտեց և ասաց.

— Գնամ տեսնեմ՝ ինչպես են մնացածները։

— Ես քեզ հետ եմ գալիս,— ասաց Արաքսին ձեռքը ամուսնուն մեկնելով, որպեսզի նա իրեն օգներ ոտքի կանգնելու։

Նա հենվեց ամուսնու ուսին, իսկ նա ձեռքն անցկացրեց նրա մեջքով։ Արաքսին զգալիորեն ավելի վատ էր քայլում, քան առաջ։

Զանազան լուրեր էին պտտվում։ Հաճախ դրանք ոստիկաններն էին տարածում։ Իբր տեղահանության մասին հրամանը չեղյալ էր համարվել և որ իրենք Սվաս պետք է վերադառնային։ Իբր զինվորական ավտոմեքենաները պետք է սպասեին տհղահանվածներին և նրանց ուղիղ Հալեպ տանեին։ Եվ կային մարդիկ, որ այդ ամենին հավատում էին... Կային ավելի սարսափելի նորություններ։ Բանտերը դատարկել էին և երկիրը վխտում էր գողերով ու ավազակներով։ Արևելյան գավառներից լեռնցիներ էին բերել և մինչև ատամները զինված վայրենիները պարեկում էին սարերը։ Նրանց հանձնարարված էր սպանել հանդիպած հայերին։ Չնայած Մարոն հրաժարվում էր հավատալ այդ հեքիաթներին, սակայն հեռվում երևացող ճամբարի կրակները նրան անհանգստացրեցին։ Իսկ Արմենի գրգռվածությունը չէր նպաստում նրա հանդարտվելուն։

Արմենն այնպես կանգնեցրեց սայլերը, որպեսզի նրանց միջև երեք մետր տարածություն մնար։ Այդ միջանցքի յուրաքանչյուր ծայրին նա եզներին այնպես կապեց, որպեսզի նրանք փակեին մուտքը երկու կողմից և իրենց պաշտպանեին։ Մինչ ծեր կանայք գետնին էին փռում բրեզենտը, իսկ վրայից անկողինն էին փռում, Մարոն Արմենին մի կողմ տարավ.

— Ի՞նչ է կատարվում։ Ինչի՞ց եք վախենում։

— Ոստիկանները օղի են բռնագրավել և խմում են։

— Վա՜յ,– բացականչեց Մարոն ձեռքը բերանին տանելով։– Աստված մեզ պահապան։

— Դու կենտրոնում կքնես երեխաների հետ։

Հենց այդպես էլ արեցին։ Արաքսին ու Արմենը մի կողմից, իսկ Ազնիվ խանումն ու Գյուլուն՝ մյուս կողմից։ Զույգ աղջիկները գրկել էին Մարոյին աջ կողմից, իսկ Թովմասը փարվել էր նրա կրծքին։ Ազնիվ խանումը «Հայր մերը» մրմնջաց։ Աստղերը շատ մոտ էին թվում։ Մեջքին պառկած Մարոն դրանց էր նայում մի տեսակ հուսահատությամբ։ Մինչև երեխաների քնելը նա նրանց ցույց էր տալիս համաստեղությունները և ասում դրանց անվանումները։ Մտովի նա լսում էր Վարդանի ձայնը, երբ նա իրեն էր սովորեցնում տարբերել աստղերը։

— Ինչո՞ւ մենք չենք տեսնում Աստծուն երկնքում,– հարցրեց Թովմասը

ցածրաձայն,— սրբերին ու հրեշտակներին։

— Որովհետև նրանք անտեսանելի են,— միաձայն պատասխանեցին աղջիկները։

Թովմասն այլևս չխոսեց։ Նա հայտնաբերեց աստղերի մի խումբ, ուր աստղերը շան ուրվագիծ էին կազմում, որը նմանվում էր իր Սասունին։ Նա աչքերը փակեց, սակայն իր աչքերի դիմաց հայտնվեց է՛լ ավելի սարսափելի տեսարան՝ կողքի պառկած երեխան վանքի մոտ։ Նա ատամները խրեց ափի մեջ և սկսեց ջերմեռանդ կերպով աղոթել։ Մարոն զգաց նրա դողը և, կարծելով, որ մրսում էր, ավելի կիպ իրեն սեղմեց։

Պահակներն իրենց վրաններն էին խփել արահետից այն կողմ։ Նրանք հազիվ հիսուն հոգի լինեին և հսկում էին ավելի քան հազար հինգ հարյուր տարագիրների։ Ճիշտ է, նրանք առանձնապես անելիք չունեին... Մի քանի ոստիկան պարեկում էին ճամբարի շրջակայքը։ Մնացածները մի քանի սայլ էին կոտրել և դրանցով խարույկ էին վառել։ Նրանք շամփուրի վրա էին անցկացրել գողացած ուլը։ Օդին հոսում էր գետի պես, և տոնախմբությունն ավելի և ավելի բուռն էր դառնում։ Սկզբում նրանք երգում էին և պարում, ուրախ ճիչեր էին արձակում և օդ կրակում։ Բայց շուտով այդ հաճույքը նրանց քիչ թվաց։ Օրորվելով՝ նրանք գնացին դեպի մոտակայքում գտնվող սայլերը կանանց տիրանալու համար։ Տարեց մի զույգ ուզեց պաշտպանել իրենց երեք աղջիկներին։ Կողքի ընտանիքները նույնպես վարվեցին։ Պահակների ձեռքերին սրեր, դաշույններ և սվիններ հայտնվեցին։ Արյուն թափվեց։ Տարագիրները խուճապի մատնվեցին։ Նրանք փորձում էին խուսափել հարվածներից։ Ոստիկաններին տիրեց սպանության տենդը և կատաղության նոպայի մեջ նրանք հարվածում էին բոլոր նրանց, ովքեր ձեռքի տակ էին հայտնվում։ Փչում էր խելագարության քամին։ Պահակները մորթում էին առանց տարբերակելու։ Համատարած խառնաշփոթ էր և խլացնող աղմուկ։ Նրանց, ովքեր փորձում էին փախչել, բռնում էին կամ թիկունքից էին հարվածում, հատում էին ոմանց ձեռքերն ու ոտքերը։ Բազմաթիվ հայեր տեղում էին մնացել, սարսափից քարացած, և չէին կարողանում հավատալ, որ իրենց տեսածը իրականություն էր։ Այդ հայերը լուռ էին մեռնում։

Հարբեցողները, հոգնելով, ջարդը դադարեցրին։ Նրանցից մի քանիսը ապշած տեսք ունեին։ Նրանք նայում էին իրենց արնաշաղախ ձեռքերին, ոտքերի մոտ ընկած դիակներին ու վիրավորներին և իրենք իրենց հարց էին տալիս, թե արդյոք դա իրենց ձեռքի գործն էր։ Իսկ մեծամասնությունը, հակառակը, ծիծաղում էր և վիճում, թե ո՞վ էր ամենից շատ գյաուրներ սպանել։ Ոստիկանները շարժվեցին առաջ՝ դեպի ճամբարի կենտրոնը։ Կանայք, որոնց նրանք բռնում էին, չէին դիմադրում, վախենալով, որ այդ վայրենիները հաշվեհարդար կտեսնեին իրենց ընտանիքների հետ։

Ճամբարում ոչ ոք քնած չէր։ Արմենը վեր էր կացել և հսկում էր ատրճանակը ձեռքին։ Սարսափազդու ոռնոցներին հաջորդեց լացն ու կոծը։ Լսվում էր հարբած տղամարդկանց բարձր ծիծաղը։ Հետո լսվեցին

կանանց ու երիտասարդ աղջիկների աղերսանքները, որոնց ոստիկանները քարշ էին տալիս դեպի իրենց վրանները: Բռնաբարություններ և տանջանքներ: Գիշերվա օդը դողում էր հուսահատության ու տանջանքի ճիչերից: Եվ այդ սարսափը տևեց մինչև այգաբաց:

Արաքսին, Ազնիվ խանումը, Արմենն ու Գյուլուն աղոթում էին: Նրանց աղոթքը գնալով ավելի բարձր էր հնչում: Նրանք հույս ունեին, որ կխլացնեին չարչարանքների լացը: Վախից համրացած Մարոն չէր կարողանում ձայն արտաբերել: Լիովին գիտակցելով իրենց կողքին կատարվող ողբերգության էությունը՝ զույգ աղջիկները խուճապի մեջ էին: Մեկը մոտեցել էր տատին, իսկ մյուսը փարվել էր Մարոյի թիկունքին և գրկել էր նրան: Թովմասը փակել էր ականջները և ատամներն էր կրճտացնում: Զոհերի ճիչերից Մարոյի սիրտը պատռվում էր: Նա անկարող էր վանել ահավոր պատկերները, որոնք ծնունդ էին առնում ուղեղում: Նա չէր կարողանում ազատվել թեթևության զգացումից, որ ինքը խուսափել էր այդ փորձությունից: Նրա կարեկցանքին խառնվում էր ամոթի զգացումը: Նրա վախն անսահման էր: Կծկվելով՝ նա պինդ սեղմել էր ծնկները և անհամբեր սպասում էր լույսը բացվելուն:

Երբ վերջապես լույսը բացվեց, նրանք լծեցին եզներն առանց խոսք փոխանակելու: Արաքսին բաժանեց պանրի մնացորդները՝ յուրաքանչյուրին մի կտոր, որը հազիվ էր Երևում ափի մեջ: Ազնիվ խանումը չրեղեն բաժանեց: Ջուր այլևս չկար:

Բոլոր տարագիրները ճանապարհ դուրս եկան մեկ արահետով, որը շրջանցում էր պահակազորի խփած վրանները: Անտեսելով կնոջ աղերսանքը՝ Արմենն այնտեղ ոտքով գնաց: Նա ուզում էր տեսնել: Անհրաժեշտ էր, որ մեկնումեկը տեսներ և իմանար՝ ոչինչ չպետք է առանց վկաների մնար: Նրան թվում էր, որ քսան տարի առաջ իր աչքի առաջ տեղի ունեցած ջարդերից հետո իրեն ոչինչ չէր կարող զարմացնել: Սակայն ոչինչ չէր կարող նմանվել այն սարսափելի տեսարանին, որ նա տեսավ: Ճակատամարտի ոչ մի դաշտ այդքան դաժան տեսարան չէր կարող ընձեռել: Նման տեսարանի հանդիպելու համար անհրաժեշտ կլիներ վերադառնալ դեպի մոնղոլների արշավանքների ժամանակաշրջանը: Արմենը, ապշած պտտվում էր դիակների մեջ, որոնք կրում էին ամենաանմարդկային բռնությունների հետքեր: Նա քիչ էր մնում վայր ընկներ, սայթաքելով ինչ-որ մեկի դուրս թափված ադիների վրա: Վայրը լքելուց առաջ ոստիկանները յուրօրինակ հուշարձան էին կանգնեցրել՝ հատված գլուխներից կազմված մի բուրգ, իսկ դրա կողքին ծծկեր մի երեխա ցցահան էր արված: Արմենը շրջվեց և հետ տվեց այն սուղ ուտելիքը, որ կերել էր: Հենց այդ պահին նա նրան նկատեց:

Մերկ աղջիկը գետնին նստած դատարկ հայացքով հեռուն էր նայում: Արմենը մոտեցավ նրան: Աղջիկը կարծես ոչինչ չէր տեսնում: Սակայն նա ողջ էր: Նրա ճերմակ մաշկը ծածկված էր կապտուկներով և քերծվածքներով: Նրա ազդրերն արնոտ էին: Նա հազիվ տասնյոթ տարեկան լիներ, սակայն նրան կարելի էր հարյուրը տալ: Արմենը

կռացավ և նրա ուսին դիպավ.

— Աղջիկս...

Աղջիկը չշարժվեց: Արմենը բռնեց նրա թևատակերից և բարձրացրեց: Արմենին ենթարկվելով՝ նա ոտքի կանգնեց, սակայն նրա հայացքը չլքեց հեռուն: Արմենը նրան ծածկեց լաթի կտորով, որը գետնին էր ընկած, բռնեց նրա ուսից և իր հետ տարավ: Նա շոկային վիճակում էր և քայլում էր մեքենայաբար: Արմենը նկատեց, որ նա աչքերը չէր թարթում: Նա նրան թեթևակիորեն թափ տվեց և ասաց.

— Դու վախենալու բան չունես:

Աղջիկը նրան չէր լսում:

Արմենը վերադարձավ սայլի մոտ, որը վարում էր Արաքսին: Նա աղջկան նստեցրեց սայլի մեջ, ինքն էլ բարձրացավ և նրան վերմակով ծածկեց: Աղջիկը նույն դիրքում մնաց, ոտքերը կախ ընկած սայլից դուրս: Արմենը նստեց Արաքսու կողքին: Նա շատ բան կտար օղու մի կումի դիմաց:

Ճանապարհորդության հենց սկզբից բոլորին տանջում էր ծարավը և ժամերի ընթացքում այն դարձավ սևեռուն միտք: Ագռավների երամները թռչում էին այն կողմը, ուր պահակազորը դիակներ էր թողել: Անցնում էին նաև շամբաճուռակներ և այլ գիշատիչ թռչուններ և, բացի դրանցից, ուրուրներ: Սայլերի ընթացքի միապաղաղությունից թմրելով՝ Թովմասն ու զույգերը քնել էին: Գյուլուն իր չարսավի ծայրերը հովանի էր արել նրանց վրա: Ազնիվ խանումը գլուխը Մարոյի ուսին դրած ննջում էր:

Մարոն անդադար գործի էր դնում ճիպոտը, այլապես եզը տեղում կքարանար: Արմենի սայլի հետնամասում նստած աղջիկն ուշադիր Մարոյին էր նայում: Համենայն դեպս Մարոյին այդպես էր թվում: Նա շփոթվում էր այդ մեռած հայացքից: Մարոյին թվում էր, թե այդ հայացքն իրենից այլևս չէր հեռանալու և որ այդ հայացքն իրեն դատապարտում էր: Զուր էր ինքն իրեն համոզում, անօգուտ, նա հանդիմանություն էր տեսնում այդ աչքերում, որոնք պարզապես դատարկ էին: Եվ նա սկսում էր վախենալ գալիք գիշերից:

Որոշ եզներ ուժասպառ ընկնում էին, իսկ մյուսներն էլ անշարժանում էին ու հրաժարվում էին տեղից շարժվել, անտեսելով հարվածները: Ոստիկանները ստիպում էին տարագիրներին ամեն ինչ թողնել և ճանապարհը շարունակել ոտքով: Մերերն ու հիվանդները ապաստան էին գտնում այլ սայլերում, սակայն շատով նրանցից շատերը ոտքով էին գնում: Զգիտես որտեղից հայտնված գյուղացիներ գիշանգղների պես հետևում էին քարավանին: Նրանք հարձակվում էին լքված սայլերի վրա և իրարից խլում էին ավարը, որը նրանք բարձում էին ավանակների վրա:

Երբ արևը իր գագաթնակետին էր, պահակազորի հրամանատարը հրամայեց դադար առնել: Տեղահանվածները մնացին արահետի վրա: Աղբյուր չկար, միայն փարախի ավերակներ էին, որոնք գտնվում էին

արահետից մոտ հարյուր մետրի վրա։ Ոստիկաններն արևից պատսպարվեցին ավերակներում, տանիքի չփլած մասի ստվերի տակ։

— Դուք մի քիչ ջուր չունե՞ք։

Այս հարցը հաճախ էր հնչում և միշտ բացասական պատասխանի էր արժանանում։

Թովմասը տեղում նստեց, աչքերը տրորեց և անվստահ հայացքով չորս կողմը նայեց։ Ճանապարհ կտրե՞լ էին արդյոք։ Հարթ և քարքարոտ սարահարթ, շուրջը լեռներ։ Բնապատկերը նույնն էր, ինչ նախօրեին։

— Ես ծարավ եմ, մայրիկ։

Մարոն նրան գրկեց ու համբուրեց գետնին իջեցնելուց առաջ։ Նրա ճակատն այրվում էր։

— Իմ խեղճ բալիկս, մենք խմելու բան չունենք։

Թովմասը լաց եղավ։

— Հետս արի, Թովմաս,– ասաց Արմենը։ Կինս մի քանի հյութեղ վարունգ ունի։

Նա իր սայլի մոտ տարավ նաև զույգ աղջիկներին։ Այնտեղ Ազնիվ խանումը, Գյուլուն ու Արաքսին պաստառ էին ձգում հով անելու համար։ Մարոն մոտեցավ ջահել աղջկան, որի մասին մոռացել էին։ Նրա հայացքը մարած էր։ Մարոն հպվեց նրա այտին։

— Անունդ ի՞նչ է։

Աղջիկը կարծես խուլ լիներ։ Ավելի շուտ նա բացակա էր։ Մարոն բարձրացրեց վերմակը և զննեց աղջկա մարմինը։ Նրա ջարդված մարմինը փայլում էր կպչուն քրտնքից։

— Ինչպե՞ս է նա,– հարցրեց հովանու տակ նստած Ազնիվ խանումը։

— Շոկային վիճակում է։ Ես նրանով կզբաղվեմ։

Նա աղջկա ձեռքից բռնած նրան տարավ իր սայլի հետևը։ Աղջիկը հնազանդորեն հետևում էր Մարոյին։ Մարոն նրա վրայից հանեց ցնցոտիներն ու իր զգեստներից մեկը հագցրեց։ Նա անդադար խոսում էր աղջկա հետ՝ հույս ունենալով արթնացնել նրա գիտակցությունը։

— Արևն այրում է քո գեղեցիկ դեմքը։ Ես քեզ համար ծղոտե գլխարկ կճարեմ։

Մարոն մի զամբյուղի պարունակությունն էր փորփրում, երբ որոտի ձայնը նրան ստիպեց գլուխը բարձրացնել։ Իրենց ուղղությամբ ձիավորներ էին սլանում։ Զինվորնե՞ր։ Գետինը թնդում էր, կարծես թմբուկ լիներ։ Ձիավորները հեռանում էին միմյանցից և շուտով պահակազորին զուգահեռ շարք կազմեցին։ Քիչ անց լսվեց հեծյալների հարայ-հրոցը։ Նրանք հարձակման էին անցնում։

— Ավազակները,– լսվեց մի ձայն։

— Քուրդ ավազակներ։

Տարագիրները թաքնվեցին սայլերի տակ։ Նրանք, ովքեր սայլ չունեին՝ փախան դեպի փարախը։ Ոստիկաննե՞րը։ Քարե պատին թիկնած, հրացանները մի կողմ դրած՝ նրանք անշտապ ուտում էին։ Մարոն հասկացավ, որ պահակազորը չէր միջամտելու։ Նա գետնին ցատկեց Թովմասին և մնացածներին միանալու համար։ Գորշ գլխակապերով, ոչխարի մորթուց կարված բաճկոններով մորուքավոր հեծյալները կարծես դարերի խորքից եկած լինեին։ Նրանց գոտիներից կախ էին տրված դանակներ և ատրճանակներ։ Նրանք իրենց գլխավերևում էին պահել հին հրացաններ կամ յաթաղաններ փայլուն շեղբերով։ Ավազակախմբի անդամները ցրվեցին շարասյան երկայնքով՝ չդադարեցնելով իրենց մարտական ճիչը։

Պաստառի տակ թաքնված Արմենը հանեց ատրճանակը։ Մի ձի կանգ առավ մոտակայքում և մի թավ ձայն զարմացած բացականչեց.

— Դու չե՞ս վախենում։

— Աղջիկը,— բացականչեց Մարոն։

— Այստեղ մնա,— աղերսեց մայրը։

Մարոն արդեն դուրս էր եկել սայլի տակից, և Ազնիվ խանումը հազիվ հասցրեց պահել թոռանը, որն ուզում էր մորը հետևել։

Ավազակներից մեկն արդեն բարձրացրել էր թուրը աղջկա վրա իջեցնելու համար.

— Ոչ,— բղավեց Մարոն։

Սրանց կողմը վազելով՝ նա երեք ոսկի հանեց իր գոտուց։ Այդ շարժումից նրա չարսավն ընկավ։ Վայրագ հայացքով և կոտրած քթով ավազակը զարմանքով զննեց նրան։ Մարոն մի կողմ տարավ աղջկան և մեկնեց դրամները.

— Թողեք նրան։ Վերցրեք ոսկին։

Ավազակը բռնեց Մարոյի դաստակից.

— Դու գանձից թանկ ես, գեղեցկուհի։

Ավազակը փորձում էր Մարոյին բարձրացնել ձիու վրա, իսկ սա ուժերի գերլարումով դիմադրում էր։ Տեսնելով, որ չի կարողանում Մարոյին բարձրացնել մեկ ձեռքով, նա մի կողմ նետեց թուրը և բռնեց կնոջ մազերից։ Մարոն ուզեց նրան վայր գցել խրտնած ձիուց։ Ավազակը ծիծաղում էր իր գերու ջանքերի վրա և արդեն համարյա թե նրան պոկել էր գետնից։ Կրակոց լսվեց։ Մարդը ցնցվեց և բաց թողեց Մարոյին։ Մարոն վայր ընկավ և անշարժացավ։ Ձին քառատրոփ փախավ, իսկ ձիավորը, որը կառչել էր նրա բաշից, քիչ այն կողմ վայր ընկավ։

— Յալլահ, յալլահ,- բացականչեցին ավազակները, որոնք շտապեցին դեպի դեպքի վայրը։

Թովմասը դուրս պրծավ Ազնիվ խանումի ձեռքերից և նետվեց իր մոր վրա, որը բերանքսիվայր ընկած էր գետնին։ Նա թափ էր տալիս մորը.

— Մայրի՛կ, մայրի՛կ։

Մարոն նրան իր կողքին գետնին պառկեցրեց։

— Չշարժվե՛ս։ Փակի՛ր աչքերդ։ Մեռած ձևացի՛ր։

Նա ենթարկվեց։

Արմենը, ատրճանակը ձեռքին, հեռանում էր հնարավորին չափ արագ։ Նա ուզում էր այնպես անել, որ իր հետ եղածներին ձեռք չտային։ Նա գնաց դեպի փարախը այն հույսով, որ ավազակները չէին համարձակվի գալ և իրեն բռնել ոստիկանների քթի տակ։ Նրան հետապնդող ձիավորները մոտենում էին։ Արմենը շրջվեց, որպեսզի նրանց դեմ դիմաց դիմավորեր։ Նրա վրա երեք հրացան ուղղեցին։ Նրա հակառակորդներն ավելի արագաշարժ էին։ Երեք համազարկերը միմյանց խառնվեցին։ Գնդակները դիպան Արմենի կրծքին և նա, ձեռքերը լայն տարածելով, մի քայլ հետ գնաց և մեջքի տապալվեց։

— Արմե՛ն,– բղավեց Արաքսին սարսափելի ձայնով,– Արմե՛ն։

Հսկայի արտաքինով մի ձիավոր դանդաղեցրեց ընթացքը Արմենի մարմնի մոտ, կռացավ և բռնեց Արմենի ոտքի կոճից։ Առանց տեսանելի ջանքի նա նրա մարմինը կիսով չափ բարձրացրեց և ձիուն վարգով թողեց։ Նա երեք շրջան կատարեց՝ հետևից քարշ տալով դիակը, որի գլուխը քարերին էր խփվում։ Նրա գործընկերներն օդ էին կրակում և իրենց ձիերին ծառս էին անում։ Հետո ավազակը բաց թողեց դիակը և վերադարձավ թալանին մասնակցելու համար։

Արաքսին ուժասպառ պառկած էր Ազնիվ խանումի գրկում, որը նրան աղերսում էր տեղից չշարժվել.

— Սպասեք, թող ավազակները գնան։ Դուք այլևս ոչինչ չեք կարող անել նրա համար։

— Ես ուզում եմ մեռնել։ Ես ուզում եմ մեռնել։

Մարոյից ոչ հեռու սմբակները գետինն էին ծեծում։ Նա շշնջաց Թովմասին.

— Ոչ մի խոսք։ Եթե քեզ ձեռք տան, չշարժվես։

Մի ձի անցավ նրանց մոտով, և նրա սմբակներից մեկը հայտնվեց Թովմասի գլխից մի քանի սանտիմետրի վրա։ Մի ձիավոր վայր ցատկեց և վերցրեց երեք ոսկե դրամները։ Նա խուզարկեց Մարոյին։ Չնայած նրա ձեռքերը կոպտորեն շոշափում էին Մարոյի մարմինը, նա իրեն ստիպեց անշարժ մնալ։ Ավազակը գտավ ոսկե դրամներով լցոնած գոտին, այն կտրեց իր դաշույնով և նորից ձին հեծավ։ Նրանք տանում էին աղջկան։ Մարոն չէր կարող միջամտել առանց վտանգելու որդու և իր կյանքը։ Ավազակները հեռանում էին։ Նրանք իրենց հետ տանում էին բազմաթիվ սայլեր, որոնց թվում էր նաև Մարոյի սայլը, որը նրանք լցրել էին իրենց

թալանած ավարով։ Նրանց ավարն էին կազմում նաև բազմաթիվ կանայք և երեխաներ։

— Կարո՞ղ եմ շարժվել,- հարցրեց Թովմասը սարսափած ձայնով։

— Դեռ ոչ։

Անիվների և սմբակների աղմուկը, գերիների լացը և ավազակների հաղթական երգերը հեռացան։

— Արմե՛ն, Արմե՛ն,— ողբում էր Արաքսին, որը մոտենում էր իր ամուսնու դիակին, հենվելով Ազնիվ խանումի ձեռքին։

Մարոն ոտքի կանգնեց և որդուն գիրկն առավ։ Հիմա, երբ վտանգն անցել էր, նա դողում էր ողջ մարմնով։ Թովմասը լաց էր լինում և կրկնում էր չհավատալով իր ասածին.

— Նրանք սպանեցին կնքահորը։ Նրանք սպանեցին կնքահորը։

Մարոն նրան համբուրեց և վայր դրեց զույգերի մոտ, որոնք դեմքերը թաքցրել էին տատի փեշի մեջ։

— Այստեղ մնա, սիրելիս։ Ես պետք է օգնեմ Արաքսուն։

— Ես ուզում եմ այնտեղ գնալ։ Նա իմ կնքահայրն է։

Առանց Մարոյի կանչը լսելու, նա վազեց այնտեղ, ուր ընկած էր կնքահայրը։

Արմենը պառկած էր մեջքին, աչքերը փակ, կարծես քնած լիներ։ Նրա դեմքը քերծված էր, իսկ ականջից կախվել էր մազածածկ մաշկի կտոր։ Նրա կուրծքը արնոտված էր։ Թովմասի արցունքները ցամաքեցին։ Նրա վիշտն անսահման էր։ Նա ծնկի իջավ և մատների մեջ առավ կնքահոր մատները։ Նա հիշեց այդ ձեռքի ուժն ու ջերմությունը, երբ այն բռնել էր իր ձեռքը եկեղեցու ճանապարհին, և ցանկացավ արտասանել այն աղոթքը, որը կարդում էին մահացածների վրա։ Նա մտովի լսեց Արմենի ձայնը, երբ նա իրեն սովորեցնում էր այն։ Թովմասը լսում էր այդ աղոթքը, որն այսօր լրիվ այլ իմաստ էր ստացել։ Նա մտածեց հոր մասին։ Տեսնե՞ս երբ էր նա իրենց միանալու։ Ինչպե՞ս էր իրենց գտնելու։ Հուսահատվելով՝ երեխան ձեռքը գրպանը տարավ և ափի մեջ սեղմեց կնիքի տուփը։

Ոստիկանները դուրս եկան փարախից, և շարասյունը ճամփա ընկավ։ Արաքսին հրաժարվում էր թողնել Արմենին։ Նրանց նախկին հարևանը, որը եկել էր դեպքի վայրը, առաջարկեց նրան տանել։ Նա բռնեց Արմենի իրանից, իսկ Մարոն՝ ոտներից։ Թովմասը գետնից բարձրացրեց Արմենի նավապետի գլխարկը և հագավ այն։

Դիակը դրեցին սայլի մեջ։ Արաքսին նստեց նրա կողքին։

— Դուք վարեք,- ասաց Մարոն մորը։- Տիկին Աբայանը կնստի ձեր կողքին։ Ես երեխաների հետ ոտքով կգամ։

Ազնիվ խանումը նստարանի հետևում դրված մի կապոց փորփրեց և

Մարոյին պարզեց Արմենին պատկանող հագուստը։ Նա վերադարձել էր այն մտքին, որ հղացել էր առաջին օրը.

— Հղիի փոր սարքիր։

Մարոն չէր համաձայնում, սակայն մայրն անդրդվելի մնաց։

— Տեսա՞ր ինչ եղավ։ Հաջորդ անգամ Արմենն այլևս այստեղ չի լինի։

Մարոն հնազանդվեց։ Երբ քարավանը տեղից շարժվեց, նա նման էր մի կնոջ, որը հղիության վերջին շրջանում էր։ Գլխաշորը ծածկում էր նրա դեմքի ստորին մասը։ Ի դեպ, փոշին ու կեղտը քողարկում էին նրա աչքի ընկնող գեղեցկությունը։

Հոգնությունը խամրեցրել էր նրա աչքերի փայլը։ Թովմասը, որը չէր հասկանում այդ կերպարանափոխության իմաստը, հայտնեց մորը, որ նա պառավի էր նման։

* * *

Արաքսին իր ամուսնու գլուխը ծնկներին էր դրել։ Չկարողանալով Արմենի ջախջախված դեմքին նայել նա այն ծածկել էր մեծ թաշկինակով։ Նա ձեռքով քշում էր ճանճերին, որոնց ձգում էր արյունը։ Նա այնքան ցածրաձայն էր նրա հետ խոսում, որ մոտակայքում գտնվող Մարոն չէր կարողանում ոչ մի բառ որսալ։

Քանի որ Մարոն իրեն մեղավոր էր զգում Արմենի մահվան համար, նա չէր կարողանում աչքերը բարձրացնել Արաքսու վրա։ Նա կուզեր, որ ծեր կինը ներեր իր մեղքը։ Մեկ բառը բավական էր.

— Ես սիրում էի մեր Արմենին։

— Նա էլ քեզ էր սիրում իր դստեր պես։

Եվ նա վերսկսեց իր անլսելի մենախոսությունը։

Մարոն համարձակվեց նայել Արաքսուն, որն օրորում էր Արմենին։ Նրա վիշտը բորբոքեց Մարոյի վիշտը, որը ողբում էր ամուսնու բացակայությունը։ Կեղծ փորը նրան հիշեցրեց մի քանի ամիս առաջ տեղի ունեցած վիժումը և Վարդանի հիասթափությունը։ Վարդա՜ն... Արմենի մահվան հետ քարավանից փախչելու հնարավորությունները նվազում էին։ Նրան տիրեց անսահման հուսահատություն։ Նա մեծ դժվարությամբ վանեց այն միտքը, որ Վարդանը միգուցե այլևս այս աշխարհում չէր։ Մոր մտքերին արձագանքելով, Թովմասը հարցրեց.

— Հայրիկը ե՞րբ կվերադառնա։

Մարոն պապանձվեց.

— Չգիտեմ,— հառաչեց նա խուլ ձայնով։— Անկասկած նա մեզ փնտրում է։

Նա շոյեց իր փեշից կառչած երեխայի վիզը։ Թովմասի գլխին կործած գլխարկը երերում էր ամեն քայլի հետ։ Հանուն նրա՝ իր և Վարդանի մարմնավորման, իրենց սիրո կենդանի վկայության, Մարոն իրավունք չուներ թույլություն ցուցաբերելու։ Նա ուզում էր երեխային ասել, որ նա չպետք է հույսը կորցներ, սակայն մտածեց, որ երեխան չէր հասկանա այդ խոսքերը։ Հատկապես այս համատեքստում։

— Քո կնքահայրը հաստատ երկնքում է։ Աղոթիր նրա համար։ Խնդրիր, որ մեզ պահպանի և պահպանի քո հորը։

Քիչ անց Թովմասը ագրեսիվ տոնով բացականչեց.

— Ինչո՞ւ Աստված չի պատժում չարերին։

— Անպայման կպատժի։

Մի քանի րոպե անց երեխան բողոքեց.

— Ես ծարավ եմ, մայրիկ։ Կոկորդս ցավում է։

Մարոն ճանապարհից խիճ հավաքեց և փեշով սրբեց.

— Սրանք բերանդ դիր, որ թուք հավաքվի։ Զգույշ, կուլ կտաս։

— Դրանից ծարավը հագենո՞ւմ է,– հարցրեց Մարոյի կողքով քայլող զույգ աղջիկներից մեկը։

— Այո, փորձեք։

Երկու ժամ անց Ազնիվ խանումը շրջվեց և հայտնեց.

— Մենք ինչ-որ բնակավայրի ենք մոտենում։

Փոշու միջից աղոտ կերպով կապտին էր տալիս հովիտը։ Սարահարթի եզրին մի գյուղ էր ծվարել։ Հազիվ մի քսան քարե տուն և դրանց կից գոմեր։ Քայքայված և աղքատ բնակավայր։ Սակայն գյուղի կենտրոնում գտնվում էր այս քարքարոտ անապատի համար չտեսնված մի հարստություն՝ աղբյուր։ Եզները հեռվից զգացին ջուրը և արագացրեցին ընթացքը։ Մարդիկ ծիծաղում և լաց էին լինում ուրախությունից։ Ջրազրկված մարմինները վերակենդանանում էին ջուր խմելու հնարավորության գիտակցումից։

Խաշնարած շները ժանիքներն էին ցուցադրում։ Նրանց պարանոցներին մետաղյա ցցերով վզնոցներ կային, որոնք նրանց պաշտպանում էին գայլերի ատամներից։ Ծռմռված ճյուղերով հսկայական մի նոճի, որը միակ ծառն էր շրջակայքում, իր հովանու տակ էր առել գյուղամեջը։ Գյուղի տղամարդիկ և երեխաներն այնտեղ էին հավաքվել ծերերի շուրջը։ Քողածածկ կանայք դուրս էին նայում լուսամուտներից։ Ոստիկանների ներկայությունը զսպում էր գյուղացիների հետաքրքրասիրությունը։

Աղբյուրի ծորակից զուլալ ջուր էր հոսում և հավաքվում էր ավազանի մեջ, այնտեղից էլ փողրակով հոսում էր դեպի ոռոգվող այգիները։ Սակայն այդ ջուրը ոչ ձրի էր, ոչ էլ առատ տարագիրների համար։

Գյուղացիներին հատուցելու պատրվակով ոստիկաններն այն վաճառում էին։ Դրամ չունեցողները ստիպված էին ապավինել իրենց հայրենակիցների գթասրտությանը։ Ազնիվ խանումը վճարեց բազմաթիվ ընտանիքների համար։ Կամաց-կամաց, հաղթահարելով ոստիկանների վախը, գյուղացիները սկսեցին մոտենալ այդ կեղտոտ, տենդագին աչքերով և լարված դիմագծերով գյաուրներին։ Նրանք առաջարկում էին գնել այն մթերքը, որ ունեին՝ կարտոֆել, սոխ, այծի պանիր։ Մարոն մի գեղջկուհուց մի հաց գնեց դրա դիմաց տալով շափյուղայով զարդարված մի ականջող։ Երկչոտ հայացքով կինը մրմնջաց. «Թող Աստված ձեզ պահապան լինի», և արագ վերադարձավ իր տունը։

Հանկարծ բողոքներ լսվեցին։ Պահակները բռնում էին պատանի աղջիկների և տղաների և նրանց տանում էին հրապարակի մյուս ծայրը։ Մի ոստիկան հրեց Մարոյին, որը քիչ էր մնում ընկներ։ Մարոն պինդ բռնեց Թովմասին և իրեն սեղմեց, սակայն ոստիկանն ավելի շուտ զույգ աղջիկներով էր հետաքրքրվում։ Գյուլուն միջամտեց։ Ոստիկանը հրացանի կոթով հարվածեց նրա գլխին։ Ծեր կինը վայր ընկավ։ Ոստիկանն իր հետևից քարշ տվեց լացող աղջիկներին։

Ազնիվ խանումը կանգնեց Մարոյի դիմաց.

— Ես քեզ աղաչում եմ, չմիջամտե՛ս։

Նրանք օգնեցին Գյուլուին ոտքի կանգնել։ Նա լաց էր լինում։

— Իմ թոռնիկնե՛րը։ Նրանց ի՞նչ կանեն։

Սվինները տնկած ոստիկանները տեղահանվածներին դուրս էին մղում հրապարակից։ Մարոն և յուրայինները հայտնվեցին վերջին տան մոտ։ Գյուղացիները խմբվեցին տասնչորս պատանի հայերի շուրջը։ Ենթասպան, կանգնելով ավազանի եզրին, բացեց աճուրդը։

— Գեղեցիկ փոքրիկ կանա՛յք։ Պի՛նդ տղաներ դաշտերում աշխատելու համար։

Սակարկությունը երկար տևեց։ Այն ընթանում էր իրենց երեխաների վաճառքին խոչընդոտել անկարող հարազատների ապշած և սարսափած հայացքների ներքո։ Մահմեդական կանայք իրենց ամուսինների ականջին խորհուրդներ էին շշնջում ապրանքի ընտրության վերաբերյալ։ Դրանք աղքատ մարդիկ էին և տասնմեկ երեխաներից յուրաքանչյուրը վաճառվեց մի քանի ղուրուշով, որը գառան գնից պակաս էր։

Որոշ ընտանիքներ մխիթարվում էին, որ իրենց երեխաները կխուսափեին հետագա սարսափներից և այն դաժան ճակատագրից, որն անկասկած սպասում էր մնացածներին։ Սակայն Գյուլուն այդպես չէր մտածում։ Երբ լսեց իր թոռների լացակումած կանչերը, որոնց քարշ էին տալիս տներից մեկի ուղղությամբ, նետվեց նրանց օգնության։ Հրապարակ դուրս գալով նա բախվեց ենթասպային, որը նրան վայր գցեց։ Նրա կողերին ու փորին մի քանի հարված հասցնելուց հետո խուզարկեց ծեր կնոջը։ Նա ուղղվեց փայլող դեմքով, ձեռքին ոսկյա մի

վզնոց։

Ենթասպայի հեռանալուն պես Մարոն և Ազնիվ խանումը օգնության շտապեցին Գյուլուին, սակայն նրա սիրտն այլևս չէր բաբախում։ Ազնիվ խանումը փակեց նրա աչքերը։ Դա միակ բանն էր, որ նա կարող էր անել՝ պահակազորը պահանջում էր, որ տեղահանվածները ճամփա ընկնեին։ Գյուլուի մարմինը թողեցին այնտեղ, ուր նա ընկել էր։

Թովմասը գունատ դեմքը մորը դարձրեց։ Մարոն սեղմեց նրա ձեռքը.

— Մի մտածիր Սոսու և Մարիցայի մասին։ Նրանց հետ լավ կվարվեն, ինչպես Զեյնաբի ու Ջամիլայի հետ մեր տանը, և բացի դրանից, նրանք չեն ծարավի այնպես, ինչպես մենք ենք ծարավում։

Այդ խոսքերը չհամոզեցին երեխային։ Նա գերադասում էր ծարավ մնալ, քան բաժանվել իր մորից ու տատից։ Ինչպե՞ս կկարողանար ինքը ապրել առանց նրանց։ Նա գլուխը կախեց։ Երեխան վանքի դիմաց... Արմենը... հիմա էլ Գյուլուն... Առաջին անգամ նա գիտակցեց, որ թե՛ ինքը, թե՛ մայրը և թե՛ Ազնիվ խանումը կարող էին սպանվել։ Այդ մտքից նա հուսահատվեց, սակայն ցույց չտվեց։ Աղոթք ուղղեց իր կնքահորը, որն արդեն հրեշտակների հետ էր։

Նեղ ճանապարհի ժապավենը գալարվելով իջնում էր մինչև ձորի խորքը։ Մի կողմից անդունդն էր, ուր եզների կճղակներից կամ էլ սայլերի անիվներից քարեր էին թափվում։ Ազնիվ խանումը հրաժարվեց երասանը դստերը հանձնել, մինչդեռ նա կառք վարելու ավելի մեծ փորձ ուներ։ Մեր կինը մտածում էր, որ պատահարի դեպքում երկու պառավն ու մի դիակը նվազագույն կորուստը կլինեին։ Մարոն չպնդեց։

— Դու դեռ կարո՞ղ ես քայլել,— հարցրեց նա Թովմասին։

Հաճելի երազների մեջ խորասուզված երեխան չլսեց մոր հարցը։ Առավոտ էր։ Ինքն արթնացել էր և իր մահճակալում էր։ Սասունը պառկած էր իր ոտքերի մոտ, և ինքը գնալու էր իր ծնողների ննջարանը։ Հայրը համազգեստով էր։ Սենյակում տարածվել էր նրա օծանելիքի բուրմունքը։ Վարդանը՝ ժպտադեմ, պարզել էր ձեռքերը Թովմասին գրկելու համար։

Մարոն անհանգստացավ.

— Թովմա՛ս, ինչպե՞ս ես։ Շա՞տ ես հոգնել։

— Ոչ,— պատասխանեց նա։

Նա բարկացել էր, որ իրեն կտրել էին իր անուրջներից, սակայն ցույց չտվեց, վախենալով վշտացնել մորը։ Նրա սրունքներն ու ոտքերը ցավում էին, այնուամենայնիվ նա ասաց.

— Դժվար չէ, վայրէջք է։

Շարասյունը հասավ ձորի հատակը, որն արդեն ստվերի մեջ էր ընկղմվում այն երիզող բարձր ժայռերի պատճառով։ Կանգ առան ցամաքած գետի հունի մոտ։ Ոստիկանները հրամայեցին արձակել

եզներին։ Անասունն իջավ դեպի գետի ցեխոտ հունը։ Նրանք բնազդաբար գիտեին, որ իրենց ոտնահետքերը ջրով էին լցվելու։ Մարդիկ նույնպես փոսեր փորեցին իրենց տիկերը լցնելու համար։ Արաքսին հազիվ էր ոտքի վրա կանգնում։ Ամբողջ օրը նա իր ծնկներին էր պահել Արմենի գլուխն ու ուսերը և դա խաթարել էր նրա ոտքերի արյան շրջանառությունը։ Չնայած դրան, նա զինվեց բահով և քլունգով։

— Արմենն այս գործիքները վերցրել էր ճանապարհին մահացածներին թաղելու համար,– ասաց նա դողդոջուն ձայնով։

— Դա հետո կանենք,— ասաց Ազնիվ խանումը նրա ձեռքից գործիքները վերցնելով։— Նախ, ուտենք ուժ հավաքելու համար։

Նրանք բաժանեցին երկու փոքր կարտոֆիլներն ու հացը, որ գնել էր Ազնիվ խանումը։ Վշտահար Արաքսին հրաժարվեց ուտելուց։ Նա միայն մի կում ջուր խմեց տիկից։ Ճաշը լռության մեջ անցավ։

— Մայրիկն ու ես կփորենք,– ասաց Մարոն ճաշից հետո։

Արաքսին ափից որոշ հեռավորության վրա գտնվող մի բլուր ցույց տվեց։ Այնտեղ գերեզմանը չէր հեղեղվի գարնանային վարարումների ժամանակ։

Թովմասը կարեցածին չափ օգնեց փոսը փորելիս։ Հողը ծանր էր, հոծ և քարքարոտ։ Երբ մեկ մետր փորեցին, Ազնիվ խանումը, շնչակտուր, հայտարարեց.

— Հերի՛ք է։ Արմենը կհասկանա, որ ավելին չէինք կարող անել։

Սևազգեստ ծեր կանայք օգնում էին Արաքսուն։ Ջրի բացակայության պատճառով նրանք չկարողացան լվալ մարմինն այնպես, ինչպես պահանջում էր ավանդույթը, սակայն Գալստյան այրին մի կերպաս բերեց, որը որպես տապան ծառայեց։ Ծիսական օծումը նա ձեթով կատարեց։ Դիակի շուրջը մեծ բազմության հավաքվեց և նրան թափորով ուղեկցեց մինչև բլուրը։ Առաջին անգամ էր, որ նրանց միավորում էր աղոթքը։ Նրանք կիսում էին ոչ միայն վախն ու տառապանքը, այլև հարության հույսը։ Մի կույր, որին առաջնորդում էր մի տղա, մոտեցավ փոսին։ Զարմանալիորեն հզոր և հստակ ձայնով նա սկսեց երգել «Ի վերին Երուսաղեմ» շարականը։ Բոլորը միացան ծերունուն. նրանք նորից համայնք կազմեցին։

Սկզբում երկչոտ ձայները լցվեցին, հարստացան արձագանքներով, լցրեցին նեղ ձորը և բարձրացան լեռներից վեր։ Ողորմածության պահ չարչարանքի գագաթնակետին։ Նույնիսկ ոստիկանները կանգ առան լսելու և ոչ մեկի մտքով չանցավ ընդհատել գյաուրների այդ արարողությունը։ Այդ իրադարձությունը խորհուրդ ուներ։ Մարդիկ աղոթում էին նրանց համար, ում անգերեզման էին թողել վանքի առջև, նախորդ գիշեր մահացած կանանց համար, հեղեղատի խորքում ընկած տղամարդկանց համար։ Եվ բոլոր նրանց համար, որ ընկնելու էին այս անվերջ ճանապարհին։ Շատերը մտածում էին, որ իրենք էլ շուտով «կանցնեն վերին Երուսաղեմով»։

Երբ մարմինը փոսն իջեցրեցին, Արաքսին վրան գորգ փռեց։ Թովմասը մի փունջ դաշտային ծաղիկներ դրեց, որոնք քաղել էր ափի եզերքից։ Հետո նա իր գլխին դրեց Արմենի գլխարկը և բացահայտեց իր հիասթափությունը.

— Կնքահայրը ասում էր, որ ինքը հանգչելու էր նոճիների տակ, եկեղեցու բակում։

Այս խոսքերից ազդվելով՝ Արաքսին նետվեց փոսի եզրին և վայրի ճիչ արձակեց։ Ստիպված եղան նրան այդտեղից հեռացնել։ Ամբոխը ցրվեց։ Մարոն ուզում էր հեռու տանել Թովմասին, սակայն նա պնդեց թաղմանը մասնակցելու իր ցանկության վրա։

— Նա իմ կնքահայրն է, նա իմ կնքահայրն է,- կրկնում էր նա համառորեն։

Նրան համակել էր այնպիսի կատաղություն, որից նրա ուժերը կարծես կրկնապատկվել էին։ Նա մտածում էր այն մեծ թռչունների մասին, որոնք պտտվում էին երկնքում մահացածների վրա։ Նրանց խժռելու համար... Նրանք ձեռք չէին տա կնքահորը, և Արմենն անվնաս վիճակում երկինք կհասներ։

Երբ փոսը լցվեց, վրան մի կույտ քար հավաքեցին։ Թովմասն այնպես դարսեց քարերը, որպեսզի կույտը չփլվեր փոթորիկի ժամանակ։ Գալստյան այրին մնաց գերեզմանի մոտ աղոթելու։ Նա փորփրեց իր պայուսակը ու տղային կանչեց.

— Տղա, մոտեցի՛ր։

Նա Թովմասի ափի մեջ երեք մուգ հատիկ դրեց.

— Սրանք նոճու սերմեր են։

Թովմասի աչքերը փայլեցին.

— Շնորհակալություն, տիկին։ Նավապետ Արմենը գոհ կլինի։

Մարոն ու Թովմասը նոճու սերմերի համար տեղ ընտրեցին։ Թովմասն ուզում էր, որ նոճիների ճյուղերը գերեզմանին հով անեին կեսօրից հետո։ Երբ գործն ավարտեցին, Մարոն գրկեց երեխային.

— Քո կնքահայրը կհպարտանար քեզնով։

— Երբ կմեծանամ, կգամ այստեղ ու եկեղեցի կկառուցեմ։ Ինչպես նա էր ուզում։

Գետի մոտ վերադառնալով՝ Մարոն տեսավ, որ սայլերը հեռանում էին։ Դրանք վարում էին ոստիկանները։ Ագնիվ խանումը փրփրել էր։

— Երկու վերմակ։ Ահա այն ամենը, ինչ կարողացա փրկել։ Մենք հիմա ոտքով պետք է շարունակենք ճանապարհը։

Գալստյան այրին և Անթառամ խաթունը՝ Տեր Խորենի քենին, ուղեկցում էին Արաքսուն։

— Ես չեմ կարողանա քայլել,– ասում էր Արաքսին։

— Մենք քեզ կօգնենք,– ասաց Մարոն։

— Ոչ։ Ոտքերս... Սիրտս... Ես հեռու չեմ գնա։

— Այդպես մի ասեք։

Գալստյան այրին Մարոյին նշան արեց, որ չպնդեր։ Նա ցույց տվեց իր տոպրակը.

— Ես դեղ ունեմ, որը կբուժի Արաքսուն։ Մեզ մենակ թողեք։

Մութն արագ էր ընկնում։ Հիմա, երբ տարագիրները չէին կարող պատսպարվել իրենց սայլերի տակ, նրանք կողք կողքի էին հավաքվել և սեղմ խումբ էին կազմել՝ գիշերն անցկացնելու համար։ Մի կին բղավեց.

— Այն ի՞նչ է։ Այնտե՛ղ։

Նա ձեռքը մեկնել էր դեպի հյուսիս-արևելք, ուր ձորը նեղանում կիրճ էր դառնում։ Մարոն կարծեց, որ ավազակներն էին վերադարձել։ Շատերն այդպես մտածեցին, ու լարումն ահագնացավ, քանի դեռ չէին համոզվել, որ դրանք իրենց պես տեղահանվածներ էին։ Միգուցե մեկ այլ խումբ էր Սվասից։ Իսկ եթե Վարդանը նրանց մե՞ջ լիներ։ Ո՛չ, այդ շարասյան մեջ ոչ մի հասուն տղամարդ չկար։

Նորեկները Երզնկայի շրջանից էին։ Տեղահանության սկզբում ավելի քան երկու հազար մարդուց մնացել էր ընդամենը երեք հարյուրը՝ հիմնականում հիվանդներ։ Օր օրի վրա ծեծը, զրկանքներն ու առևանգումները նոսրացրել էին նրանց շարքերը։ Այս մարդիկ, որոնց ավելի քան մեկ ամիս հոտի պես քշում էին լեռնային արահետներով, այլևս ոչինչ չունեին։ Նրանք կիսամերկ էին, ոտքերն արնոտ, մաշկը արևից այրված։ Արդեն չորրորդ օրն էր, ինչ խոտով և արմատներով էին սնվում։ Այնքան ողորմելի վիճակում էին, որ Սվասից տեղահանվածները նրանց հետ կիսեցին մնացած սննդի փշրանքները։ Իսկ դա նշանակում էր, որ հաջորդ օրը իրենք ուտելու բան չէին ունենալու։

Արաքսին աղոթում էր։ Նա նստել էր գետնին, պարզել էր ոտքերը և փակել աչքերը։ Նրա գլուխն ու իրանը ճոճվում էին։ Թովմասը քնել էր տատի գրկում։ Մարոն ասաց Ազնիվ խանումին.

— Ես գնամ նորեկներին օգնեմ։

Նա վերցրեց բահը, որով Արմենին էին թաղել։ Եզների ոտքերից վերև մարդիկ ձեռքերով փորում էին գետի հունը։ Նրանք խմում էին առանց սպասելու, որ հավաքված պղտոր հեղուկը պարզեր։ Մարոն խորը փոս փորեց, որը շուտով լցվեց բավականաչափ պարզ ջրով։ Կանայք այդտեղից ջուր վերցրեցին թասերով կամ ձեռքերի ափերով։

Հյուծված դեմքով մի ծեր կին նրան ասաց.

— Լավ կլիներ, եթե սրտիդ տակի երեխան մեռներ։ Ես տեսել եմ, թե ինչպես էին բազմաթիվ կանայք խեղդում ճամփեզրին բերած իրենց

երեխաներին։ Աստված նրանց կհասկանա։

Մարոն, ամաչելով իր խաբեությունից, նրան հարցուփորձ արեց։ Կինը, որի անունն էր Վարվառա, պատմեց, թե ինչ փորձություններով էր ինքն անցել չորս շաբաթվա ընթացքում, թե ինչպես էին հարազատները մահացել մեկը մյուսի հետևից՝ ծարավից, սովից ստացած վերքերից։ Նորեկների մեջ կային տիֆով հիվանդներ, եղել էին նաև խոլերայի դեպքեր։ Վարվառան եզրակացրեց սառը դաժանությամբ.

— Մեռածների բախտը բերել է։

— Մենք մի կերպ դուրս կգանք այս վիճակից։

— Դուք ճանապարհին եք ընդամենը երեք օր, այդպես չէ՞։ Ձես պատկերացնում, թե ձեզ ինչ է սպասում, աղջիկս։ Նպատակակետ չկա։ Նրանք մեզ քարշ են տալիս սարերով, որպեսզի մենք կամաց-կամաց մեռնենք։

Մարոն բացականչեց.

— Ես թույլ չեմ տա, որ ինձ մորթեն։

— Դու մենա՞կ ես։

— Մորս ու վեց տարեկան որդուս հետ եմ։

Պառավը նրա ձեռքին դիպավ և ծանրակշիռ ձայնով ասաց.

— Եթե հնարավորություն ունենաս, տղայիդ տուր թուրք գյուղացիների։ Այդպիսով դու նրա նկատմամբ ողորմածություն դրսևորած կլինես։

Մարոն շրջվեց ու հեռացավ նրան չլսելու համար։ Վարվառան ձայնը բարձրացրեց.

— Մենք ծղոտի ծեղիկներ ենք, որ քշում է քամին։ Ծեղիկ ենք։

Ազնիվ խանումն ու Թովմասը քնել էին՝ փաթաթվելով մի վերմակի մեջ։ Մարոն մյուսը կիսեց Արաքսու հետ։ Երբ լուսաբացին զարթնեց ցրտից դողալով, Արաքսին կողքին չէր։ Մարոն վեր կացավ։ Շրջանցելով քնած մարդկանց, նա գնաց դեպի բլուրը։ Արաքսին պառկած էր Արմենի գերեզմանի վրա։ Մարոն նրանց ցնցեց։ Մարմինը, որին նա դիպավ՝ սառած էր։ Արաքսու ձեռքից մի սրվակ ընկավ և կոտրվեց՝ քարին դիպչելով։ Մարոն հասկացավ, որ Գալստյան այրին Արաքսուն հնարավորություն էր տվել ամուսնուն միանալու։ Նա ծնկի իջավ ու լաց եղավ։ Նա ողբում էր ոչ այնքան մահացածներին, որքան նրանց, ովքեր ուզում էին վերապրել։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 6

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 10:33-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 5 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 7 ►

Հուլիսի 19-ն էր կամ 20-ը: Վարդանը կորցրել էր օրերի հաշիվը: Բանտախցում մնացած նրա երկու բախտակիցները ամենևին էլ չէին հետաքրքրվում ամսաթվով: Նրանց կյանքը վերածված էր մեկ երկար օրվա, որը սկսվում էր առավոտյան, երբ նրանք խույս էին տալիս մահապատժից, և ավարտվում էր հաջորդ լուսաբացին, երբ կարող էր գալ իրենց հերթը: Նրանք նույնիսկ չէին խոսում, և յուրաքանչյուրը ծվարել էր իր անկյունում: Եվ նրանց լռությունն է՛լ ավելի ցավագին էր դարձնում Վարդանի մենությունը:

Նրանց խմբակային փախուստի ծրագիրը չէր իրականացել: Ինչ-որ մեկը մատնել էր, և մետաղյա դռներն այլևս երբեք չէին բացվել նրանց բակում եղած ժամանակ: Մահապատժի ենթարկվածների ներքնակները մնացել էին բանտախցում, և այն ավելի մեծ էր թվում, քան կար իրականում: Նեղ լուսամատից թափանցող ճառագայթները լուսավորում էին պատի գորշ քարին Սարգիս Զորյանի փորագրած խաչն ու արձանագրությունները: Վերջինիս մահապատժից հետո, որը տեղի էր ունեցել չորս օր առաջ, Վարդանը գրում էր այն մարդկանց անունները, որոնք դեռևս ողջ էին: Մինչև վերջին շունչը նա լրագրող էր մնալու... Սակայն հնարավորություն չէր ունենալու ստորագրելու:

Վաղ թե ուշ ինքն էլ էր ճոճվելու պարանի ծայրին: Ավելի շուտ վաղ, քանի որ պահակներից մեկն զգուշացրել էր, որ իր մահապատիժը ի կատար էր ածվելու այդ առավոտ: Քաղաքապետարանի ժամացույցը ազդարարել էր ժամը վեցը, իսկ հետո յոթը: Նա շարունակում էր սպասել, գրեթե անվրդով: Նա այնքան երկար էր սպասել անխուսափելի վերջին, որն այդքան երկարաձգվելով կորցրել էր իմաստը և իրեն այլևս չէր վախեցնում:

Միջանցքում քայլեր լսվեցին: Նա շտկվեց: Դուռը բացվեց, և ներս մտավ դեղնած դեմքով մի ենթասպա.

— Վարդան Պալյան:

Վարդանը մոտեցավ: Նրան մի գորշ շապիկ մեկնեցին:

— Ահա քո կախաղան ելնողի համազգեստը:

Առանց արձագանքելու Վարդանը հանվեց և հագավ լայն շապիկը, որը մինչև ծնկներն էր հասնում։ Բանտախցի ընկերները մոտեցան հրաժեշտ տալու։ Նրանք դժվարությամբ էին թաքցնում իրենց թեթևությունը, որ ևս մեկ անգամ խույս էին տվել մահվան ճիրաններից։ Ենթասպային ուղեկցում էին երկու ոստիկան։ Նրանք Վարդանի ձեռքերը կապեցին թիկունքում և նրան տարան առաջին հարկում գտնվող փոքր մի սենյակ, ուր վարսավիրը սրում էր ածելին։ Վարդանին նստեցրեցին մի նստարանի վրա, որի շուրջը գետինը ծածկված էր մարդկային մազերով։ Վարսավիրը սափրեց Վարդանի գլուխն ու մորուքը։

Ներս մտավ խնամքով հարդարված մազերով մի լեյտենանտ։ Բանտարկյալին ցույց տալով, հարցրեց սերժանտին.

— Պալյա՞ն։

— Այո։

Ոտքերը լայն տարածելով՝ նա կանգնեց Վարդանի առջև։ Կիպ կարված կանաչ համազգեստը նրա կեցվածքը բարետես էր դարձնում, իսկ խնամված բեղերի ծայրերը վեր էին տնկված։

— Գավառապետ Մուսթաֆա բեյը...

— Դու ուզում ես ասել Մուսթաֆա Ռահմի՞ն։

— Գավառապետ Մուսթաֆա բեյը,– պնդեց լեյտենանտը,—քեզ վերջին անգամ առաջարկում է հավատավոխ լինել և համագործակցել Իթթիհատի հետ։

Նա ցույց տվեց վարսավիրին.

— Ալին քեզ իսկույն կթլփատի։

Վարդանն ուսերը վեր քաշեց։ Սպան, ողջ կեցվածքով ընդգծելով իր անտարբերությունն այս խնդրի վերաբերյալ, ասաց.

— Համաձայնիր, սա միակ հնարավորությունն է կաշիդ պրծացնելու և փրկելու հարազատներիդ կյանքը։ Համաձայնիր և տասը րոպե անց դու նորից ազատ մարդ կլինես։

Վարդանը համառորեն լռում էր։

— Մտածիր քո կնոջ և որդու մասին, որոնք տառապում են տարագրության ճամփաներին։ Եթե նրանք իմանան, որ քո մեկ խոսքը կարող է վերջ դնել իրենց տանջանքներին և որ դու հրաժարվում ես այն արտասանել, ի՞նչ կմտածեն քո մասին։

Լեյտենանտը դաս էր արտասանում, և Վարդանին թվում էր, որ ինքը լսում էր ոստիկանապետի ձայնը, նրա ստերը։

— Մուսթաֆային կասես, որ գնա գրողի ծոցը։

— Քո կյանքն է,– պատասխանեց սպան հոնքերը վեր քաշելով։— Դեհ, ուրեմն ճամփա ընկնենք։

Բանտի բակում ձիերով լծված սայլ էր սպասում: Մոտ տասնհինգ դատապարտյալ կանգնած էին վանդակում, որի ճաղերի վերևում մի քանի շարք փշալար կար: Վարդանը շուրջն էր նայում՝ փախչելու աղոտ հույս փայփայելով: Լեյտենանտը սովոր էր դատապարտյալներին մինչև կախաղան ուղեկցելուն և գրեթե աննկատ մանրամասներով գուշակում էր նրանց հոգեվճակը: Նա նկատեց, թե ինչպես էր Վարդանը շուրջը նայում և ատրճանակի փողը նրա ծոծրակին դրեց:

- Այդ մեկը քեզ չի հաջողվի: Քեզ սպասում է նոր և լավ մոմած պարանը:

Ոստիկանների դասակի ուղեկցությամբ սայլն ուղևորվեց դեպի շուկայի հրապարակը, որտեղից լսվում էր թմբուկների ձայնը: Ջի հեծած լեյտենանտը գնում էր առջևից հպարտ ու ձիգ: Վաճառասեղանների միջև միջանցք էր բացվել, և երկու կողմից հավաքվել էր հետաքրքրված ու հուզված ամբոխը: Ամենօրյա մահապատիժները, որոնց ձգողական ուժը չէր նվազում, ժողովրդական տոնի առիթ էին դառնում: Հրապարակի մյուս ծայրում կառափնարանի վրա շարված էին կախաղանները: Դրանք տասնհինգն էին: Ջինվորները ազատում էին կախաղանները նախորդ օրր մահապատժի ենթարկվածների դիակներից, կիտում էին սայլի մեջ՝ Սվասից դուրս տանելու համար:

Այդ ամենը Վարդանին չէր հետաքրքրում: Հայացքը դարձնելով դեպի իր ներքնաշխարհը՝ նա տեսնում էր նրանց, ում սիրել էր և ովքեր շարունակում էին ապրել իր հոգում: Վաճառասեղաններից իրեն հասնող յուրաքանչյուր բուրմունք որևէ հիշողություն էր արթնացնում, և դրանց մի մասը մանկությունից էր գալիս: Հատկապես դեղձի հոտը, որը հասունանում էր հենց այդ ժամանակ: Մայրը, որը դեռ շատ երիտասարդ էր, իրեն բարձրացնում էր մինչև ծառի ներքևի ճյուղերը:

— Իջեք,– հրամայեց ոստիկաններից մեկը՝ բացելով վանդակի դուռը:

Վարդանը վայր ցատկեց ու վազեց: Կառափնարանի հետևում թաքնված մի անցում կար, որը տանում էր դեպի հարևան փողոցը:

— Սրան ողջ կբռնեք,– բղավեց լեյտենանտը: Կապված ձեռքերի պատճառով Վարդանը չէր կարողանում արագ վազել: Երկու ոստիկան նրան բռնեցին մինչև անցումին հասնելը: Լեյտենանտը մոտեցավ և մտրակով դեմքին հարվածեց:

— Բռնեք դրան մինչև պարանը վիզը գցեն:

Դիակներով լի սայլը անցավ դատապարտյալների մոտով, և նրանցից ոչ մեկը աչքերը չհեռացրեց: Վերջը մոտ էր, և նրանք այլևս ուժ չունեին տանջվելու իրենց կանանց և երեխաների մասին մտքերից: Նրանց բոլորին ստիպեցին ելնել կառափնարան, իսկ հետո յուրաքանչյուրը բարձրացավ իր կախաղանին հենած սանդուղքով: Պարանի հանգույցը ճոճվում էր նրանց դեմքի առջև: Վարդանը զգաց դահճի ձեռքն իր ուսին, իսկ հետո պարանի կոպիտ հպումը: Իր հայրենակիցներից քանի՞սն էին կանգնել այդ սանդուղքին: Քանի՞սն էին հոգին ավանդել հենց այն վայրում, ուր ինքը պետք է մեռներ: Ինչի՞ մասին էին նրանք մտածում:

Թիկունքում նա լսեց լեյտենանտի ձայնը.

— Ինքս կհրեմ քո սանդուղքը։

Թմբուկների զարկերի ռիթմն արագացավ, միգուցե դա արյան բաբախո՞ւմն էր քունքերում։ Վարդանն անթարթ նայում էր Թեջիր լեռան գագաթին, որը պարզորոշ ուրվագծվում էր մուգ կապույտ երկնքի ֆոնի վրա։ Հանկարծ նա իրեն շատ միայնակ զգաց։ Ահռելի մի տարածություն բաժանում էր նրան ամբոխից, դահճից, նույնիսկ հարևան դատապարտյալներից, իսկ իր ներսում բոլոր հարազատների դեմքերն անհայտացան։ Նա գրեթե չէր զգում իր մարմինը, կարծես արդեն սկսել էր անէանալ։ Մնացել էր դեղձի կպչուն բուրմունքը։ Ինքը երբեք չէր մտածել, որ մեռնելիս մարդն այդքան միայնակ է լինում։

Գլուխը հետ գցելով՝ Վարդանն աչքերը հառեց արևին։ Դժվար էր պատկերացնել, որ այլևս այն չէր տեսնելու և չէր զգալու նրա ջերմությունը։ Կա՞ր արդյոք այլ կյանք։ Այդ պահին Վարդանը երջանիկ կլիներ, եթե վերագտներ իր մանկության կույր հավատը։ Իրատեսությունը հուշում էր, որ ինքն անէանալու էր։ Թովմաս... Մարո... Արդյոք ինքը երկա՞ր կապրի նրանց հիշողության մեջ։ Նրա հիշողության մեջ հայտնվեց մի պատկեր. Մարոն իրենց ննջասենյակի լուսամուտի մոտ, Թովմասը՝ Ազնիվ խանումի ու աղախինների հետ տան շեմին, շունը շագանակենու ստվերում, իսկ վարդերը ցայտուն ուրվագծվում էին տան սպիտակ պատին։

Նրա ոտքին դիպան։ Նա ցնցվեց ու լարվեց։ Քիչ էր մնում սանդուղքը ոտքի տակից փախչեր։ Նրա դիմաց հայտնվեց լեյտենանտը։

— Սա դու չե՞ս,— հարցրեց լեյտենանտը։

Վարդանը լսեց, թե ինչպես են իր անունը տալիս։ Նրա դիմաց հայտնվեց մի լեյտենանտ։

— Դու մայոր Վարդան Պալյա՞նն ես։

Նա կրկնեց հարցը, և Վարդանը գլխով արեց։

— Այստեղ,– բղավեց սպան։

Դահիճը թուլացրեց հանգույցը և օգնեց դատապարտյալին իջնել սանդուղքից։ Ցնցված և ոչինչ չհասկացող Վարդանը թույլ տվեց, որ իրեն ուղեկցեն կառափնարանից ցած։ Արևը նրան կուրացրել էր, և նա հազիվ էր նշմարում լեյտենանտին, որը ողջունում էր ինչ-որ մեկին, ասելով.

- Ահա նա, պարոն գնդապետ։

Այդ դե՞մքը։ Իբրահիմ Ալիզադեն էր։

Վարդանի դիմագծերը փափկեցին։ Բարեկամը բռնեց նրա ձեռը և խիստ ձայնով ասաց.

- Հետևեք ինձ։

Վարդանը կռահեց, որ լեյտենանտի ներկայությամբ ինքը չպետք է խոսեր կամ շփվեր Իբրահիմի հետ: Դեռևս ցնցված՝ նա չէր գիտակցում, թե ինչ էր իրականում տեղի ունեցել: Զգում էր, որ արյունը վերստին սկսել էր հոսել իր երակներով, հետո նա ուժգին ցավ զգաց պարանոցում և խեղդվելու զգացում ունեցավ: Ասես մարմինն ապրում էր այն չարչարանքը, որին նախապատրաստվել էր: Հետո միայն զգաց մահվան սարսափը:

Կառափնարանի առջև ոստիկանները զսպում էին ամբոխը, որը քարացել էր: Միրգ, ընկույզ, շերբեթ և թան վաճառող շրջիկ վաճառականները լռել էին: Կարծես թե բոլորը շունչը պահել էին: Գնդապետն իր բանտարկյալին քարշ տվեց կառափնարանի հետևում գտնվող անցումով: Նրբանցքում ծածկած կառք էր կանգնած: Նրանք կառք նստեցին:

— Շարժվիր,- հրամայեց Իբրահիմը կառապանին հուզմունքը դավաճանող ձայնով:

Հազիվ էին վարգի անցել, երբ լսվեցին զառանցող ամբոխի բացականչությունները:

— Քիչ էր մնում...- բացականչեց գնդապետը:

Նա գրկեց Վարդանին, որն անդադար կրկնում էր.

— Իբրահիմ, Իբրահիմ, բարեկամս: Հավատս չի գալիս:

— Դու երևի կասկածի տա՞կ առած լինեիր իմ բարեկամությունը: Ինձ հանձնարարությամբ Սվասից հեռու էին ուղարկել:

Գնդապետն այլ մանրամասներ չհաղորդեց: Նա ուզում էր մոռանալ Շապին-Կարահիսարի նույնիսկ անունը, ուր երեք շաբաթ տևած պաշարումից հետո բանակը սրի էր քաշել քաղաքի ամբողջ հայ բնակչությանը կանանց և երեխաների հետ միասին:

Վարագույրը քաշելով՝ Իբրահիմը գլուխը լուսամատից հանեց և, համոզվեց, որ իրենց չեն հետապնդում: Վարդանը հասկացավ, որ ընկերն իրեն ազատել էր սեփական նախաձեռնությամբ:

— Ուրեմն ինձ վերաբերող հրաման չունե՞ս: Դու կյանքդ ես վտանգում:

Իբրահիմը ժպտաց, և նրա դեմքը փայլում էր: Նա նման էր երեխայի, որը հենց նոր չարություն էր արել և հպարտանում էր դրանով: Վարդանը հուզված ավելացրեց.

— Ինչպե՞ս կկարողանամ քեզ հատուցել: Երջանիկ է այն մարդը, ով քեզ պես ընկեր ունի:

— Դու ևս մեկ ընկեր ունես,— պատասխանեց Իբրահիմը խորհրդավոր տեսքով:- Ես միայնակ չեմ այս պատմության մեջ:

Նա հրաժարվեց ավելին ասել և կտրեց Վարդանի կապանքները: Կառքը բռնեց ամերիկյան օրիորդաց վարժարանը տանող ճանապարհը

և կառապանն արագացրեց ընթացքը։ Վարդանը վերջապես հարցրեց.

— Տեղեկություն ունե՞ս Մարոյի, իմ որդու և զոքանչիս մասին։

Իբրահիմի դեմքն այլայլվեց։

— Դժբախտաբար,– ասաց նա շփոթված ձայնով,– ես ոչինչ չկարողացա անել։ Սվասում չէի։ Այս գիշեր եմ վերադարձել։

Վարդանի ուսերը հակվեցին, և նա խորը հառաչեց։

— Իսկ գիտե՞ս, որ ճանապարհով են գնում Սվասի հայերը։

— Պարզ է, որ հետաքրքրվել եմ։ Բազմաթիվ շարասյուներ կային, որոնք գնացել են տարբեր ճանապարհներով։ Սակայն հնարավոր է, որ բոլորը կանցնեն Մալաթիայով։ Կարծում եմ, նրանք ուղևորվում են Հալեպ։

Վարդանը տխուր գլուխը ճոճեց։ Նա մրմնջաց, կարծես բարձրաձայն մտածեր.

— Երկու շաբաթվա տարբերություն... Բայց նրանք պետք է որ դանդաղ շարժվեն։

Իբրահիմը բռնեց նրա թևը.

— Դու չպետք է մտածես նրանց միանալու մասին։ Անատոլիայով մեկ տեղահանվածների քարավաններ են շարժվում։ Այդ բազմության մեջ երեք հոգի գտնելն անհնարին է։ Բանակը փակում է ճանապարհները, բնակավայրերից դուրս վխտում են ավազակները։ Չես կարողանա անցնել։

Վարդանը նայեց նրա աչքերի մեջ.

— Եթե քո ընտանիքը լիներ, ի՞նչ կանեիր։

Իբրահիմը առանց պատասխանելու գլուխը կախեց։ Նա կվարվեր այնպես, ինչպես մտադիր էր վարվել Վարդանը։

— Չի և ատրճանակ, ահա թե ինչ է ինձ պետք։

— Դու, իհարկե, այդ ամենը կունենաս։

— Ո՞ւր ես ինձ տանում։

— Համբերություն,– պատասխանեց գնդապետը խորհրդավոր ժպիտով։

Երկվորյակ մինարեթների և բաղնիքի արանքում ծվարել էր մի հին պալատ, ուր գտնվում էր բանակի հրամանատարությունը։ Կառքը բակ մտավ, որով Վարդանը բազմիցս անցել էր պաշտոնական ընդունելություններին մասնակցելու համար։ Կենտրոնական մուտքից մտնելու փոխարեն գնդապետը Վարդանին տարավ դեպի կողմնային մի դուռ, այն թևը, որը նախատեսված էր պատվավոր հյուրերի համար։ Նրանք մտան նախասրահ, որի կենտրոնում մի փոքր ավազան կար, իսկ

պատերին գրված էին հատվածներ Ղուրանից և զարդարված էին սուլթանի դիմանկարներով։

Վարդանը չէր կարողանում գուշակել, թե ինչու էին իրեն այստեղ բերել։ Իբրահիմը նրան տարավ մի ավելի մեծ սենյակ, որը գորգապատ էր և կահավորված էր հին կահույքով։ Նախշազարդ, ոսկեզօծ շրջանակի մեջ տեղադրված խմբակային լուսանկարում պատկերված էին Էնվերը, Ջեմալը և Թալեաթը՝ Իթթիհատի երեք առաջնորդները։

— Հիմա կասե՞ս...

— Մի խաթարիր ուրախությունդ,– ասաց Իբրահիմը։

Ջնայած անհամբերությանը, Վարդանը այլևս հարց չտվեց։

— Ես քեզ կսպասեմ նախասրահում,– ասաց Իբրահիմը։

Մենակ մնալով՝ Վարդանն ուսումնասիրեց սենյակը։ Մարմարյա կլոր սեղանի վրա չրեղեն և խմիչք էր դրված։ Չկարողանալով իրեն զսպել՝ Վարդանը մի քանի թուզ կերավ և թաքուն մի կում կոնյակ խմեց հենց 22ից։ Խմիչքից նրա տասմոքսը կծկվեց։ Հոգնածությունից հենվեց սեղանին։ Նա այնքան կեղտոտ էր, որ չհամարձակվեց նստել բազկաթոռին։ Բանտախցի գարշահոտությունը՝ փտած հարդի, քրտնքի ու կեղտի հոտը, ներփափանցել էր մաշկի մեջ և այնքան ուժգին էր, որ նրա սիրտը խառնեց։ Իսկ ինքն այնքան էր վարժվել այդ հոտին, որ այն չէր էլ զգում։

Սենյակի խորքում գտնվող դուռը բացվեց։ Ներս մտավ հետևակի համազգեստով մի գեներալ։ Համազգեստի բաճկոնը խնամքով կոճկված էր, և ոսկեզօծ օձիքը թաքցնում էր կրկնակզակի ծալքերը։ Նա բարձրահասակ էր, սակայն գեր և շատ դանդաղ էր քայլում։ Ծանր կոպերը գրեթե ծածկում էին նրա մանր սև աչքերը։ Փքված այտերով դեմքը բարի էր թվում։ Նա մոտեցավ Վարդանին և ձեռքը նրան մեկնեց, որը Վարդանը սեղմեց առանց լարումից ազատվելու։

— Կարծում եմ, դուք ինձ չեք հիշում, մայոր Վարդան։

Ի տարբերություն մարմնի՝ ձայնը բոլորովին չէր փոխվել։

— Հալիթ փաշա,– բացականչեց Վարդանը ապշահար։– Ներեցեք, որ ձեզ չճանաչեցի, տասը տարի է անցել։

— Այո,– ասաց զինվորականը փորը ցույց տալով,– և համեղ ուտելիքները...

Վարդանը հիշեց կրքոտ երիտասարդին, որը հայտնի էր իր հռետորական տաղանդով։ Այդ ժամանակաշրջանում նա շատ նիհար էր և ոսկրոտ։ Նրանք ծանոթացել էին, երբ երկուսն էլ «Ազատություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ էին։ Նրանք միասին էին խորհրդարանում և մտնում էին Էնվերին ու Թալեաթին հակադրվող առաջադիմականների խմբավորման մեջ։ Եվ ահա հիմա նրանցից մեկը իշխանության կողմնակիցն էր, մյուսը ջախջախված էր այդ նույն

իշխանության կողմից։

Վարդանը մի պահ վարանեց և ուշադիր նայեց գեներալի աչքերի մեջ։ Արդյո՞ք Հալիթը նույնն էր մնացել, որի համար կարևորագույն բանն արդարությունն էր։ Արդյո՞ք փոխվել էր միայն նրա ֆիզիկական կերպարանքը։ Աչքերը մատնում էին նրա բարությունը։ Վարդանին թվաց, որ ինքը գեներալի հայացքում հայտնաբերեց նաև այլ բան՝ մեծ հոգնություն և միգուցե հիասթափություն։ Հալիթ փաշան թևերը տարածեց։ Վարդանը տատանվում էր՝ ցույց տալով իր հագուստը։ Գեներալն ուսերը թոթվեց և գրկեց Վարդանին։

— Ես երջանիկ եմ քեզ տեսնել, Հալիթ փաշա։

— Վարդան Պալյան,– պատասխանեց մյուսը՝ Վարդանի ուսին խփելով։— Վարդան, եղբայրս։

Ժպտալով, նրանք հետ-հետ գնացին միմյանց հեռվից նայելու համար։ Նրանց ընկերությունն անխաթար էր մնացել։ Նրանցից յուրաքանչյուրը մտածեց երիտասարդության այն տարիների մասին, որ նվիրել էին նույն գաղափարների իրագործմանը։ Հալիթի դեմքը մռայլվեց։

— Ինչպիսի՜ խառնաշփոթ,– հառաչեց նա։

Վարդանը գլխով արեց։ Հալիթը գրպանից ծխախոտ հանեց և մատնացույց արեց բազկաթոռները։ Առանց առաջարկության սպասելու Վարդանը երկու բաժակ կոնյակ լցրեց։ Նրանք նստեցին և բաժակներն իրար խփեցին։

Ծխախոտի ծուխն արտաշնչելով՝ Հալիթը ցույց տվեց կառավարության երեք առաջնորդներին պատկերող լուսանկարը.

— Այս խարդախները մեզ խաբեցին։ Սակայն նրանց վերջը կգա։ Այն արդեն գաղտնի կերպով նախապատրաստվում է։

Վարդանը հուզված պատասխանեց.

— Շատ ուշ կլինի։ Հարյուր հազարավոր հայեր բնաջնջված կլինեն։

Հալիթը զննեց իր բաժակի կոնյակը և մրմնջաց.

— Խե՜ղճ մարդիկ։ Խե՜ղճ երկիր։

Կտրուկ շարժումով նա հանգցրեց ծխախոտը և մնացորդը շպրտեց ղեկավարների լուսանկարի ուղղությամբ.

— Ինչ հաճույքով եմ ես նրանց դավաճանում՝ քեզ փրկելով մահից։

— Ես քո հավերժ պարտապանն եմ, Հալիթ փաշա։

Վարդանն անդադար տեղահանության մասին էր մտածում և հարց տվեց, որի պատասխանը գիտեր.

— Այս սարսափին վերջ տալու միջոց չկա՞։

— Վախենամ, որ ոչ։ Զափավոր քաղաքական ուժերը հեռացվել են

կառավարությունից։ Ինձ ուղարկում են ռուսական ճակատ այն պատճառով, որ ես հրաժարվել եմ մասնակցել տեղահանություններին, և հույս ունեն, որ ես այնտեղ կաշիս կթողնեմ։

— Եթե թշնամին ներխուժեր երկիր, դա կարագացներ Իթթիհատի անկումը։

— Պետք չէ հույս ունենալ, որ այդ բանը շուտով կպատահի։ Ես Գալիպոլիից եմ գալիս։ Քեմալ փաշան դիմադրում է ֆրանսիացիներին և անգլիացիներին։ Նա նրանց հետ կմղի դեպի ծով, դա ժամանակի խնդիր է։

Նրանք իրենց բաժակները դատարկեցին լռություն պահպանելով։ Հալիթ փաշան թեքվեց և ձեռքը դրեց Վարդանի ձեռքին։

— Իբրահիմն ինձ ասաց քո ընտանիքի մասին։ Ես անկեղծորեն ցավակցում եմ։

Վարդանի դեմքն այլայլվեց, և նա շրթունքը կծեց։

— Դու մի տղա՞ ունես։

— Թովմաս,– պատասխանեց Վարդանը՝ աչքերը լցնելով։– Նա վեց տարեկան է։

- Ամեն ինչ կորած չէ,– պատասխանեց գեներալը, որն ուզում էր հուսադրել Վարդանին։ Մի օր դու կգտնես նրանց, ես համոզված եմ։ Այս պահին ամենակարևորը այս պատմությունից դուրս պրծնելն է։

Իմանալով, որ Հալիթն ամեն ինչ կանի իր ծրագրից իրեն հետ պահելու համար, Վարդանը նրանից թաքցրեց, որ պատրաստվում էր գնալ իր ընտանիքին փնտրելու։

— Ուզո՞ւմ ես ինձ ուղեկցել Արևելյան ճակատ որպես համհարզ։ Եթե ուզենաս, կանցնես ռազմաճակատի գիծը և Արևելյան Հայաստան կգնաս։

— Ես գերադասում եմ չհեռանալ կայսրությունից։

— Իրավացի ես։ Ավելի լավ կլիներ, եթե Ստամբուլ գնայիր։ Հայերին այնտեղ առանձնապես չեն նեղում։ Դու այնտեղ ազգականներ ունես, եթե չեմ սխալվում։ Այնտեղ կարող ես միանալ մեր ընկերներին, որոնք նախապատրաստում են երեք չախկալների իշխանությունից հեռացումը։ Այդ գործում նրանց աջակցելը քո ընտանիքին ու ժողովրդին օգնելու ամենալավ ձևը կլիներ։

— Դա երկար ճանապարհորդություն կլինի,— պատասխանեց Վարդանը՝ ձևանալով, թե մտածում է։

— Ես քեզ համազգեստ կտամ, զինվորական փաստաթղթեր և միջոցներ։ Նաև գործուղման փաստաթուղթ կտամ, որը կհեշտացնի քո տեղաշարժը։

— Եթե գործը վատ ընթացք ստանա և ինձ նորից բռնեն, դու

կվտանգվես, գնդապետ Իբրահիմը՝ նույնպես։

— Իսկ դո՞ւ, Վարդան։ Չէ՞ որ դու առանց տատանվելու ինձ թաքցնում էիր Բերայի քո դեղատան նկուղում մի քանի շաբաթ շարունակ, երբ ինձ փնտրում էր սուլթանի գաղտնի ոստիկանությունը։ Իսկ երբ ես ձերբակալված էի և հիվանդ էի տիֆով, չէ՞ որ դու հնարավորություն գտար ամեն շաբաթ ինձ դեղեր ուղարկելու։ Երբ Իբրահիմն ինձ հայտնեց քո ձերբակալության մասին, ես մտածված կերպով ճանապարհս շեղեցի Սվաս գալու և քեզ վարձահատույց լինելու համար։

— Հիմա էլ ես եմ քո պարտապանը և չգիտեմ, թե քեզ ինչպես շնորհակալություն հայտնեմ։

— Ողջ մնալով, Վարդան Պալյան։ Կայսրությունը կամ էլ այն, ինչ կմնա դրանից, քեզ պես մարդկանց կարիքն է զգալու։

Նրանք այլևս իրար ասելիք չունեին։ Հանգամանքները չէին նպաստում հին հուշերի վերակենդանացմանը։ Գեներալը ավարտեց զրույցը.

— Ես հիմա պետք է գնամ։ Գնդապետ Իբրահիմը քեզ կփակի զինվորական բանտում։ Այսօր երեկոյան նա քաղաքից դուրս կբերի քեզ։

Նրանք հուզված գրկախառնվեցին։

— Հիշո՞ւմ ես Ենիքյոյի այն պանդոկը, ուր մենք այնքան լավ քեֆ էինք անում։ Օրը կգա, և մենք այնտեղ կվերադառնանք։

— Թող Աստված քեզ օրհնի, Հալիթ փաշա։ Զգուշացիր ռուսների գնդակներից։

— Ալլահը քեզ պահապան, բայց ամեն դեպքում զգույշ եղիր։

— Մի վախեցիր, մահը երկու անգամ չի հարվածում։

* * *

Ցնցոտիներով պատված, հածող հայացքներով և բթացած դեմքերով էակների անվերջանալի թափորը դժվարությամբ շարժվում էր եգիպտացորենի դաշտով։ Բույսերը, որոնց տերևները չոր խշշոց էին հանում, հասնում էին մեծահասակների ուսերին և, ծածկում էին երեխաներին։ Մոտ չորս հարյուր հոգի էին, իսկ նրանց հսկող ոստիկանները տասնհինգն էին։ Արդեն երկրորդ շաբաթն էր, ինչ դուրս էին եկել Սվասից։ Քանի՞սն էին մնացել ճանապարհներին՝ մահամերձ վիճակում ուրուրների բաժին դառնալով։ Երբեմն էլ սվինն էր վերջ տալիս նրանց հոգեվարքին։

Ոչ մի ճիչ, ոչ մի լաց։ Տեղահանվածները նույնիսկ խոսելու ուժ չունեին։ Հնազանդ՝ նրանք քայլում էին հայացքները գետնին հառած, մտահոգվելով միայն հաջորդ քայլն անելու անհրաժեշտությամբ։ Նրանք խուսափում էին հեռուն նայել, քանի որ նպատակակետ չունեին։ Նրանց

երթուղին կախված էր ոստիկանների քմահաճույքից, որոնք զվարճանում էին՝ ընտրելով վատթարագույն ճանապարհները և երբեմն ստիպում էին մարդկանց մի քանի անգամ նույն տեղով անցնել։

Մորը գոտկատեղից պահելով՝ Մարոն թույլ չէր տալիս, որ Ազնիվ խանումը վայր ընկներ։ Բացի դրանից, ծեր կինը հենվում էր Թովմասի ուսին։ Նա ջերմություն ուներ և, չնայած շոգին, դողում էր։ Երբեմն ծեր կինը զառանցում էր և նրան թվում էր, որ ինքը վերադարձել էր իր երիտասարդության տարիները։ Օր օրի նրա ուժը հատում էր, և ամեն առավոտ նա արթնանում էր ավելի հյուծված, քան նախօրեին։ Երբեմն նա աղերսում էր Մարոյին իրեն թողնել ճանապարհին։ Մարոն չէր պատասխանում և շարունակում էր համառորեն մորը քարշ տալ իր հետևից։

Քրտնաշաղախ, զրնգացող գլխով՝ Մարոն կարծես երազի մեջ քայլեր։ Միայն մեկ միտք էր զբաղեցնում նրա ուղեղը. շարունակել, վերապրել։ Նա կորցրել էր շարունակելու և վերապրելու իրեն դրդող պատճառները։ Կանգուն մնալ, առաջ գնալ, ևս մեկ օր մթնեցնել, դա արդեն բավական էր։ Կեղծ փորը խանգարում էր նրան և էլ ավելի էր հոգնեցնում։ Այդուհանդերձ, այդ փորը իրեն պահպանել էր այն բռնություններից, որոնց ենթարկվել էր կանանց մեծամասնությունը։

Արևից պաշտպանվելու համար Արմենի գլխարկը աչքերին կործած՝ Թովմասը եգիպտացորենի խակ կողը էր կրծում։ Հատիկների կեղևը մնում էր ատամների արանքում, իսկ տտիպ խմորը չորացնում էր բերանը, սակայն ստամոքսը կրկին և կրկին պահանջում էր այդ դժվարամարս կերակուրը։ Նրա կիսագուլպաների կրունկները ծակվել էին, և մաշկի ու կոշիկների հպումից կրունկներին վերքեր էին գոյացել։ Ուժասպառություն, սով, ծարավ, շոգ. Թովմասն այլևս չէր բողոքում։ Տեղահանությանը նախորդած կյանքը ջնջվել էր նրա հիշողությունից։ Նա ոչնչի մասին չէր մտածում, նույնիսկ տանջանքների հնարավոր ավարտի մասին, և օրեր շարունակ բառ անգամ չէր արտասանում։ Նա քայլում էր։ Ասես ինքը երբեք ոչինչ չէր տեսել, այս ողորմելի գոյությունից բացի։ Ասես ողջ կյանքում քայլել էր։ Գիշերն ամենավատ ժամանակն էր։ Նա այնպիսի հրաշալի երազներ էր տեսնում, որ դրանք ավելի սարսափելի էին թվում, քան ամենաահավոր մղձավանջը։

Քարավանի ձախ կողմում ձգվում էր Տահտալի լեռների շարունակությունը կազմող զառիթափ լանջերով լեռնաշղթան, որը զատվում էր մշակված արտերից փշոտ թփերով և ժայռաբեկորներով ծածկված լանջով։ Եգիպտացորենի արտից դեպի աջ հովիտն անմշակ էր և հանձնված էր այծերին։ Այդ տխուր տարածքի մեջտեղում երեք տուն թիկնել էին մեկը մյուսին։ Արդեն երկու ժամ էր, ինչ մի ավազակախումբ հետևում էր շարասյանը։ Ի՞նչ ավար էին նրանք ակնկալում այս մարդկանցից, որոնք հագի շորերից բացի ոչինչ չունեին։

— Գյաուրներ։

Պահակներից մեկի բղավոցին կրակոցներ հետևեցին։ Զորս ոստիկան վայր ընկան ձիերից, իսկ մնացածները շրջվեցին և քառատրոփ

հեռացան։ Եգիպտացորենի արտում թաքնված վեց տղամարդ կրակում էին նրանց հետևից։ Տեղահանվածները կանգնել և ապշած դիտում էին այդ տեսարանը.

- Փախեք։ Բոլորդ փախեք,– բղավեց ֆիդայիներից մեկը՝ ձեռքը թափ տալով։

Ոչ ոք չշարժվեց։ Ամեն ինչ այնքան անսպասելի էր, այնքան անիրական։ Պահակախումբը հեռվում վերախմբավորվեց հակահարձակման անցնելու համար։

— Փախեք։ Նրանք հիմա կվերադառնան։

– Մերոնք են,– գոռաց մի ծերունի և ուրախությունից լաց եղավ։– Մերոնք են։

Մարոն արագ կողմնորոշվեց։ Մեկ հայացքով նա գնահատեց իրավիճակը։ Հետևում ոստիկաններն էին, իսկ առջևում մերկ հարթավայրը։ Մի կողմից գոռում-գոչյունով մոտենում էին ավազակները։ Մնում էր թփերով պատած լանջը։

— Մայրիկ, պետք է վազենք,– ասաց Մարոն Ազնիվ խանումին քարշ տալով։

— Ես չեմ կարող։ Երկուսով փախեք։

— Այդ մասին չխոսենք։ Եկե՛ք։

Թովմասը քաշում էր տատի ձեռքից, իսկ Մարոն գրեթե գրկել էր նրան։ Նրանք նետվեցին դեպի ազատություն։ Երկու հարյուր մետր մինչև առաջին թփերը։ Կամքի գերագույն լարումով Ազնիվ խանումին հաջողվեց վազել։ Կարծես ազդանշանի սպասելով՝ մնացած գերիները ցրվեցին տարբեր կողմեր։ Ոստիկանները շարժվում էին ֆիդայիների ուղղությամբ, որոնք առանց նահանջելու նրանց էին սպասում։

Թփուտներին քսան քայլ չհասած՝ Ազնիվ խանումը շնչասպառ գետնին տապալվեց։

- Հանգստանամ... Այլևս չեմ կարող։

Նրանց թիկունքում կատաղի մարտ էր ընթանում։ Մարոն կռացավ մոր վրա.

— Վեր կացեք, մայրիկ։ Եվս մեկ ջանք։

Թովմասը հուզված տեղում դոփում էր և դժվարությամբ էր դիմադրում վազքը շարունակելու գայթակղությանը, երկու քայլի վրա գտնվող թփուտներում թաքնվելու համար։

— Արագ, մայրիկ,– ասաց նա տագնապած ձայնով։

Նա հանեց ոսկե դրամներից ծանրացած գոտին և նետեց խոտին։ Մոր ձեռքն իր պարանոցին գցելով՝ Մարոն նրան շալակեց և քարշ տվեց։ Թովմասը նրան առաջնորդեց մինչև այծի արահետի սկիզբը և նրա առջև

բացեց սուր փշերով ծածկված ճյուղերը: Մարոն իր մեջ այնպիսի ուժ հայտնաբերեց, որի մասին չէր էլ կասկածում: Մի քանի րոպե թփերի հովանու տակ առաջ գնալուց հետո նա գետնին տապալվեց: Ազնիվ խանումը կորցրել էր գիտակցությունը:

— Տատիկ, տատիկ,– աղերսում էր Թովմասը նրա ձեռքին թփթփացնելով:– Արթնացեք, պետք է ճանապարհը շարունակել:

— Թող մի քիչ հանգստանա,– ասաց Մարոն շնչակտուր:

Մարոն բարձրացավ ժայռաբեկորի վրա՝ տեսնելու, թե ինչ էր կատարվում հովտում: Երկու հայ մարտիկ ընկել էին: Յոթ ոստիկան մարտից դուրս էին: Մնացած ոստիկանները կնահանջեին, եթե մի տասն ավազակ չհամալրեին նրանց շարքերը: Ողջ մնացած ֆիդայիները դիմդրում էին: Նահանջելու փոխարեն նրանք պաշտպանում էին հայրենակիցների փախուստը: Ավազակախմբի մնացած անդամները զբաղված էին այն տեղահանվածների որսով, որոնք անզգուշություն էին ունեցել փախչելու դեպի բաց դաշտը: Հեծյալները բռնում էին նրանց, հարվածում հրացանի կոթով կամ էլ գնդակահարում էին: Ոմանք իրենց զոհերին վայր էին գցում, իսկ ձիերը ոտնատակ էին տալիս նրանց: Այդ մարդկանց հետ հաշվեհարդար տեսնելուց հետո նրանք գալու էին դեպի լանջը:

Ամեն վայրկյանը նշանակություն ուներ: Ազնիվ խանումը սթափվեց:

— Թովմասի հետ գնա:

— Մենք միասին կփրկվենք, մայրիկ:

— Ողջամիտ եղիր,– աղերսեց մայրը:

— Կարո՞ղ եք մի քիչ էլ քայլել:

Ազնիվ խանումին հաջողվեց ոտքի կանգնել: Նա հենվել էր դստեր ուսին, և նրանք տեղից շարժվեցին: Ճանապարհը դժվարին էր, քարքարոտ և ծածկված էր չոր ճյուղերով: Մարոն մտածեց, որ այդ ճանապարհը դժվարանցանելի կլիներ նաև ձիերի համար: Նրանք բարձրանում էին լանջով և հեռանում էին հովտից, որտեղից կրակոցներ ու ճիչեր էին լսվում: Նրանք ստիպված էին հաճախակի կանգ առնել Ազնիվ խանումին շունչ քաշելու հնարավորություն տալու համար, սակայն կամաց-կամաց հեռանում էին ոստիկաններից: Մարոն ոգևորվեց, և դրանից նրա ուժերը կրկնապատկվեցին, ազատությունը երկու քայլի վրա էր: Թովմասը հասկանում էր դա: Եղնիկի պես ճարպկորեն նա անցնում էր ժայռերի արանքով, հետախուզում էր տեղանքը, ընտրում էր հեշտ ուղիները:

— Մեզ կհաջողվի, սիրելիս,— ասում էր Մարոն նրան ոգևորելով:

Նա օգնում էր տատին քայլել.

— Այստեղով, տատիկ: Այստեղ նստելու հարմար ժայռ կա:

Ազնիվ խանումի կրծքավանդակը ուժեղ ցավում էր, օդն այրում էր

նրա թոքերը: Նա չէր զգում քարերից վնասված և դողացող ոտքերը: Սակայն հերոսաբար դիմանում էր և շարունակում էր քայլել, և ավելի մեծ ճանապարհ կտրեց, քան ի վիճակի էր իրականում: Նա իրեն մեղավոր էր զգում Մարոյին ու Թովմասին ուշացնելու համար և բարկանում էր, որ Մարոն հրաժարվում էր ճանապարհն առանց իրեն շարունակել:

Թփուտներում աղմուկ էր լսվում: Մյուս փախստականներն էին, որոնց ուրվագծերը երբեմն նշմարվում էին: Մարոն հանկարծ քարացավ: Նա հիասթափված էր և մի քիչ էլ հուսահատված: Սարի լանջը հարթ չէր, ինչպես նրանց թվացել էր հովտից: Սի քանի հարյուր մետրի վրա մի ժայռ էր վեր խոյանում: Ձախից, այսինքն հյուսիսային կողմից լանջը թեք էր և ավելի զառիթափ էր դառնում: Մյուս ուղղությամբ կարծես թե իջնում էր և նույնպես զառիթափ էր դառնում, սակայն հաղթահարելի էր:

— Այնտեղով,— ասաց Մարոն:

Արևն արագ էր մայր մտնում: Պետք էր գիշերակաց գտնել: Մարոն զննում էր լանջը, որևէ անհարթություն կամ արտահայտված ժայռաբեկոր հայտնաբերելու հույսով: Հեռվից նա լսեց ձիերի ոտնաձայների արձագանքը, թուրքերեն ու քրդերեն հայհոյանքներ, ձայներ: Այդ ձայները կիսաշրջան էին անում, որը սեղմվում էր: Նա իր վզով անցկացրեց մոր թևը և ստիպեց արագացնել քայլքը: Ազնիվ խանումն այլևս պարզորոշ չէր գիտակցում, թե ինչ էր կատարվում իր շուրջը:

Բլրի լանջին լայն մի հեղեղատ հայտնվեց, և Մարոն դրա կողմը գնաց՝ հույս ունենալով հեռանալ հետապնդողներից: Թփերը նոսրացան, և Մարոն տեսավ, որ բազմաթիվ փախստականներ այդ կողմն էին շարժվում: Պարզվեց, որ անցումը փակուղի էր, որի խորքում քարանձավի մուտքն էր: Հեծյալներն սրանց այդտեղ էին քշում, քանի որ այդտեղից ելք չկար: Հետ դառնալու համար շատ ուշ էր: Եթե Մարոն իրեն չզսպեր, ապա կատաղությունից կբղավեր: Լավագույն ելքն էր գնալ և պատսպարվել քարանձավի խորքում, իսկ նոր եկածները կենդանի պատվար կկազմեին իրենց և ոստիկանների ու ավազակների միջև:

-Սա գաղտնի թունե՞լ է,- հետաքրքրված հարցրեց Թովմասը:- Ո՞ւր է այն տանում:

Մարոն մռայլ ձայնով պատասխանեց.

— Ոչ մի տեղ էլ չի տանում:

Երեխան զգաց մոր հիասթափությունը և հասկացավ, որ իրենք կրկին բանտարկյալ էին: Նա վախեցած հետ նայեց: Այլ տեղահանվածներ էին գալիս: Նրանց հետևում լսվում էր սմբակների դոփյունը:

— Վազիր քարանձավի խորքը և տեղ գտիր տատիկի հասար: Մուտքից հնարավորին չափ հեռու:

Քարանձավի մեծ և սև խոռոչը նրան վախեցնում էր, սակայն ոչ ավելի,

քան ավազակները: Նա ներս մտավ մի կնոջ և ծեր, ճաղատ մարդու հետ միասին: Մայր մտնող արևի ճառագայթները թափանցում էին քարանձավի խորքը, որը մուտքից մոտ հիսուն քայլ այն կողմ փակված էր առաստաղից թափված քարերի կույտով: Օդի զովությունն այնտեղ հաճելի էր: Թովմասը մի տեղ գտավ, որը հարմար թվաց, և վերադարձավ մոր հետևից: Քարանձավը որպես ժամանակավոր օթևան էր ծառայում սար գնացող հովիվների և իրենց հոտերի համար: Մարոն Ազնիվ խանումին պառկեցրեց ծղոտի և չոր աթարի վրա, որը նրան կպահպաներ ժայռի սառնությունից: Ազնիվ խանումը դողում էր: Քարանձավի պատից ջուր էր հոսում: Թովմասը մոտեցավ երեխաներին, որոնք պայքարում էին ժայռը լիզելու իրավունքի համար, և նրան հաջողվեց թրջել իր թաշկինակը, որը Մարոն դրեց մոր ճաքճքած շրթունքներին:

- Մայրիկ, մայրիկ:

Բազմաթիվ անգամներ կանչելուց հետո, նա մրմունջ լսեց, որն ավելի խզզոցի էր նմանվում:

— Քնել...

Մարոն պառկեց մոր կողքին և գրկեց նրան տաքացնելու համար:

* * *

Օրն անվերջանալի թվաց Վարդանին: Նա պառկեց, սակայն չկարողացավ քնել: Անհանգիստ էր և վանդակում փակված արջի պես պատեպատ էր խփվում գլխավոր շտաբին կից զինվորական բանտի խցում, ուր նրան մենակ էին փակել: Նա շտապում էր նետվել տեղահանվածների հետքերով, և յուրաքանչյուր կորցրած ժամը նրան էլ ավելի էր հեռացնում իր ընտանիքից: Իբրահիմն ասել էր՝ «վերջին աղոթքից հետո»: Վարդանը կգերադասեր մեկնել Հալիթ փաշայի հետ հանդիպումից անմիջապես հետո, բայց նա կարող էր վարկաբեկել ընկերներին և նվազեցնել հաջողության հասնելու իր հնարավորությունները:

Պետք էր սպասել մինչև գիշեր: Իսկ մինչև գիշերն ընկնելն ինչ ասես կարող էր պատահել: Քանի՞ մարդ գիտեր, որ ինքը չէր մահացել կառափնարանում: Իսկ եթե այդ պատմությունն աղմուկ բարձրացներ... Ամեն անգամ, երբ դիտանցքը չոր չիկոցով տեղաշարժ էր լինում, Վարդանը ցնցվում էր: Պահակների համար ինքն ընդամենը բանտարկյալ էր, ինչպես և մնացածները, միայն այն տարբերությամբ, որ իրեն ավելի լավ էին կերակրում: Դա բացառիկ բան չէր, քանի որ իրենց դատավարությանը սպասող սպաները վճարելու դեպքում կարող էին իրենց ցանկացած կերակուրը պատվիրել:

Վարդանը զբաղվեց Սվասի և Հալեպի միջև ընկած շրջանների աշխարհագրությունը վերհիշելով: Նա մտաբերում էր քաղաքների,

ճանապարհների, գետերի ու լեռնաշղթաների դիրքը: Հալեպը գտնվում էր Սիրիական անապատի եզրին: Չորս հարյուր կիլոմետր ուղիղ գծով և անկասկած կրկնակին՝ ոլորապտույտ ճանապարհներով: Այնտեղ երկիրն ավելի շուտ արաբներով էր բնակեցված, քան թուրքերով: Սակայն Վարդանը հույս ուներ իր ընտանիքին գտնել ավելի շուտ, քանի որ տեղահանվածների շարասյունները պետք է որ շարժվեին կրիայի արագությամբ: Ըստ Իբրահիմի, Սվասի հայերը բաժանվել էին տարբեր շարասյունների, և յուրաքանչյուրն իր ճանապարհով էր գնացել: Սակայն բոլորն էլ ուղևորվել էին դեպի Մալաթիա, ուր գտնվում էր վերահսկիչ ճամբարը: Ինքը պետք է ուղղակի այնտեղ գնար նրանց գտնելու համար: Առավելագույնս օգտագործելով ձիու հնարավորությունները՝ նա այնտեղ կհասներ չորս օրում:

Ընթրիքից հետո բոպեներն անվերջանալի էին թվում, իսկ ժամերը՝ հավերժություն: Վարդանը, մթության մեջ նստած, խելագարվում էր անհամբերությունից: Վերջապես քայլեր լսվեցին, և դուռը բացվեց: Հեծելազորի համազգեստով երիտասարդ սպա բանտախուց մտավ: Միջանցքի լույսի ներքո երևացին նրա լարված դիմագծերը:

— Մայոր Վարդան Պալյա՞ն:

- Այո:

Վարդանը մոտեցավ: Զինվորականի ձեռքին ոչինչ չկար: Իսկ խոստացված համազգե՞ստը, փաստաթղթե՞րը, զե՞նքը: Տեսնելով, որ բանտարկյալն ինչ-որ բան է ուզում ասել, ենթասպան ափով փակեց նրա բերանը:

— Ոչ մի խոսք: Հետևեք ինձ և արեք այն, ինչ ես կասեմ:

Դատարկ միջանցքներից ախտահանող նյութերի հոտ էր գալիս: Նրանք իջան սանդուղքով և գնացին շենքի հետնամասը: Երիտասարդ սպան լարված էր և դժվարությամբ բացեց ախոռի բակը տանող երկաթյա դռան կողպեքը: Նա դուրս եկավ, հետախուզեց շրջակայքը, իսկ հետո ձեռքով արեց Վարդանին, որպեսզի նա իրեն միանար: Ծղոտով բարձված սայլին լծած էր մի քնձռոտ ձի:

— Դուք կթաքնվեք խոտի մեջ: Երկու տղամարդ սայլը կտանեն քաղաքից դուրս և այնտեղ կթողնեն: Նրանք ոչինչ չգիտեն և, հրամանի են ենթարկվում առանց հարցեր տալու: Այնպես արեք, որպեսզի նրանք ձեզ չնկատեն, և սպասեք այնքան, մինչև նրանք կհեռանան, իսկ հետո դուրս եկեք թաքստոցից:

Նա այլ կերպ էր պատկերացրել իր մեկնումը Սվասից: Ոչ փաստաթղթեր, ոչ ձի: Ինչ-որ բան այնպես չէր: Նա գերադասեց իր ուղեկցի ներկայությամբ չհիշատակել Իբրահիմ Ալիզադեի անունը: Ոչինչ: Կարևորը ազատության մեջ հայտնվելն էր: Մնացած հարցերն ինքը մի կերպ կլուծեր:

— Շնորհակալություն, սերժանտ,— ասաց նա՝ թաքնվելով ծղոտի մեջ:

Սպան նրան խոտով ծածկեց և առանց բան ասելու գնաց։ Ծղոտի հոտից Վարդանն ուզում էր փռշտալ։ Նա դեմքից հեռացրեց ծղոտը ավելի ագատ շնչելու և շրջակայքը տեսնելու համար։ Մոտ կես ժամ անց երկու զինվոր եկան։ Նրանք հարբած էին և բարձրաձայն էին խոսում։ Այդ ապուշները կարող էին ամեն ինչ խափանել։ Սայլը տեղից շարժվեց, անցավ բանտի պատի երկայնքով, մտավ մի մութ փողոց և, վերջապես, մուտք գործեց ավելի լայն փողոց, ուր ռեստորաններն ու սրճարանները դեռ բաց էին։ Անցորդները զարմացած նայում էին ծղոտով բարձված այդ սայլին, որն այդքան ուշ էր ճամփա ընկել։ Վարդանը վրդովված էր. փախուստի համար այնքան էլ հաջողված ձև չէր։ Նա պատրաստ էր ամեն անակնկալի դեպքում վայր ցատկել ու փախուստի դիմել։

Սակայն ոչ մի տհաճ միջադեպ տեղի չունեցավ։ Շուտով նրանք անցան հին պարսպի մութ ավերակների մոտով։

— Ո՞ւր եք այդպես ճամփա ընկել,— հարցրեց հրամայական մի ձայն։

Սայլը կանգ առավ։ Քաղաքի ելքի մոտ պարեկություն անող զինվորները մոտեցան։ Վարդանն ավելի խորը թաղվեց խոտի մեջ։ Պահակներից մեկը սայլապանի քեռորդին էր, և ծիծաղելով հարցրեց.

— Հը՞, Ֆիքրեթ, բանակը թալանո՞ւմ ես։

— Ոչ թե ես, այլ ավելի բարձր կոչում ունեցող սպա։

— Հույս ունեմ, որ նա քեզ անմասն չի թողնում։

— Քեզ թվում է, որ ես գիշերը կթափառեի նրա գեղեցիկ աչքերի՞ համար։

Սայլապան զինվորները սայլից իջան և գործընկերների հետ խմեցին օղու շշի կեսը։ Ծխախոտ վառեցին ու երկար զրուցեցին։ Զրույցը համեմված էր կատակներով։ Վերջապես սայլը տեղից շարժվեց ու կամրջին հասնելուց առաջ աջ թեքվեց։ Դա Թոխատի ճանապարհն էր, ծայրահեղ դեպքում՝ Սամսունի։ Ժամանակն էր։ Վարդանը խեղդվում էր կոկորդը լցված ծղոտի փոշուց։ Նա գլուխը դուրս հանեց դեզի մեջից։ Քաղաքը կամաց-կամաց հեռանում էր, ճանապարհից մի քիչ ներքև լսվում էր Հալիսի մրմունջը։ Իսկ գետից այն կողմ խավարի մեջ թաղված էր դաշտավայրը։ Վարդանին թվաց, որ ինքը վերակենդանանում էր։

Քառորդ ժամ անց սայլը կրկին կանգ առավ։ Երկու զինվորները քաղաք էին վերադառնում ոտքով՝ հրացանները թիկունքը գցած։ Քսան քայլից նրանք կանգ առան ծխախոտ փաթաթելու։ Վարդանն անհամբերությամբ նրանց էր նայում։ Հրահանի կրակը լուսավորեց նրանց դեմքերը։

— Դու տեսա՞ր,— բացականչեց նրանցից մեկը հուզված։

— Այո։

Նրանք լցրեցին հրացանները։ Երևի նկատել էին իրենց ուղևորին կամ էլ ծուղակ էին զգացել։ Վարդանը սողալով գնաց դեպի սայլի

առաջամասը։ Երկու կրակոց լսվեց, հետո՝ երրորդը։ Զին խրտնեց ու փախավ։ Զինվորները չփորձեցին նրան կանգնեցնել։ Նրանք զննում էին իրենց սպանած հսկա օձին։ Վարդանը չկարողացավ սանձը բռնել, որը գետնին էր քարշ գալիս։ Սայլը ցնցվում էր և արդեն թեքվել էր։ Նա հազիվ հասցրեց դուրս թռչել, երբ սայլը շուռ եկավ փոսը։ Զին ազատվեց կոտրված քեղուց և վարգեց քաղաքի ուղղությամբ։ Վարդանը ոտքի կանգնեց և թափ տվեց ծղոտի փշուրները։ Ինքն ազատ էր։

— Վարդան։

Իբրահիմի ձայնն էր։ Վարդանը չորս կողմը նայեց՝ հասկանալու համար, թե որտեղից էր ձայնը գալիս։ Մոտակա ընկուզենիներից զատվեց մի ստվեր և դուրս եկավ ճանապարհ։ Վարդանը վազեց գնդապետին ընդառաջ, բռնեց նրա ուսերից ու թափ տվեց։

— Իբրահի՛մ, Իբրահի՛մ,— ասաց նա ծիծաղելով։— Դու կյանքս փրկեցիր ու ինձ վերադարձրեցիր ազատությունը։

— Դու նույն բանը կանեիր ինձ համար։

Գնդապետի ձայնը որոշակի տագնապ էր մատնում։ Նա զգացմունքային զեղումները կարճ կապեց ու Վարդանին քարշ տվեց ծառերի հովանու տակ։ Այնտեղ երկու թամբած ձի կար։ Իբրահիմը մոմ վառեց և խրեց հողի մեջ։

— Որքան շուտ փախչես, այնքան լավ։

— Բա՞ն է պատահել,— հարցրեց Վարդանը մտահոգված։

— Չգիտեմ, կանխազգացում ունեմ։

Իբրահիմն ուզեց ծիծաղով ցրել այն տագնապը, որն ինքն էլ առաջացրել էր։

— Մելեկը՝ իմ ավագ կինը, հիշեցրեց, որ այսօր երեքշաբթի է։

— Հետո ի՞նչ։

— Ադամամութը Ալլահը ստեղծել է երեքշաբթի օրը։ Մարդկային գործունեության համար անբարենպաստ օր է։

Ընդամենն այդքանը։ Վարդանը հանգստացավ։ Նա հանգստացրեց ընկերոջը.

— Սակայն ոչ գթասիրտ արարքների համար։

— Ես նույն պատասխանը տվեցի Մելեկին։ Խափանվածը քո մահապատիժն էր։

Խոսելով՝ Իբրահիմը ձիերից մեկի թամբից մի կապոց իջեցրեց։ Նա այնտեղից համազգեստ հանեց և տվեց Վարդանին։ Վարդանը հագավ այն և կապեց գոտին, որի վրա ատրճանակի պատյան կար։ Ոտքերին քաշեց սպայի երկարաճիտ կոշիկները, որոնք մի քիչ նեղում էին։

— Ահա քո զինվորական գրքույկը,— ասաց Իբրահիմը։— Դու Շաքիր

Իսմայել լեյտենանտն ես։ Սա գործուղման հրամանն է՝ Հալիթ փաշայի ստորագրությամբ։ Սա էլ լիքը քսակ։

Ամեն անգամ հաջորդ իրը վերցնելիս Վարդանի ձեռքը հպվում էր Իբրահիմի ձեռքին, և Վարդանին թվաց, որ նրա ձեռքը խոնավ էր։

— Ճանապարհը դեպի Սև ծով է տանում։

— Դա իմ ուղղությունը չէ,– պատասխանեց Վարդանը վճռական տոնով։

Իբրահիմը հասկացավ.

— Ես պատահաբար չեմ ընտրել այս վայրը։ Մենք ծանծաղուտի դիմաց ենք։ Սակայն... Գիտե՞ս, գործուղման հրամանում գրված է, որ դու ուղևորվում ես դեպի Կոստանդնուպոլիս և ոչ թե դեպի հարավ։

— Այո,– պատասխանեց Վարդանը։– Անհրաժեշտության դեպքում ես միշտ կարող եմ ասել, որ Հալեպ եմ գնում «Տավրոս էքսպրեսը» նստելու համար։

— Դու ունես ամեն ինչ երկար ճանապարհորդության համար,– ասաց Իբրահիմը, թամբի պայուսակին թփթփացնելով։– Ուտելիք, ծխախոտ, սափրիչ, կողմնացույց ու քարտեզ։ Երկու օրվա ջրի պաշար։

— Սա քո ձին է,– բացականչեց Վարդանը։

— Քեզ եմ նվիրում։ Դրա հետ հեռու կգնաս։

— Ես հրաժարվում եմ, ցանկացած այլ ձի ինձ ձեռք կտա։

Վարդանը գիտեր, որ գնդապետը շատ կապված էր այդ կենդանու հետ և նրան պահպանում էր աչքի լույսի պես։ Այդ սև և փայլուն մազախավով ձին իրեն հավասարը չուներ ձիարշավում։ Իբրահիմը պնդեց.

— Չի կարելի մերժել ընկերոջ նվերը առանց նրան վիրավորելու։ Ես ավելի հանգիստ կլինեմ, եթե իմանամ, որ Յըլդըզը քեզ հետ է։ Ես հատուկ բրոնզեփայլ սանձ եմ հագցրել, որպեսզի դու տպավորություն թողնես ոստիկանների վրա։

— Շնորհակալություն, Իբրահիմ։ Ես նրան լավ կխնամեմ։

Նրանք այլևս իրար չէին տեսնելու և այդ պատճառով հրաժեշտի խոսքեր չէին գտնում։ Վարդանը ձին հեծավ։ Զգալով, որ իր մեջքին անծանոթ մարդ էր, Յըլդըզը փնչացրեց ու սմբակը գետնին խփեց։ Իբրահիմը շոյեց նրա ճակատի աստղը և ասաց.

— Մեր ճանապարհներն այսուհետ բաժանվում են, բարեկամս։ Շատ երջանիկ եմ, որ ճանաչել եմ քեզ և նույնքան էլ վշտացած եմ, որ բաժանվում եմ քեզնից։ Ես քեզ երբեք չեմ մոռանա։ Գնա քո ճակատագրին ընդառաջ։

Այս խոսքերը հասցեագրված էին ավելի շուտ Վարդանին, քան նժույգին.

— Մնաս բարով,- պատասխանեց նա խուլ ձայնով։

Նա սանձը ձգեց և իջավ դեպի գետը։ Մի փոքր հապաղելուց հետո, ձին ոտքը դրեց հոսող ջրի մեջ։ Հորիզոնի վրա փայլում էր Յուպիտերը և կարծես ճանապարհն էր ցույց տալիս։

* * *

Քարանձավը լցվեց։ Մինչև մութն ընկնելը ոստիկանները հետախուզում էին հովիտը և սարերը՝ դեռևս ազատության մեջ բանվող տեղահանվածներին գերեվարելու համար։ Վերջիններս՝ հիմնականում վիրավոր, ստիպված էին անցնել քարանձավում արդեն ապաստանած մարդկանց վրայով՝ նստելու տեղ գտնելու հույսով։ Քարանձավի պատերն անդրադարձում էին նրանց տնքոցն ու լացը, և խորշը լցվում էր այդ ձայներով։ Հուսահատությունից խելագարված մի կին միալար ողբ էր անում։ Մռայլ տոնայնությամբ ճղճղան ձայնն անտանելի էր։ Տարագիրներից մեկը նրան հրամայեց, որ լռեր։ Ապարդյուն ջանք։ Մի ծերունի բարձրաձայն աղոթեց, և աղմուկը կամաց-կամաց հանդարտվեց։

Ոստիկանները նստել էին քարանձավի մուտքի մոտ վառած խարույկի շուրջը և հսկում էին տեղահանվածներին։ Նրանք տկարությամբ քննարկում էին ցերեկը տեղի ունեցած մարտը, սպանված ընկերների դիակների և ֆիդայիների հնարավոր նոր հարձակման հարցերը։ Նրանք լարված էին ու գրգռված։ Հայերը վախենում էին այն ճնշումներից, որ նրանք կգործադրեին օգտվելով առիթից։ Հանկարծ ոստիկաններն իրար խառնվեցին։ Ձիերի ոտնաձայներ և սայլերի ճռռոց լսվեց։ Քարանձավի մուտքի մոտ նստած մարդիկ լուր տարածեցին, որ եկել են բանակի բարձրաստիճան սպաներ, և այդ լուրը հասավ մինչև քարանձավի խորքը։ Տեղահանվածները քննարկում էին, թե ինչ կարող էր դա նշանակել։ Բոլորը հույս ունեին, որ բարձրաստիճան զինվորականները թույլ չէին տա ոստիկաններին իրենց հետ անմարդկային կերպով վարվել և որ վերջապես իրենք ուտելու և խմելու բան կունենային։ Որոշ չափով այդ հույսերն իրականացան։ Եթե ջուր և մթերք չբաժանվեց, ապա գոնե պահակները հանգիստ թողեցին իրենց բանտարկյալներին։

Թովմասը քնած էր տատի կողքին։ Մարոն շատ հոգնած էր, սակայն արթնանում էր յուրաքանչյուր երկու րոպեն մեկ մոր վիճակը ստուգելու համար։ Ազնիվ խանումը չէր սթափվել քարանձավ մտնելուց ի վեր։ Նրա ջերմությունն անցել էր, սակայն մոր ծանր շնչառությունն ու սրտի թույլ և դանդաղ աշխատանքն անհանգստացնում էին Մարոյին, և նա անդադար շշնջում էր նրա ականջին.

— Մայրիկ, մայրիկ։

Ազնիվ խանումը չէր արձագանքում։ Միգուցե նա լսո՞ւմ էր։ Մարոն այտը հպեց մոր այտին և շոյեց նրա մազերը։ Նա շշնջաց.

— Ես այստեղ եմ, մայրիկ, ես արթուն եմ։ Հանգստացեք և վաղն առավոտյան ձեզ ավելի լավ կզգաք։ Մենք կխնամենք ձեզ և դուք կապաքինվեք։

Լուսադեմին քարանձավում գորշ ադամամութ հաստատվեց։ Մարոն նկատեց, որ Ազնիվ խանումի ձեռքերն ու ոտքերը այտուցվել էին և սևացել, որ դեմքը շատ գունատ էր, իսկ շրթունքները՝ կապտած։ Նա այլևս ջերմություն չուներ, հակառակը՝ նրա ճակատը սառն էր։ Ո՛չ, նա չպետք է մեռներ։ Մարոն պայքարում էր իրեն համակող հուսահատության դեմ։ Հարկավոր էր որևէ բան անել, կարևոր չէր, թե ինչ, բայց գործել։ Միգուցե գիշերը եկած սպաների մեջ բժի՞շկ կար, իսկ եթե ոչ, ապա անկասկած դեղեր կունենային։ Մորն ու որդուն վստահելով իրենց կողքն աղոթող ծեր կնոջը՝ Մարոն շարժվեց դեպի քարանձավի ելքը։

Մուտքը հսկող պահակները քարանձավին մեջքով էին կանգնած և նայում էին փոսեր փորող իրենց ընկերներին։ Մնացածները, ծածկոցների մեջ փաթաթված, քնած էին գետնին։ Երկու վրան՝ մեկը մեծ, մյուսը փոքր, խփված էին քարանձավից հարյուր քայլ այն կողմ, ծածկած սայլի և կառքի միջև։ Արաբական տարազով տղամարդիկ հսկում էին վրաններն ու փոխադրամիջոցները։ Նրանց կողքին մի պատանի ուտելիք էր պատրաստում սպիրտայրոցի վրա։ Մարոն նետվեց նրանց կողմը։

— Կանգնիր,— բղավեց պահակներից մեկը։

Մարոն վազքն արագացրեց։ Ոստիկանները մի կողմ նետեցին բահերն ու քլունգներն ու նետվեցին նրա հետևից։ Մարոն անընդհատ շեղում էր ընթացքը՝ իրեն հետապնդող ոստիկաններից խուսափելու համար։ Նա բղավեց՝ դիմելով վրանի մոտ կանգնած տղամարդկանց.

— Ես ուզում եմ սպային տեսնել։

Նրանք անհաղորդ մնացին։ Ոստիկանները ցրվեցին և մի քանիսը Մարոյին շրջանցեցին նրա ճանապարհը կտրելու համար։ Դա նրանց համար խաղ էր։ Նրանք ծիծաղում էին և անպատկառ բաներ էին գոռում։ Մարոն փորձեց խույս տալ ոստիկանից։ Ոստիկանը բռնեց Մարոյի փեշից, և այն պատռվեց։ Հղիության պատրանք ստեղծող շորերը վայր ընկան՝ զվարճություն պատճառելով ոստիկաններին.

— Նա պատրաստ է հաջորդ երեխայի համար,- ասաց նրան կրնկակոխ հետևող ոստիկանը։

Նա բռնեց Մարոյի թևը, նրան ցած գցեց և ինքն էլ ընկավ նրա հետ։ Մարոն կատաղի կերպով պայքարում էր և կծեց նրա ձեռքը։ Մնացածները վրա հասան և հարձակվեցին նրա վրա։ Մարոն ճանկռտում էր նրանց դեմքերը։ Նրանք բռնեցին Մարոյի ձեռքերը, սակայն նա շարունակում էր ոտքերով խփել նրանց, ովքեր փորձում էին իրեն մոտենալ։ Նրա զգեստը պատռվել էր, և մերկ ստինքների տեսքը էլ ավելի էր գրգռում տղամարդկանց։ Տասնյակ ձեռքեր կոպտորեն շոշափում էին Մարոյի մարմինը։ Նա ապարդյուն կերպով

պաշտպանվում էր և բղավում.

— Թողե՛ք ինձ: Թողե՛ք ինձ: Ես ուզում եմ սպային տեսնել:

Երկու ձիավոր մոտեցել և վերևից դիտում էին այդ տեսարանը: Ավելի երիտասարդ ձիավորը ժպտում էր, քանի որ նրան զվարճացրել էր կեղծ հղիության հնարքը և կատաղությունը, որով կինը պաշտպանվում էր: Մարոյի հայացքը հանդիպեց տղամարդու հայացքին, և բարկությունից փայլող նրա աչքերն աղերսող դարձան: Տղամարդու ժպիտն անհայտացավ: Մինչ ոստիկանները փորձում էին նրան մերկացնել, Մարոն դիմեց տղամարդուն.

— Ես ուզում եմ խոսել ղեկավարի հետ:

Ոստիկաններից մեկը պոկեց նրա քողը, և նրա խիտ մազերը թափվեցին ուսերին: Այդ դեմքը տեսնելով՝ ձիավորն ապշեց. ինքը տեսել էր այդ գեղեցկուհուն:

— Թողեք,– հրամայեց նա:

Ոստիկանները նրան չէին լսում: Նա նշան արեց իրեն ուղեկցող հսկային: Տղամարդը վայր ցատկեց իր ձիուց և հարձակվողներին հետ մղեց՝ աքացի տալով և մտրակի հարվածներով:

— Դուք պարոնի խոսքերը չհասկացա՞ք, շան տղերք:

Նա ուժգին էր հարվածում: Ոստիկաններից մեկը շրջվեց բողոքելու համար, և հսկայի ուժգին հարվածը նրան գետնին տապալեց: Մնացածները նահանջեցին առանց սպասելու իրենց հերթին:

Ձիավորը վայր իջավ ձիուց, և սպիտակ բուռնուսով մի մարդ վազելով եկավ սանձը նրա ձեռքից վերցնելու համար: Տղամարդը մոտեցավ Մարոյին, որն իրեն կարգի էր բերում: Նա ղեղնականաչ բաճկոնով էր և ձիավարելու սպիտակ տաբատով: Նա հետաքրքրությամբ նայեց Մարոյին: Դեմքը հարթ էր, նուրբ արտահայտված այտոսկրերով, խիտ և սև հոնքերով, իսկ քունքերի մազերն ալեխառն էին: Նա ձեռքը մեկնեց կնոջը և նրան օգնեց ոտքի կանգնելու:

— Ուզում ես ինձ հետ խոսե՞լ:

Նրա ձայնը հանդարտ էր և վստահ, ինչպիսին լինում է այն մարդու ձայնը, որը սովոր է, որ իրեն ենթարկվեն: Այժմ, երբ Մարոն գրավել էր նրա ուշադրությունը, պետք էր գրգռել նրա հետաքրքրասիրությունը:

— Ես չպետք է այս շարասյան մեջ լինեի: Սա սխալմունք է:

Տղամարդու կանաչին տվող աչքերում զարմանք հայտնվեց, նա ընդհատեց Մարոյին ձեռքի շարժումով:

— Հինգ րոպեից իմ վրանը կգաս:

Իր վրա՞նը: Սակայն Մարոն իրեն չէր կարող թույլ տալ չվստահել այդ մարդուն և գլխով համաձայնության նշան արեց: Նա ցույց տվեց ջեռոցի մոտ դրված ջրի ամանը.

— Կարո՞ղ եմ, էֆենդի։

— Իհարկե,- պատասխանեց նա,— Աբդուլա, զբաղվիր տիկնոջով։

Պատանին մի կողմ դրեց իր կաթսաները և մոտեցավ Մարոյին։ Նա գլուխը խոնարհեց նրա առջև.

— Խնդրեմ, հետևեք ինձ, խանում։

Տասներեք-տասնչորս տարեկան պատանին ժպտում էր՝ ցուցադրելով իր սպիտակ ատամները։ Նրա սև ու գանգուր մազերը նմանվում էին ոչխարի գեղմի։ Մարոն ձեռքերի ափերի մեջ ջուր վերցրեց և ագահաբար խմեց, հետո լվաց դեմքը և հնարավորինս կարգի բերեց հագուստը։ Նրան բացառիկ հնարավորություն էր ընձեռվել դիմելու մի մարդու, որն իշխանություն ուներ։ Չէր կարելի այդ հնարավորությունը բաց թողնել։ Դրանից էր կախված մոր, Թովմասի և հենց իր կյանքը։ Անհրաժեշտության դեպքում նա պատրաստ էր գործի դնել իր ողջ գրավչությունը։

Պետրին իր տիրոջը հետևեց։ Մեծ ու թիկնեղ, մազոտ ձեռքերով և հաստ վզով՝ նա ցուլի էր նման։ Կախ ընկած խիտ բեղերն ընդգծում էին նրա դիմագծերի կոպտությունը։ Նա մոտ հիսուն տարեկան էր և տասը տարով մեծ էր իր տիրոջից՝ Ռըզա բեյից։ Նրա պահվածքը բռի էր և ընդգծում էր Ռըզա բեյի նրբագեղ և վեհաշուք կեցվածքը։ Երկու տղամարդիկ տարբեր աշխարհներից էին, սակայն նրանք անհրաժեշտ էին միմյանց։ Պետրին հարցրեց.

— Ինչո՞ւ եք ձեր ժամանակը վատնում այդ կնոջ վրա, Ռըզա բեյ։ Մենք պետք է գնանք։

— Կգնանք, երբ ես կասեմ,- ասաց Ռըզա բեյը կտրուկ տոնով։

Նա իսկույն փափկեց, և նրա դեմքին թախծոտ արտահայտություն հայտնվեց։

— Գիտե՞ս ինչ, Պետրի, նախորդ գիշեր ես երազ եմ տեսել։

Պետրին շրջվեց և ջղայնությունից աչքերը երկնքին հառեց։ Ռըզա բեյի այդ փաստարկին նա ոչինչ չէր կարող պատասխանել։ Չնայած իր ահռելի հարստությանը և լավ կրթությանը (նա Մեքքայում աստվածաբանություն էր ուսանել և նույնիսկ երկու տարի սովորել էր Փարիզի համալսարանում) այդուհանդերձ, նրա տերը ավելի սնահավատ էր, քան ծեր կինը։ Պետրին դուրս եկավ վրանից, մռայլ տեսքով ասելով.

— Ես հիմա ձեզ մոտ կուղարկեմ այդ հայ կնոջը։

— Աբդուլան թող սուրճ պատրաստի։

Պետրին պատանուն գտավ ջեռոցի մոտ և նրան փոխանցեց տիրոջ հրամանը։ Մարոյի վրա արհամարհական հայացք նետելով՝ մատով վրանը մտնելու նշան արեց։ Վրանի մի մասը զբաղեցնում էր արշավային մահճակալը, իսկ մյուս մասը՝ մետաղյա մի սնդուկ։ Այդ դասավորության շնորհիվ կենտրոնում բավականաչափ լայն միջանցք էր գոյանում։ Ռըզա

բեյը կանգնած էր սեղանի մոտ, որի վրա փռված էր աշխարհագրական քարտեզը: Նա նշան արեց, որ Մարոն նստի սնդուկի վրա: Մարոն ստիպված էր մի կողմ հրել սնդուկին դրված գիրքը և վարդագույն դեղձերով և չոր արմավներով լեցուն մի զամբյուղ, որի տեսքը գրգռեց նրա ախորժակը:

Աբդուլան բերեց սկուտեղի վրա դրված երկու գավաթ, որոնցից գոլորշի էր բարձրանում: Առաջին գավաթը նա մատուցեց տիրոջը, իսկ երկրորդը տվեց Մարոյին: Սո՛ւրճ: Շաքա՛ր: Մարոն այնքան էր շտապում, որ այրեց շրթունքները: Նա մտածեց մոր մասին, որը սուրճ շատ էր սիրում և երկար ժամանակ զուրկ էր դրանից: Մարոն քողը չէր հագել, և Ռըզա բեյը աչքը չէր կտրում կնոջից: Նրա մի քիչ պղտոր հայացքը նրան մտածկոտ տեսք էր հաղորդում: Քաղաքավարության կանոնները պահանջում էին, որ Մարոն սպասեր, որպեսզի իրեն խոսք ուղղեին:

— Տարօրինակ է,- ասաց Ռրզա բեյը ցածր և երգեցիկ ձայնով:— Նախորդ գիշեր ես մի երազ եմ տեսել, որն ինձ շատ է հետաքրքրում: Ջի հեծած սլանում էի մի դաշտավայրով, երբ պտտահողմն ինձ թամբից պոկեց և օդ բարձրացրեց: Ես սավառնում էի շատ բարձր լեռների վրայով: Հանկարծ հողմը դադարեց: Ես սկսեցի ընկնել, ընկնում էի շատ երկար՝ պտտվելով և շնչակտուր: Ես վայրէջք կատարեցի Եփրատի փոթորկոտ ալիքների մեջ: Ջկարողանալով պայքարել հոսանքի դեմ՝ ջրի հատակն էի իջնում: Սակայն մի ձեռք ինձ ափ քաշեց: Երբ սթափվեցի, մի կին ծնկի էր իջել իմ կողքին:

Նա ընդմիջեց խոսքը՝ սուրճ խմելու համար: Մարոյի զարմանքն անսահման էր: Ինչպիսի՜ անհեթեթություն: Նա, ում կողքին հազարավոր մարդիկ էին տառապում և որից էր կախված նրանց ճակատագիրը, հանգիստ երազ էր պատմում: Մինչ ինքն այստեղ նստած մանկամիտ պատմություններ էր լսում, Ազնիվ խանումը մեռնում էր քարանձավում: Մարոն ջանք գործադրեց՝ զգալով, որ այս մարդուն պետք էր հաճոյանալ:

— Ամենահուզիչը, շարունակեց նա,- այն է, որ ինձ փրկող կինը քեզ էր նման:

— Զուգադիպություն է:

— Պատահականություն գոյություն չունի: Անձրևի ամենաաննշան կաթիլն ընկնում է այնտեղ և այն պահին, որն ընտրել է Ալլահը:

Ջիմանալով, թե ինչ պատասխանի, Մարոն գլխով արեց:

— Երազներն ուղերձներ են: Դու կարողանո՞ւմ ես դրանք վերծանել:

— Ոչ,— պատասխանեց նա:

Մարոն իսկույն զղջաց իր պատասխանի համար: Ինքը կարող էր այդ երազն այնպես մեկնաբանել, որ Ռըզա բեյը լավ տրամադրվեր իր նկատմամբ:

— Ի՞նչ էիր ուզում ինձ ասել:

Նրա ձայնը սառն էր։ Մարոն համարեց, որ լավ չէր լինի, եթե ինքը հենց սկզբից մոր մասին սկսեր խոսել։ Նա վստահ ձայնով ասաց.

— Ես օսմանյան բանակի սպայի կին եմ։ Ինձ չպետք է մտցնեին այս քարավանի մեջ որդուս և մորս հետ միասին։

— Քո ամուսի՞նը։

Մարոն չխոսեց Վարդանի ձերբակալության մասին։

— Նա մայոր է, բժշկական ծառայության սպա։ Ծառայում է ճակատում, և ես չեմ կարողացել նրան տեղեկացնել։

Մարոն պարանոցից ձվաձև մի մանյակ հանեց և բացեց տղամարդուն ցույց տալուց առաջ։ Արծաթյա պատյանի մի փեղկին փակցված էր Վարդանի լուսանկարը համազգեստով։

— Տեսեք։

Ուրգա բեյն ուսումնասիրում էր մյուս լուսանկարը՝ Մարոյինը, որն արվել էր Փարիզում։ Նրա հայացքը Մարոյից լուսանկարին էր անցնում, կարծես ուզում էր համոզվել, որ ցնցոտիներով այս տեղահանվածը և լուսանկարի վրա պատկերված եվրոպական հագուստով նրբագեղ կինը նույն մարդն էր։ Նա փակեց պատյանը և վերադարձրեց Մարոյին անորոշ տոնով ասելով.

— Գեղեցիկ տղամարդ է...

— Սվասի ոստիկանապետն ինձ ասել էր, որ մենք պետք է տանը մնայինք, սակայն ոստիկանները մեզ ուժով ստիպեցին գնալ։

Տղամարդը դանդաղ գլխով էր անում և մատով հարդարում բեղը։

— Իսկ հիմա,– հուզված շարունակեց Մարոն– մայրս մեռնում է։

— Ափսոս...

— Նրան բժիշկ է պետք կամ դեղ։

— Մենք այստեղ ոչինչ չունենք,– ասաց նա սրտնեղելով։

Նա սուրճի գավաթը կործեց ափսեի վրա և մեկնեց Մարոյին։

— Դու կարողանո՞ւմ ես բախտ գուշակել սուրճի նստվածքով։

Հենց այն ժամանակ, երբ ինքը խոսում էր հոգեվարքի մեջ գտնվող մոր մասին։ Այս մարդը սիրտ ունե՞ր։ Մարոն հաճոյաբար գավաթը կշպրտեր նրա դեմքին, սակայն նա հետևում էր Մարոյին տագնապած, գրեթե մանկական հայացքով։ Այս անգամ ինքը առիթը բաց չի թողնի օգտվելու նրա վստահությունից։ Մարոն առանց վարանելու ստեց.

— Այո, ես հաճախ եմ բախտ բացում։

Նա ուշադիր զննեց սուրճի մրուրի թողած հետքերը։ Իրեն անհապաղ մի գաղափար էր պետք։ Առաջին միտքը Սվասի իր տան հիշողությունն

էր։ Այո՛։ Ի դեպ, բաժակի եզրի մրուրի մի թանձրուք աղոտ կերպով պատեր ու տանիք էր հիշեցնում։

— Ես մեծ տուն եմ տեսնում... ճանապարհի եզրին։ Այնտեղ շատ մարդ կա... Նրանք երջանիկ են... կարծես ինչ-որ իրադարձություն են տոնում... հաղթական վերադարձ... Շուրջը ծառեր կան, իսկ կողքը տեսնում եմ...

Քիչ էր մնում Մարոն ասեր «եկեղեցու զանգակատուն», սակայն ճիշտ ժամանակին իրեն ուղղեց.

— ... մզկիթի մինարեթը։

Ռըզա բեյի դեմքը փայլում էր։ Նա Մարոյին դրամ մեկնեց։ Մարոն հրաժարվեց։ Տղամարդը զարմացավ.

— Միշտ պետք է վճարել, հակառակ դեպքում գուշակությունը չի իրականանա։ Դու պետք է իմանայիր դա։

Մարոն խորամանկեց և ցույց տվեց իր կողքին դրված զամբյուղը.

— Մրգերն ինձ համար ավելի արժեքավոր կլինեին, քան ոսկին։

— Վերցրու, ինչ կուզես,– պատասխանեց նա բարձր տրամադրությամբ։

Մարոն երեք դեղձ և մի բուռ արմավ դրեց ծնկներին ծալած չարսավի մեջ։ Նրա շարժումից սնդուկի եզրին դրված գիրքը վայր ընկավ։ Նա շտապեց բարձրացնել՝ ներողություն խնդրելով։ Նրա մարմնով դող անցավ, երբ ձեռքը հպվեց կազմի կաշվին։ Գի՛րք։ Եվ կայծակնային արագությամբ նա հիշեց Վարդանի գրադարանը։

— Ղալիբ Դեդևի, ավելի քան մեկ դար առաջ մահացած մեծ բանաստեղծի «Գեղեցկություն և սեր» ժողովածուն,— ասաց Ռըզա բեյը՝ հատորը սեղանին դնելով։

Մարոն առանց սեթևեթելու խնդրեց.

— Թույլ տվեք ինձ Սվաս վերադառնալ, և ես բժիշկ կգտնեմ մորս բուժելու համար։

— Անհնար է։ Դու պահակախմբի կարիք կունենաս ողջ և առողջ տեղ հասնելու հաամար։ Բացի դրանից, չէ՞ որ քո մայրը հիվանդ է, նա կկարողանա՞ այդպիսի ճանապարհորդություն կատարել։

— Ես ազգականներ ունեմ Կոստանդնուպոլսում,— պնդեց Մարոն։

— Ստամբուլը հեռու է,— պատասխանեց նա մտամոլոր։– Թող ես մտածեմ։

Այս հայուհին նրան դուր էր գալիս իր նրբենի պահվածքով և բարեկիրթ խոսքով։ Իր վճռականությամբ նույնպես։ Կարելի էր կռահել, որ դա կիրթ կին էր, և նրա գեղեցկությունը աչքի էր զարնում, չնայած նա նիհարել էր զրկանքներից, աչքերի տակ կապտուկներ ուներ, մազերը

հարդարված չէին, իսկ հագին ցնցոտիներ էին։ Ռըզա բեյի համար գեղեցկությունն ամեն ինչից վեր էր։ Նրան վերադարձնելով լուսանկարը՝ Ռըզա բեյը կորստի զգացում էր ապրել։ Ի՞նչ կզգար, երբ տեսներ, որ նա հեռանում էր ընդմիշտ։ Նա ուզում էր այդ կնոջը, իսկ ինքը սովոր էր վերցնել այն ամենը, ինչ ուզում էր։ Ավելի կարևոր բան կար՝ իր երազը։ Այս կինն էր, որ իրեն փրկել էր ջրից։ Նույն հայացքը, նույն շուրթերը։ Դա նշանակում էր, որ այդ կինը կոչված էր ինչ-որ դեր կատարելու իր կյանքում։ Իսկ այդ մեծ տունը ճամփեզրին, իսկ մարդի՞կ, ծառե՞րը, մզկի՞թը։ Նա նկարագրել էր այն կալվածքը, ուր ինքն ապրում էր Այնթապում։ Բոլոր այս նշանները չէին խաբում։ Սակայն ինչպես բացատրել հաղթական վերադարձը։ Միգուցե ինքն այդ բանն իմանար, երբ այս կինը նորից նայեր իր բաժակը։

— Քո տեղը տարագիրների մեջ չէ։ Ես քեզ վերցնում եմ իմ հովանու տակ։ Մենք հենց հիմա կգնանք։

Մարոյի աչքերում արտասուքներ հայտնվեցին, սակայն նա վերջնագիր ներկայացրեց.

— Մորս և որդուս հետ միասին։

Ռըզա բեյը չափից ավելի երջանիկ էր՝ նրան որևէ բան մերժելու համար։

— Մենք կանցնենք Դերենդեով, և այնտեղ քո մորը կբուժեն։ Քանի՞ տարեկան է որդիդ։

— Վեց։

— Ի՞նչ է նրա անունը։

— Թովմաս։

— Իսկ քո՞նը։

— Մարո Պալյան։

— Անունը բավական է։ Մարո... Ես սիրում եմ հնչեղ անուններ։

— Իսկ ձե՞ր անունն ինչ է։

— Ռըզա բեյ։

Մարոն վեր կացավ և խոնարհվեց։ Նա Ռըզա բեյին ոսկի առաջարկեց՝ իր մոր ոսկով լցոնած գոտին։ Նա շփոթված հրաժարվեց։

— Շնորհակալություն մի հայտնիր։ Պարզապես ես կատարում եմ իրական հավատացյալի գթասիրտ լինելու պարտականությունը։

Մարոն կառչեց այդ խոսքերից.

— Քարանձավում մարդիկ մեռնում են սովից ու ծարավից։

Ռըզա բեյի դեմքին դժգոհ արտահայտություն հայտնվեց։ Առանց այդ բանը ցանկանալու Մարոն դիպել էր նրա ցավոտ տեղին։ Այն, ինչ նա

տեսել էր վերջին շաբաթվա ընթացքում, իր վերահսկողական առաքելության օրերին, տանջում էր իրեն: Այդ դաժանությունն ու անիմաստ մահերը: Եվ այդ ամենի պատասխանատվության մի մասն իր վրա էր: Ռըզան համաձայնել էր վերահսկել տեղեկությունները երկրի հարավում, առանց կշռադատելու հետևանքները: Մի բան էր փոխանցել մայրաքաղաքից եկած հրամանները գավառապետներին, քաղաքապետներին, վճռել յուրաքանչյուր քաղաքի տեղահանման ժամկետը, թղթի վրա գծել ուղերթները, քարտեզի վրա նշել այն վայրերը, ուր պետք է տեղադրվեին վերահսկողական ճամբարները: Եվ լրիվ այլ բան էր սեփական աչքերով տեսնել այդ միջոցառումների հետևանքները մարդկային էակների վրա:

Ռըզա բեյը, որը մեծացել էր արաբական միջավայրում և սիրում էր նրանց, մերժում էր պանթուրանիզմի գաղափարը: Նրա ժառանգական կալվածքում շատ արաբներ էին աշխատում: Կիրառել պանթուրանիզմը, նշանակում էր դուրս մղել արաբներին կայսրությունից և խզել կապերը մնացած մահմեդական աշխարհի հետ: Հակառակը՝ հարկավոր էր միավորել տարբեր ժողովուրդներին իսլամի դրոշի տակ: Քրիստոնյաներին բնաջնջելը նույնպես սխալ էր: Իսլամը, ավելի շուտ, պահանջում էր նրանց դավանափոխ անել համոզմունքով կամ ուժ գործադրելով: Ռըզա բեյն այդպես էր վարվել իր հայ կառավարիչների ու բանվորների հետ և այդպիսով վաստակել էր իր հոգու փրկությունը և, բացի դրանից, իրեն չէր զրկել ազնիվ ու որակյալ աշխատողների ծառայություններից:

Ռըզան ներքուստ համոզված էր, որ երիտթուրքերի կառավարությունը վերջերս սխալ ճանապարհով էր շարժվում: Եվ նրանց գործողություններին իր մասնակցությունը հակառակ էր իր կրոնական համոզմունքներին: Այդպիսին էր այն գինը, որ պետք էր վճարել կառավարման մեջ կարևոր պաշտոն ստանալու համար: Որպես ավագ որդի Ռըզան մինչ այդ կառավարել էր ընտանեկան ունեցվածքը: Նրա պապն ու հայրը իրենց արդեն իսկ նշանակալից ունեցվածքին հավելել էին բամբակի պլանտացիաներ Այնթապի շրջակայքում: Ռըզան դրան ավելացրել էր ցիտրուսային բույսերի պլանտացիաներ Անթալիայի շրջանում: Քառասունվեց տարեկան հասակում արդեն ժամանակն էր մտածելու հասարակական կյանքի մասին: Նրա ընտանիքի բազմաթիվ սերունդներ ծառայել էին սուլթանին որպես գավառապետներ, նախարարներ, և նրանց շարքում նույնիսկ մեկ վեզիր էր եղել:

Պետրին ներս նտավ: Նրա դաժան հայացքից Մարոն սարսռաց: Մարոն աղերսող ձայնով կրկնեց.

— Մարդիկ ծարավ են ու սոված:

Ռըզան ժպտաց Մարոյին և նրա դեմքին կարեկցանք հայտնվեց.

— Ես այդ կապակցությամբ արդեն հրահանգներ եմ տվել, այդպես չէ՞, Պետրի:

— Այո,- պատասխանեց վերջինս, քանի որ նա չէր համարձակվի

հակաճառել իր տիրոջը։

Ռըզա բեյն ասաց Մարոյին.

— Վերադարձիր մորդ մոտ։ Քո հետևից մարդ կուղարկեմ։

Մարոն ձեռքը կրծքին դրեց.

— Անսահման շնորհակալ եմ ձեզնից։

Երբ Մարոն գնաց, Պետրին բացականչեց.

— Ի՞նչ հրահանգ։

— Լսո՞ւմ ես ինձ, թող այդ խեղճ մարդկանց խմելու և ուտելու բան տան։

Պետրին ցնցվեց այդ կարեկցող տոնից։ Ռըզան, որին նա ճանաչում էր նրա ծնված օրից, միշտ զարմացնում էր իրեն։ Նա անկանխատեսելի էր ու փոփոխական, մերթ գառ էր, իսկ մեկ վայրկյան հետո առյուծի էր փոխակերպվում։ Նրանց ճակատագրերը շատ վաղուց էին միմյանց հետ կապվել։ Պետրին Ռըզայի հոր ընկերն էր։ Աշխատելով Աբդուլ Համիդի գաղտնի ոստիկանությունում, նա իմացել էր, որ երիտթուրքերին հարած Ռըզայի դեմ մահափորձ էր նախապատրաստվում։ Պետրին զգուշացրել էր նրան, և Ռըզան փախել էր Մեդինա, իսկ հետո Փարիզ։ Երբ տեղի էր ունեցել երիտթուրքերի հեղափոխությունը, եկել էր Պետրիին փրկելու Ռըզա բեյի հերթը, և բանեցնելով իր ազդեցությունն ու կապերը, ազատել էր նրան կախաղանից։ Նա Պետրիին ծառայության էր վերցրել որպես համհարզ և վստահված անձ, նրան բաժին էին ընկնում կեղտոտ գործերը։

— Ի՞նչ է կատարվում, Ռըզա բեյ,— հարցրեց Պետրին՝ ջանալով պահպանել բարեկամական տոնը։— Ես չեմ հասկանում։

— Իսկ ի՞նչ կարիք կա, որ հասկանաս,— չոր տոնով պատասխանեց Ռըզան։— Դու պետք է ենթարկվես։

Պետրիին մնում էր միայն համաձայնել։

— Ջուր դեռ ոչինչ, բայց ուտելիք...

— Հարևան գյուղերում մթերք բռնագրավիր։

Պետրին չկարողացավ իրեն զսպել և բարկացած բացականչեց.

— Մեր գյուղացիներից մթերք բռնագրավե՞մ քրիստոնյաներին տալու համար։

Ռըզայի խիստ հայացքը նրան ստիպեց զղջալ իր անզսպության համար։ Պետրին մեջքը ծռեց.

— Հրամայողը դուք եք։ Իմացեք, որ դա ժամեր կտևի։

— Մենք կհետաձգենք մեր մեկնումը,— պատասխանեց Ռըզա բեյը՝ նշան անելով, որ դա կարևոր չէ։

* * *

Ծանոթանալով Սվասի գավառապետի ներկայացրած ապացույցներին, գեներալ Ֆաքրի փաշան՝ շրջանի ռազմական պարետը, այլ ելք չուներ, քան հրամայել ձերբակալել գնդապետ Իբրահիմ Ալիզադեին և նրան հանձնել քաղաքացիական արդարադատության ձեռքը: Իր լավագույն սպային: Եվ, բացի դրանից, իր մտերիմ ընկերոջը: Չնայած իր կոչմանը, նա ոչինչ չէր կարող անել Իբրահիմի համար, թեպետ հավանություն էր տալիս նրա վարքագծին: Ինչպես բարձրաստիճան սպայության մեծամասնությանը, այնպես էլ Ֆաքրի փաշային կցված էր Իթթիհատի մի գործակալ՝ պահապան մի հրեշտակ, որը պարտավոր էր հսկել նրա նվիրվածությունը պանթուրանիստական քաղաքականությանը, որ որդեգրել էր կառավարությունը:

Գնդապետ Իբրահիմին անմիջապես տարան ոստիկանության բաժնի նկուղը, այն սենյակը, ուր տեղի էր ունեցել իր բարեկամ Վարդանի դատավարությունը: Նրան մերկացրին ու պառկեցրին նստարանին՝ ամուր կապելով: Ոստիկանները հեռացան և նրան մենակ թողեցին երկու դահիճների հետ: Առանց շտապելու դահիճները տոպրակից հանեցին իրենց գործիքները և դարսեցին սեղանի վրա: Հետո հանեցին իրենց շապիկները և ծխախոտ վառեցին: Նրանք հանգիստ խոսում էին գնվելիք ավանակի մասին:

Իբրահիմն անթարթ նայում էր կախված լամպին և ջանում էր չմտածել այն մասին, թե ինչ էր իրեն սպասում: Քսան րոպե անց ներս եկավ Մուսթաֆա Ռահմին: Գավառապետի պաշտոնը նրան մեծ ուրախություն էր պատճառում, սակայն նա որոշակի հուզմունքով էր մտնում ոստիկանության շենքը, ուր իշխել էր այդքան տարի: Նա կգերադասեր այդտեղ գալ այլ հանգամանքների բերումով: Գանի բեյը կգայրանար իմանալով այդ անիծյալ Պալյանի փախուստի մասին և կարող էր Մուսթաֆային մեղադրել: Նա մոտեցավ նստարանին՝ ուսումնասիրելով ձերբակալվածի մկանուտ և բարեկազմ մարմինը, հետո թքեց գնդապետի դեմքին:

— Քոսոտ շուն:

Մուսթաֆան մատները ճտճտացրեց ու հանգստացավ:

— Ոստիկանության լեյտենանտ Յըլմազը մեզ պատմել է, թե ինչպես ես դու մահապատժի դատապարտված Վարդան Պալյանին փախցրել մահապատժի վայրից: Ժխտո՞ւմ ես դա:

Իբրահիմը գիտեր, որ արժանի էր կախաղանի կամ էլ գնդակահարության, սակայն ցանկանում էր խույս տալ կտտանքներից: Մուսթաֆան ուզում էր, որ ինքը խոսեր, դե ինքն էլ կխոսեր:

— Չեմ ժխտում, արել եմ:

— Ինչո՞ւ։

— Բարեկամական զգացմունքներից դրդված։ Նրա դատավճիռն անարդարացի էր։

— Հանցակիցներ ունեի՞ր։

Հալիթ փաշայի անունը ոչինչ չէր փոխելու։

— Մենակ էի։

— Ի՞նչ ես արել Պալյան կոչեցյալի հետ։

— Ես նրան ջորի տվեցի և քաղաքից դուրս տարա։

— Ո՞ւր գնաց։

— Դեպի ծովափ։

Իբրահիմը վստահ էր ստում։ Նրա համար կարևոր չէր, որ Մուսթաֆան իրեն վախկոտ կարող էր համարել։

— Ի՞նչ գիտես նրա մտադրությունների մասին։

— Կարծում եմ, որ նա ուզում էր Ռուսաստան գնալ։

— Նա այնտեղ որևէ մեկի՞ն պետք է միանար։

— Չգիտեմ։

— Զենք ունե՞ր։

— Այո, ատրճանակ։

— Ինչպե՞ս էր հագնված։

— Գյուղացու շորերով էր։

— Դու նրան փաստաթղթեր տվե՞լ ես։

— Այո։ Մի քրդից էի գնել։

— Ո՞ւմ անունով էին փաստաթղթերը։

— Ալիօղլու Իզզետին։

— Էլ ի՞նչ ունես ասելու։

— Ոչինչ։

— Լավ,– ասաց Մուսթաֆան հեռանալով Իբրահիմից։

Իբրահիմը մտածեց, որ խուսափել էր տհաճություններից, սակայն Մուսթաֆան վերադարձավ ճիպոտը թափահարելով։ Նրա կկոցած աչքերի մեջ անհանգստացնող փայլ կար։ Նա քմծիծաղ տվեց.

— Իմ կարծիքով, դու շատ հեշտ ես խոսում։

Նա սկսեց հարվածել Իբրահիմի ներբաններին։ Իբրահիմը սեղմում էր

ատամները չբղավելու համար, սակայն ցավն անտանելի էր դառնում։ Այն կրակի պես տարածվում էր ոտքերի երակներով և հասնում էր սրտին, որն անհավասար էր բաբախում։ Իբրահիմը չկարողացավ ճիչը զսպել։

— Սպասեք, ես ուրիշ բան ունեմ ասելու։

— Երբ քեզ կհարցնեն, այն ժամանակ էլ կասես։

Նա ուժգնացրեց հարվածներև, և քիչ անց Իբրահիմի ոտքերը արնաշաղախ զանգված դարձան։ Մուսթաֆան քրտինքը սրբեց ճակատից և ասաց.

— Դե հիմա խոսիր։

Իբրահիմն այլևս մտադիր չէր խոսելու։ Նրա չարչարանքն այնքան մեծ էր, որ նոր հարվածները ոչինչ չէին վախի։ Սակայն նա սխալվում էր։

— Եղունգները,- հրամայեց Մուսթաֆան դահիճներին։

Նրանք մեկ առ մեկ պոկեցին Իբրահիմի եղունգները, իսկ հետո մատները ջախջախեցին մուրճով։ Իբրահիմը նոր մանրամասներ հայտնեց։ Նման հարցաքննությունների մեծ փորձը Մուսթաֆային հնարավորություն էր տալիս գուշակել սուտ պատասխանները, և այդ ժամանակ նա հարձակվում էր իր զոհի վրա։ Ի վերջո, Իբրահիմն ամեն ինչ ասաց։ Նա հևում էր այլայլված դեմքով։ Նա աներևակայելի տանջանքներ էր կրում։ Նրա սիրտն ուժգին բաբախում էր կրծքավանդակում և նորմալ ռիթմը չէր վերականգնվում։ Ամենից շատ Իբրահիմը վախենում էր, որ կոտանքը կվերսկսվեր։

Մուսթաֆա Ռահմին ցնծում էր։ Նա գիտեր այն, ինչ իրեն պետք էր. լեյտենանտ Շաքիր Իսմայել, ուղղությունը՝ Հալեպ։ Մնում էր միայն նախազգուշացնել Գանի բեյին հեռագրով և երկրով մեկ տարածել հետախուզության հայտարարությունը։ Նա դեմքը մոտեցրեց հարցաքննվողի դեմքին.

— Կարծում էի, որ դու ավելի երկար կդիմադրեիր։ Ինչպիսի՜ սխալմունք։

Նա բռնեց Իբրահիմի պարանոցից և սեղմեց այնքան, մինչև գնդապետի սիրտը դադարեց բաբախելուց։

* * *

Երբ Մարոն վերադարձավ քարանձավ, նրա սիրտը խառնեց։ Մեզի, կղանքի և կեղտոտ մարմինների հոտը խառնվել՝ գարշահոտություն էր դարձել։ Քարավանը լքելու մտքից առաջացած թեթև ոգևորությունը հոդս ցնդեց այդ տանջանքների տեսարանից։ Նա իրեն մեղավոր զգաց, որ մյուսներին թողնում էր իրենց ճակատագրին։

— Մայրիկ,— բացականչեց Թովմասը, որը սպասում էր մոր վերադարձին քարանձավի մուտքի մոտ,— տատիկն արթնացել է։

— Փառք Աստծու։

Մարոն մոտեցավ որդուն և կարծես հարված ստանար։ Թովմասի նիհարած դեմքին աչքերը չափից ավելի մեծ էին թվում, և դրանց կրակը մարել էր։ Եվս մեկ շաբաթ, և նա կնմանվեր կմախք հիշեցնող այն երեխաներին, որոնք եկել էին Երզնկայից։ Փրկել նրան, ահա թե որն էր Մարոյի պարտքը։ Ինքը չպետք է ամաչեր, եթե միջոցներ էր ձեռնարկում այդ բանն անելու համար։ Նա չէր կարող Թովմասին անմիջապես հայտնել բարի լուրը, քանի որ բոլորի դեմքերը դարձան նրա կողմը։ Այդ դեմքերն այլևս ոչինչ չէին արտահայտում և լրիվ բթացել էին։

— Նրանք մեզ ջուր կտան,- հայտարարեց նա բարձրաձայն։

— Ջո՛ւր... ջո՛ւր...

Կախարդական բառը տարածվեց քարանձավում։

— Որտե՞ղ էիր, մայրիկ,- հարցրեց Թովմասը՝ նայելով նրա պատռված հագուստին։— Ոստիկանները քեզ նեղացրե՞լ են։

— Ոչ, սիրելիս, ամեն ինչ լավ է։

Նա շտապում էր հասնել քարանձավի խորքը, սակայն չէր կարողանում արագ քայլել անձավը բերնիբերան լցրած մարդկանց պատճառով։ Մարոն անհանգստանում էր Ազնիվ խանումի համար։

— Տատիկը խոսո՞ւմ էր։ Ի՞նչ ես կարծում, նա իրեն ավելի լա՞վ էր զգում։

— Նա կմեռնի,- պատասխանեց երեխան դողացող ձայնով։

— Հիմարություններ մի ասա։

— Բուժակ կանայք այդպես ասացին։

Մարոն շշնջաց նրա ականջին.

— Մի անհանգստացիր, Թովմաս, մենք նրան բժշկի մոտ կտանենք։

Երկու պառավ եռուզեռի մեջ էին Ազնիվ խանումի կողքին։ Նրանք նստեցրել էին նրան և աղոթում էին։ Նրանցից մեկը սիում էր նրա մեջքը, իսկ մյուսը չորացած ձիթենու ճյուղ էր վառել և դրանով խաչի նշաններ էր անում հիվանդի գլխի և մարմնի շուրջը։

— Սա քեզ կլավացնի։ Այս ճյուղն օրհնվել է եկեղեցում Ծաղկազարդի տոնի օրը։ Այս ծուխը քշում է չար ոգիներին։

Ազնիվ խանումի աչքերը փակ էին։ Ճանաչելով Գալստյան այրուն, որը մի կողմ նետեց այրվող ճյուղը, Մարոն բռնեց նրա ուսերից և հեռացրեց մորից.

— Ի՞նչ եք նրան արել։

Նա հիշել էր Արաքսու ձեռքի թույնի սրվակի մասին։

— Բացի աղոթելուց և մեռոն քսելուց ոչինչ չեմ արել։

Նա ձայնն իջեցրեց.

— Մայրդ երկար չի ձգի։

— Հանգիստ թողեք մեզ,— հրամայեց Մարոն։

Նա պառկեցրեց Ազնիվ խանումին, որը ծանր էր շնչում, և նրա ճաքճքած շրթունքների արանքից օդի բարակ շիթ էր անցնում։ Նրա կիսաբաց օձիքից քաֆուրի հոտ էր գալիս։

— Տատիկը կմեռնի,- ասաց Թովմասը սարսափած տեսքով։

— Լռիր,- պատասխանեց Մարոն անհամբերությամբ։

Նա երեխային մի դեղձ ու արմավներ տվեց, որոնք նա վերցրեց աչքերին չհավատալով։ Նա դրանք փորին սեղմեց և ծածկեց ափերով՝ վախեցած հայացքներ գցելով շուրջը։ Ոչ ոք չէր տեսել իր մրգերը։ Նա պպզեց, դեմքը դեպի պատն արեց ու ագահաբար կերավ։

Մարոյի բազում կանչերից հետո Ազնիվ խանումը ի վերջո կենդանության նշաններ ցույց տվեց մատները շարժելով։ Մարոն դեղձից մի կտոր կծեց և քսեց Ազնիվ խանումի շրթունքներին։ Ազնիվ խանումը հյութը կուլ տվեց և նրա բերանը բացվեց։ Մարոն ճզմում էր դեղձը և մոր բերանն էր լցնում մրգահյութը։ Ազնիվ խանումը աչքերը կիսաբաց արեց և խոսեց խզզոցներով ընդհատվող ձայնով.

— Մարո...

— Ես այստեղ եմ, մայրիկ, ես այստեղ եմ։

— Մարո... ես... ես...

— Ես սպայի հետ խոսեցի։ Նա մեզ կտանի Դերենդե, ուր բժիշկ կա։

— Ուշ է։

— Ոչ։ Դուք այնտեղ կհասնեք։

— ... Հոգնած եմ... այլևս շարժվել...

— Մի խոսեք, հանգստացեք։

Ազնիվ խանումը ծանր շնչելով փակեց աչքերը և քնեց։ Ժամեր շարունակ Մարոն նստած էր նրա կողքին՝ ձեռքն իր ձեռքում։ Ե՞րբ էին իրենք գնալու։ Հոգեվարքի մեջ գտնվող իր տատի տեսքից ազդված, Թովմասը նստած էր իր անկյունում, երբ Մարոն նրան կանչեց աղոթելու։ Երբ ի զարմանս բոլորի պահակները քարանձավի մուտքի մոտ սկսեցին ուտելիք բաժանել, Թովմասն այնտեղ վազեց։ Նա կատաղի կերպով պայքարեց, մինչև որ իր բաժինը ստացավ։ Նա կարծես փոքրիկ գազան լիներ, որը ամեն ինչի էր պատրաստ վերապրելու համար։ Նա մորը տվեց մի կտոր հաց, մի լոլիկ, երկու ծիրան և մի տիկ ջուր։ Մարոյին հաջողվեց

մի քիչ ջուր խմեցնել Ազնիվ խանումին, որը կարծես վերակենդանացավ։ Ծեր կնոջ աչքերը փոս էին ընկել, իսկ այտերի մաշկը կարծես թափանցիկ լիներ։ Նա նայեց թոռանը, որը ծնկի էր իջել իր կողքին։

— Պետք է ուտես, տատիկ։ Ուժ հավաքես։

— Ես քեզ եմ տալիս իմ բաժինը, Թովմաս։

Երեխան համբուրեց տատի այտերը.

— Մի մահացիր, տատիկ։ Դու իրավունք չունես։

— Դու կհոգաս մորդ մասին։

Նրա ձայնը թուլանում էր։ Նա նայեց դստեր աչքերի մեջ.

— Մարո... սա վերջն է։

— Ոչ,– պատասխանեց Մարոն հպվելով մոր այտին,– դուք ձեզ ավելի լավ եք զգում, դուք խոսում եք։

— Սա Աստծու շնորհն է։

Նա փորձեց ձեռքը բարձրացնել.

— Օգնիր ինձ։

Մարոն բռնեց նրա ձեռքը, և Ազնիվ խանումը մատով խաչի նշան արեց իր թոռան և դստեր ճակատներին.

— Թող Աստծու օրհնությունը ձեզ վրա լինի։

Թովմասը սկսեց լացել.

— Մի լքիր մեզ, տատիկ։

— Ձեռքս բռնիր ու աղոթիր ինձ հետ։

Երեխան ենթարկվեց։ Ազնիվ խանումը լուռ շարժում էր շրթունքները, իսկ Թովմասի կծկված կոկորդից խոսքերը դժվարությամբ էին դուրս գալիս.

— Հայր մեր, որ երկնքում ես...

Մարոն ակամա իր ձայնը խառնեց որդու ձայնին։ Նա չէր կարողանում համակերպվել այն էակի մահվան հետ, որն իրեն ծնել էր, կերակրել, գուրգուրել, պահպանել մինչև հասուն տարիքը։ Նա ուզում էր, որ մայրն ապրեր, շնչեր մինչև մոտակա քաղաքը, հետո մինչև հաջորդ հանգրվանը և այդպես շարունակ, մինչև կհասնեին որևէ ապահով վայր։ Նա իրավունք չուներ իրենց լքելու հիմա, երբ ամեն ինչ պետք է որ կարգավորվեր։

Ազնիվ խանումի շրթունքներն անշարժացան, և նա սեղմեց իր դստեր ձեռքը։ Մարոն նրա շրթունքները համբուրեց և նրան բարձրացրեց։ Նա մորը շատ ամուր էր պահել, որպեսզի թույլ տաար այն աշխարհ գնալու։

— Մայրիկ, մայրիկ,— աղաչեց նա՝ վերագտնելով իր մանկական ձայնը։— Մայրի՛կ։

Ազնիվ խանումն այլևս չէր շնչում։ Մարոն նրան օրորեց, շոյեց դեմքն ու մազերը։ Նա ցածրաձայն լացում էր։ Թովմասն իրեն լքված էր զգում։ Նա դեմքը դրեց մոր կրծքին և գրկեց նրան։ Զնկատելով իրենց շրջապատած մարդկանց, որոնք ծնկի էին իջել Ազնիվ խանումի հոգու փրկության համար աղոթելու, Մարոն և նրա որդին միայնության մեջ իրենց ցավն էին ապրում։

— Արի,— հրամայեց խռպոտ մի ձայն։

Աղոթքն ընդհատվեց։ Մարոն գլուխը բարձրացրեց։ Ծնկաչոք մարդկանց վերևում երևում էր Պետրին։

— Մայրս մեռավ։

— Ուրզա բեյը քեզ է սպասում։

— Մայրս մեռավ,— կրկնեց նա։— Ես պետք է նրան թաղեմ։

— Մնա նրա հետ, եթե ուզում ես։ Ուրզա բեյը գնում է։

Նա շրջվեց և գնաց դեպի ելքը։

Հանկարծ Մարոն հասկացավ, որ ինքը ձեռքից բաց է թողնում փրկվելու վերջին հնարավորությունը։ Նա մոր գլուխը գետնին դրեց, խաչեց նրա ձեռքերը և վերջին անգամ համբուրեց։

— Արի,— ասաց նա Թովմասին՝ բռնելով նրա թևից։

Եվ նա վազեց Պետրիի հետևից։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 7

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 17:25-ին, 22 Հուլիսի 2014 թվին:

Պետրին, ձի հեծած, սլանում էր կառքի առջևից, ուր տեղավորվել էր Ռըզա բեյը Մարոյի և նրա որդու հետ: Կառքին հետևում էին ծածկած սայլը, որը վարում էր Աբդուլան, և կալվածատիրոջ անձնական պահակազորը կազմող տասն արաբ հեծյալները: Այս մարդիկ՝ Ռըզա բեյի ընտանիքին սերնդեսերունդ ծառայած մարդկանց որդիները, անսահման նվիրված էին Ռըզային, որին իրենց շեյխն էին համարում:

Կառքի ընթացքից թմրած Թովմասը գլուխը դրել էր մոր ծնկներին ու քնել: Մարոն, աչքերը հակած, ընկղմվել էր իր հուշերի մեջ: Նա հիշում էր Ազնիվ Արթինյանին: Դա քարանձավում մահացած ծեր կինը չէր, այլ ավելի երիտասարդ Ազնիվն էր՝ իր ամուսնուն՝ Հակոբին թևանցուկ արած: Մարոյի հիշողությունից ջնջվել էին այն վեճերն ու ընդհարումները, որոնցով նրանք իրար էին հակադրվում: Նա լի էր այն սիրո խոսքերով, հոգատարությամբ և ուշադրությամբ, որ Ազնիվ խանումը շռայլել էր քսանութ տարի շարունակ: Արդյոք ինքը բավարար չափով հատուցե՞լ էր այդ ամենի համար: Ազնիվ խանումն այդ հարցին արդեն պատասխանել էր. «Ես իմ մորից սեր եմ ժառանգություն ստացել և այդ պարտքը վճարելու համար պետք է իմ անձը մոռանամ երեխաներիս համար»: Մարոն այլևս միայնակ չէր իր վշտի հետ. ձեռքի այն շարժումը, որով նա հովանի էր անում որդու դեմքին՝ նրան արևից պաշտպանելով, վերակենդանացրել էր այդ տոհմի բոլոր կանանց, որոնց շարունակությունն էր ինքը, այդ մայրերը, որոնք աշխարհի սկզբնավորումից ի վեր կյանք էին պարգևում և ողբում մեռյալներին:

Մարոյի դեմ դիմաց նստած Ռըզա բեյը, իբր, ընկղմված էր դերվիշների աղանդի հիմնադիր, միստիկ բանաստեղծ Մելվանայի ղազալների ընթերցանության մեջ: Աչքի պոչով նա զննում էր այդ կնոջը, որին վիշտն էլ ավելի գեղեցիկ էր դարձրել: Նրան տիրանալու իր տենչին ավելանում էր անկեղծ կարեկցանքը: Այդ կինը հուզում էր նրան, և Ռըզան նրան բացառիկ վեհանձնություն էր վերագրում: Ինքը չէր բավարարվի նրան տիրանալով, իրեն պետք էր, որ այդ կինն իրեն տրվեր:

Մի քանի ժամ դեպի հարավ շարժվելուց հետո կառքը կանգ առավ մի սարի գագաթին: Մարոն աչքերը բարձրացրեց: Ներքևում սփռված էր փառահեղ հովիտը, որով հոսում էր բուռն մի գետ: Խարկված

սարահարթում այդքան ժամանակ դեգերելուց հետո Մարոն մոռացել էր, որ բնությունը կարող էր այդքան գեղեցիկ լինել։ Այդ վայրի հանդարտությունն ու մեղմությունը հուզեցին նրան։ Նրա հիշողության մեջ դեռևս հնչում էին տեղահանվածների տնքոցներն ու պահակների բղավոցները, իսկ այստեղ լսվում էին թռչունների ճռվողյունն ու երեխաների ուրախ ձայները։ Գյուղացիները՝ տղամարդիկ և կանայք, հանգիստ աշխատում էին դաշտերում։ Ճանապարհի երկայնքով շարված էին խուլ պատերով տներ, որոնց հարթ տանիքները ոսկեզօծված էին չորացող ծիրաններից։ Դռների բացվածքներում կախ էին տված կարմրասև կարպետները։

Կանաչով և պարտեզներով շրջապատված Դերենդեն սարի վրա էր, դաշտավայրի վերևում։ Նրա սպիտակ շինությունները խմբված էին մայր մտնող արևի ճառագայթներից կարմրած ժայռերի ստորոտում։

— Մենք այստեղ կգիշերենք,— հայտնեց Ռըզա բեյը,- և երեք օր այստեղ կմնանք։

Երեք օր։ Մարոն հույս ուներ, որ իրենց ճանապարհորդությունն ավելի արագ կընթանար։ Նա թաքցրեց իր հիասթափությունը։

— Պետրի, կանչեց Ռըզա բեյը։- Գնա և իջևանատանը սենյակներ նախապատրաստիր։

Վերադառնալով Մարոյի մոտ, նա հարցրեց.

— Կբարեհաճե՞ս ճաշել ինձ հետ։ Կուզենայի քեզ ավելի լավ ճանաչել։

Մարոն ականջներին չէր հավատում։ Այս մարդը գիտեր, թե ինչ էր իրեն պատահել, մոր մահը, սարսափի այս շաբաթները... Ինչպե՞ս էր կարող հուսալ, որ ինքը հոժար կամքով կհամաձայներ նրա հետ մենակ մնալ։

— Եթե անպատեհ չեք համարում, ապա ես կգերադասեի մենակ մնալ որդուս հետ, ճաշել մեր սենյակում և անմիջապես պառկել քնելու։ Ես ուժասպառ եմ և շատ ազդված եմ մորս մահից։

— Իհարկե։

Ձայնն անվրդով էր, սակայն այտի թեթև թրթռոցը Մարոյի աչքից չվրիպեց։ Նա շտապեց ավելացնել.

— Վաղն ինձ ավելի լավ կզգամ և հաճույքով կընդունեմ ձեր հիասքանչ առաջարկությունը։

— Վաղը և վաղը չէ՝ մյուս օրը,— ասաց Ռըզա բեյը ուրախացած։- Մենք Այնթապ կհասնենք միայն մի քանի օրից։ Ես պետք է նախ Մալաթիա մտնեմ։

— Այնթա՞պ,- հարցրեց Մարոն փայլող աչքերով,- չէ՞ որ դա շատ մոտ է Կոստանդնուպոլիս տանող երկաթգծին։

Մի պահ նա նմանվեց փոքր աղջկա, որը հիանում էր նվերով։ Ռըզան

հուզված էր։

— Այո, «Տավրոս էքսպրեսը»։

Մարոն ավելացրեց.

— Եթե կարողանայի գնացք նստել... Ես ձեզ ասե՞լ եմ, որ իմ ազգականները մայրաքաղաքում են ապրում։

— Կարծեմ։ Սակայն... քո ազգականները դեռևս այնտե՞ղ են։ Բազմաթիվ հայեր հեռացել են այլ քաղաքներ՝ Երուսաղեմ, Բաղդադ։

— Հեռագրով կարելի կլիներ իմանալ։ Ես կարող եմ վճարել, գիտեք։

Ռըզա բեյը ժպտաց և հայրական տոնով ասաց.

— Մի՛ անհանգստացիր, ես ամեն ինչ ինձ վրա եմ վերցնում։ Դու և որդիդ կարող եք այլևս ոչնչից և ոչ ոքից չվախենալ։

Մարոն դժվարանում էր հավատալ, որ ամեն ինչ կարող էր այդքան հեշտ լուծվել։ Դեռևս այս առավոտ...

— Դուք անչափ մեծահոգի եք, Ռըզա բեյ, և ես երբեք չեմ կարողանա վարձահատույց լինել։ Փառք եմ տալիս Աստծուն, որ հանդիպեցի ձեզ իմ ճանապարհին։

— Այդպիսին էր Ալլահի կամքը,— հաստատեց տղամարդը վստահ տեսքով։

Պետրին միայն երկու սենյակ էր վարձել, քանի որ ինքը գերադասում էր ախոռում քնել և հսկել ծածկած սայլը, որը նա խուսափում էր թողնել միայն իր մարդկանց հսկողության ներքո։ Այնտեղ մթերքից, հագուստից և խոհանոցային կարասից բացի, կար մի ճամպրուկ, որն անձամբ Պետրիին էր պատկանում։ Ճամպրուկը լցված էր տեղահանվածներից խլված թանկարժեք իրերով, զարդերով և դրամով։ Տիրոջից ծածուկ Պետրին իր բաժինն էր ստանում ոստիկանների իրագործած թալանից։

Իջևանատունը մեծ փայտյա կառույց էր, որին կից ախոռ կար։ Դրա երկու տերերը Ռըզային պատկառանքով ընդունեցին, որը ստորաքարշության վերածվեց, երբ նա պահանջեց ներկայացնել մատյանները։ Անկասկած եղբայրներ էին, քանի որ նրանց նմանությունը աչքի էր զարնում։ Հիսունին մոտ, երկուսն էլ գիրուկ և ճաղատացող ճակատներով, նրանք լարված և անհանգիստ կանգնած էին Ռըզա բեյի առջև, որը թերթում էր նրանց մատյանը։ Իջևանատանը իրենցից բացի միայն երեք այցելու կար։ Դրանք գերմանացի սպաներ էին, որոնք նստած շնապս էին խմում։ Դիմելով իջևանատան տերերին առանձին— առանձին, նա հրամայեց.

— Ուղեկցիր խանումին իր սենյակը, իսկ հետո ճաշ մատուցիր։ Իսկ դու ինձ համար մի բաժակ բեր և դիր մեր բարեկամ գերմանացիների սեղանին։

Մեղմացած ձայնով նա դիմեց Մարոյին.

— Բարի գիշեր, խանում։

Նա խառնեց Թովմասի մազերը, որը գլուխը փախցրեց և նահանջեց։ Մարոն հանդիմանեց նրան.

— Բարեկիրթ եղիր մեզ հյուրընկալողի հետ։

Նա խոսում էր արագ և թուրքերենով, գիտակցելով, որ Թովմասն, անկասկած, չէր հասկանալու իր ասածը։ Նա դա արեց, որպեսզի Ռըզա բեյը չվիրավորվեր։

— Ներեցեք նրան, երեխա է և այս վերջին շաբաթների ընթացքում շատ փորձություններ է ենթարկվել։

Ստվերում Ռըզա բեյի աչքերը մոխրագույն էին թվում, իսկ այտոսկրերն այդքան արտահայտված չէին, և դա մեղմացնում էր նրա դեմքի խիստ արտահայտությունը։ Նրա բեղերի ծայրերը վեր բարձրացան՝ հետևելով նրա ժպտացող շրթունքների շարժմանը։ Նա ներողամտորեն ասաց.

— Դա հասկանալի է։ Ես լավ եմ ճանաչում երեխաներին, ինքս ութ զավակ ունեմ։

— Օ՛, հոյակապ է։ Ի՞նչ տարիքի են ձեր երեխաները։

Նա փքվեց.

— Իմ ավագը տասնութ տարեկան է, իսկ կրտսերը՝ երեք։

Մարոն խոնարհվեց.

— Բարի գիշեր, Ռըզա բեյ։

Հետևելով իջևանատան տիրոջը՝ Մարոն բարձրացավ երկրորդ հարկ։ Սենյակի կահավորանքը սուղ էր։ Կասկածելի մաքրության սպիտակեղենով մի մահճակալ, չեչոտ գիշերային անոթ և մի ցածր սեղան, որը դրված էր մաշված կարպետի վրա։ Սակայն սենյակի՝ կրով սպիտակեցված պատերի ներքո հաճելի զովություն էր տիրում, և լուսամուտը դուրս էր գալիս հարևան տան այգին։ Մարոն մահճակալին նայեց, որը պարզապես ծղոտյա ներքնակ էր՝ դրված փայտյա շրջանակի վրա քաշած պարաններին։

— Սպիտակեղենը հիմա կփոխեն,– շտապեց ասել պանդոկապանը։– Այսօր մենք ընտիր փլավ ունենք։

— Շատ լավ։ Որդուս համար ջուր բերեք, իսկ ինձ համար՝ թեյ։

— Լավ, խանում։

Վերելքից շնչակտուր եղած մարդը թաշկինակով սրբեց խիտ և ալեխառն մազերով ծածկված գլուխը։

Նա խոսում էր որոշակի արտասանությամբ, որը Մարոյին շատ ծանոթ էր։ Մի քիչ տատանվելուց հետո, նա հարցրեց հայերենով.

— Հայ եք, չէ՞։

— Ոչ, մահմեդական եմ,– շտապեց պատասխանել նույնպես հայերենով և հետո միայն հասկացավ, որ իրեն մատնել էր։

Նա կարմրեց և աչքերն իջեցրեց։ Նույն պահին դուրսը հնչեց վերջին աղոթքը սկսելու կանչը։ Մարդը մտածեց Պետրոս առաքյալի ուրացմանը անմիջապես հետևած աքաղաղի կանչի մասին։ Նրա աչքերը լցվեցին, և նա մրմնջաց տխուր տոնով.

— Մենք ընտրության հնարավորություն չունեինք։ Կամ պետք է դավանափոխ լինեինք, կամ էլ մեռնեինք։ Նրանք մեզնից խլեցին իջևանատունը։ Ես և եղբայրս հիմա ընդամենը կառավարիչներն ենք։ Ստիպված եղանք ստորագրել դավանափոխության մասին փաստաթուղթը և թուրքական անուն վերցնել։ Մենք իրավունք չունենք թուրքերենից բացի այլ լեզվով խոսել։ Սակայն հոգու խորքում մենք հայ ենք մնում։

Նա լռեց, հետո ագրեսիվ տոնով ասաց.

— Դա ավելի խոհեմ որոշում է, քան ճամփեզրին սատկելը։ Եթե չեմ սխալվում, Աստված չի պահանջում մեզնից, որ բոլորս մարտիրոսներ դառնանք։ Իսկ դո՞ւք։ Օսմանյան պաշտոնյայի հետ... Դա ավելի վատ չէ՞։

Մարոն կարմրեց։

— Դա ձեզ չի վերաբերում,– պատասխանեց նա։– Ես ձեզ չեմ հանդիմանում, յուրաքանչյուրը վարվում է իր խղճի թելադրանքով։ Մենք՝ հայրենակիցներս, կարող ենք...

Տղամարդը կտրեց Մարոյի խոսքը՝ անցնելով թուրքերենին.

— Մենք ոչինչ չենք կարող։ Միայն մոռանալ, որ քրիստոնյա ենք եղել։ Ես ձեզ աղերսում եմ, այլևս հայերեն ինձ հետ չխոսեք։

Նա չափազանց հուզված էր, և Մարոն խղճաց նրան։ Նա նույնպես մի նպատակ ուներ՝ վերապրել։

— Մի վախեցեք, ես չէի ուզում ձեզ վնասել։

Պանդոկապանը հանգստացավ և բարեհամբույր դարձավ.

— Էլ ի՞նչ կուզեք։

— Ճաշից հետո տաք ջուր բերեք և սրբիչներ, եթե կարելի է։ Դուք օճառ ունե՞ք։

— Այո, խանում։ Դուք կունենաք այն ամենը, ինչ ցանկանաք։

Նա ցածր խոնարհվեց և դուրս եկավ սենյակից։

Թովմասը նայում էր լուսամուտից։ Քարանձավից ելնելու պահից նա համառորեն լռում էր և դա անհանգստացնում էր Մարոյին։ Նա մոտեցավ որդուն։

— Թովմաս, սիրելիս։

Առանց տեղից շարժվելու նա դողդոջուն ձայնով ասաց.

— Տատիկն ինչո՞ւ մեռավ։

Մարոն զսպեց հուզմունքը և պատասխանեց.

— Նա շատ հիվանդ էր։ Աստված նրան տարավ իր մոտ։

Թովմասը դառնացած փնթփնթաց.

— Մենք նրան չթաղեցինք։

— Ես դրամ տվեցի ոստիկանին, և նա նրան պետք է թաղեր մեր մեկնելուց հետո։ Մենք հնարավորություն ունենք փախչելու, իսկ դա տատիկի ցանկությունն էր։

Մարոն հպվեց երեխայի ուսին, որը նրա կողմը դարձրեց արցունքոտ դեմքը։

— Ես կարոտել եմ հայրիկին,– ասաց նա փարվելով մորը։

— Մենք շուտով նրա հետ կլինենք։

Մարոն հանդարտվեց տեսնելով նրա արցունքները և ոչինչ չարեց նրան մխիթարելու համար։ Նա կրծքին սեղմեց որդու գլուխը և աչքերը փակեց։ Արդյոք այդ մղձավանջը վերջ ունենալո՞ւ էր։ Զնայած Մարոն կուզենար հավատալ, սակայն ներքին տագնապը նրան թույլ չէր տալիս։ Քարավանը դեռ հեռու չէր, ընդամենը կես օրվա ճանապարհ, իսկ Դերենդեի մոտով, անկասկած, այլ քարավաններ էին անցնում։ Նա սարսռաց հիշելով իր բախտակիցների հուսահատ դեմքերը, նրանց դանդաղ մահ էր վիճակված։ Ոչ, ինքը չպետք է իրեն մեղավոր զգար։ Նույնիսկ եթե նրանց հետ մնար, ոչինչ չէր փոխվի։

Դուռը թակեցին։ Քողերով ծածկված երեք երիտասարդ աղախիններ (Մարոն կռահեց, որ հայուհիներ էին) փռեցին նախշազարդ կարմիր սփռոցը, վրան դրեցին եռացող ինքնաեռը և պղնձյա սկուտեղով փլավը։ Ճաշի հետ մատուցվեց նաև լոլիկի աղցան, հաց, մածուն և ծիրանի ըմպելիք։

Հազիվ էին աղախինները հեռացել, երբ Թովմասը հարձակվեց սեղանի վրա և բերանը բրնձով լցրեց։ Մարոն բռնեց նրա օձիքից և հեռացրեց սեղանից բացականչելով.

— Ինչպե՞ս ես քեզ պահում։ Նախ պետք է լվացվել։

— Ես քաղցած եմ։

Աղախիններից մեկը թաս էր բերել և մի կուժ ջուր։ Մարոն տրորեց որդու ձեռքերը և ավելի ջերմ ձայնով ասաց.

— Դու չպետք է մոռանաս քաղաքավարության կանոնները։ Ի՞նչ կասեր տատդ, որն այնքան հպարտ էր քո լավ դաստիարակությամբ։

— Նա երկնքում է,— պատասխանեց երեխան։

— Սակայն վերևից նա հետևում է քեզ, ինչպես և քո կնքահայր Արմենը։ Եվ անկասկած նրանց միջնորդությամբ էր, որ Ռըզա բեյը մեզ իր հետ վերցրեց։

— Ես նրան չեմ հավանում։

— Պետք չէ զգացումները ցուցադրել։ Հակառակը՝ դու պետք է քաղաքավարի և բարեհամբույր լինես նրա հետ։

— Ինչո՞ւ։

— Նա մեր փրկության խարիսխն է։ Հասկանո՞ւմ ես։

Պատասխանելու փոխարեն, նա փնթփնթալով դեպի սեղանը գնաց։ Նրանք ծալապատիկ նստեցին կարպետի վրա։ Մարոն աղոթեց, իսկ Թովմասը ձեռքերը խաչեց և աչքերը փակեց, սակայն նա չաղոթեց մոր հետ։

— Մենք դանդաղ կուտենք քաղաքակիրթ մարդկանց պես, կարծես թե սովից չենք տառապել։

Թովմասը ճշգրտորեն կրկնում էր մոր շարժումները։ Քիչ անց նա հարցրեց.

— Ի՞նչ է նշանակում փրկության խարիսխ։

— Դե... Մեր կյանքը փրկելու միջոց։ Եթե ջուրն ընկնեինք և փայտի կտոր ունենայինք, որից կարողանայինք կառչել, դա կլիներ փրկության խարիսխ։

Թովմասը հիշեց, որ կնքահայրը տեղահանությունը նավագնացության հետ էր համեմատում։ Նա գլխով արեց։ Մայրը շարունակեց.

— Ռըզա բեյը մեզ ազատեց քարավանից, նա մեզ հնարավորություն կտա մեկնելու։

— Ինչո՞ւ է նա մեզ տեր կանգնում։

Մարոն իր տեսակետն ուներ այդ հարցի վերաբերյալ, սակայն չէր ուզում, որ Թովմասն իմանար։ Նա հիշեց պանդոկապանի խոսքերը. «Դուք... օսմանյան պաշտոնյայի հետ»։ Յուրաքանչյուրն իր կարեցածն էր անում վերապրելու համար։ Նա պատասխանեց որդուն.

— Կարծում եմ, բարությունից դրդված։ Ողորմածությունից։

— Այդ դեպքում ինչո՞ւ իր հետ չվերցրեց բոլորին։

— Անկասկած այն պատճառով, որ նա այդքան տեղ չուներ։ Նա մեզ ընտրեց, որովհետև քո հայրը բանակի սպա է։

Թովմասի աչքերը փայլեցին.

— Նա ճանաչո՞ւմ է հայրիկին։

— Ոչ։ Եթե նա հարցուվարձ անի, ապա երբեք չասես, որ հորդ ձերբակալել են։ Կասես, որ նա ռազմաճակատում է։

— Ինչո՞ւ,– զարմացավ Թովմասը։

Ինչպե՞ս նրան բացատրել նոր իրավիճակը, իսկ Մարոն որդու համագործակցության կարիքն ուներ։ Նա վայր դրեց պատառաքաղը.

— Գիտես, Թովմաս, մենք այլևս տեղահանվածների քարավանում չենք, սակայն մեր վիճակը դեռևս անորոշ է։ Ես քեզ միշտ ասել եմ, որ սուտը վատ բան է։ Սակայն կան բացառություններ՝ սուտ փրկության համար։

Թովմասը կնճռոտել էր ճակատը և կարծես չէր հասկանում մոր ասածը։

— Այս պահին ամենակարևորը մեր ողջ մնալն է։ Վերապրելու համար մենք պետք է համբերատար և խորամանկ լինենք։ Պետք է առանց վարանելու ստենք և ձև թափենք։

— Ձև թափենք, որ ի՞նչ։

— Օրինակ, երբ Ռըզա բեյը շոյում է քո մազերը, ժպտա և մի պահիր քեզ այնպես, ինչպես քիչ առաջ։ Ձևանալ, նշանակում է սիրալիր լինել մեկի հետ, որին ատում ես, ցույց չտալ քո վիշտը, չհիշատակել այն դաժանությունները, որոնց ականատես ենք եղել վերջին շաբաթների ընթացքում, բոլորի ներկայությամբ հայերեն չխոսել, աղոթել ծածուկ և նույնիսկ ձևանալ, որ մենք թուրք ենք, եթե դա անհրաժեշտ է։

— Թուրքերը չար են։

— Ոմանք, այո։ Սակայն մենք ի վիճակի չենք ընտրելու այն մարդկանց, որոնց հետ շփվում ենք։ Մենք չենք որոշելու, թե ո՞վ է լավը, ով՝ ոչ, մենք պետք է մտածենք միայն ողջ մնալու մասին, որպեսզի նորից տեսնենք քո հորը։

Թովմասը հավաքեց սկուտեղի մեջ մնացած բրնձի վերջին հատիկները։

— Հասկացա՞ր, թե ինչ եմ ասում։

Նա գլխով արեց։

— Կկարողանա՞ս ձևանալ։

Նա նայեց մորը և մի քիչ տատանվելուց հետո պատասխանեց.

— Այո, մայրիկ։

Այն ամենը, ինչ Մարոն ասում էր որդուն, նաև իրեն էր վերաբերում, քանի որ նրա համար հեշտ չէր լինելու բարեկամանալ Ռըզա բեյի հետ, որը կարծես որոշակի դեր ուներ հայերի տեղահանության մեջ։ Հատկապես, որ Մարոն չէր հասկանում այդ տարօրինակ մարդու վարքագծի դրդապատճառները։ Եթե նա տենչում էր Մարոյին, ապա

կարող էր նրան տիրանալ վրանում, իսկ հետո վերադարձնել քարավան կամ էլ պահել որպես ստրուկ։ Ինչո՞ւ էր նա իրեն Թովմասի հետ միասին վերցրել հետը և ինչո՞ւ էր հարգալից վերաբերմունք ցուցաբերում։ Մարոն նկատել էր, որ նա աչք չէր կտրում իրենից և բնազդաբար զգում էր, որ գթասրտությունը, կամ էլ իր ամուսնու օսմանյան բանակի սպա լինելու հանգամանքը, շատ աննշան դեր էին կատարել իրեն հովանավորելու Ռըզա բեյի որոշման մեջ։ Նրա վրա տպավորություն էր թողել իր գեղեցկությունը և հմայքը։ Մարոն պետք է խորամանկեր, նա այլ ելք չուներ։

— Սա ընդամենը մի քանի օրվա պատմություն է,— ասաց նա որքան Թովմասին, նույնքան էլ իրեն հանգստացնելու համար։– Հետո մենք գնացք կնստենք և Կոստանդնուպոլիս կմեկնենք։ Դա շատ մեծ և գեղեցիկ քաղաք է, որն այդտեղից շատ հեռու է։

— Հայրիկն այնտե՞ղ կլինի։

— Չգիտեմ։ Միգուցե նա այնտեղ մեզ է սպասում կամ էլ տեղեկություններ է հաղորդել Մեսրոպ քեռուն։ Եթե նա այնտեղ չէ, ապա մենք կապրենք մեր ազգականների մոտ և հայրդ ավելի հեշտ կգտնի մեզ։

Նա վանեց իրեն երբեմն տանջող միտքը, որ նրան միգուցե կաղախան էին հանել։ Միտքը, որ Վարդանը կարող էր մահացած լինել, անտանելի էր Մարոյի համար, հատկապես, որ չէր կարող ունենալ վերջին անգամ նրան տեսնելու չնչին մխիթարանքը։ Նա երբեք չէր համաձայնելու հավատալ նրա մահվանը առանց վկայություն ունենալու։ Ապրելու էր նրան սպասելով։

Թովմասը հայտարարեց լացակումած ձայնով.

— Ես շատ եմ ուզում նրան տեսնել, մայրիկ։

— Ես նույնպես, սիրելիս։ Անդադար նրա մասին եմ մտածում։

Աղախինները մետաղյա տաշտակ բերեցին, տաք ջրով լի ամաններ, սրբիչներ և մի կտոր օճառ։ Հենց որ նրանք հավաքեցին սեղանը և փոխեցին անկողնու սպիտակեղենը, Մարոն լողացրեց Թովմասին։ Կեղտն այնպես էր թափանցել նրա մաշկի մեջ, որ Մարոն ստիպված եղավ քերել չեչաքարով, և երեխան առանց բողոքելու դիմացավ։ Նա սարսափած նայում էր ջրի այն քանակությանը, որն անհրաժեշտ էր իր մարմինը լվալու համար։ Այդքան ջուրը կբավարարեր տասնյակ մարդկանց ծարավը հագեցնելու համար։ Դեռևս այս առավոտ այդ հեղուկի մի քանի կաթիլն իրեն անասելի հաճույք էին պատճառել։ Նա անձայն լաց եղավ։

— Ցավեցնո՞ւմ եմ,– հարցրեց Մարոն անհանգստացած։

— Ոչ,– ասաց նա քիթը վեր քաշելով։— Ջուրը։

Մարոն հասկացավ, թե նա ինչ էր ուզում ասել։ Ինքը նույնպես մտածում էր ծարավի զգացման մասին, որից նրանք տառապել էին և

դեռևս տառապում էին այն հայերը, որոնք մնացել էին քարավանում։

Աղախինները դատարկեցին տաշտակը՝ մաքուր ջրով լցնելու համար։ Մեկ այլ աղջիկ եկավ, ծալված հագուստներ և պայուսակ բերելով։ Այդ շորերի մեջ կային բարակ բամբակյա շապիկ, հողաթափեր, սև զգեստ և մանուշակագույն մետաքսից փարաջա Մարոյի, կարճ տաբատ, շապիկ և կոշիկներ՝ Թովմասի համար։

— Սա բեյի կողմից, իսկ սա,— ասաց աղախինը, մեկնելով պայուսակը,– նվեր է իմ տերերից։

Պայուսակի մեջ մազերի խոզանակ կար, տուփով սուրմա, փոքրիկ հայելի և թաշկինակ։ Հայրենակից պանդոկապանների այս նվերը ջերմացրեց Մարոյի հոգին։ Նա շնորհակալություն հայտնեց աղջիկներին և նրանց ազատ արձակեց։ Սրբիչի մեջ փաթաթված Թովմասը նստած էր մահճակալի եզրին և նայում էր հատակին։ Մարոն կարիք չուներ նրան հարցնելու, թե ինչի մասին էր մտածում, վախը զգացվում էր նրա աչքերում։

— Գնա լուսամատի մոտ,– ասաց նա,– և դուրս նայիր մինչև ես ինձ հարդարեմ։

Թովմասը ենթարկվեց։

— Նկարագրիր, թե ինչ ես տեսնում։

Երեխան չպատասխանեց։

— Թովմա՞ս,– նորից հարցրեց Մարոն։

— Ոչինչ։

— Երկի՞նք, երկինքը տեսնո՞ւմ ես։ Ի՞նչ գույնի է։

— Կարծես արյուն լինի,– պատասխանեց նա մռայլ ձայնով։

— Թռչուններ կա՞ն։

— Այո։

— Ի՞նչ թռչուններ են։

— Ուրուրներ։

— Այստե՞ղ։ Երևի սխալվում ես։ Սպիտա՞կ են, թևերի վրա սև բծեր ունե՞ն։ Դրանց պարանոցը երկա՞ր է, ոտքերն ու կտուցները երկա՞ր են։

— Միգուցե։

— Արագիլներ են։ Հիշո՞ւմ ես։ Նրանք բույն էին դրել Սվասի մեր տան ծխնելույզի վրա։ Երբ թռչում էին, Սասունը քիթը վեր էր տնկում ու հաչում նրանց վրա։

Նա լսեց, թե ինչպես է որդին քիթը կամաց վեր քաշում։

— Այգում ծաղիկներ կա՞ն։ Դու տարբերում ես դրանք։ Արմենը քեզ

սովորեցնում էր անունները, երբ դու նրան օգնում էիր մեր սիզամարգերը մշակել։

Դողդոջուն ձայնով Թովմասը թվարկեց այն բույսերը, որ ինքը ճանաչում էր։ Վերջում ասաց.

— Մի աղջիկ վարդեր է քաղում, նա նման է Ջամիլային։

Մարոն հագավ շապիկը և նստեց լուսամատի գոգին մազերը սանրելու համար։ Լեռան վերևում հայտնվեցին առաջին աստղերը։ Հարևան աղավնատնից լսվեց աղավնիների գղգղոցը։ Պարտեզից այն կողմ, ուր կատուն մագլցում էր կոտրած սայլի վրա, վանդակապատ լուսամուտներով փոքր քարե տները հենվել էին մեկը մյուսին։ Անքող աղջիկները վերադառնում էին աղբյուրից՝ զգալով այն հայացքները, որ իրենց վրա էին գցում պատին հենված ծխող տղամարդիկ։ Մարոն հանկարծ ահավոր հոգնություն զգաց։

— Մենք հիմա կաղոթենք երկնքին նայելով։ Խաչակնքվիր և հայտնիր Աստծուն, թե ում համար պետք է աղոթենք։

— Հայրիկի, տատիկի, կնքահոր, Արաքսի մորաքրոջ, քեզ, ինձ և մնացած բոլորի համար։ Իսկ կարելի՞ է շան համար աղոթել։

Մարոն գլխով արեց։

— Եվ Սասունի համար,— ավելացրեց Թովմասը։

Պատսպարվելով Մարոյի գրկում՝ Թովմասն իսկույն խորը քուն մտավ։ Մարոն մոր մասին էր մտածում։ Նա մահացել էր ընդամենը մի քանի ժամ առաջ, և այդուհանդերձ այդ իրադարձությունը հեռավոր էր թվում։ Միգուցե վերջին շաբաթների իրադարձությունները սպառել էին Մարոյի զգացմունքային պաշարը, և մոր կորստի վիշտը նմանվում էր հին սգի։ Այս սենյակը մի ամբողջ աշխարհ էր բաժանում այն քարանձավից, ուր Մարոն անց էր կացրել նախորդ գիշերը։ Եվ այդ աշխարհի անունն էր հույս։ Նա քնեց՝ մտածելով Վարդանի մասին։

Սակայն Մարոն մղձավանջների մեջ անցկացրեց ողջ գիշերը։ Նա կրկին քայլում էր վերջ չունեցող ճանապարհով, կիզիչ արևի տակ և, առավոտյան արթնանալով, նա իրեն քարանձավում զգաց։ Նա խռխռոցներ էր լսում, ծարավ էր զգում և սով։ Նա ուժասպառ էր և վախենում էր։ Որոշ ժամանակ անց միայն նա գիտակցեց, որ պառկած է մահճակալի վրա, տանիքի տակ։

Եվ նա հասկացավ, որ դեռևս երկար ժամանակ տեղահանությունը տիրանալու էր իրեն մութն ընկնելուն պես և ամեն օր ինքը ստիպված էր լինելու պայքարել դրա դեմ և հաղթահարել այդ բարդույթը։ Նա պատրաստ էր մաքառելու և հաղթելու։

* * *

Ճանապարհի խիճը արտացոլում էր լուսնի լույսը։ Կիրճն անցնելուց հետո Վարդանը նկատեց դրա փայլը Եփրատի ջրերի վրա։ Նրա նժույգը հաճույք էր ստանում այդ գիշերային զբոսանքից, և Վարդանը ստիպված էր նրան զսպել, որպեսզի նա ժամանակից շուտ ուժասպառ չլիներ։ Նա ձիուն քառատրոփ էր թողնում միայն ճանապարհի կարճ հատվածներում։ Արդեն երրորդ օրն էր, ինչ նրանք երկար ճանապարհ էին կտրում։ Հնարավորին չափ արագ Մալաթիա հասնելու համար Վարդանն ընտրել էր կարճ ճանապարհը՝ անցնելով լեռներով։ Իր ճանապարհին նա չէր հանդիպել տեղահանվածների և ոչ մի քարավանի, սակայն տեսել էր անթաղ դիակներ հեղեղատներում ու ճամփեզրերին և ավերված հայկական գյուղեր։

Նա անցավ խարբերդ տանող ճանապարհի ճամփաբաժանի մերձակա խարբերդ հայկական ամրոցի մոտով, ապա քուն մտած մի գյուղով և մոտեցավ գետին, որի շրջադարձերն էր կրկնում այն երիզող ճանապարհը։ Ջրի հոսանքի խուլ աղմուկին խառնվում էր գետափին աճող ծառերի սոսափյունը, իսկ խոնավ քամին քաղցրահամ բուրմունք ուներ, որը նմանվում էր գարնանը բարդիների բացված բողբոջների հոտին։ Իր նպատակին մոտենալով՝ Վարդանը և՛ մեծ ոգևորություն էր ապրում, և՛ որոշակի վախ էր զգում։

Առջևում լույս էր փայլում։ Հավանաբար ճամբար էր ճամփեզրին։ Վարդանը կասեցրեց ձիու ընթացքը և զգուշությամբ առաջ շարժվեց։ Ձիեր խրխնջացին, Յըլդըզը պատասխանեց։ Ճամբարածներն իմացան, որ ինչ—որ մեկը մոտենում էր։ Գետափին մեծ խարույկ էր վառվում։ Վարդանը հաշվեց մոտ քսան մարդու ուրվագիծ, որոնց մեծ մասը կանգնեց ճանապարհին։ Վարդանը բացեց պատյանը, որպեսզի հարկ եղած դեպքում ատրճանակը հեշտ հաներ։ Դատելով հագուստից և ոմանց շեկ մազերից՝ դրանք քրդեր էին։ Մորուսավոր և երկարամազ տղամարդիկ զինված էին, ոմանք հին հրացաններով, որոնց փողերը զարդարված էին արծաթյա նախշերով, իսկ ոմանք էլ լրիվ նոր մաուզերներով։ Վարդանը ողջունեց նրանց.

— Սալամ ալեյքում։

— Ալեյքում սալամ,– պատասխանեց մի տղամարդ՝ քրդերեն առոգանությամբ թուրքերենով։– Ո՞ւր ես այդպես գնում։

— Ուր որ պահանջում է ծառայությունը սուլթանին՝ Հավատացյալների առաջնորդին։ Թույլ տվեք անցնեմ։

Նրա զրուցակիցը՝ ալեխառն մազերով մի քուրդ, մատները խրեց գոտու տակ, որից կախված էին երկու ատրճանակ և մեկ երկար դաշույն։ Նա հարցական հայացքով նայեց իր ընկերներին և շարունակեց կեղծ քաղաքավարի տոնով.

— Մենք մտադիր չենք քեզ խանգարել կատարելու քո առաքելությունը, որը պետք է որ շատ կարևոր լինի, եթե դու այսպես սլանում ես գիշերով։ Քո ձին քրտնած է։ Մեզ հետ մի քիչ արաղ խմիր, մինչև ձիդ կհանգստանա։

Վարդանը ելք չուներ և պետք է ընդուներ հրավերը: Եթե փորձեր դիմադրել, ապա անկասկած նրանց հնարավորություն կտար իրեն սպանելու: Նրանք բոլորը ավազակի տեսք ունեին, և Վարդանը մտածեց, որ պետք է գործի դներ իր դիվանագիտական ունակությունները: Նա ցած իջավ և ձին թփից կապեց: Տղամարդիկ շրջապատեցին նրան:

– Լավ ձի է,– ասաց նրանց առաջնորդը:

— Ես արդեն սպանել եմ մեկին, որն ուզում էր նրան գողանալ:

Այս մարդկանց նման պատասխաններ էին դուր գալիս, և նրանք հավանություն տալով գլուխները տմբտմբացրեցին: Առաջնորդը բռնեց Վարդանի ուսից և առաջնորդեց կրակի մոտ:

— Այն մարդը, որը չի կարողանում պաշտպանել իր սեփականությունը, արժանի չէ այն ունենալու:

Խարույկի լույսի ներքո Վարդանը մի քանի սայլ տեսավ, որոնք խառնիխուռն բարձված էին տարբեր իրերով, կահույք, հագուստների կապոցներ, կաթսաներ, հեծելասարքեր, պարաններով կապկպած զամբյուղներ: Վարդանը գործ ուներ ավազակների հետ, որոնք ծագումով հարևան լեռնային գյուղերից էին, ուր ավազակությունը պատվարժան մասնագիտություն էր համարվում: Ցամաքային այս ծովահենների նախնիները հարձակվում էին Պարսկաստանից, Արաբական թերակղզուց և Ասիայից եկող քարավանների վրա: Սրանք շարունակում էին ավանդույթը այլ պայմաններում: Ցույց տալով բարձած սայլերը՝ Վարդանը հիացած տոնով ասաց.

— Դուք աչքիս ասլաններ եք երևում:

Հյուրընկալողները իրենց շոյված զգացին, իսկ նրանց առաջնորդը բացականչեց.

– Ալլահը վկա, դու էլ կարծես արժանավոր մարդ ես: Դու շրջապատված ես բարեկամներով և կմեկնես առանց խոչընդոտի:

— Իսկ նախնական մտադրությունդ ա՞յլ էր,–հարցրեց Վարդանը խորամանկ ժպիտով:

Մեղավոր երեխայի դեմքի արտահայտությամբ, հսկան գլխով ոչ արեց, իսկ հետո բարձր ծիծաղեց:

— Իմ անունն է Օսման աղա:

— Իմը՝ Շաքիր Իսմայել:

Նրանք նստեցին կրակի մոտ, ուր այծի միս էր խորովվում: Տնական օղին ձեռքից ձեռք էր անցնում ջրի հետ միասին՝ յուրաքանչյուրը խմում էր հենց շշից: Վարդանը հարցրեց հյուրընկալողին.

— Աղա... Ուրեմն ցեղապե՞տ ես:

— Այո: Մեր հոտերը արածում են Դերսիմի սարերում:

Այդ լեռնաշղթան Երզնկայից հարավ էր ընկած։

— Իսկ ի՞նչն է քեզ այսքան հեռու բերել քո տնից։

— Թուրքը իսկական ռազմիկների կարիքն ունի։ Նա մեզ վարձել է իր ոստիկաններին օգնելու համար։ Սակայն մենք տուն ենք վերադառնում։

— Աշխատանքը ձեզ դուր չեկա՞վ։

Ակնհայտորեն իրեն վատ զգալով, Օսման աղան կասկածանքով նայեց հյուրին և մի կում օղի խմեց պատասխանելու փոխարեն։ Վարդանը թեքվեց նրա կողմը և ցածրաձայն ասաց.

— Ես քեզ մի գաղտնիք կբացեմ, ես թուրք չեմ, չերքեզ եմ։ Ծառայում եմ օսմանյան բանակում, որովհետև այլ ելք չունեմ։

Առաջնորդի դեմքը հանդարտվեց, սակայն նրա ձայնը թնդաց բարկությունից.

— Սպանել հյուծված մարդկանց, ծերունիների, կանանց ու երեխաների՝ իրեն հարգող ռազմիկի աշխատանք չէ։ Ես գիտեմ քրդերի, որոնք համաձայնում են իրենց վրա վերցնել կառավարության կեղտոտ աշխատանքը, ամոթ նրանց։

— Դու խոսում ես հայերի ջարդերի՞ մասին։

— Էլ ինչի մասին։ Նրանք քրիստոնյա են, համաձայն եմ, բայց մենք միշտ լավ հարաբերություններ ենք ունեցել նրանց հետ։ Թուրքն ուզում է, որ երկիրն ամբողջությամբ իրեն պատկանի։ Այսօր՝ հայերը, վաղը՝ քրդերը։

Նրա մարդիկ ձեռքերը բարձրացրեցին և հայհոյանքների տարափ տեղացին սուլթանի վրա։ Նրանց առաջնորդը հանդարտեցրեց իր մարդկանց և շարունակեց.

— Ոչ ոք չի կարող մեզ ոչինչ պարտադրել մեր լեռներում։ Այն հրացանները, որ սուլթանը մեզ է տալիս, մենք կուղղենք նրա դեմ, երբ պահը կհասունանա։

Ձեռքերի ափերը շեփորի պես բերաններին դնելով՝ տղամարդիկ ռազմատենչ աղաղակներ արձակեցին։

Վարդանին իր ձիու մոտ ուղեկցելով, Օսման աղան նրան համբուրեց և «իմ եղբայր» անվանեց։ Խարույկի ծխից հեռու Վարդանի ուշադրությունը գրաված քաղցրավուն հոտը նորից հայտնվեց։

— Սա ի՞նչ հոտ է,– հարցրեց նա։

— Ոնց որ մեղրի բուրմունք լինի, որը տարածվում է գարնանը Դերսիմի ծաղկած լանջերին, այդպես չէ՞։

— Ես քո սարերին ծանոթ չեմ։ Ուրեմն ծաղիկների հո՞տն է։

— Սա, եղբայրս, մահվան հոտն է։ Եթե մոտենաս գետին, այդ հոտը կկորցնի իր հաճելի կողմը, և դու կզգաս փտման գարշահոտությունը։

Եփրատ գետը լեցուն է տակառի պես փքված դիակներով, որոնք դիպչելով ժայռերին պայթում են և չորս կողմ են ցրում իրենց փորոտիքը։

Նրանք բաժանվեցին միմյանց բարի ճանապարհ մաղթելով, և Վարդանը շարունակեց ճանապարհը մթության մեջ։ Ճանապարհը հանդարտորեն իջնում էր դեպի մի հովիտ։ Լուսադեմին Վարդանն անցնում էր բերրի խաղողի այգիներով և պարտեզներով, որոնց հաջորդում էին ծխախոտի ու բամբակի դաշտեր և բանջարանոցներ։ Հասան Ջելեբիի ու Սվասի ճանապարհների միացման վայրում ոստիկանները պահակակետ էին դրել։ Մի սպա և երկու զինվոր քնած էին հանգած խարույկի ծխացող ածուխների մոտ։ Մեկը քարին նստած հսկում էր ճանապարհը։ Նա չստուգեց Վարդանի փաստաթղթերը, որը կանգ առավ նրա հետ խոսելու։ Զինվորը շատ հոգնած էր և Վարդանի ողջույնի խոսքերին պատասխանեց խռպոտ ձայնով։

— Այստեղով Սվասից եկող շարասյուն անցե՞լ է։ Զգիտե՞ս։

— Ահա մեկ ամիս է, ինչ անդադար անցնում են։ Ի՞նչ իմանամ որտեղից են։ Նրանց հավաքում են մի ճամբարում Մալաթիայից հարավ։ Այնտեղ միգուցե ձեզ տեղեկություններ տան։

Երբ Վարդանը քաղաքին էր մոտենում, նրան մի քսան սայլ հանդիպեց։ Դրանք վարում էին քողածածկ կանայք։ Նրանք մինչև տասներկու տարեկան երեխաների էին տեղափոխում՝ տղաների ու աղջիկների, որոնց աչքերում կյանք չկար։ Վարդանը կանգնեցրեց սայլերը։ Կարծելով, որ ստուգում էր, առաջին սայլում նստած կինը նրան ճմրթված մի թուղթ տվեց՝ գավառի գայմագամի անցաթուղթը։ Վարդանն իմացավ, որ նրանք արևելյան ճակատում զոհված զինվորների այրիներ էին։ Թոշակ նշանակելու փոխարեն իշխանությունները նրանց երեխաներ էին տալիս։ Այդ բանը հետաքրքրեց Վարդանին։

— Ի՞նչ եք մտադիր անել նրանց հետ։

— Վաճառել այն ընտանիքներին, ում Ալլահը բազմաթիվ զավակներ չի պարգևել։

Նրանց պետք է վաճառեին։ Վարդանը հասկացավ, որ դրանք հայ երեխաներ էին, և նրա սիրտը կծկվեց.

— Գյաուրնե՞ր են։

— Նրանք դավանափոխ կլինեն։ Ուզո՞ւմ ես մեկին։ Նայիր դրանց, գեղեցիկ են ու արդեն կարող են դաշտում աշխատել։ Միգուցե մի քիչ նիհար են, սակայն այս տարիքում նրանք շուտ քաշ կհավաքեն։ Տղա՞։ Աղջի՞կ։ Ընտրիր, էժան կտամ։

Վարդանը գլխի շարժումով հրաժարվեց և կնոջը նշան արեց, որ անցներ։ Նա այդ բոլոր երեխաներին իր հետ կտաներ, եթե հնարավորություն ունենար։ Նրա առաջին մղումն էր ձին քշել և գլուխը դարձնել, սակայն չկարողացավ։ Պետք էր, որ ինքը նայեր, որ ինքը վկա

լիներ։ Կար մեկ այլ պատճառ ևս, որը նա չէր համարձակվում խոստովանել և որը ստիպում էր նրան զննել այդ դեմքերից յուրաքանչյուրը. Թովմասը կարող էր նրանց մեջ լինել։ Ցավից հետո եկավ վրդովմունքը։ Այս երեխաներին ծնողներից խլելուց հետո ստիպելու էին մոռանալ իրենց հավատքը, լեզուն ու մշակույթը։ Վարդանը շատ լավ էր պատկերացնում նրանց զգացմունքները, հուսահատությունը, որն արտացոլվում էր նրանց աչքերում։ Նրանք դանդաղ անցան իր առջևով և նրա սիրտը վշտից մարում էր, երբ այդ դեմքերը մեկընդմիշտ հեռանում էին իր տեսադաշտից։ Նրան համակել էր անդառնալի կորստի զգացում։ Ինքը ոչինչ չէր կարող անել այդ երեխաների համար։ Նա նայում էր, թե ինչպես էին նրանք հեռանում, հետո կատաղի կերպով ասպանդակեց իր ձին։

Վարդանն անցավ Մալաթիայի հայկական թաղով կամ այնտեղով, ուր այն եղել էր։ Խանութները թալանված էին։ Տներից շատերը դատարկ էին, մյուսները զբաղեցրել էին մահմեդական ընտանիքներ։ Մի եկեղեցի, որի խաչն անհայտացել էր, որպես պահեստ էր ծառայում։ Երեխաների դեմքերը վերադարձան Վարդանի հիշողության մեջ և տանջում էին նրա հոգին։ Մեկ ամբողջ ժողովրդի՝ իր ժողովրդի մահը։

Այն պահին, երբ Վարդանը հեռանում էր Մալաթիայից հարավային ճանապարհով, Ռըզա բեյի կառքը քաղաք էր մտնում արևմուտքից՝ Կեսարիայի ճանապարհով։

Այն երեք օրերի ընթացքում, որ Մարոն ճանապարհորդում էր Ռըզա բեյի հետ, վերջինս իրեն բարեկիրթ էր պահում նրա հետ և համբերատար՝ Թովմասի հետ, որը միայն այո կամ ոչ էր պատասխանում իրենց բարերարին։ Այդուհանդերձ, Ռըզա բեյը ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Մարոյի հանդեպ։ Ուզում էր ամեն ինչ իմանալ նրա մասին, հարցեր էր տալիս նրա կյանքի, նրա ծագման և մանկության մասին։ Մարոն հիշում էր իր երիտասարդությունը Կոստանդնուպոլսում, խոսում էր իր ծնողների, իր ճանապարհորդությունների ու Վարդանի մասին, հատկապես Վարդանի, իր զրուցակցին հիշեցնելու համար, որ ինքը ուրիշ տղամարդու կինն էր, որովհետև Ռըզա բեյի ուշադրությունը երբեմն սևեռուն էր դառնում։ Մարոն զգուշորեն մանևրում էր։ Նա պետք է զսպեր անպատշաճության ցանկացած դրսևորում, սակայն չպետք է իր դեմ լարեր հովանավորին։ Նա զգում էր, որ ժամանակն իր դեմ էր գործում։

Պահակազորով շրջապատված կառքը ճանապարհ հարթեց մարդաշատ փողոցներով։ Տաղավարների տակ պատսպարված վաճառականները կանչում էին անցորդներին, և յուրաքանչյուր գնում ուղեկցվում էր սակարկություններով։ Ջրավաճառները, գլանաձև ամանները ուսին, բաժակները գոտկատեղից կախ տված զամբյուղների մեջ, իրենց կանչերն էին ավելացնում խոսակցությունների աղմուկին։ Սրճարաններում տղամարդիկ խմում ու նարգիլե էին ծխում առանց շեղվելու իրենց աշխույժ զրույցից։ Մահմեդական օրացույցի իններորդ ամսի՝ ռամադանի նախօրեն էր։ Հաջորդ օրվանից մահմեդականները պետք է առավոտից մինչև մայրամուտ ծոմ պահեին և հրաժարվեին

նույնիսկ ծխելուց և սիրային խաղերից։

Թովմասը հետաքրքրությամբ էր նայում այդ քաղաքին։ Նրա հետաքրքրությանը խառնվում էր նաև տխրություն։ Քաղաքը հիշեցնում էր Սվասի շուկայի թաղը, ուր նա շատ էր սիրում գնալ։ Նա ոտքի կանգնեց ավելի լավ տեսնելու համար։ Հետաքրքրասերները շրջան էին կազմել արջ վարժեցնողի շուրջը, որը եկել էր Սև ծովի ափերից։ Շագանակագույն մորթով կենդանին կանգնել էր հետևի թաթերի վրա ու պարում էր դավփ ու զուռնայի նվագակցությամբ։ Ամեն անգամ, երբ գազանը անցնում էր երեխաների մոտով, նրանք բարձր ճիչեր էին արձակում։ Վախեցած մայրերը կրծքներին էին սեղմում վախեցած մանուկներին, զվարթ երիտասարդները ձևանում էին, թե հարձակվում էին կենդանու վրա։

Դարեր շարունակ անփոփոխ ռիթմով ապրող Մալաթիայի բնակիչներին ամենևին էլ չէին մտահոգում պատերազմը և հայերի ճակատագիրը։ Եվ բաց մեքենայի հայտնվելը, ուր նստած էին գերմանացի սպաներ, անպատեհ թվաց։

— Մայրիկ, ավտոմեքենա,— բացականչեց Թովմասը հիացած։

— Դու դեռ շատ մեքենաներ կտեսնես, տղաս,— ասաց Ռըզա բեյը,— և եթե դու ցանկություն ունենաս, այդպիսի մեքենա կնստես։

— Այո,— քաղաքավարի պատասխանեց Թովմասը։

Նրա ձայնն անարտահայտիչ էր և նա աչքերը հեռացրեց մեքենայից։ Չնայած մոր խնդրանքին, երեխային չէր հաջողվում թաքցնել հակակրանքը իրենց հովանավորի նկատմամբ։

Ռըզա բեյին էին հատկացրել գայմագամի պալատի մի թևը և ծառաներ։ Հոգնածության պատրվակով նա հրաժարվեց նախաճաշել գավառապետի հետ, որին նա, ի դեպ, արհամարհում էր։ Ամեն դեպքում այդ Ալի բեյը հեռացվելու էր պաշտոնից։ Նա դա իմացել էր նախօրեին Գանի բեյի հեռագրից, որի հետ պետք է Մալաթիայում հանդիպեր։

Նրանք ճաշեցին իրենց տրամադրված թևում։ Ճաշն այնպես չանցավ, ինչպես երազում էր Ռըզա բեյը։ Իհարկե, Ռըզա բեյի պատվերով երաժիշտներ էին հրավիրվել, սակայն նրան կաշկանդում էր բռի Պետրիի և իրեն սառը հայացքով նայող երեխայի ներկայությունը։ Նա ցանկանում էր Մարոյի հետ մենակ մնալ և սկսել նրան սիրահետել։ Այդ հնարավորությունն ունենալու համար նա վճռել էր Պետրիին թողնել Մալաթիայում որոշ հարցեր կարգավորելու։ Ինչ վերաբերում էր իրեն, նա վճռել էր անմիջապես Այնթապ չվերադառնալ։ Նա ավելի շուտ ճանապարհը կթեքեր և կանցներ Դիարբեքիրով և Ուռհայով շրջայցը շարունակելու պատրվակով։

Ճաշից հետո Աբդուլայի օգնությամբ Ռըզա բեյը փոխեց զգեստները։ Պետրին հետևել էր նրան հրահանգներ ստանալու համար։ Մալաթիայի ճամբարը կարևոր նշանակություն ուներ տեղահանության գործընթացում։ Անատոլիայի հյուսիս—արևելքից եկող շարասյուների

ճանապարհին ընկած վերահսկողական կետերից մեկն էր։ Իրավիճակն այնտեղ ծանր էր։ Արդեն կուտակվել էր մոտ տասնհինգ հազար հայ և շուտով ժամանելու էին այլ շարասյուներ ևս։

— Պետք է ճամբարը դատարկել,– ասաց Ռըզա բեյն իր օգնականին, երբ Աբդուլան ամրացնում էր նրա օձիքը։– Բոլորին կուղարկես Սիրիական անապատ։

— Մենք քարավանները հսկող մարդկանց պակաս ունենք։

— Բանտ գնա ու մարդ ընտրիր, որոնք այդ գործը կանեն։

— Այս խոզ գավառապետը չի ցանկանա նրանց ազատել։ Դուք նրան գիտեք, նա սիրում է գործին խառնվել։ Հայերի բարեկամն է։

Ռըզա բեյը, որը սև բաճկոնն էր հագնում, փռթկաց.

— Բանի տեղ մի դիր։ Հենց այս երեկո նա կհավասարվի հողազուրկ գյուղացու հետ։

— Ալլահը մեծ է։

— Կեսօրից հետո ես մեկնելու եմ, որպեսզի տեսնեմ, թե ինչպիսին է վիճակը Դիարբեքիրում։ Այստեղ իրավիճակը կարգավորելու հարցում հույս քեզ վրա եմ դնում։ Այստեղ է ոմն Գանի բեյ՝ ներքին գործերի նախարարի տեղակալը։ Նա ինչ—որ տեսակետից իմ վերադասն է, համապատասխանաբար նաև քոնը։ Անհրաժեշտության դեպքում քեզ կօգնի։ Սակայն զգույշ կլինես։ Նա նեղացկոտ մարդ է, որը շուտ է զայրանում։ Երբ գործդ այստեղ ավարտես, մենք կհանդիպենք Այնթապում։

— Ամեն ինչ կարվի ձեր կարգադրության համապատասխան,– պատասխանեց Պետրին, հրաժեշտ տալով։

Մի քանի րոպե անց Ռըզա բեյը քայլերն ուղղեց դեպի պալատի այն թևը, ուր իջևանել էր Գանի բեյը։ Նա գնում էր անբռնազբոս և միևնույն ժամանակ հպարտ տեսքով, և լավ կարված կոստյումը չէր կաշկանդում նրա շարժումները։ Նրա մայրը հաճախ էր կրկնում, որ ինքը նման էր իշխանի, և երբեմն նա գրեթե հավատում էր դրան։

Միջանցքներից մեկում նա հանդիպեց Մարոյին, որը բռնել էր Թովմասի ձեռքը։ Հենց որ Մարոն մենակ էր մնում, հանում էր քողը։ Ռըզա բեյը նկատեց, որ նա ավելի լավ տեսք ուներ։ Նրա դեմքի գույնը բացվել էր, իսկ աչքերը կորցրել էին տենդագին փայլը։ Նրա գեղեցկությունը վերստին ծաղկում էր ապրում, ինչպես բույսն անձրևից։ Ռըզա բեյը Մարոյին իր հետ էր վերցրել առանց մտածելու, թե որքան ժամանակ էր նրան իր մոտ պահելու և թե ինչպիսին էր լինելու նրա ճակատագիրը։ Այն պահին ընդամենը քմահաճույք էր, թանկարժեք իր, որից նա կարող էր հոգնել։ Սակայն ընդամենը երեք օր անց, նա իրեն արդեն կապված էր զգում այդ կախարդական էակի հետ։

Մեղմ ժպիտով Մարոն նրան հարցրեց.

— Ես ձեր բանտարկյա՛լն եմ, Ռըզա բեյ։

— Ինչո՞ւ ես այդպես կարծում,— զարմացավ Ռըզա բեյը։— Ո՞վ է քեզ այդ անհեթեթ միտքը ներշնչել։

— Երբ ցանկացա զբոսնել քաղաքում, ձեր պահակազորայիններից մեկն արգելեց։

— Իմ հրամանն է։ Քո անվտանգության համար։ Քանի դեռ դու և քո որդին ինձ հետ եք, վախենալու բան չունեք, սակայն մենակ... Դու ազատ ես և եթե անպայման ուզում ես դուրս գալ, ապա Աբդուլան և երկու այլ տղամարդ քեզ կուղեկցեն։

Մարոն ուզում էր գնալ ամերիկյան վարժարանը, որի դիմացով անցել էին։ Դրա տնօրենը գուցե կկարողանա՞ր նամակ ուղարկել Կոստանդնուպոլիս՝ Մեսրոպ քեռուն։ Նա ուզում էր այդ բանն անել Ռըզա բեյից թաքուն։ Վերջինս շարունակեց.

— Դու կարող ես դուրս գալ, բայց արդյո՞ք դա անհրաժեշտ է։ Մենք մեկնելու ենք երկու կամ երեք ժամից, Գանի բեյի հետ իմ հանդիպումից հետո։

Այդ անունը լսելով՝ Մարոն ներքուստ սարսռաց։ Գանի բեյ։ Նա, ով ձերբակալել էր տվել Վարդանին և որն իրեն ծաղրել էր։ Նա չպետք է իրեն տեսներ և ճանաչեր։ Նա թաքցրեց շփոթմունքը և պատասխանեց.

— Այդ դեպքում ես կսպասեմ իմ սենյակում։

— Այ դա խելամիտ որոշում է,- հայտարարեց Ռըզա բեյը բավարարված տեսքով։

Կնոջ վերջին խոսքերը նա ընկալեց որպես իրեն հաճոյանալու ցանկություն։ Նա մոտեցավ Մարոյին և կզակը վեր քաշելով հարցրեց.

— Փողկապս ճի՞շտ է կապված։

Մարոն բնազդաբար ձեռքերը մեկնեց փողկապն ուղղելու համար, սակայն անմիջապես ընդհատեց այդ շարժումը։ Նա զղջում էր այդ ակամա շարժման համար։

— Ճիշտ է կապված,— ասաց նա ցածրաձայն։

— Իսկ կոստյո՞ւմս։ Ներկայանալի՞ տեսք ունեմ։

Նա անընդհատ ծուղակներ էր լարում Մարոյի դեմ։ Ի՞նչ կարող էր անել Մարոն նրա անհերքելի նրբագեղությունն ընդունելուց բացի։ Դա ազնվացեղ մարդ էր և գիտակցում էր իր գրավչությունը։ Կկոցելով աչքերը, որը նրան չարաճճի տեսք էր տվել, նա սպասում էր Մարոյի պատասխանին։

— Դուք շատ լավ տեսք ունեք։

— Զգացված եմ,— ասաց նա՝ խառնելով Թովմասի մազերը, որը չդիմադրեց։

Մարոն գլխով արեց ու հեռացավ, խռովված հոգով և երեխային քարշ տալով իր հետևից: Ռըզա բեյը նայեց, թե ինչպես էր նա հեռանում՝ բարակ բեղը շոյելով: Ինչ գեղեցիկ էր նա: Հանկարծակի շիկնած նրա այտերը... Անհնազանդ կենդանու նյարդային քայլվածքը: Ինչպիսի՞ մարմին էր թաքցնում այդ զգեստը: Ռըզա բեյն զգաց, թե ինչպես է տենչն արթնանում իր հոգում: Նա հառաչեց ու շարունակեց ճանապարհը:

Գանի բեյի բնակարանը մտնելուց առաջ Ռըզան կանգ առավ մի լուսամատի դիմաց, որի ապակու մեջ իրեն զննեց: Եվ նույնպես համարեց, որ «շատ լավ տեսք ուներ»: Սև կոստյումն իրեն էլ ավելի բարեկազմ էր դարձնում:

Նա թակեց նախասրահի դուռը: Երիտասարդ ծառան՝ շատ գեղեցիկ մի պատանի, որին Գանի բեյը ծառայության էր վերցրել Սվասում, բացեց դուռը և գնաց զեկուցելու: Ռըզան չէր կարողանում ազատվել որոշակի տագնապից: Նա հանդիպել էր Գանի բեյին երկու անգամ մայրաքաղաքում: Առաջին անգամ Իթթիհատի մի հավաքին, իսկ հետո Բոսֆորի ափին գտնվող Դոլմա Բախչե պալատում բարձրաշխարհիկ ընդունելության ժամանակ: Դա մինչև Ռըզա բեյի պաշտոնական առաքելություն ստանձնելն էր: Այսօր Գանի բեյը նրա վերադասն էր և եկել էր տեղում ստորադրյալի աշխատանքի մասին դատելու:

Գանի բեյը, դարձյալ շատ գեր, նստած էր ցածր բազմոցի վրա, որը դրված էր կամարաշարի առջև: Ստվերոտ ներքին բակում կարկաչում էր շատրվանի շիթը: Ստորակարգությունն ընդգծելու համար բարձրաստիճան պաշտոնյան իրեն նեղություն չէր տվել պաշտոնական հագուստ հագնելու: Նա տեղից չշարժվեց, սակայն ժպտաց այցելուին, որից նրա այտերն էլ ավելի փքվեցին:

— Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու մեր շրջանում,– ասաց Ռըզա բեյը խոնարհվելով:

— Իսկ ես շատ ուրախ եմ հանդիպելու մի մարդու, որին հարգում եմ:

Գանի բեյը Ռըզա բեյին առաջարկեց նստել իր դիմաց և նրան ծխախոտ առաջարկեց: Պատանին զովացուցիչ ջրեր մատուցեց ու հեռացավ:

— Լա՞վ եք ճամփորդել:

— Ճանապարհներն անտանելի են, իսկ շոգը՝ հեղձուցիչ,— պատասխանեց Գանի բեյն իր ծխախոտը գետնին թափ տալով:— Զմռռանանք նաև գարշահոտությունը, որ տիրում է որոշ վայրերում:

Վերադասի մտածելակերպին մի քիչ ծանոթ լինելով, Ռըզա բեյը գիտեր, որ հարկավոր էր նվազագույնի հասցնել իր հաջողությունները և ընդգծել սեփական գործունեության բացթողումները: Նա մեղավոր տեսք ընդունեց.

— Գիտեմ... Ես հրամայել էի, որ շարասյուները չանցնեին գլխավոր

մայրուղիներով և որ դիակները կիտեին ճանապարհներից հեռու։ Նույնն է, ինչ գայլի գլխին ավետարան կարդաս։ Ստիպված եմ բավարարվել տականքներով, կատարողները ավազակներ են, բութ անասուններ։ Գործն ավելի լավ կարվեր, եթե ես իսկական զինվորներ ունենայի։

Ինչպես և կանխատեսել էր Ռըզա բեյը, նրա վերադասը հակաճառեց.

— Դուք արդարանալու կարիքը չունեք, Ռըզա բեյ, դուք շատ լավ եք աշխատում ձեր ձեռքի տակ եղած միջոցներով։ Ձեր հաշվետվությունները լավ տպավորություն են թողել մեր նախարարի վրա և այն, ինչ ես տեսա Սամսունում ափ իջնելիս, հաստատում է ձեր աշխատանքի արդյունավետությունը։

— Շնորհակալություն, Գանի բեյ։ Այդուհանդերձ ցանկալի չեմ համարում, որ դիակների այդ կույտերը տեսնեին այն օտարները, որոնք շրջագայում են Անատոլիայով մեկ։

Գանի բեյը ձեռքը թափ տվեց.

— Կարևոր չէ։ Այս պատերազմի առկայությամբ աշխարհը այլ մտահոգություններ ունի, քան մի քանի դիակ Անատոլիայում։ Կարևորը հնարավորինս շուտ ազատել հյուսիսն ու արևելքը անցանկալի տարրերից։ Երբ այդ ձեռնարկն իրականացված կլինի, ժամանակ կունենանք հետևանքները վերացնելու։

— Պետք չէ ուշացնել։ Իմ հաշվարկներով տեղահանությունները կավարտվեն ձմեռվա սկզբին, իսկ հետո պետք կլինի հետախուզել նրանց, ովքեր խույս են տվել մեզնից։

— Ճիշտ է։ Դուք այն եզակի մարդկանցից եք, որոնք հասկանում են այս միջոցառման իսկական նպատակը, վերացնել բոլոր նրանց, ովքեր կարող են շարունակել այդ ցեղը, իսկ երեխաներին դավանափոխ անել, մեր շարքերը լրացնելու համար։ Թող նրանց երիտասարդ կանայք, որոնք տրվել են թուրքերին, լույս աշխարհ բերեն փոքրիկ թուրքերի։

— Որդեգրման գործընթացը լավ է ընթանում, հատկապես կառավարության կողմից երեխա որդեգրած աղքատ ընտանիքներին ամեն ամիս 30 լիվրի հատկացումից հետո։ Այդուհանդերձ, արտասահմանյան միսիոներները խոչընդոտում են մեր ծրագրերին իրենց որբանոցներով։ Եվ բազմաթիվ գավառապետեր գերադասում են համագործակցել նրանց հետ։

— Իմ ճանապարհորդության մեկն էլ այդ խնդրի կարգավորումն է։ Այստեղ ես վարվել եմ այնպես, ինչպես վարվել եմ այլուր։ Ես փոխարինել եմ Ալի բեյին մեր մարդկանցից մեկով։ Ես պետք է ազատվեմ նաև Այնթապի գավառապետից։

— Շատ լավ կլիներ,– բացականչեց Ռըզա բեյը։

— Դուք այնտեղ եք ապրում, և ես ուզում եմ ձեզ նշանակել այդ գավառի գավառապետ։

Ռըզա բեյը չկարողացավ թաքցնել իր ուրախությունը։ Նրա զարմանքն անկեղծ էր, նա հույս ուներ այդ պարգևը ստանալ, սակայն ոչ այդքան շուտ։

— Դա երջանկություն կլինի ինձ համար, Գանի բեյ։ Թող Ալլահը շնորհի ձեզ իր օրհնությունը։

Գանի բեյը գլխի շարժումով ընդունեց երախտագիտության այդ խոսքերը և նոր ծխախոտ վառեց։ Նա շարունակեց.

— Ես ձեր առջև մի պայման եմ դնում, դուք կշարունակեք, այդուհանդերձ, կազմակերպել տեղահանությունները։

— Դա առանձնակի բարդությունների հետ կապված չի լինի, քանի որ տեղահանվածների մեծ մասը ժամանում է մեր շրջանը։

— Դուք կվերահսկեք նաև շրջակա գավառների գավառապետներին։

— Կանեմ այնպես, ինչպես կցանկանաք, և դուք չեք զղջա այն վստահության համար, որին ինձ արժանացրել եք։

— Ես կանխավ համոզված եմ։ Եվս մի ցուցում։ Բացի կոդավորված իրական հաշվետվություններից, որոնք արդեն իսկ ուղարկում եք, դուք մեզ կուղարկեք նաև չկոդավորված փաստաթղթեր։ Ցուցափեղկի համար։ Այդ հաշվետվություններում ափսոսանք կհայտնեք տարագիրների վիճակի, նրանց կրած զրկանքների կապակցությամբ, կառավարությունից կպահանջեք միջոցներ ձեռնարկել նրանց վիճակը բարելավելու նպատակով։

Ռըզա բեյի դեմքին խորամանկ ժպիտ հայտնվեց.

— Խոսքը հայերին պատերազմական գործողությունների շրջանից հեռացնելու մասին է. կառավարությունը կերակրում է տեղահանվածներին և գյուղեր է կառուցում նրանց համար։

— Հենց այդպես,- բացականչեց Գանի բեյը, որին հիացրեց իր զրուցակցի մտքի ճկունությունը։

Ռըզա բեյը երջանիկ էր։ Նրա առաջխաղացումը ազգային վարչակարգում ավելի սրընթաց էր, քան ինքն էր նախատեսել։ Հետևաբար ինքն իրավացի էր եղել հարելով Իթթիհատի քաղաքական գործիչներին, որոնց հետ, այդուհանդերձ, տարաձայնություններ ուներ։ Ինչպես միշտ բնազդն իրեն չէր դավաճանել և նա ճիշտ էր կռահել, թե քամին որ կողմից էր փչելու։ Գավառապետ։ Իսկ մի օր էլ նախարար։ Ինքն անմիջապես հեռագրով կհայտնի մորը՝ Բույուկ խանումին, այս նորությունը, որը երջանիկ կլինի ու կհպարտանա իրենով։ Ի՞նչ հանդիսավորությամբ նա իրեն կընդունի։ Հանկարծ Ռըզա բեյը հիշեց Մարոյի գուշակությունը։ Հաղթական վերադարձը, որ նա տեսել էր սուրճի նստվածքի մեջ, ահա թե ինչ էր իրականում։ Այդ հայուհին գուշակության իսկական տաղանդ ուներ։ Թող օրհնված լինի այն օրը, երբ ինքը փրկեց նրան։

* * *

Մալաթիայից հարավ ընկած Բեյ լեռան երկու կողմերում արևելք-արևմուտք առանցքով շարված էին Անտիտավրոսի գորշ գագաթները: Ճամբարը գտնվում էր դրանց ստորոտում, փոշոտ մի հովտում: Այն հեռվից էր երևում խարույկների ծխի և ցածր վրանների շնորհիվ: Ճամբարին հասնելուց առաջ Վարդանն անցել էր հսկայական մի խարույկի մոտով, որն այրվող մսի գարշահոտություն էր տարածում: Անգործ մնացած ոստիկանների անտարբեր հայացքների ներքո քաղաքացիական անձինք այրում էին դիակները:

Կանաչ վրանները գցված էին պահակազորի համար: Գաղթականների ճամբարը բացօթյա էր: Նրանցից ոմանք արևից պատսպարվել էին հին կտորտանքից պատրաստված ծածկերի տակ: Ճամբարը բազմաթիվ հեկտարներ էր գրավում, և Վարդանը առանց պահակների ուշադրությունը իր վրա գրավելու մտավ դրա տարածքը: Նա շատ հուզված էր: Տարօրինակ լռություն էր տիրում այդ ահռելի տարածքում: Այն խախտում էին միայն ծծկեր երեխաների լացը և հազի նոպաները: Ջուգարաններ չկային, իսկ քամին չէր ցրում արտաթորանքի և կեղտոտ մարմինների հոտը:

Գրեթե ուղղագիծ կենտրոնական միջանցքը տանում էր դեպի ջրհորը, որը պահպանում էին ոստիկանները: Այդ միջանցքի երկու կողմերում տեղավորվել էին գաղթականների խմբերը, իսկ նրանց միջև մնացած ազատ տարածքում նեղ և ոլորապտույտ արահետներ էին գոյացել: Բացառությամբ մի քանի ծերունիների և պատանիների, տղամարդ չկար: Հիմնականում նիհար և հյուծված, գրեթե մերկ կանայք և երեխաներ էին: Ծարավից, սովից և ուժասպառությունից մարդկային կերպարանքը կորցրած դեմքերի վրա, որոնք այլակերպվել էին հիվանդություններից կամ վերքերից, հողմահարվել էին արևից ու քամուց, կարելի էր տեսնել համատարած հուսահատության արտահայտություն և այն մարդու հնազանդությունը, որը մահվանն էր սպասում որպես փրկության: Այն մտքից, որ Մարոն, Թովմասն ու Ազնիվ խանումը այդ խեղճ մարդկանց մեջ էին, Վարդանը գլխապտույտ ունեցավ, սարսափին մերձեցող մի զգացում:

Նա այդ մղձավանջային տեսարանին էր նայում և աչքերին չէր հավատում: Մինչ այդ տեղահանությունը նրա համար վերացական գաղափար էր և ոչ մի իրական կապ չուներ իր աչքերի առջև ծավալվող ողբերգական տեսարանի հետ: Ինքը, որ չէր կարողանում տեսնել հիվանդ մարդու առանց նրան բուժելու մղում զգալու, այժմ հայտնվել էր հազարավոր տառապող էակների մոտ և անկարող էր օգնել թեկուզ մեկին: Նրա վրդովմունքը անսահման էր: Ինչպե՞ս կարող էին իրենց քաղաքակիրթ համարող մարդիկ այդքան անմարդկային և այդքան դաժան գտնվել իրենց նմանների նկատմամբ:

Վարդանը սեղմեց ատամները և դանդաղորեն առաջ շարժվեց այն

հույսով, որ հայտնաբերելու էր իր հարազատներին, և վախենալով, որ նրանց կարող էր գտնել կիսամեռ վիճակում: Սկզբում ձի հեծած, հետո ոտքով, նա անցավ ճամբարը բոլոր ուղղություններով՝ դանդաղեցնելով ընթացքը, կամ կանգ առնելով յուրաքանչյուր խմբի մոտ: Ժամեր շարունակ նա ուսումնասիրում էր տառապանքից այլակերպված այդ էակներին, փորձելով գտնել ծանոթ դեմքեր: Երբեմն ինչ—որ ուրվագծից նրա սիրտը սկսում էր արագ բաբախել, սակայն ամեն անգամ հիասթափություն էր ապրում: Ժամանակն անցնելու հետ նա դադարեց պատրանքներ ունենալ: Նա հասկացավ, որ հենց առաջին պատահած ճամբարում իր ընտանիքին գտնելը հրաշք կլիներ: Եթե ինքը որևէ տեղեկություն ունենար, որևէ հետք: Այն տեղահանվածները, որոնց նա հարցնում էր՝ տեսե՞լ էին արդյոք Սվասից տեղահանվածների, իրեն էին նայում դատարկ աչքերով կամ էլ ուսերն էին թոթվում:

Վարդանի ուշադրությունը գրավեցին ինչ-որ ճիչեր: Հինգ ծեր կին հավաքվել էին գետնին պառկած մի էակի շուրջը: Կմախքի նմանվող մի կին բոլոր տեսակետներից նորմալ և առողջ երեխա էր ծննդաբերել, որը զարգացել էր՝ հյուծելով իր մոր մարմինը: Մայրն, իհարկե, կաթ չուներ և այժմ այդ անմեղ էակը պետք է սովի մատնվեր:

Ծեր կանայք մի քանի կաթիլ ջուր զոհաբերեցին երեխային մկրտելու համար: Նրանցից մեկը ծոցից հանեց փոքր մի սրվակ և օծեց երեխայի դեմքը, ձեռքերն ու ոտքերը:

— Սա բուժական ձեթ է հոդացավերի դեմ,– ասաց նա պահելով սրվակը,– սակայն Աստված ավելի վատ բաների է ականատես եղել...

Այդ ձայնը: Վարդանն այն լսել էր: Նա մոտեցավ և դիպավ կնոջ ուսին, որը վեր թռավ և շրջվեց: Նա կասկածամիտ տեսք ընդունեց, մնացած պառավները հեռացան, իսկ մայրը երեխային կրծքին սեղմեց: Նիհարած դեմքն անճանաչելի էր դարձել, սակայն աշխույժ և խելացի հայացքը անփոփոխ էին մնացել: Սա, իհարկե, Գալստյան այրին էր, այն բուժակը, որը Սվասում դեղատուն ուներ: Երբ Վարդանը թուրմեր էր գնում Ազնիվ խանումի համար, այրին կատակով պնդում էր, որ ինքը գալիս էր իր գաղտնիքները գողանալու:

— Ի՞նչ ես ուզում,– չոր տոնով հարցրեց նա թուրքերենով:

Վարդանը հայերենով պատասխանեց.

— Դուք ինձ մեղադրում էիք, որ ես վնասում էի ձեր առևտրին իմ քիմիական թույներով:

Ծեր կինը մի քանի վայրկյան ուսումնասիրեց զրուցակցի դեմքը, հետո բռնեց նրա ձեռքերը և սեղմեց իր այտերին: Նա լաց էր լինում:

— Վարդան Պալյան, Վարդան Պալյան: Սա երազ է...

— Կամաց,– պատասխանեց Վարդանը չորս կողմը նայելով:

— Ինչպե՞ս պատահեց...

— Կարևոր չէ։ Ասացեք, տեսե՞լ եք կնոջս, որդուս, զոքանչիս։ Նրանք այստե՞ղ են։

— Եթե իմանայիր, թե ինչ ենք մենք քաշել։ Խոսք չկա նկարագրելու համար...

— Իմ ընտանի՞քը,– պնդեց Վարդանը՝ նրան թեթևակիորեն թափ տալով։

— Զոքանչդ մահացավ հյուծվածությունից մի քանի օր առաջ։

Վարդանը, սարսափահար, գլուխը թափ տվեց։ Նա անհանգստացավ.

— Կինս և որդի՞ս։

— Այդ օրվանից ես նրանց չեմ տեսել։ Նրանց իր հետ տարավ մի տղամարդ։

— Տարե՞լ է, ինչպե՞ս։ Ուժո՞վ։ Այլ տեղահանվածների հե՞տ։

— Նրանք մենակ էին նրա հետ, իր արաբայի մեջ։ Կարծում եմ, որ նրանց փրկեց, որովհետև դու սպա ես։

— Ինչո՞ւ եք այդպես կարծում։

— Եթե ցանկանար տանել կնոջդ որպես սիրուհի, ապա չէր մտահոգվի երեխայի մասին։

Վարդանը թեթևացած շունչ քաշեց իմանալով, որ Մարոն ու Թովմասը ողջ էին և ազատվել էին քարավանի զրկանքներից։ Այն մարդը, որ նրանց օթևանել էր, միգուցե իր ծանոթ սպաների՞ց էր։

— Այդ մարդու անունն ի՞նչ էր։

— Չգիտեմ, մենք նրան միայն մեկ անգամ ենք տեսել։

— Համազգեստո՞վ էր։

— Ոչ։ Քաղաքացիական անձ էր։

— Որևէ մեկը գիտի՞, թե ով էր նա։

— Չեմ կարծում։

— Զեզնից բացի ես այլևս ոչ մի սվասցի չեմ տեսել։ Արմե՞նը։ Արաքսի՞ն։

— Մահացել են։ Բոլոր տղամարդկանց սպանել են։ Կան մի քանի սվասցիներ՝ կանայք, երեխաներ, որոնց երևի չես ճանաչում։ Մնացածները ճանապարհին մնացին, վաճառվեցին ստրկության կամ տեղափոխվեցին այլ շարասյուներ։ Սարսափելի էր...

Նա հանկարծ լռեց և կզակի շարժումով ցույց տվեց մի մարդու, որն արագ քայլերով մոտենում էր՝ չնայած իր ածդահա մարմնին։ Ֆեսը ծռած, նա թարս նայեց Վարդանին, որը նրան նույն ձևով նայեց։ Թույլ չտալով, որ նա խոսեր, Վարդանը վստահ ձայնով հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում։

— Այստեղ ես եմ հարցեր տակիս։ Անո՞ւնդ։

— Լեյտենանտ Շաքիր Իսմայել։

— Լրտեսը,– բացականչեց Պետրին՝ ձեռքը տանելով ատրճանակին։

Առանց երկար մտածելու Վարդանը հարձակվեց այդ մարդու վրա։ Նա գլխով հարվածեց նրա փորին և կառչեց նրա ձեռքից, որով նա ատրճանակն էր հանում պատյանից։ Ազատ ձեռքով Պետրին բռնեց Վարդանի պարանոցը։ Նրանք պայքարում էին։ Վարդանը հանկարծ այրոց զգաց ձախ ազդրում, և միևնույն ժամանակ կրակոցը նրան խլացրեց։ Ցավից կատաղելով՝ նա զգաց, որ իր ուժը կրկնապատկվում է և կարողացավ վայր գցել Պետրիին։ Վարդանն ընկավ նրա հետ և ծնկով հարված հասցրեց նրա աճուկներին։ Նրա պարանոցը սեղմող ձեռքը թուլացավ։ Մի ձեռքով Վարդանը անշարժացրել էր հակառակորդի ձեռքը, որով նա պահել էր ատրճանակը։ Մյուսով մի մեծ քար վերցրեց և հարվածեց Պետրիի քունքին։ Վերքից արյուն ցայտեց։ Վարդանը նորից հարվածեց։ Հակառակորդը կորցրեց գիտակցությունը։

Վարդանը չորս կողմը նայեց։ Կրակոցը ոչ մեկի ուշադրությունը չէր գրավել, և ոչ մի պահակ կարծես թե չէր նկատել կարճ մենամարտը։ Նա արագորեն ոտքի կանգնեց, ձին հեծավ և շարժվեց տեղահանվածների խմբերի մեջով կենտրոնական միջանցքին հասնելու համար։ Փախչե՞լ։ Նրա նժույգը հոգնած էր ամբողջ գիշերը ճամփա կտրելուց հետո։ Ձիավորները իրեն շատ շուտ կհասնեին, որոնց անկասկած կուղարկեին իր հետքերով։ Քաղա՞ք։ Ո՞վ կմտածեր իրեն այնտեղ փնտրելու մասին։ Այնտեղ նա հեշտությամբ կձուլվեր ամբոխի հետ։ Վարդանն անցավ մի խումբ ոստիկանների մոտով, որոնք ճան էին խաղում, նրանց ձեռքով արեց և քառատրոփ վարգեց։

Վերքը խորը չէր, սակայն ցավն այրում էր նրա ազդրը։ Մոտից արձակած գնդակը վնասել էր ազդրի մկանները, իսկ վառոդը այրել էր մաշկը վերքի շուրջ։ Վարդանը թաշկինակով մաքրեց արյունը։ Այդ մարդը ասաց «լրտես»։ Ի՞նչ էր դա նշանակում։ Վարդան Պալյանի՞ն էին փնտրում, թե այն մարդուն, որի անունը ինքը կրում էր հիմա։ Իբրահիմն ասաց, որ այդ փաստաթղթերը կեղծ էին։ Շաքիր Իսմայել անունով մարդ չկար։ Ուրեմն իր փախուստը հայտնի էր դարձել... Ի՞նչ էր պատահել Սվասում իր մեկնելուց հետո։ Իբրահի՞մ։ Հալի՞թ փաշա։ Միայն թե նրանք անախորժություններ չունենային իր պատճառով։

Իր բարեկամների կապակցությամբ անիմաստ և անպատասխան հարցեր տալու փոխարեն Վարդանը գնահատեց իրավիճակը։ Գոնե գիտեր, որ Մարոն ու Թովմասը ողջ էին, և որ ինչ-որ մեկը հոգում էր նրանց մասին։ Ինչո՞ւ և ի՞նչ պայմաններում։ Այդ պայմանները չէին կարող ավելի վատ լինել, քան գաղթականների քարավանը։

Ամենահրատապ խնդիրն իր անվտանգությունն էր։ Իր նոր անունը հայտնի էր, և ազատ տեղաշարժը անհնարին էր դառնում։ Իհարկե, նա կարող էր ճանապարհորդել սարերով և ամայի վայրերով

ձերբակալությունից խուսափելու համար, սակայն ի՞նչ կարող էր դա իրեն տալ: Մարոյին ու Թովմասին գտնելու համար ինքը, հակառակը, պետք է անցներ քաղաքներով ու գյուղերով, խառնվեր թուրքերի հետ, գնար նրանց տները, բացեր ականջներն ու աչքերը, հարցեր տար: Ի՞նչ էր անելու:

Երբ քաղաքին էր մոտենում, նրա գլուխը մի միտք եկավ: Ամերիկյան վարժարանը: Այնտեղ նրան կօգնեին կեղծ փաստաթղթեր ճարել կամ էլ գոնե կկարողանային թաքցնել մի քանի օր, այնքան, որքան պետք էր վերքը բուժելու համար, և որպեսզի ոստիկանները մոռանային իր մասին:

* * *

Երբ Պետրին ուշքի եկավ, նրան սկզբում թվաց, որ իր գլուխը սեղմում էին օղով: Հետո զգաց, որ ձախ կողմն ավելի էր ցավում: Նա ձեռքը տարավ քունքին և երբ հետ քաշեց՝ արնոտ էր: Դեռևս լրիվ ուշքի չեկած, նա գետնին նստեց և մտքերն ի մի բերեց: Լրտես Շաքիր Իսմայելը: Նրան էր նկարագրում հետախուզության թռուցիկը, որը Պետրին ստացել էր մի քանի ժամ առաջ: Նա դժվարությամբ ոտքի կանգնեց և բղավելով կանչեց ոստիկաններին: Բոլոր կողմերից, վազելով, մարդիկ եկան: Ճամբարը հյուսիսից հսկող ոստիկանները տեսել էին մի լեյտենանտի, որը կես ժամ առաջ շտապ լքել էր ճամբարը: Պետրին տասներկու ձիավոր ուղարկեց նրան փնտրելու, հիսուն լիվր խոստանալով այն ոստիկանին, որը նրան կբռներ, ցանկալի էր՝ ողջ:

Պետրիին ստիպված էր սպասել, հույս ունենալով, որ մյուսները ավելի հաջողակ կլինեին, քան ինքը: Նա կատաղած էր: Չէ՞ որ նա այստեղ էր, հենց իր դիմաց: Եթե նրան բռներ, ապա իշխանությունները իրեն կհարգեին և բացի դրանից նյութական պարգևատրություն կտային: Նա հանկարծ հիշեց, որ լրտեսը խոսում էր մի պառավի հետ: Նա դեռևս այդտեղ էր, մի կնոջ կողքին, որը կրծքին էր սեղմել երեխային: Նա մոտեցավ ու մատը տնկեց ծեր կնոջ վրա.

— Ո՞վ էր այն մարդը, որի հետ դու խոսում էիր, երբ ես մոտեցա:

— Զինվոր,– պատասխանեց Գալստյան այրին:

— Նրա անունը Շաքիր Իսմայե՞լ է:

Կինը մի պահ տատանվեց.

— Ինչպե՞ս ասացիք:

— Ի՞նչ էր ուզում նա:

— Որ ես իրեն տամ դրամն ու զարդերը: Ես ասացի, որ դրանք արդեն գողացել են:

— Ստում ես, կախարդ պառավ: Նա քեզ պես հայ էր:

Պետրին նրան ապտակեց, և այրին գետնին ընկավ։ Նա նայեց ուղիղ նրա աչքերին։ Նրա ստորին շրթունքից արյուն էր հոսում։ Պետրին պնդեց.

— Ակնհայտ է, որ դու նրան ճանաչում էիր։ Ի՞նչ էր նա ուզում։

— Ես ասացի՝ դրամս։

Պետրին նորից նրան հարվածեց։ Այս անգամ այրին նկատեց, որ նա հարվածելու էր և հարվածն ընդունեց առանց վայր ընկնելու։

— Դու կխոսես։ Հենց հիմա, առանց անախորժությունների սպասելու։

Ծեր կինը քմծիծաղ տվեց.

— Ես կորցնելու բան չունեմ։ Դու կարող ես ինձ սպանել, և դա ազատագրում կլինի ինձ համար։ Դու ոչինչ չես իմանա։

Պետրին կատաղությունից փրփրել էր, նրա գլխի վերքը իրեն զգալ էր տալիս։ Նա բավականաչափ լավ գիտեր մարդկանց և հասկանում էր, որ այս պառավը չէր խոսելու նույնիսկ տանջանքների ենթարկվելով։ Այդ ժամանակ նա, առանց ուշադրություն դարձնելու մոր թախանձանքներին, ծննդաբերած կնոջ ձեռքիցխլեց նրա երեխային և ոտքից բռնելով գլխիվայր կախ տվեց։ Նորածինը լացում էր։ Պետրին դանակը հանեց և հպեց ցնցվող երեխայի մարմնին։ Մայրը, ձեռքերը պարզած աղերսում էր, որ երեխային իրեն վերադարձներ։ Գալստյան այրին այլայլվեց։ Պետրին հաղթանակած ծիծաղեց.

— Դե ասա, ի՞նչ էր նա ուզում։

— Տեղեկություններ իր ընտանիքի մասին։

— Ե՞վ...

— Նրանք բոլորը մահացել են։

— Էլ ի՞նչ գիտես։

— Ոչինչ։

— Որտեղի՞ց էր գալի։ Ո՞ւր էր գնում։

— Չգիտեմ։ Ես ամեն ինչ ասացի, երդվում եմ։

Պետրին ձեռքը բաց թողեց, և երեխան ընկավ մոր վրա, որը նրան ճիշտ պահին բռնեց։

Նա հանեց ատրճանակը ու կրակեց այրու կրծքին, որը վայր ընկավ առանց ձայն հանելու։

— Ահա և դու ազատվեցիր,– բացականչեց նա հեռանալուց առաջ։

Մեկ ժամ անց պարեկների խմբի ղեկավար ենթասպան եկավ Պետրիի վրանը իր զեկույցը ներկայացնելու։

— Ոչինչ։ Նույնիսկ հետքեր չկան։

— Անշնորհք,— ոռնաց Պետրին և բռունցքի հարվածով ենթասպային գետին տապալեց վրանի առաջ։

Նա իր ձին հեծավ և շտապ մեկնեց գավսաապետի պալատը։

* * *

Ռըզա բեյը, ծնկներին քարտեզը փռած, վերադասի համար ամփոփում էր ընթացող օպերացիան։ Բոլոր շարասյուները դեպի Հալեպ և Ուռհա էին գնում։

— Իսկ այնտեղի՞ց,— հարցրեց Գանի բեյը։

— Ռաս-էլ-Ային, էլ Ռաքքա, Դեյր-էր-Զոր։ Վերջին կայանը անապատի ավազներն են և Եփրատի ջրերը։

— Լավ է, լավ է,- ասաց Գանի բեյը՝ հարմար տեղավորվելով բազմոցի վրա։

Մտավ երիտասարդ ծառան և խոնարհվեց տիրոջ առջև։

— Բեյ էֆենդի, Պետրի անունով մի մարդ ուզում է ձեզ տեսնել։ Ասում է, որ կարևոր գործով է եկել։

Գանի բեյը հարցրեց Ռըզա բեյից, որը բացատրեց.

— Իմ օգնականն է։

— Ներս թող,— ասաց Գանի բեյը պատանուն։

Պետրիի այդ ներխուժումը դուր չեկավ Ռըզա բեյին։ Ի՞նչ էր պատահել։ Գանին թեքվեց դեպի Ռըզա բեյը։

— Ձեր օգնակա՞նը... Եթե ես չեմ սխալվում, այդ մարդը շատ գործունյա է եղել Աբդուլ Համիդի օրոք, ճիշտ չէ՞։

— Այո, սակայն նա քավում է մեղքերը՝ ծառայելով Իթթիհատի նպատակներին։ Նա ոչնչի առաջ չի նահանջում, երբ պետք է հրաման կատարել։ Նա իմ բռում է, և ես երաշխավորում եմ նրա նվիրվածությունը։

— Ձեր վստահությունն ինձ բավարարում է,- պատասխանեց Գանի բեյը հասկացող ժպիտով։- Ո՞վ կարող է հպարտանալ, որ երիտասարդ տարիքում մեղքեր չի գործել։

Հենց այդ պահին Պետրին սենյակ մտավ։ Շփոթվելով՝ նա զգաստ կանգնեց տղամարդկանց դիմաց։ Ո՞ւմ պետք է դիմեր առաջինը։

— Ի՞նչ կա,- հարցրեց Ռըզան անհամբերությամբ։

Պետրին մեկ շնչով ասաց.

— Ես տեսել եմ այն լրտեսին, որին փնտրում են։

Ռըզան չէր հասկանում, թե ինչի մասին էր նա խոսում, սակայն Գանի բեյը գունատվեց ու պայթեց.

— Ի՞նչ։ Այստե՞ղ։ Մալաթիայո՞ւմ։ Ես կարծում էի, որ նա Ռուսաստան է ուղևորվում կամ մայրաքաղաք։ Նա՞ էր, վստա՞հ ես։

— Նա լեյտենանտի համազգեստով էր և ասաց, որ անունը Շաքիր Իսմայել է։ Նույն անունը տպված է հետախուզության թռուցիկում։ Ես փորձեցի նրան ձերբակալել։ Տեսեք։

Նա գլուխը թեքեց, որպեսզի ցույց տար իր վերքը։ Գանի բեյի խնդրանքով Պետրին պատմեց Վարդանի հետ իր մենամարտի մասին։ Նկարագրեց նաև նրա արտաքինը։

Մանրամասների առատության հետ մեկտեղ Գանի բեյի մտքում պարզորոշ ուրվագծվում էր այն մարդու կերպարը, որին նա ուզում էր մահապատժի ենթարկել։ Որքան էր հիմա ափսոսում, որ թույլ չէր տվել Մուսթաֆային ոչնչացնել բանտարկյալին իր աչքի առաջ։ Նա լսել էր այդ դավաճան Իբրահիմի խորհուրդը։ Այդ հայը համակիրներ ուներ բանակում։ Ուստի Թալեաթ փաշան իրավացի էր, որ կասկածում էր բանակի բարձրաստիճան սպաներին հեղաշրջում նախապատրաստելու մեջ։ Պալյան... Ինքը կարծում էր, որ նա անմեղ էր, որ ընդամենը պոտենցիալ վտանգ էր ներկայացնում, ինչպես մնացած աչքի ընկնող հայերը, և որ այդ վտանգը պետք էր վերացնել պարզապես զգուշությունից։ Ինչպիսի սխալ։ Նա անկասկած կապեր կունենար ապստամբների, բանակի անհնազանդ տարրերի հետ, միգուցե ծառայում էր թշնամուն։ Եվ նման մարդը ազատության մեջ էր։

— Ափսոս, որ հնարավորություն ես տվել նրան փախչելու,— հայտարարեց Գանի բեյը կատաղի տոնով։- Ես թանկ կվճարեի նրա գլուխը ստանալու համար։ Ի՞նչ էր նա անում տեղահանվածների ճամբարում։

— Իր ընտանիքն էր փնտրում։

— Բնականաբար,- ասաց բարձրաստիճան պաշտոնյան մտածկոտ տեսքով։- Նրանք այնտե՞ղ էին։

— Ոչ։ Կարծես թե բոլորը մահացել են։

— Դու շրջանի բոլոր ոստիկանական անցակետերին տագնապ հայտարարե՞լ ես։

— Այո,- պատասխանեց Պետրին։

Գանին դժվարությամբ ոտքի կանգնեց՝ հենվելով իր դիմաց դրված ցածր սեղանին ու սկսեց ճեմել սենյակով գլորվող քայլվածքով։ Նա ձեռքերն էր շփում և խոսում էր ինքն իր հետ։

— Բանակում, անկասկած, նրա լուսանկարը կա։ Ես հայտարարություն տպել կտամ, որը կտարածվի կայսրությունով մեկ։ Հարկավոր է, որ ձեռքի տակ եղած բոլոր տղամարդիկ նետվեն նրա

հետևից։ Ես ուզում եմ, որ հետախուզվեն բոլոր լեռները, հարցաքննվեն բոլոր նրանք, ովքեր երթևեկում են ճանապարհներով, որ խուզարկվեն շրջանի նույնիսկ ամենափոքր գյուղերի բոլոր տները։

Նա կանգ առավ Պետրիի առջև ու հրամայեց.

— Գնա ու նոր գավառապետին ասա, որ վազելով գա այստեղ։

Ռըզա բեյը վեր կացավ հրաժեշտ տալու մտադրությամբ.

— Դուք կարծես թե չափազանց վրդովված եք, Գանի բեյ։ Կարո՞ղ եմ ձեզ օգնել։

Բարկությունից Գանի բեյը մոռացել էր Ռըզայի ներկայության մասին։ Նա մի պահ զարմանքով նայեց նրան։

— Այո, դուք կհետևեք, որ խուզարկությունները չդադարեն մինչև նա գտնվի։

— Ինձ թվաց, որ խոսքը լրտեսի մասին է։

— Լրտես, ապստամբ, ես նույնիսկ չգիտեմ։ Դա մի հայ է, որին իմ հրամանով մահապատժի էին դատապարտել Սվասում։ Պալյան։ Վարդան Պալյան։

Մարոյի ամուսինը։ Ռըզայի զարմանքն արտացոլվեց նրա դեմքին։

— Դուք նրան ճանաչո՞ւմ եք,– հարցրեց Գանին հետաքրքրված։

— Ոչ,– պատասխանեց Ռըզան ինքնակառավարումը վերագտնելով։— Սակայն այս անվան մեջ ինչ-որ ծանոթ բան կա։

— Հնարավոր է։ Նա պատգամավոր է եղել Կոստանդնուպոլսում Իթթիհատի առաջին կառավարության ժամանակ, իսկ հետագայում շատ է զրպարտել կայսրությանը օտար մամուլի էջերում։

Ռըզա բեյը ձևացավ, թե մտածում էր։

— Պալյան... Հա՛, հիշեցի։ Ժամանակին ես աշխատող եմ ունեցել այդ ազգանունով։

— Դա անկասկած նույն մարդը չէ,– ասաց Գանի բեյը, որը հավատաց իր զրուցակցի ստին։– Այն Պալյանը, որին մենք փնտրում ենք, մտավորական է։

— Վտանգավո՞ր է։

— Ես չէի մտածում, որ վտանգավոր է, սակայն այժմ պետք է արձանագրեմ, որ վտանգավոր է։ Ա՜խ, եթե նրա ընտանիքը մեր ձեռքում լիներ, որպես խայծ։

Ռըզա բեյը թուքը կուլ տվեց և ասաց.

— Ես մեծ հատուցում կնշանակեմ այդ մարդուն բռնելու համար։ Հանգստացեք, Գանի բեյ, նա երկար չի մնա ազատության մեջ։

Միմյանցից բաժանվելով՝ նրանք պայմանավորվեցին հանդիպել Այնթապում մի տասն օր անց։

Ռըզան այլևս իրեն անվտանգության մեջ չէր զգում Մալաթիայում։ Մարոյի ամուսինը փնտրում էր կնոջը և որդուն։ Միգուցե նա հետքեր գտներ, որոնք կբերեին Ռըզայի մոտ։ Այլևս խոսք չէր կարող լինել Ուռհա գնալու մասին։ Նա շուտափույթ պետք է վերադառնար իր կալվածքը՝ Այնթապ։ Պետք էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի Մարոն չիմանար, որ ամուսինը ողջ էր և մոտակայքում էր։ Ուրեմն նա ստել էր ասելով, որ նա կռվում էր ճակատում։ Նրա կողմից ճարպկության վկայություն էր որպես մահվան դատապարտվածի կին չներկայանալը։ Նրա խելքի ևս մեկ վկայություն։ Ռըզան թույլ չէր տա, որ իրենից խլեին նրան։

* * *

Նեղ փողոցների լաբիրինթոսում մոլորվելուց հետո Վարդանն ի վերջո դուրս եկավ բարդիներով երիզված մի լայն փողոց և գտավ ամերիկյան վարժարանը։ Ցանկապատի առջև երկու ժամապահ հսկում էին մուտքը։ Վարժարանի բակում պիստակի ծառի ստվերում սրածայր սաղավարտներով զինվորները նստած խմում էին։ Ժամապահներից մեկը տեղեկացրեց, որ ամերիկացիները հեռացել էին Ալեքսանդրետ, իսկ շենքը զբաղեցրել էին գերմանացի հրետանավորները։

Հիասթափվելով, քանի որ ինքը հույս ուներ ամերիկացիներից օգնություն ստանալ, Վարդանը շարունակեց ճանապարհը։ Քիչ այն կողմ Վարդանը տեսավ շվեյցարական բողոքական միսիայի պատին փակցված պղնձե ցուցանակը։ Գորշ քարից կառուցված ուղղանկյուն երկհարկանի շենքը դպրոցի էր նման՝ դեպի բակ բացվող լուսամուտներով։ Վարդանը այլ ելք չուներ, քան փորձ անել դիմելու շվեյցարացի միսիոներների օգնությանը։ Նա ձիուց վայր իջավ և, ոտքը գետնին դնելով, ցավից ատամները կրճտացրեց։ Նա մի քանի անգամ քաշեց զանգի շղթան։

Վերջապես տան շեմին հայտնվեց սպիտակ հագուստով մի կին։ Դա բարձրահասակ եվրոպացի կին էր, լայն կոնքով և մեծ կրծքով։ Նա դարպասին մոտեցավ զինվորականի քայլվածքով։ Մոտ քառասուն տարեկան էր, կոպիտ և տգեղ դեմքով, մազերը շեկ էին, իսկ մանր երկնագույն աչքերը լի էին վճռականությամբ։ Նա ծանր էր շնչում, և դրանից նրա կուրծքը բարձրանում և իջնում էր, հետն էլ վզից կախված ոսկեզօծ խաչը։ Նա խիստ հայացք նետեց այցելուի վրա։

— Ի՞նչ եք ուզում,– հարցրեց նա վատ թուրքերենով։– Մենք ամեն ինչ օրենքի սահմաններում ենք անում։

— Ես այն չեմ, ինչ դուք կարծում եք,– պատասխանեց Վարդանը ֆրանսերեն։– Ես կուզենայի խոսել միսիայի ղեկավարի հետ։

Կինը մի պահ զարմացավ, հետո շարունակեց ֆրանսերենով.

— Միսիայի ղեկավարը ես եմ։ Դուք ո՞վ եք և ի՞նչ եք ուզում։

— Կարո՞ղ ենք խոսել ավելի ապահով վայրում։

Նա հաճախակի անհանգիստ հայացքներ էր գցում չորս կողմը, և միսիոներուհին զգաց, որ նա նյարդայնանում էր։ Նա նկատեց վերքը, որը Վարդանը հնարավորինս փորձում էր թաքցնել ձեռքով և հարցրեց շփոթված.

— Դուք թուրք չեք, չէ՞։

— Ես հայ եմ։

Նա չէր հավատում.

— Փաստաթղթեր ունե՞ք։

— Դրանք կեղծ են։

— Ձեզ փնտրո՞ւմ են։

Վարդանը հաստատեց։ Կինը նրան ոտքից գլուխ զննեց, հետո նայեց ուղիղ աչքերի մեջ։ Նրան թվաց, որ տղամարդը բաց դեմք ուներ և անկեղծ հայացք։ Չէր կարող պատահել, որ դա օսմանյան իշխանությունների կազմակերպած ծուղակը լիներ։ Համազգեստով մարդ նրանք չէին ուղարկի։ Մեկ պահ վարանելուց հետո միսիոներուհին չորս կողմը նայեց համոզվելու համար, որ ոչ ոք չէր նկատել տղամարդու հայտնվելը, և բացեց դարպասը։

— Ձեր ձին ախոռը տարեք։ Արա՛գ։

Վարդանը, Յըլդըզի սանձից բռնած, հետևում էր կնոջը։ Միսիոներուհին արագ էր քայլում, ցանկանալով այցելուին արագ հեռացնել ինչպես իր սաների, այնպես էլ հնարավոր անցորդների տեսադաշտից։ Համազգեստը կարող էր վախեցնել երեխաներին։ Վարդանը դժվարությամբ էր նրան հետևում, քանի որ յուրաքանչյուր քայլը ուժգին ցավ էր պատճառում նրան։

Ախոռում, որը վաղուց չէր մաքրվել, միայն մեկ ծեր ձի կար։

— Մնացած ձիերին բանակը բռնագրավել է,– բացատրեց կինը, ցույց տալով ազատ մի մսուրք, ուր Վարդանը կանգնեցրեց իր ձիուն։

Կինը նրան էր սպասում դռան բացվածքում, քանի որ օդն ախոռում հեղձուցիչ էր։ Նա ցույց տվեց համազգեստի պատռվածքը ազդրի վրա.

— Դուք վիրավո՞ր եք։

— Մակերեսային վերք է, վտանգավոր չէ։

— Իմ անունն է Դեբորա Լանգլե,– ասաց նա ձեռքը մեկնելով Վարդանին։

Վարդանը կգերադասեր թաքցնել իր անունը, սակայն պարտավոր էր տեղեկացնել միսիոներուհուն։

— Վարդան Պալյան, Սվասից։

— Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար։

— Ես փնտրում եմ կնոջս ու որդուս, որոնք գաղթականների քարավանում էին։

Կինը տխրեց և պատասխանեց կարեկցանքով.

— Վստահ եղեք, որ ես ձեզ կարեկցում եմ, պարոն Պալյան։

— Այստեղ Սվասից մարդիկ կա՞ն։

Նա մտածեց ճակատը կնճռոտելով.

— Դժվար է ասել։ Մեզ մոտ օթևանած որբերը տարբեր վայրերից են։ Շատերը փոքր են իրենց ծննդավայրի անվանումը իմանալու համար։

Վարդանը հակիրճ ներկայացրեց իր պատմությունը։ Դեբորա Լանգլեն չգիտեր այն մարդուն, որն իր հետ էր տարել Մարոյին ու Թովմասին։

— Ով ասես կարող էր լինել։

Նա հպվեց Վարդանի ձեռքին և կարեկցանքով ասաց.

— Դա ամենալավ ելքն է նրանց համար։

— Հեշտ է ասել,– արձագանքեց նա ջղային տոնով։

— Ոչ,— պատասխանեց կինը մեղմ տոնով,— ամեն ինչ գերադասելի է քարավաններից։ Երջանկություն է, որ որոշ մահմեդական ընտանիքներ ընդունում են տեղահանվածներին, հատկապես երեխաներին։

— Ընդունո՞ւմ են,— բացականչեց Վարդանը։– Այս առավոտ ես տեսա երեխաների, որոնց պետք է վաճառեին անասունի պես։

— Դա սարսափելի է, ես գիտեմ։ Բայց մտածեք, որ նրանք գոնե կվերապրեն։ Շվեյցարական, ամերիկյան և գերմանական միսիոներները օթևան են տալիս ում կարող են, սակայն նրանք ի վիճակի չեն ապաստան տալ բոլորին։ Մեր միսիայում շատ հայ երեխաներ կան։ Պատերազմի պատճառով դրամը Եվրոպայից դժվարությամբ է տեղ հասնում, և շատ հաճախ ամենակենսական բաների պակասն ենք զգում։ Եվ ամեն րոպե ոստիկանները կարող են գալ և տանել մեր երեխաներին։ Գավառապետ Ալի բեյը մեզ հովանավորում է, սակայն լուրեր են շրջում, որ նա պաշտոնանկ է արվելու։ Ապագան ինձ մտահոգում է։

Վարդանը հիշեց սայլերում նստած երեխաներին, ճամբարներում մեռնող այն խեղճ էակներին, կախաղան հանված Սվասի տղամարդկանց։ Նույն իրադարձությունները պետք է որ կրկնվեին Անատոլիայով մեկ։ Հայաստանը հոգեվարքի մեջ էր։

— Աշխարհը գիտի՞, թե ինչ է կատարվում այստեղ։

— Փոքրիշատե։ Ավելի քիչ, քան շատ։ Ինձ թվում է՝ մի քանի արձագանք է եղել թերթերում։ Հաղորդակցությունը դժվարացել է։

Եվրոպացիների ողջ ուշադրությունը կլանել է պատերազմը։

— Ի՞նչ են անում դիվանագետները։

— Շվեյցարիայի, ինչպես նաև այլ երկրների դեսպանները դիմում են Կոստանդնուպոլսի կառավարությանը։ Սակայն օսմանցիները խոսում են մարդասիրական պայմաններում իրականացվող կազմակերպված տեղաշարժերի մասին։ Ծայրահեղ դեպքում ընդունում են, որ տեղի են ունեցել զանգվածային բռնությունների որոշ դեպքեր, որոնք արագ ճնշվել են ոստիկանության կողմից։

— Դա լկտի սուտ է։

— Իհարկե... Եթե դուք լսեիք այն սարսափելի պատմությունները, որ ինձ պատմել են տեղահանվածները։ Ես լսել եմ նաև ճանապարհորդների վկայությունները, հատկապես գերմանացի սպաների, որոնք սարսափած էին այն ամենից, ինչ իրենք տեսել էին։ Մինչդեռ զինվորականները, որքան գիտեմ, իրենց գործի բերումով այդքան էլ զգացմունքային չեն։

— Անհրաժեշտ է, որ աշխարհն իմանա այդ ամենի մասին, պետք է դիմել մարդկանց խղճին։ Նրանք կստիպեն իրենց կառավարություններին միջոցներ ձեռնարկել։ Պետք է...

Միսիոներուհին նրան ընդհատեց անզոր շարժումով.

— Այո, պետք է, սակայն ինչպե՞ս։

— Դա միգուցե կարելի կլիներ կազմակերպել, սակայն ես ձեր կարիքը կունենամ։ Կարո՞ղ եք արդյոք միսիոներների կամ հյուպատոսության միջոցով երկրից դուրս նամակներ ու փաստաթղթեր ուղարկել։

Դեբորա Լանգլեն հետ ու առաջ էր քայլում իրեն ձեռքով հով անելով։ Նա ընդհանուր առմամբ պատկերացնում էր, թե ինչ էր ասում այդ մարդը։ Չէր կասկածում, որ կարելի էր գտնել վստահելի մարդկանց, որոնք, անտեսելով վտանգը, կհամաձայնեին տանել այս մարդու նամակները։ Եթե նա տատանվում էր, ապա միայն իր մանկատան համար, իր հոգածությանը հանձնված փոքրիկ երեխաների անվտանգության համար։ Սակայն, մյուս կողմից էլ, ինչպե՞ս կարելի էր անգործության մատնվել՝ տեսնելով այն անմարդկային հանցագործությունները, որոնք իրականացվում էին Փոքր Ասիայում։ Նա անշարժ կանգնեց Վարդանի առաջ.

— Իրականում ի՞նչ եք պատրաստվում անել։

— Ես քաղաքական լրագրող եմ։ Օգտագործելով այն տեղեկություններդ որ դուք ինձ կհաղորդեք, և այն ամենը, ինչ ինքս եմ տեսել, ես ի վիճակի եմ մի քանի բացահայտող հոդվածներ գրել, որոնք կհրապարակվեն արտասահմանում։ Նաև մանրամասն զեկույցներ կուղարկեմ ազդեցիկ մարդկանց Եվրոպայում և Ամերիկայում։

—– Համաձայն եմ։

— Կկարողանայի՞ արդյոք հարցուփորձ անել երեխաներին։

— Առանց համազգեստի, որից նրանք կվախենան։ Ես ձեզ կտամ մեր պարտիզպանի հագուստը։ Սակայն դուք չպետք է պնդեք։ Շատերը շոկային վիճակում են, ոմանք չեն կարող կամ չեն ուզում խոսել։ Նրանց բոլորի աչքերի առաջ դեռևս այն դաժանություններն են, որոնց իրենք ականատես են եղել։

Վարդանը լարված հայացքով նայում էր դռան պոկված ծխնուն։ Ի՞նչ հայացք հիմա ուներ Թովմասը։ Միսիոներուհին մեղմ ձայնով ասաց.

— Քանի՞ տարեկան է ձեր որդին։

— Վեց տարեկան։

— Նա մոր հետ է, և դա արդեն մեծ բան է։ Պետք է պահպանել հավատն առ աստվածային նախախնամություն։

— Ես նրանց կգտնեմ,- ասաց Վարդանը վճռական տոնով։

Միսիոներուհին խղճաց նրան և չարձագանքեց։ Վարդանը կռահեց դա և ավելացրեց.

— Եթե պետք լինի, կխուզարկեմ Անատոլիայի յուրաքանչյուր տունը։

— Իրատես եղեք, պարոն,— ասաց նա։— Ձեզ համար վերապրելն արդեն բավական դժվար կլինի։ Ձեզ փնտրում են, և դուք վիրավոր եք։ Դժբախտաբար Մալաթիայում ես չգիտեմ որևէ մեկին, որը կկարողանար ձեզ համար նոր փաստաթղթեր ճարել։ Ինչ վերաբերում է ձեզ պատսպարելուն, ապա ես մի քանի օրից ավել չեմ կարող ձեզ թաքցնել առանց վտանգելու իմ որբանոցը։

— Երեք օր, ավելին չեմ պահանջում։ Բնականաբար ես կվճարեմ իմ կեցության համար։

— Դուք ստիպված կլինեք բավարարվել ախոռով։ Տան յուրաքանչյուր անկյունը զբաղեցրել են երեխաները, և ես իմ գրասենյակը տեղափոխել եմ մուտքի նախասրահը։

—- Ինձ ախոռն էլ բավական է, օրիորդ Լանգլե։ Կցանամ, որ ինձ չնկատեն։ Ես ձեզնից շատ շնորհակալ եմ և...

Կինը նրան ընդմիջեց հրամայական շարժումով, չցանկանալով շնորհակալության խոսքեր լսել։ Դեբորա Լանգլեն չէր սիրում, երբ ուրիշները պարտավորված էին զգում իր հանդեպ, ինչպես նաև չէր սիրում, երբ իրեն գովում էին նվիրվածության և գթասրտության համար։ Նրան թվում էր, որ հակառակը, ինքը երբեք չէր անում այնքան, որքան պետք էր անել, և որ ինքը չէր կարողանում լինել իր կոչման բարձրության վրա։ Սակայն արդեն տասներկու տարի էր, ինչ իրեն անմնացորդ նվիրել էր դժբախտների վիճակը թեթևացնելու և Հիսուսի հավատքը տարածելու գործին։

Վարդանը հանեց իր քսակը և չորս ոսկի տվեց միսիոներուհուն։

— Սա չափից ավելի շատ է,- դիմադրեց նա։

— Ինքներդ էիք ասում, որ ամենակենսական բաների կարիքն ունեք։ Եթե ես կարողանայի ավելին անել... Դուք չգիտե՞ք, դոկտոր Բլեյկը շարունակո՞ւմ է ղեկավարել Կեսարիայի ամերիկյան վարժարանը։

— Կարծեմ։

— Հաստատությունը չի՞ փակվել։

— Ըստ վերջին տեղեկությունների, ոչ։

Դոկտոր Բլեյկը եղել էր Վարդանի մաթեմատիկայի դասախոսը «Ռոբերտ քոլեջում», և մինչև վերջերս նրանք նամակագրական կապ էին պահպանում։ Նա շատ ճարպիկ մարդ էր, որը կապեր ուներ բոլոր միջավայրերում։ Նա կկարողանար կեղծ փաստաթղթեր ճարել, որոնց շնորհիվ Վարդանը կճանապարհորդեր առանց խոչընդոտների։ Կեսարիան գտնվում էր ավելի քան երեք հարյուր հիսուն կիլոմետրի վրա, և Վարդանը ստիպված կլիներ հեռանալ այն շրջանից, ուր անկասկած գտնվում էին նրա կինն ու որդին, սակայն այլ ելք չկար։

Դեբորա Լանգլեն նրան հագուստ բերեց, թեյ, թխվածք և վիրակապ վերքի համար։

— Երբ պատրաստ կլինեք, եկեք ինձ մոտ։ Ես ձեզ կներկայացնեմ երեխաներին։

Վարդանը համազգեստը հանեց։ Գնդակը վեց սանտիմետր երկարությամբ վերք էր բացել, որի եզրերը հեռացել էին միմյանցից։ Բարեբախտաբար վնասվել էին միայն մազանոթները։ Նա վերքը ջրով լվաց և մշակեց յոդով։ Նրա ուղեղն այլ բանով էր զբաղված։ Ո՞ւմ էր ինքը գրելու։ Նախ՝ իր եղբայր Նուբարին և քեռորդի Տիրանին, որպեսզի նրանք տեղյակ լինեին իրավիճակին։ Միգուցե նրանք լուր ունեին Մարոյից։ Եթե նա հնարավորություն ունենար, ապա նա անպայման ապաստան կփնտրեր Մեսրոպ քեռու մոտ Կոստանդնուպոլսում։ Համենայն դեպս նրան էլ նամակ կգրի։

Անատոլիայում հայերի ճակատագրի վերաբերյալ իր զեկույցը Վարդանը մտադիր էր հասցեագրել լորդ Բրյուսին՝ բրիտանական քաղաքական գործչին, որը շատ զգայուն էր անարդարության նկատմամբ և տեղյակ էր Հայկական հարցին, և իր հին ծանոթ Անատոլ Ֆրանսին։ Այս երկու մարդիկ լայն լսարան ունեին և կկարողանային արթնացնել միջազգային հասարակական կարծիքը։ Մեկ այլ օրինակ կուղարկեր իր քեռորդի Պարգևին, որն ապրում էր Նյու Յորքում։ Արդեն նրա և Միացյալ Նահանգներում ապրող հայերի խնդիրն էր, որ նախագահ Վիլսոնը ծանոթանար այդ զեկույցի հետ։ Միայն ամերիկյան կառավարությունը կարող էր ճնշումներ գործադրել Օսմանյան կայսրության և նրա դաշնակից Գերմանիայի կայզերի վրա ինչ-որ հաջողության հասնելու հույսով։

Իր նամակները կունենայի՞ն արդյոք վճռական նշանակություն։ Նորությունները Անատոլիայից արդեն դուրս էին թափանցում դիվանագետների և միսիոներների միջոցով։ Իր ձայնը կմիանա՞ր

արդյոք այլոց ձայներին, միգուցե իրեն ականջ չէին դնի, ինչպես չէին լսում ուրիշներին, սակայն ինքը գոնե իր պարտքը կկատարեր։ Պարսկաստանի, Եգիպտոսի, Եվրոպայի, Միացյալ Նահանգների հայկական համայնքները նույնպես պետք է գործուն մասնակցություն ունենային։ Ինչպես նաև հայրենակիցները Արևելյան Հայաստանում։ Միայն թե իրենց ջանքերը արագ արդյունք տային։

Գրիչը ձեռքն առնելու միտքը ոգևորում էր Վարդանին։ Նրա գլխում ձև էին առնում սուր ձևակերպումներ։ Նա արդեն պատկերացնում էր այն հոդվածները, որ պետք է գրեր Նյու Յորքի, Ժնևի, Փարիզի և Լոնդոնի թերթերի համար, որոնց հետ ինքը համագործակցել էր անցյալում։

Գրավոր խոսքը կարող էր երբեմն նույնքան գործուն զենք լինել, որքան հրանոթները։ Ներքին գործերի նախարարը իրավացի էր, երբ ուզում էր իրեն ոչնչացնել։ Նրան դա չէր հաջողվել, և նա դեռ կլսեր Վարդան Պալյանի անունը։

Յըլդըզը խրխնջաց և ոտքը գետնին խփեց։ Վարդանը զգուշորեն դռանը մոտեցավ։ Բազմաթիվ հեծյալներ արագ ընթացքով անցնում էին փողոցով։ Հագուստներից դատելով՝ արաբներ էին։ Նա արագ գլուխը թաքցրեց։

Ըրզա բեյն իր բաց կառքը փոխարինել էր փակ կառքով։ Նա ջղային էր թվում և շտապում էր հեռանալ քաղաքից։ Հանդարտվելու համար նա անընդհատ խաղում էր իր թզբեհով։ Նրա սովորաբար ջերմ հայացքը սառն էր և չոր։ Մեկնելու պահին նա կտրուկ էր պատասխանել իր ուղևորին, երբ վերջինս հարցրել էր ճանապարհորդության տևողության մասին։ Այդ պահվածքը նրան հատուկ չէր և տագնապ էր հարուցել Մարոյի սրտում։ Ըրզա բեյը նստած էր Մարոյին դեմ հանդիման, նրանց ծնկները համարյա թե հպվում էին, և Մարոյի տեսադաշտից նա հեռանում էր միայն այն ժամանակ, երբ կինն իջեցնում էր աչքերը։ Մարոն կիսաբաց վարագույրից նայեց, թե ինչպես էին իրար հաջորդում տների ճակատները։ Խիստ ճարտարապետությամբ գորշ շենքից դուրս եկավ սպիտակ հագուստով մի կին։ Բակում լուռ խաղում էին երեխաները։ Մարոյի սիրտը կծկվեց, երբ տեսավ խաչը պղնձե ցուցանակի վրա։ Շվեյցարական բողոքական միսիա էր։ Այդ հանգրվանի տեսիլքը ցրվեց։ Մարոյին և իր որդուն կառքը տանում էր դեպի անհայտություն։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 8

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 12:09-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 7 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 9 ►

1915 թ. հուլիսի վերջին հայերի վիճակը Փոքր Ասիայում շատ ծանր էր։ Կոստանդնուպոլսի կառավարության պաշտպանության նախարար Էնվեր փաշան հարձակում սկսեց ռուսների դեմ։ Հետևակի և հեծելազորի տասնյակ դիվիզիաներ մտան Ալաշկերտի դաշտը, շարժվեցին դեպի Արարատ լեռը և սպառնում էին Արևելյան Հայաստանի խոշորագույն քաղաքին՝ Երևանին։ Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու համար ռուսական բանակն ու հայ կամավորական ջոկատները լքում էին Վանը և ամբողջ շրջանը։

Հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ մնացել էին անպաշտպան։ Վախենալով օսմանյան բանակի ճնշումներից, այդ մարդիկ փախչում էին սահմանից այն կողմ։ Պատերազմական վիճակի դժվարություններից տուժած Արևելյան Հայաստանը այժմ հեղեղված էր նոր փախստականներով, որոնք համալրում էին նրանց բանակը, ում Հայաստանն արդեն ընդունել էր։ Համաճարակներ էին բռնկվել, սննդամթերքի պակաս էր զգացվում։ Հարկավոր էր այդ մարդկանց ապահովել օթևանով մինչև ձմռան գալը, որը շատ խիստ էր այդ բարձր լեռներում։ Ուստի կաթողիկոս Գևորգ Ե-ի պատվիրակները դրամ էին հանգանակում Եվրոպայում, Ամերիկայում և Կահիրեում ապրող հայերից։ Ծայրագույն պատրիարքը բազում դիմումներ էր հղել դաշնակից երկրների ղեկավարներին, Իտալիայի արքային և Սիացյալ Նահանգների նախագահին, որպեսզի նրանք միջամտեին հօգուտ հայերի, որոնք զոհ էին գնում օսմանյան կառավարության բնաջնջման քաղաքականությանը։ Կանխատեսելով Օսմանյան կայսրության պարտությունը, կաթողիկոսը մի պատվիրակություն էր ուղարկել, որը բանակցություններ էր վարում Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարարությունների հետ։ Այդ պատվիրակության առաքելությունն էր Ֆրանսիայի ու Բրիտանիայի կառավարությունների առջև պաշտպանել անկախ Հայաստանի գաղափարը, որի մեջ կմտներ նաև Կիլիկիան։

Տեղահանությունները Անատոլիայում իրենց գագաթնակետին էին հասել։ Հյուսիսային և արևելյան վիլայեթների հայ բնակիչներից հետո եկել էր իրենց օջախներից վտարվելու Կիլիկիայի առափնյա շրջանների ու հարավ-արևելքի բնակիչների հերթը։ Դեռևս դիմադրում էին

Անատոլիայի կենտրոնական և արևմտյան մասի քաղաքները՝ Կոնիան, Անկյուրիան և Բրուսան, որոնք շուտով նույն բախտին էին արժանանալու։ Մուսա-դաղում՝ Միջերկրականի ափին, մի քանի հարյուր հայ ապաստանել էին իրենց գյուղերի մոտակայքում գտնվող բարձունքներում և հերոսական զոհաբերությունների շնորհիվ դիմադրում էին օսմանյան բանակին հուլիսի 21-ից և կարծես թե մտադիր չէին հնազանդվելու։

Շաբաթներ շարունակ Այնթապի հայերը տեսնում էին, թե ինչպես էին իրենց հայրենակիցների քարավաններն անցնում իրենց շրջանով և ուղևորվում դեպի Հալեպ։ Ոստիկանության պահակազորը նրանց արգելում էր օգնություն ցույց տալ այդ կանանց ու երեխաներին, որոնք քայլում էին ավելի քան մեկ ամիս, նույնիսկ արգելում էին ջուր տալ։ Չնայած պաշտոնական հայտարարություններին, որոնց համաձայն «տեղահանության» էին ենթակա միայն ռուսական սահմանի մերձակայքում ապրող հայերը, այդուհանդերձ, այնթապցիները իրենց ապահով չէին զգում։ Չէ՞ որ մոտ հիսուն ընտանիք դուրս էին մղվել քաղաքից, և հայ եպիսկոպոսը կոչ էր անում իր հոտին զգոն լինել։ Մի քանի հարուստ հայեր, որոնք բարեկամներ ունեին օսմանյան վարչակազմում, կարողացել էին անցաթղթեր ձեռք բերել և մեկնում էին Բաղդադ, Օմման ու Երուսաղեմ, հույս ունենալով, որ այնտեղ իրենց չէին անհանգստացնի։ Մյուսներն ընտրություն չունեին և շարունակում էին ապրել՝ փորձելով պահպանել բնականոն կյանքի ընթացքի պատրանք։

Անտիտավրոսից և Անատոլիայի բարձր սարահարթերից հարավ ընկած Այնթապը տեղադրված էր ցածր բլուրներով ծածկված տեղանքում, որը դուրս էր գալիս դեպի Սիրիական անապատ և Սիջագետք։ Չնայած Միջերկրական ծովը գտնվում էր մոտ հարյուր կիլոմետր հեռավորության վրա, Ամանոսի լեռները խոչընդոտում էին ծովի խոնավ օդի ներթափանցմանը, և Այնթապում ամռանը հեղձուցիչ շոգ և չոր եղանակ էր անում։ Գտնվելով Եփրատի վտակ Ինջիրլի գետի ափին, քաղաքը տեղադրված էր իրար հաջորդող երեք բլուրների վրա։ Հուստինիանոսի կառուցած ամրոցը, որը վերակառուցվել էր 11-րդ դարում թուրք-սելջուկների կողմից, զարդարում էր բլուրներից մեկի գագաթը։

Քաղաքի մերձակայքի քարհանքերը էժան և գերազանց շինանյութ էին մատակարարում, և դրանով էր բացատրվում, որ բոլոր տները կառուցված էին սրբատաշ քարից։ Գետի երկայնքով այգիներ էին գցված, որոնք կանաչ գոտի էին կազմում՝ շրջապատելով Այնթապը հյուսիսից ու արևելքից։ Քաղաքն ուներ մահմեդական, հայկական և հրեական գերեզմանատներ, քանի որ ժամանակին գտնվելով տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում, ուներ բազմազգ բնակչություն՝ թուրքեր, հայեր, քրդեր, արաբներ, ասորիներ, հրեաներ և հույներ։

Քաղաքը շրջապատող դաշտավայրը բերրի էր։ Այնտեղ աճում էր խաղող, ձիթապտուղ, թուզ, իսկ ցորենի արտերն ու բամբակի դաշտերը ձգվում էին մինչև հորիզոն։ Ուրզա բեյի կալվածքը Մարաշ տանող ճանապարհի մոտ էր, Ինջիրլի գետի կամրջից մի քանի կիլոմետր այն

կողմ։ Անտաշ քարից և չթրծված աղյուսից կառուցված գյուղական տները երիզում էին ճանապարհը, որը գալարվելով անցնում էր պիստակի ծառերի միջով, որոնք ժամանակին Ռըզա բեյի նախնիների կարողության հիմքն էին։ Ծառերով շրջապատված երկհարկանի հսկայական տունը իր մզկիթով և մինարեթներով հեռվից էր երևում։ Քաղաքի մուրացկանները լավ գիտեին մզկիթ տանող ճանապարհը, որը կառուցել էր Ռըզա բեյի պապը։ Այնտեղ առատաձեռն կերպով ուտելիք էին բաժանում ընչազուրկներին։

Սպիտակ կրաքարից կառուցված դղյակը աչքի էր ընկնում կանաչավուն մարմարով կատարված և բուսական նախշազարդ որմնասյուներով, ելուններով ու ծոփորներով։ Շենքի ճարտարապետության մեջ զգացվում էր հզոր արաբական ազդեցություն։ Հիմնական մասին ուղղահայաց կառուցված երկու թևերը կազմում էին ներքին բակի կողմերը։ Այդ թևերում էին գտնվում սելամլիկը՝ տղամարդկանց սենյակները, խոհանոցները, խորդանոցները և ծառայողների կացարանները։ Մեծ դարպասով բարձր պարիսպը կազմում էր սալապատված ներքին բակի չորրորդ կողմը։ Բակից սանդուղքը տանում էր դեպի դղյակի հիմնական մուտքը, որը սյունասրահ ուներ։ Շենքի հետնամասում էր գտնվում պարսպապատ մեծ ուղղանկյուն պարտեզը։ Պարսպին կից գտնվում էր մզկիթը իր օժանդակ շենքերով։ Որոշ հեռավորության վրա, նշենիների քողի հետևում գտնվում էին պահեստները, ախոռները, փարախները և գյուղացիների՝ հարթ տանիքներով փոքր տները։

Այդ օրը տունը եռուզեռի մեջ էր։ Բույուկ խանումը հեռագիր էր ստացել, որով նրա որդին, տեղեկացնելով իր ժամանման մասին, հայտնում էր նաև իր նշանակման լուրը։ «Այս 1293 թվականը ամենաօրհնյալ տարին է», բացականչել էր Բույուկ խանումը՝ հայտնելով այդ նորությանն իր երեք հարսներին։ Ավանդապահ լինելով՝ Բույուկ խանումն օգտվում էր միայն մահմեդական օրացույցից։

Ռըզա բեյին արված պատիվը, որը տարածվում էր ամբողջ ընտանիքի վրա, պետք է պատշաճ կերպով նշվեր։ Հոդախտից և մեջքի սուր ցավերից տառապող Բույուկ խանումը դժվարությամբ էր տեղաշարժվում, սակայն իրադարձությունն այնքան նշանակալից էր, որ նա թև էր առել։ Նա ամենուր էր և ամեն ինչ տեսնում էր։ Հրամաններ էր արձակում, շտապեցնում էր ծառայողներին, հանգիստ չէր թողնում հարսներին և նրանց երեխաներին։ Նա չէր հանդուրժում այն միտքը, որ կարող էր տնային հոգսերը կիսել որևէ մեկի հետ։ Քանի դեռ ինքը ողջ էր, պետք է պահպաներ Բույուկ խանումի՝ Ավագ տիկնոջ տիտղոսը։ Սաֆիյեն՝ Ռըզա բեյի ավագ կինը պետք է սպասեր իր հերթին։

Հեռագրատան աշխատողը չէր կարողացել լեզուն իրեն պահել և ողջ Այնթապը գիտեր, որ գավառը նոր գավառապետ ուներ։ Քաղաքի ընտրանին իր ներկայացուցիչների միջոցով տեղեկանում էր Բույուկ խանումից, թե երբ կարելի կլիներ ներկայանալ և շնորհավորել Ռըզա բեյին։ Մայրը իր նախաձեռնությամբ վճռել էր ընդունելություն կազմակերպել ամենաարժանավորների համար, որը պետք է տեղի

ունենար մութն ընկնելուն պես։ Երբ պահակ կարգված տղան հայտնեց, որ Ռըզա բեյի կառքը արդեն կալվածքը տանող ճանապարհին էր, նա դուրս բերեց բոլորին այդ կապակցությամբ զարդարված բակը։

Մայրը կանգնեց առաջին շարքում, մեծ սպիտակ հովանոցի տակ, որը պահել էր մի աղախին։ Նրա դեմքն ու իրանը նիհար էին, սակայն գոտկատեղից վար մարմինը լայնանում էր։ Նա կռացած էր քայլում, և այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ մարմնի ստորին մասը չէր հասցնում հետևել իրանին։ Նա հուզված էր ու երջանիկ և մտքում կրկնում էր ողջույնի այն խոսքերը, որ նախապատրաստել էր։ Ռըզա բեյի երեք կանայք և նրա ծեր դայակը՝ Էմինեն, կանգնած էին Բույուկ խանումի հետևում իրենց վեց երեխաների հետ միասին։ Ներկա չէին ավագ որդիները՝ Թուրանը և Ռամազանը, որոնք սովորում էին Գերմանիայում՝ Ռազմական ակադեմիայում։ Քսաներեք ծառայողները շարվել էին շենքի ճակատի երկու կողմերում։

Բույուկ խանումը ընտանեկան լուսանկարներ հավաքելու կիրք ուներ, որը նա մի քիչ անթույլատրելի էր համարում ուղղափառ մահմեդականի համար։ Իսլամի դրույթներով չէր կարելի մարդկանց պատկերել, սակայն Բույուկ խանումը կարծում էր, որ լուսանկարչությունը գեղանկարչության և քանդակագործության հետ կապ չուներ։ Դա ավելի նման էր հայելու արտացոլած պատկերի, իսկ Մարգարեն չէր արգելում օգտվել հայելիներից։ Ծեր կնոջ ամենաարժեքավոր ունեցվածքը ալբոմներն էին, ուր հավաքված էին իր սիրելիների լուսանկարները։ Շատերի վրա պատկերված էր Ռըզան հայտնի մարդկանց՝ դիվանագետների, օտար ճանապարհորդների հետ։ Նա կարևոր էր համարում պահպանել իրենց կյանքի հիշարժան պահերի հուշը։ Ուստի ծեր կինը հրավիրել էր Այնթապի լուսանկարչին՝ Նաիմ Մարֆատի անունով մի հրեայի։ Փոքր և ճաղատ, միշտ ժպտադեմ նա կանգնած էր սև մեծ սարքի հետևում, որը դրված էր եռոտանու վրա։

— Լուսանկարեք մեզ սպասելիս,– խնդրեց նրան Բույուկ խանումը։

Լուսանկարիչը խոնարհվեց, նախապատրաստեց իր սարքը և ասաց.

- Այստեղ նայեք, խնդրեմ։ Չշարժվե՛ք։

- Չեհրա՛, հանգիստ կա՛ց,– հրամայեց Բույուկ խանումը դիմելով երեք տարեկան թոռանը, որը տեղում թռչկոտում էր։

Վախեցած երեխան քարացավ և նայեց մորը՝ Լեյլային, որը նրան հանգստացրեց ձեռքի շարժումով։ Ռըզան ամուսնացել էր Լեյլայի հետ չորս տարի առաջ, երբ վերջինս տասնվեց տարեկան էր։ Նա երրորդ կինն էր, սակայն մխիթարվում էր, որ ամենասիրվածն էր և ամենագեղեցիկը։ Նա թաքուն հայացք գցեց իր ախոյանների վրա, որոնք, ինչպես և ինքը, գրեթե թափանցիկ մետաքսյա քողեր էին կրում, ծածկելով միայն դեմքի ներքևի մասը։

Մակբուլեն՝ երկրորդը, հավի խելք ուներ, անդադար ուտում էր, և նրա գեղեցկությունը խամրել էր, իսկ նրա երեք երեխաները նրան ոչինչ չէին տվել։ Նա իր տարիքից մեծ էր թվում և չուներ այն գրավչությունը, որը

կարող էր գրգռել տղամարդուն: Ինչ վերաբերում էր առաջին կնոջը՝ Սաֆիյեին, ապա նա Լեյլայի մոր տարիքին էր: Երեսունի՞նը տարեկան: Նրա աչքերի շուրջը մաշկն արդեն թոշնել էր և եթե հինան չլիներ, ապա քունքերը ճերմակած կլինեին: Նա Ռըզային հինգ երեխա էր պարգևել, սակայն արդեն շատ ծեր էր երեխա ունենալու համար: Եվ զարմանալի չէր, որ Ռըզան նրան ընկալում էր ավելի շուտ որպես սիրելի քույր, քան որպես սիրուհի: Լեյլան, վստահելով իր զորությանը, փակեց աչքերը: Ռըզայի երկու շաբաթ տևած բացակայությունը նրան անվերջանալի էր թվացել: Նա շտապում էր նորից հայտնվել նրա գրկում և տրվել նրա փաղաքշանքներին:

Սաֆիյեն մտածում էր, որ իրենք պետք է ներսում սպասեին: Անապատից չոր և կիզիչ քամի էր փչում, և օդի ջերմաստիճանը հասնում էր քառասունյոթ աստիճանի: Անմարդկային էր այսպես կիզիչ արևի տակ կանգնելը, հատկապես, որ ծոմի պատճառով իրենք լուսաբացից ջուր չէին խմել: Վերջապես լսվեց ձիերի սմբակների դոփյունը, հետո դարպասի մոտ հավաքված բանվորների և նրանց ընտանիքների ողջույնները: Կառքը բակ մտավ և կանգ առավ սանդուղքի առջև:

Ռըզա բեյը վայր իջավ տանը հակառակ կողմից և շրջանցեց կառքը: Նա հպարտ տեսք ուներ իր սպիտակ կոստյումով: Բույուկ խանումը մտածեց, որ նա իր հորն էր նման, սակայն ավելի նրբագեղ էր: Սաֆիյեն անհանգստացավ, համարելով, որ նա լարված էր: Մակբուլեն թեթևություն զգաց: Նա վախենում էր սկեսրոջ փոփոխական տրամադրությունից, և Ռըզա բեյի ներկայությունը նրան ապահովության զգացում էր պարգևում: Հիանալով իր տղամարդու առնական քայլվածքով՝ Լեյլան դողաց, և ցանկության հուրը տարածվեց նրա մարմնով:

Իր ընտանիքի անդամներին ժպտալուց հետո Ռըզա բեյն իջեցրեց աստիճանը և բացեց կառքի դուռը:

- Սա ի՞նչ է,– շշնջաց Լեյլան ատամների արանքից:

Նրա ձայնը խռպոտ էր: Զհասկանալով հարևանուհու տագնապը՝ Մակբուլեն պատասխանեց իր սովորական անմիջականությամբ.

- Կին է: Զե՞ս տեսնում:

Սաֆիյեն դառը ժպտաց: Իր ուղեկցուհու հանդեպ Ռըզա բեյի ցուցաբերած ուշադրության, նրան նայելու և ձեռքը մեկնելու ձևից նա հասկացավ, որ Ռըզա բեյը անտարբեր չէր: Նա այդ հարցին խոհական վերաբերմունք ուներ, եթե ամուսինը տենչում էր այդ օտարին, ապա ինչո՞ւ պիտի իրեն գրկեր այդ հաճույքից: Նա բավականաչափ մեծահոգի էր և բարեկիրթ և չէր անտեսի իր կանանց սիրուհու պատճառով: Սաֆիյեի կյանքում արդեն երկու անգամ տեղի էր ունեցել այդ փոփոխությունը, երբ մեկ այլ կին էր հաստատվել իր տանը, և նա բողոքելու առիթ չէր ունեցել: Տվյալ պահին նրան զվարճացնում էր Լեյլայի վարքագիծը, որի սեփականատիրոջ զգացումը և խանդը նա չէր հասկանում:

Վերջինս կկոցած աչքերով նայեց առաջին կնոջը իր կատաղությունը ցույց տալու համար, իսկ հետո ուշադրությունդ կենտրոնացրեց այդ օտար կնոջ վրա, որին ուսումնասիրեց ոտքից գլուխ: Քանի՞ տարեկան էր նա: Նրա դեմքը ծածկող սև քողն ընդգծում էր նրա խոշոր շագանակագույն աչքերը, որոնց մի քիչ վախեցած հայացքը Լեյլային կեղծ առաքինի և շինծու զուսպ թվաց, նույնիսկ հաշվենկատ և խորամանկ: Նա մտածեց, որ տղամարդը պետք է որ տեղի տար նման հայացքի առջև և այն մոգական համարեր: Չնայած մանուշակագույն շրջազգեստի լայնությանը, կարելի էր գուշակել, որ այն թաքցնում էր ճկուն և միևնույն ժամանակ փթթող մի մարմին՝ լիքը ստինքներով և կոնքով, և դա զգացվում էր նրա յուրաքանչյուր շարժումից: Լայն զգեստի մեջ զգացվում էր նույնիսկ նրա մեջքի բարակությունը: Լեյլան նկատեց նաև, որ նրա ենթադաստակները և ոտքերի կոճերը շատ նուրբ էին, դաստակները նեղ, մատները երկար, իսկ այդ նշանները չէին կարող շփոթության մեջ գցել: Ամենևին էլ կարիք չկար նրա դեմքը տեսնել՝ արժանիքները գնահատելու համար: Նրա կեցվածքը, ինչպես նաև դանդաղ և նրբագեղ քայլվածքը մատնում էին մի կին, որը գիտակցում էր իր գեղեցկությունը և իր իշխանությունը տղամարդկանց վրա: Առանց իրեն հաշիվ տալու, որ ինքը նորեկին վերագրում էր իր կեցվածքն ու վարքագիծը, Լեյլային թվաց, որ նրա ժամանումը թաքնված սպառնալիք էր պարունակում իր դիրքի համար:

Բույուկ խանումը սառը դեմքով էր նայում իրեն մոտեցող որդուն, որին հետևում էին Մարոն ու Թովմասը: Ինչպե՞ս էր համարձակվել Ըզգան կին բերել տուն առանց նախապես խորհրդակցելու իր հետ: Նա խաթարել էր իր ուրախությունը, և Բույուկ խանումն իսկույն մոռացավ նախապատրաստած ողջույնի խոսքերը: Ըզգան համբուրեց մոր ձեռքն ու այն տարավ իր ճակատին.

- Ես երջանիկ եմ ձեզ տեսնելու, թանկագին մայր:

— Ես քեզ հետ ուզում եմ խոսել՝ պատասխանեց նա չոր տոնով:

Ըզգան սպասում էր այդ կեցվածքին և ամենևին չկորցրեց ինքնավստահությունը: Նա ողջունեց Էմինեին՝ իր ծեր դայակին, այնպես, ինչպես ողջունել էր Բույուկ խանումին: Դայակը նույնքան երջանիկ էր, որքան երջանիկ է լինում մայրը իր որդուն տեսնելիս:

- Ես հպարտանում եմ քեզնով, Ըզգա բեյ:

Ըզգան համբուրեց իր կանանց՝ սկսելով Սաֆիյեից և վերջացնելով Լեյլայով: Հետո նրա երեխաները եկան հերթով ողջունելու իրենց հորը, համբուրելով նախ նրա ձեռքը, ապա այն տանելով դեպի իրենց ճակատը: Սկզբում մոտեցան տղաները՝ Ալթանը, Քենանը և Արիֆը, որոնք համապատասխանաբար տասներեք, յոթ և չորս տարեկան էին: Հետո աղջիկները՝ Շահանեն, տասնվեց տարեկան, Էմելը՝ յոթ տարեկան և վերջապես փոքրիկ Զեհրան: Հայրը երջանիկ էր նրանց տեսնելով և յուրաքանչյուրին ջերմ խոսքեր էր ասում:

Թովմասը հուզված դիտում էր այդ տեսարանը: Նա նախանձում էր

այդ երեխաներին։ Նա մտածում էր իր հոր մասին և հիշում էր իր ուրախությունը, երբ նա երեկոյան տուն էր վերադառնում։ Նա ոչ մի դեպքում չէր ուզում լաց լինել, ոչ էլ ցույց տալ իր վիշտը։ Նա ձեռքը տարավ գրպանը և ափի մեջ սեղմեց Վարդան Պալյանի անունը պարփակող տուփը։ Նա զարմանքով նայեց փայտե սավառնակին, որ ձեռքին էր պահել իր տարիքի մի տղա։ Թովմասը նույնիսկ մոռացել էր, որ այդպիսի բառ կար՝ «խաղալ»։ Երեխան Թովմասին նայեց, իսկ հետո խաղալիքը թաքցրեց։

Շփոթվելով իր կողմն ուղղված հետաքրքրասիրություն, անտարբերություն ու թշնամանք արտահայտող հայացքներից՝ Մարոն համբերատար սպասում էր հանդիպման երկար ու ձիգ արարողության ավարտին։ Այդ կանանց և երեխաների ներկայությունն ինչ-որ չափով հանգստացնում էր նրան, քանի որ երբեմն նա կասկածում էր Ռըզա բեյի խոսքերի վրա և վախենում էր, որ նա իրեն կտաներ որևէ մեկուսի վայր և այնտեղ իրեն կփակեր, կամ էլ՝ որ նա կարող էր միտքը փոխել և իրեն թողնել ճանապարհին։ Սակայն ամեն ինչ համապատասխանում էր իր փրկչի խոսքերին՝ կալվածքը, մայրը, երեք կանայք, երեխաները։ Հետևաբար Մարոն կարող էր հույս ունենալ, որ շուտով ինքը կհայտնվեր դեպի մայրաքաղաք ուղևորվող գնացքում։ Այստեղ, այս տանը, ուր ամեն ինչ կառավարվում էր մեկընդմիշտ հաստատված կանոններով, իրական ընտանիքի ծոցում ինքը կարող էր չվախենալ կամայականություններից։ Թովմասն ու ինքը կարող էին ուժ հավաքել դեպի Կոստանդնուպոլիս կատարվելիք երկար և հարմարություններից զուրկ ճանապարհորդությունից առաջ։

Ռըզա բեյը Մարոյին մոտեցրեց իր ընտանիքին.

— Ահա և մեր հյուրը՝ Մարոն և իր որդին՝ Թովմասը,- ասաց նա իր ընտանիքի անդամներին, նրան ներկայացնելով։

Մարոն խոնարհվեց Ռըզայի մոր առջև.

- Երախտապարտ եմ, որ դուք ընդունում եք մեզ ձեր տանը, Բույուկ խանում։

Ծեր կինը պատասխանեց գլխի զուսպ շարժումով։ Զնայած նորեկի մաքուր թուրքերենին, նրա անունը մատնում էր նրա հայկական ծագումը։ Լեյլան օտարին էր նայում ատելությամբ և արհամարհանքով լի հայացքով։ Մակբուլեն պարզապես աչքերը ճպճպացրեց գլուխը խոնարհելուց առաջ։ Որքան իր ամուսնուն հաճոյանալու, նույնքան իր սկեսրոջ առջև ինքնահաստատվելու և Լեյլային իր տեղը ցույց տալու համար, առաջին կինը ջերմորեն ասաց.

- Թող քո գալուստը մեզ մոտ բարի լինի։

Ռըզա բեյն այդ խոսքերի մեջ տեսավ իրենց կապող անկեղծ բարեկամության վկայությունը և վկայությունն այն փոխըմբռնման, որը կերտվել էր քսան տարվա ամուսնական կյանքի ընթացքում։ Գլխի շարժումով նա իր երախտագիտությունն արտահայտեց և շրջվեց ծառայողների կողմը։ Իրենց նվիրվածությունդ վերստին վկայելու

համար նրանք իրենց տիրոջը ողջունեցին աջ ձեռքի ափը դեպի սիրտը, հետո դեպի շրթունքներն ու ճակատը տանելով: Ռըզան ուրախ տոնով ասաց մորը.

- Թող գառներ մորթեն և օղի բաժանեն, որպեսզի մարդիկ կարողանան տոնախմբություն կազմակերպել այս գիշեր:

Էմինեին դիմելով և Մարոյին ցույց տալով՝ նա ավելացրեց.

- Հետևիր, որ մեր հյուրը լավ տեղավորվի: Նրան սենյակ հատկացրու երկրորդ հարկում: Այն սենյակում, որը կենտրոնում է դեպի այգին դուրս եկող պատշգամբով:

Այդ խոսքերը լսելով՝ Բույուկ խանումը քարացավ, իսկ Լեյլան շիկնեց: Երկրորդ հարկը հարեմի հարկն էր, ուր օտարներն իրավունք չունեին մուտք գործելու: Ռըզա բեյը ընտանիքի գլուխն էր, և Բույուկ խանումը չէր կարող ընդդիմանալ բոլորի ներկայությամբ, սակայն Ռըզան կիմանար, թե ինչ էր ինքը մտածում այդ ամենի մասին:

- Նկարահանե՞մ,– հարցրեց Նաիմ Սարֆատին:

Բույուկ խանումը չարձագանքեց: Ռըզա բեյը պատասխանեց նրա փոխարեն.

- Իհարկե:

Նա Մարոյին ու Թովմասին կանգնեցրեց իր ընտանիքի կենտրոնում: Բույուկ խանումը մտադիր չէր այդ լուսանկարը պահպանել իր ալբոմներից որևէ մեկում: Երբ լուսանկարվելու արարողությունը ավարտվեց, Ռըզա բեյը ձեռքը մեկնեց Բույուկ խանումին, և նրանք տուն մտան: Մնացածները հետևեցին նրանց:

* * *

Մայր մտնող արևի ճառագայթները ներս էին թափանցում գունավոր ապակիներով և կապույտ ու մանուշակագույն լաքաներ էին գցում լուսանկարներով զարդարված պատերի վրա: Բույուկ խանումը նստեց իր կանաչ բազկաթոռին, որի կողքին դրված էր թևերը պարզած աղավնի պատկերող մի գրակալ, որի վրա արծաթյա գամերով հաստ գիրք կար: Մնացած ալբոմները շարված էին սեղաններին: Իր ննջարանին հարող այս փոքրիկ հյուրասենյակում Բույուկ խանումը ժամեր էր անցկացնում: Իր սիրելի լուսանկարների շնորհիվ նա հաղորդակցվում էր ինչպես մահացած, այնպես էլ ողջ եղբայրների ու քույրերի, իր հինգ երեխաների և թոռների հետ՝ նրանց բոլոր տարիքներում: Մետաղյա դագերոտիպների և ստվարաթղթի վրա տպված լուսանկարների շնորհիվ նա վերապրում էր իր ընտանիքի պատմությունը:

Մութաքաներով ծանրաբեռնված թախտն անտեսելով, Ռըզա բեյը կանգնած մնաց մոր առջև: Վերջինս նախ հարցուփորձ արեց

ճանապարհորդության մասին և ամփոփեց նկարագրելով, թե ինչ էի տեղի ունեցել Այնթապում նրա բացակայության ընթացքում։

- Այս երեկո ես քո անունից մի քանի աչքի ընկնող քաղաքացիների եմ հրավիրել, որոնք ցանկանում են քեզ շնորհավորել։

- Շատ ճիշտ եք արել։

Այս շեղումից հետո Բույուկ խանումը զգուշորեն զրույցը տարավ այն ուղղությամբ, որն իրեն հուզում էր։

- Դու դարձյալ նվերնե՞ր ես բերել քո կանանց համար, որպեսզի խրախուսես նրանց արատները։

Ռըզա բեյը ժպտաց և ոչինչ չպատասխանեց։ Մայրը պատասխանեց նրա փոխարեն.

- Գիրք՝ երազկոտ Սաֆիյեի համար, մի քանի հազվագյուտ ուտեստներ Մակբուլեի որկրամոլությունը քաջալերելու համար, զարդ կոկետուհի Լեյլայի համար։ Այդպես չէ՞։

Ռըզան փոթկաց.

— Եվ ալբոմ քեզ համար,– ասաց նա հանելով պայուսակից կաշվե կազմով մի ալբոմ, որի վրա ոսկե տառերով գրված էր Բույուկ խանումի անունը։

Ռըզա բեյն այն պատվիրել էր այնթապցի մի արհեստավորի՝ իր մեկնելու օրը։ Մոր կնճռոտ դեմքը ծաղկեց։ Նա դողացող մատով թերթեց սև էջերը և երազեց այն պահի մասին, երբ ինքն այնտեղ կգետեղեր լուսանկարները։

- Շնորհակալություն,– ասաց նա իր մոտ ձգելով Ռըզային՝ նրա ճակատը համբուրելու համար։– Դու միշտ կռահում ես, թե ինչով կարող ես ինձ հաճոյանալ։

Նա քիչ էր մնում ասեր, որ իր երեխաների մեջ Ռըզան միշտ ամենասիրվածն է եղել, սակայն իրեն զսպեց։ Նա ալբոմը դրեց ծնկներին և, դրանով հիանալով, ասաց.

- Այս մեկը նվիրված կլինի բացառապես Ռըզա բեյ գավառապետի կարիերային։

Ռըզան գիտեր, որ չէր զինաթափել մորը, որը, իսկապես, մի կողմ քշեց դեմքից հիացած արտահայտությունը։

- Ինչպես ես նկատեցի, դու քեզ համար էլ նվեր ես բերել։

Ռըզան զարմացած ձևացավ.

— Ի՞նչ եք ուզում ասել։

— Սիրուհի... Այն էլ որդու հետ։

Ձեռքերը թափահարելով՝ Ռըզան ըրնդդիմացավ.

- Դա այն չէ, ինչ մտածում եք, սիրելի մայրիկ։

- Դու չես տեսնում, թե ինչպես ես վարվում նրա հետ։ Քո կանայք նույնպես ամեն ինչ հասկացան։ Դու սիրահարված ես, Ռըզա։

Նրա ճակատը կնճռոտվեց։ Ուրեմն իր տարվածությունը Մարոյով այդքան նկատելի՞ էր։ Սակայն աստվածությունից մինչև սեր երկար ճանապարհ կար։

— Ի՞նչ է կատարվում իրականում,— նորից հարցրեց Բույուկ խանումը, կարծես խոսեր անկարևոր մի հարցի մասին։

Սակայն նա շատ լավ հասկացել էր, որ Մարոն թուրք չէր, և Ռըզան դա գիտեր։ Նա միացավ մոր խաղին։

— Հայուհի, որին ես փրկել եմ մահից։

Մայրը ձեռքը բարձրացրեց և բացականչեց վրդովված.

- Քրիստոնյա՜, քրիստոնյա՜։ Դու չմտածված քայլ ես արել, որդիս։ Դու՝ գավառապե՜տդ։ Նա պե՜տք է այստեղից հեռանա։

Ռըզան ձգվեց և պատասխանեց առարկությունները բացառող ձայնով.

- Երբ ժամանակը կգա, ոչ շուտ։

Բույուկ խանումը հառաչեց։ Երբ իր որդին խոսում էր այդ տոնով, ապա անիմաստ էր լինում հակադրվել նրա պահանջներին։ Ցանկանալով խնայել մոր զգացմունքները, նա բացատրեց.

- Նա և նրա որդին շատ են տառապել տեղահանման ընթացքում։ Նրանք Սվասից ոտքով են եկել։ Ողորմածությունը...

— Ողորմածությու՜նը,- բացականչեց մայրը հեգնանքով։— Ինձ հիմարի տեղ մի դիր։ Ես աչքեր ունեմ տեսնելու համար։ Այդ կինը, չնայած իր կրած զրկանքներին, շատ գեղեցիկ է։ Նրա գեղեցկությունն է, որ գայթակղել է քեզ։

Ռըզան, անվերծանելի դեմքի արտահայտությամբ, անհողդողդ էր։ Ապագայի նկատմամբ տագնապ չսերմանելու նպատակով նա գերադասում էր լռել այն երազի մասին, ուր հայուհին նրան, փրկում էր մահից։ Նա նորից հագավ ընտանիքի գլխավորի դիմակը, որի հեղինակությունը չէր կարող վիճարկվել։

- Իմ վարքագծի դրդապատճառները միայն ինձ են վերաբերում։

- Ինչպես կուզես... Սակայն նա թող ապրի ծառաների հետ և ոչ թե նույն հարկում իմ և քո կանանց կողքին։

— Նա բարձր ծագում ունեցող կին է, և նա իր սենյակը կունենա հարեմում։

Բույուկ խանումը ասաց մռայլ տեսքով.

- Հույս չունենաս, որ ես թեկուզ մեկ խոսք կփոխանակեմ նրա հետ։

Ռըզան անհաշտ տեսք ընդունեց.

- Ես պահանջում եմ, որ նրան վերաբերվեն որպես ընտանիքի անդամի և որ նրա որդուն վերաբերվեն այնպես, ինչպես իմ երեխաներին։ Դուք կհետևեք դրան...

Մայրն այլ ընտրություն չուներ, քան ենթարկվել Ռըզայի կամքին։ Նա իր համաձայնությունը հայտնեց մեկ նախադասությամբ, որը նրան փրկում հր նվաստացումից.

— Այս շոգն ինձ հյուծում է։ Իսկ այժմ գնա, որ ես մի քիչ հանգստանամ։

* * *

Առաստաղից կախված թափանցիկ մոծակացանցը շրջապատում էր սպիտակ պատերով մեծ սենյակի անկյունում դրված մահճակալը։ Լաքապատ կոր սնդուկը և սադափով դրվագազարդված սեղանը լրացնում էին կահավորանքը։

— Դու կտեսնես՝ այս սենյակը շատ հարմարավետ է,— ասաց Էմինեն մի կողմ քաշվելով և ներս թողնելով Մարոյին ու իր որդուն։

Լույսը սենյակ էր թափանցում փայտե ճաղերով պատված լուսամուտից և հատկապես դռնից, որը դուրս էր գալիս երկաթյա կռած բազրիքով պատշգամբը։ Էմինեն սեղանին դրեց Մարոյի՝ կարպետից կարված պայուսակը։ Նա քայլում էր ոտքերը քարշ տալով, և նրա հողաթափերը քստքստում էին գորգի վրա։ Ցածր հասակը ընդգծում էր նրա գիրությունը, դեմքը կլոր էր և այնքան ճարպոտ, որ ձգված մաշկի վրա ոչ մի կնճիռ չկար։ Սրտաձև ուրվագծով շրթունքներն անընդհատ ժպտում էին, աչքերը կայծկլտում, և նրան նայողը կռահում էր նրա անխաթար կենսասիրությունը։ Նա վաթսուներեք տարեկան էր՝ չորս տարով փոքր Բույուկ խանումից։ Նա այս ընտանիքն էր մուտք գործել 1870 թ. որպես ճորտ՝ նորածին երեխային՝ Ռըզային խնամելու համար։ Չնայած շարունակում էր ճորտ մնալ, նա դարձել էր ընտանիքի անդամ, և Ռըզան իր մոր պես սիրում էր այդ կնոջը, որը նրան դաստիարակել էր և որից նա ժառանգել էր իր սնահավատությունը և առատաձեռնությունը, որը գերազանցում էր հավատացյալին արված կիսվելու պատվիրանը։

Սենյակը հաղորդակցվում էր մեկ այլ սենյակի՝ մի փոքր հյուրասենյակի հետ, որը կահավորված էր բազմոցով, կանաչ թավշից բազկաթոռով, երկու ցածր դրվագանախշ սեղաններով և աղոթքի գորգով։

— Քո որդին այստեղ կքնի,– ասաց Էմինեն։– Ես մոծակացանց ամրացնել կտամ։ Գիշերը միջատները շատ արնախում են դառնում։

Թովմասը քաշեց մոր ձեռքը և նվաց.

— Ես ծարա՛վ եմ, մայրիկ։ Ես քաղցա՛ծ եմ։

Մարոն շշնջաց.

- Հիշիր, հիմա ռամադանն է, այս տան բնակիչները ծոմ են պահում։ Մենք պետք է մեզ իրենց պես պահենք։ Համբերություն, սիրելիս, օրն ավարտվում է։

— Նա քաղցած է, այդպես չէ՞,- հարցրեց Էմինեն, որը մոտեցավ և ձեռքը դրեց Թովմասի ուսին։

Կառքից իջնող երեխային տեսնելուն պես նա ապշել էր նրա հյուծված դեմքից, թևերի և ոտքերի բարակությունից և հայացքի լրջությունից, որը կսազեր մեծ մարդուն։ Այդ ժամանակ նա զսպել էր երեխային մոտենալու և նրան իր գիրկն առնելու մղումը։ Թովմասի լացակումած ձայնը վերակենդանացրեց Էմինեի հուզմունքը և, սենյակի առանձնության մեջ, նա ազատ ընթացք տվեց իր բնական մղումին, երեխային իրեն սեղմեց և շոյեց նրա դեմքը։ Թովմասը թույլ տվեց, որ իրեն փաղաքշեին, քանի որ ծեր կինը բարի տեսք ուներ և նրա շարժումները նույնքան մեղմ էին, որքան ձայնը։

— Դու հայերեն հասկանո՞ւմ ես,- հարցրեց Մարոն դայակին։

— Մի քանի բառ։ Այստեղ քո ազգակից աղախիններ կան։ Իսկ մեր մատակարարներից շատերը նույնպես հայեր են։ Դու ի՞նչ ասացիր որդուդ։

- Որ մենք պետք է ծոմ պահենք մինչև գիշեր։

— Դա երեխաներին չի վերաբերում,- բացականչեց Էմինեն, վրդովված տեսքով ձեռքերը վեր բարձրացնելով։- Խեղճ փոքրիկ։ Մենք պետք է ճաշ տանք Ռըզա բեյի երեխաներին և քո որդին կուտի նրանց հետ։

Թովմասն ընդհանուր առմամբ հասկացավ, թե ինչ էր ասում դայակը, և նա մորը ժխտական նշաններ արեց։ Մարոն ասաց Էմինեին.

- Կարծում եմ, որ Թովմասը կաշկանդվում է։ Մենք չէի՞նք կարող նրան ուղեկցել խոհանոց։

— Նրան այստեղ կկերակրենք։

Նա միջանցք դուրս եկավ և ծափ տվեց։ Երիտասարդ աղախինը, որ սպասում էր սանդուղքի գլխին, շտապ մոտեցավ։ Նա հազիվ տասներեք տարեկան լիներ և շատ լարված էր։

- Խմելու բան բեր։ Ջուր և օշարակ։ Եվ խնդրիր, որ երեխայի ճաշը վերև բերեն։ Հասկացա՞ր։

— Այո, խանում,- պատասխանեց աղջնակը խոնարհվելով։

Էմինեն բացատրեց Մարոյին.

- Նա նոր է եկել այստեղ։ Ձեզ պես հայ է։

Նա դուռը փակեց և ավելացրեց.

- Երբ քեզ որևէ բան է պետք, դու ընդամենը պետք է կանչես այնպես, ինչպես ես կանչեցի: Միջանցքում միշտ աղախին կա կանգնած:

Երկու կանայք դուրս եկան պատշգամբ Թովմասի մոտ: Պարտեզի մեծ ուղղանկյունին իր ծայրամասերում վայրի անտառի կերպարանք էր ստանում: Ֆիկուսը, մորուտը, դափնեվարդը խիտ ենթանտառ էին կազմում, որտեղից դուրս էին ցցվում նիվենիների ու արմավենիների բները, որոնց բազմաթիվ տերևներ դեղնել էին նախորդ ձմռան ցրտահարությունից: Պարտեզի մյուս ծայրում փայլփլում էր կլոր ջրավազանը, որը գտնվում էր մագլցող վարդերով կիսով չափ ծածկված տաղավարի կողքին: Խճածածկ մի ծառուղի, որը երիզում էր բացատներն ու սիզամարգերը, կիսում էր պարտեզը: Երկու երեխա խաղում էին պարտեզում: Տղան թոցնում էր իր սավառնակը դեպի իր քույրը, որը վազում էր սարքի հետևից: Նկատելով Թովմասի հետաքրքրությունը՝ Էմինեն կռացավ նրա վրա.

- Տղայի անունն է Քենան, աղջկանը՝ Էմել: Վստահ եմ, որ նրանք հաճույքով կխաղային քեզ հետ:

Թովմասը սառեց: Կարծելով, որ երեխան չի հասկացել, Էմինեն կրկնեց նախադասությունը՝ բառերը հատ-հատ արտաբերելով: Երեխան չարձագանքեց: Այդ երեխաները Թուրքեր էին, ինչպես և ոստիկանները, որոնք ձերբակալել էին իր հորը, իրենց քշել էին Սվասից, ստիպել էին օրն ի բուն քայլել այնքան, որ Արմենը, Արաքսին և Ազնիվ խանումը մահացել էին: Տեսնելով հասակակից այդ երեխաներին՝ Թովմասը մտածում էր իր կորցրած ընկերների և հատկապես այն փոքր տղայի մասին, որին զինվորները սպանել էին վանքի բակում: Ինչպե՞ս կարող էր ինքը խաղալ: Հատկապես այս երեխաների հետ: Թովմասը պատրաստ էր քաղաքավարի լինել, բայց ոչ ավելին:

Մարոն դայակին նշան արեց, որ չպնդեր: Վերջինս նրան հարցրեց հուզված ձայնով.

- Դու դաժան ճակատագրի ես արժանացել, այդպես չէ՞:

- Ես գերադասում եմ դրա մասին չխոսել:

- Իրավացի ես: Պետք է մոռանալ: Հիմա, որ դու այստեղ ես, քո դժբախտությունները ավարտվել են: Կտեսնես, Ռըզայի տունը խաղաղության և երջանկության հանգրվան է:

Պարտեզի արևմտյան պատի վրայով Մարոն հորիզոնին էր նայում: Արևը հենց նոր թաքնվել էր Ամանոսի լեռնաշղթայի հետևում: Այնտեղ Միջերկրական ծովն էր: Ալեքսանդրետ նավահանգիստն էր այնտեղ, իսկ Կոստանդնուպոլիսը մի քանի օրվա նավարկության հեռավորության վրա էր: Գլուխն աջ կողմ դարձնելով՝ Մարոն տեսնում էր այլ, ավելի տպավորիչ լեռներ՝ Անատոլիան, որտեղից իրենք եկել էին: Ուղիղ հյուսիսում Սվասն էր: Մյուս կողմում մզկիթն ու մինարեթը փակում էին տեսադաշտը: Մարոն իրեն բանտարկված զգաց պատերի ու լեռների

քարերի մեջ։ Նա մուտք էր գործել մի աշխարհ, ուր իր ճակատագիրը կախված էր գեթ մեկ տղամարդուց։

- Ի՞նչ մարդ է Ռըզա բեյը։

— Նա արդար է և ջերմ։ Նույնիսկ բարկանալիս բարի է մնում։ Նա երբեք չի ծեծել իր կանանցից և ոչ մեկին, ձեռք չի բարձրացրել իր երեխաների վրա։

Էմինեն ձեռքերը կրծքին սեղմեց և նմանվեց իր սիրելի որդով անսահմանորեն հպարտացող մորը։

- Այդպիսի մարդ հաճախ չես հանդիպի։ Տեսնո՞ւմ ես, ինչ գեղեցիկ է նա, որքան խորաթափանց հայացք ունի։ Զնայած իր ուժին, նա քնքուշ է։

Նա ձայնն իջեցրեց հիացմունքով ավելացնելու համար.

— Եվ, բացի դրանից, առնական է։

— Նա իր խոսքի տե՞րն է։

Հարցը զարմացրեց դայակին, և նրա հոնքերը վեր սողացին։ Նա պատասխանեց մի քանի վայրկյան մտածելուց հետո.

- Նա անում է այն, ինչ ասում է։ Սակայն կինը չպետք է տղամարդուց խոստումներ պահանջի, դա վիրավորանք է նրա համար։ Կինը պետք է ընդամենը ենթարկվի։

Էմինեն ցածրաձայն ավելացրեց.

- Սակայն եթե նա ճարպիկ է, ապա հաճախ ստանում է իր ուզածը։

Աղախինները բերեցին Թովմասի ճաշը և դրեցին հյուրասենյակի սեղաններից մեկի վրա։ Դայակը, հեռանալուց առաջ, դիպավ Մարոյի թևին և մայրական տոնով ասաց.

— Եթե որևէ խնդիր ունենաս կամ ցանկություն, առանց վարանելու կիսվիր ինձ հետ։ Ես կարեցածս կանեմ քեզ համար։

Զարմանալով այդ բարությունից՝ Մարոն նրան իր երախտագիտությունը հայտնեց։

Մարոն Թովմասին հայտնաբերեց սեղանի մոտ ծնկաչոք, ագահորեն ուտելիս։ Նա կանխեց մորը և ասաց լիքը բերանով.

- Ես ձեռքերս լվացել եմ և աղոթել եմ։

Մարոն ժպտաց և նստեց բարձիկի վրա։ Երբ տեսավ, թե ինչ ախորժակով է ուտում Թովմասը, նրա սիրտը ջերմացավ։ Նա ուզում էր, որպեսզի իր որդին այլևս երբեք սովի զգացում չունենար։ Ինչպես նաև ծարավի և վախի զգացում։ Եվ այդ միակ նպատակը պետք է թելադրեր իր վարքագիծը։

Նա մեկը մյուսի հետևից երեք բաժակ ջուր խմեց։

— Դու ծոմ չե՞ս պահում,– հարցրեց Թովմասը։

- Երբ մենակ ենք, ոչ։ Եթե ես ձևանում եմ, ապա միայն մեզ հյուրընկալողների սովորույթները հարգելու համար։

Որդու կկոցած աչքերից նա հասկացավ, որ վերջինս հաճույք էր ստանում իրեն ծաղրելուց և նրա այդ պահվածքը Մարոյին ուրախացրեց։

- Համե՞ղ է։

- Այո՛։ Ես վերջացրեցի բանջարեղենով ապուրը։

Թովմասը, առանց մորից աչքերը հեռացնելու, անցավ սմբուկի աղցանին և աղացած մսին։

- Մենք այստեղ երկա՞ր ենք մնալու, մայրիկ։

- Չգիտեմ, սիրելիս։ Կարևորն այն է, որ անվտանգության մեջ ենք։

— Մենք պետք է մնացածների հե՞տ ուտենք։

-Մենք չենք կարող փակված մնալ այս սենյակում։ Դա անքաղաքավարություն կլիներ մեզ հյուրընկալող մարդկանց նկատմամբ։

Թովմասը ծամածռվեց.

- Ես պետք է խաղա՞մ երեխաների հետ։

- Ոչ, եթե չես ցանկանում։ Բայց դու չես կարող նրանցից խուսափել։ Նրանք բարի տեսք ունեն։

- Նրանք հայեր չեն,– փնթփնթաց Թովմասը։

Նրա աչքերը պերճախոս էին, և Մարոն հասկացավ, թե նա ինչ էր ակնարկում։ Նա շոյեց նրա այտը.

- Երեխաները պատասխանատու չեն այն ամենի համար, ինչ անում են ոստիկանները։ Դու չպետք է նրանց նկատմամբ քեն պահես։ Փորձիր չմտածել այն ամենի մասին, ինչ պատահել է մեզ հետ։

Թովմասի հայացքը սառեց.

- Ես փորձում եմ մայրիկ։ Բայց այդ ամենը երազում եմ տեսնում, ամեն գիշեր։

Մարոն ձեռքերը տարածեց, և երեխան փարվեց մոր կրծքին։ Նա դողում էր։ Մարոն քթի տակ սկսեց այն օրորոցայինը երգել, որը երգում էր նրա փոքր եղած ժամանակ։ Վարդանը ցածր նվագակցում էր ուղով և սիրահարված աչքերով իրեն էր նայում։

* * *

Վարդերի երկու մեծ փունջ իրենց բուրմունքն էին տարածում հյուրասենյակում, ուր Սաֆիյեն սպասում էր ամուսնուն: Նա մազերը ներկել էր հինայով և շրթներկ էր քսել: Նրա փղոսկրի գույնի մաշկը դրանից լուսավորվել էր: Նրա դեմքը կլոր էր, և կանոնավոր դիմագծեր ուներ, աչքերը դարչնագույն էին, մի խոսքով՝ գեղեցիկ, հանդարտ և մտածկոտ դեմք: Սաֆիյեին վերագրվող հանդարտությունն ընդամենը պատրանք էր: Նա ներքուստ միշտ տենդագին վիճակում էր, որի պատճառն ինքը չգիտեր: Տարիների ընթացքում նա սովորել էր վերահսկել իրեն, սակայն չէր կարողացել ազատվել այդ վիճակից:

Բացված գիրքը ծնկներին, նա նայում էր պատին կախված մետաքսյա գորգին ու երազում էր: Դա անուրջ էր, իրար հետ չկապակցված պատկերների շարք: Նրան թվում էր, որ իր միտքը թեթև էր, ինչպես շղարշը, և քամին այն տանում էր հեռուն: Նա հայացքը կտրեց գորգի նախշերից և նայեց շրջանակների մեջ առնված վիմագիր նկարներին, որոնց վրա պատկերված էին Կոստանդնուպոլսի, Բաղդադի, Մեդինայի, Կահիրեի և եվրոպական որոշ քաղաքների տեսարաններ: Նա հոգոց հանեց անորոշ մի թախծից:

Սաֆիյեն ծնվել էր Ուռհայում, որն Այնթապից մոտ հարյուր հիսուն կիլոմետր արևելք էր ընկած, և երբեք չէր հեռացել հայրական տնից մինչև Ռըզա բեյի տանը փակվելը: Նա տեսել էր միայն շրջանի մռայլ լեռներն ու քարքարոտ դաշտավայրը, սակայն նրա հոգում ապրում էր աշխարհը տեսնելու տենչը: Իրեն թվում էր, որ աշխարհը մոտ էր, լեռներից այն կողմ: Նրա աշխույժ երևակայությունը երբեք բավարար սնունդ չէր ստանում, և Սաֆիյեն լուռ տխրում էր այն ամենի համար, ինչ ինքը երբեք չէր տեսնելու: Նրա կրթությունը սահմանափակվել էր այն ամենով, ինչ անհրաժեշտ էր բարեկեցիկ տղամարդու պարապ կինը լինելու համար, երաժշտության, երգեցողություն, ձեռագործ, զրուցելու արվեստ և վարվեցողություն: Ընթերցանությո՞ւն: Գրագիտությո՞ւն: Ի՞նչ օգուտ դա կարող էր տալ կնոջը:

Նա կարդալ էր սովորել միայն ամուսնանալուց հետո Ռըզա բեյի օգնությամբ և խրախուսանքով: Եվ Սաֆիյեն շատ շնորհակալ էր նրան այդ բանի համար: Վերջապես ինքը կարող էր գիրք կարդալ: Եվ նա կարդացել էր ամուսնու գրադարանում եղած բոլոր արաբատառ գրքերը, քնարերգություն, միստիկ գրականություն, որը մի քիչ բարդ էր իր համար, և ճանապարհորդական նոթեր: Մնացած գրքերը, որոնք գրված էին ֆրանսերենով, նրա համար անհասկանալի էին, և նա կարող էր միայն հիանալ դրանց նկարազարդումներով, իսկ բովանդակությունը ստիպված էր լինում գուշակել:

Օրեր և նույնիսկ շաբաթներ շարունակ նա մտովի բացակայում էր Այնթապի կալվածքից, և ոչ ոք գլխի չէր ընկնում դրա մասին: Ուղտի, ձիու կամ փղի վրա նստած, առագաստանավով, ջոնկայով կամ ոտքով նա ուղեկցում էր «իսլամական ճանապարհորդ» Իբն Բատտուտային, որը հետազոտում էր Աֆրիկան, Արաբական թերակղզին, Պարսկաստանը, Ռուսաստանը, Ասիայի տափաստանները, Հնդկաստանն ու Չինաստանը:

Նա հիանում էր տարբեր բարքեր ունեցող ժողովուրդների նկարագրություններով, դողում էր, երբ ավազակները կամ ծովահենները սպառնում էին իր հերոսի կյանքին, ուրախանում էր սուլթանների, խաների, իշխանների և կայսրերի կողմից նրա նկատմամբ ցուցաբերված հարգանքից, հուզվում էր նրա սիրային արկածներից ֆանտաստիկ անվանումներ ունեցող քաղաքներում: Եվ պատկերացնո՞ւմ եք, նա անցել էր Հալեպով:

Ընթերցանությունն էլ ավելի էր սրում գիտելիքների նրա ծարավը և որևէ տեղ մեկնելու ցանկությունը: Չնայած սուր մտքին և զգայունությանը, Ռըզա բեյը երբեք չէր կասկածել իր առաջին կնոջ հոգում ապրող ճամփորդելու ցանկության մասին և նույնիսկ չէր նկատել, թե ինչ կարևոր տեղ էր գրավում անուրջը նրա կյանքում: Նորապսակի կրքի բոցը հանդարտվելուց հետո Սաֆիյեն դարձել էր Ռըզա բեյի համար խելացի և իմաստուն խորհրդատու բարեկամ: Ինչպես և բոլորը, Ռըզա բեյը բավարարվում էր այն պատկերով, որ Սաֆիյեն արտացոլում էր, իսկ Սաֆիյեն էլ, վախենալով հիասթափեցնել նրան, երբեք չէր համարձակվի նրան շփոթությունից դուրս բերել և բացել իր հոգին: Ռըզան մեկնում էր իր գործերով առանց կասկածելու, թե որքան նա կուզեր իրեն ուղեկցել: Նրա ամենանվիրական ցանկությունն էր գոնե մեկ անգամ Կոստանդնուպոլիսը կամ Բաղդադը տեսնել:

Նա ճանաչեց ամուսնու հատուկ թակոցը և արագ ոտքի կանգնեց: Բացված գիրքն ընկավ գորգին:

- Մտիր:

Ռըզան վուշից կարված լայն արաբական զգեստ էր հագել: Սաֆիյեն նրան ընդառաջ գնաց, սակայն դանդաղ էր քայլում նրանով ուզածի չափ հիանալու համար: Ռըզան նրան ջերմ համբուրեց:

— Բարեկամս,– շշնջաց Սաֆիյեն:– Ժամանակն այնքան դանդաղ էր անցնում առանց քեզ:

Ռըզան կնոջ ձեռքերը վերցրեց իր ափերի մեջ.

— Աղունիկս, քո քնքուշ գեղգեղոցը ես շատ եմ կարոտում: Քանի, քանի անգամ եմ մտքումս կենդանացրել քո ձայնը բանաստեղծություններ արտասանելիս...

Սաֆիյեն շրթունքները հպեց Ռըզայի մատներին, հետո փաղաքշեց նրա դեմքը, դիպավ կոպերին: Նա անհանգստացած էր.

— Ինձ թվում է, դու հոգնած ես կամ լարված: Ինչ-որ բա՞ն է ծանրացել սրտիդ, բարեկամս:

— Ոչ, ընդամենը հոգնել եմ ճանապարհից:

Սաֆիյեն նրան ձգեց դեպի բազմոցը.

— Ես քեզ խմելու բան չեմ կարող առաջարկել, բայց գոնե նստիր և ոտքերդ ձգիր:

Սաֆիյեն ծնկի իջավ նրա առաջ, հանեց նրա ոտնամանները և մերսեց ոտքերը։

- Ասա ինձ, Ռըզա, ի՞նչ ես տեսել ճանապարհորդության ընթացքում։

Ռըզան ծիծաղեց.

- Քարեր, քարերից բացի ոչինչ չկար տեսնելու։ Դեղնած բուսականությամբ տափաստաններ, ցամաքած գետեր։ Իսկ դու ի՞նչ էիր պատկերացնում։

- Բայց չէ՞ որ այնտեղ քաղաքներ էլ կան։

- Դրանք նման են Ուռհային ու Այնթապին։

Սաֆիյեն չէր ուզում հավատալ։ Ըստ երևույթին Ռըզան կորցրել էր հիանալու ունակությունը։ Ինքը կզգար տարբերությունը, բնապատկերի ու մարդկանց ամենաաննշան տարբերությունը։

— Իսկ դու, քաղցրիկս, ի՞նչ ես կարդացել իմ բացակայությամբ։

Կինը կարմրեց և աչքերը հակելով պատասխանեց.

- Ֆիզուլի... «Լեյլա և Մեջնուն»։

- Նորի՛ց,— բացականչեց Ռըզան ծիծաղելով։

Սաֆիյեի արտևանունքները թրթռացին.

- Ինձ թվամ է, որ նրանք մեզ են նման։ Բոլոր սիրահարներն արյունակիցներ են։

- Դու իրավացի ես,– ասաց Ռըզան՝ գրկելով կնոջը։

Ռըզան նրան մի գիրք մեկնեց, որը Սաֆիյեն ընդունեց զարմացած ձևանալով, սակայն անկեղծ երջանկությամբ։ Մատը տարավ տիտղոսաթերթի ոսկեզօծ տառերի վրայով.

— «Գեղեցկություն և սեր» Ղալիբ Դեդե։

Գիրքը կրծքին սեղմելով՝ նա բռնեց Ռըզայի ձեռքը և շնորհակալություն հայտնեց։ Հանկարծ նրա ձայնը տխրեց.

- Իսկ մենք ժամանակ կունենա՞նք միասին կարդալու։

- Իհարկե,— պատասխանեց Ռըզան։

- Դու արդեն շատ հոգս ունեիր։ Իսկ հիմա, երբ դարձել ես գավառապետ... Եվ բացի դրանից, քո նոր կինը կպահանջի, որ իրենով զբաղվես։

Սաֆիյեն դա ասաց առանց դառնության և խանդի։ Նա վախենում էր միայն, որ ինքն ավելի քիչ հնարավորություն կունենար առանձնանալ ամուսնու հետ։ Առանձնանալու այդ պահերը միակն էին, երբ իրականությունն ու անուրջը միանում էին։

- Ինչպե՞ս կարող եմ ինձ զրկել մեր զրույցներից, իմ քաղցր Սաֆիյե։ Դու սխալվում ես։ Մարոն իմ նոր կինը չէ։ Ավելի շուտ բարեկամ է։ Գոնե ես կուզենայի, որ նա բարեկամ դառնար...

Սաֆիյեի դեմքը մռայլվեց։ Սիրուհի դեռ կարելի էր հասկանալ, բայց բարեկա՛մ։ Այս խոսքերից հետո ինքն իրեն վտանգված զգաց։ Ռըզան շոյեց նրա այտը.

- Մարդ կարող է բազմաթիվ բարեկամներ ունենալ, ինչպես կարելի է բազմաթիվ կանայք ունենալ։ Յուրաքանչյուրն ինչ-որ առանձնահատկություն ունի։ Յուրաքանչյուր հարաբերություն ուրույն է։ Ո՞վ կարող է ինձ պարգեւել այն անդորրը, որ ես զգում եմ քեզ հետ։ Ո՞ր կնոջ հոգին կարող է հաղորդակցվել իմ հոգու հետ, ինչպես քոնը։ Արդյոք կարո՞ղ է այլ ձայն, քոնից բացի, ի՛մ Սաֆիյե, տանել ինձ անուրջների աշխարհը։ Քո տեղը փորագրված է իմ սրտում և ոչ ոք չի կարող քեզ վտարել այնտեղից։

Այս խոսքերը փարատեցին Սաֆիյեի վախը։ Եվ նա երկար ժամանակ ընկղմվեց Ռըզայի մեղրագույն աչքերի հայեցության մեջ։ Նրան թվում էր, որ ինքը հալչում էր և որ իր մարմինն ինքնաբերաբար բացվում էր։ Եթե Ռըզան առներ իրեն այդ պահին, ապա միգուցե այս անգամ նրան կհաջողվեր արթնացնել այս մարմնի կիրքը, որն իրեն անձնատուր էր եղել ավելի շուտ պարտքի զգացումից, քան տենչից։ Սակայն տղամարդը տեղից չշարժվեց, և Սաֆիյեի զգացմունքները վերագտան իրենց սովորական հանդարտությունը։ Այդ պահն անցնելուց հետո նա թեթևություն զգաց։ Ինքնամոռացության այդ պահը, որի մասին կանայք խոսում էին բաղնիքում, նրան շատ էր վախեցնում, քանի որ ներքին համոզում ուներ, որ ինքն այնտեղից ամբողջական չէր վերադառնա։

Սաֆիյեն ժպտաց.

- Ինչպիսի՞ն է նա... այդ հայուհին։

Նա իրեն մեղավոր զգաց այդ հարցի համար.

- Ես չէի ուզենա ներխուժել քո գաղտնիքների մեջ։

- Հակառակը, ես ուզում եմ քեզ հետ նրա մասին խոսել։ Սակայն ես գրեթե նրան չգիտեմ։ Նա կրթված կին է, ուսում է ստացել և ճանապարհորդել է։ Բացի հայերենից ու թուրքերենից, նա խոսում է նաև ֆրանսերեն։ Ասում է, որ դաշնամուր է նվագում։

Սաֆիյեի աչքերը փայլատակեցին։ Նա հետաքրքրված հարցրեց.

— Բնավորությունն ինչպիսի՞ն է։

- Վճռական և ուժեղ, նա գիտի, թե ինչ է ուզում։

- Մե՞ղմ է, բարյացակա՞մ։

- Ինձ թվում է, այո,– ասաց Ռըզան ոտքի կանգնելով Սաֆիյեին համբուրելու համար։– Ներիր ինձ, հոգիս, ես պետք է այցելեմ մնացած կանանց, իսկ հետո պետք է նախապատրաստվեմ հյուրերի

ընդունելությանը։

Սաֆիյեն բռնեց նրա թևքից։ Նրա հայացքը աղերսող էր։ Ռըզան այնքան լավ էր ճանաչում կնոջը, որ իսկույն հասկացավ, թե ինչ էր նա սպասում։

- Մարոն իրեն օտար կզգա և կձանձրանա սկզբնական շրջանում։ Դու այնքան բարի կլինե՞ս, որ նրանով զբաղվես։

Սաֆիյեի դեմքը փայլեց.

- Քո ցանկությունն օրենք է ինձ համար, Ռըզա, իմ բարեկամ։

Առաջին կնոջից բաժանվելուց հետո Ռըզան գնաց դեպի Մակբուլեի սենյակը։ Մակբուլեն նստած էր լուսամատի մոտ դրված բազկաթոռին և, օգտվելով արևի վերջին ճառագայթներից, ձեռագործ էր անում։ Ասեղը թույլ չէր տալիս, որպեսզի նա աներ իր համար շատ սովորական շարժումը՝ բերանն ուտելիք տանել։ Ծոմ էր։ Ամբողջ օրը սոված մնալը դժվար չէր, սակայն դժվար էր ժամեր շարունակ մնալ առանց քաղցրավենիքի, չրեղենի և ընկույզի։

Լեյլան սխալվում էր, երբ մտածում էր, որ Մակբուլեն այլևս գրավիչ չէր տղամարդու համար։ Նրա գիրուկ մարմինը չէր խամրեցնում նրա գեղեցկությունը, հակառակը, ընդգծում էր նրա կանացիությունը։ Կաթնագույն մաշկը տարօրինակ պայծառություն ուներ, որը կարծես մարմնի խորքից էր գալիս։ Այն շատ հարթ էր, հոնքերը համարյա թե չէին երևում, իսկ մազերը շատ բարակ էին և փափուկ։

Նրա մարմինը փաղաքշելու ցանկություն էր հարուցում, իսկ դա անհրաժեշտ էր նրա հիվանդագին ամաչկոտությունը հաղթահարելու համար։ Սակայն այդ ամաչկոտությունը հաղթահարելուց հետո նա կորցնում էր զսպությունը, և սերը նրա հետ խաղի էր վերածվում, որը լի էր բեմադրություններով, ծիծաղով և երկիմաստ զրույցներով։ Նա հաճույք էր ստանում, երբ սիրային հարաբերությունները և մարմնի մասերը անվանում էին ամենագռեհիկ բառերով։ Դրանք միակ պահերն էին, երբ նա դադարում էր իր ամուսնուն դուքով դիմելուց։ Քանի դեռ տենչը չէր տիրացել նրան, նա իրեն պահում էր որպես վախկոտ և վայրի աղջիկ, որը հովանավորության կարիք ուներ։

Հենց այդպես էլ նա ընդունեց Ռըզա բեյին և դողալով փարվեց նրա կրծքին.

- Ամուր սեղմեք ինձ ձեր կրծքին, ի՛մ ամուսին, և պահեք ինձ ձեր գրկում։ Ձեր ուժի հովանու տակ։

Ինչպես և միշտ, այդ անվերապահ վստահությունը հուզեց Ռըզա բեյին։ Այն պահից ի վեր, որ նրա կիրքը Մակբուլեի հանդեպ մարել էր՝ ամուսնությունից երկու տարի անց, Ռըզան նրան ընկալում էր ավելի շուտ որպես երեխա, քան կին, և նրա սերը հայրական երանգ էր ստացել։

- Ես կուզենայի շատ փոքր լինել, որպեսզի դուք ինձ ձեր գիրկն

առնեիք և օրորեիք։

Դա գրեթե ծես էր դարձել նրանց հարաբերություններում։ Մի ձեռքով բռնելով նրա մեջքից, իսկ մյուսը տանելով նրա կլորիկ հետույքի տակ, նա բարձրացրեց կնոջը։ Մակբուլեն զարմացած ճիչ արձակեց և կախվեց նրա պարանոցից։ Ռըզան նրան օրորելով քայլում էր։ Նա գլուխը դրեց ամուսնու ուսին և փակեց աչքերը։ Նա իրեն լավ էր զգում Ռըզայի գրկում՝ անձնատուր լինելով նրա ուժին։ Երբ ամուսինը տենչում էր իրեն, ապա տանում էր մինչև մահճակալը, ուր կինն անշարժ էր մնում և թույլ էր տալիս, որ Ռըզան իր հագուստը հաներ։ Հակառակ դեպքում նա կնոջը իջեցնում էր բազկաթոռի մեջ։ Այս անգամ նա հենց այդպես էլ վարվեց։ Ուժի այդ ցուցադրումը Մակբուլեի հոգում ծնունդ էր տալիս ապահովության զգացման։ Նա այնքա՜ն բաներից էր վախենում և առաջին հերթին Բույուկ խանումից։

Ռըզա բեյը ճմկտեց նրա մեջքը։ Մակբուլեն գալարվեց և ծիծաղեց իր զրնգուն ծիծաղով։

— Դու ռամադանի ծոմը լա՞վ ես պահում։

- Օ՛, այո՛։

- Դժվա՞ր է,– հարցրեց Ռըզան կիսածիծաղկոտ, կիսացավակցող տոնով։

Մակբուլեն խորը հառաչեց.

— Տարեցտարի ավելի դժվար է դառնում։ Ամբողջ ցերեկը ես այն ուտեստների ցանկն եմ կազմում, որոնք ճաշակելու եմ մութն ընկնելուց հետո։ Եվ մի քսան անգամ փոխում եմ այդ ցուցակը։

Ռըզան դադարեց ծիծաղելուց։ Մակբուլեի պես որկրամոլի համար ծոմը սարսափելի փորձության էր վերածվում.

— Փորձիր միտքդ այլ բանով զբաղեցնել և մոռանալ ուտելիքի մասին։

— Չի՛ հաջողվում։ Կերակուրները շարքով անցնում են աչքիս առջևով, ինչպես միրաժն անապատում խաբում է ճանապարհորդներին։

Ռըզան թփթփացրեց նրա ձեռքին ու սիրտ տվեց.

— Այդ պատճառով դու ավելի մեծ վաստակ ունես Ալլահի աչքերում։

Մակբուլեի տեսքից երևում էր, որ դա շատ աննշան մխիթարանք էր իր համար։ Ռըզա բեյը նրան մի տուփ տվեց, որը գայթակղիչ բուրմունք էր արձակում։ Նա արագ բացեց ու հիացավ, քանի որ երբեք այդպիսի քաղցրավենիք չէր տեսել.

— Ի՞նչ է սա։

— Նուգա։

Մակբուլեն քիթը տուփին մոտեցրեց, դժվարությամբ դիմադրելով գոնե լեզվի ծայրով քաղցրավենիքը փորձելու գայթակղությանը։

- Կկարողանա՞ս համբերել մինչև գիշեր։

Մակբուլեն նայեց երկնքին, որը մուգ կապույտ էր դարձել.

— Այո,— պատասխանեց նա վստահորեն և փակեց տուփը։— Շնորհակալություն, իմ թանկագին ամուսին։ Հոգիս տակնուվրա եղավ այն մտքից, որ ես ինչ-որ նոր բան պետք է փորձեմ։

Մակբուլեն չարաճճի տեսքով Ռըզային նայեց, ինչը նրա համար հատկանշական էր սիրախաղերի ժամանակ, և ոտքերի մատներին կանգնելով նրա ականջին շշնջաց վերջին անպարկեշտ պատմությունը, որ լսել էր խոհանոցում։ Ռըզան նրանից հեռացավ բարձրաձայն ծիծաղելով։

Երբ Ռըզա բեյը մուտք գործեց Լեյլայի հյուրասենյակը, նրան շլացրեց սեղանին վառվող մոմերի լույսը։ Սենյակում տարածվում էր ծխացող խունկի բուրմունքը։ Երիտասարդ կինը թաքնվել էր սենյակի մութ անկյունում։ Նեղացած ձայնով նա հանդիմանեց ամուսնուն.

- Ինչպես միշտ, ես վերջինն եմ։

- Մոտեցիր, փոքրիկ կամակոր, արի քեզ տեսնեմ։

- Նախ նստիր, տիրակալ։

Ինքն իրեն հարցնելով, թե արդյոք այս անգամ Լեյլան ի՞նչ էր հնարել, Ռըզան նստեց ցածր թախտին։ Լեյլան մոտեցավ կատվազգու իր քայլվածքով։ Ոտքերի կոճերին ամրացված զանգակներն ու ենթադաստակներին հագած բազմաթիվ ապարանջանները զնգզնգում էին։ Նա թեթև և թափանցիկ քողեր էր հագել, որոնց տակից երևում էր մարմինը։ Սուրմայի հաստ շերտը ընդգծում էր նրա աչքերը և երկարացնում բարակ հոնքերը։ Նրա ձեռքերն ու ներբանները ներկված էին հինայով։ Նա ադամանդյա ապարոշ էր կրում, մեծ ականջօղեր և բազմաթիվ վզնոցներ։

Նրա բոբիկ սրունքները դոփում էին հախճապակյա սալերով պատված հատակին, և զարդերի չխկչխկոցը որոշակի ռիթմ էր ստեղծում։ Նա գլուխը հետ գցեց, և այդ դիրքն ընդգծեց նրա փոքր քիթը, արտահայտված այտոսկրերը և սուր կզակը։ Այդ նուրբ դեմքի վրա բերանը չափից ավելի մեծ էր թվում։ Փոքրիկ մարմինը գալարվեց, իսկ կոնքերը սկսեցին տատանվել։ Լեյլայի նրբությունը խաբուսիկ էր։ Նա պրկված մկաններ ուներ և նյարդերի կծիկ էր, նա նույնքան անհնազանդ էր, որքան համառ։

Նա սերը պայքարի էր վերածում։ Տղամարդուն գրգռելուց հետո սկսում էր նրա հետ խաղալ։ Ռըզան հետապնդում էր նրան, իսկ նա՝ ճարպիկ և շարժուն, խույս էր տալիս։ Այդ խաղն այնքան էր տևում, մինչև Ռըզան, հասնելով տենչանքի գագաթնակետին, ուժ էր գործադրում նրան մահճակալին շուռ տալու համար։ Նա մի քիչ դիմադրում էր, հետո տրվում էր վայրագորեն։ Լեյլան մեծ կարևորություն էր տալիս, որ մյուս երկու կանայք լսեին իր

զվարճանքների արձագանքը։

Լեյլային առաջին անգամ տեսնելով՝ Ռըզա բեյը կարծես կայծակնահար եղած լիներ։ Լեյլան տասնվեց տարեկան էր։ Նրա հայրը, որը շիա մահմեդական էր, հակառակվել էր այդ ամուսնությանը, երդվելով, որ կգերադասեր իր դստերը ամուսնացնել քրիստոնյայի, քան սուննի մահմեդականի հետ։ Սակայն նա հարուստ չէր, և ամուսնությունը Ռըզա բեյի հետ անսպասելի երջանկություն կլիներ իր դստեր համար։ Հորը համոզելու փորձերն ապարդյուն էին անցել, և ժամանակի հետ Ռըզայի կիրքն ավելի էր բորբոքվում։ Նա կորցրել էր քունն ու ախորժակը։ Վերջապես նա միջոց էր գտել։ Նա գնել էր Լեյլայի հոր հողամասին կից հողակտորը և պատվար կառուցելով պահել էր այն աղբյուրի ջուրը, որով այդ մարդը ջրում էր իր դաշտը։ Անխուսափելի սնանկացման սպառնալիքի ներքո հայրը ստիպված էր զիջել։

Լեյլան դափը զարկեց և սկսեց կոնքերը տատանել ամուսնու առջև։

- Դաժան տիրակալ, դու ինձ ստիպել ես երեք շաբաթ շարունակ նվաղել սիրուց, իսկ հիմա եկել է տառապելու քո հերթը։ Ես իմ քողերը մեկ-մեկ պետք է հանեմ։ Քո սովը ցավի կփոխակերպվի, և դու ծնկաչոք կաղերսես բավարարել քո տենչը։

Ռըզան սիրում էր, երբ Լեյլան պարում էր իր համար։ Նա իր ոճն ուներ և այնքան ճկուն էր, որ բազմաթիվ պարուհիներ կնախանձեին նրան։ Սակայն այսօր նա տրամադրություն չուներ։

— Մեկ ուրիշ անգամ,— ասաց նա։— Այս երեկո ես շտապում եմ։

Լեյլան մի կողմ նետեց դափը, պպզեց նրա առջև և ձեռքը տարավ դեպի նրա աճուկը.

— Այդ դեպքում տիրացիր ինձ արագ, գետնին։

Ռըզան բռնեց նրա ձեռքերը և հեռացրեց իր արվանդամից։

— Ռամադան է։ Ցերեկը սիրախաղերով չեն զբաղվում։

Լեյլան հիասթափված հոգոց հանեց։ Ռըզան բռնեց նրա կզակից և համբուրեց մխիթարելու համար։

— Ի՞նչ ես բերել ինձ համար։ Ձա՞րդ, մետաքսյա կերպա՞س։

Ռըզան նրան տվեց մի զույգ ոսկեթել հողաթափեր։ Հողաթափերից յուրաքանչյուրի երեսին մարգարիտներով ծաղիկներ էին բանված։ Լեյլան երեխայի պես ուրախացավ։ Նա հողաթափերն էր փորձում, երբ լսվեց Այնթապում արձակված հրանոթի պայթյունը, որն ազդարարում էր ծոմի գիշերային ընդհատումը։

— Հրանոթը,– բացականչեց նա մեջքի վրա ընկնելով։ Տիրացի՛ր ինձ։

Նա վրայից պոկեց քողերը մուգ պտուկներով ստինքներն ազատելու և նոր մազազերծ արված ցայլքով փորը բացելու համար։

- Լեյլա...– ասաց Ռըզա բեյը դժվարությամբ բարկությունը զսպելով։–

Ես քեզ ասացի, որ ժամանակ չունեմ։ Բույուկ խանումը մեզ է սպասում այգում։

Լեյլան սարսափեց։ Չորս տարվա մեջ առաջին դեպքն էր, որ Ըզգան մերժում էր իր նախաձեռնությունը։ Նա մի քանի վայրկյան անշարժ մնաց, հետո վեր թռավ։

— Դու ինձ այլևս չե՞ս սիրում,– հարցրեց նա մարտաշունչ տոնով։

— Ինչո՞ւ։ Սիրում եմ։

— Դու ինձ այլևս չես ուզում, այդպե՞ս է։

— Հենց այս պահին, ոչ, վերջ։

Նա մերժում էր իրեն։ Լեյլան այդպիսի բան չէր պատկերացնում։ Նա գլուխը կորցրեց ու պայթեց։

- Դու համբուրել ես քո հայուհուն ու հագեցել ես։

- Լռի՛ր– ասաց նա չոր տոնով։

Ցանկացած այլ դեպքում Լեյլան կհնազանդվեր, սակայն կատաղությունն ու խանդը նրան կուրացրել էին։ Բռունցքները կոնքերին դրած նա հեգնեց.

— Գիտենք, քրիստոնյայի համար ռամադան չկա։ Նա այդ բանը նույնքան լա՛վ է անում, որքան ես։ Գոնե հաճույք ստացե՞լ ես։

Եթե նույնիսկ Ըզգա բեյը հասկանում էր իր կնոջ վիճակը, այդուհանդերձ նրա համբերությունը հատելու վրա էր։ Նա խիստ ձայնով կրկնեց.

— Լեյլա, ես քեզ ասացի՝ լռի՛ր։

— Եթե կարծում ես, որ ես թույլ կտամ, որ ինչ-որ գյաուր իմ տեղը գրավի...

— Հերի՛ք է,— բղավեց Ըզգան։

Լեյլան հնազանդվեց և սկսեց լացել։ Ըզգան խոսքեր էր փնտրում նրան խելքի բերելու համար։ Լեյլան, լացակումած ձայնով, սկսեց հանդիմանել ամուսնուն։

— Ինձ հետ ամուսնանալու համար դու սնանկացրիր իմ հորը, գրեթե սովամահ արեցիր մորս, եղբայրներիս ու քույրերիս։ Իսկ հիմա ինձնից հրաժարվում ես։ Դե լա՛վ, բաժանվիր ինձնից։ Ես Սաֆիյեի նման ճմրթված փալաս չեմ դառնա, կամ էլ Մակբուլեի պես յուղոտ սագ։

Ըզգան, գունատվելով, բռնեց նրա թևը և սեղմեց.

— Հե՛տ վերցրու այդ խոսքերը։

Լեյլան, ատամները կրճտացնելով, լռում էր։ Նրա ամուսինն ավելի ուժեղ սեղմեց նրա թևը։ Նա մի քիչ էլ դիմացավ ցավին և դժկամությամբ

ասաց.

—– Ես... Ես չմտածեցի, թե ինչ եմ ասում։

Ռըզան բաց թողեց նրա ձեռքը։ Նրա ձայնը բարկությունից դողում էր.

— Ես քեզ արգելում եմ Սաֆիյեի ու Մակբուլեի մասին անգամ մտածել այդպես։ Հարգալից եղիր, դու շատ բան ունես նրանցից սովորելու։ Ինչ վերաբերում է իմ հյուրին, ապա դու նրան կժպտաս և կհրամցնես մեր տան հյուրասիրությունը։ Հասկացա՞ր։

Լեյլան լացում էր թևը շփելով։ Սակայն նրա ինքնասիրությանը հասցված հարվածը ավելի ցավոտ էր։ Այդուհանդերձ, նա համբուրեց Ռըզայի ձեռքը, ներում հայցելով։ Նա հուզվեց ու սրբեց նրա արցունքները, որոնցից լուծվում էր նրա աչքերի սուրման։

— Փոքրիկ կամակոր... Միշտ չէ, որ ես կկարողանամ զսպել բարկությունս, ինչպես հիմա։ Այլևս ինձ չփորձես։

Լեյլան հարցրեց խղճալի տեսքով.

— Դու ինձ սիրո՞ւմ ես։

— Իհարկե– ասաց Ռըզան նրան համբուրելով։

Թովմասը պառկած էր բազմոցին, իսկ կնքահոր ծովային գլխարկը դրել էր աթոռին, իր կողքին։ Նա այդպիսով տիրանում էր սենյակին։ Որդու կողքին նստած Մարոն սպասում էր, որ գայլն իր հետևից։ Քիչ առաջ Էմինեն նրան զգուշացրել էր, որ ինքը պետք է ճաշեր ամբողջ ընտանիքի հետ այգում, խաղողի վազերի տակ։ Ճաշի հեռանկարը տհաճ էր Մարոյի համար, որը նկատել էր Բույուկ խանումի սառը վերաբերմունքը։ Նա հնարավորություն չուներ խուսափելու այդ պարտականությունից, առանց վիրավորելու իրեն հյուրընկալողներին։ Ուրեմն պետք էր ժպտալ, կեղծել և ձևանալ, թե խոսակցությունը հետաքրքրում է։ Կեղծե՛լ... Նորի՛ց։

Նա Թովմասի հետ աղոթում էր, երբ դուռը ծեծեցին։ Նա դուռը բացեց Ռըզա բեյի առջև, որը նրա ձեռքը համբուրեց.

— Դու թովիչ ես։

— Շնորհակալություն,— ասաց նա աչքերը խոնարհելով։

Մարոն հագել էր սպիտակ շատ թեթև մետաքսից կարված զգեստը, որ Ռըզան ուղարկել էր դայակի միջոցով։ Ոսկեթել ձեռագործով զարդարված պարեգոտը գոտկատեղին հավաքվում էր կանաչ գոտիով և իջնում էր մինչև ներբանները։ Մարոն աչքերն ընդգծել էր սուրմայով, իսկ մազերը հավաքել էր ծոծրակին, և այդ սանրվածքը շեշտում էր նրա դեմքի կատարյալ ուրվագիծը։ Նրա նրբագեղ և ներդաշնակ տեսքը ոգևորեց Ռըզա բեյին, և նա հիշեց մոր խոսքերը։ Սիրահարվա՞ծ։ Ի՞նքը։ Նա այդ հարցը չէր դիտարկել այդ տեսանկյունից։

Նավթի լամպի լույսի ներքո Ռըզա բեյի շրթունքները խոնավ էին

թվում, իսկ ստվերի պատճառով ավելի ցցուն երևացող այտոսկրերի վերևում աչքերը՝ կանաչ։ Նա հպարտ էր ու ինքնավստահ և Մարոյին էր նայում ուշադիր հայացքով, որից նա իրեն վատ էր զգում։ Նա չէր կարող անտեսել իրականությունը՝ Ռըզա բեյի դեմքը բացահայտորեն արտացոլում էր նրա զգացմունքները՝ տենչանք և, իսկ դա ավելի լուրջ էր, սեր կամ դրան մերձեցող մի զգացմունք։

— Սենյակդ հարմա՞ր է,— հարցրեց նա ներս մտնելով։

— Այո, իհարկե։

Ռըզան, սենյակը ցույց տալով, ասաց.

— Համարիր, որ քո տանն ես։ Բոլորս շատ երջանիկ ենք, որ դու և որդիդ մեզ հետ եք։

— Բոլո՞րդ։ Իսկապե՞ս,– հարցրեց Մարոն։– Սակայն ինձ թվաց...

Ռըզան ձեռքը թափ տվեց, կարծես մոծակ քշեր.

— Մի վստահիր առաջին տպավորությանը։ Դա ընդամենը զարմանքի հետևանք էր՝ մայրս չգիտեր քո ժամանման մասին։

— Դուք նրան զգուշացրե՞լ եք, որ ես այստեղ երկար չեմ մնալու։

Պատասխանելու փոխարեն անկաշկանդ քայլվածքով նա գնաց դեպի պատշգամբի դուռը։ Մարոն հետևեց նրան և շարունակեց, ցանկանալով անտարբեր երևալ։

— Ես կտամ իմ քեռի Մեսրոպի հասցեն, որպեսզի դուք նրան հեռագրեք։ Այդպիսով ես կկարողանամ մեկնել առանց ձեր և ձեր մոր հյուրասիրությունն անհարկի չարաշահելու։

Այն միտքը, որ Մարոն կարող էր անհայտանալ իր կյանքից, Ռըզային ցավ պատճառեց։ Նրան համակած երջանկության հաճելի զգացումը ցնդեց։ Եվ նա ստացավ պատասխանը, այո, ինքը սիրահարված էր։ Հայացքը մութ այգուն հառած՝ նա մի քանի վայրկյան հոլովեց «սեր» բառը։ Ուրեմն դրանից էր, որ վերջին մի քանի օրերն ինքն իրեն երիտասարդ էր զգում։ Նոր կիրք քառասունվեց տարեկանում։ Նրա դեմքին հայտնված ժպիտը վերացավ։ Ինչպե՞ս կարող էր ինքը, առանց բանտարկյալի կարգավիճակում պահելու Մարոյին, ստիպեր նրան, որ այստեղ մնար բավականաչափ երկար, որպեսզի ինքը հասցներ նրան նվաճել։ Ասե՞լ նրան, որ իր ամուսինը կախաղան էր հանվել։ Որ նրա քեռին այլևս Ստամբուլում չէր ապրում։ Ոչ, դա շատ հեշտ կլիներ և, բացի դրանից, իրեն միշտ կթվար, որ Մարոն ճարահատյալ էր մնացել։ Նա ուզում էր, որ Մարոն բոլորի միջից իրեն ընտրեր, իրեն սիրեր և ամեն ինչ թողներ իր համար։

Նա մտահոգ տեսքով շրջվեց Մարոյի կողմը.

— Ամեն ինչ այդպես հեշտ չէ, ինչպես քեզ թվում է,– ասաց նա։— Բանակը վերահսկում է փոստը, որը ծառայում է միայն ազգային շահ ներկայացնող խնդիրներին։ Նույնն է երկաթուղու դեպքում։ Բացի

դրանից, անհրաժեշտ կլինի ճանապարհորդել թիկնազորով, որը կազմված կլինի կոպիտ տղամարդկանցից, և ճանապարհի զգալի մասը ոտքով կտրել, քանի որ երկաթուղին ընդհատվում է Տավրոսում, ուր թունելը դեռևս կառուցված չէ։

— Ես ավելի վատ պայմաններում եմ եղել,– շշնջաց Մարոն։

— Դա դժվար կլինի կազմակերպել, նույնիսկ ինձ՝ գավառապետիս համար։

Հաշվի առնելով Ռըզա բեյի զգացմունքները, որ Մարոն կռահել էր, այդ պատասխանը նրան չզարմացրեց։ Սակայն նա ցույց տվեց իր հիասթափությունը, նույնիսկ մի քիչ չափազանցելով։ Դա տվեց սպասված արդյունքը։ Ռըզա բեյն շտապեց ավելացնել.

— Հասկացիր ինձ, ես չեմ ասում, որ դա անհնար է, միայն դժվար։ Այդ գործն ինձ թող և համբերատար եղիր։ Ես կրկնում եմ. այստեղ դու քո տանն ես։ Հանգստացիր ու ճաշակիր այս տան անդորրը։

Ռըզան բռնեց Մարոյի ձեռքերը, որոնք վերջինս չհամարձակվեց ազատել.

— Դու ինձ հավատում ես, չէ՞։

Միշտ այդ երկիմաստ հարցերը։ Մարոն ստիպված եղավ «այո» անել գլխով։ Ռըզան մոտ եկավ և ասաց լուրջ ձայնով.

— Պատերազմ է, ու երկիրը տակնուվրա է եղել սարսափելի իրադարձություններից, հենց այն իրադարձություններից, որոնցից դու էլ ես տուժել։ Քո խեղճ մայրը...

Մարոն ցնցվեց և ձեռքն ազատեց։ Նրա շրթունքները դողում էին, նա դժվարությամբ էր զսպում իր մեջ հասունացող պայթյունը։ Ռըզա բեյի ձայնը էլ ավելի զգացմունքային դարձավ.

— Զգիտեմ, թե դու ինչ ես մտածում իմ մասին, սակայն ես ոչ մի կապ չունեմ նրանց հետ, ովքեր ցանկանում են ոչնչացնել քո ժողովրդին։ Կառավարությունը վճռել է, և ես, ինչպես և ուրիշները, այլ ելք չունեմ, քան ենթարկվել։ Սակայն ես սիրում եմ հայերին և հարգում եմ նրանց հավատքը։

Այս փաստարկները մի քիչ հանդարտեցրին Մարոյին։ Տղամարդը շարունակեց.

— Ես վեց կամ յոթ հայուհի եմ վերցրել որպես աղախին, և բազմաթիվ ընտանիքներ ապահով կերպով ապրում են իմ հողերում։ Ես արել եմ ամեն ինչ քո ազգակից իմ բարեկամների համար։ Հիմա, երբ ես գավառապետ եմ, կկարողանամ օգնել ավելի շատ հայերի։ Սակայն, հասկացիր, որ իմ հնարավորությունները սահմանափակ են։ Եթե շատերին օգնեմ, ինձ պաշտոնանկ կանեն, և պաշտոնը բաժին կհասնի դաժան և անխիղճ մարդու։

Մարոն, հուզվելով այդ բառերից, չգիտեր, թե ինչ մտածեր։ Ռըզան

նորից տիրացավ նրա ձեռքին։ Նա գրեթե աղերսում էր.

— Ի սեր Աստծու, մի նույնացրու ինձ քո թշնամիների հետ, Մարո։ Հանձին ինձ տես դաշնակցի, որը պաշտպանում է քեզ, բարեկամի, որը քեզ համար բացում է իր տան դուռը։ Իմ տան պատերը պատվար են քեզ համար, և դրսում մոլեգնող տառապանքը չի կարողանա քեզ հասնել։

Նրա դեմքն անկեղծ էր, և աչքերի ջերմությունն այն ավելի էր գեղեցկացնում։ Սակայն այդ աչքերում նպատակասլացություն, սպասում և սով կար, որոնք կասկած էին հարուցում Մարոյի հոգում։ Պաշտպանվելու համար նա մի հարց տվեց, որի մեջ անվստահություն կար.

— Իսկ ինչո՞վ է բացատրվում ձեր հոգատարությունն իմ նկատմամբ։

Ռըզան ձևացավ, որ չի հասկանում հարցը, և Մարոն կրկնեց հարցը։ Ռըզա բեյը բաց թողեց նրա ձեռքերը և ուսերը թոթվեց։ Նա ժպտում էր շփոթված երեխայի պես։ Նա սկսեց ճեմել սենյակում և ոգևորված խոսել.

— Ի՞նչ կարիք կա ամեն ինչ անվանել իրենց անուններով։ Առուն ինքն իրեն հարց տալի՞ս է, թե ինչո՞ւ է ինքը դեպի դաշտավայր հոսում։ Ամպը հետաքրքրվո՞ւմ է արդյոք, թե ինչից է, որ քամի է փչում։ Ես ենթարկվում եմ իմ հոգու պոռթկումներին առանց մտածելու Աստծու կամքի մասին։ Սովորիր ենթարկվել Աստծու կամքին։

— Մենք ասացվածք ունենք. Աստծու վրա հույս դիր, սակայն դու էլ մի բան արա։ Ռըզան խորամանկ տեսքով ժպտաց.

— Դրանից բացի, պետք է իմանալ, թե երբ դադարեցնել պայքարը և հույսը դնել Աստծու վրա։

Ռըզա բեյը մոտեցավ հյուրասենյակի դռանը, ուր վառվում էր նավթի երկրորդ լամպը։ Տեսնելով, որ Թովմասը քնած չէ, նա մոտեցավ բազմոցին։

— Ես իմ ճառերով քեզ չե՞մ թողնում, որ քնես,– հարցրեց նա մեղմ ձայնով։

— Ոչ։

Ռըզան դանդաղ էր խոսում, որպեսզի թուրքերեն վատ իմացող երեխան իրեն հասկանար։

— Դու կուշտ ճաշեցի՞ր։

— Այո,– պատասխանեց Թովմասը զգուշավորությամբ։

— Ինձ թվաց, որ դու հետաքրքրվում ես ձիերով։

Թովմասը լռում էր, սակայն նրա աչքերը մատնեցին նրա հետաքրքրասիրությունը։

— Դու ձի հեծնել կարո՞ղ ես։

— Այո՛։

Պատասխանի շտապողականությունը զվարճացրեց Ռըզային։

— Ես մեծ ախոռ ունեմ։ Եթե ցանկանում ես, կարող ես ընկերակցել որդիներիս ձի հեծնելիս։

Իրենից անկախ Թովմասը գլխով արեց։ Ռըզան խառնեց նրա մազերը և շշնջաց ջերմ ձայնով.

— Բարի գիշեր, տղաս։

— Բարի գիշեր։

Բավարարվելով, որ տղան հակակրանք չի ցուցաբերում իր նկատմամբ, Ռըզա բեյը վերադարձավ ննջարան։ Մարոն գնաց որդուն համբուրելու։ Ռըզան նրան սպասում էր միջանցքում։ Երբ Մարոն մոտեցավ, Ռըզան նրան մեկնեց զմրուխտե մի վզնոց։

— Սա քեզ համար է։

Մարոն հետ քաշվեց.

— Քեզ եմ նվիրում։

— Ես չեմ կարող ընդունել։

Տղամարդը պնդեց.

— Ինձ հաճույք պատճառելու համար...

— Շնորհակալ եմ, Ռըզա բեյ, սակայն հրաժարվում եմ։

— Նվերից չի կարելի հրաժարվել։

Մարոն անհողդողդ էր մնում։ Ռըզան նայեց նրա աչքերի մեջ, և նրա ժպիտը խորամանկ դարձավ.

— Դու վախենում ես, որ դրա դիմաց ինչ-որ բան կխնդրե՞մ։

Մարոն շփոթված էր։ Ռըզայի դեմքին ափսոսանք կար, իսկ ձայնը հուզված էր.

— Ես ուզում եմ, ու դու զարդ կրես, որպեսզի մոռանամ առաջին տպավորությունը, որ թողեցիր ինձ վրա։ Դու կեղտոտ էիր ու ողորմելի տեսք ունեիր, պառկած էիր գետնին ու շրջապատված էիր տղամարդկանցով, որ պատրաստվում էին քեզ բռնաբարել։

Մարոն իրենից անկախ այլայլվեց այդ հիշողությունից։ Ռըզան շարունակեց.

— Ինձ նույնպես այդ հիշողությունը տհաճություն է պատճառում։ Քո հայացքում այնքան հուսահատություն կար։ Հիմա էլ այդ պահը հիշելիս ես ցնցվում եմ։ Ջնջիր այդ տեսարանն իմ հիշողությունից, գեղեցիկ եղիր։

Նա վզնոցն անցկացրեց Մարոյի վզին և կողպեքը փակեց։ Մարոն թույլ տվեց, որ նա այդ բանն աներ, սակայն ասաց վստահորեն.

— Մենք պայմանավորվում ենք, որ մեկնելիս ես այն կվերադարձնեմ։

Պատասխանելու փոխարեն Ըզգան շարժումով նրան հրավիրեց իրեն հետևել։ Միջանցքի խորքում, Բույուկ խանումի բնակարանի մոտ պտուտակաձև սանդուղքը տանում էր դեպի այգին։ Այդ սանդուղքով կանայք կարող էին պարտեզ իջնել օդափոխվելու առանց քող հագնելու, ինչպես պարտավոր էին անել առաջին հարկի սենյակներով անցնելիս։

Քամին դադարել էր, և ծաղիկների ծանր և արբեցնող բուրմունքը կախված էր ծառերի տակ։ Օդը տարուբերվում էր գրեթե ամենուր տեղի ունեցող տոնախմբությունների խուլ արձագանքից։ Եթե օրվա ընթացքում չէր կարելի ոչ ուտել, ոչ խմել, ապա մութն ընկնելուն պես ամեն ինչ փոխվում էր, և տոնախմբությունները, երաժշտությունն ու պարը շարունակվում էին մինչև լուսաբաց։ Պատերազմն ու սննդամթերքի սղությունը մոռացվել էին։

Հողի մեջ խրված ջահերը լուսավորում էին ծառուղին մինչև ավազանը։ Ծառուղու երկու կողմերում՝ ծառերի ստվերներում երևում էին մարմարյա արձաններ։ Տաղավարը հենվում էր տան պատին։ Խաղողի վազերի տերևների արանքից երևում էր մոմերի լույսը, և գետինը ծածկված էր լույսի լաքաներով։ Կլոր մեծ սեղանի շուրջը նստած էին վեց կին։ Բույուկ խանումն ու Էմինեն սևազգեստ էին, սակայն մնացածները հագել էին բաց գույների՝ դեղին, երկնագույն, վարդագույն մետաքսյա զգեստներ։ Մարոն առաջին անգամ էր տեսնում Ըզգա բեյի կանանց դեմքերը՝ երեք գեղեցկուհիներ, որոնցից յուրաքանչյուրին ճանաչեց նրանց հայացքներից։ Այնտեղ էր նաև Շահանեն՝ Սաֆիյեի ավագ դուստրը, որը ժառանգել էր մոր կլոր դեմքը և հոր մոխրականաչ աչքերը։ Նա պետք է ամուսնացած լիներ նախորդ գարնանը, սակայն հարսանիքը հետաձգվել էր, քանի որ փեսացուն՝ հրետանու գնդապետը, կռվում էր անգլիացիների դեմ Միջագետքի ճակատում։

Ըզգա բեյի հայտնվելուն պես, կանայք, բացի Բույուկ խանումից, ոտքի կանգնեցին մետաքսի խշշոցի և զարդերի զնգզնգոցի ուղեկցությամբ։ Նրանք կրում էին մատանիներ, ապարանջաններ և վզնոցներ, որոնք փայլում էին մոմերի լույսի ներքո։ Բույուկ խանումը ժպտաց Մարոյին, որն էլ համբուրեց նրա ձեռքը։

— Հարգանքիս հավաստիքը, Բույուկ խանում։ Օրհնյալ լինեք դուք ձեր հյուրասիրության համար։

— Քո ներկայությունը պատիվ է մեզ համար, աղջիկս,– պատասխանեց ծեր կինը մի քիչ խստաբարո քաղաքավարությամբ։

Դիրքորոշման այդ փոփոխությունը զարմացրեց Մարոյին, և նա փոքր-ինչ հանգստացավ։ Կանանց, դայակի, Շահանեի ընդունելությունն ավելի ջերմ էր։ Նույնիսկ Լեյլան իրեն հիասքանչ էր պահում, չնայած ուսումնասիրում էր Մարոյի արտաքինը, որին իր ախոյանն էր համարում, և համեմատում էր իր հետ։ Ամուսնու նախազգուշացումից հետո Լեյլան որոշել էր նոր մարտավարություն որդեգրել։ Նա այլևս չէր ցուցադրում խանդը, այլ օգտագործում էր հմայքներն իր տղամարդու

սիրտը վերստին նվաճելու համար։

— Իմ կողքին նստիր,— ասաց նա Մարոյին՝ ցույց տալով իր կողքին ազատ պահած աթոռը։

Այսպիսով Ռըզան չէր կարող հիանալ հայուհիով առանց միևնույն ժամանակ Լեյլային տեսնելու, որը համոզված էր, որ իր երիտասարդությունը իրեն առավելություն էր տալիս։

Սեղանից քիչ հեռու մի երաժիշտ կին սպասում էր սազը ձեռքին։ Ռըզա բեյը նշան արեց, և նա սկսեց ժողովրդական երգեր նվագել։ Աղախինները մատուցում էին խորտիկներ, բաստուրմա, թթուներ, դոլմա, ձուկ ձիթապտղի յուղով, լցոնած սմբուկներ։ Երբ մի ուտեստը վերջանում էր, փոխարենը մեկ ուրիշն էին բերում։ Սեղանակիցներն ուտում էին առանց շտապելու՝ ճաշակելով տարբեր ուտեստներ և իրենց խնայելով, քանի որ ճաշը ժամեր էր տևելու։ Միասին լինելու երջանկությունն ու զրույցի հաճույքն ավելի կարևոր էին, քան ուտելիքը։ Բացառություն էր կազմում Մակբուլեն, որին սովը սարսափելի տառապանքներ էր պատճառել օրվա ընթացքում։ Իր կանանց շրջապատում նստած՝ Ռըզա բեյը նմանվում էր արքունիքով շրջապատված տիրակալի։ Նա պերճախոս էր, խոսքը՝ վերամբարձ, խելացի և հմայիչ, իսկ շարժումները՝ անբռնազբոս։

Մարոն իրեն օտար էր զգում, չնայած բոլորը անում էին ամեն ինչ նրան խոսակցության մեջ ներգրավելու համար։ Ռըզա բեյը, որն արդեն շատ բան գիտեր Մարոյի մասին, նրան հարցեր էր տալիս՝ նրան հնարավորություն ընձեռելով փայլելու։ Մարոն զգուշավոր էր, և այդ խաղի մեջ չէր ներգրավվում։ Նրա կարճ պատասխաններն այնքան Ռըզա բեյին չէին հիասթափեցնում, որքան Սաֆիյեին։ Առաջին կինը որսում էր Մարոյի յուրաքանչյուր շարժումը և կլանում էր նրա ամենաաննշան խոսքը այնպիսի ուշադրությամբ ու այնպիսի հետաքրքրությամբ, որ դա զարմացնում էր Մարոյին։ Օգտվելով լռության պահից, Սաֆիյեն թեքվեց դեպի Մարոն.

— Ասա ինձ, երբ ճանապարհորդում ես և մեծ տարածություններ անցնում, նկատո՞ւմ ես, որ երկիրը կլոր է։

Մնացած երկու կանայք ու Շահանեն փռթկացին։ Սաֆիյեն նեղացած ասաց Մարոյին.

— Ռըզա բեյը նույն կերպ իրեն պահեց, երբ նրան այս հարցը տվեցի։

— Դու երեխայի պես միամիտ ես,– հանդիմանեց նրան Բույուկ խանումը։

Սաֆիյեն սպասում էր, որ Մարոն պատասխաներ։

— Ուր էլ գնաս, երկիրը կլոր սկավառակ է թվում, որը ծածկված է գմբեթով։

Առաջին կնոջ հիասթափությունը տխրեցրեց Մարոյին, և նա հիշեց իր աշխարհագրության ուսուցչուհու դասն ու ավելացրեց.

— Բացառությամբ ծովափի։ Երբ ափին շոգենավ է մոտենում, սկզբում ծուխն ես տեսնում, հետո ծխնելույզները և վերջապես նավը։ Դա երկրի գնդաձև լինելու ապացույցն է։

Դեղձի և արմավի միջոցով, որոնցից մեկը երկիրն էր ներկայացնում, իսկ մյուսը նավը, նա ներկայացրեց երևույթը։ Սաֆիյեն փայլում էր.

— Ահա՛,– ասաց նա, հաղթական տեսքով նայելով իր ընկերուհիներին, — ես այնքան միամիտ չեմ, որքան դուք կարծում եք։

Բույուկ խանումը ուսերը թոթվեց.

— Հիմա դու շատ առաջ գնացիր։ Եվս մեկ ավելորդ բան, որ լցնում ես գլուխդ։

Սաֆիյեն այնքան երջանիկ էր, որ ծիծաղեց սկեսուրի կծու խոսքերի վրա և Մարոյին աչքով արեց։

Զրույցն այլ ընթացք ստացավ և Մարոյին այլևս չէր հետաքրքրում։ Շուտով ձայները հեռու թվացին։ Ի՞նչ էր ինքն անում այս խաղողի վազերի տակ, այս մարդկանց շրջապատում, որոնց հետ ոչ մի ընդհանուր բան չուներ։ Տարօրինակ զգացում համակեց նրան, և ամեն ինչ անիրական դարձավ։ Նա աչքերն իջեցրեց և նորից տեսավ մոր դեմքը մահանալիս։ Նա քշեց այդ պատկերը։ Վարդանը, իրենց տունը Սվսաում, հայրը՝ Կոստանդնուպոլսի փողոցներից մեկում, մահացած Արաքսին՝ Արմենի գերեզմանի վրա և քարանձավը, որը բվվում էր տնքոցներից։ Գլխապտույտից նա բացեց աչքերը։

Ռըզա բեյը մտահոգ նայում էր Մարոյին։ Մարոն ժպտաց, ցույց տալու համար, որ ամեն ինչ լավ էր։

Լուսինը ծագել էր, և աստղազարդ երկնքի վրա ուրվագծվում էր հարևանությամբ գտնվող մինարեթը։ Ծառերի ճյուղերի արանքից արդեն կարելի էր տեսնել պարտեզի պարիսպը։ Պաշտպանող պատեր, ինչպես պնդում էր Ռըզա բեյը։ Մարոն չէր կարողանում դա ընկալել այլ կերպ, քան բանտ։ Ռըզայի հետ ունեցած խոսակցության ծվենները Մարոյի միտքն էին գալիս։ Նա խուսափում էր որոշակի խոստանալ, որ կկազմակերպեր իր մեկնումը մայրաքաղաք, իսկ Մարոյի վիճակը նրան հնարավորություն չէր տալիս որևէ բան պահանջել։ Մի բան հաստատ էր. ինքն ու Թովմասն այս պահին պաշտպանված էին տեղահանությունից, և հարկավոր էր չվտանգել այդ ապահովությունը։ Հարկավոր էր նաև հաշվի առնել այն հետաքրքրությունը, որ իր նկատմամբ ցուցաբերում էր Ռըզա բեյը։ Նա չէր ուզենա, որ Մարոն գնար, սակայն չէր ուզենա նաև իրեն վանել։ Նա մտածեց Էմինեի խոսքերի մասին, «ճարպիկ կինը ստանում է այն, ինչ ուզում է»։ Իր նկատմամբ Ռըզա բեյի տածած զգացմունքներն օգտագործելը տհաճ էր Մարոյի համար։ Եվ բացի դրանից, դա վտանգավոր խաղ էր։

Աղախիններից մեկը հայտնեց տանտիրոջը, որ հյուրերը ժամանում էին։ Նա հեռացավ հյուրերին ընդունելու, որոնց հետ նա պետք է անցկացներ գիշերվա մի մասը։ Քիչ անց Բույուկ խանումը վեր կացավ և

հայտնեց, որ գնում է իր սենյակը։

Մարոն մի քանի րոպե սպասեց և խնդրեց մնացածներին, որ իրեն ներեն։ Սաֆիյեն պնդում էր, որ Մարոն մի քիչ էլ մնար։ Լեյլան բռնեց նրա ձեռքը.

— Այո. մեզ հետ մնա։

— Հիմա հիմնական ուտեստներն են բերելու,– ասաց Մակբուլեն։

Էմինեն օգնության հասավ Մարոյին.

— Հանգիստ թողեք նրան։ Չեք տեսնո՞ւմ, որ հոգնել է ճանապարհից։

Սաֆիյեն չթաքցրեց իր հիասթափությունը.

— Մենք հազիվ էինք մենակ մնացել...

Մարոն ոչ մի ցանկության չուներ մենակ մնալ Ռըզա բեյի երեք կանանց հետ։ Նա նրանց բարի գիշեր մաղթեց և հեռացավ։

Լուսաբացից մեկ ժամ առաջ Այնթապից ամպի գոռոցին նմանվող հեռավոր մի որոտ լսվեց։ Դրան արձագանքեց թմբուկը Ռըզա բեյի տան բակում։ Ամենուր արթնացնում էին մարդկանց, որպեսզի նրանք հասցնեին ուտել ծոմի նոր օրվանից առաջ։ Մարոն փորձեց նորից քնել, սակայն մի քանի րոպե անց աղախինը դուռը ծեծեց։ Սև մազերի սոսկից խոշոր աչքերը նայում էին մռայլ հայացքով.

— Բարև, խանում։ Ուզո՞ւմ եք ճաշասենյակ իջնել, թե ... նախաճաշն այստեղ բերեմ։

Նա դանդաղ էր խոսում և բառերն անվարժ էր արտասանում։ Այն աղախինն էր, որի մասին իրեն ասել էին, որ նա հայ էր։

— Անունդ ի՞նչ է։

— Այլա։

— Քո իսկական անունը,– հարցրեց Մարոն հայերեն։

Փոքրիկ նիհար դեմքը շիկնեց։ Աղջիկը վախեցած հայացք գցեց ուսի վրայով։ Մարոն բռնեց նրա թևից և ներս բերեց սենյակ։

— Դու վախենալու պատճառ չունես, ես էլ քեզ պես հայ եմ։

— Գիտեմ, ցածրաձայն պատասխանեց աղջիկը։– Բայց...

Նրա վախն ակնհայտ էր, սակայն իրեն մեղավոր զգալով աղջիկը շշնջաց.

— Վարդուհի։

Մարոն նրան խղճաց և այլևս հարցեր չտվեց։

— Ուտելիք բեր։

Աղախինը տասնհինգ րոպեից եկավ և լուսամատի մոտ գտնվող ցածր

սեղանին սկուտեղ դրեց։

— Նստիր, Վարդուհի,– ասաց Մարոն բարձին նստելով։

Զնայած Մարոն ցածրաձայն էր խոսում, աղախինը սարսափահար տեսք ուներ։

— Չեմ կարող, տիկին։

— Ոչ ոք չի իմանա։

Մարոն պնդեց, և Վարդուհին դժկամությամբ ստիպված եղավ հնազանդվել։ Մարոն նրան ուտելիք առաջարկեց, և նա համաձայնեց երկար համոզելուց հետո։

— Ինչի՞ց ես վախենում։

— Չեմ ուզում, որ ինձ այստեղից քշեն։ Այստեղ ինձ կերակրում են, և ես անկյուն ունեմ քնելու համար։

— Որտեղի՞ց ես։

— Բալուից։

— Դա որտե՞ղ է։

— Շատ հեռու։ Խարբերդից արևելք։ Ես իմ բոլոր հարազատներին կորցրել եմ։

Ավելին ասելու կարիքը չկար։ Մարոն շատ լավ պատկերացնում էր այն դժբախտությունները, որ բաժին էին ընկել աղջկան։ Նրանք երկար հայացք փոխանակեցին, և հուզմունքն ավելի ուժգին դարձավ։ Վարդուհին սկսեց դողալ և կծեց շրթունքը, սակայն դիմադրեց, երբ Մարոն փորձեց նրան գրկել։ Թեև նա շատ էր ուզում նորից փոքր աղջիկ դառնալ, որին մայրը մխիթարում էր։ Այդ ժամանակն անցել էր։ Նա իր թիկունքում թողել էր միայն մահ և վիշտ և արդեն հասկացել էր, որ ինքը պետք է թաղեր անցյալը իր հիշողության ամենահեռավոր անկյունում ու մոռանար իր քրիստոնեական ծագումը։

— Ես կարո՞ղ եմ գնալ։ Խոհանոցում կանհանգստանան։

— Այո։ Շնորհակալություն... Այլա։

Այն, որ կինն անցավ թուրքերենի և իրեն նոր անունով դիմեց, հանգստացրեց աղջկան։

Մարոն դուրս եկավ պատշգամբ։ Արևը դեռևս չէր ծագել, սակայն շոգն իրեն արդեն զգալ էր տալիս։ Օդը չորացնում էր կոկորդը և այրում էր թոքերը։ Քամին դաշտերից կարմրավուն փոշի էր բարձրացնում։ Մարոն, դեռևս հուզված Վարդուհու հայացքից, մտածեց բոլոր այն դժբախտների մասին, որոնց ոստիկանները ստիպելու էին այդ շոգ օրով քայլել մինչև ուժասպառ լինելը։ Նա աղոթեց։

Զախ կողմում մի շարժում գրավեց նրա ուշադրությունը։ Դա մուեզզինն էր, որը դուրս էր գալիս մինարեթը երիզող պատշգամբը, որը

գտնվում էր հենց կոնաձև տանիքի տակ։ Մարոն նշմարում էր նրա երկար մորուքը, որը նույնքան սպիտակ էր, որքան գլխակապը։ Նա դեմքով դեպի արևելք կանգնեց արևի առաջին ճառագայթը տեսնելու համար։ Ձեռքերն ականջներին դրած, նա ռնգային ձայնով երգեց աղոթքի հրավիրող կանչը, որը կրկնեց դեմքն անելով աշխարհի մնացած երեք կողմերը։ Դրան հետևեց տարօրինակ մի լռություն, հետո գյուղի ձայները նորից լսվեցին։ Ներդաշնակ երգեցողությունը երկար հնչեց Մարոյի հոգում։ Սակայն նրա ինքնամփոփ վիճակը զուրկ էր հանդարտությունից։ Նա չէր կարողանում Վարդուհու պես երես թեքել այն անհամար մեռյալներից, որոնց կրում էր իր հոգում։ Իսկ ապագան այնքա՜ն անորոշ էր։ Վարդան... Կոստանդնուպոլիս...

Քիչ անց Թովմասը նրան դուրս բերեց այդ վիճակից։

— Մայրի՞կ։

— Պատշգամբում եմ, սիրելիս։

Երեխան հայտնվեց՝ աչքերը տրորելով։ Նա ժպտում էր։

— Ես երազում հայրիկին եմ տեսել,— ասաց նա մորը համբուրելով։— Նա հեծել էր Հուր Կրակին և մեր կողմն էր սլանում։ Ասաց, որ իրեն սպասեմ։

Աչքերը կկոցելով, Թովմասը զննեց մոր դեմքը, որը նույնպես ջանում էր ժպտալ։

— Մայրիկ, իսկ երազները ճի՞շտ են։

Որքա՜ն կուզեր ինքը հավատալ, ինչպես խաբվում էին բազմաթիվ մարդիկ և դրանց շարքում իրենց ապաստանած մարդը, որ երազները ուղերձներ էին և նախանշաններ։

— Համոզված եմ, որ քո երազը կիրականանա։

— Ե՞րբ։

— Չգիտեմ։ Պետք է համբերենք։

Մարոն Թովմասին ուղեկցեց ճաշասենյակ, ուր պետք է նախաճաշեին Ռըզա բեյի երեխաները։ Նրանք արդեն նստած էին մեծ սեղանի մի ծայրին։ Նախաճաշին հետևող Էմինեի ազդանշանով նրանք կանգնեցին Մարոյին ողջունելու համար։ Թովմասը նստեց մնացածներից մի քիչ հեռու և կերավ առանց գլուխն ափսեից բարձրացնելու։ Դայակը մի քիչ հետ քաշվելով կանգնած մնաց և Մարոյին դիմավորեց՝ ցուցադրելով իր ուրախությունը։ Քանի դեռ կանայք խոսում էին շոգի մասին, որը նրանց տանջել էր ամբողջ գիշերը, փոքրիկ Զեհրան իջավ աթոռից, շրջանցեց սեղանը, մոտեցավ Թովմասին և նրա ազդրին խփելով, ասաց բարակ և երգեցիկ ձայնով.

— Գյաուր։

Նա արագ հեռացավ և ծիծաղեց՝ բերանը փոքրիկ ձեռքով ծածկելով։

Թովմասն ատամները սեղմեց, բայց չարձագանքեց։ Ալթանը՝ տասներեք տարեկան մի տղա, որը նստած էր սեղանի ծայրին, փոթկաց։ Նրա եղբայրներն ու քույրերը ապշած նրան նայեցին։

— Զեհրա,– բացականչեց էմինեն երեխային նշան անելով, որ մոտենար։

Տեսնելով, որ դայակը բարկացել էր, Զեհրան եղբորը ցույց տվեց.

— Ալթանն էր։

Էմինեն փոքրիկ աղջկան պատվիրեց այլևս չկրկնել այդ բառը և նրան իր տեղն ուղարկեց։ Նա դիմեց տղային.

— Ամո՛թ քեզ։ Դու ներողություն պետք է խնդրես։

Տղան հանդուգն տեսքով էմինեին նայեց։ Ինքը, տղամարդ լինելով, պետք է ինչ-որ կնոջ հրահանգնե՞րը կատարեր։ Ա՛յն էլ ծառայողի։ Երեք տարի առաջ թլփատվելուց ի վեր, Ալթանն իրեն բարձր էր համարում բոլոր կանանցից։ Չէ՞ որ ինքն արդեն աշխատում էր։ Իր տարիքում նա հնարավոր էր համարում մեծ ձևանալ, երբ իրեն պետք էր, իսկ երբեմն թույլ էր տալիս, որ իրեն վերաբերվեին որպես երեխայի, երբ ձեռնտու էր իրեն, օրինակ խուսափել ծոմից ռամադանի ժամանակ։ Նա չէր սիրում սովորել, սակայն հողագործությունը նրան դուր էր գափս, բացի դրանից նա կառավարչի օգնությամբ սովորում էր կառավարել կալվածքը և ղեկավարել բանվորներին։

Էմինեն կրկնեց իր պահանջը, և քանի որ նա հրաժարվում էր, դայակը սպառնաց.

— Տեսնենք, թե ինչ կասի հայրդ այդ կապակցությամբ։

Այդ խոսքերից Ալթանը գունատվեց։ Նա այնքա՛ն էր ուզում, որ Ռրզա բեյը հպարտանար իրենով։ Ընտանեկան կարողությունը մի օր բաժին էր հասնելու իր ավագ եղբորը՝ Թուրանին, սակայն Ալթանը հույս ուներ, որ հայրն իրեն կվստահեր կալվածքներից մեկի կառավարումը։ Դրա համար Ալթանը պետք է լրջություն ցուցաբերեր և հատկապես նրան հաճոյանար։ Ներքուստ կատաղելով՝ նա վեր կացավ և դարձավ դեպի Թովմասը և ասաց առանց ներքին համոզմունքի.

— Ներիր ինձ։

Թովմասը գլուխը բարձրացրեց և հանդիպեց թշնամական հայացքի։ Ալթանի դեմքն ամբարտավան էր և արհամարհանք էր արտահայտում։ Կարճ կտրած մազերը, ցցված ականջները, տափակ քիթը ընդգծում էին նրա բութ տեսքը։ Առանց բառ ավելացնելու, նա դուրս եկավ սենյակից՝ դուռը շրխկացնելով։

Էմինեն հերթով նայեց Էմելին, Զեհրային, Արիֆին և Քենանին.

— Թող սա ձեզ դաս լինի։

Բոլորը գլխով արեցին։ Մինչ մնացածները ուտում էին, Զեհրան, երեք

տարեկան երեխային հատուկ անմիջականությամբ, հարցրեց.

— Էմինե... ի՞նչ է նշանակում գյաուր։

Դայակի համբերությունը հատեց, և նա ձեռքերը դեպի երկինք պարզեց։ Մարոն շշնջաց.

— Նրա հետաքրքրասիրությունը բնական է։ Դու պետք է նրան բացատրես։

Կարմրելով, Էմինեն մի պահ մտածեց պատասխանելուց առաջ.

— Դա նշանակում է «մարդ, որն ուրիշ հավատք ունի»։

— Ի՞նչ հավատք,– դարձյալ հարցրեց երեխան, որն այս բառի իմաստը չէր հասկանում։

Մատը բարձրացնելով, ինչպես անում էր դասի ժամանակ, Քենանը շտապեց պատասխանել.

— Ես գիտեմ։ Իսլան մարգարե է։

Նա ժպտաց հպարտ տեսքով, ցուցադրելով իր բոլոր ատամները, որոնք փայլատակեցին թուխ դեմքի վրա։ Իր մոր՝ Մակբուլեի պես Քենանը շատ բարակ մուգ մազեր ուներ, որոնք վառվել էին արևից, իսկ աչքերը փայլուն էին ու խելացի։ Թովմասը նրան նայեց, զարմանալով, որ Հիսուսի մասին գիտեր։ Քիչ էր մնում, որ ասեր, որ Քենանը սխալվում էր և որ Հիսուսն աստված էր, սակայն չասաց՝ որքան ամոթից, նույնքան չցանկանալով տղային նեղացնել։ Բացի դրանից, մայրն իրեն խորհուրդ էր տվել կրոնի մասին չխոսել։

Զեհրան նայեց Թովմասին.

— Դա ճի՞շտ է։

— Այո։

Նա գլուխը կախեց, սակայն նկատեց Քենանի հայացքը, որը նրան բարեկամական թվաց։

Ամեն առավոտ Ռըզա բեյի տան բակում իրարանցում էր սկսվում։ Ավանակները, ջորիները, ուղտերը լցվում էին բակ։ Գյուղացիները թարմ մրգեր ու բանջարեղեն էին առաջարկում, առևտրականները փայտ ու ածուխ էին մատակարարում խորոված՝ նավթ լամպերի համար, աղբյուրի ջուր, աղ, շաքար՝ այն ամենը, ինչ պետք էր այդքան մեծ տան համար։ Բույսուկ խանումը վերահսկում էր յուրաքանչյուր գործարքը, սակարկում էր գնի և քանակի վերաբերյալ։ Հետո նա կազմում էր ճաշատեսակների ցանկը, գործը բաշխում էր աղախինների միջև, իսկ հետո առանձնանում էր իր հյուրասենյակում, ուր նա վերագտնում էր իր սիրելի լուսանկարները։ Էմինեին նա վստահում էր իր արձակած հրամանների վերահսկողությունը։

Դայակները զբաղվում էին երեխաներով՝ երեք կանանց պարապության մատնելով, և նրանք կարեցածին չափ զբաղմունք էին

գտնում իրենց համար։ Բացառությամբ ռամադան ամսի, նրանք ամեն շաբաթ բաղնիք էին գնում, ուր մնում էին ամբողջ օրը Այնթապի այլ կանանց ընկերակցությամբ։ Այլապես նրանց կյանքը կալվածքում կնմանվեր միանձնուհիների կյանքի։ Կալվածք էին հրավիրվում երաժիշտներ, ձեռնածուներ, արջ վարժեցնողներ և ղարագյոզի՝ ստվերների թատրոնի տերը, որի արվեստով կանայք հիանում էին նույնքան, որքան երեխաները, սակայն այս զվարճությունները չէին կարող լցնել ցերեկվա անվերջանալի ժամերը։

Մարոն, ինչպես և նրանք, անգործության էր մատնված, և իրեն երջանիկ զգաց, երբ Սաֆիյեն խնդրեց իրեն պարտեզ ուղեկցել։ Նրանք քայլում էին ծառուղու շիկացած խճով կողք կողքի՝ հովհարները թափահարելով, իսկ Թովմասը հետևում էր նրանց։ Ծառուղու երկու կողմերում շարված էին հնությունից մաշված մարմարյա արձանները, որոնցից շատերը ամբողջական չէին։ Հունական կամ հռոմեական ծագում ունեցող այս արձանները ստեղծվել էին անտիկ շրջանում։ Մարոն իր զարմանքը հայտնեց Սաֆիյեին մահմեդականի այգում տեղադրված մարդկային այդ պատկերների կապակցությամբ։ Վերջինս բացատրեց.

— Դա նշանակություն չունի։ Սրանք ավելի հին են, քան Մարգարեն։

Արձանների մեծ մասն այդտեղ էր բերվել Միջերկրականի ափից, իսկ որոշ արձաններ գտնվել էին շրջակայքում։

— Արորը հաճախ շատ հին իրեր է հանում,– ավելացրեց Սաֆիյեն։– Ո՞վ գիտի, ինչ զարմանալի բաներ կան թաղված մեր ոտքերի տակ։ Ասում են, ժամանակին այստեղ խորհրդավոր ազգեր են ապրել։

— Նրանց անունները գոնե պահպանվել են. խեթեր, ասորիներ, պարսիկներ, հայեր, հռոմեացիներ։

— Այնքան բան կա, որ ես չգիտեմ և որ կուզենայի իմանալ,– հառաչեց Սաֆիյեն։

Նրանք մոտենում էին քարե ջրավազանին, ուր լողանում էին Ռըզա բեյի չորս կրտսեր զավակները։ Էմինեն նստած էր տաղավարում և, հովհարը թափահարելով, հետևում էր երեխաներին։

— Այս շոգից ես մեռնելու եմ,– բողոքեց նա։– Կուրծքս վառվում է։ Ինչպիսի դժբախտություն է, երբ ռամադանը ամռանն է լինում։

Մարոն ու Սաֆիյեն նստեցին նրա կողքին։ Տաղավարի սյուներից մեկի մոտ կանգնած Թովմասը աչքի պոչով հետևում էր ավազանում լողացող երեխաներին։

— Դու չե՞ս ուզում ջուրը մտնել,– հարցրեց Մարոն որդուն։

— Ոչ։

— Էմել,– կանչեց Սաֆիյեն։– Մի բոպեով արի այստեղ։

Յոթ տարեկան մի աղջիկ մոտեցավ։ Ճակատին ու ծոծրակին կպած

թաց մազերից ջուր էր ծորում նրա մերկ մարմնին։ Նրա քիթն ու այտերը պեպենոտ էին։ Սաֆիյեն նրան ասաց.

— Թովմասը կարո՞ղ է ձեզ հետ լողանալ։

Էմելի լայն բացված բերանն էլ ավելի բացվեց և ժպիտ դարձավ։ Նա Թովմասին նշան արեց.

— Արի՛։

Անհարմար զգալով, քանի որ առաջին անգամ էր մերկ աղջիկ տեսնում, Թովմասը մորը նայեց.

— Գնա,– ասաց վերջինս։– Դու շատ ես ուզում։

Թովմասը տատանվեց, մտածելով, որ պետք է մերկանար։ Քանի որ Էմելը պնդում էր, նա մեջքն արեց կանանց և հանվեց։ Առանց վարտիքը հանելու նա անվստահ քայլերով հետևեց աղջկան։ Ավազանում ընթացող խաղերը, որոնք ընդհատվել էին Թովմասի հայտնվելուն պես, նոր թափ առան։

— Նրանք լեզու կգտնեն,– ասաց Էմինեն, որի ամբողջ կյանքը նվիրված էր երեխաներին։

Սաֆիյեն տիրացավ Մարոյի ուշադրությանը և վերադարձավ իրեն հետաքրքրող թեմային.

— Այդ հին ժողովուրդների կապակցությամբ... Ես այնքան եմ ուզում, որ ինձ սովորեցնես այն, ինչ գիտես։

— Ես շատ բան չգիտեմ։ Այդ ամենը այն գրքերում է, որոնցով սովորել եմ դպրոցում։

Սաֆիյեի դեմքը լուսավորվեց.

— Գրքե՞ր։ Ռըզայի գրադարանը շատ հարուստ է։ Նա գրքեր ունի ֆրանսերենով, որ բերել է Փարիզից։ Դու կկարողանաս կարդալ։ Մենք կարող էինք... Եթե դու ուզում ես...

Նախադասությունը, որը խնդրանքի էր նմանվում, կիսատ մնաց։ Հայացքը աղերսում էր։ Մարոն զգաց այդ կնոջ գիտելիքների անհագ ծարավը և գլխով արեց։ Սաֆիյեն սեղմեց նրա թևը և չթաքցրեց ուրախությունը.

— Դու չես կարող պատկերացնել, թե ինչ հաճույք ես ինձ պատճառում։ Մենք սքանչելի ժամեր կանցկացնենք միասին։

Էմինեն, որը նույնպես հիացած էր, խնդրեց առաջին կնոջը.

— Պատմիր նրան տարօրինակ նկարներով այն գրքի մասին։ Այն մեկը, ուր պատկերված են հեքիաթային կենդանիներ և զարհուրելի հրեշներ։

— Ինչպե՞ս կարող եմ դրա մասին խոսել,– հրաժարվեց Սաֆիյեն կարմրելով, քանի որ այդ գրքում կային քրիստոնեական խաչի պատկերներ։– Ես մտածում եմ, տեսնես ինչի՞ մասին է այդ գիրքը։

Մարոն այլևս նրանց չէր լսում։ Նա ականջ դրեց ավազանից եկող ձայներին, ուր երեխաները հետապնդում էին միմյանց և իրար վրա ջուր էին շփում։ Այո՛, Թովմասի ծիծաղն էր, որ լսվում էր ճիչերի ու բացականչությունների միջից։ Անկեղծ ու լուսավոր մի ծիծաղ, որը նա վաղուց արդեն չէր լսել։ Վերջին անգամ նա այդ ծիծաղը լսել էր մեկ ամիս առաջ, նրա տարեդարձի օրը, երբ նա հեծնել էր իր պոնիին։ Ծիծաղը նորից լսվեց և ցնցեց Մարոյին, նրա աչքերը լցվեցին։ Մյուս երկու կանայք նայեցին երեխաներին և հասկացան Մարոյի հուզմունքը։ Սաֆիյեն շոյեց նրա այտը և սրբեց արցունքները։

— Կյանքն ավելի հզոր է, քան մնացած ամեն ինչը,— սահմանեց դայակը, որին այդ տեսարանն ուրախացնում էր։

* * *

Այնթապի արվարձանում գտնվող մեծ տանը կյանքն ընթանում էր արտաքուստ անփոփոխ ռիթմով։ Օրերն անցնում էին դանդաղ, միապաղաղ։

Թովմասն ընտելանում էր երեխաներին, ընկերացել էր Քենանի և Էմելի հետ, որոնք մոտավորապես իր հասակակիցներն էին։ Ռըզա բեյը նրան ձի էր հատկացրել, որպեսզի կարողանար ուղեկցել իր բարեկամներին կալվածքի տարածքում Աբդուլայի ուղեկցությամբ կատարվող զբոսանքների ժամանակ։ Երեխայի գիտակցության մեջ այդ խայտախարիվ ձին ինչ-որ չափով նույնանում էր իր Կայծակ պոնիի հետ և դա նրան հնարավորություն էր տալիս մոռացության շղարշ գցել այդ երկու ձիերի միջև ընկած ժամանակաշրջանի վրա։ Թովմասը ևս մեկ անգամ երազում Վարդանին էր տեսել։ Երազում հայրը նրան նորից ասել էր, որ իրեն սպասեր, և դա երեխային ապագայի նկատմամբ աներեր հավատ էր ներշնչել։ Այդ վստահությամբ սրտապնդված՝ նա անց էր կացնում իր օրերը անհոգ կերպով խաղերին տրվելով, ինչպես կարող են անել միայն երեխաները։

Մարոն քաջալերում էր որդու կեցվածքը, չնայած դա խորացնում էր նրա մեկուսացման զգացումը։ Նա միայնակ պետք է պահպաներ շուտափույթ կերպով մայրաքաղաք մեկնելու իր ցանկությունը։ Կատարվելիքը լիովին կախված էր Ռըզա բեյից, քանի որ, կիսելով նրա կանանց ճակատագիրը, Մարոն չէր կարող իր ցանկությամբ դուրս գալ տնից։ Զբաղված լինելով գավառապետի իր պարտականություններով՝ Ռըզա բեյը մոռանում էր հեռագրել Մեսրոպ քեռուն։ Եվ երբ Մարոն բարձրացնում էր այդ հարցը, լսում էր հետևյալ պատասխանը.

— Վստահիր ինձ։ Ես սպասում եմ հարմար պահի։ Օրինակ վերցրու քո որդուց, Մարո, և լիարժեք օգտվիր իմ տան հյուրասիրությանից։ Ո՞վ գիտի, թե վաղը մեզ ինչ է սպասում։

Եթե Ռըզան Այնթապում էր, ապա նա օր չէր բաց թողնում Մարոյին այցելելու և նրա հետ մի քանի ժամ զրուցելու համար։ Նա նրան նվերներ

էր անում, որոնցից Մարոն հնարավորություն չուներ հրաժարվելու, նա ուշադիր էր և սիրալիր։ Ավելի ու ավելի սիրալիր էր դառնում։ Եվ մի երեկո, երբ Ռըզան Մարոյին զբոսանքի էր հրավիրել, այն, ինչից Մարոն փորձում էր խուսափել բոլոր միջոցներով, տեղի ունեցավ։

— Ես քեզ հիմա ցույց կտամ այն վայրը, ուր գնում էի երազելու, երբ երիտասարդ էի,— ասաց նա։

Առաջին անգամն էր, որ Մարոն դուրս էր գալիս կալվածքի տարածքից այնտեղ ժամանելուց հետո։ Երկու զինված մարդկանցով պահպանվող դարպասից դուրս գալուց հետո նրանք աջ թեքվեցին և անցան մզկիթի առջևով։ Անապատի քամին դադարել էր, և օդը կամաց-կամաց զովանում էր։ Լիալուսինն արծաթազօծում էր ձիթենիների սաղարթը և նրանց ոտքերի տակ կապտավուն ստվերներ էր գցում։ Ռըզա բեյը Մարոյին առաջնորդեց դեպի մի արահետ, որը կիսում էր պիստակների այգին։ Ռըզան ասաց, որ իր ընտանիքը ավելի քան երկու հարյուր տարի մշակում էր այդ ծառերը և արտահանում էր դրանց պտուղները Փոքր Ասիայի տարածք։

Արահետն ավելի քարքարոտ դարձավ, և Ռըզա բեյն իր ձեռքն առաջարկեց իր ուղեկցին։ Մարոն ձևացավ, թե չէր նկատել նրա շարժումն ու արագացրեց քայլերը։ Քառորդ ժամ քայլելուց հետո նրանք հասան բլրի գագաթին, ուր աճում էր ժայռին թիկնած, ծռմռված բնով մի սոճի։ Ժայռի մեջ մի գոգավորություն հնարավորություն էր տալիս նստելու։

— Ժամանակին կարծում էի, որ սա հնում ապրած մի թագավորի գահ է։ Նայիր, ամեն ինչ կա. բարձր մեջք, արմնկակալներ, գետնախարիսխ ոտքերը դնելու համար։

Նա ափով խփեց սոճու բնին.

— Այս ծառը ես եմ տնկել քառասուն տարի առաջ։ Գիտես, այս վայրը ոչ մեկին ցույց չեմ տվել։ Սա իմ գաղտնիքն էր։

Տեսնելով, որ Ռըզա բեյը այդ վայրին այդքան մեծ նշանակություն էր տալիս, և նրան չհիասթափեցնելու համար Մարոն մատների ծայրով շոշափեց ծառի կեղևը։

—— Նստիր գահի վրա, և դու կտեսնես այնտեղից բացվող տեսարանը։

Մարոն նստեց դեռ տաք քարի վրա։ Նրան պարուրեց սոճու բուրմունքը։ Ներքևում երևում էր ստվերի մեջ ընկղմված դաշտավայրը, Ինջիրլի գետը, որի ոլորանները փայլում էին լուսնի լույսի ներքո։ Ձախ կողմում Այնթապի երեք բլուրներն էին։ Տներում լույսեր էին վառվում, և մարդիկ տոնախմբություններ էին կազմակերպում ծոմի գիշերային ընդհատման կապակցությամբ։ Հեռվում հաչում էին շները։

Ռըզա բեյի սպիտակ հագուստն առանձնանում էր սոճու մուգ ֆոնի վրա։ Նա ցածրաձայն խոստովանեց.

— Երեխա ժամանակ երևակայում էի, որ ես թագավոր կդառնայի այն օրը, երբ շատ ճիշտ կնստեի գահին և իմ առջև տարածվող բոլոր հողերն ինձ կպատկանեին։

Նա ցույց տվեց դաշտը մինչև հորիզոն և ծիծաղեց.

— Որպեսզի իմ երազանքն իրականանար, ես գնեցի այդ հողերը։ Այն ամենը, ինչ դու տեսնում ես այստեղից մինչև գետը, ինձ է պատկանում։

— Լավ է, երբ երազանքներն իրականանում են,— ցրված տոնով պատասխանեց Մարոն ոտքի կանգնելով։

Ռըզան նրան ձեռքով նշան արեց.

— Նստած մնա, խնդրում եմ քեզ։ Ձեռքերդ դիր արմնկակալներին, գլուխդ հենիր մեջքին։ Այնտեղ... Այս գահը քեզ շատ է սազում։ Չշարժվես։

Ռըզա բեյը մոտեցավ և հանեց նրա փարաջան։ Բաճկոնի գրպանից նա հանեց մի ապարոշ, որը նա դրեց Մարոյի գլխին, իսկ ինքը հետ գնաց հեռվից նայելու։ Մարոն, դժկամությամբ, ենթարկվեց այդ խաղին։ Շրթունքները սեղմած նա հեռուն էր նայում։ Լուսնի սառը լույսը երիտասարդ կնոջ դեմքին մարմարի ճերմակության էր հաղորդել և բոցավառել էր ապարոշի ակնեղենը նրա ճակատին։

— Թագուհի՛,– ոգեշնչվեց Ռըզա բեյը։– Իսկակա՛ն թագուհի։

Նա ծնկեց կնոջ դիմաց և նրա ոտքը տանելով իր շրթունքներին համբուրեց։

— Ի՛մ թագուհի...

Մարոն արագորեն հետ քաշեց ոտքը։ Ռըզան ոտքի կանգնեց և հայտարարեց.

— Ես սիրում եմ քեզ, Մարո։ Սիրում եմ քեզ առաջին իսկ օրվանից, այն պահից, որ քեզ տեսա։

— Ոչ,— ասաց Մարոն ցանկանալով հեռանալ։

Ռըզան նրբորեն նրան նորից քարին նստեցրեց։

— Լսիր ինձ, Մարո։

— Ես չեմ ուզում ոչինչ լսել։

— Թույլ տուր խոսեմ,– ասաց նա հաստատակամորեն։

Մարոն ձայնը բարձրացրեց.

— Ռըզա բեյ, դուք գիտեք, որ ես պատկանում եմ այլ տղամարդու։

— Դրանից չի փոխվում այն փաստը, որ ես քեզ սիրում եմ և ցանկանում եմ քո երջանկությունը։

— Իմ երջանկությունը հնարավոր է միայն Վարդանի հետ։

— Դու չես կարող ինձ արգելել քեզ սիրել։

Ռըզան ձեռքերը տարածեց ի նշան իր անկարողության և ասաց.

— Ես գլուխս եմ կորցրել և չկա այնպիսի միջոց, որն ինձ կբուժեր այս հիվանդությունից։

— Մի միջոց կա. թույլ տվեք, որ ես մեկնեմ հնարավորինս շուտ։

Ռըզա բեյը շրջվեց և, մի քանի քայլ անելով, նայեց դեպի դաշտավայրը։ Նրա ուրվագիծը փակեց բնապատկերի մի մասը և նրա նուրբ կիսադեմը ուրվագծվում էր Այնթապի լույսերի ֆոնի վրա նմանվելով ստվերների թատրոնի գործող անձանց։ Մարոն վաղուց էր վախենում այս պահից և նախապատրաստվում էր, սակայն այդքան էլ հեշտ չէր վանել մի մարդու, որին ինքն ու իր որդին պարտական էին իրենց փրկությամբ։ Անհրաժեշտ էր նախ և առաջ խնայել նրա ինքնասիրությունը։

— Ինձ ճիշտ հասկացեք, Ռըզա բեյ։ Դա ձեզ հետ կապ չունի։ Իմ սիրտն արդեն զբաղված է։

Նա վերադարձավ Մարոյի մոտ և ասաց ղողացող ձայնով.

— Ես գիտեմ, հետևաբար չեմ պահանջում քո սերը։ Թույլ տուր պարզապես, որ ես քեզ սիրեմ, Մարո, սիրեմ քեզ, իմանալով, որ իմ զգացմունքը երբեք փոխադարձ չի լինելու։ Թույլ տուր, որ ես Փայփայեմ քեզ ու շփացնեմ։

— Ռըզա բեյ,— պնդեց Մարոն մեղմորեն,– դուք ինձ անտանելի վիճակի մեջ եք դնում։ Ես անընդհատ կգիտակցեմ, որ տառապանք եմ պատճառում մեծահոգի մի մարդու, որն ինձ փրկել է անխուսափելի մահից։

Ձեռքը սրտին դնելով՝ նա խոնարհվեց Մարոյի առջև։ Նա մեջքով դեպի լուսինն էր կանգնած, և Մարոն վատ էր տեսնում նրա դեմքը, սակայն նրա շնչառությունը անհավասար էր։

— Ինչպե՞ս կարող եմ տառապել, եթե ոչինչ չեմ սպասում քեզնից։ Մի քիչ բարեկամություն, մի քիչ ջերմություն, մի քիչ զգացմունք։ Մի քանի օր... մի քանի շաբաթ... Դա այնքան քիչ է քո կյանքի կտրվածքով և այնքան շատ է ինձ համար։ Ինձ, որ սիրելու եմ քեզ մինչ իմ օրերի ավարտը։ Չէ՞ որ դու այնքան դաժան չես լինի, որ ինձ մերժես երջանկության այդ փշուրները։

Լսելով նրա աղերսող ձայնը՝ Մարոն չգիտեր, թե ինչ պատասխաներ։ Մինչդեռ նա պատասխան էր փնտրում, Ռըզան շարունակեց արևելյան քնարականությամբ.

— Ոչինչ մի ասա, դու կփշրես իմ երազը, ես դա զգում եմ։ Թող քո դյութիչ ձայնը, ի՛մ փերի, չկործանի այն երջանկությունը, որով լեցուն է սիրտս։ Հոգին թովելու համար պարգևիր իմ հայացքին քո համր գեղեցկությունը։

Մարոն հակել էր աչքերը և շփոթված էր այդ իրավիճակից։

— Վերադառնանք տուն, խնդրում եմ,— ասաց նա։

Երբ Մարոն ուզեց վերադարձնել ապարոշը, Ռըզան պատասխանեց. «Դեռ ոչ»։ Գոհ մնալով, որ Մարոն այլևս չէր հակաճառում, Ռըզան նրան մեկնեց ձեռքը և օգնեց ոտքի կանգնել։

— Վերադառնանք, քանի որ այդպիսին է քո ցանկությունը։ Գնանք լուռ, այս գիշերվա կախարդանքն ըմբոշխնելու համար։

Առանց Մարոյի ձեռքը բաց թողնելու, Ռըզան նրան առաջնորդեց վերադարձի ճանապարհին։ Սակայն լռություն չկար։ Հազարավոր միջատների բզոցը, ինչպես նաև չոր խոտի խշշոցը ձայնային ֆոն էին կազմում, որը խլացնող էր դառնում, երբ դրա վրա ուշադրություն էիր դարձնում։ Նապաստակը վազում էր, բուն ճչում էր, ծառը ճռռում էր։ Ջբոսնողների քայլերից զարթնած մի լոր կչկչաց անտառում։

Ռըզա բեյը ցնծում էր։ Վերջապես նա բացել էր սիրտը Մարոյի առջև և այսուհետ կկարողանար իր զգացմունքներն ազատորեն արտահայտել։ Միգուցե իր հիշողությունների հետ կապված վայրի պատճառով և այդ կնոջ նկատմամբ իր հակման էությունից՝ հիացմունքով երանգավորված սեր, Ռըզա բեյին թվում էր, որ նա կրկին դարձել էր այն ռոմանտիկ պատանին, որ եղել էր ժամանակին։ Տարիներն անհայտանում էին, և ինքը նորացում էր ապրում։ Այս կնոջ հետ ինքն առանց վարանելու իրեն բացահայտում էր այնպիսին, ինչպիսին ինքը կար։ Մտերմիկ իրավիճակում նա կարող էր հրաժարվել կարծր ու անդրդվելի մարդու կերպարից, որ նա ստեղծել էր իր համար առաջնորդ դառնալու համար։

Երբ արահետը նեղացավ, Մարոն առաջ անցավ, և Ռըզա բեյը համակվեց ամենազոր տենչով։ Նրան թվաց, որ ինքն արու էր, որը հետապնդում էր էգին։ Նա սեղմեց Մարոյի մեջքը, որը փորձեց ազատվել նրա ձեռքերից։ Ռըզան գրկեց նրան և իրեն սեղմեց։ Լուռ և անհավասար պայքար սկսվեց։ Ազատվելու համար Մարոյի արած ամեն մի շարժումը դրդում էր տղամարդուն ավելի ամուր գրկելու նրան և ավելի ուժեղ իրեն սեղմելու։

— Ռըզա բեյ...- աղերսեց Մարոն։

Խուլ մնալով այդ աղերսին, նա բարձրացրեց Մարոյի մազերը, և համբուրեց նրա ծոծրակը և պարանոցը։ Նա ծանր էր շնչում, նրա ձեռքերը տենդագին փաղաքշում էին Մարոյի մարմինը։ Մարոն շարունակում էր դիմադրել, սակայն ոչինչ չէր կարող անել Ռըզայի ուժի դեմ։ Ռըզան հետ տարավ նրա գլուխը և շրթունքներով փնտրեց կնոջ շուրթերը։ Մարոյի դիմադրությունը գրգռում էր նրան և ուժգնացնում նրա տենչը։ Նա բարձրացրեց Մարոյին և պառկեցրեց անհարթ գետնին և անշարժացրեց դիմադրող կնոջն իր մարմնի ծանրությամբ։ Շտապելով նրան մերկացնել, նա պատռեց Մարոյի հագուստը։ Պայքարն անիմաստ համարելով՝ Մարոն հնազանդվեց։ Նրան առնելիս Ռըզան երկար հոգոց հանեց։ Նա բռնել էր Մարոյի դաստակները և համբուրում էր նրան տենդագին ձայնով սիրո խոսքեր շշնջալով։ Կամաց-կամաց Մարոյի

մկանները թուլացան, իսկ Ռըզայի մեջքը սկսեց շարժվել.

— Անձնատուր եղիր,– ասաց նա խռպոտ ձայնով։– Դու ինձ տենչում ես, մարմինը չի խաբում։

Մարոն գլուխը մի կողմ թեքեց։ Նրա քթի տակ իր արբեցնող հոտն էր տարածում ուրցի թուփը։ Ուրցի սուր հոտից արբենալով՝ Մարոն ցածրաձայն լալիս էր։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 9

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 12:11-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 8 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 10 ►

Վարդանի առջև հայտնվեց հողմնահարված գագաթով գետնահար հրաբխի ուրվագիծը: Հրաբխի եզրերին մնացել էին չհալված ձյան կղզյակներ, որոնք նմանվում էին լավայի գետերի, որոնք դուրս էին հոսել խառնարանից: Դա Արգե լեռն էր: Ինքը գրեթե հասել էր իր նպատակին: Կեսարիան գտնվում էր այս լեռան հյուսիսում, հազիվ քսան կիլոմետրի վրա: Ինչ համեմատություն իր անցած երեք հարյուր հիսուն կիլոմետրի հետ:

Դատելով արևի դիրքից, կեսօրն անց էր: Վարդանը նստեց մի ժայռի ստվերում: Նա քրտնած էր, սակայն դողում էր: Կանոնավոր կերպով նրան տանջող ջերմի նոպաները տևում էին մեկ-երկու ժամ, որից հետո նա ուժասպառ էր լինում և տառապում էր ծարավից: Ազդրի վերքի հետևանքն էր: Այն չէր լավանում, և վարակը տարածվում էր մարմնով մեկ: Պետք էր հուսալ, որ Կեսարիայի ամերիկյան վարժարանի տնօրեն Էնտոնի Բլեյկը դեղորայք կունենար: Եթե, իհարկե, նա ստիպված չէր եղել հեռանալ քաղաքից...

Վարդանը որոշակի հուսահատություն էր ապրում: Ճանապարհորդության չորրորդ օրը նրա ձին՝ Յըլդըզը, կոտրել էր ոտքը, և նա ստիպված էր եղել սպանել ձիուն և շարունակել ճանապարհը ոտքով: Գրեթե երեք շաբաթ ճանապարհին էր: Երեք շաբաթ շարունակ նա հեռանում էր այն շրջանից, ուր ամենայն հավանականությամբ գտնվում էին Մարոն ու Թովմասը: Անցած շաբաթների պատճառով հարազատներից իրեն բաժանող տարածությունը Վարդանին ավելի մեծ էր թվում, քան իրականում կար և դա նրան ավելի էր տանջում, քան հոգնածությունը, սովն ու ծարավը:

Շվեյցարական մանկատանը անցկացրած երեք օրերից հետո Վարդանը գիշերով հեռացել էր Մալաթիայից՝ օրիորդ Լանգլեին վստահելով իր գրած նամակների և հոդվածների առաքումը: Քաղաքում և նրա մերձակայքում հսկողությունը թուլացել էր, սակայն բանակն ու ոստիկանությունը վերահսկում էին բոլոր ճանապարհները և Վարդանը ստիպված էր եղել շարժվել Տավրոսին հյուսիսից հարող բարձր սարահարթի ճանապարհով: Մատչելի կապաններով և նեղ կիրճերով հարուստ սարահարթը վեհ պատկեր էր ներկայացնում, որի վրա

սավառնում էին միայնակ արծիվները։ Հազվադեպ գետակները հոսում էին դեպի Միջերկրական ծովը, իսկ սարերի լանջերին երբեմն հանդիպում էին ոչխարների հոտեր։ Հարավ-արևմտյան ուղղությամբ լեռները կուտակվում էին մինչև անսահմանություն՝ նմանվելով հսկաների, և նրանց տեղ-տեղ կանաչին տվող կարմիր գույնը բացվում էր՝ ընդունելով վարդագույնի և մանուշակագույնի տարբեր երանգներ, և վերջապես ձուլվում էր երկնքի կապույտին։

Քարին թիկնած՝ Վարդանը զննեց իր առջև տարածվող բլրապատ հարթավայրը։ Լանջին աճող խաղողի այգիները, խնձորենիները հեղեղատում, բարդիների շարքերը և վարսակի արտի ոսկեգօծ ուղղանկյունը վկայում էին բնակավայրի առկայության մասին։ Նա տուն կամ ագարակ էր փնտրում, ուր կարող էր հյուրընկալվել։ Իր ներկայիս տեսքով՝ կեղտոտ, երկար մորուքով և պատռված համազգեստով, Վարդանը կեսարիայում կարող էր կասկածներ հարուցել, և նրանից փաստաթուղթ կպահանջեին։ Հարկավոր էր նախ ներկայանալի տեսք ընդունել։ Նա բնակավայր չտեսավ, սակայն հեռվում զգացվող մի շարժում գրավեց նրա ուշադրությունը։ Գյուղացին հող էր վարում։

Նա կաղալով ճանապարհ ընկավ։ Ամեն քայլից ազդրը ցավում էր։ Կես ժամ անց նա հասավ ակոսների եզրին, ուր մի մարդ բռնել էր փայտե արորի միակ կոթը, որը երկու նիհար եզներ ալարկոտ ընթացքով քարշ էին տալիս արտով։ Տղամարդը կրում էր Անատոլիայի գյուղացիների համար հատկանշական տարազ, վարդագույն շապիկ, սպիտակ բամբակյա լայն շալվար ու կաշվից պատրաստված տրեխներ։ Տասներկու տարեկան մի տղա քայլում էր եզների կողքից և ժամանակ առ ժամանակ ճիպոտով հարվածելով ստիպում էր նրանց արագացնել ընթացքը։ Երեխան նկատեց օտարականին և զգուշացրեց հողագործին, որը կանգնեցրեց լծկաններին։

— Էվալլահ, համշարի,— բղավեց նա։

— Ողջույն, բարեկամս,— պատասխանեց Վարդանը մոտենալով։

Ցածրահասակ և թիկնեղ գյուղացին իր մազոտ ձեռքերը քսեց շալվարին։ Այդ մոտ քառասուն տարեկան տղամարդու ձախ այտին անհավասար եզրերով հին սպի կար։ Կզակը կապտին էր տալիս մի քանի օր չսափրած մորուքից, իսկ հաստ բեղերը թաքցնում էին վերին շրթունքը։ Վարդանի տեսքը նրան զգաստացրեց.

— Վիրավո՞ր ես։

— Այո, և ոտքի վրա եմ մի քանի օր։

Սև և թավ հոնքերի տակից տղամարդու հայացքը խոժոռ էր թվում։

— Ի՞նչ ես անում այս կողմերում։

— Սարերում իմ գնդի վրա անհավատներ հարձակվեցին, և միայն ես փրկվեցի։

Գյուղացին շարունակում էր չհավատալ։ Նա փորը քորեց, և այդպիսով

նրա ձեռքը հայտնվեց գոտու հետևը խրած ատրճանակի մոտ։ Վստահություն հարուցելու համար Վարդանը ցույց տվեց իր տրեզները.

— Հանգստացիր, դասալիք չեմ։ Ես լեյտենանտ Ակդարն եմ։ Վերադառնամ եմ Կեսարիա իմ գնդապետին զեկուցելու համար։

— Որևէ թուղթ ունե՞ս, որը կհաստատեր քո ինքնությունը։

Վարդանը մեկնեց իր առաքելության թուղթը, որը հողագործը բացեց, ուսումնասիրեց գլխիվայր պահելով և վերադարձրեց, ասելով.

— Կարդալ չգիտեմ։

Վարդանը հույսը հենց դրա վրա էը դրել, քանի որ փաստաթղթում գրված էր Շաքիր Իսմայելի անունը։ Նա ցույց տվեց փաստաթղթի մի տողը և Հալիթ փաշայի կնիքը։

— Նայիր, սա սուլթանի անունն է։

— Ինչպե՞ս է նրա անունը։

— Դու չգիտե՞ս,— հարցրեց Վարդանը զարմացած։

Վախենալով, որ լեյտենանտը իրեն կհանդիմանի տգիտության համար, գյուղացին վիճակից դուրս եկավ քահքահ ծիծաղելով։

— Ես վատ հիշողություն ունեմ։ Մոռանում եմ նույնիսկ իմ երեխաների անունները։

— Դու շա՞տ երեխաներ ունես։

Գյուղացին ինը մատ ցույց տվեց՝ հպարտությունից փքվելով։

— Քանի՞ կին ունես։

— Երկու,– պատասխանեց գյուղացին, որն այդ թիվը գիտեր։– Իսկ դո՞ւ։

— Չորսը, ինչպես թույլ է տալիս Մարգարեն։

Այդ թիվը մեծ տպավորություն թողեց զրուցակցի վրա։ Մարդ պետք է հարուստ լիներ այդքան կին պահելու համար։

— Իմ անունն է Սուլեյման Ղարաբըյրկ։ Արի իմ տուն հանգստանալու։

— Հաճույքով։ Թող Աստված քեզ օրհնի, Սուլեյման։

Գյուղացու տղան գնաց ու թփերի միջից մի կուժ ջուր բերեց։ Խմելու փոխարեն գյուղացին ջուրը գլխին լցրեց ու դեմքը թրջեց, և դա Վարդանին տարօրինակ թվաց։

— Ջուրը խմելու չէ՞։ Ես չե՞մ կարող դրանից խմել,– հարցրեց նա, երբ Սուլեյմանը կուժն իրեն տվեց։

Վերջինս ցնցվեց, ճակատը կնճռոտեց ու նորից լարվեց.

— Խմե՞լ։ Բայց ռամադան է։

Վարդանն արագորեն սխալն ուղղեց։

— Կարծում էի, որ այն ավարտվել է։ Ասացի, որ մոլորվել եմ և օրերի հաշիվը կորցրել։

Այս պատասխանը բավարարեց գյուղացուն։ Զնայած իրեն տանջող ծարավին, Վարդանը բավարարվեց ճակատն ու ծոծրակը թարմացնելով։ Սուլեյմանը եզներին վստահեց որդուն և հյուրին տուն տարավ։ Ճանապարհին նա նկատեց, որ Վարդանը դողում էր։

— Դողո՞ւմ ես։

— Մի քիչ ջերմություն ունեմ։

— Հաստատ ջերմախտ է։

— Ազդրիս վերքից է։

— Ոչ, ոչ, ջերմախտ է։ Ինձ ծանոթ է այդ հիվանդությունը։ Ես դրանից տառապել եմ։ Երկրորդ կինս միակն է, որ կարողանում է այն բուժել։ Բախտդ բերել է։ Ալլահն է քայլերդ այս կողմ ուղղել։

Վարդանը գերադասեց չհակաճառել նրան իր հիվանդության կապակցությամբ։ Ավելի լավ, եթե գյուղացին համարում էր, որ իրենց հանդիպումն Աստծու կամքով էր տեղի ունեցել։ Ի դեպ, նրա վարքագիծն այդ պահից փոխվեց, և նա ձեռքը դրեց լեյտենանտի ուսին, նրա ձայնը բարեկամական դարձավ։

— Քեզ հենց հիմա ջուր կտան։ Հիվանդները ծոմ չեն պահում։ Հենց որ տեղ հասնենք, կուտես ու կխմես, որքան կուզես։

— Կուզենայի նաև լողանալ ու սափրվել։ Եթե դու թել ու ասեղ ունենաս, ես կարգի կբերեմ համազգեստս։ Տես, թե ինչի եմ նման, ես՝ օսմանյան բանակի լեյտենանտս։ Ես ինձ խայտառակված կզգամ, եթե այս վիճակում ներկայանամ իմ հրամանատարներին։ Ես կվճարեմ։

— Փո՛ղ,– բացականչեց գյուղացին վիրավորված։— Սուլեյման Ղարաբըյըկի հյուրասիրությունը չի վաճառվում, նա այն բաշխում է, ինչպես պատվիրել է Մարգարեն։

— Ներիր ինձ, չէի ուզում քեզ վիրավորել։

Սուլեյմանը ժպտաց և նշան արեց, որ քեն չէր պահում։

Նրանք մի արտի մոտով անցան, ուր կանայք ու երեխաները մանգաղներով ցորեն էին հնձում։

— Իմ արտն է,– հայտարարեց Սուլեյմանը, նույն շարժումով ցույց տալով և արտը, և այնտեղ աշխատող մարդկանց։

Հպարտությունից դողացող ձայնով նա ցույց տվեց քարքարոտ, սակայն կանաչ մարգագետինը, ձիթենու այգին, եգիպտացորենի դաշտը և ոռոգվող այգին։ Նա ձեռքը կրծքին խփեց։

— Այս ամենը ես աղայից չեմ վարձակալում։ Այս ամենը պատկանում է

ինձ և եղբորս՝ Նազիմին։

Նա թվարկեց իր ունեցած անասունը. երկու եզ, մեկ երինջ, մեկ ավանակ իր քուռակի հետ և անհամար ոչխարներ, այծեր ու հավեր։ Անատոլիայի չափանիշներով Սուլեյմանը բարեկեցիկ գյուղացի էր։ Տան կողքին գոմ կար, որի հետևում շարված էին խոտի երեք դեզերը։ Երկու կավաշեն տները կանգնած էին կողք կողքի։ Սուլեյմանը ցույց տվեց ձախ կողմի տունը, որի փոքր լուսամատները պատված էին փայտյա ճաղերով։

— Սա հարեմն է, ուր ապրում են իմ և եղբորս կանայք։

Երեք տարեկանից փոքր երկու երեխա խաղում էին հարեմի դռան առջև, իսկ նրանց շուրջը փոշու մեջ թաղված ննջում էին հավերը։ Գոմի ստվերում կանգնած ավանակը ծանր շնչելով դաշտերին էր նայում, իսկ նրա քուռակը մորն էր ծծում։ Օդում տարածվել էր թխվող հացի բուրմունքը, որը խառնվում էր աթարի հոտի հետ։

Սուլեյմանը Վարդանին տարավ աջ կողմի տունը, որը մեկ մեծ սենյակ ուներ։ Հողե հատակի մեկ երրորդը զբաղեցնում էին ներքնակներն ու փալասները։ Տանը համեմատաբար ավելի զով էր։ Դեռևս տան շեմից գյուղացին բղավեց երկրորդ տան ուղղությամբ.

— Այշա, Այշա։

Նա իր հյուրին նստել առաջարկեց և ալյումինե թասով օղի մատուցեց։ Ինքը նույնպես դեմ չէր լինի խմելու, որից հետո մեկ—երկու ծխախոտ կծխեր, բայց նա դիմադրում էր գայթակղությանը և սպասում էր մութն ընկնելուն։

— Թող կյանքդ երկար լինի, իսկ զավակներդ էլ բազում,— ասաց Վարդանը կենացի փոխարեն։

— Շնորհակալություն։

Կոճերի վրա հավաքված լայն վարդագույն շալվարի վրա բաց կանաչ զգեստ հագած մի կին սենյակ մտավ։ Նրա ոտքերին ոչխարի մորթուց կարված հողաթափեր կային, իսկ գլուխն ու դեմքը ծածկում էր սպիտակ փարաջան։ Նշաձև աչքերը, խիտ հոնքերը և երկար արտևանունքները վկայում էին չերքեզյան ծագման մասին։ Նա ծածուկ և հետաքրքրասիրությամբ Վարդանին նայեց։

— Հյուրին ուտելիք ու ջուր բեր։

Նա նայեց ամուսնուն ու տատանվեց։ Նա չէր հասկանում։ Իսկ ռամադա՞նը։

— Լեյտենանտը հիվանդ է,– բացատրեց Սուլեյմանը,— չի կարող ծոմ պահել։ Դու նրան կբուժես։ Քննիր նրան։ Համոզված եմ, որ ջերմախտ ունի։

Կինը մոտեցավ հյուրին և կռացավ նրա վրա։ Նրա դարչինով ներկված ձեռքը իջավ Վարդանի ճակատին։ Վարդանը զգաց, որ կնոջ քրտնած

ափը դողում էր։ Հետո կինը մատով ձգեց Վարդանի կոպը, սակայն աչքի սպիտակուցը ուսումնասիրելու փոխարեն, ինչպես նա հավակնում էր, նա անամոթաբար զննում էր Վարդանի դեմքը, և դա նրան շփոթեցրեց։

— Ջերմախտ է,— հաստատեց նա իր ամուսնու ախտորոշումը։— Ես նրան կբուժեմ։

Կինը հեռացավ, իսկ Սուլեյմանը հիացած բացականչեց.

— Տարբեր վայրերից մարդիկ են գալիս նրա մոտ բուժվելու։

— Կկարողանա՞ նա բուժել իմ վերքը,— հարցրեց Վարդանը հպվելով իր ցավացող ազդրին։

— Ոչ, Այշայի ունակությունները սահմանափակվում են ջերմախտով, սակայն կտեսնես՝ երեք օրում ուժերդ կվերականգնես։

— Ես հենց այս երեկո պետք է գնամ։

Սուլեյմանը վեր թռավ.

— Դրա մասին խոսք անգամ լինել չի կարող։ Դու որոշ ժամանակ կհանգստանաս ինձ մոտ։ Խոսք չի կարող լինել այն մասին, որ թույլ տամ մեր քաջ սպաներից մեկին ճամփա ընկնել հիվանդ վիճակում։

Սուլեյմանի փոքր, ժիր աչքերը զննում էին իր հյուրի աչքերը։ Այս մարդն ավելի խորամանկ էր, քան կարող էր թվալ առաջին հայացքից։ Վարդանը չէր կարող հրաժարվել նրա հյուրասիրությունից և անիմաստ բուժումից՝ առանց վիրավորելու հյուրընկալողին և առանց կասկած հարուցելու։

— Ես զգացված եմ քո մեծահոգությունից, Սուլեյման,— ասաց Վարդանը գրպանից մի քանի դրամ հանելով։— Քանի որ փող չես ուզում վերցնել, կուզենայի, որ իմ անունից այս փողը նվիրեիր մզկիթին։

Գյուղացին լայն ժպտաց՝ բացելով ծխախոտից դեղնած իր բոլոր ատամները, և փողը գրպանը դրեց։ Այս լեյտենանտը իսկապես արժանավայել մարդ էր։

Այշան պղնձե սկուտեղ բերեց, որի վրա նա դրել էր տաք հաց, մի ման մածուն և ծիրանի չիր։ Նա հեռացավ ամուսնու հետ։ Վարդանն ախորժակով ուտում էր, երբ Սուլեյմանը վերադարձավ ածելիով, սև օճառի կտորով և մի կուժ ջրով։ Նրա ձեռքին նաև մի շալվար ու մի շապիկ կար։

— Հանիր համազգեստդ կանայք կմաքրեն ու կկարկատեն այն։ Կար ու ձևը տղամարդու գործ չէ։

Վարդանը հանվեց, և Սուլեյմանի դեմքը ծռմռվեց նրա աջ ազդրի սևին տվող վերքից։

— Տեսքն ավելի վատ է, քան իրական վիճակը,– ասաց Վարդանը անհոգ տեսքով։

Իրականում վերքի վիճակը նրան անհանգստացնում էր։ Վերքի մանուշակագույն եզրերը իրարից հեռացել և այտուցվել էին, կեղևը տեղ-տեղ պոկվում էր։ Ամբողջ ոտքն էր այտուցվել, և կոշիկը սեղմում էր։ Անհրաժեշտ էր մշակել վերքը և ախտահանել վիրակապելուց առաջ։

— Սպիրտ ունե՞ս։

Սուլեյմանը ցույց տվեց գետնին դրված օղու շիշը։

— Ես նկատի ունեմ այն սպիրտը, որ այրում են սպիրտայրոցներում։

— Ոչ։ Ուզում ես գյուղի կախարդին կանչեմ։ Նա հմայիլ կսարքի։

— Դրա կարիքը չկա։ Երբ ես Կեսարիա կհասնեմ, բանակի վիրաբույժը մեկ րոպեում վերքս կարգի կբերի։

— Դու գիտես,– պատասխանեց գյուղացին։– Ես արտ եմ վերադառնում, իսկ դու հանգստացիր մինչև երեկոյան աղոթքը։ Հյուրերի եմ սպասում ծոմից դուրս գալու կապակցությամբ և կուզենայի, որ դու մեզ միանայիր։

— Զգացված եմ։

Սուլեյմանը գնաց։ Սափրվելուց ու լվացվելուց հետո Վարդանը ներքնաշորերով պառկեց սենյակի խորքում դրված ներքնակին։ Նա փակեց աչքերը, սակայն անմիջապես բացեց ոտնաձայներ լսելով։ Այշան էր։ Վարդանը ձեռքը մեկնեց կողքին դրված շալվարի կողմը։

— Մի անհանգստացեք,– ասաց Այշան,– ես երկար ժամանակով չեմ եկել։ Պառկած մնացեք։

Նա արագ մոտեցավ Վարդանին ու ծնկի իջավ։ Գլխին անփույթ գցած քողը սահեց ուսերին՝ բացելով նրա դեմքը։ Նա ծամածռեց լիքը շուրթերով բերանը և ուսերը թոթվեց, կարծես պատասխաներ ինքն իրեն արված հանդիմանությանը։ Նա քողը չբարձրացրեց։ Այդ ազատությունը մահմեդական կնոջ պահվածքում զարմացրեց Վարդանին։

Այշան քսան տարեկան էր։ Շատ լավ գիտակցելով իր գեղեցկությունը՝ նա չէր համակերպվում այն մտքի հետ, որ ինքն այն պետք է թաքցներ ամուսնանալուց հետո՝ արդեն չորս տարի։ Նա ափսոսանքով էր հիշում տղամարդկանց վավաշոտ հայացքները իր հայտվելուն պես և ձանձրանում էր այս առանձնացած ագարակում, որտեղից շատ հազվադեպ էր դուրս գալիս գյուղի շուկան գնալիս։ Չարսավի մեջ փաթաթված՝ նա նմանվում էր այլ գեղջկուհիների մուգ և լուռ ուրվագծերին, որոնք հնազանդ հետևում էին իրենց ամուսիններին։

Նա շատ էր կարոտում իր ծննդավայրի՝ լեռնային գյուղի տոներին ու աշխուժությանը, ընկերուհիներին, որոնց հանդիպում էր աղբյուրի մոտ։ Հոր տանը միշտ երաժշտություն էր հնչում և ծիծաղ, իրենք հաճախ պարում էին, մինչդեռ այստեղ, արևից խարկված այս հարթավայրում, խոսում էին միայն բերքից և անասունից, մտածում էին միայն հողը մշակելու մասին և այն պաշարների մասին, որ պետք էր պարենավորել

ձմռան համար: Տաղտկալի կյանք: Երեխաներ ծնել, անասուն խնամել, աշխատել դաշտում, ճաշ եփել, բուրդ մանել, գործել: Մութ ու ծխոտ տանը փակված մնալ վեց ամիս շարունակ, իսկ մնացած վեց ամիսը արևի տակ մաշվել: Այշան իրեն արդեն ծեր էր զգում: Սուլեյմանն իրեն այլևս չէր տեսնում: Նրա համար Այշան ընդամենն իր էր՝ ոչ ավել, ոչ պակաս, քան իր հոտի անասուններից մեկը: Միայն թե աշխատեր ու երեխա բերեր, ավելին չէր պահանջվում:

Եթե Սուլեյմանն իմանար, որ նա քողը հանել էր օտարի առջև, ապա այնքան կծեծեր, որ ատամները թափվեին: Միևնույն է՝ ինքը կանի այն, ինչ ուզում է: Նա անսահման ցանկություն ուներ դեռևս գեղեցիկ թվալ տղամարդկանց աչքերում: Այս լեյտենանտը, որը լրիվ այլ աշխարհից էր և տարբերվում էր այս կորած-մոլորած անկյունի դանդալոշներից, իրեն ընձեռում էր իր երազած հնարավորությունը: Նա շատ բան չէր սպասում: Ուզում էր ընդամենն արձանագրել, որ այս օտարն իրեն ցանկալի էր համարում: Միգուցե հաճոյախոսություն էր նրանից սպասում, որպեսզի ձևանար, որ կարմրում էր:

— Ահա ջերմախտի դեմ դեղը,– ասաց նա, թարմ ձուն ցույց տալով:

Նա կոտրեց ձուն և ճարպկորեն հեռացրեց կեղևը առանց վնասելու ձվի սպիտակուցն ու դեղնուցը պարուրող թաղանթը: Նա թաղանթը ծակեց և պարունակությունը լցրեց ափսեի մեջ, հետո դատարկ թաղանթը թաթախեց կիտրոնի հյութի մեջ: Դեղագործ լինելով՝ Վարդանը հետաքրքրվում էր ժողովրդական միջոցներով և զվարճացած հետևում էր Այշայի գործողություններին: Այդ ընթացքում երիտասարդ կինը նրան հարցեր էր տալիս: Որտե՞ղ էր նա ծնվել: Որտե՞ղ էր ապրում: Ամուսնացա՞ծ էր, թե ոչ: Այդ ընթացքում Վարդանը հորինեց լեյտենանտ Սալահեդդին Ակբարի կենսագրությունը:

— Ձեր ձախ ձեռքը տվեք,– ասաց կինը:

Այշան հպվեց Վարդանի ափին և զարմացավ: Նա երբեք չէր տեսել առանց կոշտուկների տղամարդու ձեռք, մինչդեռ լեյտենանտի ափը հարթ էր, ինչը նշանակում էր, որ նա երբեք ֆիզիկական աշխատանք չէր կատարել: Հարուստ մարդու ձեռք էր: Ի՞նչ էր մտածում այդ տղամարդը իր մասին: Նկատո՞ւմ էր արդյոք իր գեղեցկությունը: Այշան ոչինչ չէր կարողանում հասկանալ նրա անթափանց դեմքից: Նա ձվի թաղանթը փաթաթեց Վարդանի ճկույթին:

— Ահա,– ասաց նա առանց բաց թողնելու Վարդանի ափը:

— Վերջացրի՞ք:

— Այո, թող մատի վրա չորանա: Կցավի, բայց դուք կապաքինվեք:

— Շնորհակալություն, խանում,– ասաց Վարդանը հետ քաշելով ձեռքը և ազդրին դնելով:

— Ուրիշ բան չե՞ք ուզում:

Վարդանն ասաց՝ ոչ: Երիտասարդ կինը վերջապես հեռացավ, երբ նա

ասաց, որ ինքը քնել է ուզում, և իսկապես քնեց, երբ կինը քողը գլխին գցելով՝ դուրս եկավ սենյակից։

Նա ցավից արթնացավ մեկ ժամ անց։ Թաղանթը չորացել էր և աքցանի պես սեղմում էր նրա ճկույթը։ Ձեռքը թմրել էր, և ցավը տարածվում էր ամբողջ մարմնով մեկ։ Նա փորձեց ազատվել մատը սեղմող թաղանթից։

— Ոչ,– բղավեց Այշան։

Անակնկալի գալով՝ Վարդանը ցնցվեց։ Այշան վերցրեց Վարդանի ձեռքը, սակայն արդեն ուշ էր, քանի որ նա վնասել էր թաղանթը եղունգներով։ Այշան հանդիմանեց.

— Դուք չպետք է այդպես անեիք։ Լավանալու համար պետք էր սպասել, որ թաղանթն ինքը ճաքեր և ընկներ։

Նրա դեմքը բաց էր և, Վարդանի կողքին պպզած, նա հյուրին էր նայում խորհրդավոր ժպիտը երեսին, որից նրա երիտասարդ գեղեցկությունը գրգռիչ էր դառնում։ Անհանգստանալով՝ Վարդանը ծածուկ նայեց դռան կողմը։

— Բոլորը դաշտում են,– շշնջաց Այշան նրան հանգստացնելու համար։

— Դու վաղո՞ւց ես այստեղ։

— Ես հետևում էի ձեր քնին։ Դուք այնքան խորն էիք քնել։

Նրա ջերմությունը ստուգելու պատրվակով, կինը ձեռքը դրեց Վարդանի ճակատին։ Այդ հպումը Վարդանին փաղաքշանք թվաց, և նստելով՝ նա ազատվեց կնոջ ձեռքից։

— Ես ինձ ավելի լավ եմ զգում,— ասաց նա սառը ձայնով։– Ես շնորհակալ եմ քեզնից։

— Դուք դեռ հիվանդ եք։ Վաղը պետք է բուժումը շարունակել։

Վարդանը ցանկություն չուներ վերսկսելու ցավոտ փորձը.

— Դրա անհրաժեշտությունը չի լինի, խանում։

— Սուլեյմանը կբարկանա, եթե ձեզ ջերմախտից չբուժեմ։

Երիտասարդ կնոջ ձայնում վախ էր զգացվում, սակայն կարելի էր նշմարել նաև հեգնանքի երանգ։ Վարդանը կասկածեց, որ նա գիտեր, որ ինքը ջերմախտով հիվանդ չէր։ Կինն ուշադիր նայում էր Վարդանին դեմքին տարօրինակ արտահայտությամբ, որի իմաստը վերջինս չէր կարողանում հասկանալ, իսկ նրա անպատշաճ պահվածքը դուր չէր գալիս Վարդանին, քանի որ Սուլեյմանը պետք է որ շատ բծախնդիր լիներ իր կանանց պատվի հարցում։

Վարդանն ուզեց հագնել Սուլեյմանի տված շալվարը։ Նա իր ազդրին շագանակագույն մի սպեղանի նկատեց։

— Ի՞նչ է սա։

— Ցեխ է ու այծի կտտոր,– պատասխանեց Այշան։– Բուժում է վերքերը։

Վարդանը ծամածռվեց՝ մտածելով փայտացում ստանալու վտանգի մասին, ոտքի կանգնեց, որպեսզի հողի ու թրիքի խառնուրդը վայր ընկներ, և վերքը լվաց կժի մեջ մնացած ջրով։ Նա պետք է որ շատ խորը քնած լիներ, որպեսզի չարթնանար սպեղանին տեղադրելիս։ Նրա վարտիքի կոճակը բացված էր։ Կարո՞ղ էր պատահել, որ... Նա հայացքն արագ բարձրացրեց Այշայի վրա, որն արդեն հագել էր գլխաշորը, և երևում էին միայն նրա նշաձև աչքերը։ Նա խոնարհվեց ու գնաց։

Այս կինը կարող էր իր գլխին փորձանք բերել։ Վարդանն ուզում էր հնարավորինս շուտ հեռանալ այդտեղից։ Նա հագնվեց և նստեց դռան դիմաց՝ սպասելով Սուլեյմանի վերադարձին։

Բակում ստվերներն արդեն երկարում էին։ Վարդանի համազգեստը փռած էր սայլի կողին, որի տակ կչկչում էին հավերը։ Հեռվում, դաշտերից մեկում չորս կին և տասներկու տարեկան մի տղա դիզում էին խոտը։ Ավանակն ու իր քուռակը շրջանցեցին տունը, գնացին մինչև ջրհորը և խանչեցին այնքան ժամանակ, մինչև Այշան եկավ և նրանց ջուր տվեց։ Ծծկեր երեխան գրկին նա իր գործն արեց՝ առանց աչքը Վարդանից կտրելու։

Կանայք դաշտից տուն եկան և, զարմանալով օտարականի ներկայությունից, շտապեցին հարեմ՝ Այշայից մանրամասներ իմանալու համար։ Երեխաներն իրար հրմշտելով ջրհորից ջուր խմեցին և իրար ջրեցին։ Յոթ աղջիկ էին և վեց տղա՝ չորսից մինչև տասներեք տարեկան։ Նրանց դեմքերն ու ձեռքերը կեղտոտ էին, ոտքերը՝ բոբիկ։ Քանի մայրերը ճաշ էին պատրաստում, նրանք խաղում էին բակում, և այդ խաղը պատրվակ էր հյուրին ուսումնասիրելու համար։ Շուտով յոթ կամ ութ տարեկան շիլ մի տղա, չդիմանալով, մոտեցավ և, համազգեստը ցույց տալով, հարցրեց.

— Դու զինվո՞ր ես։

— Այո՛, սպա։

— Ճանաչո՞ւմ ես ավագ եղբորս։ Նա կռվում է բանակում։

— Ոչ։ Զինվոր շատ կա։

Բոլոր երեխաները հավաքվեցին Վարդանի շուրջը, և նրա վրա հարցերի տարափ տեղաց։ Որտեղի՞ց էր գալիս։ Ո՞ւր էր գնում։ Երեխաներ ունե՞ր։

Այդ վերջին հարցը համընկավ Վարդանի մտքերի հետ։ Տղաներից մեկը նրան Թովմասին էր հիշեցնում՝ թե՛ տարիքով, թե՛ կեցվածքով։ Ինքը շատ բան կզոհաբերեր՝ միայն թե իր որդին այս երեխաների պես անհոգ լիներ։ Զգացմունքները դժվարությամբ թաքցնելով՝ նա պատմեց Կոստանդնուպոլսի, Կապույտ մզկիթի, նավահանգստի մասին, ուր հեռու երկրներից նավեր էին գալիս։ Նրա շուրջը նստոտած երեխաները լսում էին մինչև մի կին նրանց կանչեց ճաշելու։

Արևը մայր էր մտնում, երբ եկավ Սուլեյմանը իրեն շատ նման մի տղամարդու հետ։ Իր եղբայր Նազիմն էր։ Վերջինս կասկածամտորեն զննեց Վարդանին և իրեն զուսպ պահեց։ Քիչ անց երեք տղա եկան՝ տասնչորսից տասնվեց տարեկան պատանիներ։ Ադամամութն ընկավ, և հարևան գյուղից լսվեց մուեզզինի թույլ ձայնը։ Վարդանը գիտեր, որ նա կանչում էր «Ալլահու ակբար՝ Աստված մեծ է։ Ալլահու ակբար։ Ալլահու ակբար։ Ես վկայում եմ, որ չկա ուրիշ աստված Ալլահից բացի։ Եկեք աղոթելու։ Եկեք աղոթելու։ Ալլահու ակբար։»։ Նույնիսկ քրիստոնյայի ականջի համար այս վեհ ուղերձը հիշեցնում էր Աստծու ներկայության մասին։ Հզոր կանչը հրավիրում էր բոլոր հոգիներին հաղորդակցվելու կյանքի խորհրդավոր ակունքների հետ և Վարդանը կեղծելու զգացում չունեցավ, երբ մնացածների հետ դարձավ դեպի Մեքքան և, նրանց շարժումները կրկնելով, ներքուստ աղոթեց։

Մութն ընկնելուց հետո ներքնակները փռեցին բակում՝ անհավասար շրջան կազմելով, որի կենտրոնում կրակ վառեցին։ Եկան հյուրերը, որոնց Սուլեյմանն ու Նազիմն ընդունեցին համբույրներով և բարեմաղթանքներով։ Սուլեյմանը Վարդանին ներկայացրեց նրանց՝ հագուրդ տալով ձևականություններին։ Եկել էին Բորհանեդդինը, որը մետաղագործ էր, Թեքգյոզ Սեդաթը՝ հացթուխը, որի մականունը ցույց էր տալիս, որ նա միականի էր, Օսմանը՝ ջորեպանը, որը գյուղերում ածուխ էր վաճառում, Նազիմի աներձագը և հարևան երկու ագարակապաններ՝ Սրըլրկ Սիտկին և Բելի Կըրրկ Ռահմին։ Նրանք բոլորը իրար նման էին իրենց սև բեղերով, արևակեզ դեմքերով, սափրած գլուխներին դրված իրենց ֆեսերով և բամբակյա սպիտակ շապիկներով, որոնք հավաքված էին գոտկատեղին լայն բրդյա գոտիներով։ Վերջին հյուրը՝ ղուրանական երգեցող Հաֆիզ Շևֆիկը, ճաղատ էր և գրեթե կույր։ Նրա սպիտակ մորուքը շրթունքների շուրջը դեղնել էր ծխախոտի ծխից, որ նա փաթաթում էր զարմանալի արագությամբ և առանց մի փշուր կորցնելու։

Նրանք թեք ընկան ներքնակներին, իսկ կանայք բերեցին օղու շշերը, ջրով կժերը և ուտեստները։ Սուլեյմանն ու նրա եղբայրը ճաշկերույթը շռայլորեն էին կազմակերպել։ Մատուցեցին խորոված գառ, խորոված սմբուկ, փլավ, լցոնած լոլիկներ և պղպեղ, սխտորամածուն։

Սուլեյմանի պնդմամբ, Վարդանը ստիպված եղավ մանրամասնորեն պատմել իր գնդի վրա ապստամբների հարձակման մասին, թե ինչպես ինքը միակ ողջը մնալով՝ ստիպված էր եղել մահացած ձևանալ, ինչպես էր փախել, օրեր շարունակ քայլել տափաստանով և սնվել բույսերի արմատներով ու սոխուկներով։ Նրա պատմությունը հիացրեց այդ մարդկանց, որոնք երեխաների պես հեքիաթներ էին սիրում, և նրանք մի քանի թունոտ մեկնաբանություններ արեցին «սուլթանի պատերազմի» մասին, որից կարգին բան չէին հասկանում, բացի այն, որ այդ պատերազմի պատճառով բանակը կանոնավոր կերպով բռնագրավումներ էր իրականացնում։ Նրանք շուտով վերադարձան մթերքի գներին և անպարկեշտ պատմություններին, որոնք նրանց զրույցների հիմնական նյութն էին կազմում։

Վարդանը լուռ էր և մտացրիվ հետևում էր նրանց զրույցին։

Ճաշկերույթն աշխուժացավ։ Հյուրերը զրուցում էին, միևնույն ժամանակ ուտում և խմում էին։ Այս անգրագետ մարդիկ, որոնք իրենց գյուղից դուրս աշխարհ չէին տեսել, ապրում էին բնական կյանքով և դա շարժեց Վարդանի նախանձը։

Երբ գիշերն արդեն բավական առաջացել էր, երեք պատանիները հեռացան և վերադարձան գոմից փամփշտակալներով և հրացանով։ Նրանք հրաժեշտ տվեցին հյուրերին և անհայտացան մթության մեջ։ Վարդանի հարցին Սուլեյմանը պատասխանեց.

— Նրանք հսկում են ագարակը մինչև լուսաբաց և կրակում են թափառաշրջիկներ տեսնելիս։ Վերջերս մեզ վրա հարձակվել էին։

— Հարձակվե՞լ։

— Այո, դասալիքներ կամ անհավատներ, որոնք անասուն են գողանում։

— Ինձ վրա էլ են հարձակվել,– հաստատեց ագարակապաններից մեկը։— Եվ նրանք...

Նազիմը նրան ընդհատեց և բաժակը բարձրացրեց.

— Խմենք։ Լուրջ բաներից վաղը կխոսենք։

Մնացածները հետևեցին նրա օրինակին, և տոնախմբությունը շարունակվեց էլ ավելի աշխույժ կերպով։ Զինված տղաների ներկայությունը դաշտերում ստիպեց Վարդանին հրաժարվել տանտերերի քնելուց հետո հեռանալու գաղափարից։

Սուլեյմանը նայեց իր բարեկամներին, որոնք սրտանց ուրախանում էին, ու իրեն շատ հպարտ զգաց, քանի որ ուտելիքն ու խմիչքը առատ էր։ Նա մտածեց իր բերրի հողերի մասին, հարեմում գտնվող իր կանանց մասին, երեխաների մասին, որոնք ուժեղ կլինեին, վերջերս գնված շապիկի և ֆեսի մասին, պատերազմից հետո Մեքքա կատարվելիք ուխտագնացության մասին։ Եվ նա ուրախացավ։

— Ով, Ալլահ։ Մենք ապրում ենք քո օրհնությամբ լի դրախտում։ Երգիր մեզ համար, Հաֆիզ, երկար մի երգ երգիր։

Ծերունին ջուր խմեց և մի քանի անգամ խորը շունչ քաշեց։ Լսվեց նրա խորը և մաքուր ձայնը։ Տղամարդիկ դադարեցին ուտել և աչքերը հառեցին կրակին։ Ժամանակ առ ժամանակ լսվում էր «Ամա՛ն։ Ամա՛ն» բացականչությունը, որը շշնջում էր նա, ով հուզվում էր մեղեդուց։ Վարդանը կարոտին տրվեց։ Ծերունին, որը կարծես ներշնչման մեջ լիներ, սիրով էր երգում սկզբում արաբական, հետո թուրքական երգեր։ Նազիմը նրան ուդ բերեց։ Հաֆիզ Շևֆիկը գործիքը գետնին դրեց ու ներողություն խնդրեց.

— Իմ մատները փայտացել են ամբողջ օրը պարտեզում աշխատելուց։

— Ինձ տվեք, ես կփորձեմ։

Նազիմը, զարմանալով, նրան մեկնեց ուդը, որը Վարդանը ծնկներին դրեց լարերը ստուգելու և մի քանի ակորդ վերցնելու համար: Նա երկար իմպրովիզացիա արեց: Շատ արագ նա մոռացավ տեղն ու ժամանակը, վշտերը, դժբախտությունները, անորոշ ապագան: Մեղեդին սավառնում էր դաշտերի վրայով, հաղթահարում էր լեռները և իրեն տանում էր իր հետ:

Հյուրերից և ոչ մեկը չէր լսել այդպիսի հմուտ կատարում: Երբ ուդը լռեց, Հաֆիզ Շևֆիկը սկսեց երգել: Եվ երբ քիչ անց դադար տվեց շունչ առնելու համար, նա նշան արեց Վարդանին իրեն փոխարինելու: Որոշ ժամանակ երաժշտությունն ու երգը հաջորդում էին միմյանց, կարծես երկու երաժիշտները իրար հետ ծանոթանային: Հետո առանց պայմանավորվելու նրանք միացրեցին իրենց տաղանդները, և ուդը ցածրաձայն նվագակցում էր երգողին: Նրանց երաժշտությունը մեղմությամբ լցրեց գիշերը: Տղամարդիկ շունչները պահել էին, և նրանց հոգիների վրա ողորմածություն էր իջել: Հարեմի լուսամուտների ճաղերի հետևում կանանց աչքերն արտացոլում էին կրակի լույսը:

Երբ տոնախմբությունն ավարտվեց, Հաֆիզ Շևֆիկը շնորհավորեց Վարդանին.

— Որտե՞ղ եք այդքան լավ նվագել սովորել, լեյտենանտ Սալահեդդին:

— Ուդի Թաթարը ինձ դասեր է տվել:

— Ես հիմա հասկանում եմ: Դա ամենամեծ ուդահարն է:

— Դուք աստվածային կերպով եք երգերը կատարում, Հաֆիզ:

— Շնորհակալություն: Սակայն գործի մեծ մասը ձեր ուդն արեց:

Հյուրերի գնալուց հետո Սուլեյմանն ու Նազիմը Վարդանին իրենց երախտագիտությունը հայտնեցին իրենց հյուրերին այդպես հմայելու համար:

— Դու մեզ հետ կմնաս, որքան կուզես,– բացականչեց Սուլեյմանը նրան համբուրելով:– Կուզենայի քեզ պահել մինչև ռամադանի վերջին տոնախմբությունները:

Երկու տղամարդիկ անհայտացան կանանց տանը, իսկ Վարդանը դրսում մնաց՝ նայելով հանգչող կրակին: Օգոստոսի կեսի դեռևս կարճ այդ գիշերն արդեն ավարտվում էր: Հոգնածությունից ջախջախված և դարձյալ ջերմող Վարդանը քնելու ոչ մի ցանկություն չուներ, քանի որ ապրել էր մարդասիրական մի պահ, որը կուզեր երկարաձգել: Լեռների մեջ կորած ագարակը նրան խաղաղության հանգրվան էր թվում: Հեռվում մի կրակոց լսվեց, և Վարդանին սթափեցրեց: Փախստականը չէր կարող իրեն հանգստացնել նման պատրանքներով: Նա տուն գնաց քնելու: Գետնին խառնիխուռն պառկած երեխաներին շրջանցելով՝ նա ազատ տեղ գտավ մի փալանի վրա պառկած փոքր տղայի կողքին: Երեխան սեղմվեց նրան, և Վարդանը տեսավ իր որդու դեմքը:

* * *

— Ոտքի՛, ծույլիկներ,– բացականչեց Սուլեյմանը ծիծաղելով։– Օրը ճաշ է դարձել։

Վարդանը բացեց աչքերը։ Ագարակապանը իրեն չէր դիմում, այլ պատանիներին, որոնք ամբողջ գիշեր հսկել էին ագարակի շրջակայքը։ Նրանք վեր կացան՝ հորանջելով և ձգվելով։ Սուլեյմանի կոպերը նույնպես ուռած էին քնից։ Ռամադանի ժամանակ ընդունված էր հնարավորինս ուշ արթնանալ, որպեսզի ցերեկային ծոմի ժամերը կարճ թվային, այդուհանդերձ հարկավոր էր կատարել այն անհետաձգելի աշխատանքները։

Վարդանը ոտքի կանգնեց։ Նա գլխապտույտ ուներ, թույլ էր և այրվում էր ջերմից։

— Պառկիր,– ասաց Սուլեյմանը։– Այշան ասաց, որ դու ժամանակից շատ ես պոկել ձվի թաղանթը։ Նա կկրկնի բուժումը։

— Ես մաքուր օդի դուրս գամ,– պատասխանեց Վարդանը։

Նրա վիրավոր ոտքը վատ էր ծալվում, և նա դժվարությամբ էր քայլում։ Նա այնպիսի տպավորություն ուներ, որ մկանները վերքի շուրջը բռնվել էին, և արած մի քանի քայլից նա ուժասպառ եղավ։ Նա նստեց դռան մոտ՝ ստվերում։ Սուլեյմանը անհանգստացած կռացավ նրա վրա։ Լավ չէր լինի, եթե այս սպան մեռներ իր տանը։ Նա հարցրեց.

— Ուզո՞ւմ ես բանակին զգուշացնեմ, որ փոխադրամիջոց ուղարկեն քո հետևից։

— Նեղություն մի քաշիր,— շտապեց պատասխանել Վարդանը։– Ընդամենը ջերմի նոպա է։ Ջերմախտ։ Երևի գիշերային տոնախմբությունից հոգնել եմ։ Քո կնոջ բուժումից հետո ես ինձ ավելի լավ կզգամ։

Սուլեյմանը գլուխը տմբտմբացրեց.

— Հաստատ... Ախ, ինչ տոնախմբություն էր։ Իմ բարեկամները այն երկար կհիշեն։

Երեխաները մոտեցել էին Վարդանին՝ հույս ունենալով, որ Վարդանն իրենց նոր պատմություններ կպատմեր։ Սուլեյմանը նրանց քշեց.

— Թողեք, հյուրը հանգստանա։ Բացի դրանից, պետք է աշխատել։

Հիսաթափված երեխաները միացան չորս կանանց, որոնք նրանց էին սպասում մյուս տան մոտ, և գնացին քարքարոտ արահետով։ Նազիմն ու երեք պատանիները գոմից դուրս հանեցին կամը և դրեցին բակի կենտրոնում։ Տղաներից մեկը, հրացանը ուսին, իսկ մանգաղը ձեռքին, գնաց կանանց հետևից, իսկ Նազիմն ու մնացած երկուսը շարժվեցին այլ

ուղղությամբ՝ իրենց հետևից քարշ տալով սայլին լծված եզներին։

Սուլեյմանն ու Նազիմը միասին տասնինը երեխա ունեին, ներառյալ ավագին, որը ծառայում էր բանակում։ Իրենց հինգ կանանց հետ միասին նրանք բավականաչափ աշխատող ձեռք ունեին բերքահավաքի ժամանակ բանվորներ չվարձելու համար։

Բոլորն էլ աշխատում էին դաշտում, բացառությամբ Այշայի, որը երեք ամսական երեխա ուներ։ Նա զբաղվում էր տնային տնտեսությամբ, ճաշ էր պատրաստում և պահում էր ևս երկու երեխաների, որոնք շատ փոքր էին արտերում օգտակար լինելու համար։

Այշան եկավ և ամուսնու հիացած հայացքի ներքո կճպեց մի ձու, որի թաղանթը փաթաթեց հիվանդի ճկույթին։ Ամուսնու ներկայությամբ նա սառը զսպություն էր ցուցաբերում։ Վարդանը ներքուստ բարկանում էր, որ չէր կարողացել միջոց գտնել այդ անիմաստ և ցավոտ բուժումից խուսափելու համար, հատկապես երբ Սուլեյմանին մեջքով կանգնած կինը աչքով արեց իրեն։

— Համոզվա՞ծ ես, որ ջերմախտ է,— հարցրեց գյուղացին։

— Իհարկե,- պատասխանեց նա առանց աչքը թարթելու։

Հանգստանալով՝ նա ծիծաղեց ու մատը թափ տվեց Վարդանի վրա։

— Այս անգամ չես պոկի ձվի թաղանթը։ Կտեսնենք, թե մեր սպաները որքան են դիմացկուն։

Վարդանի շրթունքները ճաքճքել էին, իսկ կոկորդը չորացել էր։ Այշան նրա համար ջուր բերեց և վերադարձավ հարեմ։ Սուլեյմանը կամն էր վերանորոգում։ Ժամանակ առ ժամանակ նա ընդհատում էր աշխատանքը և Վարդանի վրա հայացքներ էր նետում և բարձրաձայն հղկված նախադասություններ ասում, որոնք ամփոփում էին նրա կենսամտածողությանը։

— Հողը շռայլ է նրանց նկատմամբ, ովքեր իրեն սիրում են։

Կամ.

—Մարդ անում է այն, ինչ կարող է, իսկ Ալլահը զբաղվում է մնացածով։

Եվ էլի.

— Փայտ, քար ու քրտինք, հացը դրանով են վաստակում։

Վարդանը ձեռքն արևի տակ էր պահել, որ թաղանթն արագ չորանար։ Այն ավելի ու ավելի էր սեղմվում, և շուտով ամբողջ ձեռքը թմրեց։ Ցավն ահագնանում էր և Վարդանը սեղմեց ատամները, որպեսզի չտնքար։ Նա առատորեն քրտնել էր։

— Հը՞, դիմանում ես,— հարցրեց Սուլեյմանը ծաղրական տոնով։

— Դիմանում եմ,- ասաց Վարդանն ատամները սեղմելով։

Երբ Սուլեյմանն իրեն չէր նայում Վարդանը շարժում էր մատը, որպեսզի թաղանթը ճաքեր։ Թաղանթի մակերեսին ճաքեր էին գոյանում, սակայն շատ ժամանակ անցավ մինչև այդ ճաքերը թափանցեցին թաղանթի խորքը։ Վերջապես թաղանթը բացվեց, և Վարդանի մատն ազատվեց։ Նա այնպիսի հզոր հոգոց հանեց, որ գյուղացին լսեց այն։

— Ապրես,- ասաց Սուլեյմանը, ջրհորի կողմը գնալով։- Երբեմն հիվանդներն ուշագնաց են լինում։

Նա մի դույլ ջուր հանեց և լցրեց իր գլխին արտը գնալուց առաջ թարմանալու համար։ Նրա հագուստը թաց էր։ Նա մոտեցավ Վարդանին։

— Լավ կլիներ, եթե քնեիր, որպեսզի բուժումն իր ազդեցությունն ունենար։

Նա օգնեց Վարդանին ոտքի կանգնելու և նրան տուն տարավ։

— Սուլեյման, դու բարի մարդ ես։

Գյուղացին նրա ուսին թփթփացրեց.

— Քո ներկայությունն իմ տանը երջանկություն է ինձ համար։

Դուրս գալուց առաջ ավելացրեց.

— Եթե այսօր երեկոյան քեզ բավականաչափ լավ զգաս, ապա էլի ուդ կնվագես։ Եթե վատ զգաս, վաղը կնվագես կամ էլ վաղը չէ՝ մյուս օրը։

Ամենայն հավանականությամբ Սուլեյմանը մտադիր էր իրեն երկար օթևանել, սակայն Վարդանը գիտակցում էր, որ հանգիստն ու սնունդը չէին բարելավում իր վիճակը։ Վարակը տարածվում էր, և ինքը թուլանում էր։ Որքան ավելի երկար սպասեր, այնքան ավելի կնվազեին ճամփա ընկնելու իր հնարավորությունները։ Արդեն իսկ նա չէր պատկերացնում, թե ինչպես էր հաղթահարելու Կեսարիայից իրեն բաժանող քսան կամ երեսուն կիլոմետրերը։ Ինքը պետք է Սուլեյմանին խնդրեր, որպեսզի նա իր համար սայլ վարձեր։

Զնայած հեղձուցիչ շոգին Վարդանը քնեց։ Քիչ անց վեր թռավ՝ այտին հպում զգալով։ Այշան, Վարդանի վրա կռացած, շոյում էր նրա դեմքը։ Վարդանն այնքան ապշահար տեսք ուներ, որ կինը շտապ հետ քաշեց ձեռքը։ Վարդանի խիստ հայացքից երիտասարդ կնոջ բաց դեմքը մի պահ մռայլվեց, հետո նա ժպտաց ու բաժակը մեկնելով ասաց.

— Ձեզ համար լորու թուրմ եմ սարքել։

Վարդանը նստեց և, բաժակը վերցնելով, զուսպ տեսքով շնորհակալություն հայտնեց։ Վարդանը զգուշավոր էր։ Առանց խոսք ասելու Այշան Վարդանի բերանին մոտեցրեց մի կտոր շաքար և դրեց նրա շրթունքների միջև։ Սուլեյմանն այդ թանկարժեք մթերքը պահում էր հատուկ դեպքերի համար։ Մինչդեռ Վարդանը փոքր կումերով խմում էր տաք հեղուկը, Այշան ուշադիր նրան էր նայում։ Նա արագ էր շնչում, և նրա ռունգերը թրթռում էին։ Հանկարծ նա ասաց խռպոտ ձայնով.

— Դու գեղեցիկ ես։

Հեղուկը Վարդանի կատիկը թռավ, և նա սկսեց հազալ։ Կինը շարունակեց նրա հետ դու-ով խոսել։

— Լեյտենանտ, ես քո դուրը չե՞մ գալիս։

Վարդանն ընդդիմացավ, շարունակելով դուք-ով խոսել.

— Խանում, դուք պետք է հեռանաք։

Այշան դարձավ և բարձրացրեց իր մազերը.

— Նայիր իմ պարանոցին։ Դու երբևէ տեսե՞լ ես այսպիսի բարակ պարանոց։

Մի քիչ թատերական շարժումով նա բացեց ծոցը և լույս աշխարհ հանեց իր կլոր և ձիգ, պրկված պտուկներով ստինքները։

— Նայիր։ Տես, թե ինչ եմ քեզ առաջարկում։

Վարդանն ուզեց ոտքի կանգնել, սակայն կինը իր քաշով մեկ նետվեց նրա վրա։ Թուրմով բաժակը շրջվեց։ Դեմքը մոտեցնելով տղամարդու դեմքին՝ կինն աղերսեց.

— Ասա ինձ, որ ես գեղեցիկ եմ։

— Դու գեղեցիկ ես,— պատասխանեց նա անհամբեր և ագրեսիվ տոնով։– Իսկ հիմա ինձ հանգիստ թող։

Նա փորձեց ազատվել կնոջ գրկից, որը կառչում էր իրենից։

— Վերցրու ինձ, գեղեցիկ լեյտենանտ։ Մենք ժամանակ ունենք։ Փոքրիկները քնած են, իսկ մնացածները տուն կգան միայն երեկոյան։

— Ոչ։ Քո ամուսինը մեծահոգաբար ինձ օթևան է տրամադրել իր օջախում։

— Սուլեյմանը դանդալոշ է և ինձ անուշադրության է մատնում,— ասաց կինը նեղացած ձայնով։— Ես այլ կյանքի մասին էի երազում...

Նրա ձայնից ու տեսքից Վարդանը հասկացավ, որ նա դժբախտ էր։ Նա բռնեց նրա դաստակները, հեռացրեց նրան առանց կոպտության և մեղմորեն ասաց.

— Աղերսում եմ, Այշա, մի պնդիր։ Ես չեմ կարող դա անել։

Կինը կկոցեց աչքերը և հեգնանքով ժպտաց.

— Կարող ես չվախենալ, որ ես կհայտնաբերեմ, որ դու մահմեդական չես։ Ես դա արդեն հայտնաբերել եմ։

Այդ խոսքերն այնքան ապշեցրին Վարդանին, որ Այշան դա նկատեց։ Երիտասարդ կինը փոթկաց.

— Երեկ, երբ դու քնած էիր... տեսա, որ դու թլփատված չես։

— Դու լավ չես հասկացել,– հակաճառեց Վարդանը տենդագին կերպով փնտրելով որևէ արժանահավատ թվացող պատճառաբանություն։

Կինը շշնջաց հաղթական տեսքով.

— Ես ոչ մեկին չեմ ասի, որ դու անհավատ ես։ Դա կլինի մեր երկուսի գաղտնիքը։

Նրա քողարկված սպառնալիքը հասկանալի էր, և Վարդանը մտածեց, որ միգուցե, զգուշությունից ելնելով, պետք էր ընդառաջել նրա ցանկությանը։ Սակայն նա հասկանում էր, որ նա առանց վարանելու կչարաշահեր այդ գաղտնիքը և իր անհանգստությունը թաքցնելու համար խորամանկորեն ժպտաց.

— Իսկ ինչպե՞ս կբացատրես Սուլեյմանին, որ տեսել ես իմ արվանդամը։

Մի պահ կինը շփոթվեց, իսկ հետո թոթվեց ուսերը.

— Մի բան կհնարեմ։ Նա պարզամիտ է և կհավատա այն ամենին, ինչ կասեմ։

Նա ոտքն անցկացրեց Վարդանի վրայով և հեծավ նրան։ Վերջնականապես կորցնելով ամոթխածությունը՝ նա թափ տվեց ուսերը, որպեսզի ստինքները շարժվեին, և բարձրաձայն ծիծաղեց։ Նա երբեք չէր կարծել, որ ինքը կարող էր որևէ տղամարդու այդպես տենչալ, և այն փաստը, որ նա գյաուր էր, ավելի էր գրգռում։ Նրան գրգռում էր նաև վտանգը.

— Դու ընտրություն չունես,– ասաց նա վճռական տեսքով։

— Ես հիվանդ եմ ու վիրավոր։

— Դու ջերմախտով հիվանդ չես։ Քո ջերմությունը կնոջ պակասից է։ Ես տեսա տենչը քո աչքերում, երբ ինձ էիր նայում։

— Դու հորինում ես,– բացականչեց Վարդանը։– Ստում ես։

Կինը գունատվեց և ասաց գրգռված տոնով.

— Ինչ, ուզում ես ասել, որ ես գրավիչ չե՞մ։ Ես բավականաչափ լավը չե՞մ։

Նրա կկոցած աչքերից հուր էր թափվում, և նա շրթունքներն էր կրծոտում։ Վարդանը հասկացավ, որ ինքը չպետք է նրան իր դեմ լարեր, այլ հակառակը՝ պետք է շողոքորթեր։ Նա բռնեց կնոջ ձեռքը.

— Ես դա չէի ուզում ասել, Այշա։ Դու շատ գեղեցիկ ես։ Դու ունես այն ամենը, ինչի մասին կարող է երազել տղամարդը։

Հանգստանալով, Այշան իր շրթունքները մոտեցրեց Վարդանի շրթունքներին, և վերջինս նրան երկար համբուրեց՝ կծոտելով նրա լեզուն։

Կինը գլուխը բարձրացրեց.

— Ինձ երբեք այսպես չեն համբուրել։

Նրա աչքերը սառել էին։ Վարդանը շոյեց նրա այտը, պարանոցը, ուսն ու կուրծքը։ Շուրթերը կիսաբաց՝ նա ծանր էր շնչում։

— Գեղեցիկ Այշա, կուզենայի քեզ պատիվ անել, սակայն այս վիճակում ես անկարող եմ։ Մարմինս չի ենթարկվում իմ տենչին։

Այշան հպվեց Վարդանի արվանդամին։ Համոզվելով, որ ճիշտ էր ասում, նա հիասթափված հառաչեց։

— Համբուրիր ինձ նորից։

Համբույրից հետո նա ոտքի կանգնեց և կոճկեց իր զգեստը։ Նա վստահորեն հայտարարեց.

— Մենք էլի կփորձենք։ Մենք դեռևս հնարավորություն կունենանք։

Վարդանը նստեց ներքնակի վրա և հաստատող նշան արեց։ Նրան հակաճառելը վտանգավոր էր։

— Ես քոնը կլինեմ որքան կուզես,– ասաց նա նվաղած ձայնով և օդային համբույր ուղարկեց Վարդանին։

Մենակ մնալուն պես Վարդանը հանեց Սուլեյմանի տված շալվարն ու շապիկը և իր համազգեստը հանեց կախիչի վրայից։ Պատռվածքները խնամքով կարված էին։ Նա չէր կարող երկար քայլել, սակայն պետք է հեռանար այդ կնոջից հնարավորինս շուտ, նույնիսկ եթե հեռանալու լիներ ագարակից ընդամենը երկու կիլոմետր։ Հատկապես չպետք է սպասեր Սուլեյմանի վերադարձին, որը կջանար իրեն հետ կանգնեցնել իր որոշումից։ Վաղը կամ հաջորդ օրը Այշան կրկին ոտնձգություններ կաներ իր նկատմամբ, և ինքը չէր կարողանա այդքան հեշտ խույս տալ։ Մանավանդ հաշվի առնելով այն, ինչ նա գիտեր իր մասին...

Բնազդն Այշային քշեց դեպի տուն և ոտքերի ծայրերին կանգնելով, նա լուսամատից ներս նայեց։ Վարդանը, մեջքը դեպի դուռն արած, հագնում էր իր տաբատը։ Նա լքում էր իրեն։ Նա հեռանում էր իրենից։ Նա իրեն խաբել էր։ Նրա շրթունքները դողացին կատաղությունից, և նա ճչալու ցանկություն ունեցավ։ Մի քանի րոպե, ներքին պայքարով համակված, նա քարացած մնաց։ Նրա մարմինը տառապանք էր զգում այն մտքից, որ ինքն այլևս երբեք չէր տեսնելու այդ տղամարդուն, որ ինքը կորցնելու էր նրան առանց ճաշակելու նրա սերը։ Այդպիսի առիթ այլևս չէր ներկայանա։ Սակայն ինչի՞ վրա էր ինքը հույս դրել։ Ինքը այս անծայրածիր դաշտի հավերժ բանտարկյալն էր։ Նրա ուսերը հակվեցին, և նա անձայն քայլերով հեռացավ։

Նույնիսկ հագնվելու ջանքերից Վարդանն ուժասպառ էր եղել։ Նա ոտքից գլուխ քրտնել էր։ Մի պահ նա պատին հենվեց։ Կոշիկները հագնելն ավելի հեշտ չէր, հատկապես աջ ոտքի այտուցի պատճառով։ Ուսապարկն ուսին գցելիս զգաց, որ այն չափից ավելի թեթև էր։ Ջրի շիշն այնտեղ էր, ինչպես նաև քսակը, դաշույնն ու փաստաթղթերը, սակայն ատրճանակի պատյանը դատարկ էր։ Սուլեյմանը երևի

երեխաներից հեռու էր պահել։ Ինչ արած։ Քսակն ու փաստաթղթերը դրեց բաճկոնի գրպանը և դուրս եկավ տնից։ Այշան չէր երևում։ Հավանաբար զբաղված էր փոքր երեխաներով, կամ էլ ճաշ էր պատրաստում։ Արևը զենիթի և հորիզոնի մեջտեղում էր, հետևաբար մոտավորապես ժամը հինգն էր։

Առանց աղմկելու Վարդանը գնաց ջրհորի մոտ, մի դույլ ջուր հանեց և խմեց մինչև հագենալը, ջրի շիշը լցնելուց առաջ։ Երբ կափարիչն էր հագցնում, կրակոց լսվեց։ Մի գնդակ անցավ նրա գլխավերևով. Սուլեյմանն իր կողմն էր վազում՝ ատրճանակն իր վրա պահելով։

— Չշարժվես,– բղավեց նա։

Փախչելու հնարավորություն չկար։ Գյուղացին կանգ առավ գոմի մոտ, օրորվելով, դեմքն արնակոխ։ Նա հեգնանքով ասաց.

– Գնո՞ւմ ես... պարոն լեյտենանտ։ Գողի պես... առանց հրաժեշտ տալու։

— Ես հենց գալիս էի քեզ զգուշացնելու, որ...

– Լռի՛ր,– ոռնաց Սուլեյմանը։– Շա՛ն որդի։

Նրա դեմքը կարմրել էր, և վզի ջլերը դուրս էին պրծել։ Առանց աչքը Վարդանից կտրելու, նա նստեց պատի տակ ստվերում և բառաչեց.

— Պայուսակդ ցած դի՛ր, անհավա՛տ շուն։

Վարդանը ենթարկվեց.

— Լսիր, դա այն չէ, ինչ կարծում ես,– ասաց նա առաջ գալով։

— Ձայնդ կտրի՛ր։

Նա հրամայեց, որ Վարդանը կանգ առներ իրենից տասնհինգ քայլ այն կողմ և նստեր գետնին արևի տակ։ Նա իր բանտարկյալին էր նայում արնակոխ աչքերով և թքեց նրա ուղղությամբ։

— Կեղտոտ խո՛զ։ Դու անպատվել ես իմ տունը և կվճարես դրա համար։

Սուլեյմանը խաղացնում էր իր զենքը, և Վարդանը սպասում էր, որ ցանկացած պահի նա կարող էր իրեն սպանել։

— Ես պետք է քեզ սպանեի, ինչպես դու սպանել ես այն սպային, որից գողացել ես նրա համազգեստը։

— Սո՛ւտ է։

— Ասացի՝ լռի՛ր։ Ուժերդ խնայիր հարցաքննության համար։ Դու ապստամբ ես, և այդ պատճառով ես քեզ կհանձնեմ բանակին։ Նրանք քեզ կստիպեն խոսել, և դու քո հանցակիցների անունները կտաս։

Այս խոսքերից հետո Վարդանը հանգստացավ իր ճակատագրի համար։ Արևը կիզիչ էր, սակայն անիմաստ էր գյուղացուց

թույլտվություն խնդրել ստվերում նստելու։ Աչքի պոչով Վարդանը տեսավ Այշային, որը տուն էր մտնում։ Անպիտա՜նը։

Տղամարդիկ երկար ժամանակ լուռ միմյանց էին նայում։ Վարդանն ապարդյուն փորձում էր պատմություն հորինել, որը կբացատրեր իր չթլփատված լինելը։

— Իմ ավագ որդին կյանքն է վտանգում քեզ պես գյաուրների դեմ կռվելով։

Սուլեյմանի ձայնում վրդովմունքը տեղը զիջել էր ընկճվածությանը։ Նա ափսոսում էր, որ իր բարեկամությունն էր վատնել այդ մարդու համար, սակայն հատկապես հուզված էր, որ չէր կարողացել տարբերել հավատացյալին անհավատից։ Հաֆիզ Շևֆիկը նույնպես խաբվել էր։

— Երբ մտածում եմ, որ քեզ եղբոր պես եմ ընդունել...— բողոքեց Սուլեյմանը։

Նրա ձայնը Վարդանին հույս ներշնչեց, որ դեռևս ամեն ինչ կորած չէր։ Նա ձեռքերը պարզեց դեպի իր պահապանը։

— Ուշ է,- բացականչեց Սուլեյմանը ոտքի կանգնելով։

Նրա եղբայր Նազիմն ու երկու որդիները գալիս էին երեք ոստիկանների ուղեկցությամբ։ Վարդանը դժվարությամբ ոտքի կանգնեց։ Նազիմը թքեց նրա երեսին և դարձավ ոստիկաններին.

— Ես ձեզ չեմ խաբել։ Ահա նա։

Սուլեյմանը հետ քաշվեց բանտարկյալի շուրջը գոյացած շրջանից։ Նա համարում էր, որ ինքն այդ միջադեպի զոհն էր, սակայն, զարմանալիորեն, համակված չէր վրիժառության ցանկությամբ, որը նրա համար հատկանշական կլիներ ցանկացած այլ դեպքում։ Այս մարդը, որը քիչ էր մնում իր բարեկամը դառնար, նրա սրտում խղճահարություն էր հարուցում։ Ինքը պետք է նրան սպանած լիներ քիչ առաջ ջրհորի մոտ, երբ իր բարկությունը դեռևս չէր ցնդել։ Հիմա նա դիտում էր այդ տեսարանը մի տեսակ օտարացած տեսքով։

Ենթասպան՝ քառասուն տարեկան միակնանի մի մարդ, շփոթված նայեց բանտարկյալին։ Վարդանը նրան ողջունեց ու վստահ հայտարարեց.

— Այստեղ սխալմունք կա, սերժանտ։

— Խաբեբա,— ոռնաց Նազիմը՝ հրացանը նրա վրա ուղղելով։

Առանց շփոթվելու Վարդանը հանեց զինվորական գրքույկը և ցույց տվեց ոստիկանին, առանց նրա ձեռքը տալու.

— Ես օսմանյան բանակի լեյտենանտ եմ։ Տար ինձ վերադասներիդ մոտ։

— Մենք հենց դա էլ անելու ենք, պարոն լեյտենանտ- պատասխանեց սերժանտը, որը տպավորված էր բանտարկյալի ինքնավստահությունից։

Նազիմը բռնեց ոստիկանի ուսից և նրան ստիպեց շրջվել.

— Ի՞նչ,– պայթեց նա։– «Պարոն լեյտենանտ» ես նրան անվանո՞ւմ։ Սա ինքնակոչ է, անհավա՛տ։

Ենթասպան ուսի շարժումով ազատվեց նրա ձեռքից.

— Ինձ ձեռք չտաս։ Ես իշխանության ներկայացուցիչ եմ և ասում եմ, որ մենք նրան կտանենք կապիտանի մոտ, որը և որոշում կընդունի։

— Թող քո կապիտանը գրողի ծոցը գնա,– ասաց Նազիմը։– Ես ոչ մեկի կարիքը չունեմ ապացուցելու համար, որ սա գյաուր է։

Կայծակնային արագությամբ նա նետվեց բանտարկյալի վրա, և նրան գետնին տապալեց։ Վերջինս հուսահատ պայքարում էր, սակայն Նազիմն ուժեղ էր, իսկ որդիները միացան իրենց հորը՝ Վարդանին անշարժացնելու համար։ Նազիմը հանեց դանակը, կտրեց զինվորական գոտին, իջեցրեց բանտարկյալի վարտիքը և, ցույց տալով նրա արվանդամը, ոռնաց.

— Ապա մի այստեղ նայեք և համարձակվեք ինձ ասել, որ սա քրիստոնյա չէ։

Սերժանտն ու նրա մարդիկ համոզվեցին, որ Վարդանը թլփատված չէր։

— Դուք հիմա համոզվեցի՞ք։ Սա ապստամբ է կամ վնասարար։

— Եվս մեկ պատճառ, որպեսզի կապիտանը նրան հարցաքննի։ Մեզ հանձնիր նրան։

Երկու տղաները շարունակում էին բանտարկյալի ուսերը գետնին սեղմած պահել, իսկ Նազիմն իր քաշով մեկ ընկել էր նրա ոտքերի վրա և թափահարում էր դանակը։

— Նա ինձ ողջ է պետք,– բղավեց սերժանտը։ Ոստիկանները չհասցրեցին միջամտել, երբ Նազիմը կռացավ, ձախ ձեռքով ձգեց թլփը և, մինչդեռ Վարդանը բղավում էր, երկու ճշգրիտ շարժումով այն հատեց։ Արյունը հոսեց և երեք դահիճները քահ-քահ ծիծաղեցին։ Նազիմը ոտքի կանգնեց հաղթական տեսքով և թափահարեց իր ավարը ենթասպայի քթի առջև, որը ճպճպացնում էր իր միակ աչքը։

— Կեր, եթե դեռ չես համոզվել։

Այդ անպատկառությունից վրդովվելով՝ երկու ոստիկանները հրացաններով սպառնացին Նազիմին։ Պատանիները բաց թողեցին Վարդանին, որը, ցավից ծամածռվելով՝ ձեռքերը տարավ դեպի իր արվանդամը։

— Հերիք է,– հրամայեց սերժանտը, որը բարձրացրել էր գետնին ընկած զինվորական գրքույկը և դժվարությամբ կարդում էր։

Շաքիր Իսմայել... Այս անունը անծանոթ չէր։ Այս մարդը հետախուզության մեջ էր։ Նրան բռնելու համար խոշոր պարգև էին

խոստացել, և հարկավոր էր, որ այս գյուղացիներն այդ բանը չիմանային, քանի որ կարող էին հավակնել պարգևատրության մի մասին։ Նա զինվորական գրքույկը դրեց գրպանը և ոտքի մի հարված հասցրեց գերվածի կողերին։

— Ոտքի։

— Սպասեք,– աղերսեց Վարդանը, որը դեռևս գտնվում էր վայրագ թլփատման շոկի ներքո։

Նա իր շապիկի փեշից մի կտոր պատռեց և արվանդամը դրանով վիրակապելուց հետո զգուշորեն տեղավորեց վարտիքի մեջ։ Վարդանը դժվարությամբ ոտքի կանգնեց Նազիմի ու նրա որդիների կատակների ներքո։ Սերժանտը նրան հրեց դեպի արահետը, որը ձգվում էր դեպի արևմուտք եգիպտացորենի դաշտի միջով։ Իր ուրախությունը ցուցադրելու համար Նազիմն օդ կրակեց, և երկու պատանիները հետևեցին նրա օրինակին։ Սուլեյմանը նայում էր, թե ինչպես էր իր «հյուրը» կաղալով հեռանում։ Հիասթափությունը թոթափելու համար նա գնաց հարեմ Այշայի մոտ և մի լավ ծեծեց նրան։

Վարդանն օրորվում էր և ամեն քայլափոխի խուլ տնքում։ Վիրավոր արվանդամն այրվում էր, և վիրակապն այն վատ էր պաշտպանում տաբատի հետ հպվելուց։

— Արագ շարժվիր,— ասաց ոստիկաններից մեկը՝ բարակ բեղերով մի երիտասարդ, և խոսքին շարժում հավելեց։

Հրացանի կոթով մեջքին հարված ստանալով՝ Վարդանը գետնին տապալվեց։ Սերժանտն իրեն հաշիվ տվեց, որ բանտարկյալն իրեն լրջորեն վատ էր զգում։

— Օգնիր նրան, որ ոտքի կանգնի,– հրամայեց նա վայր գցողին։

Ոստիկանը դժկամությամբ կատարեց հրամանը։ Քիչ անց Վարդանն այլևս ուժ չուներ շարժվելու, և անհրաժեշտ եղավ նրա կողքից քայլել և նրան պահել։ Նրանք դանդաղ էին առաջ շարժվում և միայն կես ժամից հասան արահետի և վատ ճանապարհի հատման վայրին։ Հոգնած ոստիկանները վայր գցեցին բանտարկյալին։ Երեք ոստիկաններից ամենատարեցը՝ ալեխառն մազերով նիհար մի մարդ, բացականչեց.

— Մենք սրան մինչև գյուղ շալակա՞ծ պիտի տանենք։

Ենթասպան նրանց մի կողմ տարավ և հայտնեց դրամական պարգևատրության մասին, որը խոստանում էին այդ մարդու ձերբակալության համար։ Նրանց դեմքերը լուսավորվեցին, սակայն ամենատարեցը անմիջական տոնով ասաց.

— Մենք այդ դրամը չենք էլ տեսնի։ Պարգևատրությունն ու պատիվը բաժին կընկնեն կապիտանին, իսկ մեր ուսը կթոթվեն։

— Ճիշտ է ասում,— համաձայնեց երկրորդը։– Այդպես արդեն մեկ անգամ եղել է, հիշո՞ւմ ես։

Սերժանտն իր վնասված աչքը տրորեց, որը միշտ քոր էր գալիս, երբ ջղայնանում էր: Նա շատ լավ էր հիշում այն անարդարությունը, որի մասին ակնարկում էր իր ենթական: Ի դեպ, այդ միտքը նրա գլխում ծագել էր մի քանի րոպե առաջ: Նա ֆեսը հանեց՝ սափրած գլուխը սրբելու համար:

Վարդանը լսել էր նրանց խոսակցությունը: Նա վճռեց իր վերջին հնարավորությունն օգտագործել և, հաղթահարելով տառապանքը, գրպանից հանեց քսակը և այն գնգացրեց: Ոստիկանները վազելով մոտեցան:

— Սա ոսկի է,– ասաց Վարդանը,– թողեք ինձ այստեղ և այն ձերն է:

Ոսկի: Նրանց աչքերը ագահությունից փայլեցին: Սերժանտը խորամանկ ծիծաղեց.

— Մենք կարող ենք վերցնել, իսկ քեզ, միևնույն է, տանել պահակակետ:

— Այդ դեպքում ես դա կպատմեմ ձեր կապիտանին, որը ձեզնից դրամը կխլի և իրեն կպահի:

Բոլորի դեմքերին մտահոգություն հայտնվեց:

— Անենք այնպես, ինչպես նա ասում է,– ասաց երիտասարդը:

Սերժանտը դեռևս տատանվում էր: Վարդանն ավելացրեց.

— Բացի դրանից, ես այն մարդը չեմ, որին փնտրում են: Այս համազգեստը գողացել եմ, և ոչ ոք պարգևատրություն չի ստանա:

Երկրորդ ոստիկանը ենթասպայի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ բանտարկյալը վիրավորված էր և որ նա, անկասկած, մեռնելու էր:

— Մենք համաձայն ենք,– ասաց սերժանտը՝ վերցնելով քսակը:

Նա քսակը դատարկեց ափի մեջ և ճիչ արձակեց՝ տեսնելով, թե ինչպես էին ոսկե դրամները փայլում արևի տակ: Դրանք վեցն էին:

— Երկու ոսկի ամեն մեկին:

Դրամը գրպանելուց հետո ենթասպան մտահոգվեց: Նա կզակով ցույց տվեց Վարդանին.

— Իսկ եթե նրան գտնեն, ու նա մեզ մատնի:

Վարդանն առարկեց, սակայն նիհար ոստիկանի ձայնը խլացրեց նրա խոսքը.

— Եկեք սպանենք:

Նա լցրեց հրացանը: Սերժանտը նրան թույլ չտվեց կրակել.

— Կրակոց չլինի: Ճանապարհով կարող են մարդիկ անցնել:

Նրանք սկսեցին բանտարկյալին հարվածել իրենց հրացանների կոթերով։ Վարդանը մարմինը պաշտպանում էր թևերով, սակայն քունքին ստացած մի հարվածից ուշագնաց եղավ։ Ոստիկանները շարունակում էին հարվածել, ջանալով դիպչել գլխին և կրծքավանդակին։

— Սա իր բաժինը ստացավ։

Արնաշաղախ Վարդանը անշարժ պառկած էր։ Նրանք հանեցին նրա կոշիկներն ու համազգեստը, որպեսզի դրանցից ազատվեին ավելի ուշ։ Եթե դիակը գտնեին, ապա չէին իմանա, թե ով էր նա։

— Քարերով չծածկե՞նք։

— Շներն ու ուրուրները կզբաղվեն նրանով,– եզրափակեց սերժանտը՝ իր մարդկանց նշան անելով իրեն հետևելու։

Նրանք բռնեցին գյուղի ճանապարհը՝ հիանալով մի ամբողջ կարողություն կազմող իրենց ոսկեդրամներով։ Յուրաքանչյուրը պատկերացնում էր, թե ինչ էր անելու այդ գումարը։

— Նա ոսկե ատամ ուներ,– հանկարծ հիշեց ամենաերիտասարդը և կանգ առավ։

— Թող,— ասաց ենթասպան նրա թևից քաշելով։

Նա շտապում էր հեռանալ դեպքի վայրից։

Երեկոյան ավանակը դիմացը գցած մի զույգ էր անցնում ճանապարհով։ Կինը փոսում մարմին տեսավ, և նրա ուղեկիցը մոտեցավ մարմնին։ Տղամարդը ձեռքը դրեց Վարդանի կրծքին։

— Ո՞ղջ է,– հարցրեց կինը դողդոջուն ձայնով։

* * *

— Դուք գնո՞ւմ եք այրու մոտ, պարոն։

Աչքաբաց և կատակասեր Մեմոյի՝ ինը տարեկան տղայի այս հարցի վրա Քերիմին շրջապատող ութ երեխաները ծիծաղեցին։

Ուսուցիչը, որը երեսուն տարեկան ամուրի էր, չկարողացավ ժպիտը զսպել։ Նա ընտելացել էր այդ կատակին։ Ողջ Ուրգուպը կասկածում էր, որ ինքը սիրային կապի մեջ էր Հալիդեի հետ, որի մականունն էր «այրի», քանի որ երեք տարի առաջ իր ամուսնու մահանալուց հետո նա հրաժարվում էր ամուսնության բոլոր առաջարկներից։ Քերիմը շրջվեց և ծափ տվեց.

— Փախե՛ք։ Շո՛ւտ։ Փոքրիկ հրեշներ։

Երեխաները, որոնք նրան պաշտում էին, չխաբվեցին նրա խիստ ձայնից և կիտած հոնքերից։ Նրանք գիտեին նրա բարության ու

համբերատարության, ինչպես նաև մեծահոգության մասին։ Աղքատ գյուղացիների զավակներ լինելով՝ նրանք անվճար մասնակցում էին նրա դասերին։ Սրճարանի հետնամասում գտնվող մի սենյակում գործող աշխարհիկ դպրոցը գոյատևում էր այդ շրջանում ապրող բազմաթիվ հույն վաճառականների և հայ արհեստավորների իրենց երեխաների կրթության նպատակով կատարվող վճարումների շնորհիվ։ Դա առաջ էր, իսկ հետո նրանց դաժանորեն քշել էին շրջանից։

Քերիմն այդ ազգային դժբախտությունն ընկալում էր որպես իր անձնական դժբախտությունը։ Նույն դասարանում հավաքելով մահմեդականների և քրիստոնյաների, աղքատների և հարուստների երեխաների, նա տարիներ շարունակ հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի օրինակ էր մատուցում։ Նրա ջանքերը կարծես թե զուր էին անցել։ Նորից գլուխ էր բարձրացնում հալածանքն ու անհանդուրժողականությունը, որից ինքն էլ էր տառապել մանուկ հասակում։ Նրա ծնողները Ղրիմի թաթարներից էին և ստիպված էին եղել փախչել Անատոլիա, երբ Ղրիմը նվաճել էր ռուս ցարը նախորդ դարավերջին։

Բնակավայրի եզրին երեխաները բաժանվեցին ուսուցչից՝ հարգալից հրաժեշտ տալով նրան։ Վազելով և բղավելով նրանք գնացին դեպի հրաբխային ծագում ունեցող սարը, ուր կային բազմաթիվ քարանձավային բնակավայրեր և որի ստորոտում էին գտնվում Ուրգուպ քաղաքի հարթ կտուրներով տները։ Քերիմը շարժվեց հարևան Սինանոս գյուղը տանող ճանապարհով։ Նա նրբակազմ էր և քայլելիս այնպես էր կռանում և թևերը թափ տալիս, կարծես քամու դեմ պայքարելիս լիներ։ Սակայն ամռան ավարտի այդ շոգ երեկոյան օդը հանդարտ էր։ Նա եվրոպական հագուստ էր կրում՝ սև տաբատ և սպիտակ շապիկ, որի թևքերը ծալված էին մինչև արմունկները։ Ուղիղ քթով և տխուր աչքերով նրա նիհար դեմքը ջղային արտահայտություն ընդունեց։ Հիմա նա գիտեր, թե ո՞վ էր այն մարդը, որին ինքն ու Հալիդեն գտել էին ճամփեզրին կիսամեռ վիճակում։ Նրա հենց նոր թլփատված արվանդամից Քերիմը հասկացել էր, որ քրիստոնյա էր, և ապարդյուն կերպով փորձում էր համոզել Հալիդեին, որ վիրավորին չթաքցնեին նրա տանը։ Սակայն երբ Հալիդեն համակվում էր որևէ գաղափարով, նրան համոզելը հեշտ չէր լինում։

Անտաշ քարից կառուցված տունը ճանապարհից հեռու էր և թիկնել էր բլրի արևկող մասին։ Բլրի փափուկ հրաբխային ապարի մեջ մի քարանձավ էր փորված և ծառայում էր որպես գոմ ու մառան։ Ժամանակին դա դարբնոց էր, ուր երիտասարդ կնոջ ամուսինը դարբնություն էր անում։ Ամուսնու մահից հետո Հալիդեն այնտեղ վառարան էր շարել, ուր թրծում էր կավե ամանները, որոնցից ստացած եկամտով նա ապրում էր։ Վաստակը լրացնելու նպատակով նա մետաքսյա գորգեր էր գործում Կեսարիայի հարուստ ընտանիքների համար։

Երիտասարդ կինը, տանիքին կանգնած, տեղավորում էր ծիրանի չիրը երկու զամբյուղների մեջ։ Վախենալով, որ ամպրոպը իրեն կկանխեր, նա

հաճախակի երկնքին էր նայում։ Աշնանամուտն իրեն զգալ էր տալիս անձրևներով։ Կուրտը՝ սարթ և խիտ բրդով խաշնարած շունը, սկսեց հաչել՝ նայելով ճանապարհի ուղղությամբ։ Հալիդեն ճանաչեց Քերիմի քայլվածքը։ Նա ուղղվեց և նրան ձեռքով արեց։ Սևազգեստ այրին ձեռքերն իր լայն կոնքերին դրեց։ Կտրից նա տեսնում էր իր ամբողջ ունեցվածքը, որով շատ էր հպարտանում։ Ուղիղ մարգերով բանջարանոցը, մեծ ծառի հովանու տակ ջրհորը, չորս ծիրանենին, երկու խնձորենին, խաղողի վազերի շարքը, խոտի դեզը, փոքրիկ մարգագետինը, ուր խաղաղ ապրում էին ավանակը, հավերն ու հնդկահավերը, մի քանի ոչխար և երկու այծ իրենց ուլերով։

— Իջիր, քեզ հետ խոսելիք ունեմ,— ասաց Քերիմը՝ հասնելով պատին հենած սանդուղքին։

— Ավելի լավ է դու գաս և օգնես ծիրանը անձրևից առաջ ներս տանելու։

Քերիմը բարձրացավ, և կինը նկատեց, որ նա լարված էր։

— Բան է պատահե՞լ։

— Նախ չիրը պահենք։

Զամբյուղն ուսին դնելով՝ նա սանդուղքով իջավ և գնաց մինչև գոմը։ Մինչ նրա վերադառնալը, Հալիդեն արդեն լցրել էր երկրորդ զամբյուղը։

— Ինչպե՞ս է նա,- տեղեկացավ Քերիմը։

— Դեռ աչքերը չի բացել, սակայն վերքերը լավ են փակվում։

Նրա նուրբ և կենսուրախ ձայնը վկայում էր քսանչորս տարեկան կնոջ բնածին լավատեսության մասին։ Նրան երբեք և ոչինչ անհնար չէր թվում, և նա շուտ չէր հուսահատվում։ Ցած իջնելով՝ նա սանդուղքը պառկեցրեց պատի տակ։ Նա գլխաշորն իջեցրեց ուսերին։ Նրա երկար, սև և փայլուն մազերը, որոնք գանգրանում էին ճակատին և խիտ ալիքներ էին կազմում, հետ էին սանրած և հավաքված էին մի հյուսի մեջ, որը գցված էր ուսին։ Նրա մաշկը թուխ էր։ Նեղ դեմքը, փոս ընկած այտերը և բարակ պարանոցը նրան փխրուն տեսք էին տալիս, որը չէր համապատասխանում իրականությանը։ Լայն ուսերով,պնդակազմ Հալիդեն չէր խուսափում ծանր աշխատանքից։

Նա գնաց դեպի գոմը, ուր կանգնած էր Քերիմը։ Քերիմը, որ մի գլուխ բարձր էր նրանից, համբուրեց կնոջ այտերը։

— Ի՞նչ կա։

Քերիմը շուրջը նայեց։ Շապիկի բացվածքում երևում էին նրա կուրծքը ծածկող խիտ մազերը, որոնք բարձրանում էին մինչև պարանոց։ Նա ծոցից հանեց ութ տակ ծալված հաստ մի թուղթ։ Դա հայտարարություն էր։ Հալիդեն արաբական տառերը չգիտեր, սակայն սպայի լուսանկարը գրավեց նրա ուշադրությունը։ Նա աչքերին մոտեցրեց հայտարարությունը, որպեսզի համոզվեր, որ կոպի վրա երևացող խալը

ընդամենը վատ տպագրության հետևանք էր։ Իրենց վիրավորը նման նշան ուներ աչքի վրա։ Գլխի ձևը... ականջները... շրթունքները... կզակի ուղղահայաց փոսիկը...

— Նրա լուսանկարն է,– բացականչեց նա։

— Այո։

Լուսանկարի վրա նա շատ գեղեցիկ թվաց Հալիդեին, սակայն այդ գեղեցկության հետքերն անհնար էր հայտնաբերել նրա այտուցված և նիհարած դեմքին։

— Ի՞նչ է գրված։

— Մահվան դատապարտված հայ է։ Նա հետախուզվում է որպես ապստամբ և դավաճան։ Կեղծ փաստաթղթեր ունի Շաքիր Իսմայելի անունով։ Իրականում նրա անունն է Վարդան Պալյան։ Մայոր է։

— Մայոր,– ասաց Հալիդեն չհավատալով։

Կինը ժպտում էր։ Այն փաստը, որ այդ մարդը հալածված էր, էլ ավելի էր արժևորում նրան փրկելու իր պատրաստականությունը։

— Չեմ հասկանում, թե ինչն է քեզ ուրախացնում,– փնփնթաց Քերիմը՝ նյարդային շարժումներով ծալելով թերթիկը։– Ես իրավացի էի, երբ չէի ուզում նրան այստեղ բերել։

Կինը բացականչեց.

— Փոսո՞ւմ թողնեինք։

— Իհարկե, ոչ։ Սակայն նրան հարկավոր էր թաքցնել Գորեմեի ստորգետնյա եկեղեցում։ Ինչպես մնացածներին։

— Ո՞վ պետք է նրան խնամեր։ Նա այնտեղ կմեռներ։

Քերիմը ստիպված էր համաձայնել։

— Մենք չէինք կարող իմանալ, ճիշտ է, սակայն հիմա... Նրան անհրաժեշտ է տեղափոխել։

—— Այդ մասին խոսք անգամ լինել չի կարող,—— ասաց կինը առարկություն չհանդուժող ձայնով։– Նա դեռևս չի սթափվել, նա բարձր տաքություն ունի։

Քերիմը պնդեց.

— Գթասրտությունը չափ ունի, Հալիդե։ Հասկացիր ինձ, արածդ չափազանց վտանգավոր է։

Երիտասարդ կնոջ աչքերը կատաղությամբ լցվեցին։

— Դա իմ գործն է։ Ի վերջո, սա իմ տունն է։

— Եթե նրան գտնեն, ապա ինձ էլ կկասկածեն։ Եվ այն ամենը, ինչ մենք փորձում ենք անել, կվարկաբեկվի։ Պահեր են լինում, երբ դու քեզ

հիմարի պես ես պահում, Հալիդե։

Կինը ծիծաղեց և ափով հարվածեց նրա ուսին.

— Իսկ դու չափից ավելի նյարդային ես, իմ սիրելի Քերիմ։ Ոչ ոք չի իմանա, որ նա այստեղ է։ Գյուղի մարդիկ ինձնից խուսափում են, և դու գիտես, թե ինչու։ Ո՞վ կմտածի նրան այստեղ փնտրելու մասին։

— Ո՞վ։ Ոստիկանները։

— Եթե նրանք գան, կասեմ, որ ամուսինս է և ցույց կտամ նրա փաստաթղթերը։ Այս մայորն անճանաչելի է իր երկշաբաթյա մորուքով։

Քերիմը հառաչելով ուսերը թոթվեց։ Պնդելն անիմաստ էր։ Հալիդեն բոլոր հարցերի պատասխանը գտնում էր։ Քերիմն ափսոսաց, որ այդքան խելացի կինը կրթություն չէր ստացել։ Սակայն... կրթություն ստանալով, արդյո՞ք նա ավելի երջանիկ կլիներ։ Նա կասկածում էր։ Նա իր ճակատագիրը փիլիսոփայաբար էր ընդունում և կարծես թե բավարարություն էր ստանում իր կյանքից։ Չնայած իր կրթությանը, Քերիմն իր մասին նույնն ասել չէր կարող։ Նա ապրում էր անբավարարվածության մշտական զգացումով, որի ակունքները չէր հասկանում։ Այնպիսի տպավորություն ուներ, որ ինքը ինչ-որ բանի էր սպասում, առանց իմանալու, թե ինչի։

Հալիդեն հետևում էր Քերիմին։ Նրա հայացքը դատարկ էր, ինչպես հաճախ էր պատահում։ Ինչի՞ մասին էր մտածում։ Այս երկու տարիների ընթացքում, երբ նրանք հանդիպում էին շաբաթը մի քանի անգամ, Հալիդեն այդպես էլ նրան չէր ճանաչել։ Նա կռահում էր, որ այդ ամաչկոտ մարդու էության մեծ մասն իր համար անհասկանալի էր մնալու։ Օրինակ, նրա զգացմունքները։ Նա իր հետ մեղմ էր, ջերմ և մտերմիկ, սակայն իրեն որպես քույր էր ընկալում։ Քերիմը միակն էր, որից ինքը կընդուներ ամուսնության առաջարկը։ Սակայն այդ առաջարկը երբեք չէր հնչել։

Հալիդեն բռնեց նրա ձեռքը.

— Ճաշի մնա։

Տղամարդը հետևեց նրան։ Տունը միայն մեկ քառակուսի սենյակ ուներ, որի երկու լուսամուտները հարավ էին նայում։

Ձախ կողմում պատին էր հենած գորգի դազգահը, իսկ աջ կողմում կավից պատրաստված հարթակը մահճակալ էր ծառայում։ Դրա վրա, այծի մորթիներով ծածկված, պառկած էր մի տղամարդ։ Պատի տակ շարված էին կավե կժերը, իսկ պատին փայտե կախիչներից կախված էին խոհանոցային պիտույքները և հագուստը։ Փոքրիկ սեղանի վրա դրված էր ամանեղենը։ Առաստաղի հաստ գերաններից կախված էին սոխի և չրեղենի շարաններ։ Կահույքը կազմում էր միայն մի ցածր սեղան ու փայտե սնդուկ։

— Քո տանը շոգ է, ինչպես բաղնիքում,– բացականչեց Քերիմը։

— Բարձր մի խոսիր,- շշնջաց Հալիդեն, նայելով մահճակալի կողմը։ Նա պետք է շատ քրտնի, որ հիվանդությունը միջից դուրս գա։

Սենյակի կենտրոնում գտնվող թոնիրը կարմրին էր տալիս։ Ի տարբերություն գյուղացիների, որոնք թոնրում աթար էին վառում, Հալիդեն փայտածուխ էր այրում, որը գնում էր իր պատրաստած խեցեղենը թրծելու համար։ Հենց թոնրի եզրին տաքանում էր ջրով լի կուժը, իսկ թոնրի վրայի եռոտանուն դրված կաթսայից դեղաբույսերի բուրմունք արձակելով գոլորշի էր բարձրանում։

— Հավ եմ եփել։ Արգանակը միակ բանն է, որ նա կարողանում է կուլ տալ։

Քերիմը պատռեց հայտարարությունն ու ծվեները գցեց օջախի մեջ։ Կրակ ելավ, որը սևացրեց կաթսայի տակը։

Հարթակի եզրին նստելով՝ Հալիդեն թրջում էր հիվանդի չորացած շրթունքները։ Քերիմը կռացավ նրա ուսի վրայից, որպեսզի զններ վնասված և քրտինքից փայլող դեմքը։ Իրավացի էր Հալիդեն, երբ ասում էր, որ դժվար էր նմանություն գտնել այս պառկած մարդու և հայտարարության մեջ պատկերված մայորի միջև։

— Խոսե՞լ է։

— Երբեմն զառանցում է։ Անիմաստ բարբաջանք։

— Միգուցե նա մեզ լսո՞ւմ է։

— Չեմ կարծում,- պատասխանեց Հալիդեն։

Երբ երիտասարդ կինը ոտքի կանգնեց, Քերիմը շրթունքները մոտեցրեց հիվանդի ականջին։

— Դուք բարեկամների մոտ եք,- շշնջաց նա։- Կարող եք չվախենալ, հանգստացեք։

Քերիմի այդ արարքը հուզեց Հալիդեին։ Քերիմը շփոթվելով ասաց.

— Ինչ իմանա՞ս։

Հալիդեն հետ գցեց այծի մորթին, հետո բրդյա հաստ վերմակը։ Կար նաև մի սավան։

— Նա շնչահեղձ կլինի։

— Այսքան ծածկել եմ, որ քրտնի,— ասաց կինը՝ վերցնելով խոնավ սավանը, որը նա մեկնեց իր բարեկամին։— Տար և փռիր այգու ցանկապատին։

Երբ Քերիմը վերադարձավ, Հալիդեն զգուշորեն լվանում էր Վարդանի մարմինը։ Մթնշաղի մեջ գունատ մարմինը շատ մեծ էր թվում։ Անրակի կոտրվածքի պատճառով նրա աջ թևը ֆիքսված էր վիրակապով, որը հատում էր նրա կրծքավանդակը։ Մի վիրակապ էլ ազդրին կար։

— Մարզիկի մարմին ունի,- ցածրաձայն հիացավ ուսուցիչը։

Նա գլանակ փաթաթեց՝ հետևելով Հալիդեի շարժումներին, որն իր գործն էր անում ակնհայտ հաճույքով: Նրա շարժումները նմանվում էին փոքր երեխային խնամող մոր շարժումներին:

— Չէի՞ր ուզենա երեխաներ ունենալ:

— Դե, իհարկե: Ես մեկին կորցրել եմ: Իսկ հետո էլ Յաշարը մահացավ:

Նա ուղիղ նայեց Քերիմի աչքերին ու ավելացրեց.

— Հիմա երեխա ունենալու համար ես կրկին պետք է ամուսնանամ...

Քերիմը հասկացավ ակնարկը, սակայն չարձագանքեց: Ո՞վ կհասկանար, որ ինքը կամավոր կերպով ընտրել էր ամուրու կենսակերպը իրեն անմնացորդ ուսուցչի գործին նվիրելու համար, քանի որ այդ աշխատանքով նա երբեք չէր կարող ընտանիք պահել:

Հալիդեն լվաց հիվանդի մարմինը: Հետո հանեց ազդրի վիրակապը: Վերքը շրջապատող մաշկը կորցրել էր սևին տվող գույնը, սակայն վերքի եզրերը դեռևս այտուցված և մանուշակագույն էին: Վերքը բորբոքված էր: Հալիդեն թարախը հեռացրեց վերքը սեղմելով և մաքրեց լաթով, որը նա նետեց օջախի ուղղությամբ: Այն գետնին ընկավ: Քերիմը վերցրեց և օջախը գցեց: Կինը վերքը սպիրտով մշակեց:

— Վստա՞հ ես, որ անում ես այն, ինչ պետք է,— հարցրեց Քերիմը:

Բարկանալով, որ իր գործողությունները կասկածի տակ էին առնվում, կինը չոր տոնով պատասխանեց.

— Անում եմ այն, ինչ պատվիրել է բժիշկը:

Նրանք հիվանդի մոտ էին հրավիրել բժիշկ Լեոնիդասին՝ հույն մի բժշկի, որին կարող էին վստահել: Քանի որ Կեսարիայում էր ապրում, նա ընդամենը երկու անգամ էր եկել, նախ հեռավորության պատճառով և, հատկապես, Ուրգուպի բնակիչների մոտ կասկած չհարուցելու համար:

— Բեր սարդոստայնները: Սեղանի վրա են, բաժակների մոտ:

Քերիմը նրան տվեց շագանակագույն թղթից պատրաստված մի ծրար: Հալիդեն այնտեղից հանեց սադափի պես սպիտակ մի նյութ, ճարպկորեն բացեց և դրեց վերքի վրա, իսկ վերքը նորից կապեց: Սարդոստայնի հակաբորբոքային հատկությունները բոլորը գիտեին: Միայն թե հարկավոր էր այն ճարել: Դրանով Քերիմն էր զբաղվում իր աշակերտների օգնությամբ, որոնց համար դա խաղ էր դարձել:

— Ինձ էլի սարդոստայն պետք կգա:

Քերիմը ծիծաղեց.

— Ուրգուպի բոլոր սարդերը չեն հերիքի այդ գործի համար: Եվ բացի դրանից, հարևանները ինձ արդեն վատ աչքով են նայում:

Նա ակնարկում էր այն փաստը, որ մարդիկ լավ էին վերաբերվում սարդերին, որոնք, ըստ ավանդության, փրկել էին Մարգարեին՝

սարդոստայնով պատելով այն քարանձավի մուտքը, ուր նա թաքնվել էր հետապնդողներից։

Թլիփի շուրջը արված կտրվածքը մշակելուց հետո Հալիդեն այն պարուրեց սարդոստայնով։

— Սավանը պետք է որ չորացած լինի,— ասաց նա։

Սենյակից դուրս գալիս Քերիմը ծխախոտի մնացորդը գցեց թոնրի մեջ։

Հիվանդի վերքերը մշակելուց հետո նրան նորից ծածկեցին։ Ձեռքը մեջքի տակ անցկացնելով, Հալիդեն առանց զգալի ջանքի բարձրացրեց նրա իրանը։ Նա թասի եզրով բացեց տղամարդու շրթունքները և մի քիչ արգանակ լցրեց նրա բերանը։ Ապա հիվանդի կոկորդը շփեց մատով, որպեսզի նա կուլ տար։ Այդպես խմեցրեց երկու բաժակի պարունակությունը։ Հետո կինը նրա գլուխը զգուշորեն վայր դրեց բարձին և սրբեց նրա բերանն ու մորուքը։ Մատների ծայրով սանրեց նրա մազերը։

— Հրեշտակի պես է քնած,— հիացավ նա գոհունակությամբ ուղղվելով։— Նայիր, Քերիմ, կարծես նուրբ երեխա լինի։

Ուսուցիչը հիշեց հիվանդի մեծ և մկանուտ մարմինը և մտածեց, որ նա ավելի շուտ աչքի ընկնող առնականությամբ էր օժտված։

* * *

Մոտ մեկ տասնյակ ոստիկաններ շրջապատել էին Վարդանին և սպառնում էին նրան իրենց սվիններով։ Նրան կապել էին, և նա չէր կարողանում փախչել։ Սվինների շեղբերը մխրճվում էին նրա մարմինը։ Նա վայր էր ընկնում, արյունը հոսում էր վերքերից, սակայն ինքը չէր մեռնում։ Մի զինվոր հարձակվում էր վրան և դանակի մեկ շարժումով ամորձատում էր։

Վարդանը ցնցվեց և դուրս եկավ մղձավանջից։ Նա մրսում էր, չնայած քրտնած էր։ Գլուխը ծանր էր։ Մշուշի մեջ նա մի սենյակ տեսավ և սևազգեստ մի կին։ Նրան թվաց, որ նորից հայտնվել է գյուղացու տանը, և Այշան հսկում է իրեն։ Այդ տեսիլքից նա նորից ընկավ անգիտակից վիճակի մեջ։ Նա խորասուզվեց անհանգիստ քնի մեջ, որը լեցուն էր սարսափելի տեսիլքներով և դաժան տեսարաններով։ Արդեն մեկ շաբաթ էր, ինչ նա ունենում էր այդ կարճ սթափության պահերը և նմանվում էր ջրում խեղդվողի, որը մի քանի վայրկյանով դուրս էր գալիս մակերևույթ, իսկ հետո երազները նրան տանում էին իրենց գիրկը։

Վերջապես մի առավոտ նա արթնացավ պարզ գիտակցությամբ։ Որտե՞ղ էր ինքը։ Նա պահպանել էր իր վրա կռացող դեմքերի աղոտ հիշողությունը։ Մերթ դա Մարոն էր, մերթ իր մայրը, որը օրորոցային էր երգում։ Նրա մարմինը ցավում էր։ Հանկարծ նա ամեն ինչ հիշեց, իր ուղևորությունը դեպի Կեսարիա, թլփատումը, երեք ոստիկաններին,

որոնք փորձեցին իրեն սպանել: Նա ուզեց աջ ձեռքը գլխին տանել, սակայն թևը կապված էր: Ձախն ազատ էր: Նա շոշափեց իր դեմքը, որը ծածկված էր խիտ մորուքով: Նա գլուխը թեքեց: Սևազգեստ մի կին, որին նա մեջքից էր տեսնում, խալի էր գործում:

Նա ուզում էր բարձր ձայնով կանչել, սակայն կոկորդից շշուկ դուրս եկավ: Կինն արագ վեր կացավ և մոտեցավ թեթև քայլվածքով: Թուխ դեմքի վրա ժպտում էին խոշոր սև աչքերը:

— Փառք Աստծու,– բացականչեց նա՝ վերցնելով կուժն ու բաժակը:

Վարդանը չէր կարողանում գլուխը բարձրացնել:

— Մի շարժվիր, դու դեռևս շատ թույլ ես:

— Որտե՞ղ եմ ես:

— Ուրգուպի մոտակայքում:

— Ուրգո՞ւպ:

— Կեսարիայից ոչ հեռու: Այլևս մի խոսիր, կհոգնես:

Նա նստեց մահճակալին, ձախ ձեռքն անցկացրեց Վարդանի ուսերի տակ, օգնեց նստել և նրա գլուխը հենեց իր ուսին: Վարդանն իրեն շատ թույլ էր զգում:

— Խմիր,— ասաց նա՝ Վարդանի շրթունքներին մոտեցնելով այծի կաթով լի բաժակը:

Վարդանը խմեց: Կինը ափը հպեց նրա ճակատին և ուրախ ձայնով ասաց.

— Ջերմություն գրեթե չկա:

Վարդանը զարմացավ նրա մտերմիկ պահվածքից:

— Որքա՞ն ժամանակ եմ ես այստեղ:

— Երեք շաբաթ:

Երեք շաբաթ: Պետք է որ սեպտեմբեր ամիսը լիներ: Նրա գլխում բազմաթիվ հարցեր էին խռնվել, սակայն ուժգին գլխացավը չէր թողնում, որ խոսեր և նույնիսկ մտածեր: Նա պառկեց, փակեց աչքերը ու երկար ժամանակ լուռ մնաց: Երբ կրկին բացեց աչքերը, երիտասարդ կինը նրա կողքին էր և նրան էր նայում ջերմությամբ: Սակայն նա դեռ չէր հանգստացել և կասկածանքով զննեց սենյակը: Գուշակելով նրա մտքերը՝ Հալիդեն ասաց.

— Կարող ես չվախենալ: Ես գիտեմ, որ դու մայոր ես:

Ապշելով, Վարդանը շարձագանքեց:

— Իսկ դո՞ւք: Ո՞վ եք դուք:

— Մի կին, որն ատում է բռնությունն ու անարդարությունը,—

պատասխանեց նա խուսափողական տոնով։— Դու շատ ես խոսում, մի վատնիր ուժերդ։

Այս խոսքերի մեջ որոշակի իմաստնություն կար, սակայն Վարդանը չէր կարողանում զսպել իր հետաքրքրասիրությունը։

— Ինչո՞ւ է ձեռքս իրանիս կապված։

— Բժշկի պահանջն է։ Կոտրվածք ունես։ Այստեղ։

Նա ցույց տվեց անրակը։

— Բժի՞շկ,– անհանգստացավ Վարդանը։

— Բարեկամ է։ Հույն։

— Շա՞տ մարդ գիտի, որ ես այստեղ եմ։

— Քերիմը։ Ես նրա հետ էի, երբ քեզ գտա։

Վարդանը հևում էր խոսելիս։ Նա բաց բերանով երկար շնչեց նոր հարցեր տալուց առաջ։

— Ո՞վ է այդ Քերիմը։ Նա՞ էլ է հույն։

— Ղրիմի թաթարներից է; Նա գյուղի ուսուցիչն է։

— Նա գիտի՞, թե ես ով եմ։

— Հայտարարությունը նա է տեսել։ Շատ վստահելի բարեկամ է։

Նա Վարդանին պատմեց, որ նրա լուսանկարը փակցված էր ոստիկանության բաժանմունքներում, շուկաներում ու սրճարաններում և որ նրա համար փրկագին էին խոստացել։

— Ավելի լավ կլինի, եթե դու մորուքդ չսափրես,– եզրակացրեց կինը։

— Քո հարևաննե՞րը։

— Գյուղը հեռու է, և նրանք այդպես էլ անտեղյակ կմնան քո ներկայությանը։

Վարդանը խորը հառաչեց։ Նա ելք չուներ և ստիպված էր ապավինել այս անծանոթ կնոջ խնամքին։ Նրա կոպերը ծանրացել ու այրվում էին։

— Դու պետք է քնես,– ասաց կինը կուժը վերցնելուց և հեռանալուց առաջ։

Վարդանն ուզում էր վերջին հարցը տալ, սակայն անմիջապես քնեց։ Սովորական մղձավանջները չվերադարձան, և նա քնեց խաղաղ քնով։ Նա զարթնեց տապակած սոխի հոտից, և նրա բերանը ջրով լցվեց։ Նա քաղցած էր։ Թոնրի վրա կռացած երիտասարդ կինը ճաշ էր պատրաստում։ Արևի շեղ ճառագայթները ներս էին թափանցում սենյակ երկու լուսամուտներից։ Իրիկնամուտ էր։

Տեսնելով, որ իր հիվանդը բացել է աչքերը, Հալիդեն նրան ջուր տվեց։

— Ես քեզ շնորհակալություն չհայտնեցի։ Այն, ինչ դու արել ես...

Կինը մատը շրթունքներին դրեց՝ լռելու նշան անելով։ Վարդանը շարունակեց.

— Ես չեմ կարող քեզ հատուցել, գոնե այս պահին։

— Աստված ինձ կհատուցի հարյուրապատիկը,— պատասխանեց կինը անկեղծ համոզմունքով։

— Եթե դուրս պրծնեմ այս պատմությունից և այս պատերազմում կենդանի մնամ, ապա դու այդքան երկար ստիպված չես լինի սպասել հատուցմանը։

Կինը բարձրաձայն ծիծաղեց։

— Հիմարություններ մի ասա։ Շնորհակալություն հայտնեցիր, և դա բավական է։ Այլևս դրա մասին չխոսենք։

Նա վերադարձավ իր կաթսաների մոտ և սկսեց ցածրաձայն երգել։

Ձախ ձեռքով Վարդանը շոշափեց իր մարմինը, որը նրան սարսափելի նիհար թվաց։ Հպվելիս արվանդամը դեռևս զգայուն էր, սակայն ոչ ավելին։ Ազդրի վերքը փակվել էր։ Նա փակեց աչքերն ու մկանները թուլացրեց։ Ինչո՞ւ էր այս թրքուհին իրեն վտանգի ենթարկում՝ ապաստան տալով հետախուզման մեջ գտնվող մարդուն։ Իսկ այդ Քերի՞մը։ Նրանց վարքագիծն անբացատրելի էր թվում, իսկ Վարդանը չէր սիրում անբացատրելին։ Սեպտեմբեր։ Ինչ ճակատագրի էին արժանացել Մարոն ու Թովմասը։ Անկասկած, նրանք մտածում էին, որ ինքը մահացել էր։ Նա չէր կարողանա մոտ ապագայում գնալ նրանց փնտրելու։ Գտնե՞լ նրանց։ Որտե՞ղ և ինչպե՞ս։

Տխուր մտքերի մեջ խորասուզված Վարդանը վեր թռավ, երբ Հալիդեն ասաց.

— Քերիմը երջանիկ կլինի, երբ իմանա, որ դու սթափվել ես։ Մենք վախենում էինք, որ դու չէիր ապաքինվի քո վերքից։ Նույնիսկ բժիշկն առանձնապես հույս չուներ։ Ամուր առողջություն ունես։

Նա ճաշի համը տեսավ և շարունակեց.

— Քերիմն այսօր ճաշի է գալու։ Ուլի միս եմ պատրաստել ճաշի համար։ Սակայն ավելի լավ կլինի, եթե դու բավարարվես ապուրով ու բրնձով։ Քո ստամոքսը հետ է վարժվել ծանր կերակուրներից։

Նրան ամեն ինչ պարզ էր թվում։ Նա իրեն այնպես էր պահում, կարծես Վարդանին շատ վաղուց և շատ մոտից էր ճանաչում, մինչդեռ Վարդանին նա բոլորովին անծանոթ էր։

— Ես նույնիսկ քո անունը չգիտեմ,- ասաց Վարդանը։

— Հալիդե։

Վարդանը մի կողմ էր հրում այծի մորթիները և բրդյա վերմակը։ Կինը

օգնության հասավ։

— Շոգո՞ւմ ես։ Տես, չմրսես։

— Ես պետք է դուրս գամ։

— Դու դեռ շատ թույլ ես,— պատասխանեց նա՝ կռանալով և գետնից մի աման վերցնելով։—— Մենակ կկարողանա՞ս։

Վարդանը զարմացավ այդ հարցի վրա, իսկ հետո մտածեց, որ ահա քանի շաբաթ էր, որ նա երեխա էր եղել մոր հոգածության ներքո։ Կախվածության այդ վիճակը նրան զայրացնում էր։

— Կկարողանամ,— ասաց նա վերցնելով ամանը։

Նա պառկեց ձախ կողքին, մեջքով դեպի կինը և թեթևացավ։ Վարդանը կուզեր, որ կինը դուրս գար, սակայն նա մնաց մահճակալի մոտ կանգնած։ Նրան ծանոթ էին այդ տղամարդու մարմնի բոլոր մանրամասները և քանի որ գեղջկուհի էր, ապա ոչ մի ամոթալի բան չէր տեսնում մարմնի բնական կենսագործունեության մեջ։ Վարդանի համար իրավիճակը լրիվ տարբեր էր, և նա տանջվում էր, որ չէր կարող որևէ լաթով ծածկել ամանը նրան վերադարձնելուց առաջ։

Այդ գործողությունից Վարդանը ուժասպառ եղավ։ Նա հևալով հարցրեց.

— Ինչո՞ւ։

— Ի՞նչը։

— Ինչո՞ւ ես այդքան բարի և հոգատար անծանոթի նկատմամբ։

Հալիդեն կասկածամտություն նշմարեց նրա ձայնում, և իր անշահախնդրության վերաբերյալ այդ կասկածը նրան ցավ պատճառեց։ Նա գնաց բաց դռան ուղղությամբ։

— Կո՛ւրտ, Կո՛ւրտ։

Քիչ անց ներս եկավ մի մեծ շուն։ Նա շոյեց շան գլուխը։

— Երկու տարի առաջ այս շանը գտա ձյան մեջ։ Նրան գզել էին գայլերը։ Ես նրան խնամեցի և բուժեցի։ Եվ նա ինձ երբեք չի հարցրել, թե ինչո՞ւ։

Վարդանը չկարողացավ ժպիտը զսպել.

— Ես չէի ուզում քեզ վիրավորել, Հալիդե։ Ես համարում եմ, որ քո արարքը վկայում է անսահման բարության մասին, սակայն...

— Սակա՞յն։

— Եթե ինձ հայտնաբերեն այստեղ...

Նա ուսերը թոթվեց՝ ցույց տալու համար, որ այդ հեռանկարը իրեն բոլորովին չի վախեցնում։ Վարդանն ինքն իրեն հարցնում էր, թե արդյոք

երիտասարդ կինը կատարյալ անհոգություն չէր ցուցաբերում։ Չէ՞ որ նա գիտեր, որ Վարդանը հետախուզման մեջ էր։

— Այստեղ ոչ ոք չի՞ գալիս։ Ինձ թվում է, որ գյուղացիներն իրար հաճախ են այցելում։

— Ամենամոտ տունը երկու կիլոմետրի վրա է։ Ես մնացածներից հեռու եմ մնում։

— Ամուսինդ բանակո՞ւմ է։

— Ես այրի եմ։

— Ծնողնե՞րդ։

— Ես ընտանիք չունեմ։

Չոր պատասխաններից Վարդանը հասկացավ, որ նա չէր ցանկանում իր մասին խոսել։ Նրա հայացքը ցրված էր դարձել, և հասկանալի էր, որ իր անցյալի հիշատակումը տհաճ էր նրան։ Վարդանը չպնդեց։

— Ես այգի եմ գնում,— ասաց նա շան ուղեկցությամբ դուրս գալով։

Քերիմը եկավ ադամամութին։ Նա ուրախացավ, որ վիրավորը սթափվել էր։ Հակված ուսերը, կորացած մեջքը, նոսրացած մազերը ծերացնում էին նրան, սակայն նրա անկեղծ ու պայծառ աչքերը լի էին պատանեկան միամտությամբ։ Չէր կարելի ասել, որ գեղեցիկ էր, սակայն նա անմիջապես համակրանք էր հարուցում։ Վարդանը սեղմեց նրա ձեռքը՝ հայտնելով իր երախտագիտությունը։

— Ամեն ինչ Հալիդեն է արել,— պատասխանեց նա համեստորեն։

— Ինչո՞ւ։

Հալիդեն, որը ծնկի էր իջել օջախի առջև, աչքերը երկնքին հառեց և գլուխը թափ տվեց։ Դարձյալ այդ հարցը։ Սև զգեստի փոխարեն նա հագել էր նարնջագույն գեղջկական տարազ, որի վրա կապույտ ու կանաչ ծաղկանախշեր էին գործված։

Քերիմը ձեռքը մեջքին դրեց, ինչպես անում էր դասերի ժամանակ։

— Ինչո՞ւ,– կրկնեց նա ոգեշնչված ձայնով։– Որովհետև դուք հայ եք։ Այս պահին մեր երկրում զազրելի հանցագործություն է իրականացվում, և ես չեմ ուզում դրա մասնակիցը լինել։ Ուզում եմ տարանջատվել կառավարությունից և բոլոր նրանցից, ովքեր ենթարկվում են նրան վիզը ծռելով։ Կգերադասեի, որ ինձ դատեին որպես դավաճանի։

— Կգա մի օր, երբ մնացածները դավաճան կհամարվեն, իսկ դուք՝ հերոս։

— Ինձ դա պետք չէ,– պատասխանեց Քերիմը ամոթխած ծիծաղելով։— Ինձ լրիվ բավարարում է այն, որ խիղճս հանգիստ է։

Նա խորը շունչ քաշեց, որպեսզի այտերի կարմրությունն անցներ, հետո ասաց.

— Տգիտություն։ Ամեն ինչի պատճառը տգիտությունն է։ Այս երկիրն առաջընթաց չի ապրի քանի դեռ...

Հալիդեն նրան ընդհատեց և մեղմորեն հանդիմանեց.

— Քերիմ։ Դու ճա՞ռ ես արտասանելու։ Ո՛չ այս երեկո։ Մայորը հազիվ է սթափվել։

Ուսուցիչը խեղճացած ժպտաց վիրավորին.

— Հալիդեն, ինչպես միշտ, իրավացի է։ Ներեցեք ինձ։

Վարդանն օգնության եկավ ուսուցչին։

— Ձեր գաղափարներն ինձ հետաքրքրում են, Քերիմ։ Ես հաճույքով կլսեմ ձեզ, երբ իմ ուղեղը մի քիչ կպարզի։

— Ես հաճույքով կզրուցեմ ձեզ հետ,— պատասխանեց տղամարդը պայծառացած դեմքով։– Մենք դեռևս առիթ կունենանք։

Ճաշի ժամանակ Վարդանին նստեցրին մահճակալին, իսկ մեջքի տակ դրեցին այծի մորթիները։ Հալիդեն ուզում էր նրան կերակրել, սակայն նա փորձեց ինքնուրույն ուտել ձախ ձեռքով։ Հալիդեն և նրա հյուրը նստեցին ցածր սեղանի մոտ՝ գորգերի վրա։ Երկու կավե ճրագներում այրվող ձիթապտղի յուղը սուր հոտ էր արձակում, և սենյակը թույլ էր լուսավորված, իսկ անկյուններն ընկղմված էին խավարի մեջ։ Խոսում էին կենցաղային հարցերի մասին, աղքատություն, բերքի սղություն, որը ձմռան ընթացքում դժվարություններ էր հարուցելու, գյուղի բամբասանքներ։ Վարդանը Քերիմին հարցրեց.

— Ճանաչո՞ւմ եք դոկտոր Բլեյկին, որը ղեկավարում է Կեսարիայի Ամերիկյան վարժարանը։

— Անունն եմ լսել։ Կառավարությունը փակել է վարժարանը, և նա մեկնել է։

Վարդանն ափսոսանքի հոգոց հանեց։ Միակ հույսը, որին ինքը կառչել էր, նույնպես ցնդեց։

— Կհսարիայից հայերը տեղահանվե՞լ են։

— Դժբախտաբար, այո,— պատասխանեց ուսուցիչը՝ գլուխը կախելով։

Հալիդեն շրթունքներն էր կծոտում, և նրա վշտահար տեսքը չվրիպեց Վարդանի ուշադրությունից։ Սակայն կինը շարունակեց չեզոք տոնով.

— Ձմեռը խիստ է լինելու, դրա մասին է վկայում սոխի կճեպը։

Տղամարդիկ հասկացան, որ նա ուզում էր փոխել խոսակցության նյութը, և հարգեցին նրա ցանկությունը։ Ճաշից հետո երիտասարդ կինը թեյ մատուցեց։ Քերիմը ծխախոտ փաթաթեց և տվեց Վարդանին։ Հալիդեն այն վառեց ճրագի կրակից։ Վաղուց էր, ինչ նա չէր ծխել, և առաջին անգամ ծուխը ներս քաշելով, հազաց, երկրորդ անգամ գլուխը պտտվեց, իսկ երրորդ անգամ հոգին երանությամբ լցվեց։ Նա նայում էր

սպիտակ պատերին, որոնց վրա պարում էին ստվերները, և իր փրկիչներին, որոնք ժպտում էին իրեն, և նա զգաց, որ ինքը կարող էր նրանց վստահել։

Այդ բարեկամական մթնոլորտը մոռացում բերելու փոխարեն կենդանացրեց Վարդանի հիշողությունները։ Առանց նրանց խնդրանքի, նա նրանց վստահեց իր պատմությունը, համենայն դեպս անուններ չտալով։ Հալիդեն ու Քերիմը լուռ լսում էին։ Նա խոսում էր հուսահատ ձայնով՝ անտեսելով ուժասպառությունն ու այն ցավը, որ նրան պատճառում էին իր արտասանած խոսքերը։ Նա կարիք ուներ կիսվելու և ազատվելու այն բեռից, որը ծանրացել էր հոգու վրա։

Երբ ավարտեց իր պատմությունը, լռություն հաստատվեց։ Լսվում էր միայն իր մորը կանչող ուլի մկկոցը։ Կնոջ դեմքով արցունքներ էին հոսում.

— Ես պատկերացնում եմ կնոջդ և որդուդ վիճակը,— ասաց նա աչքերը պատին հառած։

Ասես նրա աչքերի առաջ մի պատկեր էր, որը նրան տառապանք էր պատճառում։ Քերիմը, սարսափած, սեղմեց Վարդանի ձեռքը։ Եթե չամաչեր, կհամբուրեր նրան։ Նա ձեռքի շարժումով հրաժեշտ տվեց Հալիդեին ու հեռացավ։ Երիտասարդ կինը օգնեց Վարդանին պառկելու անկողնում։ Նա մի քիչ ավելի հանգիստ էր, սակայն աչքերը դեռևս կարմրած էին։

— Ճիշտ ես անում, որ չես հուսահատվում։ Համոզված եմ, որ դու կգտնես նրանց։

Կինը պառկեց գորգի վրա, օջախի մոտ և փաթաթվեց բրդյա վերմակի մեջ։ Սակայն չկարողացավ քնել, և գիշերը Վարդանն արթնացավ նրա լացի ձայնից։ Վարդանը չէր հասկանում, թե ինչու էր կինն այդքան ազդվել իր պատմությունից։

* * *

Այնթապի գավառապետարանի իր շքեղ կահավորված գրասենյակում Ռըզա բեյը եռում էր։ Նա վերծանում էր Գանի բեյի՝ Ստամբուլից ստացված երկար հեռագիրը։ Հանդիմանա՜նք։ Հանդիմանանք, որին ինքը արժանի չէր։

Ճիշտ էր, որ բազմաթիվ հայեր շարունակում էին ապրել Այնթապում։ Դրանք բողոքական հայեր էին, որոնց հովանավորում էին ամերիկացի և գերմանացի միսիոներները, և արհեստավորներ, որոնք զինագործներ էին և աշխատում էին զինամթերք արտադրող գործարանում։ Այդ մարդկանց տեղահան չանելու վճիռը, որը նա Մարոյին էր ներկայացրել որպես գթասրտություն, նախ և առաջ թելադրված էր երկրի շահերով։ Եվ նա պատրաստ էր այդ վճիռը պաշտպանել իր վերադասի առջև։ Սակայն

մնացա՞ծը։

Մեղավո՞ր էր նա արդյոք, որ ֆրանսիական զրահանավը ապաստանել էր չորս հազար հայերի, որոնք հուլիս ամսից դիմադրում էին Մուսադաղում և նրանց տեղափոխել էր Պորտ Սաիդ՝ Եգիպտոս։ Իսկ ինչպե՞ս կարող էր ինքը խոչընդոտել տեղեկությունների արտահոսքը երկրից։ Գանի բեյն անարդարացի էր իր նկատմամբ։ Ռըզան նորից կարդաց հեռագրի մի հատվածը։

«Գերմանական հետախուզական ծառայությունները հայտնել են ներքին գործերի նախարարին որոշ փաստեր, որոնք վերջինս անթույլատրելի է համարում։ Հոկտեմբերի 4-ին մի կազմակերպություն, որն իրեն անվանում է Ամերիկյան քննչական կոմիտե, հրապարակել է մանրամասն զեկույց հայերի ճակատագրի վերաբերյալ Անատոլիայում։ Երկու օր անց ոմն լորդ Բրյուս Լոնդոնում՝ Լորդերի պալատում մանրամասն զեկույց է ներկայացրել նույն թեմայով։ Ինձ թվում է, որ նրանք կապեր ունեն Անատոլիայում և, հատկապես, ձեր շրջանում ապրող մարդկանց հետ։ Հետևաբար, դուք պետք է հնարավորինս սահմանափակեք օտարերկրացիների, միսիոներների և դիվանագետների տեղաշարժը և բոլոր միջոցները ձեռնարկեք կայսրության սահմաններից դուրս թափանցող և մեր կառավարությանը վարկաբեկող վկայությունների արտահոսքը խոչընդոտելու համար»։

Միջոցներ։ Միջոցներ։ Գիտենք նրա միջոցները։

— Եթե նա դժգոհ է, ապա թող ինձ ազատի իմ պարտականություններից,– փնթփնթաց Ռըզա բեյը։– Եվ ես կզբաղվեմ իմ կալվածքներով։ Ես նրան կպատասխանե՛մ։

Հեռախոսի զանգը հնչեց։ Երկու երկար զանգ, երկու կարճ։ Նրան կանչում էին գեներալի մոտ։ Հեռախոսացանցը, որը վերջերս էր հայտնվել Այնթապում, ուներ ընդամենը քսան բաժանորդ և սայմանափակվում էր քաղաքի տարածքով։

Ռըզա բեյը վերադարձավ հեռագրի ընթերցանությանը։ Նա կարդում էր մեկ այլ հատված, որն ավելի անհանգստացնող էր։

«Արտասահմանյան լրագրերը հրապարակել են մի քանի հոդվածներ, որոնք ամենայն հավանականությամբ պատկանում են Վարդան Պալյանի գրչին, որը գտնվում է հետախուզության մեջ։ Այնտեղ կա, մասնավորապես, Մալաթիայի ճամբարի նկարագրությունը, ուր ձեր օգնականը հայտնաբերել էր հիշված մարդուն։ Անհրաժեշտ է նրան վնասազերծել։ Հետախուզությունն ավելի ակտիվ դարձրեք։ Քանի որ նախարարը տեղյակ չէ այդ պատմությանը, ապա դուք պետք է խուսափեք ակնարկներից և չպետք է հիշատակեք այդ Պալյանի անունը ձեր պաշտոնական նամակագրության մեջ»։

Կատաղելով՝ գավառապետը ճմռթեց հեռագիրը և այրեց մոխրամանի մեջ։ Գերմանացի սպայի նվիրած տուփից նա սիգար վերցրեց։ Մարոյի ամուսինը... Ինքը մոռացել էր նրա մասին։ Ռըզան նրանից չէր վախենում։ Պալյանը ոչինչ չէր կարող անել Ռըզայի դեմ, և ամեն

դեպքում՝ նա չգիտեր, թե որտեղ էին իր կինն ու որդին։ Ռըզային անհանգստացնում էր այլ բան՝ Մարոն կարող էր իմանալ, որ իր ամուսինը ողջ էր։ Նա կարծես թե համակերպվում էր այն մտքի հետ, որ մնալու էր Այնթապում իր որդու հետ, որը, իր հերթին, արագ էր վարժվում նոր կյանքին։ Բնական է, որ Մարոն շարունակում էր հույս փայփայել, որ Ռըզան իրեն կօգներ մայրաքաղաք վերադառնալ։ Նա դրա մասին չէր խոսում, միայն ակնարկում էր, սակայն Ռըզան նրա աչքերում կարդում էր լուռ աղերսը։ Ժամանակի հետ Ռըզայի սերը կհաղթահարեր նրա վերջին դիմադրությունը և նա կկորցներ մեկնելու նույնիսկ աննշան ցանկությունը՝ անձնատուր լինելով երջանկությանը։

Աչքերը փակելով՝ նա տեսավ Մարոյի հիասքանչ դեմքը, խելացի աչքերը, հեշտալի շուրթերը և պատկերացրեց, թե ինչպես Մարոն առաջին անգամ իրեն կասեր «ես քեզ սիրում եմ»։ Նրա երջանկությունը երկար չտևեց, և Մարոյի ամուսնու դիմագծերը հայտնվեցին նրա աչքի առջև։ Ոչ թե հետախուզության հայտարարության մի քիչ աղոտ լուսանկարում պատկերված դեմքը, որը նա, զգուշությունից դրդված, արգելել էր կախել Այնթապում, այլ Մարոյի կուլոնում զետեղված ժպտացող դեմքը։

Նա խանդի խայթ զգաց։ Իրեն պատկանած բոլոր կանայք անփորձ էին սիրո մեջ։ Այն միտքը, որ Մարոն պատկանել էր այլ տղամարդու, նրան ցավ էր պատճառում, իսկ միտքը, որ նա շարունակում էր սիրել այդ մարդուն, նրա համար անտանելի էր։ Նա նրան պատկերացնում էր իր ամուսնու հետ, նրա գրկում հառաչելիս։ Նա նույնիսկ այդ մարդուն որդի էր պարգևել։ Ինչպիսին էլ լիներ Ռըզայի ապագան Մարոյի հետ, միևնույն էր, նրանց միջև կար անցյալի ստվերը։

Նա կտրուկ ոտքի կանգնեց։ Կանաչ բազկաթոռի ոտքերը ճռնչացին մարմարյա հատակի վրա։ Նա կանգնեց Անատոլիայի մեծադիր քարտեզի առջև, որը գծել էին գերմանացի քարտեզագիրները։ Մգացված գոտիները լեռների պատրանք էին ստեղծում։ Ռըզայի հայացքը հետևեց գետերի հոսանքին, կանգ առավ քաղաքների և գյուղերի անվանումների վրա, զննեց հովիտները և անցավ սարահարթերի վրայով, կարծես վախենալով հայտնաբերել փախուստի մեջ գտնվող տղամարդուն։

— Որտե՞ղ կարող է նա թաքնված լինել։

Ոստիկանության ու բանակի կողմից հետախուզվող այդ Պալյանը, որը միայնակ էր, կայսրության համար մեծ վտանգ չէր ներկայացնում։ Ոչ էլ Ռըզայի համար։ Սակայն նրա սոսկ գոյությունը կատաղեցնում էր նրան։ Ռըզան մեծ նշանակություն չէր տալիս Գանի բեյի կողմից նրան վերագրվող հոդվածներին։ Սակայն այդ հոդվածները մարտահրավեր էին, որ իրեն էր նետում Պալյանը։ Դրանցով նա Ռըզա բեյին ասում էր՝ ես դեռ ողջ եմ։ Եվ հիշեցնում էր. այն կինը, որին դու սիրում ես, իմն է։

Նա սիգարը դրեց թղթի վրա և ուղերթ գծեց Մալաթիայից մինչև ռուսական սահմանը։ Մեկ այլ ուղերթ մինչև Պարսկաստան։ Երրորդը՝ Բաղդադի ուղղությամբ և դեպի Մքիջագետքի այն տարածքները, որոնք

բրիտանացիների հսկողության տակ էին։ Իրանք այն ուղղություններն էին, որոնց պետք է հետևեր ցանկացած բանական մարդ, որը կհայտնվեր Պալյանի իրավիճակում։ Այո։ Նա, անկասկած, հեռացել էր Անատոլիայից ռուսների կամ անգլիացիների մոտ ապաստան գտնելու համար։ Եթե, իհարկե, չէր խառնվել տեղահանվածների շարասյուներին, իսկ այդ դեպքում նա իր վերջը կգտներ Սիրիական անապատում։ Մնում էր նաև մեկ հնարավորություն. նա կարող էր Հալեպ հասած լինել, ուր հազարավոր հայեր խառնվել էին արաբներին։ Հալեպ։ Այնթապից ընդամենը հարյուր կիլոմետր հեռավորության վրա։

Մինչդեռ նա այդ գաղափարն էր ծանր ու թեթև անում, դուռը երեք անգամ ծեծեցին, որը բացվեց՝ կանխելով իր պատասխանը։ Կարծելով, որ իր քարտուղարն է կամ էլ որևէ պաշտոնյա, Ռըզան առանց շրջվելու բղավեց.

— Ես ասել էի, որ ինձ չանհանգստացնեին։

— Ներեցեք, Ռըզա բեյ, կարևոր բան կա։

Պետրին մոտեցավ տիրոջը, որը նրա կողմը դարձավ և անհամբեր հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

Պետրին մատն անցկացրեց իր պարանոցի և պարանոցը սեղմող օձիքի միջև և ուզեց այն լայնացնել։ Գավառապետի պաշտոնում Ռըզա բեյի նշանակվելուց հետո Պետրիի հեղինակությունը նույնպես ծանրակշիռ էր դարձել, և քաղաքի աչքի ընկնող քաղաքացիները նրա հետ հարգալից էին վարվում։ Այժմ նա սև կոստյում և փողկապ էր կրում, չնայած այդ հագուստը նրան անհարմար էր թվում։ Վատ կարված կոստյումը նրան չէր սազում։

— Լրտեսի հետքերը գտնվել են,— բացականչեց նա՝ ուրախությամբ թափահարելով մի հեռագիր։

Գավառապետը վեր թռավ.

— Որտե՞ղ։

— Կեսարիայում։

Ռըզան դարձավ դեպի քարտեզը։ Կեսարիա։ Դա չէր համապատասխանում իր ենթադրություններին։ Ի՞նչ էր այդ անիծյալ Պալյանն անում Կեսարիայում։

— Նրան ձերբակալե՞լ են։

— Ոչ։ Նրա զինվորական գրքույկը Շաքիր Իսմայելի անունով տարել են Կեսարիայի ոստիկանատուն։ Մի վաճառական այն հանձնել է ինչ-որ զինվորի։ Ասել է իբր գտել է ճամփեզրին։

Պետրին հայացք նետեց հեռագրին՝ համոզվելու համար, որ ոչինչ բաց չէր թողել։

— Հայտնի է այսքանը։

Աչքերը կկոցած, նա հետևում էր իր տիրոջը։ Թեթևություն զգալով, որ Պալյանն անմիջապես իր շրջանում չէր, Ռըզան շարունակում էր ուշադիր զննել քարտեզը։ Նյարդայնացած՝ նա ծամում էր սիգարի ծայրը։ Նորությունը հայտնեցին հենց այն պահին, երբ ինքը նրա մասին էր մտածում։ Այդ զուգադիպությունը նրան շատ էր հուզում։ Ինքը երբեք հանգիստ չէր ունենալու, քանի դեռ այդ մարդը ողջ էր։ Նա դարձավ դեպի Պետրին, որին զարմացրեց նրա մտահոգ տեսքը։

— Ի՞նչ ես մտածում այս պատմության մասին։

Պետրին քորեց նեղ օձիքից կարմրած ծոծրակը։ Ինքը կանխատեսել էր այդ հարցը և մտածել էր դրա մասին, սակայն հապաղեց պատասխանել։

— Նա ազատվել է զինվորական գրքույկից,— ի վերջո ասաց նա։– Կասկածից վեր է, որ մեկ այլ անուն է վերցրել։

— Սակայն ինչո՞ւ Կեսարիա։

— Իսկ ինչո՞ւ ոչ,– պատասխանեց Պետրին՝ ուսերը թոթվելով։

Ռըզա բեյը, մտահոգ մոտեցավ իր գրասեղանին, վառեց սիգարը և կանգնեց դեպի բակ նայող լուսամուտի առջև, ուր մի քանի զինվոր զրույց էին անում։ Նա վերադարձավ իր օգնականի մոտ։

— Շրջանը խուզարկվո՞ւմ է։

— Կարծում եմ։

— Կարծո՞ւմ ես,— բացականչեց Ռըզան բարկացած՝ սիգարի մոխիրը գետնին թափ տալով։– Պետք է յուրաքանչյուր քարը խուզարկել, հարցաքննել յուրաքանչյուր բնակչին։

— Նա, անկասկած, այլևս այնտեղ չէ,– պատասխանեց Պետրին՝ չհասկանալով իր տիրոջ հետաքրքրությունն այդ գործի նկատմամբ։– Իմ կարծիքով նա ուղևորվել է դեպի մայրաքաղաք։

— Քո կարծիքն ինձ չի հետաքրքրում։ Կգնաս ու կղեկավարես որոնումը։

Պետրիի շրթունքները դողացին։ Այդ երկար ճանապարհորդության հեռանկարը նրան դուր չեկավ։ Նա չէր ցանկանում Այնթապից հեռանալ, քանի որ կզրկվեր քաղաքում նոր-նոր ձեռք բերած իշխանությունից։

— Բանակն ու ոստիկանությունն ինքնուրույն այդ գործը գլուխ կբերեն։ Ի՞նչ կավելանա, եթե ես այնտեղ լինեմ։

Վրդովվելով, որ ստորադասը հարցականի տակ էր դնում իր հրամանը, Ռըզան նրան ասաց ժպտալով.

— Դու աշխատել ես Աբդուլ Համիդի գաղտնի ծառայությունում։ Քո փորձը մեզ պետք կգա։

Արդի ղեկավարների տեսակետից թերություն հանդիսացող իր

անցյալի այդ դրվագի հիշատակությունից Պետրին գունատվեց։ Նա շտապեց համաձայնել։ Ռըզան ցույց տվեց մոխրամանը, որը լի էր մոխրով.

— Գանի բեյն ուզում է, որպեսզի մենք վնասազերծենք այդ մարդուն։ Դու կստանաս անհրաժեշտ օգնությունը։ Հենց որ Կեսարիա հասնես տեղի իշխանությունները այդ մասին հրահանգներ կստանան Կոստանդնուպոլսից։ Կազմակերպիր հետաքննությունը, իսկ ինքդ անձնական հետաքննություն վարիր։

Պետրին կարծես չհասկացավ վերջին նախադասությունը։ Ռըզա բեյը համբերությունից դուրս գալով բացականչեց.

— Այդ մարդն անտեսանելի չէ։ Նա քայլել է ճանապարհներով, և մեկն ու մեկը պետք է նրան տեսած լինի։ Նա պետք է որ սնվեր, ուրեմն պետք է սննդամթերք գնած լիներ որևէ վաճառականից կամ գյուղացուց։ Դու ունես նրա զինվորական գրքույկը, այդ հետքով էլ գնա։ Ձանք մի խնայիր։

Կզակը քորելով՝ Պետրին գլուխն էր տմբտմբացնում։

— Այո... իհարկե... Սակայն զգում եմ, որ նա այնտեղից արդեն հեռացել է։

— Դա ինձ չի վերաբերում։ Կիմանաս, թե ուր է նա ուղևորվել, և մենք նրա հետքերով կգնանք։ Եթե անհրաժեշտ լինի, դրանով կզբաղվես ամբողջ ձմեռվա ընթացքում, սակայն ձեռնունայն չվերադառնաս։

Թաքցնելով իր դժգոհությունը՝ Պետրին խոնարհվեց.

— Պատրաստ եմ ձեզ ծառայել, Ռըզա բեյ։

— Նախապատրաստվիր մեկնելու հենց այսօր։ Ես քեզ գրավոր հրամաններ կտամ։

Պետրին հրաժեշտ տվեց տիրոջը և հեռացավ հակված ուսերով։ Դուռը փակելուց առաջ հարցրեց.

— Իսկ եթե նրան գտնե՞մ։

Ռըզան մատն անցկացրեց իր կոկորդի վրայով և լեզուն ճլթացրեց։

— Ես հաճույքով այդ բանը կանեմ,– ծիծաղեց Պետրին գրգռված ձայնով։

Մենակ մնալով, Ռըզան նստեց գրասեղանի մոտ գործուղման հրամանը գրելու համար։ Գրիչը ձեռքին նա երազների գիրկն ընկավ։ Ինչպիսի հաջողություն կլիներ, եթե Պետրին կարողանար իրեն ազատել այդ Պալյանից։ Այլևս ոչինչ չէր սպառնա իր երջանկությանը։ Հանկարծ հայտնվեց Մարոյին տիրանալու ցանկությունը, որն անհաղթահարելի էր։ Ռըզան շտապում էր նրան տեսնել և անկողնում նրան տիրանալով՝ էլ ավելի կտրել իր անցյալից։ Նա ցանկություն ուներ նրան շփացնելու։ Ի՞նչ կարող էր նրան անակնկալի բերել և ուրախացնել։ Ձա՞րդ։ Ձգե՞ստ։

Դրանք շատ առօրեական և սովորական բաներ էին: Բացի դրանից, Մարոն կհանդիմաներ իրեն: Դաշնամո՞ւր: Այո, դաշնամուր: Նա ասել է, որ դաշնամուր է նվագում: Տեղահանվածներից բռնագրավված կահույքի մեջ հոյակապ դաշնամուրներ կային: Ինքը Մարոյին դաշնամուր կնվիրի, և նա կնվագի միայն իր համար:

Բույուկ խանումը կասի, որ դա «անհավատի» գործիք է ու երաժշտություն և, իհարկե, կվրդովվի: Դա կլինի ընդամենը հերթական վրդովմունքը: Շուտ տուն վերադառնալու ցանկությամբ համակված՝ Իրզա բեյը սկսեց գրել:

* * *

Հոկտեմբերն ավարտվում էր: Օրերը կարճանում էին. իսկ գիշերները երկարում և ավելի սառն էին դառնում: Ամռան տապից չորացած ու ճաքճքած հողը անձրևի ջուրը սկզբում ագահությամբ էր կլանում, իսկ այժմ, հագենալուց հետո, ջուրը հոսում էր դաշտերով՝ ակոսներ թողնելով և ճանապարհները քանդելով: Հորդառատ անձրևներին հաջորդում էր մանրամաղը, իսկ երկինքը գորշ էր և ցածր:

Վարդանը, մահճակալի վրա նստած, կարգի էր բերում իր մորուքը: Նրա ձեռքերը ղողում էին, և նա վայր դրեց մկրատը: Փոքր, կլոր հայելու միջից իրեն էր նայում մի դեմք, որը նա դժվարությամբ էր ճանաչում՝ ոչ այնքան մորուքի, որքան փոս ընկած այտերի և աչքերը շրջապատող կապտուկների պատճառով: Իր դիմագծերն ավելի չոր էին դարձել, աչքերի շուրջը մանր կնճիռների ցանց էր հայտնվել, իսկ ճակատը հատում էին երկու խորը ակոս: Նրա քունքերն արծաթազօծվել էին, իսկ կզակի երկու կողմերում՝ մորուքը սպիտակել էր: Նրան թվաց, որ ինքը ծերացել և ավելի էր նմանվել հորը:

Պատից բռնվելով՝ նա գնաց մինչև լուսամուտը: Նա կաղալով էր քայլում, սակայն գոնե կարող էր աշխատեցնել իր աջ ձեռքը, որն ազատագրվել էր վիրակապերից: Ջերմն անցել էր, սակայն նա իրեն թույլ էր զգում: Նա շուտ էր հոգնում և ուժեղ գլխացավեր էր ունենում, նրան թվում էր, որ աքցանով սեղմված իր գլխում թմբուկ էր հնչում:

Լուսամուտը հարավ-արևելք էր նայում, և տարվա այս եղանակին այնտեղից երևում էին ամայի դաշտեր, որոնց գունավորումը փոխվում էր՝ կախված այն բանից, թե դրանք վարել էին, թե անմշակ էին թողել: Վարդանը երկար կանգնում էր այդ լուսամատի մոտ՝ աչքը հեռուն հառած: Նա մտովի հարյուրավոր կիլոմետրեր էր անցնում սարերով, որոնք նրան բաժանում էին այն վայրից, ուր միգուցե տարվել էին Մարոն և Թովմասը՝ Հալեպ, Ալեքսանդրետ, Այնթապ, Ադանա: Այս քաղաքների անվանումները նրա ականջին առասպելական հնչեղություն էին ստացել: Որտե՞ղ էին իր հարազատները: Ինչպե՞ս էին նրանք: Նա չէր կարողանում երևակայել նրանց ճակատագիրը, կենսապայմանները և նրանց պատկերացնելու իր անկարողությունը վրդովում էր: Այդժամ

Նա սկսում էր հուսալ, որ միգուցե իր կնոջը հաջողվել էր Կոստանդնուպոլիս գնալ: Նա տեսնում էր նրան Թովմասի հետ Մեսրոպ քեռու հյուրասենյակում՝ Արփինե մորաքրոջ, Լուսիկի և Տիրանի ընկերակցությամբ: Նրա իրատեսությունը հաղթում էր, քաջալերիչ տեսարանները ցնդում էին, և նա իրականությանը շիտակ էր նայում: Ինքը ոչինչ չգիտեր նրանց մասին: Նրանք նույն հաջողությամբ կարող էին մեռած լինել...

Անհրաժեշտ էր Մալաթիա վերադառնալ և այնտեղից սկսել մանրակրկիտ հետաքննությունը: Օրիորդ Լանգլեն միգուցե տեղեկություններ ունենար Մարոյի մասին այլ միսիոներների միջոցով: Հնարավոր էր նաև, որ Մալաթիայի շվեյցարական որբանոցում իրեն էր սպասում իր քեռորդի Տիրանի պատասխանը: Որքա՞ն ժամանակ էր պետք, որպեսզի նա ի վիճակի լիներ ձեռնարկել այդ ճանապարհորդությունը: Քանի որ դոկտոր Բլեյկը հեռացել էր, Վարդանը չէր պատկերացնում, թե որտեղից ինքը կարող էր կեղծ փաստաթղթեր ճարել: Գնա՞լ Կոստանդնուպոլիս: Այնտեղ ազգականներ ու ընկերներ ուներ: Սակայն նրա համար տհաճ էր այն միտքը, որ պետք է է՛լ ավելի հեռանար այն շրջանից, ուր կորցրել էր Մարոյի ու Թովմասի հետքը, քանի որ համակված էր անտրամաբանական մի վախով, որ այդպիսով ինքը նրանց կկորցներ առհավետ:

Հալիդեն կանգ առավ դռան մեջ և նայեց Վարդանին, որը չէր նկատել նրա հայտնվելը: Նա դարձյալ լուսամատի մոտ էր: Անկասկած մտածում էր կնոջ և որդու մասին: Նա նրանց մասին չէր խոսում, սակայն Հալիդեն նրա տրտում տեսքից կռահում էր, որ անդադար նրանց մասին էր մտածում: Երբեմն ժամեր շարունակ նա լռում էր և Հալիդեն չէր համարձակվում խախտել այդ լռությունը: Երիտասարդ կինը զգում էր, որ նա տառապում էր, և ինքը կուզեր խոսքեր գտնել նրա տառապանքը մեղմելու համար, սակայն Վարդանը չափից մեծ հարգանք էր ներշնչում իրեն, և նա բավարարվում էր թաքուն նրա վիշտը կիսելով: Ի՞նչ նոր բան կարող էր ինքն ասել այդ կրթված մարդուն՝ դեղագործին ու մայորին: Հատկապես, որ հոգու խորքում Հալիդեն լիովին անտրամաբանական էր համարում ընտանիքի հետ վերամիավորվելու Վարդանի հույսը:

— Դու պետք է քեզ խնայես,– ասաց նա սենյակ մտնելով:

Վարդանը դանդաղ շրջվեց.

— Հակառակը, անհրաժեշտ է, որ ես մարզեմ մկաններս:

Հալիդեն թափ տվեց թրջված շալը և կախեց դռան մոտի կախիչից:

— Դու չափից ավելի ես պայքարում: Թող, որ ժամանակն իր գործն անի, դա միակ դեղամիջոցն է:

— Ժամանակն իմ թշնամին է,– տխուր պատասխանեց նա՝ մի քայլ անելով դեպի մահճակալը:

— Սպասիր օգնեմ:

Վարդանը ենթարկվեց։ Օգնությունից հրաժարվելը բարձր բողոքի առիթ կտար, քանի որ երիտասարդ կինը չէր սիրում, երբ զսպում էին իր մարդասիրական մղումները։ Նա ձեռքով բռնեց Վարդանի մեջքից։

— Հենվիր իմ ուսին։

Անձրևը թափանցել էր շալի տակ, և նրա զգեստը թաց էր։ Հալիդեից քրտինքի ու ճանդանի հոտ էր գալիս։

— Արագ մի քայլիր,– ասաց նա ջերմորեն։

Իրականում նա ուզում էր երկարաձգել ֆիզիկական հպումը։ Նա սիրում էր այդ մեծ ձեռքի ծանրությունն իր ուսին, Վարդանի մեջքի մկանների խաղը իր ձեռքի տակ։ Նրան հատկապես դուր էր գալիս, որ ժամանակին ուժեղ և ազդեցիկ այդ մարդը կախման մեջ էր իրենից։ Հալիդեն ափսոսում էր, որ չպետք է այլևս նրան լողացներ և հագուստը փոխեր, ինչպես առաջ։ Հիմա նա նրան էր հպվում միայն հայացքով, և դա նրա մեջ առաջացնում էր շատ մտերիմ լինելուց հետո միմյանցից հեռանալու զգացում։ Դա, անկասկած, միայն իր գլխում էր տեղի ունեցել։

Մահճակալի վրա նստելով՝ Վարդանը նորից շնորհակալություն հայտնեց այդ կնոջը իր արածի համար և ավելացրեց.

— Հենց որ ի վիճակի լինեմ, ես կգնամ։

Առանց պատասխանելու Հալիդեն շրջվեց և գնաց դուռը փակելու։

— Այստեղ խոնավ է։

Վարդանը նայում էր, թե ինչպես էր նա փայտածխով թոնիրը վառում։ Սուրճ։ Որտեղի՞ց էր նա դրամ ճարում պատերազմող երկրում իրեն այդ շքեղությունը թույլ տալու համար։ Խեցեգործական արտադրանքն ու գորգերը դժվար թե այդքան եկամուտ բերեին։ Եվս մի հարց, որը նրան զարմացնում էր։ Այս վերջին շաբաթների ընթացքում նա այնքան մթերք էր պահեստավորել ձմռան համար, որը շատ ավելի էր, քան կարող էր անհրաժեշտ լինել մեկ, կամ նույնիսկ երկու անձի համար։ Յորեն, որը կազմում էր Անատոլիայի բնակչության սննդի հիմքը, սակայն նաև ոչխարի միս, ձիթապտղի յուղ, սևծովյան տխիլ, պիստակ, նուշ, շաքար, աղ և թեյ։ Չհաշված այն, ինչ նա բերում էր շուկայից և շարում գոմում։

Երբեմն նա նաև բացակայում էր, և Վարդանը չէր կարողանում բացատրել այդ բացակայությունների պատճառը։ Առնվազն շաբաթը մեկ անգամ մութն ընկնելուց հետո Քերիմը գալիս էր երիտասարդ կնոջ հետևից և նրան հետ էր բերում միայն հաջորդ առավոտյան, երբեմն էլ նույնիսկ երեկոյան։ Սկզբում Վարդաը կարծում էր, որ նրանք սիրային կապի մեջ էին և որ իր ներկայության պատճառով նրանք ստիպված էին հեռանալ, և իրենց հանդիպումները այլ վայրում կազմակերպել։ Սակայն այդ բացատրությունը չէր դիմանում քննադատության։ Ինչո՞ւ էին նրանք ամեն անգամ իրենց հետևից քարշ տալիս ծանր բեռնված ավանակին։ Սահմանը հեռու էր, և խոսք չէր կարող լինել մաքսանենգության մասին։

Ուրեմն ի՞նչ։ Վարդանը գաղափար չուներ։ Եթե իր բարեկամների գործունեությունն անօրինական էր, որի մասին կասկածել էր տալիս նրանց լռությունը, ապա այն կարող էր գրավել ոստիկանության ուշադրությունը։ Իսկ դա սրում էր Վարդանի անապահովության զգացումը։

Երբ Հալիդեն գնում էր, ոչ մի բացատրություն չէր տալիս։ Նա պարզապես հայտարարում էր.

— Ես դուրս եմ գալիս։ Կգամ վաղն առավոտյան։

Իսկ երբ վերադառնում էր ջախջախված, հոգնած դեմքով, լծվում էր առօրյա կյանքին, կարծես ոչինչ չէր պատահել։ Նա խնամում էր անասուններին, տրվում էր տան հարդարմանը, ուտելիք էր պատրաստում, բուրդ էր մանում և գործում էր, ինչպես բոլոր գեղջկուհիները։ Երջանիկ ու անհոգ, նա երգում էր անվերջանալի մեղեդիներ, որոնք շատ սիրված էին Անատոլիայի բնակիչների շրջանում։ Երբեք ոչ մի ակնարկ իր գիշերային բացակայությունների մասին։ Քերիմը, որը գալիս էր գրեթե ամեն օր Վարդանի հետ մի քիչ զրուցելու, նույնպես զսպություն էր ցուցաբերում։

Ջուրը եռաց։ Հալիդեն եփեց սուրճը և մատուցեց փոքր գավաթներով։ Նրա սև, փայլուն աչքերը ժպտում էին, երբ նա Վարդանին էր նայում, և նրա նուրբ դեմքը կարծես դեռահասի դեմք լիներ։ Նրանք լուռ խմեցին սուրճը, և կինը նստեց գորգի դազգահի մոտ։

Դազգահի վերին լայնադիր տախտակի վրա ամրացված էր մի ստվարաթուղթ, որի վրա կինը նկարել էր այն նախշը, որ ինքը պետք է գործեր առաջիկա ամիսների ընթացքում։ Երփներանգ մետաքսյա թելերի կաժերը ամրացված էին պատին, Հալիդեի ձեռքի տակ։ Ամեն անգամ թելը փոխելիս Հալիդեն գլուխը դարձնում էր դեպի Վարդանը և հայացք էր գցում նրա վրա։ Վարդանը մահճակալին նստած նայում էր կնոջը, սակայն նրան չէր տեսնում, և կինը դա զգում էր։ Նա հեռու էր, ինչպես նրա հետ հաճախ էր պատահում։ Կինը կուզեր, որ նա խոսեր, քանի ինքն աշխատում էր։ Այդքան կիրթ մարդը պետք է որ շատ բան իմանար։ Երևի նա մտածում էր, որ գեղջկուհին չէր կարող իրեն հասկանալ։ Կարևո՞ր չէր։ Սոսկ նրա ներկայությունը երջանկություն էր Հալիդեի համար։ Իր այրիության այդ երեք տարիների ընթացքում նա մոռացել էր, թե որքա՞ն դատարկ էր տունն առանց տղամարդու։ Նա սկսեց երգել՝ օրորելով իրանը ռիթմը պահելու համար։ Առանց իրեն հաշիվ տալու Վարդանը մրմնջաց այդ հին մեղեդին, որն ինքը շատ լավ գիտեր։

Կուրտը հաչեց ու լռեց։ Հալիդեն շտապեց դեպի լուսամուտը։

— Քերիմն է,– ասաց նա թեթևացած։

Քերիմը մտավ ամբողջովին թաց։ Նրա շունչը կտրվում էր, և նա գերգրգռված վիճակում էր։

—– Ջինվորները... Նրանք խուզարկում են գյուղի բոլոր տները։

Նա Վարդանին նայեց ու ավելացրեց.

— Ձեզ են փնտրում։

Վարդանը վեր կացավ մահճակալից.

— Նրանք գիտե՞ն, որ ես Ուրգուպում եմ։

— Ոչ։ Խուզարկում են նաև Կեսարիայում և ամբողջ շրջանում։

— Նրանք այստեղ կգան,– ասաց Վարդանը՝ չկարողանալով թաքցնել իր նյարդայնությունը։

Հալիդեն զարմանալիորեն հանգիստ էր։ Դեմքին արտացոլվող վճռականությունը ջնջեց պատանեկության պատրանքը։ Նա մեխից հանեց իր շալը և մոտեցավ Վարդանին.

— Նրանք քեզ չեն գտնի։ Արի։

— Ես նրան կօգնեմ,– ասաց Քերիմը։

— Ավելի լավ է վերմակը բեր ու այծի մորթին։

Վարդանը ձեռքը գցեց երիտասարդ կնոջ ուսին և նա իրենց գլուխները շալով ծածկեց։ Քերիմն առաջինը դուրս եկավ, որպեսզի համոզվեր, որ ճանապարհին ոչ ոք չկար, և նրանց ուղեկցեց գոմ։ Ցուրտ էր. անձրևն էլ հորդառատ։ Վարդանի հողաթափերը սահում էին թրջված հողի վրա, և նա ավելի ամուր կառչեց Հալիդեին։ Եթե նա ի վիճակի լիներ, կգերադասեր այդտեղից գնալ, քանի որ վախենում էր, որ ոստիկանները կխուզարկեին գոմը, և ինքը ծուղակում կհայտնվեր։

— Չէի ուզենա, որ դու անախորժություններ ունենայիր իմ պատճառով։

Հալիդեն ցածրաձայն ծիծաղեց։ Վարդանը շարունակեց.

— Ավելի յավ կլիներ, եթե ինձ տաներիք գյուղից դուրս՝ սարերը։ Եթե ինձ այնտեղ գտնեն, ապա դու և Քերիմը կասկածի տակ չեք լինի։

— Թույլ տուր անեմ, ինչպես վճռել եմ։ Նրանք քեզ չեն բռնի,– ասաց նա վստահ ձայնով։

Իբրև գոմ ծառայող քարանձավը փորվել էր ավելի քան մեկ դար առաջ։ Փափուկ և սկզբում սպիտակավուն կրաքարը քարանձավի եզրերին մոխրագույն էր դարձել։ Ժամանակին հնոցի, իսկ հիմա վառարանի ծուխը սևացրել էր առաստաղը։ Անասունների թրիքի և հատկապես թռչնի ծերտի ծանր հոտը քթին էր զարնում մտնելուն պես։

Գոմի խորքում ավանակը գլուխը բարձրացրեց մարդկանց կողմը և խանչեց, կարծես հազար։ Իրենց փարախում այծերն ու ոչխարները շարունակում էին որոճալ։ Աջից, հենց մուտքի մոտ կանգնած էր վառարանը, որը փեթակի էր նմանվում։ Փայտածխի պարկերը կիտված էին չոր կավի կույտի կողքին։ Մուտքի ձախ կողմում մեծ տափակ քարերը ծածկում էին գետնի մեջ փորված ցորենի հորերը։ Քերիմն

արձակեց ավանակին և դուրս բերեց կացոցից։ Հետո նա հանեց մսուրքը, որը ծածկում էր ներսի պատում արված անցքը։ Հալիդեն մի լամպ վառեց և սողալով մտավ անցքից ներս, ուր բացվում էր մեկ մետրից պակաս բարձրություն ունեցող մի բուն։ Քերիմը նրան տվեց վերմակը։

— Եթե օգնությանս կարիքը չունես, ապա ես վերադառնամ Ուրգուպ։

Կնոջ ձայնը խուլ հնչեց.

— Եղավ։ Ինձ տեղյակ պահիր, թե ինչ է կատարվում։

Ուսուցիչը սեղմեց Վարդանի ձեռքը.

— Ամեն ինչ լավ կլինի։

— Շնորհակալություն, Քերիմ։ Հանգիստ եղիր, եթե ինձ ձերբակալեն, քո անունը չեմ տա։

Վարդանը չորեքթաթ միացավ Հալիդեին։ Կարճ անցումը բացվում էր մի ուղղանկյուն սենյակի մեջ, որը երեք և չորս մետր չափ ուներ և մարդաբոյից բարձր էր։ Սենդամթերքով լի կճուճներն ու զամբյուղները կիտված էին մի անկյունում։ Հանդիպակաց անկյունում չոր խոտի խուրձը ծառայում էր որպես մահճակալ։ Հալիդեն խոտի վրա դրեց վերմակն ու այծի մորթիները։

— Այստեղ հարմար կտեղավորվես։ Ընդամենը մի քանի օրով։

— Սա ավելի լավ է, քան նորից բանտ ընկնելը։ Սակայն ասա ինձ...

Կինը նրան ընդհատեց.

— Սպասիր, հիմա հետ կգամ։

Նա անհայտացավ, և Վարդանը լամպի լույսով ուսումնասիրեց սենյակը։ Քարը պահպանել էր սպիտակ գույնը և պատերի վրա մնացել էին քլունգի հետքերը։ Ամենայն հավանականությամբ այդ սենյակը վերջերս էր փորվել։ Իբրև մահճակալ ծառայող խոտը վկայում էր, որ այդտեղ արդեն ինչ-որ մեկն ապաստանել էր։ Մի խոռոչում դրված էր ճրագ ու հրահան։

Հալիդեն տնից բերեց գիշերային անոթը, մի կուժ ջուր, հաց, ընկույզ ու արմավ։ Նա կճուճների հետևը դրեց սավանի մեջ փաթաթված մի կապոց։

— Երբ վտանգն անցնի, քեզ ուտելիք կբերեմ։ Իսկ գիշերը կկարողանաս կարճ ժամանակով դուրս գալ թաքստոցից։ Շնչահեղձ լինելուց մի վախենա, մուտքի անցքից թարմ օդ է թափանցում։

Նա ուզում էր գնալ, սակայն Վարդանը բռնեց նրա թևից և պահեց։

— Բացատրիր ինձ,– ասաց նա՝ ցույց տալով թաքստոցը։

— Թաքստոց ունենալը ձեռնտու է,— պատասխանեց նա խուսափողաբար։

Վարդանը նրա ձեռքը բաց չթողեց և պնդեց.

— Այս թաքստոցը... քո գիշերային բացակայությունները... Ի՞նչ է այս ամենը նշանակում։

Տատանվելուց հետո նա ասաց.

— Ես օգնում եմ ինձ նմաններին, ահա ամենը։

Պատասխանը գրգռեց Վարդանի հետաքրքրասիրությունը, որը ուղիղ նրա աչքերի մեջ նայելով՝ փորձեց գուշակել։

— Բայց դու ո՞վ ես։

Հասկանալով, որ Վարդանը հետ չի կանգնելու, Հալիդեն վերցրեց կճուճի հետևում պահված կապոցը և բացեց կերպասը, որի մեջ փաթաթված էին Աստվածամոր և Մանկան պատկերը, մետաղյա հայկական խաչ և ընտանեկան մի լուսանկար։

— Դու հա՞յ ես։

— Ես ամուսնացել եմ մահմեդականի հետ։ Առաջ իմ անունն Արուսյակ էր։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 10

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 12:12-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 9 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 11 ►

— Ես, դու, նա... Մենք, դուք, նրանք։

Առաջին հարկի սենյակներից մեկում, որը վերածվել էր դասասենյակի, Մարոյի վեց աշակերտները կրկնում էին անձնական դերանունները և ձեռքի շարժումով ցույց էին տալիս համապատասխան անձին։ Ութզա բեյի խնդրանքով Մարոն, հոկտեմբերից սկսած, արդեն մոտ երկու ամիս էր, ինչ ֆրանսերեն էր դասավանդում նրա երեխաներին, որոնց միացել էր նաև Թովմասը։ Դասերին չէր մասնակցում միայն տասներեք տարեկան Ալթանը, որը գերմաներեն էր սովորում դասատուի հետ և ազատվել էր երկրորդ լեզվի ուսումնասիրությունից։ Մարոն գոհ էր դրանից, քանի որ Ալթանը հակակրանք և ոչ պակաս բացահայտ արհամարհանք էր ցուցաբերում իր և Թովմասի նկատմամբ։

Նա կանգնած էր խամրած գույներով քարտեզի առջև ու գլուխը թեքած նայում էր բարձերի վրա նստած երեխաներին։ Թովմասը նրանց հետ էր՝ Էմելի ու Քենանի միջև, և վերջինիս երբեմն հուշում էր ճիշտ պատասխանները։ Նա ժպտում էր, քանի որ հպարտ էր մորով, որին գիտուն էին համարում։ Բացի դրանից, նա վերագտել էր այն հաճույքը, որ ստանում էր այդ դասերից դեռևս Սվասում՝ ընկերակցելով այլ աշակերտների։ Երեխաների հետևում, բազկաթոռներին տեղավորվել էին Սաֆիյեն, նրա դուստր Շահանեն ու Էմինեն։ Դայակը ձեռագործ էր անում օրորելով Զեհրային՝ երրորդ կնոջ փոքր դստերը, որը կծկված քնել էր նրա գոգին։ Շահանեն չէր լսում և մտածում էր իր նշանածի մասին, որը կռվում էր Միջագետքում և որից արդեն մի քանի շաբաթ լուր չուներ։

Սաֆիյեն, բազկաթոռի ծայրին նստած, հետևում էր դասին մեծ հետաքրքրությամբ և երեխաների հետ միասին կրկնում էր դերանունները։ Գիտելիքների ծարավով տոգորված առաջին կինը ոչ մի դաս բաց չէր թողնում, լիներ դա ֆրանսերենի, թվաբանության, թե աշխարհագրության դաս։ Վերջին երկու առարկաները Մարոն իր նախաձեռնությամբ դասավանդում էր աղջիկներին և Թովմասին այն ժամանակ, երբ տղաները հաճախում էին հոգևոր դպրոց։ Բույուկ խանումը դեմ էր այդ դասերին, որոնք նրա կարծիքով աղջիկներին

միայն վնաս կարող էին պատճառել, սակայն Սաֆիյեի դրդմամբ Ռըզա բեյը հակադրվելով մորը թույլ էր տվել։

— Ես եմ, դու ես, նա է... Մենք ենք, դուք եք, նրանք են։

Դասերը լցնում էին Մարոյի օրերը, որոնք հակառակ դեպքում երկար ու անիմաստ կթվային։ Այդուհանդերձ, նա ափսոսում էր, որ համաձայնել էր դասավանդել, քանի որ ուշ էր հասկացել, որ այժմ որոշակի պարտականություն էր ստանձնել Ռըզա բեյի տանը և կորցրել էր ժամանակավոր հյուրի կարգավիճակը։

Դասն ավարտվելուց հետո երեխաները ցրվեցին, և Սաֆիյեն նշան անելով դայակին, որը տանում էր քնած երեխային, Մարոյին տարավ դեպի այգին։

— Մինչև ճաշը դեռևս երեք ժամ կա։

Մարոն գիտեր, թե ինչ էր առաջին կնոջ մտքին, և թեթևակիորեն ժպտաց՝ թևանցուկ անելով նրան։ Նրա մռայլ տեսքը չվրիպեց Սաֆիյեի ուշադրությունից, որը մտահոգ հարցրեց.

— Ինչ-որ բան քեզ մտահոգո՞ւմ է։ Հոգնած ես երևում, քույրիկ։

Նրանք այգի դուրս եկան, ուր երկու այգեպան հարդարում էին ծառուղին։ Քողը դեմքին քաշելով՝ առաջին կինը հրամայեց հեռանալ և երբ նրանք գնացին, փարաջայի եզրը իջեցրեց կրծքին։

— Դու կարող ես ինձ վստահել,— շշնջաց նա՝ ընկերուհու մեջքը գրկելով։

— Կուզենայի Կոստանդնուպոլիս գնալ և միանալ իմ ընտանիքին,— ասաց Մարոն՝ աղերսող հայացքով նայելով առաջին կնոջը։

Սաֆիյեի այտերը շիկնեցին, նա գլուխը դարձրեց և շարունակեց լուռ քայլել։ Նա մտացրիվ նայում էր վարդի թփերին, որոնք զարթոնք էին ապրում վերջերս տեղացած անձրևներից հետո։ Առաջին կնոջ այս արձագանքը Մարոյին ստիպեց համոզվել, որ ինքն հիրավի չէր կարող հուսալ իր մեկնելու օգտին Սաֆիյեի միջնորդության վրա։ Հակառակը, առաջին կնոջ անկեղծ բարեկամությունը ևս մեկ կապանք էր, որը նրան գամում էր այդ տանը։ Եվ այդուհանդերձ, Մարոն չէր կարող այդ պատճառով քեն պահել Սաֆիյեի դեմ։

Նրանք ավազանին մոտեցան։ Ջուրը ճահճանում էր փտող տերևներից։ Օդը մեղմ էր՝ տոգորված թափված տերևների հոտով։

Համոզվելով, որ տաղավարում ոչ ոք չկար և չէր լսում իրենց խոսակցությունը, առաջին կինը հարցրեց.

— Կարո՞ղ է Ռըզան կոպիտ կամ անարդարացի է վարվել քեզ հետ։

— Ոչ։

— Պակա՞ս քնքուշ է, պակա՞ս ջերմ։

Մարոն իր հերթին կարմրեց ու գլխով ժխտական շարժում արեց։ Սաֆիյեն կարծես հանգստացավ.

— Ես կզարմանայի, քանի որ նա քեզ շատ է սիրում։

— Բայց ես նրան չե՛մ սիրում,— բացականչեց Մարոն։

—— Իսկապե՞ս,— զարմանալով հարցրեց կինը՝ նրան մի քանի վայրկյան զննելուց հետո։— Ոչինչ, կսիրես։

— Չե՛մ ուզում։ Ես արդեն ամուսնացա՛ծ եմ։

Սաֆիյեն թփթփացրեց նրա ձեռքին։ Նա չէր հասկանում հայուհու պահվածքը, քանի որ եղած տվյալներով նրա ամուսինը մահացել էր, ինչպես և չէր հասկանում Ռըզա բեյի զգացմունքին դիմադրելու նրա համառությունը։ Նա համարում էր, որ Ռըզա բեյը արժանի էր սիրո։ Քանի որ Մարոն նյարդայնացած էր, նա երկար ժամանակ լուռ մնաց, մինչև որ հանդարտվեր։ Նրանք մտան տաղավար և նստեցին նստարանին։ Մարոն փորձում էր ընկերուհուն բացատրել իր դիրքորոշումը։ Դա միակ միջոցն էր նրան դրդելու, որպեսզի օգներ նրան մեկնել։

— Ասա, Սաֆիյե, դու սիրո՞ւմ ես Ռըզային։

— Իհա՛րկե։ Ամբո՛ղջ սրտով։

— Ինչպե՞ս ես այդ դեպքում համաձայնում կիսել նրան երկու այլ կանանց հետ։ Նույնիսկ երեք...

Սաֆիյեն ժպտաց.

— Այդ հարցը կարող էր Լեյլան տալ, որը սեփականատեր է և խանդոտ։

— Ես նման եմ նրան և չեմ կարող հանդուրժել, որ իմ սիրած մարդը կարող է պատկանել նաև այլ կանանց։

Սաֆիյեն մտածմունքի մեջ ընկավ և ճակատից հեռացրեց մազափունջը։ Նա չգիտեր ինչպես բացատրել ամուսնական հարաբերությունների իր ընկալումը։ Նա ուսերը թոթվեց.

— Ես երբեք այս հարցին չեմ անդրադարձել այդ տեսանկյունից։ Մի կինը չի կարող հավակնել բավարարելու տղամարդու բոլոր պահանջները։

— Կարծում ես, որ հակառակը հնարավո՞ր է։

— Անկասկած, կինը այլ էակ է,— պատասխանեց Սաֆիյեն, անհարմար զգալով, քանի որ վախենում էր Մարոյի աչքից ընկնել այդ խոսակցության պատճառով։

Մարոն նկատեց ընկերուհու շփոթմունքը և նրան հանգստացրեց.

— Ես չեմ դատապարտում քո վարքագիծը, Սաֆիյե։ Գիտեմ, որ ավանդույթն ու օրենքը պարտադրում են կնոջը ենթարկվել ամուսնու

կամքին և որ օրենքի դեմ գնալն անհնարին է։ Ես պատկանում եմ մի հավատքի, որն արգելում է մեկից ավելի կողակից ունենալ, և կուզենայի իմանալ, թե դու ի՞նչ ես զգում ներքուստ։

Այս ջերմ տոնը հանդարտեցրեց Սաֆիյեին, և նա ասաց.

— Այն փաստը, որ Ռըզան ևս երկու կին ունի, ինձ ոչ մի բանից չի զրկել և չի նվազեցրել նրա սերն իմ նկատմամբ։

— Դու այդպես ես մտածում այսօր, բայց ի՞նչ էիր մտածում, երբ հայտնվեց Մակբուլեն, իսկ հետո Լեյլան։

— Հենց սկզբից գիտեի, որ դա մի օր տեղի էր ունենալու և ամեն անգամ երջանիկ էի լինում, հույս ունենալով, որ հանձին նոր կնոջ ես քույր կամ ընկերուհի ձեռք կբերեի։ Դժբախտաբար ո՛չ Մակբուլեի, ո՛չ էլ Լեյլայի դեպքում այդ բանը տեղի չունեցավ։ Սակայն քո դեպքում...

Մարոն չհասցրեց բողոքել և ասել, որ ինքը չորրորդ կինը չէր, քանի որ դայակը նրանց կողմն էր վազում բղավելով և ինչ-որ շարժումներ անելով։ Սաֆիյեն ոտքի կանգնեց՝ ձեռքը կրծքին սեղմելով։

— Ինչ-որ դժբախտություն է պատահել,— բացականչեց նա, էմինեին դիմելուց առաջ։– Երեխաների՞ն է բան պատահել։ Ռըզա բեյի՞ն։

Շնչակտուր դայակը ժխտական շարժումներ արեց և վազքը կասեցրեց։ Մարոն ձեռքը դրեց Սաֆիյեի ուսին.

— Հանգստացիր։ Զգիտե՞ս, նա միշտ ամեն ինչ չափազանցված է ներկայացնում։

Էմինեն ուժասպառ նստեց նստարանին։ Նրա շունչը կտրվում էր, և նա իրեն հով էր անում ձեռքով։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց առաջին կինը անհանգստացած։

— Գիրքը,— պատասխանեց դայակը հևալով։

Բարկանալով, որ չնչին բանի համար այդքան աղմուկ էր բարձրացվել, Սաֆիյեն ավելացրեց մի քիչ կտրուկ.

— Հետո՞։ Գիրքը... ի՞նչ։

— Անհայտացել է։

— Անհնար է, իմ սենյակում էր։ Ամեն տեղ նայե՞լ ես։

— Այո։ Ես գնացի... Ռըզա բեյի գրադարանում էլ նայեցի։

Դա այն գիրքն էր, որի նկարազարդումները տարիներ շարունակ կախարդում էին Սաֆիյեին։ Դա Դանտեի «Աստվածային կատակերգությունն» էր Գուստավ Դորեի նկարազարդումներով, որը հրատարակվել էր Փարիզում 1868 թ.։ Արդեն մի քանի շաբաթ էր, ինչ Մարոն այն կարդում և ընթացքում թուրքերեն էր թարգմանում Սաֆիյեի ու Էմինեի համար՝ մանրամասն բացատրելով նկարազարդումները։

— Ի՞նչ է, թև է առել ու թռե՞լ,— հայտարարեց Մարոն։— Մի անհանգստացիր, էմինե, մենք այն կգտնենք։

Առաջին կինն այդ իրադարձությունն ավելի լուրջ ընկալեց։

— Ես գիրքը թերթել եմ այս առավոտ և շատ լավ հիշում եմ, որ դրել եմ մահճակալիս մոտ գտնվող գիշերային սեղանին։ Ո՞վ կարող էր մտնել իմ սենյակը։

Մարոն փորձեց նվազեցնել միջադեպի կարևորությունը.

— Միգուցե Մակբուլեն կամ Լեյլա՞ն են վերցրել։ Կամ էլ աղախինն է ուրիշ տեղ դրել սենյակը մաքրելիս։

Ծառուղու խճի վրա ոտնաձայներ լսվեցին։ Երիտասարդ աղախինը վազելով կանանց կողմն էր գալիս, և նրա գլխի բազմաթիվ բարակ հյուսերը պարում էին դեմքի շուրջը։ Մարոն ճանաչեց Վարդուհուն։ Տաղավար մտնելով՝ նա խոնարհվեց առաջին կնոջ առջև, հետո դայակի, վերջապես կանգնեց Մարոյի առաջ։ Նրա թուրքերենն ավելի վարժ էր դարձել։

— Տանտիրուհին։ Նա ուզում է ձեզ հետ խոսել։ Իր բնակարանում։

— Բույուկ խանո՞ւմը,— հարցրեց Մարոն։

— Այո, խանում։

Սաֆիյեն չկարողացավ զսպել իր անհանգստությունը։

— Սովորաբար նա չի կանչում իր հարսներին։

— Վատ նշան է,— ավելացրեց էմինեն։

Մարոն հանգիստ էր։ Նա սպասում էր այդ ընդհարմանը։

— Ես դեմ չեմ նրան մի երկու խոսք ասելու։

— Նա շատ...— սկսեց էմինեն, բայց իսկույն ձայնը կտրեց և փոքրիկ աղախնին նշան արեց տուն գնալու։— Ես ասում էի, որ Բույուկ խանումը շատ զգայուն է։ Խնայիր նրա ինքնասիրությունը, քաղաքավարի և հարգալից եղիր։

— Գի՛րքը,— բացականչեց Սաֆիյեն, ձեռքերն իրար խփելով։- Գրազ գանք, որ նրա մոտ է։

— Դեռ կտեսնենք,— պատասխանեց Մարոն չեզոք տոնով ու հեռացավ։

* * *

Այլան սպասում էր Բույուկ խանումի հյուրասենյակի դռան մոտ և հայտնեց Մարոյի գալու մասին։ Ծեր կինը նստած էր կանաչ բազկաթոռին, իսկ ոտքերը դրել էր բարձիկի վրա։ Մարոն, տուրք տալով

սովորույթին, համբուրեց նրա ձեռքը։

— Մեզ համար թեյ բեր,— ասաց Ռըզա բեյի մայրը աղախնին, ապա Մարոյին հրավիրեց նստել իր առջև դրված ծաղկազարդ կարպետով ծածկված աթոռին։

Ոսկյա ծխատուփից նա մի պտղունց քթախոտ վերցրեց, մոտեցրեց քթին, փռշտաց ժանյակով երիզված թաշկինակի մեջ, և դա հուզեց Մարոյին, հիշեցնելով մորը՝ Ազնիվ խանումին, որը նույնպես սիրում էր քթախոտից հոտ քաշել։

— Առողջություն,— մաղթեց նա ծեր կնոջը։

— Շնորհակալություն։ Իսկ դու ինչպե՞ս ես։

— Շատ լավ, Բույուկ խանում։

— Դու այստեղ ես արդեն չորս ամիս, այդպես չէ՞։

— Այո, և օգտվելով հանգամանքից, երախտագիտությունս եմ հայտնում, որ ինձ և որդուս օթևանել եք ձեր տանը։

Բույուկ խանումը գլխով արեց։ Նրանք բարեկրթորեն մի քանի նախադասություն փոխանակեցին՝ հնարավորություն ունենալով միմյանց ուսումնասիրելու և գնահատելու։ Այդ խաղը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև հայտնվեց Այլան սկուտեղով և թեյ մատուցեց։ Բաժակը բերանին տանելով՝ Բույուկ խանումն ուշադիր նայեց Մարոյին.

— Դու իսկապես շատ գեղեցիկ ես,— արձանագրեց նա անտարբեր ձայնով։

— Դուք ինձ ստիպում եք կարմրել,— ասաց Մարոն։

Ծեր կնոջ կնճռոտ դեմքի վրա կիսաբաց կոպերի տակ թաքնված աչքերը նմանվում էին գիշատիչների, որոնք հետևում էին իրենց զոհին հարձակման անցնելուց առաջ։ Այս հայուհու բնավորության շատ գծեր անհասկանալի էին նրան, հատկապես ինքնավստահությունն ու անմիջականությունը, որ նրա ցուցադրական համեստությունն ու զսպվածությունը չէին կարողանում քողարկել։ Այս երիտասարդ կինը, որի անցյալ կյանքն ինքը նույնիսկ չէր կարող պատկերացնել, հավանաբար շատ ազատ էր ապրել և, նմանվելով երկար ժամանակ առանց կապանքների ազատ ապրած զամբիկի, չէր ընտելանում սանձին։

Քաղաքավարությունը պահանջում էր, որ առաջինը Բույուկ խանումը խոսեր։ Ուստի Մարոն քննության էր ենթարկվում առանց աչքը թարթելու՝ իմանալով, որ իրեն ոչինչ չէր Սպառնում այս տանը, քանի դեռ պաշտպանված էր Ռըզա բեյի սիրով։ Նա գիտեր, որ Բույուկ խանումն իրեն չէր հավանում իր պահվածքի և վարքագծի պատճառով։ Ինքը խախտել էր կալվածքում ծեր կնոջ հաստատած կարգը, խախտում էր որոշ սովորույթներ, հաճախ առանց գիտակցելու այդ, իսկ երբեմն էլ գիտակցաբար։ Ոչ այնքան անհնազանդությունից, որքան նրանցից իր

տարբեր լինելն ընդգծելու համար, ընդգծելու համար իր օտարի կարգավիճակը և Ռըզա բեյին դիմադրելու համար, որը կարծում էր, թե արդեն նվաճել էր իրեն։

Մարոյի հանգստությունը և հատկապես հայացքը, որը նա անամոթաբար չէր հեռացնում իրենից՝ մեծ կնոջ դեմքից, մինչդեռ պետք է աչքերը հակեր, բարկացրեցին Բույուկ խանումին և նա հիշեց, որ իր համբերությունը հատել էր։ Նա մտածում էր, թե ինչից սկսեր խոսակցությունը։ Որևէ որոշակի բանից։ Նա վերցրեց Դանտեի գիրքը, որը թաքցրել էր լուսանկարների բաց ալբոմի տակ և ցույց տվեց երիտասարդ կնոջը։

— Իմացա, որ դու կարդում ես այս գիրքը քո ընկերուհիների և էմինեի համար։

— Այո,— պատասխանեց Մարոն առանց շփոթվելու։– Կուզենայի՞ք, որ ձեզ համար էլ կարդայի։

Մարոյի հարգալից տոնը չխաբեց Բույուկ խանումին։ Այս հայուհին անամոթաբար դեմ էր դուրս գալիս իրեն։ Նա ձեռքի ափով հարվածեց կազմին և ձայնը բարձրացրեց.

— Սա անհավատի՛ գիրք է։

— Մենք այն վերցրել ենք Ռըզա բեյի գրադարանից,— պատասխանեց Մարոն քաղցր ձայնով։

— Նշանակություն չունի։ Իմ տղան միշտ չէ, որ շրջահայաց է եղել։ Դու քո հավատքն ես քարոզում Ռըզա բեյի կանանց ու դայակին։

— Ձնայած ձեր հանդեպ տածած իմ հարգանքին, թույլ տվեք ասել, Բույուկ խանում, որ դուք սխալվում եք։

— Ահա՛,— բացականչեց զայրացած ծեր կինը՝ բացելով գիրքը մի էջի վրա, որը նա նախօրոք նշել էր։– Սա ի՞նչ է, քրիստոնեական պատկեր չէ՞։

Նա ցույց էր տալիս խաչված Քրիստոսին, որը շրջապատված էր բազմաթիվ հրեշտակներով։ Այդ պատկերը լուսաբանում էր Դրախտի տասնչորսերորդ էջը։

— Այո,— համաձայնեց Մարոն,— սակայն սա կրոնական, կամ աղոթքների գիրք չէ։ Սա պոեմ է, հեքիաթ, եթե կուզեք։ Երևակայական ճանապարհորդություն է այն աշխարհ, որը կատարել է բանաստեղծը...

— Բավական է,— նրա խոսքը կտրեց Բույուկ Խանումը։– Ես չեմ ուզում ոչինչ իմանալ։

Մարոն գլխով արեց և աչքերն իջեցրեց ի նշան հնազանդության։

— Մենք կայրենք այս սատանայական աշխատությունը։

— Ոչ,— ընդվզեց Մարոն իրենից անկախ, որի համար հետո ափսոսաց։– Սա շատ արժեքավոր գիրք է, որն այսօր հազվադեպ է պատահում։

Բույուկ խանումն այնպես նայեց Մարոյին, կարծես մտրակեր։ Համբերությունից դուրս գալով նա ծանր էր շնչում։ Նրա ռունգերին մնացած ծխախոտի փոշին ներս գնաց, նա փռշտաց և դրանից հանգստացավ։ Նա գիրքը գետնին դրեց։

— Ես կխորհրդակցեմ Ռըզայի հետ, և նա կվճռի այս գրքի ճակատագիրը։ Սակայն բացառվում է, որ դու այն կարդաս Սաֆիյեի համար, կամ նույնիսկ նրա հետ այս գրքի մասին խոսես։ Հասկացա՞ր։

— Այո, խանում, ես կանեմ այն, ինչ կվճռի Ռըզա բեյը։

— Հույս ունեմ, որ դու չես քարոզում քո հավատքը երեխաներին, երբ նրանց դաս ես տափս։

— Երբեք,— ասաց Մարոն։– Սաֆիյեն կարող է վկայել, նա միշտ ներկա է լինում դասերին։

— Սաֆիյե՞ն...— բացականչեց Բույուկ խանումը՝ ծամածռությամբ ցույց տալով, որ նրան չէր վստահում։– Նրա խելքն իրենը չէ նոր բաների համար։

— Ես վստահեցնում եմ, Բույուկ խանում, որ դասավանդում եմ միայն արաբական այբուբենն ու խոսակցական ֆրանսերենը։

— Դու մոռացար թվաբանությունն ու աշխարհագրությունը... Աղջիկների՞ն։ Գերադասելի կլիներ, որ նրանք կար ու ձև ու ձեռագործ սովորեին։

— Բոլոր այդ գիտելիքները կարող են օգտակար լինել։ Թվաբանություն իմանալով՝ նրանք ավելի լավ կվարեն իրենց ամուսնու տան տնտեսությունը։

Տեսնելով, որ ինքն այդ հարցում տանուլ էր տալիս, Բույուկ խանումը ձեռքի շարժումով ցույց տվեց, որ հարցը փակված է։ Նա մեկնեց բաժակը.

— Թեյ տուր ինձ։

Այդ անցումը Մարոյին հիշեցրեց մորը, որը նույնպես փոխում էր խոսակցությունը, երբ այն հօգուտ իրեն չէր ընթանում։ Իրենց որոշ գծերով երկու կանայք նմանվում էին, և Մարոն զգում էր, որ ինքը, կամքից անկախ, հակված էր ներողամտորեն վերաբերվել Բույուկ խանումին։ Նա նրա համար թեյ լցրեց, իրեն նույնպես, և նրանք լուռ խմեցին։ Աչքի պոչով Մարոն ուսումնասիրում էր սենյակը և զարմացած էր այնտեղ պահվող լուսանկարչական ալբոմների քանակից։

— Իսկ այդ անիծված դաշնամու՞րը,— ասաց Բույուկ խանումը՝ վայր դնելով բաժակը։

— Ես չեմ հասկանում,— ասաց Մարոն։

— Կարելի է դիմանալ, երբ դու նվագում ես Ռըզա բեյի կամ քո ընկերուհիների համար երեկոյան, սակայն քո այդ փորձերը նախաճաշից

հետո, երբ ես հանգստանում եմ։

— Ձեր հանգստի ժամի՞ն,— զարմացավ Մարոն, որը գերադասեց չպաշտպանվել և չասել, որ ինքը փորձ չէր անում, այլ պարապում էր Լեյլայի հետ նրա խնդրանքով։

— Այո։ Ես շատ վատ եմ քնում գիշերը և կեսօրից հետո քնում եմ, որը շատ կարևոր է ինքնազգացողության համար։ Տանը բոլորը գիտեն դրա մասին։

— Ինձ չեն զգուշացրել, կներեք։

Մարոն հասկացավ, որ Լեյլան, ում դաշնամուր նվագելու ցանկությունը զարմացրել էր իրեն, հատուկ էր այդ ժամն ընտրել դասերի համար։ Նրա բարյացակամությունը կեղծ էր։ Անկասկած նա էր, որ սկեսուրին էր տվել «Աստվածային կատակերգության» օրինակը։ Հարկավոր էր նրանից զգուշանալ։

— Իսկապես ցավում եմ, որ անհանգստացրել եմ ձեզ հանգստանալիս, Բույուկ խանում։ Այլևս չի կրկնվի։ Ի դեպ, փորձեր այսուհետ չեն լինի։

— Շատ ուրախ եմ,— պատասխանեց ծեր կինը՝ հիանալով պատրաստակամության այդ վկայությունից։– Համոզված էի, որ դու հատուկ չէիր անում, այլ անգիտակցաբար, այս տան սովորույթները չիմանալու պատճառով։ Նույնն էլ, երբ զսպվածության պակաս ես դրսևորում։

— Զսպվածության պակա՞ս,— հարցրեց Մարոն զարմացած ձևանալով։

— Դու հաճախ մոռանում ես քողդ գցել առաջին հարկում և չափից ավելի մտերմիկ ես ծառայողների հետ։ Նույնիսկ երկու անգամ խոսել ես ուսուցիչ հեռ Մյուլլերի հետ։ Ի՞նչ ես ասել այդ տղամարդուն։

— Քաղաքավարությունից դրդված պարզապես բարևել եմ, Բույուկ խանում։

Իրականում նա փորձել էր տեղյակ պահել իր վիճակին, սակայն գերմանացին չէր ցանկացել որևէ բան լսել։

— Այդպես չի կարելի անել։ Սա մահմեդականների տուն է, այս տան կանայք չեն խոսում օտարների հետ և մանավանդ բաց դեմքով։

Մարոն խորը շունչ քաշեց, կարծես պատրաստվում էր ջուրը գցվել։ Այն, ինչ նա պատրաստվում էր ասել, լրջորեն կշռադատել էր և պատկերացրել հետևանքները։ Հրաժարվելով խոնարհ տեսքից, որ նա ընդունել էր զրույցի հենց սկզբից, նա վճռական ձայնով հայտարարեց.

— Բույուկ խանում, ես այս տան կանանցից չեմ։ Ես այլ հավատք ունեմ, այլ ավանդույթներ, ես պատկանում եմ այլ աշխարհի և կուզենայի վերադառնալ այդ աշխարհը։

Ծեր կինը ապշեց այդ խոսքերից և կարողացավ միայն մրմնջալ.

— Սակայն... Սակայն...

— Ձեր որդին այնքան բարի էր, որ փրկեց իմ և տղայիս կյանքը, մեզ ապաստան տվեց իր ընտանիքի ծոցում: Դա գթասիրտ արարք էր, որն անկասկած հաճո էր Ալլահին: Հիմա ես կուզենայի գնալ ազգականներիս մոտ՝ մայրաքաղաք, իսկ Ռըզա բեյը ոչինչ չի անում իմ մեկնելը հնարավոր դարձնելու համար: Ձեր առարկությունները, որոնք հենց հիմա ներկայացրիք, ցույց են տալիս, որ դուք՝ այս տան տիկինը, ինձ չեք համարում այս տան անդամ և որ ես այդպիսին երբեք չեմ դառնա: Ուստի աղերսում եմ, Բույուկ խանում, համոզեք ձեր որդուն ինձ մայրաքաղաք ուղարկել:

Իր պաշտպանական ճառը Մարոն կրքոտ ձայնով արտասանեց: Նա խաչել էր ձեռքերը, որպեսզի դրանց դողը նկատելի չլիներ, և նայում էր Բույուկ խանումին հույսով լի աչքերով: Սպասումը նրան անվերջ թվաց, քանի որ ծեր կինը բացեց ծխատուփը և քթախոտից հոտ քաշեց, մտածելու ժամանակ ունենալու համար: Բույուկ խանումը ցույց տվեց մի ալբոմ, որը դրված էր ցածր սեղանի վրա.

— Բեր այն ալբոմը:

Վերցնելով ալբոմը՝ նա մի լուսանկար հանեց, որը դրված էր կազմի և առաջին էջի միջև, և այն մեկնեց Մարոյին: Վերջինս ճանաչեց այն լուսանկարը, որն արել էր Նաիմ Սարֆատին, Այնթապ իրենց ժամանելու օրը:

— Աջ կողմը նայիր, այնտեղ դու կտեսնես քեզ և քո որդի Թովմասին:

— Այո,— պատասխանեց Մարոն, որը չէր հասկանում, թե ինչ էր ուզում ասել ծեր կինը:

— Սա,— շարունակեց Բույուկ խանումը, հետ վերցնելով պատկերը,— Ռըզա բեյի ընտանիքի լուսանկարն է: Դու և քո որդին նրա մասն եք կազմում:

— Ոչ,— բացականչեց Մարոն:— Ես ամուսնացած եմ, ես ուրիշ տղամարդու եմ պատկանում:

Բույուկ խանումը, ձեռքում լուսանկարը պահելուց հետո, վճռեց այն տեղադրել ալբոմի էջերից մեկին: Նա խրատական տոնով եզրափակեց.

— Յուրաքանչյուր կին, որը տիրանում է Ռըզա բեյի սրտին, պատկանում է նրա ընտանիքին:

Աչքերը թաց, Մարոն գլուխը կախեց... Նրա հիասթափությունն անսահման էր:

— Եթե կարելի է, ես գնամ:

Բույուկ խանումն ասաց մեղմ ձայնով.

— Ես դեռ բան ունեմ ասելու... աղջիկս: Ցանկալի կլիներ, որ դու դավանափոխ լիներիր և որ Թովմասը հաճախեր հոգևոր դպրոց Ռըզայի

մյուս որդիների հետ։

Մարոն արագ գլուխը բարձրացրեց և պատասխանեց կտրուկ տոնով.

— Դրա մասին խոսք անգամ լինել չի կարող։

— Դեռ ժամանակ կա,— անվրդով պատասխանեց Բույուկ խանումը։— Այս պահին կուզենայի, որ դու զուսպ լինես խոսելիս, որ մնացած կանանց չընդոստացնես ավանդույթների դեմ և նրանց գլուխը չլցնես անհավատների երկրից եկած խելահեղ գաղափարներով։

Առանց պատասխանելու, Մարոն վեր կացավ, գլխով հրաժեշտ տվեց և արագ քայլերով դեպի դուռը գնաց։

— Կարող ես գնալ,— նետեց նրա հետևից Բույուկ խանումը կտրուկ ձայնով։

* * *

Երբ Ռըզա բեյը Մարոյին հրավիրեց իր բնակարանում ճաշից հետո սուրճ խմելու, նա հասկացավ, որ Բույուկ խանումը նրան տեղյակ էր պահել իրենց խոսակցության մասին։ Ավելի լավ, այսուհետ ինքը կիմանար, թե ինչ էր իրեն սպասում։ Ամեն անգամ, երբ Մարոն փորձում էր խոսել մայրաքաղաք մեկնելու մասին, Ռըզան ճարպկորեն խուսափում էր այդ թեմայից, կամ էլ ձևանում էր, որ չէր լսում Մարոյի փաստարկները։ Պետք էր ավելի շուտ առաջ քաշել այդ հարցը, ինքը չափից ավելի համբերատար էր եղել, և Ռըզան այդ զսպությունը մեկնաբանել էր որպես իրավիճակի հետ լուռ համակերպում։

Այլ կանանց ընկերակցությամբ ճաշելուց հետո Մարոն բարձրացավ իր սենյակը, ուր մենության մեջ հայտնվեց, քանի որ թույլ էր տվել Թովմասին այդ գիշեր քնել Քենանի հետ։ Կանաչ զգեստի փոխարեն սև, ավելի խիստ զգեստ հագավ և հանեց զարդերը։ Հայելու միջից իրեն էր նայում լարված մի դեմք, որի ալ շուրթերը և սուրմայով ընդգծված աչքերը ավելի ակնառու էին դարձնում գունատությունը։ Նշված ժամին սպասելով՝ նա տենդագին քայլում էր սենյակում և հոգեպես նախապատրաստվում էր վեճի, որն իր կանխազգացմամբ պետք է որ բուռն լիներ։ Նա պատրաստ էր նույնիսկ հակառակվել իր հովանավորին, նույնիսկ նրան նեղացնել, քանի որ համոզված էր, որ նա իրեն չափից ավելի էր սիրում տեղահանվածների քարավան հետ վերադարձնելու համար։

Նա դուրս եկավ պատշգամբ և նայեց ադամամութի մեջ ընկղմված այգուն։ Հյուսիսից փչող քամին օրորում էր նիվենիների սաղարթը և այդ աղմուկը Մարոյին հանկարծ հիշեցրեց եզներով լծած սայլերի անդադար աղմուկը։ Նրա աչքերի առաջ կայծակնային արագությամբ անցան որոշ տեսարաններ, արևից այրված սարահարթը, ծարավը, Արմենի մարմինը խոտի վրա, իր գրկում մեռնող մայրը։ Փակելով աչքերը՝ նա իրեն տեսավ

Վարդանի հետ Սվասի իրենց տան ննջարանում։ Իրանը մերկ՝ նա սափրվում էր և երբեմն ընդհատում էր ձեռքի շարժումը Մարոյին հայելու մեջ նայելու համար։ Նա ջանում էր ժպտալ և հանգստացնում էր Մարոյին իրենց ապագայի վերաբերյալ... Նույն երեկո նրան ձերբակալեցին։ Վարդան... Ի՞նչ էր պատահել նրան։ Այդ առավոտ Սվասում Մարոն մտածում էր, որ չէր կարող ապրել առանց նրա։ Արդեն անցել էր հինգ ամիս, իսկ ինքը շարունակում էր ապրել։

Մարոն դողաց, և նրա աչքերն արցունքով լցվեցին։ Սակայն դրա ժամանակը չէր։ Պատշգամբի բազրիքի սառը մետաղը սեղմելով, նա խորը շունչ քաշեց ինքնատիրապետումը վերականգնելու համար։ Աղախինը դուռը թակեց։ Ժամը եկել էր։ Դուրս գալուց առաջ Մարոն կանգ առավ հայելու դիմաց և սրբեց արցունքներից լուծված սուրման։ Նրան թվաց, որ իր շուրթերը չափից ավելի ալ են, և նա թաշկինակով մաքրեց շրթներկը։

Ռըզա բեյի բնակարանը, որին Մարոն քաջ ծանոթ էր, գտնվում էր միջանցքի վերջում և զբաղեցնում էր տան երկրորդ հարկի հյուսիսային թևը։ Այնտեղ կարելի էր մուտք գործել նախասրահից, որը կահավորված էր ոսկեզօծ բռնակներով գրասեղանով և ապակեպատ գրադարակներով, ուր շարված էին գրքեր, գլանափաթեթներ, նախագծեր և քարտեզներ։

Ռըզա բեյը Մարոյին դիմավորեց գայթակղիչ ժպիտով, որից չէր կարելի ենթադրել, որ նա բարկացած էր։ Նրա սպիտակ շապիկի վիզը կոճկած չէր և ազատ էր թողնում նրա պարանոցը՝ դուրս ցցված ադամախնձորով, իսկ մինչև արմունկները ծալված թևքերը բաց էին թողել նրա արտահայտված երակներով մկանուտ բազուկները։ Նկատելով Մարոյի շփոթված տեսքը՝ նա զսպեց կնոջը գրկելու ցանկությունը և բավարարվեց ձեռքը համբուրելով։

— Հոգի՛ս,— շշնջաց նա։

Մարոն գլուխը խոնարհեց և պատասխանեց քաղաքավարի ձայնով.

— Բարի երեկո, Ռըզա բեյ։

Վերցնելով Մարոյի ձեռքը՝ Ռըզա բեյը նրան տարավ կողքի սենյակը։ Դժգոհ մնալով, որ Մարոն չէր պճնվել, նա, այնուամենայնիվ, դա ցույց չտվեց և նրա առողջությամբ հետաքրքրվեց.

— Դու հիվանդ չե՞ս։

— Ոչ։

— Մտահո՞գ ես։

— Այո։

Ռըզան չէր սպասում այդքան անկեղծ պատասխան, որը հակասում էր օսմանյան քաղաքավարության կանոններին, և չիմացավ ինչ պատասխանել։ Նա ճանապարհ տվեց Մարոյին, որը մտավ

հյուրասենյակ։ Դա մեծ, ուղղանկյուն սենյակ էր, ուր ժողովված էր զանազան ոճերի արժեքավոր կահույքի տարաբնույթ հավաքածու։ Շքեղ գորգերի առատությունը և թաղարների մեջ աճող ձարխոտը հանդարտ մթնոլորտ էին ստեղծում։ Մի անկյունում իրար կողքի դրված էին հոյակապ արծաթյա կրակարանը, որը ծածկված էր կոնաձև կափարիչով և Շոպենի «Նոկտյուրնը» նվագող մի գրամոֆոն, որի սկավառակն այնքան մաշված էր, որ մեղեդին գրեթե չէր լսվում։ Տեղական արտադրության պղնձե և արծաթե հաստափոր սկահակները գտնվում էին Եվրոպայից բերված ճենապակյա և բյուրեղապակե իրերի կողքին։

Ամպիր ոճի սեղանիկի վրա դրված էին սպիրտայրոցը և սուրճ պատրաստելու պարագաները։ Ռըզան նստեց կարմիր թավշով պատված բազմոցին, որի դիմաց դրված էր սադափով դրվագանախշված սեղանը քաղցրավենիքով։ Իմանալով իր պարտականությունը, Մարոն սուրճ եփեց և լցրեց գավաթների մեջ։ Երբ Մարոն մատուցեց սուրճը, Ռըզա բեյը մի կողմ քաշվեց բազմոցի վրա, որպեսզի նա նստեր իր կողքին։ Սակայն Մարոն ընտրեց բազկաթոռը։

Զնայած Ռըզա բեյը ցուցադրաբար ժպտում էր, սակայն հոնքերի միջև հազիվ նկատելի կնճիռը վկայում էր նրա դժգոհության մասին։ Եվս մեկ անգամ խախտելով ընդունված կարգը, Մարոն սկսեց խոսել.

— Կեսօրին ես զրույց եմ ունեցել ձեր մոր հետ։

— Գիտեմ։

— Ինձ թվում է, որ ես նրան այնքան էլ դուր չեմ գալիս։

— Նա ինձ այդպես չի ներկայացրեց իրավիճակը,— ասաց նա բաժակը վայր դնելով։

Զայնապնակի վերջում գրամոֆոնի ասեղը լռվեց վերջին ակոսի վրա և Ռըզա բեյի նշանով Մարոն անջատեց սարքը։

— Իմ մայրը շատ պահպանողական է,— շարունակեց նա, երբ Մարոն նստեց իր դիմաց,- և ես ցանկանում եմ, որ նրա սովորությունները չխախտվեն։

— Եթե ես խախտել եմ, ապա կամքիցս անկախ։

— Հույս ունեմ։

— Բացի դրանից, ես չեմ կարող լիովին փոխվել։

— Ոչ ոք քեզնից դա չի պահանջում,— ասաց նա հանդարտ տոնով։- Բավական է, որ դու ավելի զուսպ լինես, որ չարտահայտես որոշ մտքեր, որոնք քո տեսակետից անմեղ լինելով, անհանգստացնում են իմ մորը, որը մտածում է, որ դու վատ ազդեցություն ես թողնում այս տան մնացած կանանց վրա։

— Դանտեի պոեմո՞վ և աշխարհագրության դասերո՞վ,— հարցրեց Մարոն հեգնական տոնով։

— Խոսքը դրա մասին չէ,— ասաց Ռըզան անհամբեր տոնով։— Ես այս տան տերն եմ և միայն ես եմ որոշում, ինչը թույլ տալ, իսկ ինչն արգելել իմ տանիքի տակ։ Ես թույլատրել եմ այդ դասերը, և դրանք կշարունակվեն։

Ռըզա բեյը դադար առավ մի կում սուրճ խմելու համար, հետո հաշտվողաբար շարունակեց.

— Մի քիչ նրբանկատություն ցուցաբերելով կարելի է Բույուկ խանումին համոզել որոշ նորամուծություններ ընդունելու։ Մայրս զգայուն է արտաքին դրսևորումների նկատմամբ։ Ուշադրություն դարձրու այնպիսի մանրուքների վրա, ինչպիսիք են քող կրելը, աղախինների հետ մտերմիկ չլինելը և օտարների հետ չշփվելը։

Նա ուզում էր այդ պատմությանը նշանակություն չտալ, սակայն դժվար իրավիճակում էր հայտնվել։ Եթե հոգու խորքում նա Մարոյի կողմից էր, այդուհանդերձ նա համաձայն էր մոր հետ, որ սիրուհին իր վարքագծով խախտում էր կամ գոնե հարցականի տակ էր առնում այն կանոնները, որոնցով կառավարվում էր կալվածքի կյանքը։ Մարոյի ազատամտությունը, նրա անկեղծությունը և իր տեսակետները պաշտպանելու հակումը, որոնք կարող էին ընկալվել որպես արհամարհանք ավանդույթների նկատմամբ, գալիս էին նրա արևմտյան դաստիարակությունից։ Իսկ այդ առանձնահատկությունները, որոնք երբեմն նյարդայնացնում էին Ռըզա բեյին, միևնույն ժամանակ երիտասարդ կնոջ հմայքի մասն էին կազմում։

Մարոն ոչ մի ցանկություն չուներ վիճելու ճղճիմ բաների մասին, ուստի նա ուղղակիորեն հարցրեց.

— Ձեր մայրը հայտնե՞լ է, որ ես ուզում եմ մեկնել։

Ռըզա բեյի դեմքը լարվեց և նա պատասխանեց չոր տոնով.

— Այո։ Ես կուզենայի, որ դրա մասին նախ խոսեիր ինձ հետ։

Մարոն փռթկաց.

— Որ ես ձեզ հետ խոսեի՞ դրա մասին, Ռըզա բեյ։ Ինչպե՜ս։ Ես անդադար փորձում եմ այդ անել, բայց դուք ինձ չեք լսում։

Ռըզա բեյը նրան նայեց խիստ հայացքով, սակայն պատասխանելու փոխարեն Մարոյին մեկնեց դատարկ բաժակը և սուրճ խնդրեց։

— Տեսնո՛ւմ եք,— ասաց նա։– Դարձյալ նույն բանը։

Ռըզա բեյը հառաչեց, և նրա դեմքը տխրեց.

— Արդյոք ամեն ինչ չե՞մ արել քո կյանքն այստեղ հաճելի դարձնելու համար։

— Այո,— համաձայնեց Մարոն։

— Արդյոք քո որդուն չե՞մ վերաբերվում այնպես, ինչպես իմ հարազատ որդիներին։

— Այո։

Ռըզան ձեռքերը դեպի երկինք պարզեց և ձևացավ, թե շփոթված է.

— Ապա ի՞նչ։ Դու ապրում ես պալատում, ես քեզ այնպես եմ սիրում, ինչպես չէր սիրի մեկ ուրիշը։ Էլ ի՞նչ է քեզ պետք։

— Ազատությո՛ւն,— բացականչեց Մարոն։– Ազատություն, Ռըզա բեյ։ Ձեր պալատը ոսկե ճաղերով վանդակ է։

— Դու ինձ զարմացնում ես... Սակայն դու նույն իրավունքներն ունես, ինչ իմ կանայք։

Մարոն ոտքի կանգնեց և ձեռքերը շփեց, բարկանալով՝ տղամարդու չհասկանալու տալու ակնհայտ ցանկությունից։

— Դե լավ, խոսենք ձեր ազատության մասին, այս պատերից դուրս ոտք դնել միայն բաղնիք գնալու համար, այն էլ փակ կառքով և հսկողության տակ։ Եկեք իրողությանը շիտակ նայենք, Ռըզա բեյ, ես ձեր բանտարկյալն եմ։

Մարոն սպասում էր, որ Ռըզա բեյը բուռն կարձագանքեր, կբարկանար, սակայն նա ավելի շուտ ընկճված էր և տրտնջաց.

— Այդ խոսքերն ինձ ցավ են պատճառում, ինձ, որ սիրում եմ քեզ ամենից շատ։

Մարոն կտրուկ պատասխանեց.

— Եթե դուք ինձ սիրեիք այնքան, որքան ասում եք, վաղուց կապված կլինեիք իմ ընտանիքի հետ Կոստանդնուպոլսում։

— Ես չեմ կարողացել։

Մարոն մեղմացավ.

— Սակայն դուք ինձ խոստացել էիք մայրաքաղաք ուղարկել։

Ռըզան կտրուկ պատասխանեց.

— Ո՛չ։ Ես ասել եմ, որ կտեսնեմ, թե ինչ է հնարավոր անել։ Քո մեկնելն անհնար է։

— Ի՞նչն է պատճառը։

— Երկրում տիֆի համաճարակ է։ Պատերազմ է, և տեղաշարժերը սահմանափակված են։ Ամեն ինչ վերահսկվում է և միևնույն ժամանակ անարխիա է տիրում։ Քո ազգականներին գրելը կարող է վտանգի տակ դնել իմ սեփական անվտանգությունը։

— Ձե՛մ հավատում։ Դուք շատ ազդեցիկ եք, Ռըզա բեյ։ Ես գիտեմ, որ դուք վերահսկում եք հարևան գավառների գավառապետներին։

Մարոն այդ ամենն իմացել էր քաղաքի կանանց խոսակցություններից բաղնիքում։ Շփոթվելով՝ Ռըզա բեյը կարմրեց և բռունցքը սեղանին

խփելով ասաց հրամայական ձայնով.

— Ես քեզ արգելում եմ իմ խոսքերը կասկածի տակ առնել։

Զնայած վախին, Մարոն փորձեց հակաճառել.

— Իսկ ինչո՞ւ պետք է այլ կերպ լիներ։ Ամեն ինչ հաստատում է, որ...

Տեսնելով, որ նա էլ ավելի էր բարկանում, Մարոն փոխեց մարտավարությունը և ձեռքերը պարզելով աղերսեց.

— Թույլ տվեք ես գնամ, Ռըզա բեյ։

— Քեզ կորցնելո՞ւ համար։ Երբեք,— բացականչեց նա։

Մարոն ընկճված տեսքով նստեց բազկաթոռին.

— Ահա և ճշմարտությունը։

Գլխահակ, նա ցրված նայում էր ծնկներին դրված իր ձեռքերին։ Ռըզան ոտքի կանգնեց և, շրջանցելով սեղանը, մոտեցավ Մարոյին։ Նա մեղմորեն ասաց.

— Ինչպե՞ս կարող է քո պես խելացի կինը մտածել, որ ամբողջ հոգով սիրող տղամարդը կհամաձայներ կորցնել իր սիրո առարկան։

Մարոն լուռ էր և չէր արձագանքում։ Ռըզան ձեռքը դրեց նրա ուսին.

— Ես սիրում եմ քեզ, Մարո։ Դու ամեն ինչ ես ինձ համար։

— Իսկ եթե ես ձեզ չեմ սիրում,— ասաց նա դիրքը չփոխելով։

— Այն հետաքրքրությունը, որ դու ցուցաբերում ես իմ արածների նկատմամբ, սեր չէ՞։

— Քաղաքավարություն է։

— Իսկ ջերմությո՞ւնը, որ ես զգում եմ իմ նկատմամբ։

— Երախտագիտություն և բարեկամություն։

— Իսկ հիմա էլ դու ես ստում, Մարո։ Կան նշաններ, որոնք չեն խաբում։

Մարոն ուսերը թոթվեց.

— Ի՞նչ գիտեք դուք կանանց մասին։ Նրանց մարմինը։

Ռըզան էլ ավելի ուժգին սեղմեց Մարոյի ուսը.

— Դու անարդարացի ու դաժան ես իմ նկատմամբ, սակայն ես քեն չեմ պահում։ Դու ինձ կսիրես այնպես, ինչպես ես արժանի եմ։

Մարոն հոգոց հանեց։ Ռըզան բռնեց նրա կզակից, ստիպեց գլուխը բարձրացնել և իրեն նայել։ Նա լաց էր լինում։

— Ես ուզում եմ, որ կինս դառնաս, իսկ Թովմասը՝ որդիս։ Ես քեզ ապահովություն, հարստություն ու բարեկեցություն կպարգևեմ։

— Ո՛չ,– պատասխանեց Մարոն խզված ձայնով։– Ես ձեզ հետ չեմ ամուսնանա, և իմ որդին ձերը չի դառնա։ Ես կլինեմ գավառապետ Ռըզա բեյի սիրուհին, քանի որ ընտրության հնարավորություն չունեմ, սակայն ավելին ինձնից չսպասեք։

Ռըզան Մարոյին բարձրացրեց բազկաթոռից, կանգնեցրեց և իրեն սեղմեց։

— Այս պահին դա ինձ բավական է,– մրմնջաց նա։– Մնացածը ժամանակի հետ կգա։

Ռըզան գրկեց Մարոյի մեջքն իր ուժեղ ձեռքով և նրան ձգեց դեպի վարագույրը, որը թաքցնում էր ննջարանի դուռը։

— Ոչ այս երեկո, խնդրում եմ,– ասաց Մարոն։

Ռըզան ավելի ուժգին սեղմեց նրան։

— Մենք քրոջ և եղբոր պես կքնենք։ Ես քո ներկայության կարիքն ունեմ, աղունիկս։

* * *

Գերմանական արտադրության սև մոտոցիկլետին նստած, Պետրին լսում էր Սուլեյման և Նազիմ եղբայրներին, որոնք օթևանել ու բուժել էին մի զինվորականի, որը ներկայացել էր որպես լեյտենանտ Ակդար։ Բազմաթիվ երեխաները շրջապատել էին նրանց և զմայլված նայում էին եռանիվ այդ մեքենային, որ նրանք առաջին անգամ էին տեսնում։ Քողածածկ կանայք հետևում էին նրանց ճաղապատ լուսամուտներից։ Պետրիին ուղեկցող մոտ քսան զինվորներից կազմված մի գունդ սպասում էր գոմի մոտ։

Այն պահից ի վեր, ինչ Սուլեյմանը ճանաչել էր ապստամբի դեմքը ոստիկանների ցույց տված հայտարարության վրա, նա արդեն տասնյակ անգամներ պատմել էր իր պատմությունը։ Սկզբում՝ բանակի բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք հատկապես եկել էին Կեսարիայից նրան հարցաքննելու, հետո՝ հարևաններին և գյուղի բնակիչներին։ Նա չէր սպասում, որ իրեն խնդրեին, պատմում էր գոռոզանալով և ամեն անգամ փոքր մանրամասներ ավելացնելով, որոնք ավելի զվարճալի էին դարձնում նրա պատմությունը։ Այդ արկածն իրեն հայտնի էր դարձնում շրջանում։

Նազիմը շարունակեց իր խոսքը, և Պետրին ծիծաղելով լսում էր ապստամբի թլփատման պատմությունը։ Վարդանին ձերբակալած ենթասպան անհանգիստ էր և, Պետրիի թիկունքում կանգնած, նյարդայնացած խաղում էր իր գոտու ճարմանդով։ Նա խիստ հայացքով նայում էր երկու տղամարդկանց, որոնց բերել էր, որպեսզի նրանք հաստատեին իր ցուցմունքները, և հույս ուներ, որ նրանք կհիշեին այն, ինչ ինքը իրենց սովորեցրել էր։ Նա պատվի առավ, երբ Պետրին դարձավ

իր կողմը և զննեց սառն ու կասկածամիտ հայացքով։

— Երբ այս մարդիկ քեզ հանձնեցին ապստամբին, դու գիտեի՞ր, որ նա հետախուզման մեջ էր։

— Ոչ, էֆենդի։ Ես դեռ չէի տեսել հայտարարությունը։

— Բայց գիտեիր, որ նա գյաուր էր։ Եվ տեսել էիր նրա զինվորական գրքույկը Շաքիր Իսմայելի անունով, մինչդեռ նա ասում էր, որ իր անունն էր Ակդար։

— Այո, էֆենդի։ Ձերբակալվածը խոստովանեց, որ ինքը հայ էր և որ ինքը գողացել էր համազգեստն ու փաստաթղթերը։ Այդ ամենն ինձ տարօրինակ թվաց, և այդ պատճառով որոշեցի նրան տանել ոստիկանության բաժանմունք, որպեսզի գնդապետը նրան հարցաքններ։

— Սակայն նա չի հասել ոստիկանության բաժանմունք...

Սերժանտը կարմրեց և մեղավոր տեսքով գլուխը կախեց։

— Ոչ։

— Ինչո՞ւ։

— Գիտե՞ք, նա հազիվ էր քայլում։ Իմ մարդիկ նրան քարշ տալով տարան այստեղից։ Ճանապարհին հասնելով, մենք արդեն հոգնել էինք և դադար առանք թեթևանալու համար։ Քանի մենք թիկունքով էինք նրան կանգնած, նա փորձ արեց փախչելու։

— Փորձ արեց փախչելո՞ւ,– բացականչեց Պետրին խորամանկ ժպիտով։– Մարդը, որին դուք ստիպված էիք քարշ տալո՞ւ։

Սերժանտը կոշիկի ծայրով հողն էր փորփրում։

— Դե լավ, ասենք, նա փորձում էր սողալով թաքնվել ժայռերի հետևում։

— Ենթադրենք... Հետո՞։

— Մենք դրանից զայրացանք, բռնեցինք և ջարդը տվեցինք մեր հրացանների կոթերով։

Նա լռեց մեղավոր տեսքով և ուսերը թոթվեց՝ խոր ափսոսանք արտահայտելով.

— Մենք չափից ավելի ոգևորվեցինք։ Բանտարկյալը մեռավ։

— Համոզվա՞ծ ես։

— Դե... կարծես թե։ Նրա գլուխը ջարդված էր, և արյուն էր գալիս։ Մենք գնացինք գյուղ սայլ բերելու։

— Եվ մարդ չթողեցիք նրան հսկելու համար։

Պետրին կարծես չէր հավատում ենթասպայի խոսքերին, և դա

վերջինիս անվստահություն էր ներշնչում և նա ավելի վատ էր պաշտպանվում։

— Մենք կարծում էինք, որ նա մահացել էր, բեյ էֆենդի։

— Իսկ զինվորական գրքո՞ւյկը, որը գտել էր մի վաճառական։

— Վերցրել էի գնդապետին ցույց տալու համար։ Գյուղ հասնելուց առաջ նկատեցի, որ կորցրել էի։ Այդ ժամանակ մենք հետ եկանք, որ գրքույկը գտնենք։ Գրքույկը չգտանք, իսկ ձերբակալվածի մարմինը անհայտացել էր։

Պետրին հոնքերը կիտեց.

— Ինչո՞ւ ոչինչ չասացիր, երբ պարզվեց, որ քո... կորցրած ձերբակալվածը այն մարդն էր, որը հետախուզման մեջ էր։ Հարկ եղավ, որ Սուլեյմանը քո անունը տար։

Սերժանտի ուսերը հակվեցին, և նա մեղավոր տեսքով ասաց.

— Չէի կարծում, որ դա այդքան կարևոր էր։

— Դու արժանի ես զրկվելու կոչումիցդ,– փրփրեց Պետրին։

Նա հարցաքննեց երկու ոստիկաններին, որոնք կրկնեցին այն ամենը, ինչ ասել էր իրենց ենթասպան, հետո վայր իջավ մոտոցիկլետից, մի քանի քայլ արեց ձեռքերը մեջքին, մտածելով։ Սերժանտը մի քիչ հանգստացավ, զգալով, որ հարցաքննողը հավատում էր իր զեկույցին։ Նա մի կերպ դուրս կպրծներ այս պատմությունից, իր գնդապետից մի բոլ հայհոյանք ուտելով։

Կայծակի պես արագաշարժ Պետրին հանկարծ բռնեց սերժանտի օձիքից ու նրան գրեթե պոկեց գետնից։

— Դու ինձ ապուշի տեղ ես դրե՞լ,– բղավեց նա։

Այս կտրուկ շրջադարձը սերժանտին հանկարծակիի բերեց, և նա համրացավ։ Պետրին ցնցում էր նրան.

— Ես քո պատմության ոչ մի խոսքին չեմ հավատում

— Սակայն... ճշմարտությունը դա է։

Սերժանտը ստել չգիտեր։ Պետրին նրան վայր գցեց գետնին և կանգնեց նրա գլխավերևում, մատը թափ տալով.

— Սա քո վերջին հնարավորությունն է։ Պատմիր ամեն ինչ, հակառակ դեպքում քեզ կտանեմ գլխավոր շտաբ հարցաքննության։ Ես գիտեմ, թե ինչ վիճակում կվերադառնաս այնտեղից... Եթե, իհարկե, վերադառնաս։

Սերժանտը, ամբողջ մարմնով դողալով, խոստովանեց, որ իրենք ուզում էին նրան սպանել թալանելու համար և որ իրենք հետո դեն էին նետել նրա զինվորական գրքույկը։ Նա, իհարկե, թաքցրեց, որ այդ պահին ինքը գիտեր, որ ձերբակալվածը հետախուզման մեջ էր։

— Դուք հասկանում եք, բեյ էֆենդի,— եզրափակեց նա,— որ ես կուզենայի պարգևը ստանալ։

Այս փաստարկն ու լացակումած ձայնը համոզեցին Պետրիին, որ այս անգամ այդ մարդը ճշմարտությունն էր ասում։ Նա իրեն ուղեկցել տվեց դեպի այն վայրը, ուր Շաքիր Իամայելին՝ իրականում Վարդան Պալյանին, թողել էին ոստիկանները, կարծելով, որ նա մեռած էր։ Անձրևը լվացել էր արյունն ու ոտնահետքերը։

— Այստեղ,- ցույց տվեց սերժանտը։— Նա այստեղ էր պառկած։ Եթե մեռած չէր, ապա նա չէր կարող հեռու գնալ սատկելուց առաջ։ Միգուցե գիշակերնե՞րը...

— Ոսկորներ կմնային,- փնթփնթաց Պետրին։

Նա հետախուզել տվեց հովիտն ու սարերը հինգ կիլոմետր տրամագծով, որը երկու օր պահանջեց և ոչ մի արդյունք չտվեց։ Երրորդ օրը Պետրին վերադարձավ այդ վայրը, այս անգամ մենակ։ Նա դանդաղ քշում էր իր մոտոցիկլետը ճանապարհով և միևնույն ժամանակ ուսումնասիրում էր շրջակայքը, որին սառն անձրևն ավելի տխուր տեսք էր հաղորդում։ Պալյանն այստեղ չէր, նա դրանում համոզված էր։ Մահացե՞լ էր։ Սակայն շրջակայքում գերեզմանի ոչ մի հետք չկար։ Ո՞վ պետք է իրեն նեղություն տված լիներ տանելու դիակը, եթե ոչ պարգևատրում ստանալու համար։ Քանի որ Պալյանը չէր կարող ինքնուրույն հեռանալ, ուրեմն մեկն ու մեկը պետք է նրան տարած լիներ։ Ո՞ւր։ Ինչո՞ւ։ Ո՞վ կարող էր այնքան անշահախնդիր գտնվել, որպեսզի օգներ վիրավորի, որը ոչինչ չուներ։ Որևէ մահմեդական հոգևորակա՞ն։ Քրիստոնյա միսիոնե՞ր։ Հարկավոր էր ուսումնասիրել այդ հետքը։ Քանի որ նա կիսամեռ վիճակում էր, ապա նրան չէին կարող շատ, հեռու տանել և, բացի դրանից, պետք կլիներ բժիշկ կանչել նրան բուժելու համար։ Սա նույնպես հետք էր, որը պետք չէր անտեսել։

Անձրևը լցվում էր Պետրիի ծոցը, նա դողում էր և ուզում էր կոնյակ խմել տաքանալու համար։ Սակայն շիշը դատարկ էր։ Կատաղի շարժումով նա շիշը մի կողմ նետեց։ Այս պատմությունը նրան հոգնեցրել էր և ինքը կուզեր Այնթապ վերադառնալ և հաստատել, որ Պալյանը մահացել էր ու թաղվել։ Ոչ։ Եթե, հակառակ դեպքում, այդ մարդը մի օր հանկարծ հայտնվեր, ապա Ռըզա բեյն իրեն երբեք չէր ների խաբեությունը։ Սակայն ինչո՞ւ էր իր տերը այդպիսի նշանակություն տալիս այդ մարդու ձերբակալությանը։ Փախստական հայեր ու ապստամբներ շատ կային երկրում, և դրանից պատմություն չէին սարքում։

Նա բացեց գլխավոր շտաբի քարտեզը և կռացավ այն անձրևից պաշտպանելու համար։ Յուցամատով հետևեց ճանապարհին, շուրջ հիսուն կիլոմետր երկարությամբ։ Ահա թե ինչ էր պետք անել բոլոր ուղղություններով, առանց անտեսելու ոչ մի ճյուղավորում, ոչ մի արահետ։ Կանգ առնել յուրաքանչյուր ագարակում, խուզարկել տները, գոմերը և փարախները, որոնք արդեն երկու անգամ խուզարկվել էին, հարցաքննել բնակիչներին, նույնիսկ երեխաներին։ Պալյանը չէր կարող

անէացած լինել։ Ինչ-որ մեկը, ինչ-որ տեղ, ինչ-որ բան գիտեր.

Պետրին ծալեց խոնավ քարտեզը և դրեց իր կաշվե բաճկոնի գրպանը, իսկ բաճկոնը կոճկեց մինչև կզակը։ Պաշտպանիչ ակնոցը աչքերին իջեցնելուց առաջ նա երկնքին նայեց։ Միայն թե ցրտերը չընկնեին։ Ոչ մի ցանկություն չուներ, որ ձյունն իրեն բանտարկեր Այնթապից այդքան հեռու։

Վարդանը փայտյա եղանով խոտ էր տալիս ոչխարներին ու այծերին, մինչդեռ Հալիդեն, կամ ավելի շուտ Արուսյակը, ինչպես Վարդանը գերադասում էր նրան անվանել, կուտ էր տալիս հավերին։ Չնայած երիտասարդ կինը պահանջում էր, որ Վարդանն իրեն խնայեր, նա առիթը բաց չէր թողնում հիվանդության և երկար անգործության պատճառով թուլացած մկանները մարզելու։

Ոստիկանների այցելությունից հետո Վարդանը դուրս էր եկել գոմի խորքում գտնվող թաքստոցից և վերադարձել էր տուն, սակայն մեկ շաբաթ անց տեղի էր ունեցել երկրորդ խուզարկությունը, որից հազիվ էր խույս տվել։ Այդ դեպքից հետո նա լքում էր գոմը միայն մութն ընկնելուց հետո և այնտեղ էր վերադառնում լուսաբացից առաջ։ Հակառակ Արուսյակի լավատեսությանը, որը համարում էր, որ դա անհավանական էր, այսինքն անհնարին, Վարդանը տհաճ զգացողություն ուներ, որ օղակն իր շուրջ սեղմվում էր։

— Դու չափից ավելի կասկածամիտ ես,— ասում էր երիտասարդ կինը սեղմելով նրա ձեռքը,— դու չես հավատում նախախնամությանը։

— Կասկածամտության շնորհիվ է, որ ես դեռևս ողջ եմ։

— Այն բարեկամները, որոնք քեզ փրկել են կախաղանից, այն միսիոներուհին, որը քեզ ապաստանել է, Քերիմն ու ես, որ քեզ գտել ենք փոսում, այդ ամենը քո կասկածամտության հետևա՞նքն է։

Ինչ-որ չափով նա իրավացի էր, և Վարդանը ժպտալով համաձայնեց։ Կինը նույն դիրքորոշումն ուներ ձմեռվա կապակցությամբ։

— Երբ ձյուն է գալիս, մենք օրերով կտրված ենք լինում աշխարհից։ Այստեղի բնակիչները սարսափով են սպասում ձմռանը և համոզված չեն լինում, որ մինչև գարուն կձգեն ցրտի և սովի վտանգի պայմաններում։

Սակայն Արուսյակը կարծես չէր կիսում նրանց վախը։ Ձմեռվա մեկուսացման և փորձությունների մասին նա ուրախ ձայնով էր խոսում, և Վարդանը մտածում էր, որ դա ինչ-որ չափով կապված էր իր ներկայության հետ։ Երիտասարդ կինը կապվել էր իրեն, և նրա հոգատարությունն ու ջերմությունն ավելի ու ավելի բացահայտ էին դառնում, չնայած Վարդանը նրան չէր քաջալերում, ջանալով հեռավորություն պահել։ Այդուհանդերձ, նա չէր կարող արգելել Արուսյակին ջերմ լինել իր հետ և երբեմն էլ մտերմիկ, և դա նրանց հարաբերություններին որոշակի երանգ էր տալիս։ Նա չէր կարող թաքցնել իր համակրանքն այդ կնոջ նկատմամբ, որն այդքան բան էր արել իր համար։

Վարդանը հանկարծ եղանը վայր դրեց, մոտեցավ գոմի դռանը և Արուսյակին նշան արեց դադարեցնել փոցխել հատակի հարդը։

— Լսի՛ր։

Հեռվում շարժիչի ձայն լսվեց։ Արուսյակը նրան մոտեցավ, մի պահ ականջը լարեց և բացականչեց.

— Մեքենա՞։ Այստե՞ղ։

Նրանք մտահոգ հայացք փոխանակեցին։ Պայթյուններով ուղեկցվող շարժիչի ձայնը մոտենում էր։

— Զգույշ լինենք,– ասաց Վարդանը դեպի թաքստոցը գնալով։

Արուսյակը մսուրքը տեղը դրեց, իսկ ավանակին կացոցում կապեց։ Նա դռան մոտ վերադարձավ, քողը դեմքին գցեց և Կուրտին կանչեց, որը եկավ ու նստեց նրա ոտքերի մոտ։ Ցեխոտ ճանապարհին սահելով մի մոտոցիկլետ մոտեցավ, դանդաղեցրեց ընթացքը և թեքվեց դեպի տունը տանող արահետով։ Բռնելով հաչող և դեպի անծանոթը ձգող շան վզնոցից, Արուսյակը գլուխը դուրս հանեց և նշան արեց վարորդին։ Նա եկավ գոմի մոտ, անջատեց շարժիչը և վայր իջավ։ Գլխին ու ականջներին կիպ նստող կաշվե գլխարկով, կլոր ապակիներով մեծ ակնոցով, որը կարծես նստած էր փարթամ բեղերի վրա, տղամարդը ծիծաղելի տեսք ուներ։ Սակայն Արուսյակը չափից ավելի անհանգստացած էր այդ մանրամասներին ուշադրություն դարձնելու համար։

— Ես հարցում եմ անցկացնում կառավարության համար,— հայտարարեց նա վստահ ձայնով։— Ես հարցեր ունեմ ձեզ տալու։

Առանց հուզմունքը ցույց տալու, կինը պատասխանեց մի քիչ շինծու քաղաքավարությամբ.

— Անձրևի տակ մի մնացեք, բեյ էֆենդի։ Ձեր մեքենան ծածկի տակ դրեք։

Նա մի կողմ քաշվեց, որպեսզի տղամարդն իր մոտոցիկլետը գոմը մտցներ։ Այրված բենզինի տհաճ հոտը ծածկեց թրիքի հոտը։ Ատամները ցույց տալով, Կուրտը հետևում էր մարդու յուրաքանչյուր շարժմանը և խուլ մռնչում էր։

— Շատ սիրալիր եք,— խռպոտ ձայնով ասաց այցելուն՝ հանելով քրտնած ակնոցը։

Նա առանց շտապելու արձակեց իր անթափանց վերարկուն, ուշադիր ուսումնասիրելով գոմը, հետո մի հայտարարություն հանեց և բացեց.

— Այս մարդուն տեսե՞լ եք։

Արասյակը հպանցիկ հայացք գցեց նկարին և անտարբեր ասաց.

— Ոչ, ես արդեն ասել եմ ոստիկաններին, որոնք երկու անգամ եկել են։ Նրանք խուզարկել են գոմն ու տունը, նույնիսկ խոտի դեզերը։

— Դու համոզվա՞ծ ես։

— Այո, էֆենդի։

Պետրին դարձավ դեպի մուտքը և ցույց տվեց ճանապարհը։

— Շա՞տ մարդ է անցնում։

— Շատ քիչ։ Գյուղացիներ, շրջիկ առևտրականներ, երբեմն խոջա, որը քարոզում է գյուղից գյուղ գնալով։

— Չե՞ս հիշում, որ մի քիչ անսովոր ճանապարհորդ տեսած լինես մի երեք ամիս առաջ։

— Դա վաղուց էր,— պատասխանեց Արուսյակը,— և լավ չեմ հասկանում, թե դուք ինչ եք ուզում ասել։

Պետրին անհամբեր շարժում արեց.

— Ես չգիտեմ։ Քրիստոնյա միսիոներնե՞ր։ Եվրոպացի ճանապարհորդնե՞ր։

— Ոչ, էֆենդի։ Դա ինձ կզարմացներ։

— Որևէ սա՞յլ, որը վիրավոր կտեղափոխեր։

— Ոչ։

Ծանր հոգոց հանելով՝ Պետրին ուշադիր անձրևին էր նայում և գլանակ էր փաթաթում։

— Դու Ուրգուպում բոլորի՞ն գիտես,— հարցրեց նա առանց դառնալու։

— Այո։

— Դու չգիտե՞ս, որևէ մեկը կենվոր պահո՞ւմ է, օտարերկրացի։ Փոքրիկ քաղաքում ամեն ինչ իմացվում է։

— Մի քանի ընտանիքներ հայ երեխաներ են վերցրել որպես ծառայող։ Դրանցից բացի, նոր դեմքեր չկան։

Պետրին թափ տվեց ծխախոտի մոխիրը։ Արուսյակը մոտեցավ նրան և հետաքրքրված ձևացավ.

— Այդ մարդը կարող է Ուրգուպո՞ւմ լինել։

Տղամարդը ուսերը թոթվեց ու պատասխանեց հոգնած տոնով.

— Այստեղ... ուրիշ տեղ։ Վերջին անգամ, որ նրան տեսել են, այստեղից տասնհինգ կիլոմետրի վրա էր։

— Երևի կարևոր մարդ է, որ զինվորներն ու ոստիկանները այդքան ուզում են նրան բռնել։

— Ոչ էլ։ Ի դեպ, ես ինձ հարցնում եմ...

Նա կանգ առավ, հասկանալով, որ քիչ էր մնում իր կասկածներն ու

մտահոգությունը խոստովաներ մի գեղջկուհու, նա իրեն զսպեց և նորից դարձավ այն մարդը, որը հարցեր է տալիս.

— Ամուսինդ ո՞ւր է։

— Ծառայում է բանակում։

— Մենակ ես ապրո՞ւմ այստեղ։ Առանձնացած տեղ է։ Չե՞ս վախենում։

Կինը շանը ցույց տվեց, որը ատամներն էր բացել, և ավելացրեց.

— Ես տանը հրացան ունեմ։

Տղամարդը ժպտաց՝ զվարճանալով նրա վճռական տոնից և ձեռքը դրեց մոտոցիկլետի ղեկին։

— Դուք թրջվել եք,- ասաց Արուսյակը,- որևէ տաք բան խմել կուզե՞ք։ Ես կարող եմ թուրմ պատրաստել։

Տղամարդը ծամածռվեց.

— Հաճույքով մի բաժակ օղի կխմեի։

— Տուն եկեք, իմ ամուսինը մի շիշ օղի է թողել։

Նրանք դուրս եկան գոմից։

Վարդանը, թաքստոցի բացվածքի մոտ պպզած, հետևել էր խոսակցությանը, ջանալով տեսնել մոտոցիկլիստի դեմքը մսուրքի ճաղերի արանքից։ Ավանակը փակում էր նրա տեսադաշտը, և Վարդանը տեսնում էր միայն նրա ցեխոտ կոշիկները։ Այդ մարդու ձայնը իրեն անծանոթ չէր, բայց նա չէր կարողանում հիշել, թե որտեղ էր լսել այն։ Երևի պատահական նմանություն էր։ Նա հիացավ երտասարդ կնոջ խելքով, որն իրեն շատ բնական էր պահել։

Մի տասը րոպե անց տղամարդը վերադարձավ Արուսյակի հետ, շնորհակալություն հայտնեց ու իր մեքենան հրելով դուրս տարավ։ Շարժիչը չէր ուզում գործի անցնել, և Պետրին մի բոլ հայհոյանքներ արտաբերեց, որոնք վերջապես խլացվեցին շարժիչի պայթյուններով, որոնք վերածվեցին խլացնող աղմուկի։ Մոտոցիկլիստը հեռացավ Ուրգուպի ուղղությամբ։ Արուսյակը Վարդանին ազատ արձակեց թաքստոցից։

— Ապրես,- ասաց Վարդանը,— դու հոյակապ էիր։

Շոյված կինը ժպտաց.

— Բացի դրանից, ես շատ բան իմացա։ Ոստիկանները դադարեցրել են խուզարկությունները շրջանում։ Ոստիկանն ավարտում է իր հետաքննությունը։ Նա կարծում է, որ դու անկասկած մեռել ես, և համոզված է, որ եթե դա ողջ ես, ապա այս շրջանում չես։

— Որևէ այլ բան իմացա՞ր նրա մասին։

— Եկել է Այնթապից, ուր նա մտադիր է վերադառնալ մի քանի օրից։

Վարդանը ձեռքերն իրար խփեց և բացականչեց.

— Այնթապ... Սա այն մարդն է, որն ինձ վիրավորել էր Մալաթիայում։

Արուսյակը նրա թևը սեղմեց և ասաց գրեթե ուրախ ձայնով.

— Քանի դեռ այստեղ ես, վախենալու բան չունես։ Հատկապես, որ ձյունը շուտով կփակի բոլոր ճանապարհները։

* * *

Մարոն բացել էր իրեն բաղնիքից տուն տանող կառքի վարագույրը և, ճակատն ապակուն հենած, նայում էր, թե ինչպես էին շարքով անցնում Այնթապի տները։ Նրա ընկերուհիները՝ Շահանեն, Սաֆիյեն ու դայակը լուռ էին, քանի որ հոգնել էին հասարակական բաղնիքում անցկացրած երկար օրից, գոհ էին, որ հանդիպել էին իրենց ընկերուհիներին և գրեթե արբել էին շատ խոսելուց։ Ինչպես ամեն անգամ բաղնիք այցելելուց հետո, նրանց ուրախությանը ափսոսանք էր խառնվում նրանից, որ տանից դուրս անցկացրած այդ մի քանի ժամերը արդեն անցել էին։

Մարոն այդպիսի զգացումներ չուներ։ Այդ միջոցառումը, որը սկզբում նրան փախուստ էր թվում, նրա համար դարձել էր ծանր պարտականություն, մեկ ամբողջ օր, որը անցնում էր անհետաքրքիր խոսակցությունների աղմուկի և կիսամերկ կանանց մեջ վազվզող երեխաների ճիչերի մեջ։ Բոլոր կանայք գիտեին Մարոյի ծագումը և գավառապետի սիրուհու նրա կարգավիճակը, և խույս էին տալիս նրանից որքան արհամարհանքից, նույնքան էլ անվստահությունից ու նախանձից։ Մարոն հաճույքով կհրաժարվեր բաղնիք այցելելուց, եթե չլիներ բաղնիք գնալու ու հետ գալու ճանապարհը, երբ կառքը անցնում էր քաղաքով և նա տեսնում էր այն, ինչ նրան «իսկական կյանք» էր թվում։

Կառքն անցավ Բալրկլի շուկայի մոտով, և Մարոն մի պահ տեսավ Ամերիկյան միսիայի շենքը, ուր, անկասկած, դեռևս ամերիկացիներ պետք է լինեին։ Եթե գոնե հնարավորություն ունենար նրանց նամակ փոխանցել։

Այն խոսակցությունից հետո, որի ընթացքում Ռըզա բեյն արտահայտել էր իր դիրքորոշումը, Մարոն այլևս պատրանք չուներ իր ապագայի վերաբերյալ, և նրա հոգին լի էր հուսահատությամբ, որը նա ջանում էր թաքցնել Թովմասին չփոխանցելու համար։ Այդուհանդերձ, դա նրան չէր հաջողվում։ Ոչինչ նրան չէր ուրախացնում, և նա մոռանում էր իր վիշտը միայն այն պահերին, երբ դասավանդում էր երեխաներին, դաշնամուր էր նվագում կամ էլ Սաֆիյեի համար կարդում էր «Մադամ Բովարի» վեպը, այն պարբերություն առ պարբերություն թուրքերեն թարգմանելով։

Այդ ընթերցանությունը Մարոյին հիշեցնում էր, որ կար այլ

իրականություն, բացի այս կալվածքից, որը վանքի էր նմանվում։ Նա իրեն աշխարհից կտրված էր զգում, որտեղից միայն թույլ արձագանքներ էին հասնում, բաղնիքում կանանց բամբասանքները և նորությունների ծվեններ, որ Վարդուհին՝ իրեն կցված աղախինը, բերում էր շուկայից։ Տուն ոչ մի թերթ մուտք չէր գործում, և բազմաթիվ օտարերկրացիները, որոնք այցելում էին գավառապետին՝ գերմանացի զինվորականներ, միսիոներներ և դիվանագետներ, ոչ մի շփում չունեին նրա կանանց հետ, նույնիսկ եթե ճաշի էին գալիս, քանի որ այդ ընդունելությունները տեղի էին ունենում տղամարդկանց հատկացված մասում։ Երբ Մարոն հարցնում էր Ռըզա բեյին, թե ի՞նչ էր կատարվում աշխարհում և ի՞նչ ընթացք ուներ պատերազմը, միայն մեկ պատասխան էր ստանում, որ ամենուր քաոս էր տիրում և որ ինքը պետք է ապավիներ տղամարդկանց, որոնք կլուծեին իրենց խնդիրները։

Շեմին էր 1916 թ. և ոչ մի նախանշան չէր ազդարարում, որ այն տարբերվելու էր Մարոյի ապրած վերջին ամիսներից։ Նա չէր նշմարում իր բանտարկության ավարտը և ապագան նրան թվում էր նույն օրվա անվերջ կրկնությունը։

Քաղաքի գլխավոր փողոցը շրջադարձ էր կատարում, իսկ հետո ուղիղ գծով ընթանում դեպի քաղաքի ելքը և ձուլվում Քիլիս տանող ճանապարհին։ Լատին ուխտի վանքից հետո կանգնած էր Ակ Յոլ մզկիթը, որի առջև ամբոխ էր հավաքվել մի մարդու շուրջը, որը թերթ էր վաճառում՝ բարձրաձայն արտաբերելով գլխավոր խորագրերը։ Մարոն կառապանին հրամայեց կանգ առնել։

— Սա Ջիվիլի Ամին է՝ թերթ վաճառողը,— բացատրեց Սաֆիյեն, որը դուրս էր նայում լուսամուտից։

Առաջին կինը, նույնքան հետաքրքրվելով, որքան և Մարոն, «Միլի Աժանսում»՝ Իթթիհատի հրատարակած թերթում հրապարակված նորություններով, կիսաբաց արեց կառքի դուռը։

— Շանակկալեի ճակատամարտն ավարտվում է,— կոկորդն էր պատռում Ջիվիլի Ամին։- Մեր զինվորների քաջության շնորհիվ թշնամին նահանջում է։ Անգլիացիներն ու ֆրանսիացիները նորից քաշվում են իրենց նավերը՝ ծանը կորուստներ կրելուց հետո։ Մայրաքաղաքին վտանգ չի սպառնում, և Օսմանյան կայսրությունը կրկին հաղթանակ է տանում։

Հուռաներ և բացականչություններ լսվեցին։ Սաֆիյեն հրամայեց կառապանին շարունակել ճանապարհը, քանի որ առաջին կառքը, ուր նստած էին Բույուկ խանումը, մնացած կանայք ու երեխաները, կանգ էր առել որոշ հեռավորության վրա և նրանց էր սպասում։ Մարոն ինքն իրեն բարձրաձայն հարցրեց, թե արդյո՞ք դա քարոզչություն չէր։

— Իհարկե, ոչ,- ուրախ պատասխանեց Սաֆիյեն, երբ կառքը տեղից շարժվեց։— Երրորդ բանակի հրամանատար Ահմեդ Ջեմալ փաշայի կանանցից մեկը նույն բանն է ասել բաղնիքում։ Այնթապում մեծ տոնախմբություններ են սպասվում հաղթանակը նշելու համար։

Մարոն շարունակեց փողոցին նայել։ Դաշնակիցները հեռանում էին։ Նրա հավատը չէր գալիս, որ օսմանյան բանակը կարողացել էր հաջողությամբ դիմադրել Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի ուժերին։ Եթե դա ճիշտ էր, ինչպես հայտնում էին պաշտոնական լրատվամիջոցները որ ռուսները շրջափակված էին իրենց սահմանի մոտ և որ բրիտանացիները կանգ էին առել Միջագետքի հարավում, ապա Օսմանյան կայսրության փլուզումը, որը բոլոր հայերի թաքուն ցանկությունն էր, այդքան շուտ տեղի չէր ունենա, և քրիստոնյաների տեղահանություններն ու ջարդերը կշարունակվեին։ Ուրեմն՝ այն հայուհիները, որոնք փակված էին հարեմներում, և նրանց երեխաները, որոնք դաստիարակվում էին որպես մահմեդականներ, պետք է Աստծուն փա՛ռք տային։ Տարագրության քառուղիներում տառապող և անապատում տեղադրված ճամբարներում մեռնող իր հայրենակցուհիների համեմատությամբ, նույնիսկ նրանց համեմատությամբ, ովքեր վերապրում էին կեղծ անունների տակ կամ էլ ձևանում էին, որ հավատափոխ էին եղել, Մարոն արտոնյալ անձի տպավորություն էր թողնում։ Հանկարծ նա ամոթ զգաց իր սև մետաքսյա զգեստի և ոսկե ապարանջանների համար։

Եվ կարծես իր մտքերին արձագանքելով, նրա հայացքը հենց այդ պահին ընկավ «Կիլիկիա» հայկական դպրոցի վրա, որը դատարկվել էր իր աշակերտներից՝ այնտեղ գերմանական զինվորներ տեղակայելու համար։ Մարոն բաց թողեց վարագույրը, գլուխը կախեց ու փակեց աչքերը։ Առաջին կինն ու դայակը հետաքրքրված հայացք փոխանակեցին, սակայն ոչինչ չասացին։ Կառքերն աջ թեքվեցին և գնացին Մարաշի ճանապարհով։ Կամուրջն անցնելուց հետո կառապանը կանչեց.

— Սաֆիյե՛ խանում, Սաֆիյե՛ խանում։

Կինը դեմքը քողով ծածկեց գլուխը կառքից հանելուց առաջ, որպեսզի տեսներ, թե ինչի մասին էր խոսքը։ Հետո բացեց դուռը, շրջվեց դեպի մյուս ուղևորները և ուրախ հայտարարեց.

—– Տեսեք, ով է գալիս։

Խաղողի այգով իրենց ուղղությամբ սլանում էին հինգ ձիավոր։ Քենանն ու Թովմասը առջևում էին։ Նրանք մի տասը մետր առաջ էին ընկել Ռըզա բեյից և Աբդուլայից, որոնք զսպում էին իրենց ձիերին։ Ալթանը նրանց էր հետևում վարգով։ Մարոն սկզբում անհանգստացավ, տեսնելով, որ որդին այդքան արագ էր ձիավարում, սակայն շուտով հանգստացավ, տեսնելով, որ նա լիովին կառավարում էր ձիուն։ Որքա՜ն էր նա մեծացել այդ վեց ամիսների ընթացքում։ Նրա դիմագծերը ձևավորվել էին, և երբ նա մոտեցավ, Մարոն արձանագրեց, որ նա ավելի էր նմանվել հորը։ Նույն ուշադիր հայացքը, նույն արտահայտված այտոսկրերը, նույն կեցվածքը։ Նույնիսկ նրա ինքնավստահությունը հիշեցնում էր Վարդանին։

Կառքերը կանգ առան, և Ռըզա բեյը մոտեցավ առաջինին՝ Բույուկ խանումին ողջունելու համար։ Թովմասն ու Քենանը կանգ առան երկրորդ կառքի մոտ։ Նրանք երկուսն էլ քրտնած էին, ինչպես և իրենց

ձիերը։

— Տեսա՞ր, մայրիկ, ինչ արագ էի քշում ձիուն,— ոգևորված հարցրեց Թովմասը։

— Այո, սիրելիս,- պատասխանեց Մարոն ժպտալով։

— Մենք երկուսս առաջինն էինք,- ավելացրեց Քենանը հպարտությամբ։

Տղաները իրար նայեցին և քահ-քահ ծիծաղեցին։ Մի պահ Մարոյի աչքի առաջ հայտնվեց ուժասպառ և հյուծված Թովմասը, շաբաթներ շարունակ անդադար քայլելուց և զրկանքներից հետո։

— Նայիր, մայրիկ,- ասաց Թովմասը, ստիպելով, որ իր ձին երկու քայլ մի կողմ անի։- Ինչպես հայրիկը Հուր Կրակի հետ։

Այդ խոսքերից Մարոյի սիրտը սեղմվեց, սակայն նա քաջալերող նշան արեց։ Թովմասը հիմա երջանիկ տեսք ուներ, և Մարոն մտածեց, որ ինքն իրավունք չուներ խաթարելու նրա անհոգ գոյությունը։ Ռըզա բեյը մոտեցավ և տղաներին նայեց հպարտությամբ լի հայացքով։

— Սրանք արդեն վարժ հեծյալներ են,- բացականչեց նա։— Նրանք ուժեղ և քաջ տղամարդ կդառնան։ Առաջնորդնե՛ր։

Այս խոսքերից շոյվելով՝ երկու տղաները փայլող դեմքերով շտկվեցին իրենց թամբերին։ Ալթանը, նրանց միանալով, դժգոհ տեսք ուներ, և դա չվրիպեց նրա մոր՝ Սաֆիյեի ուշադրությունից։

— Ես գեներալ կդառնամ,- հայտարարեց Քենանը։

— Իսկ ես մայոր, ինչպես իմ հայրիկը,- ավելացրեց Թովմասը։

Ուշադիր նայելով Ռըզա բեյին՝ Սաֆիյեն հարցրեց իր որդուն.

— Իսկ դու, Ալթան, դու ի՞նչ ես ուզում դառնալ։

Տղան, որը երկու փոքրերի հետ մրցելիս ձիուց վայր էր ընկել, գլուխը կախեց և ուսերը թոթվեց։ Հասկանալով առաջին կնոջ համր խնդրանքը, Ռըզա բեյը հայտարարեց.

— Ալթանը առաջնորդ կլինի։ Նա կկառավարի կալվածքները երկաթե ձեռքով։

Ալթանն ականջներին չէր հավատում։ Նրա աչքերը փայլեցին, ու նա ասաց.

— Դուք կտեսնեք, հայրիկ, դուք ինձնով կհպարտանաք։

Նա շրջվեց և, ձին խթանելով, սլացավ ճանապարհով՝ սուր ճիչեր արձակելով։ Քենանն ու Թովմասը նետվեցին նրա հետևից՝ նմանակելով նրա ճիչերը, իսկ կառապանները դժվարությամբ էին զսպում այդ աղմուկից վախեցած ձիերին։

— Ուղեկցիր նրանց,- հրամայեց Ռըզան երիտասարդ արաբին, որը քիչ

հեռու էր կանգնած։

— Բեյ էֆենդի, կարելի՞ է ես էլ բղավեմ,— հարցրեց Աբդուլան։

Ռըզան նրան թույլ տվեց, իսկ կառապանին ասաց, որ ճանապարհ ընկներ։ Նա ուղեկցում էր կառքը, որի ապակիներն իջեցված էին մնացել։

— Շնորհակալություն Ալթանի համար,— ասաց Սաֆիյեն՝ գլխով անելով։

— Ես սիրում եմ բոլոր որդիներիս։ Ալթանն ամեն ինչ անում է սովորելու և ինձ դուր գալու համար, իսկ ես միշտ գնահատում եմ պատրաստակամությունը։

Այս խոսքերն ասելով՝ նա ուշադիր նայում էր Մարոյին, որը հասկացավ, որ այդ խոսքերը նաև իրեն էին ուղղված։

* * *

Մարոն, իր սենյակի պատշգամբի բազրիքին հենված, հիանում էր հազարավոր լույսերով զարդարված այգով, որոնք վառել էր արևը նախորդ գիշեր տեղացած հորդառատ անձրևից հետո ծառերի տերևներում մնացած կաթիլներում և ջրափոսերում։ Ջմեռն Այնթապում մեղմ էր ու անձրևոտ, իսկ հարավարևմտյան քամին երբեմն Միջերկրական ծովից զովություն էր բերում։ Մարոյին թվում էր, որ այդ քամին ծովի բույրն էր բերում, որը սրում էր Մարոյի մեկնելու ցանկությունը։

Դուռը ծեծեցին, և Մարոն ասաց, որ մտնեն։ Վարդուհին ներս մտավ իր արագ ու թեթև քայլվածքով և միացավ տիրուհուն պատշգամբում։ Նա ավելի ինքնավստահ էր դարձել այն պահից, երբ իրեն կցել էին Մարոյին, քանի որ մնացած ծառայողները դադարել էին նրան որպես քավության նոխազ ընկալել։

— Ի՞նչ կա, Վարդուհի... Այլա։

Մարոն հաճախ մոռանում և աղջկան էր դիմում նրա հայկական անունով, նրան անհարմար դրության մեջ դնելով։

— Էմինեի և Բույուկ խանումի հետ շուկա եմ գնում։ Կվերադառնամ կեսօրից հետո։

Մարոն բռնեց աղջկա ձեռքը և նրան սենյակ տարավ։

— Կուզեի, որ դու ինձ ծառայություն մատուցեիր։

— Այո, խանում,— պատասխանեց աղջիկը ժպտալով։

— Երբ քաղաք ես գնում, պատահո՞ւմ է, որ մենակ մնաս։

Աղջիկը չէր հասկանում և Մարոն ավելի ուղղակի ասաց.

— Կկարողանա՞ս գնալ Ամերիկյան վարժարան այնպես, որ ոչ ոք չիմանա։

Այս անգամ Այլան հասկացավ, թե ինչ էր ակնարկում Մարոն, և նրա աչքերը վախից մեծացան։

— Ոչ, խանում, ես միշտ լինում եմ Բույուկ խանումի կողքին կամ էլ ուրիշ ծառայողների հետ։

— Քեզ հանդիպած վաճառականների մեջ հայեր կամ հրեաներ կա՞ն։

— Այո,— պատասխանեց աղջիկը մի պահ վարանելուց հետո։

Մարոն բացեց պահարանի դարակներից մեկը, այնտեղից մի ծրար հանեց և ոսկե մի ապարանջան։

— Ուզում եմ, որ դու այս նամակը թաքուն հանձնես որևէ վաճառականի, որպեսզի նա ուղարկի Կոստանդնուպոլիս։ Ապարանջանը նրա նեղությունը հատուցելու համար է։

Այլան ձեռքերը թաքցրեց թիկունքում և դողացող ձայնով ասաց.

— Ես չեմ կարող, խանում։ Ձե՛մ կարող։

Մարոն բռնեց նրա ուսից և մեղմորեն պնդեց.

— Եթե դու հարմար պահ գտնես, ոչ ոք չի նկատի։

— Ես չեմ կարող։

— Գիտեմ, վտանգավոր է, սակայն դա միակ մարդն ես, որին կարող եմ վստահել, Վարդուհի։

— Տիրուհի...— աղերսեց աղախինը։

— Խոստանում եմ, որ քեզ հետ ոչ մի տհաճ բան չի պատահի։ Գիտես, որ ես մեծ ազդեցություն ունեմ Ռըզա բեյի վրա։ Եթե քեզ հանկարծ բացահայտեն, ես քեզ կպաշտպանեմ։ Կասեմ, որ հրամայել եմ քեզ այդ բանն անելու, ու եթե որևէ մեկը պետք է դրա համար պատիժ կրի, ապա դա ես կլինեմ։

Այլան ժխտական շարժումներ էր անում, սակայն Մարոյի աղերսող հայացքը նրան ստիպեց զիջել։ Նա նամակն ու ապարանջանը ծոցը դրեց։ Մարոն նրա այտերը համբուրեց և ցածրաձայն ասաց.

— Երբ ես այստեղից գնամ, Վարդուհի, քեզ հետս կտանեմ։

Միջանցք դուրս գալով, աղջնակը շոշափեց նամակն ու ապարանջանը ծոցում, և նրա աչքերն արցունքով լցվեցին։ Նա առաջին հարկ իջավ և գնաց տղամարդկանց հարկաբաժինը, ուր Ռըզա բեյը գրասենյակ ուներ այցելուներ ընդունելու համար։ Մի գյուղացի, հատված ձեռքով զինվորի՝ անկասկած որդու ուղեկցությամբ, և ցածրաձայն մրթմրթացող մի ծեր կին սպասում էին նախասրահում։ Սենյակի խորքում՝ դեպի գրասենյակը տանող դռան մոտ, կալվածքի հաշիվների գրքի մեջ խորասուզված, նստած էր Պետրին։

— Ի՞նչ կա,- կոպիտ ձայնով հարցրեց նա՝ տեսնելով փոքրիկ աղախնին։

— Ուզում եմ տեսնել տիրոջը,- անվստահ ձայնով պատասխանեց նա։

— Ի՞նչ ես ուզում նրանից։

Աղջիկը կարմրեց.

— Դա... անձնական է։

— Անձնակա՞ն է,- փոթկաց Պետրին։— Դու մի տե՛ս։

Աղջնակը համառում էր.

— Պարոնն ասել է, որ շտապ գամ իր մոտ։

Մի պահ շփոթվելով՝ Պետրին նրան նայեց, հետո, փնթփնթալով, ոտքի ելավ.

— Անո՞ւնդ։

— Այլա։

Նա մտավ գրասենյակ և անմիջապես դուրս եկավ՝ նշան անելով աղջկան, որ ներս մտներ։ Շփոթված աղջիկը մտավ սենյակ, որի պատերը զարդարված էին Ղուրանի սուրահներով։ Թերթերով պատված մեծ սեղանի հետևում նստած Ռըզա բեյը բարձրացրեց աչքերն ու բարեհամբույր ասաց.

— Մոտեցիր, մի վախեցիր։

Այլան դողում էր ողջ մարմնով։ Նրա աչքերը թաց էին։

— Դու քեզ մեղավոր զգալու պատճառ չունես,- ասաց Ռըզա բեյը,- դու ընդամենը ենթարկվում ես քո տիրոջը։

Աղջիկը գլխով արեց, ձեռքը ծոցը տարավ և ծրարն ու ապարանջանը հանձնեց Ռըզա բեյին, որն ասաց.

— Շատ լավ։ Ես գիտեի, որ կարող եմ քեզ վստահել։

Իր կատարած դավաճանությունից ցնցվելով՝ Այլան աղերսեց Ռըզա բեյին լացից ընդհատվող ձայնով.

— Ես ձեզ շատ եմ խնդրում, էֆենդի, չպատժեք Մարո խանումին։

Ռըզան քթի տակ ծիծաղեց.

— Բարի աղջիկ, մի վախեցիր քո տիրուհու համար։

Ռըզա բեյն ուսումնասիրում էր ծրարը, որը հասցեագրված

էր Մեսրոպ Մեսրոպյանին՝ Ստամբուլ, Հարբիյե, Շահին բեյի փողոց 38/8։ Ինչպես ենթադրել էր, նամակը հայերենով էր գրված։ Նա այն մեկնեց աղախնին.

— Դու քո լեզվով կարդալ գիտե՞ս։

— Այո, էֆենդի։

— Դե ուրեմն, կարդա։

Աղջիկը, դժկամությամբ, վերցրեց նամակը և սկսեց վերծանել Մարոյի նուրբ ձեռագիրը։

— «1916 թ., հունվարի 5։ Սիրելի Մեսրոպ քեռի, սիրելի Արփինե մորաքույր։ Ես աղոթում եմ, որպեսզի այս նամակը ձեզ հասնի և ձեզ գտնի ողջ և առողջ։ Մեզ քշեցին Սվասից հուլիսի սկզբին։ Վարդանը բանտում էր և դատապարտված էր կախաղանի և ես այդ ժամանակից ի վեր լուր չունեմ նրանից։ Սակայն չեմ կարողանում հավատալ, որ նա մահացել է, սիրտս հուշում է, որ նա ողջ է։ Դժբախտաբար մայրս վախճանվեց տեղահանության ընթացքում։ Թովմասն ու ես ողջ և առողջ ենք և ապահով վայրում ենք։ Այնթապի գավառապետ Ռըզա բեյը մեզ վերցրել է իր հովանավորության տակ։ Ես չգիտեմ, թե երբ մենք հնարավորություն կունենանք վերադառնալ Կոստանդնուպոլիս»։

«Ինչպե՞ս եք դուք, Լուսիկ քույրիկը, Տիրան և Պարգև եղբայրները։ Լսել եմ, որ մայրաքաղաքում հայերի վիճակը տանելի է, և հույս ունեմ, որ դա համապատասխանում է իրականությանը։ Եթե հանկարծ հրաշքով Վարդանը կապվի ձեզ հետ, հանգստացրեք նրան մեր կապակցությամբ և ասացեք, թե որտեղ ենք մենք։ Չգիտեմ, թե երբ մենք հնարավորություն կունենանք ձեզ միանալու։ Թովմասն ու ես համբուրում ենք ձեզ և աղոթում ենք Տիրոջը, որ մեզ շուտով միացնի։ Մարո»։

Այլան նամակը դրեց գրասեղանի անկյունին, Ռըզա բեյն այն վերցրեց և այրեց մոխրամանի մեջ։

— Մարո խանումը չպետք է իմանա, որ դու ինձ ես հանձնել այս նամակը։ Դու այն ի՞նչ պետք է անեիր։

— Պետք է տայի որևէ վաճառականի։

— Կասես, որ նամակը հանձնել ես, հասկացա՞ր։

— Այո, էֆենդի,- ասաց շփոթված աղջիկը։

Ռըզա բեյը խղճաց աղջկան և ասաց բարեկամական տոնով.

— Դու գործում ես քո տիկնոջ շահերից ելնելով։ Այս նամակը կարող էր ոստիկանության կամ բանակի ձեռքն ընկնել և նրա բարեկամներին վնասեր։ Չհաշված այն անախորժությունները, որ մենք այստեղ կունենայինք։ Միգուցե ես նույնիսկ չկարողանայի խոչընդոտել նրա ձերբակալությանը։ Մարո խանումը չգիտի, թե ինչն է լավ իր և իր որդու համար։ Դու պետք է ինձ օգնես, որ ես նրան հետ պահեմ հիմարություններից։

Այլան ամբողջ հոգով ցանկանում էր ինքն իրեն համոզել, որ Ռըզա բեյը ճշմարտությունն էր ասում և որ ինքը ճիշտ էր վարվել, սակայն

նրան այդ բանը չէր հաջողվում։ Ամեն դեպքում նա այլ ելք չուներ։ Նրան ճանապարհելիս գավառապետն ավելացրեց.

— Չէ որ դու ողջ կյանքդ աղախին չես մնալու։ Երբ ամուսնանալուդ տարիքը գա, ես քեզ համար լավ ամուսին կգտնեմ։ Իսկ հիմա շարունակիր ինձ տեղյակ պահել։

Աղջիկը խոնարհվեց և, դուրս գալով, միացավ Բույուկ խանումին, որի կառքը արդեն բակ էր դուրս եկել։

Նույն օրը Թովմասը ճաշասենյակում մոտեցավ պարտեզից վերադարձող Մարոյին։

— Մայրիկ,– ասաց նա գրգռված,— կարելի՞ է ես Քենանի հետ հոգևոր դպրոց գնամ։

Այդ դասերը կալվածքին կից մզկիթում վարում էր խոջա Պիրին՝ յոթանասուներեք տարեկան մի ծերունի, որը կատարում էր նաև մուեզզինի պարտականությունները և ղեկավարում էր ուրբաթ օրվա աղոթքը։ Քանի որ Էմինեն ու Մակբուլեն սենյակում էին, Մարոն թաքցրեց իր զարմանքն ու բարկությունը և բռնեց որդու ձեռքը.

— Արի, մենք դրա մասին կխոսենք։

Մարոն Թովմասին տարավ իր սենյակը, ուր արդեն գտնվում էր Այլան, որը կարգի էր բերում զարդասեղանը։ Մարոն շտապեց հարց ու փորձ անել աղջկան։

— Հանդիպեցի՞ր վաճառականին, որին ուզում էիր տեսնել շուկայում։

— Այո, խանում,— պատասխանեց նա՝ աչքերն իջեցնելով։

— Ամեն ինչ լա՞վ անցավ։

Այլան գլխով արեց։

— Շնորհակալություն, սիրելիս,– ասաց Մարոն թեթևացած։

Նա խնդրեց Այլային խոհանոցից ճաշ բերել և թեյ, ընդգծելով.

— Բավարար քանակությամբ քաղցրավենիք բեր երեքիս համար։

Երբ նրանք Թովմասի հետ մենակ մնացին, Մարոն նստեց մահճակալի եզրին և նրա հետ հայերեն խոսեց.

— Ի՞նչ էիր հարցնում հենց նոր։

— Կուզենայի հաճախել խոջա Պիրիի դպրոցը։

Մարոն ծամածռվեց.

— Այդ միտքը Ռըզա բե՞յն է քեզ հուշել։

— Ոչ, ես կուզեի, ինչպես Քենանը։

— Դու չես կարող,– ասաց Մարոն մեղմորեն։

Երեխան տխուր տեսք ուներ։

— Ինչո՞ւ։

Մայրը նրան գրկեց և շոյեց մազերը։

— Մզկիթում Քենանը Ղուրան է ուսումնասիրում, իր կրոնի գիրքը։ Դու այլ հավատք ունես՝ Հիսուսի հավատքը։

— Մայրիկ, ես կարող եմ Ղուրան ուսումնասիրել և շարունակել Հիսուսին սիրել։

— Ոչ,– պատասխանեց Մարոն հաստատակամորեն։– Դրանից քո գլխում ամեն ինչ կխառնվի։ Լավ է, որ ընկերություն ես անում Ռըզա բեյի երեխաների հետ, որ թուրքերեն ես սովորել, բայց չպետք է մոռանաս, որ դու հայ ես։ Այսօր ստիպված ենք ապրել այնպես, ինչպես իրենք են ապրում, սակայն կգա օրը, երբ մեր ընտանիքը կվերամիավորվի, և մենք կրկին կապրենք ըստ մեր ավանդույթների, մեր հավատքով և մեր լեզվով։

Թովմասը լրջացավ։ Նա գլխով էր անում մոր յուրաքանչյուր խոսքին։

— Քո հավատքը քո ժառանգության մասն է կազմում։ Դա հորդ, տատիդ, կնքահորդ, հորդ հոր, որի անունը կրում ես, հավատքն է։ Յուրաքանչյուր անգամ, երբ աղոթում ես, դու ասում ես այն խոսքերը, որոնք նրանք ասել են հազար անգամ, և ստացվում է այնպես, կարծես նրանք աղոթեն քո ձայնով։ Դու հիշո՞ւմ ես այն աղոթքները, որ քեզ սովորեցնում էր քո կնքահայր Արմենը։

Այդ անունների հիշատակության պես Թովմասը թուքը դժվարությամբ կուլ տվեց և ջանք գործադրեց արցունքները զսպելու։ Դե, իհարկե՝, ինքը հիշում էր։ Նա ջանում էր չմտածել Ազնիվ խանումի, Արմենի և Արաքսիի մասին, մոռանալ տեղահանվածների շարասյունը, սպանված երեխային վանքի բակում, քարանձավը, և եթե նրան հաջողվում էր, ապա նա գիտեր, որ այդ հիշողությունները հեռու չեն, իր սրտում են։

Հուզված ձայնով նա սկսեց արտասանել.

— Հա՛յր մեր, որ երկնքում ես...

Մարոն նրան միացավ, և նրանք մրմնջացին Տերունական աղոթքը։ Նրանք վերջացնում էին աղոթել, երբ եկավ Այլան մեկ այլ աղախնի՝ գանգուր մազերով մի երեսուն տարեկան կնոջ հետ, որը նույնպես սկուտեղ էր բերում։ Նրանք ուտելիքը դրեցին լուսամատի մոտ գտնվող ցածր սեղանի վրա, հետո աղախինը հեռացավ։

— Դու մեզ կմիանա՞ս, Վարդուհի,— ասաց Մարոն հայերեն։— Այսօր տոն է՝ հունվարի 5-ը։

Վարդուհին, որը տեսել էր այդ ամսաթիվը Մարոյի նամակում, շփոթվեց։ Նա իրեն մեղավոր էր զգում և մտովի երդվում էր այլևս երբեք չդավաճանել իրեն մայրաբար վերաբերվող այս կնոջը և նրա գաղտնիքները պահել։ Նրանք նստեցին սեղանի շուրջը, գետնին։

Թովմասը հետաքրքրվեց.

— Ի՞նչ տոն, մայրիկ։

— Այսօր Ծննդյան տոնի նախօրեն է։

— Ծնո՞ւնդ...— կրկնեց երեխան չհավատալով, որի համար այդ բառը կախարդական հնչեղության ուներ։

— Հիշիր նախորդ տարվա Ամանորը։

Թովմասը հիշում էր այն նվերները, որ ինքը ստացել էր դեկտեմբերի երեսունմեկին, սակայն Ծննդյան տոնի հիշողությունն ավելի աղոտ էր և գլխում խառնվում էր մյուս եկեղեցական տոների հետ։ Նրա անվստահությունը ակնհայտ էր։

— Իսկ դո՞ւ, Վարդուհի, դու հիշո՞ւմ ես։

— Այո,— մրմնջաց աղախինը խուլ ձայնով։

Նա տեսնում էր իր ծնողներին, քույրերին, եղբայրներին, հորեղբայրներին, նրանց կանանց և երեխաներին, որ հավաքվել էին նախորդ տարի Ամանորը ուրախ տոնելու համար։ Ավելի քան քառասուն հոգի էին, իրար գլխի հավաքված իր ծնողների տանը, որը կանգնած էր գյուղի եկեղեցու կողքին։ Այսօր ողջ էր մնացել միայն ինքը։

— Երբ փոքր էի,— պատմում էր Մարոն,— Ամանորի նախօրեն ինձ շատ երկար էր թվում, քանի որ ողջ օրը պետք էր ծոմ պահել երեկոյան անվերջանալի պատարագի ընթացքում հաղորդվելու համար։ Անցյալ տարի, Թովմաս, դու քնել էիր պատարագի ժամանակ։

— Այս տարի ես ավելի մեծ եմ։ Արթուն կմնայի։

— Անկասկած։ Եվ ծոմ կպահեիր մեծի պես, և հայրդ շատ հպարտ կլիներ։

Մարոն հոգոցը զսպեց և շարունակեց ոգեկոչել իր մանկության հիշողությունները։

— Պատարագից հետո մենք գնում էինք պապիս տուն, ուր ճաշկերույթի պատրաստություն էին տեսնում։ Նա ցածրահասակ մարդ էր, աչքերը շրջապատող կնճիռներից այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ նա միշտ ծիծաղում էր։ Մենք, իմ եղբայրների ու քույրերի հետ, մոմեր պահած շրջում էինք հարևանների տները ու երգում էինք։

— Ես էլ եմ այդպես արել, բացականչեց Վարդուհին, որը թաքուն հայացք գցեց դռանը և սկսեց երգել. «Հիսուս ծնավ ու հայտնեցավ, ձեզ և մեզ մեծ ավետիս...»։ Հետո մենք ծեծում էինք մարդկանց դռները, որոնք մեզ մանր դրամ, միրգ ու նվերներ էին տալիս։

— Ճիշտ է,— հաստատեց Մարոն։

— Դա երևի զվարճալի էր,— ասաց Թովմասը,— որն ափսոսում էր, որ ինքն այդ փորձը չուներ։

— Մենք անուշ ապուր էինք ուտում Ամանորին,— ասաց Վարդուհին երազկոտ տեսքով։

— Քաղցր ապո՞ւր,— զարմացավ Թովմասը։— Ի՞նչ է դա։

— Ալրից ու չրեղենից պատրաստված ուտեստ է,— պատասխանեց Մարոն։— Տատդ եփում էր ամեն տարի, և դու շատ էիր սիրում։

Թովմասը կարծես թե ազդվեց, որ մոռացել էր։ Մարոն սկսեց պատմել երկու երեխաներին, որոնք նրան լսում էին շունչները պահած, մսուրքում Քրիստոսի ծնվելու պատմությունը։ Նրանք երեքն էլ կռացել էին սեղանի վրա և նման էին դավադիրների։ Հետո Մարոն նրանց մի շարական սովորեցրեց, որը նա երգեց ցածրաձայն՝ ձեռքերը խաչած և գլուխն օրորելով իրեն չափ տալու համար։

Խորհուրդ մեծ և սքանչելի

Որ այսօր հայտնեցավ

Հովիվքն երգեն ինչ հրեշտակ

Տան ավետիս աշխարհի

Ծնավ նոր արքան

Ի Բեթղեհեմ քաղաքի։

Թովմասն ու Վարդուհին, խորասուզվելով Մարոյի երգեցողության մեջ, մոռացել էին քաղցրավենիքի մասին։ Թեյն էլ վաղուց սառել էր։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 11

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 12:27-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 10 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 12 ►

Զմեռային առաջին ձնաբուքը ծածկեց Կապադովկիան, և Արուսյակի տունը տնքում էր քամու հարվածներից: Լուսամուտների ապակիներին փոխարինող ձիթած թուղթը թրթռում էր, ինչպես դափի թաղանթը պարուհու մատների տակ: Երբեմն թվում էր, թե գազանների ոռնոց է հասնում: Դա քամին էր, որը բախվում էր Ուրգուպի վրա վեր խոյացող ժայռերի ծերպերին: Կեսօրից ի վեր ձյունը պտտվում ու կիտվում էր գետնին՝ ձնակույտեր գոյացնելով խոշընդոտների հանդիպելիս: Մութն ընկավ աննկատ և սովորականից ավելի շուտ:

Հողե հատակի մեջ փորված օջախում կարմրին էին տալիս շիկացած ածուխները, որոնցից ժամանակ առ ժամանակ դուրս էր պրծնում որքան փոքր, նույնքան վաղանցիկ կրակ: Թոնիրը շրջապատող ջերմության ու լույսի մեջ, խալու վրա նստած Վարդանն ու Արուսյակը կենտրոնացած անուշ ապուր էին ատում: Արուսյակը աչքերն ընդգծել էր սուրմայով և ծոծրակին էր հավաքել իր կապտին տվող սև մազերը: Վարդանը դեղնավուն գործված բաճկոնակ էր հագել, որի վրա փռվել էր նրա երկար մորուքը: Երիտասարդ կինը ավանդական ճաշատեսակներ էր պատրաստել գառի, թռչնի մսից և բրնձից Ամանորն ուրախ տոնելու համար, սակայն տոնը յուրաքանչյուրի հոգում հիշողություններ էր արթնացնում, որոնք կարոտախտ էին առաջացնում և լռություն էին պարտադրում:

Արուսյակն իր ընտանիքի լուսանկարը դրել էր սնդուկի վրա՝ խաչի ու Աստվածամոր պատկերի միջև, և հաճախակի նրա հայացքը կանգ էր առնում դրա վրա: Նա պարզորոշ տեսնում էր սարի լանջին ծվարած գյուղը, ուր ծնվել էր և որտեղից հեռվից հեռու երևում էին Սև ծովի կապտա—մոխրագույն ջրերը: Այդ պահին քամու ոռնոցի մեջ երիտասարդ կինը լսում էր հոր ցածր, մոր երգեցիկ ձայները ու կրտսեր եղբայրների և քույրերի սուր ճիչերն ու ծիծաղը: Հետո այդ ամենը տարրալուծվում էր մռայլ ողբի մեջ, և Արուսյակը պատկերացնում էր մերձավորների տառապանքները տարագրության ճանապարհին:

Լուսանկարին երիտասարդ կնոջ գցած հայացքների հաճախականությունից և նրա տխուր տեսքից Վարդանը կռահեց նրա մտքերը:

— Ինչո՞ւ ես մտածում վատթարագույնի մասին,— ասաց նա ջերմորեն հպվելով նրա ձեռքին։— Միգուցե նրանք փախել են ծովով կամ էլ պատսպարվել են սարերում։

Արուսյակը հուզված նայեց Վարդանին և հուսահատ պատասխանեց.

— Ոչ... Ես իմացել եմ, որ գյուղը գետնին է հավասարեցվել, տղամարդիկ մորթվել են, իսկ մնացածներին քշել են։

Նա կապ չէր պահպանել իր ընտանիքի հետ ավելի քան հինգ տարի։ Նրա ծնողները դեմ էին Յաշար անունով մահմեդականի հետ նրա ամուսնությանը, որը դարբնի աշակերտ էր։ Զենթարկվելով ծնողների արգելքին և հոր կողմից անիծվելով՝ Արուսյակը փախել էր իր սիրեցյալի հետ, որի հետ ամուսնացել էր Ուրգուպում հաստատվելուց հետո։ Ավելի հարմար էր, որ նա մահմեդական անուն կրեր և մահմեդական համարվեր, սակայն շարունակում էր Յաշարի համաձայնությամբ ծածուկ քրիստոնեություն դավանել։

— Դու չպետք է քեզ մեղավոր զգաս,— պնդում էր Վարդանը։– Դու ոչնչի չէիր կարող խոչընդոտել։

— Եթե նրանց հետ լինեի, կօգնեի և հենարան կլինեի։

— Իզուր ես քեզ տանջում, քո ներկայությունն այնտեղ ոչինչ չէր փոխի։

Վերցնելով լուսանկարը՝ Արուսյակը կարոտով զննեց այն և շշնջաց.

— Հայրս հանդարտ և աշխատասեր մարդ էր ու միշտ մտահոգ էր։ Մայրս, հակառակը, հավատում էր Աստծու ողորմածությանը։ Նա մեզ փայփայում և երես էր տալիս։ Նայիր այս երեխաներին, Վարդան, նրանց ողջ կյանքն առջևում էր։

— Նրանք անկասկած ողջ են։

Կինը գլուխը թափ տվեց, և նրա ձայնը կարծրացավ.

— Ես գերադասում եմ նրանց մեռած համարել։ Գոնե Տիրոջ մոտ կլինեն և այլևս չեն տառապի։

Նայելով ուղիղ Վարդանի աչքերի մեջ՝ նա ավելացրեց.

— Ավելի լավ է համակերպվել։

Վարդանը գիտեր, որ նա ակնարկում էր ընտանիքը փնտրելու իր ծրագրիրը, որը նա խելահեղ էր համարում։ Վարդանը կարող էր փաստարկել, ասելով, որ ինքը գիտեր, որ իր կինն ու որդին չէին մահացել, սակայն այս պարագայում դա նրան անպատեհ թվաց։ Կինը նորից սկսեց խոսել լացակումած ձայնով.

—— Զես պատկերացնում, թե ինչ ապրումներ եմ ունեցել, երբ իշխանությունները սկսեցին տեղահանել Ուրգուպի հայերին։ Ես ինձ Հուդայի դերում զգացի՝ վախկոտ և դավաճան։ Նույնիսկ վախեցա, որ գյուղում որևէ մեկը կհիշեր, որ ես մահմեդական չէի և ինձ կմատներ։

Ինձ թվում է, որ ես կժխտեի իմ հայ լինելը։

Ամոթից նա դեմքը ափերով ծածկեց։ Վարդանը փորձեց նրան արդարացնել.

— Անիմաստ կլիներ բոլորի հետ ճանապարհ ընկնելը, եթե կարող էիր խուսափել դրանից։ Անիմաստ և միգուցե ինքնասպանությանը հավասար Աստծու աչքերում։

— Դու իսկապես այդպե՞ս ես մտածում։

— Այո, եթե գնայիր, ես հիմա մեռած կլինեի։ Մյուսները՝ նույնպես։

Արուսյակը երբեք հարցն այդ տեսանկյունից չէր դիտարկել։ Մի քիչ հանդարտվելով՝ նա ձեռքերը դեմքից հեռացրեց։

— Քանի՞ հայրենակցի ես օգնության ձեռք մեկնել,– հարցրեց Վարդանը։

Ուսերը թոթվելով՝ նա հասկացրեց, որ չգիտեր, և ջանաց իր արժանիքները նվազեցնել։

— Դա այնքան քիչ է…

Սակայն ամռան և աշնան ընթացքում նա Գորեմեի հովտի ստորգետնյա հին եկեղեցիներում թաքցրել էր տասնյակ հայերի, որոնց կերակրել, մխիթարել կամ խնամել էր Քերիմի օգնությամբ։ Երբեմն դրանք փախուստի դիմած ապստամբներ կամ կամավորներ էին, իսկ հիմնականում ջարդերից և տեղահանություններից պատահաբար մազապուրծ եղած անմեղ էակներ։ Կանայք և, հատկապես, երեխաներ, որոնց նա հետագայում հանձնում էր հունական ընտանիքներին կամ ամերիկացի մի միսիոների։ Վերջինիս միջոցով նա Մերձավոր Արևելքի համար հանգանակված գումարներ էր ստանում Ամերիկյան օգնության կոմիտեից և հայկական համայնքներից, որոնք կային աշխարհի գրեթե բոլոր երկրներում։ Քանի որ ձմռանը ճանապարհները փակվել էին, ապա Արուսյակի բարեգործական գործունեությունը նվազագույնի էր հասել։

Քամուց երդիկից ձյուն լցվեց սենյակը։ Ածուխները թեժացան, ճրագի լույսը տատանվեց, և Արուսյակի մեջքով սառը օդի հոսանք անցավ, նա չկարողացավ դողը զսպել։ Նա մի բուռ փայտածուխ լցրեց օջախը։

— Թեյ պատրաստե՞մ։

— Ջեմ ուզում, շնորհակալություն,– պատասխանեց Վարդանը։

Կինը ցանկություն զգաց նրան մոտենալու, սակայն չհամարձակվեց։ Նա կուզեր, որ Վարդանը նորից նկարագրեր Կոստանդնուպոլիսը կամ պատմեր Սվասի իր կյանքի, իր փայտե մեծ սպիտակ տան մասին, որը մեծ ճաշասենյակ ուներ և գրադարան։ Դաշնամու՞ր։ Ջիե՛ր։ Դա իր համար անծանոթ աշխարհ էր, որի նկարագրությունը բոցավառում էր նրա երևակայությունը։ Սակայն այս պահին Վարդանը ցանկություն չուներ անցյալին դառնալու։ Նրա համար կարևոր էր ապագան և հնարավոր հանդիպումը Մարոյի ու Թովմասի հետ։

Նա ձեռքը մեկնեց ուդը վերցնելու համար։ Հին գործիք էր, որը Քերիմը հայտնաբերել էր հնավաճառի մոտ և որը Վարդանը համբերատար վերանորոգել էր։ Նա փորձեց հիշել որևէ հայկական ազգային երգ, որը կաշխուժացներ մթնոլորտը, սակայն նրա միտքն եկան միայն կարոտախտով լի երգեր։ Մի մեղեդի համառորեն հրաժարվում էր հեռանալ իր մտքից։

— Գիտե՞ս, թե ինչ է կռունկը,– հարցրեց նա՝ ուդը լարելով։

— Թռչնի տեսակ է,– պատասխանեց Արուսյակը զարմանալով այդ հարցից։

— Գեղեցիկ, բարձրասրուն է՝ երկար պարանոցով։ Չվելու ժամանակ շատ բարձր է թռչում՝ սեպ կազմելով։ Ձմեռ ավետող նրա խռպոտ կանչը մեզ շատ տխուր է թվում, իսկ երբ գարնանը վերադառնում է՝ նրա կանչի մեջ մարդիկ ուրախ երանգներ են լսում։

Վարդանը հպվեց լարերին և երգեց երգը, որը նա գիտեր վաղ մանկությունից և որի խոսքերն իմաստավորվեցին նրա համար միայն այդ օրը։

Միալար մեղեդիով ուղեկցվող տներում նույն թեման էր կրկնվում, և տխուր երգը հույսով էր համակված, որ թռչունը չուի ժամանակ լուրեր կբերեր հայրենի երկրից։ Արուսյակը, արցունքն աչքերին, քանի որ դա իր մոր սիրած երգն էր, նայում էր երազկոտ տեսքով նվազող Վարդանին, և նա հասկացավ, որ նրա միտքը դեգերում է Սիրիական անապատից հյուսիս ընկած այն երկրում, ուր հույս ուներ գտնել կնոջն ու որդուն։ Խելահեղ գաղափար, որը նրան թույլ չէր տալիս համակերպվելու իրականության հետ և հարմարվելու նրան, ինչ կյանքը պարգևում էր։ Արուսյակն իրեն լքված զգաց, և դա նրան տառապանք պատճառեց։ Տունը նրան ցուրտ թվաց, քամու աղմուկը մի պահ խլացրեց երգչի ձայնը։

Արդյոք ե՞րբ կբացվեին Վարդանի աչքերը, և նա կնկատեր, որ ինքը սիրահարված է նրան։ Մի՞թե նա չգիտեր դրա մասին։ Միգուցե նա չէ՞ր հավանում իրեն։ Մի պահ ուզեց բղավել, որ Կոստանդնուպոլիսն ու Սվասը անցյալում էին, որ ինքն այլևս դեղագործ չէր, այլ հետապնդված մարդ, որին սազում էր միայն կավաշեն տան անհայտությունը, որ նա պետք է մոռանար, թե ով էր եղել, որ չպետք է ինքնախաբեությամբ զբաղվեր իր ապագայի վերաբերյալ և բավարարվեր նոր վիճակով։

Նա իսկույն իրեն մեղավոր զգաց նման մտքերի համար։ Այն ջերմությունը, որ զգում էր ողբերգական ճակատագրով այդ գեղեցիկ տղամարդու նկատմամբ, նրան հոգատարությամբ և սիրով շրջապատելու ցանկությունը վերակենդանացան իր հոգում և ուղեկցվեցին նրան պատկանելու տենչով, և այդ խառնաշփոթ զգացմունքներից Արուսյակը շփոթվեց։ Նա իրեն միաժամանակ զգում էր որպես փոքրիկ աղջիկ և ձևավորված կին և չգիտեր, թե ինչպես իրեն պահեր։

Երբ Վարդանը վայր էր դնում ուդը, Արուսյակն անձնատուր եղավ

հանկարծակի մղմանը և, մոտենալով Վարդանին, փարվեց նրա կրծքին ու անշարժացավ։ Հանկարծակիի եկած Վարդանը մի քանի վայրկյան հապաղեց և գրկեց նրա ուսերը։ Արուսյակը դողում էր ողջ մարմնով՝ չնայած օջախը ջերմություն էր տարածում։ Ըստ երևույթին Արուսյակը, ինպես և ինքը, ազդվել էր երգից, որը միայնության և աշխարհից կտրված լինելու զգացում էր ներշնչում և սրվում շուրջը մոլեգնող փոթորիկից։ Հրաժարվելով մինչ այդ ցուցաբերած զսպությունից՝ Վարդանը գրկեց նրան հանգստացնելու համար։ Ինքը նույնպես հպման, մարդկային ջերմության, սիրո կարիք ուներ։ Արուսյակի շնչառությունը ընդհատուն դարձավ և նա լարված դեմքը շրջեց դեպի Վարդանը, իսկ աչքերի մեջ աղերս կար։ Վարդանը հանկարծ հասկացավ Արուսյակին իր գիրկը նետած զգացմունքի էությունը, զգաց տենչի չափը, որը նա չէր էլ փորձում թաքցնել և գլխապտույտ զգաց։ Նրանք գետնին տապալվեցին՝ ընկղմվելով կրքի հորձանուտը։

Արուսյակը արթնացավ լուսաբացին սառած և խոնավ տանը։ Նա անկողնում երկար մնաց՝ Վարդանի տաք մարմնին փարված։ Հետո դժկամությամբ վեր կացավ, քանի որ լսում էր գոմից եկող անասունի աղիողորմ կանչը։ Ջանալով չարթնացնել տղամարդուն, նրան ծածկեց այծի մորթով, հագնվեց ու կրակ վառեց։ Նա անասելի երջանիկ էր։ Թեթևություն էր զգում՝ չնայած նրան, որ կարծես մարմինը լցված լիներ։

Շլացած՝ նա անշարժացավ տան շեմին։ Ձյունը դադարել էր, և ամեն ինչ սպիտակ էր։ Աշխարհը կարծես նորացած լիներ, ինչպես սկիզբ, և Արուսյակը ի դեմս այդ սպիտակ աշխարհի տեսավ իր համար սկսվող նոր կյանքի պատկերը։

* * *

Երբ Վարդանն ուզեց Արուսյակի հետ խոսել Ամանորի գիշերը տեղի ունեցածի մասին, նա խնդրեց այդ բանը չանել, վախենալով, որ նա ափսոսանք կարտահայտեր՝ կաշխատեր նվազեցնել այդ միջադեպի զգացմունքային նշանակությունը և հետևանքները։ Նա կասեր, որ ինքն ամուսնացած էր և սիրում էր կնոջը, որ ինքը պետք է հեռանար, որ Արուսյակը չպետք է պատրանքներ փայփայեր, մի խոսքով՝ այն ամենը, ինչ Արուսյակը չէր ուզում լսել, իսկ հետո կփորձեր վերականգնել այն իրավիճակը, որը գոյություն ուներ մինչ այդ գիշերը։ Արուսյակը համաձայն էր ցանկացած պայմանի, սակայն ոչ դրան։ Պատրանքնե՞ր։ Արուսյակը կբավարարվեր դրանցով։ Յուրաքանչյուր օրը բերում էր ուրախությունների իր բաժինը, յուրաքանչյուր գիշեր՝ կրքոտ սեր, և նա ավելին չէր պահանջում՝ խուսափելով մտածել ապագայի մասին։

— Ոչինչ մի ասա,— մրմնջաց նա՝ ձեռքը դնելով Վարդանի շուրթերին։– Երբ գա ժամանակը, դու կանես այն, ինչ պետք է անես, և ես չեմ փորձի քեզ հետ պահել։ Ես քեզնից ոչինչ չեմ սպասում։

Դա ճիշտ չէր։ Սակայն Արուսյակը հույս ուներ, որ այդ պահը երբեք չէր

գալու։ Յուրաքանչյուր օրը նրանց ավելի սերտ կկապեր, և Վարդանը կմոռանար Մալաթիա վերադառնալու իր մտադրությունը։

Արուսյակի այդ խոսքերի հետևանքով նրանց միջև լռություն հաստատվեց իրենց զգացմունքային դաշտում, և այդ լռությունը պարարտ հող հանդիսացավ երիտասարդ կնոջ ամենագեղեցիկ Երազանքների համար։ Նա երբեք չէր արտասանում «ես սիրում եմ քեզ» բառերը՝ վախենալով Վարդանի բացասական արձագանքից, սակայն նրա յուրաքանչյուր հայացքը, յուրաքանչյուր շարժումը սիրո խոստովանանք էր։ Եվ Վարդանի ուշադրությունն իր նկատմամբ, ջերմության ամենաչնչին արտահայտությունը նա մեկնաբանում էր այդ տեսակետից։

Հունվարի ցրտերը նրանց ստիպեցին տանը փակվել և ժամերն անցնում էին հանդարտ ու խաղաղ։ Արուսյակը, ծալապատիկ նստած, աշխատում էր խալու դազգահի մոտ։ Վարդանը, նրանից ոչ հեռու նստած, ուդ էր նվագում և նայում էր, թե ինչպես էին Արուսյակի մատները ճարպկորեն հանգույցներ կապում գորգի վրա։ Նա կազդուրվել էր, և անգործությանը նրան հոգեպես ճնշում էր։ Նա անհամբերությամբ սպասում էր ձնհալին և ճանապարհների բացվելուն։ Վարդանը կանխավ տանջվում էր այն ցավի և հիասթափության համար, որ ինքը պատճառելու էր այդ կնոջը, որը դժբախտություն էր ունեցել սիրահարվելու օտար անցորդի։ Նա ստիպված էր խոստովանել, որ ինքն էլ էր կապվել այդ կնոջը, և նրան լքելն իրեն ևս ցավ էր պատճառելու։

Վարդանն ուդ է նվագում, ինքը գորգ է գործում, օջախի վրա եռում է ապուրը, իսկ դուրսը փչում է քամին, սա էր Արուսյակի համար կատարյալ երջանկության պատկերը, և շաբաթների ընթացքում կինն իրեն համոզել իր երջանկության խկության մեջ, և այդ բանում նրան օգնում էր Քերիմի պահվածքը, որը նրանց որպես զույգի էր վերաբերվում։ Ամանորից հետո ուսուցիչը նկատել էր Արուսյակի պահվածքում տեղի ունեցած արմատական փոփոխությունը և անմիջապես հասկացել էր, թե ինչն էր պատճառը։ Նա երջանիկ էր իրադարձությունների նման զարգացման համար, հատկապես, որ շատ էր հարգում Վարդանին։ Քանի որ սիրահարները չէին խոսում իրենց կապի մասին, ապա Քերիմն էլ իր հերթին զսպություն էր ցուցաբերում։

Ձյուն լիներ, թե մերկասառույց, սառնամանիք, թե կաթոցք, որից ճանապարհներն անանցանելի էին դառնում, ցանկացած եղանակի ուսուցիչը ամեն օր գալիս էր իր բարեկամի նվագը լսելու և նրա հետ կարդալու և քննարկելու այն հազվագյուտ կենտրոնական թերթերը, որ կարողանում էր ճարել։ Մի կողմ քաշվելով՝ Արուսյակը կամ գորգ էր գործում, կամ ճաշ էր պատրաստում և հիացմունքով հետևում էր նրանց վեճին, նա հպարտությամբ էր լցվում իր «սիրեցյալի» գիտելիքներից և բանավիճելու արվեստից։

Փետրվարի կեսն էր, կեսօր։ Վարդանը, բրդյա վերարկուն ուսերին, թիկնել էր այգու ցանկապատին և հսկում էր ոչխարներին ու այծերին, որոնք արածում էին դեզի հիմքի մոտ, երբ հայտնվեց Քերիմը։ Կուրտը

նրան դիմավորեց ուրախ հաչոցով։ Նա գլխին մորթե գլխարկ էր դրել, որն իջեցրել էր ականջների վրա, և փաթաթվել էր մի վերարկուի մեջ, որը տձևացել էր տակից հագած բազմաթիվ հագուստների պատճառով։ Նրա ուրվագիծը արջ էր հիշեցնում։ Տանը չհասած՝ Քերիմը ուրախ բղավեց.

— Հովիվ ես ձևանում։

Նա աչքերն էր ճպճպացնում ձյան արտացոլած արևի ճառագայթներից և գրգռված էր երևում։ Վարդանը նրան գրկեց և կատակեց.

— Ինչպե՞ս ես կարողանում քայլել այսքան հագուստի մեջ։

— Ես մրսկան եմ,– արդարացավ Քերիմը՝ կարմրած քիթը շփելով։

Նա թփթփացրեց գրպանից դուրս ցցված տպագիր թերթիկներին և ոգևորված ավելացրեց.

— Կեսարիայից եմ գալիս և թերթեր եմ բերել։ Այստեղ հայերի մասին է գրված։

— Ներս գնանք,– ասաց Վարդանը հետաքրքրվելով։– Կո՛ւրտ։ Հսկի՛ր սրանց։

Շունը գնաց դեպի դեզը, իսկ Վարդանը Քերիմին տուն ուղեկցեց։ Քանի Արուսյակը սուրճ էր պատրաստում, տղամարդիկ գորգին նստեցին և Քերիմը բացեց թերթերից մեկը, որը նա աչքի անցկացրեց։

— Շարունակում են մեկնաբանել կայսրության տարած հաղթանակը Գալիպոլիում,— հայտնեց նա շրջելով առաջին էջը։— Ասում են նաև, որ ռուսական ճակատում իրավիճակը կայուն է։

— Զարմանալու բան չկա։ Եթե հաշվի առնենք այնտեղ տեղացած ձյունը, ապա դժվար է զորաշարժեր անել։ Հայերի վերաբերյալ ի՞նչ կա։

— Դա հետո է,– պատասխանեց Քերիմը՝ ուշադիր ուսումնասիրելով յուրաքանչյուր էջը։ Եվրոպայում գերմանացիներն անդադար հրետակոծում են ֆրանս—անգլիական դիրքերը, և շուտով հարձակում է սպասվում։

Վարդանը հազիվ էր դիմադրում նրա ձեռքից թերթը խլելու ցանկությանը։ Զգալով նրա անհամբերությունը՝ Արուսյակը Վարդանին սուրճ տվեց և ժպիտով հասկացրեց, որ համբերի, քանի որ Քերիմը շատ էր սիրում բարձրաձայն կարդալ։ Վերջապես ուսուցիչը հասավ այն հոդվածին, որը նա հիշատակել էր, և կոկորդը մաքրեց.

— «Արտասահմանյան մամուլը, հատկապես մեր հակառակորդների երկրներում, ձայնակցում է հայերի փորձերին՝ վարկաբեկելու Օսմանյան կայսրության կառավարությունը։ Պատերազմի թատերաբեմից քաղաքացիական անձանց տեղափոխության համար անհրաժեշտ միջոցառումներն այդ մարդկանց կողմից ներկայացվում են որպես ճնշումներ իրենց ազգի դեմ։ Սակայն չեզոք երկրների

ներկայացուցիչները, որոնք ճանապարհորդում են Անատոլիայում, կարող են վկայել կառավարության մարդասիրական հոգածության մասին, որ ցուցաբերվում է այդ տեղափոխությունների ընթացքում»։

— Մարդասիրակա՜ն,– հոխորտաց Վարդանը։– Լկտիության պակաս չեն զգում։

Քերիմը տխուր տեսքով համաձայնեց և մի կում սուրճ խմեց։

— Քարոզչություն,– հառաչեց նա։

— Սո՛ւտ,– վիրավորված ասաց Արուսյակը, որն այնքան էլ լավ չգիտեր «քարոզչություն» բառի իմաստը։— Էլ ի՞նչ են ստում։

Քերիմը շարունակեց կարդալ.

— «Կատարելով ռուսների ցանկությունը՝ Փարիզում և Լոնդոնում, նույնիսկ Վաշինգտոնում հայերը դավեր են նյութում անկախ Հայաստանի գաղափարը առաջ քաշելու համար, որը կստեղծվի կայսրության տարածքների հաշվին։ Նրանք պահանջում են ոչ ավելի, ոչ պակաս Անատոլիայի վեց՝ Սվասի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Քիլիսի և Վանի վիլայեթները, ուր մեծամասնություն են կազմում թրքալեզու և մահմեդական օսմանյան քաղաքացիներ...»։

Արուսյակն ընդհատեց Քերիմին Վարդանին հարցնելու համար.

— Ճի՞շտ է, որ թուրքերը մեծամասնություն են կազմում արևելքում։

— Ոչ։ Այդ հողը անհիշելի ժամանակներից հայկական է։ Սակայն եթե ջարդերը շարունակվեն, հայերն այնտեղ փոքրամասնության էլ չեն կազմի։

Նա նշան արեց Քերիմին շարունակելու։

— «Նրանց ցնորական ծրագրով անկախ Հայաստանն իր մեջ է ներառում նաև Կիլիկիայի մի մասը (բերրի գյուղատնտեսական հողեր), որպեսզի ելք ունենան դեպի Միջերկրական ծովը։ Իրենց նպատակին հասնելու համար այդ հայերը Ռուսաստանի հպատակները, որոնց ընդհատակյա կազմակերպությունները ապստամբություններ են հրահրում օսմանյան հպատակ իրենց դավանակիցների շրջանում, տարածում են ստահոդ լուրեր քրիստոնյաների այսպես կոչված ջարդերի մասին։ Այս ամենի հետևում հարկավոր է տեսնել նոր տարածքներ գրավելու ցանկություն ունեցող Ռուսաստանի ձեռքը։

Ի դեպ, մեր գաղտնի ծառայությունները հաղորդում են մեր հակառակորդ տերությունների միջև ընթացող բանակցությունների մասին, որոնց ընթացքում ծրագիր է մշակվում պատերազմից հետո կայսրության տրոհման մասին։ Մեծ Բրիտանիան հավակնություններ ունի Միջագետքի և Պաղեստինի նկատմամբ, Ֆրանսիան՝ Կիլիկիայի և Սիրիայի, իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այն հավակնում է Անատոլիայի զգալի մասին և Բոսֆորի նեղուցին, հետևաբար Կոստանդնուպոլսին, որը նրան կանցնի բաժանման ժամանակ։

Զավեշտական է, որ եվրոպական իմպերիալիզմի այդ ախորժակը ի հայտ է գալիս հենց այն պահին, երբ Օսմանյան կայսրությունը և նրա դաշնակիցներ Գերմանիան ու Ավստրիան հաղթանակից հաղթանակ են գնում»։

Քերիմը վայր դրեց թերթը ու փոքր կումերով սուրճ խմեց։ Վարդանը շոյում էր երկար մորուքը և մտածում էր այս հոդվածի ենթատեքստի մասին։

— Ինչո՞ւ ես ժպտում,– հարցրեց Արուսյակը՝ զարմանալով նրա ուրախության վրա։

— Այսպիսի հոդվածի հայտնվելը մայրաքաղաքի թերթում վկայում է, որ ջարդերի մասին բազմաթիվ տեղեկություններ են թափանցել արտասահման։ Դաժանություններին վերջ տալու միակ միջոցը միջազգային հանրությանը տեղյակ պահելն է։ Կամ դա, կամ էլ պատերազմի ավարտը Բարձր Դռան պարտությամբ։

Քերիմը բարկացած էր թվում։ Ճիշտ է, նա ատում էր Իթթիհատի ղեկավարներին և քննադատական սուր դիրքորոշում ուներ կառավարության նկատմամբ, սակայն չէր ցանկանում դաշնակիցների հաղթանակը իր նախընտրած երկրի նկատմամբ։ Նա հայտարարեց.

— Պետք է հուսալ, որ զինադադար կկնքվի ճամբարներից մեկի անկումից առաջ։

— Հույս մի փայփայիր,– պատասխանեց Վարդանը։– Պատերազմը երկար է տևելու։

Նա վերցրեց Արուսյակի մեկնած քարտեզը և բացեց։ Մատը սահեցրեց իր և Քերիմի քաշած կարմիր գծի վրայով, որով նշել էին կողմերի դիրքերը.

— Իպրից մինչև Մուլհուզ ֆրանսիացիներն ու գերմանացիները հիմնավոր ամրացրել են իրենց դիրքերը։ Ցանկացած զորաշարժ մեծ զոհերի գնով կարվի, և վճռական փոփոխության չի հանգեցնի։ Ըստ վերջին նորությունների՝ և՛ ռուսական, և՛ սերբական ճակատները կայունացել են։ Փոփոխություն չկա նաև Միջագետքում և Սուեզի ջրանցքում։

Քերիմը խորը հոգոց հանեց և ծխախոտի քսակը տվեց Վարդանին, հետո աքցանով շիկացած ածուխ վերցրեց և ծխախոտը վառեց։ Նրա հայացքում միամտության և շատ ապրած ու շատ տառապած մարդու պայծառատեսության տարօրինակ համադրություն կար։ Նա ձեռքով հարդարեց իր մազերը։

— Ձեմ պատկերացնում կայսրության տրոհումը,– ասաց նա լուրջ ձայնով։

— Անխուսափելի է։ Վերջին երեսուն տարիների ընթացքում կայսրությունը բավական տարածքներ է կորցրել, և այդ գործընթացը կշարունակվի անկախ պատերազմի ելքից։ Հիշիր թեկուզ արաբներին,

որոնց ընդվզումն արդեն տարիներ է տևում։

Քերիմը գլխի շարժումով համաձայնեց։ Վարդանը շարունակեց.

— Անխուսափելի է և լավ։ Հասկացիր, Քերիմ, այլապես Անատոլիայի առաջընթացի քո գեղեցիկ ծրագրերը չեն իրականանա։

— Սուլթանը կարող էր հեռացնել Իթթիհատի ներկայացուցիչներին, փոխարենը նոր կառավարություն նշանակել, որն ավելի չափավոր և պակաս ազգայնամոլ կլիներ։

— Մեհմեդ V-ը խամաճիկ է։ Նրան գահ են բարձրացրել երիտթուրքերը և նրան վերահսկում են։ Պետք է պարտության աղետը լինի կամ էլ հեղափոխություն այս երկիրը փոխելու համար։

Քերիմը մատներն ագուցեց և հոդերը ճտճտացրեց։ Նա հիշեց այն ճառերը, որ ինքն արտասանում էր Վարդանի առջև, իր ելույթները կառավարության և նրա տեղական ներկայացուցիչների անձեռնհասության դեմ, անհանդուրժողականություն քարոզող հոգևոր իշխանությունների իր քննադատությունը, միջնադարյան քաղաքական կառույցների փլուզման իր ցանկությունը։

— Երկիրը երբեք չի առաջադիմի, քանի դեռ գյուղացիները շահագործվում են,— կրկնում էր նա հաճախ։— Նրանք ոչ մի հնարավորություն չունեն իրենց վիճակը բարելավելու, քանի որ նրանց տգիտության են դատապարտում՝ հպատակության մեջ պահելու և թալանելու համար։ Հողագործության մեթոդները հնացած են, հիգիենիկ պայմանները հուսահատական են, տիրում է վախը։ Քանի որ գյուղացիները միջոցներ չունեն ածուխ գնելու, նրանք տները ջեռուցում են աթարով, այն որպես պարարտանյութ օգտագործելու փոխարեն։ Բոլոր հողերը պատկանում են էֆենդիներին, որոնք միայն իրենց շահի մասին են մտածում։ Հողի վարձակալության գումարը և հարկերը մուծելուց հետո գյուղացիները ենթարկվում են պաշտոնյաների և բանակի բռնագրավումներին, և ապրելու համար նրանց բան չի մնում։

Քերիմի կարծիքով միայն լուսավորությունը կարող էր վերացնել աղքատության այդ կախարդական շրջանը։ Կրթություն ստանալով՝ երեխաները կտարբերվեին իրենց ծնողներից, որոնք կքում էին ավանդույթների բեռի և կրոնի ճակատագրապաշտական գաղափարախոսության ներքո։

Աչքի պոչով ուսուցչին հետևելով՝ Վարդանն ասես կարդում էր նրա դեմքին արտացոլվող մտքերը։ Նա ասաց.

— Բայց կրթության շնորհիվ չէ, որ հողերը կվերաբաշխվեն։

Քերիմը վեր թռավ, կարծելով, որ բարձրաձայնել էր իր մտքերը։ Նա ցանկություն չուներ վիճաբանություն սկսելու իր սիրած թեմայի շուրջ, քանի որ զգում էր իր գաղափարների թույլ կողմը։ Ինքը պետք է սառը գլխով վերանայեր այդ ամենը։

— Հեղափոխությո՞ւն...— մրմնջաց նա ծամածռվելով։

Զգալով Քերիմի հուսահատության հասնող անհանգստությունը՝ Արուսյակը հասկացրեց Վարդանին, որ նա չշարունակեր վիճաբանությունը: Վերջինս խնամքով ծալեց քարտեզը: Շրթունքին կպած ծխախոտի թուղթը լեզվով հեռացնելուց հետո ուսուցիչը անվստահ հարցրեց.

— Ասա ինձ, Վարդան, հավատո՞ւմ ես, որ անկախ Հայաստանի ստեղծումը հնարավոր է:

Արուսյակը հետաքրքրությամբ սպասում էր Վարդանի պատասխանին, որը սկզբում խորը շունչ քաշեց.

— Ներկայիս իրավիճակում դժվար է:

Քերիմը հրաժարվեց ոսպով ապուր ուտելու Արուսյակի առաջարկությունից և գյուղ վերադարձավ մութն ընկնելուց առաջ: Վարդանը նրան ուղեկցեց գյուղի ճանապարհով, որի վրա սայլի հետքեր կային: Մայր մտնող արևը վարդագույն էր ներկել ձյունածածկ տարածքի բարձունքները, մինչդեռ ցածրադիր մասերը մանուշակագույն ստվերի մեջ էին:

Վարդանը ձեռքը դրեց ուսուցչի ուսին.

— Վախենամ, որ ես հստակ չարտահայտվեցի, և իմ խոսքերը դու կարող ես սխալ մեկնաբանեի

— Ձեմ հասկանում:

— Երբ ասացի, որ իսկական հեղափոխություն է պետք իրավիճակը փոխելու համար, չէի ուզում նվազեցնել քո լուսավորչական գործունեության նշանակությունը: Շատ կարևոր է, որ դու նրանց կարդալ, գրել և հաշվել ես սովորեցնում: Եթե հնարավոր չլինի երկիրը փոխել, գոնե մի քանի անհատի հնարավորություն կտաս բարելավելու իրենց ճակատագիրը:

Քերիմը խորամանկ ժպտաց.

— Ես ոչ մի վայրկյան չեմ կասկածել իմ առաքելության ճշմարտացիության վրա, միայն նշանակության վրա եմ կասկածել: Բայց եթե խորը մտածենք, ապա քո հեղափոխությունն ինչ-որ տեղ պետք է սկսվի, բայց և ոչ մի նախանշան չկա, որ այն քաղաքներում է սկսվելու և միայն զենքով:

— Ճի՛շտ է: Քո լուսավորչական գործունեությունը հեղափոխության սկիզբն է: Ամեն արարք նշանակություն ունի: Ա՛խ, եթե ես կարողանայի գոնե մի բան անել իմ ժողովրդի համար:

— Ի՞նչ նկատի ունես:

— Կուզենայի հնարավորություն ունենալ ճամփորդելու Անատոլիայով մեկ և հոդվածներ ուղարկելու արտասահման՝ նկարագրելով հայերի վիճակը: Իհարկե, դա չէր դադարեցնի տեղահանությունները, բայց ես գոնե իմ լուման կներդնեի, որքան էլ դա աննշան լիներ: Ինչպես դու քո

դասարանով։

— Այո,– համաձայնեց Քերիմը մտածկոտ տեսքով։

— Ես անօգտակար լինելու զգացում ունեմ, և այդ զգացումը թունավորում է կյանքս։

Պատասխանի փոխարեն ուսուցիչը գրկեց իր բարեկամին, և (նրանք բաժանվեցին։

Տուն վերադառնալուց առաջ Վարդանը մաքրեց մինչև ջրհոր տանող արահետը և դույլով ջուր հանեց ջրհորից։ Արուսյակը, որ ապուրն էր տաքացնում թոնրի վրա, նրա մտնելուն պես արագ ոտքի կանգնեց և նրան դիմավորեց գրեթե մարտական տոնով տրված հարցով.

— Դու չե՞ս հավատում անկախ Հայաստանի գոյությանը։

Երիտասարդ կնոջ այդ անսովոր վարքագիծը հետաքրքրեց Վարդանին։ Արուսյակի աչքերը վառվում էին։

— Ես այդպիսի բան չեմ ասել,— պաշտպանվեց Վարդանը՝ վերարկուն մեխից կախելով։

— Սակայն հենց նոր...

— Ես ճշտեցի ասելով՝ «այս պահին»։ Ես ամբողջ հոգով երազում եմ այդ երկրի ստեղծման մասին։ Այդ տարածքը այժմ հիմնականում ռազմադաշտ է։ Պետք է սպասել պատերազմի ավարտին, որպեսզի տեսնենք, թե ինչ կարող ենք անել մեր երազանքն իրականացնելու համար։

Այս խոսքերը մի քիչ հանգստացրեցին կնոջը։

— Մենք մեր երկիրը կունենանք,— ասաց նա վստահ ձայնով՝ վերադառնալով իր օջախի մոտ։— Եվ այլևս չենք լինի ռուսահպատակներ, օսմանյան հպատակներ, այլ միայն ազատ հայեր, որոնք իրենք իրենց կկառավարեն։

Վարդանը նրան զարմանքով նայեց, քանի որ չգիտեր քաղաքականության նկատմամբ նրա հետաքրքրության մասին։

— Ես քիչ եմ խոսում, սակայն շատ եմ լսում,— ասաց նա ժպտալով։

Փոքր սեղանից երկու թաս և երկու գդալ վերցնելով՝ Վարդանը դրանք դրեց ցածր սեղանին և հարցրեց.

— Դու բնակություն կհաստատեի՞ր այդ հեռավոր երկրում, որի մասին ոչինչ չգիտես։

— Ես հեռացել եմ Սև ծովի ափից և այստեղ հաստատվել։

Երիտասարդ կնոջ նուրբ դեմքը մռայլվեց.

— Իսկ դու, Վարդան, դու կտատանվեի՞ր։

— Մի մոռացիր, որ ես ապրում եմ Սվասում, իսկ այդ քաղաքը կմտնի Հայաստանի տարածքի մեջ։

Պատասխանը խուսափողական համարելով՝ Արուսյակը պնդեց.

— Դու կգնա՞ս, թե ոչ։

— Անպայման։ Զնայած իմ ապագան անհայտ է, այնքան հարցականներ կան...

— Մեր երկիրը քեզ պես կրթված մարդկանց կարիքը կզգա,— բացականչեց կինը ոգեշնչված, որպեսզի չմտածեր, որ Վարդանի հարցականները ապագայի վերաբերյալ կապված էին նրա կնոջ և որդու հետ։

Վարդանը տխուր ժպտաց.

— Իրատես լինենք, Արուսյակ։ Մինչև Հայաստանի անկախանալը կարող է մի քանի տարի անցնել։

— Դու լսեցիր, թե ինչ են նրանք գրում թերթում,— հակադարձեց կինը։— Հայկական ազգային կոմիտեն և կաթողիկոսի պատվիրակները բանակցություններ են վարում ֆրանսիացիների ու անգլիացիների հետ։ Եվրոպական տերությունները մեզ կպարգևեն մեր անկախությունը։

Ավելի և ավելի հետաքրքրվելով, Վարդանը մտածեց, որ թերթում հիշատակվում էին «հայեր» առանց մանրամասների։ Որտեղի՞ց գիտեր Արուսյակը, որ նրանք կազմում էին Ազգային կոմիտեի մաս, կամ որ նրանք ունեին հայոց կաթողիկոսի մանդատը։ Նա նրան սադրեց՝ արձագանքելով.

— Նախ հարկ է, որ օսմանցիները ազատեն տարածքը։

— Ռուսները նրանց դուրս կմղեն հայկական տարածքներից։

— Իսկ եթե հետո ցարը չուզենա՞ դրանք մեզ վերադարձնել։

Կինը հակադարձեց.

— Ֆրանսիան և Անգլիան նրան կստիպեն։ Եվ բացի դրանից, ո՞վ գիտի, թե ցարը որքան ժամանակ կպահպանի իշխանությունը Ռուսաստանում։

Այդ գաղափարը, գրեթե նույն ձևակերպումներով, ինքը լսել էր Շիրակ Թևոնյանից։ Առանց հայացքը հեռացնելու երիտասարդ կնոջից, որը մատուցում էր ոսպով ապուրը, Վարդանը նստեց գետնին, սեղանի մոտ։

— Դու շատ բան գիտես,— բացականչեց նա տպավորված։

Արուսյակը շփոթվեց և քիչ էր մնում շուռ տար կաթսան, որն ուզում էր դնել օջախի կողքին, իսկ այտերը շիկնեցին։ Երբ նստեց Վարդանի կողքին, արդեն վերագտել էր իր հանդարտությունը։

— Ապուրը սքանչելի է,— ասաց Վարդանը՝ հաց բրդելով թասի մեջ։

Կարծելով, որ այդքանով թեման սպառված էր, Արուսյակը շնորհակալություն հայտնեց և հայտնեց, որ հաջորդ օրը պետք է Ուրգուպ գնար։ Վարդանը նրա խոսքը կտրեց ու հանկարծակի հարցրեց.

— Դու հանդիպում ես կամավորների՞ հետ։

— Ոչ,– հապճեպ պատասխանեց կինը։

— Դու ինձ չե՞ս վստահում։

Վարդանը դադարել էր ուտել, և լռությունը ծանրացավ։ Մի քանի վայրկյան անց Արուսյակը ուղիղ նրա աչքերի մեջ նայեց և ասաց վճռական ձայնով.

— Եթե ցանկանում ես իմանալ, ապա այո, ես մի քանի կամավոր եմ ճանաչում։

— Կարո՞ղ ես ինձ ծանոթացնել նրանց հետ։

—– Դժվար է։ Մինչև անցած գարուն ես նրանց հաճախ էի տեսնում։ Նրանք այստեղ դադար էին առնում, և ես նրանց նամակներն էի ուղարկում։ Սակայն տեղահանությունների սկզբից ի վեր նրանցից շատերը մահապատժի ենթարկվեցին, իսկ շատերն էլ ճակատ մեկնեցին ռուսների կողմից կռվելու համար։

— Ոչ մեկին այլևս չես տեսե՞լ։

Կինը վարանեց.

— Դե... հետախուզման մեջ գտնվող երկու կամ երեք հոգու թաքցրել եմ։

Վարդանն զգում էր, որ նա ավելի շատ բան գիտեր, քան ցույց էր տալիս։

— Ավելին չեմ էլ ուզում իմանալ,— ասաց նա։— Դու իրավացի ես, այդպիսի գործերում որքան քիչ մարդ տեղյակ լինի, այնքան ավելի փոքր կլինի բացահայտման վտանգը։

Վախենալով, որ Վարդանը կվիրավորվեր, Արուսյակը բացականչեց.

— Ի՜նչ ես ասում, ես քեզ վստահում եմ։

Նույն պահին նա հասկացավ, որ նրա հետաքրքրության դրդապատճառը ճամփա ընկնելու հնարավորությունն էր, և վճռեց տեղն ու տեղը նրա տառապանքներին վերջ տալ.

— Կապերն ընդհատվել են ջարդերի հետևանքով։ Կան համակիրներ, ինչպես ես, որոնք ապրում են տարբեր վայրերում, կան մարդիկ, որոնց չեն տեղահանել, որովհետև առերես դավանափոխ են եղել կամ էլ կառավարությունը նրանց գիտելիքների կարիքն է ունեցել։ Սակայն մենք ոչ մի հնարավորություն չունենք հաղորդակցվելու իրար հետ։

— Իսկապե՞ս ոչ մի,– հարցրեց Վարդանը, որը դժվարությամբ էր թաքցնում իր հիասթափությունը։

— Նախորդ սեպտեմբերին սարերը քաշվելուց առաջ մի ֆիդայի ինձ նամակ տվեց, որը մինչ օրս չեմ կարողացել փոխանցել։

— Իսկ այն ամերիկացի միսիոնե՞րը, որին որբեր ես հանձնել։

— Մեթյուզ քահանան մեզ շատ է օգնում, սակայն երբեք չէր համաձայնի իրեն վստկաբեկել՝ կապվելով կամավորների հետ, քանի որ վախենում է, որ այդ պատճառով կառավարությունը նրան կվտարի երկրից։

Վարդանը շարունակում էր մեքենայաբար ուտել, սակայն նրա ուղեղը զբաղված էր իր դիմաց ծառացած կարծես թե անլուծելի խնդրով՝ Մալաթիա վերադարձով։ Նրա ճակատը հատում էր խորը կնճիռը։ Արուսյակը ձեռքը մեկնեց և սեղմեց նրա ազդրը, որպեսզի նա հիշեր, որ ինքը մենակ չէր։

* * *

Արդեն մեկ ժամ էր, ինչ Վարդանը մահճակալին ծալապատիկ նստած և գոգին մի տախտակ դրած գրում էր։ Անգլերեն այդ հոդվածը, ուր նա ապացուցում էր ապագա Հայաստանի համար Կիլիկիայի՝ խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի «Փոքր Հայաստանի» մի մասի, երկրին կցելու տնտեսական անհրաժեշտությունը, ընդամենը վարժանք էր, ուղեղի մարզանք, քանի որ ոչ մի հնարավորություն չուներ այն որևէ ամսագրի ուղարկելու։ Քահանա Մեթյուզը գուցե կարողանար, սակայն նա շրջան կվերադառնար միայն գարնան վերջին։ Վարդանը մտադիր էր այն թարգմանել Արուսյակի համար՝ իր հոդվածի տպավորությունն ընթերցողի վրա ստուգելու համար։

Մարտի սկզբի առավոտ էր, և արևը ներս էր խուժում լուսամուտներից։ Լսվում էր կաթոցքի զրնգուն ձայնը։ Կաթիլները հոսում էին տանիքից կախված երկար սառցալուլաներից։ Ձյունը հալչում էր հարավային քամուց, որը վաղահաս գարուն էր խոստանում։

Արուսյակն առանց խախտելու հյուսքի ռիթմը, հաճախակի ծածուկ Վարդանին էր նայում։ Այս մարդը բոլորովին նման չէր իր վախճանված ամուսնուն։ Երբ Յաշարի ձեռքերը զբաղված չէին գործով, նա նստում էր սուրճի գավաթի մոտ և ծխում։ Նա ժամերով երազում էր, սակայն Արուսյակն իրեն լքված չէր զգում, քանի որ կռահում էր, որ ամուսնու երազները նրան իրենից, տնից, դաշտերից և գյուղից հեռու չէին տանում։

Վարդանի դեպքում լրիվ ուրիշ պատկեր էր։ Ընթերցանությունն ու ստեղծագործությունը նրան հեռու էին տանում, իսկ երբ երազում էր, Արուսյակին թվում էր, որ նա հեռանում էր մի աշխարհ, որի մասին ինքը պատկերացում չուներ։ Վարդանը տարբերվում էր իրենից, իր ճանաչած բոլոր տղամարդկանցից և, անկասկած, դա էր, որ նրան այդքան գրավիչ էր դարձնում իր համար։ Նրանց բաժանող պատնեշի պատճառը նրա

կրթվածությունն ու լայն մտահորիզոնը չէր, քանի որ նա պատրաստակամորեն կիսում էր գիտելիքները ուրիշների հետ, իսկ Արուսյակն իր մտքի ճկունության շնորհիվ շուտ էր սովորում։ Ոչ, նրանց բաժանում էին հիշողություններն ու զգացմունքները, որոնք հին, սակայն կենդանի էին Վարդանի հոգում, և որոնց ինքը երբեք չէր հաղորդակցվելու։ Եվ այդ տևական ինքնամփոփման պահերի հետևանքով Արուսյակը զգում էր, որ նա օտար էր մնում իր ներքին աշխարհին։

Երիտասարդ կնոջն ի վերջո ձանձրացրեց պողպատե գրչածայրի խզզոցը թղթի վրա, որը չլսելու համար նա սկսեց երգել մի երգ, ուր փառաբանվում էր երկրի գեղեցկությունը և խիստ բնությունը, դրա ձյունն ու ձնաբքերը, որը պատմում էր հոտերի շուրջը թափառող գայլերի մասին, մայիսյան կատաղի հորձանքոտի մասին, երբ սարերի լանջերը ծածկված են լինում ծաղկագորգերով, ամառվա տապի և բարդու տակ կարկաչող աղբյուրի մասին, տղամարդկանց քրտինքով պարարտացված հողի մասին՝ այնքան բերրի, որքան կնոջ արգանդը։

Վարդանը դադարեց գրել՝ գերվելով քաղցրալուր ձայնի ելևէջներով, սակայն նա Արուսյակին չէր լսում։ Երգը նրան տեղափոխել էր ութ ամիս հետ, Սվասի տան հյուրասենյակը, ուր երգում էր Մարոն, Սև ծովի ափը՝ իրենց ծրագրված փախուստից մի քանի ժամ առաջ։ Անցած ամիսներն անհետացան, և Վարդանն իրեն տեսավ իր ընտանիքի անդամների հետ, և նրան թվում էր, թե զգում էր նաև վարդերի բուրմունքը։ Մարոն նստած էր իր կողքին, թախտի վրա և փակ աչքերով ձայնակցում էր ուդին։ Թովմասը, որի հագուստից պոնիի հոտն էր բուրում, մորն էր նայում սիրահարված հայացքով։ Ազնիվ խանումը, Արմենն ու Արաքսին լսում էին երգը և բոլորի դեմքերը տագնապի կնիք էին կրում։

Քերիմը Կուրտի ուղեկցությամբ կանգ առավ դռան մեջ և ներս նայեց, անհարմար զգալով, որ իրենից անկախ ականատես էր լինում իր բարեկամների մտերմության պահին։ Երիտասարդ կնոջ այդ երգը հնչում էր որպես սիրո խոստովանություն, իսկ Վարդանի սևեռուն հայացքը նա ընկալեց որպես հիացմունքի նշան։ Պահը նրան կախարդական թվաց, և նա, շունչը պահած, նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին։ Արուսյակը երջանկությունից, իսկ գուցե նաև այն բանից, որ առօրյա գործերում կարող էր հույս դնել տղամարդու վրա, ծաղկունքի մեջ էր, նրա կեցվածքն անկաշկանդ էր դարձել։ Նույնիսկ նրա շարժումներն ավելի մեղմ էին դարձել և ավելի ազատ։ Ուսուցիչն անգամ մտածեց, որ միգուցե ինքը պետք է թաքցներ իր բերած նորությունը։ Զգալով նրա ներկայությունը՝ Վարդանը գլուխը դարձրեց դեպի դուռը, և Քերիմը մի պահ իր բարեկամի աչքերում հուսահատություն տեսավ, որը Վարդանն իսկույն թաքցրեց։ Եվ խոսելու վճիռը ինքնին պարտադրվեց Քերիմին։

Սովորական ողջագուրանքներից և եղանակը քննարկելուց հետո երեքով նստեցին թեյ խմելու։ Խղճի խայթը հաղթահարելով՝ Քերիմն անցավ բուն նյութին.

— Վարդան, դու կարծես թե հնարավորություն կունենաս անվտանգ

կերպով ճանապարհորդելու։

Մինչդեռ Վարդանը Քերիմին նշան էր անում, որ նա շարունակեր, Արուսյակը գունատվեց։

—- Փաշազադե Շահիր Միթադը, որը հայտնի բանաստեղծ ու երգահան է, երաժիշտներ է հավաքում երկրի հարավ-արևելյան շրջանները հյուրախաղերի մեկնելու համար։ Ուռհա, Հալեպ, Թերևս նաև Համա ու Բեյրութ։

Երիտասարդ կինը վրդովվեց.

— Դու հո չես ուզում, որ նա կրոնավոր դառնա այդ ջերմեռանդ կրոնավորների ուխտում։

— Արուսյակը իրավացի է,— ասաց հիասթափված Վարդանը։— Ես շատ հավատացյալ չեմ, սակայն չեմ պատկերացնում, թե ինչպես պետք է ինձ վրա բռնանամ ժամեր շարունակ։

Այս խոսքերը հանգստացրեցին Արուսյակին, և նրա գույնը տեղն եկավ։ Քերիմը ժպտաց.

— Դուք չհասկացաք։ Թափառաշրջիկ դերվիշներ Միթադը շատ ունի։ Նրան երաժիշտներ են պետք, լավ երաժիշտներ, և նա վերցնում է նաև աշխարհիկ նվագողների։ Ես համոզված եմ, երբ նա լսի քո նվագը, քեզ կվերցնի։

— Ասում ես՝ հարավ-արևելքո՞ւմ,- հարցրեց Վարդանը մտածելով։

Նա չէր ուզում ժամանակից շուտ ուրախանալ, վախենալով նոր հիասթափությունից։ Արուսյակը ռազմատենչ կեցվածք ընդունեց.

— Խելահեղ և ինքնասպան գաղափար։ Վարդանը հետախուզման մեջ է և շատ շուտ կբացահայտվի։

— Չեմ կարծում,— պատասխանեց Քերիմը՝ վատ զգալով Արուսյակի պահվածքից։— Իշխանություններն աջակցում են Միթադի ծրագրին, համարելով, որ երաժիշտների այս խումբը մարդկանց ուշադրությունը կցրի պատերազմի դժբախտություններից և դժվարություններից։ Հետևաբար երաժիշտներն անցաթղթեր կունենան և ճանապարհորդելու թույլտվություն։

— Դա երանելի պաշտպանություն է,— ասաց Վարդանը։— Ո՞վ կարող է կասկածել աստվածավախ դերվիշին։

— Դու կբացահայտվես նույնիսկ խմբին անդամակցելուց առաջ,— փնթփնթաց Արուսյակը։

— Ոչ, եթե ես ուղեկցեմ Վարդանին ունկնդրության և եթե նա ներկայանա քո հանգուցյալ ամուսնու փաստաթղթերով։ Փաշազադե Շահիր Միթադը ինձ լավ է ճանաչում և ոչ մի պատճառ չի ունենա չվստահելու։ Եթե Վարդանին վերցնեն, նրան ուրիշ անուն կտան և ինքնության վկայական։

— Այլ անո՞ւն,— հարցրեց Վարդանը։

— Այդպես է ընդունված։ Քեզ կանվանեն Ուդի՝ քո գործիքի անունով, և դու կդառնաս Ուդի Յաշար։

— Իսկ ունկնդրությունը ե՞րբ է։

— Պետք է որ վաղը լինի։ Միթադը հիմա Կեսարիայում է և երկու օրից գնալու է Կոնիայի գլխավոր վանքը։

— Կարո՞ղ ես ինձ համար գիրք ճարել դերվիշների և իրենց աղանդի հիմնադրի՝ Մելվանայի մասին։ Կուզենայի նրա վրա լավ տպավորություն թողնել, որպեսզի ինձ վերցներ։

— Զափից ավելի ջանք մի թափիր։ Նրա համար դու հասարակ գյուղացի ես, որը զորացրվել է ճակատում ստացած վերքերի պատճառով։ Երաժշտի քո շնորհքը բավարար է նրան տպավորելու համար։

Արուսյակը կախել էր գլուխը։ Վճիռը կայացվել էր առանց իրեն միջամտելու հնարավորություն տալու, քանի որ ինքը ոչ մի իրատեսական փաստարկ չուներ։ Օբյեկտիվ լինելու դեպքում հասկանալի էր, որ դա կատարյալ հնարավորություն էր Վարդանի համար։ Սակայն դրանից չէր փոխվում այն փաստը, որ իր կարճ կյանքի ընթացքում Արուսյակը երկրորդ անգամ կորցնում էր «իր» տղամարդուն։ Ամիսներ տևող երջանկությունից հետո նա չէր պատկերացնում, թե ինչպե՞ս էր դիմանալու զգացմունքի բացակայությանը, մենությանը և թե ինչպե՞ս էր վերագտնելու հլու անտարբերությունը որը լցրել էր նրա կյանքը մինչ հիմա։

Արուսյակի հոգեվիճակը արտացոլվում էր նրա դեմքին, և չնայած կարեկցանքին, Վարդանը չէր ուզում, որ նա մտածեր, թե կարող էր կոտրել գնալու իր վճռականությունը։

— Շրջագայությունը յոթ կամ ութ ամիս կտևի,– ասաց ուսուցիչը։— Հետո խումբը Կոնիա կվերադառնա, իսկ երաժիշտները կկարողանան գնալ իրենց տները։

Արուսյակը մի քիչ հուսադրվեց։ Վարդանը բռնեց նրա ձեռքը և մեղմ ձայնով ասաց.

— Ամեռը չեկած՝ ես կվերադառնամ։

Վարդանի աչքերի տենդագին փայլը հակասում էր նրա ձայնի խաբուսիկ վստահությանը։ Մտովի նա արդեն մեկնել էր, և եթե նրա որոնումներն արդյունք տային, ապա նա այլևս երբեք ոտք չէր դնի Կապադովկիա։ Դա ավելի վատ էր, քան այրի լինելը, քանի որ ինքը կիմանար, որ Վարդանն ապրում էր ուրիշ տեղ, մեկ այլ կնոջ հետ։ Նա շրթունքը կծեց, վեր կացավ և հայտարարեց չեզոք ձայնով.

— Ես գոմ եմ գնում։ Մաքին պետք է ծննդաբերի։

Նա շտապ դուրս եկավ, ճանապարհին վերցնելով և ուսերին գցելով

շալը, գնաց ձյան մեջ բացված արահետով՝ առանց ուշադրություն դարձնելու Կուրտի վրա, որն ուրախ ցատկոտում էր նրա շուրջը։ Տղամարդիկ շփոթված միմյանց նայեցին։

— Դու մեղավոր չես,— ասաց Վարդանն ուսուցչին։— Ես նրանով կզբաղվեմ։

Քերիմը գլխով համաձայնության նշան արեց և պատրաստվեց գնալու։

— Ես երկու ձի կվերցնեմ և քո հետևից կգամ լուսաբացին։

Նրանք բաժանվեցին դռան մոտ, և Վարդանը, սպասելով, որ Քերիմը տեսադաշտից հեռանար, գնաց գոմ, Արուսյակի մոտ։ Արևի լույսը նրան շլացրեց, և սկզբում նա չտեսավ կնոջը մութ քարանձավում։ Ինչ-որ աղմուկ նրան ստիպեց գլուխը դարձնել։ Արուսյակը, վառարանին հենված, լալիս էր։ Վարդանն ուզեց նրան գրկել, սակայն կինը վանեց նրան։

— Արուսյակ,— շշնջաց նա մեղմորեն։

Կինը մրմնջաց.

— Ոչինչ պետք չէ ասել։ Ամեն ինչ եղավ այնպես, ինչպես ուզում էիր։

— Ես կվերադառնամ։

Արուսյակը շարունակում էր լացել, կարծես չէր լսում Վարդանի խոսքերը։

— Մտածիր, որ ես կարող եմ նպաստել մեր ժողովրդի ճակատագրին, որ ի վիճակի կլինեմ օտար մամուլի համար հոդվածներ գրել Անատոլիայում տիրող իրավիճակի մասին։ Բացի դրանից, ես քաղաքից քաղաք կգնամ և որպես կապավոր կծառայեմ դիմադրությանը։ Չէ՞ որ դու ասում էիր, որ ոչ մի հնարավորություն չունեք կապ պահպանելու։ Իսկ ես այդպես իմ պարտքը կկատարեմ։

Նա ուշադիր նայեց Վարդանին արցունքներից փայլող աչքերով և խուլ ձայնով ասաց.

— Խոստովանիր, որ գնում ես, որպեսզի կնոջդ գտնես։

— Ճիշտ է,— համաձայնեց նա առանց շփոթվելու։— Այստեղ հայտնվելու պահից ի վեր երբեք չեմ թաքցրել, որ դա իմ մտադրությունն է։

Չկարողանալով նրան հակաճառել՝ նա փաստարկեց.

— Ինչպե՞ս կարելի է կին ու երեխա գտնել մի երկրում, որը տակնուվրա է եղել։ Դա անհնար է, և դրա հետևանքով դու է՛լ ավելի դժբախտ կլինես։ Եթե քեզ մինչ այդ չսպանեն։ Ավելի խելամիտ կլիներ սպասել, որ պատերազմը...

— Խելամի՞տ,— վրդովվեց Վարդանը։– Խելքը կարևոր չէ, երբ սիրտն է խոսում, դու դա պետք է որ բոլորից լավ իմանայիր։ Խելամիտ չէր լքել

ընտանիքը մահմեդականի հետ ամուսնանալու համար, սակայն դա քեզ չի խանգարել երջանիկ լինելու, և հենց այդ ամուսնության շնորհիվ է, որ քեզ ձեռք չեն տվել։

Վիրավորվելով այդ կտրուկ տոնից՝ Արուսյակը շրջվեց և հեռացավ դեպի ոչխարների փարախը։

— Իսկ ե՞ս, այս ամբողջ պատմության մեջ,— հարցրեց նա հուզմունքից դողդոջուն ձայնով։

Վարդանը թիկունքից նրան մոտեցավ և գրկեց։ Նա չգիտեր ինչ պատասխանել։ Կինն ավելացրեց.

— Ի՞նչ եմ ես քեզ համար։

Վերահաս բաժանման շեմին Վարդանը գիտակցեց նաև այն խորը կապվածությունն ու ջերմությունը, որ ինքը զգում էր այդ կնոջ նկատմամբ։ Նա նրան էլ ավելի ուժեղ սեղմեց իր գրկում։

— Ինձ համար էլ դյուրին չէ,— շշնջաց նա կնոջ ականջին։— Ես վարժվել եմ քո ներկայությանը։ Դու հիասքանչ կին ես, և ես քո պակասը շատ կզգամ։

— Սակայն դա քեզ հետ չի պահում այդ քայլից...- ասաց նա։

— Հասկացիր, Արուսյակ, ես չեմ կարող այլ կերպ վարվել։

Նա շատ լավ էր հասկանում, սակայն դրա հետ հաշտվելը նրա ուժերից վեր էր։

— Դու ինձ կմոռանաս...

— Երբեք։ Եվ ոչ այն պատճառով, որ մինչև կյանքիս վերջը պարտական եմ քեզ, այլ քո այն առանձնահատկությունների համար, որ այլևս երբեք չեմ գտնի։

Արուսյակը շրջվեց նրան համբուրելու համար, իսկ հետո կառչելով նրա ուսերին, հայտարարեց.

— Ես աղոթում եմ Աստծուն, որ դու գտնես կնոջդ և որդուդ։ Սակայն, եթե չգտնես, կվերադառնա՞ս ինձ մոտ։

Վարդանը նայեց Արուսյակի խոնավ աչքերի մեջ և առանց վարանելու պատասխանեց.

— Այո։

Ունկնդրությանը լավ անցավ, չհաշված դերվիշի զարմանքը, որ հասարակ գյուղացին այդպիսի վարպետությամբ էր տիրապետում գործիքին։ Վարդանը դա բացատրեց մանկուց ունեցած շնորհքով։ Իբր ինքը մեկ անգամ լսելով հիշում էր մեղեդին, և իր մատները հետագայում այն գտնում էին ուդի լարերի վրա։ Փաշազադե Շահիր Միթադը եզրակացրեց, որ դա Ալլահի ողորմածության վկայությունն էր և որ այդ շնորհքը պետք է ծառայեր մարդկանց ոգին բարձրացնելուն, և ավելին

չհարցրեց։ Այժմ, երբ նա ունկնդրել էր այդպիսի կատարողի, նա այլևս չէր կարող բավարարվել պակաս շնորհալի մեկով։ Ուստի նա Վարդանին ներգրավեց իր խմբի մեջ և Կեսարիայի վարչակազմի միջոցով նրա համար նոր փաստաթղթեր ձևակերպել տվեց Ուդի Յաշար անունով և նրան պատվիրեց իրեն միանալ Կոնիայում հաջորդ շաբաթվա վերջին։

Ուրգուպում անցկացրած վերջին օրերի ընթացքում Վարդանը զբաղված էր Արուսյակի կազմած անունների ցուցակը բերանացի սովորելով։ Դրանք մոտ տասը հոգի էին, որոնց նա պետք է հանդիպեր տարբեր քաղաքներում և գյուղերում և որոնք նրան կարող էին կապել այլ վստահելի անձանց հետ։ Մեծամասնությունը հայեր էին, ինչպես Ուռհայում ապրող մի զինագործ, որի ծառայություններից օգտվում էր բանակը, ոմանք հրեաներ էին կամ էլ Մեթյուզ քահանայի հետ աշխատող միսիոներներ, որոնք զբաղված էին հայ երեխաների փրկությամբ։ Նրանց միջոցով Վարդանը կարող էր հոդվածներ ուղարկել օտար ամսագրերին։

Քերիմը վաճառականներ էր գտել, որոնք համաձայնել էին Վարդանին մինչև Ակսարայ տանելու, իսկ այնտեղից նա ինքնուրույն պետք է շարունակեր ճանապարհը։ Կոնիայից նվագախումբը պետք է գնացքով մեկներ արևելք, և նրանց առաջին կանգառը պետք է Մերսինում՝ Միջերկրականի ափին լիներ։ Դրանից հետո Հալեպն էր, ուր, ըստ տեղեկությունների, ապաստան էին գտել հազարավոր հայեր։

Արուսյակի պայծառ դեմքին նայելով կարելի էր կարծել, որ նա համակերպվել էր Վարդանի մեկնելու մտքի հետ, սակայն վիշտը բնակություն էր հաստատել նրա հոգում, և նա դիմանում էր միայն ուժերի գերմարդկային լարման շնորհիվ։ Նա ապրում էր միայն այն պահերի համար, երբ իրենք սիրում էին միմյանց, և այդ պահերին նրա հոգում վերակենդանանում էր պատրանքը, որ իրենք մեկ ամբողջության էին կազմում։ Անցողիկ կախարդանքը արագ ցրվում էր, և այդ ժամանակ Արուսյակը ամուր գրկում էր Վարդանին, և այդ գրկախառնության մեջ հուսահատություն կար։ Ի՞նչ էր ինքը կորցնելու։ Այս մարդու հայտնվելու հետ նրա կյանքը լուսավորվել էր, դա արևի կարճատև հայտնություն էր սովորաբար ամպերով ծածկված երկնքում։ Նա գնում էր, և Արուսյակն իրեն տեսնում էր ծերացած, անցած տարիներից ալեհեր դարձած, և գորգի դազգահի դիմաց նստած՝ ինքը գործում էր այն գորգը, որը գործում էր քսան տարեկանում, ինքն անուղղելի կերպով միայնակ էր և սրտի մեջ պահում էր վիժված սիրո հիշատակը։

Վարդանի մեկնելու նախօրեին Արուսյակը հնդկահավ մորթեց և ճաշկերույթ կազմակերպեց, որին հրավիրված էր նաև Քերիմը։ Նրանք երկու շիշ սպիտակ գինի խմեցին, որը պատրաստել էր հույն գինեգործը՝ ուսուցչի հարևանն ու ընկերը, սակայն ճաշը ամենևին էլ տոնական չէր։ Մթնոլորտը ծանր էր. իսկ ճաշկերույթի մասնակիցները լարված էին։ Յուրաքանչյուրը շատ բան ուներ ասելու, սակայն անհրաժեշտ խոսքերը չէին հնչում, քանի որ չափից ավելի ծանրաբեռնված էին զգացմունքներով։ Լռությունը պերճախոս էր, հայացքներն՝ է՛լ ավելի։ Երբ Քերիմը դռան մոտ գրկեց Վարդանին, նա պարզապես ասաց

ուսուցչին.

— Ուշադիր եղիր Արուսյակի նկատմամբ։

— Եթե կարողանաս լուր ուղարկիր... բարեկամս, եղբայրս։

Անկողնում Արուսյակն աղերսեց.

— Ասա, որ ինձ սիրում ես, եթե նույնիսկ այդպես չէ։ Ասա, որ ինձ սիրում ես և սիրիր մինչ առավոտ։

— Ես անկարող կլինեի արտասանել այդ բառերը, եթե ճշմարիտ չլինեին։ Ես սիրում եմ քեզ, Արուսյակ։

— Ես քեզ հավերժ կսպասեմ։

Նրանք դիմավորեցին այգաբացը, քանի որ աչք չէին փակել և արբեցած էին սիրուց։ Դրանից բաժանումն է՛լ ավելի ցավագին էր։ Արուսյակը մնաց դռան շեմին՝ չնայած ուժեղ ցրտին, և նայում էր, թե ինչպես էր հեռանում Վարդանը՝ ամպած երկնքի արճճագույն լույսի ներքո։ Խուրջինն ուսին, բաց վերարկուի փեշերը ծածանելով՝ նա շրջվում էր կնոջը ձեռքով անելու համար և քանի հեռանում էր, այնքան հազվադեպ էր շրջվում։ Վարդանն իր հետ տանում էր նրա սիրտը, և այսուհետ նա դառնալու էր սպասման մեջ գտնվող կենդանի մեքենա։ Երբ Վարդանն անհայտացավ ճանապարհի շրջադարձում, Արուսյակը կանխազգացում ունեցավ, որ նրան այլևս չէր տեսնելու։

* * *

Դերվիշի սպիտակ հագուստի տակ թաքցնելով իր կմախքի չափ նիհար մարմինը, Փաշազադե Շահիր Միթադը նստած էր սայլապանի կողքին և մեքենայաբար խաղում էր ձիթենու փայտից պատրաստված իր թզբեհով։ Ցրված հայացքով նա նայում էր դիմացը բացվող բերրի դաշտավայրին, որը անտիկ շրջանի «Բերրի մահիկի» արևմտյան եղջյուրն էր կազմում, և գոհունակությամբ մտածում էր իր հավաքած երաժիշտների արտակարգ վարպետության մասին։ Սիլիֆկեի և Մերսինի միջև ընկած ծովափնյա փոքր բնակավայրերում իրենց համերգները մեծ հաջողությամբ էին անցել։ Այժմ նվագավարժված համույթը պատրաստ էր ներկայանալու մեծ քաղաքների ավելի նրբաճաշակ հանդիսատեսին։

Արդեն մայիս ամիսն էր։ Կոնիայից ճանապարհի մի մասը գնացքով անցնելուց հետո նվագախումբն այժմ ճանապարհորդում էր մեծ ծածկած սայլով, որին երկու ձի էր լծված, քանի որ հանգրվաններն ավելի մոտ էին իրարից։ Սայլում աշխույժ խոսակցություն էր ընթանում։ Քանոնի Զեքին, որը այնպիսի վարպետությամբ էր տիրապետում գործիքին, որ ունկնդիրներին թվում էր, թե նա զրուցում էր նվագարանի հետ, արդեն քառորդ ժամ էր, ինչ նորություններ էր հաղորդում պատերազմական գործողությունների մասին, որոնք հավաքել էր

Մերսինում։ Տարբեր նորություններ հավաքելու և իրեն շրջապատող մարդկանց հաղորդելու իր սովորության պատճառով նա ստացել էր «Աղքատի թերթ» անպատվաբեր մականունը։

— Կռռա՜ն,— ծիծաղելով բացականչեց Ջուռնաչի Օսմանը՝ նախկին արջ վարժեցնողը, որը հրաժեշտ էր տվել իր այդ մասնագիտությանը, երբ նրա իմաստուն գազանը մի բերան էր արել նրա ձախ այտի կեսը։— Ե՞րբ ես դու վերջապես մեզ լավ լուրեր հաղորդելու։ Ջանա մոռանալ այն ամենը, ինչ կատարվում է այլուր, և վայելիր այն բարիքները, որ մեզ է պարգևում Ալլահը։

— Այո,- համաձայնեց Քամանչա Հակին,- ավելի լավ է երաժշտությունից, կանանցից և սիրուց խոսենք։ Ուդի Յաշար, եղբայրս, նկարագրիր գեղեցիկ մավրիտանուհուն, որին տեսանք պարելիս երեկ շատ խմելուց հետո։ Նրա բարա՜կ մեջքը, ես այն կարող էի բռնել երկու ձեռքով, և մատներս կմիանային։

Սայլի հետնամասում նստած Վարդանը, որը ոտքերը կախ գցած ճոճում էր օդում, դարձավ զրուցակցին.

— Ավելի լավ է դու պատմիր, եղբայրս, ես չեմ կարողանում փաստերը քեզ պես ծաղկեցնել։

Հաֆիզ Իսմայելը՝ երգիչը, և Թմբուկ Վասֆին՝ դափ նվազողը, որն այդ պահին վարում էր սայլը, միացան մնացածներին, խնդրելով Քամանչա Հակիին, որ ամեն ինչ պատմեր մավրիտանուհու մասին։ Երաժիշտը պատկերավոր և մանրամասն նկարագրեց պարուհուն, որը կանգնել էր պղնձե սկուտեղի վրա և, հանելով բոլոր քողերը, լրիվ մերկ էր մնացել։

Վարդանը չէր լսում։ Նա նայում էր հեռվում մնացող Մերսինի նավահանգստին և Միջերկրականի փիրուզե ջրերին։ Օդի մեղմությունը, անամպ երկինքը, կակտուսները, հաճարենիներով և կաղնիներով պսակված ժայռերը, կարմիր կղմինդրից տանիքներով փոքրիկ գյուղերի դիմաց կանգնած նավակները այնպիսի հակադրության մեջ էին Կապադովկիայի ձնաբքի և դաժան բնապատկերի հետ, որ Վարդանն ինքն իրեն հարցնում էր, թե արդյոք դա երազ չէ՞ր։ Նա անցնում էր մի երկրով, ուր ծաղկել էին ամենանշանավոր քաղաքակրթությունները, որով անցել էին առասպելական նվաճողները, ինչպես վկայում էին դաշտերում դրված հոյակապ հուշարձանները։ Իսկ ինքը գնում էր Տարսոն՝ Սուրբ Պողոսի հայրենիքը, և այն քաղաքը, ուր Կլեոպատրան հանդիպել էր Մարկոս Անտոնիոսին։ Նա այլևս հալածված մարդ չէր, կարող էր շրջել ամբոխի մեջ և առանց վախենալու նստել սրճարանում։ Վարդանը դժվարությամբ էր ձերբազատվում ոգևորությունից, որը նրան երբեմն մոռանալ էր տալիս իր ճանապարհորդության իրական նպատակը։ Երաժշտությունը մոռացություն էր պարգևում, իսկ իր ընկերների խանդավառությունն ու անհոգությունը վարակիչ էին։

Քամանչա Հակին նրան առաջարկեց մի քիչ ոտքով գնալ, նրանք վայր ցատկեցին սայլից և մի տասը քայլ հետ մնացին։ Հովը վերջնականապես անհայտացավ վերջին բլրի հետևում։ Հակին հսկա էր, և երբ նա քայլում

էր ուսերը տարուբերելով, ավելի հեշտ էր նրան պատկերացնել թուրը ճոճելիս կամ արորով հողը վարելիս, քան քամանչա նվագելիս: Մինչդեռ նա շատ զգայուն երաժիշտ էր, և քամանչան եղել էր նրա գոյության միակ միջոցը այն պահից ի վեր, երբ փախել էր ծնողների տնից տասնհինգ տարեկան հասակում: Հիմա նա երեսուներեք տարեկան էր: Խոսում էր միայն իր սիրային պատմությունների ու հաղթանակների մասին: Գեղեցիկ տղամարդ էր՝ կամային կզակով, շատ առնական տեսքով, չնայած կանաչ աչքերին, որոնք նման էին հավերժ հիացած երեխայի աչքերի: Պարզունակ և անմիջական լինելով՝ նա հիացմունքով էր վերաբերվում Վարդանին, որը չէր կարողանում հասկանալ դրա պատճառը, և նրա բարեկամությունը երբեմն ձանձրալի էր դառնում:

Նա հպվեց Վարդանի ձեռքին և ասաց իր լազական ծագումը մատնող բարբառով.

— Ուդի Յաշար, իմ աղաբեյ, ես չեմ կարողանում քեզ հասկանալ: Դու փակ ես: Նույնիսկ այն ժամանակ, երբ նվագում ենք ամբոխի առջև, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ միայնակ ես քո ուդի հետ: Եվ հիմա էլ մեզ հետ չես: Աչքերդ նայում են, սակայն չեն տեսնում: Ասա ինձ, թե ինչի մասին ես մտածում հենց այս պահին:

Վարդանը չէր կարող խոստովանել, որ ինքը հուզված էր, որ քայլում էր Կիլիկիայի հողով: Որ մտածում էր այն մասին, որ մի ժամանակ այդ հողը պատկանել էր Ռուբինյան և Լուսինյան հարստություններին, եղել նրանց թագավորությունը՝ «Փոքր Հայաստանը», ուր իր նախնիները կռվել և զոհվել էին իրենց ազատությունը պաշտպանելիս և որ դա հիշեցնում էր այն ողբերգությունը, որն ապրում էր իր ժողովուրդն այս պահին: Նա ասեց.

— Ես մի կնոջ մասին էի մտածում:

— Դժբախտ սեր, եթե դատելու լինենք քո մռայլ տեսքից: Հավատա իմ հարուստ փորձին՝ դրա դեմ միայն մեկ դեղ կա. սիրել յոթ կին մեկ օրվա ընթացքում:

Վարդանը փռթկաց:

— Յոթը,— շարունակեց Հակին վստահ տեսքով,— սրբազան թիվ է: Դա ինձ մեկ անգամ բուժել է, և սրտի ցավն ինձ այլևս չի այցելում:

— Իսկ որտեղի՞ց էիր դու գտել յոթ կին այդքան կարճ ժամանակի ընթացքում,— զվարճացավ Վարդանը:

— Ես վճարեցի: Այդ ժամանակ ափիոն էի վաճառում Սիրիայում ապրող մի ֆրանսիացի վաճառականի և հարուստ էի:

— Դու այլևս հարուստ չե՞ս:

— Ես ամեն ինչ ծախսեցի կանանց վրա, քանի որ իսկական հավատացյալ եմ:

— Ի՞նչ կապ կա:

— Կնոջ հետ պառկելը գթասրտության ակտ է։ Ղուրանն ասում է, որ գթասիրտ մարդը պետք է իր ունեցածը կիսի, իսկ սրանից թանկ բան չկա,— ասաց նա շոշափելով իր արվանդամը շալվարի վրայից։

Վարդանը ծիծաղեց, և դա հիացրեց Հակիին։

— Տեսնո՞ւմ ես ինչ հզոր է սերը։ Դրա մասին գեթ խոսելիս կենսախնդությունը վերադառնում է։

Խումբը դադար առավ կիտրոնի և նարնջի այգում, ուր գյուղացիները բերքահավաքից հետո մաքրում էին տարածքը, որը պատկանում էր քաղաքում ապրող հողատիրոջը։ Երաժիշտները նախաճաշեցին ծառերի տակ, իսկ Փաշազադե Շահիր Միթադը նրանց էր նայում, քանի որ ուտում էր միայն առավոտյան և երեկոյան։ Նա միակն էր, որ կրում էր դերվիշի սպիտակ հագուստը և կարմիր կոնաձև գլխարկը, որը նմանվում էր չափից ավելի մեծ ֆեսի, ինչը հատկանշական էր Մեվլեվի՝ պտտվող դերվիշների աղանդի համար։ Նրա երաժիշտները, որոնք աշխարհիկ մարդիկ էին, այդ հագուստը հագնում էին միայն համերգների ժամանակ։

Այս հավատացյալ մարդը բերանացի գիտեր Մեսնեվիի՝ ուխտի հիմնադիր Մելվանա Ջալալ էդ Դին Ռամիի հիմնարար ստեղծագործության 25 618 տները։ Սակայն դա չէր խանգարում նրան իմանալ փողի արժեքը և թզբեհներ վաճառել մարդկանց, որ հավաքվում էին նրա հայտնվելուն պես։ Իր նկատմամբ խիստ լինելով և տառացիորեն կատարելով իր ուխտի բոլոր կանոնները, դերվիշը ներողամիտ էր երաժիշտների նկատմամբ և աչք էր փակում նրանց վարքագծի շեղումների վրա, ձևանում էր, իբր չէր լսում նրանց սրբապիղծ խոսակցությունները։ Այնքան ժամանակ, քանի դեռ նրանք լավ էին նվագում...

Սովորականի պես, կեսօրից հետո փորձ էին անում։ Փաշազադե Շահիր Միթադը միացավ երաժիշտներին իր նեյով՝ եղեգնյա սրնգով, որը հատկապես նվագում էին այդ աղանդի անդամները։ Երաժշտությունը գրավեց գյուղացիների և անցորդների ուշադրությունը և երբ նա համարեց, որ լսարանը բավականաչափ ընդարձակ էր, ոտքի կանգնեց և սկսեց պտտվել իր առանցքի շուրջը, դա սաման էր՝ սրբազան պարի արարողությունը, որը սովորաբար խմբով էին կատարում։ Շրջազգեստը տարածվեց, պտույտներն արագացան, դերվիշը պարզեց ձեռքերը՝ աջ ձեռքը դեպի երկինքը, ձախը՝ դեպի գետին։ Այլայլված դեմքով, սառած աչքերով նա տրանսի մեջ ընկավ և իր պարի միջոցով իրականացրեց գերագույն միությունը Աստծու հետ։ Չնայած իր վերացած տեսքին, նա ի վիճակի կլիներ ասելու, թե որ որոշակի հատվածում, որ երաժիշտը սխալ էր նվագել։

Հետաքրքրասերները դիտում էին ներկայացումը մի տեսակ սարսափով համակված և գիտակցում էին, որ իրենց առջև սուրբ մարդ էր։ Երբ սաման ավարտվեց, դերվիշը ոչ գլխապտույտ ուներ, ոչ էլ շնչառությունն էր խախտվել, մինչդեռ հանդիսատեսը ծանր էր շնչում։ Հակին շրջան կատարեց, և այդ խեղճ մարդիկ, որոնք միշտ չէր, որ կուշտ

էին ուտում, իրենց գրպանների ամբողջ դրամը դրեցին թասի մեջ։ Մարդկային վստահության նման չարաշահումը միշտ վրդովում էր Վարդանին։ Եթե Փաշազադե Շահիր Միթադը ուզում էր միջոցներ հանգանակել իր վանքի համար, ապա կարող էր ավելի բարձր վարձատրություն պահանջել հարուստ վաճառականներից, որոնց ընդունելությունների ժամանակ խումբը ելույթ էր ունենում։

* * *

Երբ մինչև Ադանա մեկ ժամվա ճանապարհ էր մնում, Վարդանը ճամփեզրին մի աղջնակ նկատեց, որը ձեռքը մեկնած ողորմություն էր խնդրում առանց նայելու հազվադեպ անցորդներին, որոնք էլ իրենց հերթին կարծես նրան չնկատեին։ Նրա խճճված մազերը թափված էին ուսերին և շրջանակում էին կեղտոտ դեմքը, որն այնքան նիհար էր, որ սև ու մարած աչքերը չափից ավելի մեծ էին թվում։ Նա ոտաբոբիկ էր, և նրա ցնցոտիները չէին ծածկում բարակ ձեռքերն ու ոտքերը։ Այդ տեսարանից ազդվելով՝ Վարդանը մոտեցավ և գրպանից հանեց մի մետաղադրամ։ Երեխան ութ կամ ինը տարեկան էր, սակայն փոշուց գորշ նրա մաշկի ու աչքերի տակի կապտուկների պատճառով ծեր կնոջ էր նմանվում։

— Շնորհակալություն,– բարբաջեց նա հազիվ լսելի ձայնով՝ դրամը սեղմելով ափի մեջ։

— Որտե՞ղ ես ապրում։

Նրա լարված դեմքի արտահայտությանը չփոխվեց, և նա ուսերը թոթվեց։ Նրա թուրքերենից Վարդանը հասկացավ, որ փոքրիկը հայուհի էր, սակայն շարունակեց թուրքերեն խոսել։ Աղջիկը, անտարբեր տոնով և առանց զգացմունքներ ցուցաբերելու, պատմեց, որ այն գյուղացիները, որոնց մոտ ինքը աշխատում էր, իրեն քշել էին, քանի որ իրենք էլ ուտելու բան չունեին։ Դա տեղի էր ունեցել մոտ երկու-երեք շաբաթ առաջ։

Վարդանը ազդված էր։ Ցնցոտիներով ծածկված այդ երեխան, որը չուներ այլևս ո՛չ ընտանիք, ո՛չ էլ օթևան և վերապրում էր ողորմություն խնդրելով, իր ժողովրդի ճակատագրի արտացոլումն էր։ Վարդանը չէր կարող իրեն վարկաբեկել՝ գթասրտություն ցուցաբերելով այդ երեխայի նկատմամբ, այդուհանդերձ, չէր կարող նաև շարունակել ճանապարհը փոքրիկ մուրացկանին թողնելով ճամփեզրին։ Սայլը կանգ էր առել ոչ հեռու, և գործընկերները շտապելու նշաններ էին անում։ Նա վազելով մոտեցավ Փաշազադե Շահիր Միթադին, որն անհամբերություն էր ցուցաբերում, և հարցրեց.

— Կարո՞ղ ենք նրան մինչև քաղաք հետներս տանել։

Ծերունու սև ու խիտ հոնքերը բարձրացան, և նա պատասխանեց չոր տոնով.

— Մենք նույնպես մուրացկաններ ենք և մեր շարքերը լրացնելու կարիքը չունենք։

Վարդանը պնդեց.

— Նա քրիստոնյա է։ Նրան իշխանություններին կհանձնեմ։ Թող նրանք վճռեն նրա ճակատագիրը։

Դերվիշը խաղաց իր երկար, ճերմակ մորուքի հետ.

— Ավելի գթասիրտ կլիներ նրան թողնել այստեղ։

Գիտակից քաղաքացի ձևանալով՝ Վարդանը խիստ ասաց.

— Կառավարությունը տեղափոխում է քրիստոնյաներին։ Մեր պարտքն է սատարել նրա քաղաքականությանը։

Դերվիշը վախեցավ, մտածելով, թե գործ ուներ Իթթիհատի անդամի կամ համակրի հետ, և խելամիտ համարեց համաձայնել։

— Վարվիր, ինչպես ճիշտ ես համարում։

Դառնալով սայլապանին՝ նա հրամայեց ճանապարհը շարունակել։ Վարդանը վերադարձավ աղջնակի մոտ և նրան ձեռքը մեկնեց։ Նա նրան հետևեց առանց հարց տալու կամ զարմանալու, իսկ Վարդանը նրան գրկեց և նստեցրեց սայլի հետնամասում։

— Ծարա՞վ ես,— հարցրեց Վարդանը արագ քայլելով, որպեսզի սայլից հետ չմնար։

Աղջիկը գլխով արեց, և Քամանչա Հակին, որը հետաքրքրասիրությամբ հետևում էր Վարդանին, ջրի շիշը տվեց աղջկան։ Նա այնքան ագահաբար էր խմում, որ ջուրը հոսում էր այտերով ու կզակով և դրանց վրա հավաքված կեղտի մեջ լուսավոր ակոսներ էր թողնում։

— Գրազ գա՞նք, որ նա գայլի պես սոված է,— հայտարարեց Զուռնաչի Օսմանը, որի այլանդակված դեմքը նրա բարի էությանը չհամապատասխանող զարհուրելի տեսք էր տալիս նրան։

Խոսքերով չբավարարվելով՝ նա աղջկան մի կտոր հաց տվեց, որը վերջինս արագությամբ կուլ տվեց, և դա հրճվանք պատճառեց երաժիշտներին։ Նրանց ծիծաղի մեջ ծաղր չկար, այլ ընդհակառակը՝ նրանք քողարկում էին իրենց հուզմունքը, քանի որ նրանցից յուրաքանչյուրն իր կյանքի որևէ պահին զգացել էր սովի պատճառած տանջանքները։ Պանիր և չրեղեն ուտելուց հետո աղջիկն անշարժացավ, և նրա դեմքն անթափանց դարձավ։ Քանոնի Զեքին իր գործիքով մեղեդիներ կատարեց իրենց ուղևորին ուրախացնելու համար, սակայն նրա փորձերն ապարդյուն անցան։ Աղջիկը նայում էր ճանապարհին, որը վազում էր նրա ոտքերի տակ և աչքերը բարձրացնում էր միայն Վարդանի վրա թաքուն հայացքներ գցելու համար։

Հասնելով Ադանայի իջևանատունը, ուր խումբը պետք է ապրեր առաջիկա չորս-հինգ օրերի ընթացքում, Վարդանը ստիպված եղավ մի

սուտ մոգոնել Հակիից ազատվելու համար, որն ուզում էր նրան ուղեկցել։ Վարդանը նրան մի կողմ տարավ և բացատրեց.

— Երեխային ոստիկանություն տանելուց հետո այցելելու եմ քաղաքում ապրող մի ազգականի։ Ես քեզ կմիանամ երկու-երեք ժամ հետո։

— Իսկ քո ազգականը աղախնի կարիք չունի՞,— հարցրեց Քամանչա Հակին կզակով աղջկա կողմը ցույց տալով։

Վարդանն ուսերը թոթվեց, հետո բռնեց աղջկա ձեռքը և հեռացավ։

Հին կամրջով Ջեյհան գետն անցնելուց հետո նրանք հասան առևտրական թաղին, որը լեցուն էր խիտ և աղմկոտ ամբոխով, որի միջով ուղտերը, ավանակներն ու սայլերը դժվարությամբ էին ճանապարհ հարթում։ Շրջիկ առևտրականների մոտ խմբված երեխաներն է՛լ ավելի մեծ խառնաշփոթ էին ստեղծում։ Մի պահ Վարդանին թվաց, որ ինքն արդեն եղել էր այդ քաղաքում, սակայն դա պատրանք էր։ Այդ զգացողությունն առաջացել էր այն պատճառով, որ Անատոլիայի մեծ քաղաքների շուկաները նման էին միմյանց։ Նա մի բաժակ կիտրոնի ըմպելիք գնեց աղջնակի համար, իսկ հետո, երբ երեխան կարծես ավելի էր վստահում Վարդանին, նրա անունը հարցրեց։ Աղջիկը վարանեց, հետո շշնջաց.

— Նաիրի։

Վարդանն այդ անունը գրանցեց հիշողության մեջ։ Որքան կուզեր աղջկա հետ խոսել մայրենի լեզվով, գրկել նրան և հանգստացնել, սակայն երեխան պետք է իրեն թուրք համարեր։

Նրանք շարժվեցին կենտրոնական փողոցով, որի մայթերը զբաղեցնում էին կրպակներն ու մեծ խանութները։ Փողոցի ծայրում երկու մինարեթ երիզում էին սիրիական ոճով սև ու սպիտակ մարմարից կառուցված մզկիթը։ Մոտենում էր կեսօրը, և քանի որ օրն ուրբաթ էր, տղամարդիկ գնում էին մզկիթ աղոթելու։ Կենտրոնական մուտքի մոտով անցնելիս Վարդանը բակում նշմարեց հավատացյալների, ոմանք ոտքերն էին լվանում լվացումների շատրվանի մոտ, իսկ ոմանք էլ, հետևելով Մարգարեի պատվիրանին, կուտ էին տալիս աղավնիներին։

Մզկիթի կողքին գտնվող հոգևոր դպրոցի մոտից սկսվում էր մի ծառուղի, որը փակուղի էր, և այնտեղ էին տեղադրված ոսկերիչների խանութները։ Ոսկերչական խանութների մեծ մասը դատարկ էր և փակ, քանի որ տերերը տեղահանված հայեր էին, որոնց անունները պահպանվել էին ցուցանակների վրա, իսկ տեղի բնակչության մեջ չկային այնպիսի բարձր որակավորում ունեցող արհեստավորներ, որոնք կկարողանային փոխարինել նրանց։ Հրեա Հովսեփ Վարոնի խանութը նախավերջինն էր։ Վարդանն այնտեղ մտավ Նաիրիի հետ, և գերմանացի սպայի հետ զրուցող խանութի տերը կասկածով նրան նայեց։ Սպասելով, որ վաճառականն ազատվի, Վարդանը կանգնեց դազգահի վրա կռացած երկու ոսկերիչների կողքին։ Նրանցից ավելի երիտասարդը ռուբիններ էր տեղադրում մի զարդի վրա։ Մյուսը՝ ճաղատ մի ծերունի, թանկարժեք

մի քար էր ուսումնասիրում աչքին ամրացված խոշորացույցով։ Հետո նա ճշգրիտ շարժումներով սկսեց այն մշակել և Վարդանը հասկացավ, որ նա ադամանդ է նստավորում։ Նա ականջ դրեց Վարոնի խոսակցությանը.

— ...առանց վախի։ Այս խանութը պապս է հիմնադրել ավելի քան հարյուր տարի առաջ և մենք համարվում ենք շրջանի լավագույն նստավորիչները։

Բավարարվելով՝ գերմանացին վճարեց, մատանին գրպանը դրեց և դուրս եկավ։ Վարդանը մոտեցավ խանութի տիրոջը՝ մոտ հիսուն տարեկան մի մարդու, որի բեղերը նույնքան ալեխառն էին և խիտ, որքան մազերը։ Մեջքը կորացրած՝ նա ծպտամ էր այցելուին։ Նրա աչքերը մի քիչ շիլ էին, և դրանից նրա հայացքը տարօրինակ էր թվում։ Նա գլխով արեց.

— Դուք առաջին անգա՞մ եք իմ խանութն այցելում։

— Պարոն Հովսեփ Վարո՞ն։

— Այո։

— Ես եկել եմ ձեր բարեկամներից մեկի կողմից։

Ոսկերիչը հոնքերը կիտեց և, չհավատալով, ոտքից գլուխ աւտումնասիրեց այցելուին։ Նա մրմնջաց.

— Դուք խոշոր եք երաժիշտ լինելու համար։ Ի՞նչ գործիք եք նվագում։

— Ուդ,— պատասխանեց Վարդանը, զարմանալով, որ ոսկերիչը գիտեր իր զբաղմունքի մասին։

— Ո՞վ է սա։

Վաճառականը ցույց տվեց աղջկան, որը կանգնած էր արհեստավորների դիմաց։

— Որբ է։

Հովսեփ Վարոնը աչքերը հառեց երկնքին և երեխային պատվիրեց.

— Մեզ այդտեղ կսպասես և ոչնչի ձեռք չտաս։ Մորիկո, դու այցելուներով զբաղվիր։

Նա բռնեց Վարդանի ձեռքից և նրան ուղեկցեց խանութի հետնամասը, մի մութ սենյակ, ուր կիտված էին արկղեր, հետո դեպի ճռճռան սանդուղքը, որը տանում էր երկրորդ հարկ։ Այնտեղ մի հյուրասենյակ կար, որը լուսավորվում էր փողոցին նայող երկու ճաղապատ լուսամուտներով։ Կաղնեփայտից պատրաստված գեղեցիկ պահարանի կողքին՝ պատին փակցված էր ոսկերչի բազմանդամ ընտանիքի լուսանկարը։ Պատերազմից առաջ նա վաճառել էր գետափին գտնվող իր տունը և կնոջն ու երեխաներին բնակության էր ուղարկել Երուսաղեմ, իսկ մոտն էր թողել միայն Մորիս որդուն, որին փաղաքշորեն Մորիկո էր կոչում։ Հայր ու որդի ապրում էին խանութի վերևի հարկում գտնվող

բնակարանում, որը ժամանակին տրամադրվում էր աշակերտներին։

Ոսկերիչը դարձավ դեպի Վարդանը.

— Դուք ինձ դեռ չեք ասել ձեր անունը։

— Ուդի Յաշար։

— Ուրիշ անուն չունե՞ք։

— Վարդան Պալյան։

Վարոնի բեղերի ծայրերը վեր սողացին նրա դեմքին հայտնված լայն ժպիտից, և նա ձեռքը մեկնեց այցելուին։

— Երջանիկ եմ ձեզ հանդիպելու համար, պարոն Պալյան։ Դուք, իհարկե, հասկանում եք, որ պետք է զգույշ լինել։

— Բնականաբար, պարոն Վարոն, մենք խառը ժամանակներում ենք ապրում։

Հովսեփ Վարոնը նրան նստեցրեց գորգով ծածկված մի հնամաշ բազմոցի վրա և նրան վերմուտ հրամցրեց.

— Ժամանակին ձեր գիրքն ինձ շատ էր դուր եկել։

— Մի տե՛ս, է։ Դուք ինձ զարմացնում եք։

Նա նկատեց, որ զրուցակիցը դեռևս լիովին իրեն չէր վստահում, և այդ նախադասությունն ասված էր իրեն փորձելու համար։ Վարդանը շարունակեց.

— Ո՞րը։ «Քրիստոնյաների ճակատագիրը Օսմանյան կայսրությունո՞ւմ»։ Ոչ։ Դա պետք է որ, ավելի շուտ, «Ազգերի կայսրությունը» լինի։ Ես այնտեղ խոսում եմ Իսրայելի հնարավոր վերածննդի մասին։

— Ճիշտ է,— պատասխանեց Վարոնը գլուխը թափ տալով։— Եվ այդ գիրքը դուր եկավ ինձ, որովհետև ես սիոնիստ եմ։ Մոտենում է ժամանակը, երբ Իսրայելը վերստին գոյություն կունենա։ Հայաստանը նույնպես։

— Ձեր վստահությունը գնահատելի է,— ասաց Վարդանը՝ վերցնելով գավաթը, որը նրան էր մեկնում տանտերը։— Ձեր կենացը, պարոն Վարոն։

— Ձեր կենացը, պարոն Պալյան։

Նրանք խմեցին գինին միմյանց նայելով, և Վարդանը ուրախ բացականչեց.

— Վաղուց այսպիսի նեկտար չէի ըմպել։

— Ես գիտեմ։

— Դուք լավ եք տեղեկացված... Եվ ինձ թվում է, որ ինձ սպասում էիք։

— Այո։ Ինձ վերջերս այցելեց Մեթյուզ քահանան, որն ուղիղ Կապադովկիայից էր գալիս, և խոսեց ձեր մասին։ Դուք նրան ճանաչո՞ւմ եք։

— Ճիշտն ասած՝ պատիվ չեմ ունեցել հանդիպելու այդ գթասիրտ մարդուն։

— Դուք պետք է նրան հանդիպեք, պարոն Պալյան։ Նա աչքի ընկնող մարդ է, որը նվիրվել է կայսրության փոքրամասնությունների կյանքը բարելավելու գործին։

— Նձ թվում է, որ նա շատ գործ ունի անելու, եթե հաշվի առնենք, թե ինչ ժամանակներում ենք մենք ապրում,— պատասխանեց Վարդանն անկաշկանդ տեսքով։

Հովսեփ Վարոնը նայեց իր գավաթին և իր համաձայնությունը հայտնեց՝ գլուխը տմբտմբացնելով։

— Դա սարսափելի ողբերգություն է։ Իմ բոլոր գործընկերներն ու բարեկամները՝ մանկության ընկերները, պարոն Պալյան, տեղահանվել են։ Դուք փողոցը տեսա՞ք։ Խանութների երեք քառորդը փակ է։ Նրանց տները հանձնվել են եկվորների։ Հայկական եկեղեցիները պահեստների են վերածվել։ Դպրոցները հանձնվել են բանակին։ Նույն վիճակն է բոլոր քաղաքներում։

— Ասացեք, պարոն Վարոն, դուք պատկերացում ունե՞ք, թե ինչ վիճակում են հայերը հարավ-արևելքում։

— Բացառությամբ միսիոներների որբանոցներում հայտնված երեխաների, նրանց, ովքեր որպես աղախին աշխատում են թուրք ընտանիքներում, շատ փոքրերի, որոնց որդեգրել են թուրքերը, և կանանց, որոնց թուրքերը պահում են որպես կին կամ սիրուհի՝ այլևս հայ չես գտնի Սիրիայի հյուսիսում։ Մեր հաշվարկներով զոհերի թիվը հասնում է հարյուր հազարների։

— Իսկ Սիրիայո՞ւմ։

— Թե քանիսն են ողջ մնացել անապատում կազմակերպված ճամբարներում և Եփրատը երիզող ճահիճներում, Ռաս—էլ Այինում, Ռաքքայում, Դեյր—էր—Զորում՝ ես չգիտեմ։ Բարեբախտաբար հազարավոր մարդիկ օթևան են գտել Հալեպի բարաքներում, իսկ ոմանք կարողացել են ապաստանել ավելի հարավ՝ Համայում, Բեյրութում և նույնիսկ Երուսաղեմում։

Դա նորություն չէր Վարդանի համար և հաստատում էր այն, ինչ ինքը կասկածում էր։ Տեսնելով նրա ընկճված տեսքը՝ Հովսեփ Վարոնը բարեկամաբար ասաց.

— Ես տեղյակ եմ, որ դուք փնտրում եք ձեր ընտանիքի անդամներին։ Իմ տվյալներով, նրանք անմիջականորեն Ադանայի շրջակայքում չեն։ Դուք ավելի շատ հնարավորություններ ունեք նրանց Հալեպում գտնելու։

— Ես մեծ հույսեր եմ կապում այդ քաղաքի հետ, սակայն չգիտեմ, թե երբ այնտեղ կհասնեմ։ Ինչպես գիտեք, ես ճանապարհորդում եմ երաժիշտների խմբի հետ և չեմ կարող ինքս ընտրել ուղերթը։ Հետևաբար ստիպված եմ հույս դնել պատահականության վրա։

— Մի հուսահատվեք, պարոն Պալյան։ Մենք այնպիսի անհավատալի պատմություններ ենք լսում, որոնք ի վիճակի չէր լինի հորինել մարդկային երևակայությունը։ Մի մայր և նրա դուստրը, որոնք կորցրել էին միմյանց ամիսներ առաջ, իրար գտել են հազար կիլոմետր հեռու, մի փողոցի անկյունում։ Պատահականությո՞ւն, ինչ եք կարծում։ Ոչ, դա Աստծու կամքն է։

— Ես չեմ հուսահատվում։ Պարզապես մեռնում եմ անհանգստությունից և այրվում անհամբերությունից։ Տարբերություն կա։

Պատասխանը դուր եկավ ոսկերչին, որի դեմքը լուսավորվեց ժպիտով։ Վարդանն ուզում էր փոխել թեման և գյուղացու իր շապիկի տակից հանեց մի ծրար, որը նրան էր տվել Արուսյակը։

Հովսեփ Վարոնը ծրարն արագորեն պահեց բազմոցի տակ և ականջ դրեց՝ Վարդանին ևս նշան անելով լսելու։ Ինչ-որ մեկը խանութ էր մտնում։ Համոզվելով, որ դա ընդամենը գնորդ էր, ոսկերիչը ցածրաձայն հարցրեց.

— Այստեղից ո՞ւր եք գնալու։

— Մարաշ։ Հետո Ուռհա կամ Մալաթիա, դեռ հաստատ չէ։

— Ես նամակներ կունենամ ձեզ տալու այնտեղի բարեկամների համար։

— Դա այցելությանս նպատակներից մեկն է,— ասաց Վարդանը՝ համաձայնության նշան անելով։— Բացի դրանից, մեր բարեկամն ասաց, որ դուք գուցե կարողանաք հոդվածներ փոխանցել ֆրանսիական և անգլիական լրագրերին։

— Դա շուտ չի լինի, սակայն նրանք իրենց հանգրվանը կգտնեն, համոզված եղեք։

Վարդանը հանկարծ բավարարվածություն զգաց, մտածելով, որ իր գրիչը մեկ ագամ ևս ծառայելու էր գործին։

— Ես ձեզնից շատ շնորհակալ եմ, պարոն Վարոն, և՛ սրա համար, և՛ այն ամենի համար, ինչ դուք անում եք իմ հայրենակիցների համար։

— Արդյոք դա բնական չէ՞ մի մարդու համար, որը նույնպես հալածված ազգի ներկայացուցիչ է։ Բացի դրանից, այսպես վարվելով, ես վրեժխնդիր եմ լինում իմ անհայտացած ընկերների համար։

Բեղերը շոյելով՝ նա Վարդանին նայեց, ինչպես կնայեր ակնեղենին, այն ձեռք բերելուց առաջ։ Նա կկոցեց աչքերը.

— Գիտեք, պարոն Պալլան, մենք ավելի շատ ընդհանուր շահեր ունենք, քան դուք կարծում եք։

— Ի՞նչ եք ուզում ասել։

— Այն վճիռները, որ կընդունեն դաշնակիցները պատերազմի ավարտին, նույնքան ճակատագրական կլինեն իմ ժողովրդի համար, որքան և ձեր։

— Իսրայե՞լը։

Վարոնը գլխով արեց, նորից նայեց սանդուղքի կողմը և մոտեցավ հյուրին։

— Հավաստի աղբյուրներից գիտեմ, որ անգլիացիները խրախուսում են արաբների ապստամբությունը և նրանց անկախություն են խոստանում։ Սուլթանի բանակը նույնիսկ խնդիրներ ունի իր արաբ սպաների հետ։ Բրիտանացիների ծրագրերի մեջ է մտնում նաև պատերազմից հետո ստեղծել հրեական և հայկական պետություններ։ Մենք պետք է մեր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով օգնենք դաշնակիցներին։

— Ի՞նչ եք դուք ինձնից սպասում։

— Տեղեկություններ։

Վարդանը չկարողացավ ծիծաղը զսպել.

— Որ ես լրտեսի դե՞ր կատարեմ։

— Լրտեսի՛,— պատասխանեց ոսկերիչը՝ իր հերթին ծիծաղելով,— չափազանցնենք։ Բավական է լսել ու նայել։ Քանի որ դուք շատ եք ճանապարհորդելու և նվագելու եք ընդունելությունների ժամանակ, ուր ներկա կլինեն ազդեցիկ մարդիկ, ապա կարող եք հավաքել բազմաթիվ օգտակար տեղեկություններ։ Մեր անգլիացի բարեկամները հետաքրքրվում են զորքերի տեղաշարժերով և կուտակումներով, բարձրաստիճան սպաների նոր նշանակումներով և առափնյա մարտկոցների տեղադրությամբ։ Քանի որ օսմանյան բանակը քիչ թնդանոթներ ունի, ապա դրանք հաճախակի է տեղափոխում։ Դաշնակիցների նավատորմիղը պետք է իմանա, թե դրանք ուր են տանում։

— Ես կարեցածս կանեմ։ Ո՞ւմ եմ հաղորդելու այդ տեղեկությունները։

— Այն մարդկանց, որոնց ցուցակը ձեզ է տվել Ուրգուպի մեր բարեկամուհին։ Դուք կկարողանաք նաև նրանց հանձնել ձեր հոդվածները։

Կասկածից վեր էր, որ Հովսեփ Վարոնը Վարդանին գործարք էր առաջարկում։ Դրա պայմանները Վարդանի համար շահեկան էին։ Տղամարդիկ քննարկեցին մարամասները, և Վարդանը տանտիրոջը հանձնեց երկու հոդվածները, որոնք նա Քամանչա Հակիից ծածուկ գրել էր Մերսինի իջևանատան սենյակում, ուր միասին էին ապրում։ Մեկում

Նա նկարագրում էր ավերված գյուղի մոտ իր տեսած ոսկորների կույտերը, իսկ մյուսում պաշտպանում էր ինքնավար Հայաստանի գաղափարը։ Երկար տարիների ընթացքում առաջին անգամ էր, որ Վարդանը ծածկանվամբ չէր հանդես գալիս և հոդվածները ստորագրել էր իր իսկական անունով՝ հակառակվելով իշխանություններին և իմաց տալով իրեն ճանաչողներին, որ ինքը ողջ էր։

Ոսկերիչն առանց վարանելու համաձայնեց ապաստանել որբին, մինչև որևէ միսիոների հանձնելը։ Սակայն երբ աղջիկը տեսավ, որ Վարդանը գնում էր, ուզեց հետևել նրան։ Վարդանը կռացավ և շշնջաց նրա ականջին.

— Ես չեմ կարող քեզ հետս տանել, Նաիրի։ Պարոն Վարոնը բարեկամ է, նա քեզ կօգնի։ Այսուհետ դու մենակ չես լինի։

Աղջիկն այնպես զարմացավ, որ այդ մարդը խոսեց իր լեզվով, որ ապշած մնաց։ Վարդանը նրա ճակատը համբուրեց և նրան մղեց դեպի Հովսեփ Վարոնը, որն ասաց շատ մեղմ ձայնով.

— Արի, զավակս։ Մենք քեզնով կզբաղվենք։ Գիտես, ես թոռներ ունեմ։

Այլայլված դեմքով, անսահման տխրությամբ լի աչքերով, աղջիկը հրաժեշտի նշան արեց դուրս եկող Վարդանին և լաց եղավ։ Վարդանը շշրջվեց և հեռացավ արագ քայլերով՝ մտքում կրկնելով իր ճանապարհին պատահաբար հայտնված այդ երեխայի անունը։ Պատահաբար։ Ինչպես և որբը, Վարդանը նույնպես հույս կարող էր դնել միայն պատահականության վրա։ Նա մտածեց այն ամենի մասին, ինչ պատմել էր Հովսեփ Վարոնը։ Այդ մայրն ու այդ դուստրը, որոնք իրար էին գտել փողոցի անկյունում... Յուրաքանչյուր անգամ որևէ քաղաքով կամ գյուղով անցնելիս, որևէ մահմեդականի տուն մտնելիս հույս պետք է ծնվեր։ Եվ քանի ցս հիսաթափված լինելու հեռանկարով։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 12

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 12:36-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 11 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 13 ►

Թովմասը, Քենանը, Արիֆն ու Զեհրան զինվոր-զինվոր էին խաղում բաղնիքի գոլորշիով պատված հիմնական սրահում: Սապնաջրով ծածկված մարմարյա հատակին նրանց բոկամաշիկների կտկտոցը խառնվում էր խոսակցությունների աղմուկին և շատրվանի ջրի ձայնին: Նրանք արժանանում էին բաղնեպանուհիների խիստ հայացքներին, որոնք ձիու մազից պատրաստված քիսաներով մերսում և տրորում էին տաքացվող կենտրոնական մարմարյա բեմին պառկած իրենց հաճախորդների մարմինները: Իմանալով, որ դրանք գավառապետի երեխաներն են, աշխատողները չէին համարձակվում նկատողություն անել և բավարարվում էին «սուս» ասելով, ինչը, սակայն, արդյունք չէր տալիս: Սաֆիյեն, որը պառկած էր փորի վրա, իսկ բաղնեպանուհին տրորում էր նրա մեջքը, արմունկների վրա հենվեց և երեխաներին պատվիրեց դադարեցնել աղմուկը: Նրանք զգաստ կանգնեցին նրա առջև՝ պատվի առնելով, և առաջին կինը չկարողացավ զսպել ժպիտը: Այդ դիրքում նրա ստինքները կախվել էին մինչև սրբիչով ծածկած քարը, իսկ քարի վրա ճապաղվել էին:

— Այս դիրքում դրանք թզի են նման,— շշնջաց Քենանը:

— Սեխի պես մեծ թզեր,- ավելացրեց Թովմասը:

Երկու ավելի փոքր երեխաները չհասկացան ակնարկը, սակայն Էմելը ծիծաղեց ու փսփսաց տղաների ականջին.

— Ես քրոջս պես կուրծք կունենամ:

— Պահ,- արձագանքեց Քենանը,— Շահանեինը կիտրոնի նման են:

— Գոնե դատարկ տիկ չեն հիշեցնում:

Էմելը այդ խոսքերն արտասանեց քամահրանքով: Նա լիովին համամիտ էր տղաների հետ, երբ նրանք արհամարհական ակնարկներ էին անում կանանց թոշնած մարմինների, ցցուն փորերի, ծանրացած հետույքների և հաստ ազդրերի վերաբերյալ, սակայն սրտին ավելի մոտ էր ընդունում, քանի որ վախենում էր, որ ծերանալով ինքը կկորցներ իր գեղանի ուրվագիծը: Չէ՞ որ իր մայրը՝ Մակբուլեն, չափից ավելի գեր էր:

— Ես գեղեցիկ կմնամ, ինչպես Մարոն,— ասաց նա Թովմասին, որի

դեմքը շիկնեց։

Եթե Թովմասը հետաքրքրասիրությամբ էր նայում մերսողների ձեռքերին անձնատուր եղող այլ կանանց մերկ մարմիններին, նա խուսափում էր նայել մորը, և եթե պատահաբար նրան մերկ էր տեսնում, իրեն մեղավոր էր զգում։ Միգուցե այն պատճառով, որ վաղ մանկությունից առիթ չէր ունեցել կանանց հետ բաղնիք գնալու։

— Գնանք իմ մայրիկին տեսնենք,— առաջարկեց Զեհրան բարակ ձայնով։

Մեծերը հաճույքով հանաձայնեցին, քանի որ Լեյլան ամաչկոտ չէր և դեմ չէր լինում, որ երեխաները իրեն լրիվ մերկ տեսնեին։ Հակառակը՝ նա հաճույքով հետևում էր Քենանի ու Թովմասի դեմքին հայտնվող հուզմունքին, երբ նրանք կանացի մերկ մարմին էին տեսնում, իսկ Էմելի նախանձը, որն ակնհայտ էր, նրան շոյում էր։

Դարձյալ շարքով, այս անգամ Զեհրայի առաջնորդությամբ, երեխաները շրջանցեցին կենտրոնական բեմը։ Դահլիճը լուսավորվում էր շենքը պսակող գմբեթում տեղադրված ապակեպատ խարիսխներից ընկնող լույսով, իսկ դահլիճը լի էր տաք գոլորշիով։ Այդ խոնավ մթնոլորտը, որը նեծծված էր զոնըկի տտիպ հոտով, որով կանայք հեռացնում էին իրենց մարմնի մազերը, դժվարացնում էր շնչառությունը, խլացնում ձայները, իսկ ուրվագծերը աղոտ էր դարձնում։

Կուրնասների՝ պատին կից ծորակով ավազանների մոտ կանայք էին լողանում, որոնք ջուր էին վերցնում պղնձե կոնքերով։ Ծիծաղ էր հնչում, հատկապես, երբ նրանք խոսում էին տղամարդկանց և սեռական հարաբերությունների մասին, կարծելով, որ իրենց կողքին խաղացող երեխաները չէին հասկանում։ Թովմասի համար բաղնիքը կախարդական վայր էր, քանի որ նրան արբեցնում էր այդքան մերկ կանանց ներկայությունը, և ինչպես իր ընկեր Քենանը, այն տպավորությունն ուներ, որ նրանք բոլորն իրեն էին պատկանում, բացառությամբ, իհարկե, իր մոր։ Նա գիտակցում էր, որ ինքը մերձենում էր ամենամեծ գաղտնիքին՝ կյանքի գաղտնիքին, և հույս ուներ, որ շուտով ինքը ամեն ինչ կհասկանար։ Յուրաքանչյուր այցելությունից հետո Քենանն ու ինքը երկար քննարկում էին այդ հարցը, առանց որևէ եզրահանգման գալու։ Էմելը միանում էր նրանց, և այգու որևէ թաքուն անկյունում նրանք ուսումնասիրում էին իրենց սեռական անդամները, առանց ավելին հասկանալու։ Աղջիկը խոստանում էր բացատրություններ պահանջել մորից, սակայն անդադար հետաձգում էր այդ պահը։

Ոչզա բեյի կանայք մնացած կանանց հետ չէին լողանում։ Ինչպես և մյուս բարեկեցիկ կանայք, նրանք վարձում էին համարներ, որոնք տեղադրված էին դահլիճի շրջագծի վրա։ Զեհրան դեռ չէր էլ հեռացրել դռան փոխարեն կախված սրբիչը, իսկ զոնըկի հոտն արդեն ծակծկում էր նրանց ռունգերը։ Լեյլայի մարմինը պատված էր կապտականաչավուն մի մածուկով, որն այնքան սուր հոտ ուներ, որ կանայք խուսափում էին այն տանն օգտագործելուց։

— Ջրեք ինձ,— ասաց նա երեխաներին՝ նրանց հրավիրելով երկու հոգու համար նախատեսված բաժանմունքը։

Նրանք մի քիչ վիճաբանեցին պղնձե կոնքերի համար, որոնց ի վերջո տիրացան փոքրերը։ Էմելը, Թովմասն ու Քենանը բավարարվեցին բռով ջուր լցնելով կնոջ վրա։ Ձեռքերը գլխին դրած, նա դանդաղ պտտվում էր և սուր ճիչեր էր արձակում կամ էլ բողոքում էր, երբ ջուրը դեմքին էր ընկնում։

— Ջուրը սառն է։ Դեմքիս մի լցրեք։

Գարշահոտ մածուկը կամաց-կամաց լվացվում էր նրա մարմնից՝ իր հետ տանելով սև ու գանգուր մազերը։ Թովմասը ջրում էր կնոջ թևատակերն ու թևերը, սակայն իրականում նշան էր բռնում սուր և մուգ պտուկներով ստինքներին, որոնք մտովի համեմատում էր փոքր սեխերի հետ։ Էմելից չվրիպեց Քենանի հայացքը, որով նա Թովմասին հասկացնում էր, որ ինքը ավելի ցած պետք է նայեր։ Երբ երիտասարդ կինը պտտվում էր, նրա ոտքերն իրարից հեռանում էին և երևում էր նրա ցայլքը։ Լեյլան նկատեց տղաների խորամանկությունը և ժպտաց։ Նրա թաց մազերից ջուրը հոսում էր և կաթիլներով էր պատում նրա մաշկը, որը թուխ էր և հարթ։ Նրա մարմինը նույնքան ձիգ էր թվում, որքան Ռըզա բեյի այգում տեղադրված արձանների մարմարը, որոնց դուրս ցցված մասերը Թովմասն ու Քենանը երբեմն շոյում էին։ Տղաները դեմ չէին լինի, եթե Լեյլան նրանց խնդրեր իր մարմինը տրորել քիսայով կամ էլ գոնե մեջքը օճառել։

— Եկեք նախասրահ, Բույուկ խանումը ձեզ ճաշի է սպասում,— հայտարարեց Էմինեն՝ գլուխը համարը մտցնելով։

— Գալիս ենք,— պատասխանեց Լեյլան։

Հպանցիկ հայացք նետելով՝ Էմինեն համոզվեց, որ տղաները գրգռված չեն, հակառակ դեպքում բաղնիքի կառավարչուհին կարգելեր նրանց ուղեկցել իրենց մորը բաղնիք։ Այդ դեպքում նրանք պարտավոր էին գալ իրենց հայրերի հետ երեկոյան, երբ բաղնիքը տղամարդկանց էր տրամադրվում։

— Ես հիմա կգամ,— ասաց Մարոն, որը զբաղեցնում էր կողքի բաժանմունքը։

Համոզվելով, որ դայակը երեխաների ուղեկցությամբ հեռացել էր, Մարոն շարունակեց իր մարմնի մանրակրկիտ ուսումնասիրությունը։ Կասկածից վեր էր, որ իր կուրծքը լցվել էր, կոնքերը լայնացել էին, իսկ փորն անշեղորեն մեծանում էր։ Վատթարագույնը տեղի էր ունեցել։ Դրանով կարելի էր բացատրել վերջին շաբաթների իր առավոտյան սրտխառնոցները։ Տեղահանությունից ի վեր նրա դաշտանն անկանոն էր դարձել, և նա ուշադրություն չէր դարձրել, որ այն ընդհատվել էր և արդեն երեք կամ չորս ամիս։ Հղիությո՛ւն։ Ապշած՝ նա չէր կարողանում պատկերացնել այդ աղետի բոլոր հետեանքները։ Նրա առաջին ռեակցիան հախուռն ըմբոստացումն էր և մերժումը. «Ոչ։ Անհնար է։ Ես չեմ ուզում»։ Նրա մտքում այս խոսքերն էին պտտվում, որոնք նա

արտասանում էր որպես աղերսանք, որը կոչված էր այդ դժբախտությունն իրենից վանելու։ Այդուհանդերձ պետք էր ընդունել իրողությունը։

Հանկարծ Մարոն նկատեց, որ Լեյլան մի կողմ էր տարել վարագույրը և հետաքրքրությամբ զննում էր իրեն։ Երրորդ կինը չէր հաշտվել Մարոյի ներկայության հետ, սակայն Ռըզա բեյին հաճոյանալու համար, որը դարձյալ ուշադիր էր իր նկատմամբ, նա բարեկամության դիմակի տակ թաքցնում էր իր հակակրանքը այդ հայուհու նկատմամբ, սակայն Մարոն չէր խաբվում։ Վախենալով, որ երտասարդ կինը կարող էր գլխի ընկնել իր վիճակի մասին, Մարոն հայտարարեց անտարբեր ձևանալով.

— Ես արձանագրում եմ տարիների թողած հետքերը...

Մարոն փաթաթվեց կապույտ զոլերով սպիտակ սրբիչի մեջ և Լեյլային ուղեկցեց նախասրահ, ուր հաստ սրբիչներով ծածկված կաշվե բազմոցները հնարավորություն էին տալիս հանգստանալու բաղնիքից դուրս գալուց կամ լողասենյակ վերադառնալուց առաջ։ Նախասրահի մի անկյունում, որը կառավարչուհին հատկացրել էր Բույուկ խանումին, նա հետևում էր երկու ծառայողների, որոնք զամբյուղներից հանում էին ճաշի համար բերված ուտեստները՝ գառան միս, դոլմա, այծի պանիր և քաղցրավենիք։ Մեկ այլ ծառայող թեյ էր մատուցում։ Ինչպես և հարսներն ու դայակը և մնացած բոլոր այցելուները, գավառապետի մայրը փաթաթված էր սրբիչի մեջ, սակայն այս հանգամանքը բոլորովին չէր նվազեցնում նրա տիրական տեսքը։

— Վերջապես եկան։ Ինչո՞ւ ուշացաք,— հանդիմանեց նա Լեյլային ու Մարոյին։

Իրականում նրանք չէին ուշացել։ Պարզապես Բույուկ խանումը ջանում էր տպավորություն թողնել իր հարևանուհիների վրա, և երկու կանայք՝ հասկանալով այդ բանը, գլուխները կախեցին և հարգանքով պատասխանեցին.

— Ներեցեք, Բույուկ խանում։

Մարոն ախորժակ չուներ։ Չնայած որ նա փորձում էր մասնակցել խոսակցությանը, սակայն չէր կարողանում մտքից հանել ճակատագրական հայտնագործությունը, որ արել էր, և չէր կարողանում իրեն անբռնազբոս պահել։ Բոլորը զգում էին, որ նա մտահոգ էր և ցրված։ Քանի որ Լեյլան հոնքերը կիտած անդադար նրան էր նայում, մնացած կանայք կարծեցին, որ նրանք վիճել էին, ուստի ոչ ոք ուշադրություն չդարձրեց Մարոյի պահվածքին։ Մթնոլորտը պարպելու համար էմինեն պատմեց Խոջա Նասրեդինին պատահած զվարճալի պատմություններից մի քանիսը։

* * *

Օրեր շարունակ Մարոն փորձում էր ինքն իրեն համոզել, որ ինքը սխալվել էր, սակայն հղիության բոլոր նշաններն առկա էին, և պահեր էին լինում, երբ նրան թվում էր, որ իր ներսում օտար մարմին կար։ Դա անկասկած պատրանք էր, քանի որ նա հղիության չորրորդ, ամենաշատը հինգերորդ ամսին էր։

Նա չէր ուզում այդ երեխային։ Դա իր երեխան չէր։ Նա ատում էր այդ երեխային, ինչպես ատում էր Ռըզա բեյին, որը նոր կապանք էր ստեղծել իրեն գերության մեջ պահելու համար։ Այդ հղիությունը նրա ընկալմամբ հիվանդություն էր, որը պատուհասել էր իրեն և որից նա ամաչում էր։ Եվ իր հոգում միախառնվել էին հուսահատությունն ու վրդովմունքը։ Չկար ոչ մի լուծում, ինչպես նաև չկար մեկը, որին Մարոն կարողանար ապավինել։

Մարոն մեկ շաբաթ դիմացավ և իր գաղտնիքը ոչ մեկին չվստահեց։ Սակայն այդ վիճակն ընկճում էր նրան և, չկարողանալով դիմանալ այդ բեռին, նա վճռեց կիսվել էմինեի հետ։ Նա Այլային ուղարկեց նրա հետևից։ Դայակը մի քանի րոպեից եկավ՝ սկուտեղով երկու գավաթ սուրճ բերելով։

— Մեզ մենակ թող,— ասաց Մարոն աղախնին։

— Ուզում ես ապագա՞դ գուշակեմ,— հարցրեց էմինեն՝ սկուտեղը փոքր սեղանին դնելով։

— Դա Ռըզա բեյի համար պահիր։

Կտրուկ տոնից դայակը հասկացավ, որ ինչ-որ բան էր պատահել Մարոյին։

— Արի կողքս նստիր,— կանչեց նա Մարոյին, տեղավորվելով բարձի վրա։

Մարոն նստեց և վերցրեց գավաթը, որն իրեն էր մեկնել էմինեն։ Քանի որ Մարոն չէր կարողանում սկսել խոսակցությունը, դայակը ցածրաձայն ասաց.

— Ես սուրճի մրուրի կարիքը չունեմ որոշ բաներ իմանալու համար։ Կան նշաններ, որոնք չեն վրիպում նախկին տատմոր աչքից։

Մարոն, ապշահար, նրան նայեց, հետո սկսեց հեկեկալ՝ դեմքը թաքցնելով ափերի մեջ։ Նա լարվեց, երբ էմինեն փորձեց գրկել իրեն։

— Դու ինձ զարմացնում ես,— մրմնջաց դայակը՝ նրա ձեռքը շոյելով։ — Դա լավ նորություն է, նախախնամության պարգև։

— Սա դժբախտություն է։ Սարսափելի փորձություն։

Ծեր կինը չէր հասկանում Մարոյին, քանզի կարծում էր, որ նա արդեն համակերպվել էր ողջ կյանքը կալվածքում անցկացնելու մտքի հետ, երջանիկ, որ գավառապետը սիրում էր իրեն։

— Ռըզա բեյը շատ երջանիկ կլինի։

Մարոն թունոտ ասաց.

— Ռըզա բե՛յ։ Եթե ուզում ես իմանալ, ինձ չի հուզում, թե նա ինչ կմտածի։

— Սակայն... Իմանալով, որ դու հղի ես, նա կուզենա ամուսնանալ քեզ հետ։

— Ես երբեք չեմ համաձայնի,— բացականչեց Մարոն բարկանալով։— Երբե՛ք։

Սրտի այդ ճիչը շփոթեցրեց Էմինեին։

— Դու Ռըզայի պես մարդ չես գտնի։ Նա գեղեցիկ է, հարուստ, ազդեցիկ և սիրում է քեզ։

Մարոն հառաչեց և կտրուկ ասաց.

— Դու չես հասկանում, Էմինե։ Ես նրան ատում եմ։ Նա ինձ ուժով է տիրացել։ Նա ինձ որպես պատանդ է պահում իմ որդու հետ։ Ինչպե՞ս կարող եմ նրան սիրել։

— Սակայն նա քեզ փրկել է։

— Փրկել է ջարդերից, որոնք ինքն է ղեկավարում։

— Ոչ,— վրդովվեց Էմինեն՝ ապշելով այդ խոսքերից։— Հակառակը, Ռըզա բեյը հովանավորում է քո հայրենակիցներին։

— Սուտ է։ Այս շրջանում ինքն է տերը։ Ինչո՞ւ է նա այդքան հաճախ բացակայում։ Հարևան գավառներում անմեղ մարդկանց ջարդերը կազմակերպելու համար։

— Լռի՛ր, լռի՛ր,— հրամայեց դայակը սարսափած տեսքով և գունատվելով։— Դա անհնարին է։ Ես ճանաչում եմ Ռըզային նրա ծննդյան օրվանից։ Նա խիստ է, բայց արդարացի և գթասիրտ։ Դու իրավունք չունես նման սուտ ասելու։ Ես քեզ արգելում եմ, որ այդպես մտածես։

Էմինեն խորապես վիրավորված էր։ Մարոն ափսոսաց, որ զայրացրել և իր դեմ էր տրամադրել դայակին, մինչդեռ ինքը նրա կարիքն ուներ։ Մի պահ լռելուց հետո նա հպվեց ծեր կնոջ ձեռքին և շշնջաց մեղավոր տեսքով։

— Ես չէի մտածում, թե ինչ էի ասում։ Այս քանի օրը գլուխս կորցրել եմ։

— Սրտիդ տակ եղած երեխայի՞ պատճառով,— հարցրեց դայակը՝ հանգստանալով այդ խոստովանանքից։

— Այո։ Գիտե՞ս, Էմինե, ես չեմ ուզում այդ երեխային։

— Ինչո՞ւ։ Երեխան կյանք է, ապագա։

— Ոչ ինձ համար։ Ես դեռ հույս ունեմ, որ մի օր Ռըզա բեյը թույլ կտա,

որ ես գնամ, ինչպես ինձ խոստացել էր: Եթե երեխա պարգևեմ նրան, նա կուզի ինձ պահել:

Էմինեն մտածեց, որ կինն ամուսնանալով՝ նոր ընտանիք է ձեռք բերում, և որ Մարոյի միակ ընտանիքն այսուհետ Ռըզա բեյի ընտանիքն էր:

— Դու ոչինչ անել չես կարող,— ասաց նա ճակատագրին հլու,— երեխան արդեն կա:

— Ոչ,— վճռականորեն ասաց Մարոն,— նա դեռևս չկա և ես ուզում եմ խանգարել նրա լինելուն: Դրա համար միջոցներ կան:

Դայակը վախեցած աչքերը ճպճպացրեց և դողացող ձեռքով վերցրեց սուրճի գավաթը: Պատասխանելու փոխարեն նա սուրճ խմեց: Մարոն սադրեց.

— Եվ դու գիտես այդ միջոցները:

— Ես ոչ մի միջոց չգիտեմ,— ժխտեց Էմինեն վեհությամբ:

Նա ուզեց վեր կենալ, սակայն Մարոն նրան պահեց:

— Ստախոս: Դու տատմեր ես եղել:

— Ինձնից դա չպահանջես:

Մարոն մոտեցավ Էմինեին և նրա այտը համբուրեց, ինչպես անում էին երեխաները, երբ ցանկանում էին, որ ծեր կինն իրենց չմերժեր, հետո ասաց.

— Ես քո օգնության կարիքն ունեմ, Էմինե: Խնդրում եմ քեզ:

— Ոչ, ես չեմ կարող սպանել Ռըզա բեյի երեխային:

— Նա արդեն ութն ունի, իսկ Լեյլան ու Մակբուլեն էլի երեխաներ կպարգևեն նրան:

— Ոչ:

— Դու ասում էիր, որ իմ բարեկամն ես,— ասաց Մարոն հանդիմանանքով:

— Կարող ես չկասկածել, դու թանկ ես ինձ համար, սակայն ինչ ինձնից խնդրում ես... Ոչ, ես չեմ կարող, Ռըզա բեյն իմ տերն է:

Մարոն նոր փաստարկներ բերեց, փորձելով համոզել դայակին: Նա հաջողության չհասավ և կրկին հուսահատվեց: Նա մի քանի անգամ բռունցքով փորին խփեց և բղավեց.

— Ես նրան չեմ ունենա: Ես նրան չեմ ունենա: Ավելի լավ է մեռնեմ:

Էմինեն մտքերի մեջ էր խորասուզվել: Նա երկար էր ապրել , և նրան ծանոթ էր այդ հուսահատությունը, որին նա հանդիպել էր այլ կանանց մոտ, որոնց փրկել էր պատվազրկությունից, կամ ինքնասպանությունից՝

վիժեցնող թուրմ տալով։ Մարոյի հուսահատությունը միայն կխորանար, և նա կարող էր դիմել ծայրահեղ միջոցների։ Եվ եթե դա պատահեր, ինքն իրեն մեղավոր կզգար երիտասարդ կնոջը օգնության ձեռք չմեկնելու համար։

— Քո հղիությունը մեծ է, և դա կարող է վտանգավոր լինել։ Եթե քեզ դժբախտություն պատահի, ես ինձ չեմ ների։

— Եթե ոչինչ չանես, ապա դժբախտություն հաստատ կպատահի։

Այդ սպառնալիքը հաստատում էր Էմինեի կասկածը, և նա որոշեց միջամտել։

— Ես չպետք է այդ բանն անեի,— պատասխանեց նա հաշտվելով,— բայց դու ինձ վրա բռնանում ես։

Թեթևություն զգալով՝ Մարոն գրկեց նրան.

— Դու ինձ համար բարեկամից ավելին ես, Էմինե։ Դու իմ քույրն ես։

Հաջորդ իսկ օրը Էմինեն գնաց Այնթապ։ Նա ծանոթ դեղագործի մոտից թուրմ գնեց՝ դեղաբույսերի և այլ նյութերի մի խառնուրդ, որը վաղաժամկետ ծննդաբերություն էր առաջացնում։ Ճենապակյա սրվակը Մարոյին տալով, նա հարցրեց.

— Միտքդ չե՞ս փոխել։ Այս թուրմից մի ամբողջ օր քեզ շատ վատ կզգաս։

— Կարևոր չէ,— հայտարարեց Մարոն՝ վախենալով, որ դայակն իր խոսքից հետ կկանգներ։

— Կեսը կխմես առավոտյան արթնանալուց հետո, իսկ մնացածը կեսօրին։ Պետք է սոված մնաս, արգելվում է նույնիսկ ջուր խմել։ Թուրմն իր ազդեցությունը կունենա հաջորդ գիշեր։

Մարոն շտապեց սրվակը պահել դարակում, հագուստի տակ։ Այժմ, երբ նա ուներ իր այդ վիճակին վերջ տալու միջոցը, նախորդ օրերի տագնապն անցավ, և նա իրեն շատ հոգնած զգաց։

Գործի անցնելու համար Մարոն սպասեց, որ Ըզգան բացակայեր տնից և դա իրականացավ հենց հաջորդ օրը։ Նա գնում էր Այնթապից մի ութսուն կիլոմետր արևմուտք ընկած Օսմանիեում գնած իր կալվածքը տեսնելու և սովորության համաձայն հետն էր տանում Թովմասին և որդիներից երկուսին։ Նրանք բացակայելու էին երկու կամ երեք օր, և այդ ընթացքում Մարոն հնարավորություն կունենար ապաքինվելու։

Այդ գիշեր նա շատ վատ էր քնել, քանի որ մտատանջություններ ուներ իր արարքի կապակցությամբ։ Հավատքի տեսանկյունից դա հանցագործություն էր։ Աստված, որը վերծանում էր մարդկային հոգիները, չէր կարող իրեն մեղադրել այդ արարքի համար Վերջին դատաստանի օրը։ Անկասկած, նա մտավախություններ ուներ, սակայն նա ավելի էր վախենամ անուղղելին կատարվելուց։ Նա արթնացավ լուսաբացից առաջ և արդեն ոտքի վրա էր, երբ Պիրի խոջան՝ մուեզզինը,

ազդարարեց առաջին աղոթքը։ Սրվակը թափահարելուց հետո նա խմեց պարունակության կեսը և ծամածռվեց դառնությունից։ Դառը հեղուկը թմրեցրեց նրա բերանը և քերեց կոկորդը։ Մարոյի ստամոքսը կծկվեց և սիրտը խառնեց։ Նա ամեն ինչ կտար մեկ կում ջուր խմելու համար, որպեսզի այրոցի զգացումը թեթևանար։ Նա դուրս եկավ պատշգամբ և, հենվելով բազրիքին, խորը շունչ քաշեց։ Աստիճանաբար ցավը թեթևացավ, և Մարոն արթնացրեց Թովմասին, որպեսզի նա պատրաստվեր մեկնելու։ Նա որդուն ուղեկցեց ճաշասենյակ, ուր երեխաները նախաճաշում էին իրենց հոր հետ։ Պետրին նստած էր տիրոջ կողքին, և Մարոն քողով ծածկեց դեմքը և այդ շարժումը հաճելի էր Ռըզա բեյին։

— Դու լավ տեսք ունես,— ասաց Ռըզան՝ հրավիրելով Մարոյին նստել իր առջև։

— Շնորհակալություն, Ռըզա բեյ,— պատասխանեց նա գլուխը կախելով։— Եթե թույլ տաք, ես ավելի ուշ կուտեմ, քանի որ քաղցած չեմ։

— Ինչպես կուզես։

Պետրին աչքերը բարձրացրեց և, ինչպես միշտ, երբ նա նայում էր Մարոյին, կինը զգաց այն անսահման արհամարհանքը, որ նա տածում էր իր հանդեպ։

Թովմասը, որն արդեն ընտելացել էր տան տիրոջ նկատմամբ նրա որդիների վարքագծի կանոններին, համբուրեց Ռըզա բեյի ձեռքը և այն տարավ իր ճակատին։

— Թող այս օրը ձեզ համար արգասաբեր լինի,— ասաց նա մեքենայաբար և ավելացրեց ավելի աշխույժ ձայնով։— Ե՞րբ ենք մեկնելու։

Ռըզան ծիծաղեց և թփթփացրեց նրա ուսին։

— Նախ՝ կեր։

— Ինչո՞ւ ես չեմ կարող ձեզ ուղեկցել, հայրիկ,— տխուր ձայնով հարցրեց Էմելը։

— Կառքում միայն չորս հոգու տեղ կա՝ Ալթանի, Քենանի, Թովմասի և ինձ համար։

— Ես ձեր գոգին կնստեմ։

Բարկանալով դստեր համառությունից՝ Ռըզա բեյը կարճ կապեց.

— Աղջկա տեղը տանն է, իր մոր մոտ։

Էմելը գլուխը կախեց ու համաձայնեց։

— Եթե տեղ լիներ, ես կգնայի,— հայտարարեց Արիֆը, որի հինգ տարին նոր էր լրացել։— Ես տղա եմ։

Էմինեն կանգնած էր խոհանոցը տանող դռան մոտ և հետևում էր

նախաճաշը մատուցողների աշխատանքին։ Մարոյի հետ հայացք փոխանակելով՝ դայակը հասկացավ, որ նա խմել էր թուրմը։ Երբ նրանք փոքր երեխաների հետ բակ դուրս եկան վեց հեծյալ արաբների ուղեկցությամբ մեկնողներին ճանապարհելու, դայակը Մարոյի ականջին շշնջաց.

— Զմոռանաս, որ պետք է սոված և ծարավ մնաս մինչև գիշեր։ Արևից զգուշացիր, որ չջրազրկվես։

— Ես ավելի վատ բաներ եմ տեսել,— պատասխանեց Մարոն, որն անմիջապես ձեռքերը փորին տարավ, որը կծկվեց։

Օդի ջերմաստիճանը հասել էր 35 աստիճանի և, ինչպես հաճախ էր լինում ամռանն Այնթապում, անապատից չոր քամի էր փչում։ Տան երկրորդ հարկի սենյակներում օդը հեղձուցիչ էր, և կանայք իջան այգի, ապաստանելով տաղավարի հովանու ներքո, ուր շատրվանը մի քիչ զովություն էր պարգևում։ Բույուկ խանումը հյուսում էր առանց իր աշխատանքին նայելու և հարսների համար հերթական անգամ շարադրում էր ընտանիքի պատմությունը, որը նրանք բազմիցս լսել էին։ Մակբուլեն ձեռագործ էր անում և թելի երկարությունն այնպես էր ընտրում, որպեսզի հնարավորություն ունենար առանց ասեղը վայր դնելու կողքին դրված ափսեից քաղցրավենիք վերցնել։

Մի կողմ նստած Շահանեն արդեն տասներորդ անգամ կարդում էր իր նշանածի նամակը, որը նա Բաղդադից էր գրել։ Լեյլան մատների ծայրերով հպվում էր սազի լարերին՝ նվագակցելով սկեսուրի միալար մենախոսությանը և կկոցած աչքերով նայում էր իր ընկերուհիներին, և նրա հայացքը հատկապես երկար կանգ էր առնում Մարոյի վրա, որի վարքագիծը վերջին օրերին նրան տարօրինակ էր թվում։ Էմինեն ննջում էր, և նրա ճակատով քրտնքի կաթիլներ էին հոսում։ Սաֆիյեն աջ ձեռքով հովհարն էր թափահարում, իսկ ձախ ձեռքի մատով հետևում էր գոգին դրված գրքի տողերին։ Մարոն միակն էր, որին հետաքրքրում էր Բույուկ խանումի պատմությունը։

— ...Այդպես եղավ, որ Բահադիր փաշան՝ Ռըզա բեյի պապը, կանչվեց Ստամբուլ՝ սուլթանի մոտ։ Այդ ժամանակ ճանապարհորդությունը դեպի մայրաքաղաք հեշտ բան չէր և...

Զնայած Մարոն ուշադիր նայում էր Բույուկ խանումի շուրթերին, նա չէր լսում։ Բոլոր ուժերը նա վատնում էր դեմքի արտահայտությունը վերահսկելու վրա, ջանալով, որ ոչ ոք չնկատեր իր տառապանքը։ Փորացավին ավելացել էր սարսափելի ծարավը, ե աղախնի մատուցած զովացուցիչ ըմպելիքների առատությունը նրան անասելի տառապանք էր պատճառում։ Ժամանակը շատ դանդաղ էր անցնում։ Կեսօրին Մարոն խմեց թուրմի մնացորդը, և դարձյալ նրա սիրտը խառնեց։ Նրա ինքնազգացողությունը վատացավ։ Կեսօրից հետո Մարոն վայր դրեց խաղաքարտերը և ընդհատեց բեզիկի պարտիան՝ թղթախաղ, որը նա սովորեցրել էր Սաֆիյեին, ներողություն խնդրեց վերջինից, պատճառաբանելով հոգնածությունը։ Նա շտապ հեռացավ այգուց և իր սենյակը վերադարձավ օրորվելով, ընկավ մահճակալին և կարողացավ

մի քիչ քնել։ Քիչ անց նրան այցելեց Էմինեն և տեսավ, որ նա կծկվել էր մահճակալին և առատորեն քրտնել էր։ Նա շոշափեց Մարոյի ուռած փորը և հանգստացրեց նրան.

— Ցավ պիտի քաշես, դա բնական է։ Ամեն ինչ ընթանում է նախատեսվածի պես։ Դու քեզ լավ պահեցիր այսօր, և ոչ ոք ոչինչ չի կասկածում։ Սակայն հավաքիր բոլոր ուժերդ, քանի որ վատթարագույնն առջևում է։

Մարոն ծամածռվեց։ Նրա բերանն ու կոկորդը այնքան էին չորացել, որ հազիվ էր խոսում։

— Կարո՞ղ եմ որևէ բան խմել։

— Երբ արևը մայր կմտնի։

— Նախազգուշացրու Բույուկ խանումին, որ ես մի քիչ տկար եմ և ներողություն խնդրիր ճաշին չներկայանալու համար։ Ջմոռանաս՝ մի քիչ։ Պետք չէ, որ նա անհանգստանա։ Իմ աղախին Այլային ասա, որ ես հանգստանում եմ և որ նրա կարիքը չեմ ունենա մինչ վաղը։

Դայակը նրան օգնեց հանվել և դեմքն ու մարմինը թարմացրեց թրջած անձեռոցիկով։ Նա սեղմեց Մարոյի ձեռքը և սրտապնդեց.

— Ամեն ինչ լավ կլինի։ Վաղն առավոտյան դու ազատված կլինես։

Երբ մութն ընկավ, ծարավն անտանելի դարձավ։ Մարոն փորձեց ջուր խմել, սակայն խկույն հետ տվեց։ Նրա ուռած և քարի պես պինդ փորի լարված մաշկին հայտնվել էր կապտավուն երակների ցանց։ Նրան թվում էր, որ որովայնի մեջ դանակներ էին խրվում, գալարում էին աղիները, կտրատում, իսկ հետո խրվում էին ողնաշարի մեջ։ Ատամները սեղմած՝ նա հերոսաբար դիմանում էր կծկումներին, որոնք շուտով ազատման նշանն էին։ Հետո սկսվեցին ավելի հաճախակի և հուժկու կծկումներ, որոնք նրան հիշեցրին այն ցավերը, որոնք ուղեկցել էին Թովմասի աշխարհ գալը, և նա հիշեց այն փոքրիկ և ջղաձգվող մարմինը, որն Ազնիվ խանումը բարձրացնելով, բացականչեց. «Մանչ է, մանչ է»։ Նա մտածեց, որ այսօր ինքը փորձում էր ազատվել նման մի էակից, և հիշեց այն վիշտը, որ ապրել էր կորցնելով իր երկրորդ երեխային... Իրենք ամիսներ շարունակ թաքուն սգում էին այդ երեխայի կորուստը։

Ո՛չ։ Ինքը դրա մասին չպետք է մտածեր։ Դա անհամեմատելի էր, և ինքը չպետք է ափսոսար իր վճռի համար։ Արցունքներն աչքերին, Մարոն ափերը սեղմեց իր կողերին և իջեցրեց դեպի որովայնը և միևնույն ժամանակ ճիգ գործադրեց։ Նրա մեջքը ճկվում էր, ոտքերը լարվում էին, իսկ մարմինը գալարվում։ Նա վերսկսեց, նորից և նորից, համառորեն, ամեն անգամ պատկերացնելով, որ իր արգանդը բացվում է շուշանի ծաղկի պես, որն արտանետում է իր սերմերը, և կենտրոնացավ այդ պատկերի վրա իր ցավը մոռանալու և վախեցնող, խղճի խայթի նմանվող մտքերը վանելու համար։

Լուսաբացից քիչ անց Էմինեն եկավ Մարոյի մահճի մոտ, ուր նա

պառկած էր անգիտակից վիճակում, սրված դիմագծերով, քրտնած և մահացու գունատ։ Մարոն, այրվող ճակատով, կապտած և չորացած շրթունքներով, չէր արձագանքում կանչերին և չէր սթափվում, երբ դայակը նրան թափ էր տալիս։ Էմինեն բարձրացրեց թրջված սպիտակեղենը, արյուն չկար։ Նա շոշափեց որովայնը, որը նորմալ տեսք էր ընդունել, սակայն կծկվում էր. պտուղը դեռևս այնտեղ էր։ Նա նորից փորձեց արթնացնել Մարոյին, որը միայն թույլ տնքաց, հետո նա կանչեց Այլային։

— Սիրո՞ւմ ես քո տիրուհուն,— հարցրեց նա աղջկան, որը դեռ սենյակ չէր մտել։

— Այո՛,— բացականչեց Այլան գլուխը թեքելով և ջանալով տեսնել Մարոյին, որին ծածկում էր դայակի խոշոր մարմինը։

Էմինեն մատը թափ տվեց սպախնի քթի առաջ.

— Եթե ուզում ես ծառայություն մատուցել Մարոյին, ապա ոչ մեկին չես պատմի այն, ինչ տեսել ես այստեղ։

Այդ նախազգուշացումն անհանգստացրեց Այլային։

— Մարո խանումը հիվա՞նդ է,— հարցրեց նա շրջանցելով Էմինեին մահճակալին մոտենալու համար։

— Այո, շատ հիվանդ է։

Երբ Այլան օգնում էր դայակին անկողնու սպիտակեղենը փոխել, նա ջանում էր չդիպչել իր տիրուհուն։

— Նրան կողքի շրջիր,— հրամայեց դայակը անհամբերությամբ։– Նա վարակիչ չէ։

— Ի՞նչ է նրան պատահել,— հարցրեց աղջնակը, որին դայակի խոսքերը չէին հանգստացրել։— Նա չի՞ մահանա։

— Հիմարություններ մի ասա։ Դու դժբախտություն կբերես մեր գլխին։

— Կարծես լուծ լինի,— հայտարարեց Այլան՝ ծալելով աղտոտված սավանը, որից գգվելի հոտ էր գալիս։– Մայրս այդպիսի դեպքերում խաշած բրնձի ջուրն էր մեզ տալիս։

Վերջապես Էմինեն որոշակի միտք լսեց, որին նա կարող էր կառչել։ Նա բռնեց Այլայի ուսը և ասաց մեղմացած ձայնով.

— Այո, հոյակապ միտք է։ Իջիր ներքև և ինքդ լվա սպիտակեղենը։ Լվացքատուն չտաս։ Հետո բրինձ կխաշես և ջուրը կբերես։

Երբ քառորդ ժամ անց աղախինը վերադարձավ՝ բերելով մի բաժակով բրնձի ջուրը, դայակը լվացել էր Մարոյի մարմինը։ Նրանք հիվանդին նստեցրին անկողնում, կիսաբաց արեցին բերանը և բրնձի ջուրը խմեցրին։ Մարոն ործկաց, սակայն ջրի մի մասը խմեց։

— Լավ է,— ասաց Էմինեն։– Մի քիչ հետո էլի կտանք։

Այլան նստեց մահճակալի եզրին։ Նա թրջում էր Մարոյի դեմքը, իսկ հետո այնքան էր հովհարով հովացնում, մինչև չորանում էր, հետո նորից նույն բանն էր անում այն հույսով, որ նրա ջերմությունը կիջներ։ Էմինեն գետնին նստած ճոճվում էր, ծնկներն էր ծեծում և ողբ էր անում։

— Էս ի՜նչ արեցի։ Էս ի՜նչ արեցի։ Փորձա՜նք, փորձա՜նք։

Էմինեի այդ վարքագիծը Այլային տարօրինակ թվաց, և նա դադարեց նրա վրա ուշադրություն դարձնել։ Նա մտքում Աստվածամորն էր աղոթում։ Զգացմունքներով տոգորված աղջկան թվում էր, որ ինքն իր մորն էր խնամում՝ խղճուկ մի մխիթարանք, որը նրան մերժել էր իր դաժան ճակատագիրը, խեղճ կինն ընկել էր ճանապարհին, և Այլային, որի անունն այդ ժամանակ Վարդուհի էր, ոստիկանները մտրակներով քշել էին մոր մոտից, և նա ստիպված էր եղել թողնել մեռնող մորը ճանապարհին։

— Քո շրթունքները շարժվում են,— նկատեց Էմինեն գրեթե անտարբեր տոնով։

— Ես աղոթում եմ իմ Աստծուն,— պատասխանեց աղջիկը հանդուգն տոնով։

— Լավ է,— ասաց դայակը մտահոգ՝ լռության մեջ ընկղմվելուց առաջ։

Մի քանի ժամ անց Բույուկ խանումը եկավ նորություններ իմանալու։ Նա կռացավ մահճակալի վրա և տեսնելով հիվանդի գունատությունը, նրա ծանր շնչառությունը, մտահոգվեց։ Նա ձեռքը տարավ դեպի Մարոյի ճակատը, սակայն, միտքը փոխելով, ընդհատեց այդ շարժումը և արագ հեռացավ մահճակալի մոտից։

— Կարո՞ղ է տիֆ լինել,— հարցրեց նա դայակին և մտածեց այն միջոցառումների մասին, որ անհրաժեշտ կլիներ ձեռնարկել ընտանիքի մնացած անդամներին վարակից զերծ պահելու համար։ Ասում են, որ այդ հիվանդությունը տարածված է։

— Ոչ,— ասաց Էմինեն,— տիֆ չէ։

Չնայած դայակին վերագրվող բժշկական գիտելիքներին, Բույուկ խանումը վստահ չէր։ Նա դուրս եկավ, ասելով, որ Ռրզա բեյը վճիռ կընդունի վերադառնալուն պես։

— Աղոթիր, Այլա,— խնդրեց Էմինեն, որը վախենում էր, որ Ռըզա բեյը կկասկածեր ինչ-որ բան, կամ էլ բժիշկ բերել կտար, որը շատ շուտ կհասկանար, թե ինչ էր կատարվել։

Կեսօրից հետո Մարոն գիտակցության եկավ, և դա հուսադրեց Էմինեին։ Սակայն հիվանդը սթափվում էր միայն տանջվելու համար։ Նրա մարմինը ցնցվում էր ուժգին կծկումներից, և նա խուլ տնքում էր։ Հետո նա ուժասպառ էր լինում և ընկնում էր կիսագիտակից վիճակի մեջ։ Դայակն ու աղախինը նստած էին նրա կողքին, մահճակալի վրա։ Մարոն չէր արձագանքում նրանց կանչերին, սակայն երբեմն հայերեն նախադասություններ էր մրմնջում։ Այլան ասում էր Էմինեին, որ դրանք

կապակցված չէին, և նա չէր խաբում։ Այդ նախադասություններից կարելի էր առանձնացնել միայն մի քանի բառ՝ մայրիկ, Վարդան, հայրիկ։ Այդ վիճակը ժամեր տևեց, հանկարծ Մարոն ուժգին ցնցվեց և հևալով բացեց աչքերը։

— Վերջացա՞վ,— հարցրեց նա հազիվ լսելի ձայնով։

Էմինեն բարձրացրեց սավանը և տխուր տեսքով բացասական նշան արեց։ Մարոն փակեց աչքերը հոգոց հանելով և հասկանալի չէր, թե դա ափսոսանքի՞, թե թեթևության հոգոց էր։ Ցավերը դադարել էին, սակայն Մարոն լիովին ուժասպառ էր։

— Ես կուզենայի քնել։

Էմինեն Այլայի բերած ջրին ափիոն ավելացրեց և տվեց Մարոյին, որի ստամոքսը ձայներ հանեց, սակայն նա հեղուկը չփսխեց։ Շուտով հիվանդը հանգիստ և խորը քնեց։ Էմինեն ոտքի կանգնեց.

— Նա իրեն ավելի լավ կզգա։ Ես գնամ հանգստացնեմ Բույուկ խանումին։ Եթե որևէ բան պատահի, զգուշացրու ինձ։

Այլան շնորհակալական աղոթք էր մրմնջում։ Հանկարծ դուռը բացվեց և Թովմասի ուրախ ձայնն ասաց.

— Մայրիկ, ես եմ։ Ես...

Տեսնելով, որ մայրը պառկած է, իսկ Այլան լռելու նշաններ է անում, նա կտրուկ կանգ առավ։ Նրա ուրախ տրամադրությունը տեղը զիջեց անհանգստությանը։

— Ի՞նչ է պատահել մորս։

— Կամաց, նա քնած է։

Թովմասը մահճակալին մոտեցավ և ցնցվեց, տեսնելով Մարոյի գունատ դեմքը, նրա փոս ընկած աչքերը, կապտած շրթունքները։

— Ի՞նչ է նրան պատահել,— կրկնեց նա լացակումած ձայնով։

— Նա հիվանդ էր, ախպերիկ, սակայն գրեթե ապաքինվել է։

Թովմասը կոպտորեն հրեց Այլային, որն ուզում էր նրան գրկել, ծունկը դրեց մահճակալի եզրին և վերցրեց մոր ձեռքը։ Այն սառն էր։ Նա այնպիսի տպավորություն ունեցավ, որ Մարոն չէր շնչում, և երեխան մի պահ նայեց նրա կրծքի կանոնավոր շարժմանը համոզվելու համար, որ նա չէր մեռել։

— Մայրի՛կ,— կանչեց նա ցածրաձայն։– Մայրի՛կ...

Մայրը չէր արթնանում, կարծես այլևս երբեք չէր սթափվելու։ Թովմասին թվաց, որ նա նիհարել էր, քիթը սրվել էր, իսկ աչքերը փոս էին ընկել։ Նա նայեց նրա ճաքճքած շրթունքներին և հիշեց քարանձավում մեռնող իր տատի շրթունքները։ Ազնիվ խանումը նույնպես անշարժացել էր վախճանվելուց առաջ։

— Մայրիկ, մի՛ մեռիր,— լացեց նա։— Մի՛ մեռիր։

— Վախենալու բան չկա,— նրա ականջին շշնջաց Այլան։— Նա հանգստանում է։

Ձեռքի կտրուկ շարժումով նա հարվածեց աղջկան, որը խոհեմ համարեց հեռանալ պատշգամբի դռան մոտ։ Որքան ավելի էր Թովմասը նայում մորը, այնքան ավելի էր ահագնանում նրա վախը, որ մայրը կմեռներ և իրեն կլքեր։ Ինչ պետք է աներ առանց նրա։ Կյանքը կիմաստազրկվեր։ Ինքը միայնակ կմնար աշխարհում, օտարներով շրջապատված... Ոչ, ինքը կմեռնի նրա հետ, ինչպես Արաքսին էր մեռել Արմենի գերեզմանի վրա։

Այդ ամենն իր հոր մեղքով էր, որը չէր եկել իրենց մոտ։ Ինչո՞ւ էր նա իրենց լքել։ Ինչո՞ւ։ Իրենք այնքան էին նրան սպասում։ Հայրը թույլ էր տվել, որ իրեն ձերբակալեին իր տարեդարձի օրը, իսկ երկու շաբաթ առաջ լրացել էր իր յոթ տարին։ Մեկ ամառ էր անցել, հետո մեկ անձյուն ձմեռ, և հիմա նորից ամառ էր։ Վարդանն արդեն վաղուց պետք է եկած լիներ։ Թովմասի գլուխը մի միտք եկավ, որը նա բոլոր ուժերով վանում էր իրենից, մի միտք, որից նա բղավել էր ուզում, որ ինքն այլևս երբեք չէր տեսնելու հորը։ Իսկ մայրը մեռնում էր։ Նա այլևս ոչ ոք չէր ունենա։

Մարոն թույլ տնքաց։

— Մայրի՛կ,— կանչեց նա թափ տալով մոր սառը ձեռքը։– Մայրի՛կ։

Մարոն չարձագանքեց։ Թովմասը վեր թռավ մահճակալից, դուրս եկավ սենյակից և բղավելով վազեց դեպի Ռըզա բեյի սենյակը.

— Մայրիկս մեռնո՛ւմ է։ Մայրիկս մեռնո՛ւմ է։

— Ի՞նչ է պատահել,— լսվեց մի ձայն նրա թիկունքում։

Թովմասը կանգ առավ ու շրջվեց։ Միջանցքի մյուս ծայրում Ռըզա բեյը դուրս էր գալիս Բույուկ խանումի բնակարանից։ Թովմասը նետվեց նրա կողմը, կրկնելով.

— Մայրիկը մեռնում է։ Մայրիկը մեռնում է։

Ռըզա բեյն արագ քայլերով նրան ընդառաջ եկավ, և նրանք հանդիպեցին սանդուղքի դիմաց։

— Ի՞նչ ես մոգոնում։

Թովմասը բռնեց նրա ձեռքը և քարշ տվեց դեպի մոր սենյակը, տենդագին ձայնով կրկնելով.

— Մայրիկը շատ հիվանդ է։ Դուք պետք է նրան փրկեք, խնդրում եմ։ Ես չեմ ուզում, որ նա մեռնի։

Բույուկ խանումի բերանից դուրս թռած «տիֆ» բառից արդեն իսկ վախեցած Ռըզա բեյը վազեց՝ իր հետևից քարշ տալով երեխային։

Այլան խոնարհվեց տիրոջ առջև և ասաց հանգստացնող ձայնով.

— Մարո խանումը շատ հիվանդ էր, բայց հիմա մի քիչ ավելի լավ է իրեն զգում։

Առանց աղջկան նայելու, Ռըզան մոտեցավ մահճակալին, և տեսածը հաստատեց նրա մտավախությունն ու խուճապի մատնեց նրան։ Նրան թվաց, որ հիվանդությունն անճանաչելի էր դարձրել իր սիրուհուն։ Միայն սարսափելի մի հիվանդություն կարող էր երկու օրում արմատապես փոխել մարդուն։ Նա Թովմասին հրեց դեպի դուռը.

— Գտիր Աբդուլային և ասա, որ անմիջապես թամբի իր ձին։

Թովմասն անհայտացավ հողմի պես։

— Բուժակ կանչե՞լ են։

— Ոչ, բեյ էֆենդի։ Մարո խանումով էմինեն է զբաղվել։

— Ի՞նչ եք նրան տվել։

— Խաշած բրնձի ջուր։

— Դա չէր կարող նրան վնասել,— ասաց նա դառնալով դեպի մահճակալը։

Նա հպվեց Մարոյի ճակատին, որը տաք ու խոնավ թվաց նրան, հետո շոշափեց ձեռքերն ու ոտքերը, որոնց սառնությունն այդ շոգ եղանակին պետք է որ անհանգստացներ։

— Ի՞նչն էր ցավում։

— Փորը, բեյ էֆենդի։

Նա ձեռքը դրեց Մարոյի փորին, սկզբում թեթևակիորեն սեղմելով, իսկ հետո ավելի ուժգին, նա կոշտացում զգաց, և դա նրան վախեցրեց։ Թովմասի ճիչը՝ «Մայրիկը մեռնում է», նորից հնչեց նրա ականջին։ Ոչ, ինքը չէր ուզում։ Նա չէր կարող համակերպվել նրան կորցնելու մտքի հետ։ Նա փաղաքշեց Մարոյի գունատ այտերը. այն կնոջ, որին այդքան սիրում էր, և նրա հոգում վրդովմունքի ալիք բարձրացավ իր անկարողության դեմ։ Ոչինչ չէր կարելի խնդրել Ալլահից, քանի որ նա ի սկզբանե ամեն ինչ վճռել էր, և առավել ևս չէր կարելի նրա հետ սակարկել, ինչպես անում էին անհավատները իրենց Աստծու հետ։ Ամեն դեպքում Ռըզա բեյն այնքան էր հուսահատված, որ շշնջաց. «Ես Այնթապում նոր մզկիթ կկառուցեմ», սակայն առանց ձևակերպելու ենթադրվող պայմանը։

* * *

Բույուկ խանումը ներքուստ հանդիմանում էր իր որդուն, որը թույլ էր տվել օտարին ոտք դնել հարեմ։ Այս տանն իր անցկացրած քառասունինը տարիների ընթացքում այդպիսի բան առաջին անգամ էր տեղի ունենում և անկասկած առաջին դեպքն էր այն պահից ի վեր, երբ

այս տունը կառուցվել էր Ռըզա բեյի պապի կողմից։ Նա հրամայել էր հարսներին մնալ իրենց սենյակներում և Էմինեի ընկերակցությամբ, քողերով ծածկված, նրանք նայում էին ավստրիացի բժշկին, հետևելով նրա բոլոր շարժումներին և, մանավանդ, որ Մարոյի վրա գցած նրա հայացքը զուտ մասնագիտական լիներ։

Բժիշկ Էռնստը՝ Այնթապում տեղակայված գերմանական բարձրաստիճան սպաներին սպասարկող բժիշկը, հետաքրքրական էր համարում, որ իրեն հրավիրել էր օսմանյան գավառապետը և որ ինքը պետք է կին բուժեր։ Դա ընդունված չէր մահմեդական ընտանիքներում։ Ճամբար վերադառնալուց հետո իր հայրենակիցները նրան չէին հավատալու, և այդ պատճառով նա ջանում էր հիշել ամեն ինչ։ Նա մի քիչ հիասթափված էր, քանի որ հարեմ բառը նրա գլխում առասպելական վայրի պատկերներ էր ծնում, իսկ նա տեսնում էր սովորական մի միջանցք, որի երկայնքով սենյակներ էին տեղադրված։ Նա ստիպված էր լինելու գունազարդել իրականությունը, որպեսզի ընկերներն իրեն հավատային։ Դա չէր հակասի նրա խառնվածքին, քանի որ հաճախ էր ստիպված լինում խեղաթյուրել իրականությունն իր հիվանդների առջև նրանց ոգևորելու և ապաքինումն արագացնելու նպատակով։

— Հարկավոր է սա նրա վրայից հանել,— ասաց նա գերմաներեն՝ ցույց տալով քողը, որով Բույուկ խանումը ծածկել էր Մարոյի դեմքը։

Թարգմանելու փոխարեն Ռըզա բեյն ինքը հանեց քողը Մարոյի վրայից, և դա առաջացրեց նրա մոր դժգոհությունը։

— Ձեր կինը շատ գեղեցիկ է,— հայտնեց բժիշկը Ռըզա բեյին գնահատանքով։

Վերջինս չոր պատասխանեց.

— Նա հիվանդ է։

— Ես դրանով կզբաղվեմ,— պատասխանեց Էռնստը հասկանալով, որ իրեն ճիշտ չէր պահել։

Նա կգերադասեր, որ բոլորը հեռանային, քանի որ այնպիսի տպավորություն ուներ, որ քննություն էր հանձնում, ինչպես ուսանող ժամանակ։

Մարոն արթնացավ և ցնցվեց, տեսնելով իր վրա կռացած անծանոթին։ Նրա դեմքը երկարավուն էր, կզակի վրա փոսիկ կար, բեղերը շեկ էին, իսկ աչքերը կապտա-մոխրագույն և կիսով չափ թաքնված էին այտուցված կոպերի տակ։

— Օրհնված լինի Ալլահը, նա սթափվում է։

Ռըզա բեյի ձայնն էր։ Մարոն գլուխը թեքեց և տեսավ, որ նա ժպտում էր իրեն։ Նրա կողքին կանգնած էին Բույուկ խանումը, որը բացահայտորեն դժգոհ էր իրավիճակից, և խեղճ Էմինեն, վախեցած, որ գիտնական այրը կհայտնաբերեր վիժման փորձը։

— Ես պետք է ձեզ քննեմ, տիկին։

Նա բարյացակամ տոնով էր խոսում, սակայն նրա ձայնը մի քիչ կոպիտ էր, և Մարոն, որը գերմաներեն չէր հասկանում, հարցրեց Ռըզային.

— Ի՞նչ է ասում։

— Դու չպետք է նրա հետ խոսես,— ասաց Բույուկ խանումը հրամայական տոնով։

Մեկ քայլ առաջ գալով և կանգնելով մոր և սիրուհու միջև, Ռըզա բեյը մեղմորեն ասաց.

— Մի հոգնեցրու քեզ, աղունիկս։ Սա բժիշկ է, և քեզ կբուժի։

Հեռ էռնստը, որին նկարագրել էին հիվանդության ախտանիշները, չափեց հիվանդի ջերմությունը, քննեց աչքերը և շոշափեց նշիկները։ Իմանալով այդ երկրի տղամարդկանց զգայունությունն այն ամենի նկատմամբ, ինչ վերաբերում էր նրանց կանանց սրտովին, նա զգուշորեն էր քննում հիվանդին, ընդգծված անտարբերություն ցուցաբերելով, և դրանից նրա շարժումները անվստահ էին դառնում։ Բույուկ խանումը չէր թաքցնում իր անհամբերությունը։

— Բայց ես պետք է իմ գործն անեմ,— բողոքեց բժիշկը։

— Հանգիստ ձեր գործով զբաղվեք, բժիշկ,— պատասխանեց Ռըզա բեյը։– Կարևորը, որ նա ապաքինվի։

— Սիրտն ու թոքերը լսելու և որովայնը քննելու համար հարկավոր է իջեցնել վերմակը։

Առանց տատանվելու Ռըզան իջեցրեց վերմակը մինչև Մարոյի պորտը, մինչդեռ նրա վրդովված մայրը գլուխն էր տմբտմբացնում։ Մարոն փորձում էր նայել բժշկի աչքերի մեջ, կարծելով, որ գեթ հայացքով կարող էր նրան հասկացնել, որ ինքը պատանդ էր այս տանը։ Երբ բժիշկը սկսեց շոշափել Մարոյի փորը, նրա դեմքը փոխվեց, և Մարոն հասկացավ, որ նա հայտնաբերել էր հղիությունը։ Անկասկած, նա գուշակել էր նաև, որ ինքը փորձել էր ազատվել երեխայից, քանի որ երբ նա գլուխը բարձրացրեց, նրա հայացքը, որը հանդիպեց Մարոյի հայացքին, դավադրական էր։

Բույուկ խանումը շտապեց բարձրացնել վերմակը մինչև Մարոյի քիթը։

— Թունավորում,— հայտարարեց բժիշկը՝ տեղավորելով իր գործիքները։

— Թունավորո՞ւմ,— բացականչեց Ռըզա բեյը, որն իսկույն կասկածեց իր երրորդ կնոջը։

Գոհ մնալով իր խոսքերի թողած տպավորությունից, բժիշկը ճշգրտեց.

— Սննդային։ Սննդային թունավորում։

— Անհնար է։ Այստեղ մտնող սննդամթերքը առաջնակարգ է և ուրիշ ոչ ոք չի թունավորվել։

— Օ՛, գիտեք, այսպիսի շոգ եղանակի պայմաններում սննդամթերքը շատ շուտ է փչանում։ Ճանճերը... Սակայն նա շուտ կապաքինվի։ Շատ մեղրաջուր տվեք, կաթ, մածուն, իսկ մի քանի օրից անցեք ավելի սննդարար կերակուրների։

— Դուք ինձ հանգստացրեցիք, հեռ էռնստ,— ասաց Ռըզա բեյը, բարեկամաբար հպվելով նրա ուսին։

— Նա պետք է երկու հոգու տեղ ուտի,— ավելացրեց բժիշկը խորամանկ տեսքով։— Պարոն գավառապետ, ես պատիվ ունեմ ձեզ հայտնելու, որ ձեր... կինը հղի է։

Ռըզա բեյը ապշեց, մի պահ խոսք չէր գտնում, հետո ծիծաղեց, դարձավ Մարոյին և բացականչեց.

— Դու ինձնից երեխա ես ունենալու։

Մարոն իրեն ստիպեց ժպտալ, իսկ դայակը հանգիստ շունչ քաշեց, ուրախանալով, որ Մարոն համակերպվել էր այդ երեխայի գոյության հետ և, հատկապես, թեթևություն զգալով, որ այլևս ոչ ոք ոչինչ չէր իմանա անիծյալ թուրմի մասին։

Ռըզա բեյը համբուրեց Մարոյի ձեռքերը և մրմնջաց հուզված ձայնով.

— Աղունի՛կս... աղունի՛կս... Դու ինձ անսահման երջանկություն ես պարգևում։

Նա ուղղվեց և մորը սեղմեց իր գրկում։

— Թող օրհնված լինի այս օրը։ Այդ կապակցությամբ ես փոքր մզկիթ կկառուցեմ։

Բույուկ խանումը վանեց իր որդուն և փորձեց նրան խելքի բերել.

— Մզկի՞թ։ Նույնիսկ չմտածես դրա մասին, դա խենթություն է։ Քո պապը...

Ռըզան ձեռքը բարձրացրեց մոր ընդդիմությանը վերջ տալու համար.

— Ես այդպես եմ վճռել և այդպես էլ կլինի։

Ծեր կինը դժկամությանբ խոնարհվեց, վիրավորվելով, որ իրեն այդպես կոպտել էին օտարի ներկայությամբ, որը չէր թաքցնում իր հետաքրքրասիրությունը։

— Հիմա թող նա հանգստանա,— ասաց Բույուկ խանումը, դուռը ցույց տալով։

Նա ուզում էր, որ այդ մարդը հնարավորին չափ շուտ հեռանար հարեմից։ Սենյակից դուրս գալուց առաջ ծեր կինը մոտեցավ Մարոյին, ջերմորեն նրան ժպտաց և առաջին անգամ համբուրեց նրա ճակատը։

— Հեռ էռնստ, կոնյակ կխմե՞ք,— հարցրեց Ռըզա բեյը, երբ էմինեն փակեց դուռը։

Դայակը գետնին նստեց մահճակալի մոտ և ուրախությունից լաց եղավ։

—– Ես այնպես վախեցա, Մարո, այնպես վախեցա... զղջացի, որ լսեցի քեզ։ Բայց դու ապաքինվում ես, Ալլահը մեծ է։

— Իսկապես,— ասաց Մարոն թույլ ձայնով և հլու տոնով,— դա Աստծու կամքն է։

Արձանագրելով անհաջողությունը՝ Մարոն մտածեց, որ դա Աստծու կամքն էր և որ ինքը պետք է համակերպվեր այդ իրողության հետ։ Աստծու ուղիներն անվերծանելի են։ Միգուցե այս երեխան ինչ-որ կարևոր դեր էր խաղալու Աստծու ծրագրերում։

Աչքերը փակելով՝ Մարոն փորձում էր քնել, երբ Թովմասը դուռը ծեծեց։ Անտեսելով թուլությունը՝ Մարոն էմինեի օգնությամբ նստեց մահճակալին։

— Նրան ներս բեր և մեզ մենակ թող։

Երեխան նետվեց դեպի մայրը և փարվեց նրա կրծքին։ Նա դողում էր ողջ մարմնով և, դեմքը թաքցնելով, լաց եղավ։ Մարոն մատների ծայրով շոյում էր նրա մազերը։

— Կարծեցի, որ դու տատիկի պես մեռնում ես,— ասաց նա հեկեկալով։

— Ես հիմա լավ եմ, սիրելիս։

— Ասա, մայրիկ, դու ինձ չե՞ս լքի։

— Երբեք,— պատասխանեց նա, բարձրացրեց նրա գլուխը և համբուրեց։

Նա ջանում էր ժպտալ երեխային սրտապնդելու համար։

— Ձեռքերդ սառն էին։

— Ես ջերմություն ունեի, ոչ մի լուրջ բան։

— Բժիշկը քեզ բուժե՞ց։

— Լրիվ։

Թովմասն այտը դրեց մոր ուսին և երկար ժամանակ անշարժ մնաց։ Նա ուրիշ բան ուներ ասելու, սակայն չգիտեր, թե ինչպես արտահայտվեր և, բացի դրանից, նա հետաձգում էր այդ պահը, քանի որ զգում էր, որ դրանից հետո ամեն ինչ փոխվելու էր։ Նա ուզում էր վայելել այն պահը, երբ ինքը դեռևս միակն էր իր մոր համար... Մարոն կասկածում էր, որ իր հղիության լուրն արդեն տարածվել էր տանը և որ որդին տեղյակ էր։ Նա չէր ուզում կանխել երեխային և սպասում էր, որ նա խոսքեր գտներ։

Թովմասը խորը շունչ քաշեց, հետո ևս մեկ անգամ, տատանվեց և վերջապես շշնջաց առանց մորը նայելու.

— Ճի՞շտ է, որ դու երեխա ես ունենալու։

Մարոն շփեց նրա վիզը.

— Այո, Թովմաս։

— Ինչո՞ւ

— Դա Աստծու կամքն է։

— Տղա՞։

— Դա նույնպես Աստծու ձեռքերում է։

Երեխան լռում էր, և Մարոն զգաց նրա անպաշտպանությունը։ Զնայած հոգնածությանը, նա բացատրեց մեղմ ձայնով.

— Այն փաստը, որ ես երեխա եմ ունենալու, տղա լինի, թե աղջիկ, քեզ չի զրկի ոչնչից, Թովմաս։ Դու միշտ կլինես իմ սիրելի որդին՝ առաջնեկը։ Մոր սիրտն այնպես է ստեղծված, որ նա կարող է սիրել տասը երեխա և չի բաժանում այդ սերը տասը մասի, այն ավելի շուտ բազմապատկվում է։ Նույնն էլ քո դեպքում է։ Դու սիրում ես հորդ և սիրում ես մորդ և ոչ թե կիսատ սիրով, այլ լիարժեք սիրում ես յուրաքանչյուրին։ Եվ բացի դրանից, դու սիրում էիր տատիկիդ, կնքահորդ, Արաքսիին, շանդ... Դու հասկանո՞ւմ ես։

— Այո, մայրիկ։

Հանգստանալով՝ Թովմասը նստեց ու հարցրեց.

— Իսկ ե՞րբ է քո երեխան ծնվելու։

— Հիմա հուլիսն է... Նոյեմբեր ամսին, ձմեռնամուտին։

Թովմասը հոնքերը կիտեց, կարծես մտածեր լուրջ խնդրի մասին։

— Եթե հայրիկը մինչև նոյեմբեր չգա... ո՞վ կլինի երեխայի հայրը։

Մարոն հասկացավ, որ որդին ոչ մի պատկերացում չուներ, թե ինչպես էին երեխաները ծնվում, և մտածեց, որ տվյալ հանգամանքներում դա ավելի լավ էր։ Եվ համոզվեց, որ ինքն ամեն ինչ արել էր, որպեսզի նա չկասկածեր իրենց հյուրընկալողի հետ իր հարաբերությունների բնույթի մասին։

Թովմասը կրկնեց հարցը։ Մարոն պատասխան էր փնտրում, որը կհամապատասխաներ երեխայի տրամաբանությանը։

— Նրա հա՞յրը։ Դե հիմա... Նա հայր չի ունենա։

— Նա պե՛տք է հայր ունենա։

— Այդ դեպքում մենք կխնդրենք Ռըզա բեյին, որ նա լինի երեխայի հայրը։

Թովմասը համարեց, որ դա լավագույն լուծումն էր։ Ինքը կլիներ Վարդանի միակ որդին, իսկ այդ երեխան չէր լինի իր եղբայրը կամ քույրը։ Հոր մասին մտածելիս Թովմասը մռայլվեց։ Նա իրեն մեղավոր էր զգում քիչ առաջ իրեն այցելած մտքերի համար, երբ նա վախեցել էր, որ Մարոն կմեռներ։ Ո՛չ։ Վարդանը իրենց չէր լքել։ Իր մեղքը չէր, որ իրենք բաժանված էին, նրան խանգարում էին։ Եվ որ ամենակարևորն էր, նա չէր մեռել։ Ո՛չ, նա չէր կարող մեռնել։

Սակայն զուր էր Թովմասը փորձում իրեն հանգստացնել, քանի որ կորցրել էր հոր ալու հանդեպ հավատը։ Շատ երկար ժամանակ ինքն ապրում էր վստահ լինելով, որ այդ բանը տեղի էր ունենալու վաղը, կամ վաղը չէ՝ մյուս օրը, ամենաուշը մի շաբաթ հետո, և դա նրան հնարավորություն էր տալիս նույնիսկ երջանիկ լինել և նրան շատ չկարոտել։ Հենց նոր միայն նա գիտակցեց, թե որքան ժամանակ էր անցել Սվասի իրենց բաժանումից հետո։ Ավելի քան մեկ տարի։ Այնքան օրեր էին անցել, որ դրանք խառնվել էին իրար։ Իսկ հիմա նա սարսափով մտածում էր, որ հնարավոր էր, որ նույնքան օրեր կանցնեին մինչև իրենց հանդիպումը։ Թովմասը հիշեց լերկ մի սարահարթ, ուր իրենք քայլում էին տատիկի և այլ հայերի հետ միասին, քայլում էին այնքան երկար, որ իրենց բոլորին թվում էր, որ դրա ծայրին իրենք երբեք չէին հասնելու։ Ազնիվ խանումն ասում էր, որ ամեն քայլի հետ հորիզոնը էլ ավելի էր հեռանում։ Նույն վիճակն էր այսօր։

Հիվանդ մորը չվշտացնելու համար Թովմասը բոլոր այդ մտքերն իրեն պահեց և պարզապես հարցրեց.

— Մայրիկ, մենք կարո՞ղ ենք հայրիկին գրել։

Մարոն թուքը կուլ տվեց և պատասխանեց՝ վերահսկելով իր զգացմունքները.

— Ոչ, ես չգիտեմ, թե որտեղ է նա։ Միակ բանը, որ կարող ենք անել, աղոթելն է։

* * *

1916 թ. սեպտեմբերի վերջին Ռըզա բեյը տուն էր վերադառնում Մուրադ փաշայի՝ շրջանի զինվորական պարետի և գերմանացի բարձրաստիճան սպաների հետ հանդիպումից։ Նորությունները, որոնց նա տեղեկացել էր, տագնապալի էին և վերաբերում էին պատերազմի ընթացքին։ Նախորդ ապրիլին ռուս կազակների գնդերը ափ էին իջել Տրապիզոնում և գրավել էին քաղաքը։ Էրզրումն արդեն ռուսների ձեռքում էր, հուլիսին օսմանյան 282 հետևակային գումարտակ հարձակում սկսելով այդ ուղղությամբ, սկզբնական ճեղքումից հետո անհաջողության էին մատնվել։ Հակահարձակման ժամանակ ռուսները տիրացել էին Երզնկային։ Այդ ճգնաժամային պահին Մուսթաֆա Քեմալը՝ Գալիպոլիի հերոսը, վերակազմավորել էր երկրորդ բանակը՝ ստորաբաժանումներ բերելով Դիարբեքիրից և Մալաթիայից, սակայն չնայած մանր

հաղթանակներին, նա չէր կարողացել ճեղքել ռուսների դիրքերը և ստիպված էր եղել նահանջել: Այդ ռազմական գործողություններում կայսրությունը կորցրել էր վաթսուն հազար զինվոր:

Բարեբախտաբար, այդ լեռնային շրջաններում վաղ սկսվող ձմեռը կստիպեր զորքերին ամրանալ իրենց դիրքերում: Դա մի քանի ամսվա դադար կպարգևեր, որը պետք կլիներ օգտագործել, քանի որ ըստ գերմանական հետախուզական ծառայությունների տվյալների, ռուսները պատրաստվում էին գարնանը ռազմական գործողություններ սկսել Սվասի ու Խարբերդի շրջաններում, որոնք համաձայնեցված էին անգլիացիների գործողությունների հետ Միջագետքում: Իսկ ամենավատն այն էր, որ Սև ծովի ռուսական նավատորմիղը փորձելու էր գրավել Բոսֆորի նեղուցն ու Կոստանդնուպոլիսը: Այդ ամենը կարող էր բերել Օսմանյան կայսրության անկմանը: Ռըզա բեյը դա գիտակցում էր և ինքն իրեն հարց էր տալիս, թե չէ՞ր սխալվել արդյոք սերտորեն համագործակցելով Իթթիհատի կառավարության հետ: Եթե կայսրությունը տանուլ էր տալու պատերազմը, ապա ոչ մի կասկած չկար, որ հաղթողները հաշիվ էին պահանջելու հայերի հետ կատարվածի համար:

Զգույշ մարդ լինելով, Ռըզա բեյը վճռել էր նախապատրաստել իր պաշտպանությունը հայերի բնաջնջմանը մասնակցելու մեջ հնարավոր մեղադրանքների դեմ: Բազմաթիվ քրիստոնյաներ կարող էին վկայել իր հովանավորության մասին, օտար միսիոներներ՝ տրամադրված օգնության մասին: Բայց դա բավարար չէր: Նա պետք է ապացուցեր իր անհամաձայնությունը պաշտոնական քաղաքականության հետ, որի որոշումները, այնուամենայնիվ, որպես գավառապետ ստիպված էր կատարել: Այդ միջոցը գոյություն ուներ, և այն իրեն հուշել էր Գանի բեյը՝ պահանջելով, որ չգաղտնագրված նամակներում ինքը խոսեր ներողամտության և մարդասիրական միջոցների մասին, մինչդեռ իրական հաշվետվությունները հաղորդվում էին գաղտնագրված հեռագրերով:

Տուն հասնելուն պես Ռըզա բեյը փակվեց իր գրասենյակում ներքին գործերի նախարարին հասցեագրված առաջին նամակի սևագիր օրինակը գրելու համար:

«Հազարավոր և հարյուր հազարավոր ողորմելի և սարսափահար կանայք ու երեխաներ թափառում են այսօր Անատոլիայի լեռնային ճանապարհներին: Ես սպասում եմ, որ կառավարությունն արդարամտություն կցուցաբերի և որ այդ մարդիկ ձմեռն ընկնելուց առաջ կվերադարձվեն իրենց օջախները կամ էլ կբնակեցվեն այնտեղ, ուր իրենք կցանկանան»:

Նա գրիչը վայր դրեց և կարդաց նամակը: Ահա թե ինչը կփրկեր իրեն: Բնական էր, որ նա մտադիր էր չհրկիզվող պահարանում պահպանել այս նամակի պատճենը, որը նա կկարողանար ներկայացնել նման նամակների հետ միասին, եթե հանգամանքները պահանջեին:

Ռըզա բեյը պատրաստվում էր տեղից վեր կենալ, երբ պատասխանի

սպասող նամակների կույտում նա նկատեց մի հեռագիր, որը եկել էր Մուրադ փաշային իր կատարած այցելության ընթացքում։ Գաղտնագրված նամակը եկել էր մայրաքաղաքից և Ռըզա բեյն առաջին հերթին վերծանեց ուղարկողի անունը՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշա։

— Նորից,— շշնջաց նա, տեսնելով 854 համարը հեռագրի աջ անկյունում։— էլ գործ չունի, հեռագրեր է ուղարկում։

Հեռագրի տեքստը հետևյալն էր. «Այն պահին, երբ հազարավոր մահմեդական տարագիրների և նահատակների այրիները պաշտպանության և սննդի կարիք ունեն, անթույլատրելի է ծախսեր անել՝ կերակրելով հայտնի անձանց երեխաներին, որոնք ապագայում վտանգ են ներկայացնելու մեր երկրի համար։ Հարկավոր է նրանց մանկատներից տեղափոխել տեղահանվածների ճամբարները»։

Հրահանգին համապատասխան նա այրեց հեռագիրը։ Վաղը ինքը մեկ ուրիշ հեռագիր կստանար, որը գաղտնագրված չէր լինի և ուր տրամագծորեն հակառակը գրված կլիներ և որը պետք էր հաշվի չառնել, սակայն պետք էր հանձնել արխիվ։ Նույնիսկ ներքին գործերի նախարարը նախապատրաստում էր իր պաշտպանությունը։ Այս երկերեսանիությունը հանկարծ զզվանք առաջացրեց Ռըզայի հոգում և վերակենդանացրեց նրա կասկածները երկու տարի առաջ կայացրած վճռի՝ տեղահանությունների գործընթացում դերակատարություն ունենալու առաջարկությունն ընդունելու ճշմարտացիության վրա։ Նա ափսոսանքով էր հիշում այն ժամանակը, երբ ինքը պարզապես հարուստ մարդ էր առանց պաշտոնական դիրքի և կարող էր ազատորեն զբաղվել իր հողերով և իր ընտանիքով։ Հիմա նահանջելու համար արդեն ուշ էր, հարկավոր էր խաղը շարունակել և կրկնակի խաղ վարել։ Սի կողմից Բարձր դռան վստահությունը պահպանելու համար ինքը պետք է կատարեր նրա հրամանները և հազարավոր մարդկանց ուղարկեր դեպի անխուսափելի մահ, իսկ մյուս կողմից զիջեր միսիոներների ու արտասահմանյան հյուպատոսների ճնշումներին և իր հոգու կարեկցանքի զգացմանը, թույլատրելով եվրոպական և ամերիկյան որբանոցների գոյությունը և մթերք մատակարարելով հայ որբերին։

Նա հառաչելով վեր կացավ, ծխախոտ վառեց և դուրս եկավ գրասենյակից։ Իր սեղանի մոտ նստած Պետրին ոտքի կանգնեց։

— Ռըզա բեյ, պետք է...

— Ավելի ուշ,— պատասխանեց Ռըզան, անհամբեր շարժում անելով։

Առանց կանգ առնելու նա շարունակեց ճանապարհը։ Նա ձանձրացել էր թղթերից և զեկույցներից, Իթթիհատի տեղական անդամների վեճերից, որոնք արտոնություններ էին պահանջում, հոգնել էր բաշխման իրականացմանը հետևելուց, ձեռքի տակ եղած սուղ միջոցներով տիֆի համաճարակը զսպելու ջանքերից, հոգնել էր պատերազմից։ Նա պատրաստվում էր իններորդ անգամ հայր դառնալ և այդ պատճառով վանում էր այդ բազմաթիվ մահերի մասին մտքերը։ Մահեր, որոնց մեջ

նա իր մեղքի բաժինն ուներ։ Նա կուզեր իրեն համարել այն արդար մարդը, ինչպիսին իր կարծիքով եղել էր մոտ անցյալում, որը շահասեր էր, բայց մեծահոգի, անխիղճ էր գործարքներում, սակայն հարգում էր Ղուրանի պատվիրանները։ Սակայն նա չէր կարող ջնջել իր կյանքից այն, ինչ պատահել էր վերջին երկու տարիների ընթացքում։

Ճաշասենյակի սեղանը կիտրոնի յուղով փայլեցնող աղախնին նկատելով՝ Ռըզան հրամայեց.

— Էմինե խանումին ասա, որ գա ինձ մոտ հյուրասենյակ, և մեզ սուրճ բեր։

Իր ծեր դայակն անպայման որևէ ուրախացնող բան կգտներ սուրճի նստվածքի մեջ։

Մարոն նստած էր Նիվենու տակ ընթերցանությամբ տարված Սաֆիյեի կողքին և խանձարուր էր կարում երեխայի համար, որը ծնվելու էր երկու ամսից։ Այս փոքրիկից ազատվելու անհաջող փորձից հետո Մարոն համակերպվել էր նրա գոյության հետ և նույնիսկ սկսել էր սիրել ամիսների ընթացքում։ Երբ երեխան շարժվում էր, Մարոն մտքում խոսում էր նրա հետ, որպեսզի նա իրեն ցանկալի զգար և չկասկածեր, որ ինքն ուզել էր նրանից ազատվել։ Նա մեղք չուներ, որ իրեն ստեղծել էին և չպետք է տառապեր այն հանգամանքների հետևանքով, որոնք ուղեկցել էին նրա սաղմնավորմանը։ Ազնիվ խանումը սովորություն ուներ կրկնելու, որ փոքրիկ երեխան զգում է իր մոր մտքերը արգանդում եղած ժամանակ։ Առանց իսկապես հավատալու այդ բանին, Մարոն այնուամենայնիվ հետևում էր այդ նախապաշարմունքին, և որպեսզի երեխան չշփոթվեր իր հոր ինքնության վերաբերյալ, նա խուսափում էր մտածել Վարդանի մասին, կամ էլ բացասական զգացմունքներ տածել Ռըզայի նկատմամբ։ Նա ուզում էր, որ երեխան աշխարհ գար երջանիկ, և ինքն իրեն ստիպում էր հղիությանը տանել հանդարտորեն։ Երեխայի ծնվելուց հետո Մարոն ժամանակ կունենար նորից անդրադառնալու այդ երեխայի գոյությամբ բարդացած իր և Թովմասի ապագայի խնդրին։

Թովմասը, տաղավարի անկյունում թաքնված, հեռվից հետևում էր մորը և տառապում էր անտեսված լինելու զգացումից։ Չնայած Մարոն նույնքան և նույնիսկ ավելի ուշադիր և համբերատար էր նրա նկատմամբ, քան մինչ հղիությունը, Թովմասը իրեն լքված էր զգում։ Մարոյի փորում գտնվող երեխան, միշտ մոր հետ էր, անընդհատ խոսում էր նրա հետ, և մորը նայելով, Թովմասը հասկանում էր, որ Մարոն լսում և պատասխանում էր նրան։ Դա մի զրույց էր, որը ոչ ինքը, ոչ էլ մյուսները չէի կարող հասկանալ։ Դա մի գաղտնիք էր, որին ինքն անհաղորդ էր։ Ի՞նչ կարիք կար ունենալ այդ երեխային։ Արդյոք իր որդին իրեն հերիք չէ՞ր։ Նա ավելի երջանիկ էր թվում այն պահից, որ սպասում էր այդ նոր երեխային։

Ռըզա բեյը կանգ առավ դռան մեջ և տեսավ Թովմասի դեմքին դրոշմված խանդն ու անհանգստությունը։ Դա նրան տխրեցրեց, քանի որ նա սիրում էր այդ խելացի և ուրույն խառնվածքով տղային։ Թովմասը, անկասկած, կհաղթահարեր այդ ամենը։ Դա առաջնեկների

ճակատագիրն էր, մի օր նրանք ստիպված են լինում համակերպվել այն մտքի հետ, որ իրենք դադարում են իրենց մոր սիրո միակ առարկան լինելուց, և Ռըզան շատ լավ էր հիշում իր կյանքի այդ դժբախտ շրջանը, չնայած ինքն ընդամենը չորս տարեկան էր: Եթե ինքն այդ ամենը պատմեր Թովմասին, ապա, միևնույն է, նրան չէր օգնի:

— Ուզո՞ւմ ես գնանք օդանավերին նայելու,— հարցրեց Ռըզա բեյը երեխային մոտենալով:

Զիմանալով, որ իրեն հետևում էին, Թովմասն արագ շրջվեց՝ ինքնապաշտպանության պատրաստ: Ռըզա բեյը կրկնեց իր առաջարկը, որը երեխան պատրաստակամությամբ ընդունեց.

— Գնա զգուշացրու եղբայրներիդ: Զիերը թամբել տվեք: Ես ձեզ կմիանամ ախոռում:

— Քանի՞ օդանավ է:

— Երեք: Կեսօրին են ժամանել:

Թովմասը վազելով հեռացավ, իսկ Ռըզա բեյը մոտեցավ նստարանին, ուր նստած էին իր առաջին կինն ու Մարոն: Իր նախընտրած երկու կանանց ընկերությունը ջերմացնում էր նրա սիրտը, և նա մոռացավ հոգսերը: Նա հերթով համբուրեց նրանց ճակատները, սկզբում Սաֆիյեի, որի աչքերը փայլեցին, ինչպես ամեն անգամ, երբ ամուսինը մոտենում էր իրեն, հետո Մարոյի, որի գեղեցկացած դեմքը հնարավորություն էր տալիս Ռըզային կարծելու, որ նա լիովին ընդունել էր իր նոր կյանքը: Նա ձեռքը դրեց կնոջ մեծացած փորի վրա, ուր հագուստի վարդագույն կտորը ձգվել էր:

— Տղաս շարժվե՞լ է:

— Այս առավոտ:

— Ինչո՞ւ ես համոզված, որ տղա է լինելու,— հարցրեց Սաֆիյեն կատակով:— Միգուցե աղջի՞կ է:

— Էմինեն սուրճի գավաթի մեջ տեսավ, որ ես ևս մի որդի եմ ունենալու,— հայտարարեց նա վստահորեն:— Մենք նրան Նուր կանվանենք:

— Իսկ ինչո՞ւ ոչ Նուրհան,— առաջարկեց Մարոն:- Այս անունը լավ է հնչում:

Այդ անունը նրան դուր էր գալիս, որովհետև շատ նման էր հայկական Նուրան անունին:

— Նուրհան բեյ... Նուրհան փաշա...— ասաց Ռըզան երազկոտ տեսքով:— Այո, այս անունը շատ կսազի:

Երբ Ռըզա բեյը միացավ տղաներին ախոռում, իր ձին արդեն թամբած էր: Նա թամբի պայուսակի մեջ մի շիշ կոնյակ դրեց և առջևը նստեցրեց Արիֆին: Ալթանի, Քենանի ու Թովմասի ընկերակցությամբ նա բռնեց

Այնթապի ճանապարհը։ Ճանապարհին նրանք հանդիպեցին ցորենով կամ մրգերով լի զամբյուղներով բեռնված ուղտերի, որոնք գնում էին դեպի կալվածք։ Բերքահավաքի ժամանակն էր, դաշտերում և այգիներում օրն ի բուն աշխատում էին գյուղացիները, և այդ՝ Ռըզա բեյի համար սովորական տեսարանը նրան նոր զգացում պարգևեց. այն է՝ հողի մշակության վրա հիմնված կարողության վստահություն ներշնչող մնայունության զգացումը։ Քաղաքական ճգնաժամերը և պատերազմները կարող էին տակնուվրա անել աշխարհը, սակայն տարվա եղանակների շրջանը անփոփոխ էր մնում, և ամեն ինչ ընթանում էր այնպես, ինչպես սահմանել էր Ալլահը։ Վաղվա օրվա համար անհանգստանալը ժամանակի և ուժի անիմաստ վատնում էր։

Վայրէջքի դաշտը երիզում էր գետը կամրջի աջ կողմում։ Դա ժամանակավոր օդանավակայան էր, որը Ռըզա բեյը կազմակերպել էր ռազմական իշխանություններից վարձակալած մարգագետնի վրա։ Այստեղ վայրէջք էին կատարում գերմանական օդանավեր, որոնք թռիչքներ էին կատարում Բաղդադ՝ անգլիական դիրքերի վրա հարձակումներ կատարելու համար, կամ էլ պարեկություն էին անում օսմանյան բանակի շարասյունները թալանող արաբ ապստամբներին հայտնաբերելու նպատակով։ Տարածքի մի անկյունում, հատած բարդիների տեղում վրաններ էին խփված, ուր ապրում էին օդաչուները և նրանց օդանավերը սպասարկող մեխանիկները։ Վազքուղու ծայրին գտնվում էր գորշ տախտակներից կառուցված բարաքը, որը որպես շտաբ էր ծառայում օդանավակայանը հսկող ոստիկանների համար, և այնտեղ էր գտնվում վառելիքի պահեստը՝ մետաղյա տակառներ, որոնք թաքցված էին գորշ բրեզենտների տակ։

— Օդանավերն այստեղ են,— բղավեց Քենանը գրգռված ձայնով։— Դրանք այստեղ են, ես տեսնում եմ։

Իր թամբի ասպանդակներին կանգնած՝ նա մատով ցույց էր տալիս խամրած կանաչ ներկով ներկված երեք օդանավերը, որոնց խցիկի կենտրոնում կարմիր լաքա կար, իսկ իրանի վրա՝ սև խաչ։

— Ալբատրոսները,— ճշտեց Ռըզա բեյը։— Հիշեք, դուք ոչնչի չպետք է ձեռք տաք առանց իմ թույլտվության։

Ոստիկանը՝ ճանաչելով Ռըզա բեյին, վազեց նրանց ընդառաջ, պատվի առավ և շնչակտուր ասաց.

— Հարգանքներս, գայմագամ բեյ։

— Մեր գերմանացի բարեկամներն այստե՞ղ են, թե քաղաքում։

— Հանգստանում են։

— Ուղեկցիր ինձ նրանց մոտ։

Այն պահին, որ Ռըզա բեյն ու տղաները ձիերից վայր էին իջնում, վրանից դուրս եկավ կուրծքը բաց մի մարդ։ Լեյտենանտը վատ գերմաներենով նրան տեղեկացրեց, որ գավառապետը եկել էր իրենց

ողջունելու։ Օդաչուն՝ բարձրահասակ և նիհար մի տղամարդ, որի կուրծքը ծածկված էր շեկ մազերով, որոնք աղերսվում էին նրա բեղերի և խոզանակի նմանվող գլխի մազերի հետ, ձգվեց և բարձրացրեց տաբատից կախված շալվարակալները։ Նա փորձում էր հիշել թուրքերենով սովորած ողջույնի որևէ բանաձև։ Ռըզա բեյն օգնության եկավ նրան, կատարյալ գերմաներենով ասելով.

— Բարի գալուստ մեր քաղաքը։

Տղամարդը ժպտալով ձեռքը մեկնեց, որը Ռըզա բեյը սեղմեց, ներկայանալով.

— Ռըզա բեյ։

— Գնդապետ Հաուզեր։ Ձեր այցելությունը մեծ պատիվ է ինձ համար, պարոն գավառապետ։ Ներեցեք ինձ իմ տեսքի համար, ես պատրաստվում էի հանգստանալ։

— Դուք պետք է ինձ ներեք, որ ես այսպես անսպասելի հայտնվեցի։ Իմ որդիները, ահա նրանք, շատ տարված են օդանավերով։

Գնդապետը ժպտաց երեխաներին և հարցրեց նրանց.

— Գրազ կգամ, որ դուք ուզում եք դրանց մոտիկից նայել։

— Նրանք ձեզ չեն հասկանում,— պատասխանեց Ռըզան,— բայց ես կարող եմ ձեզ հավաստիացնել, որ նրանք երազում են դրա մասին։

Օդաչուն վրան մտավ հագնվելու համար և ասաց, որ հյուրերին ներս չէր հրավիրում, քանի որ վրանում խառնաշփոթ էր տիրում։ Ռըզա բեյը թամբի պայուսակից հանեց կոնյակի շիշը և ոստիկանին պատվիրեց զբաղվել ձիերով։ Գերմանացին վերադարձավ իր հինգ գործընկերների հետ միասին և, գոհ մնալով գավառապետի նվերից, պնդեց, որ մի քիչ միասին խմեին։ Նրանք բաժակ բարձրացրեցին Եռյակ միության հաղթանակի պատվին, ե Ռըզան օդաչուներին իր տուն ճաշի հրավիրեց։

— Կուզենայի՞ք քաղաքի վրա պտույտ կատարել, պարոն գավառապետ։

— Ես չէի համարձակվում ձեզ դրա մասին խնդրել, գնդապետ Հաուզեր։

Տղաները զննում էին օդանավը, որը նրանք առաջին անգամ էին մոտիկից տեսնում։ Նրանք զգուշորեն հպվում էին ձգված պաստառին, վախենալով այն վնասել։ Այդ մեծ թռչուններն այնքան փխրուն էին թվում։ Վերջին պահին Ալթանը վախեցավ և հրաժարվեց թռչել։ Քենանն ու Թովմասը, որոնց մի կերպ ակնոց հագցրին, ծաղրում էին նրան, սակայն իրենք էլ քիչ էր մնում հրաժարվեին, երբ նրանց նստեցրին օդաչուի խցում։ Հուզմունքից բաբախող սրտերով, նրանք իրար սեղմվեցին հետևի նստարանի վրա։ Օդաչուն, իր տեղը զբաղեցնելով, նրանց կողմը դարձավ և, ցույց տալով ինչ-որ ավելի կոթ և մատը թափ տալով, ասաց.

— Ձեռք չտալ։ Nein.

Նա բռնեց Թովմասի ուսից, ստիպեց նրան կանգնել և «Nein, nein» ասել, հետո ստիպեց նստել և այս անգամ «Ja, ja» ասաց։ Տղաները նշան արեցին, որ հասկացել էին։ Ռըզա բեյը, որն Արիֆի հետ տեղավորվել էր մեկ այլ մեքենայի մեջ, նրանց ձեռքով արեց։ Մեխանիկները պտտեցին փայտե պտուտակները շարժիչները գործի դնելու համար, որոնք փռշտացին և սկսեցին բվվալ սուր ձայնով։ Ձայնը հետզհետե ահագնանում էր։ Օդանավի իրանի երկայնքով սուրացող քամին արդեն իսկ արագության պատրանք էր ստեղծում, մինչդեռ մեքենաները նոր էին սկսում առաջ շարժվել։ Քենանը ուժեղ սեղմեց Թովմասի ձեռքը, և նրանք ապշած իրար նայեցին՝ իրենց աչքին չհավատալով։ Թռչե՛լ։ Նրանք դրա մասին էին երազում, երբ խաղում էին իրենց խաղալիք սավառնակով և երբ վազում էին ձեռքերը տարածելով և շրթունքներով արտաբերելով մերթ շարժիչի, մերթ գնդացրի ձայնը։ Եվ ահա այդ երազանքն իրականանում էր այդքան անսպասելի կերպով։

Միահյուսելով մատները՝ նրանք շրջվեցին, որպեսզի տեսնեին, թե ինչպես էին փախչում ծառերը։ Վազքուղու անհարթության պատճառով առաջացած յուրաքանչյուր ցնցումից օդանավի թևերը ճկվում էին։ Անիվները պոկվեցին վազքուղուց, նորից հարվածեցին գետնին, և օդանավը թռավ։ Նրանք տեսան Ալթանին, գերմանացիներին և ոստիկաններին, որոնք փոքրանում էին։ Նրանք թռան ծառերի կատարների վրայով և հայտնվեցին գետի վերևում։ Բարձրություն հավաքելու հետ երկիրը հեռանում էր։ Ճանապարհով շարժվող մարդիկ միջատների նմանվեցին, սայլերն ու եզները՝ խաղալիքների։ Քենանը փորձեց ինչ-որ բան ասել, սակայն շարժիչի աղմուկը խլացնում էր նրա ձայնը և շրթունքների շարժումից Թովմասին թվաց, Որ նա արտասանեց «թռչուններ» բառը։

Վախից ձերբազատվելով, Թովմասն իրեն արբած էր զգում։ Որքան կհպարտանար իրենով Մարոն, իմանալով, որ ինքը թռել էր։ Նա կուզեր, որ հայրն իրեն տեսներ; Ինքնաթիռը դեպի Այնթապ էր շարժվում, որի տները, նույնիսկ բարձր մինարեթներով մզկիթները, հիմա շատ փոքր էին թվում։ Մինչդեռ Քենանը երևակայում էր, որ իրենք հիմա հարձակվելու էին քաղաքի երեք բլուրներից մեկը պսակող միջնաբերդի վրա, Թովմասը տեսնում էր, թե ինչպես են դաշտերը փոխարինում այլ դաշտերի, և մտածում էր, որ օդանավի օգնությամբ ինքը կկարողանար հետազոտել ամբողջ աշխարհը և կգտներ հորը։ Պետք կլիներ միայն ճանապարհին հետևել, նրան հայտնաբերելու համար։ Թովմասը Վարդանին պատկերացնում էր ձի հեծած ճանապարհները չափչփելիս կնոջ ու որդու հետքերով։ Երկիրն այնքան մեծ էր, որ իր հայրը ստիպված կլիներ շատ ժամանակ ծախսել իրենց մոտ գալու համար, իսկ ժամանակը վախեցնում էր Թովմասին, քանի որ այն պահից, որ նա վախեցել էր, որ կկորցներ մորը, նա անընդհատ Վարդանի մասին էր մտածում։

Քաղաքի վրա երկու անգամ պտտվելուց հետո նրանք շարժվեցին դեպի օդանավակայան։ Թովմասը հպվեց օդաչուի ուսին և նրան ցույց

տվեց Ռըզա բեյի կալվածքը, փորձելով նրան հասկացնել, որ կուզեր դրա վրայով թռչել։ Գերմանացին գլխով արեց, և մի քանի րոպե անց նրանք սպիտակ տան վերևում էին։ Քենանի խնդրանքով օդաչուն մի քանի անգամ շատ ցածր թռավ տան վրայով, և դա գրավեց մարդկանց ուշադրությունը։ Նրանք բակ դուրս եկան, և երեխաները նրանց ձեռքով արեցին։ Նրանց մայրերն անկասկած հետաքրքրասերների շարքում էին։

Հետո նրանք վերադարձան օդանավակայան, և օդանավերը վայրէջք կատարեցին, որը զարմանալիորեն ավելի հանդարտ անցավ, քան գետնից պոկվելը։ Օդանավն անշարժացավ մնացած երկու մեքենաների կողքին, և մի քիչ շշմած տղաներն օդանավից իջան։ Վերադարձի ճանապարհին նրանք բոլորը միաժամանակ խոսում էին և փոխանակում էին իրենց տպավորությունները։ Նրանց էր միացել նույնիսկ Ռըզա բեյը, որը նույնքան ոգևորված էր, որքան իր որդիները։ Ալթանն արդեն ափսոսում էր, որ չէր համարձակվել օդանավ նստել, և մռայլ տեսքով զատվել էր մնացածներից։ Ռըզա բեյը տան մոտ ձիուց իջավ ճաշի վերաբերյալ հրամաններ տալու համար և որդիներին հանձնարարեց իր ձիուն ախոռ տանել։ Երբ նրանք ախոռ հասան, ձիապան տղաները շենքի հետևում էին, որտեղից լսվում էին նրանց ուրախ բացականչությունները։ Ալթանը, Թովմասն ու Քենանը միացան աշխատողներին, որոնք նայում էին, թե ինչպես էր ազնվատոհմ նժույգը անասնոցում ծածկում զամբիկին։

— Ի՞նչ է նա անում,— հարցրեց Քենանը իր մեծ եղբորը։

Այդ տեսարանից ոգևորված Ալթանն այլևս մռայլ չէր։

— Նա նրա համար քուռակ է անում։

— Չէ մի,— պատասխանեց Թովմասը, չհավատալով։

Ալթանը վրդովվեց, որ իր գիտելիքները կասկածի տակ էին առնվում և հարվածեց Թովմասի կողերին։

— Ի՞նչ ես դու հասկանում դրանից, երեխա՛։

Թովմասն ատամները սեղմեց։ Ալթանը զվարճացած ասաց.

— Տեսնո՞ւմ ես այն սև անդամը, որը մտնում է անցքի մեջ։ Երբ տղամարդ են դառնում, ինչպես ես, այդպիսի անդամ են ունենում և այն խրելով կնոջ անցքի մեջ, նրան երեխա են պարգևում։

Նրա փոքր եղբայրն ու Թովմասը համոզված չէին, որ Ալբանը ճիշտ էր ասում, և վերջինս խնդրեց, որ իրենց կողքին կանգնած տղամարդը հաստատեր իր ասածը։ Ախոռապանը՝ մի կուզիկ, որը մոտ երեսուն տարեկան էր և որի առջևի մի քանի ատամները թափվել էին կռվի ժամանակ, ծիծաղեց և մատներով անպատկառ շարժում արեց։ Քենանն ու Թովմասը սարսափած հայացքներ փոխանակեցին։ Ուրեմն դա էր բոլոր այն հարցերի պատասխանը, որ իրենք իրենց էին տալիս բաղնիք գնալուց հետո։ Տեսնելով, որ առիթ է ներկայանում Թովմասի հոգու հետ խաղալու, Ալթանը չարացած ժպտաց.

— Լավ նայիր ձիերին... Իմ հայրը նույն ձևով է բարձրանում մորդ վրա։ Եվ դա նրան նույնքան հաճույք է պատճառում, որքան զամբիկին։

— Ոչ,— ըմբոստացավ Թովմասը և ոտքով հարվածեց Ալթանին, որը մի կողմ ցատկելով խուսափեց հարվածից։

— Այո։ Եվ նա նրան երեխա է պարգևել։

— Դա ճիշտ չէ,— բղավեց Թովմասը թոքերի ողջ ուժով։

Նա փախավ։ Նա չէր ուզում հավատալ Ալթանի պնդումներին, սակայն չէր կարողանում դրանք ժխտել։ Այդպիսով բացատրվում էր այդ երեխայի ծագումը, ծագում, որը նրան այդքան հետաքրքրում էր։ Ուրեմն երեխայի հայրը Ռըզա բեյն էր։ Իր մայրը, որին զամբիկի պես ծածկում էր Ռըզա բեյը... Թովմասը հիշեց նժույգի անդամը, որը մխրճվում էր զամբիկի մեջ, և նրա սիրտը խառնեց։ Շրջանցելով ախոռը՝ նա կանգ առավ և ձեռքերը պատին հենեց։ Իր մայրը Ռըզա բեյի հետ... Թովմասը փսխեց։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 13

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 12:37-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Երեկոյան նարնջագույն երկնքի վրա հայտնվել էին սև ուրվագծեր՝ մինարեթներ, գմբեթներ, բլրի գագաթին թառած միջնաբերդ, որոնք ազդարարում էին Հալեպ քաղաքի մերձությունը: Տափակ տանիքների վերևում ուրվագծվող իր հազարավոր ծառերով քաղաքը օազիսի էր նմանվում, որը կանաչին էր տալիս լերկ սարահարթի կենտրոնում: Ճանապարհներից մեկի երկայնքով կիտված էին աղի բուրգեր, որը հանում էին աղաբեր հին գետերի հուներից, իսկ բազմաթիվ բանվորներն այդ աղը լցնում էին պարկերը և բարձում ուղտերի վրա:

Սուլիչների զիլ ձայներ: Գնացքը ծուխ անելով կայարան էր մտնում, և նրա հայտնվելը ուղեկցվում էր մխոցների ու շարժաձողերի աղմուկով և գծերի վրա սահող անիվների ճռռոցով: Գնացքն անշարժացավ, և մեքենավարը բաց թողեց գոլորշին, որի ձայնը նման էր հզոր հոգոցի: Շոգեքարշին, ուր մի մարդ բահով ածուխ էր լցնում հնոցը, կցված էին յոթ փակ վագոններ և մեկ հարթակ, ուր ավազով լեցուն պարկերի հետևում թաքնված էին զինվորներ, իսկ այդ պարկերի արանքից երևում էր խոշոր տրամաչափի գնդացրի փողը:

— Զինվորական շարժակազմ է,— արձանագրեց Քամանչա Հակին, առանց մտածելու, որ դա ակնհայտ էր և չէր վրիպել որևէ մեկի ուշադրությունից:— Երևի ուղևորվում է Երուսաղեմ:

Վարդանը չէր պատասխանում, և նրա գործընկերը դիպավ նրա ուսին.

— Ուդի, եղբայրս, ի՞նչ է քեզ տանջում:

— Ոչինչ, ես մտածում էի:

— Ես նույնպես մտածում եմ, սակայն դրանից այդքան ողբալի տեսք չեմ ունենում:

Վարդանը մեղավոր տեսքով նայեց ընկերոջը, և Հակին գրկեց նրա ուսերը իր հզոր ձեռքով.

— Հաճախ քեզ չեմ հասկանում, Ուդի: Դու շատ ես տարբերվում մնացածներից: Ես քեզ չեմ հասկանում, սակայն շատ եմ սիրում:

— Քո բարեկամությունը ջերմացնում է իմ հոգին, Հակի:

Երկու ցածրահասակ ձիով լծված սայլը, որով ճանապարհորդում էր Փաշազադե Շահիր Միթադը իր երաժիշտների հետ, շարունակեց ճանապարհը: Նրանք դանդաղ էին շարժվում հետաքրքրասերների ամբոխի պատճառով, որոնք եկել էին Բաղդադ կայարանը գնացքի ժամանմանը ներկա լինելու համար: Կայարանն անդեմ շինություն էր, որի վերեում ատամնավոր պատերը ներկված էին մանուշակագույն և պիստակավուն ներկով: Կառամատույցը լի էր մուրացկաններով և թափառաշրջիկ կատուներով, իսկ բեռնակիրները նրանց անխնա հրմշտում էին: Բոլորը սպասում էին մարդատար գնացքին, որն ուշանում էր զինվորական շարժակազմի պատճառով: Անբան հետաքրքրասերները, ընթացքը դանդաղեցնելով, փորձում էին կարդալ թերթի կրպակի արտաքին պատին փակցված թերթերի առաջին էջերին զետեղված մեկշաբաթյա վաղեմության նորությունները: 1916 թ. դեկտեմբերի այդ թերթերը կանխատեսում էին կայսրության և նրա դաշնակիցների մոտալուտ հաղթանակը հաջորդ տարվա ընթացքում:

Հակին և նրա ընկերը ոտքով գնում էին սայլի հետևից: Խմբի վերջին դադարը եղել էր մի չորս ժամ առաջ և նրանց հագուստը ծածկված էր ճանապարհի փոշով, սակայն Վարդանը ոչ հոգնություն էր զգում, ոչ էլ ծարավ: Այն ոգևորությունը, որը տիրել էր նրան, երբ երկու օր առաջ նրանք ճամփա էին ընկել դեպի Հալեպ, քաղաքին մոտենալուն պես փոխակերպվել էր խելահեղ վախի:

Վերջապես Հալե՛պը: Հալե՛պ, որտեղով անցել էին գրեթե բոլոր տեղահանվածները և ուր բազմաթիվ հայեր էին ապրում՝ խառնվելով արաբ բնակչությանը: Հետևաբար հնարավոր էր, որ այն մարդը, որն իր հետ էր տարել Մարոյին և Թովմասին, նրանց Հալեպ բերած փներ: Իր որոնումների հենց սկզբից Վարդանն ինքն իրեն ասում էր, որ նրանք կարող էին Հալեպում լինել: Ի վերջո, նա ինքն իրեն համոզել էր, որ նրանք պետք է այնտեղ լինեին: Այդ ձևով նա փոխհատուցում էր այն հիասթափությունների համար, որոնք կուտակվում էին ինը ամիս տևող հյուրախաղերի ընթացքում: Չէ՞ որ նրանք այցելել էին այդքան քաղաքներ և գյուղեր, այդքան հարուստ տներ, ուր հրավիրել էին դերվիշներին, այդքան հասարակական հրապարակներ, ուր նրանք ելույթ էին ունեցել, և ոչ մի տեղ նա չէր հայտնաբերել իր ընտանիքի գեթ հետքը: Հայերն ու միսիոներները, որոնց հանդիպել էր Վարդանը, չէին կարողացել որևէ տեղեկություն հայտնել նրանց մասին: Նույնիսկ դիմադրության ցանցը չէր կարողացել Մարոյի ու Թովմասի գտնվելու վայրն իմանալ:

Երբ նրանք հասան Բաբ էլ Ֆարաջ զբոսայգուն, Վարդանը հարցրեց Հակիին.

— Դու գիտե՞ս, թե որտեղ ենք մենք օթևանելու:

— Նահիյե խան իջևանատանը: Մենք արդեն համարյա թե հասել ենք:

— Ես ձեզ կմիանամ այնտեղ երկու կամ երեք ժամ հետո:

Եվ նա լուծվեց ամբոխի մեջ առանց պատասխանելու Հակիին, որն

առաջարկում էր իրեն ուղեկցել։ Վարդանը, արագ քայլելով, հասավ մի փոքր հրապարակի։ Մութն ընկնում էր, խանութպաններն իջեցնում էին խանութների երկաթյա փեղկերը, և սրճարանում, ուր դեռևս այցելուներ կային, լամպեր էին վառվում։ Որպես ռեստորան ծառայող բարաքի առջև՝ մայթին կանգնած՝ առանց սպասքի քյուֆթա, լյարդի ու երիկամի խորոված էին ուտում։

Օսմանյան իշխանություններին չէր հաջողվում թուրքացնել Հալեպը, որը Անատոլիայի քաղաքներից տարբերվում էր իր խանդավառությամբ և բազմազգությամբ։ Փողոցներում ավելի հաճախ կարելի էր արաբերեն լսել, քան թուրքերեն, սակայն խոսում էին նաև քրդերեն, ասորերեն, քաղդիերեն և դրուզների լեզվով։ Հայերը, հրեաները և հույները մեծ տոկոս էին կազմում։ Ազգերի այդ խառնուրդով և եվրոպացիների նշանակալից համայնքներով, ինչպես նաև Կոստանդնուպոլսի կառավարության դիրքերի թուլությամբ էր բացատրվում այն փաստը, որ հայերին չէին քշել այդ քաղաքից։

Մտքերով տարված Վարդանը շարժվում էր անհոգ ամբոխի միջով։ Ավտոմեքենայի սուլիչը սթափեցրեց նրան, և նա մնացած հետիոտների հետ միասին մի կողմ քաշվեց և ճանապարհ տվեց մի մեքենայի, ուր նստած էին գերմանացի սպաներ։ Զբոսայգում նա նկատեց լիմոնադ վաճառող մի ծերունու, որը սպիտակ չալմա էր կրում, իսկ մեջքին մի պղնձե աման ուներ և երգեցիկ ձայնով կանչում էր.

— Եկեք, խմեք և մաքրվեք։

Նրա կողքին տասը տարեկան երկու տղաներ էին կանգնած, որոնք անցորդներին էին հրամցնում վարդագույն հեղուկով լցված բաժակները։ Վարդանը մեկ շնչով խմեց իրեն մեկնած բաժակը և մանր դրամ մեկնեց ծերունուն։

— Շնորհակալություն,— ասաց նա։- Կարո՞ղ եք ինձ ասել, թե որ կողմում է հայկական թաղը։

Ծերունին կարծես թե չէր հասկանում և շրջվեց դեպի իր օգնականները։ Քանի տղաներից մեկը թարգմանում էր հարցը, մյուսը մոտեցավ Վարդանին և շատ արագ ասաց.

— Մեր տերը միայն արաբերեն է խոսում, սակայն եթե առատաձեռն գտնվեք, ես ձեզ կասեմ ստույգ տեղը։

Վարդանը նրան մանր դրամ տվեց և տղան՝ դժգոհ մնալով, անորոշ շարժում արեց.

— Հեռու չէ, մինչև երկու ծխախոտ ծխեք, այնտեղ կհասնեք։

Երկրորդ մետաղադրամը նրան ավելի պերճախոս դարձրեց.

— Այս փողոցի ծայրին է, կարմիր աղյուսից կառուցված մեծ շենքի հետևում։ Տեսնում եք ավանակ հեծած այն մարդուն։ Հետևեք նրան, նա ճիշտ ուղղությամբ է գնում։

Վարդանը արագացրեց իր քայլքը, որպեսզի տեսադաշտից չկորցներ գյուղացուն, որը ճիպոտով խթանում էր իր երիվարին: Տներից կերակուրի հոտեր էին գալիս, և երեխաները, որոնք ամբողջ օրը վազվզում էին փողոցում, կարծես ազդանշան ստանալով, վերադառնում էին իրենց տները: Հասնելով ամայի խաչմերուկին, գյուղացին կանգ առավ: Վարդանը նրան հասավ և ողջունեց.

— Սալամ ալեյքում: Դուք չգիտե՞ք, թե ուր է...

Արևից խարկված դեմքով մարդը, խեղճանալով, հպվեց Վարդանի թևին և ընդհատեց նրան.

— Ալեյքում սալամ: Ես գյուղից եմ եկել, էֆենդի, մոլորվել եմ:

Վարդանը հասկացավ, որ ըմպելիք վաճառողի օգնականն իրեն խաբել էր: Մութը թանձրանում էր, և շուրջը չկար մեկը, որից կարելի կլիներ ճանապարհը հարցնել: Թողնելով գյուղացուն, որը չգիտեր, թե երեք ուղղություններից որ մեկն ընտրեր, Վարդանը շարունակեց ճանապարհը դեպի արևելք: Վերջապես նա տեսավ կարմիր շենքը և ենթադրաբար շարժվեց դրա երկայնքով ձգվող ծառուղիով: Նա հայտնվեց խարխուլ պահեստների ողորմելի մի թաղում, ուր այդ շինությունները միմյանցից բաժանվում էին ծուռումուռ փողոցներով: Լիալուսինը լուսավորում էր նրա ճանապարհը: Երկար ժամանակ նա քայլում էր առանց իմանալու, թե ուր էր գնում, և առանց կենդանի շունչ հանդիպելու: Հետո նա մի անկյունում ծվարած մի էակ տեսավ: Մուրացկան էր, որը ոտքի կանգնեց և կաղալով եկավ նրան ընդառաջ: Նա Վարդանին մեկնեց աջ ձեռքը, իսկ ձախով քորում էր իր դեմքը ծածկող թարախակալած վերքը:

Գրպանում մանր դրամ փնտրելով, Վարդանը նրան հարցրեց, թե արդյոք դա հայկական թաղը չէ՞ր: Մարդը, որի տարիքը հնարավոր չէր կռահել, չէր հասկանում և բավարարվում էր ձեռքը թափահարելով և ծամածռելով իր անատամ բերանը: Հարցն ապարդյուն կրկնելուց հետո Վարդանը նրան ողորմություն տվեց և հեռացավ: Այդ վայրի տխուր տեսքը նրան տրտմություն պատճառեց, և նա զգաց ճանապարհի հոգնությունը: Նա չէր կարողանում ազատվել այն մտքից, որ ինքը չափից ավելի մեծ հույսեր էր կապել Հալեպի հետ: Եվ բացի դրանից, ինքը պետք է զսպեր իր անհամբերությունը և սպասեր վաղվա օրվան իր որոնումները սկսելու համար:

Նա հասավ այն վայրին, որը զբոսայգու տեղ էր դրել, սակայն դա մահմեդական գերեզմանոց էր՝ կիսակամարներով պսակված նեղ մահարձաններով: Դրանից այն կողմ ընկած էր տեղ-տեղ գազի լապտերով լուսավորված մի թաղ, և Վարդանը շրջանցեց գերեզմանոցը այնտեղ գնալու համար: Ջսալարկված փողոցների երկայնքով կանգնած էին տախտակներից կառուցված մեկհարկանի ծուռումուռ տնակներ: Տնակները լուսամուտներ չունեին, սակայն անդուռ լայն բացվածքները հնարավորություն էին տալիս տեսնելու դրանց լուսավորված ընդերքը: Սատինե ներքնազգեստներով կանայք, որոնցից շատերի ստինքները մերկ էին, պպզել էին տների շեմերին կամ հենվել դրանց արտաքին պատերին: Արաբերենով, գերմաներենով, անգլերենով և ֆրանսերենով

գրված հայտարարություններն ազդարարում էին. վարձով՝ ժամով, օրով։ Տղամարդիկ երկու-երեք հոգով, անհոգ շրջում էին, դիտում առաջարկվող ապրանքը և երբեմն կանգ էին առնում գինն իմանալու համար։

Վարդանն անցնում էր կարծես չլսելով իրեն ուղղված հրավերները, սակայն նա քայլերը դանդաղեցրեց, երբ հայերենով բացականչություն լսեց.

— Սա վատը չէ, չնայած իր մորուքին։

— Միգուցե խոջա է,— պատասխանեց կանացի մի ձայն։

Հողե հատակով տանը երկու երիտասարդ աղջիկ ծիծաղելով ջեռոցն էին վառում թեյ տաքացնելու համար։ Նրանց հետևում քողածածկ մի պատկառելի կին աթոռին նստած ննջում էր։ Մարմնավաճառներից մեկը ժանյակով զարդարված եվրոպական տիպի շապիկ էր հագել, իսկ մյուսը՝ վարդագույն շալվար և ցուցադրում էր իր փոքրիկ և պինդ ստինքները։ Նրանք հազիվ տասնյոթ-տասնութ տարեկան լինեին։ Վարդանը նրանց մոտեցավ և դիմեց հայերենով.

— Բարի երեկո։ Կարո՞ղ եմ ձեզ հետ խոսել։

Այն աղջիկը, որի կուրծքը բաց էր, գլուխը կախեց, մյուսը կարմրեց, սակայն Վարդանին նայեց վճռական տեսքով և խոսեց կասկածամիտ տոնով.

— Դուք քահանա՞ եք։

— Ի՞նչ է ուզում,— հարցրեց կինն արթնանալով։

— Մենք սակարկում ենք,— պատասխանեց աղջիկը, հայերենին անցնելուց առաջ։— Ի՞նչ եք ուզում մեզնից։

Վարդանը դժվարանում էր պատասխանել և զգում էր, որ նրանց հետ խոսելու իր ցանկությունը ծիծաղելի էր։ Նրանք հանձին նրա դատավոր էին տեսնում, որը կարող էր խաթարել նրանց հոգու համեմատական անդորրը։ Նրանք վերապրում էին, ինչպես կարողանում էին։ Նա ափսոսաց, որ կանգ էր առել։ Հիմա նա պետք է որևէ բան ասեր։

— Անունդ ի՞նչ է։

— Գյուլիզար։

— Իսկական անո՞ւնդ։

— Դա ձեզ չի վերաբերում։

— Ի՞նչ է կատարվում,— հարցրեց նրանց տիրուհին՝ կորցնելով համբերությունը։— Այնպես խոսեք, որ ես հասկանամ։ Եթե փող չունի, թող գնա։

— Ձեզ այստեղ ուժով են պահո՞ւմ,— հարցրեց Վարդանը կարեկցանքով։

Գյուլիզարը ուսերը թոթվեց, իսկ մյուսը, որը բառ չէր ասել, Վարդանին

նայեց երկչոտ հայացքով.

— Ապրել է պետք...

Նրա շպարված դեմքին հլություն կար։

— Չգիտե՞ս, Հալեպում Սվասից մարդիկ կա՞ն։

— Չգիտեմ։ Անունս Նեկտար է, ես Մուշից եմ։

Նրա ընկերուհին արմունկի հարվածով լռեցրեց նրան և կոպտորեն ասաց.

— Համբուրել ուզո՞ւմ եք։ Եթե ոչ, գնացեք, թե չէ մենք անախորժություններ կունենանք։

Գեր կինը դժվարությամբ ոտքի ելավ և մոտեցավ հողաթափերը քարշ տալով։

— Խնդրում ենք, մեզ հանգիստ թողեք,— ասաց Գյուլիզարը։

Վարդանը նրանց հաջողություն մաղթեց և արագ քայլերով հեռացավ։ Փողոցը միանում էր մեկ այլ փողոցի, որը սալարկված էր և ուր տները երկհարկանի էին։ Նրա ընկերները խանդավառ ձայներով նրան էին կանչում.

— Ուդի Յաշար։ Այ խորամանկ։

— Ուդի, եղբայրս, սպասիր մեզ։

Հակին Հաֆիզ Իսմայելի ու Թմբուկ Վասֆիի ընկերակցությամբ պատրաստվում էր մի հասարակաց տուն մտնել։ Նա բռնեց Վարդանի ուսից.

— Ահա թե ո՞ւր ես եկել։ Դու իրավացի ես։ Միայն կանացի մարմինը կարող է վանել տխրությունը։ Սակայն, աղաբեյ, քեզ կարծես չի հաջողվել...

— Ճանապարհի հոգնությունն է։

Հակին չպնդեց։ Իրենց ճանապարհորդության ընթացքում նա վարժվել էր Վարդանի բնավորությանը և հարգում էր նրա լռության ու զսպության պահանջը։

— Ո՞ր կողմն է գտնվում մեր իջևանատունը։

— Ես ձեզ հետո կմիանամ,— ասաց Հակին մյուս երկու երաժիշտներին։

Նա բռնեց Վարդանի ձեռքը նրան ուղեկցելու համար։ Մի քանի քայլ անելուց հետո նա հարցրեց.

— Կուզենայի՞ր, որ քեզ հետ ռեստորան գայի։ Վասֆին ու Իսմայելը առանց ինձ էլ յոլա կգնան։

— Ոչ, վերադարձիր քո գործին, Հակի։ Ես գնում եմ քնելու։

— Սենյակում միրգ, հաց, մածուն կա։ Մտածեցի, որ դու կուշանաս ու միգուցե սոված կլինես։

Այդչափ կոպիտ տեսք ունեցող այդ մարդու նրբանկատությունը հիացրեց Վարդանին։

* * *

Իջևանատան հետևի բակում ընթացող փորձը տևեց մինչև ճաշ, և դա իսկական փորձություն էր Վարդանի համար, որը չէր կարողանում զսպել իր անհամբերությունը։ Հենց իր անուշադրության պատճառով էր, որ որոշ հատվածների կատարումը չէր բավարարում Փաշազադե Շահիր Միթադին։ Հալեպում նվագախումբը միայն երեք օր էր մնալու, իսկ հետո գնացքով պետք է Կոնիա մեկներ, քանի որ դերվիշն ուզում էր վանք վերադառնալ ուխտի հիմնադրի տարեդարձի ամենամյա տոնակատարությանը մասնակցելու համար։ Հյուրախաղերը կավարտվեին և եթե Հալեպում հրաշք տեղի չունենար, ապա Վարդանին այլ ելք չէր մնա, քան գնալ Ուրգուպ՝ Արուսյակի մոտ։ Իսկ եթե նա գտներ Մարոյին ու Թովմասին, ո՞ւր էին իրենք գնալու։ Վարդանը չգիտեր։ Ապաստանե՞լ հարավում ընկած որևէ քաղաքում, որը դարձյալ կգտնվեր օսմանցիների վերահսկողության տակ։ Ապաստան փնտրե՞լ արտասահմանում։ Բայց ինչպե՞ս։

Ազատվելուն պես Վարդանը շտապեց դեպի ամերիկյան բողոքական միսիան, որի հասցեն նրան էր տվել իջևանատան տերը։ Պահակը՝ քսան տարեկան պինդ մի տղա, շատ սև և կլոր աչքերով, երկար զննեց մորուքավոր թուրքին, որը կանգնած էր իր առջև։ Շարունակելով չվստահել՝ նա ասաց, որ Մեթյուզ քահանան բացակայելու էր երկար ժամանակ։

— Հարցն այն է...

Վարդանը խուսափում էր որևէ բան վստահել այս մարդուն, որը, չնայած իր սիրիական բարբառին, կարող էր կառավարության լրտեսը լինել։

— Ես կուզենայի տեսնել այն մարդուն, որը փոխարինում է նրան նման դեպքերում։

— Տիկին Մեթյուզի՞ն։

— Այո։ Պարզապես ասեք նրան, որ ես քահանայի բարեկամն եմ։

Պահակը մի քանի րոպեից վերադարձավ և գոտուց կախված մեծ բանալիով բացեց դարպասը։ Տունը փողոցից զատվում էր նեղ պարտեզով, ուր դափնեվարդեր էին աճում։ Ոսկեգույն երանգով գորշ քարից կառուցված շենքի ճակատային մասում բարձր լուսամուտներ կային, իսկ մոնումենտալ սանդուղքը տանում էր դեպի մուտքի դուռը։ Այս շենքը կառավարությունը տրամադրել էր օտարերկրացիներին, և դա

նշանակում էր, որ չնայած պատերազմին եվրոպական երկրների և Միացյալ Նահանգների ու Բարձր դռան միջև կնքված պայմանագրերով այդ երկրներին տրամադրված արտոնությունները չեղյալ չէին համարվել։

Տիկին Մեթյուզը Վարդանին ընդունեց նախասրահ դուրս եկող և կանաչ պաստառներով պատված հյուրասենյակում։ Վարդանը հանեց ֆեսը նրան ողջունելու համար։ Դա մոտ հիսուն տարեկան նրբագեղ կին էր, որի կնճիռներից զերծ դեմքը կրում էր աչքի ընկնող գեղեցկության հետքերը։ Նրա ճերմակ մազերը տեղ-տեղ կապտին էին տալիս։ Նրա փակ վզով սպիտակ զգեստին ոսկե խաչ էր ամրացված։ Առանց հրաժարվելու իր խստաբարո կեցվածքից, նա քաղաքավարի, սակայն սառը տոնով հարցրեց թուրքերենով.

— Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել, էֆենդի։

Քանի որ պահակը կանգնած էր դռան մեջ՝ հետևելով այցելուին, Վարդանն ասաց անգլերենով.

— Շնորհակալ եմ, որ դուք ինձ ընդունեցիք, տիկին։ Չէի՞նք կարող առանձին զրուցել։

Կինը չթաքցրեց իր զարմանքը և դուրս հրավիրեց տղային։

— Ո՞վ եք դուք։

— Վարդան Պալյանը, տիկին։ Չեմ կարծում...

— Այո՛։ Ես ձեր մասին լսել եմ,— ուրախացած բացականչեց նա և ոտքի կանգնեց։— Եվ ես նույնիսկ կարդացել եմ ձեր հոդվածներից մի քանիսը, որոնք պարոն Մեթյուզը՝ ամուսինս, հանձնել է հյուպատոսին։

Վարդանի մտնելուն պես նրա դեմքին հայտնված լարված արտահայտությանը փոխարինեց ժպիտը։ Նա սեղմեց Վարդանի ձեռքը, նրան առաջարկեց նստել խունացած երեսով բազկաթոռին և հրամայեց թեյ մատուցել։

— Արդեն քանի ամիս է իմ ամուսինը սպասում է ձեզ։ Ինչ ցավալի է, որ նա այստեղ չէ։

— Այո, ափսոս, քանի որ երեք օրից ես մեկնելու եմ։

— Դուք ձեռնունայն չեք գնա, պարոն Պալյան։

Վարդանը վեր թռավ պայծառացած դեմքով և բացականչեց.

— Դուք տեղեկություն ունե՞ք իմ կնոջ և որդու մասին։

Տիկին Մեթյուզը շփոթվեց և տխուր ձայնով ասաց.

— Դժբախտաբար խոսքը դրա մասին չէ։

Վարդանը փլվեց բազկաթոռի մեջ հենց այն պահին, երբ դուռն էին ծեծում։ Աղախինը սկուտեղը դրեց սեղանին և իսկույն հեռացավ տիկին Մեթյուզի խնդրանքով։

— Ցավում եմ, որ ձեզ հիասթափեցրի,— ասաց նա Վարդանին տալով բաժակը։— Իսկապես ցավում եմ։ Շաքար կուզե՞ք։

— Ոչ, շնորհակալություն։

Վարդանը դժվարությամբ էր թաքցնում իր հիասթափությանը։ Նա գլուխը թափահարեց, ինչպես կաներ հարված ստացած մարդը սթափվելու համար։

— Դուք մեղք չունեք,— շշնջաց նա ընկճված տեսքով։— Դա իմ...

Նա նախադասությունը չավարտեց։ Կինը նստեց և մի քանի րոպե լուռ մնաց, ափսոսալով, որ իր ամուսնու պես ինքը չէր կարողանում անմիջապես մխիթարության խոսքեր գտնել։ Նա պատկերացնում էր, թե ինչ ողբերգություն կապրեր, եթե ինքն այդ ձևով բաժանված լիներ Ալան Մեթյուզից և չիմանար, թե ինչ էր եղել նրա հետ։ Երբ նրան թվաց, որ Վարդանն ուշքի էր եկել, ասաց.

— Եթե ամուսինս ոչինչ չի կարողացել իմանալ ձեր ընտանիքի մասին, ապա դա նրա մեղքը չէ, քանի որ նա անդադար քայլեր է ձեռնարկել տարբեր այլադավան միսիոներների շրջանում և հարցուփորձ է արել բոլոր հանդիպած տեղահանվածներին։

— Ձեմ կասկածում, տիկին, և շնորհակալ եմ նրանից։

Նրա ձայնը հանգիստ էր և թվում էր, որ նա կառավարում էր իր զգացմունքները, սակայն այդ հանդարտ արտաքինը թաքցնում էր զգացմունքների իսկական փոթորիկ։ Նրա հոգու կրակը քիչ էր մնում մարեր։ Այն զսպանակը, որն ամիսներ շարունակ նրան ստիպում էր գործել, պարպվելու վրա էր։ Սակայն Վարդանը իրավունք չուներ հուսահատվելու։ Կինը զգաց, որ նրա հոգում խուլ պայքար էր գնում։

— Մի հուսահատվեք, պարոն Պալյան։ Աստված հովանավորում է մեզ։ Շարունակեք փնտրել ձեր հարազատներին, քահանան էլ իր հերթին նույն բանը կանի։

— Ես երբեք չեմ դադարի նրանց փնտրել։

— Դրանք քրիստոնյային վայել խոսքեր են,— ուրախացավ տիկին Մեթյուզը, որը վախենում էր, որ ինքը կարող էր հուսահատության տեսարանի ականատես լինել։— Ձեր կինը և ձեր որդին... Քանի՞ տարեկան է նա։

— Վեց տարեկան։ Ո՛չ։ Յոթ ու կես։

— Գիտակից տարիք... Ես ուզում եմ ասել, որ միգուցե ձերոնք գտնվում են իրենց քարավանից դուրս բերած այն գթասիրտ մարդու հովանավորության տակ, կամ էլ ապաստան են գտել Բեյրութում, Բաղդադում կամ Իրանում։

Տիկին Մեթյուզը մի պահ լռեց, մի կում թեյ խմեց և բաժակը դրեց ափսեի մեջ.

— Այն, ինչ ես ձեզ պետք է հայտնեի և որը պատճառ դարձավ այդ տխուր շփոթմունքին, վերաբերում է ձեր եղբորը։ Տեղահանություններից առաջ նա իր ընտանիքի հետ Երուսաղեմ էր եկել։

— Փառք Աստծու։ Վերջապես լավ լուր։

Վարդանը լուռ ըմբոշխնեց իր ուրախությունը և ինքն իր համար արձանագրեց.

— Նուբարը միշտ շրջահայաց է եղել, նա այդ գիծը ժառանգել է մեր հորից։

Գուշակելով, որ այդ նախադասությամբ իր հյուրը ինքն իրեն մեղադրում էր շրջահայաց չլինելու մեջ, տիկին Մեթյուզն ամփոփեց.

— Յուրաքանչյուրը գործում է իր հնարավորություններին համապատասխան։

— Դժվար չէ՞ր լինի իմ եղբորը նամակ ուղարկել։

— Ամենևին։ Սակայն ես չգիտեմ, թե դրա համար որքան ժամանակ պետք կլինի։

Տիկին Մեթյուզն իրեն նորից թեյ լցրեց և նկատեց, որ Վարդանն իր թեյին ձեռք չէր տվել։ Նա ժպտաց, իմանալով, որ կարող էր դարձյալ նրան հաճույք պատճառել։

— Մի նորություն էլ ունեմ, պարոն Պալյան։ Իմ ամուսինը անցած ամիս Կապադովկիա էր գնացել։ Ձեր բարեկամները լավ են և հույս ունեն ձեզ տեսնելու։ Նրանք Կոստանդնուպոլսից ձեր քեռորդուց նամակ են ստացել։

— Դա միայն Տիրանը կարող է լինել։ Ես նրան գրել էի։ Ի՞նչ էր գրված նամակում։

— Ընդհանուր առմամբ, որ մայրաքաղաքում ապրող ձեր ազգականները լավ են։ Ոչինչ չկա ձեր կնոջ վերաբերյալ։ Նամակը ձեզ է սպասում Ուրգուպում։

Կինը վարանեց, ինքն իրեն հարցնելով, թե արդյոք իր հետաքրքրասիրությունը անպատեհ չէր, սակայն հարցրեց.

— Դուք մտադիր եք այնտե՞ղ վերադառնալ։

— Ես կգերադասեի Հալեպում մնալ, գուցե Երուսաղեմ գնալ, սակայն ես ընտրություն չունեմ։ Ես դեռ հետախուզման մեջ եմ։ Առանց դերվիշների նվագախմբի երաժշտի կարգավիճակի ես փաստաթղթեր չեմ ունենա տեղաշարժվելու համար, և ինձ կարող են բանտարկել։ Հետևաբար պետք է վերադառնամ Ուրգուպ։ Ամեն դեպքում ես համաձայնվել եմ հյուրախաղերի գալ Փաշազադե Շահիր Միթադի նվագախմբի հետ հաջորդ գարնանը։

— Դա շատ լավ է։ Այն տեղեկությունները, որ դուք հաղորդում եք, մեզ հնարավորություն են տալիս հայտնաբերել հայ երեխաների և նրանց

տեղավորել որբանոցներում, դպրոցներում և հիվանդանոցներում։ Այսպիսով մենք խոչընդոտում ենք նրանց մահմեդականացմանը։

—— Դա շատ կարևոր է։ Նրանք պետք է պահպանեն իրենց լեզուն և դավանանքը, պետք է հայ մնան։ Մենք այդ երեխաների կարիքը կզգանք պատերազմից հետո ստեղծվելիք անկախ Հայաստանը բնակեցնելու համար։

Տիկին Մեթյուզը չէր ուզում ներգրավվել նման քննարկումների մեջ։

— Ամուսինս ի վիճակի կլիներ ձեզ հետ քաղաքականությունից խոսել, իսկ ես ոչինչ չեմ հասկանում այդ ասպարեզում։ Ինձ համար կարևորը այն է, որ օսմանյան իշխանությունները չխոչընդոտեն, որ Ամերիկյան օգնության կոմիտեի, Կարմիր խաչի և Լոնդոնի քաղաքապետ-լորդի կողմից առաքվող դրամն ու սննդամթերքը հասնեն հայերին։

Հրաժեշտից առաջ Վարդանը երկար նամակ գրեց եղբորը՝ Նուբարին, ուր նա պատմում էր այն ամենի մասին, ինչ իրեն պատահել էր այդ մեկ և կես տարվա ընթացքում և խնդրում, հնարավորության դեպքում, փնտրել Մարոյին և Թովմասին Բաղդադում, Դամասկոսում և Բեյրութում։ Քահանա Մեթյուզի կնոջը շնորհակալություն հայտնելուց հետո Վարդանը պատրաստվում էր հեռանալ, երբ վերջինս նրան խորհուրդ տվեց.

— Լավ կլիներ, եթե դուք հանդիպեիք Տեր Գևորգի հոտ։ Այդ քահանան շատ բան է անում իր հայրենակիցներին օգնելու համար։ Կարծում եմ, որ ձեր այցելությունը նրան հաճույք կպատճառի։ Նրա եկեղեցին գտնվում է Բարաք էլ Արման կոչվող թաղամասի եզրին։ Դա քաղաքի հյուսիս-արևելքում է։

Նա մտածում էր, որ քահանան կկարողանար մխիթարել Վարդան Պալյանին, որի հանգիստ վարքագիծը չէր խաբել իրեն, և նա զգում էր, որ նա հուսահատված էր։

— Տեր Գևո՞րգ։ Ես նրան կայցելեմ։

Վարդանի անտեղյակությունը կեղծ էր։ Տեր Գևորգը կապավոր էր հայկական ցանցում, և Վարդանը նրան պետք է մի քանի նամակ հանձներ։

Նա շտապեց միանալ Նվագախմբին, որը պետք է ելույթ ունենար ոստիկանապետի տված ընդունելության ժամանակ։ Երբեք երաժշտությունը այդքան չէր օգնել Վարդանին։ Միայն երաժշտության միջոցով կարելի էր արտահայտել անարտահայտելին, և նա անձնատուր եղավ դրան, պարպեց իր սիրտը ուդի լարերի միջոցով։ Գործընկերները, որոնք քաջ ծանոթ էին նրա վարպետությանը, այդուհանդերձ զարմացան այդ երեկո նրա կատարման զգացմունքայնությամբ։ Նույնիսկ հյուրերը զգացին, որ ուդահարը ներշնչված էր, և լռեցին նրա կատարումն ըմբոշխնելու համար։ Երեկոյի վերջում տան տերը շնորհավորեց Վարդանին և նրա ձեռքը արծաթե դրամ դրեց։

Իջևանատուն գնացող երաժիշտներին միանալու փոխարեն, Վարդանը խառնվեց հյուրերին, որոնք գնում էին դեպի քաղաքի կենտրոնը։ Հաջորդ խաչմերուկում նա զատվեց նրանցից։ Նրանց ձայներն ու ծիծաղը շատ շուտ հեռացան։ Վարդանը հայտնվեց ծառերով երիզված մի փողոցում, որի սալահատակը փայլում էր լուսնի լույսի ներքո։ Նա դանդաղ էր քայլում, ջանալով չխախտել այն լռությունը, որը տիրում էր քնած քաղաքում։ Իր հոգում Վարդանն անսահման դատարկություն էր զգում։ Ոչ մի միտք, ոչ մի զգացմունք, տարօրինակ մի խաղաղություն, որը նա ուզում էր վայելել հնարավորինս երկար։ Նա կանգ առավ «Բարոն» հյուրանոցի՝ շրջանի ամենաշքեղ հաստատության շենքի առջև, որը կառուցվել էր 1911 թ.։ Հենվելով չինարի ծառի բնին, նա երկար կանգնած մնաց, սպասելով, որ ժամանակն անցներ, և չտեսնող հայացքով նայեց լուսնին, որը թաքնվել էր տանիքների հետևում։ Երբ նա բռնեց վերադարձի ճանապարհը, արդեն լուսանում էր։

Իջևանատան այգում Վարդանը կանգ առավ ծխախոտ փաթաթելու համար։ Ջրհորի կողմից նա թույլ ձայներ լսեց և այդ կողմ գնաց։ Գետնին պառկած մի կին կառչել էր իր վրա կռացած տղամարդու ուսերից։ Կինը նկատեց օտարի ներկայությունը, թույլ ճիչ արձակեց, հրեց իր սիրեկանին և փախավ հագուստը կարգի բերելով։

Տղամարդը գետնին նստեց։ Հակին էր։

— Դու նրան վախեցրիր, Ուդի, իմ աղաբեյ,— ասաց նա զվարճացած ձայնով։— Իջևանատան տիրոջ աղջիկն էր։

— Ափսոսում եմ։

— Ես նրան արդեն երկու անգամ համբուրել էի։

Նա ոտքի կանգնեց և շապիկն ուղղեց։ Մի բան հետաքրքրեց Վարդանին, և նա հարցրեց.

— Ինչպե՞ս ճանաչեցիր ինձ մթության մեջ։

— Ես քո դեմքը տեսա։ Ի՞նչ զարմանալու բան կա։

Հակին իսկույն հասկացավ իր սխալը։ Նա Վարդանին ասել էր, որ իրեն բանակ չէին տարել կարճատեսության պատճառով և որ ինքը տառապում էր հավկուրությամբ։

— Ինձ թվում է, որ դու բվեճի պես լավ ես տեսնում։

— Լա՛վ... լա՛վ...— ասաց Հակին, որն ապարդյուն համոզիչ փաստարկ էր փնտրում։— Խնդրում եմ քեզ, աղաբեյ, որ դա մեր մեջ մնա։

— Բնականաբար։

Հանգստանալով՝ Հակին բռնեց Վարդանի ուսը և նրան տարավ դեպի իջևանատուն։ Մտնելով իրենց սենյակը՝ նա վերցրեց իր քամանչան։ Վարդանը ձևի համար բողոքեց.

— Դու բոլորին կարթնացնես քո քամանչայով։

— Ես ցածր կնվազեմ։ Ուշադիր լսիր, այս մեղեդին ես հորինել եմ քեզ համար։

Գործիքն ազդրին դնելով, նա աղեղը մեղմորեն անցկացրեց լարերի վրայով։

— Ես ուզում եմ մի երգ գրել մեր բարեկամության պատվին։ Մեղեդին շատ հեշտ հորինեցի, սակայն արդեն քանի օր է տանջվում եմ խոսքերը գրելու վրա։ Դու պետք է ինձ օգնես։

— Ի՞նչ ես ուզում ասել քո երգով։

— Ուզում եմ արտահայտել քեզ ճանաչելու բերկրանքը, քեզ հետ զրուցելու հաճույքը։ Կուզենայի ասել նաև, որ դու տարբերվում ես մյուսներից, մի քիչ խորհրդավոր ես։ Եվ որ ես քեզ շատ եմ սիրում։

Հակիի նվազելու ընթացքում Վարդանը ժպտում էր։

— Շատ լավ մեղեդի է, Հակի, բարեկամս։ Ես քեզ կօգնեմ այդ մեղեդու համար խոսքեր հորինել։ Իսկ հիմա քնենք։

Հակին, պառկելուն պես, սկսեց խռմփացնել։ Այդ խոսակցությունը խաթարեց Վարդանի ներքին անդորրը, և նա չկարողացավ քնել։

Զուր էր ինքն իրեն համոզում, ասում, որ հոգու խորքում ինքը երբեք համոզված չէր եղել, որ հարազատներին Հալեպում կգտներ, միևնույն է, նա չէր կարողանում ազատվել ձախողման սարսափելի զգացումից, որի պատճառով նա անօգուտ էր համարում վերջին ամիսների իր գործադրած ջանքերն ու ձեռնարկումները։ Նա հիշում էր բոլոր սրտապնդող խոսքերը, չհուսահատվելու բոլոր կոչերը, որ ինքը լսել էր, և նորից վերլուծելով այդ զրույցները՝ նա զգում էր կասկածի այն երանգը, որ հայտնվում էր իր զրուցակիցների ձայներում, այն վերապահումները, որ նրանք չէին համարձակվել բարձրաձայնել և որոնք նա այդ պահին չէր ցանկանա լսել։ Միայն Արուսյակն էր քաջություն ունեցել իրեն ասելու, որ ինքն անհնարին գործ էր ձեռնարկում։ Սակայն նա էլ իր պատճառներն ուներ այդպես ասելու։

Վերադառնա՞լ նրա տունը։ Վերադառնա՞լ նրա մոտ։ Դա կնշանակեր հրաժարվել մոտակա ապագայում Մարոյի ու Թովմասի հետ միանալու հնարավորությունից։ Գնա՞լ Երուսաղեմ եղբոր մոտ։ Գայթակղությունը շատ մեծ էր, սակայն դա կնշանակեր, որ ինքը պետք է հրաժարվեր Անատոլիայի տարածքով ճանապարհորդելու հնարավորությունից, որն իրեն տալիս էր դերվիշի նվագախմբի անդամ լինելը։ Իսկ դա նշանակում էր վերջնականապես հրաժարվել Մարոյին ու Թովմասին գտնելու հույսից։

Արուսյակի փոքր տունը... Գարնանից ի վեր քանի՜, քանի՜ անգամներ էր նա մտածել այդ տան մասին որպես հանգրվանի։ Այդ հիշողությանն էր ինքը դիմել, երբ հուսահատվում էր՝ տեսնելով ճամփեզրերին կիտված ոսկորները, որոնք կառավարությունը փորձում էր վերացնել, երբ տեսնում էր դատարկված հայկական թաղերը, այրված կամ աղքատ

մահմեդականների կողմից գրավված գյուղերը, որոնց եկեղեցիները գոմի էին վերածված, որոնց պտղատու ծառերը հատված էին օջախները վառելու համար, իսկ դաշտերը, որոնք հայերի անհամար սերունդներ սիրով մշակել էին, վերածվել էին խոպանի: Նա հոգնել էր լսել այն սարսափելի պատմությունները, որոնք կրկնվում էին և որոնք իրեն էին պատմում, որպեսզի նա դրանց հաղորդակից դարձներ աշխարհին իր հոդվածների միջոցով: Այդ պատմությունները դարձել էին իր էության մասը, ծանրաբեռնում էին նրա հիշողությունը, և նրան երբեմն թվում էր, որ ինքն անձամբ քսան-երեսուն անգամ ապրել էր տեղահանության սարսափները, և նա գիտեր, որ քանի դեռ ինքը ողջ էր, չէր կարողանալու ազատվել այդ հիշողություններից:

Նա հոգնել էր ավերակներից, մահացածներից, կորուստներից: Նա կուզեր վերջակետ դնել, ինչպես դնում էր հոդվածի վերջում, և էջը դարձնել: Քանի ժամանակն անցնում էր, նա համակվում էր վերակառուցելու ցանկությամբ: Նա ուզում էր քանդել ավերակները, վերսկսել: Այդ ցանկությունն անիրականանալի կմնար, քանի նա չէր վերամիավորվել իր ընտանիքի անդամների հետ, կամ էլ չէր համոզվել, որ նրանց կորցրել էր առհավետ:

* * *

Լուսադեմին Վարդանը տեղից վեր կացավ մռայլ տրամադրությամբ և մտածեց Տեր Գևորգի հետ անխուսափելի հանդիպման մասին: Քահանան նույնպես պետք է իրեն համոզեր, որ ինքը հույսը դներ Աստծու ողորմածության վրա, հետո իրեն մանրամասնորեն նկարագրելու էր բոլոր սարսափները, որոնց ինքն ականատես էր եղել: Ինչպե՞ս դիմադրել «Ես հոգնել եմ ինքնախաբեությունից: Ես բավականաչափ բան գիտեմ աղետի մասին» խոսքերը ասելու գայթակղությանը: Եթե ինքն ասեր, որ հոգնել էր և որ երազում էր հանգիստ երջանկության մասին, ապա դա որպես սրբապղծություն կհնչեր քահանայի ականջին:

Վարդանը, ցանկանալով հնարավորինս շուտ ազատվել այդ պարտականությունից, չափից ավելի շուտ եկավ այն փոքրիկ եկեղեցին, որը գտնվում էր շուկայից և հին քարվանսարաներից ոչ հեռու, քաղաքի արևելյան արվարձանում: Այդտեղ նոր թաղամաս էր կառուցվում, որի անհրապույր տեսքն ընդգծվում էր առավոտյան անհավասար լուսավորությամբ: Հին տախտակներից և պաստառներից կառուցված խրճիթների միջև գալարվում էին հողե արահետները, ուր քամին փոշի էր բարձրացնում: Տեղ-տեղ քարաշեն և կավաշեն տները փոխարինում էին ժամանակավոր կացարաններին: Աղքատության մարմնացում:

Այդուհանդերձ, որոշ մանրամասներ փոխեցին Վարդանի սկզբնական տպավորությունը: Ազատ տարածությունները զբաղեցնում էին փոքրիկ բանջարանոցները, հավերը քուջուջ էին անում դռների դիմաց, մի շուն հաչում էր, որոշ տների տանիքների վրա ծուխ էր բարձրանում: Բարաք

էլ Արման։ Քահանայի մոտ գնալու փոխարեն, Վարդանը հաճույքով կզբոսներ այդ թաղամասում, ուր բնակվում էին իր հայրենակիցները, առանց նրանց մոտենալու, միայն կնայեր, թե ինչպես էին նրանք ապրում։ Եվ միգուցե ինքն իր օգնությունը կառաջարկեր այն մարդուն, որը շարում էր իր ապագա տան պատը։

Նա վճռեց մի քիչ էլ սպասել Տեր Գևորգի տան դուռը ծեծելուց առաջ և նստեց աղբյուրի եզրին։ Զարմանալի էր, որ եկեղեցու խախտված համամասնությունները վկայում էին, որ այն հայկական չէր։ Այս եկեղեցու զանգակատունը մի քսան մետրով ավելի բարձր էր, քան ամբողջ շինությունը։ Ուսումնասիրելով շինության ոճը, Վարդանը եզրակացրեց, որ դա նախկինում ասորական եկեղեցի էր եղել։

Մի տնից, որի դռան տեղը վարագույր էր կախված, դուրս եկան երկու կին դույլերով և քարացան, տեսնելով աղբյուրի մոտ նստած օտարականին։ Քաջություն հավաքելով՝ նրանք դանդաղ մոտեցան։ Արաբական սովորույթի համապատասխան, ոտքից գլուխ սև կերպասի մեջ փաթաթված կանայք մի քանի խոսք փախանակեցին հայերենով։ Մեկը պատկառելի տարիք ուներ, և արևը վառել էր նրա կնճռոտ դեմքը, իսկ մյուսը՝ առաջինի դուստրը կամ հարսը, մոտ քառասուն տարեկան էր։ Վարդանը ոտքի կանգնեց և մի քանի քայլ հեռացավ աղբյուրից, որպեսզի նրանք հանգիստ մոտենային։ Երբ կանայք մոտեցան աղբյուրին, Վարդանը հայերեն ուլջունեց նրանց և առաջարկեց լցնել դույլերը։ Մի պահ վարանելուց հետո նրանք համաձայնեցին։

— Սա Տեր Գևորգի եկեղեցի՞ն է,— հարցրեց Վարդանը՝ դույլը պահելով մետաղյա ծորակի տակ։

— Այո,— պատասխանեց ավագը սուր ձայնով։

Կարճատև լռությունից հետո նա ասաց մեղավոր ձայնով.

— Մենք ձեզ թուրքի տեղ դրեցինք։

— Իսկ ես ձեզ՝ արաբ կանանց։

Ավելի երիտասարդը, որի դեմքը նիհար էր, իսկ աչքերը տենդոտ, բարձրաձայն ծիծաղեց բացելով սևացած ատամները։ Այդ ծիծաղը Վարդանին երաժշտություն թվաց։ Ավագը, պահպանելով խիստ տեսքը, ասաց.

— Հիմա կյանքն այնպիսին է, որ ավելի լավ կլիներ, եթե մենք մոռանայինք մեր ով լինելը։

Վարդանը գլխով արեց.

— Դուք այստեղ սվասցիների հանդիպե՞լ եք։

Կանայք հարցական հայացքով միմյանց նայեցին։

— Չենք կարծում,— ասաց երիտասարդը։– Ես և մայրս Քեղիից ենք։

Հայրենի գյուղի անունն արտասանելիս նրա դեմքը մռայլվեց, հետո

Նա ավելացրեց.

— Ավելի լավ կլիներ, եթե դուք Տեր Գևորգից հարցնեիք։ Նա ճանաչում է Հալեպում ապրող բոլոր հայերին։

— Որտե՞ղ է նրա տունը։

— Նա այն զիջել է մի ընտանիքի, իսկ ինքը իրիցկնոջ հետ ապրում է եկեղեցում։

— Թակեք ավանդատան դուռը,— ասաց ծեր կինը և ցույց տվեց եկեղեցու աջ կողմը։— Զանգակատան հետևում։

— Ուզո՞ւմ եք ձեր դույլը տանեմ, տիկին։

— Խնայեք ձեր ուժերը, երիտասարդ։ Ես այսպիսի դույլեր շատ եմ քարշ տվել։

Բարեմաղթանքներ փոխանակելուց հետո նրանք բաժանվեցին, և Վարդանը գնաց կնոջ ցույց տված կողմը։ Եկեղեցին ուղղանկյուն բակ ուներ, որի սալահատակի ճեղքերում աշնանային անձրևներից փարթամ խոտ էր աճում։ Քարե նստարանին փարաջայով մի ծերունի էր նստած և թերթ էր կարդում։ Ոտնաձայն լսելով՝ քահանան գլուխը բարձրացրեց։ Նրա ձախ աչքը չկար, և կոպը կարծես այտին կարված լիներ, իսկ ամբողջ կյանքը կենտրոնացել էր աջ աչքում, որը խորաթափանց էր։ Նեղ և երկար սպիտակ մորուքը իջնելով մինչև կրծքավանդակի կեսը՝ էլ ավելի էր երկարացնում նրա նիհար դեմքը, որն իր գույնով և կնճիռներով ծիրանի չիր էր հիշեցնում։ Նա թուրքերենով դիմեց այցելուին։

— Ո՞ր քամին է ձեզ այսքան վաղ այս կողմը բերել, երիտասարդ։

— Բարեկամական քամին,— պատասխանեց Վարդանը հայերեն, ֆեսը հանելով։

Տեր Գևորգն ուզեց ոտքի կանգնել։

— Թույլ ավեք ես նստեմ, տեր հայր։

— Նստիր, որդիս։

Նրանք միմյանց ձեռք սեղմեցին և Վարդանը նստեց նրա կողքին։ Քարը սառն էր։ Քահանան, որը պատրաստվում էր այցելուի անունը հարցնել, հանկարծ սկսեց օդը հոտոտել և ինքն իրեն հարցնել, թե արդյո՞ք քնած չէր և երազում չէր զգում այդ զարմանալի բուրմունքը։

— Սա հենց այն է, ինչի մասին դուք մտածում եք,— ասաց Վարդանը՝ նրան հանձնելով մուգ թղթից պատրաստված մի տոպրակ։

— Սո՞ւրճ,— բացականչեց քահանան։

Նա պատռեց տոպրակի անկյունը, մի պտղունց սուրճ վերցրեց և մոտեցրեց քթին։

— Սո՛ւրճ։ Այն էլ լավ սուրճ։ Շատ վաղուց սուրճ չեմ խմել։

Վարդանը գիտեր Տեր Գևորգի այդ թուլության մասին Ուռհայի զինագործից, որը հայ էր և որին նրա մասնագիտությունը հնարավորություն էր տվել խուսափելու իր համաքաղաքացիներին բաժին ընկած ճակատագրից: Նա էր Վարդանին տվել քահանային հասցեագրված նամակները:

— Լուսաբե՛ր, Լուսաբե՛ր:

Ամուսնու կանչը լսելով՝ մոտ վաթսուն տարեկան մի կին դուրս եկավ ավանդատնից: Նա տխուր կամ հոգնած հայացք ուներ: Նրա այտերի, պարանոցի և թևերի թուլացած մաշկից զգացվում էր, որ նախկինում նա շատ գեր էր եղել և նիհարել էր կարճ ժամանակում: Ձեռքերը կրծքին սեղմելով՝ նա հանդիմանեց ամուսնուն իրեն վախեցնելու համար:

— Նայիր,— ասաց քահանան ոգևորված:— Մեր բարեկամը մեզ համար սուրճ է բերել:

Գոհունակություն զգալով իր ամուսնու ուրախությունից՝ նա Վարդանին գլխով արեց:

— Բարի գալուստ, պարոն, և շնորհակալություն:

— Խնդրեմ, սուրճ պատրաստիր:

— Դուք ինչպե՞ս եք սիրում, պարոն,— հարցրեց կինը Վարդանին:— Դա՞ռը, թե քաղցր:

Վարդանը հրաժարվեց.

— Սուրճը քիչ է, պահեք ձեզ համար:

— Դառը սարքիր,— ասաց Տեր Գևորգը կնոջը, իսկ Վարդանի համար ավելացրեց:— Մենք միասին կխմենք: Դա բնորոշ է այս ժամանակաշրջանին:

Վարդանը չհասկացավ վերջին խոսքերի իմաստը: Նա ներկայացավ:

— Ես գուշակեցի ձեր ով լինելը,— ասաց քահանան նրա ուսին մտերմիկ հարվածելով:

Նա ավելի ուժեղ էր, քան կարելի էր ենթադրել նրա նուրբ կառուցվածքից:

— Դուք շատ լավ հոդվածներ եք գրում, որոնք օգնում են մեր գործին: Ուրախ եմ, որ վերջապես ձեզ հանդիպեցի, որդիս:

— Ես նույնպես, տեր հայր,— պատասխանեց Վարդանը նրան պարզելով ձեռքը:

Ձգանկանալով ժամանակ ձգել՝ նա անդրադարձավ իր այցելության նպատակին.

— Ես ձեզ նամակներ եմ բերել Ուռհայից:

— Մի քիչ հետո,— ցրված պատասխանեց քահանան, որը կանխավ

ըմբոշխնում էր սուրճ խմելու հաճույքը։

— Ձեզ հայտնե՞լ են, որ ես ընտանիքիս անդամներին եմ փնտրում։

— Նույնիսկ երկու անգամ։ Նախ՝ ցանցը, իսկ հետո Մեթյուզ քահանան։ Դուք երկիր ու երկինք իրար եք խառնել, եթե չեմ սխալվում։

— Ապարդյուն,— մռայլ պատասխանեց Վարդանը։- Դուք որևէ տեղեկություն ունե՞ք։

— Ցավում եմ, որդիս, բայց ոչ։ Ես կարող եմ ձեզ վստահեցնել, որ ձերոնք Հալեպում չեն, ոչ էլ անմիջապես այս շրջանում։

Քահանան միակ աչքով զննում էր այցելուի դեմքը։ Նա խոսեց մեղմորեն.

— Դադարեք ձեզ տանջել, բարեկամս։

— Եվ հույսս դնեմ Աստծո՞ւ վրա,— հարցրեց Վարդանը՝ դժվարությամբ զսպելով բարկությունը։

Տեր Գևորգը հանդարտորեն շարունակեց խոսքը.

— Նաև Աստծու վրա։

Քանի որ Վարդանը լուռ էր, քահանան շարունակեց.

— Դուք պետք է ապրեք, որդիս։

— Հեշտ է ասել։

Քահանան նայեց դռան կողմը։ Ինչո՞ւ էր իրիցկինը ուշացնում սուրճը։ Ջուրը պետք է որ եռացած լիներ։

— Դուք պետք է կյանքի նպատակ գտնեք։ Այն, ինչ ես գիտեմ ձեր մասին...

— Պետք է շարունակեմ հոդվածնե՞ր գրել տեղահանությունների մասին։ Ապրելը դա՞ է։

Վարդանի կտրուկ տոնը ամենևին չշփոթեցրեց ծեր քահանային, որը ևս մեկ անհամբեր հայացք նետեց դռան կողմը։

— Դուք իրավացի եք, որդիս։ Ողբալու ժամանակն անցել է։

Վարդանը, որը հակաճառության էր սպասում, զարմանքով նայեց իր զրուցակցին։

— Ի՞նչ նկատի ունեք։

Տեր Գևորգը մեկ անգամ ևս հպվեց Վարդանի ուսին և խորհրդավոր տեսքով ասաց.

— Մենք խոսելու շատ բան ունենք։ Եթե, իհարկե, դուք չեք շտապում։

— Ես ազատ եմ մինչև կեսօր։

— Դա լավ է։

Իրիցկինը դուրս եկավ ավանդատնից անհաստատ քայլերով՝ վախենալով թափել թանկարժեք հեղուկը։ Քայլը գցելիս, նա շարժում էր ամբողջ կոնքը այնպես, ինչպես գեր ժամանակ էր անում։ Նա տղամարդկանց տվեց երկու լիքը գավաթ սուրճ։ Գավաթները ճաքճքած էին, քանի որ ամուսինները, ինչպես և բոլոր ծխականները, աղքատ էին։

— Օրհնյալ է Աստված իր շնորհների համար,— ասաց քահանան՝ գավաթը քթին մոտեցնելով և այնտեղից բարձրացող բուրումնավետ գոլորշին հոտոտելով։

Նա փակեց աչքերը, սուրճը փորձեց, իսկ մի քանի վայրկյան անց շշնջաց.

— Մենք ամեն ինչի իսկական արժեքն իմանում ենք այն ժամանակ, երբ զրկվում ենք դրանից։

Լուսաբեր իրիցկնոջ հուզված հայացքի ներքո նրանք կում-կում խմեցին սուրճը։ Գավաթը շրթունքներին մոտեցնելով՝ քահանան ֆրթացնելով կում էր անում, որպեսզի օդը հովացներ եռման հեղուկը և բերանը չայրեր։

— Կուզենայի, որ մենք շրջայց կատարեինք իմ ծխում, պարոն Վարդան,— ասաց քահանան, գավաթը կնոջը հանձնելով։

— Սվասից ընտանիքներ կա՞ն այստեղ։

— Շատ քիչ։ Ես արդեն հարցուփորձ եմ արել այդ մարդկանց, նրանք ոչինչ չեն կարող ձեզ հայտնել։

Վարդանն ամուսիններին ավանդատուն ուղեկցեց։ Սենյակի պատի տակ, որը իրիցկին Լուսաբերը կարեցածին չափով բնակելի էր դարձրել, ծալված ներքնակ կար։ Սեղանը, երկու աթոռները, պատերին կախ տված կաթսաները, քարածխի վառարանը նեղվածք էին ստեղծում փոքր սենյակում։ Ծիսական հագուստների պահարանում, որը նաև որպես մթերքի պահարան էր ծառայում, միայն մեկ կախիչ կար։ Վարդանը քանդեց իր բաճկոնի կարերից մեկը և աստառի տակից հանեց մանր ձեռագրով գրված մի քանի թերթ՝ նամակներ, որոնք Տեր Գևորգն արագ կարդաց և հանձնեց կնոջը, որ նա թաքցներ։

Ավանդատնից դուրս գալով՝ Վարդանն ասաց քահանային.

— Ի՞նչ խորհուրդ կտաք ինձ կնոջս և որդուս կապակցությամբ։

Զնայած կարեկցանքին, Տեր Գևորգը իրեն պարտավոր էր զգում չթաքցնել իր կարծիքը.

— Ձեմ ուզում դաժան մարդու տպավորություն թողնել, որդիս, սակայն դուք ոչինչ չեք կարող անել նրանց համար։ Առնվազն մինչև պատերազմի ավարտը։ Ձեր կինը միգուցե եղել է այն դժբախտների թվում, ում ուղարկել են մեռնելու Եփրատի հարավում գտնվող անապատներում, կամ էլ բախտ է ունեցել փախչելու Սիջագետք,

Պարսկաստան, Պաղեստին, կամ էլ...

Քահանան տատանվեց և չբարձրաձայնեց այն միտքը, որ նա կարող էր իր կամքին հակառակ դարձած լիներ որևէ բեյի սիրուհին, ինչպես բազմաթիվ հայուհիներ։

— Այնքա՜ն հնարավորություններ կան։ Դուք դրանց մասին նույնքան լավ գիտեք, որքան ես։ Դուք կարող եք ապարդյուն դես ու դեն ընկնել, ձեր ուժերը վատնել, սակայն ոչինչ չեք կարող փոխել։ Դուք կիսում եք մեր հայրենակիցների մեծ մասի ճակատագիրը և կարող եք միայն սպասել ու հուսալ։

Նա ուշադիր հետևում էր իր հյուրի արձագանքին, բայց նա անհաղորդ էր։ Տեր Գևորգը բարձրաձայնեց այն եզրակացությունը, որին հանգել էր ինքը՝ Վարդանը, իր մտորումներում և որը դեռևս չէր համարձակվում ձևակերպել։ Քահանան սպասեց, որ իր խոսքերը տեղ հասնեին։

— Այն, ինչ ես ասացի, դուք արդեն գիտեիք,— արձանագրեց քահանան։

— Անկասկած...

Վարդանը պատասխանեց ցրված տեսքով և հազիվ լսելի ձայնով։ Ձեռքը ջերմորեն Վարդանի ուսին դնելով՝ Տեր Գևորգն ավելացրեց.

— Վանեք ձեր սրտից մեղքի զգացումը, որը ոչ մի հիմք չունի։

Աղբյուրի մոտով անցնելով, նրանք շարժվեցին փոշոտ փողոցով, որն ավելի նման էր լայն արահետի և գալարվում էր անկանոն կառուցված տների միջև։ Տեր Գևորգը թևանցուկ էր արել Վարդանին ոչ այն պատճառով, որ օգնության կարիք ուներ՝ նա Տրապիզոնից ոտքով էր եկել Հալեպ, այլ պարզապես իրենց միջև մտերմիկ մթնոլորտ ստեղծելու համար, մթնոլորտ, որը խթանում էր խոստովանանքը։ Քանի որ ծեր քահանան ասելու բան ուներ, գաղափարներ ուներ, որոնք կհասկանար այս կիրթ մարդը, և որին նա կարծես վաղուց ճանաչեր նրա հոդվածների միջոցով։ Նա ուներ նաև կասկածներ, որոնք, ինչպես հույս ուներ, Վարդանը կփարատեր կամ կհաստատեր։

— Այս մեկ տարվա ընթացքում այստեղ են եկել տասնյակ հազարավոր տեղահանվածներ։ Անհամար շարասյուներ, լիքը վագոններ։ Քաղաքի հայերը չէին տուժել տեղահանություններից, և նրանք կարեցածի չափ օթևան էին տվել հայրենակիցներին։ Մնացածները մնում էին ճամբարներում՝ հին խաներում կամ էլ բաց դաշտում, մի կերպ գոյությունը պահպանելով։ Երբ իշխանությունները համարում էին, որ նրանց քանակը շատ էր ավելացել, ապա նրանք շարասյուներ էին կազմում և նրանց ուղարկում էին անապատ կամ էլ հարավի քաղաքները, որը չարյաց փոքրագույնն էր։

— Ես տեղյակ եմ, տեր հայր,— քաղաքավարի ասաց Վարդանը, որը չէր ուզում դրա մասին խոսել։

— Դուք սխալվում եք, որդիս, ես չեմ ուզում ձեզ հետ ողբերգական

իրադարձությունների մասին խոսել։ Ուզում եմ ձեզ ասել, որ դեռևս մի քանի ամիս առաջ մենք զբաղված էինք, մահացածներին հուղարկավորելով։ Իսկ հիմա ձեր շուրջը նայեք։ Նոր թաղամաս է կառուցվում, կյանքը վերսկսվում է։

Քահանան դադար առավ և ակնհայտ բավարարությամբ լայն շարժումով ցույց տվեց շրջակայքը։ Կացարանները ողորմելի էին, սակայն դրանք գոնե տանիք ունեին։ Ծեր կանայք հող էին մշակում տների շուրջը, երեխաները գոռոցներով վազվզում էին։

— Ցանել՝ նշանակում է մտածել ապագայի մասին, որդիս։ Այս մարդիկ ապրում են։ Ճիշտ է, նրանք ստիպված են հույս դնել Հալեպի հարուստ ընտանիքների՝ Ալթունյանների, Մեջլումյանների և այլոց գթասրտության և ամերիկյան հյուպատոս պարոն Ջեքսոնի ու օտար միսիոներների օգնության վրա։ Բայց շատերն աշխատում են քաղաքում, շատերը զբաղվում են իրենց արհեստով, կանայք ձեռագործ են անում։

Քահանայի խոսքերը համահունչ էին Վարդանի մտքերին, որոնք ծագել էին նրա գլխում բնակավայրը տեսնելուն պես։ Եվ երբ նա մուտք գործեց թաղամաս, նա իրեն որպես նյութ փնտրող լրագրող չէր զգում, առավել ևս՝ ոչ որպես օտար քաղաք այցելած զբոսաշրջիկ, այլ իր գյուղը վերադարձած մարդու տարօրինակ զգացումն ուներ։

— Եկեք,— ասաց Տեր Գևորգը,— ես ձեզ մի բան ցույց կտամ, և դուք կուրախանաք։

Կանայք ու ծերունիները դուրս էին գալիս իրենց տներից քահանային ողջունելու համար, իսկ երեխաները հետևում էին նրանց օրինակին։ Զրկանքներն իրենց հետքն էին թողել նրանց դեմքերին, սակայն նրանց աչքերում փայլ կար, որը Վարդանին կյանքի փայլ թվաց։ Դա դեռևս ուրախության փայլ չէր, սակայն ապրելու ցանկության փայլ էր։ «Աստված օրհնի» ավանդական բանաձևից հետո քահանան յուրաքանչյուրին մի բան էր ասում, իրենց անուններով դիմելով։ Վարդանը բավարարվում էր գլխով անելով, քանի որ հուզված էր, հայտնվելով իր ժողովրդի մեջ այդքան երկար ընդմիջումից հետո։

Տեր Գևորգը կանգ առավ մի տնակի առջև, որի կավաշեն պատերը նոր էին կանգնեցվել, և մատնացույց արեց նոր տնկված ծառը։

— Սալորի ծառ է, որը պտուղ կտա տարիներ անց,— հիացավ նա։– Ես ձեզ ասացի, որ մենք զբաղված էինք մահացածներին հուղարկավորելով... Իսկ երեկ երեխա է ծնվել։

Նա թակեց դռան շրջանակը, քանի որ դուռը դեռևս տեղադրված չէր։ Կանացի մի ձայն նրանց ներս հրավիրեց։ Քահանան մի կողմ տարավ գորգը, որը որպես դուռ էր ծառայում, և Վարդանին կանչեց իր հետևից։ Հողե հատակով միակ սենյակում միայն մի ներքնակ կար։ Ներքնակին մի կին էր նստած և գրկին պահել էր խանձարուրով մի երեխա։ Նա հոգնած տեսք ուներ, սակայն ժպտաց քահանային։

— Ինչպե՞ս ես այսօր։

— Շատ լավ, տեր հայր։

— Իսկ փոքրի՞կը։

— Ոնց որ սովից փախած լինի։

Տեր Գևորգը ներկայացրեց Վարդանին, որը շնորհավորեց ծննդկանին, հետո բացատրեց.

— Տեղահանության ժամանակ Անիկի վեց երեխաները մահացել են իր աչքի առաջ։ Քառասունմեկ տարեկան հասակում, նա իր ամուսնու՝ Նազարի հետ, որը ծածկած շուկայում մի սիրիացու մոտ ոսկերչություն է անում, նոր ընտանիք է ստեղծում։

Կինն անթարթ լսում էր քահանային, իսկ Վարդանին նայում էր միաժամանակ հանդուգն և հպարտ հայացքով։ Երեխան արթնացավ և լաց եղավ։

— Կերակրելու ժամն է,— ասաց մայրը, նրա խանձարուրը բացելով։

Դրսում Վարդանն ասաց քահանային.

— Սա իսկապես հուսադրող տեսարան է։ Սակայն, Տեր Գևորգ, ինձ պետք չէ ոչինչ ապացուցել, ես հավատում եմ մեր ժողովրդի ավերակների վրա նոր կյանք սկսելու ունակությանը։ Պատմությունը շատ պերճախոս օրինակներ է մեզ ներկայացնում։

— Ես ոչինչ չեմ ուզում ապացուցել,— պատասխանեց ծեր քահանան ցածրաձայն։– Հակառակը, ես ձեզնից եմ սպասում... Սակայն ոչ այստեղ։ Գնանք այստեղից։

Նա բռնեց Վարդանի թևից և նրան տարավ տան հետևը։ Նրանք անցան փոքր բակերով և պարապուտներով, որոնք բաժանում էին խրճիթները միմյանցից, և հասան Թաղամասի ծայրին։ Մահմեդական գերեզմանոցից ոչ հեռու գտնվող խանի ավերակների մոտ Տեր Գևորգը նստեց պատից ընկած քարաբեկորի վրա։ Վարդանը կանգնած մնաց նրա դիմաց և սպասեց, որ քահանան շունչ քաշի։

— Մեր հայրենակիցներից շատերը վրեժխնդրության մասին են խոսում, որդիս, և այդ տրամադրությունը զգացվում է ձեր որոշ հոդվածներում։

Քահանայի ձայնում ափսոսանքի, գրեթե հանդիմանանքի երանգ կար։ Հարգելով իր զրուցակցի կարգը և տարիքը՝ Վարդանը մեղմորեն պատասխանեց.

— Կուզենայի նկատել, որ կառավարությունը ղեկավարող հանցագործներին բացահայտելը և հայ ժողովրդի համար արդարություն պահանջելը չի նշանակում վրեժխնդրության կոչեր անել, տեր հայր։

— Դուք դրան էլ կհասնեք, որդիս,— ասաց Տեր Գևորգը, մի քիչ խրատական տոնով։— Եվ դա սխալ կլինի։ Ես ժամանակ չունեմ մտածելու վրեժխնդրության մասին, որը, պետք է նշեմ, հակառակ է մեր

հավատքին։ Կան այս մարդիկ, որոնց դուք տեսաք, որոնց պետք է խնամել և կերակրել, որոնց պետք է վերադարձնել ապրելու ցանկությունը։ Բոլոր սրանց և նաև նրանց, ովքեր քարշ են գափս ճամբարներում։ Ես ձեզ ասացի, որ մենք արդեն պետք է վաղվա օրվա մասին մտածենք։

Վարդանը գլխով արեց.

— Համաձայն եմ ձեզ հետ, տեր հայր։ Վա՛ղը, Հայաստա՛ն։ Շատերն են դրա մասին մտածում և պատրաստվում են դրա իրականացմանը։

— Հենց դա էլ ինձ անհանգստացնում է,— մրթմրթաց Տեր Գևորգը։

Նա մեղք գործած երեխայի տեսք ուներ։

— Դուք պատգամավոր եք եղել, որդիս, դուք հայտնի գրող եք։ Ես ձեզ հավատում եմ, հավատում եմ ձեր դատելու ունակությանը։ Կհամաձայնե՞ք լսել կասկածներ ունեցող ծերունու խոստովանանքը և նրան խիստ չդատել։

Վարդանը զարմացավ և պպզեց ծերունու առջև, որպեսզի դեմ դիմաց լիներ իր զրուցակցի հետ։

— Իհարկե, Տեր Գևորգ։

— Ասացեք ինձ, ի՞նչ Հայաստանի մասին եք խոսում։

— Եթե դուք կարդացել եք իմ հոդվածները, արդեն իսկ պետք է իմանայիք։

— Ես դրանք բազմաթիվ անգամներ եմ կարդացել։ Բայց ինձ նորից ասեք։

— Կիլիկիան, որը ժամանակին Փոքր Հայաստան էր կոչվում։ Օսմանյան վեց հայկական վիլայեթները, կամ Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանը, որը Ռուսաստանի կազմի մեջ է։ Սրանք են այն տարածքները, որոնց մասին մեր ներկայացուցիչները բանակցում են դաշնակիցների հետ։

Նա դադար առավ քահանային նայելու համար, որը խաղում էր մի քարի հետ, և հարցրեց.

— Ձեր կասկածները դրա՞ն են վերաբերում, տեր հայր։

Տեր Գևորգը հառաչեց և գլխով արեց.

— Եկեք մի կողմ թողնենք Արևելյան Հայաստանը, ուր հայերը շատ են և անվտանգության մեջ։ Սակայն Անատոլիայում և Կիլիկիայում կա՞ արդյոք այնքան հայ, որ մեծամասնություն կազմի։

— Դա կարող է պրոբլեմ դառնալ,— համաձայնեց Վարդանը։– Ահա թե ինչու մենք պետք է դաշնակիցներից երաշխիքներ պահանջենք և նախապատրաստենք մեր հայրենակիցների վերադարձը։ Այս նորածնին պետք է հայրենիք պարգևել։

— Կվերադառնա՞ն արդյոք մեր հայրենակիցները։

— Իսկ ինչո՞ւ նրանք պետք է հրաժարվեն վերադառնալ իրենց վաղնջական հայրենիքը։

— Որովհետև նրանք կհիշեն 1895 և 1915 թվերի ջարդերը, որովհետև նրանք չեն ցանկանա, որ իրենք կամ իրենց երեխաները նորից վերապրեն այդ ամենը։

— Նրանք վախենալու բան չեն ունենա, եթե մենք եվրոպական տերությունների կողմից հովանավորվող պետություն հիմնենք։

Քահանան հպվեց Վարդանի թևին և նրան ուշադիր նայեց։

— Իսկ դա հնարավո՞ր է, որդիս։

Նա ուզում էր, որ իրեն համոզեն։ Սակայն ազնվությունից դրդված Վարդանը չկարողացավ միանշանակ պատասխան տալ։

— Միգուցե և հնարավոր է։ Իսկ ինչ վերաբերում է դրա իրականացմանը, ես չեմ կարող երաշխավորել։

— Հետևաբար, դուք կասկածներ ունեք, դուք նույնպես,— բացականչեց քահանան։

— Ես չեմ սիրում այդ բառը։ Քաղաքականության մեջ երբեք չես կարող վստահ լինել,— ասաց Վարդանը։– Սակայն անվստահությունը չպետք է մեզ խանգարի ձգտել դրան։

Տեր Գևորգը հանգստանալով, որ ինքը միակը չէ, որ կասկածում է, շարունակեց շարադրել իր տեսակետը.

— Գիտեք, որդիս, բազմաթիվ հայեր համայնքներ են կազմում Պարսկաստանում, Կիպրոսում, Եգիպտոսում և Եվրոպայում։ Եվ ես չեմ պատկերացնում, որ պետք է համոզել, որ նրանք վերադառնան կայսրության տարածքը, ուր նրանց ապագան երաշխավորված չի լինելու։

Վարդանը ոտքի կանգնեց, և Տեր Գևորգը այդ շարժումն ընկալեց որպես հեռացում, որպես հանդիմանանք։

— Ինձ ճիշտ հասկացեք, որդիս, սրանք պարտվողական խոսքեր չեն։ Ես մտածում եմ, որ գուցե զգուշավորությունը պետք է դրդի մեր եղբայրներին մնալու այնտեղ, ուր իրենք կան։

— Դեռևս շուտ է դրա մասին խոսելը։ Այդ հարցը կծագի, եթե մեզ չհաջողվի ստեղծել անկախ Հայաստան։ Մենք դեռ կտեսնենք։

Տեր Գևորգը տատանվեց, հետո անվստահ ձայնով ասաց.

— Ես կասկածներ ունեմ, դուք վստահ չեք... Մնացածները նույնպես նույն հարցերը կտան։ Ինձ թվում է, որ դուք պետք է անդրադառնաք այդ խնդրին ձեր հոդվածներում, որպեսզի մարդիկ ժամանակ ունենան իրենց ապագայի մասին մտածելու։

— Երբեք,— բացականչեց Վարդանը հակաճառություն չհանդուրժող տոնով։— Դա բարոյալքող ազդեցություն կթողնի այն հայերի վրա, որոնք կողմ են անկախ Հայաստան ստեղծելու գաղափարին, շփոթություն կառաջացնի մեր դաշնակիցների ճամբարում և փաստարկներ կտրամադրի մեր թշնամիներին։

Քահանան շփոթվել էր։ Վարդանն արևին նայեց մոտավոր ժամը որոշելու համար։

— Կեսօրին ես պետք է միանամ Փաշազադե Շահիր Միթադի նվագախմբին։

— Շատ ճարպիկ քայլ էր դերվիշների նվագախմբին միանալը,— 22նչաց Տեր Գևորգը, որն ուզում էր շահել իր զրուցակցի համակրանքը։

Նա կարող էր ինքնուրույն ոտքի կանգնել, սակայն ձեռքը մեկնեց, որպեսզի Վարդանը օգներ։ Այսպիսով նա ուզում էր վերացնել այն վիհը, որ գոյացել էր նրանց միջև։ Կանգնելով՝ քահանան բաց թողեց Վարդանի ձեռքը։

— Դուք դեռ ավելի քան մեկ ժամ ունեք, որդիս։ Թույլ տվեք ձեզ ուղեկցել։ Ճանապարհին կարող ենք այցելել որբանոց։ Կուզեի, որ դուք տեսնեիք երեխաներին։

Վարդանը հասկանում էր, որ Տեր Գևորգը ցանկանում էր, որ իրենք բաժանվեին ավելի լավատեսական տրամադրությամբ, և համաձայնեց։

Նրանք լուռ անցան ճանապարհը, որը տանում էր դեպի շուկա և շրջանցում էր այն բլուրը, որի վրա կանգնած էր միջնաբերդը։ Տեր Գևորգը ձգեց մանկատան վերածված գերմանական դպրոցի դարպասի զանգը։ Մոխրագույն քարից կառուցված շենքը ոչ մի աչքի ընկնող հատկանիշ չուներ, բացի նետաձև լուսամուտներից, և երկաթակուռ ցանկապատի հետևում մռայլ տեսք ուներ։ Մի զույգ, որը զբոսնում էր այգում, ուր դեկորատիվ բույսերին փոխարինում էին բանջարանոցի մարգերը, նրանց ընդառաջ եկավ։ Էդվարդ Գրետտերը՝ մոտ քառասուն տարեկան մի մարդ, որը մաթեմատիկա, փայտագործություն և մեխանիկա էր դասավանդում, սպայի էր նմանվում իր կարճ կտրած շիկահեր մազերով և մարզիկի մարմնով։ Սևահեր, գեղեցիկ և մոտ երեսուն տարեկան Բեատրիս Ռոհները միսիոներուհի էր և ղեկավարում էր հաստատությունը։ Քահանան ներկայացրեց Վարդանին որպես բարեկամ, առանց մանրամասնելու նրա ով լինելը։

— Կուզեի՞ք տեսնել ննջարանները և խոհանոցը,— առաջարկեց երիտասարդ կինը կատարյալ թուրքերենով։— Կնախաճաշեի՞ք մեզ հետ։

— Դժբախտաբար մենք քիչ ժամանակ ունենք,— պատասխանեց Տեր Գևորգը։— Կարո՞ղ ենք դասասենյակները տեսնել։

— Գիտեք, երեխաները պարապում են։

— Մենք միայն մեկ հայացք կգցենք։

Նա նրանց ներս ուղեկցեց և բացեց մաշված մանրահատակով միջանցքի ծայրում գտնվող դահլիճի դուռը: Մոտ երեսուն երեխա, գետնին նստած, տեսրերը ծնկներին հետևում էին կավճին, որով ուսուցիչը թվեր էր գրում գրատախտակին:

— Նայեք, ինչ ագահությամբ են նրանք կլանում գիտելիքները,— շշնջաց Տեր Գևորգը Վարդանի ականջին:— Նայեք, թե որքան խելացի են նրանց աչքերը, սակայն այդ աչքերը սարսափելի բաներ են տեսել:

Երբ Վարդանը նկատեց, որ ինքը գննում էր յուրաքանչյուր երեխայի դեմքը, հուսալով հայտնաբերել Թովմասին, գլուխը դարձրեց: Նա այլևս չէր ուզում խոսել ոչ երեխաների, ոչ էլ միսիոներների հետ, ինչպես մտադրվել էր անել սկզբում:

Նրանք փողոց դուրս եկան, և քահանան մի քիչ ուղեկցեց Վարդանին: Տեր Գևորգը ոգևորված էր.

— Տեսա՞ք այդ փոքրիկներին: Սա ապագայի սերմնացանն է և այն չի կարելի վատնել:

Վարդանը, իր որդու մասին մտածելով, գլխով արեց: Քահանան ոգեշնչված շարունակեց.

— Այն Հայաստանը, որի մասին երազում են մեր հայրենակիցներից շատերը, Տիգրան Մեծի Հայաստանն է, հզոր մի պետություն, որը սփռվում էր Սև ծովից մինչև Միջերկրականը, պետություն, որ զենքի ուժով գոյատևեց այնքան ժամանակ, մինչև ավելի հզոր հարևանը այն նվաճեց: Կարծում եմ, որ այդ Հայաստանը երբեք չի վերածնվի:

— Ապագան ցույց կտա,— պատասխանեց Վարդանը սրտնեղած:

— Հայաստանը, Մեծ Հայքը, հավերժ Հայաստանը կապրի այսուհետ միայն այս երեխաներից յուրաքանչյուրի մեջ: Անցած ամիս ես տեսիլք եմ ունեցել, նոր Մովսեսն առաջնորդում էր մեր ժողովրդին դեպի Ավետյաց երկիր: Սակայն այդ երկիրը նման չէր Անատոլիային: Գուցե մեր ճակատագիրը աշխարհով մեկ ցրվե՞լն է:

— Ես չեմ կարող դա ընդունել: Հրաժարվե՞լ առանց որևէ բան փորձելու: Ես հարգում եմ ձեր տեսակետը, տեր հայր, սակայն չեմ կիսում: Եվ խոսք չի կարող լինել, որ ես այդ տեսակետը տարածեմ:

Ծանր լռություն հետևեց: Ծերունին էլ ավելի ուժգին էր կառչում Վարդանի թևին և Վարդանը զգաց, որ նա շվտթված էր, և դա նրան ցավ պատճառեց:

— Կարևորը, տեր հայր, այն է, ինչ դուք անում եք մեր ժողովրդի համար: Ձեր անխոնջ նվիրումը անգնահատելի է և անփոխարինելի: Մնացածը կտեսնենք, երբ կգա ժամանակը:

— Դուք իրավացի եք, որդիս,— պատասխանեց քահանան երախտագիտությամբ:– Թող կորչեն գաղափարները: Հարկավոր է թևերը քշտել և անել անհետաձգելի գործերը:

Նա Վարդանի խոսքերն ընկալում էր որպես անհերքելի ճշմարտություն։ Մի քանի քայլ անցնելով, նա ուրախ ասաց.

— Մենք պետք է հույսներս դնենք Աստծու ողորմածության վրա, այո։ Մենք խաշնարած շներ ենք, որդիս։ Դուք հատկապես։ Դուք հավաքում եք մոլորված գառներին, իսկ մենք օտար միսիոներների օգնությամբ փորձում ենք ի մի բերել ցրված հոտը։ Այս մանկատունը, ինչպես և շրջանի մեկ տասնյակ այլ մանկատներ, փարախներ են։ Իսկ պատերազմից հետո մենք այս հոտը կտանենք ապահով մի վայր։

— Որտեղ էլ լինի այդ ապահով վայրը,— ասաց Վարդանը խորամանկ տեսքով։

— Որտեղ էլ լինի,— համաձայնեց քահանան։- Շնորհակալ եմ, որ դուք չնեղացաք ինձնից իմ... այսպես ասենք, ինքնատիպ գաղափարների համար։ Վերագրեք դա իմ պատկառելի տարիքին։

— Ոչ, Տեր Գևորգ, ես այդ գաղափարների մեջ տեսնում եմ անցյալի կրկնությունից խուսափելու անկեղծ ցանկություն։ Մենք բոլորս, քանի ողջ ենք, երազում ենք մեկ բանի մասին։ Հայաստանի մանուկների ազատ ապագայի մասին։

Մուեզզինը ազդարարեց կեսօրի աղոթքը։

— Թող Աստված ձեզ օրհնի,— շշնջաց Տեր Գևորգը։

— Աստված ձեզ պահապան, տեր հայր։

Վարդանը կրծքին սեղմեց ծերունուն և արագ քայլերով հեռացավ։

* * *

Կուրտի հաչոցն անհանգստացրեց Արուսյակին։ Նա շալն ուսերին գցեց, քանի որ 1916 թ. այդ վերջին օրը ցրտաշունչ էր։ Դրսում չորացած խոտն ու գետինը եղյամով էին պատված։ Ինչպես և շունը, երիտասարդ կինը ճանաչեց ճանապարհին հայտնված ուրվագիծը, և նրա սիրտը թրթռաց կրծքում։

— Վարդան,— բղավեց նա և վազեց նրան ընդառաջ։

Սև շունը նրանից առաջ էր ընկել։ Վարդա՜ն։ Գրեթե մեկ տարի էր, ինչ Արուսյակը կարծում էր, որ ինքը կորցրել էր Վարդանին, և ահա, բոլորովին անսպասելի, նա վերադառնում էր։ Երա՜զ։ Դա երազ էր։ Նա մտաբերեց մի քանի ամիս առաջ Քերիմի ստացած նամակում իրեն վերաբերող բառերը. «Ողջունիր իմ բարեկամին, ասա, որ ես ջերմությամբ եմ մտածում նրա մասին և որ կրկին շնորհակալություն եմ հայտնում նրան իր հյուրասիրության համար»։ Քերիմի կարծիքով նրա զսպությունը բացատրվում էր գրաքննության վախով և որ անհրաժեշտ էր կարդալ տողերի արանքում։ Արուսյակը շատ իմաստներ էր փնտրել «ես ջերմորեն եմ մտածում նրա մասին» արտահայտության մեջ։

Այս վերադարձը վկայում էր նրա սիրո մասին: Այդ գաղափարը ծագեց նրա գլխում և նրան շփոթեցրեց: Ինչպես էին նրանք վերականգնելու նախորդ ձմեռվա մտերմությունը: Այնքան ժամանակ էր անցել... Շփոթված Արուսյակը կանգ առավ Վարդանից մի տասը քայլի վրա: Վարդանը, ուսապարկը գետնին դնելով, շոյում էր Կուրտի գլուխը, որը թաթերը նրա ուսերին էր դրել: Արուսյակին նա էլ ավելի գեղեցիկ թվաց, ավելի խոշոր, ավելի ուժեղ: Նրա հոգում տենչն ու հուզմունքն իրար էին խառնվել:

Վարդանը մեքենայաբար շարունակում էր շոյել շանը, հետաձգելով խոսելու պահը, որպեսզի հանգիստ նայեր այն կնոջը, որի մոտ էր վերադարձել: Վերջապես մի կողմ հրեց շանը և ձեռքերը տարածեց: Արուսյակը փարվեց նրա կրծքին:

— Արուսյա՛կ, Արուսյա՛կ...— շշնջաց նա դողդոջուն ձայնով, նրան իր կրծքին սեղմելով:

Նա բարձրացրեց կնոջ դեմքը և համբուրեց: Արուսյակը դողում էր:

— Կմրսես,— ասաց նա՝ վերցնելով գետնին դրված իր իրերը:— Շուտ տուն գնանք:

— Տուր ուդը:

Պաստառի մեջ փաթաթված ուդը նա բռնել էր այնպես, ինչպես գրկում են երեխային: Խոսքերը խռնվել էին նրա կոկորդում, սակայն դրանցից և ոչ մեկը չէր կարող արտահայտել նրա երջանկությունը, և նա ոչինչ չասաց:

— Ես չկարողացա քեզ նախազգուշացնել:

— Դու այստեղ ես, դա է կարևորը:

Տանը մոտենալով՝ Վարդանը հայացքը դարձրեց Արյուսակից և նայեց դաշտերին, խոտի դեզին, պտղատու ծառերին, ջրհորին, գոմին, կարծես ուզում էր հավաստիանալ, որ ոչինչ չէր փոխվել: Արուսյակն ուրախացավ, կարծելով, որ դա սեփականատիրոջ հայացք էր:

— Քերիմի մոտ մտե՞լ ես:

— Ոչ, ես ուղիղ այստեղ եկա:

Այդ պատասխանը ևս մեկ առիթ տվեց կնոջը ուրախանալու, առավել ևս, որ Վարդանն ավելացրեց՝ բացելով տան դուռը.

— Այնպիսի տպավորություն ունեմ, կարծես տուն վերադարձած լինեմ:

Նա ուսապարկը հատակին դրեց և վերարկուն կախեց պատի կախիչներից մեկի վրա:

— Նստիր,— ասաց Արուսյակը, ցույց տալով մուտքակալը:— Ես քեզ համար թեյ կպատրաստեմ:

Նա կրակն էր թեժացնում՝ առանց աչքը Վարդանից կտրելու։ Վարդանը նույնպես նրան էր նայում։ Նրանք այնքան բան ունեին իրար ասելու, և միևնույն ժամանակ բառերն ավելորդ էին. նրանք հայացքով էին միմյանց ընտելանում։ Երբ Արուսյակը գնաց կաթսայի մեջ ջուր լցնելու, Վարդանը մոտեցավ նրան և օդ բարձրացրեց։ Արուսյակը ծիծաղեց երջանկությունից։ Վարդանը նրան տարավ մինչև մահճակալը, պառկեցրեց և համբույրներով ծածկելով նրա դեմքը, սկսեց տենդագին նրան մերկացնել։ Արուսյակը դադարեց ծիծաղել, նրա շնչառությունն ընդհատուն դարձավ և նա տնքաց։ Նա ազատվեց իր հագուստներից և նրանք միացան։

Նրանք պառկած մնացին։ Նրանք այնքան մոտ էին, որ տեսնում էին միայն միմյանց աչքերը։ Կամաց-կամաց մութն ընկավ, սակայն նրանք չէին խախտել իրենց շրջապատող լռությունը։ Նրանք դարձյալ անձնատուր եղան իրենց սիրուն։ Հանպատրաստից սիրո խոստովանանքներ հնչեցին։ Նրանք քնեցին առանց ճաշելու և այգաբացը դիմավորեցին միմյանց գրկում։

Գոմից անասունի ձայներ էին հասնում։ Նրանք ստիպված եղան դուրս գալ վերմակի տակից և հայտնվել սենյակի սառը և խոնավ օդում։ Վարդանը բացեց ուսապարկը և միջից մի իր հանելով թաքցրեց մեջքի հետևում։

— Շնորհավոր նոր տարի,— ասաց նա և ափը բացեց Արուսյակի առջև։

Դա եղնջաքարով զարդարված արծաթյա մանյակ էր։

— Ինձ համա՞ր է,— ասաց նա՝ աչքերին չհավատալով և հիացած։— Ի՞նչ կարիք կար։

Վարդանը շղթան անցկացրեց նրա պարանոցով, և Արուսյակը ցնցվեց, երբ սառը մետաղը հպվեց նրա մերկ կրծքին։ Նա բացականչեց.

— Շատ գեղեցիկ է։ Սակայն... ես ոչինչ չունեմ քեզ նվիրելու։

— Դու ինձ արդեն ամեն ինչ տվել ես,— պատասխանեց Վարդանը՝ շոյելով նրա ուսերն ու ստինքները։

Արուսյակը համբուրեց նրան և փարված մնաց նրա կրծքին.

— Ես այն երբեք չեմ հանի վզիցս։

Այդ զարդը նրա համար խորհրդանշական էր, ինչպես ամուսնական մատանին։ Այդ զարդով Վարդանն ընդգծում էր, որ Արուսյակն իրեն էր պատկանում։ Արուսյակը լուրջ ձայնով ասաց.

— Շնորհավոր նոր տարի, սիրելիս։ Ես ցանկություն եմ պահել, որ...

Նա չավարտեց նախադասությունը և ժպտաց իր զարդը մոտիկից ուսումնասիրելով։ Վարդանը հեռացավ և սկսեց հագնվել։

— Ես գնամ անասունը կերակրեմ, քանի դու նախաճաշը

կպատրաստես։

Արուսյակը խաղաղվեց այն մտքից, որ Վարդանը վերադառնում էր այն կենսակերպին, որն իրենք սահմանել էին նախորդ տարվա ընթացքում, կարծես նրա բացակայությունը կարճատև ընդմիջում էր։ Հենց այդ նույն տպավորությունն ունեցավ Վարդանը, մտնելով տաք գոմն իր հարազատ հոտով։ Այստեղ վերջին ամիսների ընթացքում իր ապրած կյանքը մի քիչ անիրական էր թվում, իրական կյանքից դուրս։

Եղանով աշխատելը, ջրհորից ջուր հանելը, գուռի մեջ լցնելը, թրիքը մաքրելը, այս բոլոր գործողություններն այնքան իրական էին, իր վերջին ամիսների կյանքի համեմատությամբ։ Նա մտածեց Հալեպում խրճիթի առջև տնկված սալորի ծառի մասին։ «Վերսկսենք ապրել», ասաց Տեր Գևորգը։ Ուդի Յաշար... Խորասուզվել գյուղացու կյանքի անհայտության մեջ, սիրել մի կնոջ, որը քեզ սիրում է, նայել, թե ինչպես են անցնում տարվա եղանակները և մտահոգվել միայն երաշտով ու վաղաժամ ցրտերով։ Բայց կկարողանա՞ արդյոք մոռանալ, որ ինքը եղել է Վարդան Պալյանը՝ գրող և դեղագործ, մոռանալ, որ ինքն ունեցել է կին ու երեխա, այլևս չմտահոգվել հայ մնալու խնդրով։ Բարկանալով, որ հարցն արդեն իսկ պատասխան էր պարունակում, նա դուրս եկավ գոմից։

— Վարդա՜ն։

Քերիմի ճիչը վկայում էր նրա զարմանքի և ուրախության մասին։ Իր բազմաթիվ հագուստների պատճառով նա դժվարությամբ վազեց Վարդանին ընդառաջ։ Նրա սովորաբար տխուր աչքերը ուրախ էին նայում մորթե գլխարկի տակից։ Նրանք ամուր գրկախառնվեցին, և բարեկամական զգացմունքներն արտահայտելուց հետո, ուսուցիչը զարմացավ, որ իրեն չէին նախազգուշացրել։

— Ես երեկ երեկոյան շատ ուշ եմ եկել,— ներողություն խնդրելով, ասաց Վարդանը, որը Քերիմի ձայնում գրեթե խանդ զգաց։

— Դու մեզ հետ պետք է նախաճաշես,— ավելացրեց նա։— Նոր տարի է։ Իսկ դասերդ ինչպե՞ս են։

Տրտմությունը չթաքցնելով՝ ուսուցիչը պատասխանեց.

— Օ՜ֆ... ծանր ժամանակ է։ Իմ աշակերտներից շատերը կոշիկ չունեն և տնից դուրս չեն գալիս այս եղանակին։ Ինչպե՞ս կարելի է սովորել դատարկ փորով։ Այստեղ սով էր, ինչպես և այլուր։ Արուսյակը երևի քեզ պատմել է։

Վարդանն անորոշ շարժում արեց, ոչ այո, ոչ էլ ոչ։

Նրանք երեքով նստեցին սեղանի մոտ, սիսեռից և մսից պատրաստված կերակուրի առջև, և Քերիմը հարցրեց Վարդանի ճանապարհորդության մասին։ Գուցե իր գրքային գիտելիքները իրականության հետ համեմատելու համար, նա խնդրեց Վարդանին նկարագրել որոշ քաղաքներ և այցելած շրջանների աշխարհագրությունը։ Վարդանը հաճույքով կատարեց նրա խնդրանքը,

բաց թողնելով տեղահանություններին վերաբերող մանրամասները։ Արուսյակը վախենում էր, որ Քերիմը հարցեր կտար նրա կնոջ և որդու որոնումների մասին։ Նա գիտեր, Վարդանի հենց Ուրգուպ վերադառնալու փաստից, որ որոնումներն իզուր էին անցել, ինչը կարելի էր կանխատեսել, և գերադասում էր դրա մասին չխոսել։ Ինքը Արուսյակը չէր ուզում մտածել այդ անհաջողության մասին, որը հնարավոր էր դարձրել իր երջանկությունը, որը երանգավորված էր Վարդանի նկատմամբ իր կարեկցանքով և մեղքի որոշակի զգացմամբ, որ իր երջանկությունը հիմնվում էր մեկ այլ կնոջ և երեխայի դժբախտության վրա, սակայն դրան էր միախառնվում անհաղթահարելի ուրախությունը, որ իր տղամարդն իր մոտ էր վերադարձել։ Բնականաբար Վարդանն էլ չէր խոսում դրա մասին, քանի որ նրա հոգում պայքարում էին երկու անհամատեղելի զգացմունքներ։

Իր նրբանկատության շնորհիվ Քերիմը զգաց, որ կային բաներ, որոնց մասին իր բարեկամները գերադասում էին լռել։ Ճաշի ավարտին, ծխախոտ փաթաթելով, նա հարցրեց.

— Եթե անհամեստության չէ, ինչի մասին էր քո քեռորդու նամակը։

Վարդանը բոլորովին մոռացել էր, որ Տիրանի նամակն իրեն էր սպասում Ուրգուպում։ Ներքուստ նա այդ մոռացկոտությունը վերագրեց ճանապարհորդության հոգնությանը և վերադարձի հուզումներին, ինչպես նաև այն փաստին, որ տիկին Մեթյուզի միջոցով ինքը գիտեր այդ նամակի հիմնական նորությունները։ Նա փորձեց թաքցնել այդ մոռացկոտությունը և, վերցնելով ծխախոտի քսակը և թուղթը, որ նրան էր մեկնել իր բարեկամը, խուսափողական պատասխան տվեց.

— Ըստ երևույթին նա վախեցել է, որ նամակը կընկնի իշխանությունների ձեռքը և առանձնապես կարևոր բան չի գրել։

Քերիմը չպնդեց։ Նա ուզում էր խոսել երկրի քաղաքական իրավիճակից, սակայն մտածեց, որ կարելի էր մի քանի օր սպասել, քանի որ Վարդանն ու Արուսյակը շտապում էին մենակ մնալ։ Հրաժեշտ տալուց առաջ նա ասաց.

— Մենք երջանիկ ենք, որ դու այստեղ ես։ Արուսյակը երևի քեզ ասել է, որ այս ձմեռ աշխատանք շատ կա։ Շատ գյուղացիներ սովի են մատնված, և նրանք, ովքեր հայ երեխաներ են ծառայության վերցրել, ազատվում են նրանցից։ Այդ դժբախտները մուրում են գյուղերում, թափառում են ճանապարհներին և քնում են, ուր պատահի։

Այս անգամ Արուսյակի հերթն էր իրեն մեղավոր զգալու։ Այդուհանդերձ, նա շփոթմունք չցուցաբերեց և վստահ տեսքով ասաց.

— Ես դեռ չեմ ասել, քանի որ նա հոգնած էր և պետք է հանգստանար։

Ուսուցիչը գլխով արեց, մի քանի խոսք ասաց հաճախակի դարձած բռնագրավումների մասին, որոնք իրականացնում էին պաշտոնյաները բանակը պարենով ապահովելու համար, հետո վեր կացավ։ Արուսյակը նկատեց, որ Քերիմը կգերադասեր, որ իրեն պահեին, և նա ուսուցչին

ճաշի հրավիրեց: Նա առանց վարանելու ընդունեց հրավերը:

Երբ մենակ մնացին, Արուսյակը վարդանին տվեց նամակը, որը շուրջ չորս ամիս նրան էր սպասում: Բացված ծրարը հասցեագրված էր Քերիմին և հետադարձ հասցե չուներ: Վարդանը լուսամատին մոտեցավ՝ Տիրանի անկանոն ձեռագրով գրված երկու թերթերը կարդալու համար:

«Սիրելի եղբայր, մենք բոլորս ուրախությամբ իմացանք, որ դու ողջ ես, սակայն քո դժբախտությունների պատմությունը մեզ խորապես ցնցեց: Ինչպես և դու, մենք ոչ մի լուր չունենք Մարոյից ու Թովմասից: Քեզ և մեր հայրենակիցների համեմատ մենք լավ ենք, և ես չէի համարձակվի քեզ պատմել մեր դժվարությունների մասին, որոնք քեզ չնչին կթվան: Պոլսի համայնքը շատ ազդված է ողբերգությունից, հայրս կաթված ստացավ, որից հրաշքով ապաքինվեց: Մայրիկն ու Լուսիկը առողջ են: Եղբայրդ իր ընտանիքի հետ ապաստանել է Երուսաղեմում: Պարգևը Նյու Յորքում է, ուր նա միջոցներ է հավաքում «տեղահանությունների» զոհերի համար: Ինչ վերաբերում է ինձ, ապա կարեցածս եմ անում, սակայն ստիպված եմ թաքնվել ոստիկանությունից (քեզ ծանոթ վիճակ է) և դա սահմանափակում է գործելու իմ հնարավորությունները»:

Մոտ կես էջի վրա Տիրանը գրում էր Հայաստանի անկախության անհրաժեշտության մասին, պատասխանելով այն առարկություններին, որոնք ինքն էլ առաջ էր քաշում: Նա ընդհանուր առմամբ էր խոսում, առանց որևէ անուն կամ մանրամասն տալու, որը կկարողանար օգտագործել կառավարությունը, սակայն նամակում այնպիսի ակնարկներ կային, որոնք հասկանալի էին Վարդանին: Նա այնքան լավ էր ճանաչում Տիրանին, որ կարող էր լրացնել նրա բացթողումները, և զգում էր, չնայած նախադասությունների զսպոլթյանը, նրա վրդովմունքը, կիրքն ու ոգեշնչումը: Նամակն ավարտվում էր մայրաքաղաքում իրենց միանալու հրավերով: Վարդանը ճմրթեց թերթերը՝ օջախը գցելու մտադրությամբ: Նրան հեղեղեցին Կոստանդնուպոլսի մասին հիշողությունները, քեռի Մեսրոպի բնակարանը, իր այցելած վայրերը, իր դեղատունը Բերա թաղամասում, ազգականների և ընկերների դեմքեր, և հատկապես Մարոն՝ իրենց ամուսնության սկզբում: Կոստանդնուպոլիս...

Լուսամուտներին քաշած յուղած թղթի պատռվածքից նա տեսավ Արուսյակին, որը սենյակից դուրս էր եկել ընթերցանության ընթացքում: Ցանկապատին հենված՝ նա տանն էր նայում, և նրա դեմքը կարծես լարված էր:

* * *

Հունվարի 3-ին ուժեղ ձյուն սկսվեց և տեղաց քառասունութ ժամ: Արուսյակը հաճախակի բացում էր դուռը և մտահոգ երկնքին էր նայում: Հետո մի քիչ դադար եղավ, սակայն այդ ժամանակ էլ քամի բարձրացավ և սկսեց քշել գետնին կիտված ձյունը: Ջնաբուքը փակում էր

տեսադաշտը, և Արուսյակը ավելի նյարդային էր դառնում։

— Փոթորի՞կ է,— հարցրեց Վարդանը։— Սակայն դու պետք է սովոր լինես դրան։

— Երեխաները...

— Քանի՞սն են։

— Ինը հոգի։ Նրանք Գորեմեի հին եկեղեցում են։ Մեթյուզ քահանան պետք է գար նրանց հետևից, և ես վախենում եմ, որ չկարողանա։

— Կարելի՞ է որևէ բան անել։

— Այս պահին՝ ոչինչ։ Երեխաները դեռ երկու օրվա ուտելիք ունեն։ Հարկավոր է տեղեկությունների սպասել քահանայից։

Քանի որ շրջանում որբանոց չկար, Արուսյակը հավաքում էր բոլոր լքված երեխաներին և ժամանակ առ ժամանակ Մեթյուզ քահանան, կամ նրա գործընկերներից որևէ մեկը գալիս էին նրանց հետևից և բաշխում էին տարբեր հաստատությունների միջև։ Արուսյակն ու Քերիմը հայտնաբերում էին իրենց փոքրիկներին գյուղերում և քաղաքներում, ուր նրանք մուրում էին, իսկ ոմանց էլ ուլարկում էին իրենց հույն բարեկամները, երբ հայտնաբերում էին այդ երեխաներին։ Պատահում էր նաև, որ զույգը մեկ պարկ ցորենով «գնում» էր երեխաներին գյուղացիներից, որոնք նրանց տանջում կամ անխղճորեն շահագործում էին։

Հաջորդ օրվա լուսաբացին Քերիմը քահանայից հեռագիր ստացավ, ուր նա հայտնում էր, որ ինքը ձյան պատճառով մնացել էր Ակսարայում և կառք ու ձիեր գտնելուն պես պետք է գնար Նեվշեհիր։ Այդտեղից ճանապարհը, անկասկած, անանցանելի կլիներ և հարկավոր էր այնտեղ հասցնել երեխաներին։

— Նեվշեհի՞ր,— բացականչեց Արուսյակը բարկացած։— Դա Գորեմեից տասը կիլոմետր հեռու է։ Այս պայմաններում... Նրանք ստիպված կլինեն ոտքով գնալ։

Քերիմն անհամբեր շարժում արեց.

— Մենք ընտրություն չունենք։

— Իսկ նրանք ի վիճակի՞ են— հարցրեց Վարդանը։

— Մեծ մասը հյուծված է, ոմանք՝ հիվանդ,— ասաց Արուսյակը մտահոգ տեսքով։

— Քանի՞ տարեկան են։

— Երեքից տասներկու տարեկան։

Արուսյակի ձայնում որոշակի լարում էր զգացվում։ Քերիմը լավատես ձևացավ.

— Զրկանքները ամրապնդել են նրանց ոգին։

— Անհրաժեշտության դեպքում մենք կգրկենք ամենափոքրերին ավելացրեց Վարդանը։— Բացի դրանից, մենք հետներս ավանակին կտանենք։

Նրանք վճռեցին, որ Նեվշեհիր հասնելով, նրանք պետք է երեխաների հետ մնային մինչև միսիոների ժամանումը։ Սպասումը կարող էր մի քանի օր տևել, իսկ Քերիմը չէր կարող այդքան ժամանակ բացակայել առանց Ուրգուպի բնակիչների հետաքրքրասիրությունը շարժելու։ Դա նրան տխրեցնում էր։ Արուսյակը նրան հավաստիացրեց, որ ինքն ու Վարդանը գլուխ կհանեին։

— Ես կգամ և կկերակրեմ անասունն ամեն առավոտ,-ասաց Քերիմը։

Երիտասարդ կինը տաք շորեր հանեց իր սնդուկից։

— Եթե շտապենք, կարող ենք Գորեմե հասնել կեսօրին, իսկ Նեվշեհիր՝ մինչև գիշեր։ Գնացեք ավանակին բարձեք, իսկ ես կմիանամ ձեզ գոմում։

Բրդյա թիկնոցն ու մորթե գլխարկը հագնելով, Վարդանը դուրս եկավ Քերիմի հետ։ Երեխաների նկարագրությունը հուզել էր նրան, իսկ անսպասելի արկածը՝ գրգռել։

— Ի՞նչ հեռավորության վրա է Գորեմեն։

— Երեք ժամվա ժանապարհ է,— պատասխանեց ուսուցիչը։– Միգուցե չորս՝ այս զզվելի եղանակին։

— Իսկ հետո մի տասը կիլոմետր երեխաների հե՞տ։

— Այո։

Նրանք արդեն բարձել էին ավանակին, երբ եկավ շալի մեջ փաթաթված Արուսյակը։ Նա շալվար էր հագել, որը երևում էր սև շրջազգեստի և վերարկուի տակից։ Նրանք երկու մեծ պայուսակների մեջ բրդյա հագուստ, ծածկոցներ և ուտելիք տեղավորեցին. բլղուր, ղաուրմա, այծի պանիր, սոխ, ընկույզ և ծիրանի չիր։ Արուսյակը լամպի կանթն անցկացրեց կապոցներն ու մի խուրձ խոտը պահող պարաններից մեկի միջով։ Ոտքը ձյան վրա դնելուն պես ավանակը կանգ առավ, և նրանք ստիպված եղան մահակ բանեցնել նրան տեղից շարժելու համար։

Երիտասարդ կինը շանը տանը փակեց, դուրս բերեց հրացանն ու փամփուշտները և տվեց Վարդանին։ Նրանք Քերիմից բաժանվեցին ճանապարհին։ Նա գնաց դեպի գյուղը, իսկ զույգը շարժվեց ձյունածածկ դաշտով, որը կորչում էր տեսադաշտից, երբ քամին քշում էր ձյունը։ Արուսյակը բռնել էր ավանակի երասանը, իսկ Վարդանը հրացանն ուսին հետևում էր նրանց։ Սառը քամին սուլում էր ծառերի ճյուղերի մեջ, հարվածում էր դեմքին, կտրում էր նրանց շնչառությունը, մտնում էր հագուստի տակ։ Չնայած վատ տեսանելիությանը, երիտասարդ կինը վստահ առաջ էր շարժվում անկանոն հողակտորների լաբիրինթոսում, որոնք միմյանցից բաժանվում էին քարակույտերով։ Սարերի գագաթներին ձյուն չկար, սակայն հեղեղատների խորքում հասա

շերտով ձյուն էր կիտված։ Նրանք դադար առան, քամուց պատսպարվելով մի ժայռի հետևում։ Ավանակի մռութն ու մորթը եղյամով էր պատվել, և Արուսյակը նրա գլուխը շոյեց։

— Քաջ կենդանի։ Այս երեկո կկարողանաս մի բոլ հանգստանալ։

Կենդանին, անտարբեր մնալով փաղաքշանքին, սկսեց ձյուն ուտել ծարավը հագեցնելու համար։

— Ջե՞ս մրսում,— հարցրեց Վարդանն իր ընկերուհուն, որը նրան էր սեղմվել։

Արուսյակը կկոցել էր աչքերը, քանի որ արցունքները սառել էին նրա թերթևանունքների վրա։ Վարդանը ձեռնոցները հանեց, ափերի մեջ առավ Արուսյակի դեմքը և զգուշորեն փչեց նրա դեմքին՝ կարմրած քիթն ու այտերը տաքացնելու համար։ Արուսյակը փորձեց ժպտալ, սակայն նրա հոնքերի միջև գոյացած կնճիռը չհարթվեց։

— Ես մտածում եմ երեխաների մասին։ Նրանք հագուստ գրեթե չունեն,— շշնջաց նա։

— Մենք բրդյա հագուստ ունենք, ծածկոցներ։ Մի բան կհնարենք։ Փոքրերն ավանակին կնստեն։ Ես կապոցները կվերցնեմ։ Ավելի մեծերը կօգնեն փոքրերին։

Վարդանի վստահ տոնից կինը հանգստացավ ու ժպտաց։

— Հետո, Արամը կա։

— Արա՞մը։

— Տասնչորս տարեկան տղա է, որին Քերիմը հանդիպել է անցած ամառ։ Նա հրաժարվեց որբանոց գնալ և այդ ժամանակից օգնում է մեզ։

— Համարյա թե տղամարդ է,— ասաց Վարդանը։— Ուրեմն մենք երեքով կլինենք։

Նրանք շարունակեցին ճանապարհը և քիչ անց մուտք գործեցին անսովոր մի երկիր։ Սպիտակ տուֆից ծխնելույզներ, բազալտե սև այուներ, անկանոն կոներ, տավուսկ քարերով պսակված կոթողային բևեռներ, անցումների և խանձահովիտների լաբիրինթոսներ՝ հանքաքարերի մի աշխարհ, որը գոյացել էր հրաբխային ապարների քայքայումից, անիրական մի պատկեր, ուր քամու բվոցը կարծես քարերից ելներ։ Կապադովկիա՛։ Առաջին քրիստոնյաները շարունակել էին բնական ուժերի գործը և ժայռերի մեջ եկեղեցիներ, վանքեր և ամբողջ գյուղեր էին փորել։

Նրանց դիմաց բացվեց Գորեմեի գոգը՝ մի միջանցք էր, ուր սուլելով խուժում էր քամին։ Ոսկեգույն ժայռի երկու ծայրերում բացվածքներ կային։ Ջնայած իրավիճակին, Վարդանը, տեսնելով այդ գրեթե առասպելական վայրերը, Անատոլիայի հնագույն քրիստոնեական հուշարձանները, չէր կարողանում զսպել իր բնական հետաքրքրասիրությունը։ Մարդիկ թաքնվում էին այստեղ արաբ

թալանչիներից խույս տալու համար, իսկ վերջիններիս գնալուց հետո դուրս էին գալիս այստեղից իրենց գյուղերը վերականգնելու և իրենց հողը նորից ծաղկեցնելու համար: Նույնիսկ այսօր էլ մարդկային ձեռքերով փորված այդ անձավները ապաստանում էին հալածվածներին:

— Այստեղ է,— ասաց Արուսյակը:

Ուղղահայաց լանջի վերևում նա երեք զուգահեռ բացվածքներ ցույց տվեց: Աջ բացվածքում մի ուրվագիծ երևաց:

— Քույրիկ,— կանչեց ուրախ մի ձայն:

— Արա՛մ:

Տղան դուրս թռավ, արագ իջավ լանջով և վազեց եկվորներին ընդառաջ: Նա Վարդանին շփոթել էր Քերիմի հետ, և նրա դեմքին անվստահություն հայտնվեց օտարի ներկայությունից: Նրա երկար մազերը խճճված էին, քիթը կեռ էր, իսկ շրթունքները՝ բարակ: Նա մերթ Արուսյակին էր նայում, մերթ Վարդանին, կարծես բացատրություն էր հայցում: Արուսյակը նրանց ներկայացրեց: Արամը մի քանի վայրկյան զննեց Վարդանին ձեռքը նրան մեկնելուց առաջ: Նա պաշտոնական տոնով ասաց.

— Ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար, պարոն Վարդան:

— Ես նույնպես, պարոն Արամ,— պատասխանեց Վարդանը լուրջ տեսքով:

Նրա հագի գործած սև հագուստը մեծ էր վրան, և դրանից նա շատ նիհար էր թվում, սակայն ձեռքն ուժեղ էր: Հորից մնացած միակ հիշատակը՝ կեռ դաշույնը, կախված էր նրա գոտուց: Արուսյակը բացատրեց, թե ինչու էին իրենք եկել: Մինչև Նեվշեհիր գնալու անհրաժեշտության մասին իմանալով, նա պատասխանեց.

— Ես այդպիսի ճանապարհորդություններ շատ եմ կատարել:

Գաղտնի կերպով խանդելով, նա ուզում էր տպավորություն թողնել Արուսյակի վրա, որը, ինչպես ինքը գիտեր, սիրահարված էր Վարդանին:

— Ինչպե՞ս են երեխաները:

Տղայի դեմքը մռայլվեց.

— Փոքրիկ Անուշը շատ հիվանդ է: Նա ոչինչ չի ուզում ուտել և ջերմություն ունի:

— Հիմա կտեսնենք,— ասաց Վարդանը, ավանակի երասանը թփին կապելով:

Արամը նրան առաջնորդեց կամարաձև սրահով եկեղեցին, որի պատերը զարդարված էին հնությունից կիսով չափ ջնջված որմնանկարներով: Գետինը ծածկող ձյան բարակ շերտի վրա հետքեր կային, որոնք տանում էին դեպի շինության խորքը, որը պետք է որ

վերնատունը եղած լիներ։ Երկրորդ մութ սրահում, որից հավաքնի հոտ էր գալիս, Արամը մոմ վառեց։ Փոքր օջախի մոտ փայլեցին շուրջը հավաքված և միմյանց շատ մոտ նստած երեխաների ինը զույգ աչքերը։

Ցնցոտիներով մի աղջիկ, հազիվ երեք կամ չորս տարեկան, նետվեց նորեկների մոտ։ Նա բոբիկ էր։ Լացելով՝ նա դեմքը թաքցրեց Արուսյակի փեշի մեջ։ Կինը գրկեց նրան։

— Անուշ... Անուշ... մի լացիր, ես այստեղ եմ։

Գլուխն Արուսյակի ուսին դնելով, երեխան ուշադիր Վարդանին էր նայում լայն բացված աչքերով և դրանից նրա շագանակագույն ծիածանաթաղանթը շատ փոքր էր թվում մտահոգիչ կերպով դեղնած եղջրաթաղանթի վրա։ Վարդանը նկատեց նրա փոս ընկած այտերը, ցայտուն դարձած այտոսկրերը և բարակ ձեռքերն ու ոտքերը։ Նա հազաց խորը և խռպոտ հազով։ Վարդանը ժպտաց նրան, սակայն նա արագորեն դարձրեց գլուխը։

Մնացած երեխաները խմբվեցին նրանց շուրջը։ Նրանք, ովքեր արդեն մի քանի շաբաթ էր, ինչ ճանաչում էին Արուսյակին, իրենց ուրախությունն էին արտահայտում նյարդային ծիծաղով, կամ էլ խոսում էին նրա ուշադրությունը գրավելու համար։ Մնացած երեք երեխաները, որոնք եկել էին նախորդ շաբաթ, մի կողմ էին քաշվել և լռում էին, անվստահ հայացքներ գցելով։ Նրանք Արամին էին նայում, որին իրենք իրենց ավագ եղբայր կամ ղեկավար էին համարում, իմանալու համար, թե ինչպես իրենց պահեին։ Վարդանը ցնցվեց, մտածելով, որ այս երեխաների մանկությունը գողացել էին։ Սակայն նրանց աչքերից զգացվում էր, որ նրանք սիրո, վստահելու և խնամված լինելու կարիքն ունեին։

Արուսյակին երեխաների հետ թողնելով՝ Վարդանն ու Արամը գնացին ավանակին բեռնաթափելու։ Ուսին մի պարկ դնելով՝ Արամը թեթևակի քամահրանքով հարցրեց.

— Դուք թափառաշրջիկ երաժի՞շտ եք, ինձ այդպես են ասել։

Վարդանը չկարողացավ ժպիտը զսպել, կասկածելով, որ տղան այդ զբաղմունքը առնական չէր համարում։

— Նախկինում ես մայոր էի բանակում։

Արամը հիացական սուլոց արձակեց, ցույց տվեց գոտուց կախված դաշույնը և հայտարարեց զրնգուն ձայնով.

— Սա հորս հիշատակն է։ Մի քիչ էլ որ մեծանամ, ֆիդայի կդառնամ իմ ընտանիքի վրեժն առնելու համար։ Դուք ինձ կրակել կսովորեցնե՞ք։

— Այն, ինչ դու անում ես Արուսյակի հետ, ավելի կարևոր է, քան վրեժխնդրությունը, Արամ։ Եթե մարդ սպանես, ապա քո հարազատները չեն վերակենդանանա։

Տղան գերադասեց չպատասխանել և գնաց դեպի եկեղեցին։

Արուսյակը պարկերի մեջ դրեց այն ուտելիքը, որ մնացել էր անձավում, մի կաթսա և ամանեղեն: Վարդանն ու Արամը բրդյա լաթերով փաթաթեցին այն երեխաների ոտքերը, որոնք կոշիկ չունեին: Ցնցոտիները վատ էին պաշտպանում ցրտից, ուստի երեխաները փաթաթվեցին գորշ ծածկոցների մեջ, որոնք նրանք ձեռքերով պետք է իրենց վրա պահեին:

Քամին չէր թուլացել ու ամպեր էին կիտվել:

— Ձյուն է գալու,— ասաց Արուսյակը, որը գրկել էր Անուշին:

Հիվանդ երեխան չուզեց, որ Վարդանը նրան ավանակի վրա նստեցներ:

— Մի պնդիր,— ասաց Արուսյակը:— Ես նրան կգրկեմ, իսկ երբ կհոգնեմ, դու նրան կվերցնես:

Վարդանը երկու ամենափոքր երեխաներին նստեցրեց ավանակի վրա: Քարավանը կազմավորվեց: Արամը վարում էր ավանակին և նրա համար արահետ էր բացում, նրանց էր հետևում Արուսյակը, որը ճանապարհն էր ցույց տափս, իսկ Վարդանը պարկերն ուսին հետնապահն էր: Նրա դիմացից գնում էին գորշ փոքր էակներ, որոնք կռացել էին քամու դեմ պայքարելու համար: Նրանք նման էին ծեր մրսկան կանանց՝ իրենց շալերի տակ: Ծածկոցների արանքներից երևում էին ընթացքը չդանդաղեցնելու համար մանր արագ քայլով գնացող երեխաների կարճլիկ ոտքերը:

Երբ նրանք դուրս եկան Գորեմեի գոգից, քամին ավելի թույլ թվաց: Ճանապարհի առաջին ժամը արագ ռիթմով անցավ: Նրանք դադար առան փլված կտրով փարախի դեռևս կանգուն պատի հետևում: Բոլորը խմբվեցին միմյանց տաքացնելու համար: Վարդանը ծիրանի չիր բաժանեց:

— Երբ տեղ հասնենք, մեծ խարույկ կվառենք,— ասաց Արուսյակը, որը, խմբի կենտրոնում կանգնած, շփում էր երեխաների ձեռքերն ու ականջները:— Ինչպե՞ս եք: Բոլորդ կկարողանա՞ք շարունակել:

Լսվեցին «այո» բացականչություններ, և Վարդանը հիացավ այդ դողացող երեխաների համառությամբ: Նրանք շարունակեցին ճանապարհը: Վարդանը գրկել էը Անուշին: Նա կիսաբաց էր արել իր վերարկուն և երեխային պարուրել էր դրանով, իսկ նրա ականջին օրորոցային էր երգում.

Քուն եղիր, բալաս, աչքերդ խուփ արա,

Նխշուն աչերուդ, քուն թող գա վրան...

Քիչ անց Անուշը դադարեց դողալուց:

Կամաց-կամաց նրանք կորցրեցին ժամանակի զգացողությունը: Կար միայն այդ սպիտակ անսահմանությունը, որը չէր սպառվում քայլերից: Հոգնած երեխաները քարշ էին տալիս ոտքերը, սակայն ոչ մեկը չէր

բողոքում։ Այդուհանդերձ, անհրաժեշտ եղավ նրանց հանգստանալու հնարավորություն տալ։ Քիչ անց սկսեց ձյուն տեղալ։ Շատ թեթև բյուրեղներ էին, որոնք քամին քշում էր հորիզոնական ուղղությամբ և շպրտում էր ճանապարհորդների դեմքերին՝ ցավեցնելով մաշկը։ Առաջ շարժվելն ավելի դժվար էր դարձել։

Մի երեխա ընկավ։ Վարդանը կռացավ և փորձեց ոտքի կանգնեցնել նրան, սակայն վեց կամ յոթ տարեկան տղան հրաժարվում էր շարժվելուց և շշնջում էր, որ ինքն իրեն լավ էր զգում և ուզում էր քնել։ Անուշին Արուսյակին հանձնելով, Վարդանը գրկեց տղային, որն այլևս քայլելու ուժ չուներ։ Այս երեխան ավելի ծանր էր, և Վարդանը հոգնություն զգաց։ Նրա հագուստը թրջվել էր քրտինքից, իսկ սառնամանիքը այն քարացնում էր, քամուց շունչը կտրվում էր, սակայն այս փոքրիկը, որը կառչել էր իրեն, նույն քաշն ուներ, ինչ Թովմասը, և Վարդանն ինքն իրեն ասաց, որ եթե պետք լիներ, ինքն այդպես, երեխային գրկած կգնար մինչև աշխարհի ծայրը։ Օրն իր ավարտին էր մոտենում, ադամամութն էր ընկնում։

Արուսյակը ոգևորված ճիչ արձակեց.

— Մենք համարյա թե հասել ենք։ Ես տեսնում եմ մուտքը։

Առաջին սրահի քանդված լուսամուտներից քամի էր ներս խուժում։ Երեխաներից մի քանիսը գետնին նստեցին։

— Վեր կացեք,— ասաց Արուսյակը, որը լամպն էր վառում։— Այստեղ ցուրտ է։

— Որտե՞ղ ենք,— հարցրեց Վարդանը։

— Հին վանք է, որը մենք երբեմն օգտագործում ենք։ Ակսարայի ճանապարհը անցնում է դիմացի բլրի հակառակ կողմով։

Նա դանդաղ էր խոսում, կարծես դժվարանար բառեր գտնել, սակայն ժպտաց Վարդանին նրա թևը սեղմելով.

— Մեզ հաջողվեի։

Արամը, որը ծանոթ էր վայրին, ավանակին տարավ հարակից սենյակը։ Արուսյակը երեխաներին առաջնորդեց դեպի ժայռի մեջ փորված աստիճանները։ Մեկ հարկ իջնելով, նրանք հայտնվեցին խաչաձև հատակագիծ ունեցող մեծ քարանձավում, որի պատերը վերևում կամար էին կազմում։ Լամպի թույլ լույսի ներքո երևացին Քրիստոսի կյանքի դրվագները ներկայացնող որմնանկարներ և սրբապատկերներ։ Բացառությամբ առաստաղի, ուր մրի շերտ էր երևում, որմնանկարների գույներն այնքան պայծառ էին, որ կարելի էր կարծել, թե դրանք նոր որմնանկարներ էին և ոչ թե ինը-տասը հարյուրամյակի վաղեմություն ունեին։ Լայնակի նավի երկու կողմերում բացվածքներ կային։ Դրանք ժայռի մեջ արված միջանցքներ էին։

— Իսկական ստորգետնյա քաղաք է,— բացատրեց Արուսյակը։— Հանկարծ չկորչեք։

Երեխաները լուռ էին ու շփոթված։ Վարդանը մտածեց, որ անհրաժեշտ էր նրանց հանել այդ ընկճված վիճակից և նրանց համար քիչ թե շատ հարմարավետ պայմաններ ստեղծել։ Իսկ հետո կզբաղվեին փոքրիկ Անուշով։

— Մենք այստեղ կքնենք,— ասաց Վարդանը՝ ցույց տալով վերնատան ծայրում գտնվող խորանը։— Հիմա խարույկ կվառենք և ճաշը կտաքացնենք։

Արուսյակը մտահոգ էր.

— Կրա՞կ։ Վտանգավոր չէ՞։ Մենք ճանապարհի մոտ ենք։

— Գիշերը ծուխը չի երևա։

— Մենք կխեղդվենք,— առարկեց Արամը խեղճացած տոնով։

Վարդանը ցույց տվեց մրի շրջանակը խորանի առաստաղին և սևացած փոքր գոգավորությունը հատակին։

— Այստեղ արդեն կրակ վառել են։ Նայիր առաստաղի թեքությանը. ծուխը դուրս կգա աստիճանավանդակով։

Արամը զարմացավ, որ նախորդ այցելությունների ժամանակ ինքը չէր նկատել այդ մանրամասները և ներքուստ հիացավ Վարդանով, որն այդ ամենը նկատել էր առաջին հայացքից։ Նա ուզում էր նույնպես իր աչքաբացությունը ընդգծել.

— Նոր մենք անցանք գետնին տապալված բարդու մոտով։

— Գնանք և դրա ճյուղերը կտրենք,— ասաց Վարդանը ձեռքը նրա ուսին դնելով։

— Կարո՞ղ եմ ձեզ հետ գալ,— հարցրեց մոտ տասը տարեկան մի տղա։

Նա դիմում էր Արամին, որին համարում էր իր ղեկավարը։ Հրաժարվելով մինչ այդ իր բանեցրած իշխանությունից, Արամը հարցական հայացք նետեց Վարդանի վրա։

— Դու ուժեղ ես,— պատասխանեց Վարդանը, գլխով անելով։— Արի, անունդ ի՞նչ է։

— Արտո։

Արուսյակը ջերմ նայեց հեռացողների հետևից, հետո ծափ տվեց՝ մնացողների ուշադրությունը իր կողմը գրավելու համար.

— Եվս մեկ փոքր ջանք։ Մենք հիմա մահճակալները կպատրաստենք։

Մութն արդեն ընկել էր, և ավելի ցուրտ էր։ Վարդանն ու նրա երկու օգնականները հետևում էին իրենց թողած հետքերին, որը ձյունը կամաց-կամաց ծածկում էր։ Հինգ րոպեից նրանք հայտնաբերեցին քամուց տապալված ծառը։ Արամի դաշույնը պետք չեկավ, քանի որ ցրտից սառած ճյուղերը հեշտությամբ էին կոտրվում։ Նրանք չորս անգամ քարանձավ ճյուղեր տարան և մի քանի օրվա վառելիք

հավաքեցին։ Վերադարձի ճանապարհին Վարդանը տղաներին ցույց տվեց, թե ինչպես կարելի էր ճյուղերով հարթեցնել այն հետքերը, որ իրենք թողել էին ձյան վրա։ Մնացածը կաներ քամին։

Ծածկոցները փռված էին խորանում, և երեխաներից շատերը պառկած էին։ Արուսյակը ջուր էր բերել ներքևի հարկի սանդուղքի տակ դրված ամանից և պատի տակ էր շարում մթերքը։ Արթուն երեխաներին Վարդանը բացատրում էր, թե ինչպես են խարույկ վառում։ Նա հանում էր ճյուղերի խոնավ կեղևը, ճյուղերը կոտրում էր և տաշեղ էր դարձնում։ Երբ մի խուրձ չոր խոտը վառվեց, կրակը թուլացավ և քիչ էր մնում հանգչեր, հատկապես որ խոշոր ճյուղերից ջուր էր հոսում։ Սակայն կրակը հաղթեց, և շուտով խարույկն ուրախ ճարճատում էր ու լուսավորում խորանը։ Նավթը խնայելու համար Արուսյակը լամպը հանգցրեց։ Նրանք եռոտանի սարքեցին ամուր ճյուղերից և կրակի վրա կախեցին ջրով լի կաթսան։

Ապա արթնացրեցին քնած երեխաներին և բոլորին նստեցրեցին կրակի շուրջը։ Տղաները բնազդաբար խմբվել էին Վարդանի շուրջը, իսկ աղջիկները՝ Արուսյակի։ Ջերմությունն աստիճանաբար պարուրեց երեխաների մարմինները, նրանց մկանները թուլացան, իսկ աչքերը կյանքով լցվեցին։ Վարդանը խարույկից բարձրացող ծխի միջով Արուսյակին նայեց, որը սոխ էր կարտում և կարոֆիլ էր մաքրում։ Նրանք սիրահարված հայացք փոխանակեցին։ Անուշը պառկած էր իր ութը տարեկան քրոջ՝ Գյուլինարի գրկում և, բորբոքված աչքերով հետևելով Արուսյակին, անդադար հազում էր։

— Իսկ եկեղեցում կարելի՞ է խարույկ վառել,— հարցրեց մի տղա՝ մատով ցույց տալով որմնանկարները, որոնց վրա պարում էին իրենց ստվերները։

— Այո,— պատասխանեց Վարդանը,— քանի որ այս եկեղեցին շատ վաղ շրջանից չի ծառայում որպես այդպիսին։

— Աստված այլևս այստեղ չի՞ բնակվում։

— Նա ապրում է ամենուր, նույնիսկ մեզնից յուրաքանչյուրի մեջ։

Մի աղջնակ լուրջ տեսքով ասաց.

— Զարմանալի է, բայց մենք դա չենք զգում։

Մեծերը ծիծաղեցին և նրանց հետևեցին փոքրերը, որոնք, այդուհանդերձ, չէին հասկանում այդ ուրախության պատճառը։ Արուսյակը ոչխարի միսը կտրտում և գցում էր կաթսայի մեջ եռացող բլղուրով ջրի մեջ։ Նա գիտակցում էր, որ երեխաները, որոնք շաբաթներ շարունակ մենակ էին ապրել, մեծերի հետ շփվելու կարիք ունեին, և Վարդանին հարց տվեց, որի պատասխանն ինքը գիտեր.

— Իսկ ինչո՞ւ են մարդիկ ժայռի մեջ փորել այս եկեղեցին։

Երիտասարդ կնոջ աչքերը պերճախոս էին, և Վարդանը դիմեց երեխաներին.

— Թշնամիներից պաշտպանվելու համար։ Այդ ժամանակաշրջանում թալանչիների հրոսակները հարձակվել էին շրջանի վրա։ Մարդիկ փախչում էին իրենց ստորգետնյա քաղաքները, մուտքը փակում էին ժայռաբեկորներով և հանգիստ ապրում էին այստեղ։ Նրանք եկեղեցիներ ունեին, խանութներ, կացարաններ և, անկասկած, դպրոցներ։

Նա նրանց մանրամասնորեն պատմեց Կապադովկիայի առաջին քրիստոնյաների, որմնանկարները նկարելու տեխնիկայի, նույնիսկ քարի մասին, որ ժամանակին ժայթքել էր հրաբուխների խառնարաններից։ Նրանք լուռ լսում էին՝ գերվելով այդ հին պատմություններով, որոնք այնքան նման չէին իրենց գոյությանը, որի գերագույն նպատակն ամիսներ շարունակ վերապրելն էր։ Վարդանը նրանց աչքերում գիտելիքի ծարավ տեսավ, նույն ծարավը, որ տեսել էր Հալեպի որբանոցի սաների աչքերում, և դա ջերմացրեց նրա հոգին։ Երբ նա լռեց, Արուսյակը մի երգ երգեց, որը նրանցից շատերը լսել էին և որի բառերը ոմանք գիտեին։ Հետո մի տղա, որին երգն իր մորը հիշեցրեց, հարցրեց վախվորած.

— Որբանոցն ի՞նչ է։

Առանց նրան խնայելու Արամը թունոտ պատասխանեց.

— Ծնողներին կորցրած երեխաներին պահելու վայր։

Տղայի աչքերն արցունքով լցվեցին։ Ուղիղ կտրած մազերով նրա ձվաձև դեմքը կաղինի էր նմանվում։

— Որբանոցը,— ուղղեց Վարդանը,— տուն է, ուր երեխաները սիրված և հարգված են։ Նրանք մահճակալներում են քնում և կուշտ ուտում են, նրանք սովորում են և նախապատրաստում են իրենց ապագան։

Նա նկարագրեց այն որբանոցը, որն ինքն այցելել էր Հալեպում, և պատասխանեց հարցերի տարափին, որ նրա վրա տեղացին երեխաները։ Այդ վայրը, ուր իրենք այլևս սոված չէին լինելու, չէին մրսելու և չէին վախենալու, նրանց դրախտ թվաց։ Գյուլինարը, որն օրորում էր իր կրտսեր քրոջը, խոսեց.

— Իսկ ձեր ծնողներն արդեն մահացե՞լ են։

— Այո, շատ վաղուց։ Սակայն ես որդի ունեմ՝ Թովմաս, որը ձեր տարիքին է և որի մասին ես ոչինչ չգիտեմ շուրջ երկու տարի։ Կուզենայի հավատալ, որ նա որբանոցում է, ուր նրանով զբաղվում են։

Երեխաները նկատեցին Վարդանի հուզմունքը, և ծանր լռություն տիրեց։ Մթնոլորտի լարումը պարպելու համար Արուսյակն ուրախ ասաց.

— Ճաշում ենք։

Նա կրակից վերցրեց կաթսան, որն ախորժալի բուրմունք էր տարածում։ Քանի որ ընդամենը երկու թաս և չորս բաժակ ունեին, ապա

սկզբում փոքրերին կերակրեցին։ Յուրաքանչյուրը ինքն էր ախորժալի ապուրը լցնում իր համար, իսկ Արուսյակը հետևում էր, որ ամեն մեկն իր բաժինը ստանար։ Ամենամեծ երեխաները և երկու մեծահասակները իրար մեջ բաժանեցին մնացած ապուրը։ Բոլորի տրամադրությունը բարձր էր և երբ երեխաներից մեկը հանկարծակի գխտաց, լիաթոք ծիծաղեցին։ Արուսյակն Անուշին գիրկն էր վերցրել և գդալով կերակրում էր նրան։ Երեխան դժվարությամբ էր կուլ տալիս և խեղդվում էր հազի նոպաներից։ Արուսյակը աղերսող հայացքով նայեց Վարդանին։ Վարդանը պատասխանեց.

— Հիմա կնայենք։

Արամը բաշխում էր քնելու տեղերը, և դա ընթանում էր ոչ առանց բողոքների, քանի որ ոմանք ուզում էին իրար կողքի պառկել, ոմանք ուզում էին կրակին ավելի մոտ լինել, ոմանք էլ մութ խորանից հեռու։ Մի կողմ քաշված՝ Վարդանը քննում էր Անուշին, որին գրկել էր Արուսյակը։ Շապիկը բարձրացնելով, նա ականջը դրեց երեխայի դուրս ցցված կողերին՝ թոքերը լսելու համար։ Նա չոր խզզոցներ լսեց, որոնք ոչ մի լավ բան չէին կանխագուշակում, իսկ երբ երեխան խորն էր շնչում, գլգլոց էր լսվում, կարծես թոքը ջրով լցված լիներ։ Պլևրի՞տ։ Թոքաբո՞ր։ Վարդանը հաստատ չգիտեր։ Երբ երեխային հարցրեց, թե նրա որ տեղն էր ցավում, նա ցույց տվեց գլուխը, կոկորդը և կրծքավանդակը։ Վարդանը շոյեց երեխայի այտը և ժպտալով ասաց, որ նա կլավանա։

Արուսյակին չխաբեց նրա առերես լավատեսությունը, սակայն կինը գերադասեց սպասել, որ իրենք մենակ մնային, նրա իրական կարծիքն իմանալու համար։ Նա երեխային հանձնեց ավագ քրոջը։

Խորանում ջերմաստիճանը նորմալ էր, քանի որ կամարաձև պատերը հետ էին մղում տաք օդը։ Ծածկոցների մեջ փաթաթված երեխաները արդեն քնում էին։ Արամը իր և երկու մեծահասակների համար տեղ էր պահել խորանի մուտքի մոտ՝ մտածելով, որ իրենց մարմինները կպաշտպանեին երեխաներին ցրտից և մթից։

— Մենք հիմա կաղոթենք,— ասաց Արուսյակը բարձր ձայնով։— Աղոթենք բացակաների համար, փառք տանք Աստծուն, որ սոված չենք, և խնդրենք, որ նա մեզ պահապան լինի։

Նա սկսեց «Հայր մեր»-ը երգել։ Շուտով նրան միացան երեխաների նուրբ ձայները և Վարդանի տենորը։

— Մենք խոսելիք ունենք,— ասաց Արուսյակն Արամին, որը պառկում էր։- Մենք երկար չենք բացակայի։

— Բարի գիշեր,— ասաց տղան, որի աչքերը փակվում էին։

Առանց լամպը վերցնելու, նրանք գնացին երկայնակի նավի աջ թևը դուրս եկող միջանցքով։ Շատ շուտով խարույկի լույսը կորավ, և լիակատար մթության մեջ նրանք առաջ էին շարժվում պատերից բռնվելով։

— Ես լավ եմ ճանաչում այս վայրը,— շշնջաց Արուսյակը, որն առջևից էր գնում։— Մենք մեկ այլ սրահ դուրս կգանք։

Հանկարծ պատն ընդհատվեց։ Վարդանն իր հրահանը վառեց, որի լույսի ներքո երևացին Արուսյակի փայլուն աչքերը, իսկ նրա հետևում որմնանկարի սրբի խամրած աչքերը։ Երբ հրահանը մարեց, մթությունն էլ ավելի անթափանց թվաց։ Արուսյակի ձեռքն իջավ Վարդանի ուսին։

— Ինձ ճշմարտությունն ասա։ Անո՞ւշը։

— Նրան պետք է բժիշկը քննի։

Այդ խոսքերին լացակումած մի հառաչ հետևեց։

— Ես գիտեմ, որ դա անհնար է,— շարունակեց Վարդանը տխուր ձայնով։— Եվ բացի դրանից, դա օգուտ չի տա։

— Ինչո՞վ է նա հիվանդ։

— Կարծում եմ, որ թոքաբորբ է։ Հաշվի առնելով նրա վատ ֆիզիկական վիճակը, նա բուժվելու չնչին հնարավորություններ ունի։

Արուսյակը փարվեց Վարդանին։ Վարդանը գրկեց նրան և շոյեց արցունքներից թրջված նրա դեմքը։

— Մենք ոչինչ չենք կարող անել։ Միայն աղոթել։

— Իսկ եթե նրան տանեմ իմ տո՞ւնը։

— Ուշ է։

Կծկվելով Վարդանի գրկում՝ նա լաց էր լինում, իսկ Վարդանը շոյում էր նրա մազերը։ Երբ նա հանգստացավ, շշնջաց.

— Ես միայն Անուշի համար չեմ լացում... Շատ դժվար է, Վարդան, ամեն անգամ ավելի դժվար է լինում նրանցից բաժանվել։ Եթե նույնիսկ ընդամենը մի քանի անգամ եմ նրանց տեսնում, ես կապվում եմ նրանց։ Դու զգացիր, թե նրանք որքան կարիք ունեն սիրո։ Ես չեմ կարողանում ինձ համոզել։ Կուզենայի բոլորին ինձ մոտ պահել, սիրել նրանց, երջանկություն պարգևել։

— Ես հասկանում եմ։ Սակայն դու ինքդ քեզ պետք է համոզես, որ այսպես վարվելով դու տասնյակ երեխաների հնարավորություն ես տալիս նոր կյանք սկսելու։

Նա նորից զգաց Վարդանից երեխա ունենալու ցանկությունը, սակայն ինչպես և ուրիշ անգամներ, չհամարձակվեց այդ ցանկությունն արտահայտել։ Մի փոքրիկ տղա, որը կունենար իր հոր գայթակղիչ աչքերը, կամ էլ մի փոքրիկ աղջիկ, որի մեջ ինքն իրեն կճանաչեր։ Նա գլուխը ձգեց և խավարի մեջ փնտրեց տղամարդու շուրթերը, գտավ և ինքնամոռաց համբուրեց։

Արամն առաջինն արթնացավ, թեժացրեց ածուխները, որոնք դեռ տաք էին մոխրի տակ, փայտ գցեց օջախը և առանց աղմկելու հեռացավ։ Նա

ջուր հավաքեց և վերև տարավ ավանակին տալու համար։ Լույսը բացվել էր, արևը փայլում էր ձնածածկ բնապատկերի վրա, իսկ մի ագռավ կռռալով անցնում էր երկնքով։ Երկու տարի ընդհատակում ապրելու ընթացքում ձեռք բերած զգուշավորությամբ նա դուրս եկավ, ուշադիր զննեց նեղ հովիտը և հորիզոնը փակող բլուրը։ Ոչինչ չէր շարժվում։ Նա վար իջավ։

Վարդանն օջախին ջուր էր տաքացնում։

— Բարև, Արամ։ Լա՞վ ես քնել։

— Սատկած էշի պես։ Տաք է, և ամպերը ցրվել են։ Մեթյուզ քահանան միգուցե այսօր էլ գա։

Արթնանալուն պես Արուսյակը շտապեց Անուշի անկողնու մոտ։ Նա երեխային վերցրեց քրոջ գրկից, որը դեռևս քնած էր, և նրան կրակի մոտ տարավ Վարդանին ցույց տալու համար։

— Նայիր նրա կարմիր այտերին,— բացականչեց նա ուրախ ձայնով։— Դա լավ նշան է։

Վարդանը ձեռք տվեց Անուշի ճակատին։ Ջերմությունը բարձրացել էր։ Նրա անկանոն շնչառությունը և թոքերի խզզոցներն ավելի նկատելի էին։ Նա ասաց մտահոգ ձայնով.

— Դժբախտաբար այդ կարմրությունը հաստատում է, որ թոքաբորբով է հիվանդ։ Սա նույնպես։

Նա ցույց տվեց աղջկա վզի և շապիկի վրա չորացած խորխի հետքերը, որոնք ժանգի գույն ունեին։ Արուսյակը սարսափելով դարձրեց գլուխը և սեղմեց ատամները։ Վարդանը շոշափեց փոքրիկ հիվանդի մեջքը և նկատեց, որ երեխայի ողնաշարն ու վիզը լարված էին։ Դրանք արդեն մենինգիտի ախտանիշներ էին։ Անուշը բացեց աչքերը։

— Գլուխդ ցավո՞ւմ է։

Երեխան գլխով արեց։

— Ավելի՞, քան երեկ։

Դարձյալ երեխան գլխով այո արեց։ Թույլ հազալով՝ նա Վարդանին էր նայում իր սառած աչքերով, և նա հասկացավ, որ երեխան դադարել էր պայքարելուց և որ նա անձնատուր էր լինում հիվանդությանը։ Նրան խաբելն անիմաստ էր, նա բնազդաբար զգում էր, որ ինքը չէր ապաքինվելու և որ կյանքը մարում էր իր մարմնում։ Վարդանը փորձեց աչքերով արտահայտել այն գորովը, որ փոքրիկն իրեն ներշնչում էր, և երեխան կարծես զգաց դա, որովհետև նա ձեռքը մեկնեց դեպի Վարդանի մորուքը։ Վերջինս համբուրեց նրա ոսկրոտ ձեռքերը, և նա նրան գեղեցիկ թվաց՝ չնայած իր նիհարությանը և աչքերի տակի կապտուկներին։ Այտերի կարմրությունը նրա դիմագծերին կենսունակության պատրանք էր հաղորդում, որից նրա մարմինը արդեն զուրկ էր։ Վարդանը լուռ կատաղություն էր զգում նրան օգնելու

անկարողությունից և որպեսզի երեխան չզգար իր հոգեվիճակը, դարձավ դեպի Արամը, որը նստած էր կրակի կողքը.

— Ջուրը եռո՞ւմ է։

Արուսյակը տեսավ Վարդանի ու Անուշի միջև տեղի ունեցած լուռ երկխոսությունը և հասկացավ դրա իմաստը։ Այդ երեխան, որին ինքն իր կրծքին էր սեղմում, մեռնելու էր։ Նա սկսեց լուռ աղոթել։

Վարդանը թուրմ սարքեց և Արուսյակը փորձեց այն խմեցնել Անուշին։ Թուրմը երեխայի կատիկը թռավ և նա հետ տվեց։

— Նա դողում է,— ասաց Արուսյակը։

Վիճակն ավելի բարդ էր։ Երեխան ջղաձգվում էր։

— Պառկեցրու նրան և մոտը մնա։ Մնացածներով ես կզբաղվեմ։

Վարդանը բլղուր պատրաստեց և կերակրեց երեխաներին։ Հետո նրանց տարավ դեպի դուրս նայող սրահը, որպեսզի մաքուր օդ շնչեին։ Գյուլինարը հրաժարվեց նրանց հետևել՝ չցանկանալով բաժանվել հիվանդ քրոջից։

— Հարկավոր է սրանց զբաղեցնել,— ասաց Վարդանն Արամին։

Տղան խաղ կազմակերպեց, և նրանք աչքակապուկ խաղացին, որից նույնիսկ Արամը հաճույք ստացավ։ Վարդանը նույնպես մասնակցեց խաղերին, և երբ երեխաները հոգնեցին, նա նրանց հանելուկներ էր ասում և շուտասելուկներ էր սովորեցնում։ Կեսօրից հետո Անուշն անշարժացավ։ Հիվանդությունն ավելի արագ էր զարգանում, քան կանխատեսել էր Վարդանը։ Արուսյակը նստած էր հոգեվարքի մեջ գտնվող փոքրիկի կողքին ողբացող Գյալինարի հետ միասին։

Այդ երեկո, երբ բոլորն արդեն քնել էին, Վարդանն արթնացրեց Արամին։

— Ոչ մի խոսք։ Ինձ հետևիր։

Տղան լուռ ենթարկվեց։ Երբ աստիճաններին էին հասել, Վարդանը լամպը վառեց, և նրանք իջան ստորգետնյա քաղաքի ամենաստորին հարկը։

— Ի՞նչ է պատահել, պարոն։

— Փոքրիկը մեռնում է։ Մենք պետք է փոս փորենք։

Նրա ձայնը մռայլ էր, և դա զարմացրեց Արամին։ Արամը չէր հասկանում, թե ինչպես նրա պես մարդը կարող էր ազդվել գրեթե անծանոթ երեխայի մահից։ Վարդանը սեղմեց նրա ուսը։

— Իսկական տղամարդը, Արամ, զգացմունքներ ունեցող մարդն է։ Կարեկցանք, խղճահարություն, բարեկամություն, սեր... Այն մարդը, որին ոչինչ չի հուզում, հրեշ է դառնում, լավագույն դեպքում անասուն։ Այնպիսին, ինչպիսիք են քո կարծիքով քո թշնամիները։ Երբեք այս բանը

չմոռանաս։

Հետևելով Վարդանին, որը զննում էր սրահները հարմար տեղ գտնելու համար, Արամը մտածում էր այն խոսքերի մասին, որ նոր լսել էր։ Նա զգում էր, թե ինչպես էր հալչում դառնության անտարբերությունը, որ ինքը կռել էր երկու տարիների ընթացքում, և վախենում էր, որ ամեն ինչ ավելի դժվար կլիներ իր համար։

Վարդանն ընտրեց երկար միջանցքի վերջում գտնվող անձավը։ Դանակի ծայրով նա գետնին փոքր ուղղանկյունի գծեց, որը մի քիչ ավելի մեծ էր, քան Անուշի հասակը, և սկսեց հողը փորել օգտագործելով դանակի շեղբը։ Արամը չէր շարժվում։

— Դու չե՞ս փորում։

— Ինչո՞վ։

— Քո դաշույնով։

Տղան սարսափեց։ Իր հոր զենքո՛վ։

— Քարը փափուկ է և տաշվում է, ինչպես հացը։ Իսկ հետո ես շեղբը կսրեմ։

Արամը, դժկամությամբ, գործի անցավ։

— Իմացիր, որ սիրած մարդուն թաղելն ավելի դժվար է, քան թշնամուն սպանելը։

— Դուք որևէ մեկին սպանե՞լ եք, պարոն։

— Փառք Աստծու ես երբեք առիթ չեմ ունեցել։

— Ես չէի վարանի։ Ես կոչնչացնեմ բոլոր մարդասպաններին։

— Ինքդ մարդասպան դառնալո՞վ։

— Արդարություն վերականգնող դառնալով։ Դա ուրիշ բան է։

— Այն ոստիկանները, որոնք այդքան հայերի են սպանել, նրանք էլ կարծում էին, որ ճիշտ էին վարվում։

Արամը չպատասխանեց և սկսեց ուժգին հարվածել քարին։ Նա կամաց-կամաց տաքացավ և հանեց իր գործած բաճկոնը։

— Դու որտեղի՞ց ես,— հարցրեց Վարդանը։

— Դեմերեկի մոտակայքից։

Առանց Վարդանի հարցերին սպասելու, նա հատու նախադասություններով պատմեց իր պատմությունը։ Ոստիկանները նրան տարել էին գյուղի բոլոր տղամարդկանց հետ, որոնց թվում էին նրա եղբայրները, հայրը և հորեղբայրները։ Երբ նրանք սարերն էին բարձրացել, ոստիկաններր բոլորին հավաքել էին մի ժայռի տակ գնդակահարելու։ Երբ սկսել էին կրակել, հայրը նրան գետնին էր գցել,

իսկ ինքն էլ ընկել էր վրան։ Նա միակն էր, որ ողջ էր մնացել և, հոր արնով շաղախված, սպասել էր մինչև գիշեր փախչելու համար։ Առավոտյան հասել էր իրենց գյուղի մոտակայքը և տեսել էր, որ կանանց ու երեխաներին քշել էին։ Հարևան գյուղերի բնակիչները թալանում էին այն, ինչ ոստիկանները չէին կարողացել տանել, իսկ ոմանք էլ իրենց ընտանիքներով տեղափոխվում էին դատարկված տները։

Նա փախել էր սարերը, ուր նա սնվել էր վայրի մրգերով և նրանով, ինչ կարողացել էր փախցնել ագարակներից։ Զմռանը նա մուրում էր գյուղերում։ Մեկ այլ տղա իր քրոջ հետ միացել էին նրան։ Ի վերջո, հասել էին Կապադովկիա, ուր նրանք աշխատում էին իրենց թաքցնող հույների դաշտերում։ Այդ ժամանակ էր, որ Արամը ծանոթացել էր Քերիմի և Արուսյակի հետ։ Եվ այդ ժամանակից նա նրանց օգնում էր հայտնաբերելու հայ որբերին, նրանց միսիոներներին հանձնելու համար։

Վարդանը շոյեց նրա գլուխը.

— Քո հայրը հպարտ կլիներ քեզնով։

Արամը գլուխը դարձրեց, որպեսզի Վարդանը չտեսներ իր աչքերին հայտնված արցունքները։ Նրանք փորեցին այնքան, մինչև փոսը մեկ մետր խորության հասավ։ Փոսի մոտ հավաքված խճով նրանք կծածկեին մարմինը։

Վերադառնալով եկեղեցի, Վարդանը մոտեցավ Արուսյակի անկողնուն։ Նա քնած չէր։ Կողքի վրա պառկած, գլուխը ծալված թևին դրած, նա հսկում էր Անուշի քունը։ Վարդանին թվաց, որ երեխայի զարկերակը շատ թույլ էր, շնչառությունը գրեթե աննկատ։ Նա, անկասկած, կոմայի մեջ էր։

— Դու պետք է փորձես հանգստանալ,— շշնջաց Վարդանն Արուսյակի ականջին։— Ես նրան կհետևեմ։

Նա նստեց և որոշ ժամանակ ձեռքը պահեց երիտասարդ կնոջ գլխին, սակայն քունը տարավ և նա պառկեց։ Մի քանի ժամ անց Արուսյակն արթնացավ.

— Վարդան,— շշնջաց նա,— Վարդան։

Արուսյակի դողդոջուն ձայնից և նրա այլայլված դեմքից Վարդանը հասկացավ, որ Անուշը մահացել էր։ Նրանք երեխայի մարմինը խորանը տարան։ Արուսյակը հանեց երեխայի շորերը և լվաց նրա մարմինը։ Նա զգուշորեն լվանում էր մաշկը, և նրա շարժումների մեջ այնքան ջերմություն և սեր կար, կարծես իր հարազատ երեխան լիներ։ Նրա արցունքները ցամաքել էին։

— Կարծես հրեշտակ լինի։

Մի ճիչ նրան ստիպեց վեր թռնել։

— Անու՛շ։ Անու՛շ։

Գյուլինարը վատ երազ էր տեսել և արթնացել ու հիմա քրոջն էր

փնտրում։

— Նրան այստեղ բեր,— խնդրեց Արուսյակը Վարդանին։

Աղջիկը լաց եղավ՝ նետվելով դիակի վրա, և այն համբույրներով ծածկեց։ Գյուլինարը կորցրել էր անցյալի, իր մորթված ընտանիքի հետ իրեն կապող վերջին թելը և այսուհետ նա միայնակ էր աշխարհում։ Արուսյակն ու Վարդանը նրան հնարավորություն տվեցին արտահայտելու իր վիշտը, հետո երիտասարդ կինը նրան իր գիրկն առավ մխիթարելու համար.

— Մի լացիր, Անուշը դրախտում է։ Այսուհետ նա հոգ կտանի քո մասին։

— Հիշիր, թե ինչպես էր նա տանջվում,— ասաց Վարդանը։— Հիմա նա երջանիկ է։

Արուսյակը գրկից թողեց աղջկան.

— Հիմա մենք նրան կհագցնենք։

Գյուլինարը զսպեց լացը և օգնեց Արուսյակին։ Նրա ականջին հնչեցին մոր բառերը, որոնք նա ասել էր, երբ ոստիկանները տանում էին նրան. «Գյուլինար, հոգ տար Անուշի մասին։ Ես քեզ սիրում եմ»։ Նա սրբեց աչքերը և խաչեց Անուշի ձեռքերը։ Վարդանը մարմինը դրեց մաքուր ծածկոցի վրա և փաթաթեց երեխային, բաց թողնելով միայն դեմքը։ Նրանք երեքով ծնկի իջան աղոթելու համար։ Հետո նստեցին հանգուցյալի մոտ։ Վարդանն ու Արուսյակը նստած էին Գյուլինարի կողքին և ձեռք ձեռքի էին տվել իրենց հուզմունքը կիսելու համար։

— Նա գեղեցիկ է,— ասաց Գյուփնարը։— Կարծես քնած լինի։

Նա մի պահ լռեց, հետո երազկոտ ձայնով ասաց.

— Անուշը երբեք չէր տրտնջում։ Հիվանդությունից առաջ նա շատ էր ծիծաղում։ Երբ մենք ագարակապանի մոտ էինք ապրում, նա ինձ օգնում էր խոհանոցում... հավերին խնամելիս... պարտեզը ջրելիս։

Դեռ երկար ժամանակ նա պատմում էր քրոջ մասին, ոչ այնքան երկու մեծահասակների, որքան իր համար։ Նրանք այդպես նստած մնացին մինչև լուսաբաց։

Իմանալով իրենց ընկերուհու մահվան մասին, երեխաները տարբեր ձևով իրենց պահեցին։ Շատերը լաց եղան, ոմանք զսպություն ցուցաբերեցին, միգուցե թաքուն թեթևություն զգալով, որ մահն իրենց կողքով էր անցել։ Վարդանը երեխայի մարմինը տարավ այն սրահը, ուր նրանք գերեզման էին փորել։ Արամը քայլում էր նրա առջևից լամպով լուսավորելով ճանապարհը, իսկ մնացածները հետևում էին Վարդանին։ Քանի որ մեռոն չկար, նրանք ծիսական լվացումները ջրով արեցին։ Խաչի նշաններ արեցին մահացած աղջկա ճակատին, ձեռքերին և ոտքերին, իսկ Արուսյակն աղոթեց։ Երբ ծածկոցի մեջ փաթաթած մարմինը դրեցին փոսի մեջ, Գյուլինարը չկարողացավ զսպել իր վիշտը և

սկսեց բարձրաձայն ողբալ։ Արուսյակը նրան հետ տարավ եկեղեցի։

Մնացած երեխաները, ձեռք ձեռքի տված նայում էին քարե գերեզմանում պառկած գորշ մարմնին և չէին կարողանում աչքերը հեռացնել այն էակից, որն անհայտանում էր առհավետ։

Անհրաժեշտ էր իմաստավորել այդ մահը։ Վարդանը սկսեց խոսել հանպատրաստից.

— Տեր ամենակարող Աստված, մենք հավաքվել ենք այստեղ, քո առջև, որպեսզի Քեզ հանձնենք մեր քրոջը՝ Անուշին։ Վերցրու նրան Քո հովանու տակ, որպեսզի նա ապրի հավերժ, հրեշտակ լինի քո հրեշտակների շարքում։ Իսկ դու, Անուշ, որ երջանիկ ես, քանի որ միացել ես քո ծնողներին, դու, որ այլևս երբեք չես տառապի սովից, ծարավից, ցրտից, այլ անսահման երջանիկ կլինես, միջնորդիր Քրիստոսի առջև, որ մենք վայելենք խաղաղություն, հրճվանք ու սեր։ Ամեն։

Նա մի բուռ խիճ լցրեց փոսի մեջ, իսկ երեխաները հետևեցին նրա օրինակին։ Երբ փոսը լցվեց, նա պատին արձանագրություն փորագրեց իր դաշույնով և ասաց.

— Մենք բոլորս կորցրել ենք մեր սիրած էակներին։ Մենք չպետք է թույլ տանք, որ նրանց հիշատակը մարի մեր հոգում։ Մենք պետք է ապրենք, երկար ապրենք, քանի որ մահացածներն ապրում են մեր միջոցով։ Երբեք չմոռանաք փոքրիկ Անուշին։ Երբ դուք հուսահատվեք, մտածեք նրա մասին, որը չունեցավ արևը նորից տեսնելու ձեր երջանկությունը։

Տապանագիրը հետևյալն էր. «Անուշ Մակարյան։ Տիրոջ հրեշտակ, 1913-1917»։ Վարդանն ինքնակամ կերպով մոտավոր տարեթիվ էր գրել, որը կհամապատասխաներ փոքրիկի տարիքին։ Վերև բարձրանալուց առաջ երեխաներից շատերը մատով հպվեցին փորագրված տառերին, կարծես հիշողության մեջ դրանք վառ պահելու համար։

Երբ Վարդանը եկեղեցի եկավ, Արուսյակի հետ մի տղամարդ կար, որը կռացել էր Գյալինարի վրա և խոսում էր նրա հետ։

— Մեթյուզ քահանան է,— ասաց Արամը։

Քահանան մոտ վաթսուն տարեկան տղամարդ էր, բարձրահասակ և հավանաբար նիհար, քանի որ վերարկուն շատ լայն էր վրան։ Մորթե գլխարկի եզրերը բոլորում էին նրա շատ բաց հոնքերով վարդագույն դեմքը։ Նուրբ գծագրություն ունեցող նրա շրթունքները կարծես ժպտային, իսկ մոխրագույն աչքերը շատ բարի էին։ Արուսյակը նրան նախ ներկայացրեց երեխաներին, հետո նրան մենակ թողեց Վարդանի հետ, իսկ ինքը զբաղվեց երեխաներին ճամփորդությանը նախապատրաստելով։

Վարդանի ձեռքը սեղմելուց հետո միսիոները այլևս նրա թևը բաց չթողեց և նրան տարավ եկեղեցու խորքը։

— Պարոն Պալյան, շատ ուրախ եմ վերջապես ձեզ հանդիպելու

համար։

—– Ես նույնպես, պարոն Մեթյուզ։

— Ափսոս, որ մենք չհանդիպեցինք Հալեպում։

— Ես էլ եմ ափսոսում։ Ձեզ համար թե՞յ պատրաստեմ։

— Մի անհանգստացեք։ Կառքում թերմոս կա։ Ես պետք է անհապաղ մեկնեմ։ Ցավոք, մենք հնարավորություն չենք ունենա իրար լավ ճանաչելու։

Վարդանին դա տխրեցրեց, քանի որ հենց սկզբից նրանց միջև համակրանքի զգացում էր ծագել։ Եվ դա զարմանալի չէր, քանի որ, Արուսյակի կարծիքով, իրենք շատ նման էին բնավորությամբ։

— Մենք այլ հնարավորություններ էլ կունենանք, պարոն քահանա։

— Անկասկած, կամ այստեղ, կամ Հալեպում։ Կինս ասաց, որ դուք մտադիր եք շարունակելու ձեր հյուրախաղերը դերվիշների նվագախմբի հետ։

— Ես այնքան կուզենայի ավելի օգտակար լինել։

Քահանան զգաց Վարդանի անբավարարվածությունը և հակաճառեց.

— Ձեր արածն արդեն իսկ նշանակալից է։ Ձեր հոդվածները օգնում են արտասահմանում մարդկանց խիղճն արթնացնելուն։ Ավելին, ձեր հաղորդած տեղեկությունների շնորհիվ մենք կարողանում ենք հայտնաբերել որբերին։ Ի դեպ, ես տեղեկություններ ունեմ Նաիրիի՝ այն աղջկա մասին, որին դուք հանդիպել էիք Ադանայում։ Նա այժմ Բեյրութում է ապրում։

Ջնայած անցած ամիսներին, Վարդանը պարզորոշ տեսավ փոքրիկ մուրացկանին, որը կանգնած էր ճամփեզրին։ Ինքը հոդված կգրի նրա մասին և նրա միջոցով կխոսի բոլոր որբերի մասին։

Նրանք հասան մինչև սանդուղքը և դանդաղ քայլերով վերադարձան խորանի մոտ, ուր Արուսյակը հագցնում էր փոքրերին։

— Ի՞նչ նորություններ կան պատերազմից, պարոն քահանա։

— Արդեն երկու ամիս է՝ ոչ մի նորություն չկա։ Ինչպիսի աղետ մարդկության համար։ Սակայն դեռ ամեն ինչ կորած չէ։ Մենք նոր աշխարհ կկառուցենք։ Ավելի շուտ՝ սրանք։

Նա ցույց տվեց երեխաներին։ Վարդանը պատասխանեց.

— Թող Աստված օրհնի ձեզ այն ամենի համար, ինչ դուք անում եք մեր ժողովրդի համար։

— Աստծու սպասավորի իմ պարտքն է դա, պարոն Պալյան, ես ընդամենը իմ պարտքն եմ կատարում։

—— Մենք պատրաստ ենք,— հայտարարեց Արուսյակը, փոքրերին

նրանց ընդառաջ բերելով։

— Ինչ մեծ սիրտ ունի այս կինը,— շշնջաց միսիոները։

— Իսկապես...

Քարանձավի մուտքի մոտ նրանց էր սպասում ծածկած մի սայլ, որին երկու ձի էին լծված։ Արամը, ավանակի հետ, կանգնած էր սայլի կողքին։ Ավանակը փալանված և բարձված էր։ Հուզված երեխաները հրաժեշտ տվեցին բոլորին, հատկապես Արամին, և սայլի մեջ նստելով, ծածկվեցին այծի մորթիներով և սայլի մեջ եղած գորգերով։ Նրանք վախով էին գնում դեպի անհայտություն՝ իրենց հետևում թողնելով այն մարդկանց, ովքեր իրենց սիրում էին։

— Դուք միայնակ չեք,— ասաց Վարդանը։— Հետագայում դուք միմյանց համար քույրեր և եղբայրներ կլինեք։

Նա մտածում էր Տեր Գևորգի խոսքերի մասին. «Մենք խաշնարած շներ ենք»։ Իր ճանապարհն ընտրված էր։ Մինչ պատերազմի ավարտը իր կյանքը լինելու էր այնպիսին, ինչպիսին եղել էր նախորդ տարի՝ շրջիկ երաժշտի կյանք։ Գրել, այո՛, սակայն ավելի շուտ օգնության ձեռք մեկնել փոքրիկ Թովմասներին և Նաիրիներին։

Սայլը կիսաշրջան կատարեց դեպի արևմուտք շարժվելու համար։ Մեթյուզ քահանան վերջին անգամ նրանց ձեռքով արեց։ Արցունքն աչքերին, Արուսյակը բղավեց երեխաների հետևից.

— Դուք բոլորդ երջանիկ կլինեք։

Վարդանը ձեռքն անցկացրեց նրա ուսով և թեթևակիորեն թափ տվեց.

— Քո շնորհիվ, Արուսյակ։ Եվ Արամի շնորհիվ, այս երիտասարդի, որը պատվով է կրում իր նախնիների անունը։

Տղայի դեմքը փայլեց հպարտությունից, և նա շոյեց իր դաշույնի պատյանը։

Երեխաները ձեռքով արեցին քահանայի սայլից, հետո այն անհայտացավ բլրի հետևում։

— Տուն վերադառնանք,— ասաց Արուսյակը հուզված։

Արամն ավանակի հետ առաջ անցավ, իսկ Վարդանն ու Արուսյակը, գրկախառնված, հետևեցին նրան։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 14

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 12:47-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

1917 թ. մարտ ամսին բրիտանական էքսպեդիցիոն զորաբանակը, գեներալ Մոդի հրամանատարությամբ, շարժվեց Տիգրիսի հոսանքն ի վեր, հետ մղեց օսմանյան զորքը, գրավեց Բաղդադը և միացավ ռուսական կասպյան բանակին, որը գրավել էր Պարսկաստանի հյուսիսը։

Միասնական պլանով նախատեսվում էր շարժվել դեպի Անատոլիայի հարավը, որը պետք է ուղեկցվեր ռուսական զորքի հարձակումով Սվասի ուղղությամբ։ Միաժամանակ ցարական Սևծովյան նավատորմիղը շարժվում էր դեպի Բոսֆոր Կոստանդնուպոլիսը գրավելու։ Սակայն իրադարձությունները այլ կերպ զարգացան։ Ռուսաստանում հեղափոխություն տեղի ունեցավ, և Նիկոլայ Երկրորդը հրաժարվեց գահից։ Ռուսական զորքը, որը լավ դիրքեր էր գրավել ամենուր, կազմալուծվեց։ Զորքը չէր ենթարկվում սպաներին, զինվորները զանգվածաբար դասալքում էին տուն վերադառնալու համար։ Արևմտյան Հայաստանը, որը նոր էր ազատագրվել, լքվեց իր պաշտպանների կողմից։

Ռըզա բեյը տագնապով էր հետևում այդ իրադարձություններին, ամեն օր կապվում էր շրջանի ռազմական պարետի գլխավոր շտաբի հետ նորություններ իմանալու համար։ Եթե ռուսական բանակի կազմալուծումը Կովկասյան ճակատում նրան հանգստացնում էր, ապա բրիտանացիների ներկայությունը Բաղդադում ծայր աստիճան մտահոգում էր։ Արաբների ապստամբության դեպքում Սիրիայում և Պաղեստինում տեղակայված օսմանյան զորքը կբարոյալքվեր և անգլիացիները կարող էին հարձակում ձեռնարկել։ Կար նաև Ալեքսանդրետի ծոցում դաշնակիցների ափ իջնելու վտանգը, որը հազիվ մեկ օրվա ճանապարհի վրա էր գտնվում Այնթապից։ Իսկ երբ ապրիլին Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեցին կենտրոնական կայսրություններին և Օսմանյան կայսրությանը, Ռըզա բեյը հոգու խորքում հասկացավ, որ դա ժամանակի հարց էր. մի քանի ամիս, ամենաշատը մեկ տարի, և երկիրը պարտություն էր կրելու։

Կոստանդնուպոլսից եկող հրամանները պահանջում էին խոչընդոտել միսիոներների գործունեությանը և փակել նրանց մանկատները։ Ռըզա

բեյը վճռել էր չկատարել նրանց հրամանները, հասկանալով, որ երիտթուրքերի դարաշրջանն ավարտվում էր։ Ուստի ինքը պետք է խնայեր օտարերկրացիներին՝ ապագա հաղթողներին, և միևնույն ժամանակ Կոստանդնուպոլսի իր ղեկավարները պետք է կարծեին, որ իր պատրաստակամությունը չէր նվազել, քանի որ Ռըզա բեյն ուզում էր պահպանել իր պաշտոնը մինչև պատերազմի ավարտը։ Երբ դաշնակիցները կտիրանային շրջանին, նրանք կարիք կունենային բարձրաստիճան պաշտոնյաների, այդ շրջանը կառավարելու համար։

* * *

Տաղավարը ծածկող խաղողի վազերի հովանու տակ Մարոն օրորում էր Նուրհանին, որն ինչպես միշտ քնած էր կուրծք ուտելուց հետո։ Մատների ծայրերով նա սրբում էր քրտինքը նրա խիտ շագանակագույն մազերով ծածկված գլխից։ Իր վեց ամսական որդու կլորիկ և վարդագույն դեմքի մեջ հրեշտակային բան կար, և երբ Մարոն մտածեց, որ նա կարող էր չլինել մի թուրմի պատճառով, ներքին դող զգաց։ Նա համբուրեց նրա այտը, և երեխան, իր սովորության համաձայն, արթնանալով ուրախ գղգղաց։ Ընտանիքի բոլոր անդամները, Բույուկ խանումը ներառյալ, որն ընկրկել էր այդ նոր թոռան հմայքի առջև, համարում էին, որ Նուրհանը հազվադեպ հանդիպող ծիծաղկոտ երեխաներից էր։ Նա երբեք չէր լալիս, միայն երբեմն հրամայական ճիչեր էր արձակում հասկացնելու համար, որ քաղցած էր։ Նա շատ ժիր և կենսունակ երեխա էր։

Պիրի խոջայի դասին մզկիթ շտապող երեխաների ձայները լսելով, Նուրհանը գլուխը դարձրեց դեպի պարտեզը։ Թովմասը, որն անջատվել էր խմբից, մոտեցավ մորը տաղավարում։ Թովմասին տեսնելով՝ Նուրհանը սկսեց թռչկոտել և գղգղալ։ Մարոն ասաց.

— Տես, ինչպես է ուրախանում եղբայրդ քեզ տեսնելով։

Թովմասը թեթևակիորեն ժպտաց ծամածռության նմանվող ժպիտով և մատը մեկնեց Նուրհանին, որն այն բռնեց իր թաթիկով։ Թովմասը տանել չէր կարողանում, երբ Մարոն այդ երեխային անվանում էր «եղբայրդ»։

— Ուզո՞ւմ ես գրկել,— հարցրեց Մարոն՝ մատների ծայրերով հարդարելով Թովմասի մազերը։

Թովմասը ժխտական շարժում արեց և հեռացավ սեղանից պիստակ վերցնելու համար։

Քանի որ Թովմասը ոչինչ ցույց չէր տալիս, Մարոն չէր գուշակում, թե ինչ ողբերգություն էր ապրում որդին ամիսներ շարունակ։ Այն հազվադեպ դեպքերը, երբ նա խռովկանություն կամ անհամբերություն էր ցուցաբերում, Մարոն վերագրում էր խանդին և համարում էր, որ դա մոր սրտում իր տեղը կորցնելու բնական վախ էր, որ զգում էր իր առաջնեկը։ Նա փորձում էր նրան հանգստացնել որքան իր խոսքերով,

նույնքան իր վարքագծով, և համոզել, որ նա պահպանել էր իր առաջնայնությունը։

Թովմասին մոր կողմից վերագրվող խանդը գոյություն չուներ, քանի որ այն հետին պլան էր մղել մեկ այլ, ավելի հզոր զգացմունք։ Նուրհանի գոյությունը նրան մշտապես հիշեցնում էր, որ Մարոն դավաճանել էր Վարդանին։ Մայրը դադարել էր սպասել իր հորը, փաստորեն լքել էր նրան, ինչպես մի օր կարող էր լքել նաև իրեն։ Նա դարձել էր Ռըզա բեյի կինը, և պահեր էին լինում, երբ ինքն ատում էր մորը։ Կամ էլ փորձում էր նրան ատել։ Դա ավելի շուտ բարկություն էր նրա դեմ, սրտնեղություն, որը միահյուսվում էր նրա հանդեպ սիրո հետ։ Չկարողանալով զանազանել այս զգացմունքները, նա շփոթված վիճակում էր։ Նա ամաչում էր։ Ամաչում էր մոր դեմ ուղղված իր չար մտքերի համար, ամաչում էր մորից։ Նա կուզենար ներել մորը և ներում ստանալ։ Երբեմն այդ ամենը խեղդում էր նրան, և նա կուզենար բղավել այդ ամենը Մարոյի երեսին, սակայն չէր կարողանում արտաբերել բառերը։ Այդ բառերը շատ ծանր էին, շատ ցավագին։ Նա չէր կարող հանդուրժել, որ մայրը դադարեր իրեն սիրելուց։

Ռըզա բեյն ու Սաֆիյեն գալիս էին դեպի տաղավարը։ Թովմասը դուրս եկավ մյուս կողմից և գնաց դեպի ջրավազանը, սակայն կանգ առավ քիչ հեռու մի թփի հետևում։

— Տես, ինչպես է Նուրհանը մեզ աչքերով հետևում,— հպարտությամբ ասաց Ռըզա բեյը իր առաջին կնոջը, երբ նրանք անցնում էին խաղողի թփերի տակով։— Այդ հետաքրքրասիրությունը խելացիության նշան է։

Սաֆիյեն բռնեց երեխայի ձեռքը, որը ջանք գործադրելով կանգնեց։ Կինը հիացավ.

— Ինչ ուժեղ է։ Նա շատ առնական տղամարդ կդառնա։

Մարոն հակաճառեց ծիծաղելով.

— Թույլ տուր վայելեմ նրա այս քաղցր տարիքը, այն այնքան շուտ է անցնում։

Սաֆիյեն համաձայնեց գլխի շարժումով։ Այն ժամանակը, երբ նրա երեխաները դեռևս խանձարուրում էին, շատ հեռու էր։ Նրան թվում էր, որ ինքը բավարար չափով չէր վայելել այդ ժամանակը, որ անգիտակցաբար բաց էր թողել մտերմության այդ առաջին ամիսները, որոնք հետագայում անհնարին էր կյանքի կոչել։ Նա թաքուն մի նախանձ էր զգում, երբ տեսնում էր Մարոյին որդու հետ, և այդ զգացումը կենդանացնում էր նրա հոգում նորից հղիանալու ցանկությունը։ Մի՞թե ինքը չափազանց ծեր էր երեխա ունենալու համար։ Սակայն նա զգում էր, որ իր մարմինը լի էր կյանքով, բավականաչափ լի էր կյանքով, որպեսզի դրա մի մասը պարգևեր փոքրիկ մի էակի։

Ռըզա բեյը գրկեց Նուրհանին և նրան թռցրեց, հետո ծիծաղեցրեց նրան վիզն իր բեղերով խուտուտ տալով։

— Որդիս,— հարցրեց նա գաղտնապահ տոնով, սակայն բավականաչափ բարձրաձայն, որպեսզի երկու կանայք լսեին նրա խոսքերը,- կարողացե՞լ ես համոզել մորդ, որ նա ինձ հետ ամուսնանա։

Այս խոսքերն արտասանելիս Ռըզա բեյը սևեռուն հայացքով նայեց Մարոյին, որը դադարեց ժպտալ և ոչ արեց գլխով։

Թփի հետևում թաքնված Թովմասը ափի մեջ սեղմել էր իր հոր կնիքի պատյանը։ Վրդովված՝ նա տուն մտավ, մյուս մուտքից դուրս եկավ բակ և վազեց դեպի ախոռ։ Ատամները սեղմած, որպեսզի ախոռապանները չնկատեին իր վիշտը, նա թամբեց իր ձին։ Նրա շարժումները կտրուկ էին, և դրանից կենդանին նյարդայնացավ։ Ձիուն դուրս բերելով, նա նստեց թամբին և քառատրոփ սլացավ պիստակի ծառերի շարքերի միջով։ Նա ընթացքը դանդաղեցրեց միայն ձիթենիների այգուն հասնելով, որն ավելի բարձր էր տեղադրված, քան Ինջիրլի գետի հովիտը։ Նա իջավ լանջով, անցավ Ռըզա բեյի դաշտերով, շրջանցեց օդանավակայանը և հասավ գետին։ Դա կալվածքի սահմանն էր։

Նա լուռ լալիս էր։ Նա վախեցել էր իր արարքից և մի պահ մտածեց վերադառնալու մասին։ Պետք չէր վերադառնալ։ Իր մայրը կպատժվեր... Նա կտանջվեր և կփնտրեր իրեն։ Ինքը նրան կասեր, որ ուզում էր հոր մոտ գնալ, իսկ նա խղճի խայթ կզգար և միգուցե կհասկանար այն, ինչ ինքը չէր կարողանում ասել։

Նա անցավ ծանծաղած գետը։ Մյուս ափը ծածկված էր այգիներով, հետո վեր էին խոյանում քարքարոտ լեռները։ Լեռներից այն կողմ անապատն էր։

Մարոն կարծում էր, որ Թովմասը Ռըզա բեյի երեխաների հետ էր, և իրեն հաշիվ տվեց նրա բացակայության մասին միայն ճաշի ժամանակ։ Նրան փնտրեցին տանը և շրջակայքում, մինչև ախոռապաններից մեկից իմացան, որ նա ձիով էր գնացել։ Առաջին անգամ էր, որ Թովմասը տնից գնացել էր առանց մորից թույլտվություն խնդրելու, և այդ հանգամանքը շատ անհանգստացրեց Մարոյին։

— Մի անհանգստացիր,— ասաց Ռըզա բեյը հանգստացնող ձայնով։— Թովմասը հմուտ է ձիավարության մեջ, կալվածքն էլ լավ գիտի։ Մութն ընկնելուն պես տուն կվերադառնա։

Նրանք կանգնած էին տան շեմին։ Մարոն երկնքին նայեց, ուր կարմրին էին տալիս ամպերը։ Շուտով մութն ընկնելու էր։

— Դա նրան նման չէ,— հառաչեց նա։— Արդյոք, ի՞նչ է պատահել։

Մարոյի ձայնում տագնապ էր զգացվում։ Ռըզան նրա ձեռքին հպվեց.

— Մենք նրան կգտնենք։ Եվ ես նրա ականջները կքաշեմ, այդ լակոտի։

— Ես ձեզ հետ եմ գալիս,— հայտարարեց Մարոն։

— Իմաստ չունի,— պատասխանեց Ռըզա բեյը վճռական տոնով։— Տանը մնա Նուրհանի հետ։

Ալթանն ու Քենանը, որոնք բանվորներին էին հարցուփորձ արել, բարձրանում էին սանդուղքով: Մեծը ձեռքի շարժումով հորը հասկացրեց, որ իրենք ոչ մի արդյունքի չէին հասել: Քենանը, որին շատ էր հուզել իր լավագույն ընկերոջ անհետանալը, հորն ասաց.

— Կարո՞ղ եմ ձեզ հետ գալ:

Ռըզա բեյը մերժեց.

— Ոչ, շուտով մութը կընկնի, և դու կարող ես մոլորվել: Մի անհետացածը մեզ լրիվ բավական է: Թովմասը քեզ որևէ բան ասե՞լ էր իր մտադրությունների մասին:

— Ոչ, հայրիկ:

— Դուք շատ մտերիմ եք... Պատկերացում ունե՞ս, թե ուր կարող էր գնալ:

Քենանը մտածեց այն վայրերի մասին, ուր իրենք սիրում էին խաղալ և որոնք շատ մոտ էին այնտեղ ձիով գնալու համար: Նա բացասական պատասխան տվեց: Նայելով Ալթանին, որը տուն էր մտնում, հայրը ասաց.

— Ձիերին թամբել տուր և մարդկանց զգուշացրու, որ դուրս գալու պատրաստվեն: Դու էլ կգաս:

Ճաշը բաց թողնելու հեռանկարից դժգոհ մնալով, Ալթանը դժկամությամբ գնաց դեպի ախոռը: Այս Թովմասը պետք է միշտ իր կյանքը թունավորեր:

Ռըզան Մարոյին տուն ուղեկցեց և պատվիրեց հանգիստ մնալ:

— Մենք նրան շատ շուտ կգտնենք:

Մարոն դողում էր և ասաց խուլ ձայնով.

— Ես զգում եմ, որ նրան ինչ-որ բան է պատահել:

Ռըզան նրան զգուշորեն հանդիմանեց.

— Հիմարություններ մի ասա, դու մեր գլխին դժբախտություն կբերես:

— Հետ բերեք նրան, Ռըզա բեյ,— աղերսեց նա՝ կառչելով նրա թևից:— Հետ բերեք նրան:

Ռըզա բեյն իր մարդկանցից յուրաքանչյուրին ցույց տվեց այն ուղղությունը, որտեղ պետք է որոնեին, և նրանք բաժանվեցին: Ալթանը պետք է հետազոտեր օդանավակայանի շրջակայքը: Տարածքը հսկող ոստիկանները նրան հարգանքով ընդունեցին: Նրանք ոչ ձի հեծած, ոչ էլ հետիոտն երեխա չէին տեսել: Ալթանը նրանց հետ մի բաժակ օղի խմեց և մի քանի ծխախոտ ծխեց:

Ավելի շատ հոր վախից, քան խղճի դրդմամբ, տասնհինգ տարեկան պատանին շարժվեց գետի երկայնքով: Նա վճռել էր ոստիկանների տեսադաշտից հեռանալուն պես մի քիչ քնել և ձեռնունայն վերադառնալ

կալվածք։ Մայր մտնող արևի թեք ճառագայթների տակ խճի վրա ձիու սմբակների հետքեր էին երևում, որոնք իջնում էին դեպի ջուրը։ Տղան անցավ գետը և մյուս ափին դարձյալ հետքեր հայտնաբերեց։ Հետքերը դեպի սարերն էին տանում և նա առաջ էր շարժվում՝ ջանալով դրանք տրորել։ Ավելի հեռու, քարերի մեջ հետքերը կորչում էին։ Ալթանը, մայր մտնող արևից կարմրած ժայռերով, մագլցեց մինչև գագաթը։ Նրա դիմաց սփռված անապատը թաղված էր ադամամութի մեջ, իսկ հորիզոնի մոտ երկինքը վառ կապույտ երանգ էր ստացել։ Այդ ապուշ Թովմասը գնացել էր դեպի անապատ և այնտեղ կորչելու էր։ Նա այնտեղ էլ կմնար։ Ալթանը մի բոլ ծիծաղեց կալվածք վերադառնալուց առաջ։ Նա վճռել էր իր հայտնագործության մասին ոչ մեկին չասել։

Մարոն, չկարողանալով իր սենյակում մնալ,Նուրհանին հանձնել էր էմինեի խնամքին, իսկ ինքը հետ ու առաջ էր քայլում նախասրահում։ Սաֆիյեն ամեն ինչ արել էր նրան հանգստացնելու համար և, սպառելով փաստարկները, լուռ նրան էր նայում։ Պիրի խոջան արդեն վաղուց ազդարարել էր երեկոյան աղոթքի ժամը, երբ ձիավորները հետ եկան։ Նրանց ջանքերն ապարդյուն էին անցել։ Մարոն սկսեց հեկեկալ։ Սաֆիյեն գրկեց նրան և ինքն էլ լաց եղավ։

— Լա՛վ, լա՛վ, կանայք,— ասաց Ռըզա բեյը կենսախինդ տեսքով,— մի բարդացրեք իրավիճակը։

Հոգու խորքում նա վստահ չէր, սակայն կանանց հանգստացնելու համար թվարկեց չհուսահատվելու բոլոր պատճառները։

— Եթե Թովմասին մի բան պատահած լիներ, նրա ձին տուն կվերադառնար։ Նա պարզապես մոլորվել է։ Բաց երկնքի տակ անցկացրած գիշերը վտանգավոր չէ ութ տարեկան պինդ և ճարպիկ տղայի համար։ Ի դեպ, նա գուցե և օթևան է խնդրել որևէ գյուղացուց, որը նրան տուն կբերի առավոտյան։ Եվ բերողը լավ պարգևի կարժանանա։

— Վստա՞հ եք,— հարցրեց Սաֆիյեն։

— Իհարկե։

Մարոն հարցրեց.

— Դուք որոնումները կշարունակե՞ք լույսը բացվելուց հետո, Ռըզա բեյ։

— Այո, աղունիկս։ Գյուղացիները կփնտրեն կալվածքում, իսկ հեծյալները շրջակայքում։ Ես ոստիկանության օգնությունը կխնդրեմ։ Գավառապետի որդին շատ շուտ կհայտնաբերվի։

Ռըզայի վստահությունը մի քիչ հանգստացրեց Մարոյին, որը թույլտվություն խնդրեց իր սենյակը հեռանալու։ Երբ Ռըզան մենակ մնաց իր առաջին կնոջ հետ, ասաց.

— Նրան մի քանի կաթիլ ափիոն տուր, որպեսզի կարողանա քնել։

— Ինձ թվում է, որ դուք ավելի անհանգստացած եք, քան ցույց եք տալիս։ Ես չե՞մ սխալվում։

— Դու ինձ շատ լավ ես ճանաչում, իմ քնքուշ Սաֆիյե։ Ես այս փախուստից ոչ մի լավ բան չեմ սպասում։ Սակայն թող սա մեր մեջ մնա։ Էմինեին կուղարկես մոտս, որ սուրճի թուրմի մեջ կարդա։

Չնայած ափիոնի լուծույթին, Մարոն չկարողացավ քնել։ Նուրհանը բռունցքները սեղմած քնած էր մոր անկողնում։ Երեխային չխանգարելու և, հատկապես, իր առաջնեկին իրեն ավելի մոտ զգալու համար, Մարոն պառկեց Թովմասի մահճակալին։ Ի՞նչ էր նրա մտքով անցել։ Այս արարքի ոչ մի նախանշան չկար։ Մարոն հիշում էր վերջին օրերը, նույնիսկ վերջին ամիսները և չէր գտնում այնպիսի մի իրադարձություն, որը իրեն ճիշտ ուղու վրա դուրս բերեր։ Նա մահճակալի մոտի սեղանից վերցրեց Արմենի գլխարկը և մեքենայաբար թափ տվեց։ Տեղահանությունից գրեթե երկու տարի էր անցել և այնպիսի տպավորություն էր ստեղծվել, որ Թովմասը մոռացել էր այդ ողբերգական իրադարձությունը։ Դրա հետևանքները նրա վարքագծում չէին զգացվում։ Հետևաբար նրա փախուստը դրա հետ կապված չէր։ Ինչ վերաբերում էր այս տունը լքելու ցանկությանը, ապա Մարոն չէր պատկերացնում, թե ինչպես իր որդին կարող էր այն պահպանել, քանի որ նա ոչինչ չգիտեր այն միակ վայրի՝ Կոստանդնուպոլսի մասին, ուր իրենք կարող էին գնալ։ Իսկ Մարոն արդեն վաղուց ոչինչ չէր ասում Թովմասին այդ ծրագրի մասին նրա հոգեկան անդորրը չխաթարելու համար։ Եթե նույնիսկ ինքը շարունակում էր փայփայել այդ հույսը, ապա դա իր գաղտնիքն էր, և նա չգիտեր, թե ինչպես պետք է այն իրագործեր հիմա, երբ կար Նուրհանը։ Եղբոր նկատմամբ խանդի զգացումը, եթե այն կար, բավարար չէր այդպիսի արարքի համար։ Ոչ, նա երջանիկ էր այս տանը իր ընկերները Էմելի ու Արիֆի, իր ձիու և խաղալիքների հետ։

Մարոն նայեց շուրջը։ Նրա հայացքը կանգ առավ լուսամուտի գոգին դրված փայտե օդանավի, Միջերկրականի ափից Ռըզայի բերած խխունջների, արճճե զինվորների վրա։ Երևի Թովմասը հոգնել էր Վարդանին սպասելուց և գնացել էր նրան ընդառաջ։ Սակայն նա չափից ավելի ողջամիտ էր այդպիսի բան անելու համար։ Մարոյի գլխում ծագեց այն միտքը, որ ինքը մեղքի իր բաժինն ուներ այդ արարքի մեջ, սակայն անմիջապես վանեց այդ միտքը և դուրս եկավ պատշգամբ։ Գիշերը մեղմ էր և լի էր միջատների ձայներով։ Հենց կալվածքի վերևում՝ երկնքում մի աստղ էր փայլում, կարծես ուղեցույց լիներ, որը պետք է օգներ Թովմասին հետդարձի ճանապարհը գտներու։

Որտե՞ղ էր նա։ Մարոն մտովի զրուցում էր նրա հետ, հաստատում էր իր սերը, աղաչում էր վերադառնալ, կամ, ավելի շուտ, մնալ այնտեղ, ուր որ գտնվում էր, և սպասել Ռըզա բեյին, որը նրան հետ կբերեր։ Նրան չէին պատժի։ Հակառակը, տոնախմբություն կկազմակերպեին նրա վերադարձի կապակցությամբ, և Մարոն զգալ կտար, թե որքան էր նրան սիրում։ Միգուցե ինքն անուշադրության էր մատնել նրան։ Միգուցե նա հասկացել էր իր և Ռըզայի հարաբերությունների էությունը։ Մինչև լուսաբաց Մարոն ինքն իրեն նույն հարցերը տվեց, խղճի խայթը

բորբոքեց և խթանեց իր վախը։

Լույսը բացվելուն պես Մարոն հույսով լցվեց և գնաց Ռըզա բեյի դուռը թակելու։ Ոչ մի պատասխան։ Նա անկասկած ամբողջ գիշերն անց էր կացրել Լեյլայի մոտ, ինչպես վերջերս հաճախ էր անում։ Մարոն իջավ խոհանոց, ուր տեղեկացավ, որ տերը գրասենյակում էր և խնդրել էր, որ իրեն այնտեղ նախաճաշ մատուցեին։ Մարոն սկուտեղը տարավ գրասենյակ։ Գրասենյակի դռան մոտ Աբդուլան, աթոռին նստած, դաշույնով եղունգներն էր մաքրում։ Տղան շտապեց ոտքի կանգնել և Մարոյի գալու մասին զեկուցելուց առաջ ասաց Մարոյին.

— Երազ եմ տեսել, որ ես եմ գտել ձեր որդուն, խանում։

Մարոն իրեն ստիպեց ժպտալ.

— Թող քո երազը բարի նշան լինի, Աբդուլա։

Կանխատեսելով, որ այդ օրը ինքը չէր կարողանալու աշխատել, Ռըզա բեյը մի քանի անհապաղ գործեր էր անում։ Նա ոտքի կանգնեց Մարոյին համբուրելու համար և հարցրեց, չնայած նրա աչքերի տակի կապտուկները և դրանց կարմրությունը իր հարցի պատասխանն էին.

— Գոնե մի քիչ քնե՞լ ես։

Մարոն գլուխը թափ տվեց։

— Ես արթնացրի ոստիկանապետին,— ասաց նա անհոգ տոնով,— սակայն համոզված չեմ, որ մենք նրա կարիքը կունենանք։

Տեսնելով, որ չէր կարողանալու Մարոյին ուրախացնել, նա շարունակեց.

— Ամեն դեպքում ոստիկանության բոլոր պահակակետերը կնախազգուշացվեն հեռագրատան միջոցով, և ոստիկանները կսկսեն փնտրել մեր որդուն։ Հենց հիմա ես կզանգահարեմ փաշային, որպեսզի նա ինձ տրամադրի զինվորների մի գունդ։

— Ես գնահատում եմ այն ամենը, ինչ դուք անում եք, Ռըզա բեյ,— ասաց Մարոն՝ սուրճը մատուցելով։

— Իմացիր, Մարո, որ ես ջանք չեմ խնայի։ Թովմասն իմ որդին է, ինչպես դու իմ կինն ես, և ես ուզում եմ, որ դուք երկուսդ էլ երջանիկ լինեք այս տանը, որը ձեր տունն է։

Մարոն աչքերն իջեցրեց և չհակաճառեց։

Որոնումները, որոնք արդյունք չէին տվել առաջին օրը, շարունակվեցին հաջորդ օրերի ընթացքում։ Երեխային փնտրում էին շրջանի բոլոր գյուղերում և քաղաքներում։ Ոչ ոք չէր տեսել նրան, իսկ գավառապետի խոստացած մեծ պարգևատրությունը ընդամենը առաջացրեց արժեք չունեցող տեղեկությունների հոսք։ Իր ազդեցությունն օգտագործելով, Ռըզա բեյը հասավ նրան, որ հետաքննություն տարվեց նաև հարևան գավառներում, Սիրիայի

հյուսիսային բնակավայրերում և ծովափին: Սակայն քաղաքներում և գյուղերում այնքան լքված երեխաներ կային, այնքան երեխաներ կային որբանոցներում, որ տղա երեխա գտնելու հնարավորությունները զրոյի էին հավասարվում: Ոչ ոք չէր հասկանում, թե ինչո՞ւ Թովմասը չէր ներկայանում ոստիկանատուն կամ զինվորական պահակակետ, ինչո՞ւ չէր ներկայանում որպես Այնթապի գավառապետի որդի: Այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ նա թաքնվում էր:

Ժամանակն անցնելու հետ Մարոյի տագնապը վերածվում էր անհուն հուսահատության և միայն Նուրհանի գոյությունը, նրան խնամելու անհրաժեշտությունը թույլ չէին տալիս Մարոյին բարոյալքվել: Այն միտքը, որ Թովմասը մենակ, ութ տարեկան հասակում հայտնվել էր պատերազմող երկրում, ուր մոլեգնում էին համաճարակները, սովն ու ատելությանը, նրան անտանելի տառապանք էր պատճառում, և նա անընդհատ աղոթում էր, որպեսզի որևէ մի գթասիրտ էակ նրան օգության հասներ: Շաբաթների ընթացքում նրա հույսը նվազում էր, և աղոթքը դարձել էր Մարոյի միակ մխիթարանքը, միակ միջոցը դիմանալու մեղքի դաժան զգացողությանը, որը նրան այլևս չէր լքում: Այժմ նա Թովմասի փախուստի միայն մեկ պատճառ էր տեսնում, այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեին իր և Ռըզա բեյի միջև: Երեխան կարծել էր, որ ինքն այլևս չէր սիրում Վարդանին, որ ինքը նոր կյանք էր սկսել մեկ այլ տղամարդու հետ: Իսկ ինչո՞ւ նա պետք է այլ կերպ մտածեր: Մարոն իրեն մեղադրում էր, որ չէր կանխատեսել որդու նման արձագանքը և անհրաժեշտ չէր համարել նրան բացատրել ամեն ինչ: Դա իր մեղքն էր:

* * *

Տպագիր թերթիկները դողում էին Ռըզա բեյի ձեռքում: Նա երկրորդ անգամ էր կարդում: Հոդվածը, որը հրատարակվել էր Միացյալ Նահանգներում և թարգմանվել էր գերմանական հետախուզական ծառայության կողմից, կրում էր «Նաիրի» վերնագիրը: Այն ստորագրված էր. «Վարդլան Պալյան՝ Անատոլիայից»:

«Իր փոքրիկ ձեռքը մեկնած, ութ տարեկան մի հայուհի կանգնած մուրում էր Անատոլիայի Ադանա քաղաքը տանող ճանապարհի եզրին: Հյուծված, կեղտոտ, ցնցոտիներով պատված Նաիրին աշխարհին է նայում խամրած աչքերով, ուր սարսափը դուրս է մղել կյանքի փայլը: Նա չի հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ այն պահից ի վեր, երբ ոստիկանները սպանեցին իր ընտանիքի բոլոր անդամներին: Նա գիտի միայն, որ ինքն այլևս չպետք է խոսի իր մայրենի լեզվով, որ ինքը պետք է թաքցնի իր հայուհի լինելը, պետք է թաքցնի նույնիսկ իր անունը:

Նա չի հասկանում, որ իր հարազատները զոհ են գնացել պանթուրանիզմի գաղափարին: Իսկ ո՞վ կկարողանար դա հասկանալ: Կարո՞ղ է արդյոք քաղաքակիրթ մարդն ընդունել, որ ռասիստական գաղափարախոսությունը պահանջում է հարյուր հազարավոր

անմեղների սպանությունը։

Նաիրին չգիտի «Իթթիհատ» բառը, ինչպես նաև Թալեաթ, Էնվեր, Ջեմալ անունները, որոնք սակայն պատասխանատու են իր դժբախտությունների համար։ Նա տեսել է միայն ոստիկանների դեմքերը, որոնք կատարում էին Կոստանդնուպոլսից երկիրը ղեկավարողների անմարդկային հրամանները։

Միգուցե նա տեսե՞լ էր, թե ինչպես է անցնում Գանի բեյի՝ Ներքին գործերի նախարարության այդ բարձրաստիճան պաշտոնյայի, կառքը, որը եկել էր Անատոլիա հայերի բնաջնջումը կազմակերպելու համար։ Այդ միջոցն է ընտրել կառավարությունը «հայկական հարցը» մեկընդմիշտ լուծելու համար։

Երեխան անտեղյակ է քաղաքական խնդիրներից, նրա գերխնդիրն է վերապրել ևս մեկ օր այնպես, ինչպես նա վերապրել է իր հարազատների մահվանից հետո, ինչպես շաբաթներ շարունակ քայլել է տափաստաններով, ինչպես նա վերապրում է արդեն երկու տարի աշխատելով լուսաբացից մինչև գիշեր գյուղացիների մոտ, որոնք նրան քշում են բերքահավաքն ավարտվելուց հետո։

Այդքան փորձությունները պետք է որ սպառեին նրա կենսունակությունը, սակայն աղջնակի սրտում դեռ վառվում է թույլ կրակը և այն կթեժանա, եթե նրան բաժին ընկնի մի քիչ սեր։ Եվ հրաշքը տեղի ունեցավ։ Օտար մի միսիոներ վերցրեց նրան իր հովանավորության տակ և այսօր, մանկատանը, նա վերստին բացահատում է «հույս» բառի իմաստը։

Սակայն Նաիրիի պես լքված երեխաները բազում են։ Եվ ողջ մնալու համար ստիպված կլինե՞ն նրանք արդյոք մոռանալ, որ իրենք հայ երեխաներ են։ Մի կտոր հաց ստանալու համար նրանց մեկնած ձեռքերը մեղադրանք են, որ նետված է Կոստանդնուպոլսի կառավարության հասցեին, դա մարտահրավեր է, որը նետված է մարդկային խղճին. Ի՞նչ եք դուք անում մեզ համար»։

Ռըզա բեյը ծալեց թերթիկները և բղավեց.

— Պետրի՛։

Աբդուլան մտավ և խոնարհվեց։

— Ես Պետրիին եմ կանչում,— ասաց գավառապետն անհամբեր։

— Նա քաղաք է գնացել, բեյ էֆենդի։

— Վերադառնալուն պես թող ինձ մոտ գա։ Ինձ կոնյակ տուր։

Շիշն ու բաժակները գտնվում էին ցածր պահարանում։

Պատանին զգալով, որ տերը բարկացած էր, հուզմունքից մի քիչ կոնյակ թափեց։ Ռըզա բեյը նստել էր լուսամուտի առջև, բազկաթոռին և չնկատեց ծառայի անշնորհքությունը։ Աբդուլան սկուտեղը մատով սրբեց, իսկ այնուհետև մատը լիզեց։

— Կարո՞ղ եմ հեռանալ, Ռըզա բեյ,— ասաց նա բաժակը մատուցելուց հետո։

Ռըզա բեյը ձեռքի շարժումով նրան ազատ արձակեց։ Նա ծխախոտ վառեց, որն անմիջապես հանգցրեց ջղային շարժումով։ Նորից այս Պալյանը։ Միշտ նա։ Այն, որ Միացյալ Նահանգներում տպագրված այս հոդվածը կարող էր որոշ իրարանցում առաջացնել մայրաքաղաքի կառավարական շրջաններում, Ռըզա բեյին չէր հուզում։ Սակայն հոդվածի բովանդակությունը նրան հուզում էր, քանի որ նա անտարբեր չէր այդ երեխայի ճակատագրի հանդեպ, քանի որ Թովմասը, որին նա անկեղծորեն սիրում էր, հավանաբար այդ երեխաների թվում էր։ Ահա վեց ամիս էր, ինչ իրենք լուր չունեին նրանից։ Մարոն հուսահատված էր, և դա անդրադառնում էր տան մթնոլորտի վրա, ուր յուրաքանչյուրը կարծես սգի մեջ լիներ, որը երբեք չէր ավարտվելու։

Եվ այդ դժվար պահին իրեն միայն այս անիծյալ Պալյանն էր պակասում։ Ո՞վ գիտի, միգուցե նա իմացե՞լ էր, թե որտեղ էր ապրում իր նախկին կինը։ Միգուցե նա հանդիպե՞լ էր Թովմասին և կազմակերպել նրա փախուստը Մարոյի հետևից գալուց առաջ։ Պալյանն անկասկած կեղծ ինքնության տակ էր հանդես գալիս։ Նա կարող էր լինել այն մուրացկանների ամբոխում, որն ամեն օր հավաքվում էր կալվածքի դարպասի առջև։ Նա կարող էր հայտնվել որպես բեռնակիր կամ բերքահավաքի համար վարձվող բանվոր։

Ռըզան խմեց կոնյակը, ինքն իրեն ասելով, որ արդեն զառանցում էր։ Ամեն դեպքում նա չէր կարող հանգիստ լինել։ Բոլշևիկները, որոնք իշխանության էին եկել Ռուսաստանում, խաղաղության բանակցություններ էին սկսել Օսմանյան կայսրության հետ, և դա կարող էր բերել պատերազմի ավարտին։ Այդ դեպքում Պալյանին ավելի հեշտ կլիներ հայտնաբերել իր կնոջն ու նրան հետ պահանջել։ Անկասկած, այդ վտանգը մեծ չէր, սակայն Ռըզան ուզում էր դրանից խուսափել։ Մարոն, նա այդ բանը հենց սկզբից էր զգում, իրեն չէր պատկանելու ամբողջությամբ, գուցե իր կրոնի և իր եվրոպական դաստիարակությա՞ն պատճառով, և օտար էր մնալու իր տանը։ Թովմասի փախուստից հետո, մխիթարանքի և ջերմության կարիք զգալով, նա ավելի էր մտերմացել Ռըզայի հետ, սակայն Ռըզան չգիտեր, թե ինչ դիրքորոշում կունենար Մարոն, եթե հայտնվեր նրա ամուսինը։ Ռըզան պետք է ազատվեր այդ մարդուց զինադադարից առաջ։

Երբ մի կես ժամ հետո Պետրին եկավ, Ռըզա բեյը նրա համար թարգմանեց հոդվածը։

— Տեսնո՞ւմ ես, նա չի մահացել, ինչպես դու կարծում էիր։

— Հետո ի՞նչ,— պատասխանեց Պետրին, որն այդ հարցին թեթևամտորեն էր վերաբերվում,— ո՞վ է նրա ստերին հավատալու։ Գանի բեյը պահանջե՞լ է նրան բռնել։

— Հարցը դրանում չէ։

— Այդ դեպքում ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք անհանգստանում։

Մի քանի վայրկյան Ռըզա բեյը նայում էր իր օգնականին և մտածում էր, թե արդյոք ինքը պե՞տք է նրան վստահեր իր գաղտնիքը։

— Նստիր,— ասաց նա՝ ցույց տալով իր դիմացի բազկաթոռը։

Այս համարյա բարեկամական տոնը, որին Պետրին սովոր չէր, զարմացրեց նրան, և նա գուշակեց, որ ինչ-որ լուրջ գործ կար, և մրմնջաց.

— Դուք գիտեք, որ ես անսահման նվիրված եմ ձեզ, Ռըզա բեյ։

— Վերցրու,— ասաց Ռըզա բեյը՝ ցույց տալով սեղանին դրված ծխախոտի տուփը։

Պետրին ծխախոտ վերցրեց, վառեց և սկսեց ծխել, քաղաքավարությունից ծուխը մի կողմ փչելով։ Վերջապես Ռըզն խոսեց մտերմիկ տոնով.

— Այս մարդու գոյությունն ինձ համբերությունից հանում է, քանի որ նա Մարոյի ամուսինն է։ Ես ուզում եմ վերջնականապես նրանից ազատվել։

Նրա օգնականի դեմքը պայծառացավ.

— Այդ դեպքում Մարոյին որպես խայծ օգտագործենք, նրա ամուսնուն ծուղակը գցելու համար

Ռըզա բեյը նրա վրա արհամարհական հայացք նետեց, Պետրին կարմրեց։ Ամենայն հավանականությամբ իր առաջարկը դուր չէր եկել տիրոջը։ Նա երևի վախենում էր սիրուհու կյանքը վտանգել։ Գուշակելով Պետրիի մտքերը, Ռըզան բացատրեց.

— Մարոն չպետք է իմանա, որ նա ողջ է։

— Ա՛ ... Այդ դեպքում ի՞նչ կարող ենք անել։

Բարկանալով, որ Պետրին հնարամտություն չէր ցուցաբերում, Ռըզա բեյն ասաց չոր տոնով.

— Այս հոդվածները ինքը չի տանում արտասահման։ Նա գործակիցներ ունի, միսիոներներ, դիվանագետներ, չգիտեմ։ Նա անկասկած կապ է պահպանում այն հայերի հետ, որոնք չեն տեղահանվել։

— Անկասկած։

Ռըզա բեյը ձեռքը սեղանին խփեց.

— Փնտրիր։ Բոլոր գործերդ մի կողմ դիր ու գտի՛ր։

— Ինչ միջոցներով, կարևոր չէ՞։

— Ինձ համար միևնույն է, միայն թե զգույշ եղիր։ Ազատիր ինձ նրանից, Պետրի, և քո կարողությունը ձեռքումդ է։

Հիանալով վերջին խոսքերից, որոնք դեռևս հնչում էին նրա ականջին, Պետրին ոտքի կանգնեց և խոնարհվեց։

* * *

Տեսնելով տափաստանին փոխարինելու եկած ցաքուցրիվ եղևնիները, Վարդանը հասկացավ, որ մոտենում էին Աֆիոն-Գարահիսարին, այն քաղաքին, ուր ինքը ծնվել ու մեծացել էր։ Ահա և գետը՝ Ակարը, որը հոսում էր երկաթգծին զուգահեռ և ուր ինքը մանուկ հասակում ձկնորսությամբ էր զբաղվել։ Նա իջեցրեց բաժանմունքի լուսամուտը և գլուխը դուրս հանեց, բնապատկերով հիանալու և վարած հողի հոտը զգալու համար, որը նրա հիշողության մեջ կապված էր իր հարազատ շրջանի աշնան հետ։

Նա հիշեց հորը, որն արաբական ազնվացեղ ձի հեծած, հսկում էր հողը վարող բանվորներին։ Նա իր որդիներին՝ Նուբարին ու Վարդանին բացատրում էր աշխատանքի ընթացքը և նրանց էր վստահում իր գաղտնիքները դաշտերում կակաչի առատ բերք աճեցնելու վերաբերյալ։ Վարդանը տասներկու տարեկան էր և արդեն գիտեր, որ ինքն իր կյանքը չէր անցկացնելու այս քամոտ սարահարթում։ Այն օրվանից, որ ինքն այցելել էր իր քեռորդիներին Կոստանդնուպոլսում, նա երազում էր մայրաքաղաքի և դրա նավահանգստի նավերի մասին, որոնց միջոցով կարող էր աշխարհին ծանոթանալ։

Բաժանմունք ներխուժող քամին արթնացրեց Հակիին, որին գնացքի միապաղաղ ընթացքը քնեցրել էր։ Մնացած երաժիշտները զբոսնում էին միջանցքում թմրած ոտքերը մարզելու համար։ Տեսնելով, որ իրենք մենակ էին, Հակին նորից հարցրեց, և դա արդեն երկրորդ անգամ էր այն պահից, ինչ նա իմացել էր, որ Վարդանը ծագումով Աֆիոն-Գարահիսարից էր՝ ափիոնի մայրաքաղաքից։

— Ի՞նչ ես կարծում, ինձ համար ափիոն կարո՞ղ ես ճարել։ Ջե՞ս մոռանա։ Վերավաճառելու համար եմ ուզում։

— Կփորձեմ, Հակի, սակայն ոչինչ չեմ խոստանում։ Դա այնքան վաղուց էր։ Գուցե ոչ մի ծանոթ չի մնացել։ Հատկապես, որ դաշտերի մեծ մասը հայերի էր պատկանում, որոնց անկասկած քշած կլինեն։

— Երկիր լցված օտար զինվորների շնորհիվ ես կկարողանայի կարողություն դիզել։

— Քեզ այլևս չի հուզո՞ւմ, որ քո երկիրը պարտվել է։

— Դա իմ պատերազմը չէր։ Կան մարդիկ, որոնք հարստացել են այս պատերազմի շնորհիվ, հիմա իմ հերթն է։ Եթե դու ուզենայիր, մենք միասին կաշխատեինք և կհարստանայինք։ Շուտով դու ստիպված չես լինի թաքնվել...

Վարդանը զսպեց զարմանքի շարժումը և ձևացավ, որ չի հասկանում։

— Ի՞նչ ես ուզում ասել։

Հակին խորհրդավոր ժպտում էր։ Նա աչքով արեց և, ստուգելով, թե արդյոք մարդ չկա միջանցքում, շշնջաց.

— Ես վաղուց եմ գուշակել, որ դու այն մարդը չես, որ ներկայանում ես։

— Իսկ ո՞վ եմ ես այդ դեպքում։

Հակին ուսերը թոթվեց.

— Ինձ համար ավագ ընկերս ես, և դա ինձ բավարարում է։

Փաշազադե Շահիր Միթադի վերադարձը ընդհատեց խոսակցությունը։ Քանի որ Հակիի խոսքերում սպառնալիք չկար, այլ ավելի շուտ համակրանք, Վարդանը հանգստացավ։ Նա դերվիշին հարցրեց.

— Որտե՞ղ ենք նվագելու, վարպետ։

— Թլփատման տոնախմբությանը, Ուդի Ցաշար։ Ինձ ասել են, որ այդ տոնախմբությանը շատ բարձրաստիճան սպաներ են մասնակցելու, նույնիսկ մի գեներալ։ Մենք պետք է մեզ լավագույնս ներկայացնենք, քանի որ նրանք պետք է որ մռայլ լինեն։

— Ինչո՞ւ,— հարցրեց Վարդանը, կարծես չգուշակելով։

— Ես դրա հաստատումն եմ ստացել գերմանացի մի ինժեներից. Թալեաթ փաշան հրաժարական է տվել մեծ վեզիրի և նախարարի պաշտոնից։ Իզեթ վաշան նշանակվել է կաբինետի ղեկավար, որի խնդիրն է խաղաղության բանակցություններ վարելը։ Սա տխուր պահ է կայսրության համար։

Վարդանը բավարարվեց գլխով անելով։ Նա զարմացած չէր։ 1918 թ. հոկտեմբերի կեսերին բոլորն անխուսափելի էին համարում օսմանյան բանակի պարտությունը։ Անկասկած, Կոստանդնուպոլսի ղեկավարների հրաժարականը նրան ուրախացնում էր, սակայն Իթթիհատի հին անդամներից մեկի՝ Իզեթ փաշայի նշանակումը ցույց էր տալիս, որ ոչինչ դեռ չէր փոխվել։

Դժվար էր գուշակել, թե ինչ կբերեր հայերին խաղաղությունը։ Արդյո՞ք դաշնակիցները կկատարեին հայերին տված խոստումը անկախ Հայաստանի վերաբերյալ։ Ոչինչ հաստատ չէր։ Ամեն ինչ բարդանում էր 1918 թ. մայիսի 28-ին հռչակված անկախ Հայաստանի գոյությամբ։ Այդ անկախությունը, որը կարելի էր դիտարկել որպես երազած մեծ հայրենիքի ստեղծման առաջին փուլ, ուրախացնում և միևնույն ժամանակ անհանգստացնում էր Վարդանին, ինչպես և իր հայրենակիցների մեծամասնությանը։ Հայերը հայտնվում էին շատ փոքր՝ նախկին Արևելյան Հայաստանի տարածքի վրա, որը մի կողմից պաշարված էր օսմանցիների կողմից, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի։ Փոքր երկիր, որը շրջափակված էր Օսմանյան կայսրությամբ, Պարսկաստանով, Ադրբեջանով և Վրաստանով, որոնք նրան կտրում էին

արտաքին աշխարհից։

Վարդանը հասկանում էր, որ այն բանից հետո, երբ բոլշևիկները հետ էին քաշվել, իր հայրենակիցներին ոչինչ չէր մնում անել, քան Անատոլիայի իր դարավոր հողերից զրկված այդ Հայաստանի անկախությունը հռչակելը։ Կամավորական ջոկատները քաջաբար պաշտպանել էին Արևմտյան Հայաստանի հողերը, որոնք լքել էր ռուսական բանակը։ Նրանք պայքարում էին ավելի լավ զինված և մեծաքանակ թշնամու դեմ և ստիպված էին նահանջել՝ թողնելով Երզնկան, Էրզրումը, Տրապիզոնն ու Վանը։ Օսմանցիների առաջխաղացումը պատճառ էր դարձել նոր ջարդերի և, հասնելով իրենց վերջին պաշտպանական գծերին, հայերը դիմադրել ու պարտության էին մատնել իրենց հակառակորդին Ղարաքիլիսայում և Սարդարապատում, նրանց ծանր կորուստներ պատճառելով։ Այդ հաղթանակները, որոնք բարձրացնում էին բնաջնջման փորձից սարսափած ժողովրդի ոգին, ընդամենը դադար էին։ Ավանդական թշնամին կանգնած էր նորանկախ երկրի սահմաններին, որը բազում դժվարություններ էր կրում։ Նա պետք է կերակրեր և օթևան տար փախստականներին, որոնք ամեն ինչ կորցրել էին։

Գնացքն անցավ պարսպի մոտով և, սուլելով, ազդարարեց իր մուտքը կայարան։ Ամպած երկնքի տակ մզկիթներն ու շենքերը գորշ էին թվում։ Հորիզոնին երևացող բլրի վրա վեր էր խոյանում հին ամրոցի տպավորիչ ուրվագիծը, որի պատվին էր, միգուցե, քաղաքը Կարահիսար (սև պարիսպ) անվանումը ստացել։ Վարդանի սիրտն ուժգին բաբախում էր, և նա ուշադիր զննեց կառամատույցում հավաքված ամբոխը, փնտրելով որևէ ծանոթ ուրվագիծ կամ դեմք։ Շոգեքարշի բաց թողած գոլորշին ծածկեց մարդկանց։

«Անատոլու» իջևանատանը, ուր հանգրվանել էր նվագախումբը, նախաճաշի ժամանակ Փաշազադե դերվիշը հայտարարեց, որ կեսօրից հետո երաժիշտերը ազատ էին։ Իրենց սենյակում, ուր ըստ ավանդույթի նրանք միասին էին, Հակին նայեց Վարդանին, որը պատրաստվում էր դուրս գալու, և ասաց.

— Քանի որ սա քո ծննդավայրն է, կարծում եմ, որ դու սովորականից ավելի կարիք ունես մենակ մնալու։

Վարդանն այս քաղաքում չպետք է տեսներ դիմադրության հետ կապված որևէ մեկի և հույս չուներ ծանոթների հանդիպելու, իսկ ուրվականներով բնակեցված քաղաքում միայնակ զբոսնելը նրան չէր հրապուրում։

— Հակառակը, Հակի, քո ներկայությունն ինձ համար հաճելի կլիներ։ Միայն մեկ պայմանով, որ հարգես իմ լռությունը և, հատկապես, որ ինձ շատ հարցեր չտաս։ Պահանջածս շատ չէ՞։

Հակիի դեմքը պայծառացավ.

— Ուդի, իմ աղաբեյ, դու կարող ես ինձնից ամեն ինչ պահանջել, բացի այն, որ ես այլևս երբեք կանանց չհամբուրեմ։ Ես ձկան պես համր կլինեմ

և, եթե դու հանդիպես քո ազգին և քո հավատքին պատկանող մարդկանց, կհեռանամ, որպեսզի դու նրանց հետ հանգիստ խոսես։

Ուրեմն նա գիտե՞ր։ Վարդանն ուզեց հակաճառել, սակայն Հակին նրան լռելու նշան արեց.

— Ես վաղուց եմ գուշակել։ Դու իմ եղբայրն ես, Ուդի, իսկ քո գաղտնիքը սրբազան է ինձ համար, և ես կգերադասեմ, որ ինձ պատառ-պատառ անեն, քան կմատնեմ։

Վարդանը, հուզվելով, գրկեց նրան.

— Թող օրհնյալ լինի այն օրը, երբ ես քեզ ճանաչեցի։

— Ինչպե՞ս են քո լեզվով բարեկամ ասում։

— «Ընկեր»։ Իսկ դու իմ ընկերն ես, Հակի։

Նրանք հասան քաղաքի առևտրական թաղին, ուր արհեստավորներն ու վաճառականները տեղաբաշխված էին ըստ իրենց մասնագիտությունների։ Նրանք անցան ածխագործների, թիթեղագործների, դերձակների, գորգագործների և մետաքսավաճառների, կոշկակարների և, վերջապես, հրուշակագործների շարքերով։ Այստեղ, ինչպես և Փոքր Ասիայի բոլոր շուկաներում, աչքաբաց վաճառականները կանգնած էին իրենց խանութների առջև, նայում էին անցորդներին, նրանց ապրանք էին առաջարկում և միշտ պատրաստ էին գինն իջեցնել հանուն սիրուն աչքերի, բարեկամության կամ էլ առաջին հաճախորդը լինելու առիթով։ Այստեղ, ինչպես և այլուր Անատոլիայում, հայերին պատկանած խանութները փոխել էին իրենց տերերին։ Շատ հույն վաճառականներ նույնպես իրենց տեղն էին զիջել թուրքերի կամ քրդերի։

Վարդանն ու Հակին հասան համեմունքների շարքին, ուր բրնձի, շաքարի ու աղի պարկերը, նշի, սիսեռի, չրեղենի զամբյուղները զբաղեցնում էին մայթը և հասնում էին մինչև երթևեկելի մասը։ Վարդանը կանգ առավ մի հին խանութի մոտ, ուր մի տասը տարեկան տղա նստած էր ձեթի մեծ ամանի վրա։

— Բարև, Համիդ էֆենդին այստե՞ղ է։

— Նպարավաճառը մի քանի ամիս առաջ մահացել է։

— Ա՛,— արեց Վարդանը շփոթված։

— Իմ հայրը գնել է խանութը նրա այրուց։

Խանութից դուրս եկավ ալեխառն բեղերով և գրեթե անտեսանելի հոնքերով մի մարդ։ Նրա կլոր աչքերը մի այցելուից մյուսին էին անցնում, և նա չէր վստահում։

— Ի՞նչ եք ուզում Համիդ էֆենդիից։ Պատահաբար նա ձեզ փող պարտք չէ՞ր։

— Հանգստացեք,— պատասխանեց Վարդանը։– Նա իմ հին բարեկամն

էր, որի հետ ես կրոնական դպրոց էի հաճախում։ Հանգստություն նրա հոգուն։

— Մենք ձեզ իզուր չենք անհանգստացրել,— ասաց Հակին։— Թզի չիրն ի՞նչ արժե։

Քաղաքի կենտրոնական հրապարակի շագանակենիների տակ տղամարդիկ նարդի էին խաղում և նարգիլե ծխում։ Հակին նախանձով նայեց օղու շշերին, սակայն չհամարձակվեց ընկերոջն առաջարկել սրճարան այցելել։ Մզկիթն անցնելուց հետո նրանք մտան հայկական թաղի նեղ փողոցները։ Առաջին հայացքից թվում էր, թե ոչինչ չէր փոխվել Վարդանի վերջին այցելությունից հետո՝ ինը տարի առաջ։ Բոլոր փայտե տների ճակատները սպիտակ էին ներկված, սակայն մեծ մասի ներկը թափվել էր։ Այգիների մեծ մասը գրավել էին մոլախոտերը։ Աղբյուրի մոտ կանգնած էր հին ծառը, իսկ կողքի խանութից նոր թխված հացի բուրմունքն էր գալիս։ Յուրաքանչյուր տան մոտ Վարդանը մի անուն էր հիշում, սակայն հիմա այդ տներում անծանոթներ էին ապրում։ Այստեղ Սուրբ Ստեփանոս եկեղեցու դիմաց նստում էր Աղավնի խաթունը իր թոռան՝ Սուրենի հետ։ Հիմա նրա տեղում նստած էր քողածածկ ծեր մի կին, որը հսկում էր եկեղեցու գավթում խաղացող մի խումբ երեխաների։

Վարդանը հրեց եկեղեցու դռան ծանր փեղկը։ Նրա քթին խփեց թրիքի ծանր հոտը։ Պատերը կչկչոցներ և մկկոցներ էին արձագանքում։ Նա գնաց դեպի վերնատուն գառների ու հավերի մոտ, որոնք քուջուջ էին անում հատակը ծածկող հարդի և թրիքի մեջ։ Սրբապատկերները, սուրբ սեղանն ու նստարաններն անհայտացել էին, պատերի որմնանկարները ներկով էին ծածկել, իսկ գունավոր ապակիները կոտրել էին օդափոխության համար։ Հավաբու՛ն։ Ահա թե ինչի էր վերածվել այն եկեղեցին, ուր նա մկրտվել էր։

Հանկարծ նա մտովի երեսուն տարի հետ գնաց։ Դա Ավագ շաբաթի պատարագից անմիջապես առաջ էր։ Բեմի առջև կանգնած Վարդանը շարականներ էր արտասանում, որոնք նա անգիր էր արել։ Նա գիտեր, որ ծնողներն իրեն հպարտությամբ էին ունկնդրում՝ մայրը կանանց հատկացված շարքում, իսկ հայրը մյուս կողմում տղամարդկանց հետ։ Հետո բոլոր լամպերը վառվեցին՝ փայլեցնելով վարդանախշերի և սրբապատկերների ոսկին, իսկ վերևի սրահում երգչախումբը սկսեց երգել «Քրիստոս հարյավ ի մեռելոց» շարականը։ Վարդանը գրպանից հանեց Զատկի ներկած ձուն, այն կոտրեց՝ խփելով ավազանի եզրին և ագահաբար կերավ, այդպիսով վերջ դնելով անվերջանալի պահքին։ Դա շտապողական արարք էր, քանի որ նա պետք է քաղցած մնար մինչև հաղորդվելը։ Քահանան նկատել էր նրա արարքը, այդուհանդերձ նրա բերանը դրեց նշխարքը՝ Քրիստոսի մարմինը։ Վարդանը պարզորոշ հիշում էր այն միտքը, որը զբաղեցնում էր նրա ուղեղը, ինչպե՞ս կարող էր Քրիստոսը մեռնել ամեն տարի և հարություն առնել երկու օր անց։ Այսօր նա գիտեր, որ մարդիկ կարող են հազար անգամ մեռնել և շարունակել ապրել։

Նա Հակիին գտավ եկեղեցու դիմաց։ Հենց այդ պահին մի մարդ անցավ, որն արագորեն գլուխը դարձրեց եկեղեցին չտեսնելու համար։ Վարդանը հասցրեց նրան ճանաչել։ Դա Պարունակ Ավագյանն էր՝ ժամագործը։ Քողածածկ երկու կանանց ուղեկցությամբ նա գնում էր դեպի հարևան փողոցը, ուր տներն ավելի մեծ ու հարմարավետ էին, իսկ պարտեզներն ավելի ընդարձակ։ Վարդանը մի տղայից հարցրեց նրա ով լինելը։

— Օրալ էֆենդին է՝ ժամագործը։ Ավագ քույրս դարձել է նրա երկրորդ կինը։ Ուզո՞ւմ ես քեզ տանեմ նրա մոտ։ Նա շատ լավ ժամագործ է։ Եթե քեզ հետ լինեմ, նա գինը կիջեցնի։

— Մեկ ուրիշ անգամ։ Ես շտապում եմ, շնորհակալություն։

Հետևելով որոշ հայրենակիցների օրինակին, Ավագյանն ուրացել էր, հրաժարվել լեզվից և փոխել անունը՝ փրկվելու համար։ Վարդանը չէր դատապարտում նրան և որոշեց չխռովել նրա հոգեկան անդորրը, որը փուխր էր, եթե Վարդանը դատեր եկեղեցու մոտով նրա անցնելու ձևից։

Յուրաքանչյուր փողոց, հրապարակ ու ծառ հիշողություններ էր արթնացնում Վարդանի հոգում։ Նրան թվում էր, որ ինքը երազի մեջ էր, որ ինքը քայլում էր մի ճանապարհով, որը երբեք չէր լքել, և յուրաքանչյուր քայլ, բազմաթիվ արձագանքներ էր ծնում, կարծես քայլեր իր ոտնահետքերով։ Այստեղ էր դատարկված դպրոցը, ուր նա սովորել էր առաջին տարիներին, իր հայրենի տունը կանգնած էր այդտեղից մեկ կիլոմետրի վրա։ Նա մտովի արտասանեց հայկական այբուբենը և հիշեց հորը, որն իրեն այն սովորեցրել էր, երբ ինքը երեք տարեկան էր։ Ամբողջ մի ամառ անհրաժեշտ եղավ տառերը հիշելու համար, իսկ հետո նա այբուբենն արտասանում էր ամեն հարմար առիթով, իր հորեղբայրների, հորաքույրների և բոլոր հյուրերի առջև, նույնիսկ այն մարդկանց համար, ովքեր գալիս էին իր հոր հետ գործերը քննարկելու համար։

Երբ նրանք քաղաքից դուրս էին գալիս շրջանում հայտնի հանքային ջրի աղբյուրը այցելելու համար, Հակին մրմնջաց.

— Դու, երևում է, շատ երջանիկ մանկություն ես ունեցել, որ այդքան հուզվում ես։ Ինձ համար բոլորովին հետաքրքիր չէր լինի վերադառնալ իմ գյուղը։

—– Քո վարքագիծն ավելի իմաստուն է, քան իմը։

Հակին երկու ծխախոտ փաթաթեց և մեկն ընկերոջը տվեց։ Նրանք լուռ քայլեցին մոտ տասնհինգ րոպե։ Տներ հազվադեպ էին հանդիպում, իսկ հետո իրենց տեղը զիջեցին դաշտերին։ Վարդանը կարճ ճանապարհով գնաց։ Դա նեղ արահետ էր, որն անցնում էր մի բլրով և որը նրանց դուրս բերեց տոհմական հողերի մոտ։ Դաշտերը ձգվում էին մինչև հորիզոն։ Դրանք բաժանվում էին բարդիների շարքերով, որոնք տերևաթափ էին լինում։ Դաշտերից շատերը, ուր ժամանակին ափիոն էին մշակում, խոպանի էին վերածված, իսկ որոշ տեղերում էլ մշակման աշխատանքները ուշացրել էին։ Միայն երեք գութան էր աշխատում,

մինչդեռ երբ այս հողերը պատկանում էին Պալյաններին, երբեմն երեսուն գութան միաժամանակ վարում էին հողը։

Վարդանը հիշեց բոլոր այն զգացմունքները, որ ինքն ունենում էր հողը վարելիս, ափերի մեջ սեղմած գութանի կոթերի դողն ու ցնցումները պատրանք էին ստեղծում, որ այն կենդանի էակ էր, զորեղ լինելու զգացողությունը, երբ ակոսը ուղիղ էր ստացվում։ Նրա հայրը պահանջում էր, որ իր որդիները մասնագիտանային հողագործության մեջ, նույնիսկ եթե հետագայում պետք է ղեկավարեին ուրիշներին։ «Տերը պետք է ավելի լավ հողագործ լինի, քան իր բանվորները»,— ասում էր նա։ Եվ տարվա եղանակների փոփոխության հետ Նուբարն ու Վարդանը էտում էին մրգատու ծառերը և խաղողի վազերը, ցանում էին, ջրում էին, հնձում էին, սովորում էին կակաչների սերմնատուփերի վրա կտրվածքներ անել, դրանցից ափիոն ստանալու համար հյութ կորզել։ Չնայած երբեք ցանկություն չէր ունեցել կալվածքին նվիրվելու, այնուամենայնիվ նա հաճույք էր ստանում սովորելուց, երբ ուսանում էր Կոստանդնուպոլսի համալսարանում, երբեմն երազում տեսնում էր, թե ինչպես էր հնձում, գերանդին աջից ձախ թափահարելով։ Հիմա էլ, փակելով աչքերը, նա լսեց հնձվող խոտի սոսափյունը գերանդու շեղբին, հնձած խոտի հոտը, թևերի ու մեջքի ցավը։

Վարդանը շարունակեց ճանապարհը։

— Դու հեռու ես, եղբայրս,— ասաց Հակին քայլելով նրա կողքին։

— Շատ հեռու։

Նրանք շարժվեցին գետափի խոնավ մարգագետնի եզրով։ Երբ նա պատանի էր, այս մարգագետնի վրա քուրդ բանվորների հետ ձիարշավներ էին կազմակերպում։ Երկու թիմի բաժանվելով, հեծյալները նիզակների փոխարեն երկար փայտեր վերցնելով, ձիամարտեր էին վարում։ Չնայած Նուբարը բարձրահասակ էր և ուժեղ, նա ոչ մի հակում չուներ սպորտի հանդեպ և գերադասում էր զբաղվել կալվածքի կառավարմամբ ու մշակել զարգացման ծրագրերը։ Այդուհանդերձ, նա գալիս էր դիտելու այդ մրցումները և հպարտանում էր Վարդանի ճարպկությամբ։

Ծառերի հետևում երևաց սրբատաշ քարից կառուցված երեք հարկ և պատշգամբ ունեցող տպավորիչ շենքը, և Վարդանը հուզված կանգ առավ։ Լուսամուտներին ճաղեր տեղադրելու փոխարեն, տան նոր տերը դրանք պարզապես կանաչ էր ներկել։ Վարդանը հիշում էր յուրաքանչյուր սենյակի կահավորությունը, յուրաքանչյուր լուսամատից բացվող տեսարանը։ Նա լսում էր անհայտացած ձայները, տեսարաններն ու պատկերները խառնվել էին նրա գլխում, հայրը, մայրը, եղբայրը, քեռորդիները, որոնք գալիս էին ամռանը, Մարոն, որը պաշտում էր այս տունը, այնտեղ տրված տոնախմբությունները։ Եթե աշխարհում կար մի վայր, որը ամենահարազատն էր, ապա դա այս տունն էր, սակայն հիմա նա իրեն օտար էր զգում։

Տան մոտից ավանակ հեծած մի ծերունի էր գալիս։ Երբ նա

հավասարվեց Վարդանին, վերջինս ճանաչեց Օսմանին, որն արդեն իսկ Պալյանների խոհարարն էր, իր ծնվելուց առաջ։ Նրա մեջքը կորացել էր, իսկ դեմքը տխուր էր։ Նա ոտաբոբիկ էր, հագուստը կեղտոտ էր և մաշված։ Կկոցելով աչքերը՝ նա նայեց այդ օտարականներին։ Համոզված լինելով, որ ծերունին իրեն չէր ճանաչի, Վարդանը ողջունեց նրան.

— Թող Ալլահը ձեզ օրհնի։

— Թող ձեզ էլ օրհնի,— պատասխանեց Օսմանը, սանձը քաշելով։

— Ո՞ւմ են պատկանում այս դաշտերը։

— Էկրեմ էֆենդուն։

— Մուխթարի՞ն։

— Նա այլևս մուխթար չէ, նրան ոստիկանապետ են նշանակել։ Սա նրա տունն է։

Վարդանն ուզում էր անցյալի մասին հիշողություններ լսել առանց բացահայտելու իր ով լինելը։

— Ես այստեղով շատ վաղուց եմ անցել։ Խոզ գողացած մի մարդ էին բռնել, և մարդիկ ուզում էին նրան ծեծել, սակայն այս տան տերը նրանց թույլ չտվեց։

— Հիշում եմ...— ասաց Օսմանը գետնին նայելով։— Տան տերը բարի և արդարացի մարդ էր, շատ մեծահոգի և գթասիրտ։ Եվ չնայած գյաուր էր, Ալլահը բարեգութ էր նրա նկատմամբ։ Այդ ժամանակ ես խոհարար էի այս տանը, լավ աշխատանք էր։ Հիմա ես այծ եմ արածեցնում։ Այս տարիքո՛ւմ։ Այսպես երբեք չէր լինի Պալյանների ժամանակ։

— Նրանց ի՞նչ պատահեց։

— Բեյը, որի մասին ասացի, վաղուց մահացել է, իսկ կինը նրան է հետևել քիչ անց։ Հետո նրանց տղան էր՝ Նուբար աղան, որը կառավարում էր կալվածքը։ Նա նույնքան լավն էր, որքան հայրը։ Սակայն նա հեռացավ, երբ պատերազմը սկսվեց։

— Նա իր կալվածքը վաճառե՞ց Էկրեմ էֆենդուն։

— Ի՞նչ ես ասում։ Նա գնաց առանց նախազգուշացնելու, շտապելով կյանքը փրկել։ Նա խելացի մարդ էր...

Ծերունին լռեց և անհանգիստ հայացք գցեց տան կողմը։ Նա ավանակին խթանեց ու ավելացրեց.

— Սակայն այս ամենը հետաքրքիր չէ ձեզ պես օտարականներին։ Առայժմ։

Նա վախենում և անկասկած ափսոսում էր, որ սիրտը բացել էր օտարականներին։

Նրանք նրան առաջ թողեցին և վերադարձան քաղաք։ Հակին բռնեց Վարդանի ուսը.

— Դու ապրե՞լ ես այդ պալատում։ Ես, որ կուշտ չեմ կերել մանուկ հասակում, չեմ կարողանում պատկերացնել, թե ինչպիսին է եղել քո մանկությունը։ Պետք է որ սարսափելի լինի այդ ամենից հետո հայտնվել ճամփի եզրին, ունենալով որպես ունեցվածք միայն մի ուդ։

— Ավելի վատ է, երբ կորցնում ես անունդ կրելու իրավունքը։

— Պալյան, այո՞։

Վարդանը գլխով արեց։

— Դու ինձ էլի կպատմե՞ս։

— Ի՞նչ։

— Ամեն ինչ։ Թե ի՞նչ էիք ուտում, ինչպիսի՞ն էին քո ծնողները, թե ի՞նչ էիր անում։

Վարդանը ցածրաձայն ծիծաղեց.

— Երեխա ժամանակ ես պետք է որ քեզնից այնքան էլ չտարբերվեի։ Անկասկած, մենք կընկերանայինք, եթե հարևաններ լինեինք։

* * *

Հետևելով ավանդույթին և Ղուրանի գթասրտության պատվիրանը կատարելու նպատակով, Մետին բեյը՝ գավառի վալին, հավաքել էր իր տանը աղքատ ընտանիքների տղաների՝ իր որդու հետ միաժամանակ թլփատելու համար։ Իր հյուրերով՝ հիմնականում համազգեստ կրող օսմանյան բարձրաստիճան սպաներով շրջապատված, նա բազմել էր մեծ սեղանի գլխին։ Մեկ այլ, նույնքան շքեղ սպասավորված մի սեղան, դրված էր սենյակի խորքում և դրա շուրջը նստած էին ավելի համեստ դիրք գրավող մարդիկ և այն երեխաների հայրերը, որոնք միջոցներ չունեին իրենց տղաներին թլփատելու համար։ Սեղանի առջև շարված էին տասներկու մահճակալներ, ուր պառկած էին մոտ տասը տարեկան տղաներ սպիտակ գիշերանոցներով և սատինից կարված կապույտ գլխարկներով։ Նրանք տագնապով սպասում էին, որ վարսավիրը կատարեր ծիսական շարժումը, որից հետո նրանք տղամարդ և իսկական մահմեդական կդառնային։

Դերվիշները տեղավորվեցին սենյակի ծայրում կանգնեցված բեմի վրա, և Վարդանը, իր գործիքը լարելու ընթացքում, ուսումնասիրեց հյուրերին։ Տանտիրջ աջ կողմում նա զարմանքով հայտնաբերեց Հալիթ փաշայի կլորիկ դեմքը։ Բացառությամբ ճերմակող մազերի, գեներալը չէր փոխվել Սվասում տեղի ունեցած իրենց վերջին հանդիպումից հետո, երբ նա փրկել էր Վարդանին կախաղանից։ Վարդանը ուշադիր նայում էր ընկերոջը և չնկատեց Փաշազադե Շահիր Միթադի նշանն ու ուշացումով սկսեց նվագել, իր վրա գրավելով հյուրերի ուշադրությունը։ Մի քանի վայրկյանով նրա և գեներալի հայացքները հանդիպեցին։

Գեներալը նրան չճանաչեց մորուքի և դերվիշի հագուստի պատճառով։

Արարողությանը ավելի մեծ հանդիսավորություն հաղորդելու համար Փաշազադեն սամա կատարեց։ Սովորաբար նա այդ բանը չէր անում, երբ նվագախումբը ելույթ էր ունենում մասնավոր տներում։ Տղաները, ինչպես և նրանց հայրերը, ապշած նայում էին այդ ֆիզիկական կերպարանափոխությանը, տպավորվելով կրոնավորի զմայլված դեմքից, և նրանց թվաց, որ նա հաղորդակցվում էր Աստծու հետ։ Գավառապետը, շոյվելով, պարից հետո դերվիշին քսակ հանձնեց։

Նվագախումբը սկսեց աշխարհիկ երաժշտություն կատարել, սկզբում թեթև և ուրախ, որը խորացավ և լրջացավ, երբ վարսավիրը սկսեց թլփատել տղաներին։ Տղաները սեղմում էին ատամները և իրենց քաջաբար էին պահում, իսկ հայրերի դեմքերը փայլում էին։ Հայտնվեցին պորտապար կատարող երեք պարուհիներ, որոնք գալարում էին իրենց մարմինները տղաների առջև, կարծես փորձելու համար նրանց առնականությունը։ Ջնայած տարած տառապանքին, նոր թլփատված տղաները չէին կարողանում աչքերը կտրել այդ կիսամերկ մարմիններից, իսկ տղամարդիկ հրճվում էին նրանց հետաքրքրասիրությամբ։ Վարսավիրն իր գործը վերջացրեց, և հյուրերը ընծաներ և դրամ տվեցին տղաներին, նրանց մաղթելով երկար կյանք, առողջություն և անկեղծ հավատ, ինչպես նաև նրանց պատվիրեցին համեստ ու գթասիրտ լինել։

Դրան հետևեց անվերջանալի մի ճաշկերույթ, որի ընթացքում երաժիշտները զվարճացնում էին հյուրերին անդադար նվագելով, մինչդեռ մի խումբ երիտասարդ ծառաներ պտտվում էին հոլի պես հյուրերին սպասարկելու համար, բազմաթիվ երթեր կատարելով խոհանոցից ճաշասրահ և հակառակը։ Քանի աղքատ երեխաների հայրերը ուրախ քեֆ էին անում, պատվավոր հյուրերի սեղանի մթնոլորտը ավելի լուրջ էր, և դրա շուրջը նստած մարդկանց դեմքերին որոշակի լարում էր զգացվում։ Տանտիրոջ և սպաների միջև աշխույժ խոսակցությունը տարվում էր ցածրաձայն և այն տպավորությունն էր ստեղծվում, որ նրանք հաճախ հարցնում էին Հալիթ փաշայի կարծիքը։ Վերջինս վստահ տեսքով ինչ-որ բաներ էր հաստատում, պնդում էր ինչ-որ մանրամասների վրա, իր խոսքերն ուղեկցելով ձեռքերի շարժումներով։ Նրա այդ շարժուձևը Վարդանին հիշեցրեց երիտասարդ պատգամավոր Հափթին, երբ նա ուզում էր համոզել իր զրուցակիցներին։ Նրանք, անկասկած, խոսում էին ռազմական իրավիճակից և Օսմանյան կայսրության ապագայի մասին։ Վարդանը շատ կուզեր լսել նրանց խոսքերը։

Ճաշկերույթից հետո հյուրերը ցրվեցին պարտեզում, իսկ երաժիշտները շտապեցին սեղանների մոտ և սկսեցին ճաշակել այն ուտեստներն ու խմիչքը, որոնք սպասավորները բերել էին նրանց համար։ Սեղանը թողնելով՝ Վարդանը Հալիթ փաշայի հետևից պարտեզ դուրս եկավ, նրան մոտենալու մտադրությամբ։ Սակայն զինվորականներն ու գավառապետը խմբված էին տաղավարում և աշխույժ վիճում էին։ Վարդանը տուն վերադարձավ այն հույսով, որ

ավելի հարմար առիթ կներկայանա։

Դերվիշը նրան հանդիմանանքով դիմավորեց.

— Դու մեզ ավելի լավ կատարման ես վարժեցրել, Ուդի Յաշար։ Գլուխդ որտե՞ղ է։ Ես արդեն կորցրել եմ հաշիվը, թե այսօր դու քանի անգամ ես սխալ նվագել։

Վարդանը մեղավոր տեսք ընդունեց։ Զուռնաչի Օսմանը, որին խմած օղին խանդավառ էր դարձրել, բացականչեց.

— Վիճակն է՛լ ավելի վատթարացավ, երբ պարուհիները ներս մտան։

Նրա կատակը լիցքաթափեց մթնոլորտը, և նույնիսկ Փաշազադեն բարձրաձայն ծիծաղեց։

Արևը մայր էր մտնում։ Երաժիշտներին հրավիրեցին տեղ գրավել պարտեզի խորքում կանգնեցված ծածկի տակ։ Հյուրերն արդեն տեղավորվել էին գետնին փռած գորգերի ու բարձերի վրա։ Կենտրոնում ցածր սեղանի վրա պղնձյա սկուտեղ էր դրված։ Սպասավորները շշեր, ջրով կժեր և նարգիլեներ էին բաժանում։ Նվագախումբը սովոր էր նման տեսարանների և Փաշազադե Շահիր Միթադը ստիպված չէր ճշտելու, թե ինչ էին իրենք նվագելու։ Երաժշտության հենց առաջին հնչյունների հետ, որոնք որպես ազդանշան էին ծառայում, երերալով ներս եկան երեք պարուհիները, և տղամարդիկ նրանց դիմավորեցին բացականչություններով։ Նրանցից մեկը կանգնեց սկուտեղի վրա, իսկ մյուս երկուսը դանդաղ և մանր քայլերով շրջան կատարեցին նստած հանդիսատեսի առջև։ Նրանց ոտքերի կոճերին ամրացված ապարանջանների զնգզնգոցին հավելվում էր նրանց ափերի մեջ ամրացված կաստանիետների չիկչիկոցը։ Ծալապատիկ նստած տղամարդիկ մասնակցում էին զգայականության այդ փառաբանմանը գլուխների շարժումներով, որոնք համընկնում էին կանանց կոնքերի շարժումների հետ։ Կախարդվելով բարդ շարժումների համակարգով, նրանք պատկերացնում էին այն պատմությունը, որ պատմում էին պարուհիներն իրենց ձեռքերի, աչքերի, պորտի և ամբողջ մարմնի միջոցով։ Յուրաքանչյուր գալարում, յուրաքանչյուր դիրք իր ուրույն նշանակությունն ուներ, նույնիսկ ռիթմը իմաստավորված էր։ Խմիչքից տաքացած տղամարդիկ ավելի պահանջկոտ էին դառնում և ցանկանում էին, որ պարուհիները մերկանային։ Քողերը վայր ընկան, և զգայական կանչն ավելի բացահայտ դարձավ։ Հերթով նրանք հանեցին իրենց լայն շալվարները և կարճ շապիկները, որոնք թաքցնում էին նրանց ստինքները։ Լրիվ մերկ վիճակում, նրանք թույլ տվեցին, որ հանդիսատեսները օղին լցնեն իրենց փորին և լեզվով հավաքեն կոնքերով հոսող խմիչքը։

Հալիթ փաշան ցրված հայացքով էր հետևում ներկայացմանը և թաքուն հետևում էր ուդահարին, որի սևեռուն հայացքը նրան հետաքրքրել էր։ Ի՞նչ կարող էր իրենից ուզել այդ մարդը։ Ի վերջո, գեներալը ինչ-որ ծանոթ բան գտավ այդ աչքերում, որոնք բարեկամաբար էին իրեն նայում։ Գոհ մնալով, որ կարողացել էր Հալիթ

փաշայի հետաքրքրասիրությունը շարժել, Վարդանը շրջվեց, որպեսզի իր վարքագիծը չգրավեր մնացածների ուշադրությունը: Ծածկի տակ ուտեստներ մատուցեցին, և տոնախմբությունը տևեց մինչև լուսաբաց: Դա իսկական փորձություն էր պարուհիների և երաժիշտների համար:

Հրավերքի վերջում Հալիթ փաշան օգտվեց այն պահից, որ գավառապետը զրուցում էր մի գնդապետի հետ, և մոտեցավ Վարդանին: Նա նրան դրամ մեկնեց և ցածրաձայն հարցրեց.

— Կարո՞ղ է, մենք արդեն հանդիպել ենք:

Վարդանը հրաժարվեց դրամից.

— Դու ինձ արդեն ոսկի տվել ես Սվասում:

Այդ ձա՛յնը: Գեներալի աչքերը չռվեցին:

— Այ քեզ բա՛ն,— բարբաջեց նա:— Այ քեզ բա՛ն:

Նրա ապշած դեմքի արտահայտությունն անմիջապես անհայտացավ, և նա հայացք նետեց գավառապետի վրա, որը նրան էր սպասում վրանի մուտքի մոտ: Դրամը մեկնելով՝ նա բարձրաձայն ասաց.

— Վերցրեք, սիրելիս: Դուք իմ կենացը կխմեք ձեր գործընկերների հետ:

Հետո շշնջաց.

— Ժամը իններին, կառավարական շենքում:

Վարդանը գլուխը խոնարհեց և պատասխանեց բոլորի համար.

— Օրհնյալ լինեք ձեր մեծահոգության համար: Թող ձեր կյանքը երկար ու երջանիկ լինի:

Գեներալը շրջվեց և միացավ գավառապետին: Երաժիշտները խմբվեցին Վարդանի շուրջը:

— Ցույց տուր,— ասաց Հաֆիզ Իսմայելը:— Ոսկի՞ է:

— Ուրեմն գնանք խմելու, ինչպես մեզ պատվիրեց փաշան,— հայտարարեց Հակին, որին պարուհիների ներկայությունը գրգռել էր:— Մենք պետք է մի հասարակաց տուն գտնենք այս քաղաքում:

* * *

Ուղիղ ժամը իններին Հալիթ փաշան Վարդանին էր սպասում կառավարական շենքի նախասրահում: Նա նրան ուղեկցեց առանձնացած մի սրահ, որ նրա համհարզը սուրճ մատուցեց: Առաջին հարկի այդ սենյակի բարձր լուսամուտները նայում էին այգուն, ուր սոճիներ էին աճում և երբ քամին շարժում էր վարագույրները, ապա սենյակ խեժի հաճելի բուրմունքն էր թափանցում: Երբ համհարզը

հեռացավ, Վարդանն ու Հալիթը գրկախառնվեցին։

— Ձես կարող պատկերացնել, ինչպես ապշեցի, երբ ձայնդ լսեցի, Վարդան։ Ի՞նչ երջանկություն է քեզ ողջ տեսնելը։

— Դա քո շնորհիվ է, Հալիթ փաշա, և ես նորից քեզ շնորհակալություն եմ հայտնում դրա համար։ Ուրախ եմ, որ կաշիդ չես թողել ռուսական ճակատում, ինչպես վախենում էիր երեք տարի առաջ։

— Պետք է կարծել, որ իմ ժամը չէր եկել, բարեկամս։

Գեներալը բաց չէր թողնում Վարդանի ուսերը և ժպտում էր։

Ծանր կոպերով շագանակագույն աչքերի տակ զգալի այտուցներ կային, որոնք նրա աչքերը նմանեցնում էին բարի մեծ շան աչքերի։ Նրա հոգնած դեմքը նրան խոնարհ տեսք էր տալիս։

— Գտա՞ր ընտանիքդ։

— Դժբախտաբար, ոչ։

Հալիթ փաշան տխրեց։ Նա գերադասեց Վարդանին չասել, որ նրա ազատագրության գինը գնդապետ Իբրահիմի կյանքն է եղել։ Նա Վարդանին առաջարկեց նստել։

— Պատմիր, թե քեզ ինչ է պատահել Սվասից հետո,— խնդրեց նա։

Քանի նրանք սուրճ էին խմում, Վարդանը հակիրճ պատմեց իր գլխով անցածը 1915 թ. հուլիսից հետո, առանց թաքցնելու իր հայրենակիցների ճակատագրին վերաբերող հոդվածների հրապարակումը արտասահմանում։

— Ի՞նչ սարսափելի սխալ է կատարել մեր կառավարությունը,— բացականչեց Հալիթ փաշան։— Բարեբախտաբար պատերազմն ավարտին է մոտենում։ Երեկ ես լուր ստացա Հալեպի գրավման մասին։ Սիրիան ամբողջությամբ անգլիացիների և ֆրանսիացիների ձեռքում է, և նրանք շարժվում են դեպի Անատոլիա։ Նրանց զորքերը շարժվում են դեպի Թրակիա և այս պահին միգուցե գրավել են Կոստանդնուպոլիսը։ Սա Օսմանյան կայսրության վերջն է։

— Կարելի է կարծել, որ դա քեզ ուրախացնում է...

— Կայսրությունն այլևս կենսունակ չէր։ Հարկավոր է փոխարենը ստեղծել Թուրքիա՝ մեզ մնալիք տարածքներով։ Կոստանդնուպոլիս և, իհարկե, Անատոլիա, ոչ ավելին։

— Թուրքիա թուրքերի համար,— մրմնջաց Վարդանը։

— Ոչ,— չհամաձայնեց Հալիթ փաշան։- Արդի մի պետություն, ուր բոլոր ազգերը ներդաշնակ կապրեն։

— Հիմա հեշտ է ասել, երբ հայկական փոքրամասնությունը փաստորեն ոչնչացվել է։

Հալիթ փաշայի ուսերը հակվեցին։

— Իմացիր, որ ես անկեղծորեն ափսոսում եմ այս ահավոր հանցագործության համար: Պատասխանատուները կկրեն իրենց պատիժը:

Նա դեպի դուռը նայեց, ցածրաձայն շարունակելուց առաջ.

— Աֆիոնում հավաքված սպաները շարունակությունն են նախապատրաստում: Քեմալ փաշայի հետ մենք ուզում ենք գահընկեց անել սուլթանին և աշխարհիկ հանրապետություն հիմնել: Ես գնալու եմ Կոստանդնուպոլիս: Արի ինձ հետ, Վարդան, մենք կվերսկսենք այն պայքարը, որը տանում էինք մինչև 1909 թիվը: Այսօր մենք հաջողության կհասնենք:

— Ես այլևս չեմ կիսում այդ հավատը, Հալիթ փաշա: Եվ ես երբեք չեմ կարողանա ինձ տանը զգալ մի երկրում, որի հողը շաղախված է իմ հայրենակիցների արյունով:

— Սակայն սա քո երկիրն է, և դու ոչինչ չես կարող դրա դեմ անել: Դու աֆիոնցի ես: Դու պոլսեցի ես:

— Այսուհետ ես ընդամենը հայ եմ:

Նրա Մեծ Հայքի և Հալիթի Անատոլյան Թուրքիայի մասին երազանքներն իրարամերժ էին: Երկու պետություններն էլ պետք է հավակնություն ունենային Կովկասյան լեռներից արևմուտք ընկած հողերի՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ: Գեներալը նույնպես դա գիտեր:

— Կարող է՝ դու ուզում ես գնալ Հայաստանի Հանրապետությո՞ւն: Իրավիճակն այնտեղ օրհասական է: Տնտեսությունը քայքայված է, ամեն ինչ կորցրած հարյուր հազարավոր գաղթականներ, համաճարակներ, սով: Չհաշված, որ սահմաններն անորոշ են, և ցանկացած պահի այնտեղ կարող են նոր ընդհարումներ տեղի ունենալ: Հավատա ինձ, Վարդան Պալյան, այդ Հայաստանի ապագան հարցականի տակ է:

— Իսկապես, ամեն ինչ հնարավոր է: Մենք պատմական ժամանակաշրջանում ենք ապրում: Դարերի ընթացքում հայերն առաջին անգամ կարող են երազել հայրենիքի մասին: Ես իմ կարեցածը կանեմ, նույնիսկ եթե իմ բաժինը շատ համեստ լինի, որպեսզի դա իրականանա:

Հալիթ փաշան կզակը տրորեց և գլուխը թափ տվեց.

— Ես քեզ հետ խոսում եմ հանուն մեր հին բարեկամության և...

Հանկարծ դռան փեղկը աղմուկով բացվեց: Դռան մեջ կանգնած մի մարդ ատրճանակն էր թափահարում:

— Ինչպիսի հուզիչ հավաքույթ:

Սկզբում Վարդանը չհասկացավ, թե ինչ է տեղի ունենում, հետո ճանաչեց այն մարդուն, որն իրեն վիրավորել էր Մալարիայի տեղահանվածների ճամբարում: Սա այն մարդն էր, որը եկել էր Արուսյակի տուն: Նա արագորեն վեր թռավ բազկաթոռից:

— Ոչ մի ավելորդ շարժում,— հրամայեց զինված մարդը՝ կողպելով դուռը։

— Ինչպիսի հանդգնություն,— բղավեց Հալիթ փաշան, կարմրելով։— Ես քեզ մահակներով ծեծել կտամ, իսկ հետո կբանտարկեմ։

— Լռիր, դավաճան։ Օսմանյան գեներալ, որը համագործակցում է թշնամու լրտեսի հետ։ Քեզ պես մարդկանց պատճառով է, որ մենք պարտություն ենք կրում։

Պետրին մի քանի քայլ առաջ եկավ և Վարդանի վրա հաղթական հայացք նետեց.

— Վերջապես դու իմ ձեռքում ես։

— Ի՞նչ եք ինձնից ուզում,— հարցրեց Վարդանը ժամանակ շահելու համար։— Ես ոչ մի հանցանք չեմ գործել։

Տղամարդը, որը կանգ էր առել մի քայլի վրա թիկունքը լուսամատին արած, բարձրաձայն ծիծաղեց։

Հալիթ փաշան ուզեց պատյանից հանել ատրճանակը, սակայն Պետրին նրան կանխեց և երկու անգամ կրակեց նրա կրծքին։ Նույն պահին մի ճկուն մարմին դուրս թռավ վարագույրի հետևից։ Դաշույնը փայլեց, և խրվեց Պետրիի թիկունքը, որը ցավից ճչաց և վայր գցեց զենքը։ Հարձակվողը հարվածեց երկրորդ անգամ, և Պետրին գետնին տապալվեց։ Միջադեպը տևեց տասը վայրկյանից էլ պակաս։

— Պարոն Վարդան։

Արա՛մ։ Տղան, այլայլված դեմքով, կանգնած էր Պետրիի գլխավերևում, որը տնքում էր և պարզել էր ձեռքերը հարվածներից պաշտպանվելու համար։

— Դե սատկի՞ր,— բղավեց տղան դաշույնով նորից հարվածելով իր հակառակորդին։

Մարդիկ դուռն էին ծեծում և պահանջում էին, որ բացեին։ Վարդանը մոտեցավ Հալիթ փաշային և հավաստիացավ, որ նա մահացել էր։ Հուզված Վարդանը փակեց նրա աչքերը։ Ժամանակն անցնում էր։ Նա բռնեց Արամի թևից և հետ քաշեց նրան Պետրիից։

— Արա՛գ։ Պետք է փախչել։

Լուսամուտը գետնից առնվազն երկու մետրի վրա էր։ Սոճիների փշերի խալին խլացրեց նրանց անկման աղմուկը։ Ծառերի ցածր ճյուղերը թաքցնում էին նրանց։ Ներսում Պետրին օգնության էր կանչում, իսկ դուռը ցնցվում էր հրացանների կոթերի և ոտքերի հարվածներից։

— Ինչո՞ւ թույլ չտվեցիք, որ ես այդ խոզի վերջը տայի,— նեղացած հարցրեց Արամը, երբ նրանք վազում էին դեպի այգին երիզող փողոցը։

— Պետք է մաշկներս փրկենք։ Գցիր այդ դաշույնը։

Փողոցում նրանք քայլի անցան և խառնվեցին անհոգ ամբոխին, իսկ հետո մտան մի նեղ ծառուղի, որն այնքան նեղ էր, որ միայն մեկ ավանակ կարող էր անցնել: Վարդանն իր հինգ մատի պես գիտեր քաղաքը, և մի քանի րոպե անց նրանք հասան Ակար գետի ափը, ուր նրանք կարող էին թաքնվել լքված պահեստում: Զարմանքից Վարդանը մի քիչ կոպիտ հարցրեց.

— Ի՞նչ ես անում այստեղ:

Արամն ընկճված պատասխանեց.

— Այս տիպը Ուրգուպ էր եկել: Նա Այնթապում մի հայի էր տանջել և տեղեկություններ էր ստացել ցանցի մասին: Նա ուզում էր իմանալ, թե որտեղ ես դու: Նա և նրա մարդիկ ծեծեցին ինձ ու Արուսյակին, սակայն մենք ոչինչ չասացինք: Հետո...

Նա բացեց իր ձախ ձեռքը ծածկող վիրակապը, և Վարդանը սարսափով տեսավ, որ նրա չորս մատները հատված էին: Վերքերը թարախակալել էին:

— Նրանք մատներս հատ—հատ կտրեցին, որպեսզի Արուսյակին ստիպեին խոսել: Երրորդ մատի վրա ես ուշաթափվեցի: Երբ սթափվեցի, Արուսյակը արնաշաղախ պառկած էր գետնին: Նրանք նրան...

Նրա ձայնը կտրվեց, և Վարդանը տղային իրեն սեղմեց: Արամը մի քիչ լաց եղավ պատմությունը շարունակելուց առաջ.

— Տղամարդիկ գնում էին: Լսեցի, որ նրանք ասում էին, որ ձեր հետևից Աֆիոն-Գարահիսար պետք է գան: Քերիմն ինձ դրամ տվեց, որ գամ ձեզ նախազգուշացնեմ:

Նա չկարողացավ շարունակել:

— Մնացածը հետո կպատմես,— ասաց Վարդանը, որը զսպում էր հուզմունքը, որպեսզի մտածեր, թե ինչ էր անելու հիմա:

Սակայն նա այնքան ընկճված էր, որ գլուխը չէր աշխատում: Արուսյա՛կ, այդքան մեղմ, այդքան կենսախինդ... Այլանդակված մարմինը երկրորդ պլան էր մղում երիտասարդ կնոջ պայծառ դեմքի, ծիծաղող շուրթերի և սիրահարված հայացքով սև աչքերի հիշատակը: Նա մահացել էր իր պատճառով: Վարդանը հեռու քշեց այդ միտքը և հիշողության մեջ կարողացավ վերականգնել նրա ձայնը: Նա լսեց նրա երգը և տեսավ խալու դազգահին հանգույցներ անող նրա արագաշարժ, ձեռքերը:

Քիչ անց Արամը նրան կտրեց իր ցավագին մտքերից: Նրա դեմքն այլևս փոքր տղայի դեմք չէր, այլ անհամար փորձություններով անցած տասնվեց տարեկան երիտասարդի դեմք: Նա կտրուկ ձայնով հանդիմանեց.

— Դուք չպետք է խանգարեիք ինձ նրա վերջը տալու: Ես երդվել էի, որ կսպանեմ այդ հաստ խոզին:

— Նա անպայման կմեռնի քո հասցրած վերքերից,— հաստատեց Վարդանը ոչ այնքան համոզված։— Դու վրեժխնդիր եղար Արուսյակի համար և փրկեցիր իմ կյանքը։ Դու քաջ ես, Արամ։

Տղան հենց այդ խոսքերն էր ուզում լսել։ Լուրջ տեսքով նա ձեռքը դրեց Վարդանի ուսին, որի հետ առաջին անգամ խոսեց իբրե հավասարը հավասարի.

— Ես գիտեմ, թե որտեղ է քո կինը։ Հաստ խոզը գլուխ գովեց. «Ես փնտրում եմ լրտեսին և նրան կբռնեմ։ Նրա կնոջը մենք Այնթապում ենք պահում»։

Վարդանը քարացավ, կարծես հարված ստացած լիներ.

— Նրա խոսքե՞րն են։ Այնթա՞պ։

— Այո։ Տղամարդու անունն է Պետրի, նա աշխատում է Այնթապի գավառապետի մոտ։

— Մարո՛։ Թովմա՛ս,— ասաց Վարդանը, որը խոսք չէր գտնում իր զգացմունքներն արտահայտելու։

Նա համբուրեց Արամի այտերը։

— Արամ, որդիս, բարեկամս... Որքա՜ն դաժան կարող է լինել ճակատագիրը։ Դու բերել ես ամենավատ և ամենալավ նորությունները միաժամանակ։ Իմ տխրությունն ու ուրախությունն իրար չեզոքացնում են, և ես չգիտեմ, թե ինչ մտածեմ։

Տղան սառն էր։ Այս վերջին շաբաթվա ընթացքում, Աֆիոնի ճանապարհին, նա երկար մտածել էր, թե արդյոք ինքը պե՞տք է ասեր Վարդանին այն, ինչ գիտեր նրա կնոջ մասին, քանի որ ինքը պաշտում էր Արուսյակին և անթույլատրելի էր համարում, որ Վարդանը նրան անմիջապես մոռանար մեկ այլ կնոջ պատճառով։ Սակայն նա գիտեր, որ Արուսյակը չէր ցանկանա, որ նա այդ լուրը գաղտնի պահեր։

— Գուցե դու պետք է մտածեիր այս իրավիճակից դուրս գալու մասին, — պատասխանեց Արամը սառը տոնով։

— Մենք միասին ենք այս իրավիճակում։

— Կարող ես համարել, որ ես մեռել եմ։ Ես ֆիդայի եմ, ես իմ կյանքը զոհաբերել եմ։

Վարդանը բռնեց նրա մազերից, թափ տվեց նրա գլուխը և խիստ տոնով հանդիմանեց.

— Քո առջև դեռևս ամբողջ մի կյանք կա և դու պետք է ապրես։ Հայաստանը քո սերունդների կարիքն ունի, ինչպես նաև քո քաջության և աշխատանքի։ Անիմաստ զոհաբերություններ պետք չեն։ Արդեն իսկ շատ մարդ է մեռել։

Արամը, վիրավորված տեսքով, ազատվեց Վարդանի ձեռքից և գլխարկը հագավ։

— Ես այլևս երեխա չեմ։

— Ճիշտ է։ Երեք տարի է դու անում ես այն, ինչ շատ տղամարդիկ չէին կարողանա։ Ես երջանիկ կլինեմ, եթե դու իմ գործընկերը դառնաս։

Արամը գլխով արեց։ Զնայած աքլորանում էր, սակայն շփոթված էր։ Վարդանը մտածում էր՝ իր մորուքով խաղալով։

— Հարկավոր է շտապ հեռանալ այս քաղաքից։ Քեզ չեն փնտրում, հետևաբար կգնաս «Անատոլու» իջևանատունը և կհարցնես Քամանչա Հակիին։

— Նա թուրք է,— հակաճառեց Արամը։– Նրան չի կարելի վստահել։

— Պետք չէ այդպես ընդհանրացնել։ Նա իմ լավագույն բարեկամն է և մեզ կօգնի։ Ասա նրան, որ իր աղաբեյը կանչում է իրեն։ Թող ածելի բերի։ Զգույշ եղիր և ուշադիր, որ քեզ չհետևեն։

Արամը վերադարձավ ավելի քան երկու ժամ անց։ Նա ստիպված էր եղել սպասել, որ ոստիկանները հեռանային իջևանատնից, որպեսզի ինքը կարողանար մոտենալ Հակիին։

— Նրանք հարցեր էին տալիս երաժիշտներին քո մասին,— բացատրեց Հակին,— հատկապես ինձ, քանի որ ես քո բարեկամն եմ։ Բնականաբար ես չասացի, որ գիտեի, որ դու հայ ես և լրտես։

— Ես լրտես չեմ,— հակաճառեց Վարդանը։

— Ինձ համար միևնույն է։ Նրանք քեզ մեղադրում են Հալիթ փաշայի սպանության և մեկ այլ անձի սպանության փորձի մեջ։

— Սուտ է։

— Դա էլ ինձ համար միևնույն է։ Եթե դու նրան սպանել ես, ուրեմն ծանրակշիռ պատճառ ես ունեցել։ Միևնույն է դու իմ «ընկերն» ես։

Վարդանը նրա ձեռքը սեղմեց։

— Գիտեի, որ կարող եմ քեզ վրա հույս դնել։ Կարո՞ղ ես փախչելու հնարավորություն գտնել ինձ համար։

Ժպտալով՝ Հակին նրան հանձնեց մաշված հագուստների մի կապոց։

— Սրանով դու գյուղացու նման կլինես, իսկ ոստիկանները մորուքավոր երաժիշտ են փնտրում։

Հագուստի կապոցում ածելի և կոտրված եզրերով կլոր հայելի կար։ Արամը գետից ջուր բերեց սափրվելու համար։

— Ես վերջապես կտեսնեմ, թե դու ինչի ես նման,— ասաց Հակին, բռնելով հայելին։

Նույն բանն էր մտածում նաև Վարդանը, և այն ընթացքում, որ ածելին սափրում էր նրա այտերը և կզակը, նա տեսնում էր, որ ժամանակը իր հետքն էր թողել իր դիմագծերի վրա։ Կզակի երկու կողմերում մաշկը

թեթևակիորեն թուլացել էր, և դա գիրության պատրանք էր ստեղծում, չնայած դեմքի մնացած մասերը նիհարել էին։ Դեմքի ճերմակությունը հակասության մեջ էր արևահարված այտոսկրերի, քթի և ճակատի հետ, և Վարդանն ինքն իրեն գիրացած թվաց։ Դեմքի կնճիռներն ավելի խորն էին, աչքերը շրջապատող կնճիռների սարդոստայնն ավելացել էր, նույնիսկ մազերն ավելի էին սպիտակել։

— Փոխվեցիր,— պարզապես ասաց Հակին։

Վարդանը շփեց մերկացած մաշկը, որն ավելի զգայուն էր օդի թարմության հանդեպ։ Հակին նրան հանձնեց դեղնած և ճմռթված մի թերթիկ։

— Սա քեզ պետք կգա։ Այստեղ լուսանկար չկա։ Պարզապես գրված է, որ իմ անունն է Հակի Ջելեբի և որ ես ծնվել եմ Բոդրումում։

— Շնորհակալություն, բայց դու ի՞նչ ես անելու առանց փաստաթղթերի։

— Մի բան կանեմ։ Փաշազադեն կերաշխավորի ինձ։

— Եթե Կոստանդնուպոլսում հայտնվես, ինձ հարցրու Բերայի գլխավոր փողոցի դեղատանը։ Ես քեզ երբեք չեմ մոռանա, Հակի, եղբայրս։ Ուդս լավ կպահես։

Հակին համբուրեց Վարդանին և նրա աչքերի մեջ նայեց, չկարողանալով խոսել։ Հետո, առանց հետ նայելու, նա հեռացավ արագ քայլերով։

Վարդանը սպասեց մինչև երեկո։ Դեմքի ճերմակ մնացած մասերը հողով սևացնելուց հետո նա դուրս եկավ թաքստոցից։ Չնայած ոստիկանության պարեկներին, նրանք Արամի հետ առանց դժվարության հեռացան քաղաքից։ Նույն երեկո մի գյուղացի և նրա որդին Կոստանդնուպոլիս մեկնող բեռնատար գնացքն էին նստում։ Գնացքի պետին փող տալով, նրանք տեղավորվեցին մկկացող գառներով լի մի վագոնում, ծածկվեցին չոր խոտով, պատերի ճեղքերից փչող քամուց պաշտպանվելու համար։

Վարդանն անթարթ նայում էր բրդի մի փնջի, որը մնացել էր տախտակների արանքում և որն այնպես էր թրթռում, կարծես պատռված դրոշ լիներ։ Ժամեր շարունակ նա կծկված մնաց, չկարողանալով գեթ մի բառ արտաբերել և ողբալով Արուսյակի մահը։ Եթե նույնիսկ նա լաց եղավ, ապա առանց վկաների, քանի որ Արամը խորը քնած էր։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 15

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 13:27-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Մարմարա ծովի ափով անցնելով՝ գնացքը կանգ առավ «Հեյդար փաշա» կայարանում, որը Բաղդադի երկաթգծի վերջին կանգառն էր և գտնվում էր մայրաքաղաքի ասիական մասում: Ճանապարհորդներից, զինվորականներից, շրջիկ վաճառականներից և բեռնակիրներից կազմված խայտաբղետ ամբոխի միջով անցնելով, Վարդանն ու Արամը շտապեցին դեպի նավամատույցը: Գորշ ջրից այն կողմ երևում էր Կոստանդնուպոլսի եվրոպական մասը, որը Վարդանն իր մայրենի քաղաքն էր համարում, այդ աշնանային գորշ օրը խորհրդավոր տեսք ուներ:

Կոստանդնուպոլիս: Այս երեք տարիների ընթացքում որքան էր նա երազել այս քաղաքի մասին: Նա համակվեց տարօրինակ մի զգացումով՝ ոգևորություն և ափսոսանք, ուրախություն և տագնապ: Այս կարճ ժամանակահատվածում այնքան իրադարձություններ էին տեղի ունեցել, որ նա դեռևս չէր հասցրել դրանք գիտակցել: Արուսյակի սպանության բոթը, Մարոյի ու Թովմասի ողջ լինելու լուրը, Հալիթ փաշայի սպանությունն իր աչքի առաջ: Երկու օր առաջ Աֆիոնում գնացք նստելիս նրա գլխում խռնված մտքերին հիմա ավելացել էր իր հարազատներին՝ Տիրանին, Մեսրոպ քեռուն, Արփինե մորաքրոջը, Լուսիկ քույրիկին տեսնելու տագնապով երանգավորված երջանկությունը: Պատերազմն ավարտվել էր, սակայն այդ իրադարձությունը, որին այդքան տղամարդիկ և կանայք սպասել էին անհամբերությամբ, չէր ուրախացնում Վարդանին: Մարոն ու Թովմասը Այնթապի գավառապետի «պատանդն» էին, ըստ Պետրիի խոսքերի, և քանի դեռ նրանք չէին վերադարձել մայրաքաղաք իր մոտ, Վարդանը չէր կարող զգալ, որ նոր կյանք էր սկսվում:

— Ո՞ր ենք մենք գնում,— հարցրեց Արամը Վարդանին և նրան իրականության գիրկը վերադարձնելու համար հպվեց նրա թևին:

Տղան շփոթված էր և նույնպես ապագայի մասին էր մտածում, չհասկանալով, թե այդ ապագայում ինչ էր իրեն սպասում: Նա մոլորված և, հատկապես, անպաշտպան էր զգում իրեն այդքան մեծ ամբոխի մեջ:

Վարդանը մի նավամատույցի մոտեցավ, ուր նավավարները, նավակներում նստած, հաճախորդների էին սպասում: Նրանց քանակով

էր պայմանավորված կատարված ուղերթների հաճախականությունը Կոստանդնուպոլսի եվրոպական մասից ասիականը։ Վարդանը լսեց, որ նրանք քննարկում էին մի քանի օր առաջ Մուդրոսում կնքված հրադադարը։ Կապիտուլյացիայի պայմանները նրանց ավելի քիչ էին հուզում, քան օտար զինվորների ներկայությամբ պայմանավորված աշխատանքի ծավալի ավելացումը։

Աղքատ գյուղացու հագուստի շնորհիվ, Վարդանը պայմանավորվեց խելամիտ գնով մինչև Ղալաթիա նավարկելու մասին, սակայն զգուշավոր նավավարը սկզբում ուզեց դրամը տեսնել։ Նրանք տեղավորվեցին թեթև և երկու կողմից սրածայր նավակի մեջ, որը կանաչ և դեղին էր ներկված, իսկ ծայրերում վիշապներ էին պատկերված։ Նավավարը, հակված ուսերով, ժամանակից շուտ ծերացած դեմքով պինդ մի տղամարդ էր, որը թիավարում էր անհոգ տեսքով։ Նավակն արագ էր շարժվում նաև հոսանքի շնորհիվ։ Մարմարա ծովում՝ Բոսֆորի նեղուցում հածանավեր էին կանգնած։ Արամը, տեսնելով հսկա հրանոթները, զարմացավ.

— Երկաթե՞ նավեր։

— Ռազմանավեր։ Տեսնո՞ւմ ես նրանց դրոշները։ Այս մեկը բրիտանականն է, այն մեկը՝ ֆրանսիականը, իսկ այն մեկն էլ՝ իտալականը։

Նավակն անցավ տարբեր չափեր ունեցող բեռնատար նավերի, շոգենավերի արանքով։ Արամը ձեռքը ջրի մեջ ընկղմեց, որպեսզի համոզվեր, որ այն աղի էր, ինչպես ասել էր Վարդանը։ Հիացած, նա չէր հասցնում ամեն ինչ տեսնել, և նրա ոգևորությունը փոխանցվեց նրա ուղեկցին։ Կոստանդնուպոլիսը փռված էր իր յոթ բլուրների վրա և դեպի երկինք էր մեկնում մինարեթների իսկական մի անտառ։ Թոփգափուի պալատը, որը կառուցված էր բարձունքներից մեկի վրա, ամենաբարձրն էր։ Ոսկեղջյուրից պաղ քամի փչեց, ցրեց մառախուղի քողը, լավացնելով տեսանելիությունը, և Բոսֆորի ափին երևաց սուլթանի մյուս պալատի՝ Դոլմաբախչեի սպիտակ մարմարապատ ճակատը։ Պալատի շուրջը բլուրներին կառուցված տները կարծես իրար վրա կիտված լինեին։

— Ի՞նչ է սա,— հարցրեց Արամը, ձեռքով ցույց տալով այգիներով շրջապատված Թոփգափուին։

— Սուլթանի պալատը։ Դրանից ձախ Սուրբ Սոֆիան է, բլրի հետևում, իսկ աջից «Արևելյան էքսպրեսի» «Սիրկեջի» կայարանն է։

Տղան սարսռաց։ Սուլթա՜ն։ Սուլթանը, որի անունն իրենց գյուղի մարդիկ դողդոջուն ձայնով էին արտասանում։ Այն սուլթանը, որը իրենց բոլորին կյանք պարգևելու կամ սպանելու իշխանությունն ուներ։ Արամը գիտակցեց, որ ինքը շատ ավելի հեռու էր գտնվում իր ծննդավայրից, քան ինքը կարծում էր։ Ոչ, դա ուրիշ աշխարհ էր, այլ իրականություն, որի մասին ինքը գաղափար չուներ։ Նա իր հուզմունքն արտահայտեց խուլ ձայնով ասված նախադասությամբ.

— Ես չէի կարծում, որ քաղաքն այսքան մեծ կարող է լինել։

Այդ նախադասությունն արտասանելու տոնից Վարդանը հասկացավ, թե որքան շփոթված էր իր ուղեկիցը։ Նա տղայի ձեռքը վերցրեց իր ափի մեջ.

— Դու վախենալու բան չունես։ Ես քեզ կամաց-կամաց կծանոթացնեմ քաղաքի հետ և մի օր այն քեզ համար նույնքան հարազատ կդառնա, որքան ձեր գյուղը շրջապատող հանդերը։ Դու կտեսնես, որ սա հազար ու մի երազի քաղաք է, ուր ամեն ինչ հնարավոր է։ Տե՞ս։

Նա ցույց տվեց մի օդանավ, որը թռչում էր նեղուցի ջրերի վրայով։ Արամը, որը երբեք ինքնաթիռ չէր տեսել, հայացքով հետևեց, մինչև այն անհետացավ։ Իրեն հիացրած այդ միջադեպը էլ ավելի սրեց նրա տագնապը։

— Ի՞նչ է ինձ սպասում։ Կապադովկիայում ես միշտ էլ կարող էի աշխատել որևէ գյուղացու մոտ։ Այստեղ...

Վարդանը ձեռքը դրեց նրա ուսին։

— Դու միայնակ չես։ Իմ ընտանիքն ու ես, մենք քեզնով կզբաղվենք։

Նավակը բռնեց Ոսկեղջյուրի ուղղությունը և անցավ Ղալաթիայի կամրջի տակով։ Կամրջի բազրիքին հենված հետաքրքրասերների մեջ շատ էին օտար զինվորները, և նրանց ներկայությունը ջերմացրեց Վարդանի հոգին։ Նրանք ափ իջան և գնացին դեպի Ղալաթիայի աշտարակը։ Մեքենաներ, ձիակառքեր, ավանակներ և հետիոտներ, բոլորն էլ խռնվել էին փողոցներում։ Կլոր հրապարակի կենտրոնում, հարթակի վրա կանգնած ոստիկանը փորձում էր կարգավորել երթևեկությունը ձեռքի շարժումներով և սուլիչի ձայնով։ Չնայած աղմուկին, լսվում էին շոգենավերի շչակների ձայները։

Կոստանդնուպոլիսը չէր փոխվել Վարդանի վերջին՝ 1913 թ., այցելությունից ի վեր։ Մարդկանց վարքագծում և փողոցների մթնոլորտում չէր զգացվում, որ պատերազմ էր եղել, որ Անատոլիայում ջարդեր էին տեղի ունեցել։ Չնայած կապիտուլյացիային, առևտուրն ու գործարարությունը, ինչպես միշտ, համակարգում էրն Կոստանդնուպոլսի կյանքը։ «Անարգ Բյուգանդիոն»— այսպես էին անվանում քաղաքը դարեր առաջ։ Այն այնքան էր հարմարվել նվաճողների ներկայությանը, որ ձուլում էր դրանց։ Եթե ֆրանսիացի և անգլիացի զինվորականների ներկայությունը ոմանց թշնամանք էր հարուցում, ապա բնակիչների մեծամասնությունը ուրախությամբ էր ընկալում եվրոպացիների ներկայությունը, որը նպաստում էր համընդհանուր բարեկեցությանը։

Մայրաքաղաքը միշտ էլ եղել էր հրաշքների և գաղտնիքների քաղաք, խարդավանքների, կրքերի և Արևմուտքի ու Արևելքի հանդիպման վայր, չգործող մի հնոց, ուր ազգերն ու լեզուները խառնվում էին, սակայն չէին ձուլվում։ «...Ուր ամեն ինչ հնարավոր էր»։ Վարդանը հիշեց այս բառերը, որ քառորդ ժամ առաջ ինքն ասել էր Արամին և զգաց, որ ոգեշնչումը հետին պլան էր մղել այն զգացմունքները, որոնք մինչ այդ տիրացել էին իր հոգուն։

Նրանք հասան Յուկսեկ Բանդերրըմ։ Դա մի փողոց էր, որը սանդուղքի էր նմանվում և երիզված էր խանութներով, որով բարձրանալով, նրանք հասան բարեկեցիկ Բերա թաղամասը, ուր հիմնականում ապրում էին հայեր, հույներ, հրեաներ և եվրոպացիներ։ Կենտրոնական փողոցը իր բազմալեզու ցուցանակներով գիշերային ակումբներով, թանկարժեք իրերի խանութներով, ռեստորաններով և հրուշակարաններով մայրաքաղաքի գլխուղեղն էր։ Այստեղ Փարիզի վերջին նորաձևության նմուշներով հագնված նրբագեղ կանանց կողքին կարելի էր տեսնել չարսավների մեջ փաթաթված կանանց, իսկ եզրավոր գլխարկները, նրբաթաղիք գլխադիրները, ֆեսերը և գլխակապերը խաղաղ գոյակցում էին։ Արամը հառաչեց.

— Ապշեցուցիչ է։ Ես չգիտեմ, թե արդյոք ես կկարողանա՞մ ընտելանալ այս ամենին։

— Դա շատ շուտ տեղի կունենա,— պատասխանեց Վարդանը ցրված։

Սա այն թաղամասն էր, ուր ինքն ապրել էր մի ժամանակ և չէր կարողանում չմտածել այն մասին, որ ինքն ու Մարոն գրեթե ամեն երեկո զբոսնում էին այս մայթերով և գնում էին «Մարկիզայի մոտ» հրուշակարանը թխվածք ուտելու և թեյ խմելու։ Նա պարզորոշ հիշում էր Մարոյի ձեռքի ծանրությունն իր ձեռքի վրա, նրա քայլվածքի ռիթմը, որին ինքը հարմարվում էր, նրա ձայնի տեմբրը, երբ նա ցածրաձայն քննարկում էր հանդիպած մարդկանց։ Ապագայի մասին իրենց երազանքները... Վարդանն արագացրեց քայլերը, կարծես փորձելով փախչել իր մտքերից։

Քիչ անց նրանք հասան Ղալաթասարայի վարժարանին, Վարդանը շարունակեց ճանապարհը ուղղահայաց նեղ փողոցով և առանց վարանելու կանգ առավ այն շենքի առջև, ուր ապրում էր իր քեռորդի Տիրանը։ Արամը գերադասեց ներքևում մնալ, իսկ Վարդանն արագ բարձրացավ և, հասնելով բնակարանի դռանն ու հետևելով ժամանակին իրենց սահմանած պայմանական նշանին, երեք երկար զանգ հնչեցրեց, իսկ հետո՝ երկու կարճ։ Մի թուրք բացեց դուռը և պատասխանեց, որ ինքն արդեն մի քանի ամիս ապրում էր այդ բնակարանում։ Նա չգիտեր, թե ուր էր տեղափոխվել նախկին վարձակալը։ Հիսաթափված՝ Վարդանն իջավ այն հույսով, որ Տիրանին գոնե չէին ձերբակալել իր գործունեության համար։ Արամը նստել էր սանդուղքի առաջին աստիճանին և հոգնած տեսք ուներ։ Ճանապարհորդությունը բեռնատար վագոնով երկար էր տևել և դժվարին էր, իսկ նրանք քայլել էին ավելի քան մեկ ժամ։

— Ուզո՞ւմ ես մի քիչ հանգստանանք,— հարցրեց Վարդանը, որը նույնպես հոգնածություն էր զգում։— Դու երևի քաղցած ես։

— Ես կարող եմ շարունակել,— պնդեց տղան, որը չէր ուզում բեռ դառնալ իր ընկերոջ համար։

Ջիակառքը նրանց տարավ մեկ այլ ուղերթով դեպի Ղալաթիայի կամուրջը, որով նրանք անցան և հասան Ենի Ջամի մզկիթի մոտ։

Դերձակի արհեստանոցի և գորգերի ու մետաքսեղենի խանութների միջև ծվարած Մեսրոպ Մեսրոպյանի տպարանը գտնվում էր մի նեղ փողոցում, մզկիթի հարևանությամբ: Վարդանը հուզմունքով նայեց ցուցափեղկին, որի վրա կարմիր տառերով գրված էր՝ «Մեսրոպյան և որդիներ, տպագրիչներ»: Ապակու հետևում ցուցադրված խունացած թանաքով և արևից դեղնած թերթերով տպագրության օրինակները հնարավորություն չէին տալիս տեսնել տպարանի ներսը: Ի՞նչ էր ինքն այնտեղ տեսնելու: Բաբախող սրտով Վարդանը հրեց դուռը, և զանգի ծլնգոցը ազդարարեց նրա մուտքը: Նույն սուր զնգոցը, ինչպես առաջ: Գրասեղանի մոտ նստած Լուսիկ քույրիկը հաշիվներն էր ստուգում: Նա աչքերը բարձրացրեց և ապշեց: Նա մի քիչ գիրացել էր, և նրա նիհար դեմքը այժմ կլորիկ էր դարձել: Մոտ երեսուն տարեկան էր, սակայն ավելի երիտասարդ էր թվում՝ նոր սանրվածքի շնորհիվ:

— Վարդան,— բացականչեց նա:

Գրիչն ընկավ նրա ձեռքից և կեղտոտեց հաշվեմատյանը՝ մի մեծ լաքա թողնելով: Աղմուկով հետ հրելով աթոռը, Լուսիկը վազելով մոտեցավ եղբորը և նետվեց նրա գիրկը:

— Վարդան, Վարդան,— կրկնում էր նա միաժամանակ ծիծաղելով և լացելով:– Ինչպիսի երջանկություն, ինչպիսի երջանկություն:

Վարդանը նրան ջերմորեն գրկեց և ինքն էլ սկսեց հուզմունքից ծիծաղել:

— Այո, սա երջանկություն է: Ես միշտ հույս եմ ունեցել, որ այս օրը կգա: Դու գեղեցկացել ես, Լուսիկ: Ինչպես են հայրդ, մայրդ, Տիրանը:

— Լավ:

— Ես մտա Տիրանի բնակարանը:

— Նա ստիպված էր տեղափոխվել, ոստիկանության պատճառով:

Նա հոնքերը կիտեց և հարցրեց անվստահ.

— Մարո՞ն, Թովմա՞սը:

Վարդանը մռայլվեց:

— Ողջ են, փառք Աստծու: Ես դեռ չգիտեմ, թե որտեղ են, բայց շուտով մենք կտեսնենք նրանց:

Երիտասարդ կինը, թեթևացած, հոգոց հանեց, չնայած եղբոր մտահոգ ձայնը նրան զարմացրեց: Նա մի քիչ հեռացավ և հայացք նետեց գրասենյակն արհեստանոցից բաժանող վարագույրի վրա:

— Այստեղ մնա, ես հայրիկին զգուշացնեմ: Նրան հարկավոր է խնայել:

— Ի՞նչ է նրան պատահել,— հարցրեց Վարդանը մտահոգ:

— Նա սրտի երկու նոպա է տարել տեղահանությունների սկզբից ի վեր: Հիմա իրեն ավելի լավ է զգում, սակայն չպետք է հուզվի: Սպասիր

այստեղ։

Նա անհայտացավ արհեստանոցում, իսկ Վարդանը նշան արեց Արամին, որը խելոք կանգնած էր դռան մոտ։ Երկու րոպե անց վարագույրը մի կողմ թռավ, և Մեսրոպ քեռին ներս եկավ փնթփնթալով իրեն հետևող դստեր վրա։

— Խնայե՛լ, խնայե՛լ։ Այսպիսի հուզմունքը օգտակար է ինձ համար, միայն լռությունն է, որ կրծում է իմ սիրտը։

Քեռին, որը պետք է որ յոթանասուներկու տարեկան լիներ, նիհարել էր և կորցրել այն գիրուկ տեսքը, որը նա բարեկեցության նշան էր համարում, իսկ գլուխը գրեթե ամբողջությամբ ճաղատ էր։ Նա ձեռքերը պարզեց և գրկեց Վարդանին առանց մտահոգվելու իր կեղտոտ գոգնոցի և թանաքոտ ձեռքերի մասին։

— Տղա՛ս։ Ի՛մ սիրելի զարմիկ։ Փառք Աստծու։ Հազար փառք Աստծուն։ Լուսիկն ասաց, որ Մարոն ու Թովմասը շուտով մեզ կմիանան։ Աստված լսեց իմ աղոթքները։

Վարդանը գերադասեց չհերքել կնոջ և որդու հնարավոր վերադարձի մասին ակնարկը։ Քեռին հետ-հետ գնաց, հանեց ոսկե շրջանակով ակնոցը և արցունքները սրբեց։

Վարդանը նկատեց, որ աչքերի տակ այտուցներ ուներ և շատ գունատ էր։

— Հերիք է վրաս բժշկի պես նայես,— ասաց Մեսրոպը ծիծաղելով։— Ես երբևէ այսքան առողջ չեմ եղել։

— Այդպես եմ նայում, որպեսզի համոզվեմ, որ սա երազ չէ, որ ես իսկապես Կոստանդնուպոլսում եմ։

Քեռին կրկին գրկեց իր զարմիկին և մի կուշտ լացելով շշնջաց.

— Աստված հրաշք է գործել։

Երկար հոգոցներից հետո նա թաշկինակով աչքերը սրբեց և ներողություն խնդրեց.

— Տարիքն ինձ կնոջ պես լալկան է դարձրել։

Եվ նա նորից ծիծաղեց և Վարդանին զննեց ոտքից գլուխ։

— Դու չես փոխվել, որդիս։ Ընդամենը մի քիչ նիհարել ես։ Քունքերիդ սպիտակն ավելացել է։ Այդպես չէ՞, Լուսիկ։

Լուսիկը հաստատեց։

— Վարդանը մեր ընտանիքի ամենագեղեցիկ տղամարդն է։

Իրեն օտար զգալով այդ ընտանեկան տեսարանի ընթացքում, Արամը գնաց սենյակի խորքը, մի կողմ քաշեց վարագույրը և մի հայացք նետեց արհեստանոցի կողմը։ Տպագրիչ մեքենայի կտկտոցը էլ ավելի հստակ լսվեց։ Արամին նկատելով՝ Մեսրոպը հրամայական տոնով ասաց.

— Ա՛յ տղա, քարշ մի եկ այստեղ։

— Սա իմ ուղեկիցն է,— ասաց Վարդանը, գնալով նրա հետևից և նրան ներկայացնելով հարազատներին։— Քեռի ձեզ եմ ներկայացնում Արամին, որին ես իմ որդին եմ համարում։ Գիտեք, նա հերոս է։ Նա փրկել է բազմաթիվ որբերի, և ես իմ կյանքով նրան եմ պարտական։

Մեսրոպ Մեսրոպյանը գրկեց տղային և համբուրեց.

— Բարի գալուստ, Արամ։ Դու կարող ես քեզ համարել մեր ընտանիքի անդամը։

Արամը, շփոթված, գլխով արեց։ Նա կարմրեց, երբ Լուսիկը սեղմեց ձեռքը և նրան «Արամ եղբայր» անվանեց։

— Ես փակում եմ տպարանը,— հայտարարեց Մեսրոպ քեռին։– Մենք գնում ենք խմելու և քեֆ անելու։ Լուսիկ, գնա եղբորդ հետևից, և մեզ միացեք տանը։

Նրանք տաքսի վերցրեցին՝ նախապատերազմյան մի «Սիտրոյեն», որի որոշ մասերը պակասում էին, Հարբիյե թաղամասը, ուր ապրում էին Մեսրոպյանները, գնալու համար։ Ջառիթափ փողոցի վրա կային համեմատաբար նոր տներ և մի քանի՝ առնվազն երկու հարյուր տարեկան փայտյա գորշ տներ փայտե ճաղերով լուսամուտներով, որոնք հնարավորություն էին տալիս մահմեդական կանանց դուրս նայել առանց դրսից երևալու։ Թուրք ընտանիքները շարունակում էին իրենց նախնիների տներում ապրել, չնայած շրջապատում հիմնականում հայեր էին բնակվում։

Արփինե մորաքույրը, որն է՛լ ավելի էր գիրացել, իսկ մազերը լրիվ ճերմակել էին, նրանց բուռն ընդունեց։ Նա չխնայեց ոչ ուրախության բացականչությունները, ոչ օրհնանքները Աստծու և նրա բոլոր սրբերի հասցեին, խառնեց ծիծաղն ու արտասուքը, հարցը հարցի վրա տվեց առանց պատասխանների սպասելու և ուզեց ամեն ինչ միանգամից անել, խմիչք մատուցել, ճաշը պատրաստել, Վարդանին ու նրա պատանի բարեկամին կարգին հագուստ տալ։ Նա, որ սովորաբար շատ հանգիստ էր և այնքան գործունյա, որ ընդունում էր հանպատրաստից եկած հյուրերին այնպես, կարծես նրանց սպասում էին, այսօր շփոթված էր թվում։ Նա դես ու դեն էր գնում, ինչ-որ գործեր էր ձեռնարկում և կիսատ թողնում, գնում էր դեպի խոհանոց, հետո ճանապարհի կեսից հետ էր գալիս ասելու համար այն, ինչ մոռացել էր։ Մեսրոպը նրան ստիպեց կանգ առնել, նրան մղեց դեպի բազմոցը, իսկ ինքը գնաց կոնյակի շիշը և բաժակները բերելու։ Մեր կինը նստեց զարմիկի կողքին, շոյեց նրա մազերը և բազմիցս համբուրեց։ Հետո սեղմեց նրա ձեռքերը և այդպես լուռ նստեց՝ նրան նայելով։ Երանելի մի ժպիտ կերպարանափոխել էր նրան։

Վարդանը աչքը պտտեց հյուրասենյակով։ Թավշյա երկու բազմոցները, մի քանի աթոռները, գրադարակները, ցածր սեղանները դրանց վրա կիտված թերթերով, մեծ պարսկական գորգը և լուսամուտների դիմաց դրված բույսերը թաղարների մեջ. ամեն ինչ այնպես էր, ինչպես ինքը

հիշում էր, սակայն նա տարօրինակ և տհաճ մի զգացողություն ուներ, կարծես այդ պահն ինքն արդեն ապրել էր։ Միգուցե այն պատճառով, որ շատ էր սպասել այդ պահին։

— Պարգևը դեռ Նյու Յորքո՞ւմ է,— հարցրեց նա ճնշող լռությունը խախտելու համար։

— Նա անդամագրվել է Արտասահմանյան զորաբանակին և կռվել է Սիրիայում ֆրանսիացիների հետ։

— Նուբարից նորություններ կա՞ն։

— Եղբայրդ ու նրա կինը դեռևս Երուսաղեմում են։ Նրանք մեզ հայտնել են, որ կգան Ամանորից հետո։

— Ես շատ եմ ուզում նրանց տեսնել,— հառաչեց Վարդանը մտածկոտ։

— Մարոն ու Թովմասն այդ ժամանակ մեզ հետ կլինեն, չէ՞։

Քեռին եկավ շիշը ձեռքին, իսկ Արամը բյուրեղապակյա սկուտեղի վրա դրած բաժակներ էր բերում։ Վարդանն օգտվեց նրանց հայտնվելուց՝ բացատրություններից խուսափելու համար։ Ծեր կինը մտահոգված տեսքով իր զարմիկին էր նայում և պատասխանի էր սպասում։ Մեսրոպը բոլորին խմիչք լցրեց.

— Ես բաժակ եմ բարձրացնում Մարոյի ու Թովմասի մոտալուտ վերադարձի համար,— ասաց Արփինեն, Վարդանին խոսեցնելու նպատակով։

— Այն պահի կենացը, երբ մենք բոլորս միասին կլինենք,— ավելացրեց Մեսրոպը, որը լսել էր իր կնոջ հարցը հյուրասենյակ մտնելիս։

Վարդանը լուռ խմեց, հետո նայեց ազգականներին և խոսեց ջանալով թաքցնել հուզմունքը.

— Անկեղծ լինելու համար... Ես գիտեմ միայն, որ Մարոն ու Թովմասը ապրում են Այնթապի վալիի մոտ։ Ի՞նչ պայմաններում, ես ոչինչ դրա մասին չգիտեմ։

— Նրանք բանտարկյալ են,— ասաց Արամը, որի լեզուն կոնյակից բացվեց։ Նրա քինոտ ձայնը զարմացրեց բոլորին և նրանք շրջվեցին տղայի կողմը, որը կանգնած էր լուսամուտի մոտ։ Ծեր մարդու և նրա կնոջ շփոթված տեսքից, իսկ Վարդանի կատաղած հայացքից Արամը հասկացավ, որ ավելի լավ կլիներ, եթե չբացահայտեր իր ատելությունը։ Այնթապի հիշատակումը նրան Պետրիին հիշեցրեց և արնաշաղախ Արուսյակին։ Նա շրջվեց և աչքերը փողոցին հառեց։

— Արամը ճիշտ է ասում,— համաձայնեց Վարդանը։— Ես կասկածում եմ, որ նրանց այնտեղ են պահում իրենց կամքին հակառակ։

— Այդ մարդը պետք է թույլ տա նրանց հեռանալ,— մռնչաց Մեսրոպ քեռին բռունցքը բազկաթոռի արմնկակափն իջեցնելով։— Հիմա,

պատերազմի ավարտից հետո, նա ստիպված կլինի։

— Այո, և ես կջանամ, որ դա որքան կարելի է ավելի շուտ տեղի ունենա։

Վարդանի ձայնը այնքան վճռական հնչեց, որ նրա խոսքերին խորը լռություն հետևեց։ Բոլորը մտածում էին ասվածի մասին և փորձում պատկերացնել, թե ինչպիսին կարող էր լինել Մարոյի և նրա որդու վիճակը օսմանյան գավառապետի տանը։ Խոսակցությունը շարունակելու համար Արփինե մորաքույրը մեղմորեն ասաց.

— Կարևորն այն է, որ երկուսն էլ ողջ են, որ նրանք ջարդերին զոհ չեն գնացել։ Կարևոր չէ, թե ինչպես...

Նա ուշադիր նայեց զարմիկին։ Հայացքը շատ պերճախոս էր։ Վարդանը գլխով արեց.

— Դուք իրավացի եք, Արփինե մորաքույր։

Մեսրոպը խմեց իր կոնյակը և ամփոփեց.

— Աստված այնքան գթասիրտ է, որ մեզ իր հովանու տակ է առել այս փորձությունների ընթացքում։ Նա խնայեց մեր ընտանիքը և դա իսկական հրաշք էր։ Միայն քո զոքանչը...

— Խեղճ կին,— շշնջաց Վարդանը, որի աչքի առաջ հայտնվեց Ազնիվ խանումը՝ իր խիստ սև շրջազգեստով, ամեն առավոտ իրեն թեյ մատուցելիս։

* * *

Անցած տարիները չէին զրկել Տիրանին պատանեկան եռանդից, որը նրա հմայքի հիմնական մասն էր կազմում։ Ճակատի կնճիռները նրան լուրջ տեսք էին տալիս, նա գլխահակ էր քայլում, կարծես մտքերի մեջ խորասուզված լիներ։ Սակայն հենց որ սկսում էր խոսել, նրա շագանակագույն աչքերը բոցավառվում էին, նա ձեռքերն էր թափահարում, իսկ երբ լսում էր իր զրուցակցին, նրա ճակատը նորից կնճռոտվում էր, և նա հաճախակի ձեռքը տանում էր դեպի իր քթի ծայրը։

Քեռորդիները, նույն տարիքի լինելով, իրար որպես եղբայր էին ընկալել և կիսել ամեն ինչ. խաղերը արձակուրդների ժամանակ, սիրային արկածները վարժարանում սովորելիս, իսկ հետո քաղաքական գործունեությունը։ Նրանց հանդիպումն այնքան հուզական էր, որ նրանք չէին կարողանում խոսել։ Բոլորի հուզված հայացքի ներքո նրանք գրկախառնվեցին և բարձրաձայն ծիծաղելով միմյանց մեջքին էին թփթփացնում։

— Եղբայրս,— վերջապես ասաց Տիրանը։— Հենց սկզբից ես գիտեի, որ նրանց ձեռքերը կարճ էին քեզ հասնելու համար։ Քո նամակը... Օ՜, քո

նամակը, երկու տարի առաջ։ Իսկ հետո քո հոդվածները։ Սակայն կարո՞ղ ես ինձ ասել, թե ինչու էիր քո անունով ստորագրում։

Հիմա, որ նա ուշքի էր եկել, հարցերը խռնվում էին նրա գլխում։ Նա շտապում էր իմանալ, թե ինչ էր կատարվել Վարդանի հետ։

— Ինչո՞ւ չէիր ընտրել քո սովորական ծածկանուններից մեկը,— նորից հարցրեց նա։

— Ուզում էի բոլորին իմաց տալ, որ ողջ եմ։

— Դու ինձ շփոթության մեջ չես գցի։ Դե լա՛վ, Վարդան, խոստովանիր, որ այդպիսով դու մարտահրավեր էիր նետում կառավարությանը։

— Ես դրա մասին մտածելու սիրտ չունեի։ Գուցե դրանում մի քիչ սադրանք կար։

— Ես գիտեի,— հաղթական տեսքով ասաց Տիրանը։

Մինչ Արփինե մորաքույրն ու Լուսիկը ճաշ էին պատրաստում, տղամարդիկ հյուրասենյակում դանդաղորեն դատարկեցին կոնյակի շիշը։ Վարդանը ստիպված եղավ նորից բացատրել, թե որտեղ էին Մարոն ու Թովմասը։ Տիրանը հայհոյեց, իսկ հայրը վրդովված հայացք նետեց նրա վրա։ Նա ասաց.

— Ես կօգնեմ, որ դու նրանց Պոլիս բերես։ Անհրաժեշտության դեպքում կդիմեմ ընկերներիս օգնությանը։

Այս երեք տարիների ընթացքում Տիրանը կարդացել էր Վարդանի բոլոր հոդվածները և անհամար վկայություններ տեղահանության մասին, սակայն ուզում էր, որ եղբայրը նկարագրեր այն ամենը, ինչի վկան ինքը եղել էր։

Վարդանը հակաճառեց.

— Պահն այնքան էլ հարմար չէ, չե՞ս կարծում։

— Տիրան, դու անուղղելի ես,— ասաց Մեսրոպ քեռին խիստ տոնով։– Դու երբեք չես տարբերում, թե ինչն է պատեհ, ինչը՝ ոչ։ Այսօր մենք տոնում ենք մեր երջանկությունը։ Դժբախտությունների մասին կխոսենք մեկ ուրիշ անգամ։

Տիրանը, որը սովոր էր այդ հանդիմանություններին, չպատասխանեց։ Հոր հիվանդությունից հետո նա խուսափում էր նրա հետ վիճելուց։

— Ճիշտ է, կարելի է և հետաձգել։

Սակայն նա չէր կարողանում իրեն զսպել և երբ Մեսրոպը խոհանոց գնաց, նա հայտարարեց.

— Մենք շատ աշխատանք ունենք անելու, Վարդան։ Թուրքերը պետք է պատասխան տան։

— Ուզում ես ասել՝ սուլթանի կառավարությունը։ Շատ թուրքեր կան, որոնց շնորհիվ ես այսօր այստեղ եմ։

— Այո, ես դա էի ուզում ասել՝ Թալեաթը և նրա հրոսակախումբը,— ասաց Տիրանը, որը չէր սիրում, երբ իր սխալներն էին բռնում։— Օգնության կապակցությամբ... Ուրգուպի այդ կինը... ինչպես է նա։

— Արուսյակը...— ասաց Վարդանը դողդոջուն ձայնով։— Նա մահացել է։

— Ինչպիսի՜ դժբախտություն։

Արամը լարվեց և գունատվեց։ Նա չէր կարող հանդուրժել, որ Վարդանը այդ ողբերգության մասին կիսատ-պռատ խոսեր և գրգռվեց.

— Նրան տանջել էին, դրանից է մահացել։

Վարդանը նշան արեց լռելու, սակայն Արամը անթարթ նայում էր Տիրանին, հանձին որի նա հետաքրքրված ունկնդիր էր գտել։ Նա պահանջ էր զգում պատմելու այն ամենը, ինչ խեղդում էր իրեն։

— Ես նրա համար վրեժխնդիր եղա իմ դաշույնով,— ասաց նա ձեռքը թափ տալով։

— Պատմիր ինձ,— խնդրեց Տիրանը, նրան իր կողքին նստեցնելով։

Վարդանը վեր կացավ և գնաց լվացվելու։ Արամի հետ մենակ մնալով, Տիրանը, որը ոգեշնչվել էր Արամի պատմածներից, հարցուփորձ արեց նրա ընտանիքի մասին, այն մասին, թե ինչպես էին նրանք Արուսյակի ու Քերիմի հետ միասին փրկում որբերին Կապադովկիայում։ Տիրանը, որը անհագ էր, բազմաթիվ հարցեր էր տալիս։ Նրա ձայնի մեջ նախանձ էր զգացվում, հայացքում մի տեսակ տենդ կար, քանի որ ինքը ափսոսում էր, որ չէր մասնակցել այդ իրադարձություններին։

Երբ Մեսրոպը վերադարձավ հյուրասենյակ, Արամը խոսում էր ձեռքերը թափ տալով, և ծեր մարդը նոր նկատեց տղայի ձեռքի վիրակապը, քանի որ մինչ այդ Արամը ձեռքը գրպանում էր պահում։

— Դու վիրավորվա՞ծ ես,— անհանգստացավ նա։

— Մեծ բան չէ։

Տիրանը պնդեց, որ Արամը ցույց տար իր վերքը, և տղան, ամաչելով, ցույց տվեց։ Մեսրոպն ու նրա որդին այլայլվեցին սարսափից, կարծես չորս հատված մատներով ձեռքը խտացումն էր այն սարսափելի պատմությունների, որ նրանց պատմել էին։

— Նրան հարկավոր է հիվանդանոց տանել,— բացականչեց Տիրանը։— Վերքը բորբոքված է։ Վարդանը չի՞ նկատել։

Արամը պաշտպանեց իր բարեկամին.

— Այո, նկատել է, բայց ավելի կարևոր էր կյանքներս փրկել։

Նա նորից վիրակապեց ձեռքը և, աքլորանալով, ասաց.

— Սա վաղուցվա վերք է և կարող է մեկ օր էլ սպասել։ Ես այլևս ցավ չեմ զգում, բայց սովից մեռնում եմ։

Այդ խոսքերից Մեսրոպ քեռին, որը մատով արցունքն էր սրբում, ծիծաղեց։ Նա թփթփացրեց տղայի ուսին.

— Սա այն մարդկանցից է, որոնց ես սիրում եմ։ Դա գոհ կլինես, տղաս, իմ կինը գերազանց խոհարար է։

Ճաշասենյակի սեղանն արդեն գցված էր։ Արփինե մորաքույրը լավագույն սպասքն էր դրել։ Նրանք խաչի նշանն արեցին և տան տերն աղոթեց բացակաների համար։ Լուսիկը լոլիկով և դափնետերևով պատրաստված ձուկ բերեց։ Արամը ախորժակով էր ուտում՝ առանց հետևելու վարվեցողության կանոններին, և ոչ մեկի մտքով չանցավ նրան նկատողություն անել։ Հակառակը, Մեսրոպը նրան նորանոր ուտեստներ էր առաջարկում և ստիպում էր, որ բոլորից էլ վերցներ։ Արփինեն հետևում էր տղային նույն մայրական հայացքով, ինչպես և իր որդուն ու զարմիկին։ Քեռին խոսում էր իր տպարանի մասին և ասում էր, որ պատվերները կրկին շատացել էին տարիների անգործությունից հետո, և նա տեղեկություններ էր հաղորդում թաղի այն հայերի մասին, որոնց Վարդանը ճանաչում էր։ Նրա կինն ու Լուսիկը ձայնակցում էին նրան, Տիրանը խուսափում էր իրեն հետաքրքրող ասպարեզից՝ քաղաքականությունից խոսելուց, և դրանից զրույցը շատ թեթև էր, կարծես պատերազմը նոր չէր ավարտվել։

Նրանք բոլորն ուզում էին ամեն ինչ մոռանալ և նոր կյանք սկսել, սակայն Վարդանն իրեն այդ շռայլությունը չէր կարող թույլ տալ։

Այս ճաշկերույթը նրան կրկին հիշեցնում էր, որ իր համար ոչինչ ավարտված չէր, և եթե նա պատասխանում էր տան տերերին կամ գլխով էր անում, ապա թաքցնելու համար, որ ինքը նրանց ուշադիր չէր լսում։ Մարոյի բացակայությունն այդ պահին նա գրեթե ֆիզիկապես էր զգում։ Չէ՞ որ իրենք այնքան անգամ էին ճաշել այդ սեղանի շուրջ և Մարոն նստում էր Արամի նստած տեղում։ Չնայած ինքը շատ ուրախ էր կրկին Մեսրոպյանների տանը սեղան նստելու, սակայն չէր կարողանում կենտրոնանալ։ Նա հիշում էր Սվասի իր տան ճաշասենյակը, Թովմասի տարեդարձի ճաշկերույթը, որը փաստորեն իրենց համար հրաժեշտի ճաշկերույթ էր, գրամոֆոնի երաժշտությունը, որը ոչ ոք չէր լսում, երգող Մարոյի հիասքանչ ձայնը, տան դռանը կապված պոնիի մասին մտածող Թովմասի երջանիկ դեմքը, Ազնիվ խանումի, Արմենի, Արաքսիի տխուր աչքերը...

— Ինչի՞ մասին ես մտածում, եղբայր,— ջերմորեն հարցրեց Լուսիկը՝ հպվելով նրա ձեռքին։

Վարդանը ցնցվեց և ներողություն խնդրեց այդ բացակայության համար։

— Դու շատ հոգնած ես, իսկ մենք քեզ ձանձրացնում ենք մեր զրույցներով,— ասաց Արփինե մորաքույրը։— Ուզո՞ւմ ես գնալ և պառկել։

— Ինձ ձեր թանկագին ներկայությունից, էլ չասած ձեր շատ համեղ ուտեստներից զրկելո՞ւ համար,— պատասխանեց Վարդանը՝ իրեն

ստիպելով ծիծաղել։— Երբե՛ք։

Տիրանն իր ծնողներին և քրոջը պատմեց Արամի քաջագործության մասին, որը հարձակվել էր ատրճանակով զինված տղամարդու վրա Վարդանի կյանքը փրկելու համար։

— Աստված իմ, մի՞թե դա հնարավոր է,— բացականչեց Արփինե մորաքույրը վախեցած։— Այդքան փոքր և այդքան քաջ։

— Ես տասնվեց տարեկան եմ,— հակաճառեց Արամը,— և ֆիդայի եմ։

Մեսրոպ քեռին գունատվեց և վայր գցեց պատառաքաղը։ Տիրանը հիացած սուլեց և գրգռված ձայնով ասաց.

— Արամի պես երեխաների գոյությունը ապահովում է մեր ապագան։ Ես խմում եմ Հայաստանի կենացը։

— Տիրան,— նրան կարգի հրավիրեց մայրը, աչքերով Մեսրոպին ցույց տալով, որը բարկանում էր։— Դրա ժամանակը չէ։

— Ֆիդայի, ֆիդայի,— փնթփնթաց քեռին անտրամադիր։— Բռնությամբ հնարավոր չէ ոչինչ անել։

Նա խորը շունչ քաշեց հանգստանալու համար, բարձրացրեց բաժակը, և նրա օրինակին հետևեցին բոլորը։ Նա շարունակեց վճռական ձայնով.

— Այո, ես խմում եմ Հայաստանի կենացը։ Բայց իմացեք, զավակներս, որ բռնության և զենքի վրա հույս դնելը սխալ է։ Ի վերջո, հաղթանակում է այն երկիրը, որն ունի աչքի ընկնող և բանիմաց սերուցք, և ոչ այն երկիրը, որն ավելի մեծ բնակչություն ունի կամ բանակ։

Տիրանը համաձայն չէր։

— Իսկ ի՞նչ կասես մերոնց հաղթանակների մասին օսմանյան բանակի դեմ ռուսական ճակատում։ Նրանք մեզնից հարյուր անգամ շատ էին։

Հայրը փնթփնթաց.

— Իսկ ինչպե՞ս կարող է մի բուռ մարդ կանգնեցնել մեծ բանակը, ի՞նչ ես կարծում։ Որովհետև նրանք ավելի լա՞վ էին զինված։ Ո՛չ։ Որովհետև նրանք տոգորված էին գաղափարով։ Այդ հաղթանակները, որոնց մասին խոսում ես, հաստատում են իմ խոսքերը։ Ի՞նչ ես կարծում, Վարդան։

Վարդանն ուսերը թոթվեց։ Արփինեն հայացքով նրան աղերսում էր միջամտել։ Վարդանը չէր սիրում որպես դատավոր հանդես գալ իր քեռու և եղբոր վեճերի ժամանակ, ինչպես հաճախ էր պատահում անցյալում։

— Պետք է խոստովանեմ, որ լավ չեմ հասկանում, թե ինչն է ձեզ հակադրում։

Տիրանը մի կողմ հրեց իր ափսեն և, բացատրելով, սկսեց քարտեզ նկարել վուշե սփռոցի վրա.

— Ես ասում եմ, որ մենք պետք է պայքարենք մեր երազած Մեծ Հայքը նվաճելու համար։ Անատոլիայի հայկական գավառները չի կարելի

թողնել այն մարդկանց, ովքեր ոչ մի իրավունք չունեն դրանց տիրանալու։ Հայրիկը, հակառակը, համարում է, որ մենք պետք է բավարարվենք այսօրվա Հայաստանով՝ Արևելյան Հայաստանով, այն պատճառաբանությամբ, որ արդեն իսկ շատ արյուն է հեղվել։

Մեսրոպ քեռին մատը սեղանին խփեց.

— Հինգ դարերի ընթացքում մենք վերջապես երկիր ունենք, որի մասին կարող ենք ասել, որ մերն է։ Կարևոր չէ, որ այն փոքր է, այն մերն է, և դա բավական է, որ ամբողջ աշխարհի հայերն իրենց որբ և անհայրենիք չզգան։ Չի կարելի վտանգել այն, ինչ ունենք, ձգտելով նվաճել այլ տարածքներ։

Նա լռեց և նայեց զարմիկին՝ սպասելով իր կարծիքի հաստատմանը։ Տիրանը նույնպես սպասում էր Վարդանի պատասխանին։ Վարդանը պատառը կուլ տվեց և մի կում գինի խմեց մտածելու ժամանակ ունենալու համար։ Նրա կարծիքով, ինքը հիասթափեցնելու էր և՛ մեկին, և՛ մյուսին։

— Մեսրոպ քեռի, դուք ինչ-որ չափով իրավացի եք։ Մեր ժողովրդի համար շատ կարևոր է, որպեսզի վերջապես գոյություն ունենա այդ անկախ Հայաստանը, որը ոգեշնչման աղբյուր է յուրաքանչյուրիս համար։ Դա շատ փոքր ձեռքբերում է, որը պետք է ամրապնդել, սակայն դա չի նշանակում, որ մենք չենք կարող ապագայում ավելի մեծ հավակնություններ ունենալ։ Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի Անատոլիայի հայկական գավառները, ինչպես նաև Կիլիկիան մեզ հանձնվեն։ Իհարկե, հաղթանակած դաշնակիցների հետ բանակցությունների միջոցով։ Հնարավո՞ր է դա, արդյոք։ Միայն ապագան ցույց կտա։

— Սողոմոնի վճիռ,— հայտարարեց Լուսիկը, որը հրճվեց, տեսնելով, թե ինչպես հոր և Տիրանի վեճը ոչ ոքի ավարտվեց։

Մեսրոպը Տիրանին նայեց գրեթե աղերսող հայացքով, սակայն դիմեց Վարդանին.

— Տիրանն ուզում է այնտեղ գնալ։ Ես ապարդյուն կերպով նրան ասում եմ, որ այնտեղ կռիվ է, սով, համաճարակներ...

— Յուրաքանչյուրը պետք է կարեցածն անի իրավիճակի բարելավման համար,— հետադարձեց Տիրանը։— Ինձ թվում է, որ ես օգտակար կլինեմ այնտեղ։

Հայրը հոգնած ձայնով ասաց.

— Ինձ թվում է, որ Կոստանդնուպոլսում շատ բան կա անելու։ Պետք է հասնել այն բանին, որ դաժանությունների պատասխանատուները պատժվեն, որ Մարոյի և Թովմասի պես գերության մեջ հայտնված կանայք ու երեխաները ազատ արձակվեն, որպեսզի բաժանված ընտանիքները վերամիավորվեն, պետք է զբաղվել որբերով, պետք է պահանջել ողջ մնացածների ունեցվածքի վերադարձը։

— Դրանով զբաղվող շատ մարդ կա, հայրիկ։

Մեսրոպը շարունակեց փաստարկել.

— Հիմա, երբ Օսմանյան կայսրությունը պարտվել է, կկատարվեն այն բարեփոխումները, որոնք մենք միշտ պահանջել ենք։ Անհրաժեշտության դեպքում արևմտյան տերությունները դրանք կպարտադրեն կառավարությանը և սուլթանին։ Հավասարություն, դավանանքի ազատություն, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, նույն օրենքները բոլոր քաղաքացիների համար։

— Ես դրան չեմ հավատում,— ամփոփեց Տիրանը։– Կտեսնեք, պանթուրանիզմին փոխարինելու կգա ազգայնամոլությունը, և մեզ համար ոչինչ չի փոխվի։

Վարդանը ոչ մեկի կողմը չէր ուզում բռնել, հատկապես որ ճիշտ մտքեր կային և՛ մեկի ասածներում, և՛ մյուսի, սակայն պակասում էին տարրեր, որոնք թույլ կտային կանխատեսել այն շրջադարձը, որ կարող էր անել պատմությունը առաջիկա ամիսների և տարիների ընթացքում։ Եվ, բացի դրանից, նա գիտեր, որ անիմաստ էր փորձել հաշտեցնել Մեսրոպի և նրա որդու տեսակետները։ Բավական էր, որ մեկը մի տեսակետ հայտներ, ապա մյուսը անմիջապես հակառակը կասեր։ Չնայած անսահման սիրուն, որը միավորում էր նրանց, նրանք միշտ հակադրվել էին միմյանց, անկասկած այն պատճառով, որ իրար շատ նման էին։ Նրանք միայն մեկ հարցում էին համամիտ եղել՝ հակասություններից խուսափելու միակ միջոցը Տիրանի առանձին ապրելն էր։

— Իսկ եթե ուրիշ բանից խոսենք,— առաջարկեց Արփինե մորաքույրը։– Վարդանն ու նրա պատանի բարեկամը նոր են եկել։

Մեղավոր ժպտալով՝ Մեսրոպն ու Տիրանը համաձայնվեցին։ Դրանից հետո զրույցն ընթացավ զգուշավորությամբ։ Խոսեցին պատերազմի և այն փոփոխությունների մասին, որոնք տեղի կունենային ամբողջ աշխարհում, սակայն ինչ-որ կեղծ բան կար, երբ խոսում էին Օսմանյան կայսրության անկման մասին առանց հիշատակելու Հայաստանը։

Ճաշի ավարտին որոշվեց, որ Արամը պետք է մնար Մեսրոպյանների տանը, ուր տղաների սենյակն ազատ էր, իսկ Վարդանը գնար Տիրանի մոտ։

* * *

Բերայի կենտրոնական փողոցի գիշերային կյանքի մարելուն պես, զարթնեց Կոստանդնուպոլիսը իր աշխատավորների, բեռնակիրների, արհեստավորների ու խանութպանների հետ, որոնց երկար օրը հազիվ էր բավականացնում իրենց ապրուստը վաստակելու համար։ Երթևեկության աղմուկը, որը բաղկացած էր սայլերի ճռռոցից և

մեքենաների շարժիչների պայթյուններից, խրխնջոցներից և մեքենաների շչակներից, արթնացրեց Վարդանին։ Նրան մի քանի վայրկյան անհրաժեշտ եղավ՝ հիշելու, որ գտնվում էր իր քեռորդու նոր բնակարանում, նախկին բնակարանից երկու փողոց այն կողմ։ Հարկադրված լինելով տեղափոխվել, Տիրանը չէր ցանկացել շատ հեռանալ կենտրոնական փողոցից, որի աշխուժությունը նրան անհրաժեշտ էր։

Մթության մեջ մոտ տասը զույգ աչքեր նայում էին Վարդանին։ Դրանք հայ գործիչների լուսանկարներն էին՝ զորավարներ, գրողներ և փիլիսոփաներ, որոնք քեռորդին փակցրել էր իր հյուրասենյակի պատերին։ Հյուրասենյակը կահավորված էր մի բազմոցով, որի վրա քնել էր Վարդանը, կարմիր փայտից պատրաստված մի ցածր սեղանով, որի վրա լրագրեր էին կիտված, և երեք տարբեր ոճի աթոռներով, իսկ այդ լուսանկարները հյուրասենյակի միակ զարդն էին։

Չնայած նրանք մինչև ուշ գիշեր խոսել էին ձերբակալությունից հետո Վարդանի հետ տեղի ունեցածի մասին, վերջինս չկարողացավ քնել։ Նա շտապում էր գործի անցնել Մարոյին ու Թովմասին ազատելու համար։ «Պահել»... Ի՞նչ էր թաքնվում իրականում այդ բառի տակ։ Արդյոք նրանց ձերբակալել էին իրեն ձեռք գցելու համա՞ր։ Դժվար էր պատկերացնել։ Ամենատրամաբանական բացատրությունը Մարոյի հիասքանչ գեղեցկությունն էր... Վարդանը հեռու քշեց այդ միտքը և կենտրոնացավ ձեռքի տակ եղած միջոցների վրա, որոնք կօգնեին իր հարազատների ազատագրության գործին։ Մարոյին հեռագիր ուղարկելու մասին նույնիսկ չէր կարելի մտածել։ Հեռագիրը նրան չէր հասնի և միայն կարող էր նախազգուշացնել գավառապետին, որը հնարավորություն կունենար նրանց տեղափոխելու, իսկ հետո ասելու, որ ինքը ոչնչից տեղյակ չէր։

Փոքրիկ խոհանոցին հարող ճաշասենյակում Տիրանը սեղանն էր գցում։ Վարդանը միացավ նրան։ Մինչդեռ քեռորդին նախաճաշում էր, կլանելով հաց, պանիր, մուրաբա և ձիթապտուղ, Վարդանը սովորականի պես բավարարվեց թեյով։ Նա Տիրանի հետ կիսեց իր հոգսերը Մարոյի և Թովմասի կապակցությամբ։

— Դժբախտաբար ընկերներիցս ոչ մեկը չի կարող օգնել,— պատասխանեց Տիրանը մտահոգ տեսքով։— Մեծամասնությունը թաքնվում է սուլթանի ոստիկանությունից։ Լավ կլիներ, եթե դու կապվեիր «Ռոբերտ վարժարանի» դեկանի հետ։ Նա Մերձավոր Արևելքի օգնության կոմիտեի նախագահն է և, անկասկած, կկարողանա քեզ օգնել կամ գոնե խորհուրդ տալ։

— Ես նրա մոտ կգնամ հենց այսօր։

— Իսկ հետո ի՞նչ ես մտադիր անել։

— Արամին հիվանդանոց պետք է տանեմ։

— Դրա մասին չեմ հարցնում, Վարդան։ Առաջիկայում։

— Դեռևս չգիտեմ։ Մինչև Մարոն ու Թովմասն այստեղ չլինեն...

— Մենք քո կարիքն ունենք։ Դու անհատականություն ես, Վարդան։ Պատերազմի ընթացքում քո գրած հոդվածները բարձրացրել են քո վարկը հայության շրջանում։

— Եվ անկասկած անցանկալի են դարձրել կառավարության աչքերում։ Ուդի Յաշար դերվիշին փնտրում են սպանության համար և ես չգիտեմ՝ ոստիկանությունը չի՞ բացահայտել, թե ով էր թաքնվում այդ անվան տակ։ Հիմա տեղաշարժվում եմ մի թուրք բարեկամի փաստաթղթերով։ Այս պահին ես գերադասում եմ աննկատ մնալ։

— Մեր գործին օգնելու այլ միջոցներ էլ կան։

— Դրա մասին կխոսենք մեկ այլ անգամ, խնդրում եմ։ Այս առավոտ գլուխս խառն է, և միակ մտահոգությունս կնոջս և որդուս գտնելն է։

Նախաճաշից անմիջապես հետո Վարդանը կառք վարձեց Արամին Յեդիկալեի հայկական կենտրոնական հիվանդանոց տանելու համար, որը գտնվում էր Մարմարա ծովի ափին։ Երկար ճանապարհը դուր եկավ տղային, որին ամեն ինչ զարմացնում էր. տարբեր ազգերի բազմությանը, հնի և նորի խառնուրդը, ավտոմեքենաները և, հատկապես, եվրոպական հագուստով կանայք, որոնց ոտքերը բաց էին մինչև սրունքները։ Երկու ժամ սպասելուց հետո, քանի որ հիվանդների և վիրավորների բազմությունը խռնվել էր հիվանդանոցի միջանցքներում, մի վիրաբույժ մաքրեց և այրեց Արամի ձախ ձեռքի վերքերը։ Երբ նրանք դեպի ելքն էին գնում, Վարդանը հանդիպեց Շանթ Թագվորյանին՝ համալսարանական մի ընկերոջ, որը բժիշկ էր։

— Մենք անձնակազմի կարիք ունենք,— ասաց Շանթը։— Կարիք ունենք նաև լավ դեղագործի։ Դու ազա՞տ ես։

Զարմանալով այդ առաջարկությունից՝ Վարդանը մի պահ վարանեց.

— Մտածել է պետք...

Քանի որ Շանթը շատ զբաղված էր և ժամանակ չուներ քննարկումների, պայմանավորվեցին միասին ճաշել հաջորդ օրը։

Կառք նստելուց առաջ Վարդանն ասաց իր երիտասարդ ընկերոջը.

— Այս մաքուր վիրակապով և բաճկոնով շատ պատկառելի տեսք ունես։

Արամը փքվեց սիրամարգի պես։

— Նկատեցի՞ր, տիկին Արփինեն կտրել է մազերս։ Նա շատ բարի է իմ նկատմամբ։ Պարոն Մեսրոպը նույնպես։

— Իսկ Լուսիկ քույրի՞կը։ Նա քո դուրը գալի՞ս է,—— հարցրեց Վարդանը կատակով։

— Դե... Նա... Նա իսկական օրիորդ է։

Կեսօրից հետո Կոստանդնուպոլիս վերադառնալով, Վարդանն ու Արամը նստեցին Բեբեկ՝ Բոսֆորի ափին գտնվող մեկ այլ արվարձան մեկնող մի փոքր շոգենավ: Նրանք ափ իջան Բեբեկի փոքր հրապարակի մոտ և ճանապարհը շարունակեցին ոտքով: Որքան մոտենում էին ամերիկյան վարժարանին, այնքան Վարդանի անհամբերությունը հանդարտվում էր: Նա բազմիցս էր անցել այս ճանապարհով, երբ Տիրանի հետ շտապում էին դասի, և նա հիշում էր հատվածներ իրենց բոցաշունչ վեճերից: Այդ ժամանակաշրջանում իրենք իդեալիստներ էին, համոզված, որ փոխելու էին աշխարհը: Քառասունմեկ տարեկանում Վարդանը գիտակցում էր, որ ինքը եղել էր իրադարձությունների խաղալիքը և ոչ թե դրանց հրահրողը: Անկասկած դա բոլորի ճակատագիրն էր. հարվածներ ստանալ, հակահարված տալ, վերապրել: Տիրանը կարծես դեռևս չէր ընդունում այդ իրողությունը:

— Գեղեցիկ է,— ասաց Արամը Վարդանի ուշադրությունը գրավելու համար:

Այս նոր աշխարհից շփոթված տղան ուզում էր որևէ հարազատ ձայն լսել: Օրը պարզ էր, տեսանելիությունը՝ լավ: Վարդանը ցույց տվեց նեղուցի անատոլիական ափի հին պարիսպներից այն կողմ ընկած սարերը:

— Այդ ուղղությամբ են գտնվում Աֆիոնը, Ուրգուպը:

Տղան թուքը կուլ տվեց.

— Հեռու է...

Վարդանը բռունցքով նրան բոթեց:

— Կտեսնես, դու երջանիկ կլինես այստեղ:

— Մեսրոպ քեռին ինձ առաջարկեց որպես աշակերտ աշխատել իր տպարանում, չնայած ես միայն մեկ աշխատող ձեռք ունեմ:

— Դա քո դուրը կգա՞:

— Չգիտեմ: Պետք է ապրուստը վաստակել:

Մտնելով ամերիկյան վարժարանի դարպասից ներս, նրանք դուրս եկան ոլորապտույտ ճանապարհից և սկսեցին բարձրանալ հետիոտնի համար նախատեսված աստիճաններով: Բավականին զառիթափ բարձունքը հաղթահարելուց հետո նրանք հասան պատատուկով պատված շենքերին, որոնք երիզում էին ֆուտբոլի դաշտը:

— «Ռոբերտ վարժարան»,— բացականչեց Վարդանը շնչակտուր:— Ես այստեղ սովորել եմ, Արամ: Դու չէի՞ր ուզենա սովորել:

— Ես գրել-կարդալ սովորել եմ մեր գյուղի դպրոցում: Դա բավական է:

— Գրել-կարդալ իմանալը բավական չէ: Դու խելացի ես և եթե սովորես, կարող ես մասնագիտություն ունենալ, կդառնաս կարևոր մարդ և կամուսնանաս «իսկական օրիորդի» հետ, ինչպես դու անվանում

ես նրանց։

Տղան գլուխը հպարտորեն բարձրացրեց։

— Ես արդեն տղամարդ եմ և չեմ ուզում տարիներ անցկացնել դպրոցի դասարանում փակված։

Վարդանը չպնդեց՝ մտածելով, որ դեռ կվերադառնա այդ խնդրին։ Քանի նրանք սպասում էին Ուոշբորն Հոլի հնացած փայտյա դռան մոտ, Արամը հետաքրքրությամբ հետևում էր պատանիներին, որոնք ֆուտբոլ էին խաղում գիմնազիայի առջև գտնվող հարթակին։ Քարտուղարուհին որպես Հակի ներկայացած Վարդանին ուղեկցեց երկրորդ հարկ, ուր գտնվում էր դեկան Մակ Ջիլի գրասենյակը։

Սենյակը, ուր Վարդանը բազմիցս էր մտել, փաստորեն չէր փոխվել քսան տարիների ընթացքում։ Կաղնեփայտից պատրաստված հին ապակեպատ գրապահարանները, նույն կաշվե մաշված բազկաթոռները, ծանր օդը։ Նույնիսկ վարագույրները փոխելիս պահպանել էին մուգ կանաչ գույնը։ Դեկան Մակ Ջիլը՝ ալեհեր մազերով և թարմ դեմքով մոտ հիսուն տարեկան մի մարդ, Վարդանին ընդունեց խիստ դեմքով։ Նրա կարծիքով, սև կոստյում հագած այցելուն կարող էր միայն գաղտնի ոստիկանությունից լինել կամ էլ բարձրաստիճան պաշտոնյա։

Դեկանը զուսպ ձևով թուրքերեն ողջունեց Վարդանին, իսկ վերջինս անգլերեն պատասխանեց.

— Ես ժամանակին սովորել եմ ձեր վարժարանում, երբ դեկանը դոկտոր Բլեյկն էր՝ 1896 թ.։ Հակի Ջելեբին իմ անունը չէ, ես հայ եմ։

Հետաքրքրվելով՝ դեկան Մակ Ջիլը ասաց քաղաքավարի տոնով.

— Ես երջանիկ եմ ընդունելու նախկին աշակերտի։ Ինչո՞վ կարող եմ ձեզ օգնել, պարոն...

— Պալյան։ Վարդան Պալյան։

Հոնքերի թեթեակի շարժումից Վարդանը գուշակեց, որ իր անունը անծանոթ չէր դեկանին։ Դա կարող էր միայն օգնել իրեն։ Նա շարունակեց.

— Դուք Մերձավոր Արևելքի օգնության կոմիտեի նախագահն եք։ Մենք գնահատում ենք այն օգնությունը, որ ամերիկացիները ցույց են տալիս հայերին, հատկապես որբերին։

— Մեր միջոցները սահմանափակ են, իսկ կարիքներն՝ անսահման,— հառաչեց դեկանը։— Հուսանք, որ պատերազմի ավարտի հետ գործը կկարգավորվի։

— Այո, հույսը կարող է վերածնվել։

Սեղանին կիտված փաստաթղթերը ցույց տալով՝ Վարդանը շարունակեց.

— Ձեր ժամանակը թանկ է, և ես կանցնեմ իմ այցելության

նպատակին։ Իմ խնդրանքն անձնական բնույթ ունի։ Իմ կինն ու ինը տարեկան որդիս պատանդ են պահվում Այնթապում գավառապետ Ռըզայի կողմից։

— Պատա՞նդ,— ասաց դեկանը հոնքերը կիտելով։— Միգուցե ապաստան է տվել տեղահանությունից փրկելու համար և այդ դեպքում գավառապետը նրանց Կոստանդնուպոլիս կուղարկի ձեզնից նամակ ստանալուն պես։ Պատա՞նդ, դուք համոզվա՞ծ եք։

— Այո։

Մակ Ջիլն ուղղվեց և առաստաղին նայեց՝ կզակը տրորելով։ Վարդանը հասկացավ, որ իր դեմարշն արդյունք չէր տալու։

— Ինչպիսի ցավալի պատմություն,— հառաչեց դեկանը։– Նման դեպքերը բազում են։ Տեղահանությունների հետևանքով բաժանված, սակայն ողջ մնացած ընտանիքները միացնելը երկար և դժվարին գործ է։ Ձերոնք գոնե ողջ են, և դուք պետք է փառք տաք Աստծուն։

— Ես դա արդեն արել եմ,— պատասխանեց Վարդանը՝ վատ թաքցնելով անհամբերությունը։– Իսկ այն, որ հիմա ուզում եմ նրանց տեսնել, դա արդեն չափից ավելի՞ է։

— Իհարկե, ոչ։ Սակայն ես անկեղծ կլինեմ ձեզ հետ, պարոն Պալյան։ Սեր կոմիտեն շատ բան անել չի կարող։ Երկրի ներսում իրավիճակը բարդ է և անկայուն։ Պարզ չէ, թե ում ձեռքում է իշխանությունը, ո՞վ է որոշումներ ընդունում։

— Դա նշանակո՞ւմ է արդյոք, որ ձեր կոմիտեն ոչինչ չի անի,—— հարցրեց Վարդանը մի քիչ չոր տոնով։

— Ոչ։ Մեր միսիոներներից մեկը կգնա Ռըզա բեյ գավառապետի մոտ, սակայն շատ հույսեր չկապեք դրա հետ։ Եթե գավառապետը պահում է ձեր կնոջն ու որդուն, նա մեր էմիսարին պարզապես դուրս կվռնդի։

— Ես ձեզնից շատ շնորհակալ եմ ինչ-որ փորձ անելու համար։

Դեկան Մակ Ջիլը գրանցեց անուններն ու մանրամասները և Մեսրոպ Մեսրոպյանի տպարանի հասցեն։

— Ես ձեզ տեղյակ կպահեմ։ Սակայն համբերությամբ զինվեք, քանի որ հաղորդակցությունը շատ դանդաղ է։

Դեկանն իրեն նեղություն չտվեց Վարդանին մինչև գրասենյակի դուռը ուղեկցելու և, նրա ձեռքը սեղմելով, ասաց.

— Ձեր փոխարեն ես կդիմեի բրիտանացիներին։ Այնթապի շրջանը նրանց հսկողության տակ է։ Փորձեք հանդիպել դեսպանատան քարտուղար պարոն Դևիդ Պուտնամին։

— Շնորհակալություն տեղեկության համար, պարոն դեկան։

Անկարևոր թեմաներով կարծիքների փոխանակումից հետո Վարդանը հրաժեշտ տվեց Մակ Ջիլին։ Նա խորը հիասթափություն չէր ապրում,

քանի որ հասկանում էր, որ իր հարազատներին ազատագրելը հեշտ գործ չէր լինելու։ Արամը նրան էր սպասում նախասրահում, ուր նա ուսումնասիրում էր վարժարանի հիմնադիրների դիմանկարները։

— Ովքե՞ր են այս մարդիկ։

— Ձախից՝ պարոն Ռոբերտը աջից՝ պարոն Համլինը։ Նրանք հիմնադրել են այս վարժարանը, որպեսզի քեզ պես տղաները կարողանան կրթություն ստանալ և ղեկավար դառնալ։

Արամը ծամածռվեց.

— Ես հեղափոխական կլինեմ, քո քեռորդի Տիրանի պես։

— Նա՞ է գլուխդ այդ միտքը մտցրել։

Տղան ստել չէր կարողանում, և Վարդանը որոշեց խոսել քեռորդու հետ։

Երբ նրանք հեռանում էին, մահմեդական գերեզմանոցի վերևում գտնվող դարատափով և դարպասի մոտով, Համլին Հոլի դիմաց գտնվող աշտարակի զանգն ազդարարեց դասերի ավարտը։

* * *

Հաջորդ օրն առավոտյան Վարդանը ներկայացավ Ինգլիզ Սարայի՝ Մեծ Բրիտանիայի դեսպանատուն, որը գտնվում էր Ղալաթիասարայի խաչմերուկում։ Ոչ այնքան վաղուց Օսմանյան կայսրության մայրաքաղաքը վերադարձած անգլիացիները դեռևս լրիվ չէին տեղավորվել, և այգում զինվորների հսկողության ներքո մեքենաներ էին կանգնած։ Մարդիկ, որոնցից շատերը հայերեն էին խոսում, հերթ էին կանգնել վիզա ստանալու համար։ Վարդանը մոտեցավ դռնապանին, որը չէր համոզվում և պնդում էր, որ նա պետք է նախապես պայմանավորվեր հանդիպման մասին։ Վարդանն ասաց, որ ինքը գալիս էր Մակ Ջիլի կողմից շատ կարևոր գործով։ Շփոթված ծառայողը որոշեց դիմել իր վերադասներին։ Մի քանի րոպե անց նա ժպտալով վերադարձավ և ուղեկցեց Վարդանին կապույտ պաստառներով պատված նախասրահը, ուր փակցված էր Գևորգ Հինգերորդի դիմանկարը։

— Պարոն քարտուղարը ազատվելուն պես ձեզ կընդունի։ Իսկ մինչ այդ որևէ բան կցանկանայի՞ք։ Խմի՞չք։ Թե՞յ։ Սո՞ւրճ։

Վարդանը հրաժարվեց, սակայն քիչ անց ափսոսաց, քանի որ ստիպված եղավ սպասել երեք քառորդ ժամ։ Դևիդ Պուտնամը վերջապես եկավ։ Կարճ կտրած ալեխառն մազերով, շիկահեր բեղերով՝ նա նախկին զինվորականի չոր շարժուձև ուներ, սակայն խոսում էր բարյացակամ տոնով և ջերմ ձայնով։ Նա թեյ հյուրասիրեց իր այցելուին և անթարթ լսեց նրա պատմությունը։ Վերջում գլխով արեց և իր համակրանքն

արտահայտեց պարզապես ասելով.

— Այ քեզ պատմություն։

Հետո նա գլանատուփ հանեց գրպանից, որի վրա փորագրված էր՝ Թագավորական նավատորմիզ.

— Ծխախո՞տ։

Հրահանը գրպանը դնելով նա ասաց.

— Դուք դեռևս դիմում չեք գրել, սակայն ենթադրում եմ, որ դուք հույս ունեք մեր օգնությամբ հասնելու ձեր կնոջ և որդու ազատ արձակմանը։ Ճի՞շտ է։

— Ազատ արձակմա՞նը,— զարմացավ Վարդանը։— Նրանք հանցագործներ չեն։ Նրանք պատանդ են։

— Ես հենց դա էլ ուզում էի ասել,— պատասխանեց Դևիդ Պուտնամը, անհարմար զգալով։— Հավատացեք, պարոն Պալյան, որ ես ցավում եմ ձեր դժբախտության, ինչպես նաև ձեր ժողովրդի դժբախտությունների համար։

— Շնորհակալություն, պարոն Պուտնամ։ Դուք ճիշտ եք կռահել, ես հույս ունեմ, որ Նորին պայծառափայլության հպատակները կմիջնորդեն Այնթապի գավառապետի մոտ։

— Կփորձենք, սակայն դա այդքան էլ հեշտ չէ։ Նա գավառապետ է։

Դեսպանատան քարտուղարի ձայնի մեջ որոշ անվստահություն կար, որը զարմացրեց Վարդանին։

— Ձեր բանակը վերահսկում է այդ շրջանը, այդպես չէ՞։

— Վերահսկել, դեռ վաղ է այդպես ասել։ Մենք նոր-նոր հաստատվում ենք Կիլիկիայում, և մեր մարդիկ այնտեղ շատ զգույշ են։ Սուլթանի բանակը դեռևս զորացրված չէ, օսմանյան պաշտոնյաները մնում են իրենց պաշտոններին, կատարյալ խառնաշփոթ է։ Գավառապետ Ռըզան ազդեցիկ մարդ է, և մենք նրա կարիքն ունենք։

— Հետևաբար դուք նրան խնայելու եք։

— Այո,— պատասխանեց Դևիդ Պուտնամը խորամանկ ժպտալով։

Վարդանը սեղմեց բազկաթոռի արմնկակալները ինքնատիրապետումը չկորցնելու համար, սակայն չկարողացավ թաքցնել իր վրդովմունքը։

— Այդ մարդը մասնակցել է հայերի տեղահանություններին, որոնք ջարդերի պատճառ են դարձել։ Նա նույնիսկ այդ տեղահանությունների կազմակերպիչն էր իր գավառում։ Եվ դուք համագործակցո՞ւմ եք նրա հետ։

Քարտուղարը հանգստացնող շարժում արեց.

— Մենք այլ ելք չունենք... այս պահին։ Պատերազմի հանցագործները

կպատժվեն, ինչպես դաշնակիցները տեղյակ էին պահել Բարձր դռանը հենց սկզբից։ Իսկ Ռըզա բեյի հանցագործ լինելը կպարզեն դատավորները։ Ամեն դեպքում, ըստ մեր ունեցած տեղեկությունների այդ մարդը հովանավորել է ձեր հայրենակիցներից շատերին... այդ թվում նաև ձեր կնոջն ու որդուն։

Վարդանը ներքուստ եռում էր։ Սակայն նա չպետք է վաներ այդ մարդուն, որն այս պահին միակն էր, որ կարող էր իրեն օգնել։ Նա անվրդով ասաց.

— Ես չեմ դատապարտում Ռըզա բեյին, առավել ևս չեմ հանդիմանում անգլիացիներին նրա հետ համագործակցելու համար։ Միակ բանը, որ ուզում եմ, իմ հարազատներին գտնելն է։

— Դա լիովին հասկանալի ցանկություն է, պարոն Պալյան,— համաձայնեց Պուտնամը, գոհ մնալով, որ այցելուն ողջամտություն էր ցուցաբերում և խուսափում էր աղմուկ բարձրացնելուց։— Իսկ ես, անձամբ, կհետևեմ գործի ընթացքին։ Ես անթույլատրելի եմ համարում, որ այդ գավառապետը ձեր կնոջը գերի պահի իր հարեմում։

Վարդանն առանց աչքը թարթելու լսեց այդ նախադասությունը, որը վիրավորում էր նրա ինքնասիրությունը։ Քարտուղարը շարունակեց.

— Ես ասում եմ, որ նրան պետք է խնայել։ Հետևաբար խոսք անգամ չի կարող լինել նրա տուն զինվորների դասակ ուղարկելու մասին, ձեր ընտանիքը ազատագրելու համար։ Մենք պետք է խուսափենք նրան իր հայրենակիցների աչքում վարկաբեկելուց։

Վարդանը գլխով արեց։ Նա հասկանում էր այդ դիրքորոշումը, չնայած այն իրեն վրդովում էր։ Պուտնամը կռահեց նրա հոգեվիճակը և բարյացակամորեն ասաց.

— Ճիշտ է, սիրտը չի ենթարկվում Պետության շահերին, բայց համաձայնեք, որ երեք տարի սպասելուց հետո ևս երեք շաբաթ սպասելը սարսափելի չէ։

— Համաձայն եմ։

Դեսպանատան խորհրդականը ոտքի կանգնեց և ձեռքը մեկնեց իր այցելուին, այդպիսով ցույց տալով, որ հանդիպումն ավարտված էր։

— Վստահեք մեզ, պարոն Պալյան, մենք կվերադարձնենք ձեր ընտանիքը։ Դռնապանին թողեք ձեր հասցեն, որպեսզի կարողանամ ձեզ հետ կապվել։

Վարդանը ջերմորեն շնորհակալություն հայտնեց և ասաց, որ ինքը երբեմն զանգ կտա նորություններ իմանալու համար։

— Համեցեք։

Տիրանի տան մոտ գտնվող սրճարանում, ուր նրանք ժամադրվել էին եղբոր հետ, ազատ տեղեր կային միայն խորքում, պատի տակ։ Սրճարանը լեցուն էր տուն ճաշի վերադառնալուց առաջ մեկ բաժակ

խմիչք խմելու եկած տղամարդկանցով և շատ աղմկոտ էր։ Վարդանը վերմուտ պատվիրեց, մտովի վերանայեց Պուտնամի հետ խոսակցությունը, և դա նրան չհանգստացրեց։ Պետական շահ։ Ի՞նչ կշիռ կարող էին ունենալ կինն ու ինը տարեկան երեխան դիվանագիտական խաղերի կողքին։ Նա չէր կարող զուգահեռ չտանել իր և իր ժողովրդի վիճակի միջև։ Ինչպիսի՞ փոփոխություններ կկրեն դաշնակիցների գեղեցիկ ճառերը անկախ մեծ Հայաստանի մասին, երբ կգա Օսմանյան կայսրության ապագան վճռելու հարցը։ Այդ ժամանակ ի հայտ կգան այնքան իրարամերժ շահեր։ Եվ դարձյալ դիվանագիտությունը...

Քեռորդին եկավ կես ժամ անց։ Վարդանը նրա հետ կիսեց իր մտահոգությունները։

— Հնարավորություն ընձեռիր անգլիացիներին ցույց տալու, թե ինչի են նրանք ընդունակ,— պնդեց նա։

— Ուզում եմ ինքս այնտեղ գնալ և զբաղվել այդ գործով։

— Ճիշտ եմ ասում, դու գիժ ես։ Ժամանակ կար, երբ դու ինձ անգիտակից և անխելք էիր համարում։

— Մարոն ու Թովմասը միակն են, ինչ ես ունեմ, Տիրան։

— Եթե հայտնվես Այնթապում, կարող ես նրանց ընդմիշտ կորցնել։ Գավառապետ Ռըզան շատ լավ առիթ կունենա քեզ ոչնչացնելու և կառավարությունը չէ, որ կհանդիմանի դրա համար։

Վարդանը ստիպված էր համաձայնել, որ եղբայրն իրավացի էր։ Վերջինս շարունակեց.

— Հնարավորություն տուր անգլիացիներին գործելու։ Իսկ եթե նրանք անհաջողության մատնվեն, ես քեզ հետ Այնթապ կգամ, երդվում եմ։ Երկուսս և մի քանի բարեկամներ...

Վարդանը գլխով արեց։ Ինքը պետք է իր դժբախտությանը դիմանար։

Քիչ անց նրանք դուրս եկան սրճարանից հունական ռեստորան գնալու համար, ուր Տիրանը հաճախ էր ճաշում։ Սովորականի պես Բերայի գլխավոր փողոցը մարդաշատ էր, իսկ խանութները փակվում էին։ Ռեստորանները լցվում էին այցելուներով, գիշերային ակումբները նախապատրաստվում էին ընդունել իրենց այցելուներին, իսկ մարմնավաճառները իրենց տեղերն էին գրավում փողոցների անկյուններում։

Սուր հայացքով մի թուրք, որը նրանց էր հետևում սրճարանի մոտից, տեղավորվեց ռեստորանի խորքում։

— Այս մարդը սրճարանո՞ւմ էր,— հարցրեց Վարդանը հետաքրքրված։

Գուցե նրանք իր հե՞տքն էին հայտնաբերել։ Իշխանությունները չէին կարող իմանալ իր ով լինելը։ Ամեն դեպքում Հակիի փաստաթղթերը մոտն էին։ Այդուհանդերձ, մի քիչ անհանգստանալով, նա ասաց.

— Ինձ թվում է, որ նա մեզ զննում է։

Տիրանը բարձրաձայն ծիծաղեց.

— Քեզ թվո՞ւմ է։ Նա ստվերի պես ինձ է հետևում։ Ոստիկան է, կամ պետական անվտանգության գործակալ։

— Դա քեզ բոլորովին չի՞ անհանգստացնում։

— Հավանաբար, ինձ հետևելն այս մարդու համար սովորություն է դարձել։ Ես այլևս վտանգավոր չեմ նրանց համար, հատկապես, որ նրանք պարտվել են։ Հակառակը, ես օգտակար եմ նրանց։

— Չեմ հասկանում։

— Արդեն հինգ ամիս է, ինչ այստեղ է Հայաստանի Հանրապետության մի պատվիրակություն։ Ես աշխատում եմ նրանց և Կոստանդնուպոլսի խառը կոմիտեի հետ։ Ավելի պարզ, ես բանակցում եմ կառավարության հետ, որը հետևաբար իրավազոր չէ ինձ բանտարկելու իր ոստիկանության միջոցով։

— Իսկ այդ բանակցությունները որևէ բան տալի՞ս են։

— Նոր կառավարությունը որոշակի ճկունության է ցուցաբերում։

— Կարծում ես նրանք անկե՞ղծ են,— կասկածանքով հարցրեց Վարդանը։

— Հիմա՝ այո, սակայն շատ շուտ կարող են փոխել իրենց տեսակետները։ Հարկավոր է նրանց խոսքի վրա բռնել և որքան կարելի է շուտ ներքաշել արևմտյան տերությունները։

— Նրանք նույնպես կարող են արագ փոխել իրենց տեսակետը։

Վարդանը քեռորդուն վստահեց այն կասկածները, որ ծագել էին բրիտանական դեսպանատան քարտուղարի հետ հանդիպումից հետո։ Տիրանը սկզբում փաստարկներ բերեց այդ խոսքերի դեմ, որոնք պարտվողական էր համարում, հետո հառաչեց.

— Ճիշտն ասած, ես նույնպես դրա մասին մտածել եմ։ «Հայկական հարցը» մոդայիկ է օտար մայրաքաղաքներում, սակայն նրանք շատ շուտ մեզ կմոռանան։

— Ես դրանից եմ վախենում։ Հայաստանը ծանրակշիռ փաստարկ չի լինի խաղաղության բանակցություններում։

— Ճիշտ է։ Ուստի անհրաժեշտ է, որ արևմտյան թերթերում հայտնվեն հոդվածներ, որոնք կհիշեցնեն արևմտյան տերություններին իրենց խոստումները և իրենց պարտավորությունները։ Դու պետք է սկսես գրել, Վարդան։

— Պետք է ուղիներ գտնել այդ հոդվածների համար։

— Ես այդպիսի մարդ ունեմ։ Ուիլյամ Դևսոնը ամերիկացի լրագրող է, որը համակրում է մեր գործին։ Ահա։ Աչքերդ փայլեցին։ Ոգևորվո՞ւմ ես,

ինչպես տասը տարի առաջ։

— Ոչ, Տիրան։ Ես կորցրել եմ առաջադիմության հանդեպ այն միամիտ հավատը, որ մենք ունեինք այն ժամանակ։

Տիրանը գերադասեց չպատասխանել։ Նա բարձրացրեց մատուցողի բերած վերմուտի բաժակը և շշնջաց.

— Հայաստանի կենացը։

Նրանք մի քանի անգամ խմեցին այդ կենացը։

* * *

Շաբաթներն անցնելու հետ Վարդանն ավելի և ավելի անհամբեր էր դառնում։ Մերձավոր Արևելքի օգնության կոմիտեն պատասխան էր ստացել Ուրզա բեյից այն մասին, որ ինքը չէր օթևանել ոչ մի հայուհու, բացառությամբ մի քանի աղախինների, որոնք կարող էին հեռանալ, եթե ցանկանային։ Սակայն մի միսիոներ, որը տեղում էր գտնվում, խոսակցություններ էր լսել, որ գավառապետը արդեն մի քանի տարի շատ գեղեցիկ հայուհի սիրուհի ուներ։ Վարդանի կարծիքով դա կարող էր միայն Մարոն լինել։ Գավառապետի սիրուհի՞։ Բարկանալով՝ նա մտածեց, որ մարդիկ շատ արագ էին եզրակացություններ անում։ Ինչ վերաբերում է բրիտանական դեսպանատան քարտուղարին, որին Վարդանը զանգահարում էր ամեն երկու-երեք օրը մեկ, ապա նա երդվում էր, որ ինքն ամեն ինչ անում էր գործն արագացնելու համար։ Դևիդ Պուտնամը այդ հապաղումը բացատրում էր Կիլիկիայի անկայուն վիճակով և հաղորդակցության դժվարություններով։

Սպասումը լցնելու համար Վարդանն ինքնամոռաց աշխատում էր լուսաբացից մինչև գիշեր։ Լուսաբացին նա նստում էր Տիրանի բնակարանի հյուրասենյակի լուսամուտի առջև դրված սեղանի մոտ։ Հարսանեկան նկարից և Արփինե մորաքրոջ նվիրած բեգոնիայից բացի, կահույքի վրա միայն թղթեր էին ցրված։ Երբ քաղաքն արթնանում էր, նա արդեն երկու-երեք ժամ աշխատած էր լինում։ Փողոցից ներս թափանցող աղմուկը ոգեշնչում էր նրան, և նա հիշում էր, որ ինքը դիմում էր լայն հասարակությանը և ոչ թե մի քանի մասնագետների։ Իր նախադասությունները պետք է հուզեին և համոզեին։ Ինքը պետք է պարզ միջոցներով շատ բարդ բաներ բացատրեր։

Ցերեկները Վարդանը որպես դեղագործ աշխատում էր հայկական գլխավոր հիվանդանոցում, որը որակյալ անձնակազմի պակաս էր զգում երկրի խորքից ամեն օր ժամանող հիվանդ և թերսնված որբերի հոսքին դիմագրավելու համար։ Կոստանդնուպոլսի հայերի բարեգործության ու կամավորական շարժման շնորհիվ քաղաքում և արվարձաններում բազմաթիվ որբանոցներ էին բացվել։ Ցանկանալով իր ավանդն ունենալ՝ Վարդանն աշխատում էր խորհրդանշական աշխատավարձով։ Այդ պահին նա դրամի կարիք չուներ, քանի որ Մեսրոպ քեռին կլորիկ մի

գումար էր նրան հանձնել։ Դա պատերազմից անմիջապես առաջ Նյու Յորքում Պարգևի կողմից իրացված ափիոնից ստացված գումարի Վարդանի բաժինն էր։

Գրեթե ամեն երեկո Վարդանը Տիրանի հետ միասին մասնակցում էր տարբեր հայկական կոմիտեների ժողովներին։ Հաղթողների միջնորդությամբ իրականացվող ճնշումների շնորհիվ այդ կազմակերպություններին հաջողվել էր ստիպել նոր օսմանյան իշխանություններին պաշտոնապես ճանաչել Իթթիհատի կառավարության մեղքը հայերի «տեղահանությունների» համար և խոստանալ փնտրել և հայրենիք վերադարձնել այն կանանց ու երեխաներին, որոնց ստիպել էին դավանափոխ լինել, ինչպես նաև պարտավորվել 1915 թ. «տեղահանված» հայերի սեփականությունը վերադարձնել։

Կազմվել էր հայերից, թուրքերից, հույներից և անգլիացիներից բաղկացած խառը հանձնաժողով, որը պետք է նախապատրաստեր սեփականության վերադարձին վերաբերող օրենքի նախագիծ։ Հետո ստեղծվել էր Կոստանդնուպոլսի հետաքննության հանձնաժողովը, որը պետք է քններ հայերի դեմ հանցագործություններ կատարած մարդկանց գործերը։ Որպեսզի ոչ մի հանցագործ չխուսափեր արդարադատությունից, Տիրանն ու իր ընկերները ստվար թղթապանակներ էին կազմում, որոնք պետք է հանձնվեին դատավորներին։ Կազմվել էր նաև հայկական պատվիրակություն, որը պետք է մասնակցեր Փարիզում կայանալիք խաղաղության բանակցություններին։ Այդ պատվիրակությանը հիմնականում պետք է ձևակերպեր Հայաստանի տարածքային պահանջները և անվտանգության երաշխիքներ պահանջեր դաշնակիցներից։

Վարդանը մասնակցում էր այդ գործընթացին, սակայն չէր կարող ներգրավվել պաշտոնական որևէ կառույցում, քանի որ արտասահմանում տպագրված հոդվածները նրան կասկածելի էին դարձրել կառավարության աչքում և դա կարող էր վնասել հայերի շահերին։ Մինչդեռ նա կցանկանար բացահայտորեն ծառայել այդ բարդ խնդիրներին, որոնք ծառացել էին հայերի առջև։ Նախկին խորհրդարանականի նրա փորձը կնպաստեր բանակցություններին։ Փոխարենը նա ստիպված էր լռել և բավարարվել ծառայամիտ խորհրդականի դերով։ Երբ իր այդ վիճակից չափից ավելի էր վրդովվում, ինքն իրեն ծաղրում էր ասելով, որ իր մեջ ինքնասիրությունն էր խոսում։ Նրա կուլիսային գործունեությունը նույնքան օգտակար էր, որքան օգտակար կլիներ, եթե պաշտոնական պատգամավոր լիներ։ Միայն փառքն էր պակասում։

Նա հաճախ էր Արուսյակի մասին մտածում, որն այլևս չէր տեսնելու այդ Հայաստանը, ուր նա այդքան ցանկանում էր ապրել, և նա հիշում էր այն երազանքը, որ կինը համարձակվել էր իրեն վստահել մթության քողի տակ՝ մտերմության պահից հետո։ Նա պատկերացնում էր, որ իրենք ապրում էին Վանա լճի ափին կամ էլ Արարատ լեռան ստորոտում գտնվող իրենց տանը։ Նա այդ երկու վայրերի նկարներն էր տեսել։ Դա

մեծ տուն էր՝ լի երեխաների՝ իրենց երեխաների ծիծաղով։ Վարդանի դեղատունը առաջին հարկում էր, իսկ ինքը տնային տնտեսությունն էր վարում և իր հաճույքի համար մշակում էր մեծ այգին։ Նա երազում էր, որ միասին ծերանային՝ երջանիկ և իրենց մեծ ընտանիքի սիրով ու հայրենակիցների հարգանքով շրջապատված։

Խեղճ Արուսյակ, որն անմնացորդ նվիրվել էր ուրիշներին։ Կենսախինդ և կրքոտ Արուսյակ, որն իր սերն էր պարգևում շրջապատող մարդկանց այնպես, ինչպես բարդին է սերմերը ցրում քամու հետ։ Անհեթեթ մահին զոհ գնալով՝ նա այլևս չէր վայելելու մայրության բերկրանքը։ Նրա ձայնը մարել էր, իսկ ձեռքերը քարացել էին առհավետ։ Նրա սիրտը... Եվ այդ ամենը այն պատճառով, որ մի օր նա կռացել էր փոսում ընկած կիսամեռ մի մարդու վրա։ Բավարար չափո՞վ էր արդյոք ինքը նրան սիրել։ Ոչ այնքան, որքան նա կուզեր և արժանի էր։ Վարդանն իրեն մեղավոր էր զգում, որ այն գիշեր, Ուրգուպում, ինքը լուռ էր մնացել, երբ Արուսյակն իրեն էր վստահել Հայաստանի իրենց տան մասին երազանքը։

Երկու օրը մեկ Վարդանը ճաշում էր Մեսրոպ քեռու տանը։ Այնտեղ նա անմիջապես մոռանում էր հիվանդանոցի տրտմությունը և ժողովների գրգռվածությունը՝ ընկղմվելով ընտանեկան մթնոլորտի մեջ։ Սակայն այնտեղ նա էլ ավելի սուր էր զգում Մարոյի և Թովմասի բացակայությունը։ Մեսրոպն ու նրա կինը վճռել էին ապրել այնտեղ, ուր իրենց կյանքը կանգ էր առել 1914 թ., և ապրել այնպես, կարծես պատերազմի տարիները չէին եղել։ Վարդանը շատ լավ էր հասկանում նրանց ինքնախաբեության ցանկությունը։ Նրանք ուզում էին հավատալ, որ ամեն ինչ լինելու էր այնպես, ինչպես եղել էր առաջ, և Վարդանը չէր փորձում նրանց սթափեցնել։ Լուսիկը նույնպես որդեգրել էր այդ ներողամիտ կեցվածքը տարեց ծնողների նկատմամբ։ Տիրանը դրան անկարող էր և գերադասում էր հազվադեպ հայտնվել իր ծնողների տանը։ Այդ իրավիճակը շահեկան էր Արամի համար, որը դարձել էր ինչ-որ չափով նրանց որդին, որին փայփայում էր Արփինե մորաքույրը և երես էր տալիս Մեսրոպ քեռին, որը հանձին նրա տեսնում էր տպարանում իրեն հաջորդողին։

Այդ երեկո, ինչպես ամեն անգամ, երբ նա ազատ ժամանակ էր ունենում, Վարդանը գնաց «Թոքաթլլան» հյուրանոցը։ Կենտրոնական փողոցում, դեսպանատների հարևանությամբ գտնվող հյուրանոցում և նրա մրցակից «Բերա Պալասում» իջևանում էին բոլոր օտարերկրացիները, և այնտեղ խայտաբղետ ամբոխ էր հավաքվում։ Դռնապանը մտերմիկ ողջունեց Վարդանին։ Այդ պատվին արժանանում էին միայն մշտական հաճախորդները։

Իր մարմարե սալերով, թանկարժեք փայտանյութից պատրաստված խնամված կահույքով, թաղարների մեջ աճող արմավենիներով հյուրանոցը պահպանում էր այն հնաոճ նրբագեղությունը, որով հռչակ էր ձեռք բերել պատերազմից առաջ։ Մեծ նախասրահում մի քանի հոգի թերթ էին կարդում։ Հավանաբար ինչ-որ մեկի էին սպասում կամ էլ հետևում էին որևէ մեկի։ Խմբված մարդիկ աշխույժ զրուցում էին։ Նախասրահին կից բարը մարդաշատ էր։ Դեսպանատների

աշխատողներ, տարբեր ազգությունների զինվորականներ, գաղտնի գործակալներ տարբեր երկրներից, օտար թերթերի թղթակիցներ, ֆինանսիստներ, արդյունաբերողներ, վաճառականներ և շքեղ մարմնավաճառներ: Այստեղ մեկ երեկոյի ընթացքում ավելի շատ գործարքներ էին կնքվում, քան բորսայում մեկ շաբաթում: Տեղեկությունները վաճառվում կամ փոխանակվում էին խելահեղ ռիթմով, և ոչ մի գաղտնիք երկար չէր պահպանվում: «Թոքաթլյան» հյուրանոցում Վարդանը հաճախ օգտակար տեղեկություններ էր հավաքում հայկական հարցի վերաբերյալ կամ էլ իր հոդվածների համար:

Ճաշասրահից լսվում էր վալսեր կատարող նվագախմբի ձայնը: Վարդանը բար մտավ և հայացքով փնտրեց Ուիլյամ Դևսոնին: Ամերիկացի լրագրողին հեշտ էր գտնել ոչ այնքան բարձր հասակի, որքան նրա ճչացող կոստյումների և անբռնազբոս վարքագծի շնորհիվ: Խմիչքը չարաշահելու հետևանքով նա ավելի ծեր էր երևում, քան իր տարիքն էր՝ քառասունվեց տարեկան: Վարդանը նրան նկատեց վաճառասեղանի մոտ, ուր նա խոսում էր ուսերը բաց շիկահեր խոշոր մի կնոջ հետ:

— Դոն Քիշոտ,— բացականչեց ամերիկացին՝ Վարդանին տեսնելով:

Այդ ցինիկի կատակն ավելի հաճոյախոսության էր նմանվում: Վարդանը ժպտաց: Դևսոնը համբուրեց հարևանուհու մերկ ուսը և միացավ իր ծանոթին, նրան բերելով մի բաժակ շամպայն: Նրանք տեղավորվեցին սրահի խորքում գտնվող սեղաններից մեկի մոտ:

— Ահա հոդվածները,— ասաց Վարդանը, նրան տալով երկու ծրար:

— Հենց սկզբից գործի՞ մասին: Մենք դեռ մի կում էլ չենք խմել:

— Ծույլիկների արքայի կենացը,— ասաց Վարդանը բաժակը բարձրացնելով:

— Իդեալիստների արքայի կենացը:

Դևսոնը նայեց ծրարներին, որոնցից մեկը Փարիզ էր հասցեագրված, իսկ մյուսը՝ Նյու Յորք, և բաճկոնի գրպանը դրեց:

— Գիտեք, ինչպես ասում են բողոքական քահանաները, դուք ինձ փորձության եք ենթարկում: Երբեմն ուզում եմ ձեր փոխարեն ստորագրել ձեր հոդվածները: Վարդան, բարեկամս, դուք միայն դրանով եք զբաղվա՞ծ: Միայն գրո՞ւմ եք:

— Ես աքաղաղների հետ եմ արթնանում... այն ժամանակ, երբ դուք պառկում եք քնելու:

— Վանական,— հառաչեց Դևսոնը զվարճացած,— իմ ընկերը վանական է:

Ջնայած իր կատակներին, նա հիանում էր Վարդանով, որին նա համարում էր այլասերված աշխարհում հազվագյուտ անկեղծ

մարդկանցից մեկը։ Նա նրան թուղթ մեկնեց.

— Սա իմ թերթի հավաստագիրն է։

Վարդանը գրպանից դրամ հանեց.

— Ձեր ծախսերի հատուցումը։

— Ոչ,— հրաժարվեց Դևսոնը։— Ես ձեզ արդեն ասել եմ, որ սա հայերին օգնելու իմ համեստ բաժինն է։ Ինձ խմիչք հյուրասիրեք և այդ մասին այլևս չխոսենք։

Վարդանը շամպայն պատվիրեց իր համար և կրկնակի վիսկի ընկերոջ համար։

— Ձեր վերջին հոդվածը շատ արձագանքներ է ունեցել։ Թերթը հեղեղված է ընթերցողների նամակներով, որոնք մանրամասներ են պահանջում։ Ուստի իմ գլխավոր խմբագիրը ցանկանում է, որ դուք երեսուն-քառասուն էջ գրեք։ Հայկական հարցի պատմությունը, որը նա կհրապարակի չորս կամ հինգ համարներում։

— Հոյակապ է։ Ես մի քանի օրից կբերեմ։

— Մի քանի օրի՞ց,— բացականչեց Դևսոնը սարսափած։— Դուք խայտառակում եք ձեր մասնագիտությունը, վարկաբեկում եք մեզ բոլորիս։ Մեզ շաբաթներ պետք կլիներ այդքանը գրելու համար։

— Ինձ և հարազատներիս համար դա հրատապ գործ է,— պատասխանեց Վարդանը լուրջ տեսքով։

Դևսոնը լրջացավ և հարցրեց.

— Հույս ունեմ, որ դուք պատրանքներ չեք փայփայում հաջողության հասնելու ձեր հնարավորությունների վերաբերյալ։

— Գիտեմ, որ դժվար կլինի։

— Նայեք այս դահլիճին ու այս մարդկանց և ասացեք ինձ, թե ի՞նչ տպավորություն են նրանք թողնում։

Վարդանը պատասխանեց առանց վարանելու.

— Կտակը կարդալուց առաջ նոտարի գրասենյակի նախասրահում հավաքված ագահ ժառանգների տպավորություն։

— Իրավացի եք։ Սրանք Օսմանյան կայսրության լեշը բաժանելու համար բոլոր ծագերից եկած գիշատիչներ են։ Տեսեք։ Անգլիացիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ, ամերիկացիներ, գերմանացիներ, բելգիացիներ, հրեաներ, արաբներ, արևելցիներ և նույնիսկ հայեր, սրանք բոլորն այստեղ են, որովհետև շահութաբեր գործարքի հոտն են առել։

Նա ցույց տվեց կարճ կտրած մազերով տղամարդկանց, որոնք շամպայն էին հյուրասիրում իրենց սեղանին նստած թուրք պաշտոնյային։

— Նույնիսկ բոլշևիկներ, որոնք յոթերորդ երկնքում են ժողովրդի փողերով։ Համոզված եղեք, որ նրանք իրենց կողմից վճարված յուրաքանչյուր բաժակը ներդրում են համարում և դրանից կուզեն օգուտ քաղել։ Երբ կգա վճռական որոշումներ ընդունելու պահը, այլևս ոչ ոք չի մտածի սկզբունքների մասին։ Կմոռացվեն գեղեցիկ խոստումները և վեհանձն գաղափարները։ Money talks, այդպես են մեզ մոտ ասում։

— Ես այն հույսով եմ գրում, որ կկարողանամ ստիպել քաղաքականությամբ զբաղվող մարդկանց հիշելու հայերի, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ փոքրամասնությունների հանդեպ իրենց ստանձնած պարտավորությունները։

— Հավատացեք ինձ, Վարդան, ֆինանսիստները, վկայակոչելով ազգային շահը, ի վերջո կարողանում են պարտադրել իրենց տեսակետը քաղաքական գործիչներին։ Սա այն է, ինչ ձեզ պես մտավորականները երբեք չեն գիտակցում։

— Կյանքն ու իրադարձությունները արդեն վաղուց ինձ ստիպել են իրատես դառնալու, Բիլ։ Ես գիտեմ, որ համակրանքի այն ալիքը, որը գոյություն ունի, կսպառվի, և որ, համապատասխանաբար, ժամանակը մեր դեմ է։ Սակայն դեռևս ոչինչ կորած չէ։

— Ես ամբողջ սրտով ցանկանում եմ, որ այդպես լինի, Վարդան։

Դևսոնը դատարկեց իր բաժակը և հայացքը պտտեցրեց դահլիճով։

— Ապա մի սրանց նայեք,— ասաց նա արհամարհանքով։— Այս սրիկաներն իրենց մորը կծախեն մեկ ոսկե դրամով։

— Դա նախանշում է այս երկրի ապագան։

— Համոզված չեմ, որ այս մարդիկ ի վերջո կշահեն։ Մի օր ես ձեզ կտանեմ իմ տան մոտ գտնվող պանդոկը։ Այնտեղ Թուրքիայի համար այլ ապագա է նախանշվում։

— Ազգայնականնե՞րը։

— Այո, գրազ կգամ, որ հինգ տարուց այստեղ քաղաքացիական պատերազմ կսկսվի։

Էլի խմիչք պատվիրելուց հետո Դևսոնը կոկորդը մաքրեց և հարցրեց՝ ձևանալով, որ կարևորություն չէր տալիս այդ հարցին.

— Ձեր բարեկամները նախապատրաստվո՞ւմ են խաղաղության համաժողովին։

— Այո,— պատասխանեց Վարդանը, որին լրագրողի հետաքրքրասիրությունը կասկածելի թվաց։

— Եվ ի՞նչ, արդյունքներ կա՞ն։

Վարդանը խուսափողական պատասխան տվեց.

— Ճիշտն ասած, ես այնքան էլ տեղյակ չեմ։

Դևսոնը ժպտաց, տեսնելով այդ զգուշավոր դիրքորոշումը, որը նրան բոլորովին չէր վիրավորում։ Նրա կարծիքով, հայերը պատճառ ունեին չվստահելու։

— Ուզո՞ւմ եք իմանալ իմ մտքի էությունը, Վարդան,— ասաց նա՝ բացելով ծխախոտի տուփը։– Ձեր ժողովուրդը միայն մեկ անդավաճան դաշնակից ունի՝ նախագահ Վիլսոնը։

— Նա իսկապես աչքի ընկնող մարդ է։

— Աչքի ընկնո՞ղ։ Ավելին, նա ձեզ պես իդեալիստ է, սիրելիս։

Դևսոնը մի կում վիսկի խմեց, հետո ծխախոտի ծուխը ներս քաշեց և շարունակեց, ցուցամատը թափ տալով.

— Իդեալիստ է, որն իշխանություն ունի։

Նրա լեզուն արդեն կապ էր ընկնում, սակայն նա պահպանում էր մտքի պայծառությունը։

— Հավատացեք ինձ, Վարդան, եթե դուք ուզում եք իսկապես օգտակար լինել ձեր հայրենակիցներին, ապա պետք է Վաշինգտոն գնաք։ Ամեն ինչ որոշվելու է այնտեղ և ոչ թե Փարիզում։ Նյութեր ներկայացնել նախագահին, հանդիպել նրա խորհրդականների հետ, վկայել սենատորների առջև, ահա թե ինչ պետք է անեք։

Առաջին անգամ չէր, որ Դևսոնը այդ կարծիքն էր արտահայտում։ Վարդանն այն խելամիտ էր համարում, սակայն այդպիսի ճանապարհորդությունն անհնար էր իր համար։

— Իսկ ի՞նչ է ձեզ խանգարում այդ բանն անելու,— հարցրեց Դևսոնը, հենց ինքն էլ դրա պատասխանը տալուց առաջ, որը նա ուղեկցեց տխուր ծամածռությամբ։— Այո, ձեր կինը...

Վարդանը մտովի տեսավ երեք բլուրների վրա տեղադրված այդ քաղաքը՝ Մյնթեպը, որով նա անցել էր նախորդ տարի Փաշազադե Շահիր Միթադի նվագախմբի հետ, առանց կասկածելու, որ ինքն անցնում էր Մարոյի և Թովմասի կողքով։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 16

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 13:28-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Դևիդ Պուտնամը լուսամուտի մոտ կանգնած նայում էր, թե ինչպես էին թափվում ձյան թաց և ծանր փաթիլները, որոնք գետնին հասնելուն պես հալչում էին: Դա հազվագյուտ երևույթ էր Կոստանդնուպոլսի համար: Նա նյարդային շարժումով թափ էր տալիս ծխախոտի մոխիրը, որը թափվում էր բազմոցի վրա: Նյարդայի՞ն: Ավելի շուտ չարացած, որ ստիպված էր վատ լուր հաղորդողի դերը խաղալ: Դռնապանը ներս բերեց գերգրգռված Վարդանին, որը մտնելուն պես հարցրեց.

— Ես ստացա ձեր ուղերձը, պարոն Պուտնամ: Հետո՞:

— Բարև ձեզ, պարոն Պալյան:

Քարտուղարն իր այցելուին ցույց տվեց բազկաթոռը և ծխախոտը հանգցրեց մոխրամանի մեջ: Լարված կեցվածք ընդունելով՝ նա մի քանի վայրկյան նայեց Նորին պայծառափայլության դիմանկարին և վերջապես որոշեց խոսել:

— Ես չեմ ձգձգի: Գավառապետ Ռըզա բեյը պնդում է, որ նա օրինական կերպով ամուսնացել է ձեր կնոջ հետ, որը ցանկանում է մնալ Այնթապում:

— Դա անհեթեթությո՛ւն է,— գոչեց Վարդանը,— անհնարի՛ն:

— Միգուցե,— անդրադարձեց Պուտնամը:— Դուք ձեր կնոջն ավելի լավ եք ճանաչում, քան ես:

— Այո: Նա այդպես չէր վարվի:

— Այնուամենայնիվ երեք և կես տարի է անցել:

Այդ խոսքերից Վարդանը վեր թռավ:

— Պարոն Պուտնամ, ես ձեզ արգելում եմ նման բաներ հորինել:

— Ես չեմ հորինում, պարոն Պալյան, այլ փորձում եմ հասկանալ: Ձեզնից բացի, ես այս պատմության գործող անձանցից ոչ մեկին չեմ ճանաչում:

Ձեռքի շարժումով Վարդանը հասկացրեց, որ միջադեպը մոռացված է:

— Ես նույնպես փորձում եմ հասկանալ։ Ձեր ներկայացուցիչն իմ կնոջ հե՞տ է խոսել։

— Ճիշտն ասած՝ չգիտեմ։ Ես նրանից կհարցնեմ։

Այդ պատասխանը մի քիչ հանգստացրեց Վարդանին։

— Հիմա ես գիտեմ, թե ինչ է կատարվում։ Ամեն ինչ հասկանալի է։ Մարոն ոչինչ չգիտի։ Դա ապացուցում է, որ նա պատանդ է։

— Դուք հավանաբար իրավացի եք,— ասաց Դևիդ Պուտնամը՝ նստելով բազկաթոռին, Վարդանի դիմաց։ Այդ Ռըզա բեյը երևում է ճարպիկ մարդ է, շատ ջերմ, սակայն շատ խորամանկ։ Այն տպավորությունն է ստեղծվում, որ նա միաժամանակ մի քանի խաղ է վարում։ Այս պահին նա մեզ պետք է։

Դեսպանատան քարտուղարը նայեց ուղիղ Վարդանի աչքերի մեջ և ավելացրեց.

— Ես շատ անհարմար վիճակում եմ, պարոն Պալյան։ Դուք բավականաչափ լավ գիտեք քաղաքական գործընթացը, որպեսզի չհասկանաք, որ ես չեմ կարող վնասել իմ կառավարության շահերին... անձնական գործի համար։

Վարդանը շատ լավ էր հասկանում։ Նա ցրված խաղում էր իր բեղով և ծրագրեր էր կազմում։ Պուտնամին թվաց, որ ինքը կռահեց Վարդանի հղացած միտքը.

— Դուք չե՛ք կարող, պարոն Պալյան։ Եթե գնաք և այնտեղ պատմություններ սարքեք, ապա իմ հովանավորության վրա հույս չդնեք։ Եվ բացի դրանից, մտածեք ձեր հայրենակիցների մասին, որոնք վերադարձել են տարագրությունից և փորձում են Կիլիկիայում նոր կյանք սկսել։ Այդ շրջանը շատ պայթյունավտանգ է։ Ձեր արարքը հաջողությամբ ավարտվի, թե ոչ, կարող է ամեն ինչ խաթարել։

Այդ փաստարկը անհանգստացրեց Վարդանին։ Պուտնամն ավելացրեց.

— Ձեր իրավիճակում ամենալավ տեղը մայրաքաղաքն է։

— Ի՞նչ եք ուզում ասել,— հարցրեց Վարդանը զարմացած։

— Դուք հասկանում եք, որ ես չեմ շփվում մարդկանց հետ առանց նրանց մասին տեղեկություններ հավաքելու։ Ձեր հոդվածներն արևմտյան թերթերում... մահապատժի դատապարտված լինելը Սվասում 1915 թ. ... Ներքին գործերի նախարարությունում դուք շարունակում եք դիտվել որպես ապստամբ։ Գանի բեյը...

— Այդ մարդը բազմաթիվ հանցագործություններ է կատարել հայերի դեմ, և եթե մեզնից կախված լիներ, ապա նա շատ շուտով դատարանի առջև կկանգներ։

—— Գիտեմ, սակայն նա դեռևս իշխանություն ունի։ Նա տեղյակ է, որ

դուք մայրաքաղաքում եք, ինչպես նաև գիտի, որ կապեր եք պահպանում մեզ հետ: Այստեղ նա ոչինչ չի փորձի անել ձեր դեմ, սակայն եթե հեռանաք Կոստանդնուպոլսից և գնաք երկրի խորքը...

Վարդանն իրեն ծուղակի մեջ էր զգում: Ինքը պարտադրված էր հույսը դնել բրիտանացիների վրա, որոնք ոչ մի արդյունքի չէին հասել երկու ամսվա ընթացքում: Նա քմծիծաղ տվեց.

— Սպասել: Անվերջ սպասե՛լ: Դուք դա՞ եք ինձ խորհուրդ տալու, պարոն Պուտնամ:

Չնայած նրա հեգնական տոնին, դեսպանատան քարտուղարը սիրալիր ժպտաց.

— Նոր հանգամանքներ կան, պարոն Պալյան: Ռըզա բեյը Կոստանդնուպոլիս է գալու այս երկու շաբաթվա ընթացքում, ավելի շուտ հունվարի 27-ին: Ես անձամբ դիմավորելու եմ նրան «Հեյդար փաշա» կայարանում: Վստահեք ինձ, ես համապատասխան փաստարկներ կգտնեմ նրան համոզելու, որպեսզի ազատ արձակի ձեր կնոջն ու որդուն:

Այդ նորությունը չափազանց հետաքրքրեց Վարդանին, սակայն նա ցույց չտվեց և բաժանվեց Դևիդ Պուտնամից՝ նրան վստահեցնելով, որ ինքը մեծ հույսեր էր կապում նրա անձնական միջամտության հետ: Իրականում նրան թվում էր, որ այդ քայլը ի սկզբանե անհաջողության էր դատապարտված, և ամբողջ օրը, հիվանդանոցում դեղեր պատրաստելիս, տարբեր տեսանկյուններից դիտարկում էր այն միտքը, որը ծագել էր նրա գլխում, առևանգել Ռըզա բեյին և նրան փոխանակել Մարոյի ու Թովմասի հետ: Դա վտանգավոր էր, միգուցե և անհնարին, քանի որ Կոստանդնուպոլսի բոլոր ոստիկանները կարող էին ընկնել իր հետևից, սակայն Վարդանն այլ լուծում չէր գտնում: Եվ այն ամենը, ինչ նրան շատ բարդ էր թվում սկզբում, շատ հեշտ էր դառնում, երբ նա պատասխանում էր բոլոր այն հարցերին, որոնք ինքն իրեն առաջադրում էր: Անսպասելիության գործոնը պետք է իր դերը կատարեր: Մի քանի վստահելի համագործակիցների առկայությունը և բանտարկյալին պահելու վայրը բավական էին:

Այդ երեկո Վարդանը մնաց տանը, ուր ապրում էր իր քեռորդու հետ և քարտեզի դիմաց կանգնած, ավարտուն դարձրեց իր ծրագիրը: Տիրանը վերադարձավ կեսգիշերից հետո, թեթևակիորեն հարբած:

— Դատավարությունները շուտով կսկսվեն: Ափսոս, որ դու մեզ հետ չէիր այդ իրադարձությունը նշելիս:

Տեսնելով Վարդանի մտահոգ դեմքը՝ նա դադարեց ժպտալ:

— Ի՞նչ է պատահել:

— Անգլիացիներին չի հաջողվում ազատել Մարոյին ու Թովմասին: Դու ինձ խոստացել էիր քո օգնությունը:

— Ճի՛շտ է,— ասաց Տիրանն իսկույն սթափվելով:

Նա աթոռը մոտեցրեց սեղանին, նստեց և ձեռքերը դրեց թիկնակին։

— Լսում եմ քեզ։

Վարդանը շարադրեց իր ծրագիրը։ Տիրանը ոգևորություն չցուցաբերեց, այլ հակառակը։ Նա բռնեց քեռորդու ուսը և հարցրեց բարեկամաբար.

— Ասա ինձ, Վարդան, երբևէ չե՞ս մտածել, որ կարող է Մարոն ցանկություն չունի վերադառնալու։

Վարդանը կտրուկ շարժումով ազատվեց նրա ձեռքից։ Նա բարկացած էր։

— Տիրան, դու հարբած ես։

— Ամենևին։ Ես քեզ հետ խոսում եմ եղբոր պես, Վարդան։ Դու ինձ հազար անգամ կրկնել ես, որ յուրաքանչյուր հարց պետք է քննել բոլոր տեսանկյուններից։ Դե քննի՛ր։ Գոնե մտածե՞լ ես այս հնարավորության մասին։

— Ես հրաժարվում եմ այն դիտարկել։ Մարոն կարո՞ղ էր այդպես վարվել, ի՞նչ ես կարծում։

— Դու իրավացի ես, չէր կարող։ Սակայն...

Նա շփոթված շարժում արեց։ Վարդանը կտրուկ ասաց.

— Մտքինդ ասա՛։

— Պատկերացրու իրավիճակը,— անվստահ շարունակեց Տիրանը։— Այդ մարդը անխուսափելի մահից փրկում է նրան ու Թովմասին։ Նա ամենակարող է, հանդես է գալիս որպես հովանավոր... Մարոն համոզված է, որ դու մահացել ես... Սկզբում նա պետք է վերապրեր Թովմասի հետ միասին, սակայն երեք տարվա ընթացքում, կարծելով, որ ինքն այրի է... Իսկ ինչպիսի՞ մարդ է նա։

— Ես չգիտեմ և չեմ ուզում իմանալ,— անդրադարձեց Վարդանը վրդովված։

Նա տեղից վեր կացավ ծխախոտի պարկն ու թուղթը վերցնելու։ Տիրանը գնաց խոհանոց հանքային ջուր բերելու։

Եղբոր խոսքերը պտտվում էին Վարդանի գլխում։ Նման իրավիճակ հնարավոր էր, սակայն ցանկացած այլ կնոջ դեպքում։ Իսկ ինչո՞ւ Մարոն պետք է բացառություն կազմեր։ Միայն այն պատճառով, որ ինքը չէ՞ր կարողանում նրան պատկերացնել այլ տղամարդու գրկում։

Ցրված տեսքով նա ծխախոտ փաթաթեց։ Արուսյակը, որի մահը նա դեռ սգում էր... Չէ՞ որ ինքը սիրում էր նրան առանց Մարոյին մոռանալու։ Եթե Արուսյակին չսպանեին, ապա ինքը ստիպված կլիներ ընտրելու նրանցից մեկին։ Ոչ, ինքն իրավունք չուներ Մարոյին հանդիմանելու։

Երբ Տիրանը սենյակ մտավ, Վարդանը հանգիստ ծխում էր՝ ուսումնասիրելով սեղանին փռած քարտեզը։ Տիրանը նրա առջև մի բաժակ կոնյակ դրեց։

— Ես մտածեցի, որ սա ավելի տեղին է, քան հանքային ջուրը։ Հետո՞։

— Ի՞նչը։

— Եթե պարզվի, որ Մարոն...

— Վճիռն ինքը պետք է ընդունի,— պատասխանեց Վարդանը հանգիստ և չեզոք ձայնով։— Սակայն նա պետք է կարողանա այդ ընտրությունն ազատ անել։ Եվ ինչ որոշում էլ նա կայացնի, ես ուզում եմ, որ Թովմասն ինձ հետ լինի։ Նա իմ որդին է։

Բավարարվելով այդ դիրքորոշմամբ՝ Տիրանը մի բաժակ կոնյակ խմեց և սուլեց.

— Առևանգել գավառապետի, վտանգավոր բան ես մտածել։ Ծրագիր ունե՞ս։

— Դու պետք է ինձ համար մարդ ճարես։

Նա մատը դրեց Մարմարա ծովից արևելք ընկած մի կետի վրա։

— Ադաբազարը հարյուր հիսուն կիլոմետրի վրա է։ Գնացքն այնտեղ կես ժամ է կանգնում ջրի պաշար վերցնելու և ապրանքափոխանակության համար։ Նախորդ կայարանում՝ Էսկիշեհիրում, Ռըզա բեյը հեռագիր կստանա, որ գյուղատնտեսության նախարարը ցանկանում է նրա հետ մի քանի րոպե խոսել Ադաբազարի կայարանում։ Դու նախարարը կլինես, Տիրան։ Մենք Ռըզա բեյին կնստեցնենք քո մեքենան և նրա հետ կհեռանանք։

Տիրանը, անվստահ տեսքով, քարտեզին էր նայում.

— Մի քիչ կոպիտ է։

— Հետևաբար բոլոր հնարավորություններն ունենք հաջողության հասնելու։ Ինչո՞ւ նա պետք է կասկածի։

Տիրանը ծոծրակը քորեց և մտածեց։ Թերևս Վարդանն իրավացի էր, գավառապետն այդ ծուղակը կընկներ։ Սակայն ոչ Վարդանը, ոչ էլ ինքն այդպիսի գործողությունների փորձ չունեին։ Վարդանը շարունակեց վստահ տոնով.

— Մենք երկու մեքենայի կարիք կունենանք, որոնցից մեկը պետք է շքեղ լինի։

— Հույս ունեմ, որ դու քեզ հաշիվ տալիս ես, որ այդ կայարանին հասնելը անհույս ձեռնարկում է։ Ճանապարհը գրեթե անանցանելի է։

— Դա մայրաքաղաքից առաջ վերջին կայարանն է։ Մեզ պետք է միանան ևս երեք տղամարդ։ Անհրաժեշտ է ևս մեկ մեքենա՝ պատանդին այնտեղ նստեցնելու համար։ Դու կարո՞ղ ես այդ ամենը ճարել։

— Իհարկե։

Տիրանը պատասխանեց առանց տատանվելու։ Այդ գաղափարը հետզհետե նրան ավելի էր դուր գալիս։ Վերջապես կոնկրետ գործողություն։

— Ես կդիմեմ նվիրված մի ընկերոջ, որը երկու մեքենա է վարձակալում։ Կարծում եմ, նա կուզենա մասնակցել այս գործին։ Կան նաև մի երկու պինդ տղաներ, որոնց քո գաղափարը դուր կգա։

— Ես նրանց լավ կվճարեմ,— ասաց Վարդանը։

— Երբ իմանան մեր դրդապատճառները, նրանք չեն համաձայնի դրամ վերցնել։ Նրանք կօգնեն համապարտության զգացումից։ Անհաջողության դեպքում մեզ զենք պետք կգա։

Ոգևորվելով Վարդանի ծրագրից, Տիրանը կատակում էր։

— Ընկերներիդ կասես, որ գնացք չենք պայթեցնելու կամ ոստիկանատան վրա չենք հարձակվելու։ Ձեմ ուզում, որ մեծ աղմուկ բարձրանա, հակառակը՝ լիակատար գաղտնիության։ Հիշիր, որ դրանից է կախված Մարոյի և Թովմասի ազատությունը։ Ուստի գտիր այնպիսի մարդկանց, որոնց նյարդերը պինդ են և որոնք կառավարում են իրենց, խելագարներ չեմ ուզում։

— Այո, այո,— խոստացավ Տիրանը։— Ի՞նչ կասեիր Սկյուտարի մասին, որպես բանտարկության վայր։ Այն ասիական մասում է։ Արվարձան, ուր հիմնականում հայեր են ապրում։ Մենք այնտեղ շատ կողմնակիցներ ունենք, և մերոնցից շատերն այնտեղ ապաստան են գտել վերջին տարիների ընթացքում։ Ոստիկանությունն ավելի շուտ կփնտրի Ադաբազարի շրջակայքում։

— Հոյակապ է,— ասաց Վարդանը՝ քարտեզը ծալելով։— Գիտեի, որ կարող եմ հույս դնել քեզ վրա։

— Եթե ամեն ինչ նախատեսվածի պես ընթանա, ի՞նչ ես մտադիր անել, երբ գավառապետը մեր ձեռքում լինի։ Կդիմես անգլիացիների՞ն։

— Գերադասում եմ նրանց հետ չկապվել։ Դևիդ Պուտնամը խոսում էր «անձնական պատմության» մասին, ուստի ամեն ինչ կկատարվի անձնական կարգով։ Որևէ մեկը պետք է Մարոյին ու Թովմասին Կոստանդնուպոլիս բերի, և փոխանակումը կկատարվի որևէ գաղտնի վայրում։

Վարդանը վերցրեց կոնյակի բաժակը, որին նա դեռևս չէր դիպել և խմեց՝ նայելով քեռորդու աչքերի մեջ։ Նա ժպտում էր։

Տիրանը փոթկաց.

— Վարդան Պալյան՝ հրոսակախմբի առաջնորդ։ Ես երբեք չէի հավատա։ Քեզ բոլորովին նման չէ։

—– Ես շարունակում եմ դեմ լինել բռնությանը, Տիրան։

Հանգամանքներն են ինձ ստիպում անձամբ հետամուտ լինելու արդարությանը։

— Դա հոդվածներ գրել չէ, Վարդան։ Գիտակցո՞ւմ ես։

— Ես երեք տարի շարունակ Անատոլիայով մեկ փնտրել եմ Մարոյին ու Թովմասին, իսկ այժմ, երբ գիտեմ, թե որտեղ են նրանք, ոչնչի առջև կանգ չեմ առնի։

— Ըզգա բեյը կուզենա վրեժխնդիր լինել։ Առևանգումը հանցագործություն է, և Արևմուտքի ներկայացուցիչները ոչ մի պատճառ չեն ունենա խանգարելու սուլթանի կառավարությանը քեզ պատժելու։ Եվ դուք երեքդ ստիպված կլինեք թաքնվել։

Այդ հեռանկարը կարծես թե չհուզեց Վարդանին։

— Ես մի փոքր գաղափար ունեմ, որի շնորհիվ ոստիկանությունը պետք է որ չխառնվի այս գործին։ Եթե այն իրեն չարդարացնի, ապա ես իմ ընտանիքի հետ կհեռանամ երկրից։

Նա նայեց Տիրանի աչքերին.

— Դու տատանվո՞ւմ ես։ Կգերադասեիր ձեռնպա՞հ մնալ։ Ես քեզ կհասկանամ։

— Ես կգերադասեի, որ ինձ քառատեին։ Ի վերջո խոսքը Մարոյի և Թովմասի մասին է։

Վարդանը նրան սեղմեց իր գրկում և ասաց.

— Հայս ունեմ՝ որ չեմ ափսոսա, որ քեզ ներքաշել եմ այս պատմության մեջ։

— Ես երբեք չէի համաձայնի զրկվել քեզ հետ աշխատելու բերկրանքից։

Առևանգման այս պատմության մեջ Տիրանը տեսնում էր իրենց ուսանողական տարիների արկածների շարունակությունը։ Վարդանն անհանգստացավ, զգալով, որ եղբայրն այդ պատմությունն ընկալում էր որպես զվարճանք, և ինքն իրեն խոստացավ, որ կհետևեր նրան և կաշխատեր, որպեսզի ոչինչ իր աչքից չվրիպեր։ Այդ գիշեր նա դժվարությամբ քնեց, մտովի ստուգելով իր ծրագրի յուրաքանչյուր փուլը, փնտրելով թույլ օղակները և կազմելով ճշգրտման կարիք ունեցող մանրամասների ցանկը։ Կամաց—կամաց ոգևորությունը տիրեց նրան, վերջապես նա այն տպավորությունն ուներ, որ իր ճակատագիրն իրենից էր կախված։

* * *

Փափազյանի ավտոմեքենան՝ վերջին մոդելի «Ռենոն», որը հանգիստ կարող էր գյուղատնտեսության նախարարի մեքենայի տեղ անցնել,

կանգ առավ քաղաքի ծայրամասում՝ ասիական ափին։ Դա երկրորդ մեքենայի հետ հանդիպման վայրն էր, որը հենց այդ պահին անցնում էր Բոսֆորը ձկնորսական մի նավի կապված լաստանավով։ «Ռենոն» նույն ձևով էր անցկացվել ասիական ափ գիշերով Փափազյանի եղբոր կողմից, որը ձկնորս էր Գումգափուսամ՝ Մարմարա ծովի հյուսիսային ափին գտնվող մի արվարձանում։

Վարդանը դուրս եկավ մեքենայից մի քիչ քայլելու համար։ Նրան հետևեց Հակոբը՝ Տիրանի ընկերը, որին վերջինս ընտրել էր որպես ազգային անվտանգության գործակալի դերակատար։ Ճամփեզրին աճող ծառերի մերկ ճյուղերի մեջ սուլում էր քամին, իսկ մթության մեջ, ոչ հեռու շառաչում էր Մարմարա ծովը։ Մեքենայի ղեկի դիմաց նստած Փափազյանը մի ծխախոտ փաթաթեց, հետո իջեցրեց ապակին ծուխը դուրս թողնելու համար։ Նա հայացք գցեց իր գործընկերների վրա, որոնք հայտնվեցին լապտերի լույսի մեջ, և գլխով արեց.

— Դուք շատ նման եք նախարարի և նրա թիկնապահի։ Նույնիսկ սուլթանը կհավատար։

Հակոբը մուգ կոստյում էր հագել և եզրավոր գլխարկ, իսկ Վարդանը մոխրագույն կոստյում, որը նրան շատ ներկայանալի էր դարձնում։

Վարդանը, փրփրած ծովին նայելով, խորը շունչ քաշեց հանգստանալու համար։ Արդեն մեկ շաբաթ էր, ինչ ամեն ինչ պատրաստ էր, և տղամարդկանցից յուրաքանչյուրը կատարելապես գիտեր իր դերը։ Տիրանը լավ կազմակերպիչ էր։ Փափազյանը, հիսուն տարեկան մի հսկա՝ կախ ընկած խիտ բեղերով, շատ հանգիստ մարդ էր, որին ոչինչ չէր կարող հավասարակշռությունից հանել և որը վարում էր մեքենան աչքի ընկնող վարպետությամբ։ Մնացածները՝ Հակոբն ու Ավետիսը, երկուսն էլ երեսունին մոտ, ընդհատակում էին երեք տարի ի վեր և վտանգից չէին վախենում։ Համարելով, որ նրանք ոստիկանների ավելի էին նման, Վարդանը վճռել էր ինքը կատարել նախարարի դերը, իսկ Տիրանը լինելու էր իր քարտուղարը, գնալու էր Ռըզա բեյին գնացքում հանդիպելու և բերելու էր մինչև մեքենան։

Ամեն ինչ արված էր պատահականություններից խուսափելու համար։ Մի քանի օր առաջ Վարդանը ձի էր վերցրել և ուսումնասիրել էր մինչև Ադաբազար տանող ճանապարհն ու կայարանի մատույցները։ Նա այցելել էր նաև այն վայրը, ուր իրենք պետք է պահեին պատանդին։ Այդուհանդերձ նա այնպիսի տագնապի մեջ էր, որ երկու օր չէր կարողանում քնել։ Հնարավոր էր, որ ոստիկանությունը հետևում էր իր գործընկերներին, և ծրագիրը կարող էր ձախողվել, ինչպես նաև գավառապետը կարող էր լավ թիկնապահներ ունենալ, կամ էլ ուրիշ գնացք նստել։ Վարդանը գիտեր, որ ձախողումը զրոյի կհավասարեցներ Մարոյին ու Թովմասին վերագտնելու իր հնարավորությունները։

Հակոբը դիպավ նրա ուսին և ասաց.

— Ի՞նչ ես մտածում։

— Ճանապարհը երկար է և վատ վիճակում։ Ցավալի կլիներ, եթե

մեքենայի խափանման պատճառով...

— Մի մտածիր, բարեկամ, ամեն ինչ լավ կանցնի։

— Ես սովոր չեմ նման ձեռնարկումների, իսկ բախտախաղի են դրված իմ ամենաթանկագին էակները,— պատասխանեց Վարդանը։

Հակոբը ծխախոտ վառեց, և հրահանի լույսի ներքո Վարդանը տեսավ նրա նիհար դեմքը, իսկ կկոցած աչքերը ոչ մի հուզմունք չէին արտահայտում։ Հակոբն ասաց.

— Ես արդեն մի քանի շատ ավելի վտանգավոր գործողությունների եմ մասնակցել և կարող եմ ասել, որ դրան երբեք չես սովորում։ Լարումը մեզ զգոն է պահում, ինչը նման է դերասանի հուզմունքին բեմելից առաջ։

Վարդանը հիշեց, որ Հակոբը նախքան քաղաքական ասպարեզ ոտք դնելը պատրաստվում էր նվիրվել թատրոնին և որ նա մի քանի անգամ բեմ էր դուրս եկել։

— Դու թատրոնը չե՞ս կարոտում։

Տղամարդը հումորով նկատեց.

— Սիրելիս, աշխարհը բեմ է, իսկ կյանքը՝ պիես, որը վերջ չունի։ Մենք բոլորս դերասաններ ենք, սակայն հանդիսատես չկա։

Ընթացքը դանդաղեցնող մեքենայի աղմուկը Վարդանին ազատեց պատասխանելու անհրաժեշտությունից։ Երկրորդ մեքենան նույնպես Փափազյանին էր պատկանում, որն այն վարձով էր տալիս մայրաքաղաքում գտնվող օտարերկրացիներին։ Այնտեղ երեք հոգի տեսնելով՝ Վարդանը զարմացավ։ Մոտենալով, նա ճանաչեց Արամին՝ մինչև ականջներն իջնող մեծ գլխարկով։ Տիրանը, որը նստած էր ղեկի մոտ, դուրս եկավ և ուրախ հայտարարեց.

— Մենք պատրաստ ենք, գնացինք։

Վարդանը վրդովված մատնացույց արեց Արամին.

— Սա ի՞նչ է։ Մենք երբեք չենք խոսել նրա մասնակցության մասին։

— Դե լավ... Մտածեցի, որ կարող և օգտակար լինել։ Նա արագաշարժ է, ուժեղ և խելացի։ Նա հաճախ է իմ հանձնարարությունները կատարում կամ էլ մարդկանց է հետևում իմ պատվերով։

Վարդանը փրփրել էր, սակայն իրեն զսպեց։ Նա չէր կարող տղային հետը տանել, սակայն չէր կարող նաև ճանապարհին թողնել։ Նա դուռը բացեց և մատը տնկելով Արամի վրա, որը նստած էր առջևի նստարանին, ասաց.

— Կնստես հետևի նստարանին և տեղիցդ չես շարժվի մինչև Կոստանդնուպոլիս վերադառնանք։ Հասկացա՞ր։

Արամը, մեղավոր տեսքով, ուսերը հակեց, և նրա սև վերարկուն էՀ

ավելի նեղ թվաց։

— Ձենք ունե՞ս,— հարցրեց Վարդանը ձեռքը պարզելով։

Տղան, ափսոսանքով, նրան մեկնեց սև ու փայլուն «Լյուգերը»։

— Շատ լավ։ Ավետիսին տուր։

Արամը դիմադրեց.

— Բայց... բայց... սա իմն է։

— Արա, ինչ ասում եմ։

— Իսկ եթե դրա կարիքը զգա՞մ,— հարցրեց Արամը աղերսող տեսքով։

— Պաշտպանության հարցում հույսդ դիր ինձ վրա,— ասաց Ավետիսը, որը նստում էր ղեկի մոտ։

Նա ատրճանակը վերցրեց տղայի ձեռքից, դրեց նստարանի տակ և զվարճացած ժպտաց Վարդանին.

— Արամը շատ խելոք կլինի, երաշխավորում եմ։

Նրա կանաչ աչքերը փայլփլում էին, և նա զարմանալիորեն հանգիստ էր։ Նա մաքուր սափրվել էր և հարդարել էր բեղերը, կարծես պատրաստվում էր պարահանդեսի գնալ, և այդ աննշան մանրուքը թուլացրեց Վարդանի լարվածությունը։

— Ես այլևս երեխա չեմ,— մռայլ հայտարարեց Արամը և, դուրս գալով մեքենայից, միացավ Հակոբին երկրորդ նստարանի վրա։

Վարդանը նրան ասաց մեղմացած ձայնով.

— Համաձայն եմ։ Եվ հիմա եկել է ժամանակն այդ բանն ապացուցելու։

Իր գործընկերների ձեռքերը սեղմելուց հետո Վարդանը միացավ Տիրանին «Ռենոյում»։ Փափազյանը օսմանյան դրոշն էր ամրացնում շարժիչի կափարիչի վրա։

— Ադաբազա՞ր, պարոն նախարար,— հարցրեց նա ծաղրական տոնով։

Վարդանը ծիծաղելու տրամադրություն չուներ, բայց Տիրանը միացավ խաղին.

— Քշեք, բարեկամս։ Եվ ջանք թափեք շատ չկեղտոտել Նորին պայծառափայլության մեքենան։

Զմեռային անձրևներից թրջված ճանապարհը պատված էր խորը փոսերով և «Ռենոյի» զսպանները տնքում էին։ Փոսերը շրջանցելով՝ Փափազյանը քշում էր հնարավորին չափ արագ։

— Դիմացկուն մեքենա է,— ասաց նա վստահ ձայնով, ներքուստ աղոթելով, որ ոչ մի անակնկալ չպատահեր։

Նրան ավելի շատ անհանգստացնում էր իրենց հետևող մեքենան, որն

ավելի հին էր և որը վարում էր պակաս փորձված վարորդ։ Նա հաճախակի նայում էր հայելուն, ուր երևում էր հետևի մեքենան։ Ավետիսը բավական լավ էր վարում և շուտով Փափազյանն անհոգ տեսքով սկսեց սուլել։

Վարդանը ստեպ—ստեպ գրպանի ժամացույցին էր նայում։

— Մինչև գնացքի ժամանումը դեռ յոթ ժամ կա,— ասաց Տիրանը, որը հասկանում էր եղբոր հոգեվիճակը։

Փափազյանը շրջվեց և ասաց.

— Իսկ մենք այնտեղ կհասնենք հինգ ժամից։

Գունատ լուսաբացի լույսի ներքո Մարմարա ծովն արտացոլում էր արճճե երկինքը, և դա մռայլ տեսք էր հաղորդում շրջակայքին, ուր ցրված էին հյուղակները։

Կեսճանապարհին Ավետիսի վարած մեքենայի անիվը պայթեց, և անհրաժեշտ եղավ այն փոխել։ Փափազյանը օգտվեց կանգառից վառելիք լցնելու և յուղի մակարդակը ստուգելու համար։ Պատահարը խլեց մոտ կես ժամ, և դա ավելացրեց լարումը, որն արդեն տիրել էր բոլորին, և երբ քիչ անց այծերի հոտը փակեց նրանց ճանապարհը, Փափազյանը պոռթկաց։ Նա անհամբերությամբ սեղմում էր շչակին և, գլուխը լուսամատից հանելով, անպատվեց հովիվներին, որոնք ապշել էին առանց ձիերի շարժվող երկու կառքերի տեսարանից։

Վարդանը թփթփացրեց նրա ուսին.

— Հանգստացեք, վերջին այծերն արդեն անցնում են ճանապարհը։

Կարմրած դեմքով վարորդը ցածրաձայն փնթփնթաց և է՛լ ավելի ուժեղ սեղմեց ղեկը։ Երբ ճանապարհը վերջապես ազատվեց, նա կտրուկ տեղից պոկվեց։

Որքան մոտենում էին իրենց նպատակակետին, այնքան բոլորի լարումն ահագնանում էր, բացառությամբ Վարդանի, որի տագնապը խաղաղվում էր։ Վիճակը նետված էր։ Անխուսափելիության առջև նա այնքան հանդարտ էր, որ նույնիսկ ինքն էր զարմացած։ Նա լիովին կառավարում էր իրեն, սակայն ներքին դող էր զգում։

Ադարազարի ծայրամասում Փափազյանը կանգ առավ նշենիներով շրջապատված աղբյուրի մոտ։ Աղբյուրի շուրջը խմբված քողածածկ կանայք, տեսնելով պաշտոնական մեքենան, ցրվեցին։ Գնացքի գալուն մնացել էր մեկուկես ժամ, եթե, իհարկե, այն չուշանար, իսկ դա շատ հնարավոր էր։ Քանի Փափազյանն ու Արամը մաքրում էին ցեխոտված «Ռենոն», Վարդանը զրուցեց իր գործընկերների հետ՝ որքան համոզվելու, որ նրանց վճռականությունը չէր թուլացել, այնքան էլ յուրաքանչյուրին հատկացված դերը ճշգրտելու համար։

Ադաբազարը՝ փոքրիկ գորշ մի քաղաք, որը շրջապատված էր քարքարոտ դաշտերով, իր հարաբերական բարեկեցությամբ

պարտական էր երկաթգծին և կարտոֆիլի մշակությանը։ Այդ օրը շուկայի օր չէր, և այդ խոնավ ու սառը առավոտյան փողոցները դատարկ էին, իսկ տղամարդիկ խմբված էին սրճարանում, ուր վառարան էր վառվում։

Քարածխի մեծ կույտը մասամբ քողարկում էր կայարանը, որը տոլածածկ տանիքով տախտակներից կառուցված և պիստակի գույնի ներկած ուղղանկյունի մի շինություն էր։ Շենքից ոչ հեռու արձակուրդ գնացող կամ էլ զորացրված և տուն վերադարձող մոտ քսան անզեն զինվոր տաքանում էին կրակի շուրջը, որը նրանք թեժ էին պահում շոգեքարշի համար նախատեսված քարածխով։ Բեռնակիրները բարձում էին շարժակազմի վերջին վագոնները սայլերով բերված ապրանքով։ Երկաթգծի երկու ծառայողներ հենվել էին կայարանի պատին և ծխում էին։

Մեքենաները կիսաշրջան կատարեցին և կանգ առան կառամատույցից ոչ հեռու՝ պատրաստ տեղից շարժվելու։ Ճանապարհից բավականին հեռու գտնվելով, նրանք չէին գրավի ուղևորների և գյուղացիների ուշադրությունը։ Փափագյանն անջատեց «Ռենոյի» շարժիչը։ Մեքենաների հայտնվելը հետաքրքրեց զինվորներին և սայլապաններին, սակայն տեսնելով շարժիչի կափարիչին ամրացված դրոշը, նրանք չմոտեցան։ Վարդանն իջեցրեց ապակին։ Երկաթգծի երկայնքով ձգվող հեռագրական լարը դողում էր քամուց։ Տիրանը գրպանից հանեց կոնյակի շիշը և փոխանցեց մնացածներին, իր շուրթերին տանելուց առաջ։ Նրանք լուռ սպասում էին։ Քիչ անց երեք կառք հայտնվեց, որոնցից իջան ուղևորներ իրենց ճամպրուկներով։ Քաղաքից եկած ձի հեծած ոստիկանը պատվի առավ «Ռենոյի» մոտով անցնելիս։ Վարդանն իր բաճկոնի գրպանից հանեց ատրճանակը, որը նրան էր տվել Տիրանը, և դրեց նստարանին։ Նա իրեն զսպեց և չնայեց ժամացույցին, սակայն նրա շարժումը չվրիպեց Տիրանի ուշադրությունից, որը շշնջաց.

— Ավելի քան քառորդ ժամ։

Մի քանի հետաքրքրասերներ մոտեցան՝ տղամարդիկ, տղաներ, ավանակ հեծած գյուղացիներ։

Վարդանին թվում էր, որ ժամանակը շատ դանդաղ էր անցնում։ Գնացքն ուշանում էր. քսան, երեսուն րոպե, ավելի քան մեկ ժամ։ Կհասցնեի՞ն իրենք արդյոք մայրաքաղաք հասնել մութն ընկնելուց առաջ։

Վերջապես լավեց շչակի սուլոցը, և հորիզոնում ծխի սև քուլաներ հայտնվեցին։ Մնում էր հուսալ, որ Ռըզա բեյը գնացքում էր և ստացել էր հեռագիրը, որը նրան էր սպասում նախորդ կայարանում։ Տիրանը հառաչեց։ Նա դեպի Վարդանը դարձրեց լարված դիմագծերով իր դեմքը։

— Մտածիր Մարոյի ու Թովմասի մասին,— ասաց Վարդանը։— Նրանց ազատությունը մեզնից է կախված։

Տիրանը թուքը կուլ տվեց և ձեռքը ազդրին խփեց.

— Անցավ։ Ես պատրաստ եմ։

Շոգեքարշի աղմուկը լսելի դարձավ։ Հակոբը դուրս եկավ Ավետիսի մեքենայից և դիրք գրավեց կայարանի դռան մոտ՝ պատրաստ չեզոքացնելու յուրաքանչյուրին, ով կուզեր միջամտել։ Տիրանը նրան հետևեց հեռվից և խառնվեց կառամատույցի ուղևորներին։ Գնացքը դանդաղեցրեց ընթացքը, պողպատյա անիվները սահեցին գծերի վրա, իսկ ծխնելույզից գոլորշի դուրս եկավ։ Վարդանը հետ չնայեց, որպեսզի գավառապետը չտեսներ իր դեմքը մեքենային մոտենալիս։ Փափազյանը հայելու մեջ հետևում էր անցուդարձին.

— Տիրանը խոսում է կայարանի պետի հետ։ Լավ է, նա գնում է վագոններից մեկի ուղղությամբ։

Տիրանը, ուժգին բաբախող սրտով, քրտնած ափերով, մոտեցավ այն բաժանմունքին, որը նրան ցույց էր տվել ծառայողը։ Գանգուր մազերով երիտասարդ մի արաբ գլուխը դուրս հանեց և շուրջը նայեց, կարծես ինչ—որ մեկին փնտրեր։

— Ռըզա բեյի բաժանմունքը սա՞ է։

Տղան հաստատող նշան արեց և անհայտացավ ներսում։ Դռնակը բացվեց, և սև կոստյումով բարձրահասակ մի մարդ նայեց Տիրանին տիրական հայացքով։

— Հարգանքներս Զերդ պայծառափայլություն,— ասաց վերջինս գլուխը թեքելով։

— Բարև ձեզ։

— Ես պարոն նախարարի քարտուղարն եմ։ Նա ձեզ է սպասում մեքենայի մեջ, Զերդ պայծառափայլություն։

- Ուղեկցիր ինձ,— պատասխանեց գավառապետը, որը վայր ցատկեց կառամատույցին առանց սպասելու, որ Տիրանն իջեցներ աստիճանը։

Երիտասարդ արաբը պատրաստվում էր տիրոջը հետևելու, սակայն Ռըզա բեյը նրան ասաց, որ հսկեր իր իրերը։ Հրամայական շարժումներով Տիրանը մի կողմ էր մղում հետաքրքրասերներին և ուղևորներին գավառապետի ճանապարհը հարթելու համար։ Աչքի պոչով նա տեսավ, թե ինչպես էր Հակոբը հետևում իրենց։ Դա ճակատագրական պահ էր, նույնիսկ ամենաանշան միջադեպը կարող էր ամեն ինչ խաթարել։ Պատեհ կլինե՞ր, որ ինքը խոսեր գավառապետի հետ։ Վարդանը չէր ասել այդ մասին։ Լռությունը խախտեց Ռըզա բեյը.

— Դուք գիտե՞ք, թե ինչ է ուզում նախարարը։

Պատրաստի պատասխան կար.

— Նախ, նա ուզում է ձեզ ողջունել։ Նա այդ բանը Ստամբուլում կաներ, սակայն նա շրջայցեր է կատարում շրջաններում։ Ուզում է նաև տեղեկանալ ձեր գավառի գյուղատնտեսական արտադրանքի մասին։

Մենք դարձյալ լուրջ դժվարությունների առաջ ենք կանգնած։

— Ես դա շատ լավ գիտեմ,— պատասխանեց Ռըզա բեյը ցրված ձայնով։

Նա նայում էր ավտոմեքենային, որի մոդելը նրան ծանոթ չէր։

— Սա ո՞ր մակնիշի ավտոմեքենա է։

— «Ռենո», Զերդ պայծառափայլություն, Ֆրանսիայում է արտադրվել։

Մեքենայի մեջ Փափազյանը շշնջաց.

— Պատրաստվիր, նրանք գալիս են։

Վարդանը սեղմեց ատրճանակի կոթը։ Տիրանը բացեց դուռը, և Ռըզա բեյը նստեց մեքենան, ասելով.

— Պարոն նախարար...

Նա լռեց, տեսնելով իր վրա ուղղված զենքի փողը, փորձեց նահանջել, սակայն Տիրանը նրան խանգարեց։ Չհասկանալով, թե ինչ է կատարվում, Ռըզա բեյն ասաց.

— Դուք սխալ եք գործում։

— Լռիր,— չոր տոնով պատասխանեց Տիրանը։

Գավառապետը ուշադիր նայեց Վարդանին, որը խուզարկում էր նրան համոզվելու համար, որ նա զինված չէր։ Հանկարծ նրա աչքերը զարմանքից լայնացան։ Նա ճանաչեց իրեն առևանգողին։ Նա իսկույն հանգիստ ձևացավ և աչքերը հառեց վարորդի ծոծրակին, սակայն վայրկյան տևած այդ զարմանքը չվրիպեց Վարդանի ուշադրությունից։

Ավետիսը պտտում էր «Ռենոյի» ունկը շարժիչը գործի դնելու համար։ Փափազյանը հողմի պես պոկվեց տեղից, իսկ երկրորդ մեքենան նրանց պետք է հետևեր, երբ Ավետիսը կզգուշացներ Ռըզա բեյի ծառային, որ նրա տերը վճռել էր շարունակել ճանապարհը նախարարի հետ մեքենայով և մարդ կուղարկեր նրա հետևից «Հեյդար փաշա» կայարան։

Տիրանը կապեց պատանդի ձեռքերը, որը չէր դիմադրում։ Ամեն ինչ ընթանում էր նախատեսվածի պես, այդուհանդերձ Վարդանը զգուշանալով հաճախակի հետ էր նայում։ Մյուս մեքենան չէր երևում և Ադաբազարից դուրս գալուց հետո Փափազյանը դանդաղեցրեց ընթացքը, որպեսզի գործընկերներն իրենց հասնեին։

Ռըզա բեյը աչքի պոչով ուսումնասիրում էր առևանգողին, որպեսզի մտովի համեմատեր իրենց երկուսին, որ սիրում էին նույն կնոջը։ Վարդանը նույնպես թաքուն ուսումնասիրում էր մյուսին և մտածում էր Մարոյի մասին։ Այս տղամարդը հաճելի արտաքին ուներ, Վարդանն ընդունում էր դա, և, անկասկած, նրա վարվելաձևը, ինչպես նաև ձայնը, կարող էին գայթակղել։ Գուցե սկզբում նա Մարոյին տիրացել էր ուժով, սակայն հետո, ամիսնե՞ր, մեկ տարի՞ անց։ Մարմինը վարժվում է, իսկ սիրտը հետևում է մարմնին։ Սիրահարվե՞լ էր նա արդյոք իր

բանտապանին։

Նրանց հայացքները հանդիպեցին։ Ե՛վ մեկի, և՛ մյուսի՝ խանդով սնվող հետաքրքրասիրությունը հաղթում էր հակակրանքը։ Ռըզա բեյը ձևականորեն վրդովվեց, կարծես չգիտեր, թե ով էր իրեն առևանգել։

— Դուք իրավունք չունեք։ Ես գավառապետ եմ։ Դուք պատասխան կտաք։ Ոստիկանությունն ու բանակը կնետվեն ձեր հետքերով։ Թողեք ինձ այստեղ ճամփեզրին ու փախեք։ Խոստանում եմ, որ չեմ բողոքի։ Ձեր խելահեղ ծրագիրը հաջողություն չի բերի և այդ ժամանակ...

— Եվ այդ ժամանակ,—պատասխանեց Վարդանը,— մենք միասին կզոհվենք, դուք և ես։

Հենց այդպիսի պատասխան կտար Ռըզա բեյը, եթե ինքը լիներ իրեն առևանգողի փոխարեն։ Իմանալով, որ Մարոյի ամուսինը մտավորական էր և դեղագործ, Ռըզա բեյը նրա ամուսնուն պատկերացնում էր որպես նրբամարմին, մի քիչ երկչոտ մարդ, սակայն նա տեսնում էր մարզիկի մարմնով մեկին, որը վճռական էր և պատրաստ ամեն ինչի։ Հետո նա հիշեց, որ Վարդանը երկու անգամ խույս էր տվել Պետրիից և որ երեք տարի շարունակ նա գնացել էր այն շրջանները, ուր նրան փնտրում էին։ Իրենից անկախ Ռըզան հիացավ այդ մարդու կամքով և նրա ցուցաբերած արիությամբ։ Իմաստ չուներ փորձել նրա վրա տպավորություն թողնել։ Ինքն այլ մեթոդի կդիմեր։ Ինքը բարեկամական կեցվածք կընդուներ և փրկիչ կձևանար։ Գուցե ինքն ի վերջո պետք է զիջե՞ր Վարդանի պահանջներին։ Ամեն դեպքում վերջինիս վիճակը կայուն չէր, և Ռըզան կփորձեր որոշ առավելություններ ստանալ։

Վարդանը շարունակեց.

— Անիմաստ է ձևանալը, գավառապետ։ Ես հենց նոր ձեր դեմքի արտահայտությունից հասկացա, որ դուք գիտեք, թե ով եմ ես։

Ռըզա բեյը թեթևակիորեն ժպտաց.

— Դա զարմանքի արտահայտություն էր, պարոն Պալյան։ Մենք կարծում էինք, որ դուք կախաղան էիք հանվել Սվասում։

Վարդանը չէր հավատում նրա և ոչ մի խոսքին և այդ «մենք»-ը, որի մեջ մտնում էր նաև Մարոն, նրան ցավ պատճառեց։ Այդուհանդերձ, նա պահպանեց իր սառը տոնը։

— Դուք գիտեք նաև, թե ինչու եմ ձեզ առևանգել։ Դուք ազատ կարձակվեք միայն այն ժամանակ, երբ իմ կինն ու որդիս ազատ կլինեն։

—— Ազա՞տ,— ասաց Ռըզան վիրավորված ձևանալով։— Սակայն նրանք միշտ էլ ազատ են եղել։ Ես նրանց գտել եմ կիսամեռ վիճակում տեղահանության ճանապարհին, նրանց ապաստանել եմ և վերաբերվել եմ, ինչպես իմ ընտանիքի անդամներին։ Նրանք կարծում էին, որ իրենք միայնակ էին մնացել աշխարհում։ Եվ ո՞ւր կարող էին նրանք գնալ պատերազմից ավերված այս երկրում։

Ամենևին չխաբվելով գավառապետի անկեղծ տոնից, Վարդանը, այդուհանդերձ, գիտակցում էր, որ այդ մարդու շնորհիվ էր, որ Մարոն ու Թովմասը ողջ էին մնացել տեղահանության և պատերազմի տարիներին։ Կարո՞ղ էր ինքը քեն պահել նրա դեմ, որ նա չէր պատասխանել անգլիացիների հարցումներին։

Վարդանը շատ էր ուզում տեղեկանալ Մարոյի, Թովմասի մասին, սակայն նրա համար տհաճ էր հարցեր տալ իր պատանդին, քանի որ այդ դեպքում իր դիրքերը կթուլանային նրա աչքերում։ Ըզգան հասկացավ և առիթը բաց չթողեց իր բարի կամքն ապացուցելու համար։ Նա ծանրակշիռ ասաց.

— Մարոն շատ լավ է։ Թովմասը...

Նրա ձայնը կտրվեց և Վարդանն անհանգստացած բացականչեց.

— Թովմա՞սը։ Ի՞նչ է նրան պատահել։

— Շուտով երկու տարին կլրանա... Նա անհայտացել է ձիով զբոսանքի ժամանակ։ Մենք նրան այլևս չենք տեսել։ Ես ցավում եմ։

Վարդանը, ապշած, զննում էր Ըզգա բեյի դեմքը, կարծես հերքման սպասեր։ Գուցե գավառապետը ցանկանում էր Թովմասին պահել իր մոտ Մարոյի վրա ճնշում գործադրելու նպատակով։ Սակայն պատանդի աչքերը համոզեցին այդ ենթադրության անհիմն լինելու մեջ։ Վարդանի սիրտը պատռվում էր անանուն մի վշտից, և նա ատամները սեղմեց չհառաչելու համար։ Վախենալով, որ Վարդանի զայրույթն իր դեմ կուղղվեր, Ըզգա բեյն ավելացրեց ցավակցական տոնով.

— Ես Թովմասին սիրում էի հարազատ որդուս պես։ Նա երջանիկ էր իմ տանը։ Ես ամեն ինչ արեցի նրան գտնելու համար, Ալլահը վկա։ Գործի դրեցի բանակը, փոխհատուցում խոստացա։

Տիրանը դուրս էր նայում լուսամուտից, Փափազյանը հետևում էր ճանապարհին, սակայն խոսակցության ոչ մի բառը չէր վրիպում նրանց ուշադրությունից։

— Եթե նա երջանիկ էր, ինչպես դուք եք ներկայացնում, ապա ինչո՞ւ պետք է փախչեր,— հարցրեց Վարդանը հատու տոնով։

— Դա փախուստ չէր։ Նա ձիավարում էր անապատի եզրին, մենակ։ Կարծում եմ, նրան տարել են քոչվորները։

Վարդանը կախեց գլուխը և ամփոփվեց լռության մեջ, որը ոչ մեկը չհամարձակվեց խախտել։ Թովմա՛ս, իսկ ինքը կարծում էր, որ շուտով տեսնելու էր նրան։ Թովմասը, այդքան փոքր և անապատում մոլորված, ո՞ւմ ձեռքերում։ Վարդանը հիշեց Կապադովկիայի քարանձավի որբերին և մտածեց այն փոքր փոսի մասին, որն ինքը խճով էր լցրել։ Մահացա՞ծ, իր որդի՞ն։ Ո՛չ։ Ինքը չէր կարող դա հանդուրժել, ոչ էլ ընդունել։ Երկո՛ւ տարի։ Որտե՞ղ է նա այսօր։ Ի՞նչ վիճակում։ Ծառա՞ է որևէ դաժան գյուղացու տանը, հովի՞վ Քրդստանի լեռներում, ուղտապանի ստրո՞ւկ։ Այդ մտքերը երկար էին տանջում Վարդանին, որրը դողում էր

անզորությունից։ Ուստի նա պետք է գտներ Մարոյին նրա հետ անասելի մի վիշտ վերապրելու համար։

— Նա ողջ է...— շշնջաց նա առանց իրեն հաշիվ տալու, որ բարձրաձայն էր խոսում։

— Ես նույնպես համոզված եմ,— պատասխանեց Ռըզա բեյը։

Լսելով այդ ձայնը՝ Վարդանը ցնցվեց և գլուխը դարձրեց իր պատանդի կողմը, որը շարունակեց.

— Իմ կարծիքով, Թովմասն ի վերջո մանկատուն է ընկել։ Ես կապվել եմ Կիլիկիայի ու Սիրիայի բոլոր միսիոներների հետ։ Ցավոք, ես միայն բացասական պատասխաններ եմ ստացել։

Վարդանն այդ խոսքերն ընկալեց որպես անթույլատրելի ներխուժում իր վշտի մեջ և պատասխանեց կտրուկ տոնով.

— Իսկ ինչո՞ւ միսիոներները պետք է հայ երեխային հանձնեին հենց այն մարդուն, որը պատասխանատու էր այդքան հայերի տանջանքների և մահվան համար։

Ռըզա բեյը հենց սկզբից վախենում էր, որ իրեն առևանգողները այդ թեմային կանդրադառնային և փաստարկներ էր նախապատրաստել։

— Դա սուտ է, վստահեցնում եմ ձեզ։

— Գուցե դուք կապ չունեք տեղահանությունների հետ։

Մտածելով Իթթիհատի որոշ անդամների դեմ Կոստանդնուպոլսում շուտով սկսվող դատավարության մասին՝ Ռըզա բեյն այս առևանգման մեջ հետապնդումից խուսափելու միջոց տեսավ։ Վարդան Պալյանն անկասկած կապեր կունենար դատախազների շրջանում։ Իր ռազմավարության սկզբնական փուլում Ռըզան վստահորեն պաշտպանվեց.

— Որպես պաշտոնյա ես կատարում էի կառավարության հրամանները։ Ես մեղավոր չեմ այն դաժանությունների համար, որոնք տեղի են ունեցել։ Հակառակը, բազմաթիվ անգամներ միջամտել եմ Բարձր Դռան առջև, որպեսզի դրանց վերջ տան։ Ես պահել եմ իմ նամակների պատճենները։ Ես կարեցածս եմ արել, որպեսզի տեղահանությունները ընթանային մարդասիրական պայմաններում։ Այն հայերը, որոնց թաքցրել և հովանավորել եմ, և այն օտարերկրացի միսիոներները, որոնց ես դրամ և սննդամթերք եմ տվել, որպեսզի նրանք կարողանային օգնել տեղահանվածներին, կարող են վկայել դրա մասին։ Նույնիսկ եպիսկոպոսը...

— Հերիք է,— հրամայեց Վարդանը՝ ընդհատելով նրան։— Մենք հիմա լաց կլինենք, լսելով ձեր բարեսիրական գործունեության մասին։ Իսկ այն երիտասարդ կի՞նը, որին մի քանի ամիս առաջ սպանել էր Ուրգուպում ձեր մարդը՝ Պետրին։

Զարմացած Ռըզա բեյը բացականչեց.

— Ես երբեք չեմ լսել այդ գործի մասին։ Ալլահը վկա, երդվում եմ։ Իմ օգնականը շատ հաճախ իր նախաձեռնությամբ է գործում, երբեմն նույնիսկ իմ տված հրամաններին հակառակ։ Այս դեպքում ես ոչնչից տեղյակ չեմ, կրկնում եմ։ Երդվում եմ մորս արևով։

Տիրանը, զգալով իր եղբոր վրդովմունքը, Ռըզա բեյին նշան արեց լռելու։

— Աչքակապը,— ասաց Փափազյանը։

Տիրանը գրպանից մի մեծ թաշկինակ հանեց և կապեց պատանդի աչքերը, որի հանդարտությունն ու խոսքերը նրան զարմացնում էին։ Ռըզա բեյը բոլորովին նման չէր կոպիտ և բիրտ անձնավորության, դյուրագրգիռ ու անկանխատեսելի էակի, որպիսին նա պետք է լիներ ըստ Վարդանի հավաքած տեղեկությունների ծրագրի նախապատրաստության ընթացքում։ Հակառակը, գավառապետը քաղաքակիրթ բարքերով մարդ էր երևում։ Տիրանը գերադասում էր, որպեսզի իր հակառակորդները պակաս հարգարժան լինեին, և նա գուշակում էր, որ Ռըզայի ազնվական վարքագիծը շփոթեցնում էր Վարդանին։

Մութն ընկնում էր, և նրանցից յուրաքանչյուրը զգում էր ճանապարհին անցկացրած անվերջանալի ժամերի հոգնությունը։ Նրանք ստիպված եղան դադար առնելու մեքենաների բաքերը բենզին լցնելու համար, իսկ հետո ճանապարհը շարունակեցին ավելի դանդաղ ընթացքով, քանի որ լուսարձակները լավ չէին լուսավորում փոսերը։ Վարդանը լուռ մնաց մինչև Սկյուտար հասնելը։

Մեքենաները կանգ առան Ամերիկյան կանացի վարժարանի ցանկապատի առջև։ Դրա պահակը՝ Տիրանի ընկերներից մեկը, եկավ, բացեց դարպասը և ուղեկցեց լույսերը հանգցրած մեքենաները մինչև քարաշեն փոքր տունը, որը գտնվում էր վարժարանի մեծ այգու խորքում։ Քարե նկուղը, ուր հաճախ էին թաքնվում սուլթանի ոստիկանությունից փախչող դիմադրողները, որպես բանտ էր ծառայելու գավառապետի համար։ Անվտանգության համար Ռըզա բեյին պետք է շղթայով գամեին պատի մեջ ամրացրած օղակին։ Նկուղ իջնելուց հետո Ռըզա բեյի աչքակապը, հանեցին և արձակեցին ձեռքերը։ Նա տեսավ Վարդանին՝ մոմակալը ձեռքին, և Տիրանին, որը ստուգում էր շղթայի ամրությունը։ Նա մի հայացք գցեց նկուղին, որի հարմարությունները սահմանափակվում էին ծղոտե ներքնակով և գիշերանոթով։ Նա նայեց երկու տղամարդկանց, որոնց նա ասաց առանց վախ կամ հուզմունք ցուցաբերելու.

— Ծարավ եմ։

— Մենք ձեզ ջուր կբերենք,— պատասխանեց Տիրանը։

Նրանք փակեցին դուռը և ամրացրեցին դարձեկով։

Ճաշասենյակում նրանց գործընկերները էժանագին սպիտակ գինի էին խմում, որը տվել էր Ռաֆֆին։ Չնայած Ռաֆֆին ծեր չէր, ընդամենը

հիսունութ տարեկան, նա լրիվ ճաղատ էր։ Բարձրահասակ ու գեր, նա երջանիկ միայնության մեջ ապրում էր այդ տանը, որը նրան էր տրամադրել վարժարանի տնօրինությունը։ Նա ոսպով ապուր էր պատրաստել և պնդում էր, որ բոլորը ճաշի մնային։

— Ես նաև հաց ունեմ, այծի պանիր և ձիթապտուղ։

Տիրանն ու Ավետիսը Կոստանդնուպոլիս էին շտապում։

Փափազյանն ասաց, որ եղբայրն իրեն էր սպասում մեքենաները գիշերվա ընթացքում մյուս ափ տեղափոխելու համար։ Վարդանը, որը Հակոբի հետ պետք է մնար պատանդին հսկելու համար, ուղեկցեց ընկերներին մինչև դարպաս և շնորհակալություն հայտնեց օգնության համար։

— Առանց փոխօգնության հայերը ոչ մի հույս չեն կարող ունենալ որևէ բանի հասնելու,— պատասխանեց Փափազյանը նրա ձեռքը սեղմելով։

— Ծառայություն՝ ծառայության դիմաց,— ասաց Վարդանը։

— Դու չե՞ս ուզի, որ ես քեզ հետ մնամ,— հարցրեց Արամը, որի համար այդ օրը որպես զվարճանք էր անցել։— Դու տեսա՞ր, որ ես կարող եմ ինձ տղամարդու պես պահել։

Վարդանը թփթփացրեց նրա ուսին.

— Ճիշտ է։ Բայց գնա հանգստանալու, դու դա վաստակել ես։

Տիրանը շատ գոհ էր.

— Գործը գլուխ եկավ։ Մարոն շուտով մեզ հետ կլինի,— ասաց նա իր քեռորդուն, որը բանալիով փակում էր դարպասը։

Երբ Վարդանը տուն վերադարձավ, Հակոբը ապուրի երկրորդ ափսեն էր ուտում։

— Ես քեզ չսպասեցի, որովհետև կարող էի սովից ուշաթափվել,— արդարացավ նա հորանջելով։

Նա զննում էր հյուրասենյակի բազմոցը, որի վրա պետք է քներ, և ավելացրեց.

— Քեզ կարող եմ խոստովանել։ Ամբողջ գիշերը աչք չեմ փակել։ Հուզմունքից։

Վարդանը խոստովանեց, որ ինքն էլ չէր քնել։ Երբ նա ասաց, ուր ուզում էր ուտելիք և ջուր տանել բանտարկյալին, Ռաֆֆին պնդեց, որ Վարդանը նախ ուտեր։

— Ձեր գավառապետը թող մի քիչ սպասի։ Դա նրան ավելի զիջող կդարձնի։

Վարդանը նստեց սեղանի մոտ։ Ռաֆֆին մի ման ճաշ տվեց և նստեց նրա դիմաց մի բաժակ կոնյակով։ Հակոբն իր ճաշը կերավ ու գնաց հյուրասենյակ բազմոցին պառկելու։ Պահակը նայում էր Վարդանին և

լեզվով շոշավտում էր ներքևի ատամնաշարի երեք ոսկյա ատամները։

— Ռաֆֆի... Մենք միասին չե՞նք աշխատել ժամանակին։

— Այո,—— պատասխանեց պահակը, ուրախանալով, որ հյուրն իրեն հիշեց։

— Դուք հետևում էիք կարգ ու կանոնին ժողովների ժամանակ։

— Ճիշտ է։ Իսկ դուք, պարոն Պալյան, հոյակապ ճառեր էիք արտասանում։

Ռաֆֆին մռայլ դեմքով դատարկեց բաժակն ու ասաց.

— Տեսա՛ք, թե դա մեզ ինչ օրը գցեց։ Այդ անիմաստ աշխատանքը...

— Ի՞նչ իմանայինք, պարոն Ռաֆֆի։ Իրավիճակը գուցե վատթար լիներ, եթե 1908 թ. ոչինչ չանեինք։

Պահակը դարձյալ լեզուն անցկացրեց իր ոսկյա ատամների վրայով և համաձայնեց։

Հյուրասենյակից խռմփոց էր լսվում։

— Ես կհետևեմ նրա օրինակին,— ասաց պահակը,— քանի որ արթնանում եմ աքաղաղների կանչի հետ։

Երկրորդ հարկ բարձրանալուց առաջ նա Վարդանին ցույց տվեց նրա համար նախապատրաստած սենյակը, որը գտնվում էր նկուղ տանող դռան մոտ։ Վարդանը սկուտեղի վրա ուտելիք դրեց և իջավ բանտարկյալի մոտ։ Ռըզա բեյը, որը պառկել էր, ոտքի կանգնեց, լսելով բանալու ձայնը։ Վարդանը մոմը դրեց սեղանին։ Ռըզա բեյը վերցրեց սկուտեղը և, նստելով ներքնակի վրա, այն տեղավորեց ծնկներին և հաճույքով նայեց ուտելիքին։ Նա հատկապես զգացվեց, տեսնելով մեկ բաժակ կոնյակը։ Վարդանը հենվեց պատին և գլանակ փաթաթեց, որը մոմից վառեց։ Ռըզան բաժակը բարձրացրեց Վարդանի ուղղությամբ որպես լուռ կենաց։

Վարդանը նայում էր ախորժակով ուտող Ռըզա բեյին։ Նա հետին պլան էր մղել Թովմասի անհայտանալու վիշտը։ Այս պահին կարևոր էր ավարտել իր ձեռնարկածը և կարգավորել Մարոյի ազատագրության հարցը։ Նա հետին պլան էր մղել նաև այն զգացմունքները, որ իրեն կարող էր ներշնչել այդ մարդը՝ իր պատանդը։ Նա ջանում էր անտարբեր մնալ այն մարդու հանդեպ, որը եղել էր իր կնոջ սիրեկանը։

— Ձեր կյանքը Մարոյի ազատության դիմաց,— ասաց նա վճռականորեն, երբ բանտարկյալը սկուտեղը գետնին դրեց։

Այդ տոնը Ռըզային դուր չեկավ, քանի որ նա սովոր չէր, որ իրեն վերջնագրեր ներկայացնեին։ Որքան հպարտությունից դրդված, այնքան էլ հաշվենկատությունից ելնելով, նա պատասխանեց շատ ակնարկներ պարունակող ձայնով.

— Ինչո՞ւ եք այդքան վստահ, որ Մարոն ուզում է հեռանալ իմ տնից

ձեզ միանալու համար։ Նա իմ տանն այնպիսի կյանք է վարում, որի նմանը դուք նրան չեք կարող ապահովել։

— Օ՛,— փութկաց Վարդանը, որին այդ խոսքերը վիրավորեցին։— Բանտարկություն ոսկյա վանդակում և դուք դա կյա՞նք եք անվանում։

— Ապահովություն, բարեկեցություն, անհոգ կյանք, ծառաներ... էլ ի՞նչ կարող է ցանկանալ կինը։

— Ազատություն, ինքնուրույնություն։ Ես բավականաչափ լավ եմ ճանաչում Մարոյին իմանալու համար, որ նա շնչահեղձ է լինում չարսավի տակ և որ նա մահացու ձանձրանում է ձեր հարեմում։

Վերջին խոսքերը Վարդանը գիտակցաբար արհամարհական տոնով արտասանեց։ Ռըզա բեյը լարվեց, սակայն պահպանեց հանգստությունը։ Յուրաքանչյուրը փորձում էր սասանել մյուսի հանդարտությունը։

— Նա փոխվել է այս չորս տարիների ընթացքում։ Դա այլևս այն կինը չէ, որին դուք ճանաչում էիք։

— Ձեմ հավատում։

— Առանց ձեզ մոռանալու նա սովորել էր ապրել առանց ձեզ, ինչպես կրկին ամուսնացած այրին։

— Դա նրան նման չէ։ Մարոն այլ մշակույթի ներկայացուցիչ է, նա եվրոպական դաստիարակություն է ստացել։ Ինչպե՞ս կարող եք դուք նրան հասկանալ։

Ռըզա բեյը վրդովվեց.

— Ես սովորել եմ Եվրոպայում։

Գոհ մնալով, որ դիմացինը խաղի մեջ է ներգրավվում, Վարդանը ժպտաց։ Վստահ լինելով իր ուժերին, նա հայտարարեց.

— Մարոն պետք է վճիռ կայացնի։ Եթե նա գերադասի մնալ Այնթապում, ես կընդունեմ նրա որոշումը։

Ռըզայի դեմքը մռայլվեց, և Վարդանը հասկացավ, որ գավառապետը գիտեր Մարոյի պատասխանը։ Ռըզա բեյը ներքուստ ընդունեց իր պարտությունը։ Ինքը միջոցներ կգտներ ձախողելու Վարդանի ծրագրերը։ Ամեն դեպքում նա համաձայն էր կորցնել Մարոյին, եթե դրա դիմաց ստիպված չլիներ փախչել երկրից, ինչպես արել էին Իթթիհատի նախկին ղեկավարները։ Դրա դիմաց նա պատրաստ էր ցանկացած զիջման։ Կարևոր էր նախ համոզել իր բանտապանին իր բարի կամքի մեջ։

— Համաձայն եմ։ Ի՞նչ ձևով եք դուք մտադիր իրականացնել փոխանակումը։

— Ձեր տանը կա՞ այնպիսի մարդ, որը կազատեր Մարոյին պարզապես ձեզնից հեռագիր ստանալով, որևէ մեկը, որը կիմանար, որ հրահանգը ձեզնից է գալիս, հեռագրի մեջ գտնելով այնպիսի բառեր,

որոնց մասին գիտեք միայն դուք երկուսդ։

— Իմ մայրը։

— Դուք պետք է հատկապես նշեք, որ ոստիկանությունը չպետք է տեղյակ լինի գործին։

Ռըզան ծամածռվեց.

— Գրաքննությունը դեռևս վերացված չէ։ Իշխանությունները կտեղեկանան հեռագրի բովանդակության։

— Ես գիտեմ։ Բրիտանացիները ձեզ կարծես թե գնահատում են։ Համոզված եմ, որ ձեր կյանքը փրկելու համար նրանք կհամաձայնեն հեռագիրը կոդով ուղարկել Այնթապ և վերծանած օրինակը հանձնել ձեր մորը։

— Անկասկած։ Ամեն դեպքում չէի ուզենա չափից դուրս պարտական լինել անգլիացիներին։ Կգերադասեի, որպեսզի այս գործը կարգավորվեր մեր երկուսի միջև։

— Ես նույնպես։

— Ինչպե՞ս անենք։

Վարդանը ձևացավ, թե մտածում է, հետո ասաց.

— Ձեր ընտանիքից որևէ մեկը կուղեկցի իմ կնոջը այստեղ և ինձ կհանձնի նրան ձեր ազատության դիմաց։

Ռըզա բեյը գլխով արեց։ Վարդանն ավելացրեց.

— Գիտեմ, որ ոստիկանությունը զգաստ կլինի, և ես կձեռնարկեմ ապահովության բոլոր միջոցները։ Ձեր ապահովության համար ավելի լավ կլինի, եթե չփորձեք որևէ բան ձեռնարկել։

— Պարոն Պալյան,— բացականչեց Ռըզա բեյը լուրջ տոնով և ձեռքը սրտին դնելով,— ես երբեք չեմ անի այնպիսի բան, որը կվտանգեր Մարոյի կյանքը։ Ես նրան շատ եմ սիրում։ Կարծելով, որ նա այրի էր, ցանկանում էի նրա հետ ամուսնանալ, սակայն նա մերժեց իմ առաջարկը և ես հարգեցի նրա վճիռը։

Համոզված, որ Ռըզան ճշմարտությունն էր ասում, Վարդանը նրան ընդհատեց ձեռքի շարժումով։ Նա գերադասում էր փոխել խոսակցության նյութը.

— Ի՞նչ պետք է գրեմ այդ հեռագրում, որպեսզի ձեր մայրն իմանա, որ այն ձեզնից է։

— Ստորագրեք. «Ռըզա՝ այգաբացի ձեր գառնուկը»։ Նա ինձ այդպես էր անվանում երեխա ժամանակ։

Օրվա բուռն իրադարձություններից ու հուզմունքից Ռըզան շատ էր հոգնել, սակայն իրեն ապահով էր զգում։ Նա կարող էր չվախենալ այս մարդուց, որը կռացել էր սկուտեղը վերցնելու։ Եթե ինքը շարունակեր

զգուշությամբ խաղը տանել, ապա ինքն անվնաս դուրս կգար այս պատմությունից։

— Պարոն Պալյան, ես ուզում եմ ձեզ գործարք առաջարկել։

— Գործա՛րք,— զարմացավ Վարդանը։– Դու մի տե՛ս։

— Չե՞ք վախենում, որ ոստիկանությունը ձեզ կարող է հետապնդել իմ ազատագրումից հետո։ Դուք և ձեր կինը հանգիստ չեք ունենա Ստամբուլում։

— Դա իմ հոգսն է։

Այդ պատասխանի սառնությունից թևաթափ չլինելով, Ռըզա բեյը շարունակեց.

— Վախենում եմ, որ ինձնից կպահանջեն ներկայանալ Պատերազմի հանցագործների հանձնաժողով։ Ես ոչինչ չունեմ ինձ հանդիմանելու, սակայն հաճելի չէ հայտնվել մեղադրյալի նստարանի վրա նույնիսկ այն դեպքում, եթե արդարացվելու ես, ինչպես կլինի իմ դեպքում։ Իմ համբավը կարատավորվի այդ կասկածից։

— Ես պետք է այնպես անեմ, որպեսզի ձեր գործը չհանձնվի Հանձնաժողովին, իսկ դուք էլ, այդ դեպքում, իմ դեմ բողոք չեք ներկայացնի ոստիկանությանը։ Դուք դա՞ եք առաջարկում։

Ռըզա բեյը ժպտաց.

— Դուք արագ եք հասկանում, պարոն Պալյան։ Ծխախոտ կտա՞ք։

Վարդանը նրան տվեց ծխախոտի տուփը և թղթի գրքույկը։

— Ո՞վ է ձեզ ասել, որ ես նման իշխանություն ունեմ հնարավոր դատավորների վրա։

— Եթե դուք՝ հռչակ ունեցող հայ մարդ, պաշտպանեք ինձ և հաստատեք, որ ունեք իմ անմեղության ապացույցները, ապա ո՞վ կհամարձակվի ինձ դատապարտել։

Վարդանը մտածեց այդ առաջարկության մասին և շշնջաց.

— Իսկ եթե ինձնից այդ ապացույցները պահանջե՞ն։

— Ես դրանք կտրամադրեմ առանց վարանելու։ Դրանք գոյություն ունեն։ Ես չեմ հոխորտում։

Առաջարկությունը գրավիչ էր, քանի որ գավառապետի հանցանքի հանդեպ նվազագույն կասկածի դեպքում Հանձնաժողովը նրան կարդարացներ։

— Դուք ինձ պետք է անհապաղ տաք ձեր բարի կամքի վկայությունը՝ բրիտանական դեսպանատանն ուղղված՝ մի նամակ, ուր կխնդրեք անգլիացիներին համագործակցել ինձ հետ, և տեղեկացնել օսմանյան կառավարությանը, որ իրենք կզբաղվեն ձեր ազատագրության հարցով։

— Թուղթ ու գրիչ։ Դա մի քանի բոպեի գործ է։

Վարդանը սկուտեղը բարձրացրեց առաջին հարկ և պահարանի դարակներից մեկում գրելու պարագաներ գտավ։ Ռըզա բեյը ծխախոտը հանգցրեց խոնավ գետնին և սկսեց գրել բրիտանական դեսպանատան քարտուղարին հասցեագրված փաստաթուղթը։

— Դուք այդքան սիրո՞ւմ եք կյանքը,— հարցրեց Վարդանը՝ հեգնական երանգ տալով ձայնին։

— Այո, և ես դրանից չեմ ամաչում,— պատասխանեց Ռըզա բեյը առանց աչքը կտրելու թղթից։— Ես երեք կին ունեմ և տասը զավակ, որոշակի կարողություն և առողջություն։ Ես վաստակել եմ երկար և երջանիկ ապրելու իրավունքը։

Նամակը Վարդանին հանձնելուց հետո Ռըզան ասաց.

— Մենք թշնամիներ չենք, պարոն Պալյան։ Ես, ինչպես և դուք, շահագրգռված եմ, որպեսզի այս պատմությունը արագ ու անխափան կարգավորվի։

— Ձեր կյանքը, այո՞։

— Դա և այլ բան։

Վարդանը կասկածեց, որ այդ «այլ բանը» կապ ուներ Մարոյի հետ և, գուցե, այն վշտի հետ, որ զգում էր գավառապետը նրան կորցնելու մտքից։ Առանց ավելորդ խոսքերի Վարդանը նրան տվեց բրդյա վերմակը, որը բերել էր թղթի և թանաքի հետ, ու փակեց դուռը։ Մենակ մնալով՝ նա նորից հիշեց Թովմասին և կրկին զգաց հոր տառապանքը։

* * *

Հենց հաջորդ օրը Կոստանդնուպոլսի թերթերը գրեցին Այնթապի գավառապետի առևանգման մասին։ Իրեն Կոստանդնուպոլիս տանող նավում Վարդանն իր հարևանի ուսի վրայից կարդաց այն մանրամասները, որ հաղորդում էր թերթը, այսինքն գրեթե ոչինչ։ Լրագրողը քննարկում էր այն պատճառները, որոնք դրդել էին անհատ առևանգողներին այդպես գործելու, և առաջ էր քաշում երկու հնարավոր բացատրություն, դրանք կամ կառավարությանն ընդդիմադիր ուժերն էին, որոնց դրդապատճառները քաղաքական էին, կամ էլ պարզապես ավազակներ էին, որոնք հույս ունեին փրկագին ստանալու։

Տիրանը տանը չէր, սակայն Վարդանին նամակ էր թողել։ Բրիտանական դեսպանատան քարտուղարը ուզում էր շտապ տեսնել Վարդանին։ Հագուստը փոխելուց և սափրվելուց հետո նա գնաց բրիտանական դեսպանատուն, ուր Դևիդ Պուտնամն անմիջապես իրեն ընդունեց իր գրասենյակում։ Այնտեղ էր արդեն բրդյա կոստյումով մի մարդ։ Նա ծխամորճ էր ծխում և մի կողմ էր քաշվել, կարծես աննկատ

մնալու համար։

Դևիդ Պուտնամը, որն ակնհայտորեն նյարդայնացած էր, նրանց միմյանց ներկայացրեց.

— Պարոն Վարդան Պալյան։ Պարոն Գրեգորի Միլտոն։

Միլտոնը գլխով արեց, իսկ Վարդանն ասաց.

— Շատ հաճելի է, պարոն Միլտոն։ Հետախուզական ծառայությո՞ւն, եթե չեմ սխալվում։

Միլտոնը հանդարտորեն գլխով արեց։ Քարտուղարը առանց Վարդանին նստել առաջարկելու մատը վրան տնկեց.

— Ըզգա բեյի առևանգումը ձե՞ր գործն է։

Քարտուղարի վրդովված տեսքը զվարճացնում էր Վարդանին։

— Ինչո՞ւ եք այդպես մտածում, պարոն Պուտնամ։

— Դուք միակ մարդն եք, որին դա կարող է օգուտ բերել։ Դե խոստովանեք, որ ձեր գործն է։

— Գուցե և...

Պուտնամը աչքերը երկնքին հառեց և ձեռքերն իրար խփեց.

— Ինչո՞ւ չսպասեցիք, որ ձեր կինը վերադարձվեր մեր ջանքերով։

Վարդանը թեթևակիորեն ժպտաց.

— Պարոն Պուտնամ, դուք ինձ ասացիք, որ դա մասնավոր գործ է, որը չպետք է խանգարեր ձեր դիվանագիտական ջանքերին։ Ուստի ես վճռեցի այդ հարցը մասնավոր կերպով լուծել։

Քարտուղարը, անհարմար վիճակում հայտնվելով, թաքուն հայացք նետեց Միլտոնի վրա, որը մեքենայաբար լցնում էր ծխամորճը։ Նա հառաչեց.

— Դուք ձեզ շատ վատ վիճակի մեջ եք դրել, պարոն Պալյան։ Եվ մենք մեր կամքին հակառակ դառնում ենք ձեր հանցակիցները։ Իմ պարտքն է ամեն ինչ հայտնել օսմանցիներին։

— Սակայն, իհարկե, դուք դա չեք անի,— ասաց Վարդանը համոզված տոնով։– Խաղի կանոնները և մյուս կողմից ձեր շահը։

— Մեր շա՞հը,— բացականչեց Պուտնամը հեգնանքով։— Ո՞րն է մեր շահը այս պատմության մեջ։

Միլտոնը մոտեցավ և նստեց, մնացած երկուսին նշան անելով հետևել իր օրինակին։ Վարդանը նստեց բազկաթոռին, որը ձվաձև սեղանով բաժանված էր Միլտոնի և Պուտնամի բազկաթոռներից։

— Դուք մեզ վիսկի կհյուրասիրե՞ք, պարոն Պուտնամ,— ասաց Միլտոնը։

Նա մի քիչ խուլ ձայնով էր խոսում և դանդաղ էր արտաբերում բառերը։ Քարտուղարը լարվեց, համարելով, որ իր աշխատակցի խնդրանքը գրեթե որպես հրաման էր հնչում։ Արդեն մի քանի շաբաթ էր, ինչ նրանց միջև իշխանական պայքար էր մղվում, որը սակայն դուրս չէր գափս քաղաքակիրթ ձևերի շրջանակից։

Մինչ քարտուղարը կլցներ բաժակները, Միլտոնը նայեց ուղիղ Վարդանի աչքերի մեջ։

— Իմ գործընկերը ձեզ հարց տվեց, որի պատասխանն ինձ նույնպես հետաքրքրում է։ Ի՞նչ օգուտ կարող ենք մենք քաղել ձեր գործողություններից։

– Ձեր միջամտությունը Բարձր դռան կողմից բարեհաճ ընդունելության կարժանանա։ Դուք կշահեք Ռըզա բեյ գավառապետի երախտագիտությունը և, համապատասխանաբար, նրա կողմից համագործակցության ավելի մեծ պատրաստակամությունը։ Նա համաձայն է ազատ արձակել կնոջս իր ազատության դիմաց և հույս է դնում Բրիտանիայի թագավորի ներկայացուցիչների վրա ձևական կողմը դյուրին դարձնելու համար։

Վարդանը գրպանից հանեց նամակը և մեկնեց Պուտնամին, որը սեղանին դրեց երեք բաժակ վիսկի և մեկ կուժ ջուր։

— Այն գրված է գավառապետի ձեռքով։

Միլտոնը վերցրեց նամակը և, աչքերը կկոցելով, փորձեց վերծանել։ Հետո նա այն տվեց քարտուղարին և ասաց.

— Ճիշտ է։ Ռըզա բեյը մեզ խնդրում է օգնել պարոն Պալյանին։

Իր գործընկերոջ վարքագծից վիրավորված Պուտնամը շրթունքներն էր կրծում։ Քանի նա կարդում էր, Միլտոնը հարցրեց Վարդանին.

— Իրականում ի՞նչ եք մեզնից սպասում։

— Շատ բան չեմ սպասում, պարոն Միլտոն։ Գավառապետն ու ես վճռել ենք մեր վեճը կարգավորել խաղաղ կերպով, առանց ներքաշելու իշխանություններին։ Ես մի հեռագիր եմ բերել, որը հասցեագրված է Ռըզա բեյի մորը։ Դուք պետք է այն ուղարկեք Այնթապ՝ ձեր մարդկանց, որպեսզի նրանք հեռագիրը հանձնեն այդ տիկնոջը և մեզ բերեն նրա պատասխանը։ Այդ ամենը պետք է կոդավորված լինի, որպեսզի օսմանցիները ոչինչ չկասկածեն։

— Այդքան բա՞ն,— հարցրեց Պուտնամը, որն ուզում էր գործընկերոջ կողմից զավթված նախաձեռնությունն իրեն վերադարձնել։

— Գրեթե։ Դուք պետք է հայտնեք նաև սուլթանի կառավարությանը, որ առևանգողները կապ են հաստատել ձեր դեսպանատան հետ և որ դրանք պարզապես փրկագին պահանջող ավազակներ են։

Քարտուղարը ձեռքով բացասական շարժում արեց.

— Ներքին գործերի նախարարը կցանկանա, և իրավացի կլինի, այդ գործով ինքը զբաղվել։

— Ոչ, եթե դուք ասեք, որ Անգլիան կվճարի փրկագինը, որովհետև նա շահագրգռված է Ռըզա բեյի ազատագրությամբ։ Քանի որ պատերազմը թանկ է նստել, ապա օսմանյան կառավարությունը ձեզ ազատ գործելու հնարավորություն կտա։ Կարևորն այն է, որ նրանք հավատան, որ դա քրեական հանցագործություն է։

Երկու անգլիացիները հարցական հայացք փոխանակեցին։ Միլտոնը հայտարարեց.

— Ազատագրվելով, գավառապետը կբացահայտի իրականությունը։

— Ամենևին, հավատացեք իմ խոսքին։

Քարտուղարը հոնքերը կիտեց.

— Հույս ունեմ, որ դուք նրան չեք վերացնելու։

— Ոչ։ Սակայն Ռըզա բեյը լուռ կմնա, քանի որ խոսքը իր ապագայի մասին է։ Երբ կինս ինձ հետ կլինի, նա կհանձնվի դեսպանատուն։ Այդ ժամանակ դուք կարող եք լրագրողներ հավաքել և այս ամենից մեծ քաղաքական օգուտ քաղել, որը կշարժի ֆրանսիացիների նախանձը։

Դեսպանատան աշխատողների դեմքի արտահայտությունից Վարդանը հասկացավ, որ նրանք իր առաջարկը գրավիչ էին համարում։ Այդուհանդերձ, նրանցից ոչ մեկը չէր հանդգնում համաձայնել և պատասխանատվությունն իր վրա վերցնել։

— Եթե ցանկանում եք այս առաջարկը քննարկել առանց վկաների և խորհրդակցել ձեր գործընկերների հետ, ես կարող եմ հեռանալ։

Դևիդ Պուտնամը թեթևություն զգալով, պատասխանեց.

— Դա իսկապես անհրաժեշտ է։ Սակայն ձեզ նեղություն մի տվեք, պարոն Պալյան, մենք ինքներս դուրս կգանք։ Եթե ցանկանում եք, կարող եք վիսկի խմել։

Նրանք դուրս եկան։ Մոտ քսան րոպե տևած սպասումը չանհանգստացրեց Վարդանին, քանի որ առաջարկը չափից ավելի շահավետ էր անգլիացիների համար, որպեսզի նրանք մերժեին։

— Մենք համաձայն ենք ձեզ հետ համագործակցելու,— հայտարարեց Դևիդ Պուտնամը՝ մտնելուն պես։– Այդպես չէ՞, պարոն Միլտոն։

Վերջինս համաձայնության նշան արեց և առաջարկեց բաժակ բարձրացնել թագավորի առողջության համար։ Հետո նա վերջապես վառեց իր ծխամորճը։

— Մենք կհամագործակցենք, պարոն Պալյան,— ասաց նա,— սակայն եթե հանկարծ ինչ-որ դժվարություն ծագի, ապա մեր օգնության վրա հույս չդնեք։ Այդ դեպքում մենք ուղղակի կժխտենք, որ տեղյակ ենք եղել։

Վարդանը սպասում էր բրիտանացիների նման դիրքորոշմանը։ Նա գլխով արեց և գրպանից հանեց ծալված մի թերթիկ։

— Ես համաձայն եմ։ Ահա հեռագրի տեքստը։

* * *

Ռըզա բեյի առևանգման լուրը Այնթապում շփոթություն առաջացրեց։ Նրա երեք կանայք և նրա ծեր դայակը նույն ձևով արձագանքեցին, ճիչեր, արցունքներ, հուսահատություն։ Մարոն անկեղծորեն տխրել էր։ Երեխաները սկզբում լացեցին, իսկ հետո սկսեցին իրար հարցեր տալ և զարմանալ, որ ինչ-որ մեկը կարող էր իրենց հորը թշնամաբար վերաբերվել։ Այդ նույն հարցերը նրանք մեծերին ուղղեցին, սակայն պատասխան չստացան։ Միայն Բույուկ խանումն էր նորությունն ընդունել անվրդով։ Նա որդու բացակայությամբ ղեկավարում էր տունը և չպետք է իրեն կորցներ՝ վշտին անձնատուր լինելով։ Լուռ տանջվելով՝ նա իր հարսների և թոռների ներկայությամբ լավատեսություն էր ցուցաբերում, որի միակ հիմքը նրա ցանկությունն էր, որպեսզի այդ դժբախտությունը բարենպաստ ձևով հանգուցալուծվեր։ Անհանգստությունից նա չէր կարողանում քնել և ջանում էր ազատվել տագնապից, կրկնելով.

— Ոչինչ, փրկագին են ուզելու և ազատելու են Ռըզա բեյին, հենց որ մենք վճարենք։

Կամ էլ.

— Ոստիկանությունը նրան շուտ կգտնի, և մեղավորները կճոճվեն պարանի ծայրին։ Չէ՞ որ նա գավառապետ է։

Եվ երբ հարսներից կամ թոռներից որևէ մեկը լաց էր լինում նրա ներկայությամբ, նա բարկանում էր և ուղարկում էր նվնվալու իրենց սենյակներում։ Ընտանիքի մնացած անդամների մռայլ դեմքերը չտեսնելու համար Բույուկ խանումը փակվել էր Ռըզայի գրասենյակում, ուր նա իրեն ավելի մոտ էր զգում որդուն և կարող էր անկաշկանդ տրվել իր վշտին։ Լուսամուտից նա հետևում էր բակին, հույս ունենալով, որ ամեն րոպե կարող էր սուրհանդակ գալ։

Պետրին, որն ապաքինվում էր Աֆիոնում ստացած վերքերից, նստած էր նախասրահում Բույուկ խանումի տրամադրության տակ։

Երեք ամիս առաջ Ռըզա բեյը նրան պատվիրել էր հետևել Մարոյին և խոչընդոտել արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու նրա փորձերին, և այդ զբաղմունքը նրան նվաստացնում էր։ Նա համոզված էր, որ եթե ինքն ուղեկցեր իր տիրոջը Կոստանդնուպոլիս, ապա այս ամենը չէր պատահի։

— Պետրի՛,— լսվեց Բույուկ խանումի տիրական ձայնը։

Պետրին մտավ գրասենյակ, ուր շոգ էր շիկացած մանղալի պատճառով։ Նա կարծում էր, որ Բույուկ խանումն ուզում էր, որ ինքը զանգահարեր քաղաքապետարան կամ որևէ գեներալի։ Առավոտից ի վեր ծեր կինը ժամը մեկ կանչում էր Պետրիին և, մատով ցույց տալով Ռըզա բեյի սեկրետերին դրված հեռախոսը, ասում էր.

— Տե՛ս նորություն չունե՞ն։

Այս անգամ կանչելու պատճառն այլ էր։ Լուսամատի մոտ կանգնած կինը ջղային շարժումներով դուրս էր ցույց տալիս.

— Ո՞վ է սա։

Նա ցույց էր տալիս բակ մտնող բրիտանական բանակի համազգեստով մի ձիավորի։ Պետրին ճանաչեց գնդապետ Թոմպսոնին, որը հաճախ էր այցելում գավառապետին։

— Անգլիացիների կապավոր սպան է Այնթապից, Բույուկ խանում։

— Գնա տես, թե ի՞նչ է ուզում,— ասաց նա ձեռքով արագ շարժում անելով։

Պետրին վազեց դեպի մուտքի դուռը։ Բացի մեջքի ցավից, որ նա զգում էր ձախ ձեռքը շարժելիս, նրա վերքերն այլ հետևանքներ չէին թողել։ Անգլիացին իր ձիուն հանձնեց ծառային և միացավ Պետրիին դռան շեմին և կատարյալ թուրքերենով խնդրեց իրեն շտապ տանել Բույուկ խանումի մոտ։

— Նորությունը լա՞վն է, թե վա՞տ։

— Ավելի շուտ՝ լավ,— պատասխանեց լեյտենանտը խուսափողաբար։

Այցելուին ընդունելու համար Բույուկ խանումը դեմքը ծածկեց։ Որդու սեղանի մոտ նստած նա ներքուստ դողում էր, սակայն արտաքուստ շատ հանգիստ էր թվում։ Այդուհանդերձ, նրա ձայնն ավելի սուր էր, քան սովորաբար։

— Այստեղ մնա,— հրամայեց նա Պետրիին, որն ուզում էր գնալ։

Վստահության այդ նշանը հուզեց Պետրիին, և նա կանգնեց ծեր կնոջ կողքին, մի քիչ հետ քաշված։

— Հարգանքներս, խանում,— ասաց լեյտենանտը, գլուխը խոնարհելով։

Սենյակում չափից ավելի շոգ էր, և նրա ճակատին քրտնքի կաթիլներ հայտնվեցին։ Առանց տուրք տալու ձևականություններին, Բույուկ խանումն ասաց.

— Խոսե՛ք, արա՛գ, պարոն։

— Ձեր որդի գավառապետը կարծես թե լավ է,— պատասխանեց լեյտենանտ Թոմպսոնը իր համազգեստի գրպանից ծրար հանելով։ Ձեզ հեռագիր է ուղարկել։

Պետրին վերցրեց ծրարը և տվեց ծեր կնոջը։ Նա այն բացեց սադափե կոթով թուղթկտրիչով և հարցրեց.

— Ինչո՞ւ է հեռագիրն ինձ հասել ձեր միջոցով։

— Առևանգողները կապ են հաստատել Կոստանդնուպոլսի մեր դեսպանատան հետ։

Բույուկ խանումը նախ նայեց ստորագրությանը։ Ստորագրություն չկար, իսկ ձեռագիրն իր որդունը չէր, սակայն վերջին ողջույնը՝ «այգաբացի ձեր գառնուկ», միայն Ռըզան կարող էր թելադրել։ Լեյտենանտ Թոմպսոնը նայեց ծեր կնոջը, որը հեռացնում և մոտեցնում էր թերթիկը աչքերի համար հարմար հեռավորություն ընտրելու համար։ Կարդալու ընթացքում նրա աչքերը չար արտահայտություն ստացան, և նա հասկացավ, որ ինքը պետք է որ շատ գունատ լիներ իր քողի տակ։

— Այդ կի՛նը, այդ կի՛նը,— բացականչեց նա բարակ ձայնով, ձեռքը սեղանին խփելով։— Հենց որ նրան տեսա, հասկացա, որ նա դժբախտություն է բերելու։

Պետրին չէր կարողանում զսպել հետաքրքրասիրությունը, սակայն չէր համարձակվում հարցեր տալ և նայում էր Թոմպսոնին, որը պահպանում էր սառնասրտությունը։ Բույուկ խանումի աշխույժ աչքերը դիմացը դրված նամակից անցնում էին անգլիացի լեյտենանտի վրա։ Նրա շնչառությունն արագ էր ու աղմկոտ, և նա հազիվ էր զսպում վրդովմունքը։ Նա մտածելու բան չուներ, քանի որ Ռըզա բեյի հրամանները շատ հստակ էին, սակայն նա պատասխանի համար ուզում էր ձևակերպում գտնել, որը կխնայեր նրա ինքնասիրությունը։ Ժամանակ շահելու համար նա հրամայեց Պետրիին.

— Կարդա՛։

Վերջապես ինքը կիմանար, թե ինչ էր պատահել։ Նա արագ կարդաց նամակը, կարմրեց, երկրորդ անգամ կարդաց և դրեց գրասեղանին։ Կատաղությունից նա սեղմեց ծնոտները ու ատամները կրճտացրեց։ Պալյա՜ն։ Դա կարող էր միայն նա լինել։ Նորից նա։

— Թույլ տվեք, ես այնտեղ գնամ, Բույուկ խանում։ Ես Ռըզա բեյին կբերեմ։

Առանց իրեն նեղություն տալու Պետրիին պատասխանելու, նա նայեց անգլիացի սպային և հարցրեց.

— Ե՞րբ է հաջորդ գնացքը Ստամբուլ մեկնում։

— Երկու օրից, խանում։

Նա գլխով արեց։ Թոմպսոնը շարունակեց.

— Արդյոք դա նշանակո՞ւմ է, որ դուք ընդունում եք պայմանները, խանում։ Ես պետք է պատասխան ուղարկեմ Կոստանդնուպոլիս։

— Մենք ընտրություն չունենք։ Պետրին կուղեկցի կնոջը։

Իր բավարարությունը վատ թաքցնելով, Պետրին հարցրեց անգլիացուն։

— Ի՞նչ է այդ «Թոքաթլյանը», որ հիշատակվում է նամակում։

— Հյուրանոց է մայրաքաղաքում։ Դուք այնտեղ կիջևանեք և կսպասեք, որ առևանգողները ձեզ տեղեկացնեն, թե որտեղ է տեղի ունենալու փոխանակումը։

— Ես կարդալ գիտեմ,— կտրուկ տոնով ասաց Պետրին։

Բույուկ խանումը հարցրեց.

— Լեյտենանտ, ո՞վ գիտի այս նամակի բովանդակության մասին։

— Միայն բրիտանական դիվանագետները։ Մենք գործում ենք որպես միջնորդներ, որովհետև հարգում ենք Ռըզա բեյին և ցանկանում ենք հնարավորինս շուտ նրան ազատագրված տեսնել։

— Շնորհակալություն,— ասաց նա իրեն ստիպելով քաղաքավարի լինել,— մենք գնահատում ենք ձեր օգնությունը։ Իմ որդին հրամայում է, որ ո՛չ ոստիկանությունը, ո՛չ իշխանությունները տեղեկացված չլինեն։ Ուրեմն պետք է այդպես էլ վարվել։

— Լռությունը մեր մասնագիտության մասն է կազմում, խանում։

Բույուկ խանումը փնթփնթաց հազիվ լսելի ձայնով.

— Չէի ուզենա, որ իմանային, որ այս ամենը տեղի է ունեցել անհավատ կնոջ պատճառով։

Լեյտենանտը զսպեց ժպտալու իր ցանկությունը։

— Պաշտոնական վարկածը կլինի՝ առևանգում փրկագին ստանալու համար։

Նա հրաժարվեց Բույուկ խանումի զուտ քաղաքավարությունից առաջարկած սուրճից, պատճառաբանելով, որ հանդիպում ուներ, և շտապեց դուրս, քանի որ սենյակի շոգից լրիվ քրտնել էր։

Երբ Բույուկ խանումը մենակ մնաց Պետրիի հետ, նրան հանձնարարականներ տվեց.

— Ոչ մեկին ոչ մի խոսք։ Ես կհանգստացնեմ Ռըզա բեյի կանանց և երեխաներին առանց ճշմարտությունն ասելու։ Ուզում եմ, որ Մարոն ոչինչ չիմանա մինչև մեկնելու պահը։

— Ամեն ինչ ձեր ասածով կլինի, Բույուկ խանում։

— Պետրի,— ասաց նա բարեկամաբար, ինչպես երբեք չէր խոսել նրա հետ,— դու Ռըզա բեյին շատ վաղուցվանից ես ծառայում, գրեթե նրա ընկերն ես։ Կատարիր այս հանձնարարականները տառացիորեն։ Ես հավատում եմ քեզ։

Ձեռքը սրտին դնելով՝ Պետրին խորը խոնարհվեց.

— Ձեր ցանկությունը հրաման է ինձ համար, Բույուկ խանում։

Ծեր կինը հետ ընկավ բազմոցի թիկնակին և խորը հոգոց հանեց։ Պետրին անձայն հեռացավ։

* * *

Սաֆիյեն, Մակբուլեն, Լեյլան ու Էմինեն, չկարողանալով մենակ մնալ իրենց սենյակներում, հավաքվել էին հյուրասենյակում, ուր ժամանակին Մարոն դասավանդում էր երեխաներին։ Այն պահից, որ Ռըզա բեյի մոտալուտ վերադարձի հույսը փոխարինելու էր եկել նրա առևանգման բոթին, նրանք սպասումն անվերջանալի էին համարում, և ոչ մի զբաղմունք չէր սփոփում նրանց անհամբերությունը։ Նրանք, իրար ընդհատելով, քննարկել էին Բույուկ խանումի հաղորդած սուղ տեղեկությունները, բազմիցս շեշտել էին իրենց համակած վախն ու ցավը առևանգման լուրը ստանալու պահին և այն թեթևությունն ու ուրախությունը, որ ապրում էին այժմ։ Լռությունը նրանց համար անտանելի էր։ Հիմա նրանցից յուրաքանչյուրը դրվագներ էր հիշում Ռըզայի հետ իրենց կյանքից, կրկնում էր նրա ասած բարի խոսքերը, ակնարկներով ընդգծում էր իր մտերմությունը իրենց բոլորի ամուսնու հետ։ Ինչ վերաբերում է Էմինեին, ապա նա հիշում էր Ռըզա բեյի մանկությունը, կրկնում էր այն ծիծաղելի պատմությունները, որ բոլորն անգիր գիտեին, սակայն նորից էին լսում հիացմունքով։

Մարոն նրանց անուշադիր էր լսում։ Նա հիշում էր հանդիպումը նրա հետ քարանձավի մոտ, ուր մահանում էր իր մայրը։ Դա այնքան վաղուց էր։ Նա այս կալվածքում այնքան վաղուց էր ապրում, որ Ռըզային նախորդող իր անցյալը այնքան անիրական, այնքան աղոտ էր թվում, կարծես երազ լիներ, որն անհայտանում է արթնանալուն պես։ Այն կի՞նն էր ինքն արդյոք, որն ամուսնացել էր Աֆիոնում, ապրել էր դեղագործի հետ Կոստանդնուպոլսում, նրանից երեխա էր ունեցել Սվասում։ Իմացե՛լ էր արդյոք ինքն այլ բան, քան աշխարհից կտրված փափկասուն, կիսավանական այս կյանքն այլ կանանց ընկերակցությամբ, որոնք իր քույրերն էին դարձել։

— Անե՛, նայի՛ր։

Նուրհանը վագում էր նրա մոտ, որպեսզի ցույց տար իր գծագրած տառերը։ Աչքերը բարձրացնելով՝ նա ցնցվեց։ Մի պահ նրան թվաց, որ ինքը Թովմասին էր տեսնում, և նրա անցած կյանքի հիշողությունը ցավագին կերպով վերադարձավ։ Եվ այժմ ներկան էր անիրական թվում։

— Անե՞,— ասաց երեխան, որը թափահարում էր թերթիկները մոր չտեսնող հայացքի առջև։

Մարոն նորից ցնցվեց և ժպտաց՝ ուսումնասիրելով որդու նկարը։ Նուրհանն ընդամենը երկուս ու կես տարեկան էր, սակայն արդեն կարողանում էր վերարտադրել պատերին գրված Ղուրանի սուրահները

և պարսկական խալիների բարդ նախշերը։ Էմինեն ասում էր, որ նա բնատուր տաղանդ ուներ։

— Շատ լավ է, թանկագինս,— ասաց Մարոն և կռացավ նրան համբուրելու։

Երեխան գնաց, նորից տեղավորվեց գետնին և վերցրեց մատիտները։ Պահեր կային, երբ Նուրհանը զարմանալի կերպով նման էր լինում Թովմասին։ Գուցե Մարոյին դա թվո՞ւմ էր, քանի որ բոլորը միաբերան ասում էին, որ նա Ռըզա բեյի պատճենն էր։ Թովմասի կորստյան բաց վերքը դարձյալ մի քիչ տանջեց Մարոյին։ Մարոն հույսը չէր կորցնում և նրան խրախուսում էր Էմինեն, որը սուրճի բաժակում տեսնում էր, որ Թովմասն առողջ էր։ Մարոն ինքն իրեն ասում էր, որ պատերազմն ավարտվելուց հետո ավելի հեշտ կլիներ գտնել ավագ որդուն։ Նա կուզեր շրջել շրջանով մեկ և փնտրել նրան, գոնե կապվել միսիոներների և հաղթանակած բանակների հետ, որպեսզի նրանք փորձեին իմանալ նրա գտնվելու վայրը, սակայն Ռըզա բեյը նրան արգելում էր դա անել և ինքն էր ձեռնարկում բոլոր քայլերը, քանի որ, ինչպես ինքն էր ասում, իր պաշտոնը հեշտացնում էր գործը։

Հրադադարից հետո Մարոն պակաս ազատ էր, քանի որ անընդհատ գտնվում էր ատելի Պետրիի հսկողության տակ։ Երեք ամսվա ընթացքում նա ոչ մի անգամ դուրս չէր եկել կալվածքից։ Այն պատրվակով, որ հաղթանակող բանակը խառնակ իրավիճակ էր ստեղծել շրջանում, Ռըզա բեյը թույլ չէր տալիս տան կանանց բաղնիք հաճախել։ Մարոն կասկածում էր, որ դա արվում էր, որպեսզի ինքը քաղաք չգնար։

Շատ մոտ ամպերը գոռացին։ Նուրհանը թողեց իր նկարը, վազեց Մարոյի մոտ և դեմքը թաքցրեց նրա փեշի մեջ։ Մարոն գրկեց երեխային և գլուխը քնքշորեն շոյեց.

— Մի վախեցիր, թանկագինս,— շշնջաց նա երեխայի ականջին։— Ես այստեղ եմ և քեզ կպաշտպանեմ։

Հենց որ մայրը նրան գրկեց, Նուրհանը դադարեց դողալ։ Լեյլան հեգնական տոնով ասաց.

— Մեծ տղա ես, իսկ աղմուկից վախենում ես։ Նայիր Աթիլլային, նա վախկոտ չէ։

Վիրավորված Մարոն ուզեց պատասխանել, որ տասնհինգ ամսական Աթիլլան դեռևս կրծքից չէր կտրվել, սակայն չուզեց Լեյլային հնարավորություն տալ իր թույնը թափելու։ Հատկապես, որ երրորդ կնոջ գիրուկ երեխան, որին վերջինս խանդաղատությամբ էր վերաբերվում, դեռևս չէր քայլում և մի քիչ թերհաս էր թվում։

— Պիրի խոջայի դասը պետք է որ ավարտվի և երեխաները շուտով կգան մզկիթից,— հայտարարեց Սաֆիյեն, որը վախենում էր վիճաբանությունից։

Նա լուսամատից դուրս նայեց, ուր փայլեց կայծակը։ Դրան հետևեց

որոտը։

— Այս փոթորիկից հետո վերջապես արև դուրս կգա,— ավելացրեց նա։

Արդեն մեկ շաբաթ էր, ինչ հորդառատ և սառը անձրև էր տեղում և առաջին կինը կարոտել էր իր զբոսանքներն այգում։ Էմինեն ձեռքը տարավ զգեստի գրպանը և այնտեղից համայիլ հանեց, լաթե եռանկյունի էր, որի մեջ թղթի վրա գրված հատվածներ կային Ղուրանից.

— Սա մեզ կպահպանի վտանգից։

— Դու էլ, քո նախապաշարմունքներով,— ասաց Մակբուլեն արմավը բերանը տանելուց առաջ։

— Փաստ է, որ իմ համայիլները բոլորին պաշտպանել են տիֆից։

Դուռը բացվեց, և մի աղախին հայտարարեց.

— Մարո խանում, տիկինը կանչում է ձեզ։

Մարոն վեր կացավ։

— Ո՞ւր ես գնում, մայրիկ,— հարցրեց Նուրհանը։

— Տատիկի մոտ,— ասաց Մարոն նրա մազերը խառնելով։— Ես երկար չեմ բացակայի։ Մնա Էմինեի հետ։

Նա հետևեց աղախնին մինչև մուտքի նախասրահը։ Բույուկ խանումը կանգնած էր Պետրիի հետ, որի հագին անձրևանոց կար։

— Դուք ինձ կանչե՞լ եք, Բույուկ խանում։

Ծեր կինը կկոցեց աչքերը և ասաց չոր ձայնով.

— Դու գնում ես։

— Ներեցե՞ք,— հարցրեց Մարոն, չհասկանալով։

— Դու հենց հիմա հեռանում ես այստեղից։

Մարոն զարմացած էր։

- Բայց...

— Ամեն ինչ ասված է,— հատեց Բույուկ խանումը թունոտ տոնով։

— Դու գնում ես Կոստանդնուպոլիս ամուսնուդ մոտ։ Նա է, շան որդին, առևանգել Ռըզային։

Ապշած Մարոն չէր կարողանում ընկալել իր լսածի նշանակությունը։ Բույուկ խանումը նշան արեց Այլային, որը կանգնած էր ճաշասենյակի դռան մեջ։ Երեք տարի շարունակ Մարոյին ծառայող հայուհին, որը նրան որպես մայր էր ընկալում, լալիս էր։ Նրա ձախ ձեռքին ծալված մի վերարկու կար, իսկ աջ ձեռքում պաստառից ճամպրուկ ուներ, ուր նա

տեղավորել էր Մարոյի հագուստն ու անձնական իրերը։

Իրերը տեսնելով՝ Մարոն սթափվեց։

— Նուրհան,— բացականչեց նա ձեռքերը մեկնելով դեպի դասասենյակը։

— Նա այստեղ է մնում,— պատասխանեց Բույուկ խանումը։— Նա Ռըզայի որդին է։

— Դա ի՛մ երեխան է։ Ի՛մն է։

— Հերի՛ք է։

— Ես առանց նրա չեմ գնա,— ընդդիմացավ Մարոն։

Նա ցանկացավ վերադառնալ Նուրհանի մոտ, սակայն Պետրին փակեց ճանապարհը՝ սպառնալով նրան բարձրացրած ձեռքով։ Նա ոռնաց.

— Հանգի՛ստ, մենք գնում ենք։

Մարոն շրջվեց դեպի Բույուկ խանումը և ծնկի իջավ, աղերսելով.

— Բույուկ խանո՛ւմ։ Բույուկ խանո՛ւմ։ Դուք չեք կարող այդպես վարվել։ Դուք մայր եք և պետք է ինձ հասկանաք։ Դուք չեք կարող ինձ գրկել Նուրհանից։ Ես արդեն կորցրել եմ Թովմասին։

Նա զուր փորձեց բռնել նրա ձեռքը։ Ռըզա բեյի մայրը զզվանքով հեռացավ այդ աղերսող կնոջից և ասաց Պետրիին.

— Դո՛ւրս տար նրան այստեղից։

Պետրին բռնեց Մարոյի մեջքից։ Մարոն փորձում էր ազատվել, հարվածեց նրան և սարսափած բղավեց.

— Նուրհա՛ն։ Նուրհա՛ն։

Պետրին գետնից պոկեց և տարավ բղավող կնոջը։ Բույուկ խանումը գնաց այն սենյակը, ուր գտնվում էին հարսները, որպեսզի թույլ չտար նրանց միջամտելու և որպեսզի Նուրհանն իր աչքի առաջ լիներ։

— Իրերը բեր,– հրամայեց Պետրին աղախնին, երբ դուրս էր գալիս։

Նա հազիվ էր Մարոյին պահում։ Երբ Պետրին Մարոյին տանում էր դեպի անձրևի տակ սպասող կառքը, բակը լցվեց նրա հուսահատ ճիչերով։ Պետրին նրան հրեց կառքի մեջ և բարձրացավ նրա հետևից։ Քանի որ Մարոն փորձում էր մյուս դուռը բացել, Պետրին բռնեց նրա թևը և կոպտորեն հրեց դեպի նստարանը։ Մարոն շարունակում էր ամբողջ ձայնով կանչել Նուրհանին։ Պետրին նրան լռեցրեց ապտակ հասցնելով, որից նա գրեթե ուշաթափվեց։ Կատաղությունից ու վշտից դողալով՝ Այլան շպրտեց վերարկուն ու ճամպրուկը կառքի հատակին և տուն փախավ։ Կառապանը մտրակեց ձիերին, և կառքը շարժվեց կայծակի ու որոտի ուղեկցությամբ։

* * *

Օրեր շարունակ գնացքը Մարոյին հեռու էր տանում Նուրհանից, այն շրջանից, ուր նրա համոզմամբ գտնվում էր Թովմասը, և նրա տառապանքն ահագնանում էր անիվների յուրաքանչյուր պտույտի հետ: Նրա արցունքները հատել էին, և նա լռության պատվար էր կառուցել իր և իրեն հեգնական հայացքով նայող Պետրիի միջև: Շոգեքարշի շչակը Մարոյին չարագուշակ էր թվում, կարծես այդ ճիչը իր հոգու խորքից դուրս գար: Ի՞նչ մեղք էր ինքը գործել Աստծու հանդեպ, որ նա իրեն դատապարտել էր սիրած էակների հավերժ կորստին: Նա այն զգացումն ուներ, որ իր կյանքն անհաջողությունների շարան էր: Ինչպե՞ս էր ինքը ուժ գտնում շարունակելու ապրել: Ինչպե՞ս կարող էր նա նոր կյանք սկսել, ինչպես իրենից սպասում էին:

Բաժանմունքի անկյունում նստարանի ծայրին կծկված Մարոն շատ փոքր էր թվում իր սև շրջազգեստով, որը պարուրում էր նրան ոտքից մինչև պարանոցը: Շագանակագույն չարսավը թաքցնում էր նրա դեմքը՝ նմանեցնելով նրան բոլոր քողածածկ կանանց, բաց թողնելով միայն աչքերն ու ափերը: Ուժասպառ՝ նա փակեց աչքերը և քնեց, երազելով այլևս երբեք չարթնանալ:

Պետրին իրենց երկուսի համար մեկ բաժանմունք էր վերցրել, որպեսզի կարողանար անընդհատ հսկել Մարոյին: Նրան հաճույք էր պատճառում այդ կնոջ տառապանքը, որին արհամարհում էր իր ողջ էությամբ: Այն պահից, որ նա մտել էր Ռըզայի վրանը, և այն պահից, որ վերջինս թույլ չէր տվել ոստիկաններին բռնաբարելու նրան, Պետրիի հոգում ատելություն էր ծնունդ առել, որը նա չէր կարողանում բացատրել: Լիրբ հայուհի, որը տրվել էր իր և իր երեխայի կյանքը փրկելու համար, որը բանեցրել էր իր հմայքը Ռըզայի սիրտը շահելու և գավառապետի սիրուհին դառնալու համար:

Վագոնի տարուբերումից Մարոյի գլուխը շարժվեց, և չարսավը նրա գլխից սահեց: Գունատությունը չէր նվազեցնում նրա արտակարգ գեղեցկությունը: Մինչդեռ նա շպարված չէր և զարդ չէր կրում: Պետրին մի բոլ նրան նայեց, մի բան, որ հազվադեպ էր հնարավորություն ունեցել անելու: Նրա երկար արտևանունքները, փքր այտերը, որոնք կարծես խավով պատված լինեին, բարակ և մի քիչ վեր տնկված քիթը և փքր շրթունքներով այդ գրգռիչ բերանը: Պետրին ցավ զգաց: Մարոյի գեղեցկությո՛ւնը... ահա թե ինչու էր նա ատում Մարոյին: Այդ գեղեցկությունն իր համար չէր: Դրան տիրանալու համար ինքը պետք է բռնաբարեր երիտասարդ կնոջը Ռըզայի վրանի առաջ մնացած ոստիկանների հետ: Եվ տարիներ շարունակ Մարոյի ներկայությունն Այնթապում մշտական հիշեցում էր, որ ինքը երբեք չէր լինելու հարուստ և հարգված տեր, այլ լինելու էր օգնական, ծառա, որը մեջք էր թեքում իր տիրոջ առջև, որից նա ստանում էր մնացած ծառաների վրա իշխելու իրավունք: Ռըզային պատիվ և գեղեցկություն, իսկ իրեն՝ ստոր գործերը և գյուղացի աղջիկներ: Սակայն ինքը Ռըզայից առավել ուներ առաջնորդի ոգի և ղեկավարելու կարողություն: Ծագո՛ւմը...

Հոգնածությունից աչքերի տակ հայտնված կապտուկներն ու արցունքներն է՛լ ավելի էին ընդգծել այդ կնոջ գրգռիչ գեղեցկությունը։ Քնած կնոջ դեմքի արտահայտությունը Պետրիին արհամարհական թվաց։ Նա կատաղություն զգաց։ Նա ուզում էր նրան գետնին տապալել բաժանմունքի նստարանների միջև և իրեն ենթարկել, նրան նվաստացնել մինչև իր տեղահանվածի կարգավիճակը, որի կոչումն էր բավարարել բռի ոստիկանների կրքերը։ Մի քանի վայրկյան նա քննում էր իրեն գրգռող այդ գաղափարը, սակայն վախը, որ Ռըզան կիմանար այդ արարքի մասին և կպատժեր, խանգարեց գործի անցնելու։ Եվս մեկ անգամ նա ստիպված էր մեջքը ծռել, և նրա ատելությունը Մարոյի նկատմամբ էլ ավելի սաստկացավ։

Գնացքը մեկ ժամով կանգ առավ Աֆիոն-Գարահիսարի կայարանում։ Մարոն լուսամուտից կռացած հուզմունքով նայում էր այդ քաղաքին, ուր նա ամուսնացել էր գրեթե տասներկու տարի առաջ և փորձում էր գտնել որևէ ծանոթ դեմք կառամատույցին խռնված ամբոխի մեջ։ Հիշողությունների տարափի ներքո նա դարձավ լուսամատից և հենվեց նստարանի կաշվե թիկնակին։

Շրջիկ վաճառականները, վերցնելով զամբյուղները, շտապեցին դեպի գնացքը և լուսամատից լուսամուտ վազելով առաջարկում էին իրենց ապրանքը։ Պետրին հաց, պանիր, միրգ և հանքային ջուր գնեց։ Նա մռայլ էր, քանի որ այդ քաղաքը նրան հիշեցնում էր իր ստացած վերքերը և Մարոյի ամուսնուն վերացնելու անհաջող փորձը։

— Մենք չենք իջնելու,– հայտարարեց նա։

— Ես պետք է անպայման թարմանամ,– աղերսեց Մարոն։

Պետրին իր բաճկոնի փեշը մի կողմ տարավ և ցույց տվեց գոտու տակից դուրս ցցված ատրճանակի կոթը.

— Եթե փախչելու փորձ անես, ես քեզ հաճույքով կսատկացնեմ։ Հագի՛ր չարսավդ։

Նա դժկամությամբ ուղեկցեց Մարոյին մինչև կանացի զուգարանը և սպասեց դռան մոտ՝ ծխելով իր տիրոջ գրասենյակից վերցված սիգարը։ Վերադարձի ճանապարհին նա ծխախոտ և թերթ գնեց, որը սկսեց կարդալ բաժանմունք վերադառնալուն պես։ Մարոն ուտելուց հրաժարվեց, սակայն մի քանի բաժակ ջուր խմեց։ Այդ հա՜մը։ Այդ նույն համն ուներ Պալյանների կալվածքում բխող աղբյուրի ջուրը։ Այս ճանապարհորդությունը բոլորովին նման չէր այն ճանապարհորդությանը, որի մասին երազում էր Ռըզա բեյի տանը հայտնվելուց հետո։ Դա պետք է լիներ վերադարձ Կոստանդնուպոլսի իր ազգականների մոտ՝ ուրախ փախուստ Թովմասի հետ։ Նա տարօրինակ զգացում ուներ, որ իրեն կրկին տեղահանում էին։ Ինքը գրեթե ամեն ինչ այնտեղ էր թողնում՝ որդի, մեկ այլ որդու հիշատակը, մի տղամարդ, որն իրեն սիրում էր։ Առջևորմ անհայտություն էր։ Երբ գնացքը տեղից շարժվեց, Մարոն դողաց՝ մտածելով, որ իրենք անցել էին Այնթապից մայրաքաղաք տանող ճանապարհի կեսը։ Ինքը հայտնվելու էր այլ

իրականության մեջ։ Ինքը չէր վերադառնում դեպի անցյալը, ուր ապրում էին իր սիրած էակները, քանի որ այդ անցյալն անհայտացել էր տեղահանության և պատերազմի տառապանքների մեջ, այլ մուտք էր գործում անհասատատ մի ապագա։

Այսքան տարիներից հետո Վարդանը չէր կարող նույնը մնացած լինել։ Ինչպիսի՞ն էր նա դարձել։ Իսկ ի՞նքը։ Ինքը մնում էր նրա կինը, անկասկած, սակայն այս երկար բաժանումը... Մարոն չէր պատկերացնում, թե ինչպես պետք է վերականգնեին իրենց համատեղ կյանքի բնականոն ընթացքը, և այդ միտքը նրան ճնշում էր։ Ինքը չէր կարողանա նայել Վարդանի աչքերին և չտեսնել դատավորի հանձին նրա։ Ինքը ներկայանալու էր առանց իրենց որդու, հուսահատված, քանի որ իրենից խլել էին մյուս տղամարդու երեխային, և այդ մյուս տղամարդու փաղաքշանքներից պղծված մարմնով։ Մեղավո՛ր։ Եվ այդուհանդերձ անմեղ... Իսկապե՞ս անմեղ։ Առաջին անգամ Մարոն իրեն հարց տվեց, թե արդյոք նա չէ՞ր սիրում Ռըզային, և չէր գտնում այդ հարցի պատասխանը։

Կյանքի ծանրությունից ջախջախված՝ նա կծկվեց նստարանի անկյունում, լուսամուտից հեռու։ Նա այլևս չէր կարողանում իրեն հասկանալ։ Իրականում միգուցե բոլորի համար գերադասելի կլիներ, եթե նա մինչև կյանքի վերջը մնար Այնթապի տանը, ուր ինքն իրեն կարող էր որպես զոհ ընկալել։ Եվ նա կպահպաներ իր պաշտելի Նուրհանին և կշարունակեր պահպանել Թովմասի հիշատակը և կապրեր նրան մի օր տեսնելու հույսով։ Նուրհան, Թովմաս, որոնք, այդուհանդերձ, տարբերակված լինելով իր սրտում, այսօր խառնվում էին նույն սիրո մեջ։

Նա լուռ լալիս էր։ Պետրին, որը 22ից օղի էր խմում, բարձրաձայն ծիծաղեց.

— Դու լացում ես ամուսնուդ գտնելո՞ւ, թե Ռըզա բեյին կորցնելու համար։

Մարոն չպատասխանեց։

— Ամուսիններ, որոնք իրար գտել են... Օ՛, ինչպիսի հուզիչ տեսարան։ Ես երջանիկ եմ, որ ներկա կլինեմ դրան; Քնքուշ կինը, որը եղել է ուրիշի սիրուհին և նույնիսկ նրան երեխա է պարգեւել։ Ասա ինձ, դու հաճույք ստանո՞ւմ էիր Ռըզա բեյից։

Նա նորից ծիծաղեց, իսկ Մարոն դեմքը չարսավով ծածկեց։

— Եթե դա կարող է քեզ մխիթարել, ապա ամուսինդ նույնպես իրեն զուրկ չի պահել։ Նա կին ուներ Ուրգուպում, մի այրի, որն իրեն Հալիդե էր կոչում։ Նա հայուհի էր, ինչպես և դու, իսկական անունն էլ Արուսյակ էր։ Ավելի երիտասարդ էր, քան դու, և ավելի գեղեցիկ։ Հիշիր, Արուսյակ։ Ոնց որ հուրի լիներ։

Նա ուրախ տեսքով ծխախոտ փաթաթեց։

— Օ՜, շատ հաճելի կլինի ձեզ միասին տեսնել։

* * *

«Թոքաթլյան» հյուրանոցի համարի լուսամատից Մարոն նայում էր Բերայի զլխավոր փողոցին և աչքերին չէր հավատում։ Նա հազիվ էր ճանաչում փողոցը, չնայած շենքերը չէին փոխվել 1913 թ. իր վերջին այցելությունից ի վեր։ Դա երևի նրանից էր, որ մեքենաների երթևեկության աղմուկը, եվրոպական հագուստի առատությունը, գույնզգույն ցուցանակները, հարուստ խանութները, մի խոսքով՝ արդիականությունը հակասության մեջ էին կալվածքի առօրյայի հետ, որը հարմարեցված էր նախորդ դարի ռիթմին և գտնվում էր էլ ավելի հին ավանդույթների իշխանության ներքո։ Դա էր պատճառը, որ Մարոն չէր կարողանում ազատվել այն զգացումից, որ ինքը երազի մեջ էր։ Քիչ էր մնում հավատար, որ ինքը կախարդանքով տեղափոխվել էր այլ վայր, ինչպես լինում էր Սաֆիյեի այդքան սիրած հեքիաթներում։ Պետրիի ձայնը նրան վերադարձրեց իրականության գիրկը։

— Եթե ամուսինդ շուտով մեզ հետ չկապվի, ապա ստիպված կլինենք քնել նույն անկողնում, սիրունս։

Մարոն իրեն նեղություն չտվեց պատասխանելու և շարունակեց դուրս նայել։ Պետրին մեկ սենյակ էր վարձել, քանի որ չէր ուզում ոչ մի վայրկյան իր գերուհուն աչքաթող անել։ Եվ քանի որ վախենում էր ծուղակներից, նա պահանջել էր, որ ճաշը սենյակ բերեին։ Ըստ հրահանգի՝ նրանց հետևից մեքենա պետք է գար և տաներ այն վայրը, որ պետք է տեղի ունենար փոխանակումը։ Պետրին հուզվում էր և անդադար ծխում։ Նա կգերադասեր դիմել ոստիկանության օգնությանը, սակայն Բույուկ խանումը բազմիցս նրան զգուշացրել էր այդ բանը չանել։ Հետևաբար պետք է իր ուժերին ապավիներ և փոխեր իր վարքագիծը՝ ելնելով հանգամանքներից։

Մութն ընկնելուց հետո, երբ Պետրին կարծում էր, որ փոխանակումը տեղի կունենար հաջորդ օրը, կարմիր համազգեստով մի ծառայող ծեծեց դուռը և հայտնեց, որ իրենց հարցնում էին նախասրահում։ Պետրին կրկին զենքը ստուգեց և հագավ անձրևանոցը։ Մարոն չարսավը գլխին գցեց և վերցրեց ճամպրուկը։ Դուռը բացելիս Պետրին խռպոտ ձայնով ասաց.

— Գառան պես խելոք կպահես քեզ և ամեն ինչ լավ կլինի։

Նա բռնեց Մարոյի ենթադաստակից և հետևեց ծառայողին՝ ծիծաղկոտ աչքերով մի պատանու, որը նրանց ուղեկցեց նախասրահ և մոտեցրեց սյանը հենված մի տղամարդու։ Երբ տղան գնաց, Ավետիսը խնդրեց կնոջը դեմքը բացել, որպեսզի համոզվեր, որ դա հենց Մարոն էր, որի լուսանկարը նրան ցույց էր տվել Վարդանը։ Համոզվելով՝ նա ասաց.

— Հետևեք ինձ։

— Ո՞ւր ենք գնում,— հարցրեց Պետրին։

Առանց պատասխանելու Ավետիսը գնաց դեպի դուռը։ Պետրին հետևեց նրան՝ ավելի ուժգին սեղմելով Մարոյի ձեռքը։ Նա կիսաբաց արեց իր վերարկուն՝ պատրաստ լինելով ցանկացած անակնկալի։ Փողոց դուրս գալով՝ Ավետիսը նշան արեց մի մեքենայի, որը սպասում էր ոչ հեռու։ Պետրին և նրա պատանդը նստեցին հետևի նստարանին, Ավետիսը՝ վարորդի կողքին։ Փափազյանն իսկույն տեղից պոկվեց, արագ բարձրացավ փողոցով մինչև Տակսիմ պուրակը և շարժվեց դեպի Հարբիյե թաղը։ Պետրին, լարվելով, փորձում էր հիշել իրենց անցած ճանապարհը։

Հարբիյե՛։ Սա այն թաղն էր, ուր ապրում էին Մեսրոպյանները։ Վարդանին նորից տեսնելու մտքից Մարոյին խելահեղ մի վախ պատեց։ Այն պահից ի վեր, որ նա առավոտյան ոտք էր դրել Կոստանդնուպոլիս, նրա ուղեղն ամբողջությամբ զբաղված էր Վարդանով, սակայն տագնապը գերակշռում էր ուրախությանը։ Այս քաղաքում էր ծնունդ առել և հասունացել իրենց սերը, այստեղ էին նրանք հասել կատարյալ մտերմության, իսկ այժմ Մարոյին թվում էր, որ ինքը հանդիպման էր գնում օտար մարդու հետ։

Մութն ընկել էր, և Հարբիյե թաղից մի քանի կիլոմետր այն կողմ տեղադրված բուլղարական հիվանդանոցի հարևանությամբ գտնվող Շիշլիի հայկական գերեզմանատան ծառերի տակ խոնավ էր։ Անմշակ դաշտերով շրջապատված այդ ամայի վայրը Վարդանն ընտրել էր, որովհետև մեկուսացած էր և ապահով։ Մուտքի մոտ գտնվող շինություններից մեկում ապրող պահակը Տիրանի ծանոթն էր։

Վարդանն ու Ռըզա բեյը քամուց պատսպարվել էին սպիտակ մարմարից գերեզմանաքարի հետևում, որի ճակատը զարդարված էր թևերը պարզած հրեշտակներով։ Նրանք սպասում էին մթության քողի տակ։ Հակոբի մեքենան, հանգցրած լուսարձակներով, կանգնած էր տասը մետրի վրա՝ կենտրոնական ծառուղում։ Տիրանն ու Արամը պատսպարվել էին քիչ այն կողմ գտնվող մահարձանների հետևում և զինված էին անակնկալներին դիմագրավելու համար։

Գերեզմանատան պարսպի երկայնքով շարված սոճիների ճյուղերի մեջ քամու սուլոցը գրավեց Վարդանի ուշադրությունը։ Հեթանոսական շրջանի հայկական առասպելի համաձայն այդ աղմուկը գերբնական ազդեցություն ուներ մարդկանց վրա։

— Կարո՞ղ եմ ծխել,– հարցրեց Ռըզա բեյը ցածրաձայն։

Քանի որ նա սնահավատ էր, այդ դեկորը ուժեղ ազդեցություն էր թողել նրա վրա։ Այն ընդգծում էր պահի դրամատիկ բնույթը։

— Ծխեք,– պատասխանեց Վարդանը, որն ավելորդ էր համարել կապել պատանդի ձեռքերը։

Ռըզա բեյը ծխատուփից մի ծխախոտ վերցրեց, մյուսն էլ առաջարկեց Վարդանին։ Վերջինս վերցրեց ծխախոտը և, վառելով, հրահանը տվեց

Ռըզային։

— Վերցրեք, ձերն է։ Ես այն ձեզնից վերցրել էի Ադաբազարում։

— Շնորհակալություն, սա հիշատակ է։

Վարդանի երկու այցելություններից հետո նրա և բանտարկյալի միջև հաստատվել էին սառը քաղաքավարի հարաբերություններ, որոնք այնուամենայնիվ երանգավորված էին փոխադարձ հարգանքով։ Ռըզա բեյը Վարդանին ո՛չ ատելություն էր ներշնչում, ո՛չ էլ քեն, միայն անհաղթահարելի խանդ։ Ռըզայի տեսակետից Վարդանի արարքը բնական էր, սակայն եթե նա փիլիսոփայաբար էր ընկալում իր պարտությունը, այդուհանդերձ տանջվում էր, որ այդ խաղում խաղադրույքը Մարոն էր։ Եվ այս գերեզմանատանը, երբ սպասումը ձգձգվում էր, նրանցից յուրաքանչյուրը գիտեր, որ իրենք մտածում էին նույն կնոջ մասին։ Ռըզան կտեսներ նրան, տանջվելով, որ դա վերջին անգամ էր, իսկ Վարդանը կրկին կտեսներ նրան առանց վստահ լինելու այն զգացմունքների վրա, որ այդ կինն ուներ իր հանդեպ։

— Պատմեք Թովմասի մասին,— ասաց Վարդանը։

Ռըզան զարմացավ և մի քիչ հապաղեց։

— Ես մի որդի ունեմ՝ Քենան, որը մոտավորապես Թովմասի տարիքին է։ Նրանք կապված էին եղբայրների պես։ Երկուսն էլ հաճախ էին ինձ ուղեկցում ձիավարելիս։ Ես Թովմասին ազնվացեղ ձի էի տվել, և նա շատ շուտ կատարյալ ձիավոր դարձավ։ Նա ուժեղ, գեղեցիկ և խելացի տղա է։ Ես համոզված եմ, որ նա...

Նա լռեց, քանի որ սուլիչի ձայնը խախտեց լռությունը։ Պահակն այդ ձևով զգուշացնում էր մեքենայի ժամանման մասին։ Լսվեց մետաղյա դարպասի ճռռոցը, շարժիչի ձայնը, իսկ հետո մեքենայի լապտերը լուսավորեց մահարձանները, խաչերն ու գերեզմանները, որոնց միջև վեր էին խոյանում ծառերի սև բները։

— Առանց պատմությունների,- ասաց Վարդանը Ռըզային, նրան թեթևակիորեն հրելով դեպի ծառուղին։

Մեքենան կանգնեց առաջին մեքենայից հիսուն մետրի վրա, սակայն լապտերը վառ թողեց ծառուղին լուսավորելու համար։ Պետրին, ատրճանակը ձեռքին, դուրս եկավ մեքենայից՝ իր հետևից քարշ տալով Մարոյին, որի ձեռքին ճամպրուկ կար։ Նրանց դիմացից բղավոց լսվեց.

— Առա՛ջ շարժվեք։

Մարոն ճանաչեց Վարդանի ձայնը, և նրա սիրտը սկսեց արագ բաբախել։ Նա երկու տղամարդ տեսավ լապտերի լույսի մեջ, և նրան ժամանակ պետք եղավ նրանց տարբերելու համար։ Վարդանն ու Ռըզան նման էին իրար, բեղերը, դեմքի և մազերի գույնը և նրանց մուգ հագուստը շփոթմունքի առիթ էին տալիս։ Այդ երկու տղամարդկանց կողք կողքի տեսնելով, Մարոն ցնցվեց և զգաց, որ ոտքերը թուլանում են։

Պետրին անշարժացավ և ձախ ձեռքով Մարոյին պահեց իր դիմաց որպես վահան։ Նա ատրճանակը մոտեցրեց կնոջ քունքին։ Նրա մեջքի սպիները ցավում էին, և նա դա վերագրեց խոնավությանը։ Ավետիսը, իր մեքենայում նստած, բարձրացրեց ատրճանակի ձգանը, պատրաստ միջամտելու։ Այդտեղից քիչ հեռու Արամը, տեսնելով Արուսյակին սպանողի կիսադեմը, լարվեց։ Նա հրացանի փողը ուղղեց դեպի Պետրիի գլուխը։ Նրա մատը դողում էր ձգանի վրա։ Ծառուղու մյուս ծայրում Տիրանը շշնջաց ատամների արանքից.

— Առա՛ջ շարժվիր, շան որդի։

Նա ինքն իրեն հարցրեց, թե արդյոք այդ քողածածկ կինը Վարդանի՞ կինն էր։

Սոճիների բների արանքում փչող քամին ուժգնացավ։ Լարումը մեծ էր։ Սխալ կամ կտրուկ շարժում և փոխհրաձգություն կսկսվեր։

— Առաջ շարժվիր,- հրամայեց Վարդանը։

Պետրին Մարոյին հրեց իր դիմաց։ Մեքենայի լույսերից գրեթե կուրացած Վարդանը տեսնում էր միայն նրա ուրվագիծը, սակայն ճանաչեց Մարոյի քայլվածքը, նրա կոնքի թեթեակի ճոճումը, այնքան աննշան, որ երևի միայն ինքն էր նկատում։ Նա ավելի էր հուզվում, քան Ռըզայի առևանգման ժամանակ։

Մարոն քայլում էր փայլող խճի վրայով։ Նրան նայող երկու զույգ աչքերը՝ մեկը տխուր, մյուսը տենդագին, շփոթեցնում էին նրան։ Խաղաքարտի վրա էր դրված իր կյանքը, և ինքը խոսքի իրավունք չուներ։ Ավելի վատ...

— Հերիք է,- ասաց Վարդանը հրամայական տոնով։

Նա իջեցրեց զենքը։

Պետրին կանգ առավ՝ մատը ատրճանակի ձգանին։ Նա հանեց պատանդի չարսավը և գետնին գցեց։ Մարոն այնքան գունատ էր, որ նրա դեմքը երևում էր մթության մեջ։ Վարդանը զգաց, որ շունչը կտրվում էր։ Մարոն ավելի գեղեցիկ էր, քան իր հիշողության մեջ։

— Թո՛ղ, որ գա,— ասաց նա։— Ես ազատում եմ քո տիրոջը։

Պետրին կատարեց հրամանը։ Մարոյին մոտենալով՝ Ռըզան ծածկեց Վարդանին, և Մարոն տեսնում էր միայն այն մարդու հուսահատ դեմքը, որն ավելի քան երեք տարի եղել էր իր հովանավորն ու սիրեկանը։ Թե ինչպիսի՞ն էր իր դեմքի արտահայտությունը, ինքը չէր էլ պատկերացնում։ Մոռացվել էին այն դեպքերը, երբ Ռըզա բեյը խիստ էր իր նկատմամբ, մոռացվեց, որ ինքն իրեն բանտարկյալ էր զգում, որ նա իրեն թույլ չէր տվել կապվել իր ընտանիքի հետ։ Հիմա նա հիշում էր նրա քնքշությունը և նրա սերը Թովմասի նկատմամբ։

Երբ նրանք դեմ դիմաց հայտնվեցին, դանդաղեցրին քայլերը։ Ռըզայի հայացքում անսահման տխրություն կար։

Վարդանը նկատեց այդ հապաղումը և զգաց, թե ինչպես է կոկորդը սեղմվում։ Արդյոք նրանք խոսո՞ւմ էին։ Նա շատ հեռու էր, չէր կարող նրանց լսել։ Իսկ մեքենայի լույսերից շլացած, նա չէր կարողանում տեսնել Մարոյի դեմքի արտահայտությունը։ Սակայն նրան թվաց, որ նա կծել էր շրթունքը։ Նրա արյունը սառեց։

Մարոն անշարժացավ և խեղդված ձայնով շշնջաց.

— Նուրհանը...

— Նա կլինի քո կենդանի հիշատակը,— պատասխանեց Ռըզան՝ նայելով Մարոյի աչքերին։

Անկարող լինելով դիմանալ այդ ողբերգական պահին՝ Մարոն շարունակեց քայլել։ Մեկ քայլ, և ամեն ինչ վերջացավ։ Մեջքը դարձնելով անցյալին՝ Մարոն գնում էր դեպի Վարդանը, որը նույնքան հուզված էր, որքան ինքը։ Հենց որ Մարոն մոտեցավ Վարդանին, նա գրկեց նրա ուսերը, վերցրեց ճամպրուկը և նրան տարավ դեպի մեքենան։

Պետրին բարձրացրեց զենքը և ասաց Ռըզային, որը փակում էր իր տեսադաշտը.

— Պառկե՛ք։

— Ոչ,— բղավեց Ռըզան և մեկ քայլ անելով կանգնեց Պետրիի դիմաց, որը մի կողմ էր գնում կրակելու համար։

Կրակոց լսվեց։

Մարոն ճչաց և շրջվեց, չնայած նրան խանգարելու Վարդանի ճիգերին։

Պետրին, Արամի գնդակից ջախջախված գլխով, վայր տապալվեց Ռըզա բեյի ոտքերի մոտ։

— Նրան ոչինչ չի պատահի,— ասաց Վարդանը։— Արի՛, այս ամենը մեզ այլևս չի վերաբերում։

Նա Մարոյին նստեցրեց մեքենայի հետևում և նստեց նրա կողքին։ Մարոն գլուխը դրեց ամուսնու կրծքին և փակեց աչքերը ոչինչ չտեսնելու համար։ Մեքենան հավասարվեց Ռըզային, որին միացել էին Տիրանը, Արամը, Ավետիսը և Փափազյանը։ Ռըզա բեյը, որը և՛ ազդված էր Պետրիի մահից, և՛ բարկացած էր նրա վրա, իրեն շրջապատող մարդկանց ասում էր, որ նրանք թաքցնեին այդ մարմինը։ Վարդանը Հակոբին նշան արեց, որպեսզի նա չկանգներ։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 17

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 13:29-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 16 | Ամառ առանց այգաբացի - Գլուխ 18 ►

Հակոբի մեքենայի աղմուկը խախտեց մեծ գյուղի պես քուն մտած Հարբիյե թաղի անդորրը։

Մարոյի ծոծրակն այրվում էր Վարդանի ձեռքի տակ։ Նա դեմքը թաքցրել էր ամուսնու կրծքին։ Երրորդ մարդու ներկայությունը նրանց հնարավորություն էր տալիս լռելու։ Ամեն դեպքում թե՛ մեկը, թե՛ մյուսը չէին գտնում այն բառերը, որոնք կհամապատասխանեին այդ պահին։ Վարդանի փաղաքշող ձեռքը Մարոյի պարանոցին արդեն շատ էր, և նրանք սկսել էին հասկանալ, որ իրենց վերամիավորումը ավելի բարդ էր ընթանալու, քան կարծել էին։

Մեքենան կանգ առավ մի նեղ փողոցում, որը գտնվում էր թաղի հենց սրտում և ուր Վարդանը մեկ ամիս առաջ բնակարան էր վարձել։ Հակոբին հրաժեշտ տալուց և իրենց երախտագիտությունը հայտնելուց հետո նրանք հայտնվեցին դատարկ մայթին՝ գազի լապտերի լույսի տակ։ Միայն այդ ժամանակ նրանք պարզորոշ տեսան միմյանց։ Վարդանը պահել էր Մարոյի ճամպրուկը։ Մարոյին նա ծերացած թվաց և ավելի գեղեցիկ։ Նրա քունքերը ճերմակել էին, աչքերի անկյուններում կնճիռներ էին հայտնվել, ճակատը մի քիչ բացվել էր, և դեմքի նիհարությունն ընդգծում էր նրա դիմագծերի առնականությունը։ Նրա հայացքը մեղմացել էր և բարիացել, իսկ այդ հատկանիշները պակասում էին նրան երիտասարդ տարիքում։ Մինչդեռ անցել էր ընդամենը չորս տարի։ Մարոն զգաց, որ իր կոկորդը սեղմվում էր։

— Թովմասը...— սկսեց նա անվստահ ձայնով։

— Գիտեմ։

Նա այդ բառերն արտասանեց հանգիստ ձայնով, ձեռքով նշան անելով, որ Մարոն չշարունակեր։ Նա ուզում էր նայել Մարոյին, քանի դեռ բառերը չէին ներխուժել իր զգացմունքների մեջ։ Նա մոռացել էր Մարոյի նրբին տեսքը, որը միշտ ցանկություն էր առաջացնում նրան պաշտպանելու, և հիմա զարմանում էր, որ նա կարողացել էր դիմանալ տեղահանության սարսափներին, որոնց շատ ավելի ամուր տղամարդիկ և կանայք չէին վերապրել։ Նրա խիստ հայացքը և աչքերում ընթերցվող լուռ տառապանքը է՛լ ավելի ցայտուն էին դարձնում նրա

գեղեցկությունը։ Վարդանն ուզեց նրան գրկել և համբուրել, սակայն ինչ-որ կաշկանդվածություն, որի պատճառը միգուցե Մարոյի զուսպ կեցվածքն էր, նրան խանգարեց այդ բանն անելու։

Շփոթմունքը քողարկելու համար նա ասաց.

— Ես գտել եմ Մերձավոր Արևելքի բոլոր մանկատների ցուցակը և սկսել եմ նրանց գրել Թովմայի կապակցությամբ։

— Նա ողջ է, ես դա զգում եմ իմ ողջ էությամբ,— բացականչեց Մարոն դողալով։— Մենք նրան կգտնենք։

— Այո, մենք նրան կգտնենք։

Վարդանը Մարոյին իրեն հետևելու նշան արեց, ներս գնաց և սկսեց բարձրանալ նեղ սանդուղքով։ Գիշերային նավթավառը լուսավորում էր միայն աստիճանավանդակը, մինչդեռ սանդուղքը մնում էր ստվերում։ Մարոն, ծանրաքայլ, մագլցեց աստիճաններով։ Արաբական տարազի լայն շրջազգեստը քողարկում էր նրա մարմինը, և նա ավելի փոքր էր թվում, քան կար։ Հասնելով աստիճանավանդակին՝ Վարդանը ձեռքը դրեց Մարոյի ուսին և ստիպեց նրան շրջվել, նա փորձեց համբուրել նրան, սակայն ապարդյուն, քանի որ Մարոն փարվել էր իրեն՝ դեմքը թաքցնելով նրա կրծքին։

— Հավատս չի գալիս, որ սա երազ չէ,— մրմնջաց նա։— Իսկապես դու ես...

Նա քիչ էր մնում ասեր, որ ինքը ճանաչեց Վարդանի հոտը, սակայն համարեց, որ դա անպատեհ կլիներ, չափից ավելի մտերմիկ։ Նույն վստահալից տոնով ավելացրեց.

— Ես համարյա թե հույսս կորցրել էի։

— Ես քեզ փնտրել եմ անդադար, Մարո։ Ես Գալստյանի այրուց իմացա, որ քեզ և Թովմային մի պաշտոնյա տարել էր իր հետ։

Մարոն լարվեց և նախապատրաստվեց ինքնապաշտպանության՝ սպասելով շարունակությանը։ Վարդանը զգաց դա և հանգստացրեց.

— Ինչպիսի երջանկություն, որ ստիպված չեք եղել հետևել քարավանին մինչև Սիրիա։

Մարոն զգաց, որ Վարդանը իրեն չի հանդիմանելու և հանգստացավ։

— Դու պետք է որ չափազանց հոգնած լինես,— ասաց նա։— Արի։

Պատվանդանին դրված նավթավառը լուսավորում էր միջանցքը, որը ծառայում էր նաև որպես նախասրահ։ Վարդանը բարձրացրեց պատրույգը, կտրեց ծայրը, որպեսզի չմխար։ Բնակարանի պատերը սպիտակեցված էին, սակայն այն կահավորված էր միայն անհրաժեշտ իրերով և ոչ մի նկար չէր զարդարում դրա պատերը։

— Սա ժամանակավոր կացարան է,— ներողություն հայցող տոնով ասաց Վարդանը։

Նա ձեռքը վերցրեց նավթավառը և ցույց տվեց դիմացի սենյակը.

— Հյուրասենյակ։

— Ինչպե՞ս են Մեսրոպյանները,— հարցրեց Մարոն՝ նրան հետևելով։

— Շատ լավ։ Նրանք անհամբերությամբ քեզ էին սպասում։

— Ես երեք անգամ փորձել եմ նրանց նամակ ուղարկել։

— Նրանք ոչ մի նամակ չեն ստացել։

— Իսկ քո եղբա՞յրը։

— Նա Տիրուհու հետ ապաստանել էր Երուսաղեմում։ Նրանք շուտով կվերադառնան։

Հյուրասենյակը կահավորված էր մուգ կարմիր մի բազմոցով, նույն գույնի բազկաթոռով և ցածր փափուկ մի աթոռով, որի վրա դրված էր ուղը։ Լուսամատի մոտ, սեղանին կիտված էին գրքեր և գրելու թուղթ և այն որպես գրասեղան էր ծառայում։ Մարոն մոտեցավ ուղին և երազկոտ տեսքով մատներով հպվեց լարերին և հնչեցրեց դրանք։

— Դու դեռ նվագո՞ւմ ես։

— Այս վերջին տարիներին ես մի դերվիշի շրջիկ խմբի երաժիշտն էի։ Պատկերացնում ես, նույնիսկ անցել եմ Այնթապով։

Մարոն չպատասխանեց և հեռացավ նվագարանից։ Նրանք շարունակեցին ծանոթանալ բնակարանին։ Փոքր խոհանոցին հարող ճաշասենյակից հետո փոքր լոգարանն էր։ Քիչ հեռու երկու դուռ կար։ Վարդանը բացեց նեղ մահճակալով և ցածր պահարանով կահավորված առաջին ննջարանի դուռը։ Նա մռայլ տեսքով ասաց.

— Թովմասի մասին իմանալուց առաջ էր...

Մարոն Վարդանի ձեռքից վերցրեց ճամպրուկը և լույս աշխարհ հանեց նավաստու ճմռթված մի գլխարկ, որը նա թափահարեց տեսքի բերելու համար։

— Այս գլխա՛րկը։— զարմացավ Վարդանը՝ ձեռքը մեկնելով։

— Այո, Արմենինն է։ Թովման պահում էր իր մահճակալի մոտ։ Նրա համար թանկարժեք մասունք էր։

Վարդանը պատկառանքով շուռումուռ էր տալիս գլխարկը։

— Արմեն... Ինչպե՞ս նա մեռավ։

— Առևանգման փորձ կատարող ավազակից ինձ պաշտպանելիս։

Նա սևեռուն հայացքով նայում էր գլխարկին, որ Վարդանը պահել էր ձեռքին։ Գրեթե նվաղած ձայնով նա ավելացրեց։

— Հետո Արաքսին էր, հետո մայրս... Դա սարսափելի էր, Վարդան։

Մարոն մտածեց Թովմայի կորստի ողբերգության մասին, Նուրհանի վշտի մասին և հասկացավ, որ դեռ արիության շատ մեծ պաշարի կարիք է ունենալու։ Վարդանը նրա վշտահար տեսքը վերագրեց տեղահանության հուշերին և վճռեց այլևս իր նախաձեռնությամբ չանդրադառնալ դրանց։ Նա գլխարկը դրեց Թովմայի համար նախատեսված մահճակալին և փակեց դուռը։

Հյուրասենյակի մեծության իրենց ննջարանի լուսամուտը դեպի արևելք էր նայում և դուրս էր գափս ներքին բակը։ Լուսամատի գոգին խղճուկ մի խորդենի ցուցադրում էր իր կարմիր ծաղիկները։ Մարոն մոտեցավ մահճակալի մոտ դրված փոքրիկ սեղանին, որի վրա հարսանյաց մի լուսանկար էր ցուցադրված։

— Սա Արփինե մորաքրոջ լուսանկարն է,— բացատրեց Վարդանը։

Մարոն վերցրեց լուսանկարը և ուշադիր զննեց։ Աստված իմ, ի՜նչ երիտասարդ էին։ Նաև անմեղ և անտեղյակ, թե ինչ էր իրենց սպասում ապագայում։ Ինքն ամեն ինչ կտար այդ ժամանակը վերադարձնելու համար...

— Մենք կվերսկսենք մեր կյանքն այն պահից, ուր կանգ է առել,— ասաց Վարդանը։

Մարոն գլխով արեց՝ ինքն իրեն հարցնելով, թե ինչպե՞ս պետք է դրան հասնեին։ Վարդանն ավելացրեց.

— Մենք կգտնենք Թովմասին, և ամեն ինչ նախկինի պես կլինի։

Հավատո՞ւմ էր նա, թե փորձում էր ինքն իրեն համոզել։ Մարոն գիտեր, որ ինքն այլևս չէր կարողանալու իր հիշողությունից ջնջել այն ամենը, ինչ պատահել էր, ոչ էլ հնարավոր էր այդ ամենը մոռանալ։ Ուստի պետք էր ապրել կեղծելո՞վ։ Նա վայր դրեց լուսանկարը և մոտեցավ կաղնեփայտից պատրաստված կոմոդին, որի վրա դրված էին ածելին, փուզան և սափրվելու օճառը թասի մեջ, և նույն ակնթարթին նա մտովի տեսավ Վարդանին սափրվելիս ձերբակալությանը նախորդող առավոտյան։ Բարձրացնելով աչքերը՝ նա նկատեց իր ամուսնու արտացոլանքը հայելում և իրեն անհարմար զգաց այս սենյակում գտնվելու փաստից, շատ ավելի անհարմար, քան իրենց առաջին ամուսնական գիշերը։ Նա ապարդյուն ինքն իրեն համոզում էր, որ ութ տարի շարունակ ամուսիններ են եղել, ոչինչ չէր օգնում, այս տղամարդը անծանոթ էր։

Վարդանը նրբանկատ կերպով նրան հնարավորություն տվեց ուսումնասիրելու սենյակը, ընտելանալու դրան։ Նա հարցրեց.

— Քաղցած չե՞ս։

— Ոչ, շնորհակալ եմ։

— Ծարա՞վ։

— Գուցե։

— Խմի՛չք։ Թե՛յ։

— Թեյ, խնդրեմ։

— Ես ջուր կտաքացնեմ լվացվելու համար։

Մարոն գլուխը թեքեց, որպեսզի Վարդանը չնկատի, որ ինքը կարմրել էր։ Վարդանը բացեց պահարանը և ցույց տվեց կախիչներին կախված զգեստները.

— Լուսիկն ինձ օգնեց քեզ համար հագուստ և կոշիկներ գնելիս։ Մնացածը դարակներում կգտնես։

Մարոն, զգացվելով այդ ուշադրությունից, վերջապես ժպտաց։

— Դու շատ բարի ես։

Մատների ծայրերով հեռացնելով սև կիսաշրջազգեստը մարմնից՝ նա ասաց.

— Ես սա կհանեմ։

Կռահելով, որ նա ցանկանում էր մենակ մնալ սենյակում հագուստը փոխելու համար, Վարդանն ասաց, որ ինքը Մարոյին կսպասի հյուրասենյակում։

Նա թեժացրեց վառարանի կրակը և, սպասելով, որ ջուրը եռա, մտովի վերանայեց իրենց զրույցը սկսած այն պահից, երբ Մարոն մեքենա նստեց։ Ինչ անհամ նախադասություններ։ Նա այսպես չէր պատկերացրել իրենց հանդիպումը, սակայն այլ կերպ չէր էլ կարող լինել։ Նույնքան շփոթված լինելով, որքան և Մարոն, նա իրեն անզոր էր զգում, շփոթված և անճարակ։ Այս անհամ նախադասությունները անհրաժեշտ պատվար էին երկուսին էլ ցնցող բուռն և անվերահսկելի, միգուցե հակասական զգացմունքների համար։ Հարաբերությունների վերականգնումը պետք է պահանջեր համբերություն և նրբանկատություն։ Այսպիսի տափակ նախադասությունները անհրաժեշտ կլինեն զրույցները լցնելու համար, մինչև իրենք վերստին կվարժվեն միմյանց օրերի և, ինչու չէ, գիշերների ընթացքում։ Մարոն այլևս իր կինը չէր, այլ, ավելի շուտ, մի կին, որին նա սիրել էր, որին նա շարունակում էր սիրել և որին նա վերստին պետք է նվաճեր։

Բազկաթոռի ծայրին նստած Վարդանը ուդ էր նվագում, երբ Մարոն մտավ հյուրասենյակ երկնագույն մետաքսից տնային զգեստը հագած և անշարժացավ դռան բացվածքում։ Նրա գանգուր մազերը թափված էին ուսերին՝ ընդգծելով նրա գեղեցիկ դեմքը։ Նրան չշփոթեցնելու համար Վարդանը աչքը չէր կտրում ուդի լարերից։ Մարոն նստեց բազմոցին, տաք թեյի բաժակի առջև։

— Ես աշխատում եմ Յեդիկալեի կենտրոնական հիվանդանոցում,— ասաց Վարդանը առանց ընդհատելու նվագը,— և որպես կամավոր աշխատում եմ մի մանկատանը։

Ոչինչ չպարտադրող խոսքեր, որոնք համապատասխանում էին

իրավիճակին։ Գլխի շարժումով ցույց տալով լուսամուտի դիմաց գտնվող սեղանը՝ նա գրեթե մեղավոր տեսքով ավելացրեց.

— Եվ, բնականաբար, հոդվածներ եմ գրում օտար մամուլի համար։

— Իսկ ես օգտակար չե՞մ կարող լինել այդ մանկատանը։ Չեմ ուզում անգործության մատնվել, քանի սպասում եմ։

— Իհարկե, այնքան գործ կա... Ինչին սպասելո՞վ։

— Թովմայի վերադարձին։ Դու ամենուր գրե՞լ ես։ Սի՞րիա։ Պաղեստի՞ն։ Պարսկաստա՞ն։

— Եվ Կիպրոս։ Եվ Եգիպտոս։ Սակայն մանկատների ցուցակն այնքան մեծ է, որ դեռևս չեմ ավարտել։

— Ես քեզ կօգնեմ։ Վաղվանից գործի կանցնեմ։

Երբ Վարդանը Մարոյին միացավ ննջասենյակում, նա արդեն անկողնում էր և վերմակը քաշել էր մինչև պարանոցը։ Վերմակը բարձրացնելով նրա կողքին պառկելու համար՝ Վարդանը նկատեց, որ բաց վզով և ժանյակներով զարդարված մետաքսյա գիշերանոցի փոխարեն, որը նա գնել էր այս առաջին գիշերվա համար, Մարոն հագել էր մյուս՝ բամբակյա գիշերանոցը, որն ավելի հարմար էր, սակայն գրգռիչ չէր։ Ուղերձը հասկանալի էր, հատկապես որ նրա աչքերը կարմրած էին։ Կողքի պառկած Վարդանը նայում էր Մարոյի գեղեցիկ կիսադեմին, երբ նկատեց նրա պարանոցին կախված մեդալիոնը։ Այդ մեդալիոնը։ Ինքն այն Մարոյին էր նվիրել Բերայի խանութներից մեկում, իրենց ամուսնությունից քիչ անց։ Մարոն բացեց մեդալիոնը, իրենց լուսանկարները ցույց տալու համար։ Վարդանը խաղում էր այդ զարդով, հիանալով, որ միայն զգացմունքային արժեք ունեցող այդ զարդը անցել էր բոլոր այդ տարիների միջով։

— Սվասից միայն սա է մեզ մնացել,— ասաց Մարոն։

— Ոչ, կանք նաև մենք երկուսս։ Եվ Թովմասը։ Մենք նորից կսկսենք, Մարո, և դա ավելի լավ կլինի, քան առաջ էր։

Մարոն գլխով արեց, ջանալով վստահ տեսք ընդունել։ Վարդանը կռացավ և նրան համբուրեց։

— Քնենք,— ասաց նա,— օրը երկար և դժվարին է եղել։

Վարդանը լամպը հանգցրեց և մեջքին պառկեց։ Թեթևություն զգալով, որ Վարդանը չէր պնդում, Մարոն ձեռքը պարզեց և բռնեց նրա ձեռքը, և նրանց մատները միահյուսվեցին։

— Բարի գիշեր, Վարդան։

— Բարի գիշեր, թանկագինս։

Մարոյի ձայնում այնքան երախտագիտություն կար, որ Վարդանը հասկացավ, թե ինչ դիրքորոշում ինքը պետք է որդեգրեր։ Ինքը Մարոյին պետք է ընտրության հնարավորություն տար, հնարավորության, որը նա

երբեք չէր ունեցել Ռըզայի հետ։ Դա կլիներ նրանից տարբերվելու լավագույն միջոցը։ Վարդանը ոչ մի իրավունք չուներ Մարոյի նկատմամբ, միայն սիրելու և սեր ներշնչելու իրավունք։ Նա կսպասեր այնքան, մինչև նախաձեռնությունը կստանձներ Մարոն։

Մարոն ճանաչեց այդ նրբազգացությունը, որը բնորոշ էր Վարդանին՝ դիմացինին հարգելու ունակությունը, որի պակասը նա զգացել էր շատ երկար ժամանակ։ Նա ուզում էր այդ ասել նրան, սակայն համապատասխան բառեր չէր գտնում, և մի քիչ ավելի ուժեղ սեղմեց Վարդանի ձեռքը։ Քնա՞ծ էր նա արդյոք։ Նա լսում էր Վարդանի կանոնավոր շնչառությունը, մտածելով՝ արդյոք նա գուշակո՞ւմ էր, որ ինքը երբեք չէր դադարել նրան սիրելուց։ Վերմակի տակ նա զգում էր ամուսնու մկանուտ մարմնի ջերմությունը։ Մթության մեջ նրա հոգում խաղաղություն հաստատվեց, որը փոխակերպվեց ապահովության զգացման, որին նա չէր համարձակվում տեղի տալ, վախենալով, որ այն իսկույն կանհայտանար։ Նրան համակեց այն զգացումը, որ այդ տղամարդուց իրեն ոչ մի վտանգ չէր սպառնում։ Այդուհանդերձ վախն ու անվստահությանը այնքան խորն էին արմատավորվել նրա հոգում, որ նա դեռևս չէր կարող անձնատուր լինել։

Նրա աչքերի առաջ հայտնվեց Ռըզա բեյը։ Ոչ թե Այնթապի գավառապետի հպարտ և վստահ դեմքը, ոչ էլ հլու Մարոյին իր կամքին ենթարկող գոռոզ սիրեկանի դեմքը, այլ պարտված մարդու դեմքը, որին նա տեսել էր գերեզմանատանը։ Մարոն նրան չէր խղճում։ Մինչդեռ թվում էր, որ ինքն անկեղծորեն սիրում էր նրան։ Եվ ահա ինքը լիովին անտարբեր էր նրա հանդեպ։ Այն բարդ զգացմունքները, որ Մարոն ուներ նրա նկատմամբ, անհայտացել էին հենց այն պահին, երբ ինքը դուրս էր եկել նրա իշխանության տակից։ Սե՞ր։ Ավելի շուտ կիրք, որին Ռըզան ծնունդ էր տվել՝ հաստատելով այնպիսի հարաբերություններ, որոնց առկայությամբ ինքը կորցնում էր ազատ ընտրության հնարավորությունը, և որոնք նա պահպանում էր, թելադրելով խաղի կանոնները, պարտադրանք և պարգև, քնքշություն և խստության։ Ռըզան իրեն փակել էր անիրական մի աշխարհում, և այդ աշխարհը փլուզվել էր։ Այն պահից ի վեր, որ Ռըզան տիրացել էր իրեն ձիթենու այգում, Մարոն ապրել էր միակ և նույն օրը, ուր ամեն ինչ խառնվում էր իրար։ Միայն Թովմասի, Նուրհանի, Սաֆիյեի և մնացած կանանց, Էմինեի, նույնիսկ Բույուկ խանումի գոյության շնորհիվ էր, որ իր կյանքն Այնթապում միս ու արյուն էր առնում և բաշխվում էր տարիներով։ Ռըզայի հետ իր կապի միջադեպը դուրս էր մնում այդ պատմությունից, այն անժամանակյա էր և կարող էր տևել ինչպես քսան օր, այնպես էլ քսան տարի։

Մարոյի հոգին թեթևացավ, երբ նա հասկացավ, որ ինքը երբեք չէր ափսոսալու այդ մարդուն կորցնելու համար։ Մնում էր Նուրհանը...

* * *

Ինչպես և Վարդանը կանխատեսել էր, մայրաքաղաքի թերթերը չէին դադարում գովաբանել բրիտանական դիվանագետներին, որոնք բանակցել էին Այնթապի գավառապետին ազատելու համար: Ռըզա բեյը կարծես թե խոստումը կատարել էր, քանի որ բոլոր թերթերում խոսվում էր ավազակների և փրկագնի մասին: Ավելին, հոդվածներից ոչ մեկում հիշատակություն չկար նրան նվիրված մարդու՝ Պետրիի սպանության մասին: Հետևաբար Վարդանը կարող էր ենթադրել, որ պատմությունն այդքանով էլ կավարտվեր, եթե, իհարկե, Ռըզան չէր վստահել իրական պատմությունը ոստիկանությանը, և այդ դեպքում կարելի էր անախորժությունների սպասել: Նա այդ բանը շատ շուտ կիմանար:

Երբ Վարդանը աշխատանքից տուն վերադարձավ՝ հիացավ, տեսնելով Մարոյին կանաչ զգեստով, որը ծածկում էր սրունքների կեսը և բաց էր թողնում նրա կոճերը: Հետպատերազմյան նորաձևությանը համապատասխան կարված այդ զգեստը նրան շատ էր սազում:

— Դու հիասքա՜նչ ես:

Մարոն ժպտաց և չկարողացավ թաքցնել հուզմունքը: Գիշերը նրանց միջև հաստատված մտերմությունն անհայտացել էր առավոտյան նախաճաշի եկած Տիրանի հայտնվելուց հետո, և նրանք նորից օտար էին: Այդուհանդերձ, չնայած իր զուսպ և սառը կեցվածքին, Մարոն երջանիկ էր Վարդանի վերադարձի համար: Առաջին օրվա համար դա բավարարում էր Վարդանին: Նա կկարողանար անսահման համբերություն ցուցաբերել, որը, ինչպես նա գիտակցում էր, անհրաժեշտ էր իրենց պարագայում: Նա համբուրեց Մարոյի այտերը, հարցնելով, թե ինչպես էր նա: Մարոն ցույց տվեց կնքված և հասցեագրված ծրարների կույտը գրասեղանի անկյունում:

— Ես ավարտեցի ցուցակը: Բայց չհամարձակվեցի դուրս գալ դրանք ուղարկելու համար:

Նա տատանվեց, մեղավոր տեսքով ավելացնելուց առաջ.

— Հիմարություն է, բայց քաղաքն ինձ վախ է ներշնչում:

Վարդանը հուզված էր:

— Մենք միասին կվարժվենք Կոստանդնուպոլսին: Վաղը ես ազատ եմ: Եթե դու ի վիճակի լինես, մենք կայցելենք տարբեր դեսպանատներ և Հայ օգնության կոմիտե՝ տեսնելու, թե նրանք որևէ տեղեկություն ունե՞ն Թովմասի մասին:

— Այո, իհարկե:

Երբ տնից դուրս եկան, Մարոն կառչեց Վարդանի թևից: Ժամանակին հարազատ եղած թաղը հիմա նրան վախ էր ներշնչում: Գուցե նրան ազատությո՞ւնն էր վախեցնում, որից նա հետ էր վարժվել: Նա չէր պատկերացնում, որ այսուհետ ինքը կարող էր գնալ և գալ իր ցանկությամբ և որևէ բան անելու կամ չանելու ընտրությունն ունենալ:

— Մենք շուտ ենք դուրս եկել, արի զբոսնենք, ուզո՞ւմ ես:

Վարդանը հաճույքով ընդունեց այդ առաջարկը։ Մայր մտնող արևը նարնջագույն ցոլքերով արտացոլվում էր վերևի հարկերի լուսամուտների ապակիներից, փողոցի վրայով թևերի սոսափյունով աղավնիների մի երամ անցավ։ Նրանք հասան պողոտային, որը տանում էր Տակսիմի պուրակը։ Նրանց դիմաց Զինվորական դպրոցն էր, որը շրջապատված էր ձիարշավարաններով, որտեղից հեծելազորի մի գունդ վերադառնում էր դեպի ախոռները։ Մարդիկ հավաքված էին հասարակական աղբյուրի մոտ, որից օգտվում էր ամբողջ թաղը։ Կառապանները հերթ էին կանգնել իրենց ձիերին ջուր տալու համար։

— Սուրբ Հակոբ եկեղեցին հեռու չէ...— ասաց Մարոն։

Այնտեղ գնալու համար պետք է ճանապարհից շեղվեին, բայց Վարդանը մտածեց, որ կինը տարիներ շարունակ ոտք չէր դրել եկեղեցի։ Նրանք գնացին պողոտայով, ուր արագ ընթանում էին կառքերն ու ֆայտոնները։ Կամաց-կամաց Մարոն հանգստացավ, քայլվածքն ավելի ճկուն դարձավ, քայլն ավելի վստահ, և նա այլևս չէր կառչում Վարդանի թևից։ Վերջինս դա լավ նշան համարեց և մտածեց, որ Մարոն շատ շուտ կընտելանա Կոստանդնուպոլսի իր կյանքին և իրեն էլ կվարժվի։

— Երբ ուզենաս, մենք կգնանք զբոսնելու Բերայի գլխավոր փողոցով և, ինչպես առաջ էինք անում, «Մարկիզա» կմտնենք թեյ խմելու։ Հիշո՞ւմ ես։

— Այո,— ասաց Մարոն երազկոտ տեսքով։

Մարոն միշտ կապված էր իր հոր՝ Հակոբ Արթինյանի, հովանավոր Սուրբ Հակոբ եկեղեցու հետ, և այնտեղ մտնելով հուզվեց։ Արևի վերջին ճառագայթները ավելի վառ էին դարձրել վիտրաժները և գունավորել էին պատերը։ Խունկի և այրվող մոմերի հոտը Մարոյի սրտում թանկ հուշեր արթնացրեց, և նա ծնկի իջավ։ Երբ սկսեց աղոթել, հեռավոր անցյալի պատկերները ջնջվեցին, քանի որ նա աղոթում էր իր երկու որդիների համար։ Նա երկար ծնկաչոք մնաց։ Նստարանին նստած Վարդանը աչքի պոչով նայում էր Մարոյին և նախանձում էր նրա հավատին, քանի որ ինքը կորցրել էր հավատը։ Նա այլևս գրեթե չէր հավատում, սակայն իրենց միացումը բնորոշելու համար գտնում էր միայն «հրաշք» բառը։ Կամաց-կամաց Մարոյի կիսադեմը փոխարինվեց Արուսյակի կիսադեմով։ Զնայած իր սիրուն Մարոյի նկատմամբ, Ուրգուպի երիտասարդ կինը կենդանի էր Վարդանի սրտում։ Եվ Վարդանը, ներքուստ, նրա համար արտասանեց հոգեհանգստյան աղոթքը։

Եկեղեցուց դուրս գալուց առաջ նրանցից յուրաքանչյուրը երկու մոմ վառեց և այն կանգնեցրեց ավազով լի ամանի մեջ, որն այդ նպատակով դրված էր Աստվածամոր պատկերի առաջ։ Մարոն՝ Թովմասի ու Նուրհանի համար, Վարդանը՝ Թովմասի ու Արուսյակի համար։ Եվ նրանցից ոչ մեկը չհամարձակվեց հարցնել, թե ում համար էր այդ երկրորդ մոմը։

Նրանք արագ հեռացան, որպեսզի չուշանային։ Մարոն ավելի

հանգիստ էր, սակայն երբ հասան Շահին բեյ փողոցը, ուր ապրում էին Մեսրոպյանները, նա նորից լարվեց, և այդ լարումն ավելացավ նրանց նպատակակետին մոտենալուն պես։ Հևալով՝ նա կանգ առավ դռանը մի քանի քայլ չհասած։ Վարդանը հասկացավ, որ այդ այցելությունը նրան վախեցնում էր։ Նա շոյեց կնոջ ձեռքը։

— Նրանք այնքան երջանիկ են, որ կարող են քեզ նորից տեսնել։

— Ես նույնպես, սակայն...

Մարոն հոգու խորքում պահեց իրեն միշտ որպես իրենց դստերը վերաբերվող մարդկանց կողմից դատապարտված լինելու վախը։ Վարդանն ուզեց նրան վստահություն ներշնչել։

— Ամեն ինչ լավ կլինի։ Ես քեզ հետ եմ։

Այս վերջին խոսքերը հուզեցին Մարոյին։ «Ես քեզ հետ եմ»՝ շատ ավելին էր, քան պարզապես «Ես քեզ ուղեկցում եմ»։

Արփինե մորաքույրը ձեռքերը երկնքին պարզեց և չկարողացավ արտաբերել այն բառերը, որոնք կարտահայտեին իր հրճվանքը։ Հուզմունքից ճիչեր արձակելով, նա նետվեց Մարոյի վրա և համբուրեց նրա այտերը, հետո ճակատը, հետո նորից այտերը և նորից ճակատը։ Համբույրների արանքում նա ասում էր. «Տերը լսեց մեր ձայնը։ Տերը լսեց մեր ձայնը»։ Հետո հևալով նա գրկեց զարմիկի կնոջն ու անձնատուր եղավ արցունքներին։ Ազդվելով այդ ջերմությունից և համարելով, որ մորաքույրն իրեն չէր դատապարտում, Մարոն նույնպես համբուրեց նրան։

— Մորաքույր, մորաքույր, ես շատ երջանիկ եմ։

Ձեռքերը Մարոյի ուսերին դնելով՝ Արփինեն մի քայլ հետ գնաց և նրան նայեց մոր հիացական հայացքով։

— Դու չես փոխվել։ Դու նույնիսկ է՛լ ավելի ես գեղեցկացել։

Նրա դեմքը լրջացավ և նա ասաց տխուր ձայնով.

— Խե՛ղճ աղջիկ։

Վարդանը գերադասեց ցրել մորաքրոջ վերջին խոսքերի երկիմաստությունը։

— Մի մտածեք, Արփինե մորաքույր, մենք կգտնենք Թովմասին։ Մարոն գրել է արդեն բոլոր որբանոցներին և միսիոներներին, որոնք հավաքում են հայ երեխաներին։

Արփինեն հասկացավ, որ այսպիսով Վարդանը հասկացնում էր, որ ինքը չխոսեր Մարոյի տարած փորձությունների մասին։

Հաջորդը Մեսրոպն էր։ Նրա թաց աչքերը, լայն ժպիտը, տարածած ձեռքերը կանչում էին Մարոյին։

— Արի, քեզ համբուրեմ, աղջիկս։

Նրան մոտենալիս Մարոյին թվաց, որ ինքը նրա աչքերում հետաքրքրասիրության անցողիկ արտահայտություն նշմարեց, կարծես նա պատկերացներ Մարոյին օտար տղամարդու հետ: Դա պատրանք էր, որը նրան թելադրել էր մեղքի սրված զգացումը: Սակայն այն, որ նա մի պահ գրեթե աննկատ հապաղեց Մարոյին գրկելուց առաջ և որ փորձում էր ուրախ բացականչություններով քողարկել համբույրի սառնությունը, չվրիպեց Մարոյից: Քեռու աչքերում նա անկասկած պղծված էր: Կուլ տալով իր վիշտը՝ Մարոն ուրախ բացականչեց.

— Բոլորովին չի երևում, որ հիվանդ եք եղել, Մեսրոպ քեռի: Դուք ավելի երիտասարդ եք երևում:

Քեռին հիացած տեսք ուներ, սակայն նրա պատասխանը երկիմաստ հնչեց:

— Հիվանդության ավերածությունները միշտ չէ, որ տեսանելի են: Դու նույնպես լավ տեսք ունես:

— Ինձ հանձնեք նրան,— բացականչեց Լուսիկը՝ հոր թևքը քաշելով:— Մարոն իմ քույրն է:

Լուսիկի գրկախառնությունն անկեղծ էր, և Մարոն հաճույքով անձնատուր եղավ դրան: Մի քանի րոպե նրանք լռում էին, սակայն յուրաքանչյուրին թվաց, որ իրենք անփոփոխ վիճակում վերագտան իրենց երբեմնի բարեկամությունը:

— Տղամարդկանց թողնենք հյուրասենյակում, իսկ մենք գնանք խոհանոց,— հայտարարեց Լուսիկը՝ բռնելով Մարոյի թևը:

Վարդանը նստեց բազմոցին: Մեսրոպը շամպայնի շիշ հանեց, որը նրան նվիրել էր ֆրանսիական դեսպանատան ծառայողներից մեկը, ում համար նա տպագրական աշխատանքներ էր կատարել:

— Եվրոպացիների վերադարձի հետ աշխատանքի պակաս չի զգացվում,— ասաց նա խմիչքը բաժակների մեջ լցնելով:

Նրանք բաժակներն իրար խփեցին: Քեռին նստեց իր սիրած բազկաթոռին զարմիկի առջև և առաջին կումն անելուց հետո լեզուն հաճույքով ճպճպացրեց: Հետո, անմիջական տոնով ասաց.

— Մարոն կարծես կաշկանդված լինի:

— Նա այնպիսի ողբերգություն է ապրել, որի մասին դուք անգամ պատկերացում չունեք, Մեսրոպ քեռի: Մեզնից քչերը կկարողանային անխաթար դուրս գալ այդպիսի փորձություններից: Նրա ճակատագիրը միահյուսվում է մեր ժողովրդի ճակատագրի հետ, քեռի: Միգուցե նա անհարմար է զգում մեզ համար, որոնք համեմատաբար ավելի հեշտ ճակատագիր ենք ունեցել:

Ուղերձը պարզորոշ էր, և Մեսրոպը, բարկանալով, որ իրեն դաս են տալիս, մրմնջաց.

— Ես հենց այդ էի ուզում ասել...

Անհարմար վիճակից դուրս գալու համար Վարդանն ասաց.

— Այս շամպայնը շատ բարձր որակի է։

— Իսկապես։ Ես կփորձեմ քեզ համար մի շիշ ճարել։

Որոշ ժամանակ նրանք խոսում էին եղանակի մասին, սակայն հետաքրքրասիրությունից դրդված՝ Մեսրոպը սկսեց հարցեր տալ Վարդանին.

— Ես այսօրվա թերթերն եմ նայել։ Այնտեղ զետեղված էր գավառապետի լուսանկարը։

— Այդ գործը փակված է։

— Դա նա է, որ...

Վարդանը նրան ընդհատեց.

— Մեսրոպ քեռի, ես չեմ ուզում այլևս դրա մասին խոսել և չեմ ուզում, որ Մարոյին հիշեցնեն տեղահանության մասին։ Հնարավորություն տանք նրան, եթե նա կարող է, մոռանալ այն դժբախտությունները, որոնց ականատես է եղել։ Ես կարծում եմ, որ պահանջածս մեծ բան չէ։

Մեսրոպին մնում էր միայն ենթարկվել այդ վճռական տոնին։ Նրա բնական բարությունը և Մարոյի նկատմամբ նրա սերը հաղթող դուրս եկան։

— Խեղճ երեխա,— ասաց նա։— Մեր սերը նրան կօգնի մոռանալ այդ փորձությունները։

Խոհանոցում տարածվել էր տապակած սոխի և քիմիոնի հոտը։ Մարոն ուզում էր Լուսիկին օգնել պատրաստելու խորտիկները։ Արփինեն, որը ստուգում էր ջեռոցի վրա դրված կաթսաները, հարցրեց.

— Ինչո՞ւ չեք գնում Լուսիկի սենյակ զրուցելու։ Ես ամեն ինչ կանեմ։

Մարոն բաստուրմա էր կարտում։

— Թույլ տվեք օգնեմ ձեզ, Արփինե մորաքույր։ Ես այնքան վաղուց գործ չեմ արել։

— Այնտեղ շա՞տ ծառայողներ կային։

— Այո։

— Մայրիկ,— վրդովվեց Լուսիկը։— Մարոն երևի ուզում է մոռանալ այն, ինչ եղել է և նոր կյանք սկսել։ Ես այդպես կանեի։ Իսկ դո՞ւք, մայրիկ։

— Իրավացի ես,- պատասխանեց մայրը սրտնեղած։— Ես հիմար պառավ եմ։

Մարոն նրան գրկեց.

— Այդպես մի ասեք, մորաքույր։ Դուք հրեշտակ եք, և ես ձեզ պաշտում

եմ։

— Ա՛հ, ես, ինչպես և բոլորը, թերություններ ունեմ։

Նա շրջվեց, քնքշորեն նայեց Մարոյին և նրա այտը շոյեց, մտածելով այն մասին, որ նա կորցրել էր մորը։

Լուսիկը, որը չափից ավելի զգայուն էր, վատ էր տանում հուզիչ տեսարանները, որոնք նրան հունից հանում էին։

— Դուք լացելու մտադրությո՞ւն ունեք, մայրիկ։ Ավելի ճիշտ կլիներ երգել։

Իր դստերը լավ ճանաչելով՝ Արփինեն պաշտպանվեց ձևականորեն.

— Իսկ ուրախությա՞ն արցունքները, դու դրանց գոյության մասին չգիտե՞ս։

Նրանք ավարտեցին գործը՝ խոսելով առօրյա հոգսերի մասին։ Արփինեն խոսում էր սննդամթերքի գների, որոնք բարձրանում էին, և իրեն անհանգստացնող այտուցված ոտքերի մասին։ Լուսիկը խոսում էր փարիզյան վերջին նորաձևության մասին, որի նմուշները կարելի էր տեսնել գլխավոր փողոցի խանութներում, և բարձրաձայն ծիծաղելով, նա ասաց, որ այնտեղ կարելի է նաև տեսնել ֆրանսիական նավատորմիղի գեղեցիկ սպաներին։ Մարոյին թվում էր, որ ինքը վերադարձել էր 1908 թվականը։ Հին ընկերությունը վերադառնում էր, և նա զգաց, որ մորաքույրն ու քույրը իրեն ընդունում էին առանց վերապահումների։ Այս երկուսին մանրամասներ պետք չէին, որպեսզի պատկերացնեին, թե ինչպիսին էր եղել Մարոյի կյանքը վերջին տարիների ընթացքում, և նրանցից յուրաքանչյուրը գիտեր, որ ինքը նույն ձևով կպահեր իրեն։ Նրանց դիրքորոշումից հանգստանալով՝ Մարոն համաձայնեց Լուսիկին քաղաք ուղեկցել երկու օր հետո։

Խոհանոցի անբռնազբոս մթնոլորտը ճաշասենյակ տեղափոխելու Արփինեի ու Լուսիկի ջանքերին հակառակ, սեղանի շուրջը տիրում էր որոշակի լարվածություն։ Մարոն դարձյալ փակվեց իր խխունջի մեջ, քանի որ Մեսրոպ քեռու հայացքը անընդհատ վերադառնում էր նրա վրա, և այդ հայացքում հետաքրքրասիրություն կար, որը վիրավորում էր Մարոյին։ Նա բարձրաձայն էր խոսում, ծիծաղում էր, պատմում տպարանում տեղի ունեցած ծիծաղելի միջադեպերը, ասում էր, որ փառք էր տալիս Աստծուն, որ նա վերջապես միացրել էր Վարդանին ու Մարոյին, և ցանկանում էր, որ Թովմասն էլ շուտով միանար նրանց, խուսափում էր ակնարկել Մարոյի մոտակա անցյալի մասին, սակայն ամեն ինչ ապարդյուն էր, քանի որ ծեր մարդը չէր կարողանում իր ձայնին բնական հնչեղության տալ։ Բայց դա ցանկության պակասից չէր։ Իրենից անկախ նա մնում էր իր ստացած դաստիարակությունից ժառանգած նախապաշարմունքների և պատվի մասին մի քիչ սահմանափակ պատկերացումների գերին։ Չնայած այն հանգամանքներին, որոնք արդարացնում էին Մարոյին, այդուհանդերձ քեռու աչքերում նա մնում էր որպես հավատարմությունը դրժած կին։ Մեսրոպի հոգում վերակենդանացել էր խանդի և սեփականատիրոջ

զգացումը, որոնք Արփինեն արդեն վաղուց ի վեր չէր գրգռում և երբեք առիթ չէր տվել դրան, և նա իրեն պատկերացնում էր իր զարմիկի իրավիճակում: Այդ բանը բնազդաբար զգում էին մնացած հյուրերը:

Վարդանը սեղանի տակ սեղմեց Մարոյի ձեռքը, որպեսզի նա իմանար, որ ինքը նրա կողմն էր բռնել: Մարոն դարձավ դեպի Վարդանը և տեսավ նրա սիրահարված հայացքը: Դրանից նրա տագնապն ավելի խորացավ:

— Տիրանը չի՞ գալու ճաշի,— հարցրեց Վարդանը քեռուն և մորաքրոջը:— Իսկ Արա՞մը:

Լուսիկը կատակով պատասխանեց.

— Նրանք, ինչպես միշտ, ինչ-որ խորհրդավոր գործով են զբաղված:

Նա լուրջ չէր ընկալում եղբոր գործունեությունը, որը նա պատրվակ էր համարում ընտանեկան ապարանով չզբաղվելու համար: Մեսրոպը բարձր հառաչեց, դարձավ իր զարմիկին և նորից խոսեց իրեն տանջող խնդրի մասին:

— Դու գիտե՞ս, որ նրանք ուզում են Կովկաս՝ Հայաստան գնալ:

Նա նեղացած էր:

— Հետո ի՞նչ,— ասաց Վարդանը՝ ուսերը թոթվելով:— Դուք դեմ չէիք, երբ Պարգևը Նյու Յորք էր գնում:

Մեսրոպը պայթեց.

— Դա կապ չունի: Նյու Յորքը Նյու Յորք է: Նյու Յորքում պատերազմ ու սով չկար:

Վարդանը հանդարտեցնող շարժում արեց.

— Մեսրոպ քեռի... Հիշեք, որ Հայաստանն այն է, ինչի համար նա պայքարել է ամբողջ կյանքը: Դուք պետք է որ վաղուց հասկացած լինեիք, որ նա ձեզ չի փոխարինելու տպարանում:

— Ի՞նչ է լինելու տպարանի վերջը:

— Կվաճառեք և թոշակի կանցնեք: Կարող եք ճանապարհորդել Արփինե մորաքրոջ հետ:

Ծեր մարդը խեղճացավ.

— Տպարանը ես ժառանգել եմ հորից: Այն օտարի՞ զիջել: Երբե՛ք:

— Չէի՞ք ասում, որ մտածում էիք Արամի մասին:

Մեսրոպը գլուխը թափ տվեց.

— Այդ տղան տեղում հանգիստ չի մնում: Նա նմանվում է Տիրանին: Ի միջի այլոց, նա էլ է ուզում Հայաստան գնալ:

Քանի որ Վարդանի փաստարկները սպառվել էին, նա կես կատակ, կես լուրջ առաջարկեց.

— Վերջապես մի օր Լուսիկը կգտնի իր հավանած մարդուն։ Ձեր փեսան...

Երիտասարդ կինը չընկալեց կատակը և վճռական ձայնով ասաց.

— Ես կամուսնանամ, երբ կսիրեմ, և ոչ թե այն պատճառով, որ տպարանին տեր է հարկավոր։

Նա գլուխը թեքեց և հոր աչքերի մեջ նայելով, հարցրեց քաղցրաձայն.

— Իսկ ինչո՞ւ ես չեմ կարող լինել տպարանի տերը։ Ես տիրապետում եմ այդ գործին։

Քեռին սարսափած բացականչեց.

— Մեսրոպյան և դուստր։ Ապա մի սրան տեսե՛ք...

— Դա այդքան էլ վատ գաղափար չէ,— ասաց Արփինե մորաքույրը մտածելուց հետո։— Ես պատկերացնում եմ Լուսիկին գործարար կնոջ դերում։

Ականջներին չհավատալով՝ Մեսրոպը նայեց կնոջը, որը պահպանում էր լրջությունը։ Նա գերադասեց չպատասխանել և սկսեց ուտել առանց աչքերը ափսեից կտրելու։

Արփինեն խորամանկ աչքով արեց մյուսներին։

* * *

— Անե՛, անե՛,– բղավում էր Նուրհանը, վազելով անձրևի տակ իր մորը տանող կառքի հետևից։

Մարոն ցնցվեց և արթնացավ, իսկ որդու ձայնը շարունակում էր հնչել ականջներում։ Մղձավանջը նման էր այն երազին, որը տանջում էր իրեն ամիսներ շարունակ Թովմասի անհայտանալուց հետո։ Թովմասն անապատում էր, նրան տարել էր պտտահողմը, և նա բղավում էր «մայրիկ, մայրիկ», իսկ Մարոն չէր կարողանում նույնիսկ ձեռքը շարժել։

Կնոջ կտրուկ շարժումը արթնացրեց Վարդանին։

— Ի՞նչ է պատահել, Մարո։

— Ոչինչ, վատ երազ էր։

Վարդանը կուզենար, որ Մարոն բացատրեր, սակայն, ներողություն խնդրելով արթնացնելու համար և բարի գիշեր մաղթելով, նա մեջքով շրջվեց Վարդանին։ Նա լսեց, թե ինչպես էր Մարոն թաքուն լալիս, կարծելով, որ իր հեկեկոցը չէր լսվում, սակայն Վարդանը չհամարձակվեց նրան հարցեր տալ։ Նա ինչպես միշտ կպատասխաներ, որ ինքն առանց պատճառի ընկճված էր, կամ էլ՝ որ ինքը տանջվում էր Թովմասի համար։ Վարդանը գուշակում էր, որ պատճառն այլ էր։ Ի՞նչ պատճառ։ Իհարկե, մյուսը։ Ոըզա բեյը, որը նույնիսկ հեռվից կանգնած

էր իրենց միջև։

Պարզվեց, որ առաջին օրերի նրա համոզմունքը, որ իրենց հարաբերությունները շատ շուտ առաջվա պես կդառնային, սխալմունք էր։ Մարոյի ամաչկոտությունը խոչընդոտ էր դառնում, իսկ զսպությունը՝ սառնություն։ Ամեն երեկո տուն վերադառնալիս նա հայտնաբերում էր, որ Մարոն ավելի էր իրենից հեռացել, ավելի և ավելի բացակա էր։ Իսկ Վարդանի համբերությունը հատում էր, և խանդը բույն էր դնում հոգում։ Չորրորդ օրը Մարոն զգալ տվեց, որ չէր մերժի իրեն, և նրանք սիրեցին իրար։ Կամ գոնե Վարդանը փորձեց այդ բանն անել։

Նա իր անկողնում հայտնաբերեց սառցե մի լուլա, լարված և անշարժ մի կին, որն ի վիճակի չէր հաճույքին տրվելու, կամ գոնե միայն տենչին։ Դա նման չէր Մարոյին, և Վարդանը սարսափով եզրակացրեց, որ Մարոն անտարբեր էր իր նկատմամբ։ Այդ օրվանից նա նրբանկատ և քաղաքավարի էր Մարոյի հետ, սակայն դադարել էր նրան սիրահետել, ապարդյուն սպասելով նախաձեռնության նրա կողմից։ Նախ, անհրաժեշտ էր, որ փլվեր լռության այդ պատվարը, որը Մարոն կառուցել էր իր վշտի շուրջ, և որ լցվեր այն վիհը, որը գոյացել էր նրանց միջև երեք տարվա բաժանումից։ Ինչպես դա պետք է տեղի ունենար, Վարդանը չգիտեր։ Նա սպասում էր և, կնոջ դատարկ կամ այլուր ուղղված հայացքը չտեսնելու համար, նա նստում էր իր աշխատասեղանի առջև և գրում էր մինչև քնելու պահը։ Տարօրինակ կերպով, Մարոյի կեցվածքը թեժացնում էր Վարդանի սրտում Արուսյակի կորստյան վիշտը, և նա շատ հաճախ էր նրան հիշում։ Եվ, հակառակը, այդ պարզ և երջանիկ սիրո հուշը ավելի տանջալի էր դարձնում իր կնոջ հետ կապ հաստատելու անկարողությունը։

Տան ճնշող մթնոլորտից խույս տալու համար, Վարդանը մասնակցում էր մայրաքաղաքի տարբեր հայկական կազմակերպությունների հավաքներին, կազմում էր Իթթիհատի հանցագործների թղթապանակները, մասնակցում էր խաղաղության բանակցությունների նախապատրաստությանը, որոնք հավանաբար տեղի էին ունենալու Ֆրանսիայում։ Եվ երբ ուշ երեկոյան տուն էր վերադառնում, նախ հետաքրքրվում էր փոստով եկած նորություններով։ Թովմասին գտնելու հույսը, որ նրանք շարունակում էին փայփայել, նրանց միավորող միակ կապն էր։

Շաբաթներն անցնում էին։ Բացառությամբ Կոստանդնուպոլսի շրջակայքում գտնվող մանկատներից ստացած բացասական պատասխաններից, նրանք ոչինչ չէին ստացել Զմյուռնիայից, Սիրիայից, Կիպրոսից և այլ վայրերից։ Բոլոր հնարավորություններն օգտագործելու համար, նրանք նամակներ էին գրել Գերմանիայի և Շվեյցարիայի բողոքական եկեղեցիներին, որոնք կարող էին միսիոներներ ունենալ Անատոլիայում պատերազմի ժամանակ։ Իսկ փոստը վատ էր աշխատում։

Վարդանը քնեց։ Մարոն, մեջքին պառկած, նայում էր առաստաղին արտացոլվող փողոցային լույսերին։ Միգուցե ավելի, քան Վարդանը, նա

ընկճված էր իրավիճակից և ազդվում էր տեսնելով, թե ինչպես էր նա իրենից հեռանում: Նա գիտեր, որ իրենց սերը հարատևում էր, և ազդակ էր պետք, որպեսզի դառնար ամուր և կենսունակ առաջվա պես: Պարզապես իրենք մոռացել էին այդ սերն արտահայտող լեզուն: Ինչ էլ մտածեր Վարդանն այդ կապակցությամբ, այնուամենայնիվ, մեղքը միայն իրենը չէր: Իրենց երբեմնի սիրային ծեսն այլևս չէր կիրառվում, քանի որ ժամանակն այն ընդհատել էր և իմաստազրկել: Իրենք պետք է նոր ծես հնարեին, որը կարող էր միայն ինքնաբերաբար ծնվել: Այդպիսի ծես զույգը ոչնչից կարող էր ստեղծել միայն համատեղ կյանքի ծեգին: Իսկ այն ծեսը, որը պետք է ստեղծեին Մարոն ու Վարդանը, պետք է իր մեջ ներառեր մոտավոր անցյալը, արմատավորվեր երեք տարվա բաժանման մթության մեջ՝ տառապանքի, վախի և խաբված հույսերի տարիներում, առանց մոռացության մատնելու անցողիկ ուրախությունները և պատրանքները: Պայմանները չէին նպաստում դրան: Նախ պետք էր վերացնել այն խոցը, որը թունավորում էր նրանց հարաբերությունները, իսկ իրենցից ոչ մեկը այս պահին չուներ այդ բանն անելու ոչ ուժը, ոչ էլ քաջությունը:

Վարդանը սխալվում էր՝ կարծելով, թե ինքը տանջվում էր Ռըզայի համար: Իր համար գավառապետը այլևս գոյություն չուներ, ավելի քան մեռած Պետրին, որի գլուխը ջախջախել էր գնդակը: Այն ցավը, որից նա ազատում չէր գտնում, իրեն պատճառում էր Նուրհանը: Նուրհանը, որին հիշեցնում էին մանկատան բոլոր երեխաները, և նա աշխատում էր այնտեղ՝ փորձելով դժոխքից ազատված այդ փոքրիկներին մի քիչ սեր պարգևել: Նուրհանը, որին մոռանալ չէր տալիս նրա եղբորը գտնելու հույսը: Ինչպես Թովմասի անհայտանալու առաջին շաբաթների ընթացքում, ցավը պակաս անտանելի կլիներ, եթե նա մահացած լիներ: Մինչ կյանքի վերջը Մարոն ամեն առավոտ պետք է կորցներ այդ երեխային, նրա հիշատակը վառ պահելու փոխարեն: Ինչպես և Թովմասի դեպքում, ինքը դատապարտված էր հավերժ նրան կորցնելու: Ինչպես կարող էր նա այդ իրավիճակում սկսել նորից սիրել մի տղամարդու:

Տիրանը, ինչպես և ընտանիքի մնացած անդամները, հասկանում էր, որ Մարոյի և Վարդանի հարաբերությունները այնքան էլ հարթ չէին: Նա նույնքան կապված էր երիտասարդ կնոջը, որքան իր քեռորդու հետ, և այն լարվածությունը, որ զգում էր նրանց հարաբերություններում, վշտացնում էր նրան: Ուստի նրանց ավելի հազվադեպ էր այցելում, քան կուզեր: Այդ երեկո նա եկավ Վարդանի մոտ անհետաձգելի մի հարցով և իրեն ավելի վստահ զգալու համար, իր հետ բերեց Արամին:

Մարոն սուրճ պատրաստեց և տղամարդկանց միացավ հյուրասենյակում: Նա սուրճ հրամցրեց Տիրանին, որը տեղավորվել էր բազկաթոռում, և Արամին, որը Վարդանի աշխատասեղանի մոտի աթոռը դրել էր իր ուսուցչի կողքին և նստել: Մարոն նստեց ամուսնու կողքին բազմոցին:

— Դու հազվադեպ ես գալիս,– ասաց Վարդանը քեռորդուն:

— Դրա համար ծանրակշիռ պատճառներ կան: Արամն ու ես լրտեսներ

ենք դարձել և գաղտնի գործակալներ։

Երիտասարդը, քանի որ Արամը շատ արագ մեծացել էր և այլևս պատանու նման չէր, գլուխը հպարտորեն բարձրացրեց։ Նրա վերին շրթունքի վրա արդեն աղվամազ էր հայտնվել։ Տիրանը սուրճը խմեց՝ հաճույք ստանալով եղբորը սպասեցնելուց։ Հիսաթափվելով նրա զսպությունից, նա բացատրեց.

— Մենք փաստաթղթեր ենք փնտրում, որոնք կարող են պատմության ընթացքը փոխել։ Դատարանում հնչած բազմաթիվ վկայություններից պարզվել է, որ կառավարության ժողովների արձանագրությունները, ներքին գործերի նախարարության շրջաբերականները, ձեռագրերն ու նամակագրությունը, այսինքն տեղահանություններին վերաբերող բոլոր փաստաթղթերը անհայտացել են։ Շատերն այրվել են, մի մասը գողացել են այն մարդիկ, որոնց դրանք բացահայտում են։

— Գիտեմ,— ասաց Վարդանը։

— Սպասիր, նորություններ կան։ Մեզ լուրեր են հասել, որ այդ փաստաթղթերի մի մասը վաճառվում է շատ թանկ գնով։

— Մենք հետքը գտել ենք,— ավելացրեց Արամը։— Սակայն դա նրբին գործ է։ Շատերն են ուզում տարբեր պատճառներով ձեռք բերել այդ փաստաթղթերը, և վաճառողները շատ զգույշ են։

Վարդանը մտածեց, որ տղան շատ ավելի լավ էր մտքերը շարադրում։ Նա օգտագործում էր Տիրանին հատկանշական արտահայտությունները և նախադասությունները, երբեմն նույնիսկ նրա ձայնի երևէջները։

— Պաշտոնական փաստաթղթերի առկայությամբ,— շարունակեց Տիրանը,— մենք կկարողանանք ապացուցել, որ տեղահանությունների քողի տակ երիտթուրքերի կառավարությունը պարզապես ծրագրել էր հայերի բնաջնջումը։

Վարդանը գլխով արեց.

— Դա կամրապնդի մեր դիրքերը դաշնակիցների աչքում գալիք բանակցություններում։ Սակայն շատերը շահագրգռված են, որ այդ փասթաթղթերն անհայտանան, և դա վտանգավոր է մեզ համար։

— Մեզ ոչինչ չի վախեցնում,— համառեց Արամը։

Տիրանը, որն ավելի իրատես էր, ավելացրեց.

— Արժե փորձել։ Օսմանյան դիվանագետները շատ ակտիվ են։ Նրանք հարցականի տակ են դնում ջարդերի ծավալները, որոնց պատասխանատվությունը փորձում են բարդել առանձին անհատների վրա, այդպիսով ազատելով այդ ժամանակաշրջանի կառավարությանը պատասխանատվությունից։ Եթե մենք թույլ տանք, որ նրանք այդ անեն, կգա մի օր, երբ ողջ աշխարհը վստահ չի լինի, որ այդ սարսափելի ոճիրն իրականացվել է։ Ահա թե ինչու պետք չէ հաշվի առնել վտանգները։

Վարդանը համաձայնության նշան արեց.

— Ինչպես դու ես ասում՝ արժե փորձել։

— Իսկ դու, Վարդան, դու ի՞նչ ես հիմա անում։

— Ես հավաքել եմ Գանի բեյի թղթապանակը։

— Դա այն մարդն է, որը Սվա՞ս էր եկել,— հարցրեց Մարոն։

— Հենց նա։

— Օ,- բացականչեց Մարոն,— ես հույս ունեմ, որ նա կախաղան կհանվի, այդ սրիկան։

Տիրանը լեզուն ճլթճլթացրեց՝ իր անվստահությունն արտահայտելու համար։

— Երեք օր առաջ նա փախել է մայրաքաղաքից և, համաձայն տեղեկությունների, Ավստրիա է մեկնել։ Նա հեռակա կդատապարտվի։

Վարդանը Մարոյի կողմը դարձրեց տխրած դեմքը։

— Այդ թղթապանակն ուսումնասիրելիս ես սարսափելի մի բան իմացա։ Գնդապետ Իբրահիմը մահացել է կոտանքներից հարցաքննության ժամանակ։

— Կոտանքների՞ց։ Բայց ինչո՞ւ,— բացականչեց Մարոն սարսափած տեսքով։— Նա թուրք սպա էր։

— Նա ինձ ազատել էր բանտից Հալիթ փաշայի օգնությամբ։ Վերջինս նույնպես սպանվել է։

Մարոն հետաքրքրվեց։

— Ուրեմն նրա շնորհիվ է, որ... Իբրահիմը պատվի մարդ էր, նա ինձ խոստացել էր, որ քեզ չէր լքի։ Ես հույս ունեմ, որ նա Ալլահի դրախտում է։

Տիրանը զարմացավ, որ Մարոն չգիտեր, թե ինչպես էր Վարդանը Սվասից փախել։ Այս երկուսն ուրեմն ոչինչ չէին պատմել իրենց դժբախտությունների և արկածների մասին։ Հետևաբար նրանց հարաբերությունների բարդություններն ավելի լուրջ էին, քան ինքը կարծում էր։

— Կարո՞ղ եմ ծխել,— հարցրեց Արամը, իր բաճկոնի գրպանից անգլիական ծխախոտի տուփ հանելով։

— Խնդրեմ,- ասաց Մարոն, ցույց տալով աշխատասեղանի անկյունում դրված մոխրամանը։

Արամը լուցկին վառեց և աչքի պոչով զննեց Մարոյին։ Նա Արուսյակից գեղեցիկ էր, սակայն պակաս քնքուշ, պակաս աշխույժ և, անկասկած, պակաս արի էր։ Այս մռայլ և լռակյաց քաղաքացի կնոջ հետ Վարդանը կթուլանար և փալաս կդառնար։ Նա ավելի երջանիկ կլիներ Արուսյակի հետ։ Արուսյակի սերը պետք է որ ավելի կենսախինդ լիներ։ Նախօրեին Արամը Տիրանի և Ավետիսի հետ գնացել էր հասարակաց տուն, ուր նա

զրկվել էր կուսությունից, և այդ պահից նա համարում էր, որ մեկ հայացք գցելով, ինքը կարող էր դատել կնոջ զգայական ներուժի մասին։

Տիրանը գավաթը սեղանին դրեց և կոկորդը մաքրեց իր այցելության պատճառը բացատրելու համար։

— Ասա, Վարդան.. Դեսոնը՝ ամերիկացի լրագրողը, քեզ արդեն խորհուրդ է տվել Վաշինգտոն գնալ, այդպես չէ՞։

— Նա վստահեցնում էր, որ հայկական հարցին լավագույնս ծառայելու համար հարկավոր է ճնշումներ գործադրել Ներկայացուցիչների պալատի, սենատորների և նախագահի շրջապատի վրա։

— Կոմիտեն նույնպես համոզված է դրանում։

— Այդպես եմ մտածում նաև ես,— ասաց Վարդանը։— Նախագահ Վիլսոնը կողմ է մեր երազած միացյալ Հայաստանի ստեղծմանը, իսկ ամերիկացիները միակն են, որ կարող են այդ գաղափարը պարտադրել խաղաղության կոնֆերանսին։

— Ճիշտ է։ Հետևաբար հարկավոր է այդ տրամադրությունները թեժ պահել, քանի որ կոնֆերանսն ամենայն հավանականությամբ տեղի կունենա միայն հաջորդ տարի։

— Շատ չէ, իսկապես։

— Հատկապես, որ հետնաբեմում ֆինանսական և արդյունաբերական շահեր ունեցողները ճնշումներ են գործադրում քաղաքական գործիչների վրա Օսմանյան կայսրությունը պահպանելու համար։

— Գիտեմ,— ասաց Վարդանը ծամածռվելով։- Սակայն մերոնք էլ բավականաչափ գործունյա են, թե՛ Միացյալ Նահանգներում, թե՛ Եվրոպայում։ Ինչպես երևում է, կաթողիկոսն էլ կոչ է արել նախագահ Վիլսոնին։

Տիրանը գլխով արեց և վերցրեց սուրճի գավաթը։ Մարոն հետաքրքրությամբ էր հետևում խոսակցությանը և, ինչպես և Վարդանը, սպասում էր շարունակության։ Նա բավականաչափ լավ գիտեր Տիրանին, որպեսզի հասկանար, որ արդեն մի քանի րոպե էր, ինչ նա պտտվում էր բուն նյութի շուրջ։ Տիրանն այդպես էր վարվում, երբ համոզված չէր իր փաստարկների ճշտության և իր դիրքորոշման հիմնավորվածության վրա։ Նա հազաց պատասխանելուց առաջ.

— Հաշվի առնելով այս իրավիճակը՝ կոմիտեն վճռել է քեզ ուղարկել Վաշինգտոն։

— Վճռե՞լ է,— վեր թռավ Վարդանը։— Արդեն իմ փոխարե՞ն են վճռում։

Տիրանն ուզեց ուղղել իր սխալը.

— Ոչ, այդպես մի ընկալիր։ Կոմիտեն կցանկանար...

Մարոն տագնապով հետևում էր Վարդանին, քանի որ գիտեր, թե որքան էր նա տարված միվորված Հայաստանի գաղափարով: Այն միտքը, որ նա կարող էր մեկնել, նույնիսկ մի քանի ամսով, նրա համար անտանելի էր: Վարդանը պատասխանեց կտրուկ տոնով.

— Իմ պատասխանն է՝ ոչ:

— Դու չես կարող հրաժարվել,— աղերսեց Տիրանը:

Վարդանը մեղմացավ.

— Ես չեմ պատկերացնում, թե էլ ի՞նչ պետք է անեմ, ինչ չեն անում Վաշինգտոնում մեր օգտին աշխատող մարդիկ:

— Նրանք քեզ պես տեղահանված չեն եղել: Դու ականատեսն ես այն ամենի, ինչ տեղի է ունեցել Անատոլիայում: Քո հոդվածները...

— Կան շատ մարդիկ, որոնք նույնքան բանիմաց են և որոնք շատ երջանիկ կլինեն Ատլանտյան օվկիանոսից այն կողմ հայտնվել:

— Կոմիտեն այդ կարծիքին չէ:

Վարդանը կորցրեց համբերությունը:

— Այդ դեպքում քո կոմիտեն թող ինձ մոտ բերի իմ որդուն, և այն ժամանակ մենք կխոսենք այդ թեմայով:

Տիրանը կարմրեց և մեղավոր հայացք գցեց Մարոյի վրա: Ներողության փոխարեն նա ասաց.

— Դու իրավացի ես, Վարդան: Ես նույն ձևով կվարվեի: Ես խոսում էի լոկ որպես կոմիտեի վստահված անձ:

— Շատ լավ,— ասաց Վարդանը հանգստանալով:– Այդ դեպքում դու կկարողանաս ընկերներիդ համոզիչ բացատրել իմ մերժման պատճառները:

Մարոն իրեն թեթևացած զգաց:

— Էլի սուրճ ուզո՞ւմ եք,— հարցրեց նա սիրալիր տոնով:

Տիրանը ժողովի պատրվակով հրաժեշտ տվեց նրանց: Նա չէր ուզում երկարաձգել իր այցելությունը, քանի որ վախենում էր, որ խոսակցությունը կանցներ Թովմասի թեմային, իսկ ինքը չէր կիսում նրանց լավատեսությունը որդուն օրերից մի օր գտնելու հարցում: Այնքան հայ երեխաներ մահացել կամ ձուլվել էին մահմեդական ընտանիքների հետ և չէին արձագանքում ու չէին էլ արձագանքելու իրենց ուղղված կանչերին:

Արամը հանդիսավոր կերպով սեղմեց տանտերերի ձեռքերը: Սակայն աստիճանավանդակում, երբ Տիրանն ու Վարդանը ժամադրվում էին, նա ցածրաձայն, որպեսզի տղամարդիկ չլսեին, հարցրի Մարոյին.

— Տիկին... Իսկ «Վա-շինգ-տոն-ում» կովբոյներ կա՞ն:

— Մի քանի հոգի երևի կան,— պատասխանեց գվարճացած Մարոն։

Մեծի տեսք ընդունած Արամի հոգում երեխան շատ հեռու չէր թաքնված։

* * *

Փետրվար ամիսն ավարտվեց, և Կոստանդնուպոլսի պուրակներում ծառերը բողբոջեցին։ Մարոն տխրում էր, տեսնելով, թե ինչպես է այն զույգը, որ իրենք պետք է կազմեին Վարդանի հետ, վերածվում միմյանց հանդեպ հարգալից և հաճելի հարաբերություններ ունեցող մարդկանց ընկերակցության, սակայն որոնք ի վիճակի չէին միմյանց հետ հաղորդակցվել և բացել իրենց հոգու խորքում եղած զգացմունքները։ Մինչդեռ ժամանակին, ութ տարվա ամուսնությունից հետո նրանք անսպառ էին, և օր չէր անցնում, որ նրանք ժամերով չզրուցեին։ Մեկը մյուսին էր վստահում իր հոգսերը, ուրախությունները և երազանքները, որոնք դառնում էին ընդհանուր հոգսեր և ձեռքբերումներ։ Չհաշված այն փոխադարձաբար ասվող խոսքերը, հաճոյախոսությունները, որոնց միակ նպատակն էր ընդգծել մեկի նշանակությունը մյուսի համար։

Այդ ամենն անհայտացել էր, և Մարոն չէր պատկերացնում, թե երբ իրենք կկարողանային այդպիսի հարաբերություններ հաստատել։ Չափից ավելի չասված բաներ կային, որոնք խոչընդոտում էին իրական անկեղծության հայտնվելուն, և դատապարտում էին իրենց լինելու մակերեսային և քաղաքավարի, իսկ դա լռության քողարկված տարատեսակն էր։ Մարոն իրեն պատասխանատու էր զգում նման իրավիճակի համար։ Նրա գաղտնիքն օրեցօր ավելի էր ծանրանում, և նա չէր կարողանում դրանից ազատվել։ Իսկ այդ ընթացքում երևակայական զույգի հարաբերությունները խաթարվում էին։ Այդ իրավիճակում ամեն օր փոստով եկող բարոյալքող լուրերը նպաստում էին նրանց փոխադարձ ինքնամփոփմանը։ Երբ վերջին մանկատունը նրանց կհայտներ, որ լուր չուներ Թովմասի մասին, եթե այդ բանը պետք է տեղի ունենար, ապա նրանց միացնող վերջին կապը կխզվեր։

Չկարողանալով դիմանալ այդ վիճակին և հուսահատության վերջին աստիճանին հասնելով՝ Մարոն այցելեց Արփինե մորաքրոջը։ Կեսօր էր, երբ, Մարոյի տվյալներով, Լուսիկը տպարանում էր։

— Ես հանպատրաստից եմ եկել,— ներողություն խնդրեց նա։

— Ոչ այդքան, աղջիկս,— ասաց Արփինեն՝ վերցնելով Մարոյի վերարկուն — Ես սպասում էի քո այցին։

Մորաքույրը մայրական տոնով էր խոսում, այն տոնով, որով խոսում են կանայք մխիթարելու, սրտապնդելու և ներելու համար։ Իսկ Մարոն հենց դրա մասին էր երազում։ Արփինեն, որի հետեից Մարոն խոհանոց էր գնում, նրան հիշեցրեց իր մորը՝ Ազնիվ խանումին։ Սակայն եթե մազերի ճերմակությունը մի կողմ դրվեր, նրանք բոլորովին միմյանց

նման չէին, ոչ հասակով, ոչ քայլվածքով, ոչ էլ շարժուձևով։ Միայն ձայնն էր։

— Ջուրը եռում է։ Տեսնում ես՝ կանխազգում էի, ջուրը երկուսի համար եմ դրել։

Արփինեն թեյ պատրաստեց։ Չնայած Մարոն շատ կապված էր Լուսիկի հետ, սակայն երբեք չէր մտածի նրա հետ կիսվելու մասին։ Այդ խնդիրներից ի՞նչ կարող էր հասկանալ քսանին տարեկան անփորձ կինը, որը դեռևս փնտրում էր իր առաջին սերը։ Այդ խոստովանության համար պետք էր մի կին, որն ապրել էր տղամարդու հետ, որն իր զրկում պահել և կերակրել էր փոքր էակների, որոնք նրա համար ավելի թանկ էին, քան իր սեփական կյանքը։ Մայր։

— Մորաքույր...

— Սուս,– ասաց Արփինեն մատը շրթունքներին մոտեցնելով։— Ոչ այստեղ։ Ոչ էլ հյուրասենյակում կամ ճաշասենյակում։ Այս պատերը սովոր չեն։ Արի, վերցրու բաժակդ։

Նա Մարոյին տարավ ամուսնական ննջասենյակը և դուռը փակեց։

— Այստեղ մենք կարող ենք խոսել, պատերն ականջներ չունեն։

Վարագույրները մթնեցնում էին սենյակը, որից վարդի բնահյութի, սափրվելու օճառի, ճանդանի ու նավթալինի հոտ էր գափս։ Ոլորուն այուներով մեծ մահճակալի և պատի միջև ծվարած պահարանը, զարդասեղանը և մահճասեղանները ծանրաբեռնում էին սենյակը և նեղվածք էին ստեղծում։ Կանայք ստիպված եղան նստել մահճակալի եզրին՝ խաչով և սրբապատկերներով զարդարված պատի դիմաց։ Թեյի բաժակները մահճասեղանին դնելու համար Արփինեն ակնածանքով տեղաշարժեց ձիթենու տերևները, որոնք նա պահպանել էր Ծաղկազարդի տոնից։

Մարոն, որը մի քիչ առաջ խոհանոցում պատրաստ էր խոստովանության, հիմա չէր կարողանում արտաբերել այն նախադասությունը, որն ինքը նախապատրաստել էր վաղօրոք։ Գլուխը կախ նա նյարդայնացած ափերն էր իրար շփում։ Արփինեն իր ափով ծածկեց նրա ձեռքերը և սեղմեց Մարոյի մատները։ Քանի որ Մարոն ոչինչ չէր ասում, մորաքույրը շշնջաց.

— Վարդանի հետ հարաբերությունները չե՞ն կարգավորվում։ Նա չի՞ ներում։

— Նա չգիտի։

— Գուցե ավելի լավ կլիներ նրան ասել։ Նա խելացի և բարի մարդ է։

Մարոն չպատասխանեց։

Մորաքույրը խորը շունչ քաշեց և շշուկով հարցրեց.

— Դու սիրո՞ւմ ես այդ գավառապետին։

— Ոչ։

— Դու այլևս Վարդանին չե՞ս սիրում։

— Խնդիրը այդ չէ։

Արփինեն չկարողացավ թեթևության հոգոցը զսպել։ Սակայն ի՞նչն էր տանջում Մարոյին։ Զարմուհին չէր ասում, և Արփինեն նորից հարցրեց.

— Ինչ-որ բան, որ մենք չգիտե՞նք Թովմասի կապակցությամբ։

— Ոչ։

Վերցնելով բաժակները՝ Արփինեն մեկը Մարոյին տվեց։

— Թեյը սառչում է։

Նրանք խմեցին։ Արփինեն փորձում էր հանդիպել Մարոյի հայացքին, սակայն վերջինս փախցնում էր աչքերը։

— Ի՞նչը չի ստացվում Վարդանի հետ։ Նա փոխվե՞լ է։

— Ես եմ փոխվել։

— Մակայն, Մարո, ես ճանաչում եմ այն կնոջը, որը այցելում էր մեզ։ Լուսիկը ասում է, որ ինքը գտել է իր երբեմնի ընկերուհուն։

Նա մի կում թեյ խմեց և ավելացրեց.

— Վարդանը նույնպես չի փոխվել։ Բայց նաև ճիշտ է այն, որ երբ միասին եք՝ փոխված եք։ Ի՞նչն է ձեզ բաժանում։

— Լռությունը... լռությունը, մորաքույր։

— Լռությո՞ւնը,— հարցրեց Արփինեն զարմացած։— Լռությունն ինքնին ոչինչ է։ Այն կարող է դատարկ լինել և կարող է ինչ-որ բան թաքցնել։ Քոնը կարծես թե մեծ դժբախտություն է պարունակում։

Նա համարում էր, որ ինքը բավականաչափ հարցադրումներ էր արել և հիմա զարմուհին պետք է նախաձեռնություն ցուցաբերեր։

Մարոն վայր դրեց բաժակը և սևեռուն հայացքով նայեց պատին ամրացված փայտե խաչին։ Նրա աչքերը արցունքով լցվեցին։ Նա սեղմեց Արփինեի ազդրը և ասաց դողդոջուն ձայնով։

— Ես այդ գավառապետից երեխա եմ ունեցել, մորաքույր։

Բաժակը դոդաց Արփինեի ձեռքում։ Նա սարսափած ձայնով ասաց.

— Երեխա՞...

— Տղա, Նուրհան։

Այդ անունը տալով՝ Մարոն սկսեց հեկեկալ։ Նա գլուխը դրեց մորաքրոջ հակված ուսին, որը գրկեց նրան և հոնգուր–հոնգուր լացեց մի քանի րոպե։ Արփինեն հիմա ամեն ինչ հասկացավ՝ Մարոյի երբեմն դատարկ հայացքը, նրա բացակայող տեսքը, նրա ձայնում իրենից

անկախ հայտնվող տագնապը։ Ծեր կինը բացատրության կարիք չուներ և շատ լավ էր հասկանում այն ողբերգությունը, որ ապրում էր երիտասարդ կինը, և նրա մարմինն ու սիրտը արձագանքում էին նրա ցավին։ Նա շոյեց Մարոյի մազերը։

— Խեղճ փոքրիկ,— շշնջաց նա խուլ ձայնով,— խեղճ փոքրիկ։

— Ես նրան կորցրել եմ առհավետ։ Ի՞նչ է ուզում Աստված ինձնից։ Թող գնա ուրիշներով զբաղվի։

Նա նորից սկսեց լացել՝ կառչելով մորաքրոջ ձեռքից, որը չարձագանքեց սրբապիղծ բառերին։ Աստված պետք է որ ավելի խիստ բառեր լսած լիներ, և նա դրանք հաշվի չէր առնում, քանի որ նա սրտերն էր քննում։ Իսկ ի՞նչ սիրտ կարող էր տառապել այնքան, որքան մեկը մյուսից հետո երկու որդի կորցրած մոր սիրտը։

Արփինեն Մարոյին պառկեցրեց մահճակալին և մնաց կողքին շփելով մեջքը, ինչպես անում էր լացող երեխաների հետ։ Նա աղաչում էր Աստվածամորը, որպեսզի ուժ տար Մարոյին այս փորձությանը դիմանալու համար, և խնդրում էր նրա միջնորդությունը փոքր հրաշքի համար, որ այս վիրավոր կնոջը վերադարձվեին իր որդիները, գոնե ավագը։

Կամաց-կամաց Մարոն հանդարտվեց։ Վիշտը կիսելուց հետո Մարոյին թվաց այն թեթևացել էր։ Նա կողքի շրջվեց, արմունկին հենվեց և նայեց մորաքրոջը առանց մտահոգվելու իր տեսքի մասին։

— Նա հրեշտակ է, մորաքույր։ Զարմանալի է, բայց նա նման է Թովմասին։ Նույնքան ժպտադեմ է, նույն խոշոր և խելացի աչքերը։

— Քանի՞ տարեկան է։

— Երկուս ու կես։ Նա ավելի լավ է նկարում, քան վեց տարեկան երեխան։ Նա տաղանդ ունի։

Մարոն, երազկոտ տեսքով, նկարագրում էր որդուն և պատմում էր, թե որքան արագ էր նա զարգանում։ Արփինեն ուզում էր հարցեր տալ։ Ո՞վ էր արգելել Մարոյին նրան իր հետ վերցնել։ Արդյոք ոչ մի հնարավորություն չկա՞ր նրան տեսնելու։ Սակայն նա ոչինչ չասաց, իր զարմուհու վիշտը չուժգնացնելու համար։ Նուրհանին քնքշորեն հիշելու փաստն անգամ խոսում էր այն մասին, որ Մարոն պատրաստվում էր նրան սգալ։ Գուցե դա ավելի լավ էր, մտածում էր ծեր կինը, քանի որ նա չէր պատկերացնում, թե ինչպես կընդուներ Վարդանն այդ երեխային, որը Մարոն ունեցել էր այլ տղամարդուց։

— Դուք մայր եք ինձ համար, Արփինե մորաքույր։ Ինչպե՞ս կարող եմ ես իմ երախտագիտությունն արտահայտել։

— Ինձ կրկին վստահելով անհրաժեշտության դեպքում։ Եվ բացի դրանից, եթե դու ցանկանում ես, ապա զգացված կլինեմ, եթե դու երբեմն ինձ մայրիկ անվանես։

— Մայրիկ,— կրկնեց Մարոն՝ համբույրներով ծածկելով մորաքրոջ այտերն ու ճակատը։

Վերադառնալով հյուրասենյակ, Մարոն զգաց, որ ազատվել էր ծանր բեռից։ Երբ իր տանջանքն անտանելի դառնար, նա հնարավորություն կունենար գալ և վիշտը կիսել մորաքրոջ հետ։ Նրանց զրույցն ավելի զուսպ դարձավ։

— Մարո, քո տեղը փնեի, Վարդանին կասեի։ Ինձ թվում է, որ դրանից հետո ձեր հարաբերություններն ավելի պարզ կդառնային։

Մարոն վախեցած տեսք ուներ.

— Ես վախենում եմ նրան վիրավորել։ Նա տղամարդ է, իսկ դուք գիտեք, թե որքան բծախնդիր են տղամարդիկ պատվի հարցերում։ Ես երեխա եմ պարգեել ուրիշ տղամարդու, իսկ իր երեխային կորցրել եմ։

— Դու Թովմասին չես կորցրել,— հակաճառեց Արփինեն։— Դու պետք է այդ միտքը գլխից դանես։

Մարոյի դեմքը մռայլվեց.

— Հեշտ չէ։

Արփինեն ձեռքերը դրեց նրա ուսերին և ջերմորեն նրան խրատեց.

— Այս կյանքում ոչինչ հեշտ չէ, աղջիկս։ Այսօր քո կյանքում միայն աղետներ ես տեսնում, մտածիր, որ դա գալիք երջանկության սերմնացանն է։ Աստված գիտի, թե ինչ է անում։ Իսկ դու պետք է արժանի լինես նրա պարգևներին։ Դու պետք է անտրտունջ դիմանաս մինչ այն պահը, երբ նա կպարգևի քեզ վերապահված ընծաները։ Այդպես էր ապրում քո մայրը՝ Ազնիվը, և այդպես եմ սովորել ապրել ես։ Դա միակ ձևն է։

Մարոն կուզենար ունենալ այդ կույր հավատը։ Այդպես մտածելու դեպքում նույնիսկ մահը դադարում էր սարսափելի թվալ։ Այդ հավատի շնորհիվ էր, որ Ազնիվ խանումը փակել էր աչքերն առանց վախենալու, խաղաղությամբ։ Մարոն պետք է բավարարվեր իր փոքր հավատով, որն Աստծուն հնարավորություն էր տալիս սխալվելու։ Իսկ դժվարությունները հաղթահարելու համար ինքը կարիք կունենար դիմելու իր բանականությանը։

* * *

Մեսրոպյանների հյուրասենյակում նստած Նուբար Պալյանը, ինչպես միշտ, երբ լսարան էր ունենում, անսպառ էր։ Նա ասացողի բնական տաղանդ ուներ և գիտեր ունկնդրի ուշադրությունը գրավելու բոլոր հնարքները։ Ցանկացած ամենաննշան միջադեպը նա օգտագործում էր որպես հենակետ մանրամասներով և շեղումներով հարուստ պատմություն կերտելու համար, և ամենաառօրեական

իրադարձությունը թրթռուն պատմություն էր դառնում նրա կատարմամբ։ Նա երբեք չէր հեռացել Աֆիոնից, բացառությամբ Կոստանդնուպոլիս կատարվող կարճատև այցելությունները, և Երուսաղեմում նրա անցկացրած աքսորի չորս տարիները նյութ էին տվել իսկապես էպիկական պատմությունների համար։

Այդ կիրակի, Զատկի տոնի կապակցությամբ, նրանք բոլորը եկել էին ճաշելու Մեսրոպյանների տանը և բոլորը լսում էին նրա պատմությունները։ Կինը՝ Տիրուհին, որը նստած էր նրա կողքին, երբեմն միջամտում էր, լրացնելու համար նրա պատմությունը, պնդում էր որևէ մանրամասնի վրա, որը հետագայում պետք է դերակատարություն ունենար։ Այդ դեպքերում Նուբարը հազում էր՝ նրան կարգի հրավիրելով, և նա իսկույն լռում էր մեղավոր տեսքով։ Սակայն նա չէր կարողանում իրեն զսպել և քիչ անց կրկին միջամտում էր։

Տիրուհին տարիների հետ գիրացել էր, և նրա վարդագույն շրջազգեստը, չնայած իր լայնությանը, չէր թաքցնում նրա գիրուկ մարմինը, կարճ թևքերը բաց էին թողնում նրա թմբլիկ թևերը, իսկ ճարպոտ այտերը էլ ավելի կարճ և կլորիկ էին դարձնում նրա քթիկը։ Նրա գիրությունը ստվեր էր գցում աքսորում նրանց կրած զրկանքների և մնացած հայերի հետ հաղթահարած դժվարությունների մասին պատմող շարադրանքի վրա, հատկապես, որ Նուբարը նույնպես գիրացել էր։ Նրա երբեմնի զարգացած մկանները տեղը զիջել էին ճարպին, և նա կարծես կարճացած լիներ։ Նրա խիտ մազերը, որոնցով ժամանակին նա շատ էր հպարտանում, նոսրացել էին և գլխին կուլակ հիշեցնող ճաղատ էր հայտնվել։ Այդուհանդերձ, նրա շարժումները ճկուն էին, ձայնը դյութիչ, իսկ հայացքը՝ ջերմ։

Վարդանը հիացմունքով հայտնաբերել էր, որ եղբայրը չէր կորցրել կենսախնդությունը և ոգեշնչումը, որոնք բնորոշում էին նրան ժամանակին։ Այդպիսին էր Նուբարը։ Նույնիսկ դժվարությունների տակ կքած, երբ ուրիշները թևաթափ կլինեին, նա նորից սկսում էր երազել, հնարքներ էր փնտրում իրավիճակից դուրս գալու և առանց իրեն խնայելու գործի էր լծվում նպատակին հասնելու համար։

Երբ ամուսինը նկարագրեց այն խարխուլ սենյակը, ուր նրանք ապրել էին Երուսաղեմում, Տիրուհին ասաց.

— Բոլոր մարդկանց բախտ չի վիճակվել պատերազմի տարիները պալատում անցկացնելու...

Այս անգամ Նուբարի հազոցը ուղեկցվեց զայրացած հայացքով։ Մեսրոպն իր դժգոհությունն արտահայտեց.

— Զատկի տոնը սիրո տոն է։

Մի պահ բոլորն իրենց անհարմար զգացին։ Արփինեն ոտքի կանգնեց և Տիրուհուն խնդրեց իրեն հետևել.

— Գնանք, ցույց տամ ներկած ձվերը։

Իր մորաքրոջ տիրական ձայնից Տիրուհին հասկացավ, որ չափն անց էր կացրել և որ ներողություն խնդրելն է՛լ ավելի կխորացներ իր աննրբանկատությունը։ Ուստի դուրս եկավ սենյակից։ Մարոն անվրդով էր։ Տիրուհու հակակրանքը նրա համար նորություն չէր։ Պալյանների ընտանիքում Մարոյի հայտնվելուն պես, Տիրուհին նրան ընկալել էր որպես ախոյան, և նրա խանդն իր գագաթնակետին էր հասել Թովմասի ծնվելու հետ, քանի որ ինքը, կարծես թե, դատապարտված էր ամլության։ Իսկ այսօր, երբ նրա դեմքն ու մարմինը կրում էին անցած ժամանակի հետքերը, նա տեսնում էր, որ Մարոն մնացել էր գեղեցիկ ու նրբագեղ։

— Խմիչքը բեր,— խնդրեց Մեսրոպը դստերը։— Մենք կխմենք Նուբարի ու Տիրուհու վերադարձի կապակցությամբ։

Նա ուզում էր միջադեպը հարթել։ Նրա համար Զատկի այս տոնն առանձնահատուկ նշանակություն ուներ՝ խորհրդանշում էր հայ ժողովրդի չարչարանքների վերջը և Հայաստանի հարությունը։ Միակ բանը, որ խաթարում էր նրա տոնական տրամադրությունը, ավագ որդու՝ Պարգևի, որը չէր կարողացել արձակուրդ ստանալ Ֆրանսիական բանակից, և Թովմասի բացակայությունն էր, որից դարձյալ նորություններ չկային։ Սակայն դա չէր խանգարում Մեսրոպին փառք տալ Աստծուն, որ մնացածները ներկա էին և համեղ ուտեստներ էին ճաշակում քառասնօրյա պահքից հետո։

Նուբարը սեղմեց Վարդանի ուսը և գրգռված ծիծաղեց։ Նախորդ գիշերը Պաղեստինից ֆրանսիական նավով ժամանելով, նա դեռևս ցնցված էր իրենց հանդիպումից գրեթե դատարկ նավամատույցին։ Չնայած հոգնածությանը՝ եղբայրները զրուցել էին մինչև լուսաբաց։ Նրանց սերը նույնքան վառ էր, չնայած տարիների բաժանմանը, և նոր, ավելի ամուր կամուրջներ գցելու համար նրանք ոգեկոչել էին իրենց ընդհանուր հիշողությունները, հետաձգելով ապագային վերաբերող հարցերը։

Տիրուհու պատճառով տեղի ունեցած միջադեպը կտրեց Նուբարի պատմության թելը, և սեղանի շուրջը առանձին խոսակցություններ սկսվեցին Մեսրոպի և Արամի, Մարոյի ու Տիրանի միջև։ Քեռին խրատում էր Արամին, որպեսզի նա ավելի կանոնավոր աշխատեր տպարանում, ակնարկելով, որ մի օր նա կարող էր դառնալ դրա տերը կամ գոնե կառավարիչը։ Արամը չէր ուզում հիասթափեցնել Մեսրոպին, որն այդքան բարյացակամ էր իրեն ընդունել, սակայն նա չէր ցանկանում իր օրերն ավարտել արհեստանոցի չորս պատերի մեջ։ Հայաստանում նրան արկածներ և ավելի ազնիվ աշխատանք էր սպասում, ինչպես պնդում էր Տիրանը։

Մարոն Տիրանի հետ խոսում էր այն աշխատանքի մասին, որ ինքճ անում էր մանկատանը, իսկ վերջինս հուզմունքով լսում էր նրան։ Այնթապ առաքելությամբ մեկնած մի ընկերոջ միջոցով նա իմացել էր, որ տեղի գավառապետը երեխա էր ունեցել մի հայուհուց։ Նա պարզորոշ հասկանում էր, որ խոսքը Մարոյի մասին էր։ Այս փաստը, որը նա ոչ

մեկին չէր բացահայտել, նրա համար հասկանալի էր դարձրել Վարդանի և նրա կնոջ դժվարությունները, նրան մտերմացրել էր եղբոր կնոջ հետ, և նա հասկանում էր նրա հոգեվիճակը։

Կորցնելով իր լսարանը՝ Նուբարը դարձավ դեպի Վարդանը.

— Դերվի՛շ,– բացականչեց նա զվարճացած։— Դա քեզ հե՞տ է պատահել։ Ես շատ անհանգիստ էի քեզ համար, սակայն հոգումս հնչում էր մի թույլ ձայն, որն ասում էր. նրանք նրա հախից հեշտ չեն գա, նա ճարպիկ է։ Եվ ես իրավացի էի։

Նա նորից ծիծաղեց, հետո նրա հոնքերի միջև մի կնճիռ հայտնվեց, և նա լրջացավ։

— Ուրեմն դու տեսե՞լ ես մեր հողերը։

Զնայած խոսակցությունների աղմուկին, այդ նախադասությունը գրավեց բոլորի ուշադրությունը։ Լսվում էր նույնիսկ ճանճի բզզոցը և Վարդանի պատասխանը որպես դատավճիռ հնչեց.

— Դաշտերի երեք քառորդը խոպանի է վերածվել, ոռոգման համակարգը խցանված է ավազով։ Պլանտացիան կարգի բերելու համար ահռելի աշխատանքներ պետք է իրականացվեն։

— Ինչո՞ւ ես անվստահ ասում դա, Վարդան,— հարցրեց Մեսրոպը։

— Որովհետև ոմն էրկեմ էֆենդի տիրացել է դրան։ Իսկ ես համոզված չեմ, որ կառավարությունը կցանկանա նրան տեղահան անել։

Մեսրոպը նկատեց, որ Նուբարը համամիտ էր եղբոր հետ և գլխով էր անում։ Նա վրդովվեց.

— Ոչ։ Այդ սեփականությունը դուք ստացել եք ձեր հորից և այն պատկանել է ձեր ընտանիքի բազմաթիվ սերունդների։ Նրանք չեն կարող ձեզնից խլել այն։

— Դա արդեն տեղի է ունեցել,— ասաց Նուբարը փիլիսոփայական տոնով։— Հարյուր հազարավոր ագարակներ, առևտրական ձեռնարկություններ, տներ իբր լքվել են հայերի կողմից, իսկ պաշտոնյաները յուրացրել են դրանք։ Ես համամիտ եմ Վարդանի հետ և չեմ պատկերացնում, որ օսմանյան կառավարությունը կցանկանա քշել այդ մարդկանց։

Այդ դիտողությունը պարտվողական համարելով, հիսաթափված Մեսրոպը դարձավ Տիրանին և հայացքով նրա կարծիքը հայցեց։

— Կարծում եմ,— պատասխանեց որդին,— որ իմ քեռորդիները սթափ են մտածում։ Կասկածից վեր է, որ սուլթանի կառավարության համար ինքնասպանության պես բան կլիներ իր դեմ հանել իրեն սատարող ազգաբնակչության մի մասը։

Մեսրոպը հրաժարվում էր ընդունել այն, ինչ մնացածներին ակնհայտ էր թվում.

— Իսկ այդ հանձնաժողովը, որը քննում է հայերից բռնագրավված ունեցվածքի վերադարձի հարցը, գոյություն ունի՞, թե ոչ։

— Աշխատանքն առաջ չի գնում,— ասաց Տիրանը ծամածռվելով։— Լավագույն դեպքում կարելի է ակնկալել դրամական փոխհատուցում հողի և անշարժ գույքի կորստի համար։

Լուսիկն ու Տիրուհին, բաժակներով սկուտեղները ձեռքին, անշարժացան դռան մեջ։ Վշտացած Մեսրոպը դարձավ Վարդանին.

— Դու ոչինչ չե՞ս անելու, որպեսզի քեզ վերադարձնեն Սվասի տունդ։

— Թող իրենց մնա,— բացականչեց Մարոն։— Մենք երբեք այնտեղ չենք վերադառնա։

Նա իսկույն զղջաց, որ պատասխանեց ամուսնու փոխարեն և, կարմրելով, նրան նայեց։ Վարդանը նրան շարժումով հանգստացրեց։

— Ես Մարոյի հետ համաձայն եմ։

Ոգևորվելով իր տագրոջ դիրքորոշումից՝ Տիրուհին մեկնաբանեց.

— Մարոն իրավացի է։ Մենք նույնպես չենք ուզում Աֆիոն վերադառնալ, այդպես չէ՞, Նուբար։

Բարկանալով, որ կինն այդպես ուղղակիորեն և անպատեհ պահի բացահայտեց իրենց մտադրությունները, Տիրանը մազերը հարդարեց և հազաց։

— Դա ճի՞շտ է,- հարցրեց Մեսրոպը, որը Նուբարի շփոթված տեսքից ամեն ինչ կռահեց։

Նուբարը ձեռքով լայն շարժում արեց և այն սրտին դրեց.

— Դուք ինձ ճանաչում եք։ Ես այն մարդը չեմ, որը նահանջում է հենց առաջին խոչընդոտին հանդիպելիս։ Սակայն ես հորից սովորել եմ նաև, խաղաղություն նրա հոգուն, որ պետք չէ համառել անհույս գործի դեպքում։

Մեսրոպը մոռացել էր Նուբարի այդ շնորհքը՝ պատասխանել առանց ոչինչ ասելու։ Նա պնդեց.

— Ի՞նչ ես անելու։

— Աշխատելու եմ լավ գումար ստանալ մեր հողերի դիմաց։ Վարդանը համաձայն է ինձ հետ։

Զբավարարվելով՝ քեռին շարունակեց պնդել.

— Իսկ հետո՞։

Նուբարը գլուխը տմբտմբացրեց և խուսափողական պատասխան տվեց.

— Դե....

Եվ նորից Տիրուհին չկարողացավ իրեն զսպել և փրփրեց.

— Գնալու ենք Միացյալ Նահանգներ: Սենք այլևս չենք կարողանա ապրել այս երկրում: Բռնությունները կարող են վերսկսվել ցանկացած ժամանակ: 1895, 1915, սերունդը մեկ: Չհաշված տեղական ջարդերը: Ո՛չ: Մենք ուզում ենք մեր օրերն ավարտել երջանիկ, մի տեղ, ուր ամեն երեկո պետք չէ հարցնել, թե արդյոք առավոտյան երկինքը չի՞ փլվելու գլխիդ:

Ավանդապահ փնելով՝ Մեսրոպը տանել չէր կարողանում այն ազատությունը, որը ձեռք էին բերել նոր սերնդի կանայք, միջամտելով տղամարդկանց խոսակցությանը: Նա մատը տնկեց Նուբարի վրա, իսկ Տիրուհուն նայեց խիստ հայացքով.

— Ես Նուբարին եմ դիմում:

Նեղանալով՝ Տիրուհին մեջքը նրան արեց և սկսեց մատուցել խմիչքը:

Վարդանը, նույնքան զարմացած, որքան քեռին, նայեց Նուբարին: Նուբարը հազաց: Ի՞նչ կարող էր նա ավելացնել կնոջ խոսքերին: Տիրուհին ամփոփել էր իր միտքը, բառացիորեն կրկնելով իր որոշ նախադասությունները: Քեռին գուցե ավելի լա՞վ հասկանար նյութական դրդապատճառները:

— Այնտեղ շատ հնարավորություններ կան ձեռներեց մարդու համար: Ես մտածում եմ ներմուծումով և արտահանումով զբաղվել: Պարգևը շատ կապեր ունի Նյու Յորքում, ես կապեր եմ հաստատել Երուսաղեմում, իսկ մենք միասին...

Քեռին նրան ընդհատեց.

— Պարգև՞ը: Նա ի՞նչ կապ ունի:

Իր ծրագրերով ոգևորված Նուբարը չափից ավելի էր ասել: Քանի նա պատասխան էր փնտրում քեռուն հանգստացնելու համար, վերջինս մտահոգ շարունակեց.

— Պարգևը մտադի՞ր է Նյու Յորք վերադառնալ: Նա քեզ ասե՞լ է:

Նուբարը չխոստովանեց, որ համագործակցության այդ ծրագրի կապակցությամբ նրանք քեռորդու հետ նամակներ էին փոխանակել:

— Ոչ, չի ասել: Ես ենթադրում էի, որ նա կարող էր վերադառնալ:

Այդ բացատրությունը չշփոթեցրեց Մեսրոպին, և առավոտից նրան տիրած խանդավառությունն անհայտացավ: Նա ողջ սրտով հուսացել էր, որ իր ավագ որդին կվերադառնար Կոստանդնուպոլիս, քանի որ չէր կարող այլևս Պալյանների ներկայացուցիչը լինել Նյու Յորքում ափիոնի վաճառքի գործում: Իր երկու որդիները լքելու էին իրեն, և այս ընտանեկան ճաշը կորցնում էր իմաստը: Ի՞նչ տեսք է նա ունենալու, երբ կեսօրից հետո իր ծառայողներն ու բարեկամները գային զատկական ավանդական այցելությամբ: Նա դարձավ դեպի դուռը՝ փնտրելով կնոջ հայացքը: Լսելով ամանեղենի աղմուկը՝ նա հասկացավ, որ նա

ճաշասենյակում էր։

— Գնամ տեսնեմ սեղանը պատրաստ է, թե ոչ,— ասաց նա դուրս գալով սենյակից։ Նա գնաց Արփինեի մոտ, որպեսզի նա իրեն մխիթարեր։

Տիրուհին նստեց ամուսնու կողքին։ Քեռու անվստահ ձայնը նրան զարմացրել էր։

— Ի՞նչ պատահեց նրան,— հարցրեց նա։— Նա պետք է որ ընտելացած լիներ, որ Պարգևը արտասահմանում է ապրում։

Տիրանը երկար հոգոց հանեց և բացատրեց.

— Իմ Հայաստան գնալը նրան շատ է վշտացնում։ Նա մխիթարվում էր, կարծելով, որ Պարգևը վերադառնալու էր։

Նուբարը միշտ շատ շուտ էր լուծումներ գտնում։

— Ինչո՞ւ հորդ ու մորդ հետդ Հայաստան չես տանում։

— Ես նրանց առաջարկել եմ ինձ հետ Հայաստան գնալ։ Հայրս պատասխանեց, որ ծեր ծառերի արմատները նոր տեղում չեն կպչում։ Նրանց պետք է հասկանալ, նրանք այստեղ են ծնվել։ Նրանց համար Հայաստանը առասպելական երկիր է և գտնվում է աշխարհի ծայրին։

— Խուսափենք մեկնումների մասին խոսակցություններից գոնե այսօր, քանի որ Մեսրոպ քեռին և մորաքույրը տոնում են ժամանումները,— ասաց Վարդանը։

Համոզվելով, որ քեռին չէր վերադառնում հյուրասենյակ, նա ցածրաձայն հարցրեց եղբորը.

— Դու կայացրե՞լ ես վերջնական որոշումը, Նուբար։

— Այո։

— Ե՞րբ։

— Սկզբում կփորձեմ մեր հողերի համար փոխհատուցում ստանալ։ Ես ենթադրում եմ, որ մի քանի ամիս կտևի։ Իսկ դո՞ւ, Վարդան։ Դու ինձ ոչինչ չես ասել ապագայի քո ծրագրերի մասին։

Վարդանի և Մարոյի հայացքները հանդիպեցին։ Մարոյի հայացքում կարծես տագնապ լիներ։

— Այս պահին մենք միայն մեկ նպատակ ունենք՝ գտնել Թովմասին։ Հետո...

Նա անորոշ շարժում արեց, քանի որ Մեսրոպը գալիս էր նրանց սեղանի մոտ հրավիրելու։ Նա նորից հանդարտ էր և սովորական աղոթքից հետո ավելացրեց դողդոջուն ձայնով.

— Տեր, ամենակարող Աստված, քո զավակները, որ հավաքվել են այստեղ քո հարության օրը, աղերսում են մեզ վերադարձնել մեր

զավակին՝ Թովմաս Պալյանին, որը դաստիարակվել է քո սուրբ անվան պաշտամունքի մեջ։ Ամեն։

Բոլորը խաչակնքվեցին և անշարժ մնացին։ Վարդանը նստելու ազդանշան տվեց՝ բարձրացնելով իր բաժակը.

— Արփինե մորաքրոջ և Մեսրոպ քեռու կենացը։

Մնացածները կրկնեցին կենացը։ Արամը, որը մինչ այդ լուռ էր և մի քիչ շատ էր խմել, մի քանի բառ ասաց խուլ ձայնով.

— Ձեր բոլորի կենացը։ Դուք դարձել եք իմ միակ ընտանիքը։

Արփինեն բռնեց նրա ձեռքը։

— Դու մեր որդին ես, Արամ... Եվ ես քեզ կասեմ այն, ինչ միշտ ասել եմ իմ որդիներին, շատ մի խմիր։

— Ի վերջո այսօր տոն է,— ասաց Մեսրոպը։— Թույլ տուր, որ մի քիչ խմի։

Մեսրոպի լավ տրամադրությունը առերես էր, այդուհանդերձ զատկական այս ճաշկերույթն այդ տանը վերջին ժամանակները տեղի ունեցածներից ամենաաշխույժն էր։

Հյուրերը միաժամանակ մի քանի խոսակցություն էին վարում, որոնք խաչաձևվում էին, մի պահ ընդհատում էին միմյանց, իսկ հետո շարունակվում էին՝ փոխելով նյութը։ Մարոն չէր խոսում և գրեթե չէր լսում։ Նա մտածում էր Նուբարի մեկնելու վճռի մասին և հատկապես Տիրուհու խոսքերի մասին, որոնք այդքան լավ էին բնորոշում իր սեփական վախը, որ հաստատված դեռևս շատ փուխր անդորրը կարող էր նորից փլվել։ Երեկ, ինչպես շատ ուրիշ անգամներ, ինքն արթնացել էր գիշերվա կեսին այն զգացողությունից, որ ոստիկանները ջարդում էին տան դուռը՝ նորից տեղահանության քարավաններն իրենց ուղարկելու համար։ Եվ ամեն ինչ նորից էր սկսվելու. Վարդանի ձերբակալությունը, մոր մահը, Ռըզա բեյը, Թովմասի անհետանալը, Նուրհանի կորուստը։ Վերականգնվելո՞ւ էր արդյոք մի օր իր հոգու անդորրը։ Փլվելու պատրաստ փուխր աշխարհի մեջ էր մտնում նաև իրենց կազմած զույգը, քանի որ Վարդանին և իրեն դեռևս չէր հաջողվում իսկապես վերականգնել կապը։ Մարոյի մեղքով Վարդանը հրաժարվում էր նրա սիրտը նորից նվաճելու փորձերից, խորասուզվում էր իր աշխատանքի ու հոդվածների մեջ և կամաց-կամաց հեռանում էր Մարոյից։ Եթե այսպես շարունակեին, ապա կնմանվեին այն զույգերին, ուր սերը փոխարինվում էր սովորությամբ, իսկ ջերմությանը փոխարինելու էր գալիս անտարբերությունը։

Մարոն բարձրացրեց աչքերը։ Վարդանն իրեն էր նայում, և դժգոհ էր, որ Մարոն նորից բացակա էր։ Մարոն շրջվեց։ Ինչպե՞ս կարող էր Վարդանին բացատրել իր հոգեվիճակը։

* * *

Մի օր, երբ Վարդանն ու Մարոն տուն վերադարձան որբանոցից, ուր նա մտել էր Մարոյին վերցնելու համար, նրանք տեսան, որ իրենց դռան կողպեքը ջարդված էր։

— Մնա այստեղ,— ասաց Վարդանը Մարոյին, որը գունատվել էր։

Նա մտավ բնակարան համոզվելու համար, որ անկոչ հյուրերը արդեն գնացել էին։ Նրանց ննջարանի զգեստապահարանը շրջված էր մահճակալի վրա, կոմոդների դարակների պարունակությունը գետնին էր։ Խոհանոցի հատակը ծածկված էր կոտրած ամանեղենի բեկորներով, ճաշասենյակի աթոռները կոտրված էին։ Մարոն Վարդանին միացավ հյուրասենյակում, որի բազմոցի երեսը պատռած էր դանակի հարվածներով, իսկ վարագույրները բզկտված էին։ Աչքերին չհավատալով՝ Մարոն սենյակին նայեց, նկատեց գրասեղանը, որի վրայից անհետացել էին Վարդանի թղթերն ու գրքերը, և հուսահատ պատին հենվեց։ Վարդանը նրան մոտեցավ։

— Ոչինչ,— ասաց նա,— ես ամեն ինչ տեղը կդնեմ։

Մարոն հեգնանքով ծիծաղեց և բարկացած բացականչեց.

— Ոչի՛նչ։ Դու համարում ես, որ սա չնչի՞ն բան է։ Մեր դուռը ջարդում են, տունը ավերակի են վերածում և դա ոչի՞նչ է։ Իսկ եթե ես այստեղ լինեի՞։

— Բայց դու այստեղ չէիր,— ասաց նա սառը տոնով։

— Իսկ մյուս անգա՞մ։

Վարդանը պատասխան չգտավ։

— Նրանք կվերադառնան, Վարդան,— շարունակեց նա՝ ցույց տալով սեղանը։— Քո հոդվածների պատճառով։ Նրանք գիշերով կգան քեզ ձերբակալելու, ինչպես Սվասում։

Վարդանը փորձեց հնարավորինս նվազեցնել իրեն սպառնացող վտանգը, սակայն չէր հասցրել բերանը բացել, երբ Մարոն սկսեց հեկեկալ։

Վարդանը գրկեց նրան և ուժգին սեղմեց իրեն՝ հանգստացնելու համար։ Եվ Մարոն, կառչելով նրան, անձնատուր եղավ արցունքներին։ Երբ արցունքների տարափը սպառվեց, Վարդանը շշնջաց.

— Ոչնչից մի վախեցիր, ես այստեղ եմ։

Գլուխը նրա ուսից չվերցնելով՝ Մարոն ասաց ընդհատվող ձայնով.

— Դու այնքան հաճախ ես բացակայում։ Մեկ՝ ժողով, մեկ՝ կոմիտե։ Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ դու խուսափում ես ինձնից։

— Միգուցե...— ասաց նա հառաչելով։— Սակայն երբ ես այստեղ եմ

լինում, դու ես բացակայում։ Դու այստեղ ես և միևնույն ժամանակ ներկա չես, դատարկ հայացքով, դեմքդ այլայլված տառապանքից։ Ամեն օր ես տեսնում եմ քո կարմրած աչքերը։ Այսպես այլևս շարունակել հնարավոր չէ, Մարո։

Նա խորը շունչ քաշեց և ավելացրեց.

— Ասա ինձ անկեղծորեն, ես սխա՞լ եմ կատարել՝ քեզ Այնթապից այստեղ բերելով։

Զարմանալով՝ Մարոն գլուխը բարձրացրեց Վարդանի ուսից նրա աչքերի մեջ նայելու համար և բացականչեց.

— Վարդան, դու շատ լավ գիտես, որ ոչ։

— Այդ դեպքում, որտե՞ղ ես դու մտովի դեգերում, եթե ոչ Այնթապում։

Չկարողանալով հերքել այդ պնդումը՝ Մարոն գունատվեց։ Վարդանը շարունակեց խուլ ձայնով.

— Ո՞ւմ համար ես ողբում, եթե ոչ Ռըզա բեյի համար։

— Դու սխալվում ես,— պաշտպանվեց Մարոն։

Տեսնելով Մարոյի բաց դեմքը՝ Վարդանը շփոթվեց։ Նա հավատում էր Մարոյին, և դա ավելի էր խորացնում նրա շփոթմունքը։ Երբ նա լացում էր Թովմասի համար, ապա դա լինում էր իր ներկայությամբ։ Եվ դա փնում էր հատկապես այն դեպքերում, երբ իրենք նոր բացասական պատասխաններ էին ստանում։ Եվ ամեն անգամ Վարդանին հաջողվում էր նրան հույս ներշնչել։ Ուստի ո՞րն էր այն վշտի պատճառը, որը գրեթե անդադար տանջում էր Մարոյին։

Վարդանը բացատրության էր սպասում։ Մարոն թուքը կուլ տվեց և շարունակեց նայել Վարդանի աչքերին։ Նրան հաջողվել էր հաղթահարել ամոթը, և նա կարծես մարտահրավեր նետեր։ Ամեն ինչ այդ պահին պետք է որոշվեր։

— Ռըզա բեյն ինձ պարտադրեց իրեն սիրել... և պահեր էին փնում, որ ինձ թվում էր, թե ես սիրում էի նրան։ Բայց դա այդպես չէր։ Ես նրա պարտապանն էի, ես նրան պարտական էի Թովմասի և իմ կյանքի համար։

Վարդանը, բաբախող սրտով լսում էր, թե ինչպես է նա առաջին անգամ խոսում իր կյանքի այդ միջադեպի մասին։ Նա բռնեց նրա ձեռքը.

— Դու չպետք է արդարանաս, Մարո։ Ջնջենք անցյալը։

— Նախ, պետք է դրա մասին խոսել։ Քանի դեռ մենք հայացք ենք թեքում այդ տարիներից, դրանք որպես պատվար կանգնելու են մեր միջև։

Վարդանը լարված շրթունքներն էր կծում։ Նա գլխով այո արեց։

— Այդ մարդն ինձ փրկեց, հետո ես ինձ նրա գերուհին էի զգում,

հետո...

— Մանրամասների կարիքը չկա,— ասաց Վարդանը՝ չցանկանալով, որ նա ավելին ասեր։

— Ոչ, ես պետք է ամեն ինչ ասեմ, ես եղել եմ նրա սիրուհին, ես ապրել եմ նրա կանանց հետ չորս տարի շարունակ։

Վարդանն անշարժ էր։ Մարոն շարունակեց.

— Սակայն ես երբեք չեմ դադարել քեզ սիրել։ Օր չի եղել, որ ես քեզ չհիշեի, չաղոթեի քեզ համար, և ես միշտ ինձ համարել եմ քո կինը։

Վարդանի աչքերն արցունքներով լցվեցին, և նրա ձայնը դողաց.

— Այդ խոսքերն ինձ հաճույք են պատճառում, Մարո։ Իմացիր, որ ես երբեք չեմ դատապարտել քեզ։ Դու արել ես այն, ինչ պետք էր վերապրելու համար... ինձ մոտ վերադառնալու համար։

Նա տատանվեց խոստովանելուց առաջ.

— Ես էլ, այլ կնոջ եմ սիրել։

— Ես գիտեմ,— ասաց Մարոն՝ ուսերը թոթվելով։

— Դու գիտեի՞ր,— զարմացավ Վարդանը։— Իմացիր, որ շարունակում էի քեզ սիրել և ես թողեցի նրա ապահով տունը քեզ փնտրելու համար։

Մարոյի շրթունքներին ժպիտ երևաց։ Հուզմունքից դալալով՝ նրանք երկար իրար էին նայում։ Հետո Վարդանի դեմքը մռայլվեց։

— Այդ դեպքում ես չեմ կարող հասկանալ քեզ տանջող վշտի պատճառը։

Մարոն շիկնեց։ Վարդանը զգաց, թե ինչպես քրտնեց նրա ձեռքը, և նա մեղմորեն պնդեց.

— Էլ ի՞նչ կա։

Ազատ ձեռքով Մարոն երկու անգամ հարվածեց իր կրծքին.

— Թե իմանայիր, ինչպես եմ ես տառապում։ Թե իմանայիր, ոնց եմ տանջվում։ Օ՜, Վարդան, ես տանջվու՜մ եմ, տանջվու՜մ։

Նա շունչ քաշեց և ողբերգական ձայնով գրեթե բղավեց.

— Ես նրանից որդի եմ ունեցել։ Նուրհա՜ն... Նուրհա՜ն։

Երեխայի անունը նա հառաչանքի պես արտաբերեց, կարծես վիրավոր կենդանու ճիչ լիներ։ Վարդանը նրան գրկեց։ Մարոն դողում էր, սակայն պատրաստ էր պաշտպանության։

Վարդանն առաջին պահին թեթևություն զգաց, ընդամենը դա էր։ Հետո հանկարծ հասկացավ իրավիճակը և ամաչեց շաբաթներ իրեն տանջող խանդի համար։ Մարոյին ստիպել էին լքել այդ որդուն, որին նա պետք է որ Թովմասի չափ սիրեր։ Նա կորցրել էր նաև երկրորդ

երեխային։ Առանց ցանկանալու, նա հաղորդակից եղավ Մարոյի վշտին այդ երեխայի համար, որին չէր ճանաչում, ուրիշ տղամարդու երեխայի համար նա զգաց գրեթե նույն վիշտը, որ ապրել էր Թովմասի կորստյան մասին լուրը ստանալիս։ Նա Մարոյին ավելի պինդ սեղմեց իրեն։

— Իմ խեղճ սիրելիս... խեղճ սիրելիս։

Ցավակցական այդ խոսքերը ազդանշան եղան Մարոյի համար, որն անձնատուր եղավ իր վշտին։ Այնթապից հեռանալուց ի վեր նրան ուղեկցող լարումն անցնում էր։ Նրա տառապանքը չէր թեթևանալու, սակայն գոնե չէր փնի այդ թաքուն ընկճվածությունը, որը նրան հնարավորություն չէր տափս ապրելու։ Թեթևություն զգալով, որ Վարդանը հարցեր չէր տափս, նա թույլ տվեց, որ Վարդանն իրեն օրորեր իր ուժեղ բազուկներում։

Նա իրեն պարպված էր զգում, ուժասպառ և աչքերով նստելու տեղ փնտրեց։ Հյուրասենյակի տեսքը նրան սթափեցրեց։

— Այսպես չի կարելի շարունակել, Վարդան։

— Ի՞նչ,— ասաց նա՝ չհասկանալով, թե ինչ էր նա ասում։

— Սա,— ասաց նա՝ ցույց տալով սենյակը։— Ես վախենում եմ։

— Արդեն անցել է։

— Ոչ։ Սեղանիդ նայիր։ Նրանք տարել են հոդվածներդ։ Նրանք քեզ հետևում են։ Նորից ամեն ինչ վերսկսվելու է, ինչպես մեր ամուսնության սկզբում։

Վարդանը փորձեց նրան հանգստացնել իր հանգիստ տոնով.

— Այսօր իրավիճակը փոխված է։ Կայսրությունը տանուլ է տվել պատերազմը, և իմ հոդվածներն այլևս հանցագործություն չեն։

— Սակայն սուլթանի ոստիկանությունը գոյություն ունի։ Եթե նրանք չեն կարող քեզ օրինական կերպով ձերբակալել, ապա...

Նա չկարողացավ բառն արտաբերել։

— Դու զուր քեզ տանջում ես, Մարո։

— Ինքդ չես հավատում քո խոսքերին։ Ես զգում եմ մեզ շրջապատող վտանգը։ Արդեն քանի օր է, ինձ թվում էր, որ մեզ հետևում են։ Իսկ հիմա գիտեմ, որ չէր թվում։

Վարդանն ուսերը վեր քաշեց։

— Ի՞նչ ես ուզում, որ անենք։

— Տեղափոխվենք։

— Նրանք մեզ կգտնեն։

— Դադարիր հոդվածներ գրել։

— Մարո։ Դու իրավունք չունես ինձնից դա պահանջելու։

— Ես չեմ ուզում քեզ նորից կորցնել։ Գուցե ընդմիշտ...

Մարոն սեղմեց Վարդանի թևը։

— Ես վախենում եմ, Վարդան։

Մարոյի աչքերն աղերսում էին։ Կնոջը պատասխանելու փոխարեն, Վարդանը գերադասեց ցրել նրա ուշադրությունը.

— Կողպեքը կոտրված է։ Մենք չենք կարող գիշերն այստեղ մնալ։

Մարոն հուզմունքից աչքաթող էր արել այդ հանգամանքը։ Նա վախով միջանցքի կողմը նայեց։

— Հագուստ վերցրու, մենք հյուրանոց կգնանք։

— Հետս ննջարան արի։

Չնայած Վարդանը նախազգուշացրել էր, Մարոն ցնցվեց՝ տեսնելով ննջարանի վիճակը։ Վարդանը բարձրացրեց զգեստապահարանն ու պատին հենեց։ Մարոն հավաքեց մահճակալին թափված հագուստը։ Բամբակյա գիշերանոցը պատառոտված էր, և Մարոն այն զզվանքով գետնին գցեց։ Մետաքսե գիշերանոցը, որն ավելի թանկ էր, պատահաբար խուսափել էր բարբարոսների դանակից։ Մարոն հարդարանքի պարագաներ վերցրեց, դրեց կտորից ճամպրուկի մեջ, որով եկել էր Այնթապից։ Սանդուղքի վրա Վարդանը ստուգեց իր ատրճանակը բաճկոնի տակ։

— Դու զինվա՞ծ ես,— զարմացավ Մարոն, որը դրանում իր տագնապի հաստատումը տեսավ։

— Պարզապես զգուշություն է։ Կոստանդնուպոլիսը մեծ քաղաք է։

Մութ և ամայի փողոցներով նրանք գնացին մինչև զինվորական դպրոցը, որի առջև կանգնած էին ֆայտոնները։ Մարոն լարված ականջ էր դնում հնարավոր քայլերը լսելու համար և հաճախակի հետ էր նայում։ Կառապաններից մեկը, որը թուղթ էր խաղում գործընկերների հետ աղբյուրի եզրին դրված ջահի լույսի ներքո, շտապեց նրանց ընդառաջ։ Նրանք գնացին «Բերա Պալաս» հյուրանոցը։

Հյուրանոցի լուսավորված նախասրահը մտնելուն պես, ուր բազմաթիվ օտար զինվորականներ կային, Մարոն հանգստացավ։ Խոսակցությունների աղմուկը, ուր Մարոն տարբերում էր ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն բառեր, նրան լավագույն երաժշտությունը թվաց։ Այս աշխարհն այնքան էր տարբերվում նրանից, որտեղից իրենք նոր ներս էին մտել։

Վարդանը լոգարանով սենյակ վերցրեց և խնդրեց, որպեսզի ճաշը ներսում մատուցեին։

— Սպասավորներից մեկը ձեզ ճաշացանկը կբերի, պարոն։

Ճաշասրահում նվագախումբ էր նվագում, սակայն ո՛չ Մարոն, ո՛չ էլ Վարդանը ցանկություն չունեին այդ ամբոխի մեջ ճաշելու։ Սպասավորը նրանց մինչև սենյակ ուղեկցեց, երկրորդ հարկ, որի լուսամուտները նայում էին դեպի Ղալաթիա տանող պողոտան։

Սպասավորներից մեկը սեղան գցեց լուսամատի առջև, երկրորդը եկավ՝ իր դիմաց հրելով անիվներով փոքր սեղանը, ուր դրված էր Վարդանի պատվիրած ձուկը։ Վարդանը նրանց հավելավճար տվեց։

— Դուք կարող եք գնալ։ Ինքներս մեզ կսպասարկենք։

Լսելով փակվող դռան ձայնը՝ Մարոն, որը հագուստն էր փոխում լոգարանում, հարցրեց.

— Նրանք գնացի՞ն։

— Այո, կարող ես դուրս գալ։

Մարոն եկավ։ Շքեղ գիշերանոցի վրա նա հագել էր մետաքսյա տնային զգեստ, իսկ մազերն արձակել էր ուսերին։ Նրա տեսքից և շփոթվածությունից Վարդանը հասկացավ, որ Մարոն նոր դիրքորոշում էր որդեգրել իր նկատմամբ։ Նրա աչքերի կարմրությունն անցել էր, իսկ դեմքը հանգիստ էր։ Վարդանը չէր կարողանում հավատալ, որ մեկ ժամ առաջ այդ կինը ընկճված վիճակում էր։

— Դու հիասքանչ ես։ Ինձ թվում է, որ ես քեզ տեսնում եմ Փարիզում։ Հիշո՞ւմ ես Ռիվոլի փողոցի այն հյուրանոցը։

Մարոն գլխով արեց։ Իրենց ամուսնական ճանապարհորդությունը... Դա այնքան վաղուց էր և, այդուհանդերձ, այնքան մոտ։

Նրանք խմեցին իրենց սիրո կենացը և երկար համբույր փոխանակեցին։ Նրանք լուռ ուտում էին՝ պերճախոս հայացքներ գցելով միմյանց վրա, երբ փողոցի աղմուկը խաթարեց նրանց անդորրը։ Վարդանը մի կողմ տարավ վարագույրը։ Մի խումբ ցուցարարներ անցնում էին՝ բռունցքները թափահարելով և կոչեր հնչեցնելով։

— Ովքե՞ր են,– հարցրեց Մարոն։

— Ազգայնականներ, որոնք բողոքում են արևմտյան ներկայության դեմ։

Ոստիկանությունը վրա հասավ։ Վարդանը քաշեց վարագույրը։ Կամաց-կամաց աղմուկը մարում էր, երբ կրակոց լսվեց։ Դրան հետևեց տարօրինակ հանդարտություն, հետո փախուստի դոփյունը։

Մարոն, գունատվելով, վայր դրեց դանակն ու պատառաքաղը և տագնապով ամուսնուն նայեց։

— Օրերից մի օր ամեն ինչ նորից տակնուվրա է լինելու, ինչպես ասում էր Տիրուհին, Վարդան, ես այլևս չեմ կարող այս երկրում ապրել։ Ամեն գիշեր տեղահանություններ նորից է սկսվում։

— Մարո, մենք չենք կարող գնալ։

— Ես գիտեմ։ Բայց երբ Թովմասը մեզ հետ կլինի...

Կնոջ խնդրանքը Վարդանին հանկարծակիի բերեց։ Իհարկե, արտագաղթելու միտքը իրեն այցելել էր, հատկապես այն պահից, երբ իմացել էր երկրից հեռանալու Նուբարի որոշման մասին, սակայն մեկնելը իր համար պարտություն կլիներ։

— Մենք ծնվել ենք աշխարհի այս անկյունում, Մարո։

— Մա այլևս մեր հայրենիքը չէ։

— Այստեղ այնքան բան կա անելու մերոնց համար։

— Դու քո բաժինն արել ես։ Հարկավոր է մի քիչ էլ մեր մասին մտածել, մենք քիչ ժամանակ ունենք։ Մենք կարող ենք մեր կյանքը սկսել այլ երկնքի տակ։ Այստեղ ես չեմ կարողանա երջանիկ փնել։ Հողը ներծծված է արյունով, իմ մոր, Արմենի, անհամար մարդկանց արյունով։ Չխոսես ինձ հետ Հայաստանի մասին գոնե այնքան ժամանակ, քանի դեռ մեր հայրենակիցները, որոնք նոր են սկսել կառուցել իրենց երկիրը, ամեն վայրկյան կարող են հայտնվել պատերազմի ճիրաններում։ Ես այլևս ուժ չունեմ շուրջս մեռնող մարդկանց տեսնելու։ Իսկ այն միտքը, որ քեզ նորից կարող են ինձնից խլել, անտանելի է ինձ համար։ Ես ամեն ինչ կորցրել եմ քեզնից բացի, Վարդան, ես ուզում եմ այստեղից գնալ։

Նա հանգիստ էր խոսում, սակայն պերճախոս էր, և չնայած նրա հանդարտությանը նրա ասածի կարևորությունն ակնհայտ էր։ Վարդանը մտորումների մեջ ընկավ։

— Նույնիսկ այլ երկրում ապրելով՝ դու կարող ես օգնել մերոնց,— շարունակեց Մարոն։— Քեզ առաջարկում են Վաշինգտոն մեկնել ամերիկյան կառավարության առջև վկայություններ տալու համար։

— Ճիշտ է,— համաձայնեց Վարդանը։— Սակայն ես չեմ էլ ուզում դրա մասին մտածել, քանի դեռ մենք չենք պարզել Թովմասի ճակատագիրը։

Հակառակ իր սովորության, նա չօգտագործեց «գտնել» բառը իրենց որդու մասին խոսելիս։ Մարոն ուշադրություն չդարձրեց այդ խոսքերին, որոնք հնարավորություն էին տալիս ենթադրելու, որ Վարդանը հավանաբար հաշտվել էր վատթարագույնի հետ։ Մարոն վեր կացավ, շրջանցեց սեղանը, նստեց Վարդանի ծնկներին և գրկեց նրան։

— Երբ Թովմասը մեզ հետ կլինի, մենք կկարողանանք մեկնել Վաշինգտոն։ Կասկածից վեր է, որ հենց այնտեղ դու շատ օգտակար կլինես։ Ես չեմ պահանջում, որ մենք ընդմիշտ գնանք։ Մեկ կամ երկու տարի։ Այդքան է պետք սիրուն նորից ընտելանալու և սարսափները մոռանալու համար։ Մենք կտեսնենք, թե ինչպես է կյանքը հունի մեջ մտնում այնտեղ...

Մարոյի Կոստանդնուպոլիս գալուց ի վեր Վարդանն առաջին անգամ էր տեսնում, թե ինչպես էր տենչը ծնունդ առնում նրա աչքերում։ Եվ նա ուզեց, որ այդ կրակը երբեք չմարեր։

— Ճիշտ է, այնտեղ ես ավելի լավ կկարողանամ օգնել Հայաստանի կայացմանը։

Մարոն ծիծաղեց և համբուրեց Վարդանի այտը։

— Խոստանո՞ւմ ես, որ մենք կմեկնենք, հենց որ Թովմասը մեզ հետ կլինի։

— Այո։ Եվ որպեսզի գործը չձգձգվի ես հենց հիմա կսկսեմ թղթերը նախապատրաստել ամերիկյան դեսպանատան համար։

Մարոյի ժամանումից հետո նրանք իրար սիրել էին միայն մեկ անգամ։ Վարդանը տենչում էր Մարոյին, իսկ վերջինս պարտք էր կատարում, և դա այնքան մեխանիկական կենակցություն էր և այնքան զերծ էր սիրուց, որ Վարդանն այլևս չէր դիպել Մարոյին։ Այդ գիշեր նարդոսի բուրմունք արձակող անկողնում Մարոն ինքն անձնատուր եղավ ամուսնուն և տրվեց անմնացորդ՝ և՛ կրքոտ, և՛ քնքուշ, նախաձեռնող և ինքնամոռաց։ Նրանք այդպես պառկեցին տզդրը ազդրին, մատները միահյուսված։ Լռության մեջ նրանք հետևում էին, թե ինչպես էին հաճույքի ալիքները տեղի տալիս, և ինչպես էին հանգչում նրանց հառաչանքների արձագանքները։

Խոստումների և ծրագրերի համար դեռ վաղ էր։ Վարդանը քնքշորեն հարցրեց.

— Քանի՞ տարեկան է Նուրհանը։

Մարոն ցնցվեց։ Ինչպե՞ս կռահեց, որ հենց այդ պահին ինքը հիշել էր իր երկրորդ որդուն։ Նրա կոկորդը սեղմվեց.

— Մոտ երեք տարեկան։

Սի պահ լռություն տիրեց։ Նրանք երկուսն էլ գիտեին, որ անհնարին էր այդ երեխային վերցնել իր հորից և որ նա ընդմիշտ կորսված էր Մարոյի համար, սակայն նրանցից և ոչ մեկը չէր կարող արտաբերել այդ ճակատագրական դատավճիռը, ինչպես նաև չէին կարող պատրանքների մեջ ընկնել։ Նուրհանի հիշատակը ողբալու փոխարեն, ինչ անում էր սովորաբար Մարոն, նա վճռեց նրան ապրեցնել խոսքի միջոցով։

— Զարմանալի է, բայց նա նման է... նման է Թովմասին։

— Ուրեմն մորը։

— Այո, նա իմ աչքերն ունի։ Նա վարժ է խոսում, բայց քիչ։ Նա երևի ինքնամփոփ կլինի։ Նա նկարելու զարմանալի շնորհք ունի։

Մարոն շնչակտուր լռեց։ Առաջին անգամ լինելով, բավական էր, ինքն ավելի ուշ կշարունակեր։

Նա գլուխը դրեց Վարդանի կրծքին և լսեց նրա սրտի ուժգին ու արագացած բաբախյունը։ Նա փակեց աչքերը և քնեց աշխարհի մնացած ձայները խլացնող այդ երաժշտության նվագակցության ներքո։

* * *

Վարդանը, ծանրաքայլ, բարձրացավ իրենց բնակարանի աստիճաններով։ Արդեն մի քանի շաբաթ նամակներ չէին գալիս մանկատներից։ Հարկավոր էր հաշտվել իրականության հետ. Թովմասը չէր ընկել միսիոներների ձեռքը։ Եթե նա ողջ էր, ապա գտնվում էր որևէ թուրքի կամ քրդի մոտ որպես աշակերտ, ագարակում աշխատող բանվոր, հովիվ կամ ուղտապան։ Այդ դեպքում նրան հայտնաբերելու հավանականությունը զրոյի էր հավասարվում։ Անհրաժեշտ կլիներ խուզարկել Անատոլիայի, Սիրիայի, Արաբական թերակղզու յուրաքանչյուր քաղաքը, գյուղը, ագարակը։ Վերջին հույսը տեղում աշխատող օգնության տարբեր կոմիտեներն էին, սակայն հազարավոր նմանատիպ դեպքեր կային, իսկ այդ կազմակերպությունները բավականաչափ աշխատողներ չունեին։

Հակառակ իր սովորության Մարոն ամուսնուն ընդառաջ չեկավ։ Վարդանը նրան գտավ բազկաթոռում նստած։ Նա գունատ էր և չէր կարողանում խոսք անգամ արտաբերել։ Նրա ձեռքին մի նամակ կար, որը նա արդեն տասն անգամ կարդացել էր։ Ծրարը գետնին էր ընկած։

— Ո՛չ,— բացականչեց Վարդանը, որը չգիտեր, թե ինչ պետք է աներ՝ ուրախանար, թե վշտանար։

Քարացած Մարոն դարձյալ նրան ոչինչ չբացատրեց։ Նա վերցրեց ծրարը, որի վրա գրված էր Մերձավոր Արևելքի օգնության կոմիտեի Կոստանդնուպոլսի հասցեն։ Դրա մեջ մեկ այլ ծրար կար, որը մարվել էր Շվեյցարիայում և հասցեագրված էր փարիզյան մի թերթի, որի հետ Վարդանը համագործակցում էր։

— Հետո՞,— հարցրեց նա անհամբերությամբ։

Պատասխանելու փոխարեն Մարոն նրան մեկնեց նամակը, որը նա արագ կարդաց։ Նա աչքերին չէր հավատում։ Նամակի ներքևում զմուռսի վրա կնիքով դրված էր իր անունը հայերենով։ Նա բարձրաձայն կարդաց նամակը։

— «Հարգարժան պարոն Վարդան Պալյան։ Ժնևում վերջերս բացված մեր հաստատությունն ընդունում է հայ երեխաների, որոնք մեծ մասամբ, իհարկե, որբեր են։ Այս շաբաթ շվեյցարացի մի միսիոներ մեզ է հանձնել մի հայ երեխայի, որին անցած տարի ինքն ու իր կինը բերել են Բաղդադից։ Այդ երեխան, որը տասը տարեկան է և կրում է Թովմաս անունը, պնդում է, որ իր հոր անունն է Վարդան Պալյան։ Քանի որ ձեր անունն ինձ ծանոթ է բազմաթիվ հոդվածներից, ապա ես ինձ թույլ եմ տալիս գրելու թերթի հաշվին։ Կորցրե՞լ եք արդյոք Թովմաս անունով որդի։ Նա սևահեր է, շագանակագույն աչքեր ունի, կանոնավոր դիմագծերով կանոնավոր դեմք և մի քիչ ավելի բարձրահասակ է, քան իր հասակակիցները։ Չունենալով նրա լուսանկարը՝ ես այս նամակի վրա դնում եմ նրա խոսքերով իր հոր կնիքի պատճենը։ Ես աղոթում եմ

Աստծուն, որպեսզի նա ծնողներին վերադարձնի այս տղային և անհամբեր սպասում եմ ձեր պատասխանին։ Անդրանիկ Բաղրամյան»։

Մարոն լսում էր նամակը, որը նա անգիր էր արել, և գլխով էր անում։

— Այս կնիքն իմն է,— ասաց Վարդանը՝ զննելով զմուռսը։ Այո, սա իմն է։

Մարոն վերջապես վերագտավ խոսելու ունակությունը.

— Թովմասն այն վերցրել էր քո գրասեղանից Սվասը լքելուց առաջ։

Վարդանն ապշած նայեց նրան և ճիչ արձակեց։ Նա չկարողացավ արցունքները զսպել և բացականչեց.

— Թովմա՛ս... Թովմա՛ս։ Դու հասկանա՞մ ես, Մարո։ Թովմասը ժնևում է։

Մարոն ոտքի կանգնեց և նետվեց Վարդանի գիրկը, որը և լալիս էր, և ծիծաղում։ Նա բռնեց կնոջ ուսերից և նրան թափ տվեց.

— Թովմասը։ Մեր Թովմասը։

Մարոն նույնպես հուզմունքից ծիծաղում էր, քանի որ արցունքները սպառել էր օրվա ընթացքում։ Վարդանը նրան գրկեց և հետը պտտվեց։ Նա խոսքեր չէր գտնում և անընդհատ կրկնում էր որդու անունը։

Հանկարծ նա կանգ առավ և հարցրեց.

— Պատասխանե՞լ ես։

— Ես քեզ էի սպասում, որպեսզի միասին պատասխանեինք։

Վարդանը նայեց ժամացույցին.

— Հեռագրատունը դեռ բաց է։ Եթե շտապենք, ապա կհասցնենք։ Արա՛գ։

— Վերարկուի կարիք չկա,— ասաց Վարդանը դռան մոտից,— ապրիլյան այս երեկոն ամենատաքն է աշխարհագործությունից ի վեր։

Փողոցում նա գրկեց Մարոյին և ստիպեց նրան արագ քայլել։ Նրանք շնչակտուր հասան փոստատուն, որի դռներն արդեն փակում էին։ Վարդանը գիտեր, որ բողոքելն անիմաստ էր, չնայած մինչև աշխատանքի ավարտը դեռևս տասը րոպե կար։ Նա ուղղակի դրամ տվեց ծառայողին, որը հարթ մազերով և բարակ բեղերով քառասուն տարեկան տղամարդ էր, և նա համաձայնեց հեռագիրն ուղարկել։

Շտապող ծառայողի անհամբեր հայացքի ներքո Մարոն ու Վարդանը կազմեցին հեռագիրը, որը հասցեագրված էր Անդրանիկ Բաղրամյանին։

— Հարկավոր է մի քանի բառ էլ Թովմասին գրել,— ասաց Մարոն։

— Ի՞նչ ես կարծում. «Խոսքը մեր որդու մասին է։ Կետ։ Մարոն և Վարդանը երջանիկ են, որ նա ողջ է։ Կետ։ Շուտով կժամանենք։ Կետ»։

— Ավելացրու. «Նրան սիրում ենք բոլորից շատ»։

— Դա անհրաժե՞շտ է,— հարցրեց Վարդանը։

— Այո։ Թող իմանա, որ մենք բարկացած չենք նրա փախուստի համար։

Վարդանն ավելացրեց այդ բառերը։ Նրանք համոզվեցին, որ ծառայողը ուղարկեց հեռագիրը և դուրս եկան փոստատնից նրա հետ միասին։ Երբ հեռագրիչը բանալին էր պտտում կողպեքի մեջ, նա, որ կարողանում էր ուղարկել յուրաքանչյուր տառը, սակայն չէր հասկանում բովանդակությունը ֆրանսերենով, հարցրեց հեռագրի բովանդակության մասին։

— Մենք գտել ենք մեր որդուն, որին կորցրել էինք մի քանի տարի առաջ,— բացատրեց Մարոն ոգևորված։

— Օ՛,— բացականչեց տղամարդը, որը վեց երեխա ուներ։— Ես ուրախ եմ ձեզ համար։ Ալլահը մեծ է։

— Թող նա ողորմած լինի ձեր նկատմամբ,— պատասխանեց Վարդանը՝ հրաժեշտ տալով հեռագրիչին։

Ո՛չ Վարդանը, ո՛չ էլ Մարոն ցանկություն չունեին տուն վերադառնալու։

— Գնանք «Մարկիզա»,— առաջարկեց Մարոն։— Մենք այնտեղ նամակ կգրենք Թովմասին։

— Այո, և ճաշենք քաղաքում, որպեսզի նշենք ճակատագրի այս պարգևը։ Վերադարձի ճանապարհին կմտնենք Մեսրոպյանների մոտ և նրանց կհայտնենք այս արտակարգ լուրը։

Թևանցուկ արած՝ նրանք դանդաղ քայլերով գնում էին փողոցով և չափից ավելի հուզված էին խոսելու համար։ Յուրաքանչյուրն ինքն իրեն հարց էր տալիս, թե արդյոք դա երազ չէ՞ր։ Մի քանի փողոց այն կողմ Վարդանը հանկարծ կանգ առավ և նայեց Մարոյին։ Նա ոգեշնչված ասաց.

— Դու քեզ հաշիվ տալի՞ս ես, որ սա զուտ պատահականություն է։ Մեր ձեռնարկած քայլերից և ոչ մեկն արդյունք չտվեց, և ահա այդքան սպասված նորությունը երկնքից է ընկնում գլխներիս։ Իմ հոդվածների շնորհիվ։ Հոյակապ է, չէ՞։ Այդ մարդը մեզ հետ է կապվել, որովհետև կարդացել է՛ իմ անունը թերթերում։

Վախենալով, որ իր երջանկությունը կախված էր հանգամանքների պատահական շղթայից, Մարոն հակաճառեց.

— Պատահականություն, պատահականություն, հեշտ է ասել։ Դու ավելի մոտ ես իրականությանը, երբ ասում ես «երկնքից ընկած»։ Մեզ պատասխանում է Բարձրյալը։

Վարդանը, որը շատ ուրախ էր, չկարողացավ իրեն զսպել և կնոջ հոգու

հետ մի քիչ խաղաց.

— Համաձայնենք, որ երկնային նախախնամությունն այնպես արեց, որ այդ Բաղրամյանը լավ թերթեր է կարդում։

Մարոն տրամադիր չէր զվարճանալու։ Նա մտածում էր, թե ինչ վիճակում էր Թովմասը և թե ինչպես կվարվեր իր հետ։

Ամառ առանց այգաբացի - Գլուխ 18

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 13:29-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

Ամառ առանց այգաբացի

◄ Ամառ առանց այգաբացի - Գլուխ 17

Ամառ առանց այգաբացի - Վերջաբան ►

1919 թ. մայիսի 10-ին Մարոն ու Վարդանն իջան «Արևելյան էքսպրեսից» Ժնևի «Կորնավեն» կայարանում: Նրանք այլևս Կոստանդնուպոլիս չէին վերադառնալու: Վարդանը համաձայնել էր Վաշինգտոնում աշխատելու Տիրանի ընկերների առաջարկին: Նա կաշխատեր այնքան, որքան անհրաժեշտ կլիներ: Նրանց մեկ ամիս էր անհրաժեշտ եղել իրենց ճանապարհորդությունը կազմակերպելու և վիզաները ստանալու համար, ու արդեն վերջում Վարդանը չէր կարողանում զսպել իր անհամբերությունը: Վերջապես եկավ մեկնելու պահը: Հրաժեշտը շատ զգացմունքային էր, քանի որ Մեսրոպ քեռին համոզված էր, որ ինքն այլևս նրանց չէր տեսնելու: Վարդանի ճանապարհորդությանը ավելացել էր ևս մեկ նպատակ: Տիրանն ու նրա ընկերները հայտնաբերել էին, որ նախկին օսմանյան կառավարության պաշտոնական փաստաթղթերը, հենց այն փաստաթղթերը, որ իրենք փնտրում էին ամիսներ շարունակ, հիմա գտնվում էին Էվիանում՝ Ֆրանսիայում, ոմն Գաբրիել դը Ռոքվիլի մոտ: Թովմասին որբանոցից վերցնելուց հետո Մարոն ու Վարդանը պետք է գնային Էվիան, որտեղից էլ Մարսել, ուր նրանք պետք է նավ նստեին Միացյալ Նահանգներ մեկնելու համար: Գաբրիել դը Ռոքվիլը, որը կոլեկցիոներ էր, գնել էր այդ փաստաթղթերը Կոստանդնուպոլսում աշխատող ֆրանսիացի մի լրագրողի միջոցով: Քանի որ նա համակրում էր հայերին, համաձայնել էր դրանք նվիրել այն մարդկանց, ովքեր կկարողանային ազնիվ նպատակով դրանք օգտագործել:

Թեթև գլխապտույտ զգալով՝ Մարոն անշարժացավ գնացքի սանդուղքի վերևի աստիճանին: Կառամատույցին, դռան մոտ կանգնած ծառայողը նրան օգնեց իջնելու:

— Ինչպե՞ս ես,— անհանգստացավ Վարդանը:

Մարոն գլխով դրական նշան արեց: Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չէին քնել նախորդ գիշեր: Վիեննայից նրանց տիրած ոգևորությունը անհամբերության էր փոխակերպվել, երբ գնացքը մոտեցել էր Շվեյցարիայի սահմաններին, իսկ այն պահից, որ գնացքը շարժվում էր Ալպյան լեռների երկայնքով, նրանց տիրել էր տագնապը: Երկու տարի շարունակ Մարոն աղոթել էր Թովմասի հետ այս հանդիպման մասին, Վարդանը՝ չորս տարի, և հիմա նրանք վախենում էին, որ ինչ-որ

անսպասելի աղետ կարող էր խոչընդոտել այդ ամենաթանկ երազի իրականացմանը։

Մինչ Վարդանը պայմանավորվում էր բեռնակրի հետ, Մարոն ցրված նայում էր ուղևորներին, որոնք հավաքված էին կառամատույցին։ Հետո նա աչքերը բարձրացրեց Արդյան խոներին նայելու համար։ Նրա կանգնած տեղից լեռները չէին երևում, սակայն նա գիտեր, որ դրանք շատ մոտ էին և փակում էին հորիզոնը։ Քարե այդ պատվարը, որը վեր էր խոյանում իր և Օսմանյան կայսրության միջև, նրան ապահովության զգացում էր պարգևում, որը հարաճուն կերպով ամրապնդվում էր, որքան գնացքը նրան հեռացնում էր Բոսֆորի ափերից։ Նա այլևս չէր վախենում, որ գաղտնի ոստիկանությունը կարող էր ձերբակալել Վարդանին։ Եթե իրենից կախված լիներ, ապա նա այլևս երբեք չէր վերադառնա իր ծննդավայրը՝ Անատոլիա, ուր հանգչում էին հայրն ու մայրը։ Թովմասի և այլ երեխաների համար, որոնց նա մտադիր էր ունենալ, նա ցանկանում էր ազատություն և այնպիսի հայրենիք, ուր նրանց իրավունքները կհարգվեին, և նրանք առանց վախի կկերտեին իրենց ապագան։

— Արի։

Նա վեր թռավ Վարդանի ձայնից։ Նա բռնեց Մարոյի ձեռքը և հոգատար ձայնով հարցրեց.

— Շատ չե՞ս հոգնել։

— Ոչ, ավելի շուտ նյարդային եմ։

Վարդանը շոյեց նրա ուսը։

— Ամեն ինչ լավ կլինի, կտեսնես։

Մարոն զգում էր, որ Վարդանը նույնքան հուզված էր, որքան և ինքը։ Սայլակը քաշող բեռնակրի ուղեկցությամբ, նրանք մոլորված մտան սպասասրահը, որը բզզում էր փեթակի պես։ Վարդանը կանգ առավ թերթերի կրպակի մոտ, ուր նա ժամադրվել էր այն զույգի հետ, որը Հայկական կոմիտեի կողմից պետք է իրենց դիմավորեր։ Շրջակայքում չկային այնպիսի մարդիկ, որոնք կհամապատասխանեին Վարդանի ստացած նկարագրությանը։

— Մենք մեր ընկերներին ենք սպասում,— ասաց Վարդանը բեռնակրին։— Կարող եք ճամպրուկներն այստեղ դնել։

Տղամարդը կատարեց Վարդանի խնդրանքը և գնաց նոր հաճախորդներ գտնելու։ Այդ սպասումը նյարդայնացրեց Մարոյին։ Վարդանը նրան առաջարկեց նստել փոստի բաժանմունքի մոտ, պատի տակ դրված նստարանին։ Մարոն հրաժարվեց և սկսեց կարդալ կրպակում ցուցադրված թերթերի խորագրերը։ Վարդանը միաժամանակ հետևում էր մուտքի և դեպի կառամատույց դուրս եկող դռներին։

Սպասասրահը կամաց-կամաց դատարկվեց։ Երբ Վարդանն արդեն վճռել էր ֆայտոն վարձել և հյուրանոց գնալ, հայտնվեցին իրենց

դիմավորողները։ Տղամարդը պետք է դեղին փողկապ կրեր, իսկ կինը՝ վանդակավոր բրդյա կտորից կարված զգեստ, իսկ ձեռքին սպիտակ մեխակներ ունենար։ Սուրեն Զաքարյանը՝ մոտ երեսուն տարեկան նիհար դեմքով մի տղամարդ, հանդարտ և ուժեղ մարդու տպավորություն էր թողնում։ Նրա կինը՝ Նազենին, մի քիչ ավելի երիտասարդ էր և տղայի էր նմանվում իր կարճ կտրած և հարթ սանրած սև մազերով։ Այդուհանդերձ, նա շատ գեղեցիկ էր։

— Սուրեն Զաքարյա՞ն,— հարցրեց Վարդանը։

— Ներող եղեք ուշացման համար,— ասաց Սուրենը՝ ձեռքը մեկնելով։ — Մեզ սխալ էին հայտնել գնացքի տեղ հասնելու ժամը։

— Ոչինչ։ Ես երջանիկ եմ ձեզ հետ ծանոթանալու, պարոն Սուրեն։

— Ես էլ, պարոն Պալյան։

— Մենք միշտ մեծ հետաքրքրությամբ ենք կարդում ձեր հոդվածները, — ավելացրեց կինը։

Սուրենը ներկայացրեց իր կնոջը, Վարդանը նույնպես, և Նազենին ծաղիկները Մարոյին հանձնեց։

— Ես այնպես երջանիկ եմ ձեզ համար, տիկին։ Երջանիկ եմ երեխայի համար։

Մարոյի դեմքը լուսավորվեց.

— Դուք տեսե՞լ եք որդուս։

— Նրա գոյության մասին մենք իմացանք, երբ մեզ հայտնեցին, որ Էվիանում կարևոր փաստաթղթեր կան և որ ձեր ամուսինը պետք է գա և դրանք վերցնի։ Ես չկարողացա դիմանալ և գնացի պարոն Բաղրամյանի որբանոցը։

Մարոն երիտասարդ կնոջը բազմաթիվ հարցեր տվեց.

— Խոսե՞լ եք Թովմասի հետ։ Ինչպե՞ս է նա։ Գիտի՞, որ մենք այսօր ենք ժամանելու։

Նազենիի աչքերը փայլում էին, քանի որ բարի լուր հաղորդողի դերը նրան հաճելի էր։ Նա չէր հասցրել պատասխանել, իսկ Մարոն նորից հարցրեց.

— Նա առո՞ղջ է։

— Հոյակապ տղա է, բարձրահասակ, ամրակազմ, գրեթե մեկ մետր վաթսուն սանտիմետր հասակով։ Նա մարզիկի մարմին ունի, պարոն Պալյան, ինչպես դուք։ Խելացի է և ժիր աչքեր ունի։ Աչքերը նման են մոր աչքերին, որքան հասկացա։

— Նա առո՞ղջ է,— կրկնեց Մարոն։

— Երբեք չէիք հավատա, որ նա դժվարին պահեր է ապրել։ Ըստ տնօրենի՝ նա կաշկանդված էր և չէր հաղորդակցվում երեխաների հետ,

սակայն ձեր նամակը ստանալուց հետո վարքագիծը փոխվել է։ Նա ավելի անմիջական է դարձել և հաճույքով խաղում է մնացած երեխաների հետ։

Վարդանը նույնպիսի ագահությամբ էր կլանում Նազենիի խոսքերը, որքան և իր կինը։ Նրանք անվերջ կլսեին, եթե Սուրենը չասեր, ճամպրուկները վերցնելով.

— Գնացինք։

Վարդանը վերցրեց ճամպրուկներից մեկը։ Նրանք բեռները բարձեցին տաքսիի մեջ, և Սուրենը վարորդին տվեց իր բնակարանի հասցեն։

— Մենք ձեզ նախ մեր տուն կտանենք մի բան խմելու և հանգիստ զրուցելու համար։

Մարոն հուսահատ նայեց Վարդանին, որը պատասխանեց.

— Դուք շատ բարի եք, Սուրեն, սակայն մենք կգերադասեինք նախ մանկատուն գնալ։

— Պարոն Բաղրամյանը ձեզ ճաշից հետո է սպասում։

— Սուրեն, պատկերացրու, որ դու իրենց վիճակում ես,— պատասխանեց Նազենին, որը հասկանում էր Մարոյի ու Վարդանի անհամբերությունը։— Դու դեռ ժամանակ կունենաս մարդկության ճակատագիրը վճռելու պարոն Պալյանի հետ։

Սուրենը ժպտաց.

— Լա՛վ։ Մենք ձեզ մանկատուն կտանենք, իսկ վերադարձի ճանապարհին իրերը կթողնենք «Բելմոնտ» հյուրանոցում։ Դա մեր տան կողքին է։ Վարորդ, գնացեք դեպի Լոգանի ճանապարհը։

* * *

— Թովմա՛ս։ Արի՛, մեր դարպասը պահիր, թե չէ կպարտվենք։

Թովմասը Գրիգորին ասաց, որ այդ պահին ֆուտբոլն իրեն այնքան էլ չէր հետաքրքրում։ Իմանալով, թե ինչ կարևոր օր էր դա ընկերոջ համար, Գրիգորը չպնդեց։ Նա վերադարձավ խաղահրապարակ՝ մի քիչ նախանձելով իր ընկերոջը, ինչպես մնացած երեխաները։ Այս մանկատան հիսուներեք տղաներից ո՞ր մեկը չէր երազում, որ մի օր կտեսներ իր ծնողներին։ Նույնիսկ նրանք, ովքեր տեսել էին իրենց ծնողների մահը։

Ժնևի ծայրամասում դեպի Լոզան տանող ճանապարհին կառուցված տղաների հին դպրոցի պատին հենված՝ Թովմասը հեռվից հետևում էր դարպասին և միևնույն ժամանակ դպրոցի բակում ընթացող ֆուտբոլի մրցմանը։ Երեք շաբաթ առաջ նա նամակ էր ստացել ծնողներից, և այդ պահից օրերն անվերջ էին թվում նրան։ Երբ Թովմասը հեռագրից

իմացավ Կոստանդնուպոլսից իր ծնողների մեկնման օրը, նա դասարանի աշխարհագրական մեծ քարտեզի վրա հետևում էր գնացքի առաջխաղացմանը, ամեն առավոտյան, կեսօրին և երեկոյան տեղաշարժելով քորոցը, հետևելով պարոն Բաղրամյանի ցուցումներին։ Այս առավոտ նա այն տեղադրել էր ժնևը նշող կետի վրա։

Անկանոն քայլերի ձայն լսելով՝ Թովմասը շրջվեց։ Անդրանիկ Բաղրամյանն էր՝ տնօրենը։ Նա ճաղատ և կաղ մարդ էր, որը Թովմասից շատ բարձրահասակ չէր, իսկ կաղում էր ոտքի հին վերքից։ Բաղրամյանը սիրալիր ժպտաց տղային։

— Նրանք կգան ճաշից հետո, համբերիր։

Համբերի՞ր։ Թովմասը հենց դա էլ անում էր։ Բացի դրանից, նա կանխազգացում ուներ, որ ծնողներն անմիջապես կգային իրեն տեսնելու։

— Պարոն Բաղրամյան...- ասաց Թովմասն անվստահ ձայնով։

— Այո՞։

Թովմասը, լուրջ ձայնով, որը զարմանալի էր այդ տարիքի երեխայի համար, սկսեց արտասանել այն բառերը, որոնք նա նախապատրաստել էր այդ առավոտ։

— Ես ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել ձեր բարության համար։ Ինձ համար մեծ երջանկություն էր ձեզ հանդիպելը։ Դուք գտաք իմ ծնողներին, ես այդ բանը երբեք չեմ մոռանա։

Տնօրենը, հուզված, թփթփացրեց նրա ուսին.

— Ինձ շնորհակալություն հայտնելու միակ ձևը, Թովմաս, ազնիվ և աստվածավախ մարդ դառնալն է։ Մարդ, որը մտածում է ուրիշների մասին և նրանց օգնության է գալիս։

— Ես հենց այդպիսի մարդ կդառնամ, պարոն։

Երբ տնօրենը պատրաստվում էր հեռանալ, Թովմասը հարցրեց մանկական ձայնով.

— Ի՞նչ եք կարծում, հայրս ինձ կճանաչի՞։

— Նա քեզ չի տեսել չորս տարի։ Կարծում եմ, կճանաչի։

Անդրանիկ Բաղրամյանը գնաց դեպի մուտքի դուռը իր գրասենյակը վերադառնալու համար։ Նա փառք էր տալիս Աստծուն այս երեխայի երջանկության համար և աղոթում էր, որ Բարձրյալը ևս մի քանի նման հրաշքներ կատարեր։ Էջմիածնի ճեմարանի նախկին սանը հրաժարվել էր հոգևոր կարգից ուսուցիչ դառնալու և ամուսնանալու համար։ Նրա բանտարկությունից հետո կինն ու չորս երեխաները այրվել էին իրենց տանը, որը հրդեհել էին ջարդարարները 1915 թ. տեղահանությունների ժամանակ։ Անդրանիկին, ինչպես և Վարդանին, բանտից փրկել էր մի թուրք բարեկամ։ Նա փախել էր երկրից՝ անցնելով Պարսկաստանով և

եկել էր Շվեյցարիա, ուր և նա ապրում էր այդ ժամանակից ի վեր։

Մարգագետնում աղմկող կեռնեխները շեղեցին Թովմասի ուշադրությունը, և նա նկատեց սև ավտոմեքենան միայն դարպասից ներս մտնելուց հետո։ Նրա սիրտը սկսեց արագ բաբախել։ Դա տաքսի էր, որը չորս ուղևոր էր բերել։ Մեքենայից մի տղամարդ և մի կին իջան։ Թովմասը նախ մորը տեսավ և նկատեց, որ նա կտրել էր մազերը։ Այս բարձր հասակը, այս դեմքը... իր հայրը՝ Վարդանը։ Թովմասը բերանը բացեց բղավելու համար, սակայն նրա կոկորդից ձայն դուրս չեկավ։ Մի վայրկյան նա վախեցավ, որ այդ տեսիլքը կցրվեր երազի պես, սակայն Մարոն ու Վարդանը գնում էին դեպի դպրոցի մուտքը, և պարզորոշ լսվում էր խճի ձայնը նրանց կոշիկների տակ։ Չնայած նրանց գրկում հայտնվելու խելահեղ ցանկությանը, Թովմասը չկարողացավ նետվել ծնողներին ընդառաջ, այլ, հակառակը, հետ-հետ գնաց և թաքնվեց շենքի անկյունում, որպեսզի նրանք իրեն չտեսնեին։

Տեսնես մայրիկը ներե՞լ էր իր փախուստը Ռըզա բեյի տնից։ Շարունակո՞ւմ էր իրեն սիրել այսքան տարիներից հետո։ Հոր սերը կասկած չէր հարուցում, սակայն նա չգիտեր, թե ինչպես իրեն պահեր նրա հետ։ Ինչպե՞ս իրեն բնական պահեր, երբ նա գիտեր մոր դավաճանության մասին։ Թովմասը չէր ուզում հակասություններ առաջացնել ծնողների միջև և, հետևաբար, պետք է հետևեր իր յուրաքանչյուր խոսքին։ Իսկ եթե հայրը իրեն հարցե՞ր տար... Թաքցնե՞լ իրականությունը։ Ստե՞լ։ Ի՜նչ բարդ էր այդ ամենը։

— Թովմա՜ս։ Արի օգնության։

Թիմակիցները խմբով կանչում էին իրեն։ Ավելի լավ կփներ, եթե ծնողներն իրեն հայտնաբերեին ֆուտբոլ խաղալիս, քան դպրոցի պատի հետևում թաքնվելիս, քանի որ այդ դեպքում նրանք չէին հասկանա, թե ինչու նա իրենց ընդառաջ չէր նետվել։ Թովմասը վազեց դեպի ֆուտբոլի դաշտը և գրավեց դարպասապահի իր սովորական դիրքը։ Խաղը վերսկսվեց։ Նրա թիմակիցները, ոգևորվելով Թովմասի ներկայությունից, լավ էին խաղում և բազմաթիվ հարվածներ կատարեցին դեպի դարպասը, սակայն հարվածները նպատակին չէին հասնում։ Ուշադիր հետևելով խաղին՝ Թովմասը թաքուն հայացքներ էր գցում դեպի ծառուղին, որով գալիս էին ծնողները։ Վերջապես տեսավ, թե ինչպես երեք ուրվագիծ հայտնվեց։

Մարոն հուզմունքից և մի քիչ էլ մեղքի զգացումից կարկամած կանգնել էր դպրոցի պատի մոտ Բաղրամյանի հետ։ Վարդանը մենակ գնաց դեպի դաշտը։ Խաղացողներից մեկը գոռաց Թովմասին.

— Ուշադրությո՜ւն։

Մեծ Թորոսը մոտենում էր գնդակով։ Լավագույն խաղացողն էր, արագաշարժ և ճարպիկ։

— Դե, Թովմա՜ս, փակիր նրա ճանապարհը։

Վարդանի ձայնն էր։ Այն ձայնը, որի ո՜չ տեմբրը, ո՜չ ելևէջներն ինքը

չէր մոռացել։ Հայրը նրան իսկույն ճանաչել էր մոտ քսան տղաների մեջ։ Ոգևորված՝ Թովմասը նետվեց դեպի հակառակորդը, որն անցել էր պաշտպանական գիծը։ Ինքը չէր վրիպի։ Թորոսը գնդակն ուղղեց դեպի ձախ անկյունը։ Թովմասը նետվեց և բռնեց գնդակը։ Իր թիմի ողջույնների ներքո նա ոտքի կանգնեց և, հպարտությունից փայլելով, գլուխը դարձրեց դեպի հայրը, որը տարածել էր ձեռքերը և բղավում էր.

— Ապրե՛ս։ Ապրե՛ս։

— Հայրի՛կ։

Թովմասը վազեց։ Հայրը չէր փոխվել, միայն թե այսօր նա իրեն այդքան բարձրահասակ չէր թվում։ Թովմասի աչքերը թրջվեցին, և հոր դեմքը աղոտ դարձավ։ Վարդանը բռնեց նրան և բարձրացրեց նույնպիսի հեշտությամբ, ինչպես ժամանակին բարձրացնում էր թամբի վրա։ Վարդանը Թովմասին կրծքին սեղմեց։ Նրա ձայնը դողաց.

— Թովմա՛ս։ Թովմա՛ս, որդի՛ս։

Հորը փարվելով, Թովմասը երջանկությունից ողջ մարմնով դողում էր։

— Հայրի՛կ։ Ես համոզված էի, որ դու կվերադառնաս։

— Ես քեզ փնտրել եմ բոլոր այս տարիների ընթացքում, Թովմաս։

Ավելին ասելու անկարող, նրանք այդպես գրկախառնված մնացին մի քանի րոպե։

Քիչ այն կողմ Մարոն հենվել էր պատին, քանի որ ծնկները ծալվում էին։

— Աստված մեծ է,— շշնջաց Բաղրամյանը։

Մարոն չպատասխանեց։

Երբ հայրը նրան վայր իջեցրեց, Թովմասը գրպանից հանեց արծաթյա մի տուփ, որը առավոտյան փայլեցրել էր։ Կնի՛քը։

— Ես այն վերցրել եմ Սվասի քո աշխատասենյակից։

Վարդանը բացեց կափարիչը և զգուշությամբ զննեց երկկողմանի կնիքը, որի մի կողմում փորագրված էր իր անունը հայերենով, իսկ մյուս կողմում՝ թուրքերենով։ Նա փակեց տուփը և հանձնեց Թովմասին։

— Քո պապը նվիրեց ինձ այս կնիքը, երբ գնում էի վարժարանում սովորելու։ Դու այն պահպանել ես այսքան ժամանակ և հիմա կնիքը քեզ է պատկանում։ Պահիր այն։

— Շնորհակալություն, հայրիկ,— ասաց նա հանդիսավոր ձայնով և կնիքը դրեց իր կարճ տաբատի գրպանը։

Վարդանը հիացմունքով նայում էր, թե որքան էր մեծացել որդին և թե ինչպես էր ֆիզիկապես զարգացել։ Մանկությանը հատուկ դիմագծերին հավելվել էին տարրեր, որոնք ուրվագծում էին ապագա պատանու կերպարը։ Թովմասը նայեց մոր կողմը, և մի պահ նրա դեմքին հայտնվեց

անորոշ արտահայտություն, ուր միահյուսվել էին ուրախությունն ու տագնապը։ Հասկանալով որդու հոգեվիճակը՝ Վարդանը հարկ համարեց նրան հասկացնել, որ ինքը տեղյակ էր Մարոյի կյանքին Այնթապում։ Այդ դեպքում այլևս ոչ մի երկիմաստություն գոյություն չէր ունենա։ Նա կռացավ դեպի Թովմասը և ասաց.

— Ռըզա բեյը թույլ չի տվել, որ Նուրհանը ուղեկցեր մորդ։ Դու հիմա պետք է մորդ սիրես երկուսի փոխարեն։ Դու միակ որդին ես, որ նրան մնացել ես։

Թովմասը, զարմանալով այդ խոսքերից, թեթևացած հորը նայեց։ Նա այլևս ստիպված չէր փնտրել թաքցնել եղբոր՝ Նուրհանի գոյության փաստը։ Հոր մեղմ ձայնից Թովմասը հասկացավ, որ Վարդանը չէր դատապարտում Մարոյին Ռըզա բեյից երեխա ունենալու համար։ Տղան շատ էր վախենում, որ ծնողները կընդհարվեին և չէին սիրի միմյանց։ Նա բարձրացավ մատների ծայրերին և երախտագիտությամբ համբուրեց Վարդանի այտը։ Հետո շրջվեց և վազեց դեպի Մարոն, որը սպասում էր տնօրենի կողքին կանգնած։

— Մայրի՛կ,— բղավեց նա ամբողջ ձայնով։

— Թովմա՛ս։ Թովմա՛ս։

Մարոն ընդառաջ շտապեց Թովմասին և գրկեց նրան։ Թովմասը նույնպես գրկեց մորը և գլուխը սեղմեց նրա կրծքին։

— Մայրիկ, ես այլևս չեմ լքի քեզ,— մրմնջաց նա լացակումած ձայնով։

— Սիրելի՛ս... Վերջապե՛ս։

Մարոյի այտերով արցունքներ էին հոսում։ Նա իրենից հեռացրեց որդուն և շոշափեց նրա գլուխը, դեմքը, ուսերը, կարծես ուզում էր համոզվել, որ դա երազ չէր, որ նա առողջ էր։ Հետո նա երեխայի դեմքը համբույրներով ծածկեց։

— Ես այնքան եմ խնդրել Աստծուն, որ նա քեզ ինձ վերադարձներ։

— Ես էլ եմ աղոթել, մայրիկ։ Ես աղոթել եմ Ազնիվ տատիկին և կնքահայր Արմենին։

— Նրանք քեզ լսել են և միջնորդել են քեզ համար Տիրոջ առջև։

Անդրանիկ Բաղրամյանը, որը մի կողմ էր քաշվել, չկարողացավ իրեն զսպել և գլխով հավանության նշան արեց Մարոյի այդ խոսքերին։ Նրա համար այս ընտանիքի պատմությանը, ինչպես նաև այլ բազմաթիվ ընտանիքների պատմությունները, որոնք միացել էին ողբերգական բաժանումից հետո, Աստծո ողորմածության վկայությունն էր։

Մարոն պայուսակից հանեց Արմենից Թովմասին մնացած ծովային գլխարկը։ Հիացած երեխան աչքերը լայն բացեց և վերցրեց գլխարկը։

— Իմ գլխա՛րկը, իմ գլխա՛րկը։

Նա գլխարկը գլխին դրեց։

— Իսկն է, մայրիկ։ Իսկը գլխովս է։

Իրականում գլխարկը մեծ էր, սակայն Մարոն թուղթ էր դրել աստառի մեջ։ Վարդանը մոտեցավ և գրկեց կնոջն ու որդուն։ Արմենի գլխարկը նրան տարավ դեպի անցյալը։ Նա հիշեց իրեն բանտում, երբ պատին փորագրում էր կախաղան հանվածների անունները, հետո Կապադովկիայի ստորգետնյա մատուռում, երբ փորագրում էր Անուշի անունը։ Մի օր նա պետք է այդ ամենը պատմեր և խոսքերով հուշարձան կանգնեցներ այն մարդկանց հիշատակին, որոնց անունները չէր պահպանել ոչ մի արձանագրություն։ Սակայն նախ պետք էր ապահովել նրանց ապագան, ովքեր վերապրել էին, օգնել հայրենակիցներին Հայաստանի Հանրապետության ամուր հիմքերը գցել։

— Ինչի՞ մասին ես մտածում, հայրիկ,– հարցրեց Թովմասը։

Վարդանը վեր թռավ և նկատեց, որ մնացածները զարմացել էին իր բացակա տեսքից։

— Օ՛... Անցյալի մասին։ Ամերիկա մեր ճանապարհորդության մասին։

— Հայրիկ, ճի՞շտ է, որ մենք նավով ենք ճանապարհորդելու։ Ես կարո՞ղ եմ կրել նավապետի գլխարկս։

— Իհարկե,— պատասխանեց Վարդանը՝ նրա գլուխը շոյելով։

Մարոն մեկ ամուսնուն էր նայում, մեկ որդուն։ Անսահման երջանկությունից նա կորցրել էր խոսելու ցանկությունը և անխռով ժպտում էր։

— Ձեր երջանկությունը մարդու սիրտը ուրախությամբ է լցնում,— նրան ասաց Անդրանիկ Բաղրամյանը հուզված ձայնով։

Վարդանը պատասխանեց կնոջ փոխարեն.

— Դա ձեր շնորհիվ է, պարոն Անդրանիկ։

Բաղրամյանը, որը մտածում էր իր զոհված կնոջ և երեխաների մասին, գերադասեց փոխել խոսակցության թեման։

— Սուրենն ինձ ասել է այն փաստաթղթերի մասին, որոնք Գաբրիել դը Ռոքվիլը պետք է ձեզ հանձնի։ Ի՞նչ եք մտադիր անել։

— Հետս Վաշինգտոն կտանեմ, որպեսզի զեկուցում պատրաստեմ, որը, կարծում եմ, մեզ կօգնի ներկայանալ ամերիկյան կառավարությանը, իսկ հետո խաղաղության բանակցություններում։ Եթե դա հենց այն փաստաթղթերն են, որոնց մասին խոսում են, ապա դրանց միջոցով մենք անհերքելի կերպով կապացուցենք, որ տեղահանություններին ուղեկցող ջարդերը ոչ թե «չնախատեսված միջադեպեր» էին, այլ սառնասրտորեն ընդունված բնաջնջման քաղաքականության հետևանք։

Վարդանի պերճախոսությունից տպավորված Թովմասը փքվեց։ Իր հայրը ոչնչով պակաս չէր տնօրենից, որն այնքան լավ էր խոսում.

— Մաղթում եմ, որ դուք դրան հասնեք,– հառաչեց Անդրանիկը։

Վարդանը համեստաբար նվազեցվեց իր դերը.

— Ես մենակ չեմ այս գործում, գիտեք։ Մերոնցից շատերն անձնազոհ կերպով ճգնում են, որպեսզի արդարությունը հաղթանակի։ Ի դեպ, ինձ ասացին, որ դուք ճանաչում եք Ռոքվիլին։ Ի՞նչ մարդ է նա։

— Մեծահոգի մարդ է։ Ինչպես այստեղ, այնպես էլ արտասահմանում գտնվող մեր մանկատները օգտվում են նրա առատաձեռնությունից։ Նա մեր համակիրն է։ Եվ եթե նա ոսկու գնով, ինչպես ինձ ասել են, ձեռք է բերել ձեզ հետաքրքրող փաստաթղթերը, ապա միայն դրանց ոչնչացումը կանխելու համար։ Այն, որ նա փաստաթղթերը ձեզ է հանձնում, վկայում է նրա մեծահոգության մասին։ Ռոքվիլը հին և հազվագյուտ փաստաթղթերի կրքոտ կոլեկցիոներ է։

— Ես անհամբերությամբ եմ սպասում նրա հետ հանդիպմանը։

— Դուք չեք հիսաթափվի։ Ի դեպ, նա կարդացել է ձեր հոդվածները և շատ է հավանում դրանք։ Նա հենց ձեզ է ուզում հանձնել այդ փաստաթղթերը և նույնպես անհամբեր ձեզ է սպասում։

Թովմասը բռնեց հոր ձեռքը.

— Ես այլևս չեմ ուզում քեզնից բաժանվել, հայրիկ։

Մինչդեռ Վարդանը փաստարկներ էր փնտրում, որպեսզի որդուն բացատրեր, որ իր բացակայությունը երկար չէր տևելու, Բաղրամյանն ավելացրեց.

— Դուք պետք է ձեզ հետ տանեք ձեր կնոջն ու Թովմասին։ Գաբրիել դը Ռոքվիլի առանձնատունը Ամֆիոն-լը-Բենում իսկական թանգարան է։ Առանձնատան պարտեզը գտնվում է Լեման լճի մեջ խորացող ցամաքալեզվակի վրա, որտեղից աննման մի տեսարան է բացվում։

Հանգստանալով՝ Թովմասը հայտարարեց.

— Գնամ հրաժեշտ տամ ընկերներիս։

— Կարող ես գնալ և նրանց ցտեսություն ասել,— պատասխանեց տնօրենը,– բայց դու մեզ այսպես չես լքի։ Վաղը մենք տոն կկազմակերպենք քո մեկնելու առիթով։

Նա դարձավ դեպի Մարոն և Վարդանը.

— Կգա՞ք Թովմասի հետ մեզ մոտ ճաշի։ Դա հաճույք կպատճառի իմ պատանի սաներին։ Նրանց հավատ կներշնչի։ Չնայած նրանց հետ իմ կապվածությանը, ես վառ եմ պահում ծնողներին գտնելու նրանց հույսը կամ էլ հուսադրում եմ, որ որևէ ընտանիք նրանց կորդեգրի։

Մարոն Վարդանին նայեց, ապա պատասխանեց.

— Դա պատիվ է մեզ համար, պարոն Բաղրամյան։

— Ես ձեզ կծանոթացնեմ ընկերներիս հետ,— ասաց Թովմասը՝ վազելով դեպի ֆուտբոլի դաշտ, ուր ավարտվում էր խաղը։

Այդ երեկո Վարդանը և նրա ընտանիքը ճաշեցին «Բելմոնտ» հյուրանոցի ճաշասրահում: Թովմասը պնդեց, որ ծնողները կողք կողքի նստեին, իսկ ինքը տեղավորվեց դեմ դիմաց: Այդպես նա անընդհատ տեսնում էր նրանց: Բոլոր այն զգացումները, որ նրանք չէին կարողացել արտահայտել հանդիպման պահին, նրանք ապրել էին հետագա ժամերի ընթացքում, երբ զբոսնում էին քաղաքում: Այժմ բոլորի հոգում խաղաղություն էր հաստատվել, որն արտաքնապես հոգնության տպավորություն էր թողնում: Նրանք դժվարությամբ էին հավատում, որ այդքան սպասված իրադարձությունը տեղի էր ունեցել:

Թովմասն իր դանակն ու պատառաքաղը դրեց դատարկ ափսեի մեջ և հանգիստ սկսեց պատմել իր պատմությունը, կարծես այդ ամենը պատահել էր մեկ ուրիշի հետ:

Մութն արդեն ընկել էր, երբ նա հասավ Ռըզա բեյի կալվածքից հարավ-արևելք ընկած և դեպի անապատ տանող սարերին: Առավոտյան նա փորձել էր գտնել հետդարձի ճանապարհը: Մոլորվելով՝ նա ձիուն ուղղել էր հեռվում երևացող ուղտերի քարավանի կողմը: Այդ մարդիկ ո՛չ թուրքերեն էին խոսում, ո՛չ էլ հայերեն և իրեն Այնթապ տանելու փոխարեն, ինչպես ինքն էր խնդրել, խլել էին իր ազնվացեղ ձին: Չնայած իր դիմադրությանը, մի տղամարդ նրան նստեցրել էր իր ուղտին: Նրանք երկար ժամանակ ճանապարհին էին եղել, և Թովմասը ստիպված էր եղել մնացած ծառաների հետ վրաններ խփել, անասուն խնամել և ծառայել տղամարդկանց: Ի վերջո, նրանք Բաղդադ էին հասել, ուր Թովմասը փախել էր ոստիկանությանը հանձնվելու համար: Նա հանդիպել էր անգլիացի զինվորների, որոնք նրա ասածներից ոչինչ չէին հասկացել: Փորձելով խոսել իր պարզունակ ֆրանսերենով՝ նա գրավել էր մի սպայի ուշադրությունը, որը թարգմանիչ էր բերել տվել:

— Սակ Նոթ պարետն ինձ ասաց, որ ես չեմ կարող Այնթապ վերադառնալ, քանի որ դա ճակատից այն կողմ էր: Նա փարթամ շեկ բեղեր ուներ, որոնք հասնում էին մինչև այտերը և վանդակավոր կիսաշրջազգեստ էր կրում: Նա ինձ համար սենյակ գտավ սպաների գրասենյակի վերևում: Վարձահատույց լինելու համար ես փայլեցնում էի նրա կոշիկները և մաքրում համազգեստը:

Վարդանն ու Մարոն շունչները պահած լսում էին իրենց որդուն: Չնայած փաստացի մանրամասներից բացի Թովմասը այլ բան չէր հաղորդում, սակայն երեխայի չեզոք տոնը երբեմն մատնում էր նրա հուզմունքը: Նա արագ հաղթահարում էր այն և շարունակում ակնհայտ հպարտությամբ: Ի վերջո, այդ ամենն իրեն պատահել էր, երբ ինքն ընդամենը ութ տարեկան էր:

Մի քանի շաբաթ անց Մակ Նոթ պարետը Թովմասին հանձնել էր շվեյցարացի միսիոներների, որոնց նա ճանաչում էր և գիտեր, որ երկու ամիս անց նրանք վերադառնալու էին իրենց երկիրը: Ուստի Թովմասը հայտնվել էր Ցյուրիխում, Վարտբուրգ քահանայի և նրա կնոջ հետ: Արդարացի և բարի այս մարդիկ երբեք չէին ծիծաղում:

— Նրանք ամեն օր մի քանի ժամ աղոթում էին, և ես չէի հասկանում

այն խոսքերը, որ կրկնում էի։ Սակայն Ֆրաու Վարտբուրգը համով թխվածքներ էր թխում։

Վարտբուրգների մոտ էր, որ Անդրանիկ Բաղրամյանը տեսել էր Թովմասին։ Նա հեշտությամբ համոզել էր քահանային, որ ավելի լավ կլիներ, եթե երեխան դաստիարակվեր հասակակիցների հետ և կրթություն ստանար իր լեզվով և հաճախեր իր ազգային եկեղեցին։

— Պարոն Բաղրամյանը գրել էր Ռըզա բեյին, սակայն պատասխան չէր ստացել։ Որբանոցում սնունդն ավելի վատն էր, քան քահանայի տանը։

Թովմասը խորամանկ ժպտում էր։ Հիմա, երբ ծնողների հետ էր, իր արկածներն իրեն շատ հեռու և գրեթե աննշան էին թվում, մինչդեռ նա գիշերներ շարունակ լացել էր հուսահատությունից։

Մատուցողը հաջորդ ուտեստը բերեց, և երբ նա հեռացավ, Մարոն ասաց.

— Ինչպիսի երջանկություն է, որ քեզ այդքան գթասիրտ մարդիկ են հանդիպել։ Մենք պետք է հատուցենք նրանց՝ ուրիշներին լավություն անելով։

— Ճիշտ է,— համաձայնեց Վարդանը։— Սակայն ակնհայտ է նաև, որ Թովմասը շատ քաջ է եղել։

Նա դարձավ դեպի որդին.

— Դու բարձր ես պահել Պալյանների պատիվը, տղաս։

Թովմասը շիկնեց։ Ոչ մի այլ գնահատական նրան այդքան հաճույք չէր պատճառի։

— Իսկ դո՞ւ, հայրիկ։ Ինչպե՞ս կարողացար փախչել Սվասի բանտից։ Հետո ի՞նչ ես արել։

Վարդանը հասկացավ, որ Թովմասն ուզում էր իմանալ հոր գլխով եկածն այնպես, ինչպես գիտեր մոր հետ պատահածը, քանի որ դա իրենց ընդհանուր պատմությունն էր։ Հակառակ դեպքում ընտանեկան հիշողության մեջ միշտ դատարկ տեղեր կմնային։ Նրա կարծիքով, ողբերգական հիշողություններից հրաժարվելը, ինչպես վարվում էին տեղահանությունը վերապրած հայրենակիցներից շատերը, սխալ էր։ Հակառակը, ոչինչ չէր կարելի մոռանալ։ Վարդանը մի կում գինի խմեց և սկսեց իր պատմությունը՝ դիմելով իր որդուն այնպես, ինչպես կդիմեր իր ընկերոջը կամ վստահելի մարդու։

— Ինձ ձերբակալեցին քո վեցերորդ տարեդարձի տոնական ճաշկերույթից մի քանի ժամ անց։ Մենք պատրաստվում էինք հեռանալ Սվասից Ազնիվ խանումի, Արմենի, Արաքսիի հետ, երբ...

Մարոն նրան շատ ուշադիր էր լսում, քանի որ ոչինչ չգիտեր, իրենց բաժանումից հետո Վարդանի կյանքի մասին։ Եվ երբ նա պատմում էր ինչ-որ իրադարձությունների մասին, Մարոն փորձում էր հիշել, թե ինչ էր ինքն անում այդ պահին, որպեսզի իրենց հիշողությունները

համընկնեին։

* * *

Մարսելի հին նավահանգիստը շատ աշխույժ էր։ Զկնորսական նավերը մոտենում էին նավամատույցին։ Նրանց դիմավորում էին ձկնավաճառները, որոնք գնում էին ամբողջ որսը՝ շուկայում վաճառելու համար։ Սակարկությունն ընթանում էր հետաքրքրասերների աչքի առաջ, և նրանք երբեմն մասնակցում էին դրան։ Երկինքը պարզ էր։

Թովմասը, նավապետի գլխարկը գլխին, քայլում էր հոր և մոր առջևից, որոնք թևանցուկ հետևում էին նրան։ Վարդանի նվիրած հեռադիտակով Թովմասը ուսումնասիրում էր Իֆ կղզու ժայռը, որի վրա կանգնած բանտը ուրվագծվում էր հորիզոնին։

— Այնտե՛ղ,– բացականչեց նա՝ ցույց տալով նավահանգստի մյուս ծայրում կանգնած նավը։— Այս նավը Ամերիկա՞ է գնում, հայրիկ։

— Հեռադիտակդ տուր։

Վարդանն ուսումնասիրեց նավի քթամասը։

— «Պելոպոնեսի աստղ»։ Սա է։

— Արա՛գ, գնանք մոտը։

Մարոն ժպտաց՝ տեսնելով որդու անհամբերությունը։

— Շտապելու կարիք չկա,— ասաց նա։— Մեզ նավ կթողնեն միայն երկու ժամից։

Շրջիկ լուսանկարիչը՝ ցածրահասակ մի մարդ, որը մեջքին էր քարշ տալիս իր ծանր լուսանկարչական սարքը եռոտանիով, մոտեցավ նրանց և ողջունեց։

— Ներեցեք պարոնայք, լսեցի, որ դուք մեկնում եք։ Չէիք ուզենա լուսանկարվել որպես հիշատակ։

Վարդանը տատանվում էր.

— Իսկ ժամանակին պատրաստ կլինի՞։

— Արհեստանոցս գտնվում է հենց այս փողոցի անկյունում, անմիջապես սրճարանի հետևում,— ասաց տղամարդը՝ ցույց տալով սրճարանը։— Մեկ ժամից դուք կստանաք լուսանկարները։

Զգալով, որ դա հաճելի կլիներ Մարոյին, Վարդանը համաձայնեց։

— Նախ երկուսդ միասին նկարվեք,— ասաց Մարոն։— Եվ ես կկարողանամ հիանալ իմ երկու տղամարդով։

Լուսանկարիչը նրանց կանգնեցրեց նավամատույցի եզրին, կայմերի անտառի ֆոնին։ Վարդանը պահել էր մի փոքրիկ ճամպրուկ, այն

փաստաթղթերով, որ նրան էր վստահել Գաբրիել դը Ռոքվիլը Վարդանի՝ էվիան կատարած այցելության ընթացքում։ Մյուս ձեռքը նա դրեց որդու ուսին, որը ցուցադրում էր իր հեռադիտակը։

— Նրանք բոլորը մեր թիկունքում են,– շշնջաց Վարդանը Թովմասին, որը շրջվեց հետ նայելու համար։

— Ո՞վ, ոչ ոք չկա։

— Մեր նախնիները։ Իմ հայրը, իմ պապը... Դու տասնյակ սերունդների արգասիքն ես։ Այդ մարդիկ մշակույթ են ստեղծել, որը քո ժառանգությունն է։ Դու պետք է լինես այդ մշակույթի կրողը և հարստացնես, որպեսզի այն կենդանի մնա, և այդպիսով դու կապրեցնես քո նախորդներին։

Թովմասը համոզված չէր, որ լավ էր հասկանում, և լրացուցիչ պարզաբանումներ կուզենար, սակայն լուսանկարչի համբերությունը հատեց.

— Խնդրում եմ դադարեք խոսել և մի շարժվեք։

Նա լուսանկարեց։ Հետո Մարոն միացավ ամուսնուն և որդան։ Վարդանը ճամպրուկը ոտքերի մոտ դրեց և գրկեց հարազատներին։

Իր սարքի հետևում կանգնած լուսանկարիչը հուզվեց.

— Ի՜նչ հաճելի է տեսնել մի ընտանիք, որն անհոգ կյանք է ունեցել։ Դուք երևի ձեզ վրա չեք զգացել պատերազմի դժվարությունները։

Մարոն ու Վարդանը հազիվ զսպեցին ծիծաղը։

— Մի շարժվե՛ք... Ուշադրությո՛ւն... Ահա՛։

Փոքրիկ տղամարդը շտապ հավաքեց սարքը իրեն մոտեցած Թովմասի հետաքրքրված հայացքի ներքո։ Լուսանկարիչն իր այցեքարտը տվեց տղային։

— Ծնողներիդ կասես, որ մեկ ժամից անցնեն։

Վարդանը շրջվել և առանց տեսնելու նայում էր նավակների վրայով ճախրող ճայերին։ Նա դեպի արևելք էր նայում, մտածելով, որ Միջերկրականի մյուս ծայրամասում գտնվում էր Կոստանդնուպոլիսը, ավելի հեռու՝ Անատոլիան, իսկ է՛լ ավելի հեռու Արարատ լեռան հովանու տակ՝ Հայաստանը։ Մարոն, կռահելով Վարդանի մտքերը, կանգնեց նրա կողքին և նայեց նույն ուղղությամբ։ Այնտեղ ինքը թողնում էր իր որդուն, որին նա այլևս երբեք չէր տեսնելու։ Նրա ձեռքը լարվեց ամուսնու թևին։

Նրանք վեր թռան Թովմասի ձայնից։ Նա մատով ցույց տվեց դեպի արևմուտք և համոզված ասաց.

— Դուք սխալվում եք։ Ամերիկան այն կողմն է։

Ամառ առանց այգաբացի - Վերջաբան

Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 13:30-ին, 21 Հուլիսի 2014 թվին:

[Ամառ առանց այգաբացի](#)
◄ [Ամառ առանց այգաբացի - Գլուխ 18](#)

Վարդան Պալյանի և նրա ընտանիքի Միացյալ Նահանգներ մեկնելուց մի քանի ամիս անց Կոստանդնուպոլսի դատարանը մահապատժի դատապարտեց Օսմանյան կայսրության կառավարության նախկին ղեկավարներին, որոնք մեղավոր էին ճանաչվել պատերազմի հանցագործությունների, հիմնականում հայկական փոքրամասնության բնաջնջման փորձի համար: Ղեկավարների մեծ մասը արդեն փախել էր արտասահման: Մի քանի նախարարներ, ինչպիսիք էին Թալեաթ փաշան և ուրիշներ ու նրանց աջակիցները, հետագայում սպանվելու էին հայ վրիժառուների կողմից:

1920 թ. գարնանը դաշնակիցների գերագույն խորհուրդը ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին հանձնարարեց գծել Հայաստանի սահմանները: Սակայն երկրներից և ոչ մեկը պատրաստ չէր երաշխավորելու նոր պետության անվտանգությունը, նույնիսկ ամերիկյան կոնգրեսը մերժեց նախագահի խնդրանքը մանդատ իրականացնել Հայաստանի հանդեպ: Պարոն Վիլսոնը, այնուամենայնիվ, գծեց Հայաստանի սահմանները, որը բացի ռուսահպատակ Արևելյան Հայաստանից, պետք է ներառեր հայաբնակ օսմանյան վիլայեթների մեծ մասը: Սակայն նույն տարին Սևրում կնքված պայմանագրի կետերը այդպես էլ չիրականացվեցին:

Պատճառն այն էր, որ Օսմանյան կայսրությունում երկու կառավարություն կար. Կոստանդնուպոլսի կառավարությունը, որը բանակցում էր հաղթանակած տերությունների հետ, և Մուսթաֆա Քեմալի կառավարությունը, որը հաստատվել էր Անկարայում և հրաժարվում էր զիջել օսմանյան տարածքները: 1920 թ. սեպտեմբերին Լենինի կարմիր բանակի զորամիավորումները հարձակվեցին Հայաստանի վրա: Մինչ Կովկասում արյունահեղ կռիվներ էին ընթանում, Ազգությունների լիգայի՝ Հայաստանին օգնելու կոչերը անպատասխան էին մնում: Պատերազմից նոր դուրս եկած ազգերը ոչ մի ցանկություն չունեին ներգրավվելու նոր ընդհարումների մեջ: Եվ, այդպիսով, նոյեմբեր ամսին Հայաստանը բռնակցվեց Խորհրդային Ռուսաստանին: Այդուհանդերձ, հնուց ի վեր հայերի ապրած տարածքներում մեծ հայրենիք ունենալու երազանքը չէր մեռնելու և երկար ժամանակ զբաղեցնելու էր նրանց միտքը:

Այս իրադարձությունների հետևանքով Վարդան Պալյանը, հիասթափվելով, որ իր և իր հարյուրավոր հայրենակիցների ջանքերն ապարդյուն էին անցել, վճռեց հաստատվել Միացյալ Նահանգներում: Շուտով նրան միացավ եղբայրը՝ Նուբարը, որն իրենց քեռորդի Պարգևի հետ ներմուծող գործակալություն էր ստեղծել: Պալյանները, ինչպես և մնացած հայերը, որոնք ունեցվածք էին կորցրել Օսմանյան կայսրությունում, այդպես էլ հատուցում չստացան Աֆիոն-Գարահիսարում և Սվասամ իրենց բռնագրավված սեփականության համար:

Հրաժարվելով դեղագործի իր մասնագիտությունից՝ Վարդանը հայկական թերթ հիմնադրեց, որը ժամանակի ընթացքում ազդեցիկ դարձավ: Հարյուր հազարավոր հայրենակիցներ հաստատվել էին աշխարհի տարբեր երկրներում, և շատ կարևոր էր, որ նրանք կապ պահպանեին, չնայած նրանց բաժանող սահմաններին և օվկիանոսներին: Մարոն, որը տնօրինում էր թերթը, Վարդանին պարգևեց երեք դուստր՝ Ազնիվ, Արաքսի և Նաիրի, իսկ հետո երկրորդ որդուն, որի ավազանի անունը Հակոբ էր, մորական պապի պատվին: Ինչ վերաբերում է Թովմասին, ապա ցանկանալով թեթևացնել մարդկային վշտերը, նա վճռեց բժիշկ դառնալ:

Մեսրոպ Մեսրոպյանը մահացավ Տիրանի ու Արամի Հայաստան մեկնելուց առաջ: Քանի որ Պարգևն արդեն Միացյալ Նահանգներում էր, պատասխանատվություն զգալով իր մոր հանդեպ, Տիրանը ստանձնեց ընտանեկան տպարանի ղեկավարությունը: 1923 թ. Մուսթաֆա Քեմալի կողմից Թուրքական Հանրապետության հռչակումից հետո, Տիրանն առիթ չուներ վախենալու իր նախկին քաղաքական հակառակորդներից: Հրաժարվելով քաղաքական գործունեությունից՝ նա դարձավ Կոստանդնուպոլսի մեծ հայ համայնքի պատվարժան անդամներից մեկը:

Ռըզա բեյը բավականաչափ ճարպիկ գտնվեց և պահպանեց գավառապետի իր պաշտոնը, երբ շրջանը անգլիացիների վերահսկողությունից անցավ ֆրանսիացիներին: Եվ քանի որ նա ծածուկ օգնում էր քեմալականներին, ապա ոչ մի խնդիր չունեցավ հանրապետության հռչակումից հետո: Նա թողեց պաշտոնը՝ իր կալվածքները կառավարելու և հարստությունը հանգիստ վայելելու համար:

Մարոյի մեկնումից քիչ անց իր որդուն կորցրած Լեյլայի և Ռըզա բեյի կողմից գուրգուրված Նուրհանը մոռացավ իսկական մորը: Նրա թլփատման օրը Սաֆիյեն ցանկացել էր հայտնել, թե ով էր իսկական մայրը, սակայն Լեյլան հակառակվել էր դրան:

Տարիների ընթացքում Նուրհանը բազմիցս թերթել էր տատի ալբոմը, և յուրաքանչյուր անգամ, երբ նրա հայացքը կանգ էր առնում Մարոյի ժամանման օրը արված խմբակային լուսանկարի վրա, նա մտածկոտ նայում էր կանանցից մեկի գեղեցիկ դեմքին առանց իմանալու, որ հենց այդ կինն էր իրեն կյանք պարգևել: